ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿՈՅ ։

Արարեալ 'ի վարդապետէն Կուլիէլմեայ
Ռոպէրթսոնէ ։

ԵՒ

Ընծայեալ յուղին փղիսոփայի ։

Թարգմանեալ նախ յանգլիական բնագրէ յԻտա-
ղական լեզու. և անտի 'ի Հայ բարբառ 'ի Հայր
Մինաս Վարդապետէ Գասպարեանց Երզնկեցւոյ
'ի Միաբանութենէ բազմավաստակ բարեյիշատակ
Մխիթարայ Բաբունապետի և Մեծի
Աբբայի ։

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ ։

Որք յաւելաւ 'ի վերջոյ համառօտ բացատրու-
թիւն խրթին բառից, որք հանդիպին յայսոսիկ
երկուս հատորս ։

Տպագրեալ ծախիւք և արդեամբք Ռաբէլլեանց
Պարոն Յօհաննէսի Չուղայեցւոյ ։

Յամի Տն 1786. և 'ի Թուին Հայոց ռմլե ։

Ի ԹՐԻԵՍՏ ։
'Ի Տպարանի Հարց Մխիթարեանց ։
Հրամանաւ Մեծաւորաց ։



Կենդանագիր Մարքեան Յոհան
Նէսի Ջուղայեցւոյ որդւոյ
Տէր Ռափայէլի ։

ԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ ԱՌ ԲԱՐԵՍԷՐ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԸՆԹԵՐՑՈՂՍ․

Բազում բազմօրինակ գրեցին զգիւտէ և զհանգամանաց Ամերիկոյ և զվայրենի բնակչաց նորա. բայց մեր վիպասան Գուլիելմոս Ռոպերթսոն հռչակեալ է յամենեցունց իբր առաւել հաւաստաբան և իմաստնախոհ և զուարճալի և հրահանգիչ մարդկեղէն մտաց։

Զոր տեսեալ և փորձիւ հմտացեալ Ֆուղայեցի Բարիկեանց Աղայ Յօհաննէսն՝ այրն պատուական, բարեսէր բարերար առ ամենեսին, և անչափ նախանձայոյզ պայծառութ՟ն ազգին, միանգամայն և սկզբնաշաւիղ երախտաւոր և զօրավիգն Թրեստեանս հիմնարկութ՟ն, առաջադրեաց մեզ թարգմանութ՟բ ՚ի լոյս ածել. և ծախուք և արդեամբք իւրովք տպագրեալ՝ ամենահարուստ գանձուցն, որ ՚ի սմա, բաժանորդ զազգն առնել։ Եւ յիրաւի եթէ ոք մտադիր ընթեռնուցու միանգամ և երկիցս զայս պատմագիր, միտք նորին արծարծանի, ատաքացեալ բազմազան իմաստիւք և տեղեկութիւք. և ընդարձակի և լուսաւորի. քանզի ոչ եթէ սին սոսկ

պատմութի՟ է, այլ հանդերձ իմաստասիրական խորհրդածութի՟ք 'ի հրահանգումն մտաց մերոց և 'ի կանոնաւորումն գործոց :
'Ի սմա տեսանեմք թէ որպէս աշխարհս իբրև զտղայ յանկատարութենէ առ կատարելութի՟ յառաջացաւ. և թէ որքան պարտական է մարդս քաղաքական դաստիարակութեան և ուսման. և թէ որպէս արհեստք, գիտութիւնք և օրէնք կատարելագործեն զբնութի՟, և հանեն զմարդն գրեթէ յանբանական վիճակէ. և թէ զիարդ առ անդորրութի՟ մարդոյ կարևոր են օրէնք և ստորակարգութիւնք. և թէ առ 'ի իմանալ զօգուտ կարգին, որ միացուցանէ զզօրութի՟ բնութեան և բանականս գործէ առ իւր վախճան, բազում մտաւոր լուսաւորութեանց և ներհմտութեանց պէտք են, զոր ազգք տխմարք ոչ իմանան. և զոր երջանկութի՟ ինքեանց համարին զաղատ և զինքնագլուխ լինելն՝ այնու ընդ մեծագոյն թշուառութեամբ զանձինս արկանեն. և իբր յիմար և անզօր ազգ յամենեցունց արհամարհին և զոհ թշնամեաց լինին : Այլ և իմանամք, թէ 'ի մեծամեծ և 'ի դժուարին գործս մեծ համբերութի՟ պիտոյ օրինակաւ մեծի և սքանչելւոյ առն Քօլոմպոսի. որ համբերութեամբ իւրով և տոկալովն յաղթեաց ամ՟ դժուարութեանց. և թէ յորժամ գլուխ իրիք ընկերութեան առողջ է, բովանդակ քաղաքական մարմինն 'ի հանգստեան եղիցի. իսկ յորժամ ախտիւք ինչ վարակեալ իցէ, բոլոր մարմինն տագնապի, և թէ որքան մեծ է չարութի՟ մախանացն և իբր ժանտախտ ընկերութեան. և զիարդ անհանդուրժելի և լրուցիչ ապերախտութի՟ մարդկան առ կենցաղօգուտ հասարակաց ծառայութի՟ զիւցազանց : Այլ եթէ 'ի սկզբան անդ ուրեք ուրեք խրթին երևեսցի ոմանց այս պատմագրութի՟ վ՟ն նուրբ տրամաբանութեան հեղինակին՝ ոչ է պարտ լքանել. և 'ի բաց թողուլ, այլ յառաջել յընթացս ընթերցմանն,

մինչև նոյն բանն այլով շարադրութե՟ ընդառաջնեցէ. կամ ընտելացի ոճ՟ քերթութե՟ն. և ապա 'ի կրկնելն երկ՟ց անգամ ոչ կրեսցի նոյն դժուարութի՟, այլ ախորժագոյն ևս երևեսցի :

Բնագիրն 'ի չորս հատորս բաժանեալ էր . բայց մեք պատշաճագոյն վարկաք հայելով 'ի չափ մեծութե՟ մատենին յերկուս հատորս տրամատել . որոց առաջինն աչաց այս է . իսկ զերկրորդն յետ սակաւուց տերամբ ունիմք 'ի լոյս ածել :

Զնշանագրութիւն, զորս բնագիրն եդեալ էր 'ի վերջն, մեք փոխադրեցաք առ իւրաքանչիւր բուն տեղիսն, ուր կոչեցեալն էին, հանդերձ համարովն, այլև երկուստեր զոյգ գծիւք 'ի սկիզբն և 'ի վերջն . ո՟պ զի եթէ ոք կամիցի որոնել 'ի բնագրին, դիւրաւ գտցէ. զորօրինակ տեսցի յընթացս գործոյս . Սակայն բազում ուրեք իբր միջանկեալ բան պարտ է համարիլ զայսոսիկ ծանուցմունս և զհետագայ բուն բանն յարել անընդմիջաբար ընդ նախընթացին յընթեռնուլն . զի մի խրամատեալ երևեսցի շարահետևութի՟ բանին :

Ուրեք ուրեք զբառս ինչ կամ զնշանակութի՟ բառից 'ի գործ արկաք առ հարկի. որք ոչ գտանին 'ի տպագրեալ Հայկազեան բառարանի մերում . բայց մի՛ եզերեսցին իբր նորաստեղծք և մտացածինք . քանզի ըստ մեծի մասին գտեալ եմք յերևելի մատենագիրս ազգիս. ո՟պ 'ի վերստին տպագրիլ բառարանին յայտնեսցին . Այլ ուշադիր ընթերցողն եթէ ուրեք ուրեք զբառ ինչ ոչ իմասցի, զոյժ բանին կարող է իմանալ 'ի նախընթացէն և 'ի հետևեցելոյն :

Զսկզբնագիր յատուկ անուանց մարդոց, քաղաքաց, լերանց, գետոց ե՟ն, գրեցաք գլխագրով առ 'ի որոշել զի մի հասարակ անուն կարծիցի. և շփոթիցի միտք ընթերցողին :

'Ի գրադարձութե՟ 'ի սովորական անուանս պահեցաք զկանոն նախնեաց . զոր օրինակ զֆէթրոսն՝ յեղափոխելով Պետրոս և զֆաւլոսն՝ Պօղոս . իսկ [illegible] ըստ յատուկ հնչման իւրաքանչիւր լեզուի, ունելով բաւական տառս առ 'ի յօդաւորել զինչ և իցէ հնչումն բաց 'ի միոջէ կամ յերկուց։ Հուսկ յետոյ զաշխարհացուցոք բնագրին զանց արարաք վն̃ երկուց պատճառաց. նախ՝ զի առանց ծանօթութն̃ երկրագրութն̃ ոչինչ օգտեն ազգին. և երկրորդ՝ զի բազում ծախք լինէին յանօգուտս, և նմինիւ գին գրքին ծանրանայր. որով բազումք զրկէին 'ի շահեկանութէ̃ նորա։ Նաև արդ խնդրեմ մի փոքր՝ ջան համարիցիք զօգնութիւնս իմ. և զսիրով նուիրեալս սիրով ընկալարուք։

GEOG.

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ՀԵՂԻՆԱԿԻՆ.

'Ի կատարելն զպարաւանդութ՟ին, զոր ընկալե՟լ էի վ՟ն Հասարակաց՝ յաղագս պատմութե՟ Ամերիկոյ, դիտաւորութ՟ի իմ էր ոչ տալ յայնմանէ 'ի դուրս զմասն ինչ մինչև ոչ իցէ լրացեալ բովանդակն. Առաջիկայ վիճակ Հատուածոցն Անկլիզաց շարժեաց զիս այլայլել զայս որոշումն իմ. Որովհետև նոքին ներգործաբար գրաւեալ են 'ի քաղաքական պատերազմի իմեք 'ը մեծին Բրիտաննիոյ, ոչ կարեն լինել շահեկանք հետազօտութ՟իքն և դիտողութ՟իքն 'ի վ՟ր նախկին կերպից քաղաքավարութ՟ե և 'ի վ՟ր օրինացն, որք ոչ ևս կան. Ուշ և անկայութ՟ի ազգի մարդկան ուղղեալ է այժմ առ ապագայ պայմանն նց՟. Որով եղանակաւ և աւարտեսցի այս Թշուառական հակառաի պարտի տեսանել յԱմերիկա նոր իմն կարգ իրաց. և առցեն ձոյլ իմն կերպարան իրակութ՟իք նց. Ապասել կամ անձկանօք բարւոյ քաղաքացւոյ, զի այս եռացումն դադարեսցի, և զի կանոնաւոր իմն կառավարութ՟ի վերահաստատեսցի 'ի նմա. և յայնժամ դարձայց առ այն մասն գործոյն իմոյ, յորում վաղիսկ արարեալ էի զյառաջադիմութ՟ի իմն. որ և մնացեալ ընդ վիպասանու՟ե Փօրթուկեզեան Ամերիկոյ, և բնակութեանցն արարելոց 'ի զանազան ազգացն Եւրոպիոյ 'ի կղզիսն արևմտեան Հնդկաց, կատարելագործեսցէ զգաղափար իմ:

Երկու մատեանքն, զորս հրատարակեմ այժմ, պարունակեն զպատմութիւն գտման Նորոյ աշխարհի, և յառաջադիմութ՟են արարեցելոյ 'ի զինուց և 'ի հատուածոցն Սպանիացւոց. Այս ոչ միայն է պերճագոյն բաժին ամերիկեան վիպասանու՟ե, այլ և է անջատեալ այնպէս, զի կերպաւորէ ինքնին զբոլոր մի արժանի դիտողութ՟ե վ՟ս միու՟ե ենթակային. Եւ քանզի յայսմ մասին գործոյ իմոյ պարզաբանեն սկզբունք և առածք Սպանիացւոց 'ի տնկելն զհատուածս, որք յետոյ տարաղու իմն ողջագուրեն եղեն յա՟մ ազգացն Եւրոպիոյ, եղիցի այս իբր դիպաւոր ներածութ՟ի առ պատմութ՟ի հարգանու՟ե նց յԱմերիկա. և տացէ շուրջ զայսու մեծավարկ յօդուածով քաղաքականութ՟են զծանօթութիւն զայնոսիկ. որք կարեն լինել հաւաստարապէս ցանկալիք և շահեկանք ։ ՚ի գծագրելն զարարս և զսահմանադրութիս Սպանիացւոց ՚ի Նոր աշխարհին, ՚ի բզմ լծակցութիս հեռացայ ՚ի պատմական ոճոյ նախընթաց վիպասանից. և յաճախակի ՚ի մէջ բերի զգործողութիս, որք երևին լեալ անգիտացեալ ՚ի նոցանէ. Պարտականութի իմն է, խոստովանիլ զայն յանդիման աշխարհի, յիշատակելն զաղբիւրս, յորոց հանեալ եմ զլոյսն զայնոսիկ, որք կարեն արդարացուցանել զիս, կմ ՚ի դնելն զիրսն ՚ի նոր իմն տեսիլ, կամ ՚ի կերպաւորելն զնոր ինչ կարծիս վերահայեցմամբ պատճառաց և գործոցն. Օ այս պարտականութի կատարեմ ես այնչափ մեծագոյն հաճուք, որչափ ընծայեսցէ ինձ զառիթ վկայելոյ զերախտագիտութի իմ առ բարերարսն այնոսիկ. որք պատուեցին զիս վկայութբ իւրեանց և օժանդակեցին յոմ հետազօտութիս իմ ։ Որովհետև զառաւել ծանրակշիռ ծանօթութիւն նկատմամբ այսր մասին գործոյն իմոյ պարտ էր սպասել ՚ի Սպանիոյ, նկատեցի իբր բարեբախտիկ պարագայութի մն իմ, յորժամ միլորտ Կըրանթամն, (յորմէ ունէի պատիւ ծանուցեալ լինելոյ անձնաւորաբար, և որոյ ծանօթ էր ինձ ազատականութի մտացն և պատրաստականութին առնելոյ զիրս հաճոյականս,) կարգեցաւ դեսպան յարքունիսն Մադրիտու.

Ու–

Ուղերձելով զիս առ նա՝ գտի զայնպիսի ընդառաջելումն, որ ապահովացոյց զիս, թէ փոյթք իւր պարապելոց էին առաւել գործունեայ եղանակաւ. և թէ նմին իրի ընդունելոց էր զլրումն բաղձանաց իմոց. Ուստի զյառաջադիմու՟ին, զոր արարի ՚ի հետազօտու՟իս իմ ՚ի մէջ Սպանիացւոց, պարտիմ նախապետաբար վերագրել առ ստուգութ՟ին, զոր նոքա ունէին, որչափ վսեմութ՟ե իւրում փոյթ էր ՚ի բարեյաջողու՟ե այնց հետազօտու՟եց, Այլ թէ և Ս՝ելօրա Կրանթամու ես ոչ լինէի պարտական վ՟ն այլոյ իրիք, բայց եթէ վ՟ն ուշադրու՟ե իւրոյ ՚ի գրաւել զպարոնն Սատտիլլէ զմատբանապետն դեսպանութ՟ե իւրոյ առաջնորդել իրակութ՟եց իմոց ՚ի Սպանիա, պարաւանդուկք ձգեալք յանձն իմ լինէին անբաւք. Զամս հինգ հետզհետէ սեպուհ այս շարունակեաց զհետազօտու՟իս իւր վ՟ն օգտի իմոյ այնչափ գործունէութ՟բ յարատեւութ՟բ և ճանաչողութ՟բ ենթակային, առ որ ուղղեալ էր մտադրութ՟ի իւր, մինչ զի պատճառեաց ինձ միանգամայն զզարմացումն և զհաճութ՟ի. Նա պաճարեաց ինձ զմեծագոյն մասն գրեանց Սպանիացւոց. յորոց հրահանգեցայ. և բազումք ՚ի սոցանէ տպագրեալ էին կանխաւ ՚ի վեշտասաներորդ հարիւրեկին. և եղեալ էին ցանցաղագիւտ. այնպէս զի հաւաքելն զնոսա պարտէր լինել զբաղումն իմն. որ միայն պահանջէր զբ՟մ ժամէ և զհանապազորդութի. Առ Ն՟ր բարեկամական ժրաջանութեն պարտական եմ՝ վ՟ն օրինակաց զանազան մեծագին ձեռագրաց. որք պարունակեն զգործս և զմասնաւորուխս, զորս ես որոնելոց էի վայրապար՝ ի գործս, որք շուրջ յածին տպագրեալ. Քաջալերեալ 'ի բարի և 'ի դիւրաշարժ կամաց Պարոնին Սատտինըովեայ յընձեռեալն զշնորհս իւր, առաքեցի Նմա զշարս ինչ հարցմանց 'ի վ՟ր վարուց և կառավարութե ազգաց Ամերիկացւոց, և 'ի վ՟ր բնութե զանազան սահմանադրութեց 'ի կալուածս Սպանիացւոց, բայց տրամադրելոյ և յարդարելոյ այնպ, զի Սպանիացի ոմն կարէր պատասխանել այնց առանց յայտնելոյ ինչ յայնց իրաց, զորս ոչ պատշաճէր Նմա հաղորդել օտարի ումեք. Նա յեղափոխեաց 'ի լեզու Սպանիացի. և 'ի պէսպէս անձանց, որք իշխեալ էին 'ի բազումս 'ի հատուածոցն Սպանիացւոց, ընկալաւ զպ՟խս. որք յոյժ հրահանգեցին զիս: Ընդ այս ոմ սեպհական շահուց, որովք ընկերակցեալ եղեն հետազօտութիւք իմ 'ի Սպանիա, պարտիմ յարել մասնաւոր տհաճութ՟ իմոլ, թէ զբարի յաջողութ՟ին, յորմէ նպաստաւորեցան, ճանաչեմ՝ ի բարութե անհատից և ոչ 'ի հաղորդութե արարեցելոյ ինձ հրապարական իշխանութ՟. Մանաւոր իմն կայ գադրութ՟ Փիլիպպոսի երկրորդի յիշատակք մ՟ապետութե

ապասպանիացւոց աւանդեալ են 'ի դիւանին Սիմանքասու մերձ 'ի Վալլիատօլիտ Հարիւր քան մղոն հեռի յաթոռոյ Թագաւորութեան և 'ի գերագոյն ատենից արդարութե. Թերթք վերաբերեալք Ամերիկոյ, և Նախապետաբար առ այն պարբերութի պատմութե իւրոյ, առ որ ուղղիւր մտադրութի իմ, են այնպ յոգնաթիւք, մինչ զի, որպ պատմի, լնուն միայն զընդարձակագոյն կայանս դիւանին այնորիկ. և բաղկացուցանեն ըստ այլոց տեղեկութեց, զորս ընկալայ, զութն Հարիւր եօթանասուն և երիս երկայնագոյն շարոյս. Հաւատայի ունել ինձ յիմեք աստիճանի ըղձարտարութի, որ պատկանի վիպասանի ումեք. և վ՛նկ տեսութի այսպիսի իմն գանձու զարթոյց զեռանդագին փափագ իմ. Բայց տեսութին միայն եղև, յոր վայելեցի. Սպանիա չափազանց իմն զգուշաւորութք միօրինակ ձգեաց քօղ 'ի վ՛ր արարեաց իւրոց յԱմերիկա. Այսոքիկ գաղեալ են յարտաքնոց մասնաւոր իմն խնամով. և նոյին իսկ Հպատակաց իւրոց դիւանն Սիմանքասու ոչ է բացեալ առանց արքունի Հրամանի. և թէև ընկալեալ լիցի այս Հրաման, թուղթքն ոչ կարեն օրինակիլ առանց այնպիսի տարապայման իմն ծախու որ զանցանէ ըստ չափն, որ ինչ արժանէր տալ. յորժամ միակ առարկայ տալոյ զայնս փոխագրել է հաճելն զգրաւորական բազմահոգութին. Սակայն յուսալի է, թէ Սպանիացիք խելամտուցին ուր ուրեմն, թէ այս ոճ պահելոյ զայնս թաքուն ոչ է նուազ 'ըդէմ քաղաքականութենէ, քան թէ 'ըդէմ ազնուականութենէ. Յայնմանէ, զոր փորձեցի յընթացս հետազօտութեանց իմոց, ախորժեմ ասել համարձակ, թէ 'ի կրկտելն ճշգիւ զառաջին գործողութիւն Սպանիացւոց 'ի Նոր աշխարհին, եթէ գործք անհատիցն երեւիցին ըստ գտանելի, գնացք ազգին գնիցեն յինէն յառաւել շնորհալի իմն տեսիլ։

Յայլ մասունս Եւրոպիոյ նախազօրացել են ամենեւին տարբեր կարծիք. Որոնեալ իմ առանց պտղոյ 'ի Սպանիա զթուղթ մի Կորթեսի գրեալ առ Կարոլոս Հինգերորդ՝ իսկոյն զկնի հասանելոյ ն՛ր նաւու 'ի Թագաւորութիւն Մեքսիքոյի, եւ որ մինչեւ ցայժմ ոչ է հրատարակեալ, եկն 'ի միտս իմ, թէ մինչ կայսրն չու առնէր 'ի Գերմանիա 'ի ժամին, յորում պատգամաւորքն Կորթեսի ժամանեցին յԵւրոպիա. թուղթն վստահացեալ նոցա հաւանական էր, թէ պահիւր 'ի կայսերական գրատան Վիեննայու. Հաղորդեցի զայս խորհուրդ ասպետին Ռուպերթոսի Մուրրայէ Քէյթայ. 'ը ուրում կալայ զպատիւ կեցոյ յերկար ժամ 'ի սիրելութե. եւ ընկալայ վաղվաղակի զբերկրուն գիտելոյ, թէ առ. այսպիսի խնդիր կայսերական Մաջէստկան Մ. Տէհունի իւր հաճեցաւ շնորհաւորաբար տալ հրաման, զի ոչ միայն օրինակ մի

ինձ

խնդրեն քարտիսին, (յորժամ գտցի.) այլև զինչ և իցէ Թղթոյ գրատանն, որ կարիցէ լոյս տալ պատմութեան Ամերիկոյ վերառաքեսցի առ իս. Գիրն Կօրթէսի ոչ կայ 'ի կայսերական գրատան. բայց այս՝ օրինակ մի արժանահաւատ վկայեն ձեռամբ նօտարի՝ այլոյ երից Թղթոյ գրեցելոյ 'ի մեծաւորաց հաստուածոցն հաստատելոց 'ի Կօրթէսէ 'ի Վէրաքրուքս, (զոր 'ի մէջ բերէ յերկրորդ մասանն իւր յերես. 32. իսմ՝ Անգլիական բնագրին.) գտեալ, նոյն հետայն օրինակեցաւ վերստին և առաքեցաւ առ իս. Այս Թուղթ ոչ նուազ ցանցաղագիւտ և հաւաստարանք սակաւ ծանուցեն իբրև զմիւսն. որ էր առարկայ հետազօտութեանց իմոց. ժամանեաց առ իս, յորժամ մասն պատմութեան, առ որ վերաբերի, տպագրել էր. Սակայն ետու տեղեկութիւն ինչ զայնմանէ որ պարունակի 'ի նմա առաւել արժանի գիտելոյ 'ի վախճանի ծանուցմանցն և պարզաբանութեանցն յերկրորդ մատենին. 'Ի միասին ընդ այսմ քարտիսի ընկալայ զպատճէնն Թղթոյ ինչ Կօրթէսի. որ է պատմականն առաքման իւրոյ 'ի Հօնտուրաս շուրջ զօրով ոչ հաւատամ կարևոր մտանել 'ի մասնաւորութի իմն. և ընկալայ նմանայն զայն հետաքրքրական նկարն մեքսիքական. զոր գծագրեցի յերկրորդ մատենին երես. 284: Հետազօտութիւնք իմ 'ի Փեթրօպուրկ նպաստաւորեն եղեն հաւասար դիւրութեամբք և յաջողութեամբք. Մինչդեռ կայի 'ի քննութեան ա-



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿՈՅ.

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

Որձ օրարէն Գրիխալվա 'ի Ք. ա. 1518. պա, եգիտ գրեթէ 'ի կարգի զեա- Նոխոպատազինութիւն սահմանեալ առ 'ի դադձեռնարկել 'ի տիրապետութիւն այնր բովանհարուստ երկրի, զոր նախինքն գտեալ էր. Ո՛չ Ըէլան այնչափ մն փառասիրութն, որչափ մն ագահու- ձէլաթն Վէլասքուեզ պնտեալ էր փութացուցանել զնախապատրաստութիւնսն. և յուսով յագեցու- ցա 'ի ցանելոյ զերկոսին զայսոսիկ կիրս՝ կանխիկ մա- ծխել 'ի տուցեալ էր զերևելի գումարս սեպհական դրա- մոց մոյ իւրոյ առ 'ի առնել յայնմանէ զծախսն. 'Ի Սոյնմին ժամանակի փորձեաց, թէ որչափ զօրէր ինքն ազդեցուն իւր իբր բդեաշխ, գրաւելով զերևելագոյն անձինս հարգուիոնն մնանել 'ի ծառայութ։

(1) Ծանօթութիւն մեր զերացն հանդիպելոց յառման Նորոյ Սպանիոյ բղխեալ է յառաւել սկզբնական և յառաւել արժանահաւատ աղբե-

բաց քան զծանօթութիւն գործոյ իւրոյ եղելոյ 'ի վիպասանութեան Ամերիկոյ. Թուղթք Քօրթիսի առ կայսրն Կառոլոս հինգերորդ են յիշատակարանք պատուականագոյնք և վաղնջագոյնք քան զոր ունիմք մեք 'ի վերայ այսպիսի նիւթոյ. Եւ քանզի Քօրթէս էառ վաղագոյն զհրամանատարութիւն անկախ 'ի Վէլասքուէզայ, հարկ եղև նմա առաքել 'ի Մատրիտ զտեղեկութիւն իմն այնպիսի գործողութեանց իւրոց, որ պաճարեսցէ նմա զհաստատութիւն արքային իւրոյ։

Առաջինն 'ի նամակաց իւրոց ոչ է հրատարակեալ երբեք. Գրեաց զայն 'ի Վերաքրուցէ 'ի մետասանն յուլիսի. 1519. Ի հարկէ հասեալ է 'ի ձեռս կայսերն մինչ էր 'ի Գերմանիա, գոլով թողեալ նա զՍպանիա 'ի 22. մայիսի յայնմ տարւոջ առ 'ի երթալ ընդունել զթագն կայսերական. Արարի զմտադիւր իմն խոյզ առ 'ի ունել զպատճէն մի այսր նամակի եթէ 'ի Սպանիա և եթէ 'ի Գերմանիա, բայց 'ի զուր. Սակայն այս ոչ է մեծահետևակ ինչ, որովհետև ոչ կարէր պարունակել զիր ինչ յոյժ ծանրակշիռ, գոլով գրեալ վաղվաղակի յետ հասանելոյ Քօրթիսի 'ի Նորն Սպանիա. Երկրորդ նամակն գրեալ 'ի 30. հոկտեմբերի 1520. հրապարակեալ եղև 'ի Սևիլլիա յամին 1522. և երրորդն և չորրորդն սուղ ինչ զկնի ընկալեալ լինելոյն. Երևեցաւ թարգմանութիւն իմն սոցա լատինական 'ի Գերմանիա յամին 1532. Ռամուսիոս սակաւ ինչ զկնի ետ ճանաչել զայսոսիկ ընդհանրագոյնս, մուծանելով 'ի քաղուածի իւրում. Պարունակեն այնք զկանոնաւոր իմն և զմանր պատմութիւն շահատակութեան հանդերձ բազում հետաքրքրական մանաւորութեամբք վերաբերեցելովք առ կառավարութիւն և առ բարս մեքսիքացւոց. Գործն մեծարէ զՔօրթէս. ոճն է պարզ և յստակ. այլ քանզի յայտնապէս էր իւր շահ երևեցուցանելն զսեպհական գործողութիւն 'ի գեղեցկագոյն տեսիլ, յաղթութիւնք իւր հաւանականաբար մեծացուցեալ են, կորուստք իւր նուազեցուցեալք. և ներգործութիւնք խստութեն և բռնութեն իւրոյ յիմիք մասին պատրուակեալք:

Երկրորդն 'ի կարգի է ժամանակագրութիւնն նորոյն Սպանիոյ Ֆրանչիսկոսի Լոփեզայ Կոմարայի հրատարակեալ յամին 1554. Ոչ է մարթ ուրանալ զվիպասանական վաստակ Կոմարայի. Եղանակ պատմելոյ իւրոյ է յստակ, հարթ, միշտ հաճոյական, և երբեմն վսեմական. Բայց յաճախակի է սակաւ զգուշագոյն և շատ դիւրահաւատ. և այն զի էր մատրանապետ Քօրթիսի յետ դարձին իւրոյ 'ի Նոր Սպանիոյ, և շարագրեաց զգործ իւր հաւանականաբար դիտաւորութ̃բ հաճոյանալոյ նմա. յայտնի է, թէ նա ջանայ մեծացուցանել զվաստակ դիւցազին իւրոյ, և թաքուցանել կամ վերարկել զճշմարտութ̃ի այնց գործոց, որք ոչ էին յանկաւորք սեպհական հանգամանաց նր. Այսմ բերէ Հերրերա օրինակ մի յերկրորդ դեկայի իւրում. և այս ոչ է միայն. Այլ նա գրէ այնքան համարձակութ̃բ շուրջ զխորհրդովք արքունեացն Սպանիոյ, մինչ զի օրինակք վիպասանութեն իւրոյ զՀնդկաց և ժամանակագրութեն իւրոյ բարձեալ եղեն 'ի միջոյ վճռով խորհրդեանն Հնդկաց, և համարեալ ը̃ երկար ժմ̃կ 'ի Սպանիա իբր արգելեալ գիրք. թէպէտ 'ի վերջոյ շնորհեալ է հրաման տպագրելոյ զայնս. Փինէլօ Գէրմաղէփ:

Ժամանակագրութիւն Կոմարայի շարժեաց զԲեռնարդոս Տիաց քասթիլլացի 'ի շարադրել զիւր ճշգրիտ վիպասանութ̃ի առմանն Նորոյ Սպանիոյ. Սա լեալ էր բաղդորդ յիւրաքանչիւր շահատակութիւն առ Նորն Սպանիա, և ընկեր Քօրթիսի 'ի բովանդակ պատերազմունս իւր և յամենայն վտանգս իւր. Իբրև ետես նա, թէ ոչ զիւր-
ք և ոչ զընկերաց իւրոց արարեալ լինէր յի-

շատակուն 'ի Կոմարայ, այլ թէ փառք բովանդակ քաջագործութեանց նմա ընծայեալ էր Քորթիսի, հին քաջահզօր զօրականն էառ 'ի ձեռն զայրացմամբ զգրիչն և շարագրեաց զճշմարտաբան վիպասանութիւն իւր. Այս պարունակէ զերկար իմն մանր և շփոթ պատմութիւն համօրէն գործոցն Քորթիսի այնպիսի իմն բիրտ և ռամկական ոճով, որպիսի մարթէր սպասել 'ի տգէտ զօրականէ միոջէ. Այլ քանզի յառաջ բերէ ըզգործս, որոց եղև վկայ, և զորոց նա ինքն կատարեաց զերևելի ինչ մասն, պատմութիւն իւր բերէ ընդ իւր զամ նշանս արժանահաւատութեան. և է ընկերակցեալ յայնպիսի համոյական պարզութեամբ, յայնպիսի պատկանաւոր մանրամասնութեանց և յայնպիսի վայելուչ տարազու անձնապարծութեան ներելի ծերունւոյ զօրականի միում, որ գտեալ էր, որպէս ինքն պարծի, 'ի հարիւր իննևտասն պատերազմունս, մինչ զի առնէ զմատեան իւր մի յառաւել եզականացն, որք կարիցեն գտանիլ յիւրաքանչիւր լեզուի:

Պետրոս մարտիրոսն անկլերիացի 'ի ճառի միում [illegible] նորոց Գտելոց՝ յարեալ 'ի դեկայսն իւր վերայ [illegible] և վնորոյ աշխարհէն՝ տայ զծանօթութիւնս ինչ զշահատակութեանցն Քորթիսի. Բայց ոչ յառաջ խաղայ ևս անդր քան զպատմութիւն այնորիկ, որ պատահեցաւ ընկնի առաջին ելիցն իւրոց 'ի նաւէն. Այս գործ կարճառօտ և վեր 'ի վերոյ ոչ է յատկապէս, բայց եթէ օրինակ մի առաջնոց նամակացն Քորթիսի աճեցուցեալ բազում մասնաւորութեամբք հաղորդեցելովք հեղինակին 'ի պաշտօնատարացն, որք բերէին գիրս առաքեալս յայսմ տիրապետողէ:

Բայց մատեանն, առ որ մեծագոյն մասն արդի վիպասանից դիմեալ են առ 'ի տեղեկանալ զտիրապետութեան նորոյ Սպանիոյ, է պատմութիւն առմանն Մէքսիքօի գրեալ 'ի ձեռն Անտոնիոսէ Տէսօլեայ, և հրատարակեալ յաշխարհում նուագի յամին 1684. Ես ոչ ճանաչեմ զհեղինակ յինչ և իցէ լեզուի, որոյ գրաւորական համբաւն իցէ այնքան ամբարձեալ 'ի վեր քան զիրական արժանաւորութի իւր. Տեսօլիսն համարեալ է 'ի հայրենակցաց իւրոց մի 'ի զտագոյն մատենագրաց 'ի Կաստիլեան լեզուի. և եթէ արտաքին ոք կարէ համարձակիլ ասել զկարծիս իւր 'ի վ̃ր իրիք նիւթոյ, զորմէ միայն Սպանիացիք կարեն դատել, նա ունի իրաւունս ընդունելոյ զայս գովութի. Ոճ իւր է ուղղեալ, բայց զուրկ 'ի քաղցրուէ. Պարբերութիւնք իւր են յոյժ արհեստակերտք, և այնչափ մինչզի եղանին դժուարինք և ուռուցիկք յաճախագոյնս. Ձևքն, զորս 'ի գործածէ առ 'ի զարդ, են հասարակք կամ անյատուկք. և դիտողութիւնք իւր հարևանցիք. Այլ այս պակասութիւնք կարելին դիւրակի ներել, յորժամ ոչ պակասին նմա բովանդակ մեծամեծ որակութիք, որք պահանջին վիպասանի ումեք. Ունի յայնմ համբերատար մտավարժութէ, որ ընդածէ 'ի հետազօտութիւն առ ճանաչումն ճշմարտութն, և մերկացեալ յանաչառութէ յայնմանէ, որ կշռէ զիրս մտադրութն, և անձկացող կայացուցանելոյ զախորժելի գաղափար իւր, այս է, համբառնալոյ զվիճակ Կորթիսի առ վիճակ կատարեալ դիւցազին՝ զերծ 'ի մոլորանաց և զարդարեալ ա̃մ առաքինութիք, է նուազ հոգածու յայտնելոյ զայն, որ էր ճշմարիտ, քան թէ յառաջ բերելոյ զայն, որ կարէր երևիլ պայծառ. Յորժամ նկրտի առնել զպատաւորական իմն քննութի, տրամաբանութիւնք իւր են խարերայք, և հիմնեալք 'ի վ̃ր անկատար իմն քննութն եղելոցն. Թէպէտ երբեմն ածէ 'ի վկայութի զնամակս Կորթիսի, սակայն երբեք ոչ հայեցեալ 'ի նոսա. և թէպէտ գայ 'ի դուրս մերթ ընդ մերթ կշտամբանօք իմն Գոմարայի, նախադասէ ստէպ զվկայութի իւր, որ քան զամ̃ է առաւել երկրայական, վկայութ̃ն այլոց ժամանակակից վիպասանից :

Այլ 'ի մէջ բովանդակ մատենագրաց Սպանիացւոց Հերրէրայ տայ մեզ գլխագոյն և մտադիւրագոյն տեղեկութ̃ի նկատմամբ առմանն Մ՝էքսիքոյ և այլ զինչ և իցէ գործողութ̃ն Ամերիկա. Այնչափ է ճարտարմտութ̃ին և մտադրութ̃ին, որով խորհրդածէ նա ոչ միայն զգիրսն, այլև զսկզբնական թուղթսն և զհրապարական արարսն, որք դիմեն 'ի ծաւալել զլոյս ինչ 'ի վ̃ր առարկայի հետախուզութեանցն իւրոց, և դատէ զեղելոցն այնքան անաչառութ̃բ և անկեղծութ̃բ, մինչզի դեկայքն իւր կարեն թըւիլ 'ի մէջ հանճարեղագոյն և օգտակարագոյն վիպասանական հաւաքմանց. Իսկ ջանալով զհետ երթալ ճիշտ իմն ժամանակաբանական կարգի, ոչ էր խառնակեալ և աղօտացուցեալ զեղելսն, զորս պատմէ, ցայն վայր մինչզի դժուարին է գտանել զայնս 'ի վիպասանութ̃ն իւրում, կարէր նա արդարապէս ունել զտեղի իմն 'ի մէջ վսեմագոյն վիպասանից դարուն իւրոյ. 'Ի միում̃ 'ի դեկայից իւրոց ցուցանէ զաղբիւրսն, ուստի ընկալեալ է զատաղձսն, որովք շարագրեաց զգործ իւր. Դէկ. Դ. Գրք. Գ. Գլ. 19 : ‖

'Ի լծակցութ̃ն միում, ուր հոգին Սպանիական ազգին էր ձեռներէց տարապայման, երևեցաւ բազմութ̃ի իմն զօրականաց անձկացելոց մտանելոյ 'ի նաւ վ̃ս զինչ և իցէ շահատակութ̃ն. Սակայն ոչ էր դիւրին գտանել զմիոք, որ ունիցի զպահանջեալսն առ 'ի առնուլ զհրամանատարութ̃ի իմն այնքան ծանրակշիռ. և հանդամանքն Վելասքուէզայ, որ ունէր իրաւունս անուանելոյ, աճեցուցանէր զդժուարութ̃ի ընտրութ̃ն. Թէպէտ էր նա այր անչափ փառասէր և զարդարեալ քանքարօք կառավարելոյ, սակայն չունէր զսրտեղութ̃ի և ոչ զկորովութ̃ի և զյաջողակութ̃ի մտաց առ 'ի առնուլ յանձն զառաջնորդութ՟ի զօրացն, որ գումարիւր. Յայսպիսի դժուարին կայսերութ՟են կերպաւորեաց զեղջերուաքաղ իմ՟ առաջարկութ՟ի ոչ միայն գործելոյ միջնորդութ՟բ ոստիկանի միոյ, այլ և ապահովացուցանելոյ անձին իւրում զփառս տիրապետութ՟եցն, որք լինելոց էին յայլմէ ումեքէ. Նա 'ի արդիւնացուցանել զայս խորհուրդ, եդ զա՟մ փոյթ 'ի միաբանել ընդ միմեանս զհակասութիւն. Ունէր 'ի սրտի ընտրել զհրամանատար որ անվեհեր համարձակութ՟բ և ընդունակութ՟բ վերնագոյն, գիտելով, թէ պահանջէին այսորիկ երկու իրք առ 'ի ապահովացուցանել զյաջողութիւն. բայց յայնմ վայրի վ՟ն նախանձաւորութ՟են բնական եղելոյ ցածուն ոգւոց՝ փափագէր, զի լինիցի սա այնպէս հպատակ և դիւրանուաճ հոգւով, ո՟պզի կախեալ կայցէ բոլորովին 'ի կամաց իւրոց. Բայց յորժամ այսպիսի գաղափարօք էանց նա 'ի կերպաւորել ինքեան զկարծիս ինչ զանազան պաշտօնատարաց, որք գային նմա 'ի միտս՝ իբր արժանաւորս վստահանալոյ նց՟ զհրամանատարութիւնն, վաղվաղակի զգաց յանձին իւրում, թէ անկարելի էր գտանել զայս ա՟մ անմիասնական որակութիւս միաւորեալս 'ի միում և եթ անձին. Ոմքա, որք էին նշանաւորք քաջասրտութ՟բ և քանքարօք, երևէին կարի ամբարտաւանք լինելոյ կրաւորական գործիք 'ի ձեռս իւր. Այլք, որք երևէին առաւել հեզք և ընտիլք, պակասէին յընդունակութ՟է. և ոչ էին յարմարք պաշտօնին. Այս աճեցոյց զերկբայութ՟իս իւր և զերկիւղս. Եկաց յերկար ժամանակ և բազում տատամնութ՟բ 'ի խորհրդածել յինքեան, և միշտ անբացորոշ շուրջ զընտրութ՟ին. Յայնժամ Ամատորէ Տէլարէս դանձապետն արքունի 'ի Բռուպա, և Անդրէաս Տուէրոս 1518. ատենադպիր իւր՝ երկու մեծամեծ անձինք, յորս վստահանայր ինքն նախապետաբար, սրտապընդեցան յայսմ տարտամութէ առ 'ի առաջադրել զնոր ումն խնդրակ. և հաստատեցին զընծայեցուցումն իւրեանց այնքան հանապազորդութբ և յաջողակութբ, զի գիտացին 'ի գլուխ տանել զիրն առ թշուառութի Վելասքուէզայ և առ երջանկութի հայրենեաց իւրեանց:

Այրն, զոր նոքա ցուցին, եղև Ֆերտինանտոս Գորթէս. Սա ծնեալ էր 'ի Մետէլլին փոքրիկ քաղաք Էսթրէմատուրա յամին 1485. և իջանեալ յազնուական իմն տոհմէ, բայց չքաւոր էր տոհմն իւր 'ի բարեաց բաղդի. Սահմանեալ 'ի սկզբանէ 'ի ծնողաց իւրոց ուսանել զօրէնս իբր առաւել հաւանական հայթհայթանք բարեգունացուցանելոյ զպայման իւր՝ առաքեցաւ 'ի համալսարանն Սալամանքայի, ուր ստացաւ զսկզբունս ինչ գիտութե. Բայց տաղտկացեալ փութանակի յակադեմական կենաց, որ ոչ յարմարիւր եռանդնոտ և կայտառ բնաւորութե իւրում, խոյս ետ 'ի Մետէլլին. ուր ետ զանձն բնաւին յաշխատալի զբօսանս և 'ի զինուորական վարժմունս. Ընդ այն աւուրս կենաց իւրոց էր նա այնպէս յոխորտ, այնպէս անհանդուրժ և ցնդեալ, մինչզի հայր իւր ախորժեաց հանել զյօժարութի իւր. և առաքեաց զնա 'ի ծառայել իբր կամայական զինուոր յօտար աշխարհս. Յայնմ դարու էին երկու մեծամեծ թէատրոնք, յորս երիտասարդութիւն Սպանիական, որ ձգտէր առ պատերազմական փառս, կարէր ցուցանել զքաջութի իւր. մինն յիտալիա ընդ հրամանատարութբ մեծի զօրագլխին. միւսն 'ի նոր աշխարհին. Գորթէս ընտրեաց զառաջինն. բայց անպատրաստութի ինչ արգել զնա 'ի նաւելոյ ընդ զօրավիգն գնդին առաքեցելոյ 'ի Նէապօլիս. Մնացեալ այսպ 'ի դերև ելին, դարձոյց զդիտումն իւր դէպ Ամերիկոյ. ուր հրաւիրէր տեսուի շահուցն, զորս կարէր հանել 'ի պաշտպանութե Օվանտոսի կդեշխին Սպանիոլայի և ազգականին իւրոյ:

(2) Քորթէս առաջագրեալ էր ընդ հետ երթալ Ովանտոսի, մինչ գնաց սա վն թգեշխութն իւրոյ յամին. 1502. բայց խափանեալ եղև 'ի պատահմանէ միոջէ. Մինչդեռ թևակոխէր նա 'ի գիշերային ժամանակի մտանել ընդ պատուհանն 'ի սենեակ տիկնոջ միոյ, ընդ որում ունէր զկնճիռն իմն սիրողական, որմն ինչ հին, որոյ 'ի գլուխն այնինչ ելեալ էր, կործանեցաւ. և ինքն այնպէս ջախջախ եղև յանկմանէն, մինչզի ոչ կարաց մտանել 'ի նաւ. Գոմարայ Ժամանակագրութիւն նորոյ Սպանիոյ. Գլ. ա.

'Ի հասանելն Քորթէսի 'ի սան Դոմէնիկօ յամին 1504. ընդունելութիւն իւր համեմատ եղև բարձր ակնկալութեանց իւրոց. և եղև 'ի թգեշխէն պարապեցուցեալ 'ի զանազան պատուաւոր և շահաւէտ պաշտօնս. Բայց այսոքիկ ոչ շատացուցանէին զփառասիրութիւն իւր. և յամին 1511. ընկալաւ զհրաման ընկերելոյ ընդ Դիեկոսի Վէլասքուէզայ. որ առաքեալ էր 'ի պատերազմ 'ի Քուպայ. Նա հանդիսացաւ յայսմ ծառայութեան այնչափ, մինչզի թէպէտ և բուռն դիմակացութիւնք ինչ եղեալ էին 'ի կողմանէ Վէլասքուէզայ՝ յառաջ եկեալք 'ի պատճառաց սնոտեաց և յիշատակուն անարժանից, 'ի վախճանի ընկալեալ եղև 'ի շնորհս իւր. և ընկալաւ զընդարձակ իմն պարգևաբաշխութիւն երկրաց և հնդկաց, փոխարէն, որ սովոր էր շնորհել բաղդորդաց 'ի նոր աշխարհին: Թէպէտ Քորթէս մինչև ցայնժամ չէր վարեալ զբարձր հրամանատարութիւն, սակայն ցուցեալ էր զայնպիսի առաւելութիւն 'ի դժուարին և 'ի վտանգաւոր դիպուածս, մինչզի զարթուցանէին զհանրական գովութիւն, և դարձուցանէին առ նա զաչս հայրենակցաց իւրոց իբր առ մարդ բաւական արդիւնացուցանելոյ զիրս մեծամեծս. Յոխորտութիւն երիտասարդութեան վաղվաղակի իբրև եգիտ նա զառարկայս և զպարապմունս յարմարեալս կռանդեան ոգւոյ իւրոյ՝ եկն սակաւ առ սակաւ ՚ի հանդարտիլ և ՚ի փոխարկիլ ՚ի կանոնաւոր և յանխոնջելի գործունէութ̃ի. Եռանդն խառնուածոյ իւրոյ յորժամ երևեցաւ նա ՚ի հանդէս ը̃ հաւասարից իւրոց՝ անզգալաբար չափաւորեցաւ զօրութ̃ կալեալ լինելոյ զսպեալ, և քաղցրացաւ յընդաբոյս իմն համարձակութ̃ի սեպհական զօրականի միում. Այսքիկ որակութիք միաւորեալ էին ընդ հաստատուն խոհեմութ̃ն իմիք ՚ի միաբանելն զգաղափարս իւր, ընդ կայուն իմն կորովութ̃ն ՚ի կատարելն զայնս, և ընդ այնմ, որ է մասնաւոր վերնագոյն իմն մտաց. կամիմ ասել, ը̃ արհեստին շահելոյ ինքեան զվստահութ̃ին՝ և կառավարելոյ զոգիս մարդկան. Յարակցեալ լինէին ընդ այսմ ա̃մի արտաքին ձիրք, որք ապշեցուցանեն զխաժամուժն և զարթուցանեն զակնածութ̃ին, շնորհալի իմն անձնաւորութ̃ի, նազելի տեսիլ, տարօրէն իմն արագութ̃ի ՚ի զինուորական կրթութ̃իս, և ուժեղ իմն խառնուած կարող լինելոյ տոկալ զինչևիցէ աշխատութ̃ն։

՚Ի վայրկենին, որում Քորթէս առաջարկեցաւ Վելասքուեզայ յերկուց մտերմաց իւրոց, հաւաք յետոյ խելամուտ եղև Վելասքուեզ, թէ եգիտ զնա, զոր այնքան խնդրեալ էր ՚ի զուր. զայր մի լի քանքարօք վն̃ հրամանատար լինելոյ, և ոչ զառարկայ մի նախանձաւորութ̃ն. Ոչ պայմանն և ոչ հարստութ̃ին Քորթիսի, որպէս կարծէր Վելասքուեզ՝ էին այնպիսիք, զի ձկտեցուսցեն զնա առ անկախութ̃ի. Ունէր իրաւունս հաւատալոյ, թէ արագութ̃բ իւրով թաղելոյ ՚ի մոռացօնս զանցեալ շինականութ̃իսն, և ազատականութ̃բ իւրով յընձեռելն զնորանոր և զնշանաւոր շնորհս, արդէն շահեալ իցէ զբարեկամութ̃ի Քորթիսի. և յուսայր այսու անակնկալ մտերմութ̃բ փոխատրել զնա մշտնջենաւոր ցանկացօղ առանձին շահուց իւրոց։

Քորթէս ընկալեալ զյանձնարարութիւն իւր եռանդնագոյն բացատրութեամբք ակնածութեան և երախտագիտութեան առ բդեաշխն, անընդմիջաբար ամբարձ զդրօշ իւր առաջի տան իւրոյ. ետ տեսանել զանձն 'ի հանդերձ զինուորութեան, և զգեցաւ զամենայն նշանս նորոյ արժանապատուութեան իւրոյ. Բովանդակ գործունէութիւն իւր և ճոռոմութիւն 'ի վար արկեալ լինէին 'ի հաւանեցուցանել զբազումս 'ի սիրելեաց իւրոց առ 'ի դիմագրաւ լինել առ ծառայութեան, և փութացուցանել զպատրաստութիւնս վասն ճանապարհորդութեան. Բովանդակ ինչք իւր 'ի միասին ընդ դրամոյն, զոր կարաց ժողովել, տալով 'ի գրաւ զգետինս իւր և զհնդիկս, ծախեցաւ 'ի գնելն զպարէնս և զսպառազինութիւնս, և 'ի նախահոգալն զպիտոյս այնց պաշտօնատարաց, որք ոչ կարէին հանդերձել տարազու իմն պատշաճականաւ աստիճանի իւրեանց:

Նոյն– հետոյն եղանէ նախան– յառաջ նորա : 23. Նոյ– եմ.

(3) ‖ Քորթէս ունէր զերկու հազար դահեկանս 'ի ձեռս Անդրէի Տուէրայ. և էառ 'ի նմանէ փոխ չորս հազարս. Այս գումարք գրեթէ հաւասարք են յարժողութեան հազար վեցհարիւր լիրէ ըսթէրլինաց. բայց քանզի գին ամենայն իրաց էր վերջնաբար բարձր յԱմերիկա, կերպաւորէին զդրամագլուխ իմն ամենևին միջասահման հայելով 'ի կիրառութիւն, զոր արար նա յայնմանէ. Հերրէրա դէկ. Բ. դպր. Գ. Գլ. 2. 3. Տէազ. Գլ. 2. Եւն : ‖

Յայս անմեղ՝ ևս և գովելի ընթացս, որպէս և էր, համախնդրակք իւր 'ի դերև ելեալք, եղեն այնպէս չարահնարք, մինչև դարձուցանել զայն 'ի վնաս իւր. Առաջի առնէին զնա իբր արդէն ձկտեալ և աշխատադէմ 'ի կառուցանել ինքեան զանկախ իմն աւագութիւն 'ի վերայ գումարտակաց իւրոց և յապահովացուցանել զանձն 'ի վերայ ակնածութեան և սիրոյ նոցա գոռոզական և անձնաշահասէր առատաձեռնութեամբ իւրով. Յիշեցուցին Վելասքուեզայ

զնախ–

զնախկին տարաձայնութիւնս իւր ընդ առն ը այնմիկ, յոր այժմ նա դնէր զայնքան վստահութիւն. և արարին զկանխասացութիւն, թէ Կորթէս լինելոց էր առաւել յարմար առ'ի 'ի գործածել զիշխանութիւն, զոր ինքն անխորհրդաբար այն ինչ վստահանայր նմա, վասն առնլոյ վրէժ անցեալ անիրաւութեանցն, քան թէ վասն վճարելոյ այսց վերջին պարաւանդութեանց. Արարին զայնպիսի տպաւորութիւն այս տրամաբանութիւնք 'ի վերայ կասկածոտ ոգւոյ Վելասքուէզայ, մինչզի Կորթէս նշմարեաց վաղվաղակի յընթացս նորա զնշանս ինչ նորածին իմն ատելութեան և թերահաւատութեան. վասնորոյ խորհուրդ ետուն նմա բարեկամք իւր Լարէս և Տուէրոս փութացուցանել զգնալ իւր յառաջ քան զգալ իրացն յայնքան երևան, մինչև մերկանալ 'ի յայտնի իմն բռնութիւն. Խելամտեալ լիապէս այսմ վտանգի՝ ճեպեաց այնքան շտապաւ զնախապատրաստութիւնս իւր, մինչզի եղև յաստիճանի առագաստ վերացուցանելոյ 'ի սրբոյն Յակոբայ Կուպայի 'ի 18. նոյեմ. ընկերելով նմա Վելասքուէզ մինչև 'ի ծովափն, և հրաժարելով 'ի նմանէ երևութիւք կատարեալ բարեկամութեան և վստահութեան. Թէպէտ զանխլաբար պարտաւանդեալ էր զոմանս 'ի պաշտօնատարաց իւրոց ունել զաչս արթուն 'ի վերայ իւրաքանչիւր մասին գնացից հրամանատարին իւրեանց :

Ջանայ զրկել զնա 'ի հրամանատարութենէն :

1518

Կորթէս գնաց յառաջ մինչև ցԹրինիթայն փոքրիկ կայունաւորութիւն 'ի նոյն կողմանէ կղզւոյն. ուր յարեցան 'ի նա զանազան բաղդորդք. և ընկալաւ զլըրումն ռոճկաց և զինուց զինուորականաց. յորոց նուաղէին տակաւին համբարք իւր. Հազիւ թէ մեկնեալ էր 'ի սրբոյն Յակոբայ, յորժամ նախանձաւորութիւն, որ տածիւր 'ի սրտի Վելասքուէզայ, եղև այնչափ բուռն, մինչզի ոչ ևս կարաց յամել անդէն թաքուցեալ. Ապառազինաւին այլազգ ոչ էր 'ի ներքոյ աչաց իւրոց և ոչ 'ի ներքոյ ուղղաւո-

րուցութն իւրոյ. և իրազեկ լինէր, թէ ըստ չափուն, որով կարողութն իւր դադարէր, Ռօրթիսինն լինէր միշտ առաւել բացարձակ. Պատկերակերպութին մեծացուցանէր զբոլոր պարագայսն. որք յառաջնմէ հաստել էին զկասկածն. Նախանձորդքն Ռօրթիսի ձգէին զնա դիտմամբ առ խորհրդածութիւն, որք աճեցուցանէին զերկիւղս իւր. և հաւասար արուեստակութբ և չարութբ կոչեցին զմժմագործութին յօգնութի, 'ի կիր արկանելով զզգուշաւորութիս աստեղաբանի ուրուք առ 'ի աճեցուցանել զահն. Այս ամ երբ ներգործելով 'ի նմին ժամանակի յառաջ ածին զորդինս իւրեանց. Մելսաքուէզ զղջացաւ դառնապէս 'ի վե անխոհեմութն իւրոյ 'ի վստահանալն զիրողութի իմն այնչափ ծանրակշիռ անձին միում, զորոյ զհաւատարմութե երևէր այնպէս երկրայ. և արձակեաց փոյթ ընդ փոյթ առ Թուրինիթա զհրահանգս, աւագացուցանելով զՄէրտուկ զառաջին մեծաւորն 'ի տեղւոջն յայնմիկ առ 'ի զրկել զՌօրթէս 'ի յանձնարարութե իւրմէ. Բայց նա վաղ իսկ արարեալ էր զայնպիսի իմն մեծ յառաջադիմութի 'ի ստանալն զհամբաւ և զվստահութի զօրաց իւրոց, մինչզի տեսանելով զզօրագլուխսն և զզօրականսն զամենեսեան դիմագրաւս 'ի ջատագովել զհրամանատարութի իւր, հանդարտեցոյց, կամ թէ մանաւանդ զարհուրեցոյց զՄէրտունկ, այնպէս զի թողացուցեալ եղև նմա մեկնիլ 'ի Թուրինիթայէ առանց ինչ հարստահարութեան:

'Ի Թուրինիթայէ խարիսխ վերացոյց Ռօրթէս Նա—ա
դէպ Հոլանդայ առ 'ի առնուլ անտի աւելի զին- Նէլ,ղնա
ուորս, և խպառ հանդերձել ռոճկօք զնաւա- Ջանութբ
հանդէսն. Աստէն գրեցան 'ի ծառայութի զա- գէնէլ:
նազան երևելի անձինք. և անձնամատոյց եղեն 'ի մատակարարել որ զինչ պակասիր 'ի դարմանոցն. Բայց կարևոր ելով շնորհել նց ժամա.

մանակ ինչ առ 'ի արդիւնացուցանել զայն, զոր խոստանայրն, Վելասքուէզ խելամտեալ թէ ոչ պարտ է յենուլ յերկարագոյնս 'ի վ̃ն մարդոյ միոյ, զորմէ նախինքն այնպէս բացերեւակի ցուցեալ էր զթերեւհաւատութի̃ իւր, 'ի կիր էառ զմիջոցն պատճառեալ յայսմ անխորշելի յապաղմանէ առ 'ի առնել զթեւակոխութի̃ մի եւս, եւ բառնալ զհրամանատարութիւն 'ի ձեռանէ Քօրթիսին. Գտանգատեցաւ նա ուժգին զգնացիցն Մերտուկայ, ամբաստանելով զնա, կամ վ̃ն տղայական դիւրանասացութենն կամ վ̃ն յայտնի մատնութենն 'ի թողուլն զՔօրթէս մեկնել 'ի Թրինիթայէ. փոյթ յանձին ունելով առ 'ի ոչ խափել միւսանգամ, արձակեաց զմի ոք մտերիմ իւր 'ի Հաւանա իսկական պատուիրանաւ առ Պետրոս Պարպայն ետեղակալ իւր բդեաշխ յայնմ հարգունութեան առաքել զնա կալանաւոր 'ի սբն Յակոբ ը̃ քաջ իմն պահպանութեամբ. եւ յամեցուցանել զմեկնիլ սպառազինութենն, մինչեւ ոչ ընկալցի յիւրմէ զվերջնագոյն կարգաւորութիս. Գրեաց նոյնպէս առ նախապետական պաշտօնատարս, դնելով 'ի վ̃ն նց բեռն՝ լինել ձեռնտու Պարպայի առ կատարումն այնր ամի, առ որ պարտաւորեալ էր զնա. Բայց յառաջ քան զհասանելն պատգամաւորին իւրոյ, միանձն ոք Ֆրանչիսկեան 'ի սբյն Յակոբայ տարեալ էր գաղտաբար զծանօթութի̃ այսր պատկանաւոր իրակութ̃ առ Բարթողիմէոս Օլմետացի կրօնաւոր 'ի նոյն կարգէ. որ ծառայէր զօրացն իբր մատրանապետ:

Քօր-
թէս ել-
անէ
[illegible]
1518

Քօրթէս ազդեալ վ̃ն վտանգին՝ կալաւ ժամանակ զգուշանալոյ վ̃ն փրկութեն անձին իւրոյ. Առաջին քայլ իւր եղեւ գտանել զպատրուակ ինչ հեռացուցանելոյ 'ի Հավանայէ զԴեկոս Օրտաց պաշտօնատար մեծավաստակ. բայց որում յաղագս իւրոյ ծանուցեալ յարմանն 'ի Վելասքուէզ՝ ոչ կարէր վստահանալ յայսմ նորոգ եւ փափուկ լծակցութեն. Ետ նմա զհրաման նաւու իրիք սահմանեցելոյ առ 'ի բառնալ զզարմանս ինչ 'ի փոքրիկ նաւահանգստի միում անդր քան զԿափօ Անթօնիօ. և այսպէս կարող եղև ապահովանալ զհեռաւորութէ նք առանց ցուցանելոյ ունել կասկած զհաւատարմութէ իւրմէ. Իբրև մեկնեցաւ Օրոտայ, Կօրթէս ոչ ևս կալաւ թագուն 'ի գնդաց իւրոց զդիտմունսն Վելաքուէզայ. և պաշտօնատարք և զօրականք հաւասարապէս անհամբեր գոլով երթալոյ առ անգամ մի առ շահատակութի իմն, որոյ 'ի հանդերձանս ծախեալ էր մեծագոյն մասն 'նց զբոլոր գոյս իւր, ցուցին զապշութի իւրեանց և զտրտմութի վս այնր անհանճար նախանձաւորութեն, որում բդեաշխն խորհէր զոհել ոչ այնչափ զպատիւ սպարապետին իւրեանց, որչափ զվառեալ յոյս իւրեանց՝ փարթամութեն և փառաց. Յաղերս անկան միաշունչ բարբառով չկամել թողուլ 'ի բաց զերևելի աստիճանն, առ որ ունէր զայնպիսի օրինաւոր հիմն. Երդմնեցուցին զնա չզրկել զնս յառաջնորդէ միոջէ, որում զհետ երթային նոքին այնպիսի հաստատուն վստահութբ. և յառաջամատոյց եղեն առ 'ի հեղուլ մինչև ցվերջին կաթիլ արեան իւրեանց վս պահելոյ զաւագութի իւր. Կօրթէս հակեցաւ դիւրակի և յարեցաւ յայն, որում նախինքն փափաքէր այնքան եռանդեամբ. Երդուաւ ոչ բարձի թողի առնել երբէք զզինուորսն, որք առեալ էին նմա զայնպիսի նշանաւոր փորձս սիրոյ իւրեանց. և բացարձակ խոստացաւ ածել զնս յայն հարուստ երկիրն, որ էր յայնպիսի երկայն ժամանակաց հետէ առարկայ խորհրդոց և ուխտից իւրեանց. Այսմ յայտարարութեն ունկնդիր եղեն զեղմամբ իմն զինուորական կայթման հանդերձ սպառնալեօք և անիծիւք ընդդէմ ամենեցուն 'նց, որք ժպրհիցին դնել յերկրայս զիրաւարարութիւն սպարապետի իւրեանց, կամ արկանել խուչս ընդդէմ կատարման խորհրդոց իւրոց։

1518 Թիւ զօրաց էրոց: Ամ ինչ էր արդէն առձեռնպատրաստ վասն երթալոյն. այլ թէպէտ և այս շահատակութի էր միացեալ ծիգն Սպանիական կարողութեն'ի Քուբայ, թէպէտ և իւրաքանչիւր տուն հանգանակեալ էր առ այն իւրով քանիօնուք արանցն և նաւարկացն, թէպէտ և բդեաշխն մատուցեալ էր զերևելի գումարս, և իւրաքանչիւր բաղդորդ հիմնաւորեալ զդրամագլուխս իւր և եդեալ բովանդակ 'ի շահաւորուն զփոխ իւր, սակայն գծծութի նախապատրաստութեանցն էր այնպիսի, մինչև շարժել զծիծաղ յայժմու դարուս. որովհետև բնաւին այլ ինչ ցուցանէր. քանթէ պատրաստութի ապաղալինութն իրիք սահմանեցելոյ առ տիրապետութի մեծի թագաւորուն ուրուք. Նաւկանայր նաւատահանգէսն մետասան նաւուք. մեծագոյնն էր հարիւր թօննէլաթից, որ և էր աղնուանցուցեալ անուամբ ծովակալի. երեքն եօթանասուն կամ ութսուն թօննէլաթից. և մնացեալն փոքրիկ բաց նաւակք. Էին 'ի նաւսն վեցհարիւր եօթն և տասն արք. յորոց հինգհարիւր ութն վերաբերէին առ ծառայութի ցամաքի, և հարիւր ինն երթային իբր նաւավարք և արհեստաւորք. Զինուորքն բաժանեալ էին 'ի մետասան ընկերութիս ըստ թըւոյ նաւուցն. որոց իւրաքանչիւր կարգեաց Քօրթէս գլխաւոր մի. որում յանձն արար զհրաման նաւուն յորժամ լինէին 'ի ծովու, և արանցն երբ յափն։

(4) ‖ Անուանք քաջ զօրագլխոցն, զորոց յաճախ ունիցիմ առիթ խօսելոյ յայսմ վիպասանութն, են Յօհաննէս Վելասքուէզ Լէօնեան, Ալօնծոս Հէռնանտէզ Փորթօ Քարրէրօ, Ֆրանչիսկոս Մօնթէլեան, Քրիստոփանոս Օլիտեան, Յօհաննէս Էսքալանթեան, Ֆրանչիսկոս 'ի Մօրլայէ, Պետրոս յԱլվարատոյ, Ֆրանչիսկոս 'ի Սալչէտոյ, Յօհաննէս յԷսքօպարայ, Ճինէս 'ի Նօրթէ-

թեւայ. Կօրթէս հրամայեր գլխաւոր նաւուն. Ֆրանչիսկոս Օրօծէոս պաշտօնատար նշանաւոր 'ի պատերազմունսն Իտալիոյ ունէր զհրաման թնդանօթաց. Հմտացեալն Ալամինոս գործեր իբր նաւուղիղ ընդհանրական։ ‖

Եւ քանզի կիրառութիւն հրացան զինուց 'ի մէջ ազգացն Եւրոպիոյ ցայնժամ ամփոփեալ էր 'ի սակաւ խումբս հետեւակաց կանոնաւորապար կրթելոց, միայն երեքտասան զինուորք զինեալ էին հրացանօք, երեսուն և երկու էին ռմբաւորք և մնացեալքն կրէին զսուսեր և զտէգ. փոխանակ սովորական պաշտպանական զրահաւորման, որ լինելոց էր նեղացուցիչ 'ի ներքոյ ջերմ կլիմայի, զգենուին զճօշս պատեալս 'ի ներքոյ բամբակաւ, զոր փորձառութիւն ուսուցեալ էր Սպանիացւոց լինել բաւական պատսպարան ընդդէմ զինուց Ամերիկացւոց. Ունէին ընդ իւրեանս միայն զվեշտասան երիվարս, զտասն փոքրիկ թնդանօթս և զչորս երկայնաձիգ հրացանս։

Այսու փանաքի և ոչ բաւուք հանդերձեալ հետեւակաւ Կօրթէս առագաստ վերացոյց առ 'ի երթալ տալ պատերազմ ընդդէմ միապետի միոյ, որոյ տէրութիւնք էին աւելի տարածեալք քան զբոլոր թագաւորութեանցն ենթադրելոց ինքնակալութեն Սպանիոյ. Եւ քանզի կրօնաւորական եռանդն խառնիւր միշտ ընդ հոգւոյ բաղդին 'ի նոր աշխարհին, ևս և առաւել օտարոտի իմն դասաւորութիւն միաւորիւր ընդ ագահութեանն, յորդորելով զՍպանիացիս առ ձեռնարկութիւնս իւրեանց, խաչ մի մեծ պարզեալ եղև 'ի դրօշակս նց այսու մակագրութեամբ. ԶՀԵՏ ԵՐԹԻՑՈՒՔ ԽԱՉԻՆ ԵՒ ԸՆԴ ԱՅՍՈՐԻԿ ՆՇԱՆԱՒ ՅԱՂԹԵՍՑՈՒՔ ՄԵՔ։

1. Փե- տրուար. 1519. [illegible]

Այս երկու կիրք խրախուսեին այնպէս ուժգնակի զԿօրթէս և զհետեւօղս իւր, մինչ զի ոչ միայն ծարաւիք յաւար հարկանելոյ զփարթամ երկիրն, ոչ պաքաւանդեալ էին, այլ նախանձայոյզք տաբաժանելոյ զքրիստոնէական հաւատն 'ի մէջ բնակչաց իւրոց նաւեցին փութոյ պնդութեամբ բնականաւ մարդոց, որք երթան ընդդէմ վտանգաւոր գործողութեանց, և ապահովութիւն, որ ծնանի 'ի վստահութենէ բարեյաջողութեան և 'ի ստուգութենէ աստուածային պաշտպանութեան :

1519. Ի մտի եդեալ Քորթէս դիմել յայն տեղին
Հասա- վաղ իսկ այց արարեալս 'ի Կրիջալվայ՝ նոյնհետայն
նէ 'ի դիմեաց ուղղակի դէպ կղզւոյն Քոծումէլայ. և
Քոծու- կալաւ զբարեբաղդութիւն փրկելոյ անդէն զՃիրո-
մէլ : լամոս Ակուիլար Սպանիացի, որ եղեալ էր Ը ամս
ութին կալանաւոր 'ի մէջ Հնդկաց, այս այր գիտէր կատարելապէս զբարբառ լեզուի նոցա իմացելոյ ընդ երկայն իմն տարածութիւն այնր երկրի. և գոլով ևս ճոխացեալ հանճարով և լրջմտութեամբ, եղև ամենևին օգտակար իբր թարգման. Ի Քոծումէլայ յառաջ խաղաց Քորթէս առ գետն Թա-
Նաւէ 'ի ւասքօ յուսով պատահելոյ նոյն բարեկամական
Թաւաս- ասպնջականութեան, զոր ընկալեալ էր անդէն Կրիջալ-
քօ. 4. վա և գտանելոյ անդ զոսկի հաւասար առատու-
Մարտի. թեամբ. բայց բնաւորութիւն ազգայնոց վասն անծանօթ ինչ պատճառի բնաւին փոխեալ էր. Յետ կրկին և կրկին փորձելոյ յանկուցանել զբարեկամութիւն նոցա, տեսաւ հարկադրեալ դիմել առ բռնութիւն. Թէպէտ զօրք թշնամեաց էին յոգնաթիւք, և գեր 'ի վերոյ էին քան զնոսա յարտաքոյ կարգի քաջասրտութեամբ, սակայն վաղվաղակի խորտակեցան մեծամեծ կոտորածիւ՝ յերկուս յաջորդական պատերազմունս. Կորուստն, զոր կրեցին և ևս առաւել շուարումն և սարսափումն զարթուցեալ յապականիչ արտագործութեանց հրացան զինուցն և 'ի սոսկալի երևութէ երիվարաց, խոնարհեցոյց զհոգիս նոցա, և վերածեաց զնոսա խնդրել զխաղաղութիւն. Սերածանեան զթագաւորն Քասթիլիոյ իբր գերագոյն տէր իւրեանց. և հաւանեցան տալ Քորթէսայ զլրումն իմն դարմանոց հանդերձ ընծայիւ

Ծայիմ բամբակեայ զգեստուց ինչ, սակաւ ինչ տսկուով և քսան կանամբք գերեօք։

(5) ‖ Յայսոսիկ զանազան մրցմունս Սպանիացիք կորուսին միայն զարս երկուս. բայց ընկալան զմեծ բազմութ̃ի վիրաւորելոց. Թէպէտ ոչ պիտի դիմել առ պատճառ ինչ գերբնական առ'ի տալ զփաստ յաղթութ̃նց ն̃ց և փրկութ̃նց կորստեանց ն̃ց, սակայն Սպանիացի վիպասանք ոչ պակասին զերկուսին զայսոսիկ իրս վերագրել պաշտպանութե̃ սր̃յն Յակոբայ փաստաւանի երկրի իւրեանց. որ ըս̃ պատմելոյ ն̃ց, պատերազմի 'ի գլուխ հայրենակցաց իւրոց. և որոշէ զվճակ պատերազմին. Կօմարա է առաջին, որ յիշատակէ զայս երեւումն սր̃յն Յակոբայ. Զբօսալի է յոյժ նշմարելն զաղմուկ Բեռնարդոսի Տիացու Կասթիլեան պատճառեալ 'ի հակառակութե̃ 'ի մէջ դիւրահաւատութե̃ իւրոյ և ճշմարտասիրութե̃. Առաջինն պատրաստէր զնա 'ի հաւատալ զայս հրաշս. երկրորդն հրաժարեցուցանէր զնա 'ի հաստատելոյ զայն.
„ Խոստովանիմ ասէ, թէ պարտիմք մեք զամե-
„ նայն քաջագործութիւս մեր և զյաղթութիւս մե̃
„ մերում Յ̃ի Ք̃ի. և թէ յայսմ պատերազ-
„ մի էր այնպէս մեծ թիւ Հնդկացն ը̃դէմ մեր,
„ մինչզի եթէ իւրաքանչիւր 'ի հակառակորդաց
„ ձգեալ էր մեզ զափ մի հողոյ, կարողացեալ
„ էին թաղել զմեզ, եթէ չէր պատսպարեալ զմեզ
„ ա̃ծային ողորմութիւն. Կարէ լինել, թէ անձն,
„ զոր Կօմարա ասէ երեւեալ 'ի վ̃ր խայտախա-
„ րիւ երիվարի միոյ, լեալ իցէ փառաւոր առա-
„ քեալն սր̃ն Յակոբոս, կամ սր̃ն Պետրոս. և
„ թէ ես իբր մեղաւոր չեղէ արժանի տեսանելոյ
„ զնա. Այլ ես ստոյգ եմ, թէ տեսի զՖրան-
„ չիսկոս Սնուլացի 'ի վ̃ր նմանակ իմն երիվարի.
„ այլ չարժանացայ տեսանել զք̃ 'ի սր̃ առա-
„ քելոցն. Կարէ լինել, թէ լեալ իցէ կամքն ա̃յ,
„ զի իցէ այնպէս, որպէս պատմէ Կօմարա. Բայց

„ ՚ի մէջ ա̄մ յաղթականաց ոչ լուայ երբէք ասել, թէ հանդիպեալ իցէ այսպիսի ինչ իր.
„ և ես ոչ գիտացի զայն, մինչ ոչ ընթերցայ
„ զժամանակագրութիւն իւր „ Քուամ. ԸԷ: ||

Հասանէ ՚ի Սան Ճիօվաննի տէ Ուլուայ: Կորթէս շարունակէ զգնացս իւր ՚ի արեւմուտս, նաւելով որչափ կարող էր մօտ առ ափամբ առ ՚ի բարւոք նշմարել զերկիրն. բայց ոչ գիտաց տեսանել զտեղի ինչ յարմար մտանելոյ մինչև ոչ եհաս ՚ի սան Ճիօվաննի տէ Ուլուայ. Մինչդեռ մնայր նա յայն նաւահանգիստ, ստուար ինչ քանօք լի ամբոխիւ, և ՚ի մէջ սոցա երկուք, որք երևէին անձինք երևելիք, մերձեցան առ նաւ իւր նշանօք բարեկամութեան և խաղաղութեան. Եկին ՚ի նաւն առանց երկիւղի և թերեւհաւատութեան. յանդիման եղեն նմա ա̄մ ակնածուք, բայց խօսելով զլեզու մի բոլորովին անծանօթ Ակուիլարայ. Կորթէս էր ՚ի մեծագոյն շփոթման և ՚ի մեծագոյն վարանման առ պատահումն իմն, զոր ոչ նախատեսանէր զբոլոր հետեւութիւնս. և քաջ իրազեկ լինէր, թէ որքան անստուգութիւն և տարակուսանօք պարտ էր յառաջ տանել զմեծամեծ առաջարկութիւնս, զոր խորհէր, եթէ ՚ի պայմանադրութիւնս իւր ընդ այլազգեաց պարաւանդեալ էր կախիլ մեկին յանկատար իմն յերկդիմի և՚ի վարկածական եղանակէ հաղորդելոյ զգաղափարսն, որպիսի էր նշանացի խօսիլն. Բայց ոչ եկաց յերկար ժամանակ յայսմ դժուարին կացութեան. Բարեբաղդ իմն դիպուած եբարձ զտագնապ նր. յորմէ միայն աչալրջութիւն իւր դժուարաւ ազատեալ էր զնա. Մի ՚ի գերի կանանցն, զորս ընկալեալ էր նա ՚ի քաղաքեայ Թապասքօին տուր դիպուածով ներկայ յառաջին խօսակցութեան եղելոյ ՚ի մէջ Կորթէսայ և նոր հիւրից իւրոց. Կինն զգաց զշուարումն նորա և զշփոթութիւնն Ակուիլարայ. և զի իմանայր կատարելապէս զլեզուն Մեքսիքեան, մեկնեաց զայն, զոր նոքա ա-

2. [illegible] մէն.

տանէին, 'ի բարբառ Խուքաթանու. որում Ակուիլար քաջ վերահասու էր. Այս կին, որ եղիցի ծանուցեալ առ յապայն ը̃ անուամբ Մարինայի, որ և առնէ զպայծառ իմ̃ն երևոյթ 'ի վիպասանութեն Նորոյ աշխարհի, ուր մեծամեծ խռովութիւնք յառաջ ածեալ էին 'ի թեթև պատճառաց և յամենատկար գործեաց, ծնեալ էր 'ի միում 'ի գաւառացն Մեքսիքեան կայսրութեն. Գողով կալե̃լ գերի 'ի գնդէ իմեքէ թշնամւոյ, յետ պէսպէս փոփոխութ̃ենց գնաց անկանել 'ի ձեռս Թաբասքացւոց. և էր կալեալ յայնքան ժամանակ 'ի մէջ նոցա, մինչև ուսանել զլեզուս ն̃ց առանց կորուսանելոյ զկիրառութի իւրոյն. Թէպէտ դժուարին էր և տհաճելի խօսելն միջնորդութ̃բ երկուց տարբեր թարգմանաց, սակայն Քորթէս զգաց զայնպիսի կենդանի ուրախութի վ̃ն գտանելոյն զայս եղանակ խօսելոյ ընդ ժողովրդոց աշխարհի միոյ, 'ի ներքս որոյ 'ի մտի հաստատեալ էր ընդմտանել, մինչ զի 'ի զեղմունս հրճուանաց իւրոց համարեցաւ զայն իբր երևելի իմ̃ն միջնորդութի յառաջատեսչութեն 'ի նպաստ իւր: 1519

Այնժամ 'ի միտ էառ, թէ երկու երևելի անձինքն, զորս ընկալեալ էր 'ի նաւ իւր, էին առաքեալք 'ի Փիլփաթօեայ և 'ի Թէութիլեայ, որոց մինն բդեաշխ էր այնր գաւառի 'ի ներքոյ մեծի միապետի ուրումն կոչեցելոյ Մոնթեզումա, և միւսն հրամանատար զօրաց իւրոց 'ի նմին տեղւոջ. և թէ յղեալ էին նոքին 'ի հարցանել, թէ զինչ էին դիտմունք իւր յայց առնելն ծովեզերաց իւրեանց և մատուցանել նմա նպաստ, զորոյ կարէր պէտս ունել առ 'ի շարունակել զճանապարհորդութի իւր. Քորթէս շտուցեալ առ երևումն այսր ազգի և առ տարաղ պատգամաւորութեն, ապահովացոյց զն̃ս մեծարու եղերօք, թէ նա մատչէր յերկիր ն̃ց բարեկամագոյն մտօք, և գայր առաջադրել նիւթս մեծակշիռս վ̃ն բարւոյ արքայի

Հանէ 'ի
նաւուց
զզօրս
իւր:

իւրեանց և արքայութեն իւրոյ. ուր ինքն մեկնեացէ ընդարձակագոյնս անձամբ առ բդեաշխն և առ սպարապետն. Ի հետևեալ աւուր առանց սպասելոյ իմիք պատասխանւոյ՝ ետ իջուցանել 'ի ցամաք զգունդս իւր և զերիվարս իւր և զթընդանօթս. և գոլով ընտրեալ զգետին իմն յարմար, սկսաւ կանգնել զխորանս վն արանց իւրոց և ամրացուցանել զբանակ իւր. Ազգայինքն փոխանակ դիմադարձելոյ մտից այսց մահաբեր հիւրից ձեռնտու եղեն յամ գործողութիս իւրեանց յօժարամտութի իմն և զուարթութի. որոյ վն յետոյ կալան զմեծ պատճառ զղջանալոյ:

1519 Իւր առաջին խօսակցութիւն ընդ Մեքսիկացւոց: Ի յետագայ աւուրն Փիլփաթօէ և Թէութիլէ եկին 'ի բանակն Սպանիացւոց յոգնաթիւ իմն հետևակաւ. և Քօրթէս նկատելով զնս իբր գործակալս մեծի ուրուք միապետի արժանիս ուշադրութեն իմն բազմօք տարբեր եղելոյ յայնմանէ, զոր Սպանիացիք սովոր էին մատուցանել փոքրիկ քազիքէից, ընդ որս ունէին զրոյցս, ընկալաւ զնս առաւել կերպական արարողութ. Քօրթէս ծանոյց նց, թէ գայր իբր պատգամաւոր 'ի կողմանէ ամն Քառլոսի Աւստրիոյ արքային Քասթիլիոյ մեծագոյն միապետին արևելից. և թէ հաւատացեալ էին նմա նախադասութիք այնչ ծանրակշիռք, մինչզի նա ոչ կարէր հաղորդել այլում ումեք, բայց եթէ նմին կայսեր Մոնթէծումայ. և թէ վնկ աղաչէր զնս ածել զինքն առանց կորուսանելոյ զժամանակ առաջի ամն իւրեանց. Մեքսիքացի պաշտօնատարքն ոչ գիտացին ունել թաքուն զամբոխումն իւրեանց առ խնդիր իմն, զոր ճանաչէին լինել անհաճոյ, և զոր գուշակէին պատճառելոց զմեծ իմն աղմուկ արքային իւրեանց, որոյ սիրտն լցեալ էր բազում խոշտանգիչ կասկածանօք անդստին յառաջին երևմանէ Սպանիացւոց 'ի ծովեզերս իւր. Բայց յառաջ քան զպատրաստիլն տարհամոզել զՔօրթէս 'ի պնդելոյ 'ի

խընխնդիր իւր, հնարեցան յանկուցանել զբարեկամութ̄ի նր̄, աղաչելով զնա ընդունել զընծայս ինչ, որք իբր նուաստ ըստրուկք Մոնթէծումայի դնէին առ ոտս իւր. Նյոռքիկ էին կարի նրբագոյն պաստառ բամբակեայ, երփն երփն բրուկք և զարդք ոսկւոյ և արծաթոյ մեծագինք և ծայրագոյն արուեստակութ̄ե չինեալք. Ցուցումն այսպիսի իրաց յառաջ եած զարդիւնս ամենեւին տարբերս յայնմանէ, որում սպասէին Մեքսիքացիք. փոխանակ յագեցուցանելոյ աճեցոյց զագահութիւն Սպանիացւոց, և արար զնս̄ այնպէս փափագօղս և անհամբերս եղանելոյ տր̄ երկրի միում, որ առատացեալ էր այնպիսի մեծագին բերովք, մինչզի Քորթես հազիւ կարող եղև ունկն դնել համբերութ̄ե պատճառացն, զորս Փիլփաթօէ և Թէւութիլէ յառաջ բերէին առ 'ի բաց դարձուցանել զնա յերթալոյ յայցելութ̄ի մայրաքաղաքին. և խրոխտական և բացարձակ իմն ձայնիւ բարբառոյ պնդեցաւ յառաջին խնդիր իւր ընկալեալ լինելոյ յունկնդրութ̄ի միապետին իւրեանց. Մինչդեռ յայսմ խօսակցութ̄ե էին, ոմանք նկարիչք 'ի հետևակէ գլխաւորացն Մեքսիքացւոց աշխատէին 'ի գծագրել 'ի վերայ սպիտակ բամբակեայ կտաւոց զձևս նաւուց, երիվարաց, թնդանօթոց, զինուորաց և այլ իմն իրաց, որք վս̄ եզականութ̄ե իւրեանց յառեցուցանէին զհայեցուածս նց̄. Իբրև նշմարեաց Քորթես զայս, և տեղեկացաւ, թէ նկարուածքն պարտ էին առաքիլ առ Մոնթէծումա առ 'ի յանդիման առնել նմա զկենդանագոյն իմն գաղափար օտար և սքանչելի առարկայիցն եկելոց նց̄ 'ի տեսութ̄ի, և զոր ոչ կարէին հաղորդել խօսիւք, որոշեաց առնել զերևեցուցումն ևս առաւել կենդանական և շահարեր, առաջի մատուցանելով զտեսարան մի այնպիսի, որ տայր երկոցուն նց̄ և միապետի նց̄ զտեսակ մի տարապայման կարողութ̄ե հետևողաց իւրոց, և անընդդիմակայելի զօրութեան զինուց նոցա. Հնչեցուցին հրամանաւ իւրով զգալարափողսն. գունդքն 'ի միում վայրկենի եդան 'ի կարգի պատերազմի. հետևակազօրն արար զինուորական կըրթութիւնս ինչ առաւել յարմարեալս 'ի յաղթահարել զնս̃ 'ի վ̃ր արտադրութեն զանազան զինուց նց̃. երիվարքն պէսպէս պտոյտքմամբքն ետուն զհաւաստիս իմն արագաշարժութեն իւրեանց և կորովութեն. Թնդանօթքն դարձուցեալք դէպ թանձր անտառացն, որք շուրջ պատէին զբանակն, արարին 'ի մէջ ծառոցն զսոսկալի իմն կոտորած. Կային Մէքսիքացիք 'ի տեսանել այնուլուկ ապշութ̃բ, որ բնական է, յորժամ միտքն հարեալ է յառարկայից սարսափելեաց և վերնագունից քան զհասողութի իւր. Յայլ յարձակման թնդանօթին բազումք 'ի նոցանէ փախեան, ոմանք անկան յերկիր. և բոլորեքեան այնպէս շփոթեցան 'ի տեսանելն զմարդիկ, որոց կարողութին նման էր այնպէս մօտաւորաբար կարողութեն այ̃, մինչ զի դժուարին եղև Քօրթիսի վերստին հանդարտեցուցանել զնս̃ և ապահովացուցանել. Նկարիչքն ունէին յայնժամ բազում առարկայս 'ի վար արկանելոյ զարհեստս իւրեանց, և տանջէին զխելս առ 'ի գտանել զձևս և զդըրոշմս և ներկայացուցանել զիրսն տեսեալս յինքեանց:

Ընծայմանց ընդ Մօնթէծումայ:

Անընդմիջաբար արձակեալ եղեն սուրհանդակք հանդերձ այսոքիւք նկարօք և լիագոյն իմն պատմութ̃բ այնր ամ̃ի, որ եղեալ էր զկնի հասանելոյ Սպանիացւոց. և միջնորդութ̃բ նց̃ առաքեաց Քօրթէս զընծայ ինչ 'ի հետաքրքրական իրացն Եւրոպացւոց, առ Մօնթէծումա զորս թէպէտ և ոչ մեծագինս, հաւատայր ընդունելի լինել յաղագս նորութեն իւրեանց. Մէքսիքացի միապետք վ̃ն տեղեկանալոյ վաղվաղակի զամ̃ անցից՝ յիւրաքանչիւր անկեան համատարած կայսրութեան իւրեանց արարեալ էին զկայան անծանօթ յայնմ ժամ̃կի Եւրոպիա. Ունէին սուրհանդակս դարանեալս առ ալքունի ճ̃պհօք. և զի ոտքս կըրթեալ էին յարագութ̃ի կանոնաւոր իմ̃ դաստիարակութ̃, և մին փոխանցէր առ միւսն 'ի չափաւոր տարակացուլս, տանէին զնորալուրս սխրալի իմ̃ արագութ̃. Թէպէտ և մայրաքաղաքն, յորում նստէր Մոնթէծումա, գրեթէ հարիւր ութսուն մղոն հեռի էր 'ի սր̃յն Յօհաննու Ուլուայ, ընծայքն Կորթեսայ տարեալ եղեն անդր, և պատասխանին առ խնդիրս իւր յղեալ եղև 'ի սակաւ աւուրս. Նոյն պաշտօնատարք, որք ցայնժամ վիճեալ էին ընդ Սպանիացւոց, պարտաւորեալ եղեն առ 'ի տալ զայն. բայց գիտելով նոքին, թէ որքան բացորոշուն ինքնակալին իւրեանց հակադրիւր բոլոր առաջարկութ̃նց և բաղձանաց Սպանիացի հրամանատարին, ոչ կամեցան համարձակիլ ծանուցանել նմա զայն, մինչև ոչ փորձեսցեն նախընթացարար քաղցրացուցանել զնա և հաճել. Նորոգեցին առ այս վախճան զիրակութ̃ն, 'ի ներքս ածելով զխումբ մի Հնդկաց բեռնաւորեալ ընծայիւք առաքեցելովքն 'ի Մոնթէծումայ. Անձագործութ̃ի նր̃ վայել էր մեծի ութեան միապետի. և գերազանցէր բազմօք քան զինչևիցէ տեսակ, զոր Սպանիացիք մինչև ցայն ժամանակ կերպաւորեալ էին զփարթամութ̃նցնի. Եդեալ եղեն 'ի վ̃ր սփռոցաց տարածելոց յերկրի և այն յարմարեալ իմ̃ կարգաւ առ 'ի տալ նր̃ զմեծագոյն շուք. Կորթէս և պաշտօնատարք իւր հայէին հիացմամբ 'ի պէսպէս ձեռակերտսն այնր աշխարհի, 'ի դիպակսն բամբակեայս այնպէս գերազնիւս և այնպիսի իմ̃ նուրբ անկոճածուլ, մինչ զի երևէին մետաքս, 'ի նկարսն չնչաւորաց, ծառոց և այլոց առարկայից բնականաց կերպաւորեալս գրչօք զանազան գունովք տրամադրեալս և ընդխառնեալս այնպիսի ճարտարութ՟բ և վայելչութ՟բ, մինչև մրցել դրչագործութ՟բքն 'ի ճշմարտութ՟ն և 'ի գեղեցկութ՟ն նմանողութ՟ն. Սակայն այն, որ նախապետաբար պշուցց զաչս ն՟ց, եղեն երկու մեծամեծ ափսեայք բոլորակաձևք, մինն յոսկւոյ ձուլոյ երևեցուցիչ արեգական, և միւսն արծաթի, որ երևեցուցանէր զլուսինն։ (6) ‖ Յոլով վկայասանք Սպանիացիք պատմեն զայս գործ այնպիսի եղերգք, զի տան տեղի հաւատալոյ, թէ Հնդիկք բեռնաւորեալք այսոքիւք ընծայիւք բերեալ իցեն նմա 'ի մայրաքաղաքէն 'ի նոյն միջոցի ժամանակի, յորում սուրհանդակք արարեալ էին զայն ճանապարհորդութիւն. Այս անհաւատալի իմն է. և Կօմարա յառաջ ածէ զպարակայ մի, որ ցուցանէ, թէ յայնմ դիպուածի ոչ եղև իր ինչ արտաքոյ կարգի. Այս հարուստ ընծայ նախապատրաստեալ էր վ՟ն Կրիյալվայի, յորժամ եհաս 'ի նոյն տեղի վեց ամսօք յառաջ. և էր պատրաստ առ 'ի աւանդել իսկոյն ը՟ տալն Մոնթեծումայ զայնմանէ զհրամանս. Կօմարա [illegible]. Գլ. ԽԵ. Ըստ Բեռնարդոսի Տիազու Քասթիլլեան արժողութի արծաթի ակաւառակին երևեցուցանողի զլուսինն էր միայն քսան հազար դահեկան և աւելի. այս է, իբր հինգ հազար լիրէ ըսթեռլինս։ ‖

Ընդ այնց ընծայից լծակցեալ էին և ապարանջանք և մանեակք և մատանիք և այլ չքնաղ ոսկեղէնք. և ոմղէ մի պակասեսցի ինչ յայնմանէ, որ կարէր տալ Սպանիացւոց զգաղափար իմն բերոցն Մէքսիքոյ, էին 'ի ն՟ն և թուփք ինչ լի մարգարտօք, ակամբք պատուականօք և հատիւք անգործ ոսկւոյ, որպիսի գտեալ էին 'ի հանքս կամ 'ի գետս. Քորթէս ընկալաւ զայս ա՟մ երևութի՟ խորին ակնածութ՟ն առ միապետն, յորմէ առաքիւր. Բայց իբրև Մէքսիքացիք ասացին նմա, թէ ինքնակալ իւրեանց աղաչէր զնա ընդունել զայն, զոր առաքեալ էր նմա իբր հաւաստիս իմն մեծարանաց իւրոց առ արքայն, զոր նա ներկայացուցանէր, այլ թէ ոչ տայր երբէք զհաւանութիւն իւր, թէ օտարոտի գունդք մերձենայցեն 'ի գլխաւոր քաղաք իւր, կամ թէ տակաւին յամեսցեն յերկարագոյն ժմկ 'ի տրութիս իւր, Կորթէս յայտ արար կերպականագոյն եզերօք, թէ նա ոչ 'ի բաց կայր յառաջին խնդրոյ իւրմէ, ոչ կարելով դառնալ յետս առանց վնասելոյ զպատիւ ինքնակալին իւրոյ, մինչև ոչ ընկալեալ լինիցի առաջի արքային, յորոյ սահմանեալ էր նա յայցելութի յանուն իւր. Մէսսիքացիք աշխատեալք 'ի տեսանելն, թէ մարդ մի իշխէր դիմադարձիլ կամաց միապետի միոյ, զոր սովոր էին ակնածել, նաև երկնչելով գահավէժել զհայրենիս իւրեանց 'ի յայտնի իմն պատառումն ը այնպիսի ահարկու թշնամեաց, հաւանեցուցին զԿորթէս խոստանալ չշարժիլ 'ի բանակետղէ իւրմէ մինչև 'ի վերադարձ սուրհանդակի միոյ, զոր արձակէին առ Մոնթէծումա վասն վերջնագոյն հրահանգութեանց :

Հաստատութին, որով ընդդեցաւ Կորթէս 'ի նախկին առաջադրուն իւրում, պարտ էր բնականաբար բերել զընձեռումն 'ի մէջ նր և Մոնթէծումայ յառձեռն յարձակումն. որովհետև ոչ երբէք թողուլ միապետին Մէսսիքոյ զայլ ընտրութի, բայց եթէ կամ ընդունել զնա վստահութի բարեկամի, կամ ընդդէմ կալ նմա յայտնապէս իբր թշնամւոյ. Վերջին որոշումն էր սպասելի յարքայէ միոջէ այնքան ամբարտաւանէ և 'ի հզօրէ. Կայսերութին Մէսսիքոյ յայնմ ժամանակի գտանիւր 'ի գագաթն մեծութե, ուր ոչ ոք ընկերուի երբէք էհաս յայնպիսի սուղ շրջանի. Թէպէտ գոյր միայն 'ի հարիւր երեսուն ամաց հետէ, սակայն տէրութիք իւր տարածեալ լինէին 'ի հիւսիսային ծովէ մինչև ցհարաւայինն յերկրատանս, որք երթային աւելի քան զհինգ-

Հանգամանք Մէսսիքեան կայսերութե յայնմ ժամանակի:

հարիւր փարսախս յարեւելից յարեւմուտս, և աւելի քան զերկերիւր 'ի հիւսիսոյ ցմիջօրէ, պարունակելով զգաւառս ոչ վայրագոյնս յուռթիութն՟, 'ի բազմամարդութն՟ և 'ի փարթամութն՟ առ գաւառ իմն այրեցած գօտւոյն. Ժողովուրդքն էին զօրեղք և ձեռներէցք, աւագուն միապետին անկոպար, և հասոյթք իւր երևելիք. Եթէ զօրօքն, որք կարէին գումարիլ 'ի միում վայրկենի, գրոհեալ էր Մոնթեզումայ 'ի վ՟ի Սպանիացւոց մինչդեռ կային բանակելք՟ 'ի վ՟ի ամուլ իմն և անառողջարար ծովեզեր ոչ օժանդակեալք 'ի դաշնաւորաց՝ առանց իրիք տեղւոյ ապաստանի՝ և զուրկք 'ի դարմանոյ՝ անկարելի էր՝ ևս և հանդերձ յովանդակ առաւելութիք՟ կրթութն՟ իւրեանց և վերնագոյն զինուցն, թէ կարացեալ էին դիմակաց լինել նց՟. և լինէին կամ կորուսեալք յայնպիսի իմն անհաւասար մարտակցութն՟, կամ 'ի բաց թողեալք զձեռնարկութին՟ :

Անձն Մոնթէծումայ :

Կարողութին՟ Մոնթեծումայ ստիպէր զնա առնուլ զայս քաջասիրտ որոշումն, և սնապհական յօժարութի՟ իւր երևէր մղել առ այն բնականաբար. Յամ՟ նահապետաց, որք կալեալ էին զգաւազան իշխանութեն՟ Մեքսիքոյ, նա էր առաւել ամբարտաւանն, յոխորտագոյնն և առաւել տիրականն. Հպատակք իւր հայէին 'ի նա պատկառանօք, և թշնամիք իւր զարհուրանօք. Վարէր նա զառաջինսն անլուր խստութ՟բ. բայց նոքա ակնածէին 'ի նմանէ յաղագս իւրոյ կարծեցեալ ընդունակութն՟. և զբազում յաղթութիս՟ ընկալեալ 'ի վ՟ի յետնոցն՝ սփռեալ էր զարհաւիրս զինուց իւրոց, և յաւելեալ զանազան երևելի գաւառս 'ի տէրութիս՟ իւր. Այլ որչափ և քանքարք իւր կարէին լինել բարեյարմարք առ իրակութիս՟ թագաւորութն՟ միոյ վարեցելոյ այնպէս անկատար, ոչ էր Մեքսիքեցին, և բաւական ընդածելոյ զայնս 'ի կարգաւոր ընթացս իւրեանց, սա-

սակայն ոչ էին բնաւ հաւատարեալք առ այնպիսի իմն արտաքոյ կարգի լծակցութի. և ոչ արամադրէին զնա՝ կամ առ 'ի դատել քաջ ընտրողութբ, կամ առ 'ի գործել համարձակութբ, որ պահանջիւր յայնպիսի վտանգաւոր դիպաւորութեան :

'Ի վայրկենէն, յորում Սպանիացիք երևեցան 'ի վր ծովեզեր իւրոյ, եցոյց զնշանս երկչոտութն և անստուգութն. փոխանակ առնլոյ զորոշմունսն զայնոսիկ, զորս ճանաչումն կարողութն իւրոյ և յիշատակութի նախկին գործոց իւրոց պարտ էին շնչել 'ի նա, բացորոշէր տատամսութբ և տարակուսանօք. որ յայտնապէս ծանուցեալ եղև յառաւել մտերիմ արքունականաց իւրոց. Տագնապ և շփոթումն մտաց Մոնթէծումայ յայսմ դիպողութն, որպէս և հանրական քումն սարկաց իւրոց ոչ յառաջ գայր բոլորովին 'ի տպաւորութէն, զոր Սպանիացիք արարեալ էին նորութբ երևման իւրեանց և արհաւրօք զինուց իւրեանց. Առեալ լինէր ծագումն նց յառաւել հեռաւոր իմն ականէ. Եթէ պարտ իցէ հաւատալ վաղնջագոյն և առաւել արժանահաւատ մատենագրացն Սպանիացւոց, ընթանայր կարծիք ինչ գրեթէ ընդհանրապէս 'ի մէջ Ամերիկացւոց, թէ կարկառել կայր 'ի վր գլխոց նց սարսափելի ինչ թշուառութի բերեալ 'ի զարմէ իմեքէ ահարկու հրօսակաց, որք գայցեն 'ի կողմանցն արևելից առ 'ի տապալել և յատակել զաշխարհ իւրեանց. Անկարելի է որոշելն, միթէ այս տագնապիչ ըմբռնումն ծնանէր 'ի յիշատակութէ բնական իրիք փորձանաց, որ հարեալ իցէ զայն մասն երկրագնտոյ, և թողեալ 'ի սիրտս բնակչացն զսերմն երկիւղից և բժժական գուշակութեց, թէ էր արդիւնք շուարմանն, զոր պատճառեաց 'ի նս առաջին տեսութին նորոյ իրիք զարմի մարդկան. Մեքսիկացիք հակեալ էին առ բժժանս առաւել քան զայլ զինչևիցէ ժողովուրդ նորոյ աշխարհի. և վոկ էին տեսեալ ներքսապէս դղրդեալք 'ի հասանելոյ Սպանիացւոց, զորս դիւրահաւատութի նի ներկայացոյց իւր գործիս սահմանեալս առ 'ի արդիւնացուցանել զվախճանական կործանումն, յորմէ երկնչէին. Այսպիսի պարագայս ոչ ևս պարտի երևել անհաւատալի, թէ փոքր գունդ մի բաղկորդաց ահաբեկեալ իցէ զմիապետն մեծի իւրք կայսերուն և զհամօրէն հպատակս իւր ։ Մինչ խափանելով արտագործութի այսր տարապայման տպաւորութն յորժամ սուրհանդակն եհաս 'ի բանակէ Սպանիացւոց հանդերձ ծանուցմամբն, թէ Քօրթէս յարեալ յառաջին խնդիր իւր ոչ կամէր հնազանդիլ հրամանին եդելոյ 'ի վն նր թողլոյ զերկիրն, էառ Մօնթէծումա զտեսակ իմն համարձակութն. և 'ի յափշտակութն իմիք կատաղուն բնական եղելոյ խուժադուժ արքայի միում ոչ սովորեցելոյ գտանել խոչս կամաց իւրոյ՝ սպառնացաւ կամիլ զոհել աստուծոց իւրոց զյանդուգն օտարսն զայնոսիկ. Բայց վաղվաղակի դարձան անդրէն 'ի նմա տարակոյսք իւր և երկիւղք. և փոխանակ հրամայելոյ դնել 'ի գործ զսպառնալիս իւր, կոչեաց նորոգ զգործակալս իւր առ 'ի խօսիլ և տալ զխորհուրդ. Տկար որոշումն է յոլովակի ծագեալն՝ յորժամ մարդիկ ժողովին առ 'ի խորհրդածել 'ի լծակցութն իմիք, յորում պարտ էին մանաւանդ գործել. Խորհուրդն Մ՝եքսիքացւոց ոչ գիտաց առնուլ զգործունեայ հանգամանս առ 'ի արտաքսել զայնպիսի անհանգիստ հիւրս. և շատացաւ բացատրագոյն իմն հրամանատրութի 'ի բաց թողլոյ զերկիրն. բայց կալաւ զանխոհեմութի ընկերելոյ այնմ զընծայ մի այնպիսի արժողութի, որ եղև նորոգ հրապոյր առնելոյ մնալ նոցա անդէն ։

Յայսմ վայրի Սպանիացիք էին անմիաբանք 'ի բացորոշելն զպատգամ գնացս իւրեանց. Յայնմանէ,

Տագ-
նապ և
Երկմ-
տութիւն
Սպա-
նիաց-
ւոց ։

նէ, զոր արդ ևս տեսեալ էին, բազումք 'ի նոցանէ կերպաւորէին զայնպիսի օտարոտի տեսակս ընչաւէտութե՟ն երկրին այնորիկ, մինչզի արհամարհելով զվտանգս և զչարչարանս գաղափարաւ ստանալոյ զանսպառ գանձն , անձկացեալ էին ձեռնամխելոյ 'ի տիրապետութին. Այլ դատելով զկարողութ՟է Մ`եքսիքեան կայսրութե՟ 'ի նոյն իսկ փարթամութ՟է իւրմէ. և թըւելով զպէսպէս փորձս, որք ապացուցանէին, թէ էր 'ի ներքոյ քաջ կանոնաւոր կառավարութե՟ն, պնտէին, թէ լինէր ներգործութ՟ի իմն մոլեգնութե՟ն մաքառելն ընդ այնպիսի տէրութ՟ն փոքրիկ իմն գնդաւ արանց պակասելոց 'ի զարմանոց, առանց ուրուք դաշնաւորի և արդէն տկարացելոց վ՟ն հիւանդութեց սեպհականաց այնմ կլիմայի և վ՟ն կորստեան մասին իրիք խմբից իւրեանց. Կորթէս գովէր 'ի ծածուկ զպաշտպանս անվեհեր ձեռներեցութեցն, և տածէր զմտացածին յոյս նց. որովհետև այսպիսի խորհուրդք յարմարէին իւրոցն, և նպաստէին կատարման առաջարկութեցն, զորս նա ինքն կերպաւորեալ էր. Ընդսմին 'ի վայրկենէն, յորում Վելասքուէզ թեակոխեալ էր զրկել զնա յաւագութենէ, զոր կանխաւ տուեալ էր նմա, տեսանէր զկարևորութին լուծանելոյ զկապանս ինչ, որ խափանէր զա՟մ գործողութիս իւր. և սպասէր դիպող իմն առթի գալոյ ընդ նմա 'ի յայտնի իմն թշնամութի. Այսու զիտմամբ 'ի գործ արկեալ էր զա՟մ արուեստս ապահովացուցանելոյ զհամարումն և զսէր զինուորաց իւրոց առ ինքն. Կանբարոքն, զոր ունէր նա վ՟ն հրամայելոյ, դիւրին էր ստանալ ինքեան զհամարումն նց, գոլով նք խելամտեալք կարող լինել կուրօրէն թողուլ զինքեանս խոհեմութե՟ և քաջասըրտութե՟ զօրավարի իւրեանց. Ոչ ևս եղև նմա դժուարին շահելն զբարեկամութի նոցա. 'Ի մէջ բաղդորդաց ամենեցուն զրեթէ 'ի նոյն աստիճանի,

Առա-
Ջորկո-
Աճէ.
Կօր-
Աճսէ:

նի, որք ծառայէին ծախուք իւրեանց, արժանաւորուն հրամանատարութն ոչ ամբառնայր զպարապետ մի այնպէս, զի ոչ կեցցէ ընտանեբար ընդ նմ, որք գործէին 'ի ներքոյ նր. ·Քօրթէս 'ի գործ էած զայս պարակայ առ 'ի սպրդել 'ի շնորհս նց. և քաղցր կենցաղավարութբ իւրով, ներգործութբք առատաձեռնութն վարելով ընդ ոմանց 'ի դէպ ժամու, շնչելով յամենեսեան ըզմեծամեծ յոյսս, և հաւանելով նց շահավաճառ լինել առանձինն քն ազգայնոցն՝ յանկոյց յինքն այնպէս հաստատուն զմեծագոյն մասն զօրականաց իւրոց, մինչ զի սոքա գրեթէ մոռացան, թէ սպառազինութիւն հանդերձեալ էր աւագութբ և դրամօք այլոյ ուրուք:

(7) *Այս ծածուկ շահավաճառութի ուղղակի ներհակ էր հրահանգութեցն Վելասքուէզայ. որ պատուիրեաց, զի զինչ որ ինչ ստացեալ լինիցի այսպիսի հայթհայթանօք, դիցի 'ի հասարակաց մթերսն. Բայց տեսանի, թէ իւրաքանչիւրոք 'ի զօրականաց ունէր զմասնաւոր իմն հանդերձանս փանաքի իրաց մծ փոխանակելոյ ընդ Հնդկաց. և թէ ·Քօրթէս շահեցաւ զսէր նց խրախուսելով զնս ընդ ձեռամբ առ նմանակ փոխանակութիւ. Տէրս. Ճամ. Խա: *

Յաջո-
ղութիւ-
նք 'ի
նաւա-
րելն
զայնս:

'Ի ժամանակս այսց հնարագործութեանց էհաս Թէուդիլէ ընծայիւք իմիք Մոնթէծումայի և 'ի միասին ընդ այսմ երեր զվերջին հրամանս այնր միապետի, զի նոյնհետայն Սպանիացիք չու արասցեն 'ի տէրութեանց իւրոց. և յորժամ ·Քօրթէս փոխանակ զիջանելոյ նորոգեաց զխնդիրն ունելոյ զունկնդրութիւնն, Մէքսիքացին նոյնժամայն դարձոյց նմա զթիկունս և եթող զբանակն աչօք և շարժմամբք, որք յայտ առնէին ուժգնագոյնս զշոմարումն և զգժգոհութի իւր. 'Ի գալ առաւօտուն ոչ ևս երևեցաւ ոք յազգայնոցն, որք սովոր էին գալ անդր մեծաւ խռնմամբ առ 'ի առնել զփոխանակութիւն ընդ զինուորացն և առ 'ի բերել զնպարակս. Յանկարծակի դադարեաց ամ՟ բարեկամական հաղորդակցութ՟ի. և սպասիւր յամ՟ վայրկենի սկսումն թշնամութեանց. Թէպէտ այս էր պատահումն իմն, որ վաղիսկ պարտ էր նախատեսանիլ, սակայն պատճառեաց 'ի մէջ Սպանիացւոց զյեղակարծ իմն քստմնումն, որ խրախուսեաց զյարեալսն 'ի Մելաքուէզ ոչ միայն 'ի քրթմնջել և 'ի նիւթել ընդդէմ սպարապետին իւրեանց, այլ մինչև կարգել զօք 'ի տեղւոյ իւրեանց, որ խօսիցի համարձակ ընդդէմ անխոհեմութեան նր՟ 'ի ձեռնարկելն առ տիրապետութիւն հզօր կայսերութ՟ե միոյ այնպիսի անհաւասար իմն զօրութ՟բ. և ակնեսցի 'ի վր՟ հարկաւորութ՟ն վերադառնալոյ 'ի Քուպա առ 'ի վերստին հանդերձել զնաւահանդէսն և աճեցուցանել զսպառազինութ՟ին. Դիէկոս Օրտաց մի 'ի նախապետական պաշտօնատարաց, յորոյ վր՟ եդեալ էին տժգոհքն զայս բեռն, կատարեաց զայն զինուորական իմն ազատութ՟բ և համարձակութ՟բ, ասելով ցնա, թէ յայտ առնէր նմա զմիտս բովանդակ զօրաց. Քօրթէս ունկն եդ նմա առանց գոյզն ինչ երևութի վրդովման. և այնզի քաջ ճանաչէր զբարս և զիղձս սեպհական զինուորաց իւրոց, և նախատեսանէր, թէ որով սրտիւ ունկն դնելոց էին առաջադրութ՟ն միում մահաբերի 'ի միում րոպէի բովանդակ մեծաշուք անկնկալութեանցն և առաջարկութեանցն կերպացուցելոց 'ի նոցանէ այնպիսի մեծ իմն հաճութ՟բ, գիտաց այնպէս յառաջ տանել զխնդիրս իւր, մինչ զի եցոյց 'ի բաց թողուլ զխորհուրդս իւր առ 'ի զհետ երթալ խնդրոյն Օրտացու. և ետ հրաման, զի խումբն լինիցի պատրաստ առ վաղիւն առ 'ի դառնալ անդրէն նաւուք 'ի Քուպա. Յանուցեալ այսպիսի իմն որոշումն, բաղձորդքն խաբեալք, սկսան աղաղակել և սպառնալ. պատուիրակքն Քօրթիսի միանալով ընդ նա՝ բորբոքեցին առաւելապար զկատաղութ՟ին ն՟ց․ խմորումն եղև հանրական․ փոքր միւս ևս վտարանջէին զօրականքն․ և ամենեքեան խնդրէին մեծաւ ստիպմամբ տեսանել զհրամանատար իւրեանց․ Կորթէս ոչ յապաղեաց բազումս յերևիլ․ և յայնժամ յայտնեցին ամենեքեան միաբարբառ զհիացումն և զցասումն իւրեանց վ՟ հրամանացն, զորս ընկալեալ էին․ Ասէին լինել անարժան իմ՟ Կասթիլեան քաջասրտութ՟ն սրտաբեկիլն յառաջին տեսիլ վտանգին․ է վատանունութ՟ի փախչիլն յառաջ քան զերևիլն թշնամւոյ ուրուք․ և թէ ինքեանք 'ի կողմանէ իւրեանց բացորոշեալ էին չթողուլ 'ի բաց զձեռնարկութ՟ի իմ՟, որ ցայնժամ յառաջ գնացեալ էր երջանկապար, և որ դիմէր 'ի տարածանել զծանօթութ՟ի ճշմարիտ կրօնին, և յառաջ շարժել զփառս և զշահ հայրենեաց իւրեանց․ և թէ աներկեանք 'ի ներքոյ հրամանատարութ՟ն իւրոյ կամէին զհետ երթալ նմա զուարթութ՟բ 'ի մէջ վտանգաց 'ի խնդիր հանդրուանացն և գանձուցն, զորս նա ինքն յայնպիսի երկայն ժամանակաց հետէ եդեալ էր 'ի տեսու՟ն ն՟ց․ այլ եթէ ընտրէր մանաւանդ դառնալ անդրէն 'ի Կուպա, և թողուլ անարգաբար զբովանդակ երևելի և զինչ աւետ յոյս իւր յաջողկոտ տարփակցի միում, ամենեքեան էին համախոհ ընտրելոյ զայլ ոք սպարապետ առ 'ի առաջնորդել ն՟ց յայն ճանապարհ փառաց, ուր նա ոչ ունէր զարտեղութ՟ի մտանելոյ։

Կորթէս ապշեալ է՟ վառումն ն՟ց, ոչինչ զայրացաւ վ՟ համարձակութ՟ն, որով բացայայտեալ էր․ Զգացմունքն էին նոյնք, զորս ինքն իսկ շնչեալ էր․ և եռանդն խօսիցն հաւաստէր նմա, թէ զինուորք իւր բնաւին տարրացեալ էին նոքիմ՟ք․ Սակայն եցոյց զինքն ապշեալ յայնմանէ, զոր լսէր, յայտ առնելով, թէ հրամանք իւր պատրաստելոյ մտանել 'ի նաւ ելեալ էին 'ի հաւատալոյն, թէ այս հաճոյ էր զօրաց իւրոց. և թէ զիջանելով առ միտումն նոցա զոհէր զխորհուրդ իւր կայաւորելոյ անընդմիջաբար առ ծովեզերբն, և ապա թևակոխելոյ ընդմտանել 'ի ներքին մասունս երկրին. և թէ յայնժամ յաղթահարեալ էր նա 'ի վ̃ր մոլորութեն իւրոյ. և քանզի տեսանէր զն̃ն խրախուսեալս յաջողական հոգւոյ, որ պարտ է օթեվանիլ յա̃մ ճշմարիտ Սպանիացւոջ, վերանորոգ դիմագրաւութ̃ զգաղափարն գործողութ̃նց իւրոց, ոչ երկբայելով առաջնորդել նոցա ընդ շաւիղս յաղթութեն առ այն բաղդսն, որոց արժանաւոր էր քաջութի̃ն ն̃ց. Յետ այսպիսի իմն խօսակցութեն բարբառոք կայթման վկայեցին զցնծութի̃ն հրճուանաց ն̃ց. և միաբան ողջագուրեցին զառաջարկութի̃ն ն̃ր. Նոքա, որք ներքսապէս դատապարտէին զնա, ստիպեալ եղեն միաբանիլ ընդ աղաղակացն օտարաց մասամբ իմն առ 'ի ծածկել զներհակութի̃ն իւրեանց առ սպարապետն, և մասամբ իմն առ 'ի ոչ անկանիլ 'ի նախատինս վեհերոտութեն 'ի կողմանէ զինուորաց ընկերաց իւրեանց։

Առանց տալոյ ժամանակ զինուորաց իւրոց ցրտանալոյ կամ խորհելոյ՝ Քօրթէս ետ զանձն բոլորովին 'ի դնել 'ի գործ զխորհուրդ իւր. Նա 'ի տալ սկիզբն հարգունութեն միոյ գումարեաց զերևելագոյն անձինս զօրաց իւրոց. և ընտրեաց կամօք ն̃ց զատեան մի և զատենակալս, որք պարտ էին առնուլ զբեռն կառավարութեան. Սորդիկ բնականաբար փոխառեն զսահմանադրութիս և զկերպս հայրենեաց իւրեանց 'ի նոր կայարանս իւրեանց. և վնկ հաստեալ եղև այս ըստ ընթացից Սպանիական իրիք հասարակութեն. Պատաւորք տրոհեալ էին նովին անուամբք, և նովին նշանօք պաշտօնի, և պարտ էին վարել զնոյն իրաւաբանութի. Նախընտրեալք էին ա-

Սատառ ցանէ զինւորս նոր տա- ղապա- խան խա- տաւա- բանէ։

ընկերեան ողջոյն նուիրեալք Քօրթէսի. և գործ ընտրութեան ն̄ց շարագրեալ եղև յանուն Թագաւորին առանց անելոյ զյիշատակութ̄ի ինչ զկախմանէ իւրեանց 'ի բդեշխէն Վելասքուեզայ. Երկու սկզբունք աշխուժից և ագահութեան, որք շարժեցին զՍպանիացիս առ ա̄մ ձեռնարկութ̄իս իւրեանց 'ի նոր աշխարհին, երևի, թէ զուգընթաց եղեն 'ի թելադրել զանունն, զոր եդ Քօրթէս խորհեալ հանգրուանի իւրում. զոր կոչեաց Վիլլա ռիքա տէլլա վէրա քրուզ. այս է, քաղաք հարուստ ճշմարիտ խաչին:

1519. Առաջին գումարումն նորոյ խորհրդեան հանգիսացեալ եղև մեծակշիռ իմն գործողութ̄բ. վաղվաղակի իբրև դատաւորքն ժողովեցան, Քօրթէս գնաց անդր առ 'ի խնդրել հրաման յանդիման լինելոյ. և մատչելով բազում նշանօք խորին ակնածութեան, որք աճեցուցանէին զարժանաւորութ̄ի ատենին, և ցուցանէին զյարգանս առ բաւագութ̄ի ն̄ր, սկսաւ զերկայն իմն ատենաբանութ̄ի. յորում մեծաւ արուեստիւ և եզերօք յոյժ մարդելուզականօք վ̄ս ն̄ց, որք մատնէին 'ի պաշտօնն, եւ տեսանել, թէ գոլով գերագոյն իրաւաբանութ̄ին 'ի վ̄ր հարգունութեանն տնկեցելոյ 'ի նոցանէ ընձեռեալ այնմ ատենի, նկատէր զամենեսեան ը̄նդ իւր ներկայացուցիչս արքային իւրեանց, և թէ վ̄նկ հաղորդելոց էր ն̄ց զայն, զոր հաւատայր էական առ հրապարական բարին նովին նախանձայուզութ̄բ և նովին հաւատարմութ̄բ առ իւր արքայ տէրն. և թէ ապահովութ̄բ հարգունութեան իւրեք կանգնեցելոյ 'ի մեծի կայսերութեան միում, որոյ ինքնակալն վաղիսկ յայտնեալ էր զներհակ դիտաւորութ̄իս իւր, կախեալ կայր 'ի զինուց, և զօրութ̄ի այսոցիկ 'ի ստորակարգութ̄է և 'ի կրթութ̄է զօրացն. և թէ իրաւունքն իւր հրամայելոյ բղխէր 'ի յանձնարարութ̄է միոջէ շնորհեցելոյ նմա 'ի բդեշխէն Քուպայի,

Հրաժարէ 'ի յանձնեալ պաշտօնէ իւրմէ.

պայի. և քանզի այս յերկայն ժամանակէ հետէ յետս նահանջեալ էր, կարէր 'դնել յերկբայս օրինաւորութի իրաւաբանութեն իւրոյ. և թէ երևէր նա գործել մուրացիկ իմն կամ երկբայական անուամբ. և թէ ոչ կարէին նոքա վստահանալ 'ի զօր մի, որ ոչ ճանաչէր զիշխանութի սպարապետի իւրոյ 'ի լծակցութեն միում, յորում պարտ էր հնազանդել անորոշաբար հրամանաց իւրոց. և թէ շարժեալ յայսց նկատմանց աւանդէր ներգործաբար 'ի ձեռս նց զբովանդակ իշխանութի իւր. և թէ նոքին իսկ ունելով այժմ զիրաւունս ընտրելոյ և ընձեռելոյ գլխակատար իմն իրաւաբանութի, կարէին սահմանել յանուն թագաւորին զենթակայ մի ընդունակ հրամայելոյ զօրաց յապագայ գործողութիւն. և թէ յորչափ առ ինքն այնպիսի էր նախանձայուզութիւն իւր վն ծառայութեն, յոր նոքա էին գրաւեալք, մինչզի զինէր նիզակաւ զնոյն իսկ ձեռն, որ 'ի բաց եդեալ էր զգաւազանն սպարապետի առ 'ի տալ տեսանել զինուորացն ընկերաց իւրոց, թէ որչափ և սովոր հրամայելոյ՝ ոչ էր մոռացեալ զհնազանդելն. Աւարտեալ զայս զօրաց եդ զյանձնարարութիւն տուեալ նմա 'ի Վելասքուէզայ 'ի վն գրասեղանոյն. և համբուրեալ զգաւազանն, աւանդեաց զայն առաջին մեծաւորին, և յետս չոգաւ ։

Ոչ յամեաց բազում ժողովն յորոշել. որովհետև Կորթէս կանխաւ խորհեալ էր զայս իրողութի ընդ մտերմաց իւրոց, և նախապատրաստեալ զայլ անդամն յաջողակութի առ կողմն, զոր փափագէր ունել նց. Ընկալեալ եղև հրաժարումն նր. և քանզի անընդհատ յաջողութի նց ընդ առաջնորդութե նր էր յաղթահարիչ իմն ցոյց ընդունակութեն նր առ հրամանատարութին, նոքա միաբան ուխտիւք ընտրեցին զնա առաջին դատաւոր հարցունութեն, և ընդհանրական զօրագլուխ զօ-

Նա ընտ
րեցաւ
առաջին
դատա-
ւոր և
զօրա-
գլուխ
ընդ հան
րական ։

քաց իւրոց. և կամեցան, զի այսպիսի իմն յանձնարարութի հրատարակեսցի յանուն Թագաւորին և ընդարձակ իշխանութբ տուեալ 'ի զօրութն իւրում մինչև յայտ արասցէ վեհութի իւր զկամս իւր. Ապա որպէս զի այս գործ մի դատիցի արդիւնք խարդախութն իւրեք՝ ատեանն խմբեաց զբոլոր գունդսն, և տեղեկացոյց զնս որչափ ինչ բացորոշեալ էր անդէն. Զօրականքն մրցողական կայթմամբ հաստատեցին զայն ընտրութի. օդն գոչէր անուամբ Քօրթիսի. և ամենեքեան երդուան հեղուլ զարիւն իւրեանց առ 'ի ջատագովել զաւագութի նր.

Վարէ իշխանութիւն իւր հզօրաբար: Քօրթէս յաջողելով յառաջարկութն իւրում, և գոլով թօթափեալ զտհաճոյ կախումն իւր 'ի բդեշխէն Քուպայի, ընկալաւ զպաշտօնն, որ զգեցուցանէր զնա գերագոյն միօրինակ քաղաքական և զինուորական իրաւարարութբ 'ի վր հարգունութեն, դաւանելով բազում ակնածութի առ ժողովն և բազում երախտագիտութի առ զօրսն. Նա առ յինքն զմեծագոյն իմն արժանաւորութի միաւորեալ ընդ նորոյ հրամանատարութն իւրում. և սկսաւ վարել զայն ընդարձակագոյն կարողութբ. Մինչև ցայնժամ ծանուցեալ էր լինել պատուիրակ հպատակի ուրուք. բայց առ յապայն գործելոց էր իբր ներկայացուցիչ արքային. Յարեալքն 'ի Վելասքուէզ նախատեսանելով, թէ զինչ լինելոց էր կատարած այնպիսի իմն փոփոխութն 'ի կայաւորութն իւրեանց, ոչ ևս կարէին շարունակել լինել լուռ և համբերող զննիչ այսր տեսարանի. Աղաղակէին յայտնապէս ընդդէմ յառաջ խաղացման ժողովոյն իբր ապօրինաւորի և ընդդէմ գնացից զօրացն իբր ամբոխականի. Քօրթէս նոյնհետայն տեսանելով զկարևորութիւնն սանձահարելոյ 'ի դէպ ժամու զայսպիսի իմն ապստամբական զոյց առ ձեռն պատրաստ իմիք ներգործութբ, ետ ըմբռնել զՕրտաց և զՎքուտէրոս և զՄէլասքուէզ Լէօն զառաջնորդս օձտմանն և առաքեաց զն՟ն շղթայաւորս և կալանաւորս 'ի նաւսն . Ահաբեկեալք և շուարեալք կուսակիցք ն՟ց Հանդարտեցան նոյնժամայն . և Պօրթէս առաւել Հոգածու վ՟ն ուղղութ՟ն քան թէ վ՟ն պատժոյ կալանաւորաց իւրոց, որք էին պաշտօնատարք մեծավաստակք , արար այնչափ քաղցրաբարոյութ՟բն իւրով և յաջողակութ՟բն , մինչզի վերստին Հաշտեցաւ ընդ ն՟ս այնպէս , զի յառաւել վտանգաւոր դիպաւորութ՟իս՝ ոչ վերաբերութ՟ի իւրեանց առ բդեաշխն Պուպայի , և ոչ յիշատակութիւն անարգանացն , որովք վարեալ էին, փորձեցին զն՟ն յետս ընկրկել քայլ մի յանլուծանելի յարմանէն յառանձին շաՀս ն՟ց . Յայսմ օ՟պ և յայլ իրակութիւնս իւր՝ յայնպիսի դժուարին ըծակցութ՟ն , որ վճիռ Հատանէր զապագայ Համբաւոյ և բաղդէ իւրմէ՝ Պօրթէս պտրտական եղև ըստ մեծի մասին զրարի ելսն ոսկւոյն Մէքսիքօի , զոր առատաձեռնութ՟բ բաշխեաց ոչ միայն բարեկամացն , այլ և թշնամեաց :

Պորէ-
խամու-է
խոր խնդ-
րեալ է
'ի Ուէնֆ
ֆօուլդ-
ւոյ :

Պօրթէս այսպ՟ անլուծանելի փոխատրելով զմիաւորութ՟ին ընդ անձն իւր և ընդ զօրսն այսոքիւք փոխադարձ ներգործութ՟ք Հնազանդութ՟ն , Հաւատոյ զինքն յաստիճանի իշխելոյ թողուլ զբանակետղն , ուր մնացեալ էր մինչև ցայնժամ, և 'ի մխիլ 'ի ներքս աշխարՀին . Արտայնդեաց զնա առնել զայս դիպուած իմն ոչ նուազ բաղդաւոր քանթէ յարմար ժամանակին . Ոմանք 'ի Հնդկաց գոլով մերձեցեալք 'ի բանակն խորՀրդաւոր իմն եղանակաւ , մուծեալ եղեն յառաջիկայութ՟ի իւր . Լուաւ , զի էին առաքեալք մատուցմամբ բարեկամութ՟ն 'ի քաղաքէ Ուէմիօալայի . քաղաք երևելի կայաւորեալ 'ի սակաւ Հեռաւորութ՟ն . և 'ի պատասխանեաց ն՟ց առ բաղում Հարցմունսն, զորս արար նոցա ըստ սովորական բարուց իւրոց յամ՟ խօսակցութ՟ն ընդ ազգայնոցն , Հաւաքեաց, զի տ՟ր ն՟ց թեպէտ և հպատակ Մեքսիքեան կայսերութն, էր պարտասեալ 'ի լծոյն, և լի այնքան ատելութբ առ Մոնթեծումայ, մինչզի ոչ զայլ ինչ խնդրէր, բայց եթէ խուսել 'ի ճնշմանէն, ընդ որում հեծէր. Ընդ լսելն զայսպիսի իրս՝ նշոյլ ինչ լուսոյ և յուսոյ փայլատակեաց զանձամբն Քօրթիսի. Ետես, զի կայսերութին, յոր խորհէր յարձակիլ, ոչ էր միաւորեալ և ոչ բարեկամ կայսրն. ուստի յայսմանէ յառաջ եկած, թէ պատճառք տժգոհութն ոչ պարտ էին սահմանաւորիլ առ մի միայն գաւառ, այլ թէ և յայլ մասունսն էին տժգոհք խոնջք յենթարկութենէ իւրեանց. և այնպէս ցանկացողք փոփոխութն, մինչև իսկևիսկ զհետ երթալ դրօշակին որոյ և իցէ պաշտպանի. Քաջալերեալ յայսց տեսակաց, յորոց վ՟ն սկսաւ կերպաւորել զառաջարկութի իւր, զոր ժամանակն և կատարելագոյն իմն ծանօթութի հանգամանաց երկրին այնորիկ հաւանացուցանելոց էր, արար զառաւել շնորհալի ասպնջականութի Ծեմփօալացւոց. և խոստացաւ երթալ վաղվաղակի յայցելութի քաղաքէի իւրեանց:

Զօրանէ 'ի Ծեմփօալ:

Նա 'ի արդիւնացուցանել զխոստումն ոչ էր պիտոյ այլայլել զճանապարհն, զոր կանխաւ հաստատեալ էր վ՟ն չուոյ իւրոյ. Ոմանք 'ի պաշտօնատարաց կարգեալք 'ի նմանէ 'ի ճանաչել զծովեզրն, գտեալ էին զգիւղ մի կոչեցեալ Քուիապիսլան հեռի իբր 50 մղոն ընդ հիւսիսակողմն. որ և վ՟ն արգաւանդութն հողոյն և վասն պատշաճ նաւահանգստին իւրոյ երևէր լինել առաւել դիպան տնկելոյ անդէն զբազմամարդութի իմն քան զայն, ուր բանակեալ էր, և Քօրթես որոշեաց երթալ անդր. Ծեմփօալա գտանելով առ այնու ճանապարհաւ, քաղաքէն 'ի ճահ եկն առ 'ի ընդունել զնա այնու եղանակաւ, որում ունէր նա իրաւունս սպասելոյ, ընծայիւք և ողոքանօք իբր մարդ փափագող շահելոյ զշնորհս նր, և մեծարանօք իմն, որ մերձենայր յերկրպագութի, և ցուցանէր, թէ այն ինչ նկատէր զնա իբր ազատիչ իւր. Իմացաւ 'ի նմանէ զբազում մասնաւորութիս վերաբերականս առ յատկութի Մոնթեծումայի, և զպարակայսն, որք ատելի առնէին զտէրութի իւր. Նա էր բռնաւոր մի, որպ ասէր քազիկքեն արտասուհալից աչօք, ամբարտաւան, անողորմ և կասկածոտ. վարէր գոռոզութբ ընդ հպատակաց. աւերէր չափազանց հարկապահանջութքն զտիրապետեալ գաւառսն. և ստէպ յափշտակէր 'ի նոցանէ բռնութբ զտղայս և զաղջկունս, զառաջինսն առ 'ի զենուլ զնս աստուծոց իւրոց, և զերկրորդսն առ 'ի առնել 'ի նոցանէ հարճս վս իւր և վս սիրելեաց իւրոց. Քօրթէս զգացոյց նմա արուեստակաբար, թէ նախապետական առարկայ Սպանիացւոց յայց ելանելն երկրի միում այնչափ հեռաւորի յիւրեանց՝ էր կամիլն փոխատրել արդարութի բնակչացն, և սփոփել զճնշեալսն. և քաջալերելով զնա յուսալ 'ի պաշտպանութի իւր 'ի դէպ ժամու, շարունակեաց զչու իւր 'ի Քուիապիսլան:

Շինէ զամրոցին Քր.

Տեղին, զոր պաշտօնատարք իւր ընծայեցուցանէին իբր կայ իմն յարմար, երևեցաւ նմա այնպէս բարւոք ընտրեալ, մինչզի անընդմիջաբար նշանագծեաց զգաղափար քաղաքի միոյ. Տունք էին բովանդակ տաղաւարք, բայց պարտ էին շրջապատիլ ամրութբք առ 'ի ընդդէմ կալ յարձակմանց Հնդկայքն զօրու իրիք. Նաւկան էր քարշելն զայնս վաղվաղակի ոչ միայն յաղագս դնելոյ յապահովի զհարգունութին, և կատարելոյ զխորհեալ գաղափարսն, այլև վս ապահովացուցանելոյ զփախուստ իմն, և վս ոչ կորուսանելոյ զհաղորդակցութին ընդ ծովու. և վս այսպիսի իսկ պատճառի իւրաքանչիւրոք 'ի զօրացն զօրագլուխ և զօրական էարկ զձեռն 'ի գործ.

Հնդիկք Սեմփոալայի և Թլասքալանու մատուցին զօգնութիւն իւրեանց. և այս փոքրիկ հարգունութիւն մայր, եթէ այսպէս պատեհ իցէ խօսիլ, այնչափ այլոց ամրակուռ կայսրանաց եղև փութանակի 'ի վիճակի պաշտպանութեն:

Ընդէ
պէնլրպա
ջան ըն
դաշնա-
ւորաւ
ընդ պա-
հապան
ժապե-
ժէէյ:

Քորթէս կալաւ զանազան խօսակցութիւս ը̄ քաղքէից Սեմփոալայի և Թլասքալանու 'ի ժամանակին, յորում կայր պատաղեալ յայսպիսի կարևոր գործ. և օգուտ հանելով 'ի զարմացմանէ և յապշութենէն, զոր պատճառէին 'ի նն՟ նոր առարկայքն տեսեալք 'ի նոցանէ, ջնջեաց 'ի նն՟ աստիճան առ աստիճան զայնպիսի իմն բարձր կարծիս զՍպանիացւոց, որպ՟ զէակաց վերնագոյն իրիք կարգի և անյաղթելեաց 'ի գործ զինուց, մինչզի նոքա վստահանալով 'ի պաշտպանութի նց՟, իշխեցին թշնամանել զՄեքսիքեան կարողութիւն, որոյ միայն անունն դողացուցանէր զնմ՟ հպատակսն. Յայսմ վայրի երևեցան ոմանք պաշտօնատարք Մոնթէծումայի. որք երթային շուրջ 'ի թափել զսովորական հարկսն և պահանջել զորոշ ինչ թիւ մարդկային զենլեաց 'ի քաւութի եղեռնութեն գործեցելոյ հաղորդելով ընդ այնց օտարաց, որոց պատուէրեալ էր կայսրն չունել 'ի նրութենց իւրոց. Բայց նոքա փոխանակ հնազանդելոյ հրամանին՝ արարին զնս՟ կալանաւորս. վարեցան ընդ նս՟ մեծաւ անարգանօք. և նորակրօնութի նոցա ոչ լինելով նուազ խժական քան զՄեքսիքացւոցն, սպառնացան զոհել զնս՟ աստուծոց իւրեանց. Քորթէս եմուտ նց՟ 'ի միջի, և ցուցանելով զաստկագոյն սոսկումն 'ի լսելն յիշատակել զայսպիսի իմն արար, ազատեաց զնս՟ 'ի վերջին վտանգէ յայնմանէ. Երկու քաղաքէքն քարշեալք այսպէս առ յայտնի իմն ապստամբութի. որ ոչ թողոյր նց՟ հայթհայթանս ինչ ապահովութեն, եթէ ոչ յարէին անլուծանելաբար 'ի Սպանիացիսն, միացան վաղվաղակի ընդ նս՟, յայտ առնելով զանձինս ա՟մ կերպականութ՟ ստրուկս Նորին Թագաւորի. Օրինակի նց՟ զհետ չոգան Տօթօնայք՝ ժողովուրդ ամէհի, որ բնակէր 'ի լերինս երկրին այնորիկ. և տոքա իսկ ներքոյ արկին զանձինս Թագաւորութեն Կասթիլլիոյ. և յառաջամատոյց եղեն ընկերել Կօրթիսի բովանդակ զօրութ՟ք իւրեանց 'ի չուման իւրում 'ի կողմն Մէքսիքոյ :

Կօրթէս արդէն կացեալ էր աւելի քան զերիս ամիս 'ի Նորն Սպանիա. և թէպէտ յայսմ ժամանակի ոչ էր հանդիպացեալ պատերազմական ձեռնարկութ՟ք, սակայն ա՟մ իրօք պարապեալ էր 'ի գործողութիս, որք թէ և ոչ յոյժ պերճք՝ ոչ դադարէին 'ի լինելոյ մեծապէս ծանրակշիռք. Միջնորդութ՟ յաջողակութն իւրոյ յընձեռելն է գալոյ զօրաց իւրոց. և միջնորդութ՟ լռջմտութն իւրոյ պհպանելով ընդ ազգայնոցն արկեալ էր զհիմունս ապագայ յաջողութեց իւրոց. Նա որչափ և կարէր վստահանալ 'ի գաղափարն կերպաւորեալ յիւրմէ, ոչ յապաղեաց իրագեկ լինել, թէ իրաւունքն իւր հրամայելոյ յառաջ գայր նմա յերկբայական իմն աղբերէ. և վնկ նկատէր զայն իբր ապաշնորհական իմն թուղ. Նախատինքն արարեալք Վէլասքուէզայ էին այնպիսիք, որք բնականաբար դրդէին զնա 'ի խնդրել զվճարումն 'ի հասարակաց արքայէն. և գնացք իւր լինէին ներկայացուցեալք այնպիսի եղանակաւ, մինչև տալ նմա պատճառ երկնչելոյ 'ի լինելոյ ոչ միայն ընկեցեալ յառաջիկայ աստիճանէ իւրմէ, այլև ենթադրեալ պատժոյ. Յառաջ քան զանկանիլն 'ի ջուր՝ հարկ էր առնուլ զգործունէագոյն նախազգուշութիս առ 'ի անձնապահ լինել 'ի մօտալուտ փոթորկէն. Նա խելամտեցոյց զմեծաւորսն հարգունութեն ուղղել զնամակ մի առ Թագաւորն, որ պարունակեսցէ զերկայն իմն պատմութի ծառայութեց իւրեանց, զշքեղ իմն ստորագրութի երկ-

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
վն հա-
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 'ի
[illegible]
[illegible] :

երկրին գտելոյ 'ի նոցանէ, զփարթամութեանց իւրոց, զբազմութիւն բնակչաց իւրոց, զբարուց նց՟, զարհեստից վարելոց 'ի նոցանէ, տալով նմա համար զյառաջադիմութեանց իւրեանց, զբաղելն պատահեցելոյ յաւելոյ 'ի Թագաւորութիւն ·Քասթիլիոյ զանազան ընդարձակ գաւառս, զառաջարկութեանցն, զորս յղացեալ էին տիրապետելոյ զբովանդակ երկիրն. և հուսկ յետոյ պարտ էին տալ նմա զմանրամասն ծանօթութիւն պատճառացն, որք շարժեալ էին զնա առ 'ի ոչ ևս կամիլ զբաղակցութիւն ընդ. Վելասքուէզայ, այլ կայացուցանել զբազմամարդութիւն ինչ կախեալ միակարար 'ի Թագաւորէն. և գնել զգերագոյն հրամանն եթէ քաղաքական և եթէ զինուորական 'ի ձեռս ·Կօրթիսի, աղաչելով խոնարհաբար զարքայն իւրեանց վաւերացուցանել զգործած նց՟ արքայական հաստատութեամբ իւրով. ·Քորթէս ևս գրեաց յիւրմէ նմանակ իմն զօրութեամբ բանի. և քանզի գիտէր, թէ արքունիքն Սպանիոյ սովոր առ դիզարարդեն պատմութիւնս ալարեալս 'ի գտողաց իւրաքանչիւր նորոյ երկրի՝ ընծայեսցէ սակաւ հաւատս առ մեծաշուք վէպս իւրեանց զնորոյ Սպանիոյ, եթէ այսոքիկ ոչ երթային հանդերձ առհաւատչէիւք այնր, զոր պարունակէր առ 'ի զարթուցանել ըղբարձր իմն ճանաչումն ընչաւէտութեան իւրոյ, թախանձեաց զզօրականս իւր շատանալ թողուլ զայն, զոր նոքա կարէին պահանջել իբր բաժին իւրեանց 'ի գանձուցն հաւաքելոց մինչև ցայնժամ, որպէս զի բովանդակն յուղարկեսցի առ Թագաւորն. Այսպիսի էր տէրութիւն ստացեալ 'ի նմանէ 'ի վր՟ սրտից նց՟, և այսպիսի պատկերակերպական ակնկալութիւնք նց՟, թէ պարտ էին միշտ առաւել հաստանալ, մինչ զի զօր մի կարօտ և յափշտակօղ բաղդորդաց գիտաց առնել զայնպիսի ազնուական իմն ծիգն. և միայն արքային իւրում զհարստագոյն ընծայն, քան զոր երբէք լեալ էր փոխառաքեալ 'ի նորոյ աշխարհէն.

(8) « Կօմարա հրատարակեալ է զցանկ մի պէսպէս յօդիցն, յորոց բաղկացեալ էր այս ընծայ. Ծանօ. Գլ. Խբ. Պետրոս Մարտիրոսն Անկլերիոյ, որ ետես զայնս, յորմէ հետէ բերեալ եղեն 'ի Սպանիա, որ և քննեաց զնոսին մեծաւ ուշադրութբ, տայ զստորագրութի իմն այնչափ առաւել հետաքրքրական զիւրաքանչիւրմէ, որովհետև ընծայէ մեզ զգաղափար զարգացմանն, զոր Մ՚եքսիկացիք արարեալ էին 'ի զանազան արհեստս. Օվիեդոյ Նորոց Գաւառաց: »

Փօրթօքարրէրօ և Մօնթէխօ առաջին մեծաւորք հարգունութեն եղեն պարաւանդեալ առ 'ի տանել զայն 'ի Քասթիլլիա հանդերձ բացայայտ կարգաւորութեք ոչ հանդիպելոյ 'ի Քուպա յանցանել իւրեանց:

Նոր դաւաճանութիւն ընդդէմ Քօրթէզի.

Մ՚ինչդեռ հանդերձիւր նաւ մի վճ երթալոյ նց անակնկալ իմն պատահար պատճառեաց զընդհանրական իմն արհաւիրս. Ոմանք 'ի զօրականաց և 'ի նաւավարաց յօժարամիտք զանխլաբար առ Վէլասքուէզ, կամ՝ ահաբեկք 'ի ձևացուցանելն զանխորշելի վտանգսն, յորս դնէին զանձինս, կամելով ընդմտանել 'ի սիրտ մեծի իրեք կայսերութե այնպիսի անհաւասար իմն զօրութե, կերպաւորեցին զխորհուրդ տիրելոյ միում 'ի Պրիկանթինաց, և փախչելոյ 'ի Քուպա՝ դիտմամբ հասուցանելոյ առ բդեաշխն զայն ծանօթութիւն. որպէսզի կարգադրեսցէ նախահոգալ կասեցուցանել զնաւն սահմանեալ առ 'ի տանել զգանձն և զծրար նամակացն 'ի Սպանիա. Այս երդուեակցութի թէպէտ և նիւթեալ 'ի ցածուն կարգէ արանց, առաջնորդեցաւ եղև խորին գաղտնութբ. բայց 'ի վայրկենին, յորում ամ ինչ կատարելի էր, մատնեաց զնս միոյն յընկերակցաց նց:

Քաջէ ընդ դաւաճանսն.

Թէպէտ բարեբաղդութիւն Քօրթէզի օգնեաց նմա այսպէս 'ի դէպ ժամու յայսմ դիպաւորութե, ամենահակայն հոլովումն երդուեակցութե ելից զնա ուժգին անհանգստութբ̃․ և խթեաց զնա դնել 'ի գործ զայն, որ յերկայն ժամանակաց հետէ յածէր ը̃ միտս Նր̃․ Իրազեկ լինէր, զի հոգին տժգոհութ̃ն յառաջադէմ լինէր 'ի մէջ զօրաց իւրոց, և զի թէպէտ և նուաճեալ 'ի միակերպ ելից առաջարկութ̃ց իւրոց, կամ սանձահարեալ 'ի բազկէ իշխանուն̃, կարէր պէսպէս պատահմամբք զօրանալ և ճայթիլ․ ՝Նշմարէր, զի բազումք յերոցն տաղտկացեալք յաշխատալի ծառայութենէն, հառաչէին վերստին տեսանել զկայարանս իւրեանց 'ի ՝Կուպա. և զի առ թեթևագոյն երևոյթ անսովոր վտանգի, կմ̃ առ դուզնաքեայ ձախորդութ̃ի բաղդի անկարելի լինէր արգելուլ նոցա զվերադառնալն անդր․ Ճ՛անաչէր, թէ իւր տկար զօրութիքն ոչ տանէին զնուաճողումն, և եթէ փոքրիկ իմն թերութ̃ի հետևողաց իւրոց ստիպէր զնա բարձի թողլի առնել զձեռնարկութիւն․ Զկնի ըստէպ և բազում ուշադրութբ̃ նկատելոյ զայսոսիկ պարագայս՝ ետես, թէ ոչ գոյր այլ յոյս յաջողուն, բայց եթէ բառնալ 'ի բաց զա̃մ կարելի փախուստ, և վերածել զմարդիկ իւր առ հարկ ընդունելոյ զնոյն որոշումն ընդգրկեալ 'ի նմանէ, կամ յաղթել կամ կորնչիլ․ Այսու մտածութբ̃ բացորոշեաց քակել զնաւահանդէս իւր․ բայց ոչ համարձակելով վտանգել զանձն առ 'ի գործ դնել զայսպիսի իմն յանդուգն խորհուրդ միայն աւագութբ̃ իւրով, ջանացաւ շարժել զզօրականս իւր 'ի հաստատել զայն գաղափար, ցուցանելով նոցա զպատշաճողութ̃ի այնպիսի հնարից․ Յաջողակուն̃ իւր յարդիւնացուցանելն զայն եղև հաւասար դժուարին լծակցութ̃ն, յորում գտանիւր․ Խեղամտեցոյց ոմանց, թէ նաւքն այնչափ վտանգեալ էին կալով այնք̃ յերկար ժամանակ 'ի ծովու, մինչզի ոչ ևս էին յարմարք առ ծառայութիւն․ այլոց հաւաստեաց, թէ դիպաւոր և ուժեղ զօրավիգն ընկալեալ լինէր 'ի յաւելմանէ հարիւր արանցն, որք առնէին անպիտանաբար զնաւուղղութի՟ս և զնաւավարութի՟ս. և ամենեցուն յանդիման արար զկարևորութի՟ն հաստատելոյ զաչս իւրեանց և զլիղձս 'ի վ՟ր այնր, որ էր նց՟ առաջի, առանց թողացուցանելոյ զտեսակ խուսափման մտանել և ոչ իսկ առ սուղ ինչ ը՟ միտս նց՟. Ընդհանուր համախոհութ՟բ նաւքն քարշեալ եղեն յեզրն. և յետ կողոպտելոյ զն՟ս յառագաստից, յառասանաց, յերկաթեղինաց, և յամէ, որ կարէր լինել իմիք պիտանացու, եւ կոտորել զամենեսեան զն՟ս. Այսպէս ծգամբ իմն մեհանձնութե՟ն, որում չէր ինչ համեմատելի 'ի վիպասանութե՟ն, արք հինգ հարիւր միաբանեցան կամաւ իւրեանց փակել յերկրի միում թշնամեաց՝ լի հզօր և անծանօթ ազգօք՝ հանդերձ կցմամբ ա՟մ ճանապարհի առ փախուստն՝ մնալով միայն ապաւինութ՟բ քաջութե՟ն իւրեանց և յարակայութեան:

Ոչինչ այլևս յամեցուցանէր զԿօրթէս. բարեյօժարութի՟ խմբից իւրոց և պատրաստութի՟ դաշնաւորաց իւրոց հաւասարապէս նպաստէին նմա. Բայց բովանդակ շահեկանութի՟ք հանեալք 'ի վերջնոցն, և նախահոգացեալք զօրութ՟բ հանապազորդութե՟ն և աչալրջութե՟ն՝ 'ի միում վայրկենի կորեան յաղագս կարի իմն շտապոյ կրօնական նախանձու իւրոյ. որ 'ի բազում առիթս յափշտակեաց զԿօրթէս առ իւր անմիասնականս ընդ խոհեմութե՟ն, որ էր տարորոշիչ յատկութի՟ նորա. Թէպէտ և տակաւին ոչ էր կալեալ ոչ ժամանակ և ոչ պարապ տալոյ ճանաչել ազգայնոցն զմոլորութի՟ս նորակրօնութե՟ն իւրեանց, և հրահանգելոյ զն՟ս 'ի նախակրթութի՟ս քրիստոնէական հաւատոյ, հրամայեաց զօրականաց իւրոց կործանել զսեղանս և եղծանել զկուռսն 'ի մեծագոյն մեհենին Ցէմփօալոյ, և կանգնել անդէն փոխանակ նց՟ զխաչելութի՟ մի և զպատկեր կուսին

սին Մոնթիզումու. Ժողովուրդն նշմարեաց զայն ամօթ շոճարմամբ և սոսկմամբ. քուրմք գրգռեցին զնոս առ զէնս. բայց այնպիսի եղև սաստութիւն Կորթիսի և այնպէս մեծ գերազանցութիւն, զոր Սպանիացիք ունէին ստացեալ, մինչզի խռովութիւնն ցածուցեալ եղև առանց հեղման արեան և միաբանութիւն կատարելապէս վերահաստատեալ։

Յառաջ-
խաղէ
զէնէ 'ի
ներքս
երկրէն։

Կորթէս անկաւ 'ի չու 'ի Սէմփօալայէ 'ի 16. Օգոստոսի հանդերձ հինգհարիւր արամբքն՝ վեշտասան երիվարօք և վեց հատորովք թնդանօթից. մնացեալն զօրաց իւրոց բաշխեցեալ էր 'ի նոցանէ, ոյք վն տիոցն կամ հիւանդութեն էին անյարմարք առ սթափ իմն ծառայութեն. և զոսա եթող վն պահպանութեն 'ի Վիլլառիքային ընդ հրամանատարութեամբ Էսքալանթեայ վաստակաւոր պաշտօնատարի և եռանդագին յարեցելոյ 'ի շահս նր. Կաղիքէն Սէմփօալայի նախահոգացաւ նմա զպարէնս, և ետ նմա զերկերիւրս 'ի հնդկացն կոչեցելոց Թամէմէս. որք յերկրի միում, ուր ընտանի շնչաւորք ոչ էին ծանուցեալք, ծառայէին 'ի տանել զբեռինս և կրել զամ ծառայական աշխատութիւնս. Եղեն սոքա մեծ սփոփանք զօրականացն Սպանիացւոց, որք մինչև ցայնժամ հարկադրեալ էին ոչ միայն ծանրանալ յատուկ կարասեօք, այլև քարշել զօրութեամբ բազկի զթնդանօթս. Մատոյց ևս նմա զերևելի ինչ գունդ վաշտականաց. Բայց Կորթէս շատացաւ միայն չորեքհարիւր արամբք, սակայն ուշադրելով ընտրել անձինս համարոյ առ 'ի կարել լինել պատանդ վն հաւատարմութեն տն իւրեանց. Ոչինչ ընդառաջ եղ յիշատակաց արժանի 'ի ճանապարհորդութեն իւրում, մինչև ոչ դիպեցաւ 'ի սահմանս Թլասքալայի. Բնիկք այսր գաւառի մարտիկք և երդուեալ թշնամիք Մեքսիքացւոց միացեալ էին վաղընջուց իմն դաշնաւորութեամբ ը քաղիքէից Սէմփօալայի. Թէպէտ նուազ քաղաքականացեալք քան զստրուկն Մօնթէծումայի, սակայն գերազանցեալ էին բազմօք 'ի հրահանգութեն քան զայլ ազգս Ամերիկոյ. զորոց զբարսն կանխաւ ստորագրեալ եմ. Կարի իսկ քաջ խելամուտ էին հողագործութեն, բնակէին 'ի մեծամեծ քաղաքս, ճանաչէին զսեռ ինչ տուրևառութեն. և յանկատար ծանօթութիւս սահմանադրութեց նոցա և օրինաց փոխանցելոյ առ մեզ յառաջնոց մատենագրաց Սպանիացւոց՝ երևին հետք տրամաբաշխական արդարութեն և քրէական իրաւաբանութեն 'ի ներքին քաղաքավարութեն նց. Բայց չևս ողջոյն քաղաքականացեալ, և վստահացեալք վասն ապրուստ իւրեանց ոչ 'ի հողագործութեն, այլ մեծագոյն մասամբ յորսորդութեն, պահէին բազում որակութիւս բնականս մարդոց վայրագ վիճակի. Սակ էին գազանաբարոյք, անագորոյնք և քինախնդիրք, սրտեայք և սիրողք անկախութեն. 'Ի հետևութէ 1519 առաջնոյ որակութեն իւրեանց գտանէին շաղեալք 'ի մշտնջենաւոր ռազմութիւս. և ոչ ունէին, բայց եթէ զթեթև ինչ և զպատահական հաղորդակցութի ը մօտաւոր տէրութեց. Վերջինն չնչէր 'ի նս զայնպիսի իմն խորշումն 'ի ծառայութենէ, մինչզի ոչ միայն դժկամակէին ընկճելոյ ընդ օտար իմն լծով, պահելով զյամառ իմն և զյաջորդական դիմակացութի 'ի պաշտպանութեն ազատութե իւրեանց ընդդէմ վերնագոյն կարողութեն Մեքսիքեան կայսերութե, այլև զգուշանային հաւասար հոգաբարձութբ յընտանի բռնաւորութէ. և անդուստ ճանաչելոյ զգերագոյն իշխան ոք կեային 'ի ներքոյ քաղցր և սահմանաւոր կառավարութեն խորհրդեան միոյ ընտրեցելոյ 'ի զանազան ցեղից նց :

Բօրթէս թէպէտ և տեղեկացեալ պատերազմա- Պլափէ-
կան բարուց նց, մտահաճ եղև, թէ դաւանու- բուալ
թիք իւր եկեալ գոլոյ առ 'ի ազատել զճնշելոյն իւր ընդ
'ի բռնակալութե Մօնթէծումայ, և թե ատելու- Ռլաստա-
թի նց լսոյոց :

թի ընդդէմ Մէքսիքացւոց, և օրինակն Զէմփօալացւոց հին դաշնաւորաց ընդ պարտ էին շարժել զնոսա առ 'ի շնորհել նմա զբարեկամական իւր ասպնջականութի. Առ 'ի լաւ ևս պատրաստել զնոսա առ այս առաքեալ եղեն չորք Զէմփօալացիք յառաւել նշանաւորացն իբր պատգամաւորս 'ի խնդրել յանուն իւր և յանուն քաղաքէից իւրեանց, զի հաճեսցին թողացուցանել Սպանիացւոցն զանցս ընդ երկրաստանս Թլասքալայի 'ի գնացս իւրեանց առ Մէքսիքօ. Բայց փոխանակ հաճոյական պատասխանւոյ, որ սպասեալ լինէր, Թլասքալայք կալանաւորեցին զպատգամաւորսն. և անդ նկատման իրիք առ հրապարական կնիք ընդ պատրաստեցան զոհել զնոսա աստուծոց իւրեանց. Միանգամայն և ժողովեցին զզօրս իւրեանց առ 'ի պախոյեան ելանել ընդդէմ անծանօթ յարձակողացն, եթէ դէպ լինիցի ընդ նկրտիլ բանալ զճանապարհն բռնութ զինուց. Զուգընթաց եղեն պէտք շարժիչք առ 'ի գահավիժել զԹլասքալացիս 'ի նմանակ որոշումն. Ժողովուրդ մի ամենի փակեալ 'ի ներքս անձուկ շրջապատի իւրոյ և սակաւ ընտել առ հաղորդութի ինչ ը արտաքնոց, այնպի տրամադրեալ 'ի նկատել զօտարսն որք իբր թշնամի՝ դիւրաւ ի ընթանայ առ 'ի զինիլ. Հետևեցուցին 'ի կամացն Կօրթէսի երթալոյ յայտնելութի Մոնթեծումայ 'ի մայրաքաղաքի իւրում, թէ նա հանդերձ ամ դաւանութեամբք իւրովք կամէր գերել զբարեկամութի միապետին այնորիկ առեցելոյ 'ի նոցանէ. միանգամայն և աջաւորի. Անխոհեմ նախանձայուզութին Կօրթէսի 'ի բռնարարելն զմեհեանսն 'ի Զէմփօալա լցեալ էր ըզԹլասքալացիս սոսկմամբ. և գոլով նոքին յարենք 'ի նորակրօնութի իւրեանց զոյգ այլոց ցեղիցն նորոյ Սպանիոյ՝ էին անժոյժք խնդրելոյ զվրէժ թշնամանեալ աստուծոց իւրեանց և ստանալոյ անձանց զոլդինս մատուցանելոյ ընդ պատարագ

զամ

զամբարիշտ արսն զայնոսիկ, որք իշխեղէին պղծել զբագինս նց. Սպանիացիք առ փոքրկութեն թըւոյ իւրեանց էին առարկայ արհամարհանաց նց. զի տակաւին չէին չափեալ զզօրութի իւրեանց ընդ նոցայն. և ոչ ունէին զտեսակս գերազանցութեն, զոր հանէին 'ի զինուց նց և 'ի կրթութենցն.

Քօրթէս յետ սպանելոյ աւուրս ինչ 'ի զուր դարձի դեսպանաց իւրոց՝ յառաջ խաղաց յերկրաստանս Թըլասքալացւոց. Որոշմունք ժողովրդոց, որք սիրեն զպատերազմ, 'ի գործ եդեալ են նովին արագութբ, որով խորհեալ են. և վղկ եգիտ զգունդս պատրաստեալս առ 'ի դիմակաց լինել. Յարձակեցան նոքա մեծաւ խիզախմամբ. և յառաջին ը հարման խոցեցին զոմանս 'ի Սպանիացւոց, և սպանին զերկուս երիվարս, կորուստ 'ի կայաւորութեն իւրեանց մեծակշիռ, վնզի աննորոգելի. Յայսմ փորձոյ քաջասրտութեն իւրոց նոր թշնամեաց ուսաւ Քօրթէս զկարևորութին յառաջ խաղալոյ զգուշութբ. Ըստ չունել զօրաց իւրոց յանձուկ կարգի միում. Նոյն ինքն ընտրեաց զդիրսն, ուր դադարեցաւ մեծաւ ուշադրութբ. և ամրացոյց զամ տեղին մտադիւր խնամով. Ընդ չորեքտասան աւուրս նշաւակ եղև անըհատ յարձակմանց յաւելլով Թըլասքալացւոց յոգնաթիւ զօրօք և կրկնելով զյարձակմունս 'ի զանազան կերպս մեծաւ քաջութբ և տոկացմամբ իմն. որում Սպանիացիք չէին գտեալ զհաւասարն 'ի նոր աշխարհին. Միպասանք Սպանիացիք ստորագրեն զայսոսիկ յաջորդական պատերազմունս շքով. և մտանեն 'ի մանր իմն պատմութի մասնաւորութեց, խառնելով զբազում բարդեալ և անհաւատալի պարագայս ը այնց, որք են ճշմարիտք և զարմանաքանչք:

30. Օգոստ. Հազարու ԵՃ ԺԹ.

(9) 'Ի վիպասանութեն տիրապետութեն Ամերիկոյ չիք պարագայ առաւել երկրայական քան զպատմութի յոգնաթիւ զինելոյ եդելոց 'ի մարտ ը-

դէմ Սպանիացւոց. Եւ քանզի պատերազմն ընդ Թլասքալացւոց թէպէտ կարճատև՝ եղև մի յառաւել երևելեացն, որք պատահեցան յԱմերիկա. պատմութ՟ի զօրուն՟ց ն՟ց արժանի է ուշադրութ՟ն իմիք. Ոչ ունիմք, բայց եթէ միայն զերիս արժանահաւատ ծանօթութ՟իս նորին. Քորթէս յերկրորդում նամակագրութ՟ն իւրում առ կայսրն տուեալ 'ի Սեկուրա տէլա Ֆրոնթէրա 'ի 30 հոկտեմբերի 1520, ամբառնայ զթիւ զօրաց ն՟ց յառաջնում պատերազմին առ վեցհազար, յերկրորդումն առ հարիւր հազար, յերրորդումն առ հարիւր յիսուն հազար. [illegible]. Բեռնարդոս Տիազ Քասթիլլեան, որ եղև ականատես վկայ և բաժանորդ ամ՟ գործողութ՟նց այսր պատերազմի, տայ ն՟ց յառաջնում պատերազմի զերիս հազարս արանց, յերկրորդումն զվեցհազարս և յերրորդումն զյիսուն հազարս. Կոմարա, որ եղև մատռանապետ Քորթէսի, յետ դարձին իւրոյ 'ի Սպանիա, որ և հրատարակեաց զժամանակագրութ՟ի իւր յամին 1532, երթայ զկնի հաշուէին Քորթէսի բաց 'ի հաշուէ յերկրորդ պատերազմին. ուր համբառնայ զԹլասքալացիս առ ութսուն հազարս. Էր յայտնապէս առանձին շահ Քորթէսի մեծացուցանելն զվտանգս իւր և ըզգործս. որովհետև միայն վաստակով արտաքոյ կարգի ծառայութ՟նց կարէր նա արդարացուցանել զանկանոնաւոր գնացս յառնուլն յինքն զհրամանատարութ՟ի իւր անկախ. Բեռնարդոս Տիազ թէպէտ և բազմօք տրամադրեալ 'ի գնել զքաջութ՟ի իւր և զքաջութ՟ի ընկերաց իւրոց տիրապետողաց 'ի շահեկանագոյն տեսիլ, սակայն ոչ ունէր զնոյն փորձութ՟ի դիզաբարդելոյ. և է հաւանական, թէ պատմութ՟ի իւր զթըւոյ Թլասքալացւոց առաւել մերձենայցէ առ ճշմարտութին. Գումարելն զզօր մի հարիւր յիսուն հազար արանց պահանջէ զբազում նախաշաւիղ պատ-

րասքանստութի՟ս, և զդարմանս այնպիսիս վ՟ն ապրուստի իւրեանց, մինչզի երևելին վերնագոյնք զգուշութե՟ն Ամերիկացւոց. և մշակութի՟ն 'ի Թլասքալա ոչ էր ստուգիւ յայնպիսի աստիճանի, մինչև կարող լինել մատակարարել զպարէնս այնպիսի զօրու մեծի. Թէպէտ այս գաւառ էր այնչափ լաւագոյն մշակեալ քան զայլ կողմանս Նորոյն Սպանիոյ, մինչզի կոչիւր՝ Երկիր հացի, ոչինչ ընդհատ Սպանիացիք 'ի չուի իւրեանց կրեցին զայնպիսի սով, զի ստիպեցան սնանիլ Թուանտուն՝ տեսակաւ իմն վայրենի պտղոյ. որ աճէ յանդս. Հերրէրա Դ.Է.Ժ. Բ։

Բայց չէք ազդուութի խօսից, որ կարիցէ հաւատարմացուցանել զպատմաբանութի իւիք պատերազմի, ուր ոչ գոյ զուգահաւասարութի վտանգի, և երբ պատմութի՟ն աւարտի սատակմամբ հազարաւորաց 'ի միոջէ կողմանէ, մինչ ոչ անկանի և ոչ մի և եթ 'ի միւսմէ, գերապանծ ստորագրութի՟ք կարգադրութե վաշտուցն և պէսպէս փոփոխութե՟ց 'ի մէջ խառնմանն ոչ պահանջեն զուշադրութի ինչ։

Սակայն են յայսմ պատերազմի պարագայք ինչ յիշատակելիք և արժանի պատմութե, իբր այնք, որք օգտեն 'ի ճանաչել զյատկութի ժողովրդոց Նորոյ աշխարհին և տիրապետողաց ն՟ց. Թէպէտ և Թլասքալացիք գնէին յասպարիզի զայնպիսի մեծ զօրս, մինչև երևել բաւականս 'ի ճնշել զՍպանիացիս, սակայն ոչ եղեն երբէք յաստիճանի դիմակաց լինելոյ փոքրագոյն գնդի ճակատեցելոյ. Այս մեկնի կարի իսկ քաջ, որչափ և դատիցի եղական. Թլասքալացիք թէպէտ և անձնատուրք 'ի մարտ ոխ զհամակ վայրենի ազգսն, սակայն պակասէին 'ի կարգէ և 'ի կրթութէ. և զբովանդակ օգտութի՟ն, զոր կարէին հանել 'ի բազմութէ և 'ի յուժգնութէ յարձակման իւրեանց, կորուսանէին զայն վ՟ն յարակայ հոգածութե՟ն տանելոյ

Պարա-
գայք ինչ
եղականք։

նելոյ 'ի բաց զվիրաւորեալսն և զմեռեալսն. Այսքան պատուոյ հիմնել 'ի վ՟ր զգացուածոյ իրիք գորովոյ բնական եղելոյ համօրէն մարդոյ, և զօրացեալ 'ի տատամսութէ նախապահելոյ զդիակունս հայրենակցաց 'ի դիշատմանէ թշնամեաց իւրեանց՝ ընդհանրական էր 'ի մէջ ազգայնոց Նորոյ Սպանիոյ. Ուշադրութին առ այս գթալից պաշտօն, որ պատաղեցուցանէր զնս ևս և 'ի ջերմուն մաքառմանն, ընկանէր զմիաւորութի նց, և նուաճեցուցանէր զոյժ տպաւորութն, զոր կարէին առնել գործելով զուգակցաբար:

Սակաւ օգտէր նց լինելն վերնագոյն թուով. այլև անկատարութի զինուց իւրեանց առնէր ըստ մեծի մասին անպիտան զքաջութի նց. Յետ երից պատերազմաց և բազմաց նախամարտութնց և յարձակմանց և ոչ իսկ մի ոք Սպանիացի մնաց մեռեալ յասպարիզին. Նետք և նիզակք քարեայ կամ ձկնոսկրեայ ծայրիւ, բակուղք կարծրացուցեալք առ հրով և փայտեայ սուսերք, թէպէտ և զէնք ապականիչք 'ի մէջ մերկ Հնդկաց՝ ոչ յառաջածէին մեծ ինչ արդիւնս 'ի վ՟ր պատսպարանաց Սպանիացւոց. որովհետև դժուարաւ կարէին թափանցել ընդ ասղնեգործ վերտոսն, զորս կրէին զինուորքն. Թլասքալացիք յառաջելով յանդգնաբար ընդդէմ նց՝ պայքարէին ստէպ ձեռն ընդ ձեռն. Նազուք 'ի Սպանիացւոց մնային խոցք թէպէտ և թեթևակի. և այս ոչ պարտի վերագրել պակասութն իմիք սրտեղութն 'ի թշնամիս իւրեանց, այլ պակասուն զինուցն, որովք երթային գրոհ տալ 'ի վ՟ր նց:

Հանդերձ մոլեգնութբն, որով Թլասքալացիք խուժէին 'ի վ՟ր Սպանիացւոց, երևի թէ ընդածէին զսովորութս իւրեանց տեսակաւ իմիք խժական վեհանձնութն. Ազդ առնէին Սպանիացւոց զարիւնըռուշտ ձկտմունս իւրեանց. և գիտելով, թէ չքաւորէին նոքա 'ի պարէնից, և պատկերացուցանելով Թերևս զօրէն այլոց Ամերիկացւոց, Թէ Թողեալ էին զաշխարհ իւրեանց վն ոչ գտանելոյ անդէն կերակուրս, առաքէին 'ի բանակ նց զառատութի հաւեղինաց և մաիծաց, աղաչելով զնոսա ուտել. որովհետև անարժան համարէին կռուիլ ընդ Թշնամւոյ տկարացելոյ 'ի քաղցու. և լինէր գրգռել իմն զածս իւրեանց մատուցանելն նց զոհս բնաւին ծոմս, և անախորժելի անձանց իւրեանց կերակուր մարմնոյ նց:

Յորժամ յառաջին ճակատման ընդ Թշնամեաց իւրեանց ծանեան, Թէ ոչ է դիւրին ճշգրտելն զոյս ապաւինելիս, յորժամ իրազեկ եղեն 'ի հետագայ մաքառմունսն, Թէ հանդերձ բովանդակ ճգամբք քաջութն իւրեանց, որով հպարտանային մեծապէս, ոչ դք 'ի Սպանիացւոց սպանեալ լինէր, կամ կալեալ, սկսան հաւատալ զնն էակս վերնագոյնս. Ըդէմ որոց ոչ զօրէր մարդկային կարողութին. Սերածեալք յայս վերջին ծագ՝ դիմէին առ քուրմս իւրեանց, երդմնեցուցանելով զնն յայտնել նց զխորհրդաւոր պատճառս այսպիսի արտաքոյ կարգի դիպուածոց, և Թելադրել նց, Թէ զոր հայթհայթանս պարտ էին 'ի կիր արկանել առ 'ի վանել զայնպիսի ահարկու հէնս. Քուրմքն յետ բազում դիւթութեանց և զոհագործութեանց տային պատասխանի, Թէ այս օտարք էին որդիք արևու ծնեալք 'ի շնչաւորիչ ազդողութէ նր 'ի կողմանս արևելից. 'ի տուէ յորժամ էին օրհնեալք 'ի հեղմանէ հայրական շառաւիղաց իւրոց, ցուցանէին անյաղթելիք. բայց 'ի գիշերի, յորժամ կենդանարար ջերմութի իւր ամփոփեալ էր, նուազէր կորովութի նր, և Թառշամէին իբրև զխոտ 'ի դաշտի, յայնժամ յեղափոխէին ամենեքեան 'ի ճշմարիտ մահկանացուս. Տեսականութիք նուազ հաւանականք քան զայսոսիկ գտեալ են զհաւատարմութի առ առաւել լուսաւորեալ ազգս և ազդեալ 'ի գնացս նց:

Ճնշմանէ Թլասքալացիք այնու լռելեայն վստահութեան մարդկան, զոր հաւատան ընդ առաջնորդութեան երկնից, գործէին ներհակ միում 'ի սկզբանց իւրեանց հաստատելոց 'ի պատերազմի. և վտանգէին զանձինս յարձակել 'ի վերայ թշնամւոյ գիշերայն՝ յուսով յանկարծակի ըմբռնելոյ զնա և ջնջելոյ. Բայց Կորթէս ունէր զայնպիսի հսկողութիւն և զխորագիտութիւն, զի ոչ թողուր խաբիլ յայսպիսի թանձր հնարագործութենէ. Պահապանքն 'ի յառաջացեալ դիրսն նշմարելով զանսովոր ինչ շարժումն 'ի մէջ Թլասքալացւոց, ետուն նոյնհետայն զնշան. Խումբքն 'ի միում վայրկենի զինեցան, և հարթուցեալք 'ի դուրս ցրուեցին զտառապեալսն զայնոսիկ մեծաւ կոտորածիւ առանց տալոյ նոցա ժամանակ մերձենալոյ 'ի բանակն. Ապա յաղթահարեալք 'ի միտս իւրեանց մահառիթ իմն փորձառութեամբ, թէ քուրմք պատրեալ էին զնոսա, և խելամուեալք, թէ 'ի զուր ջանային թակարթել կամ յաղթել թշնամեացն, Թլասքալացիք ցածուցին զգազանութիւն իւրեանց, և սկսան միտել իսկապէս առ խաղաղութիւն:

Թլասքալացիք պատգամաւորս առ Կորտէս:

Բայց ոչ գիտէին, թէ զի՞արդ ուղղիցեն առ օտարսն. և թէ զո՞ր ճանաչումն յղանայցեն զհանգամանաց նոցա. և միթէ պա՞րտ էին համարիլ զնոսա էակս բարերարս, եթէ չարաբնոյթս. Այլ 'ի գնացս նոցա պարագայք նպաստաւորք իւրաքանչիւրում յայսց կարծեաց. 'Ի միոջէ կողմանէ այնու զի Սպանիացիք վերառաքէին հաստատապէս զկալանաւորսն, զորս առնէին, ոչ միայն առանց վնասելոյ նոցա, այլև նուէր պարգևելով զչքնաղ ինչս Եւրոպիոյ, և առնելով զնորանոր առաջադրութիւնս խաղաղութեան, այս հաճոյականութիւն եղև պատճառ զարմացման ժողովրդեան միում սովորելոյ առ համայնաջինջ կարգադրութիւն պատերազմի 'ի գործածեալ յԱմերիկա, և որ զոհէր և գիշատէր անողորմաբար զամենեսին զնոսա, որք կալեալ լինէին 'ի պատերազմի. և տրամադրեաց զնս առ 'ի առնել զբարեգուշակութի զմարդասիրութէ նց. Բայց 'ի միւսմէ կողմանէ ունելով Կորթէս կալանաւորեալ զյիսունս յազգայնոց իւրեանց, որք բերէին պարէնս 'ի բանակ իւր, և գոլով հատեալ զձեռս նոցա, վնզի ենթադրէր զնս զամենեսին լրտեսս, այս արինայեղց տեսարան առակցեալ ընդ սարսափմանն շնչեցելոյ 'ի հրացան զինուցն և յերիվարացն, ելից զնս զարհուրելի իմն պատկերաւ ամեհութն նց:

(10) ‖ Այս Թշուառական զենլիք՝ ասի, թէ էին անձինք երևելիք. Անկարելի երևի, թէ այսպիսի իմն մեծ թիւ, ոչ յիմնից, լինէին պարապեցուցեալ առ 'ի առնել զլրտեսութիս. Այնքան կալանաւորք լեալ էին և վերառաքեալք 'ի Սպանիացւոց, և Թլասքալացիք արձակեալ էին զայնքան պատգամաւորս 'ի զետեղս նց, մինչզի երևի ոչ լեալ անդէն պատճառ վտանգելոյ զկեանս այնքան արանց վս տեղեկանալոյ զդրից և զվիճակէ բանակի նց. Խուժադուժ եղանակն, որով Կորթէս վարեցաւ ընդ ժողովրդեան միում ոչ տեղեկացելոյ օրինաց պատերազմի սահմանեցելոյ 'ի մէջ կիրթ ազգացն, տհաճեցուցանէ այնչափ զնորագոյն մատենագիրս Սպանիացւոց, մինչզի նուազեցուցանեն զթիւ նց, զորս պատուհասեաց նա այսպէս անողորմ. Հերրերա ասէ, թէ կտրեց զձեռս եօթանց և զբոյթս այլոց ոմանց. Դէկ. Բ. Գրք. Բ. Գլ. 8. Պատմէ Տէսօլիս, թէ կտրեն եղեն ձեռք չորեքտասանից. և բոյթք բովանդակ մնացելոցն. Գրք. Բ. Գլ. 20. Բայց նոյնինքն Կորթէս 'ի վէպս իւր. և յետ նր Կոմարա հաստատեն, թէ հատեալ եղեն ձեռք յիսնիցունց եւս: ‖

Հետևաբար ցուցին զայս անստուգութի իւրեանց յեղանակն, որով յանդիման եղեն Սպանիացւոց

«Եթէ էք դուք, ասէին նոքա, ածունի անագորոյն և վայրենի բարուք, ահաւանիկ ձեզ հինգ գերիք, որպէս զի արբջիք զարիւն նց և ուտիցէք զմարմին նց. Եթէ իցէք ածք գթածք, հաճեցարուք ը այս ընծայ խնկոց, և ընդ այսոսիկ գունագոյն փետուրս. Եթէ իցէք մարդիկ, մեք առաջի ընծայեմք ձեզ զմիս, զհաց և զմիրգս 'ի կերակուր». Խաղաղութիւն, որում երկոքին կողմանք փափագէին մեծաւ եռանդիւ, փութանակի կատարեցաւ. Թլասքալացիք անձնատուրք եղեն իբր հպատակս՝ թագաւորութեն Կաստիլիոյ. և գրաւեցին զանձինս ընթերակայ լինել Կորթեսի յամ ապագայ գործողութիս իւր. Իսկ նա էառ զհասարակապետութիւն ը պաշտպանութե իւրով, և խոստացաւ պատսպարել յանիրաւութէ և 'ի բռնութէ զանձինս և զինչս նց:

[illegible] Սպանիացւոց.

Կնքեցաւ այս դաշն 'ի լծակցութեն միում նպաստաւորի Սպանիացւոց. Աշխատութիւն, զոր պահանջէր ծառայութիւն 'ի մէջ փոքրիկ խմբի մարդկան պաշարեցելոյ յայնպիսի մեծ բազմութէ թշնամեաց, էր անհաւատալի. Կէս զօրքն կայր յամ գիշերի 'ի պահպանութեն. նաև նոքա, որոց դէպ լինէր հանգչել, ննջէին միշտ 'ի վր զինուց իւրեանց վն լինելոյ պատրաստ առ 'ի ընթանալ 'ի կայս իւրեանց առ գուզնաքեայ իմն ակնարկութի. Բազումք 'ի նոցանէ խոցեալ էին. հարուստ մի բազմութի, և 'ի մէջ սոցա նոյն իսկ Կորթէս տառապեալ էր 'ի հիւանդութեանց մասնաւորաց կլիմային. և զանազան անձինք, յորմէհետէ մեկնեցան 'ի Վերաքրուզէ, մեռել էին. Հանդերձ սատարութիքն, զորս հանէին 'ի Թլասքալացւոց, պակասէին նց բազում անգամ դարմանք. և էին այնպէս զուրկք 'ի կարևորագունիցն յայնպիսի վտանգաւոր իմն ալէկոծութեն, մինչզի ոչ ունէին և ոչ իսկ իւղ առ 'ի բժշկել զվէրս նց, բայց եթէ այն, որ բաղադրեալ էր

'ի

'ի ճարպոյ Հնդկաց Սպանելոց 'ի նոցանէ. Նեղեալք յայսպիսի անտանելի լլկանաց և 'ի տագնապից՝ բազումք 'ի զօրականաց սկսան տրտնջել, և զմտաւ ածելով զբազմութի և զհամարձակութի թշնամեաց իւրեանց մեծագոյն մասն մերձ էր տալ զանձն 'ի յուսահատութի. Բովանդակ արագութի և խաչալրջութի Կորթիսի պիտոյացաւ առ 'ի արտաքս քարշել զնա 'ի վհատութէն և առ 'ի զօրացուցանել զսիրտ նց, զգացուցանելով նց զվերնագունութին, զոր ունէին 'ի վր թշնամեաց իւրեանց. Ենթարկութին Թլասքալացւոց և յաղթանակաւոր մուտ նոցա 'ի մայրաքաղաքն, ուր ընկալեալ եղեն յարգանօքն, որ պարտ էր վերնագոյն իրիք կարգի էակաց, ջնջեցին 'ի միում վայրկենի 'ի մտաց Սպանիացւոց զամ յիշատակ անցելոց տառապանաց. ցրուեցին զամ անհանգիստ խոկումն վերահայեցմամբ ապագայ գործողութեց. և լիով խելամտեցուցին զնոսա, թէ ոչ գոյ յԱմերիկա կարողութի բաւական ընդէմ կալոյ զինուց նոցա: 1519

Կորթէս դադարեաց զաւուրս քսան 'ի Թլասքալա առ 'ի տալ վաշտուց իւրոց զմիջոց իմն հանգստեան զկնի այնպիսի իմն խիստ ծառայութեն. Ընդ բովանդակ այն ժամանակ պարապեցաւ նա յիրակութիս և 'ի խոյզս մեծակշիռս հայելով յայն, զոր պարտ էր գործել փոքր մի զկնի. 'Ի հանապազօրեայ զրոյցս իւր ընդ գլխաւորացն Թլասքալացւոց ստանայր զծանօթութիս իւրաքանչիւր մասնաւորութեց վերաբերեալ առ Մեքսիքեան թագաւորութին, առ որպիսութիս արքային իւրոյ, և առ ամ, որ կարէր ծառայել նմա 'ի կանոնաւորել զգնացս իւր, գոլով պարաւանդել 'ի վարել կմ իբր բարեկամ կմ իբր թշնամի. Տեսանելով, թէ հակակրութին նոր դաշնաւորաց իւրոց ընդէմ Մեքսիքեան ազգին ճշմարտիւր անհաշտելի, որպէս առաջի արտրեալ էր նմա, և թէ զոր բա-

Կոր-
թէս հա-
ւատա
շահելոյ
զհաւա-
նումն
նոցա:

րիս կարէր հանել յօգնուէ̃ այնպիսի հզօր դաշնաւորաց, 'ի գործ եած զա̃մ մարդելուզագոյն եղանակս առ 'ի յանկուցանել յինքն զհամարումն̃ նց̃. Թէպէտ չեղեն պէտք վարելոյ զայնս տարօրէն. Թ՛լասքալացիք այնու թեթևամտութե̃, որ բնական է համօրէն մարդկան ոչ քաղաքականացելոյ, ինքնին պատրաստ էին արշաւելոյ 'ի ծագէ ատելութե̃ առ ծագ բարեկամութե̃. Ա՛մենայն ինչ 'ի գնացս հիւրից իւրեանց էր վն̃ նց̃ առարկայ ինչ զարմացման:

(11) ‖ Երիվարքն էին առարկայ մեծագոյն զարմանաց բովանդակ ժողովրդոցն Նորոյ Սպանիոյ. Պատկերացուցին 'ի սկզբան անդ, թէ երիվարն և հեծեալն՝ իբրև զձիացուլս նախնեաց՝ էին մի և նոյն հրէշաւոր ահեղակերպ իմն շնչաւոր. և ենթադրելով, թէ կերակուր նոցա էր նոյն ընդմարդկայնոյն, բերին միս և հաց առ 'ի կերակրել զն̃ս. Նաև զկնի ճանաչելոյ զմոլորումն̃ իւրեանց հաւատային, թէ երիվարք ուտէին զմարդիկ 'ի պատերազմի. և յորժամ խնչէին, խորհէին, թէ խնդրէին նոքա զորս իւրեանց. և ոչ էր շահ Սպանիացւոց հանել զն̃ս 'ի պատրանացն. Հերրերա Դեկ. Բ. Գրք. Ը. Գլ. 11: ‖

Հայէին հիացմամբ յայն ա̃մ, զոր առնէին Սպանիացիք. և հաւատալով զնոսա ծագեալս յերկնից, ցուցանէին զինքեանս անձկացեալս ոչ միայն կատարելոյ զխնդիրս նց̃, այլև կանխելոյ առ բաղձանս նոցա. Սակ անձնամատոյցք եղեն ընկերել Քօրթիսի 'ի չուն իւր առ Մէքսիքօ հանդերձ ա̃մ զօրօք հասարակապետութեանն և 'ի ներքոյ հրամանատարութե̃ առաւել փորձ պատերազմականի իւրեանց:

*Բայց զկնի կրելոյ զայնքան աշխատանս վն̃ պնդելոյ զայս միաբանութի̃, մերձ էր կորուսանել զբարերար արդիւնսն՝ վասն նորոգ իմն զեղման այնր ապաժամ նախանձայուզութե̃, յորմէ Քօր-

*Ընկա-
ձեռն նո-
քա 'ի
վտանգ
կորու-
սանելոյ
[illegible]
[illegible]
նախան-
ձայու-
զութե̃ն
[illegible]:

թէս խրախուսե̃լ էր զԶԳ այլոց բաղդորդաց դարուն. Ամենեքեան նկատէին զինքեանս իբր գործիս սահմանեալս յա̃յ առ 'ի ծաւալել զքրիստոնէական հաւատս. և որչափ նուաղ յարմարեալ էին առ այն կմ̃ մասամբ գիտութ̃ կմ̃ մասամբ վարուցն, այնչափ առաւել համարձակ ձեռնամուխ լինէին առնել զայն. Խորին յարգանքն Թլասքալացւոց առ Սպանիացիս քաջալերե̃լ զԿօրթէս 'ի պարզաբանել ոմանց 'ի նոցանէ զնախապետական սկզբունս քրիստոնէական կրօնից, և յեղյեղել առ նս̃ 'ի բաց թողուլ զնորակրօնութի̃ն, և ընդգրկել զհաւատս նոր բարեկամաց իւրեանց, նոքա յարելով 'ի գաղափար իմ̃ հանրական 'ի մէջ խուժադուժ ազգացն՝ ծանեան փութապէս զճշմարտութիւն և զգերազանցութ̃ խորհրդոցն, զոր նա ուսուցանէր նց̃. Բայց ջատագովէին, թէ Թէուլէզք Թլասքալայի էին ա̃ծութ̃իք ոչ վայրագոյնք քան զա̃ծն, յոր հաւատային Սպանիացիք. և որպէս էակն այն պահանջէր 'ի նոցանէ զսպասահարկութ̃ իմ̃, այսպէս նոքին պարաւանդեալ էին 'ի յարգել զնոյն կարողութիւն կանխաւ իսկ երկրպագեալս 'ի նախնեաց իւրեանց. Կօրթէս ոչինչ ընդհատ շարունակեաց պնդիլ 'ի խնդիր իւր իշխանական որոտմամբ, խառնելով զյանդիմանութիւնսն ընդ սպառնալեաց, մինչև Թլասքալացիք ոչ ևս կարելով հանդուրժել նմա, աղաչեցին զնա 'ի բաց թողուլ զայն զրոյց առ ահին, զի մի վրէժխնդիր լինիցին ա̃ծք 'ի վր̃ գլխոց նց̃ վասն մեղացն ունկն դնելոյ այսպիսի առաջադրութեանց. Գործե̃լ Կօրթէս 'ի յամառութէ̃ նց̃ պատրաստիւր կատարել բռնութ̃բ զայն, որում ոչ հասանէր համոզումն իւր. և այն ինչ երթայր 'ի տապալել զբագինսն և աւերել զկուռսն նովին բուռն ձեռամբ, ոմ̃ արար 'ի Ցէմփօալա, եթէ հայրն Բարթողոմէոս Օլմէտօ մատրանապետ զօրացն ոչ էր կասեցուցեալ զանխոհեմ յարձակումն իւր.

Սա յանդիման արար զվարկպարագութիւն այնպիսի իմն ձեռնարկութեան 'ի մեծի քաղաքի միում նորոգ ենթարկեցելոյ եւ բնակեցելոյ յազգէ ոչինչ նուազ սնոտիապաշտէ քան թէ հզօրէ. Յայտ արար նմա, թէ որչափ ինչ արարեալ էր Հնդկացն Զէմփօալայի երեւեալ էր ինքեան գահավիժական եւ անիրաւ. եւ թէ կրօնն ոչ էր տարածանելի սրով, կամ թէ անհաւատքն դարձուցանելի բռնութեամբ. եւ թէ էին այլ զէնք 'ի կիր արկանելի յայնմ սպասաւորութեան. եւ թէ համբերատար հրահանգութեան պարտ էր լուսաւորել զմիտս, եւ բարի օրինակն գերել զսիրտս՝, եթէ կամիցի վերածել զմարդիկ 'ի թողուլ զմոլորութիւն եւ ընդգրկել զճշմարտութիւնն. Այսպիսի ազնուական եւ մարդասէր զգացմունք յառիթս, ուր եռանդն գործէր միաբան ընդ նուաճութեանն եւ անգթութեանն, կակղեցին զբովանդակ սիրտսն. եւ բերէ զհիացումն այն, զի 'ի միում ժամանակի, յորում երեւէր եռանդն Կորթիսի ընկերակցեալ զգացմամբք ճնշմանն եւ անագորունութեան, նախանձայուզութիւն կրօնաւորի միոյ Սպանիացւոյ գիտացեալ իցէ կակղել զմիտս նորա յանկարծ իմն քաղցրաբարութեամբն. եւ ցոյցք եկեղեցականի միոյ ակնածելոյ վասն խոհականութեանն եւ առաքինութեանն կալան զայնքան ծանրութիւն 'ի վերայ Կորթիսի, մինչ զի եթող վասն այնր ժամու ըզԹլասքալացիս յաղագս վարման ծիսից իւրեանց. միայն պարաւանդելով զնոսա 'ի բաց կալ 'ի սոսկալի սովորութեան մատուցանելոյ 'ի զոհ զմարդկային զենլիս:

Յառաջ խաղաց ՚ի Կ. Չօլուլա :

Կորթէս հազիւ թէ զօրք իւր եղեն 'ի վիճակէ վերառնլոյ զծառայութիւն, բացորոշեաց շարունակել զչուն դէպ Մեքսիքոյ ընդդէմ իսկական տարհամոզմանցն Թլասքալացւոց, որք ստուգէին նմա անխորշելի զկործանումն իւր, թէ անկցի յիշխանութիւն այնպիսի հաւատադրուժ եւ անողորմ ազ-

13. Հոկտ.

արքայի միոյ, որպիսի էր Մօնթէծումա. Գոլով նա ընկերակցեալ 'ի վեց հազար Թլասքալացւոց ունէր զհրամանատարութ̃ի վաշտուցն, որք նմանէին կանոնաւոր զօրաց. Ուղղեցին զգնացս իւրեանց դէպ 'ի Քհօլուլայի. Մօնթէծումա, որ զիջեալ էր 'ի վերջոյ առ 'ի ընդունել զՍպանիացիս յառաջիկայութ̃ի իւր. տեղեկացուցեալ էր զՔօրթէս զհրամանացն տուելոց յիւրմէ, որպէս զի ընկալեալ լիցի անդէն բարեկամաբար. Քհօլուլա էր քաղաք մի ը̃ իմիք համբաւաւոր. և թէպէտ հինգ փարսախ միայն տարակաց 'ի Թլասքալայէ, կառավարիւր երբեմն իբր անկախ. և էր 'ի սակաւ ժամ̃ց հետէ ենթարկեալ կայսերութեն Մէքսիքօյ. Նա 'ի բոլոր ազգացն Նորոյ Սպանիոյ նկատեալ լինէր իբր սուրբ իմն տեղի, նախապետական աթոռ աստուծոց իւրեանց. ուր խուռն ընթանային պանդուխտք յա̃մ գաւառաց. և զենեն լինէր 'ի մեծի մեհենին բազմութիւն իմն մարդկային զենլեաց մեծագոյն ևս քան 'ի մեհենին Մէքսիքօյ. Երևեցաւ, թէ Մօնթէծումա հրաւիրէր զՍպանիացիս 'ի Քհօլուլա վասն սնոտիապաշտական յուսոյն, իբր թէ ա̃ծքն ոչ հանդուրժէին, զի այս ընտրեալ օթեվան մնասցէ պղծե̃լ առանց ցուցանելոյ զարդիւնս ցասման իւրեանց առ օտար ամբարիշտսն, որք իշխէին թշնամանել զկարողութ̃ի ն̃ց 'ի սեպհական կայի իւրեանց. կմ̃ հաւատալով, թէ նա ինքն կարէր աստանօր նկրտիլ սատակել զն̃ս առաւել անվտանգ 'ի ներքոյ անընդմիջական պաշտպանու̃ն ա̃ծութ̃նց իւրոց:

Մատնու-
թե̃ ըն-
[illegible]
իւրոց 'ի
Քհօ-
լուլա.

Քօրթէս ազդեալ էր 'ի Թլասքալացւոց յառաջ քան զանկանիլն 'ի չու՝ ունել զաչս արթուն 'ի վր̃ Քհօլուլացւոց. Նոյն ինքն թէպէտ և ընկալեալ 'ի նոցանէ առերևոյթ ակնածութ̃բ և սրտի մտօք, նշմարեալ էր զպէսպէս պարագայս 'ի գնացս ն̃ց, որք տային նմա կասկած. Երկուք 'ի Թլասքալացւոց, որք բանակեալ կային յիմիք տարակացութեն 'ի քաղաքէն, վն զի ոչ կամէին Չօլուլացիք ընդունել 'ի ներքս շրջապատի իւրեանց զնախկին թշնամիս իւրեանց, գոլով գտեալ զեղանակ սպրդելոյ անդր ծպտեալ. ասացին ց'Քօրթէս, թէ նշմարեալ էին, զի բնակիչքն անցուցանէին զկանայս իւրեանց 'ի մերձակայ քաղաքսն. և զի տասն տղայք լեալ էին զոհ 'ի մեծի մեհենին. ծէս, որ նշանակէր մօտալուտ զկատարումն պատերազմական իրիք ձեռնարկութեն. 'Ի նմին ժամանակի Մարինա Թարգմանն ընկալաւ ըզծանօթութի յազնուական կնոջէ ումեմնէ Հնդկայնոյ, ընդ որում մտերմացեալ էր, թէ եղծումն բարեկամաց իւրոց արդէն խորհրդածեալ էր. և թէ չէր հեռի հասանելն գնդի միոյ Մեքսիքացւոյ արձակեցելոյ 'ի Մոնթեծումայէ. և թէ ոմանք 'ի ճանապարհաց ցանկել էին. և թէ յայլս արարեալ լինէին փոսք և խորխորատ խորինք և ծածկեալք թեթևապէս զօրէն ծուղակաց, յորս պարտ էին անկանիլ երիվարք. և թէ վէմք և զէնք ձգելիք 'ի վեր հանեալ էին 'ի կատարս մեհենից. և թէ ճակատագրական ժամն մերձենայր, և անխորշելի նոցա կործանումն. Քօրթէս սոսկացեալ առ այսպիսի լուր, կալաւ զանխլաբար զերկուս յառաջնոց քրմաց. և բռնազբօսեաց 'ի նոցանէ զխոստովանութի իմն, որ հաստատեաց զծանօթութիւն, զոր ընկալեալ էր. և ոչ ելով անդէն կորուսանելի և ոչ իսկ վայրկեան մի, որոշեաց իսկոյն կանխել առ թշնամիսն, և սլանալ 'ի վր նց քինախնդրութբ իմն, որ զարհուրեցուսցէ զՄոնթեծումա և զբովանդակ հպատակս իւր. Առ այս վախճան Սպանիացիք և Զէմփօալացիք դասաւորեցան կարգաւ յընդարձակ գաւթի միում, որ նշանակեալ էր վն օթեւանի նց մերձ 'ի քաղաքամէջն. Թլասքալացիք ընկալան հրաման յառաջ խաղալոյ և առաքեցան 'ի կոչել ընդ պէսպէս պատրուակօք զմեծաւորսն և զոմանս յառաջաւոր քաղաքացւոց. և նոյնժամայն կալեալ եղեն. 'Ի տալն զնշան ինչ ելին գունդքն և յարձակեցան 'ի վ՟ր բազմութե՟ն միոյ զուրկ եղելոյ յառաջնորդաց. և այնպէս շուարեցելոց, մինչզի անկան զէնք 'ի ձեռաց բոլորեցունց, և մնացին անշարժ և անընդունակ առնելոյ զպաշտպանութ՟ի. Մինչդեռ Սպանիացիք 'ի դիմի հարան ն՟ց յառաջոյ կողմանէ, Թլասքալացիք յարձակեցան յետուստ կողմանէ. Պղոտայք 'ի միում բոպէի հեղեղեցան արեամբ և լցան մեռելովք. Մատուցեալ եղև հուր 'ի մեհեանսն. յորս ապաստանեալ էին քահանայք և ոմանք 'ի մեծաւորաց. որք և կորեան 'ի բոցսն. Այս տեսարան սոսկալի շարունակեցաւ ընդ աւուրս երկուս. յորս տարաբաղդ բնակիչքն կրեցին զայն ամ՟, զոր ապականիչ կատաղութ՟ի Սպանիացւոց, կամ անհաշտելի քինախնդրութ՟ի դաշնաւորաց իւրեանց՝ կարող եղև առնել ն՟ց չար. 'Ի վախճանի դադարեց կոտորածն զկնի սպանման վեց հազար Չօլուլացւոց առանց կորստեան միոյ և եթ Սպանիացւոյ. Յայնժամ Կորթէս ելթող զմեծաւորսն. և կշտամբելով զն՟ս դառնապէս վ՟ն խորհեալ դաւաճանութեանն՝ յայտ արար, թէ արդարութ՟ին գոլով յայնժամ վճարեալ ներէր ն՟ց զյանցանսն. Բայց ազդ արար ն՟ց վերակոչել զփախուցեալ քաղաքացիսն, և հաստատել վերստին զկարգ 'ի քաղաքին. Այսպիսի էր գերազանցութ՟ին, զոր Սպանիացիք ստացեալ էին 'ի վերայ այսր զարմի սնոտիապաշտ մարդկան. և նոքա ունէին այնպէս 'ի խոր տպաւորեալ զկարծիս զվերնագոյն ճանաչողութ՟է և զկարողութ՟է ն՟ց, մինչզի 'ի հնազանդութ՟ն այսպիսի հրամանի քաղաքն 'ի սակաւ աւուրս դարձե՟լ լցաւ ամբոխիւ. որ 'ի մէջ աւերակաց ս՟ր շինուածոց իւրոց մատուցանէր զակնածութ՟ին ծառայութ՟ի մարդկան, որոց ձեռք շաղախե՟լ էին արեամբ ազգականաց իւրեանց և քաղաքակցաց։

(12) ‖ Ըստ Բարթողոմեայ Տելասքազայ ոչ էր անդ պատճառ առնելոյ զնմանակ իմն սպանունի. և եղև ներգործութի չափազանց անգթութեան արարեալ սոսկապէս վասն ահ արկանելոյ 'ի ժողովուրդսն նորոյ Սպանիոյ. Բայց նախանձայուզութի Տելասքազայ յաճախակի փոխաբերէ զնա 'ի կուտակել զբանս. Բեռնարդոս Տիազ հակադրելով նմա ասէ, թէ առաջին միսիոնարք առաքելք 'ի նորն Սպանիա 'ի կայսերէն արարին զդատաւորական իմն խնդիր գործոյ այսորիկ. և քննել զքուրմն և զերիցագոյնսն Կհօլուլայ գոլին, զի էր 'ի նոցանէ նիւթեալ արդեամբք դաւ իմն սատակելոյ զՍպանիացիս. և զի պատմութի տուել զայնմանէ Կօրթիսի էր անվթար և ամենաճշմարիտ. Որովհետև յայնմ ժամի փոյթ Կօրթիսի էր շահել զբարի շնորհս Մոնթէծումայ՝ ոչ է հաւանական, թէ արարել իցէ նա գրգիռ իմն, որ ուղղակի դիմէր յօտարացուցանել զնա 'ի Սպանիացւոց, եթէ ոչ էր համարեալ զայն կարևոր վն ապրանաց իւրոց. Յաւելցի, թէ Սպանիացիք, որք ծառայէին յԱմերիկա, այնչափ արհամարհէին զազգայինսն, և հաւատային զնոս այնպէս անընդունակս հասարակ իրաւանց մարդկան, մինչզի Կօրթէս կարէր համարել զԿհօլուլացիս յանցաւորս 'ի վն թեթևագոյն վկայութն. Հանդերձ այսու ամէ խստութի պատուհասին եղև ստուգապէս տարապայման և դժնեայ ։ ‖

29 Հոկ. Յառաջանայ ընդ դէպ Մեքսիքոյ ։ 'Ի Կհօլուլայէ Կօրթէս յառաջ խաղաց ուղղակի դէպ Մեքսիքօ, որ ոչ էր աւելի տարաձեալ քան զվաթսուն մղոնս. Յամ տեղիս, ը որս անցանէր, էր ընկալեալ իբր անձն վերազգեցեալ զբաւական իմն կարողութի առ 'ի ազատել զթագաւորութիւն 'ի ճնշմանէն, ընդ որով հեծէր. և քաղաքեք, կամ բդեաշխք նման վստահութն, որ կալեալ լինի 'ի վեհնագոյն էակս, մանաւորէին նմա զբովանդակ տագնապսն, զորս

կրէին 'ի ներքոյ բանական կառավարութեն Մոնթէծումայի. Յորժամ Քօրթէս նշմարեաց զսերմանս տժգոհութեն 'ի հեռաւոր գաւառս կայսերութեն, շառաւիղ իմն բարի յուսոյ ճառագայթեաց 'ի միտս նր. այլ յորժամ ծանեաւ զայսոսիկ նշանս օտարութեն 'ի միապետէ իւրեանց մօտ յաթոռ կառավարութեն, կնքեաց, զի կենսական մասունք բաղկացութեն էին ապականեալք. և զի ոչ էր նմա դժուարին քակել զտէրութի մի, որոյ բնական զօրութին էր այսպէս բաժանեալ և տկարացեալ. Մինչդեռ այսպիսի խորհրդածութիք քաջալերէին զսպարապետն առկայ 'ի դժուարին ձեռնարկութեն իւրում, զօրականքն ևս ոչինչ նուազ սրտապնդեալք էին 'ի դիտողութեց առաւել չափակցելոյ ընդունակութեն նց. Յիջանելն 'ի լերանցն Ք. Հալքոյ, որոց ընդ խոտորնակ էր ճանապարհն, սակաւ առ սակաւ լայնատարած դաշտն Մէքսիքօի բացեալ լինէր առաջի աչաց նց. Իբրև տեսին յառաւօտուն նուագի զայս տեսարան մի յառաւել հրաշալեաց և յառաւել նազելեաց, զոր մարթ էր տեսանել 'ի վր երեսաց երկրի, իբրև հայեցան 'ի բերրի և 'ի վար անդաստանսն, որք տարածեալ լինէին, ցորչափ ոչ կարէր ակն ժամանել, իբրև հարևանցիկ արարին ընդ լիճ մի ընդարձակ սակաւ ինչ նուազ քան զծով՝ շուրջ պատեալ 'ի բազում մեծամեծ քաղաքաց, և տարորոշեցին զմայրաքաղաքն շինեալ 'ի վր կղզւոյ միոյ 'ի միջի և զարդարեալ մեհենօք և աշտարակօք, այս տեսարան այնչափ գեր 'ի վերոյ եղև քան զպատկերակերպութի նց, մինչզի ոմանք հաւատացին իրականացեալս զերևակայական գծագրութիս առասպելաց. այլք ոչ առաջի առնեն տեսութեն, եթէ ոչ զդիւթական ապարանս և զգմբէթս ոսկեզօծս են. Ոմանք հազիւ կարէին հաւատալ, թէ այս պերճ տեսարան իցէ այլ ինչ, քան թէ երազ իմն։

Տեսիլ քաղաքին.

(13) ‖ Այս գծագրութիւն առեալ է գրեթէ ըստ նկարագրին 'ի Բեռնարդոսէ Տիազու Քասթիլլեան, այնց սակաւ տեղեակ եղելոյ արհեստին բարւոք շարագրելոյ, մինչ զի անբաւական էր պաճուճելոյ զպատմագրութիւն իւր. Նա պատմէ պարզմիտ և ռամկական ոճով որ ինչ անցանէր ընդ միտս ն՟ր և ընդ միտս զինուորակցաց իւրոց յայնմ դիպողութեան. Մի՛ երևեսցի, ասէ, օտար. զի պատմեմ ես այսու կերպիւ զայն, որ յայնժամ եղև. որովհետև բազում տարիներուն կայ 'ի միջի պատմելոյն և տեսանել գոլոյն զիս ոչ երբեք տեսեալս յառաջ, և ոչ լուեալս պատմել յայլոց. գլ. ճղ: ‖

Ըստ չափուն, որով յառաջադէմ լինէին, չքանային տարակոյսք և աճէր զարմանքն. Այս էին լիով խելամտեալք, թէ երկիրն էր փարթամ անդր քան զինչ և իցէ գաղափար, զոր կերպաւորեալ էին զայնմանէ. և հաստատային լինել ընդարձակաբար կազդուրեալք 'ի պատահարաց և յաշխատանաց իւրեանց:

Տարակու- Ոչ ոք թշնամի երևեալ էր ցայնժամ առ 'ի ընդ-
սանք դէմ դառնալ յառաջադիմութեան ն՟ց. թէպէտ
Մոնթե- ընդ առաջ ելանէին պէսպէս պարագայք, որք շար-
զումայի: ժէին զն՟ս 'ի կասկածիլ, թէ գուցէ կերպաւորիցի խորհուրդ ինչ յանկարծակի ըմբռնելոյ և կորուսանելոյ զն՟ս. Բազում պատգամաւորք հասին յաջորդաբար 'ի կողմանէ Մոնթեծումայ. որ

1519 'ի միում աւուր հաւանէր ն՟ց գալ յառաջ, և 'ի միւսումն խորհուրդ տայր յետս ընկրկիլ ը՟ փոփոխմ՟ն, որ 'ի նմա նախազօրանայր կամ յուսոյ կամ երկիւղի. Ոչ կարէ ընծայիլ դեղևումն այսր արքայի, եթէ ոչ հաստատուն ճանաչման իւրում լինելոյ Սպանիացւոց էակս վերնագոյն իբրև բնութ՟ն քան զիւրն. բայց այն եղև այնպիսի, զի Կորթէս էր գրեթէ առ դրունս Թագաւորանիստ քաղաքին, մինչչև որոշեալ էր միապետն լինել զնա իբր բարեկամ, կամ թէ ընդդէմ կալ իբր թշնամւոյ. Այլ ոչ տեսանելով զնշան յայտնի թշնամութեան, Սպանիացիք առանց միտ դնելոյ աւելորդեալ խորհրդոց Մոնթէծումայի՝ շարունակեցին զչու իւրեանց ընդ սալայատակն, որ ածէր 'ի Մէքսիքօ առ լճին մեծաւ զգուշութեամբ և գերակատար հրահանգութեամբ, բայց առանց ցուցանելոյ ունել կասկած զարքայէն. որում մերձ էին ամենեւին յայց առնել:

Իբրև մերձեցան 'ի քաղաքն, իբր հազար անձինք, որք երևէին ամենեքեան ըստ իմիք նշանաւորք, ելին 'ի դուրս առ 'ի ընդառաջ ելանել նոցա զարդարեալք փետրափնջովք, և ծածկեալք ևս նրբագոյն բամբակեայ ձորձովք. Իւրաքանչիւր 'ի սոցանէ էանց կարգաւ առաջի Քօրթիսի ողջունելով եղանակաւ դատեցելով առաւել ակնածու և խոնարհական յայնմ աշխարհի. Ազդ արարին զգալուստ նորա Մոնթէծումայի. և հետ սակաւ միոյ երևեցան կարապետք իւր. Նախընթաց լինէին երկերիւր ազնուականք 'ի տանէ իւրմէ ճոխաբար զգեստաւորեալք միօրինակ հանդերձիւ, զարդարեալք նոյնագոյն փետրովք. և գնային երկու երկու 'ի խոր լռութեան՝ բոկ ոտիւք և աչօք 'ի գետին. Զհետ երթայր նոցա ընկերութիւն մի առաւել յոգնաւորիւ և պերճագոյն հանդերձիւ. յորոյ մէջի էր Մոնթէծումա 'ի միում գահաւորակի ոսկւոյ արծնելոյ, և սեւեռելոյ երփն երփն փետրովք. Զորք 'ի նախապետական սիրելեաց իւրոց բառնային զնա 'ի վերայ ուսոց իւրեանց. այլք վերամբարձ ունէին 'ի վերայ գլխոյ նորա զհովանոց մի գերապանծ ձեռագործութեամբ. Երթային առաջի նորա երեք զօրավարք ոսկի գաւազան 'ի ձեռին. զոր ամբառնային յոդս ընդ միջոցս ինչ, և առ այն նշան բոլոր ժողովուրդն խոնարհեցուցանէր զգլուխն և ծածկէր զերեսս իբր անարժան հայելոյ յայնպիսի մեծ միապետ. Յոր-

Աստա-
չէին հան-
փեղուածս
ե-ր ընդ
Աղտ-
ձեռաց-
ոց ։

ժամ՝ մերձեցաւ նա, Քօրթէս էջ յերիվարէն. յառաջնելով դէպ նմա բազմամեծար իմն եղանակաւ. 'Ի նմին ժամանակի Մոնթեծումա եդ զոտն 'ի գետնի. ուր ոմանք 'ի Հնդկաց սփռեալ էին զստորակալխաս. և յեցեալ 'ի բազուկս երկուց իւրոց անձկագոյն ազգականաց՝ յառաջ խաղաց յամր և վեհափառ քայլիւ 'ի կողմն Քօրթէսի. Նա յանդիման եղև նմա խոնարհական գծմամբ ը̄ սարասի Եւրոպացւոց. Նա փոխատրեաց զողջոյնն ըստ սովորութեան երկրին իւրոյ, հպելով ձեռամբ միով յերկիր, և ապա համբուրելով զայն. Այս արարողութի սովորական յայտարարութիւն յարգութեան վայրագունից առ վերնագոյնս՝ երևեցաւ այնպէս օտար իմն զիջումն յամբարտաւան միապետի միում, որ հազիւ արժանի համարէր ակնարկել յայլ մարդիկ իբր նմանատեսակ ընդ իւր. մինչզի բովանդակ հպատակք իւր հաւատային աւելի քան զմարդկեղէն արարածս զնա, որոց առաջի ցածուցանէր նա զանձն այնպիսի օրինակաւ. Իսկ Սպանիացիք մինչ անցանէին ընդ խռնեալ ժողովուրդն, լսէին յաճախակի և բազում ախորժմամբ կոչել Թէուլէս. որ նշանակէ ա̄ծութի. Ոչինչ նշանաւոր դիպեցաւ յայսմ առաջին հանդիպման. Մոնթեծումա էած զՔօրթէս յօթեվանն, զոր տուեալ էր պատրաստել վ̄ նր. և նոյնհետայն բարևաւ մնա ասաց նմա քաղաքավարութ̄ իմն, որ չէր անվայելուչ իմիք արքունեաց առաւել զարգելոյ.‖ Դուք այժմ ասէ կայք ը̄ եղբարց ձերոց 'ի յատուկ տան ձերում. հանգերուք յաշխատանաց ձերոց. և լերուք երջանիկք, մինչև դարձայց ես.‖ Տեղին սահմանեալ Սպանիացւոց վ̄ բնակութ̄ իւրեանց եղև տուն մի շինեալ 'ի հօրէն Մոնթեծումայի. Այս տուն պատեալ էր շուրջանակի վիմաշէն պարսպաւ հանդերձ աշտարակօք յորոշեալ ինչ հեռաւորութիւ. որք ծառայէին վ̄ պաշտպանութ̄ և վն զարդու. և անշքապետք և սրահք էին այնպէս ընդարձակք, մինչ զի անդէն զետեղեցան Սպանիացիք և Հնդիկք գաշնաւորք նց. Առաջին մտածութիւն Կորթիսի եղև զգուշանալ վն ապահովութեան իւրոյ, կառուցանելով զթնդանօթսն այնպէս, զի տիրեսցեն բովանդակ ճանապարհացն, որք ածէին յայն կողմն, կարգադրելով ՚ի պատշաճաւոր տեղիս զգունդս պահպանութեան և զպահս կարգաւ պահելոյ զնոյն կրթութիւն որպ եթէ էին յանդիման բանակի իմիք թշնամեաց։

Մոնթէծումա դարձաւ ՚ի երեկս առնել այց հիւրոց իւրոց նովին շքով, ոյք յառաջին հանդիպման. և երբեք ոչ միայն Կորթիսի, այլև պաշտօնատարաց իւրոց և մինչև սոսկականաց ևս զընծայս այնպէս մեծագինս, մինչև հաւատել զառատականութիւն միապետին համեմատիլ ընչաւէտութեան թագաւորութեան իւրոյ. Օրնի կալեալ եղև մեծ իմն խօսակցութիւն. յորում հասու եղև Կորթէս, թէ զինչ էր կարծիք Մոնթէծումայ վերահայեցմամբ Սպանիացւոց. Ըստ նմա լինել աւանդութիւն մի հաստատուն ՚ի մէջ Մեքսիքացւոց, թէ նախնիք նց եկեալ էին սկզբնաբար ՚ի հեռաւոր իմն կողմանէ, և տիրապետեալ գաւառաց ենթադրելոց տէրութեան իւրում. և թէ իբրև կայունացան անդէն, զօրագլուխն, որ էած զայն բազմամարդութիւն, դարձաւ անդրէն յերկիր իւր, խոստանալով, թէ յապագայ ինչ ժամանակ սերունդք իւր կարէին այց առնել նց. առնոյին զիրաւանս կառավարութեան, նորոգելով զսահմանադրութիւնս և զօրէնս նր. և թէ յայնմանէ, զոր ինքն լուեալ էր և տեսեալ ՚ի Կորթիսէ, և ՚ի հետևողաց իւրոց, յաղթահարեալ էր, զի նոքա էին ճշգրտիւ անձինքն, որոց աւանդութիւնք և մարգարէութիւնք տրամադրէին զնս սպասել. և թէ ՚ի հետևութենէ յայսմանէ ընկալեալ էր զնս ոչ իբր օտարս, այլ իբր արենակիցս և տոհմակիցս. և

Պատա-ճառք կր շուրջ [illegible]

աղաչէր զն՟ս համարիլ զանձինս իբր տեարս յերկրաստանս իւր . որովհետև նա ինքն և հպատակք իւր պատրաստ էին ենթարկիլ կամաց նց՟, նաև կանխել առ փափագս նց՟ . Քորթէս ևս ծանոյց նմա զարժանաւորութ՟ի և զկարողութ՟ի արքային իւրոյ , ասելով ցնա , թէ գլխաւորութ՟ի նր՟ յառաքելն զնա 'ի Մեքսիքօ լեալ էր վն՟ հաստատելոյ կատարեալ իմն աւագութ՟ե զդաշնաւորութ՟ի երկուց թագաւորութ՟եց . բայց էած զգրոյց իւր այնպէս , որպէս թէ միայն էր ընդ. գաղափարին , զոր Մոնթեծումա կերպաւորեալ էր ըղծագմանն; Սպանիացւոց . 'Ի հետևեալ առաւօտուն Քորթէս և ոմանք 'ի գլխաւոր պաշտօնատարաց իւրոց ընկալեալ եղեն առ հրապարական ունկնդրութ՟ի կայսերն . Երիս յաջորդական աւուրսն ծախեցին 'ի տեսանել զքաղաքն . որ երևեցաւ նց՟ այնչափ վերնագոյն 'ի չափակցութ՟ե շինուածոց և 'ի թիւ բնակչացն քան զայլ զինչևիցէ տեսեալս 'ի Սպանիացւոց յԱմերիկա , մինչ զի թէպէտ և այնմ սակաւ նման կերտուածոյ իւիք քաղաքի Եւրոպիոյ , լցոյց զն՟ս ապշութ՟ե և զարմացմամբ :

Մեքսիքօ՝ Թենուքթիթլան՝ որ՟ էր վաղնջուց կոչեցեալ յազգայնոցն՝ կայացեալ է յընդարձակ սափարակի միում շրջապատելոյ յայնպիսի բարձր լերանց , մինչ զի թէպէտ և 'ի ներքս այրեցած գօտւոյն , կլիմայն իւր է բարեխառն և առողջ . Բովանդակ խոնաւութ՟ին , որ իջանէ 'ի բարձանց , ժողովի 'ի զանազան լճս յորոց երկու ընդարձակագոյնքն իբր իննսուն մղոն շրջապատութ՟բ հաղորդին ընդ միմեանս . Մին ունի ջուր քաղցր և միւսն աղտաղտին . Յափունս վերջնոյն և 'ի մ՟ջ ոմանց յընթերակայ կղզեաց շինե՟լ եղև մայրաքաղաքն Մեքսիքեան կայսերութ՟ե . Մատչումն առ նոյն էր ընդ ճանապարհ մայթից , կամ Ը՟ ուղիս կերպաւորեալս 'իքարանց և 'ի հողոյ , և լայնս շուրջ երեսուն ոտնաչափ. Եւ այնզի ջուրք լճին յանձրեւային եղանակս զեղանէին յանդաստանսն, այս մայթք էին երեւելաբար երկայնաձիգք. Թաքուպայն է արեւմուտս տարածանիւր մղոն մի եւ կէս. Թէծէուքօին ընդ արեւմտեան երիս մղոնս. Քուցյաքանուն 'ի Հարաւակողմն վեց մղոնս. Ընդ արեւելս ոչ էր սալայատակեալ. եւ մարթէր մատչել 'ի քաղաքն միայն 'ի քանօէս. Յիւրաքանչիւրում յայսց սալայատակաց էին մէջ ընդ մէջ ճեղքուածք. ընդ որս եղանէին ջուրք. եւ 'ի վ՟ր այսոցիկ եդեալ էին գերանք 'ի փայտէ. որք ծածկեալք հողով առնէին զճանապարհն ընդ ամ՟ ուրեք միակերպ. Որքան եղականք էին շրջակայք քաղաքին, այնքան ներքին կերտուած իւր արժանի էր նկատման. Ոչ միայն տաճարք աստուծոց ն՟ց, այլ եւ ապարանք արքային եւ մեծահամբաւ անձանց էին այնպիսի մեծութ՟, մինչզի առ այլ շինուածովք նշմարեցելովք յԱմերիկա կարէին կոչել մեծագործք. Բնակութք խառնիճաղանջին էին մրքուզք. եւ նմանէին հիւղից այլոց Հնդկաց. Սակայն բոլորեքեան էին եդեալք կանոնաւորաբար առ ափամբ ջրմղացն, որք անցանէին ընդ քաղաքն 'ի վիճակս ինչ իւր. կամ յերկոցունց կողմանց պողոտայիցն յայլ Թաղսն. 'Ի զանազան տեղիս տեսանէին մեծամեծ հրապարակք. որոց մին սահմանեալ վն՟ մեծի տօնավաճառի ասի լեալ այնպէս ընդարձակ, մինչեւ քառասուն կամ յիսուն հազար անձանց կալ անդէն առ 'ի տուրեւառիկ լինել. Յայսմ քաղաքի՝ 'ի սեպհական պարծանս Նորոյ աշխարհի եւ յաղնըհագոյն յիշատակարան ճարտարութե՟ եւ արհեստի մարդոյ, յորժամ ոչ ճանաչէր զպիտառութ՟ի երկաթոյ, եւ ոչ էր սատարեալ յօգնութ՟ ընտանի իրեք կենդանւոյ՝ ըստ հաշուի Սպանիացւոց առաւել չափաւոր եղելոցն 'ի թըւելն՝ պարունակէին վաթսուն հազար բնակիչք։

Վտան-
գաւոր
յաջո-
ղութիւնք:

Այլ որչափ և նորութիւն այսոց առարկայից կարէր բերել զուրախութիւն կամ զհիացումն Սպանիացւոց, կրէին նոքա զմեծագոյն անձկութիւն նկատմամբ կայսերութեան իւրեանց. Ուղընթացութիւն իմն պարագայից ոչինչ նուազ անակնկալից, քան թէ նպաստաւորաց առաջարկութեանց իւրեանց պատրաստեալ էր նոցա զհայթհայթանս ընդդիմանելոյ 'ի սիրտ հզօրեղ իրիք թագաւորութեան. և էին 'ի վախճանի իջեւանեալք 'ի մայրաքաղաքի իւրում առանց պատահելոյ 'ի կողմանէ Մոնթեզումայի դոյզն ինչ յայտնի ընդդիմակայութեան. Բայց Թլասքալացիք իսկապէս տարհամոզեալ էին զնա 'ի դնելոյ զայնքան վստահութիւն 'ի միապետն յայն, և 'ի մտանելոյ 'ի քաղաք մի այնպիսի մասնաւոր կայսերութեան, որպիսի էր Մէքսիքո. ուր միապետն կարէր ըմբռնել զնա իբր 'ի ցանցի. յորմէ անկարելի լինէր ելանել. Հաւաստեաւ ծանուցին Կօրթիսի, թէ քուրմք Մէքսիքացիք յանուն աստուծոյ իւրեանց խորհուրդ տուեալ էին արքային իւրեանց ընդունել զՍպանիացիս 'ի մայրաքաղաքն. ուստի միանգամայն բնաջինջ արասցէ զնա առանց ինչ վտանգի իւրոյ. Այդ տեսին և կարի իսկ յայտնի, թէ կասկած դաշնաւորաց իւրեանց ունէր զհիմն իւր, և թէ յորժամ խորտակեսցին կամուրջքն կայացեալք յորինչ տարակացուցելս 'ի մայթսն, կամ քանդեսցին յիմիք մասին նոյն մայթք.
1519 փախուստ նոցա լինէր անհնարին. և ինքեանք միայն փակեալք 'ի կեդրոն քաղաքի իրիք ճշնամեաց 'ի մէջ բազմութեան միոյ բաւականի առ 'ի ճմլելոյ զնա, և հեռի յամենայն սատարութենէ դաշնաւորաց իւրեանց. Մոնթեզումա ընկալեալ էր զնա, զճշմարիտ ասելով՝ երևելագոյն մեծարանօք. Բայց նոքա արդեօք պարտ էին նկատել զայսպիսի իմն ներգործութիւն իբր 'ի սրտէ, եթէ իբր կեղծեալ. Իսկ թէև լինէր անկեղծ, պարտ էին արդեօք յենուլ 'ի յարատևութիւն իւր. Կասկած

կայր ողջուն նոցա 'ի կամաց միապետի միոյ. որոյ 'ի բարեկամութիւն ոչ ունէին իրաւունս վստահանալոյ. և ակնարկութիւն իմն ելեալ 'ի քմաց իւրոց, և խօսք ինչ յօդաւորեալ 'ի նմանէ 'ի վառման մաղձի՝ կարէին դատակնքել աննահանջելի զվիճակէ նոցա :

Այսպիսի խորհրդածութիւնք այնպէս դիւրինք առ Տապան-'ի եղանիլ, մինչզի եկեալ էին 'ի միտս նս և սու—ն ե սարնագոյն զօրականի, ոչ վրիպեցան յարթուն ոնյն—ն լըջմտութէ սպարապետին. Յառաջ քան զմեկնիլն Քօրթէ 'ի Քհօլուլայէ ազդ եղեալ էր Քորթիսի 'ի Վիլ- ոն : լարիքայէ, թէ Քուալփոփոքա մի 'ի զօրավարաց Մեքսիկացւոց 'ի սահմանս գումարեալ զզօրս ինչ առ 'ի յարձակիլ 'ի վերայ ոմանց 'ի ժողովրդոցն, զորս Սպանիացիք գրգռեալ էին 'ի թօթափել զլուծ Մեքսիքոյի, Էսքալանթ անկեալ էր 'ի չու. մասամբ իւիք ամրապահաց իւրոց առ'ի պաշտպանել զդաշնաւորս իւր. և թէ 'ի միում մաքառման եղելոյ զկնի, թէպէտև յաղթութիւն էր Սպանիացւոց, Էսքալանթ և եօթն յիւրոցն ընկալեալ էին զմահացու վէրս. և թէ երիվարք իւր սպանեալ էին. և Սպանիացի մի կալեալ կենդանի՝ խողխողեալ էր 'ի թշնամեացն. և թէ զլուխ այսր տարաբաղդ կալանաւորի յետ տարեալ լինելոյ 'ի նշան յաղթութեան 'ի պէսպէս քաղաքս առ 'ի յաղթահարել զմիտս ազգացն, թէ 'ի վերայ եկեալ թշնամիք ոչ էին անմահք, յղեալ լինէր 'ի Մեքսիքօ. Քորթէս թէպէտև վշտացեալ յայսմ լրոյ, որ էր նշանակ իմն ներհակ ձկտմանցն Մոնթեծումայի, ձգէր յառաջ զչուն. Բայց իսկ և իսկ ընդ մտանելն 'ի Մեքսիքօ, զգաց, թէ չափազանցութեամբ վստահութեան յեցեալ էր 'ի քաջութիւն և 'ի վարժութիւն վաշտից իւրոց. և դժուարութիւն ոչ ունելոյ զայլ առաջնորդ յանծանօթ երկրի միում, բայց եթէ զդուն ինչ տեղեկութիւն, զոր ընդունէր յազգէն, ընդ որում ոչ կարէր կատարելապէս հաղորդել, յառաջ խաղացեալ էր և եդեալ 'ի կայսրութեն̃ միում. ոյր դժուարին էր պահպանել. և ուստի վտանգաւոր էր խոյս տալն. քանզի նկրտիլն առ այն լինէր կործանումն իւր, կամ գէթ խայտառակութի̃ իւր. Ապա բարի ելք ձեռնարկութեն̃ իւրոյ կախեալ կայր 'ի ստածելոյ զբարձր իդէայն, զոր ժողովուրդք նորոյ աշխարհին յղացեալ էին զանընդդիմակայելի կարողութե̃ զինուց իւրոց. Առ առաջին նշան երկչոտութե̃ 'ի կողմանէ իւրմէ դադարէր յարգանք նց̃. և Մոնթեծումա, որ էր յայնժամ սանձահարեալ միայն յահէ, անկանէր 'ի վ̃ր նց̃ բովանդակ զօրութբ̃ կայսրութե̃ իւրոյ. 'ի միտ առնոյր ևս 'ի նմին ժամանակի, թէ հաստատութի̃ սեպհական արքային իւրոյ ստանալի էր միայն շարիւ իմ̃ն յաղթութեց̃. և թէ ոչինչ այլ, բայց եթէ արդիւնք սրտաքջոյ կարգի յաջողութեց̃ կարէր ջատագովել զգնացս իւր 'ի բասրանաց անկանոնաւոր ելոյ. Վ̃ն այս ամ̃ մտածութեց̃ կարևոր էր նմա պահպանելն 'ի կայի, և զերծանելն 'ի դժուարութեցն, յորս պատահեալ էր զնա յանդուգն իմ̃ն քայլ, վտանգելով զայլ իմ̃ն ևս առաւել գահավիժական. Խիթալի էր կայսրութին. բայց նա պահեաց զնոյն հաստատութի̃ ոգւոյ. և կշռեալ զիրսն լի ուշադրութի̃, որոշեաց 'ի վերջոյ առ գաղափար իմ̃ն ոչինչ նուազ եղական, քան թէ յանդուգն. Եդ 'ի մտի ըմբռնել զՄոնթեծումա 'ի պալատի իւրում և 'ի մէջ արքունեաց իւրոց, և ածել զնա կալանաւոր յիջևանս Սպանիացւոց. Նկատեալ զաւելորդապաշտական յարգանս Մեքսիքացւոց վ̃ն միապետի իւրեանց, և զկոյր ենթարկութի̃ նց̃ կամաց նորա, հաւատայր նա, թէ ունելով ըդ̃ Մոնթեծումա յիշխանութե̃ իւրում, ստանայր զգերագոյն մատակարարութի̃ իրակութեց նց̃. կամ գոնէ այնպիսի սրբազան գրաւով 'ի ձեռին ոչ

1519
Յաջո-
ղէ խա-
բանաւ
ըմբռ-
նել Մոնթէ-
ծումայ։

երկմտէր լինել աներկեւան յինչեւիցէ բռնութէ: Անընդմիջաբար արար զառաջադրութիւն այսորիկ պաշտօնատարաց իւրոց. Երկչոտքն զզարեցան առ այսչափ յանդուգն որոշումն. և ընդդէմ դարձան. Այլ ևս խելամուտքն և համարձակքն տեսանելով, թէ այս էր միակ փրծումն փրկութեն գովեցին զայն ջերմութ. և ձգեցին զընկերս իւրեանց այնպէս յաջողակի 'ի կարծիս իւրեանց, մինչզի 'ի միում վայրկենի միաբանեալ եղև ըղփորձ առնուլն զայնմանէ. Ի սովորական ժամու այցելութ Մօնթէծումայի՝ Կօրթէս գնաց 'ի պալատն ընկերակցեալ յԱլվերատայ, Սանտօվալայ, Լուկօէ, Վելասքուէզայ Լէօնեան, և Տավիլայ հինգ զօրավարաց յառաջնոց, և հանդերձ նոյնչափ զօրականօք յառաւել հաւատարմացն. Երեսուն անձինք ընտիրք գային նր զկնի առանց ինչ կարգի յիմիք հեռաւորութե, որպ եթէ ոչ ունէին զայլ առարկայ, բայց եթէ զհետաքրքրութին. փոքրիկ խումբք պահապանաց դարանեալ էին ընդ ամ փողոցսն, որք ածէին յիջեվանացն Սպանիացւոց յարքունիսն. և այլ վաշտք իւր 'ի միասին ընդ Թլասքալացւոց դաշնաւորաց կային ընդ զինուք պատրաստականք առ 'ի ընդոստնուլ 'ի դուրս յառաջին աղաղակին. Կօրթէս և հետևողք իւր ընկալեալ եղեն անկասկած, Մէսսիքայիք ամփոփելով յինքեանս վծ յարդանացն. Նա յանդիման եղև միապետին որոտմամբ իմն բարբառոյ տարազան յայնմանէ, զոր 'ի կիր արկեալ էր յայլ խօսակցութիս, կշտամբելով զնա դառնապէս իբր սկզբնապատճառ բռնական յարձակմանն արարելոյ Սպանիացւոց 'ի միջէ 'ի զօրագլխաց իւրոց. և խնդրեաց զհրապարական իմն հատուցումն կորստեանն, զոր կրեալ էր նա վն մահուան ոմանց յընկերաց իւրոց. որպ և վն թըշնամանացն բերելոց առ մեծ արքայն, որոց էին ծառայք. Մօնթէծումա ընկճեալ յայսմ անա-

Իտա-
նոյն
Նու 'է
Գործ
ջնելոյ
պայն:

կնկալ ամբաստանութե՟, և փոխելով զգոյնն կամ վ՟ս խղճի յանցանաց իւրոց, կամ՝ վ՟ս անարգանացն, որով վարեալ էր, ջատագովեաց զանմեղութի՟ իւր մեծաւ դիմագրաւութ՟. և առ 'ի տալ այսմ զվկայութի՟ իմն՝ հրամայեաց վաղվաղակի, զի ածեալ լինիցի առ նա Կուալփոփոթա ընդ մեղսակցաց իւրոց. Կորթէս խորհրդածեալ իմն հաճութի՟ կրկնեաց, թէ այսպիսի ակնածելի իմն վկայութի՟ բառնայր զամ՟ տարակոյս 'ի մտաց իւրոց, սակայն պիտոյ էր և իր ինչ առ 'ի հաճել զհետևողս իւր. զի ոչ հաւատային երբէք չունել Մոնթեծումայի զթշնամական ձկտմունս ընդդէմ նց, եթէ 'ի ցոյց մտերմութե՟ իւրոյ և յարմանն ոչ թողոյր զարքունիս իւր, և անցանէր հաստատել զաթոռ իւր յօթևանս Սպանիացւոց, ուր ծառայեալ և պատուեալ լինէր, ոպ վայելէր այնպիսի մեծի միապետի. Առաջին ազդումն այսպիսի օտարոտի իմն առաջադրութե՟ զրկեաց զՄոնթեծումա 'ի խօսից, և գրեթէ 'ի շարժմանէ. Ի վախճանի սրտմտութի՟ն դարձոյց նմա զխօսսն. և ամբարտաւանօրէն ետ պատասխանի. „ թէ նահապետք իւրոյ աստիճանի ոչ „ էին եղեալք վ՟ս բանտարգելութե՟. և թէ նա „ ինքն լինէր այնքան անարգ, մինչև զիջանել „ այնմ, հպատակք իւր ոչ թողացուցանէին զայս„ պիսի իմն նախատինս արքային իւրեանց „. Կորթէս յառաջքան զի գործ դնել զռնութի՟ հնարեցաւ քաղցրացուցանել զնա և զարհուրեցուցանել փոխ ընդ փոխ. Հակառակութի՟ ջերմացաւ. և գոլով շարունակեալ աւելի քան ըզժամս երիս, Վելասքուէզ Լէօնեան յոխորտ երիտասարդ՝ աստ բարձր բարբառով. և ընդէր է կորուսանել աւելի ժամանակ 'ի զուր. կամ կալցուք զնա վաղվաղակի. կամ վարսեսցուք զսիրտ նր. Սպառնական որոտումն և ամեհի շարժմունքն որովք ընկերակցեցաւ եղեն խօսքս այսքիկ հատուցին զՄօնթէծումա. Սպանիացիք՝ որչափ ինքն ճանաչէր՝ արդէն յառաջ խաղացեալ էին այնչափ, մինչև ոչ թողուլ նմա յոյս կամելոյ նր̃ յետս նահանջել. Վտանգն նր̃ էր մերձակայ և անխորշելի հարկն. ուստի բարձի թողի առնելով զանձն ճակատագրութեան իւրում յարեցաւ 'ի խնդիր նոցա:

Մօնթէծումա ածեալ է յօթեւանս Սպանիացւոց:

Նա ինքն ետ կոչել զպաշտօնատարս իւր. և հաղորդեաց նր̃ զորոշումն իւր. Թէպէտ և շուարեալք և ցաւագնեալք ոչ իշխեցին ընդդէմ դառնալ կամաց տն̃ իւրեանց. Բայց ածին զնա լռիկ հանդիսիւ ոռոգեալք ամենեքեան յարտասուաց 'ի բնակարանս Սպանիացւոց. Յորժամ լուր եղև Ազգ թէ օտարքն տանէին 'ի բաց զկայսրն, բուռնդակ ժողովուրդն ընդոստեաւ արտաքս յափշտակութբ̃ կատաղութե̃ սպառնալով քնջել անընդմիջաբար զՍպանիացիս յարդարադատ պատիժ ժպրհութե̃ նր̃. Բայց իսկոյն իբրև երևեցաւ Մօնթէծումա առերևոյթ իմ̃ ուրախութբ̃ 'ի դէմս, և շարժելով զձեռն դադարեցաւ աղմուկն. և լսելով ասել նր̃, թէ էր ընտրութիւն իւր երթալ նստիլ զժամանակ ինչ 'ի մէջ նոր բարեկամաց իւրոց, բաղձութիւն սովոր յարգելոյ զաւագութե̃ ինքնակալին իւրոյ ցրուեցաւ լռութբ̃:

Նոյնպէս հզօր ումն արքայ ըմբռնեալ եղև 'ի մէջ մայրաքաղաքին իւրոյ 'ի սակաւուց օտարաց 'ի լրացեալ տուընջեան, և ածե̃լ կալանաւոր առանց ինչ հեղման արեան. Ոչ իմիք պատմագրութե̃ ընթերցեալ է երբէք իր համեմատ այսպիսի դիպուածոյ, եթէ հայելով 'ի յանդգնութե̃ գործոյն, եթէ յերջանկութե̃ կատարմանն. և եթէ ոմ̃ պարագայք այսր արտաքոյ կարգի գործոյ ոչ լինէին հաւատարմացուցեալ յառաւել անցրելի վկայութեանց, երևէր այնպէս սակաւ հաւանական, մինչզի ոչ համարիւր արժանի ունել տեղի յիմիք բանաստեղծութե̃:

Մօն-

Ընկալէ_ ատէ_ բնայն Ճեծալր նօթ: Սծննթէծումն ընկալեալ եղև յօթևանս Սպանիացւոց ա՟մ արարողութ՟բ և ա՟մ ակնածութ՟բ, զորս խոստացեալ էր Բօրթէս. Նա յուղարկաւորեալ էր 'ի սեփական ընտանեաց իւրոց, և ծառայեալ իւր սովորական շքով. Նախապետական պաշտօնատարք իւր ունէին զազատ իմն մուտ 'ի սենեակս ն՟ր, և առ նա. և նոյն ինքն շարունակէր զբովանդակ գործս կառավարութե իւրոյ այնպէս ոչ եթէ վայելէր յամբողջ ազատութն իւրում. սակայն Սպանիացիք պահէին զնա այնու զգուշաւոր արթնութ՟բ բնականաւ այնմ, որ պահպանէ զծանրակշիռ իմն աւանդ, գուն գործելով միանգամայն ամոքել զնա, և մեղմել ըզցաւագին կայաւորութի իւր ա՟մ արտաքին ցուցմամբք ակնածութն և սիրոյ:

(14) ‖ Բեռնարդոս Տիազ Քասթիլեան տայ մեզ զծանօթութի ինչ զաշխատանաց և զխստութենն, զորս նոքա կրեցին 'ի կատարելն զայս և զայլ պարտականութիս իւրեանց. Յիննն ամիսն, յորս մնացին 'ի Մեքսիքօ՝ իւրաքանչիւր այր առանց ինչ զանազանութն ընդ զօրագլուխս և ընդ զօրականս ննջեաց միշտ աւընթեր ունելով զզէնս հանդերձ աղեղնագործ վերտիւ իւրով և անթանոցկաւ. Ընկողմանէին 'ի վ՟ր սփրդաց կ՟մ յարդից սփռելոց 'ի վերայ յատակին, և իւրաքանչիւրոք պարաւանդեալ էր լինիլ պատրաստական, ոչ եթէ լե՟լ էր 'ի պահպանութն. ‖ Ես (յարէ զկնի) եղև ինձ այնպէս ունակական, մինչզի նաև այժմ 'ի ծերութն իմում ննջեմ միշտ ըզգեստաւորեալ, և ոչ երբէք յանկողնի. Յորժամ երթամ այց առնել կալուածոյ իմում, համարիմ պատշաճական իմն տանել ընդ իս զանկողին մի հանդերձ այլ կարասեաւ իմով. բայց ոչ երբէք մտանեմ անդր. և ըստ սովորութն իմում ընկողմանիմ զգեստաւորեալ. և յաճախակի ծեմեմ 'ի գիշերի բացօթեայ առ 'ի տեսանել զաստեղս.

ոչ սոոպ սովոր էի առնել 'ի ժամանակի զինուորական ծառայութեն իմոյ: ‖

Բայց բօլմալի ժամն նուաստութեն և չարչարանաց [illegible] ոչ է ընաւ կարի հեռի 'ի բանտարկեալ արքայից. [illegible] Կուալփոփոքայ որդի իւր և հինգ 'ի գլխաւոր զօրն պաշտօնատարաց, որք ծառայէին ը նովաւ, անուրծեալ եղեն 'ի շղթայս 'ի մայրաքաղաքն յաղագս դատոյ. Հրամանացն եղելոց 'ի Մոնթեծումայէ. Կայսրն մատնեաց զնս 'ի ձեռս Կօրթիսի, ոպ զի կարող լինիցի իմանալ զխոկութի յանցանաց նց, և որոշել զպատուհաս նց. Արարեալ եղև կերպական քննութի յայնմ ատենէ, որ առ Սպանիացիս կոչի պատերազմական. և թէպէտ ոչ էին արարեալ զայլ պաշտօն, բայց եթէ որ ինչ վայել է հաւատարիմ հպատակաց և արանց քաջաց 'ի հնազանդիլն պատուիրանաց օրինաւոր արքային իւրեանց, և 'ի վանելն զյափշտակօղս երկրի իւրեանց, սակայն դատապարտեալ եղեն յայրումն կենդանւոյն. Հազի՛ւ երբէք կատարումն այսպիսի դժնդակ դատավճռոյ ընդ երկար ժամանակ 'ի կախ թողեալ է. Տարաբախտ սպանդքն տեսան 'ի քթթել ական ածեալ առ տանջանս. Դիզափայտն, յորս վր տարածեալ եղեն էր բաղկացեալ 'ի զինուց համբարելոց յարքունի շտեմարանն վր հրապարակին պաշտպանութեն. Ընդհամար իմն բազմութի Մեքսիքացւոց կայր տեսանել անբարբառ շուարմամբ զկրկին նախատինսն, որ արարեալ լինէր մեծվայելչութեն կայսրութեն իւրեանց, այս է զօրավար մի երևելի արկեալ 'ի բոցս իշխանութե օտարաց վս հնազանդելոյ բնիկ արքային իւրեանց. Եւ զէնքն պատրաստեալք 'ի նախատեսութե նախնեաց իւրեանց խորհրդով առ 'ի վրիժակել զայսպիսի յարձակմունս, կիզեալ և սպառեալ առաջի աչաց իւրեանց:

Բայց ոչ էին այսոքիկ առաւել սարսափելի անարգանքն, զորս կրելոց էին. Կօրթէս խելամտեալ, թէ Քուալփոփոքա ոչ էր յառաջածել 'ի մարտ ընդդէմ Էսքալանթեայ առանց հրամանաց տն իւրոյ, ոչ էր յագեալ թափելով ըզքինախնդրութիւն 'ի վն գործւոյն 'ի կիր արկելոյ 'ի կատարման այնր եղեռնութեն, մինչ ճըշմարիտ սկզբնապատճառն իւր կայր անպատիժ. Սակաւ ինչ յառաջքան զածիլն Քուալփոփոքայ 'ի տանջանարանն, Քորթէս եմուտ յառանձին սենեակն Մոնթէծումայի հանդերձ ոմամբք 'ի զօրագլխաց իւրոց, և զօրականաւ միով, որ բերէր զերկաթսն. և մատչելով առ միապետն տխուր տեսլեամբ ասաց ցնա՝ թէ յանցաւորքն, որք կային ներգործութեն առ 'ի կրել զպատիժն, որում արժանի էին, ամբաստանելով զնա իբր պատճառ թշնամանացն գործեցելոց, կարևոր էր նմա յայնց զօրաւոր նշանացն մաքրել զինքն անձնական իմն մահացուցմամբ. Յայնժամ հրամայեաց հանդարտ և բացարձակ բարբառով դնել զՄոնթէծումայ 'ի կոճեղս, և առանց տալոյ նմա ժամանակ պատասխանելոյ, դարձոյց նմա զթիկունս գռեհկաբար. և եթող զնա յայնպիսի վիճակի. Նոյնհետայն կատարեցան հրամանքն. Անմխիթար ինքնակալն, որ ցայնժամ կեցեալ էր այնու մտօք, իբր թէ անձն իւր էր սրբազան և անբռնաբարելի, և նկատելով զարհամարհանսն իբր նախերգանք մերձակայ մահուան իւրոյ զեղաւ 'ի դառնութիս, և յորդեաց զհեղեղս արտասուաց. Արքունականքն իւր համրացեալք 'ի սոսկմանէն, անկան առ ոտս նր, թանալով զնն ողբովք, և ունելով զկոճեղսն ձեռամբք, հնարեցան նուազեցուցանել զսեղմումն. և ոչ դադարեցաւ մորմոքումն նց, մինչև Քորթէս ոչ դարձաւ 'ի կատարմանէն զուարթ դիմօք, և հրամայեաց բառնալ 'ի նմանէ զերկաթսն. Մոնթէծումայ էանց ողջոյն 'ի միում վայրկենի 'ի վհատութէն, յորում անկեալ էր առ չափազանցութի իմն անվայելուչ ուրախութիւն. և յուսահատութիւն իւր ետ տեղի զեղման երախտագիտութեան վ՟ն ազատողաց իւրոց:

Հանգամանք գնացիցն ՙՔօրթէսի:

Այսոսիկ գործս, որպիսիք ներկայացուցեալ են ՙի պատմագրաց Սպանիացւոց, ոչ փայլեն որակութիւնքն. որք զարդարեն զայլ մասունս գնացիցն ՙՔօրթիսի. Յափշտակել զդատաւորական իշխանութիւն իմն, որ չէր անկ արտաքնոյ միում, որ զայլ անուն ոչ ունէր, բայց եթէ պատգամաւորի արքայի ուրուք օտարի, և ընդ այսպիսի իմն պատրուակաւ դատապարտել առ պատիժ մահու զարսն, որոց գնացքն արժանի էին բացարձակ մեծարանաց երևի ներգործութիւն իմն խժական անողորմութեան. Գտանելն ՙի շղթայս զինքնակալն մեծի իրիք թագաւորութեան և զկնի այնպիսի խայտառակ վարմանն արձակել զնա վաղվաղակի է կամիլ ցուցանել զիշխանութիւն իմն անհանճար և անկանոն. Սիպասանք պնդեն թէ ոչ կարէ նշանակիլ պատճառն ոչ առաջին և ոչ երկրորդ ներգործութեանն, բայց եթէ ՙՔօրթէս յիմարեալ վ՟ն բարեյաջողութեանն և յանձնապաստան լինելով վ՟ն գերակայութեանն, զոր ունէր ՙի վ՟ր հոգւոց Մեքսիկացւոց, ոչ հաւատայր լինիլ ինչ ՙի ն՟ն կարի յանդգնական վ՟ն ն՟ր առ ՙի ձեռնամխիլ կամ կարի վտանգաւոր առ ՙի կատարել. Այսպիսի իմն ընթացք որչափ և դիմամարտիցի արդարութեան և մարդկութեան ոչ եղև բայց եթէ գործ այնր արուեստական քաղաքականութեան, որ կանոնաւորէր զբովանդակ գործողութիւնս ՙՔօրթիսի. Մեքսիկացիք ՙի մտի եդեալ էին լինիլ Սպանիացւոց կարգ իմն էակաց վերնագունից քան զմարդիկ. Ն՟ր կարի կարևոր տածելն զայս պատրանս և պահելն զյարգանսն, զոր ազդէր այն. կամէր ՙՔօրթէս հաւատացուցանել թէ հեղուլն զարիւն Սպանիացւոյ միոյ էր առաւել մեծեղեռն անօրէնութիւն քան զամ՟ չարագործութիւնս. և ոչ ներէր լաւագոյն խորհեալ առ 'ի հաստատել զայս կարծիս բայց եթէ դատապարտել զառաջին Մէսիքացիսն, որք իշխեալ էին գործել զայն, առ անողորմ իմն մահ. և պարաւանդելն զնոյն ինքն ինքնակալ նն առ 'ի ենթարկել նուաստացուցիչ իմն մահացուցման ոպ 'ի քաւութի հաղորդ լինելոյ յանցանաց նն :

(15) Քորթէս յերկրորդ նամակագրութն իւրում առ կայսրն ոչ յառաջ ածէ զշարժիչսն, որք խթնեցին զնա 'ի դատապարտել զՔուալփօփօքա առ բոցսն. և 'ի դնել զՄօնթէծումայ յերկաթս. Բեռնարդոս Տիաց ոչ ինչ ասէ նկատմամբ պատճառացն առաջնոյն. և պատճառն միայն, զոր նա նշանակէ վն երկրորդին եղև այն, զի մի կարիցէ գտանել խոչընդոտն 'ի կատարման դատավճռոյն արտասանելոյ ընդդէմ Քուալփօփօքայ. Այլ քանզի Մօնթէծումայ էր կալանաւոր իւր և բացարձակաբար յիշխանութն իւրում, նախատինքն արարեալ այնմ միապետի ոչ կարէր ունել զայլ արդիւնս, բայց եթէ գրգռել զնա առանց հարկաւորութն. Կօմարայ ենթադրէ թէ Քորթէս ոչ ունէր յայնժամ զայլ վախճան, բայց եթէ զբաղեցուցանել զՄօնթէծումայ յաղէտս իւր. ոպ զի ոչ յոյժ մտադիր լինիցի այնմ. որ անցանէր ընդ Քուալփօփօքայ. Հեռռերայ յարի 'ի սոյն կարծիս. Սակայն երևի գծուծ իմն հայթհայթանք առ 'ի տալ կրել անձին միում զանիրաւութի ինչ. ծանրացուցանել զնա այլով ևս մեծագունիւ. Տէսօլիսն պատկերակերպէ թէ Քորթէս ոչ ունէր զայլ դիտումն, բայց եթէ զարհուրեցուցանել զՄօնթէծումայ, ոպ զի մի դուն գործեսցէ փրկել զպատանդսն 'ի դատակնքոյ իւրեանց. բայց հոգին այնր միապետին էր այնպէս հեզ և այնպէս դիւրաւ թողացուցեալ զկալանաւորսն կամաց Քորթէսի, մինչզի սա սակաւ երկիւղ ունելոց էր 'ի կողմանէ նր. Յորժամ մեկնութիւն զոր ես հան-

ճարևճարեցի տալ 'ի վ՟ր ընթացից Քորթիսի յայտ դիտողութ՟ն ոչ լինիցի ընկալեալ, ստիպիմ ասել թէ այսպիսի ի՟մն գործ է առնել անխոհական և առնել խժական, զոր յիշատակիցէ վիպասանութիւն տիրապետութեանն Մեքսիկոյ, որ ոչ այլ ինչ է բայց եթէ անընդհատ ի՟մն շարք հարստահարութ՟ն ։ ‖

Խստութիւն, որով Քորթէս պատժեաց զեղկելի անձինսն, որք եղեն առաջինք յարկանել զբռնական ձեռն 'ի վ՟ր հետևողաց իւրոց, երևի թէ հետևաբար առնէր զնմ՟ն տպաւորութիւն որում փափաքէր նա. Յայսմանէ այնպէս զարհուրեցաւ Մոնթեզումայ մինչզի ոչ ևս իշխեաց փորձել ինչ ընդդէմ Սպանիացւոց. 'Ի մէջ վեց ամսոց, յորս Քորթէս մնաց 'ի Մեքսիքօ, Միապետն եկաց յօթևանս Սպանիացւոց ցուցանելով զբոլորական ի՟մն հաճութ՟ի և անդորրութ՟ի, ո՟պ եթէ նա դադարէր անդէն ոչ վ՟ն հարկի այլ 'ի սեփական ընտրութ՟է իւրմէ. Գործակալք իւր և պաշտօնատարք այց առնէին նմա ըստ սովորութ՟ե. առնոյր տեղեկութ՟ի վ՟ն ա՟մ իրակութ՟ց. ա՟մ հրամանք արձակեալ էին յանուն իւր. արտաքին տեսիլ կառավարութեանն երևէր նոյ՟ն. և ա՟մ նախկին կերպք իւր էին երկիւղածութ՟բ պահեալք, և վ՟ն այսորիկ ժողովուրդն զգայր այնպէս սակաւ զփոփոխութիւն, մինչզի հնազանդէր վճռոց միապետին իւրոյ նովին ենթարկութ՟բ որով յառաջ. Այսպիսի էր երկիւղն, զոր Մոնթեզումայ և հպատակք իւր ունէին 'ի Սպանիացւոց, և այնպիսի յարգութ՟բ, յորում ունէին զն՟ս, մինչզի ոչ ջանային երբեք ազատել զարքայն իւրեանց. Թէպէտ Քորթէս վստահանալով 'ի տէրութիւն, զոր ստացեալ էր 'ի վ՟ր մտաց ն՟ց, թոյլ տայր նմա երթալ յայցելութ՟ի մեհենաց իւրոց, և առնել արշաւանս յորս 'ի լճէ և անդր ընդ առաջնորդութ՟բ սակաւ զօրականաց Սպանիացւոց ։

Կարո-
ղութ՟ն
զօրաց
նոյ
Քոր-
թէս.
1520

F 3

Այսպէս մ՟տ բարերախտ յանդգնութեան Քօրթէսի 'ի կալանաւորելն զՄոնթէծուման Սպանիացիք ապահովացուցին անձանց իսկոյն զընդարձակագոյն իմն իշխանութի 'ի կայսերութեն Մեքսիքոյ. զոր ոչ կարացեալ էին ստանալ 'ի բազում ամս զօրութ՟բ զինուց. և վարեցին զբացարձակագոյն իմն հրաման յանուն այլոյ ուրուք որ չէր ն՟ց յաջողեալ յանուն իւրեանց. Արհեստն առաւել կիրթ ազգաց 'ի նուաճելն զխուժադուժ ժողովուրդս լեալ է գրեթէ նոյն յամ դարս. Նշանակն հաւատարմացուցանելոյ զօտարոտի իմն յափշտակութի ը՟ պատրուակաւ իշխանութեն բնիկ կանոնաւորչաց աշխարհի միոյ, զգօնութին 'ի գործ ածելոյ զմեծաւորութիւն և զկերպս վաղվաղ հաստատելոյ իւր գործիս առ 'ի մուծանել զնոր իմն տէրութի (որ հռչակի իբր նորութի իմն մասնաւոր քաղաքականութեն յառաջիկայ դարուս) են գիւտք վաղնջագոյն ժամանակի, քան զոր մարթ իցէ զմտաւ ածել. և էին 'ի գործ ածեալք յարևմուտս բազմօք յառաջքան զծանօթ լինելն յարևելս:

Կործա-
նումն
իշխանու-
թեն ՌՇԻ :

Քօրթէս 'ի կիր էարկ որչափ ձեռնհաս էր զկարողութիւն ստացեալ յինքենէ այսօրիւք միջնորդօք. Արձակեաց զոմանս 'ի Սպանիացւոց, զորս համարեցաւ ունել զպահանջեալսն մ՟տ այսպիսի յանձնարարութենց 'ի զանազան կողմանս կայսերութեն ընկերացեալս յերևելի անձանց, զորս Մոնթէծուման կամեցաւ տալ ն՟ց իբր առաջնորդս և իբր պաշտպանս. Այց արարին սոքա մեծագոյն մասին գաւառացն. քննեցին զգետինն և զբերս իւր. Գիտեցին մասնաւոր խնամով զնահանգսն, որք բերէին զոսկի կամ զարծաթ. Նկատեցին զտեղիս ինչ իբր յարմարեալս առ 'ի հիմնել անդէն զհանգրուանս. և ոչ զանց արարին զիմիք առ 'ի պատրաստել զմիտս ժողովրդոցն ենթարկել լծոյ Սպանիացւոց. Մինչև պատազեալ էին յայսոսիկ իրս Քորթէս յանուն և իշխանութիւն Մոնթեծումայի ընկէց յաստիճանէ զոմանս 'ի նախապետական պաշտօնատարաց կայսերութեն, որոց քանքարք և հոգիք անկախ զարթուցանէին զնախանձաւորութիւն իւր, կացուցանելով փոխանակ նոցա զանձինս նուաստ ընդունակս, և աւելի հպատակս։

Պակասէր ևս ինչ մի առ 'ի լրացուցանել զապահովութիւն իւր. փափաքէր ունել զայնպիսի իմն տէրութիւն 'ի վ̄ լճին մինչև կարող լինել ապահովացուցանել անձին զփախուստ իմն եթէ դէպ լինիցի կամ վ̄ անհաստատութեան կամ վ̄ ոչ հաճութեն Մեքսիկացւոց զէն առնուլ ընդդէմ նր. և աւերել զկամուրջսն կամ զմայթսն. Բայց յաջողակութ̄ իւր և դիւրահաւանութ̄ Մոնթեծումայի արարին նմա ստանալ նաև զայս. Յաճախակի զբօսեցուցանելով զկալանաւորն իւր պանծալի պատմութ̄ք ծովեայցն Եւրոպիոյ և արհեստին նաւելոյ, յօժարեցոյց զհետաքրքրութի նր առ 'ի տեսանել զայն շարժուն պալատսն, որք բանային առանց թիակաց զճանապարհ 'ի մէջ ջուրց. Ընդ պատրուակաւ հաճելոյ զայս իշխ̄. Քորթէս շարժեաց զնա առ 'ի սահմանել զոմանս 'ի հպատակաց իւրոց փոխաբերել 'ի Վերաքրուցեէ 'ի Մեքսիկօ զմասն ինչ առաջիկցն քակտեալ նաւուցն, և պարապեցուցանել զայլս 'ի նոցանէ առ 'ի հատանել և նախապատրաստել զփայտս վ̄ կերտուածոյ նոր նաւուց. Աստարութի ն̄ց Սպանիացի հիւսունքն զերկուս Բրիկանդինս, որք եղեն սնոտի զբօսանք միապետին, և համարեցան 'ի Քորթիսէ իբր անքոյթ նպաստ յորժամ ստիպեսցի 'ի փախուստ։

1520

*Բաջալերեալ յայնչափ հաւատեաց հեզ ենթարկութե արքային կամաց իւրոց, Քորթէս խորհեցաւ համարձակիլ գնել զայն առ մեծագոյն ինչ. Ստա- Ստիպեաց զՄոնթեծումայ ճանաչել զինքն ստրուկ նորա։

*Մոնթէծումա ճանաչէ զինքն հպատակ արքային

արքային Գասթիլիոյ ունել զԹագ իւր 'ի նմանէ իբրեւ 'ի վերնագունէ իւրմէ. և ենթադրել զտէրութիւն իւր վճարման տարեկան իրիք հարկի. Ոչ այս խնդիր առաւել նուաստական քան զոր երբէք մարթ է լինել առն միում զգեցելոյ զարքայական իշխանութի՟, Մօնթէծումայ զիջաւ յարգանօք. Հրամայեաց զի ժողովեսցին գլխաւորք կայսրութե՟ն իւրոյ. և 'ի միում հանգիսաւոր ատենաբանութե՟ն յիշեցուցանելով նոցա զաւանդութիւն և զմարգարէութիւն, որք տրամադրէին զն՟ս առ 'ի սպասել հասանելոյ ժողովրդեան իմիք ելելոյ 'ի նոյն զարմէ նց՟ առ 'ի տիրել գերագոյն իշխանութենն, մեկնեաց նց՟ զհաւատս իւր՝ թէ Սպանիացիք էին այս զարմն խոստացեալ. և թէ նմին իրի ճանաչէր ինքն զիրաւունս միապետի նց՟ 'ի վարել զՄեքսիքեան կայսերութիւն. դնէր զԹագ իւր առ ոտս նց՟, և հնազանդէր նմա իբր հարկատու նր՟. Բայց 'ի յօդաւորել զայսոսիկ խօսս, եցոյց Մօնթէծումա ծով էր ինքն ներքսապէս խոցեալ առնելով զնմանակ իմն պատարագ. Արտասուքն և հեծեծանքն ընդհատէին յաճախակի զզրոյց իւր. Այնչափ և վհատեալ էր նա, տակաւին պահէր զզգածուած ինչ արժանաւորութե՟ն իւրոյ. ուստի կրեաց զանձկութիւն, որ խոշտանգէր զսիրտ արքայի միոյ յորժամ գտանի հարկադրեալ առ'ի հրաժարել յանկախ յիշխանութենէ իւրմէ. Հարաւ ժողովն յայսպիսի իմն բացորոշութենէ, որ յարոյց զբրթմնջիւն իմն խառնեալ զայրացմամբ. Նշան չարագուշակ. Գօրթէս յառաջատես եղև նորգործուե՟ն սորա, և միջորդեաց 'ի դէպ ժամու առ 'ի խափանել զայն, ծանուցանելով թէ ինքնակալ իւր ոչ ունէր զկամս զրկելոյ զՄօնթէծումայ յարքայական աստիճանէն, կամ նորոգելոյ իրս ինչ 'ի սահմանադրութե՟ն և յօրէնս Մեքսիքեան կայսրութե՟ն. Այս ապահովացուցմամբ առակցեալ ընդ երկիւղի Սպանիական

կան կարողութեն, և ընդ արժանաւորութեն օրինակի միապետին իւրեանց. Բռնազբօսեաց զհարկաւ իմն հաւանութի 'ի ժողովոյն. Ներգործութի ենթարկութենն և հարկատուութենն կատարեցաւ ամ կերպականութ, զորս հաճոյ եղև Սպանիացւոց օրինադրել:

(16) Հաստատէ Տէսօլիսն թէ առաջադրութին հարկ տալոյ արքային Սպանիոյ յառաջ եկն 'ի նոյն իսկ Մոնթէծումայէ. և թէ արարեալ եղև առ 'ի շարժել զՍպանիացիս մեկնիլ 'ի տէրութենց իւրոց. Սա ստորագրէ զգնացս նր յայսմ առթի իբր հիմնեալ 'ի վր սկզբանց խորին իւիք քաղաքականութեն, և 'ի գործ եդեալ այնպիսի նուրբ յաջողակութ, մինչզի խաբեաց զնոյն ինքն Կորթէս. 'Ի մէջ ժամանակակից պատմագրաց այս է Կորթէսի 'ի Տիացու կմ Կօմարայի ոչ գտանի նշանակ կմ պարագայ, որ արդարացուցէ զայս տեսականութի. Մոնթէծումայ յայլ ըծակցութիւ ոչ եցոյց երբէք ոչ զայնքան արուեստ և ոչ զայնքան ընդունակութի. Անձկութին, զոր նա կրեաց 'ի զիջանիլն առ այս նուաստացուցիչ արարողութի, բնական է, յորժամ ենթադրեցի թէ լեալ իցէ ակամայ. բայց ըստ տրամաբանութեն Տէսօլեայ լեալ էր անմիասնական ընդ խորհրդոյն իւրոյ խաբելոյ զՍպանիացիս:

Մոնթէծումայ 'ի ստիպելոյ Կորթէսի Ը դաւանութեն հաւատարմութենն և հպատակութենն առաքեաց և զընծայ մի առ նոր ինքնակալն իւր. և զկնի օրինակին իւրոյ հպատակք իւր բերին զամենառատ տուրս. Սպանիացիք ժողովեցին յայնժամ զամ գանձսն, որք էին կամովին շնորհեալք 'ի զանազան ժամանակս 'ի Մոնթէծումայէ, կամ նոցա բռնազբօսեալք 'ի ժողովրդենէ իւրմէ ընդ պէսպ պատրուակօք. և ձուլեալ զոսկին և զարծաթն, արժողութիւն սոցա, թող զգոհարսն և զայլ զարդսն, որք պահեալ լինէին յաղագս ըղձա-

Գումար գանձոյն հաւաքելոյ 'ի Սպանիացւոց.

կերտ

Տժգոհութիւն 'ի բաշխելն զայն:

կերտ գործուածոյ նց̃, եհաս 'ի վեց հարիւր հազար մարչիլս (փէզօս) Զօրականքն անժուժաբար սպասէին բաշխման, եւ Քորթէս լցոյց զփափաք նց̃. Նախ զատուցաւ հինգերորդն ամ̃ի իբր բաժին անկաւոր արքային. հինգերորդ մի եւս շնորհեալ եղեւ Քորթիսի իբր գլխաւոր հրամանատարի. Գումարք կանխեալք 'ի Վելասքուէզայ 'ի Քորթիսէ եւ յոմանց 'ի պաշտօնատարաց առ 'ի առնել զծախս սպառազինութեն՝ հանեալ եղեն յայնժամ. Մնացորդն բաժանեցաւ 'ի մէջ զօրացն բացառութ̃բ պահապանացն Վերաքրուզէին ը̃ համեմատութե̃ն աստիճանացն. Յետ այսպիսի կրճատութե̃ց մասն իւրաքանչիւր ուրուք ոչ էր աւելի քան զհարիւր մարչիլս. Զօրականքն գտին զայս գումար այնպէս գծուծ, մինչ զի ոմանք 'ի բաց ընկեցին զայն զայրացմամբ. եւ այլք տրտնջեցին այնպէս սաստիկ, մինչ զի ամ̃ յաջողակութե̃ Քորթիսի եւ առատաձեռնութե̃ իւրոյ պէտք եղեն առ 'ի հանդարտեցուցանել զնս̃. Բայց տրտունջք զօրացն ոչ էին բնաւին անհիմն. Եւ քանզի թագաւորութին ոչ էր հանդանակեալ բնաւ առ շահատակութին կամ առ յաջողութի̃ նց̃, ոչ առանց տհաճելոյ տեսանէին զօրականքն գնալ 'ի բաց այնպիսի մեծ մասին այնր գանձու գնեցելոյ արեամբ, եւ աշխատութի̃ք իւրեանց. Նաեւ այն, որ անկ էր սպարապետի նց̃, երեւէր ը̃ ճանաչման այնր դարու, որ զսեռէ փարթամութե̃, գումարիմն տարապայման. Ոմանք 'ի սիրելեացն Քորթիսի զանխլաբար սեփականեալք էին առ պէտս իւրեանց զանազան զարդս ոսկւոյ, որք ոչ մտանէին 'ի հինգերորդ մասն արքունի. եւ ոչ բերեալք էին 'ի հասարակաց մթերսն. Բայց այնչափ փոյթ ունէր Քորթէս առնելոյ զառատ իմն առաքումն առ արքայն, մինչ զի յոյժ հաւանական է թէ իրքն թագուցեալք ոչ էին մեծակշիռք:

Բո-

Պատճառն թէ ընդէ՞ր ոսկին գտեալ եղե յայտնէ ծանր քանակութէ:

Բոլորական գումարն կուտեալ 'ի Սպանիացւոց ոչ ունի զչափակցութիւն ընդ ծանուցմանցն, զորս մարթ էր յղանալ՝ հայելով 'ի ստորագրութիւն տուեալս 'ի վիպասանից զնախկին պայծառութիւն Մեքսիքոյի կամ նկատելով զբերս հանքաց նոյն յարդեան ժամանակս. Բայց 'ի մէջ նախնի Մեքսիքացւոց ոսկին և արծաթն ոչ էին չափ, յորոյ վասն համարիւր արժողութիւն վաճառաց. և այս յայերկու մետաղք զուրկք յարուեստական գնոյ յառաջ եկեալ յայսպիսի պարագայէ, ոչ էին յարգիք, բայց եթէ որչափ ծառայէին 'ի նիւթ զարդուց իւրեանց. Այսոքիկ կամ էին նուիրեալ աստուծոց 'ի մեհեանս իւրեանց. կամ կրեալք իբր նշանս տարորոշութեան 'ի նահապետաց, կամ յերևելագոյն գլխոց. Եւ քանզի վաճառումն մեծագին հրահալելեաց էր նուազ, նմին իրի ոչ զմտաւ ածէին Մեքսիքացիք առ 'ի կուտել զայն. Եւ ևս էին բնաւին տգետք արհեստին փորելոյ զհարուստ հանքսն, որովք լի է աշխարհն նոցա. Այն սակաւ ոսկին, զոր ունէին, հաւաքիւր 'ի յատակս գետոց որպէս զիարդ յառաջ ածեալ էր 'ի բնութենէ. Մեծագոյն ճիգն աշխատութեան նոցա 'ի խնդրելն զայն էր լուանալն զհողն վայրաքարշեալ ի հեղեղացն լերանց. և ընտրելն զհատս ոսկւոյ, որք մնային 'ի յատակն. Եւս և զայս պարզ գործողութիւն ըստ պատմութեան անձանցն առաքելոց 'ի Կորթիսէ առ 'ի ծանուցել զառաւել համբաւեալ հանքսն, կատարէին չարաչար. Վասն այս ամենայն պատճառաց ոչ էր մեծ ինչ ամբողջ զանգուած ոսկւոյն ստացելոյ 'ի Մեքսիքացւոց. Իսկ արծաթն գոլով հազիւ երբէք գտեալ մաքուր. և անգիտանալով նոքա զարհեստ զտելոյն, որպէս պիտոյ է, քանակութիւն իւր հետևաբար ոչ էր յոյժ երևելի. Եւ այսպէս որչափ և Սպանիացիք 'ի գործածեալ էին զբովանդակ կարողութին, զոր ունէին 'ի Մեքսիքօ. և քաջ ստէպ դժպա-

տեհ

տենչ յափշտակութե̄ առ 'ի յագեցուցանել զբռնացեալ կիրս իւրեանց. և թէպէտ Մոնթէծումա դատարկացուցեալ էր յօժարակամ զգանձարանն իւր յուսով շիջուցանելոյ զծարաւ նց ոսկւոյ, սակայն յառաջեկեալն, որ հաւանականաբար բովանդակէր զմեծ մասն դանլոցն 'ի բովանդակ թագաւորութն. ոչ զանցանէր զարժողութե̄ նց, որ յիշատակեցաւ 'ի վեր անդր:

(17) ‖ 'Ի բազում գաւառս Սպանիացիք հանգերձ ա̃մ ճարտարութե̄ իւրեանց ոչ կարացին գտանել զոսկի. Յայլս գտին միայն դուզնաքեայս թեթևագինս. Մոնթէծումա ապահովացոյց ըզԿորթէս թէ ընծայն, զոր մատուցանէր նա արքային Կասթիլիոյ իբր զհարկատու բովանդակէր զա̃մ գանձն մթերեալ 'ի հօրէ իւրմէ. և ասաց Նմա, թէ արդէն բաշխեալ էր զմնացուածն ոսկւոյ իւրոյ և գոհարաց իւրոց 'ի մէջ Սպանիացւոց. Գօմարա պատմէ՝ թէ բովանդակ արծաթն գումարեալ կշռէր հինգհարիւր մարքս, (որ է որոշեալ ինչ չափ դրամոյ.) Այս համեմատի պատմութեն Կորթեսի, թէ իրական հինգերորդ մասն արծաթոյ էր հարիւր մարք. այնպէս զի բոլորական գումար արծաթոյն էր չորսհազար ունկի, լինելով ութն ունկին մի մարք և այս ցուցանէ թէ ամենևին սակաւ էր համեմատութի արծաթոյն առ ոսկին: ‖

Մոնթէ- Բայց որչափ և դիւրահաւան էր յայլ նիւթս,
ծումայ եցոյց զինքն ամենահաստատ 'ի յօդուածի միում.
անհա- Թէպէտ Կորթէս սաստիկ յորդորէր զնա եռանդ-
ւատն նոտ նախանձայուզութե̄ հրաժարել 'ի սուտ աս-
նկատ- տուծոց իւրոց, և ընդգրկել զքրիստոնէական
մամբ հաւատս, սակայն նա ծոսկմամբ 'ի բաց ընկեց
քրոնէին: զառաջադրութիւն. Կռոակրօնութիւն 'ի մէջ Մեքսիքացւոց հաստատեալ էր այնպիսի կանոնաւոր և լրացեալ կարգադրութե̄, մինչ զի սահմանադրութիք իւր արմատացեալ էին յամենեցուն միտս.

և երբ անկիրթ ցեղք յայլ մասունս Ամերիկոյ դիւրաւ հաւանէին առ 'ի բաց թողուլ զծանօթութիւնս ինչ և զծէսս այնպէս պաճուճեալս և կամայականս մինչև հազիւ արժանաւորել անուան հրապարակական պաշտաման, Մեքսիքացիք պնդագոյնս յարէին յեղանակն երկրպագութեան իւրեանց, որ թէպէտ և խուժադուժ՝ ընկերակցեալ էր 'ի կարգէ միոջէ և 'ի շքոյ, որ առնէր զայն յարգելի. Քօրթէս տեսանելով անօգուտ զամենայն թևակոխութիւնս իւր դրդուելոյ զկայսրունոյն Մոնթէծումայի մոլեցաւ այնպէս առ յամառութիւն նորա, մինչ զի յափշտակութք նախանձուն եղև առաջնորդ զօրականաց իւրոց. և գնաց առ 'ի տապալել յերկիր զկուռսն մեծագոյն մեհենին. Բայց քուրմքն առեալ զէնս 'ի պաշտպանութիւն բագնաց իւրեանց, և ժողովուրդն խռնելով մեծաւ համարձակութեամբ առ 'ի լինել նոցա թիկունք, խոհեմութիւն Քօրթիսի չափաւորեաց զնախանձայուզութիւն իւր, և ներածեաց զնա կասիլ 'ի գահավիժական ձեռնարկութենէ իւրմէ. և այսպէս բաւական եղև նմա տալ բառնալ 'ի բաց զկուռսն 'ի միոջէ 'ի խորանաց նոցա, և դնել փոխանակ նոցա զպատկեր մի կուսին մարիամու:

(18) Տէսօլիս դնէ յերկբայս ըշմարտութիւն այսր գործոյ ոչ այլով պատճառաւ եթէ ոչ զի ոչ համաձայնէր ընդ խոհեմութեանն, որ էր կնիքն Քօրթիսի. Բայց պարտէր յուշածել զանխոհեմական եղանակն, որով գործեաց 'ի Թլասքալա վասն թոյլ տալոյ բերել 'ի թափոյ նախանձուն իւրոյ. Սա հաստատէ թէ յայտ յանդիմանութիւն այսպիսի իրողութեան հանեալ լինի 'ի վկայութենէ Տիացու, Կօմարայի, և Հերրէրայի. Որք ամենեքեան միաբանին 'ի վերայ անշրջահայեաց գնացիցն Քօրթիսի. և ունին քաջ իրաւունս առնելոյ զայն՝ որովհետև նոյն իսկ Քօրթէս պատմէ զայս գործողութիւն իւր կայսերն երկրորդ նա-

մակին իւրում. և թուի թէ պարծիցի այնու. Այս է օրինակ մի 'ի մէջ բազմաց սակաւ ուշադրութեան, որով Տէսօլիսն քննեաց զթուղթսն Կորթեսի առ Կառոլոս հինգերորդ. որք հրահանգեալ էին զնա յորչափ ինչ պատահեցաւ յայնմ դիպուածն: ‖

Խորհուրդ Մեքսիքացւոց առ 'ի ջնջել զՍպանիացիս:

Յայսմ վայրկենի Մեքսիքացիք, որք համբերեալ էին կալանաւորութեան արքային իւրեանց, և հանդուրժեալ անանց հակառակութեան պահանջմանց օտարաց, սկսան խորհիլ, թէ որպէս կարող էին վանել կամ ջնջել զՍպանիացիս հաւատալով զինքեանս կոչեալս առ 'ի խնդրել զվրէժ թշնամանաց չաստուածոց իւրեանց. Քուրմք և առաջնորդք ունէին զյաճախ խորհրդակցութիւն վասն այսր վախճանի. Այլ քանզի ձեռնարկելն 'ի մինն կամ 'ի միւսն բռնութեան կարէր լինիլ մահաբեր կալանաւորեալ միապետին, նոյն ինքն կամեցաւ փորձել զհայթհայթանս ոչ յոյժ պահավլիժականս, կոչեալ զԿորթէս, ասաց ցնա՝ թէ վախճան դեսպանութեան իւրոյ կատարեալ էր. և թէ ածք յայտ արարեալ էին զկամս իւրեանց, և ժողովուրդն յայտնէր զխափանս իւր, զի նա և հետևողք իւր մեկնիցին նոյնհետայն 'ի կայսերութենէն. Վասն այսորիկ խնդրէր 'ի նմանէ առնել զայն, ապա թէ ոչ անընդմիջաբար թափելոց էր 'ի վերայ գլխոց նոցա անխորշելի եղծումն. Այն այսր անակնկալ խօսից և որոշեալ եղանակն բարբառոյ, որով արտասանեալ եղև, ոչ թողին տեղի երկբայելոյ Կորթեսի թէ ծագեալ իցէ յիմիքէ թագուն խորհրդոյ նիւթեցելոյ 'ի մէջ Մոնթեզումայի և հպատակաց իւրոց. Իրազեկ եղև նա թէ հանելոց էր զմեծագոյն շահեկանութիւն ձեռնալոյն զիջանիլ յօժարութեան արքային, քան թէ ջանալով փոխել զնա, կամ ընդդէմ դառնալ. և կրկնեաց մեծաւ պարկեշտութեամբ թէ նա ինքն բա՟ սկսեալ էր պատրաստիլ առ 'ի դառնալ յերկիր իւր. այլ քանզի նաւքն որովք եկեալ

կեալ էր, գտանէին բնաւքն քաղքայեայք պիտոյ էր ժամանակ ինչ առ 'ի շինել զնորս. Որոշեալ ինչ թիւ Մեքսիքացւոց առաքեալ եղև 'ի Վերաքրուզ' առ 'ի հատանել զծառս. և ոմանք 'ի Սպանիացւոց հիւսանց կարգեալ եղեն վերատեսուչ լինել գործոյն. Քօրթէս բարեյոյս լինէր թէ յայսմ միջոցի գտանէր հնարս առ 'ի հեռացուցանել զսպառնացեալ վտանգն, կամ թէ ընդունէր զայնպիսի նպաստս մինչև լինել յաստիճանի անգոսնելոյ զայն:

Անցեալ էին շուրջ ամիսք ինն, յորմէ հետէ Փորթօքարրեռօ և Մոնթէխօ առագաստ վերացուցեալ էին հանդերձ նամակօք իւրովք դէպ Սպանիոյ. և նա օրըստօրէ սպասեալ կայր վերադարձի նոցա հանդերձ հաստատութեամբ իշխանութեան իւրոյ 'ի կողմանէ արքային. Առանց սորա էր անապահով և անստոյգ յանձնառութիւն իւր, և կարէր անկանիլ 'ի վտանգ լինելոյ զպատակնիք անօրէն և պատժոյ մահուչի. այն զի սրընթաց և մեծամեծ լեալ էին յառաջադիմութիւնք իւր, ոչ կարէր յուսալ 'ի գլուխ հանել զտիրապետութիւն համատարած իւիք կայսերութեն այնպիսի փոքրիկ գնդաւ արանցն, որք արդէն իսկ վս հիւանդութենց կլիմային երթալով երթային միշտ և նուազէին. և ոչ էր նմա պատեհ խնդրելն զլրումն զօրաց 'ի բնակութենցն Սպանիացւոցն 'ի կղզիսն մինչև ոչ ընկալցի զարքայական հաւանութիւն գործոց իւրոց:

Տագնապ և վտանգն Քօրթէսի:

Այսպիսի դժնեայ ձախորդուն Քօրթէս լի տատամսութ նկատմամբ անցելոյ՝ երկբայելով բազումս զապագայէ. և նեղեալ 'ի նորանոր անհնարութենց վս վերջին յայտարարութեն Մոնթէծումայի, ընկալաւ զբաջալերութի. տեսանելով ժամանել զսուրհանդակ մի Մեքսիքացի հանդերձ ծանօթութե նաւուց ոմանց երևելոց առ ծովեզերբն. Քօրթէս երևակերպելով յինքեան

Ժամանելն գնդի միոյ Սպանիացւոց:

վարկպարազի թէ պատգամաւորքն իւր դարձեալ էին 'ի Սպանիոյ, և թէ մերձենայր լրումն փափաքանաց իւրոց և յուսոյ իւրոյ, ետ զաւետիս ընկերաց իւրոց, որք ունկնդիր եղեն նմա զեղմամբ անպատմելի ուրախութ. սակայն հրճուանքն ոչ եղև երկարատև. Այր մի արձակեալ 'ի սան Տօվալեայ, զոր Կօրթէս սահմանեալ յաջորդել Էսքալանդեայ 'ի հրամանատարութ Վերաքրօչէին, բերէր զանտարակոյս տեղեկութիւն թէ սպառազինութին հանդերձեալ էր 'ի Վէլասքուէզայ բդեշխէ, և թէ փոխանակ օգնուեն Կուպայի, յորում սպասէր, սպառնայր զմօտալուտ կործանումն:

Հան-
դերձեալ
'ի Վե-
լասքուէ
զայ:

Բացայայտք են պատճառքն, որք դրդեցին զՎէլասքուէզ առ այս բուռն որոշումն. 'Ի պարակայից մեկնելոյն Կօրթիսի անկարելի էր ոչ կասկածելն զնմանէ ունելոյ զձկտումն թօթափելոյ բոլորովին զամ կախումն 'ի նմանէ. Ոչ խորհիլն առաքել 'ի Կուպա զծանօթութի ինչ զգործոյ իւրոյ, զօրացոյց զայս կասկած, որ 'ի վախճանի հաստատեալ եղև յանհանճարութէ զօրագլխացն, զորս Կօրթէս յղեալ էր 'ի Սպանիա. Սոքա վն իրիք պատճառի, որ ոչ է յայտնապէս բացայայտեալ 'ի ժամանակակից պատմագրացն, դիպեցան 'ի կղզին Կուպա ընդդէմ բացայայտ հրամանացն սպարապետին իւրեանց. Միջնորդութբ նց Վէլասքուէզ ոչ միայն հասու եղև թէ Կօրթէս և հետևորդք իւր յետ հրաժարելոյ կերպականապէս յինչևիցէ միաւորութէ ընդ նմա, կառուցեալ էին զանկախ իմն հարգունուի 'ի Նորն Սպանիա. և թախանձէին զթագաւորն հաճիլ հաստատել զգնացս իւրեանց աւագութբ իւրով. այլև ընկալաւ զմանաւոր իմն տեղեկութի զհարստութէ այնր երկրի, զմեծագին պարգևացն ընկալելոց 'ի Կօրթիսէ, և զյաջողութէն զոր ունէր նա պատճառ յուսալոյ. Ամ կիրք, որք սովոր են յուզել զփառամոլ միտս, ամօթն խաքեալ լինելոյ այնդ տխմարաբար, ցասումն տեսանելոյ զինքն մատնեալ յառնէն, զոր նա ընտրեալ էր առաւել քան զայլս իւր առարկայ սիրոյ իւրոյ և մտերմութեան, ցաւն ապականելոյ զբախտ իւր վն մեծացուցանելոյ զթշնամին, և յուսահատութին կորուսանելոյ զայսպիսի իմն գեղեցիկ դիպաւորութի հաստատելոյ զհամբաւ իւր, և տարածանելոյ զիշխանութի իւր յարուցին զմրրիկ իմն 'ի սրտին Վէլասքուէզայ. Գրգռէին զնա իւրքս այսուքիկ միանգամայն առնել զարտաքոյ կարգի ճիգն առ 'ի խնդրել զվրէժ 'ի սկզբնապատճառէն վնասուցն իւրոց. և կողոպտել զնա 'ի յափշտակեալ հրամանատարութենէն և 'ի տիրապետութենէն իւրոց. Եւ ոչ պակասէր նմա երևոյթ հաւանական իմն իրաւանց առ 'ի արդարացուցանել զառաջադրութին. Գործավարն, զոր նա առաքեալ էր 'ի Սպանիա հանդերձ պատմութեամբ ճանապարհորդութեանն Կրիյալվայ, գտեալ էր զառաւել նպաստաւոր ընդունելութի. և յառհաւատչէից ոսկւոյն, զոր առաջի մատոյց նա, կերպաւորեալ էին ակնկալութիք այնպէս վսեմականք նկատմամբ ընչաւէտութեն նորոյն Սպանիոյ, մինչզի Վէլասքուէզ աւագացուցեալ էր յարքայէն առ 'ի յառաջ տանել զծանօթութին այնր աշխարհի ընդարձակ իշխանութբ և արտօնութբ ոչ շնորհեցելովք յառաջ բախտորդի ումեք 'ի ժամանակէ անտի Քօլոմպոսի. Փքացեալ այսու երևելի նշանաւ թագաւորական շնորհաց, և աւագացուցեալ 'ի նկատել զՔօրթէս ոչ միայն իբր յափշտակիչ իրաւարանութեն իւրոյ, այլև իբր անհնազանդ արքունի հրամանացն, բացորոշեաց յինքն ընկրկել զսեփական իրաւունս իւր, և ըղպատիւ միապետին իւրոյ ճանապարհաւ զինուց։

(19) ‖ Հէրրէռայ և Տէսօլիսն ենթադրեն, թէ Վէլասքուէզ դրդեալ իցէ առ 'ի պատրաստել զայս սպառազինութի ընդդէմ Քօրթեսի 'ի տե-

զեկուցմանցն, զորս ընդունէր 'ի Սպանիոյ նկատմամբ ասպնջականութեն արարեցելոյ գործակալացն առաքելոց 'ի Հարգունութէ Վերաքրուցայ. և 'ի ջերմութէն, որով Ֆօնսէքայ Եպիսկոպոսն Պուրկոսի ջատագովեալ էր զշահս անձին նր՟, և դատապարտեալ զընթացս Քօրթիսի. Բայց ժամանակաբանական կարգն դիպուածոց ոչ ընդունի զայս ենթադրութի. Փօրթօքարրէռօ և Մօնթէխօ վերացուցին զառագաստ 'ի Վեռաքրուչեայ 'ի 26 յուլիսի 1519 հասին 'ի Հոկտեմբերի 'ի սան Լուքար ըստ այնմ, զոր ասէ Հերրէռայ. Բայց Պետրոս Մարտիրոսն, որ էր յարքունիսն յայնմ ժամանակի, և հաղորդէր օրըստօրէ պատասխանատուողաց իւրոց որ ինչ երևելի հանդիպէր, յիշատակէ զժամանելն այսց գործակալաց յառաջնում նուագի 'ի Դեկտեմբերի, և խօսի զայնմանէ իբր զնոր գործոյ իմեքէ. Միաբանին ամ՟ Ռ իպասանք, թէ գործակալքն Քօրթիսի ընկալան զառաջին ունկնդրութի իւրեանց 'ի կայսերէն 'ի Թօրտէսիլլաս, յորժամ գնաց նա յայն քաղաք առ 'ի այց առնել մօր իւրում 'ի ճանապարհորդութեն իւրում առ սուրբն Յակոբ Քոմփօսթէլլայի. Սակայն կայսրն մեկնեցաւ 'ի Վալլիատօլիտէ առ 'ի երթալ 'ի Թօրտէսիլլաս 'ի 11ն Մարտի 1540. և Պետրոս Մարտիրոսն ասէ տեսեալ յայնմ ժամանակի զընծայսն մատուցեալս Կառօլօսի. Սպառազինութիւն ը՟ Նարվաիզի նաւեաց 'ի Քուպայէ յամսեան Ապրիլի 1520. Ապա քաջայայտ է, թէ Վէլասքուէզ ոչ կարէր ընդունել զծանօթութի ինչ զայնմանէ, որ գործիւր 'ի Թօրտէսիլլաս յառաջքան ըզզինելն ընդդէմ Քօրթիսի. Ապա ուրեմն երևի, թէ ճշմարիտ շարժիչ պատճառք իւր էին այնք, զորս յառաջբերի. Հրովարտակն, որ կարգէր զնա Ադէլանթադօ նահանգական նորոյ Սպանիոյ այնպիսի իմն տարածեալ իշխանութ՟ գրեալ էր 'ի 13

Նոյեմբ. 1519 կարէր ընդունել զայն զսկզբանն Յունվարի. Գոմարա զեկուցանէ մեզ, թէ իսկ և իսկ իբրև մատուցաւ նմա այս հրովարտակ, սկսաւ նա հանդերձել զնաւահանդէս մի և հանել ըզզօրս: ‖

Եռանդն Վելասքուէզայ 'ի փութացուցանելն զնախապատրաստութիւնսն, եղև որպիսի կարէր սպասել յուժգնութե՟ կրիցն, որք խրախուսէին զնա. և 'ի սուղ ժամանակի տեսաւ սպառազինութի՟ մի բաղկացեալ յութ և տասն նաւուց, որք ունէին 'ի վ՟ր իւրեանց զութսուն արս հեծեալս, ութն հարիւր հետևակս, յորոց ութսունն էին հրետաւորք և հարիւր քսանն բազստրաւորք, ունելով զկնի զերկոտասան հատորս թնդանօթաց. Ներհմտութի՟ն, զոր ընկալեալ էր Վելասքուէզ զվնասակար հետևութե՟նցն յանձնելոյ այլում ումեք զայն, զոր պարտ էր կատարել ինքնին, ոչ եղև բաւական առ 'ի առնել զնա առաւել ձեռներէց, որովհետև ետ զհրամանատարութի՟ն այսր ահարկու գնդի (որ 'ի տղայութե՟ Սպանիական կարողութե՟ն յԱմերիկայ, արժանի է անուան զօրաց) Փանֆիլոյի Նարվաէզայ հանդերձ հրահանգօք կալանաւորելոյ զԿորթէս և զգլխաւոր պաշտօնատարս իւր, և առաքելոյ զնա կալանաւորս 'ի Կուպա, և ապա տանելոյ 'ի գլուխ զծանօթութի՟ն և զտիրապետութի՟ երկրին 'ի սեպհական անուն իւր:

Ընթացք Նարվաէզի. Ապրիլ.

Յետ յաջողակ իմն ճանապարհորդութե՟ Նարվաէզ մատոյց զարս իւր առանց ինչ դիմադարձութե՟ մերձ 'ի սբ՟ն Յովհաննէս Ուլուայ. Երեք զօրականքն, զորս Կորթէս առաքեալ էր յայն անձուկն 'ի խնդրել զհանքս լծակցեցան վաղվաղակի ընդ նմա. Այսու պատահմամբ ընկալաւ նա զծանօթութի՟ս զյառաջադիմութե՟նց և զկայաւորութե՟ Կորթէսի. և գտեալ նոյն զօրականքն զարգացեալ ըստ իմիք 'ի Մեքսիկացւոց լեզուին, ստացաւ թարգմանս, որոց միջնորդութ՟բ կարող եղեւ ունել զխօսակցութ՟ի ինչ ընդ ազգայնոցն. Բայց ըստ անարգ խորամանկութ՟ն հատուածելոց յարգարեցին նոքա զպատմութիւնս իւրեանց՝ առաւել ուշցնելով այնմ, զոր հաւատային ընդունելի լինել քան այնմ, զոր գիտէին գոլ ճշմարիտ. և ներկայացուցին զկայաւորութ՟ի Կորթէսի այնպէս յուսահատեալ, և տհաճութ՟ի զօրականաց իւրոց այնպէս հանրական, մինչզի աճեցուցին զբնական յանդգնութ՟ին և զվստահութ՟ին 'ի Նարվաէզ. Բայց առաջին գործողութ՟ի իւր պարտ էր ուսուցանել նմա ոչ ընծայել հաւատս աչառու պատմութ՟եց նոցա. Առաքեաց կոչել զբդեաշխն Վէրաքրօչեայ առ 'ի անձնատուր լինել՝ զերէց ումն Կուէվառա, որ արար զխնդիրն այնքան լրբութ՟բ, մինչզի Սանտովալ զօրագլուխն մեծահոգի և սրտի մտօք յարեալ 'ի Կորթէս՝ փոխանակ զիջանելոյ թախանձանաց նորա, կալանաւորեաց զնա ընդ ընկերաց իւրոց, և առաքեաց զնս շղթայիւք 'ի Մեքսիքօ:

Ամբոխումն Կորթէսի:

Կորթէս ընկալաւ զնս ոչ իբր թշնամիս, այլ իբր բարեկամս, և պարսաւելով զխստութ՟ի Սանտովալայ, եդ զնս վաղվաղակի յազատութ՟ն. Այսու գթութ՟բ 'ի կիր առեցելով 'ի դէպ ժամանակի հանդերձ փաղաքշանօք և ընծայիւք շահեցաւ նա զմտերմութ՟ի նոցա, և էհան 'ի բերանոյ նոցա զայնպիսի մասնաւորութիս վերահայեցմամբ զօրութ՟ն և ձկտմանցն Նարվաէզի, մինչզի ակն յանդիման արարին նմա հանդերձ բովանդակ մեծութ՟բ իւրով զմօտալուտ վտանգն. Ոչ ևս պարտէր նա պատերազմիլ ընդ մերկ հնդկաց տգիտաց պատերազմական արուեստի, այլ ճակատիլ ընդդէմ զօրաց հաւասար եղելոց իւրոցն 'ի քաջասրտութ՟ն և 'ի զինուորական կրթութ՟ն, որ առաւելոյր քան զնա թուով, և որ գործէր ընդ հաստատութ՟բ արքունի իշխանութ՟ն. և առաջնորդեալ 'ի զօրագլխոյ միոջէ, որոյ ծանուցեալ էր քաջութիւն. Իբր ասացեալ նմա, թէ Նարվաէզ առաւել փոյթ կատարելոյ զխութ̃ի Վէլասքուէզայ, քան թէ մտադիր պատուոյ և շահու հայրենեաց իւրոց՝ սկսեալ էր զխօսակցութիւնս իւր ընդ ազգայնոցն, երևեցուցանելով զՔօրթէս և զհետևողս իւր իբր փախստեայս և տարագրեալս՝ մեղապարտս ապստամբութեան ընդդէմ արքային իւրեանց, և անիրաւութեան 'ի յափշտակելն զՄեքսիքեան կայսրութիւն, և ազդ առնելով նց̃, թէ նպատակն այց առնելոյ երկրին այնմիկ էր միայն պատժելն զՍպանիացիս, և ազատելն զբնակիչս 'ի ճնշմանէն. Յայնժամ իրազգաց եղև թէ նոյն վնասակար ծանօթութիւնքն հասուցեալք էին առ Մօնթէծումա, և թէ Նարվաէզ գտեալ էր եղանակ ապահովացուցանելոյ զնա, թէ գնացք Բանտարկողաց նորա մեծապէս անհաճոյ եղեալ էին թագաւորին տն̃ իւրում, և թէ ինքն յանձն առեալ էր ոչ միայն դարձուցանել նմա զազատութիւն, այլև դնել զնա 'ի ժառանգութեան իշխանութեան և անկախութեան, յորս յառաջ վայելէր:

Խրախուսեալք գաւառքն 'ի յուսոյ թօթափելոյ զլուծ օտարացն, սկսան յայտնապէս օտարանալ 'ի Քօրթիսէ և ակնարկել 'ի Նարվաէզ իբր յազատիչ որ ոչ միայն բաւական, այլև փափաքօղ փրկութեան նց̃. Նոյն ինքն Մօնթէծումա կալաւ զգաղտնի իմն խօսակցութիւն ընդ նորոյ հրամանատարին, և երևեցաւ պատուել զնա իբր զանձն որ վերնագոյն 'ի կարողութեան և արժանաւորութեան քան զայլ Սպանիացիսն, զորս ցայնժամ յարգեալ էին որպէս եթէ էին առաջինքն 'ի մարդկանէ:

(20) ‖ Պնդէ Տէսօլիս, թէ Նարվաէզ ոչ ունելով թարգմանս ոչ կարէր ունել զխօսակցութիւնս ընդ բնակչաց գաւառացն, և ոչ վարել ը̃

նա այլով եղանակաւ , բայց եթէ ճանապարհաւ նշանացեաց . և թէ նմին իրի հաւասարապէս անկարելի էր նմա առնել զինչ և իցէ հաղորդակցութ̃ ընդ Մոնթեծումայի . Բայց զամ̃ մասնաւորութ̃ս կցորդութեն ՝Նարվաւիզի ընդ Մոնթեծումայ և ը̃ հպատակաց իւրոց 'ի ծովեզերեայ գաւառն պատմեմ ես 'ի վ̃ն վկայութեն նորին ՝Քօրթիսի . Հաստատէ ՝Քօրթէս , թէ էր եղանակ իմն խօսակցութեն 'ի մէջ ՝Նարվաւիզի և Մեքսիքացւոց , այլ ոչ պարզաբանէ թէ զիարդ . Տիաց ընաւ զայս պակասուի . և ստուգէ մեզ , թէ երեք դասալիքքն , որք լծակցեցան ը̃ ՝Նարվաւիզի եղեն թարգմանք ստացեալ ունելով զյանկաւոր իմն ծանօթութի̃ լեզուի երկրին . և իւր սովորական մանրամասնութբն տեղեկացուցանէ զմեզ զանուանց և զյատկութեանց ն̃ց . և պատմէ հուսկ յետոյ , թէ զիարդ պատժեցան ևս վ̃ն անհաւատարմութեն իւրեանց . Սպանիացիք արդէն կացեալ էին աւելի քան զամ մի 'ի մէջ Մեքսիքացւոց , և ոչ է մեծ ինչ , թէ բազումք 'ի նոցանէ ուսեալ էին զարգացմամբ իւիք զբարբառ ն̃ց . Երևի թէ զայս իմացեալ իցէ Հերրէրայ . Դեկ . բ̃ . գրք . ժ . գլ . ա̃ . Սակայն Տիաց , որ էր ներկայ և Հերրէրայ առաւել խնամոտ և լաւագոյն տեղեկացեալ քան զամ̃ պատմագիրս Սպանիացիս միաբանին ընդ ՝Քօրթիսի 'ի պատմութեն գաղտնի հաղորդակցութեն պաճարեցելոյ 'ի ՝Նարվաւիզէ ը̃ Մոնթեծումայ . Խորհի թէ Տեսօլիս նկատէ իբրև թերահաւատութի̃ ինչ առ կնիքն ՝Քօրթիսի դիւցազին իւրոյ՝ թէ Մոնթեծումա լե̃լ իցէ պատրաստական առ 'ի դրաւիլ յայսպիսի իմն հաղորդակցութի̃ . Ենթադրէ թէ միապետն այն յղացեալ իցէ զսէր իմն այնպէս սքանչելի առ Սպանիացիս , մինչզի ոչ էր նմա բնաւ փոյթ ազատելոյ զանձն 'ի նոցանէ . Օկնի անարգանացն , որով վարեալ էին ընդ նմա , այսպիսի իմն սէր անհաւատալի լինի . ևս և Տեսօլիսն պարաւանդեալ է խոստովանիլ՝ թէ այս նկատեալ եղև իբր մի 'ի հրաշից, զոր գործեաց ա͞ծ առ 'ի դիւրացուցանել զտիրապետութիւն. Ճշմարտութիւն այս է, զի Մոնթէծումա որչափ և սանձահարեալ էր յերկիւղէ Սպանիացւոց, այսու ամ͞ե էր անհամբեր յոյժ ստանալոյ վերստին զազատութ͞ի իւր։ ‖

Խորհրդածութ͞է, իւր 'ի վերայ հանգամանացն իւրոց °

Նոյսպիսի էին զանազան կերպարանք վտանգին և դժուարութենն, որք յանդիման լինէին յաչս Քօրթիսի. Ոչ կարէ պատկերակերպիլ կայաւորութի͞ ինչ, որ պահանջէր զառաւել ընդունակութի͞ և հաստատութի͞ 'ի միում սպարապետի, կ͞մ աւր ընտրութի͞ն, թէ զոր կողմն պարտէր ունիլ, լինէր առաւել դժուարին. Սպասելն մերձենալոյ Նարվաիզի 'ի Մէսսիքօ առնէր անխորշելի զկործանումն իւր. որովհետև մինչ ստիպէին զնա Սպանիացիք 'ի միոջէ կողմանէ, բնակիչքն, զորոց ոչ կարէր սանձել իշխանութ͞բ և մտադրութ͞բ զխռովեալ հոգին, անձկանօք առնոյին պարապ իմն այնպէս նպաստաւոր լ͞ն առնլոյ զվրէժ անիրաւութեանց իւրեանց. 'Ի բաց թողուլն զմայրաքաղաքն, դարձուցանելն յազատութի զարքային բանտարկեալ, և դիմելն ընդդէմ թշնամւոյն, տայր նմա 'ի միում վայրկենի բարձի թողի առնել զպտուղս աշխատանաց իւրոց և յաղթութեանց իւրոց, և թողուլ 'ի բաց զշահեկանութիւնս, զորս ոչ կարէր վերստին ստանալ զկնի՝ առանց արտաքոյ կարգի ճգանց, և առանց ամբաւ վտանգաց. Ոչ 'ի գործ ածելն զզօրութի, և դիմելն առ բարեկամական հայթհայթանս՝ պայմանելով զխրատախոհութի իմն ընդ Նարվաիզի ոչ բարւոք լինէր. վասնզի բնական ամբարտաւանութիւն այնր զօրագլխի լծորդեալ ընդ ճանաչմանն ունելոյ զօրութիս իւր վերնագոյնս, էհատ 'ի նմանէ զա͞մ յոյս բարեյաջողութե. Յետ որոճալոյ խորին քննութ͞բ 'ի վ͞ր իւրաքանչիւր առաջարկութեան Քօրթէս յարեցաւ յայն, որ 'ի գործածութեան երևէր առաւել վտանգաւոր. այլ յորժամ յաջողէր, լինէր առաւել շահաւէտ հայրենեաց իւրոց. և համարձակ անվեհերութեան սեփականաւ յուսահատեալ գլխոշմանց՝ բացորոշեաց նկրտել առ յաղթութիւն, յանձն առեալ զինչևիցէ տուգանս առաւել քան թէ զոհել զտիրապետութիւն իւր, և զշահեկանութիւն Սպանիացւոց 'ի Մեքսիքօ:

Պայծա-
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]:

Բայց թէև նախատեսանէր, թէ հակառակութեան պարտէր 'ի վախճանի աւարտել զինուք, սակայն թուեցաւ նմա դժպատեհ իմն, նա զի յանցանք ինչ երթալն ընդդէմ քաղաքակցաց իւրոց առանց փորձելոյ յառաջագոյն յորդորել զիւրսն բարեկամաբար. 'Ի կիր էարկ վն այսր պատուիրակութեան զՕլմէտոս մատռանապետն իւր, յորոյ անձն քաջիկ վստահացեալ էր, և որ ունէր ևս զձիրս խոհականութեան և յաջողակութեան՝ բարեգոյն ևս հանգամանք առ 'ի յառաջ տանել զիրակութիւն ինչ, յոր դնէր Կորթէս զբովանդակ վստահութիւն իւր. Նարվաէզ 'ի բաց հերքեաց արհամարհանօք զամ միաբանութեան առաջադրեալ յՕլմէտոսէ. և դժուարաւ կալաւ զանձն առ 'ի չտալոյ կալանաւորել զնա և զընկերս իւր. Բայց եգիտ զառաւել ասպնջականութեան 'ի մէջ հետևողացն. որոց առ բազումս ետ թուղթս կմ Կորթիսի, կամ պաշտօնատարաց իւրոց նախկին բարեկամաց և ընկերաց նց. Կորթէս հնարագիտութեան ընկերակցեաց ընդ թղթոցն զընծայս օղից, շղթայից ոսկւոյ և այլ մեծագին չքնաղ իրաց. որք ազդեցին յայն աղքատ բաղդորդսն ըղբարձր իղձս զհարստութեանցն ստացելոց 'ի նմանէ. և զնախանձ առ բարեբաղդութիւն նց, որք մտեալ էին 'ի ծառայութիւն նորա. Ոմանք յուսով բաժանորդ լինելոյ այնպիսի հարուստ կողոպուտից ընկալան զառաջադրութիւն Կորթիսի. Այլք հոգւով իմն հայրենասիրաւն ջանային խափանել զքաղաքական իմն պատերազմ. իբր զի որ կողմն և յաղթական լինէր, սասանէր, և թերևս չքանայր կարողութիւն Սպանիական յերկրի միում, ուր էր անկատարապէս կայունացեալ. Նարվայէզ անգոսնեաց զերկպաքանչիւր պատճառն. և յայնմ վայրի հրապարական մունետիկաւ հրատարակեաց զԲորթէս և զյարեալսն իւր ապստամբս և թշնամիս հայրենեաց իւրեանց. Բորթէս՝ որպէս հաւատալի է, ոչ մնաց յոյժ հիացեալ 'ի վերայ անհամբոյր վխութեն Նարվաիզի. և յետ տալոյ զհաւաստիս խաղաղական ոգւոյ իւրոյ, որք արդարացուցանէին զդիտումն իւր առ հզօրագոյն հանգամանս, որոշեաց յառաջ խաղալ ընդդէմ թշնամւոյն, զոր ջանացեալ էր 'ի զուր խաղաղացուցանել ։

Եթող զհարիւր յիսուն արս 'ի մայրաքաղաքին ընդ հրամանատարութեամբ Պետրոսի Ալվարատոյ զօրագլխի հանդիսացելոյ քաջասրտութեամբ. առ որ Մէսսիքացիք յղացեալ էին զմանաւոր իմն ակնածութիւն. Առ պահպանութեան այսպիսի փանաքի գնդի պահապանաց յանձն արար զքաղաք մի մեծ և զբովանդակ հարստութիւնս կուտեալս 'ի նմանէ. և որ էր առաւել մեծակշիռ՝ զանձն կալանաւոր արքային. 'Ի գործ էած զառաւել նուրբ արհեստ առ 'ի պահել թաքուն 'ի Մոնթէզումայէ զճշմարիտ պատճառ չուոյն իւրոյ. Ջանացաւ հաւանեցուցանել զնա, թէ օտարքն փոքր մի յառաջ հասեալք՝ էին բարեկամք իւր և քաղաքակիցք. և թէ զկնի սուղ ինչ խօսակցութեան ընդ նոսա մեկնեալ դառնային 'ի միասին յերկիր իւրեանց. Ոչ կարելով Մոնթէզումա հասու լինել դիտաւորութեանց Սպանիացւոց, կամ լծակցել զայն, զոր լսէր յայտարարութիւն եղելով առ նա 'ի Նարվաիզէ, և զանգիտելով ցուցանել զինքն թերեհաւատ զԲորթիսէ, խոստացաւ կալ մնալ հանդարտ յիջեւանս Սպանիացւոց և տածել ընդ

1520.
Դիմէ
ընդդէմ
Նարվ.
Մայիս.

Ալվարատայ զնոյն բարեկամութիւն, զոր յարակայ պահեալ էր ընդ նմա. Քօրթէս ցուցանելով փութաջանալ յայս խոստումն, բայց նախապատուաբար հանգչելով 'ի խրատսն, զոր տուեալ էր Ալվարատայ պահելոյ զկալանաւորն զգուշաւորագոյն հսկողութեամբ, ել 'ի Մեքսիքօէ:

[illegible]

Բովանդակ զօրութիւն իւր՝ եւս եւ զկնի աճելոյ միաւորութեամբ Սանտովալայ եւ պահապանօքն Վէրաքրուչեայ ոչ զանցանէր զերկերիւր յիսուն արամբք. եւ քանզի յուսայր զբարի ելսն միայն յարագութենէ շարժման իւրոյ՝ ոչ կամեցաւ ծանրանալ զօրաց իւրոց ոչ 'ի կարասեաց եւ ոչ 'ի թնդանօթաց. Բայց ունելով բազում երկիւղ 'ի հեծելազօրէ թշնամեաց՝ էր կանխաւ ամրացեալ ընդդէմ այսմ վտանգի յառաջատեսութեամբն եւ լրջմտութեամբն. որք զանազանեն զմեծ սպարապետսն. Ուշ եղեալ էր նա, զի Հնդիկք 'ի գաւառին Չինանթլայ կրէին նիզակս երկայնաձիգս յոյժ եւ հզօրս. զինեաց նոքօք զզօրականս իւր. եւ սովորեցոյց զնոսա կալ խիտ առ խիտ, որչափ թողացուցանէր կիրառութիւն այսր ահարկու գործւոյ լաւագունի քան զոր երբէք գտեալ իցէ վասն պաշտպանութեան:

[illegible]

Այսու փոքրիկ, բայց հզօր գնդաւ Քօրթէս յառաջադէմ եղեւ դէպ Զէմփօալայի, որում տիրացեալ էր Նարվաէզ. Մինչդեռ չեւ առնէր՝ կրկնեաց զթեւակոխութիւն իւր առ 'ի գալ 'ի միաբանութիւն իմն ընդ հակառակորդի իւրում. Բայց պահանջելով Նարվաէզ, զի Քօրթէս եւ հետեւողք իւր նոյնհետայն ծանիցեն զիրաւունս իւր բդեշխի նորոյ Սպանիոյ զօրութեամբ իշխանութեանն շնորհեցելոյ նմա 'ի Վելասքուէզայ, եւ ոչ կամելով Քօրթէս ենթարկել իշխանութեան իմիք, որ չիցէ հիմնեալ 'ի վերայ յանձնարարութեան նորին իսկ կայսեր, ընդ որոյ անմիջական պաշտպանութեամբ ինքն եւ յարեալքն իւր եղեալ էին զնոր հարգունութիւն իւրեանց, եղեն անօգուտք այս ամ՟ ջանք. Բայց բերան 'ի բերան խօսիլն, որ յետ սակաւուց պատահեցաւ 'ի մէջ երկուց կողմանցն, զեղաւ 'ի մեծ շահ Կօրթիսի. որովհետեւ եդ զնա յաստիճանի շահելոյ զոմանս 'ի պաշտօնատարացն Նարվաիզի առատաձեռն պարգեւօք, ցածուցանելոյ զայլս ցուցանելով զչափաւորութի՟, եւ շուարեցուցանելոյ զամենեսեան ցուցմամբ հարստութե՟ն 'ի մէջ զօրաց իւրոց. մինչ բազումք 'ի զօրականաց իւրոց փոխարկեալ էին որինչ անկաւ նց՟ 'ի Մեքսիքեան ոսկւոյն՝ 'ի շղթայիկս, յապարանջանիկս եւ յայլ զարդս. զորս նոքա տային տեսանել մեծաւ պանծանօք. Գամին իւր բովանդակ զօրքն բաց 'ի Նարվաէզէ եւ 'ի փոքրիկ թըւոյ սանուց իւրոց միտէր առ հաշտութի՟ ին՟ ը՟ հայրենակցաց. Յերազեկ լինելն այսպիսի ին՟ տրամադրութե՟ն բուռն բնաւորութի՟ Նարվաիզի գրեթէ հարաւ 'ի յիմարութի՟. 'Ի թափ մոլեգնութե՟ն իւրոյ եդ զսակ ին՟ 'ի վ՟ր գլխոյն Կօրթիսի եւ 'ի վ՟ր գլխոց պաշտօնատարացն իւրոց. եւ լսելով, թէ այն ինչ հասեալ էր նա փոքրիկ գնդաւ իւրով զինեցելով փարսախ մի հեռի առ Սէմփօալաւ, համարեցաւ զայն իւր թշնամանք ին՟, որ արժանի էր առ ձեռն պատուհասի. եւ դիմեաց ընդդէմ ն՟ր բովանդակ վաշտիւք իւրով առ 'ի տալ ընդ նմա պատերազմ:

Յաղթէ 'ի վ՟ր Նարվաէզի բանակին :

Այլ Կօրթէս էր զօրավար մի կարի ընդունակ եւ հմուտ առ 'ի ոչ հարկանելոյ 'ի դիմի թշնամւոյ միում վերնագունի այնչափ՝ եւ այնպէս քաջ ամրացելոյ, եթէ ոչ ունէր գոնէ զառաւելութի՟ կայաւորութեն. Այս կալեալ զմիտս իւր 'ի միւս կողմանէ գետոյն Կանօասայ, ուր գիտէր, թէ ոչ կարէին յարձակիլ 'ի վ՟ր ն՟ր, ետես զմերձենալ թշնամւոյ իւրոյ առանց շփոթելոյ. եւ անգոսնեաց զայս սնոտի քաջութի՟. Սկսանէր յայնմ վայրի գէջ յեղանակն. եւ էր հեղեղեալ ը՟ մեծ

մասն

Ժամն աւուրն հանդերձ շառաչմամբ մասնաւորաւ այրեցելոյ գօտւոյն. Հետևողք ՙՆարվաեզի անսովորք առ տառապանս զինուորական ծառայութեան անիծանէին զվիճակ իւրեանց. տրտնջէին այնպէս գժնեայ՝ տեսանելով զանձինս վտանգեալ առանց ինչ պտղոյ, մինչ զի ըստ անվայել անհամբերութեան նոցա և ըստ սակաւ համարմանն, զոր առնէր զհակառակորդէն իւրմէ, սպարապետն հաւանեցաւ նոցա ամփոփիլ 'ի ՙՍեմփոալա. ՙԱյն պարագայն, որ շարժէր զնա թողուլ զասպարէզն, քաջալերեաց զ՚Կօրթէս կերպաւորել զառաջարկութիւն մի. որով յուսայր վախճանել զպատերազմն 'ի միում վայրկենի. ՙՆկատեաց, զի անվեհեր զօրականք իւր՝ թէպէտև հարուածեալք 'ի հեղեղէն, որ տակաւին տեղայր, առանց միոյ և եթ խորանի, կամ զինչևիցէ ազգ պատսպարանի, որ ծածկէր զնոսա, էին այնպէս հեռի 'ի տրտնջելոյ ըստ խոշտանգանաց եղելոց նոցա ընտելական, մինչ զի յաւէտ ցուցանէին զինքեանս միշտ վառեալս ըստ ծառայութեանն. ՙՆախատես եղև, զի թշնամին զկնի աշխատութեան բնականաբար տայր զանձն 'ի հանգիստ. և զի դատելով զայլոց գնացիցն 'ի պարտասութենէ իւրմէ՝ հաւատայր զինքն բոլորովին աներկեան 'ի ժամու միում այնպէս անյարմար եղելոյ 'ի գործել. Ապա որոշեաց խուժել 'ի վերայ նոցա 'ի խոր գիշերի. յորժամ ըմբռնումն և զարհուրանք անակնկալ իրիք յարձակման կարէին զուգակշռել առաւելաբար զվայրագունութիւն զօրութեանց իւրոց. Ճանաչէին զօրականք իւր ոչ մնալ նոցա այլ ապաւէն, բայց եթէ յուսահատեալ իմն ճիգն սրտեղութեան. և հաւանեցան որոշմանն այնչափ եռանդիւ. մինչ զի ՙԿօրթէս 'ի հրապարակախօսութեան միում, որով լռեցոյց զնոսա յառաջ քան զմխիլն 'ի չու, հարկեցաւ մանաւանդ 'ի մեղմել քան 'ի բորբոքել զվառումն նոցա. Բաժանեաց զնոսա յերիս մասունս. 'Ի գլուխ առաջ-

նոյն

ծոյն եդ զՍանտովալ, վստահանալով յայս քաջ զօրավար զառաւել վտանգաւոր և զծանրակշիռ ծառայութիւն, այս է, առնլոյ 'ի թշնամւոյն զթնդանօթս կառուցեալս առաջի նախապետական աշտարակի տաճարին. ուր Նարվաէզ հաստատեալ էր զօթեվանս իւր. Քրիստոփանոս Օլիտեան հրամայէր երկրորդին պատուիրանաւ յարձակելոյ 'ի վր̃ մեծի աշտարակին և ըմբռնելոյ զպարապետն. Քօրթէս առաջնորդէր երրորդ և փոքրագոյն բաժնին. որ պարտէր գործել իբր գունդ վերապահեալ և թիկունք լինել ըստ պիտոյից այլոց երկուց. Անցանելով ընդ գետն Քանօաս ուռուցեալ յոյժ պատճառաւ անձրևացն և ոչ առանց դժուարութե̃, որովհետև ջուրն հարկանէր նց̃ մինչև ցկզակն, յառաջ խաղացին լռիկ մնջիկ ոչ հարկանելով զթմբուկ և ոչ հնչեցուցանելով զպատերազմական ինչ գործի, իւրաքանչիւր այր գոլով զինեալ սուսերաւ, դաշունիւ, և նիզակաւ զօրէն Քհինանթլացւոց. Նարվաէզ այնչափ անհոգացեալ, որչափ հաւատայր զանձն ապահով՝ եդել̃ էր զերկուս պահապանս միայն առ 'ի հսկել 'ի վր̃ շարժմանց թշնամւոյն. յորմ̃է ունէր այնպէս իրաւացի պատճառ զարհուրելոյ. Մինն 'ի պահապանաց կալեալ եղև 'ի յառաջապահ զօրացն Քօրթիսի. միւսն փախեաւ 'ի բանակն, խուճապեալ յերկիւղէն և 'ի նախանձայուզութենէն՝ ետ այնպէս կանուխ զծանօթութի̃ գալստեան թշնամեացն, մինչ զի եղև բաւական դիւրութի̃ նախապատրաստելոյ զանձինս առ 'ի ախոյեան ելանել նց̃. Բայց յաղագս յանձնապաստանութե̃ և յիմարութե̃ Նարվաէզի կորուսաւ այսպէս մեծագին իմն միջոց. Ասաց ցպահապանն, թէ այն էր արհաւիրք իմն թելադրել̃ 'ի պղերգութե̃ իւրմ̃է. և հեգնեաց ծիծաղելով զմտածութի̃ն, թէ նա 'ի դիմի հարկանելի իցէ յայնպիսի մթին գիշերի 'ի զօրաց այնքան անհաւասար եղելոց իւրոցն. Աղաղակ զօրականացն Պօրթիսի, որք գային գահավէժք առ յարձակումն յաղթահարեցին զնա 'ի վախճանի 'ի վերայ իրականութեն վտանգին, զոր նա անգոսնէր. Հապծնոյն, որով յառաջ խաղացին, եղև այնպէս մեծ, մինչզի միում և եթ թնդանօթի տուհաւ հուր, յառաջ քան զխոյանալն գնդին Սանտավալոյ 'ի վերայ թշնամեաց, և վանելն զնոսա 'ի մարտկոցաց իւրեանց, և սկսանիլն առնել ճանապարհ 'ի վեր ընդ սանդուխսն մեծ աշտարակին. Նարվաէզ ոչինչ նուազ քաջ 'ի գործս, քան թէ յանդուգն յառաջնորդութեն, զինեցաւ մոլեգնութե և բարբառով և օրինակաւ դրդուէր զիւրսն 'ի մարտ. Օլիտ եկն յառաջ առ 'ի թիկունս լինել ընկերացն. և Պօրթէս անձամբ ընթացաւ փոյթ 'ի զօրագլխութի նց. և յաւել զնոր զօրութի մաքառմանն. Կարգն աղխաղեալ, որով այս փոքրիկ գունդ ստիպէր, և անընդմտանելի պատուհարն, զոր ներկայացուցանէին նիզակք իւրեանց դեր 'ի վերոյ եղեն ամ խուչընդակաց եդելոց նց առջի. Այնինչ տիրացեալ էին դրանն. և ցնցէին զայն առ 'ի տապալել, զօրական մի արկեալ հուր յեղեգունսն, որովք ծածկեալ էր աշտարակն, պարաւանդեաց զՆարվաէզ առ ընդոստ իմն. Յառաջին ընդ հարմանն մնաց խոց 'ի տիգէ միոջէ ՟Է ակն. և անկեալ 'ի գետին քարշեցաւ 'ի վայր ընդ սանդուխսն. և 'ի քթթելական շուրջ պատեցաւ երկաթովք. Բարբառս՝ յաղթութե հնչէր 'ի մէջ զօրացն Պօրթիսի. Նոքա, որք ելեալ էին 'ի դուրս ՟Է զօրավարի իւրեանց, տկարաբար բերեալ լինէին առ մրցումն. և սկսանէին անձնատուր լինել: 'Ի մէջ այլոց դարանելոց յերկուս փոքրագոյն աշտարակս տաճարին տիրէին արհաւիրք և ամօթ. Խաւարն էր այնչափ թանձր, մինչզի ոչ գիտէին որոշել ընդ բարեկամսն և ընդ թշնամիսն. Այն իսկ թնդանօթք նց ուղ-

Այս 'ի
Նէզ տար-
ջանէ
զնա:

ղեցան ընդդէմ ինքեանց. Ուր և գործուցանէին զաչս տեսանէին զանազան լոյս բեկանել զմութ գիշերոյն. որք թէպէտ և գոյացեալք 'ի բազմութէ իմեքէ լուսաւորայլ ժամանց մեծագունից և առաւել յաճախելոց յայն թռեաւ և 'ի ջերմ կլիմայսն, քանթէ 'ի մերում կիսագնտի, երևեցուցանէին զարհուրեալ պատկերակերպութիւն նոցա նոյնչափ յոգնաթիւ գումարտակս հրետաւորաց. որք յառաջէին լուցեալ պատրուգօք առ յարձակումն. Յետ սուղ ինչ դիմակացութեան զինուորքն բռնադատեցին զզօրագլուխս իւրեանց առ պայմանադրութիւն. և յառաջքան զծագել տընջեան եդին ամենեքեան զզէնս իւրեանց 'ի գետին. և ենթարկին զանձինս հանդարտաբար յաղթողաց իւրեանց։

Մր-
դէ-նս
այր
յաղթա-
ղէ,

Այս լրացեալ յաղթութիւն եղև այնչափ առաւել հաճոյական Բօրթիսի, որչափ զի առանց ճապաղեաց արեան շահեցաւ, գոլով սպանեալք երկու զօրականք միայն յիւրոցն և երկու զօրագլուխք հանդերձ հնգետասան արամբք 'ի հակառակ կողմանէ. Բօրթէս վարեցաւ ընդ յաղթելոցն ոչ իբր ընդ թշնամեաց, այլ իբր ընդ հայրենակցաց. և յառաջամատոյց եղև, կամ վերադարձել զնոսա ուղղակի 'ի Բուգա, կամ առնուլ զնս 'ի ծառայութիւն իւր և առնել զնս բաժանորդս բաղդից իւրոց 'ի միասին ընդ արանց իւրոց. Այս վերջին առաջադրութիւն օժանդակեալ 'ի դիպաւոր իմն բաշխմանէ պարգևաց ինչ Բօրթիսի և յառատաձեռն խոստմանց և ևս մեծագունից՝ համոզեաց այնպէս քաջ զմտացածին ակնկալութիւն, որ շարժեալ էր զնս մնանել յայն պարաւանդութի, մինչ զի ամենեքեան առ հասարակ բաց յոմանց կուսակցացն Նարվափիզէ կացին անդ, միացեալ ընդ միմեանս 'ի դաւանելն զհաւատարմութիւն և յարումն առ սպարապետ մի, որոյ առժամեայ յաջողութիւնք տուեալ էին նմա

զփորձ

փորձ իմն այնչափ նշանաւոր՝ ընդունակութե̃ն նր̃ 'ի հրամայել. Եւ այսպէս շարայարութբ̃ իմն դիպուածոց ոչինչ ընդ հատ բաղդաւորաց քան թէ արտաքոյ կարգի եղելոց՝ ՝Քօրթէս զերծաւ 'ի կործանմանէն, որ երեւէր անխորշելի. և յորժամ ճշգրտիւ ունէր նուազ պատճառ սպասելոյ գտաւ 'ի գլուխ հազար Սպանիացւոց պատրաստականաց զհետ երթալոյ նորա, ուրեւ ածէր զն̃ս. Որոք զմտաւ ածէ զդիւրութիւն, որով ստացեալ եղեւ այս յաղթութի̃, և նկատէ, թէ ո՛րպիսի յանկարծ և միաբան անցին հետեւօղք ՝Նարվաէզի գնացին տնել զանձինս 'ի ներքոյ դրօշակի նախանձաւորին իւրոյ, պգայցէ զանձն բերել̃ 'ի վերագրել զայսոսիկ երկուս դիպուածս առ հնարս և առ զէնս ՝Քօրթիսի. և ոչ կարիցէ, բայց եթէ՝ նկատել զկործանումն ՝Նարվաէզի իբր պատճառեալ ոչինչ նուազ 'ի մատնութէ̃ հետեւողաց իւրոց քանթէ 'ի քաջութէ̃ հակառակորդին իւրոյ:

Մ՝եքսիկացիք առնուն զէնս ընդդէմ Սպանիացւոց:

Զանձարեղ առաջնորդութիւն և բարեբաղդութիւն ՝Քօրթիսի ոչ երբէք լաւագոյն քարոզեցին առ̃ յայսմ դիպաւորութն̃. Եթէ սրընթացութբ̃ գործողութեանց իւրոց՝ ընդ սկսանիլն զչու իւր ոչ էր հասուցեալ զիրսն առ այնպիսի շտապ եզր; նաեւ այս բացորոշական յաղթութի̃ եկեալ լինէր փոքր մի անագան 'ի յապրեցուցանել զընկերսն, զորս թողեալ էր 'ի Մ՝եքսիկօ. Զկնի սակաւ աւուրց պարտութեն ՝Նարվաէզի էհաս սուրհանդակ մի հանդերձ ծանօթութբ̃, թէ Մ՝եքսիկացիք առել̃ էին զէնս. և թէ եզծեալ զերկուս Բրինկանթինս, զոր նա կանխաւ շինեալ էր առ 'ի ապահովացուցանել զհրամանատարութիւն 'ի վերայ լճին, գնացել̃ էին առ 'ի յարձակիլ 'ի վերայ Սպանիացւոց յիջեվանս իւրեանց, սպանանելով զբազումս և վիրաւորելով և դարձուցանելով յաճիւն զշտեմարան համբարաց նց̃. և թէ շարունակէին զթշնամութիւն այնպիսի մոլեգնութբ, մինչ զի որչափ և Ալվարատոս և իւրքն պաշտպանէին զանձինս յամառ դիմադրութբ, կամ պարտէին վաղվաղակի մեռանիլ 'ի քաղցու, կմ̃ տեղի տալ բազմութն թշնամեաց իւրեանց:

Այս ապստամբութի զօրացեալ էր 'ի պատճառացն, որք տանէին զայն առաւել ևս զարհուրելի. 'Ի չուելն Քօրթիսի 'ի Զէմփոալա Մեքսիքացիք հաւատացին, թէ այնչափ անձկացեալ առիթն թողացուցանելոյ զինքնակալն իւրեանց յազատութի և փրկելոյ զաշխարհ իւրեանց յատելի տէրութէ օտարքնոց հասեալ իցէ 'ի վախճան. և թէ մինչ դեռ զօրութիք հարստահարողաց իւրեանց բաժանեալ էին այնպէս, և զէնք միոյ բաժնին դարձուցեալ լինէին ընդդէմ միւսոյ, նոքա կարէին դիւրաւ յաղթանակել 'ի վր̃ երկոցունցն. Կալան խորհուրդս և հաստատեցան առաջարկութիք այսու բացորոշ դիտմամբ. Սպանիացիք 'ի Մեքսիքօ խելամտեալք զտկարութէ իւրեանց, խիթային և երկնչէին 'ի մեքենայութեց աստի. Ալվարատոս թէպէտ և քաջ զօրագլուխ, ոչ ունէր զայն մեծ քանքարն և ոչ զայն արժանաւորութի վարման, որք տուեալ էին ստանալ Քօրթիսի զայնպիսի իմն գերակայութի 'ի վր̃ ոգւոց Մեքսիքացւոց, մինչև չթողուլ երբէք նց̃ կերպաւորել զճշգրիտ իմն գաղափար զտկարութէ իւրմէ և զսեպհական զօրութեց իւրոց. Ալվարատոս ոչ ճանաչէր զայլ հանգամանս պահելոյ զիշխանութի իւր, բայց եթէ զբռնութի. Փոխանակ 'ի գործ ածելոյ զյաջողակութիւն 'ի յեղծանել զխորհուրդսն և 'ի գերել զմիտս Մեքսիքացւոց՝ սպասեաց հանդիպելոյ միում 'ի տարեկան տօնից նց̃, յորժամ գլխաւոր անձինք կայսրութեն պատաղէին 'ի պարել ըստ սովորութեն 'ի սրահի մեծագոյն մեհենին. կալաւ զամենայն անցս ճանապարհաց, ընդ որս լինէր ներթալ. և հրապուրեալ մասամբ իմն 'ի հարուստ զարդարանացն, զոր կրէին նոքա 'ի պատիւ աստուծոց իւրեանց, և մասամբ իմն 'ի դիւրութէ քանալոյ 'ի միջոյ 'ի միում վայրկենի զսկզբնապատճառս ենթադրեալ երդմնակցութեան, յարձակեցաւ 'ի վ՟ր նց՟, որովհետև էին անզէնք և առանց կասկածանաց իրիք վտանգի. և սատակեաց զամենեսեան, միայն ապրելով նոցա, որք արարին իւրեանց ճանապարհ 'ի վ՟ր շրջանակաց մեհենին. Գործողութիւն իմն այնչափ անողորմ և արարեալ դաւով ելից զքաղաքն, նաև զբովանդակ կայսրութիւն սրտմտութեամբ և կատաղութեամբ. Աղաղակէին ամ՟ ուրեք բարձրաձայն՝ վրէժխնդրութիւն. և առանց մտադրելոյ բնաւ ապրանաց միապետին իւրեանց. որոյ կեանք կայր յընտրողութեն Սպանիացւոց, և ոչ 'ի վտանգ անձանց իւրեանց 'ի յարձակիլն 'ի վ՟ր թշնամւոյ միոյ, որ այնպէս ընդ երկար ժամանակ լեալ էր առարկայ զարհուրանաց նց՟, արարին զամ՟ ներգործութիւնս քինութեան. որոց լուր առաքեցաւ առ Կորթէս:

Դառ-
նայ
դէպ
Մայրաքա-
ղաքն :

Ոչ այնպէս մտալուտ վտանգն, մինչզի ոչ թողացուցանէր՝ ոչ զխորհրդածութի և ոչ զյապաղումն. Մեկնեցաւ իսկոյն հանդերձ բովանդակ զօրութեամբք իւրովք. և դարձաւ 'ի Զէմփօալայէ ոչ նուազ արագութեամբ քան զայն, որով երթեալ էր անդր. 'Ի Թլասքալա միացան ընդ նմա երկուհազար ընտիր մարտիկք. 'Ի մտանելն յերկրաստանն Մեքսիքացւոց ետես, զի ատելութիւն ընդդէմ Սպանիացւոց ոչ սահմանաւորէր 'ի մայրաքաղաքին. Նահապետական բնակիչքն աւերեալ էին զգիւղսն, ընդ որս անցանէր, ոչ երևելով անձն ոք երևելի առ 'ի ընդառաջ ելանել նմա սովորական յարգանօքն. Ոչ եգիտ զպարման ինչ վն՟ ապրուստի զօրաց իւրոց. և թէպէտ թողացուցեալ էր նմա յառաջ երթալ առանց ցանց զդիմակայութիւն, բայց անապատն և լռութիւն, որք թագաւորէին ամ ուրեք, և սոսկումն, որով ժողովուրդն թոյլ տայր յինչևիցէ խօսակցութէ ընդ նմա, ցուցանէին զկարի իմն արմատացեալ հակակրութիւն. որ զարթուցանէր ՚ի նմա զառաւել ճշգրիտ ըմբռնումն. Այլ որչափ և անհաշտելի էր թշնամութիւն Մեքսիքացւոց, այնպէս սակաւ տեղեակ էին նոքա արհեստի պատերազմելոյ, մինչզի ոչ գիտէին, թէ զիարդ առնուցուն զչափս իւրեանց՝ կամ վս ապահովութեան անձանց, կամ եղծման Սպանիացւոց. Ոչ գոլով բնաւ լուսաւորեալ զկնի առաջնոյ սխալմանն ընդունելոյ զայնպիսի ահարկու թշնամին ՚ի ներքս մայրաքաղաքի իւրեանց, փոխանակ քանդելոյ զսալայատակսն և զկամուրջսն առ ՚ի հատանել այնու զփախուստն Ալվարատոյ և արանց իւրոց, և կասեցուցանելոյ զյառաջադիմութիւնսն Կորթիսի, թողին զնա նորոգ մտանել ՚ի քաղաքն և առնուլ անդէն զստացումն նախկին օթեվանաց իւրեանց:

Ոչ կարեն պատմել զեղմունք հրճուանացն. որովք Ալվարատոս և զինուորք իւր ընկալան զհամաշխարհիկս իւրեանց. Էին երկոքին կողմանքն այնպէս ուրախ, մինն վս առձեռն ազատութեն իւրոյ, միւսն վս մեծամեծ գործոցն, զորս այնինչ արարեալ էր, մինչզի նոյն ինքն Կորթէս արբեալ ՚ի բարեյաջողութէն, ոչ վարեցաւ յայսմ առթի իւր սովորական լրջմտութիւն և ժրաջանութիւն. Անփոյթ եղև ոչ միայն այց առնելոյ Մոնթեծումայի, այլև զայրացոյց զնա բանիւք լցեալ արհամարհանօք վս այնր տարաբաղդ միապետի և վս հպատակաց իւրոց. Հաստատեալ ՚ի միտս իւր, թէ ոչ կարէր ընդդէմ կալ զօրութեանցն, զորոց ներգործաբար ունէր զհրամանատարութիւն, կալաւ զբարձրագոյն իմն եղանակ. և վերացոյց զդիմակ չափաւորութեն, ընդ որով ծածկեալ էր

1520
24 յու-
նի.
Անխո-
հեմ
Գնացք
Կոր-
թէսի:

ցայնժամ զվախճանս իւր. Ոմանք 'ի Մեքսիքացւոց, որք իմանային զլեզուն Սպանիացի, լուան զթշնամանական խօսս արտաբերեալս 'ի Քօրթիսէ. և այսոքիկ հառուցեալք առ քաղաքակիցս իւրեանց՝ բաւական եղեն առ 'ի վերստին վառել զհանրական կատաղութիւն. Քաջիսկ յայտնի տեսանէին նոքա, թէ դիտաւորութիւնք սպարապետին էին արիւնախանձք ըստ դիտաւորութեանցն Ալվարատայ. և թէ նախկին նպատակ իւր 'ի գալն յայցելութիւն այնր աշխարհի ոչ էր, ոպ՟ կարծիւր, առ 'ի խնդրել զդաշնակցութիւն ինքնակալին իւրեանց, այլ առ 'ի փորձել զտիրապետութիւն տէրութեանց իւրեանց. Ապա առին վերստին զզէնս այնու կրկնապատկեալ մոլեգնութեամբ, զոր այսպիսի իմն ծանօթութիւն շնչէր 'ի նս՟. Յարձակեցան 'ի վր՟ երևելի գնդի Սպանիացւոց, որք երթային դէպ մեծ հրապարակին, ուր արարեալ լինէր հրապարական վաճառն. և բռնադատեցին զնա խոյս տալ կորստեամբ իւիք. Հպարտացեալք այսու յաջողութ՟ և ուրախք վս՟ խրազեկ լինելոյն, զի ճնշօղք նց՟ ոչ էին անյաղթելի, յառաջխաղացին 'ի հետագայ աւուրն անսովոր պատերազմական հանդիսիւ առ 'ի մարտնչել ընդ Սպանիացւոց 'ի նոյն իսկ միջնվանս նց՟. Անհարկու էր թիւ նց՟, այլ ևս առաւել անվեհեր քաջասրտութիւն նց՟. Թէպէտ շարք թնդանօթոյ առնէր զոսկալի կոտորած 'ի մէջ յոգնաթիւ ամբոխից նց՟ խռնելոց յայն անձուկ պողոտայսն, թէպէտ ամ՟ հարուած Սպանիական զինուց մահացու էր առ մերկ մարմինսն, սակայն թափ յարձակմանն բնաւ ոչ նուազէր. Արք նորանորք խուռն վխժէին առ 'ի տեղակալել զդիրս մեռելոցն. և պատահելով նմին օրհասի, այլք գային զկնի նց՟ հաւասարապէս անվեհերք և ծարաւիք վրէժխնդրութեան. Անձագոյն ճգունք քանքարացն և ներհմտութեանն Քօրթիսի ծպաստաւորեալք 'ի կրթեալ քաջութենէ զօ-

Բռնտա-
կան Ըն-
դդմու-
թիւն Մեքսի-
քացւոց:

րաց իւրոց հազիւ բաւէին 'ի պաշտպանել զամրոցս իւր. որոց 'ի ներքս թշնամին աւելի քան զմիանգամ եղև մերձ ընդ մերձ առ 'ի բանալ ըզճանապարհ:

Կօրթէս նայէր ապշութեամբ յանամոքելի զայրանութի ժողովրդեան միոյ, որ երևեցաւ 'ի սկզբան անդ ենթադրել հանդարտաբար ընդ լծով. և որ տոկացեալ էր այնպէս յերկար ժամանակ նեղտանիլ զայն այնչափ համբերութեամբ. Զօրականք Նարվաէզի, որք յիմարաբար պատկերակերպէին հետևելով Կօրթիսի բաժանորդ լինել աւարաց տիրապետեցելոյ երից կայսերութեն, շուարեալ էին 'ի տեսանելն զանձինս շաղեալս 'ի վտանգաւոր պատերազմի միում ընդ թշնամւոյ, որոյ ոյժն միշտ վերընձիւղէր. և անիծանէին յայտնապէս զտկարութի իւրեանց վն այնպէս դիւրակի ունկնդիր լինելոյ խաբուսիկ խոստմանց նորոյ զօրավարի իւրեանց. Բայց շուարումն և քրթմնջանքն ոչ օգտէին ինչ. պիտոյ էր անդ անընդմիջական և անսովոր իմն ճիգն առ 'ի ելանել յայնպիսի սարսափելի ալէկոծութեն. Իսկոյն իբրև նսեմանալ երեկոյին պարտաւորեաց զՄէքսիքացիս յետս քարշել ըստ սովորութեն իւրեանց դադարելոյ 'ի թշնամութեն յորժամ մտանէ արևն, Կօրթէս խորհեցաւ նախապատրաստել առ յարձակումն իմն և այնպիսի բուռն զօրութեամբ, մինչև լինել յաստիճանի՝ կամ արտաքսելոյ զթշնամին 'ի քաղաքէն, կամ հարկադրելոյ զնա ունկն դնել առաջադրութեանց իրաւախոհութեն:

Տոկա-ղանի Մէք-սիքաց-ւոց:

Առաջնորդէր նա ինքն անձամբ գնդացն կարգելոյ առ այս վախճան. բովանդակ գիւտք ծանուցեալք յարհեստի Եւրոպական պատերազմին, բովանդակ զգուշութիւնք թելադրեալք նմա յերկար դիտողութե հանգամանաց Հնդկաց պատերազմելոյն՝ 'ի գործ ածեալ եղեն առ 'ի ապահովացուցանել զբարի իմն ելս. բայց եգիտ նա զթշնա-

Կօրթէս յարձակի 'ի վերայ Մէքսիքացւոց առանց յաջողութե:

նամին նախապատրաստեալ և որոշեալ առ 'ի ընդդէմ կալ նմա. Զօրութիւն Մոսկուացւոց մեծապէս աճեցեալ էր 'ի նորանոր վաշտից, որք խուռն ընթանային շարունակաբար յամ̃ աշխարհէն. և սրտեղութի նց̃ ոչ երբէք գաղջանայր. Աղքա գային ընդածնայք յաղնուականաց իւրեանց, բորբոքեալք 'ի յորդորանաց քահանայից իւրեանց. և պատերազմէին վս̃ պաշտպանութեն տաճարաց իւրեանց և տանց իւրեանց և առաջի կանանց և որդւոց. Այլ ինչ օգտելով բազմութի նց̃ և մոլեկան արհամարհութիւն վտանգին և մահուն՝ յորժամ Սպանիացիք ժամանէին կոխել զնս, վերնագունութեն արհեստին և զինուց սոցա պարաւանդեր զնոսա տեղի տալ. Նոյն յանձուկ փողոցսն, և ուր կամուրջք հաղորդակցութեն խորտակեալ էին, Սպանիացիք ը̃ շաւուն, որով յառաջէին, ենթադրեալ էին հեղեղաց նետից և քարանց, որք հոսէին 'ի վայր 'ի տանեաց տանց. Զկնի աւուր միոյ անընդհատ աշխատութեն, թէպէտ անկեալ էր մեծ բազմութի Մոսկուացւոց և մասն քաղաքին այրեցեալ, Սպանիացիք յաղեալք կոտորածիւ, և ճնշեալք 'ի բազմութենէ թշնամեաց, որք շարունակաբար յաջորդէին միմեանց, հարկադրեցան յետս նահանջել դառնութբ̃ վասն ոչ առնելոյն ինչ, որ փոխարինէր զկորուստ երկոտասան զինուորաց սպանելոց և շուրջ վաթսնից վիրաւորելոց. Նաև իմ̃ գոյթ ևս և մեծագոյն ուժգնութբ̃ ոչ յաջողեցաւ բնաւ առաւել գործունեայ քան զանցեալն. և նոյն իսկ սպարապետն մնաց խոցեալ 'ի ձեռին միում:

ՄՃԱԸԷ-
ծուլա
շարու-
շար վրա
-էալ 'ի
ջենաց:

Յայնժամ ծանեաւ Մօրթէս, բայց կարի անագան՝ զճակատագրական մոլորութիւն, առ որ ածեալ էր զնա անգոսնելն իւր զՄոսկուացիս. և մնաց յաղթահարեալ, թէ ոչ ևս կարէր պահել զհետ իւր 'ի կեդրոնի քաղաքի միոյ թշնամւոյ և ոչ փախչիլ առանց դնելոյ զանձն 'ի մօտատալուտ իմն վտանգ. Մի միայն հնարք մնայր, այս է, փորձելոյ, թէ զինչ ներգործութի առնէր միջնորդութի Մոնթէծումայի 'ի սանձահարել զհպատակս իւր. Յորժամ Մէսսիքացիք վերստին մերձեցան 'ի հետեւեալ աւուրն առ 'ի գրոհ տալ, տարաբաղդ արքայն յիշխանութեն Սպանիացւոց և վերածեալ առ թշուառական հարկ լինելոյ գործիք խայտառակութեն իւրոյ և գերութեն ժողովրդեան իւրոյ՝ ել մինչ և 'ի շրջանակս պարսպին զարդարեալ արքայական նախորտիւ իւրով և բովանդակ շքովն, որով սովոր էր երևիլ 'ի հանդիսաւորագոյն առիթս:

(21) ‖ Զայսոսիկ խօսս առեալ եմ յանանուն պատմութենէ բնակութեանց Եւրոպացւոց յԱմերիկա՝ հրատարակեցելոյ 'ի Տօձլէյեայ յերկուս մատենանս՝ գործ այնքան արժանաւոր, մինչ զի զմտաւ ածեմ ես, թէ չիք պատմագիր 'ի մերում դարու, որ յաղօթ համարիցի խոստովանել զանձն այնր հեղինակ. Թարգմանեալ եղև 'ի պարոն Ճ'իտաուսայ գաղղիերէն և տպեալ 'ի Փարէզ առ Մէրլինու. յամին 1767. Ճ'իամպաթիսթա Նովէլլի 'ի Վենէտիկ տպագրեաց զիտալական ինչ թարգմանութի նորա: ‖

'Ի տեսանելն զինքնակալ իւրեանց, զոր յերկար ժամանակաց հետէ պատուէին, և հաշուէին թէ պաշտէին իբր ած ոմն, անկան 'ի ձեռաց նց զէնք, ամ լեզու համրացաւ, ամենեքեան կորացուցին զգլուխս իւրեանց, և յոլովք անկան 'ի վր երեսաց յերկիր. Մոնթէծումա 'ի գործ եդ զամ առ 'ի ցածուցանել զմոլեգնութի նց և համոզել զնս առ 'ի կասիլ 'ի թշնամութենցն. Իբրև վախճանեաց նա զզրոյց իւր անբարբառ իմն շշնջիւն անհաւանութեն սփռեցաւ ը բոլոր ժողովն. յետ այսորիկ եկին թշնամանք և սպառնալիք. և կատաղութի նց անցանելով 'ի միում վայրկենի ը սահմանս ակնածութեն, սլացան այնպիսի բազմութն 'ի վն պարսպացն սլաքք և քարինք, մինչչև յառաջքան զունիլն ժամանակ զօրականացն Սպանիացւոց կարգելոյ առ 'ի պատսպարել ըզՄօնթէծումա՝ ամբառնալոյ զասպարսն 'ի պաշտպանութի նր, երկու տէգք խոցեցին զեղկելի արքայն, և հարուած մի քարի 'ի քունն տապածեաց զնա յերկիր. Ի տեսանելն զնա անկանիլ Մեքսիքացիք զգացին զինքեանս այնպ զարհուրեալս, մինչչև անցիւք կարի սովորականօք 'ի ժողովրդական աղմուկս՝ անցին 'ի միում վայրկենի ծագէ 'ի ծագ. յաջորդեաց թշնամանացն խայթումն մտաց. և փախեան յիւրաքանչիւր կողմն սոսկմամբ. ոպ եթէ վրէժխնդրութի երկնից հալածէր զմեծեղեռն ոճիրն գործեալ 'ի նոցանէ. Սպանիացիք տարան զՄօնթէծումա 'ի զատուցեալ սենեակն իւր. և Քօրթէզ ընթացաւ անդր շտապով առ 'ի մխիթարել զնա 'ի տարաբաղդութեն իւրում. Բայց հեգ թագաւորն ծանեաւ զբովանդակ մտադրութի նր. և այսպէս վերստին կենդանանալով բնական ամբարտաւանութի իւր, անարժան համարելով զկեալն յետ այնր վերջին ցածութեն, և զյերկարաձգելն զանհամբաւ իմն կեանս, որ առնէր զնա ոչ միայն կալանաւոր և խաղալիկ թշնամեաց իւրոց, այլև առարկայ արհամարհանաց և գարշման ստրկաց իւրոց՝ 'ի յափշտակութեն իմիք կատաղութեն 'ի բաց կորզեաց զպատանս վիրաց իւրոց. դժկամակեցաւ այնքան յամառութբ առնուլ զսնունդ ինչ. և այսպէս զրաւեաց զտառապեալ աւուրս իւր, 'ի բաց մերժելով քամահանօք զամ ժտանս Սպանիացւոց՝ որ վն ընդունելոյ զքրիստոնէական հաւատս:

Նոր [illegible] [illegible]. Զանդիպեալ մահն Մօնթէծումայի և Քօրթէզ կորուսեալ զամ յոյս գալոյ 'ի հաշտութի ընդ Մեքսիքացւոց, ոչ ետես զայլ հնարս ապահովութեն, բայց եթէ ձեռնարկել 'ի փախուստ ինչ.

և սկսաւ վաղվաղակի նախապատրաստիլ առ այն՝ երբ յեղակարծ իմն շարժումն Մեքսիքացւոց գրաւեաց զնա 'ի նոր մրցմունս. Տիրացան ս՟ք բարձրագոյն աշտարակին 'ի մեծագոյն մեհենին, որ դերամբարձ էր 'ի վ՟ր օթեվանացն Սպանիացւոց. և դնելով անդէն պահապանս 'ի հմտագոյն մարտկաց իւրեանց, արարին այնպէս, զի ոչ ոք Սպանիացի կարէր շարժիլ ա՟ռնց նշաւակ լինելոյ հարուածոց ն՟ց. Նմա պիտոյ էր վտարել զն՟ս յայսմ տեղւոջէ որով և իցէ վտանգաւ. և Յոհաննէս Եսքուպար ընկալաւ զհրաման կռուելոյ ընդ նոսա յոգնաթիւ հատուածով զօրականաց. բայց նա թէպէտև քաջ զօրագլուխ և հրամանատար զօրաց սովորելոց 'ի յաղթել և որք պատերազմէին առաջի աչաց իւրոց, երիցս անգամ մղեցաւ յետս. Կորթէս ճանաչելով, թէ համբաւ և փըրկութ՟ի զօրաց իւրոց կախեալ կային զբարի ելից այսր յարձակման, հրամայեաց կապել զվահան մի 'ի վիրաւորեալ բազուկն իւր, և 'ի բուռն արկեալ զսուրն սլացաւ, ուր եռացեալ էր կռիւն. Սպանիացիք քաջալերեալք 'ի ներկայութ՟է սպարապետին իւրեանց դարձան վերստին 'ի շահատակութ՟ի այնպիսի կորովութ՟բ, մինչ զի սակաւ առ սակաւ արարին ճանապարհ ընդ աստիճանսն սանդղոցն. և մղեցին զՄեքսիքացիս մինչև 'ի սկաւառակաձևն 'ի գագաթն աշտարակին. Սկսաւ անդէն ամէհի իմն կոտորած և երկու երիտասարդք Մեքսիքացիք նշանաւորք քաջութ՟բ՝ նկատելով զԿորթէս, զի խրախուսէր զիւրսն և բարբառով և օրինակաւ, որոշեցին զոհել զսեպհական կեանս իւրեանց առ 'ի բառնալ աշխարհէ զսկզբնապատճառն ա՟մ թշուառութ՟եց, որք յատակէին զերկիր իւրեանց. Մատեան առ նա, 'ի բաց եդին զզէնս, 'ի ծունր իջանելով յերկիր 'ի ներգործութ՟ե պաղատաւորաց, որք անձնատուր լինին. և յափշտակեալ զնա 'ի քթթել ական, տարան զնա հապճեպ 'ի մի՟ շրջանակացն . յորոց ընկեցին զանձինս գլխի վայր յուսով քարշելոյ զնա զկնի յանկման իւրեանց. Բայց Կորթէս ուժեղութ՟բ և արագութ՟բ իւրով գիտաց փրծանիլ 'ի ձեռաց նց՟. և քաջազուն երիտասարդքն կորեան յայսմ ազնուական, թէպէտ ապերջանիկ՝ հայթհայթանս ապրեցուցանելոյ զհայրենիս իւրեանց. Իսկոյն իբրև տիրեցին Սպանիացիք աշտարակին, հրձիգ արարին. և առանց խռնեալ լինելոյ այլևս շարունակեցին առ 'ի նախապատրաստիլ առ փախուստ:

Սպանիացիք 'ի բաց թողուն զքաղաքն :

Այս լինէր այնչափ առաւել կարևոր, վասն զի Մեքսիքացիք պակուցեալք 'ի վերջին ճգանց քաջութեան Սպանիացւոց սկսան այլայլել զբոլոր կարգադրութիւն թշնամութեան իւրեանց և փոխանակ առնելոյ զշարունակ յարձակմունս, ջանային ցանկելով զճանապարհսն և քանդելով զմայթսն խափանել զհաղորդութիւն Սպանիացւոց ընդ ցամաքին. և այսպէս մահացուցանել քաղցու զթըշնամին, զոր ոչ կարէին նուաճել. Առաջին յօդուածն բացորոշելի էր, մի թէ պարտէին ելանել 'ի դուրս 'ի տուընջեանն, յորում կարէին տեսանել զվտանգն, կանոնաւորել զշարժմունս իւրեանց, և ընդդէմ կալ յարձակմանց թշնամւոյն, կամ թէ լաւ ևս լինէր խոյս տալ գաղտաբար 'ի գիշերային ժամանակի. Նախադասեալ եղև այս վերջին մասն վն՟ յուսոյն, թէ սնոտիապաշտութիւն նահանջէր զՄեքսիքացիս 'ի պատերազմելոյ յայնմ ժամու. և զի զօրական մի, որ պանծայր յաստղաբանութիւն, և որ մեծ համբաւ ստացեալ էր անձին կանխասացութեամբք իւրովք, ապահովացուցանէր զնս լրբաբար զբարի յաջողութեան, եթէ յայնմ գիշերի չուէին. Ապա սկսան շարժիլ զմէջ գիշերաւն յերիս բաժանմունս. Սանտովալ ածէր զյառաջապահսն. Պետրոս Ալվարատոս և Վելասքուէզ Լէօնեան ու-

ունէին զառաջնորդութիւն վերջապահացն. և Քօրթէս հրամայէր մէջոյն. ուր եդեալ էր զհրետանաւորսն, յորս էին ուստր մի և երկու դստերք Մոնթեզումայի 'ի միասին ընդ յոգունց Մեքսիքացւոց նշանաւորաց, թնդանօթք, կարասիք և կամուրջ մի կրելի վն ձգելոյ 'ի վերայ կտրօնից մայթիցն. Զուէին Սպանիացիք մեծաւ կարգաւ և լռութբ ընդ այն ճանապարհ, որ ածէր 'ի Թագուպա. վաղն էր կարճագոյն քան զայլս ամ. և գոլով հեռի 'ի ճանապարհէ Թլասքալայի և 'ի Ծովեզերէն, նմին իրի Մեքսիքացիք նուազ վնասեալ էին. Հասին առ առաջին հատուածն առանց ինչ խուչի, հաւատալով, թէ փախուստ իւրեանց ոչ էր ծանուցեալ:

Մեքսիքացիք նշմարեալ էին զամ շարժմունս նց, Սոր-
և արարեալ զդիպաւոր կարգադրութիւս վն առա- փա-
ւել իմն ահարկու մարտի. Մինչդեռ Սպանիացիք ցեալ
կային մտադրեալք 'ի ձգել զկամուրջ իւրեանց 'է Մէ-
'ի վր հատուածոյն. և զբաղէին ածել 'ի վե- աէրայ-
րայ զերիվարսն և զթնդանօթսն, լուան յանկար- այ:
ծակի զսարսափելի ձայն պատերազմական գործեաց և ընդհանրական աղաղակ անհամար իմն բազմութն թշնամեաց. Լիճն ծածկեալ եղև քանօէիւք. տարափ իմն նետից և քարանց տեղայր յամ կողմանց. Մեքսիքացիք խուժեցին անպատմելի իմն թափով, որպս եթէ յուսային յայնմ վայրկենի առնուլ զվրէժ ամ վնասուց իւրեանց. Դժբաղդաբար փայտեայ կամուրջն յաղագս ծանրութն թնդանօթացն և երիվարացն էր այնպէս ուժգնակի մխեալ 'ի մէջ տղմոյ և քարանցն, մինչզի անկարելի լինէր կարողանալ'ի բաց շարժել զայն. Արտաբնկեալք յայսմ պատահմանէ Սպանիացիք յառաջադէմ եղեն կատաղութբ դէպ երկրորդ հատուածոյն. Մեքսիքացիք պաշարեցին զնս յամ կողմանց. և թէպէտ նոքա պաշտպանէին զանձինս սովորական քաջասրտութբ իւրեանց,

ծանց, սակայն խճողեալք, ուր և էին, յանձուկ մայթի, արհեստ նց և գիտութիւն զինուորական սակաւ զօրեցին. և ոչ աղօտ գիշերոյն թողացոյց նց հանել զմեծ շահ 'ի թնդանօթոցն և 'ի վերնագունութենէ այլոց զինուց նց. Բովանդակ Մէքսիկօ էր 'ի շարժման. և ժողովուրդն ցուցանէր այնպէս ծարաւի ընջելոյ զհարստահարիչս իւր, մինչզի նոքա, որք ոչ էին ըստ բաւականին մերձ առ 'ի նեղել զնս, անհանդուրժք առ յապաղումն, մղէին զայլս, որք էին առաջի նց, այնպիսի բռնութբ, որում ոչինչ կարէր ընդդէմ կալ. Նոր մարտիկք լնուին առ ժամայն զտեղի նց, որք անկանէին. Սպանիացիք պարտասեալք 'ի կոտորածէն և անընդունակք զդէմ ունելոյ թափոյ հեղեղին, որ անկանէր 'ի վր նոցա, սկսան տեղի տալ. 'Ի միում րոպէի շփոթութիւն եղև հանրական. հեծելազօրք և հետևակք զօրագլուխք և զօրականք, բարեկամք և թշնամիք խառնեցան 'ի միասին. և մինչ պատերազմէին ամենեքեան և բազումք կորնչէին, հազիւ կարէր տարորոշել, թէ յորմէ ձեռանէ գայր հարուածն:

Տառապանք նոցա:

Կորթէս իբր հարիւր հետևակօք և սակաւագոյն ևս հեծելովք արար ճանապարհ 'ի վերայ երկուց հատուածոցն, որք մնացեալ էին 'ի մայթին, մարմինք մեռելոցն ծառայելով լնուլ զփոսսն. և եհաս 'ի ցամաք. Կարգաւորելով զիւրսն 'ի պատերազմ դարձաւ անդրէն հանդերձ նոքօք, որք տակաւին էին յարմարք առ ծառայութիւն վասն ընթերակայ լինելոյ բարեկամաց իւրոց 'ի փախստեանն, և վր քաջալերելոյ զնս ներկայութբ իւրով և օրինակաւն առ 'ի յարատևել 'ի ճգունս կարևորս առ 'ի բարեպէս արդիւնացուցանել ըզմարտն. Մասն ինչ զօրականաց իւրոց հանդիսացաւ 'ի վերայ թշնամեաց իւրոց. Բայց մեծագոյն թիւ նց կամ ճմլեալ եղև 'ի բազմութենէ հրոսակացն, կամ ընկղմեցաւ 'ի ճախճին. Խոցաւ նա զաղխողորմ ողջս ամանց, զորս Մէքսիքացիք կալեալ էին կենդանի, և տանէին յաղթանակաւ առ 'ի զոհել զն̃ն ա̃յ պատերազմին. Մնացեալքն նոցա, որք յաւելեալ էին 'ի կոտորածէն, ժողովեցան յառաջ քան զտիւն 'ի Թաքուպա. բայց յորժամ ծագեաց արշալոյսն և ակն յանդիման եղև Քօրթիսի քրքրեալ գունդն իւր նուազել քան զկէսն, և ետես զկենդանի մնացեալսն վըշտագնեալս և զմեծ մասն նց̃ ծանրաբեռնեալս վէրօք. Մտածութիւն այնր, զոր կրեալ էին և յիշատակ այնքան բարեկամաց և քաջ ընկերաց, որք անկեալ էին 'ի սոսկալի գիշերին յայնմիկ, խոցեաց զսիրտ նր̃ այնպիսի անձկութեամբ, մինչ զի յորժամ կայր նա 'ի կարգադրել զգունդսն, և 'ի տալ զկարևոր հրամանսն, զօրականքն տեսին զարտասուս հոսել յաչաց նր̃. և նկատեցին բազում հաճութեամբ, զի մինչ կատարէր նա զպարտս սպարապետի՝ ոչ էր անզգայ առ զգածմունս մարդոյ:

Յայսմ մահաբեր փախստեան մեռան բազում զօրագլուխք երևելիք և 'ի մէջ սոցա Վէլասքուէզ Լէօնեան, որ լքանելով զկողմն ազգականին իւրոյ բդեշխին Քուպայի առ 'ի զհետ երթալ բաղդի ընկերաց իւրոց՝ վն̃ այսպիսի պատճառի և ևս վասն վերնագոյն արժանեաց իւրոց ակնածեալ էր 'ի նոցանէ իբրև երկրորդ անձն 'ի մէջ զօրացն: Լա նո- չէտրիստէ

(22) ‖ Վիպասանք ժամանակակիցք տարբերին երևելաբար վերահայեցմամբ կորստեանն Սպանիացւոց յայսմ առթի. Քօրթէզ յերկրորդ նամակագրութե̃ն իւրում առ կայսրն հաստատէ ըզթիւն միայն առ հարիւր յիսուն արս. Բայց էր շահ անձին իւրոյ յայնմ ձախորդութե̃ն պահել թաքուն յարքունեացն Սպանիոյ զբովանդակ կորուստն, զոր կրեալ էր. Տէսօլիսն ջանալով միշտ նուազել զչ̃մ փորձանս պատահելոց հայրենակ-

ցաց իւրոց՝ դատի զկորուստն շուրջ երկերիւր արանց. Տիաց ասէ, թէ կորեան 'ի նոցանէ ութնհարիւր եօթանասուն, և թէ միայն չորեքհարիւր քառասունք զերծան 'ի Մէքսիքօէ. Փալաֆօքս Եպիսկոպոսն Լօսանճէլէսայ, որ երևի բարուք քննել զգործս հայրենակցաց իւրոց 'ի Նորն Սպանիա, հաստատէ զպատմութի̃ Տիացու նկատմամբ տարածութե̃ն կորստեանց նց̃. Կօմարա կամի լինել կորուստ չորեքհարիւր յիսուն արանց. Յետ ամսոց ինչ յորժամ Քօրթէս ընկալաւ զպէտս օգնութի̃ս, արար հանդէս զօրաց իւրոց. և եգիտ զն̃ս թըւով հինգհարիւր իննսուն. Ապա ուրեմն՝ այնու զի Նարվաէզ տարաւ 'ի Նորն Սպանիա արս ութնհարիւր ութսուն, և շուրջ չորեքհարիւր էին յայնժամ կենդանի զինուորք Քօրթիսի, յայտնի է, թէ կորուստ իւր 'ի փախչելն 'ի Մէքսիքօէ պարտէր լինել բազմօք առաւել երևելի քան զայն, զոր նա գնէ. Տիաց փոյթ մեծացուցանելոյ զվտանգս և զչարչարանս, որոց ինքն և ընկերք իւր տիրապետօղք ենթադրեալ էին, երևի բարդեալ զկորուստ նց̃. բայց ըստ իմ կարծեաց ոչ կարէ համարիլ նուազ քան զվեցհարիւր արս: ‖

Կորեան բովանդակ թնդանօթք, զէնք և կարասիք, մեծագոյն մասն երիվարաց. և աւելի քան զերկուհազար Թլասքալացիք բնաջինջ եղեն. և ոչ ապրեցաւ, բայց եթէ փոքրիկ բաժին գանձուն, զոր կուտեալ էին. Այն՝ որ լեալ էր միշտ նախկին առարկայ նց̃, եղև պատճառ իմն հզօր թշուառութե̃ն իւրեանց. որովհետև բազումք 'ի զօրականաց գոլով բեռնաւորեալք գօտեօք ոսկւոյ այնպէս, զի առնէին զն̃ս անյարմարս առ պաշտօնն և յամեցուցանէին զփախուստ նց̃, անկան խայտառակաբար զոհ անխորհուրդ ագահութեան իւրեանց. 'Ի մէջ այսքան տառապանաց եղև քաջալերութի̃ լսելն, թէ Ակուիլար և Մարինա, ոբաց պաշտօնք թարգմանչաց ոչ երբէք առաւել ճապէս հարկաւոր լեալ էին, գտանէին ողջ:

Կոծո՛ա րէն փա- խուստ Սղա- նէաց- ւոյ:

Առաջին խորհուրդ Կորթէսի եղև գտանել ապաւէն պարտասեալ զօրաց իւրոց. որովհետև հարստահարելով զնոսա Մեքսիքացիք յամ կողմանէ, և ժողովուրդք Թլաքուպայի սկսանելով առնուլ զէնս, ոչ ևս կարէր նա պահպանել զծիրս իւր. Նկատեաց զգետին մի ամբարձեալ, յորոյ վ̃ կայացեալ էր մեհեան մի, տեղակալեաց զայն. Եգիտ անդէն ոչ միայն ապաստան, որում ցանկայր, այլև որինչ պակասէր նմա մանաւորաբար, այս է, դարմանք ինչ վասն կազդուրելոյ զարս իւր թողեալս անդէն 'ի զօհօղացն. և թէպէտ թշնամին շարունակէր զյարձակմունս իւր ընդ բոլոր օրն, սակայն դոյզն ինչ դժուարութ̃ արգելեալ լինէր առնելոյ զչար ինչ. Կորթէս յայսմ միջոցի պարապէր առնել զսերտ խորհուրդս ընդ զօրագլխաց իւրոյ շուրջ զճանապարհաւ ընտրելեաւ 'ի փախստեան իւրեանց. Այն իրապէս յարևմտեան կողմանէ լճին. Թլասքալա՝ միայն տեղին, ուր կարէին յուսալ զբարեկամական իմն ընդունելութի̃, կայաւորեալ է վաթսուն և չորս մղոնաւ ընդ արևելս Մեքսիքոյ. դմին իրի պարաւանդեալ եղեն յածիլ առ հիւսիսային ափամբ լճին, յառաջ քան զանկանիլն 'ի շաւիղն, որ ածէ անդր. Զօրական մի Թլասքալացի մատոյց զանձն յառաջնորդութի̃ նց̃. և առաջնորդեաց ընդ երկիր ինչ ճախճախուտ 'ի տեղիս տեղիս, և յայլս լի լերամբք և ամ̃ ուրեք ոչ բարւոք մշակեալ և նուազեալ 'ի բնակչաց. Զունեցին զաւուրս վեց սակաւ կամ ոչինչ հանգստեամբ և միշտ յերկիւղի. որովհետև յոգնաթիւ խումբք Մեքսիքացւոց կային նց̃ շուրջ, նեղելով զնս̃ 'ի տարակուսութն̃ մերթ նետիւք իւրեանց և մերթ կռուելով ընդ նա 'ի մօտուստ յառաջոյ, 'ի վերջոյ և 'ի կողմանէ մեծաւ համարձակութ՟. գիտելով ուր ուրեմն փորձիւ, թէ Սպանիացիք ոչ էին անյաղթելի. Բայց աշխատութի՟ և վտանգ յայսց մշտնջենաւոր մրցմանց ոչ էին միայն չարիքն, որոց գտանէին արտադրեալ. Ամլութի՟ երկրին, զոր անցանէին, վերածեաց զն՟ս կերակրիլ բզբօլիւք, արմատովք, և կանթօք կանաչ մայիծայ. և 'ի ժամանակին խակ, յորում քաղցն նուաճէր զոգիս ն՟ց, և բառնայր 'ի նոցանէ զոյժ, կայտառութի՟ ն՟ց պահանջէր զկորովագոյն և զտևողական կրթութի՟ս քաջասրտութ՟ն և գործօնէութ՟ն. 'Ի մէջ այս ամ՟ մանուածոյ տառապանաց մի միայն պարակայ կարող եղև կանգուն պահել և քաջալերել զՍպանիացիս. Սպարապետն տանէր դժբաղդու՟ն անպյայելի իմն անվեհերութ՟ և վեհանձնութ՟, զգաստութի՟ իւր ոչ երբէք եթող զնա. լրջմտութի՟ իւր գիտաց նախատես լինել ամ՟ դիպուածոց և մատոյց դարման հսկողու՟ի իւր. Տայր զանձն միշտ տեսանել առաջին առ 'ի դնել 'ի վտանգի. և հանդուրժէր ամ՟ աշխատանաց մեծաւ զուարթութ՟. Դժուարութիւնքն, յորոց պաշարեալ էր երևէին զարթուցանել 'ի նմա զնորանոր քանքարս. և արք իւր թէպէտ և յուսահատք՝ տակաւին հետևէին նմա միշտ մեծագոյն վստահութ՟ յընդունակութի՟ ն՟ր:

Պատերազմ Օթումպայի:

Հասին 'ի վեցերորդ աւուր յՕթումպա ոչ կարի հեռի 'ի ճանապարհէն ընդ մէջ Մէքսիքօի և Թլասքալայի. 'Ի հետևեալ առաւօտուն վաղքաջ անկան 'ի չու, սրընթաց հատուածոց թշնամեաց հալածելով զն՟ս 'ի վերջոյ. և 'ի մէջ թշնամեացն, զորս ընկերակցէին ընդ ոսոխութեանց իւրեանց, Մարինա նկատեաց, զի աղաղակէին ուրախութ՟. „Գնացէք յառաջ ով աւազակք, գնացէք 'ի տեղին, ուր պատահիցիք պատուհասին, որ պարտի ոճրագործութեանց ձերոց„. Ոչ 'ի միտ առին Սպանիացիք զնշանակեալն այնպիսի սպառնալեաց, մինչև ոչ հասին 'ի գագաթն բարձրաւանդակի միոյ, զոր ունէին յանդիման. Բացաւ աստանօր ընդարձակ իմն հովիտ ակներև նց՟՝ խռնեալ 'ի մեծ բազմութեամբ զօրաց, որ տարածիւր, ցոր վայր աչք կարէին ձգել. Մեքսիքացիք 'ի ժամանակին, յորում գնդաւ իւրք վաշտից իւրեանց նեղէին զՍպանիացիս 'ի փախստեան իւրեանց, գումարեալ էին զնախապետական զօրութիւնս իւրեանց 'ի միւս կողմանէ լճին. և չուելով առ ճանապարհաւն, որ երթայ ուղղակի առ Թլասքալա, դարանեալ էին 'ի դաշտավայրին Օթումպայի. ընդ որ գիտէին թէ անցանելոց էր Քորթէս. Յերևման այնր անհաւատալի բազմութեան, զոր կարէին բովանդակ յակնարկել 'ի գագաթանց անտի, Սպանիացիք մնացին պակուցեալք. ևս և առաւել սըրտեայքն սկսան վհատիլ. Բայց Քորթէս առանց տալոյ երկիւղից նց՟ ժամանակ աճելոյ մտածութեան, յետ խրատելոյ զնս՟ կարճառօտ բանիւ, թէ այլ ընտրութիւն ոչ գոյր, բայց եթէ տիրել կամ մեռանիլ, եած զնս՟ նոյնժամայն 'ի կռիւ. Մեքսիքացիք սպասէին մերձենալոյ նց՟ մեծաւ հաստատութեամբ. Բայց այնպիսի էր վերնագունութիւն արհեստին և զինուցն Սպանիացւոց, զի ոչ կարացին նոքա զդէմ ունել թափոյ այսր փոքրիկ գնդի, որ ընդմտանէր և ցիրուցան առնէր զառաւել յոգնաթիւ գումարտակսն, յոր կողմն և ուղղէր զօրութիւն իւրով. Այլ մինչ նոքա խոյս տային 'ի միում տեղւոջ, նոր մարտիկք ընդառաջ լինէին յայլմէ տեղւոջէ. և Սպանիացիք թէպէտ և բաղդաւորք յառաջնում յարձակման, բայց էին 'ի պատրաստի մնալոյ ընկճեալ 'ի ներքոյ այնց կրկնեալ ճգանց առանց տեսանելոյ զելս ինչ տաժանման իւրեանց և առանց ինչ յուսոյ յաղթութեան. Քորթէս բաղդաւորաբար նշմարեաց յառաջել զմեծ դրօշն կայսերական, որ էր տարեալ առաջի սպարապետին Մեքսիքացւոց. և յուշ ածեալ, թէ լուեալ էր, զի ելք ամ՟ պատերազմի կախեալ կայր 'ի վիճակէ նոյն դրօշին, ժողովեաց զոմանս 'ի կորովագոյն զօրավարաց իւրոց, և զերիվարս, որք տակաւին բարի էին 'ի ծառայել, և անցեալ 'ի գլուխ նոցա, վիժեցաւ այնքան ուժգնութբ՟ յայն կողմն, մինչզի գեր 'ի վերոյ եղև զինչևիցէ խոչի, որ պատրաստիւր նմա առաջի. Ցրևաց զգունդն ազնուական Մ՝էքսիքացւոց, որք պահպանէին զայն. և հարուածով միով նիզակի իւրոյ թոցեաց զպարապետն Մ՝էքսիքացի, տախտապարելով զնա 'ի գետնի. և ամ՟ 'ի հետևողաց իւրոց իջանելով յերիվարէն եդ վախճան կենաց նր՟. և 'ի բուռն արկեալ զկայսերական դրօշն վերառաքեաց զայն առ Քորթէս. 'Ի վայրկենին, յորում անկաւ զօրավար նց՟, և դրօշակն, առ որ ամենեքեան ուղղէին զհայեցուածս իւրեանց, աներևութացաւ, երկիւղ իմն անտի պաշարեաց զսիրտս Մ՝էքսիքացւոց առ հասարակ. և ոչ եթէ կապն, որ պնդեալ ունէր զնս 'ի միասին, լուծեալ էր. այլ ամ՟ նշան ցածուցաւ. իւրաքանչիւր զօրական ընկէց զզէնս. և ամենեքեան փախեան տագնապաւ 'ի լերինս. Սպանիացիք անկարօղք հետամուտ լինելոյ նոցա՝ դարձան յասպարէզ պատերազմին. ուր գտին աւար այնպէս մեծ արժողութբ՟, զի վճարեաց ըղհարստութիւն թողեալս 'ի Մ՝էքսիքօ. որովհետև նախապետական մարտիկք տարեալ էին ընդ իւրեանս յայնպիսի դիպաւորութն՟ զառաւել մեծագին կահս իւրեանց, ոչ եթէ երթային առ հաւաստի իմն յաղթութիւն. 'Ի հետևեալ աւուրն հանդերձ մեծամեծ գոհարօք իւրեանց մտին 'ի սահմանս Թլասքալացւոց:

Ընդունելութիւն

Բայց 'ի մէջ բերկրութն՟ ելեալ լինելոյ յերկրէն թշնամեաց՝ ոչ կարէին հանգչել 'ի վն՟ ապագային, գոլով տակաւին անստոյգք, թէ որպիսի ասպնջականութեան պատահէին 'ի դաշնա-

Բաղա- նէացւոց 'ի Թլասքալա :

նաւորացն. առ որս վերադառնային 'ի վիճակի միում յոյժ տարբեր եղելոյ յայնմանէ, յորում փոքր մի յառաջ մեկնեալ էին 'ի տէրութենց նց̃. Ս̃ բարեբաղդութեն իւրեանց թշնամութի Թղլասքալացւոց ընդդէմ Մեքսիքացւոց էր այնպէս հնացեալ, և ցանկութի նց̃ խնդրելոյ զվրէժ մահու հայրենակցաց իւրեանց այնպէս որոշեալ, և վերնագունութին, զոր Քորթէս ստացեալ էր 'ի վե̃ գլխաւորաց հասարակապետութեանն, այնպէս լցեալ, մինչզի հեռի 'ի յղանալոյ զխորհուրդ ինչ շահաւորելոյ 'ի թշուառ կացաւորութէ նց̃, ընկալան զնա խանդաղատութեամբ իմն և սեռն սիրով. որք իսկևիսկ փարատեցին զմա̃ կասկածանս նոցա։

Նոր ձեռնարկութիւնք Քորթէսի։

Նշմարեալ իմն անդորրութեն և հանգստեան վերջապէս կարևոր էր բացարձակաբար. որպզի Սպանիացիք միտ դիցեն դարմանոյ վիրաց իւրեանց կարի յերկար ժամանակ անխնամ եղելոց և նորոգեսցեն զզօրութիս իւրեանց սպառեալս 'ի շարունակ իմն յաջորդութէ աշխատանաց և լլկանաց. Յայսմ վայրի Քորթէս ընկալաւ զծանօթութի, թէ ինքն և ընկերք իւր ոչ էին միայն Սպանիացիքն, որք փորձեալ էին զարդիւնս Մեքսիքացւոց թշնամութեն. Երեւելի իմն հատուած Զէմփօալացւոց, որ չու առնէր դէպ մայրաքաղաքին, կոտորեալ էր 'ի ժողովրդոցն Թեփէաքայ. Փոքրիկ իմն խումբ, որ դառնայր 'ի Թղլասքալայէ առ Վէրաքրօչէ հանդերձ բաժնիւ ոսկւոյ Մեքսիքօի սահմանեցելոյ վն̃ պահպանութեն, յանկարծ ըմբռնեալ և սպանեալ էին 'ի լերինս. 'Ի ժամանակին, յորում կեանք միոյ և եթ Սպանիացւոյ էր մեծագոյն կշռով, այսպիսի կորուստք պատճառէին զմեծ իմն ցաւ. այլ նոյն իսկ խորհուրդք, զոր խորհէր Քորթէս, առնէին զայնս նմա մասնաւորաբար ծայրագոյն վէշտ. Մինչդեռ բարեկամք իւր, այլև բաղումք 'ի յաբելոց իւրոց նկատէին զձախողակ վիճակ զինուց իւրոց. և պատկերակերպէին թէ այլ զերծումն ոչ գոյր նոցա ուր ուրեմն, բայց եթէ 'ի բաց թողուլ զերկիրն, յոր նա մնեալ էր այնպիսի անհաւասար զօրութեամբ, ոգի նորա յարատեական, ոչինչ նուաղ և անվեհեր, միշտ մտեալ էր առ 'ի տանիլ 'ի գլուխ զխորհուրդ իւր ենթարկելոյ զՄէքսիքեան կայսրութիւն ընդ թագաւորութեամբ Կաստիլիոյ. Որչափ և ամեհի էր և անակնկալ ձախորդութիւն կրեալ 'ի նմանէ, ոչ երբէք նմա բաւական պատճառ վասն բարձի թողի առնելոյ զտիրապետութիւն, զորս արարեալ էր, կամ վասն ոչ վերանալոյ զգործողութիւն սկսեալս 'ի նմանէ, և զորոց յուսայր զբաղդաւորագոյն ելս. Հարգունութիւն 'ի Վէրաքրուզէ ոչ միայն էր ողջ, այլ և ոչ էր բնաւ հարստահարեալ. Ժողովուրդն Զէմփօալայի և մերձակայ նահանգաց ոչ էին տուեալ նշան կամելոյ ապստամբիլ. Թլասքալացիք շարունակէին լինել հաւատարիմ առ դաշնաւորութիւն իւրեանց. սպասէր հզօր իմն օգնութիւն 'ի պատերազմասէր բարուց նոցա դիւրաշարժ առ զէնս և վառեալ անհաշտելի ատելութեամբ ընդդէմ Մէքսիքացւոց. Ունէր տակաւին զհրամանատարութիւն գնդի միոյ Սպանիացւոց հաւասար թուով այնմ, որով բացեալ էր զճանապարհ 'ի կեդրոն կայսրութեանն, և տիրեալ մայրաքաղաքին. և այսպէս 'ի ձեռն մեծագոյն փորձառութեանն և կատարելագոյն իմն ճանաչմամբ երկրին ոչ անյուսանայր վերստին ստանալոյ փութանակի զայն ամենայն, յորմէ կողոպտեալ էր 'ի ձախող դիպուածոյ:

Հանգամանքն, վերոյ Քաղաքն հարկանէ : Ի այսու խորհրդով պատուասիրեաց այնչափ մտադրութեամբ զգլխաւորսն Թլասքալացւոց, և բաշխեաց 'ի մէջ նոցա այնպէս առատաձեռն զհարուստ կողոպուտս Օթումպայի, մինչզի ապահով էր ընդունելոյ զայն, զոր խնդրէր 'ի ծերակուտէն. Նա բերել համբարս և զերկուս կամ զերիս թընդանօթս մեծամեծս 'ի Վերաքրոչեայ. Առաքեաց զզօրագլուխ մի իւր մտերիմ չորիւք նաւուք ՝Նաւահանդիսին ՝Նարվաիզի 'ի Սպանիոլա և 'ի Ճ'իամայիքա առ 'ի գրաւել զբաղդորդս, առ 'ի գնել զերիվարս, վառօդս և զայլ զէնս. Ապա գիտելով, թէ ընդունայն էր ձեռնարկելն յառումն Մ՝էքսիքոյ, եթէ ոչ ապահովացուցանէր ինքեան զհրամանն 'ի վ՟ լճին, առաքեաց նախապատրաստել 'ի լերինս Թլասքալայի զատաղձս առ 'ի կերտել երկոտասան պրիկանթինս. որպ՟զի ոչ պիտոյցի ինչ աւելի, բայց եթէ միաւորել զկտորսն 'ի միասին առ 'ի ձգել զնաւսն 'ի ջուր, յորժամ պիտոյանայցէ ծառայեցուցանել զն՟ս:

Այլ մինչդեռ յառաջատես մտադրութի՟ առնէր նա զքայլս կարևորս վասն բարւոք կատարելոյ զշարժմունս իւր, ծնաւ 'ի տան իւրում խոչ մի որչափ առաւել անակնկալ, այնչափ առաւել ահարկու. Հոգի անհաճութե՟ն և ապստամբութե՟ն յայտնեցաւ 'ի զօրս իւր. Բազումք 'ի հետևողացն ՝Նարվաիզի էին մնացեալ բնակաւորք, քան թէ զինուորք և ընկերակցեալ ընդ նմա 'ի նորն Սպանիա անձնաշահ յուսով ստանալոյ ըզկայունութի՟ս, և սակաւ տրամադրութի՟ դիմադրաւ լինելոյ 'ի խստութի՟ս և 'ի վտանգս պատերազմի. Նաև քանզի նոյն պատճառք շարժեալ էին զն՟ս գրիլ ընդ Քորթեսի, հազիւ թէ գիտացին զբնութի՟ այնր ծառայութե՟ն, իսկոյն ստրջացան դառնապէս վ՟ ընդ գրկելոյն զայն. 'Ի նոցանէ այնոքիկ, որք կալան զբարեբաղդութի՟ կենդանի մնալոյ յետ վտանգաւոր պատահարացն, յորս անխոհեմութի՟ իւրեանց շաղեալ էր զն՟ս, երջանկաբար գոլով փախուցեալք յայնցանէ, դողային 'ի խորհիլն, թէ կարելի էր նց՟ միւսանգամ լինել յայնպիսի վտանգս. Իսկ և իսկ իբրև տեսին զձգտմունս Քորթեսի, սկսան տրտնջել և մեքենայել 'ի ծածուկ. և եղանելով միշտ առա-

ՈԳԻ
ՎՐԴՈՎՈՒԹԵԱՆ
ԾԱԳԷ
'Ի ՎԱՇՏՍ
ԻՒՐ:

ւել ժպիրհք՝ առաջի արարին խմբովին ապարապետի իւրեանց զցոյց մի ընդդէմ՝ զանխոհեմութեան կռուելոյ ընդ հզօր Թագաւորութեան իմիք գծուծ զօրութեամբք իւրովք. և խնդրեցին 'ի նմանէ համարձակ վերածել անդրէն 'ի Կուբա. 'Ի զուր Կորթէս վարժ յերկար ժամանակաց հետէ յարհեստին հրամայելոյ՝ 'ի կիր էարկ առարկութիւս, աղաչանս և պարգեւս առ 'ի յաղթահարել զնա, կամ ամոքել. 'Ի զուր զօրականք իւր քաջալերեալք 'ի ոգւոյ զօրավարին իւրեանց նպաստէին ջերմարար փութով նմա. Ուանեաւ նա, թէ երկիւղ նոցա էր կարի բուռն և կարի խորապէս արմատացեալ, մինչև անցրելի լինել. և աւելին, զոր կարօղ եղև առնել նա, եղև համոզելն զնա յապաղել զդառնումն առ ժամանակ մի հանդերձ խոստմամբ շնորհելոյ յառաւել նպաստաւոր լծակցութեան իմիք զհրաման երթալոյ այնոցիկ, որք կամիցին զայն :

Զայրա-
հայ-
րեանն,
պար նա
'ի գործ
ածէ առ
'ի վերա-
զին չէն
փոխա-
ցուցա-
նել զէն-
պահո-
Ջէսանն :

Այլ զի տժգոհքն ոչ ունիցին պարապ խորհելոյ 'ի վերայ պատճառաց տհաճութեան, որոշեաց ածել զնոսա 'ի ներգործութիւն անդ առ թշնամին. Առաջի եդ պատուհասել զժողովուրդն Թեփէաքայ վասն թշնամանացն, զոր արարեալ էին. և զի հատուածն, զոր կոտորեցին նոքա, էր մեծագոյն մասամբ բաղկացեալ 'ի զօրականացն, որք զինուորեալ էին ընդ Նարվաէզի, ընկերք նոցա բաղձանօք վրէժխնդրելոյ այնչափ առաւել կամակար դիմագրաւ եղեն յայս պատերազմ. Ինքն անձամբ էառ զհրամանատարութիւն ընկերակցեալ յօգնաթիւ գնդէ Թլասքալացւոց. և 'ի միջոցի սակաւ եօթնեկաց յետ զանազան մաքառմանց մեծաւ կոտորածիւ Թեփէաքացւոց վերածեաց ընդ լծով զայն գաւառ. Ընդ ամիսս ինչ, մինչդեռ սպասեալ կայր օգնութեան արանց և զինուց, և շարունակէր զնախապատրաստութիւնս իւր վասն զինուորածոյ պրիկանթինաց, պատաղեցոյց միշտ ըզ զօրս իւր 'ի պէսպէս յարձակմունս ընդդէմ մերձակայ գաւառացն. որոց բնաւք կատարեցան հաւասար յաջողութ̅բ. Զօրութ̅ այսոցիկ իւրքն յաջողակք եղեն նորոգ առ յաղթութ̅ին. և վերառին զսովորական ճանաչումն վերնագունութեան իւրեանց. Մեքսիքեան կարողութ̅ին տկարացաւ. Թլասքալացի մարտիկք ստացան զվարժութ̅ի պատերազմելոյ լծակցեալք ը̅ Սպանիացւոց. և գլխաւորք հասարակապետութեանն զուարճանային 'ի տեսանելն զերկիր իւրեանց հարստացեալ աւարօք շրջակայ ազգացն. և զարմանալով զօր հանապազ ընդ նորանոր նշանս անյաղթելի կորովուն դաշնաւորաց իւրեանց ոչ խուսէին 'ի վտանգէ իմիք առ 'ի ջատագովել զնն̅ ։

Այս ա̅մ տրամադրութ̅իք նախապատրաստականք՝ թէպէտ և խոհեմագոյնք և գործունէագոյնք, զոր կայաւորութ̅ի Քօրթիսի շնորհէր նմա առնել, լեալ էին սակաւ օգուտք առանց ինչ զօրավիգութ̅ զինուորաց Սպանիացւոց. Նաինքն էր այնպէս խելամտեալ, մինչզի այս էր նախապետական նպատակ մտածութ̅ց իւրոց և բաղձանաց. բայց այսու ա̅միւ երեւէր հեռի և անստոյգ միակ յոյսն, զոր տածէր նա ունելոյ զայն դարձմամբ պաշտօնատարին առաքեցելոյ 'ի նմանէ առ թախանձել զօգնութ̅ի 'ի կղզին. Այլ զայն, 1520 զոր ոչ նախահոգացեալ էին նմա ոչ աչալրջութ̅ի իւր և ոչ կարողութ̅ին, ետ նմա շար իմ̅ն յաջող և անկարծ դիպուածոց. Կղզեաշխն Քուպայի, որում բարեյաջողութ̅ին Նարվաիզի երեւէր դիպուած իմ̅ն անսխալ ստուգութ̅բ, առաքեաց նմա զերկուս փոքրիկ նաւս հանդերձ նոր հրահանգօք և լրմամբ առանց և զինուորական դարմանոց. Բայց պաշտօնատարն կարգեալ 'ի հրամայել 'ի վ̅ի ծովեզերն, քարշեաց զն̅ն յինքն որսալով արուեստակութ̅բ 'ի նաւահանգստին Վէրաքրուչեայ. տիրացաւ նաւուցն. և համոզեաց սա-

Զօրա-
ցեալ 'ի
զանա-
զան օգ-
նութ̅ց ։

կաւ աշխատութի՟ զզինուորսն առ 'ի զհետ երթալ դրօշակին զօրավարի միոյ ընդունակագունի քան զնա, առ որ առաքեալ էին. Յետ սակաւուց երեք այլ նաւք ստուարք եկին զատաբար 'ի նաւահանգիստն. Պատկանէին այսոքիկ առ սպառազինութե՟ իմն պատրաստեալ 'ի Ֆրանչիսկոսէ Կարայիայ բդեշխէ Ճիամմայիքայի, որ շարժեալ 'ի մոլութե՟ երկրագտութե՟ և տիրապետութե՟, որ բորբոքէր զա՟մ Սպանիացի բնակեալ յԱմերիկա, ընդ երկար ժամանակ անձկացեալ էր մտիլ 'ի նահանգ ինչ Նորոյն Սպանիոյ, և բաժանել 'ի Գօրթիսի զփառս և զշահեկանութի՟ միաւորելոյ զայն թագաւորութի՟ ընդ թագաւորութե՟ Գասթիլիոյ. Ինքն և իւրքն արարին անխորհրդաբար զփորձ իւրեանց 'ի մէ՟ հիւսիսային գաւառացն. ուր երկիրն էր աղքատին և բնակեալ յամեհի և 'ի պատերազմական ազգաց. և յետ պատահելոյ բազմաց դժբաղդութե՟ց, քաղցն ստիպեաց զնս դառնալ 'ի Վէրաքրուզէ. և այսպէս ինքնին եկին տալ զանձինս

28 Հով Մէքսիքէ: ընտրողութե՟ հայրենակցաց իւրեանց. Հաւատարմութի՟ նց՟ ոչ կարաց ընդդէմ կալ շքեղ ակնկալութե՟ց և խոստմանցն, որք վաղէսկ խաբեալ էին զայլ բաղդորդսն. և որպէս թէ հոգին ապստամբութե՟ լինէր տարափոխիկ իմն աստ 'ի Նորն Սպանիա, նք՟ թողին 'ի բաց զտ՟րն, որում պարաւանդեալ էին 'ի ծառայել, և գրեցան ընդ Գօրթիսիւ. Բայց ոչ եղև Ամերիկա միայն, որ մատակարարեաց զայսպիսի իմն անակնկալ նպաստ. Եհաս նաւ մի 'ի Սպանիոյ վաճառականաց ոմանց մասնաւորաց՝ բեռնաւորեալ զինուորական դարմանովք յուսով առնելոյ օգտաւէտ ինչ վաճառ յաշխարհի միում. որոյ ընչաւէտութե՟ համբաւ այն ինչ ծաւալիւր ընդ բոլոր Եւրոպիա. Գօրթէս անձկանօք գնեաց զայն բեռն, որ վասն նր՟ ոչ ունէր զգին. և խուժան նաւուն հետևելով

հանրական օրինակին միացաւ ընդ նմա 'ի Թլասքալա։

Յայսց տարբեր անղեաց զօրն Գորթիսի աճեաց երկերիւր ութսուն արամբք և քսան երիվարօք. զօրավիգութիւն այնպէս միջասահման, մինչզի ոչ էր արժանի յիշատակութեան 'ի պատմագրութեան այլոց մասանց երկրագնդոյս. Բայց 'ի կողմանս Ամերիկոյ, ուր մեծամեծ փոփոխութիւնք ծնանէին 'ի պատճառաց բնաւին անհամեմատ եղելոց առ գործն, այսպիսի փոքրիկ պատահմունք լինէին ամենևին ծանրակշիռք. վասնզի բաւական էին որոշել զվիճակէ թագաւորութեանց. Այն, որ հաւաստէր ևս զնշական երջանկութիւն, որ նշմարիւր յոյժ քաջ 'ի պատմութեան Գորթիսի, է, զի երկու անձինք եկեալք առ 'ի հոգալ նմա այնպէս 'ի դէպ ժամու օգնութիւն, էին իւր յայտնի թշնամիք, որք դիմէին առ եղծումն նր. և ոչ գիտէին, բայց եթէ դաւաճանել նմա։

Գորթէս շահաւորեցաւ յայսմ օգնութենէ առ 'ի արձակել զզօրականսն Նարվաիզի, որք միայն ընդդէմ յօժարութեան իւրեանց 'ի ծառայութիւն նր. Իսկ իբրև մեկնեցան նոքա, զօրք իւր բաղկացեալ էր 'ի հինգհարիւր յիսուն արանց հետևակաց. որոց յիսունք զինեալ էին հրետիւք և ումբօք, քառասունքն ձիաւորք, ունելով ևս զկնի զինն թնդանօթս մեծամեծս. Զօրագլուխ սոցա Գորթէս ընկերակցեալ 'ի տասն հազարաց Թլասքալացւոց և այլոց հնդկաց դաշնակցաց անկաւ 'ի չու դէպ Մէսսիքօի 'ի 28 դեկտ. վեց ամսովք զկնի մահահոտ փախստեան իւրոյ յայնմ քաղաքէ։

Թիւ զօրաց իւրոց։

Նախապատրաստութիւն Մէքսիկացւոց վասն պաշտպանութեան իւրեանց

Բայց նա յառաջ խաղայր առ 'ի կռուիլ ընդ Թշնամւոյ միում նախապատրաստեցելոյ ընդունել զնա. 'Ի մահուան Մոնթէծումայի գլխաւորք Մէսսիքացւոց, յորս կայր իրաւունքն ընտրելոյ ըզկայսրն, վաղվաղակի ամբարձեալ էին յաթոռ ըզ-

Գուէթլավաքա զեղբայր նր. Երդուեալ և մաղձի թշնամութի իւր առ Սպանիացիս բաւական էր շահիլ նմա զքուէս նց, թէպէտ և լեալ էր ոչ յոյժ երևելի քաջասրտութբ և քանքարօք. Կալաւ նա զառձեռն իմն առիթ ցուցանելոյ, թէ արժանի էր ընտրութե նց, դիմելով 'ի կանոնաւորել անձամբ զայն ամէհի գրոհսն, որք բռնադատեցին զՍպանիացիս 'ի բաց թողուլ զմայրաքաղաք իւր. և նոյնժամայն իբրև փախուստ նց ետ նմա պարապ ոգի առնլոյ յաշխատութեն, էառ զխորհուրդս առ 'ի խափանել զվերադարձ նց 'ի Մեքսիքօ՝ խոհեմութբ իմն հաւասարաւ հոգւոյն, զոր ցուցեալ էր 'ի վանելն զնս. Յաղագս մօտաւորութե Թլասքալայի դիւրին էր նմա տեղեկանալ զշարժմանց և զձգտմանցն Գօրթիսի. և այսպէս կայր 'ի նկատել զմրրիկն, որ թանձրանայր և փութացաւ յառաջել քան զայն. Նորոգեաց զխրամն, զորս Սպանիացիք արարեալ էին 'ի քաղաքին. և ամրացոյց զայն նորանոր ամրութիւք, զոր ընդունակութի հպատակաց իւրոց գիտէր կատարել. Ապա ցուցանելով զշտեմարանս իւր ամ տեսակօք զինուց՝ կամեցաւ տալ առնել զնիզակս երկայնաձիգս, և դնել 'ի ծայր նց զսուինս և զդաշոյնս առեալս 'ի Սպանիացւոց առ 'ի ընդդէմ կալ թափոյ հեծելոցն. Ազդ արար բովանդակ ժողովրդոց իւրաքանչիւր գաւառի կայսերութենն առնուլ զէնս ընդդէմ ճնշողաց իւրեանց. և առ 'ի յորդորել զնս առնել զայն կորովութբ՝ խոստացաւ արձակել զնս յամ սակից եդելոց 'ի վն նց 'ի նախորդաց իւրեանց. Բայց այն, զոր նախահոգացաւ մեծագոյն խնամով, եղև զրկելն զՍպանիացիս 'ի շահեկանութենցն, զորս հանէին 'ի բարեկամութե Թլասքալացւոց, թևակոխելով յամ հայթհայթանս հաւանեցուցանելոյ զժողովուրդն զայն՝ հրաժարիլ յինչևիցէ վերաբերութե առմարդիկն, որք ոչ միայն էին յայտ յան-

դիգիման թշնամիք աստուծոցն, զորս պաշտէին նոքա, այլ և ոչ պակասէին նուաճել զնս 'ի վախճանի ընդ նովին լծով, զոր նոքա օգնէին դնել 'ի վր այլոց. Այս փաստք ոչ նուազ համոզականք, քանթէ հաստահիմանք յեղյեղցան այնքան ուժգնութբ 'ի դեսպանաց իւրոց, մինչ զի համակ յաջողակութն Քօրթիսի պիտոյացաւ առ 'ի խափանել, զի մի արասցեն զվնասակար տպաւորութն ինչ:

Այլ մինչդեռ Քուէթլաւաքա կարգադրէր զգաղափար իւր վն պաշտպանութն յառաջատեսութբ իմն ընաւին նորով յԱմերիկացւոց միում եկն վարդախտն 'ի կարճել զաւուրս նր. Այս ախտ, որ ապականէր յայնմ ժամանակի զնորն Սպանիա, լեալ էր անծանօթ յայնմ մասին երկրագնտոյ մինչև ոչ եղև մուծեալ անդր յԵւրոպացւոց. և կարէ համարիլ ընդ մեծագոյն թշուառութիւն, զորս բերին անդր ասպատակքն. փոխանակ նր Մեքսիքացիք ամբարձին յաթոռ ըզԿուաթիմոծին զեղբօրորդին և զփեսայն Մոնթէծումայի, երիտասարդ այնպէս մեծահամբաւ վն ընդունակութն և վն քաջութն, մինչ զի յայսմ վտանգաւոր ժամանակի համաշխարհիկք իւր կոչեցին զնա միաբարբառ առ գերագոյն հրամանատարութին:

Քօրթէս հազիւ թէ մտեալ 'ի սահմանս թշնամւոյ իւրոյ ետես զպէսպէս նախապատրաստութիս Քօր- վն խափանելոյ զյառաջադիմութիս իւր. Բայց զօրք իւր յաղթեցին ամ խուչից սակաւ դժուարութբ. և տիրեցին Թէծէվքայ երկրորդ քաղաքին կայսերութն՝ կայացելոյ առ ափին լճին շուրջ քսան մղոն հեռի 'ի Մեքսիքոյ. Աստէն որոշեաց նա առնել զիւր տեղի զինուց իւր եդեալ մօտ 'ի մայրաքաղաքն՝ և յարմար վն ձգելոյ զպրիկանթինս իւր 'ի ջուր. Առ 'ի առնել անդէն առաւել ապահով զնիստ իւր՝ իջոյց զքաղաքէն, 1521 կամ զգլխաւորն, որ էր գլուխ հասարակութ՟նն, յառաջ բերելով 'ի պատրուակ զանզօրութ՟ի իրաւանց իւրոց. և կացոյց 'ի տեղի նր՟ զերեւելի անձն ոք, զոր երկպառակութ՟ի ազնուականաց ցուցանէր իբր ճշմարիտ ժառանգ այնր արժանաւորութ՟ն. Նոր քաղաքէն և հետեւողք իւր յարեալք 'ի նա վն՟ այսր բարեբարութ՟ն ծառայեցին Սպանիացւոց անխախտ հաւատարմութ՟բ :

[illegible]

Այլ քանզի կերտուած պրիկանթինաց յամր երթայր յառաջ ընդ անվարժ ձեռամբք զինուորաց և Հնդկաց, Կորթէս պարաւանդեալ եղև պարապեցուցանել առ 'ի տալ օգնութ՟ի զերիս, կամ զչորս հիւսունս, որք առ բարեբաղդութ՟ն գտանէին 'ի ծառայութ՟ն իւրում. և զի տակաւին ոչ էր ընկալեալ զզօրավիգութիւն, որում սպասէր 'ի Սպանիոլայէ, ոչ էր յատիճանի դարձուցանելոյ զզէնս իւր ուղղակի ընդդէմ մայրաքաղաքին. Կռուիլն ընդ քաղաքի միում այնպէս բազմամարդ եղելոյ, և այնպէս քաջ ամրացելոյ վ՟ պաշտպանութ՟ն, և կայացելոյ յայնպիսի շահաւէտ դիրս, վտանգեալ էր զզօրս իւր յանխորշելի իմն եղծումն. Անցին երեք ամիսք յառաջ քան զգնիլն 'ի կարգի ատաղձիցն վասն շինելոյ զպրիկանթինս, և յառաջ քան զհասանելն լրոյ իրիք վերահասութեամբ իրակութ՟ն իւրոյ 'ի Սպանիոլա. այլ ոչ վն՟ այսորիկ մնաց նա պարապորդ. Գնաց յաջորդաբար յարձակել 'ի վր՟ զանազան քաղաքաց շուրջ զծովին. և թէպէտ բոլոր կարողութ՟ի Մեքսիքացւոց էր 'ի շարժման վասն 'ի բաց դարձուցանելոյ զգործողութ՟իս նր՟, սակայն նա բռնադատէր զբնակիչսն առ 'ի հպատակել թագաւորութ՟ն Սպանիացւոց. կմ՟ ջնջէր զնոսա. Զայլ քաղաքսն դուն գործէր յանկուցանել զինքն քաղցրութ՟բ. և թէպէտ ոչ կարէր ունել զխօսակցութ՟ի ինչ ընդ աշխարհայնոցն, եթէ ոչ միջնորդութ՟բ թարգմանացն, հանդերձ այս ամենայն դժուարութեամբ, պատճառեալ էր ինքեան զայնքան կատարեալ ծանօթութիւն հանդամանաց երկրին և տրամադրութեանց ժողովրդեանն, մինչ զի յառաջ տանէր զիրակութիւնս իւր և զհնարագործութիւնս սքանչելի յաջողակութեամբ և բաղդիւ. Բազումք ՚ի քաղաքաց ընթերակայից Մեքսիքոյ էին վաղ ժամանակաւ մայրաքաղաքք փոքրիկ անկախ հասարակութեանց. և ոմանք գոլով յօդեալք նորոգ ընդ Մեքսիքեան կայսերութեան, պահէին տակաւին զյիշատակ նախկին ազատութեան իւրեանց. և տանէին դառնութեամբ զխիստ լուծն նոր տերանց իւրեանց. Կօրթէս նշմարեալ կանխաւ զնշանս ատելութեան նոցա, ՚ի կիր էարկ զայս ծանօթութիւն առ ՚ի շահիլ զվստահութիւն և զբարեկամութիւն նոցա. Առաջի առնելով նոցա ազատել զնոսա ՚ի գարշելի տէրութենէ Մեքսիքացւոց՝ առատաձեռն խոստմամբ հեզագոյն իմն վարման, եթէ կամիցին միանալ ընդ նմա ընդդէմ ճնշողաց իւրեանց, հաւանեցոյց զժողովուրդն բազմաց երևելի նահանգաց ՚ի վերաճանաչել ոչ միայն զարքայն Կաստիլիոյ իւր զինքնակալ իւրեանց, այլև հանդերձել ըզՍպանիացիս դարմանօք և զօրացուցանել զզօրսն օգնական վաշտիւք. Կուաթիմոծին առ առաջին երևոյթ ապստամբութեան ՚ի մէջ հպատակաց իւրոց վարեցաւ բռնութեամբ առ ՚ի խափանել զայն և պատժել զնոսա. Բայց հանդերձ այսու ամենայն ոգին տժգոհութեան հանապազորդեաց ծաւալիլ. Սպանիացիք սակաւ առ սակաւ արարին ինքեանց նորանոր դաշնաւորս. և Կուաթիմոծին խորագոյն ցաւով իւրով ետես, զի Կօրթէս զինէր ընդդէմ կայսերութեան իւրոյ զնոյն ձեռս, որք պարտական էին արութեամբ պաշտպանել զայն. և զի յառաջադէմ լինէր ընդդէմ մայրաքաղաքին ՚ի գլուխ յոգնաթիւ իմն գնդի հպատակաց իւրոց։ 1521

Մինչ այսոքիւք զանազան եղանակօք Կօրթէս երթալով երթայր և ամփոփէր առ սակաւ սակաւ

զՄէսզՎէլասքեան կարողութին յայնպիսի անձուկ կապարս, զի բոլորական կործանումն իւր ոչ երևէր ոչ անստոյգ. և ոչ կարի հեռի, բովանդակ խորհուրդք իւր անկան 'ի վտանգ. 'ի դերև ելանելոյ յանկարծ իմն և 'ի վտանգաւոր երդմնակցութէ. Զինուորք Նարվաէզի ոչ երբէք 'ի սրտէ միաւորեալ էին ընդ նախկին ընկերսայն Կորթիսի. և ոչ վկայէին խորհրդոց նր նովին նախանձայուզութբ. Յամ առթի, որ պահանջէր զտաբորէն իմն ճիգն սրտեղութն կամ համբերութն, ոգիք նց անկանէին 'ի վհատութի. և զմտաւ ածելով յայսմ զդժուարութիւն, որոց պատահելոց էին, նկրտելով առնուլ զքաղաք մի անմատոյց, ոմ զՎէլասքօ, և պատսպարեալ 'ի բազմութէ զօրաց, սկսաւ նուաղել համարձակութին նաև այնոցիկ 'ի մէջ նց, որք յարեալ էին 'ի Կօրթէս, յորժամ բարձի թողի եղև յընկերաց նց. Երկիւղք նոցա ածին զնս առ մեծամիտ քննութիւն շուրջ զխորհրդովք սպարապետին և զանկարելութբ յաջողութն նց. Յետ այսորիկ անցին առ կշտամբանս և առ թշնամանս. և 'ի վերջոյ եկին 'ի բացորոշել, թէ որպէս պարտէին նախահոգալ զանձանց փրկութի. զորմէ ասէին ոչ ունել հրամանատարին և ոչ զդոյզն հոգ. Անտօնիոս Վիլլէֆանիա զինուոր հասարակ, բայց յանդուգն, խառնակիչ, և յոյժ յարեալ 'ի Վէլասքուէզ տածէր խորամանկութբ զայս ոգի տրտմութն. Վրան իւր եղև ժողովարան տժգոհից. ուր յետ բազմաց խորհրդածութեանց կնքեցին, թէ առ 'ի ելանել 'ի կնճռոյն պարտէին սպանանել զԿօրթէս և զառաջաւոր պաշտօնատարս նր. և փոխարբերել զհրամանատարութին յանձն ոք, որ թողցէ 'ի բաց զեղջերուաքաղ առաջարկութիս նր. և ողջագուրեսցէ զնորս և առաւել միանականս ը հանրական ապահովութն. Յուսահատութին շնչեաց 'ի նա զքաջասրտութի. Վամանակն եղեռնագործուն, անձինքն, զորս սահմանէին նոքա 'ի զինելս, պաշտօնատարք առ 'ի յաջորդել 'ի հրամանատարութն̃, արդէն ա̃մ ինչ կարգեալ էր. և երդմնակիցք ստորագրեալ էին զգրուած ինչ, որով պարտաւորէին զինքեանս հանդիսաւորագոյն երդմամբք առ փոխադարձ իմ̃ հաւատարմութ̃ի. Բայց 'ի նախընթաց երեկոյին պայմանեալ աւուրն, մինն 'ի նախկին հետեւողացն Բօրթիսի, որ քարշեալ էր յերդմնակցութիւն, շարժեալ 'ի մերձակայ վտանգէ առն, զոր սովոր էր նա յարգել յերկար ժամանակաց հետէ, կամ հարեալ 'ի սոսկմանէ մատնութ̃ն իւրոյ, գնաց 'ի ծածուկ առ սպարապետն իւր և յայտնեաց նմա որչափ ինչ գիտէր. Բօրթէս թէպէտ և խռովեալ յայսպիսի ծանօթութ̃է, այլ նոյնժամայն ետես, թէ որ հանգամանք առաւել դիպաւոր էր յայսպիսի վտանգաւոր լծակցութ̃ն. Նոյնհետայն գնաց յօթեւանն Միլէֆանիայ և ոմանց 'ի հաւատարմագոյն զօրագլխաց իւրոց. Ամօթն, որ 'ի դէմս նր̃ երեւէր, եղև առաջին յաղթահարումն իւր. 'Ի ժամուն, յորժամ կալանաւորիւր նա, Բօրթէս կորզեաց 'ի ծոցոյ նր̃ զթուղթ ինչ. որ պարունակէր զիրակութիւն ստորագրեալ յա̃մ երդմնակցաց. Ընձկացեալ գիտելոյ, թէ ցոր վայր տարածանիւր ապստամբութիւն, խոյս ետ առանձինն առ 'ի ընթեռնուլ զայն. և եգիտ 'ի նմա զանուանս ոմանց անձանց, որոց անհաւատարմութիւն ելից զնա հիացմամբ և դառնութ̃ե. Բայց նախատեսանելով, թէ որքան վտանգաւոր կարէր եղանել ճիշդ հետազօտութիւն յայսպիսի առթի, ամփոփեաց զդատաստանական քննութիւնս իւր առ Միլէֆանիա միայն. Եւ քանզի հաւաստիք ոճրագործութեանն էին յայտնիք, յետ սուղ ինչ քննութ̃ն դատակնքեցաւ. և 'ի հետագայ առաւօտուն տեսաւ խեղդեալ առաջի դրան տանն, ուր օթեալ էր. Բօրթէս ժողովեաց զզօրս իւր. և մեկնելով նոցա զդժնեայ խորհուրդն երդմնակցաց և զարդարութի պատուհասին տուելոյ Վիլլէֆանիոյ, յարեաց զկնի տեսլեամբ իմն գոհ լինելոյ՝ թէ ոչ էին նմա ծանօթ պարագայքն այնպիսի իմն վատահամբաւ միաբանութեն. վ՟զի մատնիչն 'ի ներգործութն ըմբռնմանն պատառոտեալ և կլեալ էր զքարտէզ մի, որ հաւանականաբար պարունակէր զպատմութի՟ն այնց. և ոչինչ օգտելով ցաւոյ տանջանացն կալեալ էր զայնքան կայունութի, մինչև պահել գաղտնի զանուանս մեղսակցացն. Այս բացայայտութի դարձոյց զանդորրութի՟ն բազմաց սրտից, որք կային տրոփելով, մինչ խօսէր նա վ՟ն խղճի յանցանացն և վասն երկիւղի ծանուցեալ լինելոյ. Իսկ այսու խոհեմական չափաւորութբ՟ Քօրթէս կալաւ զշահ լինելոյ յաստիճանի նշմարելոյ զայնոսիկ 'ի հետևողաց իւրոց, որք էին նմա ներհակ. և յայնմ միջոցի հաւատալով, թէ անծանօթ էր յանցանք նց՟, հանճարէին հեռացուցանել յանձանց զինչևիցէ կասկած, կրկնապատկելով զգործունէութի իւրեանց և զնախանձայուզութի՟ն ծառայութն նր՟:

[illegible] Քօրթէս ոչ ետ նց՟ ժամանակ խորհելոյ զեղեալն. և ոչ եգիտ զառաւել գործունեայ հանգամանս, բայց եթէ ածել զզօրսն ուղղակի առ թշնամին առ 'ի խափանել, զի մի վերստին ապստամբիցին. Առ բարեբաղդութեն առաջի մատուցաւ նմա դիպաւորութի առանց ցուցանելոյ որոնել զայն. Ազդ եղև նմա, թէ տաղձք վ՟ն կերտելոյ զպրիկանթինս էին 'ի պատրաստի. և թէ սպասեալ լինէր միայն գունդ մի Սպանիացւոց առ 'ի փոխաբերել զնոսա 'ի Թէծէվքօ. Հրաման այսր ընկերակցութն բաղկացելոյ երկերիւր հետի զինուորօք, վեշտասան հեծելովք և երկու հատորովք թնդանօթօք տուեալ եղև 'ի նմանէ Սանտովալայ. որ վն արթնութեն, յաջողակութեն և վն քաջասրտութեն յամ որ առաւել ընդգոգեալ էր 'ի մտերմութի սպարապետին իւրոյ և 'ի համարումն ընկերաց իւրոց. Յանձնարարութիւն էր եղեալ և ծանրակշիռ. գերանք, տախտակք, կայմք, առասանք, առագաստք, երկաթեղէնք, և բովանդակ պէսպիսութի յօդուածոց, որ խնդրիւր վն շինուածոյ երեքտասան պրիկանթինաց պարտէին ածիլ վաթսուն մղոն ընդ ցամաք 'ի լեռնային գաւառի միում. ուր անծանօթ էր կիրառութի ընտանի կենդանեաց. և ոչ դիւր օգնութի մեքենայից 'ի դիւրացուցանել զայսպիսի գործս. Ետուն Թլասքալացիք զութնհազար Թամէնէսս, այս վայրագոյն կարգի սահմանեալս առ ծառայական պաշտօնս. ոպզի բերցեն զատաղձսն 'ի վր թիկանց իւրեանց. և կարգեցին զհնգետասան հազար մարտիկս առ 'ի ընկերել նց և պաշտպանել. Սանտովալ արար զկարգադրութի չուոյ նց, որպէս մարթէր սպասել յընդունակութէ նորա, դնելով զԹամէնէսս 'ի միջի, զգունդ մի մարտկաց յառաջոյ, զմիւս այլ 'ի վերջոյ՝ հանդերձ երեւելի վաշտիւք, որք պատսպարէին զկողմունսն. Յարեաց 'ի նս զոմանս 'ի Սպանիացւոց ոչ այնչափ վն օգնելոյ նց 'ի վտանգի, որչափ վասն ընտելացուցանելոյ առ կանոնաւորութին և առ ստորակարգութին. Գումարտակ մի այսպէս յօդնաթիւ և այսչափ ճապաղեալ յառաջ խաղայր յուշիկ՝ այլ գերակատար կարգաւ. և 'ի տեղիս տեղիս, ուր էր ամփոփեալ յանտառաց և 'ի լերանց, տարածիւր տող չուոյն շուրջ վեց մղոն. Զօրք Մեքսիքացւոց երեւէին յաճախակի յածիլ շուրջ զնոքօք 'ի վր բարձրաւանդակաց. բայց ոչ տեսանելով զայս ինչ բարեդիպութն 'ի կռւին ընդ թշնամւոյ միում, որ հանապազ կայր 'ի պահպանութն, և նախապատրաստիւր առ 'ի ընդունել զնս, ոչ իշխեցին ընդ հարկանիլ նմա. և

Սանտովալ կալաւ զփառս ածելոյ ողջ և առողջ 'ի Թէծէվքօ զընկերութիւն մի, յորմէ կախեալ կային բովանդակ ապագայ գործողութիւնք հայրենակցաց իւրոց:

Ընդունի նոր ս զօրագունդս: Այժմ զհետ եկն այլ իմն դիպուած ոչ նուազ ծանրակշիռ. Հասին 'ի Վէրաքրուզ չորք նաւք 'ի Սպանիոլայէ հանդերձ երկերիւր զինուորօք, ութսուն երիվարօք, երկու մեծամեծ թնդանօթօք, և երևելի իմն քանակութեամբ համբարաց և զինուց. Ուրախացեալ Կորթէս 'ի տեսանելն, թէ բովանդակ նախապատրաստական գաղափարք իւր՝ կամ առ 'ի լնուլ զթիւ զօրաց իւրոց, կամ առ 'ի նուազել զզօրութիւն թշնամւոյ իւրոյ՝ յառաջ ածեալ էին զլիալիր արդիւնս իւրեանց, և անհամբեր սպասելոյ զկերպական պաշարումն, ճեպեաց տալ ձգել զպրիկանթինսն 'ի ջուր. Առ 'ի դիւրացուցանել զբանն պարապեցուցեալ էր զմեծ բազմութիւն Հնդկաց զամիսս երկուս 'ի պեղել զվտակն, որ հոսէ 'ի Թէծէվքայ 'ի լիճն, և վերածել զայն 'ի նաւարկելի ջրմուղ իբր երկու մղոն երկայնութեամբ. և առ հեճուկս Մեքսիքացւոց, որ նախատեսանելով զդիտաւորութիւնս, և զվտանգն, որ սպառնայր նոցա, ջանային ստէպ խափանել զգործաւորսն և այրել զպրիկանթինսն, ուր ուրեմն լրացաւ գործն:

1521 (23) ‖ Տեսանեն արդ ես մնացորդք ինչ այսր մեծի գործոյ. և տան տեսանել պանդխտաց զտեղին, ուր պրիկանթինք շինեալ եղեն և ձգեալք 'ի ջուր. Թօրքուէմատա ետես զնոսա: ‖

Պրիկանթինք ձգեալք 'ի ջուր: 'Ի 28 ապրիլի բովանդակ զօրք Սպանիացւոց 'ի միասին ընդ օգնականացն Հնդկաց տարածեցան կարգաւ առ ափամբ ջրմղին. և անսովոր իմն զինուորական շքով՝ մեծացուցեալ և առաւել հանդիսացուցեալ մատուցմամբ պատարագի հոգւոյն սրբոյ ընկեցեալ եղեն պրիկանթինք 'ի ջուր. Մինչդեռ անկանէին 'ի վայր 'ի ջրմուղն հրամանաւ

Հայրն Օլմետոս օրհնեաց զնս. և ետ իւրաքանչիւր զիւր անուն. Ամենեքեան աչօք զհետ երթային զարմացմամբ և յուսով մինչև մտին 'ի լիճն. ուր պարզելով զառագաստ իւրեանց գնացին նպաստեալք 'ի հողմոյ. Բարձրացաւ ընդհանուր աղաղակ հրճուանաց, գովելով ամենեքեան զայն համարձակ գործ ճարտարմտութին, որ այսպիսի արտաքոյ կարգի հայթհայթանօք գիտացեն էր նախահոգալ իւր զնաւահանգէս մի. առանց որոյ օգնութեն Մեքսիկացիք շարունակեալ էին գրգռել զզօրութի և զկենս Սպանիոյ:

Քորթէս կամեցաւ յարձակիլ 'ի վ͞ր քաղաքին յերից զանազան կողմանց. 'Ի Թէծէվքայ յարևելեան կողմանէ լճին, 'ի Թաքուպայ յարևմտից և 'ի Քոյօքանու ընդ հարաւակողմն. Քաղաքս այսոքիկ եդեալ էին 'ի վ͞ր նախապետական մայթիցն, որք ածեն առ մայրաքաղաքն. Նաեն արարեալք վ͞ն պաշտպանութեն նր. Զառաջնոյն հրաման ետ Սանտովալայ, զերկրորդին Պետրոսի Ալվարատոյ և զերրորդին Քրիստափանու Օլիտայ, նշանակելով իւրաքանչիւրում զերևելի իմն գունդ օգնական Հնդկաց հանդերձ հաւասար բաժանմամբ Սպանիացւոց. որք յաւելմամբ զօրացն եկելոց 'ի Սպանիոլայէ ամբառնային արդէն յութսուն և վեց արս ձիաւորս և յութնհարիւր ութուտասն զինուորս հետևոտս. յորոց հարիւր ութևտասն երթային զինեալ հրետիւք և բաղստրիւք. Բարձէին զկնի իւրեանց զերիս թնդանօթս բերդի և զվեշտասան հատորս ասպարիզի. Վերապահեաց անձին իւրում իբր զպաշտօն մեծակշիռ և զբազմավտանգ զառաջնորդութի պրիկանթինացն, յետ ամրացուցանելոյ զիւրաքանչիւր 'ի նոցանէ միով 'ի թնդանօթոց իւրոց և քսանևհինգ Սպանիացւովք:

Տրամադրութիւն վ͞ս պաշարման:

Մինչ Ալվարատոս և Օլիտ ճանապարհորդէին 10 Մայ առ գլխս նշանակեալս նց, կործանեցին զջրմուղն եւէ:

զորս ճարտարութիւն Մեքսիքացւոց կանգնեալ էր առ 'ի ածել զջուր 'ի մայրաքաղաքն. և այսպիսի իմն գործ վերածելով զբնակիչսն 'ի ծագ՝ եւ սկիզբն թշուառութեանց, առ որս սահմանեալ էին նոցա կրել. Ալվարատոս և Օլիտ գտին զքաղաքսն, որոց ունէին պատուէր տիրել, բնաւին թափուրս 'ի մարդկանէ. որովհետև ամենեքեան գումարեալ էին առ պաշտպանութիւն մայրաքաղաքին. ուր Կուաթիմոծին հաւաքեալ էր զնախապետական զօրս կայսերութեան, յուսալով, թէ անդէն կարէր առնել զշահաւէտ իմն դիմակացութիւն ընդդէմ ահարկու հակառակորդացն, որք մերձենային յարձակիլ 'ի վերայ նորա:

Մեքսի-
քացիք
յաղթա-
հին 'ի Հիս-
պանիա-
ցւոց:

Առաջին թեւակոխութիւն Մեքսիքացւոց եղև եղծանելն զպրիկանթինսն, յորոց գործողութեանց երկնչէին զմահաբեր արդիւնս. Թէպէտ նաւքս այսոքիկ հանդերձ ամենայն ուշադրութեամբ Կորթիսի 'ի կերպաւորելն զնոսա. էին ոչ շատ ստոմարք, անհեթեթ կերտեալք, և հանդերձեալք զօրօք ցամաքի, որք հազիւ գիտէին վարել զնոսա, սակայն ոչինչ ընդհատ լինելոց էին առարկայ զարհուրանաց ժողովրդեան միում ոչ տեղեկացելոյ այլում իրիք նաւարկութեան, բայց եթէ լճին իւրոյ, և ոչ նախահոգացեալ նաւու իւիք ընդարձակագունի քան զքանօէ. Այլ հարկն ստիպեաց զԿուաթիմոծին ձեռներէց լինել առ յարձակումն. և հաւատալով լնուլ բազմութեամբ զպակասութիւն զօրութեան, ժողովեաց զայնպիսի մեծ բազմութիւն քանօէից, որք ծածկեցին զերեսս լճին. Դնացին թիավարելով յանդգնաբար առ 'ի դրոհել 'ի վերայ նոցա, մինչդեռ պրիկանթինք յամեալք յանհողմութենէ հազիւ կարէին յառաջադէմ լինել առ 'ի պատահիլ նոցա. Այց իբրև մերձենայր թշնամին, յարեաւ յանկարծ իմն հողմիկ. պարզեցան 'ի միում վայրկենի առագաստք. պրիկանթինք աննահանջելի ուժգնութեամբ անցին խտորնակի ընդ մէջ տկար ախոյեանից իւրեանց. տապալեցին ըզբազում քանօէս և ցրուեցին զբոլոր սպառազինութիւն այնպիսի կոտորածիւ, որ յաղթահարեց՟ զՄեքսիքացիս, թէ յառաջադիմութիւնք Եւրոպացւոց 'ի ճանաչման և յարհեստս առնէին զվերնագունութի նց՟ մեծագոյն նաև յայսմ նոր տարեր, քան զոր վաղիսկ փորձեալ էին ընդ ցամաք:

Յաջողեն հանդամանք ջանիցն:

Կօրթէս մնաց յայնժամ տէր լճին. և պրիգանթինք ոչ միայն պահեցին զհաղորդութի իմ՟ 'ի մէջ Սպանիացւոց 'ի զանազան դիրս նց՟, թէպէտև մեծապէս տարակացք էին 'ի միմեանց, այլև ծառայեցին նց՟ 'ի պատսպարել զմայթսն յամ՟ կողմանց, և յունել 'ի բացեայ զքանօէսն 'ի ջանալն խուել զզօրսն 'ի ներգործութենն յառաջ խաղալոյ 'ի քաղաքն. Բաժանեաց զպրիգանթինսն յերկուս բաժանմունս, նշանակելով իւրաքանչիւրում զկայեան ինչ՝ կարգաւորութե՟ հետևելոյ շարժմանց զօրագլխին, որ հրամայէր 'ի նոսա. Յերեցունց դրից մղեաց յառաջ զկուիւն ընդդէմ քաղաքին հաւասար ուժգնութե՟. բայց այնպիսի իմն եղանակաւ աննմանեաւ յայնմանէ, որով առնին կանոնաւոր պաշարմունք, մինչզի նոյնինքն երևէր զանգիտել, զի գուցէ դատապարտիցի յանձանց անտեղեակ եղելոյ կայսրութեն իւրում. Յամ՟ աւուր զօրք իւր յարձակէին 'ի վերայ պատուարացն կանգնեցելոց 'ի թշնամւոյն 'ի մայթսն. և բանային ճանապարհ ընդ խրամսն և ը՟ ջրմուղսն, ուր կամուրջք կործանեալ էին, ջանալով ընդ մտանել 'ի սիրտ քաղաքին վստահութե՟ ստանալոյ զորոշողական ինչ օգուտ, որ պարաւանդեսցէ զթշնամին անձնատուր լինել և եզերել իսկոյն զպատերազմն. և յորժամ քաջութի Մեքսիքացւոց առնէր անօգուտ զճգնութիւն տուընջեան, Սպանիացիք ամփոփէին ընդ երեկս յօթեվանս իւրեանց. Այսպէս նորոգեցան գրեթէ անընդհատ աշխատութի՟ւք և վտանգք նց՟. Մեքսիքացիք կարկատէին 'ի գիշերի զոր ինչ Սպանիացիք եղծեալ էին 'ի տուէ, վերաստանալով նաև զշէնսն, յորոց արտաքսեալ էին. Հարկն օրինադրէր զայս դանդաղ և անյարմար եղանակ ներգործելոյ. Էին այնպէս սակաւք խումբք Քորթիսի, մինչզի ոչ իշխէր փոքրիկ գնդաւ մարդկան նկրտել առնել իւր օթեվան 'ի քաղաքի միում. ուր կարէր շրջապատել և 'ի նեղ արկանել յանբաւութե՟ թշնամեաց. Յիշատակ այնր, զոր կանխաւ կրեալ էր նա վասն անխոհեմ համարձակութեան, որով արկեալ էր զանձն յայնչափ վտանգաւոր կայան, տակաւին թարմ էր 'ի միտս իւր. Սպանիացիք պարտասեալք 'ի տաժանմանց ոչ էին յարմարք 'ի պահպանել զզանազան դիրսն, զոր ստանային օր ըստ օրէ. և թէպէտ բանակ նց՟ լի էր օգնական Հնդկօք, ոչ համարձակէին տալ նց՟ զայսպիսի իմ՟ն յանձնարարութի՟. որովհետև էին այնպէս սակաւ ընտելացեալք արհեստին, մինչզի ոչ կարէին վստահանալ 'ի հսկողութի՟ նց՟. Բաց յայսմանէ՝ փոյթ մեծ էր յոյժ Քորթիսի նախապահել զքաղաքն, որքան կարելի էր, յաւերմանէն. քանզի սահմանէր զայն 'ի մայրաքաղաք տիրապետութեանց իւրոց. և զի փափագէր թողուլ յոտին իբր յիշատակարան իմ՟ն փառաց իւրոց. Վ՟ այսց ամ՟ նկատմանց եկաց նա յամառ ընդ ամիս մի յոճն, զոր կալե՟ալ էր. Մեքսիքացիք ցուցանէին 'ի պաշտպանելն զինքեանս զքաջութիւն իմ՟ն, որ ոչ էր նուաղ քան զայն, որով կռուէին ընդ նս Սպանիացիք. Ընդ ցամաք, ընդ ջուր, 'ի գիշերի և 'ի տուընջեան յաջորդէին իւրեանց պայքարմունք անզուգական իմ՟ն մոլեգնութի՟. Բազում Սպանիացիք սպանեալ եղեն, յոգունք վիրաւորեալք. և ամենեքեան գրեթէ 'ի վիճակի լքանելոյ զանձինս յընկճիլ յաշխատանաց ծառայութե՟ն իւիք ոչ երբէք ընդհատելոյ, և եղելոյ առաւել ևս անհանդուրժելի 'ի տուգանաց եղանակին, գոլով այնինչ սկսեալ տեղալ պարբերական անձրևացն սովորական բռնութբ իւրեանց:

Ջանայ առնուլ զքաղաքն յարձակմամբ:

Պակուցեալ և վրդովեալ վասն երկարութեն և դժուարութեն պաշարմանն. Քորթէս որոշեաց առնել զվերջին ճիգն առ 'ի տիրել քաղաքին յառաջքան զթողուլն 'ի բաց զպաշարումն, որում ցայնժամ զհետ երթեալ էր. և կալաւ զայլ իմն եղանակ կռուոյ. Այսու խորհրդով առաքեաց պատուէրս առ Սանտովալ և առ Ալվարատոս՝ յառաջ խաղալ բաժանմամբք իւրեանց առ հանրական իմն գրոհ. և ինքն եառ յանձն զհրաման այնր, որ կայր առ մայթիւ Քոյօքանու. Քաջասրտեալք 'ի ներկայութէ նր և յակնկալութէ իրիք գործոյ որոշողէ՝ Սպանիացիք մղեցան յառաջ աննահանջելի իմն թափով. խորտակեցին զպատնէշսն մի զկնի միոյ. արարին ճանապարհ 'ի վր փոսիցն և ջրմղացն. և մտեալք 'ի քաղաքն, ստացան վաղվաղակի զգետինն ընդդէմ բազմութե և ամենհուն հակառակորդաց իւրեանց. Քորթէս որչափ և ապշեալ 'ի սրընթացութէ յառաջադիմութեանց իւրոց, ոչ մոռացաւ, թէ այնու ամի կարէր դէպ լինել նմա հարկ փախստեան. և առ 'ի կարողանալ առնել զայն ապահովութբ կարգեաց զՅուլիանոս Ալտէրէթէ զօրագլուխ յառաջանշան 'ի գունդսն, զորս ընկալեալ էր 'ի Սպանիոլայէ, վերստին լնուլ զջրմուղսն և զճեղքուածսն մայթիցն ըստ յառաջադէմ լինելոյ նր. Ալտէրէթէ համարելով անարգ իմն լինելն ծառայեցուցեալ այնպիսի կերպիւ, մինչդեռ ընկերք իւր գտանէին յեռանդն խառնման և յընթացս յաղթութն, ստունգանեաց ծանրակշիռ պաշտօնին եգելոյ 'ի վր նր. և ընթացաւ գահավէժ և չարախորհուրդ 'ի մէջ պատերազմողացն:

Ի 3 յաւուրն յուլիսէ.

Յետս մղեալ:

Կուաթիմոծին ծանեաւ իսկոյն զհեռաւութի սխաղանացն արարելոց 'ի Սպանիացւոց. և սքանչելի արագութ՟բ ոգւոյ նախապատրաստեցաւ հանել անտի զօգուտ. Հրամայեաց յառաջադէմ վաշտիցն, զի տեղի տացեն առ 'ի հրապուրել զՍպանիացիս յառաջ խաղալ. և ինքն արձակեաց զայլ իմ՟ն խումբ ընտիր ընտիր մարտկաց ը՟ պէսպէս ճանապարհս զոմանս ընդ ցամաք և զայլս ը՟ ջուր դէպ մեծագոյն հատուածոյ մայթին, որ թողեալ էր բաց. Առ նշան իմ՟ն, զոր ետ նա, քահանայք 'ի մեծագոյն տաճարին հարին զմեծ արապանն նուիրեալ ա՟յն պատերազմի. Հազիւ թէ լուեալ Մ`էսսիքացիք զայս սգալի ձայն կարգել՟ առ 'ի շնչել 'ի նոսա զխելացնոր իմ՟ն վառումն և զարհամարհանս մահու, խոկ և խոկ խուժեցին 'ի վ՟ր թշնամւոյն անըմբռնելի իմ՟ն մոլեգնութեամբ. Սպանիացիք անբաւականք զդէմ ունելոյ արանցն յափշտակելոց 'ի կրօնական մոլեգնութ՟է և 'ի յուսոյ բարեդիպու՟ե, սկսան յետս ընկրկիլ 'ի սկզբան անդ սակաւ առ սակաւ և 'ի բարեկարգու՟ե. այլ քանզի թշնամին ստիպէր զն՟ս, և անժուժութ՟ե փախչելոյն աճէր, արհաւիրք և շփոթումն եղեն այնպէս հանրականք, մինչ զի իբրև հասին առ մեծ հատուած մայթին՝ Սպանիացիք և Թլասքալացիք ձիաւորք և ոտանաւորք գահավիժեցան 'ի ներքս լճան 'ի խուռն. Զահաւորելով յայսպիսի իմ՟ն պատահմանէ Մ`էսսիքացիք խոյացան 'ի վ՟ր ն՟ց գազանաբար յամ՟ կողմանց, տանելով զքանիս իւրեանց 'ի տեղիսն, ուր ոչ կարէին մատչել պրիկանթինք. Գորթէս ջանացաւ վայրապար զսպել և ժողովել զփախստականսն. Բայց երկիւղն առնէր այնպէս, զի ոչ ունկն դնէին ոչ աղաչանաց և ոչ հրամանաց. Տեսանելով անօգուտ զամ՟ ջանս իւր նորոգելոյ զպատերազմ՟ն, առաջին մտածութ՟ի իւր եղև ապրեցուցանել զոմանս 'ի նոցանէ, որք անկեալք էին 'ի ջուր. Բայց մինչդեռ կայր նա այսպէս զբաղեալ մեծագոյն ու-

շադշագրումն առ այլս, քան անձին իւրում, վնզ զօրագլուխք Մէքսիկացիք, յանկարծակի կալան զնա. և ածելոց էին շտապաւ 'ի նշան յաղթութեն. և թէպէտ երկուք 'ի զօրավարաց իւրոց ազատեցին զնա տուժանօք կենաց իւրեանց, սակայն նա յառաջքան զկարող լինելն փրծանիլ ընկալաւ զանազան վտանգաւոր վէրս. Աւելի քան զվաթսուն՝ Սպանիացիք կորեան 'ի խորտակմանն. և այն, որ փոխատրեաց առաւել ցաւագին զդժբաղդութին եղև, զի քառասունք 'ի նոցանէ անկան կենդանի 'ի ձեռս թշնամւոյ միոյ, որ ոչ երբէք արար շնորհս կալանաւորաց։

Հանդէրձ էրեւելի էին խորատեամք ։

Մերձենալ գիշերոյն զերծոյց զհարուածեալ Սպանիացիս 'ի վերջին հարստահարութենց թշնամւոյն. բայց արար զնն վկայս աղաղակին ուրախութն և սոսկալի տօնախմբութեանն, որով հռչակէին զխժդժական յաղթութի իւրեանց. Մ̃ օթեւան քաղաքին լուսաւորեալ էր. արտափայլէր մեծ տաճարն այնպիսի մասնաւոր պայծառութ, մինչզի Սպանիացիք կարէին յայտնապէս տեսանել զժողովուրդն 'ի շարժման և զքահանայսն զբաղեալս 'ի փութացուցանելն զպատրաստութին վն մահուան կալանաւորացն. Երևէր նց տարորոշել լուսով ջահիցն զընկերս իւրեանց 'ի սպիտակութէ մորթոյ նց. որովհետև մերկացուցեալ էին և ստիպեալք 'ի կաքաւել առաջի պատկերի նյն, որում պարտէին զենանիլ. Լուան ըղգոյժս նց, որք ներգործութբ տպանեալ լինէին. և հաւատային ես զանազանել զիւրաքանչիւր զենլի 'ի ձայնէ բարբառոյ իւրոյ. Երևակայութին աճեցուցանէր զայն, զոր արդեամբք տեսանէին և լսէին, և մեծացուցանէր սոսկումն. Առաւել խստասիրտք ձմլէին յարտասուս կարեկցութն. և առաւել հաստատունք դողային 'ի զարհուրելի տեսարանէն, զոր տեսանէին։

Օրհնել էին այն պատերազմ ։

(24) Գիրք Ալվարատոյ 'ի մայթին Թագու-

պայ էր առաւել մօտ քաղաքին․ ՝Քօրթէս Նկատէ ,, թէ յայնմ տեղւոջէ կարէին որոշակի տեսանել նախապատրաստութիւնքն վասն զոհման ընկերաց իւրեանց․ Տիաց, որ պատկանէր սա բաժանումն Ալվարատայ ասէ, թէ ետես զա̃մ աչօք իւրովք․ և իբր այր, որոյ քաջասրտութի̃ն վերնագոյն էր ա̃մ կասկածանաց, ստորագրէ սովորական պարզմտութբ̃ իւրով զտպաւորութի̃ն, զոր այս տեսարան արար 'ի վերայ անձին նորա․ „ ՝Նախ քան, ասէ, զտեսանելն իմ զլանջս ընկերաց իմոց բացեալս, զսիրտս նց̃ դեռևս տրոփականս մատուցեալս անիծեալ բագնի միում „ և զմարմինս նց̃ գիշատեալս հրճուանօք 'ի թշնամեաց՝ սովոր էի ես մտանել 'ի պատերազմ „ ոչ միայն առանց երկիւղի, այլև վսեմագոյն „ ոգւով․ Սակայն յայնմ ժամանակէ հետէ ոչ „ յաւելի պատերազմիլ ընդ Մ՝էսսիքացւոց առանց ներքին իմն սոսկման և անձկութ̃ն, դողալով սիրտ իմ 'ի խորհիլն զմահն, զոր տեսեալ էի կրել նց̃․ „ Բայց յարէ զկնի, թէ վաղվաղակի իբրև սկսանէր պատերազմն, այս սարսափ իւր չքանայր․ և զճշմարիտն ասելով՝ քաջութի̃ իւր յա̃մ առթի եղև նմա վկայութի̃։ ‖

՚Նոր
խոր-
հուրդք
և նոր
[illegible]
[illegible]
Մ՝էսսի-
քացւոց:

՝Քօրթէս, որ բաց յայնմ ա̃մէ, զոր զգայր առ հասարակ ը̃ զօրականաց իւրոց, էր աւելի ծանրացեալ 'ի բեռանէ տրտմական մտածութե̃ց ընականաց սպարապետի միում, որ գտանի յանակնկալ իմիք թշուառութ̃ն, ոչ կարէր իբրև զնթափել զսեպհական սրտնեղութի̃ն․ Պարաւանդգեալ էր զգենուլ զտարազ ինչ անդորրութեան առ 'ի վերստին կենդանացուցանել զոգի և զյոյս հետևողաց իւրոց․ Յծակցութի̃ն պահանջէր ճշմարտիւ զտարակարգ իմն ճիգն քաջութ̃ն․ Մ՝էսսիքացիք ժպրհեալք 'ի յաղթութե̃ն ոստեան 'ի դուրս 'ի հետևեալ այգուն առ 'ի կռուիլ ը̃ նմա 'ի յօթեվանս իւր․ Բայց ոչ վստահանալով միայն

'ի

'ի զէնս իւրեանց՝ առաքեցին զգլուխս Սպանիացւոցն, զորս զոհեալ էին, առ վարիչս մերձակայ գաւառացն, ստուգելով զնն, թէ աստուածն պատերազմի խաղաղացեալ յարենէ ասպատակաւորաց իւրեանց ճապաղեցելոյ այնպէս յորդառատ 'ի վր սեղանոց իւրոց՝ յայտ արարեալ էր մեծաձայն բարբառով լու 'ի լու ամենեցուն, թէ յութն աւուրս ժամանակի թշնամիք իւրեանց բնաջինջ լինիցին. և թէ խաղաղութիւն և յաջողութիւն դարձցի վերստին հաստատիլ 'ի կայսերութիւն նց:

Անխասացութի իմն տարածեալ այսպիսի վստահութի, և այնպիսի անտարակոյս եզերօք՝ յառաջ եած զարդիւնս ցանկացեալս առ ժողովրդեան միում մտեցելոյ առ սնոտիապաշտութի. Նախանձայուզուի գաւառացն, որք արդէն հրատարակեալ էին ընդդէմ Սպանիացւոց, աճեաց. և բազումք, որք ցայնժամ ցուցեալ էին զինքեանս անտարբերս, բուռն հարին զզինուց մոլեկան եռանդիւ առ 'ի կատարել զհրամանս աստուծոցն. Դաշնակից Հնդիկք, որք միացեալ էին ընդ Քօրթիսի, սովորք 'ի յարգել զնոյն ածութիւն, որոց երկիրպագանէին Մ՝էսիքացիք, և յընդունել զպատասխանիս քրմաց իւրեանց նովին լռելեայն հաւատով, սարտեան 'ի Սպանիացւոց իբրև 'ի զարմէ մարդկան սահմանեցելոյ առ եղծումն. Պնդեցաւ ևս հաւատարմութի Տլասքալացւոց. և փունդք Սպանիացւոց մնացին իբր կղզացեալք 'ի դիրս իւրեանց. Քօրթէս տեսանելով, թէ 'ի զուր աշխատէր վանել ճանապարհաւ առարկութեց զսնոտիապաշտական երկիւղ 'ի դաշնաւորաց իւրոց, 'ի կիր էարկ զանխոհեմութի նց, որք ճարտարեալ էին զմարգարէութին՝ նշանակելով զճշմարտիլ նր այնպէս մօտաւոր, առ 'ի տալ նոցա զշօշափելի իմն ցոյց ստութեն իւրոյ. Եթող կախեալ զամ զինուորական

Քօրթէս բառնէ բագնէ եղեալ 'ի բագնոց յէրոց դաշնաւոր Հնդկաց:

կան գործողութիւն մինչ դեռ տեւէր ժամանակն պայմանեալ 'ի պատգամէն. Միջնորդութե̃ պրիկանթինաց, որք ունէին զթշնամին 'ի բացեայ, կային զօրք իւր յապահովի. և յայնմ վայրի եկն յաւարտ օրհասական պայմանն առանց պատահելոյ նր̃ ձախորդութե̃ ինչ:

Մ[illegible] տին [illegible] : Ամօթի հարեալ յայնժամ դաշնակիցք իւր վ̃ մարկպարաղի դիւրահաւատութե̃ իւրեանց՝ դարձան անդրէն յառաջին դիրսն. Այլք ցեղք ենթադրելով, թէ աստուածք, որք խաբեալ էին զՄէսսիքացիս, կամէին միշտ նահանջել զպատսպարութի իւրեանց 'ի նոցանէ, եկին կարգիլ ը̃ դրօշակաւ նր̃. և այնպիսի եղև թեթևուն պարզամիտ ժողովրդեան միոյ շարժեցելոյ յամ փոքրիկ տպաւորութէ, մինչզի 'ի սուղ ժամանակի զկնի այնպիսի իմն հանրական վտարանջութեան դաշնակցաց իւրոց՝ Գորթէս եթէ պարտիցէ հաւատալ յատուկ պատմութե̃ նր̃՝ տեսաւ 'ի գլուխ հարիւր յիսուն հազար Հնդկաց :

Նոր ընթ[illegible] : Այլ և հանդերձ այսպիսի իմն յոգնաթիւ զօրու կարևոր համարեցաւ ողջագուրել զնոր իմն հանգամանս գործողութե̃ց. փոխանակ նորոգելոյ ըղձեռնարկութիւս իւր տիրելոյ քաղաքին յարձակմամբք այնպիսիք յանդուգն և վտանգաւոր թափովք քաջութե̃, զորս արդէն փորձեալ էր, առար զյառաջագիմութիւս իւր սակաւ առ սակաւ. և ամ̃ կարելի զգուշութբ̃ առ 'ի ոչ դնել զզօրս իւր 'ի վտանգ իրիք աղետից նման այնմ, զոր տակաւին ողբային. Ըստ չափուն, որով Սպանիացիք երթային յառաջ Հնդիկք զկնի նր̃ կարկատէին զմայթսն. Իսկոյն իբրև տիրէին իմիք մասին քաղաքին, նոյնժամայն կործանէին զտունսն. և օթէին 'ի մէջ աւերակացն. Օր ը̃ օրէ Մէսսիքացիք բռնադատեալք յետս ընկրկիլ ըստ համեմատութե̃ն, որով թշնամիք նր̃ ստանային ըղգետին, ձգեցին սահմանաւորեալք յանձկագոյն կո-

կոպարս. Կուաթիմծծին՝ թէպէտեւ անբաւական 'ի կասեցուցանել զընթացս թշնամւոյ իւրոյ՝ շարունակէր 'ի պաշտպանել զմայրաքաղաք իւր յամառ դիմագրաւութբ. և հեծելով տայր նմա թիզ առ թիզ զգետինն. սակայն Սպանիացիք ոչ միայն այլայլեալ զեղանակ կռուոյ իւրեանց, այլ և փոխեալ կարգաւորութբ Քօրթիսի զզէնսն, որովք սովոր էին մարտնչել, տանէին նորոգ զնիզակս քհինանթլացիս. զորս 'ի գործ ածեալ էին այնքան յաջողութբ ընդդէմ Նարվաիզի. և մղէին դիւրակլի յետս զյարձակմունսն Մեքսիքացւոց. որոց անհաւատալի իմն բազմութիւն անկաւ 'ի մրցմունսն. որք օր յաւուր վերանորոգէին. Բայց մինչդեռ պատերազմն ապականէր արտաքուստ, սովն սկսաւ սպառել զնա 'ի ներքս քաղաքին. Պրիկանթինք Սպանիացւոց ունելով զտէրութն լճին ողջոյն, առնէին բնակչացն անկարելի ընդունելն զնպաստս ինչ ընդ ջուր. Զանազանց թիւն Հնդկաց օգնականաց իւրոց ծառայէր Քօրթիսի առ 'ի փակել զանցս քաղաքին ընդ ցամաք. Ապրուստքն, զորս Կուաթիմծծին համբարեալ էր, էին գրեթէ բնաւին սպառեալք յաղագս բազմութն, որ խուռն ընթանայր 'ի մայրաքաղաքն առ 'ի պաշտպանել զինքնակալ իւր և զտաճարս աստուծոցն. Ոչ միայն ժողովուրդն, այլ և մեծամեծ անձինք ևս բարձր աստիճանի զգային զտառապանս սովուն. Զարչարանք նդ պատճառեաց զանազան տարափոխիկ և մահաբեր հիւանդութիս, վերջին աղէտ, որ սովոր է գալ 'ի վհ քաղաքացն պաշարելոց. որ և իսպառ կատարեաց զթշուառութի տառապանաց նց:

* Բայց 'ի ներքոյ ծանրութն այսչափ և այսպիսի պէսպէս դժբաղդութեց հոգին Կուաթիմծծինու հաստատուն և անյաղթ պահիւր. 'Ի բաց մերժեաց արհամարհանօք զինչևիցէ առաջարկութի

*Բա- ջուր- [illegible] ն հա- [illegible] [illegible] Կ[illegible] [illegible] նա:

խաղաղութեն 'ի կողմանէ Գօրթիսի. և գարշելով 'ի գաղափարէ ենթարկելոյ զինքն ճնշողաց երկրին իւրոյ՝ որոշեաց ոչ կամիլ կեալ յետ կործանման նորա. Շարունակէին Սպանիացիք զկռիւս իւրեանց. Երեքին բաժանմունքն ևս ընդմտին 'ի վախճանի 'ի մեծ հրապարակին 'ի կեդրոն քաղաքին. և հաստատեցին անդէն զօթեվանս. Երեք բաժինք քաղաքին արդէն առեալ և կործանեալ էին. Չորրորդն էր այնպէս անձկապէս շրջապատեալ, մինչ և ոչ կարել դիմակաց լինել ընդ երկար ժամանակ յարձակողացն. որք մարտնչէին ը̄ նմա 'ի նոր ասպարիզէ իւրեանց վերնագոյն շահեկանութե̄ և ստուգագոյն ակնկալութե̄ յաջողութե̄. Ընճականք Մեքսիքացիք փոյթք ապրեցուցանելոյ զկեանս միապետին, յորմէ պատկառէին, հաւանեցուցին զԿուաթիմոծին խոյս տալ 'ի տեղւոջէն. ուր պաշտպանութիւն 'ի զրաւ ընդունայն էր, յուսացուցանելով զնա, թէ շարժելով առ զէնս զհեռաւորագոյն գաւառն կայսերութեն, դիւրին լինէր նմա տիրապետել թշնամեոյն. Ա̄ դիւրացուցանելոյ զկատարումն այսր առաջարկութե̄՝ ջանացան դեգերեցուցանել զյառաջադիմութիս Գօրթիսի առերեւոյթ բանարարութե̄ք ենթարկութեն, որպէսզի մինչ ուշադրութի̄ նր̄ պարապէր 'ի յարդարել զյօդուածս հաշտութեն, Կուաթիմոծին կարող լինիցի տալ զանձն 'ի փախուստ. Բայց գործ նց̄ էր ընդ զօրավարի միում այնքան աչալրջոյ և ներհմտացելոյ, մինչև ոչ թողուլ ըմբռնիլ յարհեստագործութեց նց̄. Գօրթէս կասկածելով զդիտաւորութէ նց̄, և ճանաչելով, թէ որքան զօրութի̄ պիտէր առ 'ի ընդդէմ կալ նց̄, կարգեաց զՍանտովալ զօրագլուխ, յորոյ հսկողութիւն կարէր բացարձակ վստահանալ, առնուլ զհրամանատարութի̄ պրիկանթինացն, և նշմարել զգուշութի̄ զա̄մ շարժումն թշնամւոյն. Սանտովալ ուշադիր պաշտօնին յանձն առեցելոյ՝ տեսանելով զքանօէս ինչ ստո՛ւարս՝ բեռնաւորեալս ամբոխիւ, որ թիավարէր, ձեւելով խոտորնակի զլիճն մեծաւ սրընթացութեամբ, անընդմիջաբար ետ նշան զհետ պնդիլ այնց. Կարծիա Հօլկուին, որ հրամայէր թեթեւագունին 'ի պրիկանթինաց, վաղվաղակի էհաս 'ի վ̃ նց̃. և բա՝ պատրաստիւր տալ հուր 'ի վ̃ առաւել յառաջադիմին, որ երևէր տանիլ զանձն ոք, որում այլք հնազանդէին. Բայց թիավարքն 'ի միում վայրկենի թո- 1521 ղին 'ի բաց զթիակսն. և ամենեքին նոքա, որք էին 'ի նաւակին ընկեցիկ առնելով զզէնս իւրեանց՝ երդմնեցուցին զնա արտասուօք և ճչիւ չառնել զայն, գոլով 'ի ներքս անդ կայսրն. Յայն- [illegible] կալանաւոր : ժամ Հօլկուին ընդոստ եղև ընդ ոմանց Սպանիացւոց 'ի քանօէսն. և Կուաթիմծին յառաջ գալով խոժոռ դիմօք ասաց ցնա. եմ կալանաւոր քո. բայց միայն աղաչեմ զքեզ, զի մի առնիցի թշնամանք ինչ կայսրուհւոյն և որդւոց իւրոց. Ոչ երևեցաւ առաջի Կորթիսի ոչ ամբարտաւանութեամբ բարբարոսի ուրուք, և ոչ հպատակութեամբ աղաչաւորի միոյ. „ Ես արարի՝ ասէ „ (յանդիման լինելով սպարապետին Սպանիացւոյ) „ զայն, որ վայելէր միապետի միում. պաշտպանեցի „ զժողովուրդ իմ մինչև ցվախճան. Ոչինչ „ այլ մնայ ինձ, բայց եթէ մեռանիլ. առ „ զայս դաշոյն, դնելով զձեռն 'ի վ̃ միոյն, զոր „ կրէր Կորթէս, վարսեա զայն 'ի լանջս իմ. „ և բարձ յինէն զկեանսն, որ ոչ ևս կարէ լինել „ պիտանի: „

Իսկ և իսկ իբրև գիտացեալ եղև 'ի Մէքսիքաց- 13 Օգոստ. Առումն քաղաքին : ւոց վիճակն իշխանակալի իւրեանց, դադարեաց հակառակութիւն. և Կորթէս էառ զստացումն այնր փոքրիկ մասին մայրաքաղաքին, որ մնայր տակաւին անվթար. Այսպէս եղերեցաւ պաշարումն Մէքսիքոյ՝ դիպուած առաւել յիշատակելի 'ի վիպատմութիւն տիրապետութեան Ամերիկոյ. Տեւեաց զեօթանասուն և հինգ աւուրս. որոց և ոչ մինն էանց առանց ինչ արտաքոյ կարգի ճգան 'ի միոյ կողմանէ 'ի կռուիլն և 'ի միւսմէ 'ի պաշտպանելն զքաղաք մի. յորոյ վիճակէ գիտէին պաշարողքն և պաշարեալքն, թէ կախեալ կայր վիճակ բովանդակ կայսրութեան. Նոյն այս դիմամարտութիւն առաւել յամառեալ. բայց եղեւ ևս առաւել հաւասարն քան զայլ զինչևիցէ 'ի մէջ բնակչացն հին և նոր աշխարհի. Մեծամական քանքարք Կուաթիմոծինու. Թիւ զօրաց իւրոց, մասնաւոր կայաւորութիւն մայրաքաղաքին իւրոյ այնքան զուգակշիռ էին վերնագունին Սպանիացւոց 'ի զէնս և 'ի կրթութեան, մինչզի պարտաւորէին սոքա թողուլ 'ի բաց զձեռնարկութիւն, եթէ պարծեցեալ էին մեկին 'ի վերայ անձանց իւրեանց. Կայսրութիւն Մեքսիկոյ քանդեցաւ վասն նախանձոտութեան մերձակայ ժողովրդոցն, որք երկնչէին 'ի կարողութենէն. և վասն ապստամբութեան հպատակացն, որք հեծէին 'ի ներքոյ լծոյն. և վառէին ապաժուժութեամբ թօթափելոյ զայն. Անշնորհութիւն ազգաց օգնականութեան նոցա Կօրթէս կարող եղեւ կատարել զայն, յոր առանց այսպիսի իմն հաստարանի թերեւս ոչ էր համարձակեալ ձեռնարկել. Բայց որքան պատմաբանութիւն արարեալ յինէն զառմանէ Մեքսիկոյ նուաճեցուցանէ ըստ միոյ մասին զզարմանաւոր պարծանս ոմանց պատմագրաց Սպանիացւոց, վերագրելով իմն առ պարզ և յայտնի պատճառս զայն, զոր նոքա ընծայեն բանաստեղծական քաջութեան հայրենակցաց իւրեանց, այնքան աճեցուցանէ ըստ այլոյ մասին զվաստակ և զընդունակութիւն Կօրթիսի, որ հանդերձ այնքան ձախողակութիւնքն ստացաւ զայնպիսի իմն գերակայութիւն 'ի վերայ անծանօթ ազգացն, մինչեւ առնուլ զնոսա 'ի գործիս վասն կատարման գաղափարաց իւրոց:

(25) Կ Պարակայութի ինձ այսօր պաշարման արժանի է մասնաւորաբար գիտացեալ լինելոյ. Պատմութին, զոր առնեն մատենագիրք Սպանիացիք զյոգնամթիւ զօրաց վարեցելոց 'ի կռիւ կամ 'ի պաշտպանութն Մեսսիքօի երևի անհաւատալի. Եթէ հաւատամք նմին իսկ Քօրթիսի, կալաւ նա համօրէն 'ի միում ժամանակի առ ծառայութն իւր զհարիւր յիսուն հազար Հնդիկս օգնականս. Կոմարա ասէ, թէ էին աւելի քան զերկերիւր հազարս. Հէրրէրա հեղինակ արժանահաւատ ասէ, թէ եղեն շուրջ երկերիւր հազար. Եւ ոչ ոք 'ի ժամանակակից վիպասանից որոշէ զթիւն անձանց, որք գտան 'ի Մէսսիքօ 'ի ժամանակի պաշարմանն. Բայց Քօրթէս 'ի զանազան առիթս յառաջ բերէ զթիւ Մէսսիքացւոցն, որք չարաչար կոտորեալ եղեն, կամ որք կորեան առ պակասութն կերակրոյ. Եւ եթէ կարեմք հաւատալ այսպիսի պարակայից, հաւանական է, թէ աւելի քան զերկերիւր հազար փակեալ էին 'ի քաղաքին. Բայց քանակութի դարմանոց կարևոր վս ապրստի այնպիսի մեծի բազմութն ժողովեցելոյ 'ի միում տեղւոջ միայն վս երից ամսոց՝ պահանջէր զայնքան յառաջատեսութի և մտադրութի վս հաւաքելոյ զայնս, մինչզի հազիւ կարէ ենթադրիլ, թէ կատարելի իցէ այս յերկրի միում, ուր հողագործութին էր այնպէս անկատար, ուր ոչ էին ընտանի չնչաւորք, և ուր ժողովուրդն էր բնականաբար անյառաջատես և անընդունակ կատարելոյ զայսպիսի մանուածոյ գաղափար ինձ. Սպանիացիք հանդերձ ամ խնամով և ուշադրութբ իւրեանց կեային յոյժ աղքատաբար. և էին յաճախ վերածեալք առ վերջին չքաւորութիւն. Քօրթէս յառթի միում յիշատակէ հարևանցի զապրուստ զօրաց իւրոց. և յետ խոստովանելոյն, թէ ստէպ ստէպ գտանիւր 'ի մեծի կարօտութն, յարէ, թէ ընդունէին 'ի բնակչաց երկրին նպաստ

կայացեալս 'ի ձկան և 'ի միրգս ինչ, զորս նա կոչէ կեռասս. Տիաց ասէ, թէ ունէին կարկանդակս մայիծի և զկեռասս երկրին. և յորժամ յեղանակ այսպիսի իրաց անցեալ էր, զայլ ինչ պտուղ, զոր նա անուանէ՝ Թունաս. Թէպէտ ն͞ց առաւել ախորժելի կերակուր էր արմատ ինչ, զոր Հնդիկք 'ի կեր առնուն վ͞ս Հասարակ կերակրոյ. զոր անուանէ նա Քուիլիթէս. Հնդիկք օգնականք ունէին զցեղ ինչ ծննդեան աւելի քան զՍպանիացիս. Ուտէին զմարմինս Մեքսիքացւոց, զորս սպանանէին 'ի պատերազմի. Տիաց Հաստատէ զպատմութի͞ն ն͞ր. և յաւելու, թէ յորժամ Հնդիկք դարձան 'ի Մեքսիքոէ յերկիր իւրեանց՝ տարան ընդ իւրեանս զստուար ի͞մն քանակութի͞ն մսոյ Մեքսիքացւոց յաղեալ և չոր իբր առաւել ցանկալի պարգև ընծայելի բարեկամաց իւրեանց. որպէսզի ունիցին զբերկրութի͞ն կերակրելոյ 'ի մարմնոց Հակառակորդաց իւրեանց 'ի սեպՀական տունս. Տէսօլիսն, որ ոչ կարէ Հանդուրժել, թէ ամբաստանիցին ՀամաշխարՀիկք իւր վ͞ս լինելոյն ընկերացեալ ընդ օգնականացն, որք սնանէին 'ի մարդկային մսոյ, Հնարի Հաւատել, թէ Սպանիացիք ըստ կարի ջանացան խափանել զուտելն զմարմինս Մեքսիքացւոց. Բայց նա ոչ ունի զվկայութի͞ն բուն վիպասանից, որք Հաստատեսցեն զայն. Եւ ոչ նոյն իսկ Քորթէս և ոչ Տիաց յանձին բերին զնմանակ ի͞մն խիղճ. և 'ի բազում առիթս յիշատակեն զխրախճանս Հնդկաց այնու եղանակաւ, որ կարէ յաղթաՀարել զմեզ, թէ ն͞ց ոչ առնէին զսոսկումն ինչ. Բայց նաև Հանդերձ այսու երևելի յաւելուածով ծննդեան վ͞ս Հնդկաց՝ Հազիւ կարելի էր նախաՀոգալ զապրուստ վ͞ս զօրացն, որք ամբառնային յոյն մեծ թիւ. որ ընթերցանի 'ի ժամանագիրս Սպանիացիս. Թէրևս լաւագոյն լուծումն այսր դժուարութ͞ն լինէր ընդգրկելն զկարծիս Տիացու

Քաս-

ՙՔասթիլեան առաւել ճշմարտաբանի քան զնմ
նախկին վկայաբանս. „ Յորժամ Կոմարա՝ ա–
„ սէ պատմէ յաւեթի խմբ, թէ էին անդ այնչափ
„ հազարաւորք Հնդկաց, և յայլում խմբ, թէ
„ էին այնքան հազարաւորք տանց յայսմ կամ
„ յայնմ քաղաքի՝ ոչ պարտէ ընծայել հաւատս
„ պատմաբանութեն նր, զի ոչ յառաջբերէ նա
„ զհաւաստիս ինչ. և թիւն յիրում ոչ ամբաւ–
„ նայ առ հինգերորդն այնր, որով պարծի նա.
„ Եթէ դիցուք 'ի միասին զզանազան թիւսն,
„ զորս յիշէ նա, երկիրն այն պարունակեալ էր
„ զմիլիոնս մարդկան աւելի քան զոր են 'ի ՙՔաս–
„ թիլիա „. Սակայն որչափ և պարտիցէ առ–
նել զերևելի ինչ նուազումն 'ի ծանօթութեցն
Սպանիացւոց շուրջ զՄեքսիքացւովք, այսու ամե
լեալ են սոքա յոգնաթիւք յոյժ յոյժ. որով–
հետև ոչինչ, բայց եթէ անբաւ վերնագունու–
թի թըշոյն խրախուսեալ էր զնս ընդդէմ ելա–
նել իննհարիւր Սպանիացւոց հրամայելոց 'ի սպա–
րապետէ միոջէ, որոյ ծանուցեալ էր ընդունա–
կութին. որպիսի էր ՙՔորթէս. Ոսկին և ար–
ծաթն, զոր գտին Սպանիացիք՝ ը ասելոյն ՙՔոր–
թիսի՝ ամբարձաւ առ 120000, մարչիլս. գումար
վայրագոյն քան զայն, զոր բաժանեալ էին փոքր
մի յառաջ 'ի Մեքսիքօի: ‖

ՙՈւրախութիւն Սպանիացւոց 'ի կատարելն զայս ՙՆշա–
տարժանելի ձեռնարկութիւն եանց ըստ չափին. գր–ԵԷ
Բայց վաղվաղակի դառնացաւ 'ի տեսանելն դե– տ——րոյն
րևացեալ զանյագ յոյսն զայն, որ քաջալերեալ խ–ՇԷ
էր զնս 'ի մէջ այնքան դժբաղդութեց և այն– ՙԱմ–
քան վտանգաց. փոխանակ անբաւ փարթամու– նէ–ցէ
թեն, զոր սպասէին գտանել 'ի գանձն Մոնթէ–
զումայի և 'ի մեհեանսն, ոչ զերծուցին, բայց
եթէ ամենևին սակաւ ինչս յաւերակաց այնր
տարաբաղդ քաղաքի. Կուաթիմոծին նախատեսա–
նելով զվախճան իւր հրամայեալ էր ընկենուլ

'ի լճին որ զինչ մնացեալ էր 'ի փարթամութեանցն կուտելոց 'ի նախնեաց իւրոց. Հնդիկք օգնականք մինչդեռ Սպանիացիք գրաւեալ էին 'ի պատերազմ ընդ թշնամւոյն գողացեալ էին զմեծագոյն մասն. Ապա գումարն բաժանելի 'ի մէջ տիրապետողացն էր այնպէս գուզնաքեայ, մինչ զի բազումք 'ի նոցանէ անարժան համարեցան ընդունել զայն, որ անկանէր նոցա 'ի բաժին. և տրտնջէին և բողոքէին ամենեքեան՝ ոմանք ընդդէմ Կորթիսի և մտերմաց իւրոց. զի կասկածէին, թէ գուցէ զանխլաբար սեպհականեալ էին որչափ ինչ առաւել մեծագին գոյր 'ի նմա. այլք ընդդէմ Կուաթիմոծինու. զոր ամբաստանէին վասն թագուցանելոյն յամառութեամբ զտեղին, ուր պահեալ էր զգանձ իւր:

Կուաթիմոծին եդեալ 'ի տանջանս: Փաստք, աղաչանք և խոստմունք 'ի գործ ածեալ եղեն առ 'ի ցածուցանել զնա. բայց այնպիսի սակաւ պտղով, մինչ զի երթալով երթայր զօրհանապազ և աճէր առաւել խռովութիւն. ուստի բերաւ նա առ ներգործութիւն իմն, որ արատեաց մշտնջենաբար զփառս ամենայն մեծագործ քաջութեանցն կատարելոց 'ի նմանէ. Առանց վերահայեցման առ արժանաւորութիւն Կուաթիմոծինու, կամ զգացուածոյ ինչ յարգանաց առ այն առաքինութիւն, զոր ցուցեալ էր նա, ենթադրեաց զտարաբաղդ արքայն 'ի միասին ընդ նախապետական սիրելոյ իւրում՝ տանջանաց առ 'ի բռնադատել զնա յայտնել զարքունի գանձն. զորմէ ամբաստանեալ էին, թէ թաքուցեալ էին. Կուաթիմոծին համբերեաց որում և իցէ նորագոյն անագորոյնութեան, զոր տանջիչք իւր կարէին երբէք հնարել, անյաղթելի արիութեամբ Ամերիկացւոյ միոյ պատերազմականի. Ընկեր իւր ընկճեալ 'ի բռնութենէ ցաւոյն դարձոյց զակն իւր թօշնեալ և արկեալ դէպ տեառն իւրում, երևէր աղերսել զհրաման յայտնելոյ զայն ամենայն, զոր գիտէր նա. Բայց քաջասիրտ արքայն ձգեալ առ նա զհայեցուած ինչ աւագութեան խառն ընդ զայրացման նահանջեաց զտկարութի՟ նր՟ ասելով ցնա „Թերեւս ընկողմնել՟ իմ ես 'ի վր՟ անկողնոյ վարդից,,. Անձն՟ յայսպիսի յանդիմանութէ տակաց նա մինչեւ իսպառ 'ի պարտաւոր լռութ՟ իւրում. եւ ապա անշնչացաւ. Քօրթէս զամօթի հարեալ յայսպիսի սոսկալի տեսարանէ, եբարձ զարքայական զենլին 'ի ձեռաց տանջողաց իւրոց. եւ յերկարեց՟ զկեանք մի վերապահել՟ այլազգ առ նոր անարգութիս եւ առ նորանոր չարչարանս:

Ա լիճակ գլխաւոր քաղաքին, որպէս երկոքին կողմանք նախատեսել՟ էին, որոշեաց զվիճակ կայսերութեն. Գաւառքն ենթարկեցան մի զկնի միոյ տիրապետողացն. փոքրիկ հատուածք Սպանիացւոց յետ հարեւանցիկս առնելոյ ընդ այնս ընդ մորին ընդ զանազան կողմանս մինչեւ ցմեծն Ովկիանոս հարաւային, որք ըստ կարծեացն Քօլոմպոսի երեւակայէին, թէ բանալոց էր զդիւրին իմն անցս առ արեւելեան Հնդիկս. եւ ապահովացուցանել թագաւորութեն Քասթիլլիոյ զբովանդակ նախանձեալ հարստութին այնց բերրի կողմանց. եւ կայտառ մտօք Քօրթիսի այնինչ սկսանէր կերպաւորել զգաղափարս առ 'ի ձեռնարկել յայն ծանրակշիռ գիւտ:

Նուաճին
գա-
ւառք
կայսե-
րութեն
[illegible]
[illegible]:

Քօր-
թէս [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

* Ոչ գիտէր նա, թէ մինչ դեռ տեւէր յառաջադիմութի յաղթական զինուց իւրոց 'ի Մեքսիքօ, ծանոյն իսկ գաղափարն, զորմէ սկսանէր յղանալ զխոկումն ինչ, արդէն ձեռնարկեալ էր եւ լրացուցեալ յայլմէ ումեմնէ. Իսկ քանզի այս է մի 'ի պայծառագոյն դիպուածոցն 'ի վիպասանութ՟ երկրագտութենցն Սպանիացւոց, եւ երկնեալ է զարդիւնս շահեկանս վասն ընդարձակ գաւառացն նուաճելոց 'ի Քօրթիսէ ը՟ թագաւորութբն Քասթիլիոյ, 'ի դէպ է առաջի առնել զորոշ իմն պատմութի ծագման իւրոյ եւ յառաջադիմութեց իւրոց: Ֆերտինանտոս Մակալհաէնս կամ Մաճէլլան ազնուական փօրթուկէզ գոլով ծառայեալ ընդ բա-

* [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 'ի
Մաճել-
լանոս:

զում ամս յարեւելեան Հնդիկս նշանաւոր քաջութե̃ 'ի ներքոյ համբաւաւոր Ալպուքուէրքեայ խնդրեաց զհատուցումն, զոր հաւատայր պարտ անձին իւրում վստահութե̃ բնականաւ զօրականի միում. Բայց մծ̃ իրիք պատճառի, որ ոչ երբէք եկն 'ի յայտ, արքայն իւր եւ սպարապետն իւր մերժեցին 'ի բաց զխնդրուածս նր̃ ցասմնոտ իմն գրութ̃. որ եղեւ անհանդուրժելի առն միում խելամտեցելոյ այնմ. զոր գործեալ էր. եւ որչափ իմիք արժանի էր. 'Ի յափշտակութեն իմիք քինախնդրութեն հրաժարեցաւ իսկապէս 'ի լինելոյ ըստուգ այնպիսոյ մն̃. եւ սլացաւ յարքունիսն Քասթիլեայ՝ յուսալով, թէ ընդունակութիւն իւր լինէր անդէն առաւել արդարապէս դատել. փութացաւ ընծայեցուցանել անդէն զանձն, առաջի դնելով կատարել ինքնին զգաղափար իմն, որոյ լրումն գիտէր, թէ խոցելոց էր 'ի սիրտ զմիապետն, ընդդէմ որոյ զայրացեալ էր ինքն. Նորա առաջի զսիրելի առաջարկութիւն Քրիստափորոսի Քոլոմպոսի գտանելոյ յարեւմտից կողմանէ զանցս ինչ առ Հնդկաստան առանց ինչ դիպելոյ յայն բաժին երկրագնտոյս, որ էր շնորհեալ Փորթուկեզաց սահմանաւորութեն գծիւն. Հիմն էր նա զայս իւր բարւոյ ելից 'ի վր̃ տեսութեանց այնր մեծի նաւորդի՝ հաստատելոց 'ի բազմաց դիտողութեանց եւ 'ի ճանաչմանէ նաւական ներհմտութեն իւրոյ. ուր եւ հայրենակցացն իւրոց, որք լեալ էին յարեւելեան Հնդիկս. Նա ինքն խոստովանէր, թէ ձեռնարկութիւն էր դժուարին եւ բազմածախ. եւ ոչ էր մարթ փորձել, բայց եթէ գնդաւ միով երեւելեաւ եւ հանդերձելով ռոճկօք գոնէ մծ̃ երկուց ամաց. Ուղղեցաւ բարեբաղդութե̃ առ գործակալ մի, որ ոչ էր ընդունակ զարհուրելոյ մծ̃ յանդգնութեն իրիք առաջարկութեն, եւ ոչ մծ̃ ծախուցն, որ պիտոյանայր անդէն առ 'ի դնել զայն 'ի գործ. Կարդինալն Քսիմենէս, որ ուղղաւորէր յայնմ ժամանակի զիրակութիւն Սպանիոյ, ճանաչելով յառաջին տեսութեն, զինչ բարգաւաճումն փարթամութեն միանգամայն և փառաց զեղանէր ՚ի հայրենիս իւր, եթէ յաջողէր առաջադրութեն Մաճէլլանու, մեծաւ սիրով մատոյց զունկն. Կառոլոս Հինգերորդ ՚ի դարձին իւրում ՚ի Սպանիա հաւասար վառմամբ հաւանեցաւ ընդ խորհուրդ նր̃. և վաղվաղակի ելին հրամանք պատրաստելոյ զգունդ մի հրապարական ծախուք. որոյ հրամանատարութիւն տուեալ եղև Մաճէլլանու. զոր և թագաւորն պատուեաց կարգաւն սրբոյն Յակոբայ և անուամբ հանրական զօրագլի :

Ճանապարհորդութիւն իւր :

՚Ի ամսեան Օգոստոսի 1519, Մաճէլլան առագաստ վերացոյց ՚ի Սիվիլիոյ հինգ նաւուք. որք ըստ համարման այնր դարու վարկուցեալ եղեն բազմազօր. թէպէտ մեծագոյնն ոչ էր աւելի քան զհարիւր քսան թօննէլլատս. Խուժանն ողջոյն ամբառնայր յերկերիւր երեսուն և չորս արս. յորոց միջի էին ոմանք յառաւել անուանի նաւուղղացն Սպանիացւոց և բազում նաւավարք փորթուկէցք. յորոց վարժութեն իւր առաւել փորձառուեցելոյ Մաճէլլան գնէր զևս մեծագոյն վստահութի իւր. Յետ հանդիպելոյ ՚ի Քանարիայն ձգեցաւ ուղղակի ընդ միջօրէ դէպ գիշերահասար գծին առ եզերբն Ամերիկոյ. Բայց յամեցուցաւ այնպէս յերկար ժամանակ յանհողմութենցն. և ծախեաց զայնքան յորոնելն զանցս ինչ յովկիանոսն հարաւային, մինչզի ոչ ժամանեաց յորձանսն Տէլափլաթայ մինչև ՚ի 12 յունվարի. Այն ընդարձակ բացուած, ընդ որ մեծ շփոթ ջուրց թափի յԱթլանտեանն ովկիանոս, հրաւիրեաց զնա մտանել անդր. Բայց յետ առաջատեւելոյ զաւուրս ինչ, կնքեաց ՚ի սակաւ խորութէ հոսանացն և ՚ի քաղցրութէ ջուրցն, թէ ցանկացեալ նեղուցն ոչ էր յայնմ տեղւոջ. և շարունակեաց զգնացս իւր դէպ միջօրէի. Իչ հաս 'ի 31 մարտի 'ի նաւահանգիստն սրբոյն Յուլիանու իբր 'ի քառասունևութն հարաւային աստիճանսն հասարակածին, ուր բացորոշեաց ձմեռել. Յայսմ անհաճոյ կայաւորութեն կորոյս զնաւ մի 'ի նաւահանգիստ իւրմէ. և Սպանիացիք կրեցին այնքան մեծ չափազանց խստութեան կլիմային, մինչ զի խումբն երից նաւուց իւրոց հանդերձ զօրագլխօքն վտարանջեաց. և խնդրեաց 'ի բաց թողուլ զերազական առաջարկութիւն յուսահատ բաղդորդի միոյ և դառնալ 'ի Սպանիա. Բայց Մաճելլան զայս վտանգաւոր ամբոխումն ճգամբ իմն պատրաստական և անվեհեր քաջասրտութեան, պատժելով զգլխաւորսն նշանաւոր պատժով. Մնացորդաւ հետևողաց իւրոց սանձահարելոց արդարև, այլ ոչ տակաւին հաշտելոց ընդ առաջարկումն իւրում՝ շարունակեաց զճանապարհ իւր ընդ հարաւակողմն. և եգիտ 'ի վախճանի մօտ 'ի յիսներորդ երրորդ աստիճան լայնութեն զբերան իրիք նեղուցի. յոր եմուտ ինքն քամահելով ըղտրտունջս և զկշտամբանս ամբոխին հրամայեցելոց յիւրմէ. Յետ առագաստելոյ աւուրս քան յայն աղամող և վտանգաւոր խոխոմ, որում ետ զիւր իսկ անունն, և ուր մի 'ի նաւուց իւրոց 'ի բաց ելթող զնա, յանդիման եղև տեսութեն նոր մեծն Ովկիանոս հարաւային. և արտասուօք ուրախութեն գոհացաւ զայ. որ պսակեալ էր զձեռնարկութեն նր. Սակայն դեռևս էր նա 'ի մեծագոյն տարակացութեն, քան զոր կարծէր, յառարկայէ բաղձանաց իւրոց. Հետևեցաւ յերիս ամիսս և քսան աւուրս 'ի միօրինակ ուղղաւորութեն իմիք ընդ հիւսիսային արևմուտս առանց երբէք նշմարելոյ զցամաք. Յայսմ ճանապարհորդութեն երկայնագունի քան զոր երբէք լեալ իցէ յանդրաւելի Ովկիանոսին, կրեաց զանհաւատալի դժբաղդութիս. Համբարք իւր էին զրեթէ 'ի վերջ. ջուրն նեխէր. մարդիկն վերածեալ էին առ այնպիսի փոքրիկ բաժին հանապազօրեայ կերակրոյ, մինչզի ոչ կարէին պահել զկեանս. և սքօրպութ ախտն առաւել զարհուրելին քան զա̃մ հիւանդութիւնս, որք լլկեն զարս ծովու, սկսանէր ծաւալիլ 'ի մէջ խուժանին. Ա՛ի միայն պարակայ եղև այն, որ ետ նց̃ զքաջալերութի̃ իմ̃. վայելէին յանընդհատ ընթացս ինչ գեղեցիկ ժամանակի հանդերձ այնպէս նպաստաւոր հողմովք, մինչզի Մաժէլլան ետ այնմ Ովկիանոսի զանունս՝ խաղաղական. զոր և պահէ մինչև ցայժմ. Ներածեալք 'ի սահմանս ընկճել լինելոյ 'ի կրից, դիպեցան 'ի կոյտ ինչ փոքրիկ, բայց յուռթի կղզեաց. որք մատակարարեցին նց̃ զովացմունս այնպիսի առատութ̃բ, մինչզի 'ի սուղ ժամանակի վերահաստատեցաւ առողջութիւն նց̃. Յայսց կղզեաց, որոց ետ զանուն՝ Լօս լատրօնէս, յառաջադէմ եղև յընթացս իւր. 6 Մարտի: և արար վաղվաղակի զառաւել իմն ծանրակշիռ գիւտ այլոց կղզեաց ծանուցելոց այժմ անուամբ Փիլիփփինեայց. 'Ի միում այսց պատահեաց դժբաղդաբար կռիւ ինչ ընդ ազգայնոցն, որք 'ի դիմի հարան նմա յոդնաթիւ գնդաւ քաջազէն զօրաց. 25 Ապրիլի: և մինչ մարտնչէր նա 'ի գլուխ իւրոցն սովորական քաջութ̃բ իւրով՝ անկաւ մեռեալ ձեռամբք այնց բարբարոսաց 'ի միասին ընդ զանազան պաշտօնատարաց իւրոց:

Նահատակութիւն յառաջադէմ եղև 'ի ներքոյ այլոց հրամանատարաց. Յետ ճանաչելոյ զյոլով փոքրիկ կղզիս սփռեալս յարևելեան մասին Հնդկայինն Ովկիանոսի դիպեցան մեծի կղզւոյն Պօռնէօ. և մտեալ 'ի վերջոյ 'ի Թիտորէ մի 'ի Մօլուքքայից ազդութ̃բ փօրթուկեզացն. որք ոչ կարէին հաստ լինել, թէ զիա՞րդ Սպանիացիք ունելով զարևմտեան ընթացս ժամանեալ էին յայն արգելեալ աթոռ հարստագոյն տուրևա-

ռուութեն իւրեանց. զոր ինքեանք գտեալ էին առագաստելով հակադրեալ իմն ուղերձմամբ. Յայնմ տեղւոջ և 'ի մերձակայ կղզիսն գտին զժողովուրդ մի տեղեակ բարութեց տարածեալ իրէք վաճառականութեն և փափագող բանալոյ զհաղորդակցութի ընդ նորոյ իմիք ազգի. Սոին զրեան առաւել մեծագին ծխանելեաց, որք են երևելագոյն բերք այնց կղզեաց. որպէս և զպէսպէս առհաւատչեայս պերճ տարազուց, զորս գտին ժոյլ գաւառսն այց արարեալս 'ի նոցանէ. և այսպիսի ընչիւք Վիգթօրիայն և երկու նաւքն, որք մնացեալ էին 'ի նաւահանգիստն դարձան յԵւրոպիա ընդ հրամանատարութե Յօհաննու Սեբաստիանոսի Գանոյեան. Սա հետևեցաւ յընթացս փորթուկէզաց ընդ գլուխն բարեյուսութե. և յետ բազում փորձանաց և տառապանաց էհաս 'ի սան Լուքա 'ի 7 Սեպտեմ. 1522, արարեալ զշրջանս երկրագնտոյս 'ի միջոցի երից ամաց և քսան և ութն աւուրց:

Թէպէտ տարաժամ մահն զրկեաց զՄաճէլլան 'ի հաճութե հասուցանելոյ 'ի վախճան զայս մեծ գործառնութի, սակայն ժամանակակիցք իւր առնելով արդարութի յիշատակի նր և քանքարաց իւրոց վերագրեցին նմա ոչ միայն զպատիւ կերպաւորելոյն զգաղափարն, այլև յաղթելոյ ամ խոչից, որ հակառակէր կատարման նր. և 'ի ներկայ դարուս անուն իւր տակաւին համարի 'ի մէջ առաւել համբաւաւոր նաւորդաց. Նաւական փառքն Սպանիոյ խաւարեցոյց զայլ ամ ազգայն. և եզական իմն յաջողութե ստացաւ նա զարժանաւորութի յընթացս սակաւ ամաց գտանելոյ զնոր իմն ցամաք խուն ինչ նուազ ընդարձակ քան զվաղեմն ծանուցեալն և ստուգելոյ փորձառութե զկերպ և զտարածութի հողաջրեայ գնտոյ:

Սպանիացիք ոչ էին շատացեալք պարծանօքն լինելոյ առաջինք 'ի առնել զպտոյտն երկրի. սպա-

սէին

տէին հանել զմեծամեծ շահս յայսմ նորոյ ճգանէ նաւարկութեան իւրեանց. Պնտէին որք գիտնականք 'ի մէջ նոցա, թէ կղզիք ծխանելեացն և զանազանք 'ի փարթամագոյն գաւառացն արևելից պատկանէին իրաւամբք առ Թագաւորութիւն Գասթիլիոյ 'ի հետևութենէ բաժանմանն արարեցելոյ Աղեքսանդրոսէ վեցերորդէ. Վաճառականք առանց մտադրելոյ այսպիսի քննութեանց պարապէին անյագաբար յայն շահաւէտ տուրևառութիւն. որ նոցա առաջի ընծայիւր. Փորթուկէզք խռովեալք վասն 'ի ներքս մխելոյ այսպիսի ահարկու տարփակցաց առնէին քանքատանս և զվաճառս Եւրոպիա, մինչդեռ Ասիա հակառակէին շահավաճառութեան Սպանիացւոց զօրութեամբ զինուց. Կառոլոս ոչ տեղեկացեալ տակաւին ըստ բաւականին ծանրակշռութեան այսր մեծագին ճիւղոյ վաճառականութեան, կամ ցնդեալ 'ի բազմապատկութեանց խորհրդոց իւրոց և գործողութեանց՝ ոչ ետ հպատակաց իւրոց զկարևոր պաշտպանութիւն. Ի վախճանի յոռեգոյն ևս պայման մտից իւրոց յաղագս ճգանց զինուցն յամենայն կողման Եւրոպիոյ, և երկիւղն. գրաւեալ լինելոյ յայլ խմ պատերազմ ընդ Փորթուկալլիոյ շարժեցին զնա տալ զկարծեցեալ իրաւունս իւր 'ի վերայ Մօլուքքայից՝ Փորթուկէզաց երեքհարիւր յիսուն հազար տուքաթից. Սակայն վերապահեաց Թագաւորութեանն Գասթիլիոյ զիրաւունս վերստին կենդանացուցանելոյ զպատճառս իւր վճարմամբ այնր գումարոյ. Բայց յետոյ այլք առարկայք զբաղեցուցին զուշադրութիւն նորա և զյաջորդաց իւրոց. և Սպանիա վերջապէս արտաքսեալ եղև 'ի ճիւղէ միոջէ շահավաճառութեան ընդ գրկեցելոյ 'ի նմանէ ակնկալութեամբ անբաւ իրիք շահեկանութեան :

Թէպէտ նոյնն բարձի թողի արար զտուրևառութիւն ընդ Մօլուքքայից, այլ ոչ եթող հանել զօգուտ 'ի գիւտիցն Մաճէլլանու. Փիլիպպոս երկ-

րորդ

բորդ յամին 1564. վերածեաց 'ի նուաճութիւն զկղզիսն, զորս նա գտեալ էր յարեւելեանն Ովկիանոսի. եւ հաստատեաց անդէն զշինուածս. յորոց միջի եւ թագաւորութիւնն Նորոյ Սպանիոյ տեւէ տակաւին կանոնաւոր իմն հաղորդակցութեամբ. զորոց զբնութիւն պարզաբանեսցուք 'ի բուն իւրում տեղւոջ. Դարձցուք այժմ առ գործսն Նորոյ Սպանիոյ:

Պատճառն 'ի բաց շարժելոյ զԿօրթէս:

'Ի ժամանակին, յորում Կօրթէս ստանայր հայրենեաց իւրոց զնոր երկրաստանս, եւ նախապատրաստէր զճանապարհ առ ապագայ ստացմունս, կալաւ զեղական ճակատագրութիւն լինելոյ ոչ միայն զրկեալ 'ի յանձնարարութենէ իւրմէ եւ յիշխանութենէն 'ի նոյնիսկ արքայէն, այլ եւ անկ եղեւ եւս նմա համարիլ իբր հպատակ անհնազանդ եւ խռովարար. Յաղագս համբաւոյն, զոր ունէր Ֆօնսեքա Եպիսկոպոսն Պուրկոսի, գնացք իւր յառնուլն յինքն զկառավարութիւն Նորոյն Սպանիոյ յայտ արարեալ եղեւ իբր մեղապարտ իմն յափշտակութիւն եւ արհամարհութիւն արքայական մեծ վայելչութեանն. եւ Քրիստոփանոս Թափիայ ընկալաւ զպատուէր, որ տայր նմա իշխանութիւն իջուցանելոյ զԿօրթէս, դնելոյ 'ի դիպահոջ զանձն նր, յարքունիս առնլոյ զինչս իւր, եւ առնելոյ զխստագոյն քննութիւն գնացից նր. եւ վերառաքելոյ զյառաջեկեալ ծանօթութիւն առ խորհրդարանն Հնդկաց. որոյ Եպիսկոպոսն Պուրկոսի էր նախագահ. Եօթնեակս ինչ զկնի անձնատրութեանն Մեքսիքոյ Թափիայ եհաս 'ի Վերաքրոզ արքունի պատուիրանաւ մերկացուցանելոյ զտիրապետողն յիշխանութենէ իւրմէ եւ վարելոյ զնա իբր յանցաւոր. Բայց Ֆօնսեքա ընտրեալ էր զանյարմար գործի մն թափելոյ զքէն իւր 'ի վր Կօրթիսի. Թափիայ ոչ ունէր ոչ զհամբաւ եւ ոչ զտաղանդս կարեւորս մն այսպիսի իմն պաշտօնի. Մինչ Կօրթէս կեղծէր զառաւել տուեալ ակնածու յարգանս առ աւագութիւն կայսեր, 'ի ծածուկ առնոյր խորհուրդս առ 'ի խափանել զարդիւնս պատուիրակութեան Մեքսիկայի. պատաղեցուցանելով զնա և զհետևողս իւր 'ի բազմապատիկ ընծեռմունս և համախօսութիւնս, յորս 'ի գործ էած երբեմն զսպառնալիս, այլև յաճախագոյնս՝ պարգևաբաշխութիւնս և զխոստմունս, հուսկ յետոյ հաւանեցոյց զտկար մարդն զայն առ 'ի թողուլ 'ի բաց զգաւառն, որում չէր նա արժանի կառավարելոյ:

'Ի դէրն հանէ զնոս:

Բայց հանդերձ երջանիկ յաջողակութեամբն, որով խուսափեալ էր յայսպիսի իմն հարուածոյ, ·Քօրթէս էր այնպէս յաղթահարեալ 'ի վերայ ոչնչութեան հիման իրաւանց իւրոց, մինչ զի արձակեաց զերկուս պատգամաւորս 'ի Սպանիա հանդերձ մեծաշուք պատմութեամբ յաջողութեան զինուց իւրոց, հանդերձ առ հաւատչէիւք բերոց երկրին և հանդերձ ճոխ ընծայիւք առ ինքնակալն իւր գրաւական իմն փարթամութեանցն, զորս հանդերձելոց էին նմա նոր ստացուածքն խորհեալ 'ի նմանէ. Աղաչէր զնա, զի 'ի փոխարէն ամենայն ծառայութեանց իւրոց հաստատեսցէ զգնացս իւր. և զի վստահացեալ լինիցի նմա կառավարութիւն այնց երկրաստանաց, զորս առաջնորդութեամբ իւր և քաջութեամբ հետևողաց իւրոց յաւելեալ էին 'ի թագաւորութիւն ·Քասթիլիոյ. Սպասաւոր եղև պարագայութիւն, յորում պատգամաւորք իւր ժամանեցին յարքունիսն. 'Ի նմին իսկ կէտի խաղաղացեալ էին ներքին շարժմունքն 'ի Սպանիա. որք վրդովեալ էին զսկզբունս թագաւորութեան Կարոլոսի. Կարօղէին գործակալքն դարձուցանել հեշտեաւ զուշադրութիւն իւրեանց առ արտաքին իրողութիւնս. Պատմութիւն յաղթութեանցն ·Քօրթեսի լնոյր զարմացմամբ զքաղաքակիցս իւր. Յարգ և մեծութիւն տիրապետութեանց իւրոց լինէր առարկայ բարձրագոյն յուսոց նոցա. Անկ զօրպիսի ա-

Ուղղաւորէ նորոգ յաջ ժամանէնօ 1522. 15 Մայիսի:

րաս

րատ և ընկալեալ էր նա մ՟ն անկանոնաւորութեան գնացից իւրոց՝ բոլորովին ընկեցաւ 'ի պայծառութենէ և 'ի վաստակոց մեծամեծ քաջագործութեանց իւրոց. ա՟մ՝ ոք դատապարտէր զգտեալն զայր մի, որոյ ծառայութիւնք արժանի էին մեծագոյն տրուհութեան. Հրապարական բարբառն յայտ արարաւ 'ի շնորհս պաշտանէից իւրոց. և Կառոլոս հաստատելով 'ի Սպանիա զայնու ժամանակաւ ողջագուրեաց երախտաւորդական փառօք զգատմունս հպատակաց իւրոց. Ընդդէմ գանգատանացն Վէլասքուէզայ և աչառու ցուցմանցն Եպիսկոպոսին Պուրկոսի անուանեաց նա զ՝Քորթէս ընդհանուր զօրագլուխ և վարիչ նորոյն Սպանիոյ, դատելով, թէ ոչ գոյ անդ անձն որ այնքան ընդունակ պահելոյ զարքայական աւագութիւն, և հաստատելոյ զբարեկարգութիւն 'ի մէջ Սպանիացւոց և հպատակաց իւրոց Հնդկաց, որքան հրամանատարն. որում առաջինքն հնազանդէին կամակար. և յորմէ վերջինքն յերկար ժամանակաց հետէ
1522 սովորեալ էին երկնչել և ակնածել:

Նա է կարգեալ զօրագլուխ հանրական և կառավար նորոյն Սպանիոյ:

Նաև յառաջքան զընդունելն իրաւարանութեան իւրոյ զայս օրինական հաստատութիւն. Քորթէս համարձակեալ էր վարել զռովանդակ իշխանութիւն կառավարի. և պէսպէս տրամադրութիւն ջանացեալ էր առնել զտիրապետութիւն իւր կայուն և շահեկան մ՟ն հայրենեաց իւրոց. Նացորոշեաց հաստատել զկառավարութիւն 'ի նոյն նախկին աթոռ իւր. և բարձրացուցանել զքաղաքն Մէքսիկօ յաւերակաց իւրոց. և գոլով յղացեալ զվերամբարձ ճանաչմունս տէրութեան, որոյ արկանէր զհիմունս, սկսաւ վերստին շինել զմայրաքաղաքն 'ի վ՟ն գաղափարի միոյ, որ առ սակաւ սակաւ փոխատրեաց զայն քաղաք առաւել մեծագործ 'ի նոր աշխարհին. 'Ի նմին ժամանակի պարապեցոյց զարս ընդունակս 'ի խնդիր հանքաց 'ի զանազան կողմանս երկրին, և եղաց զոմանս, որք

Քա- [illegible]

են առնել հարուստք, քան որչափ մինչև ցայժմ գտեալ են Սպանիացիք յԱմերիկա. Առաքեաց զնախապետական պաշտօնատարս իւր 'ի հեռաւոր գաւառս. և խրախուսեաց զնս բնականալ անդէն, ոչ միայն շնորհելով նց զերկայն տարածութիւն երկրի, այլև զնոյն տէրութի 'ի վր Հնդկացն և զնոյն իրաւունս առ ծառայութի նց, յորս վայելէին Սպանիացիք 'ի կղզիսն:

Ապստամբութի Մէքսիկացւոց ի տնօրինութէ Սպանիացւոց:

Այլ ոչ առանց դժուարութեն կայսրութեն Մէքսիքեան կարողացաւ վերածիլ 'ի կերպ Սպանիական կողոնիոյ. Կատաղի և յուսահատ ազգայինք վն ճնշմանն, ընդ որով հեծէին, մռանային ատէպ զվերնագունութի թշնամեաց իւրեանց. և ընթանային առ զէնս 'ի պաշտպանութի ազատութեն իւրեանց. Բայց նախազօրանայր յամ մրցման քաջութի և կրթութին Եւրոպական. սակայն առ մեծ անարգանս երկրին իւրեանց Սպանիացիք շղախէին զփառսն. որ զեղանէր 'ի կրկնապատկեալ յաղթութեց իւրեանց եղանակաւն, որով վարէին ընդ պարտեցելոցն. Յետ կալանաւորելոյ զԿուաթիմոծին, և եղանելոյ տր մայրաքաղաքի իւրոյ ենթադրեցին, թէ արքայն Կաստիլիոյ եմուտ 'ի ժառանգութի ամ իրաւանց կալանաւոր միապետին. և ցուցին համարիլ զամ ծիգն Մէքսիքացւոց առ 'ի պահել զանկախութի իւրեանց իբր ապստամբութի իմն հպատակաց ընդդէմ արքային իւրեանց, կամ վտարանջութի գերեաց ընդդէմ տն իւրեանց. Ի ներքոյ դրութեն այսց անհիմն սկզբանց՝ բռնաբարէին զինչևիցէ իրաւունս սրբազնագոյնս 'ի մէջ ազգացն թշնամեաց. Ս̃ խռովութեն իւիք եղելոյ վերածէին զժողովուրդ գաւառացն, զորս նուաճէին, առ նուաստագոյնն քան զամ պայմանս. այս է, առ գերութին անձնական. Գլխաւորքն համարեալք պարտաւորք մեծագոյն յանցանաց պատուհասեալ լինէին մեծագոյն խստութբ. և

մասմատնեալ էին 'ի մահ առաւել խայտառակ և անագորոյն կերպիւ, զոր կարէր գտանել լրբութիւն և անողորմութիւն տիրողաց իւրեանց. Հաշուեա թէ յամ գաւառի Մ`եքսիքեան կայսրութեան յառաջադիմութիւն զինուցն Սպանիացւոց նշանաւորեալ է արեամբ, և այնպիսի դժնեայ գործովք, մինչև անպատիւ առնել զքաջութիւն, որ ածէր զնոսա առ փառս. 'Ի գաւառին Փանուքօ վաթսուն քացիքեք, կամ զօրավարք և չորեքհարիւր ազնուականք կենդանւոյն կիզեալ եղեն ամենեքեան 'ի միում նուագի. Իսկ ոչ 'ի գործ ածաւ այս խժականութիւն 'ի վառման իմիք կատաղութեան կամ 'ի վայրագոյն պաշտօնատարէ միոջէ. Այլ և գործ Սանտովալայ զօրագլխի. որոյ անունն ունի զերկրորդ տեղին 'ի տարեգրութիւնս Նորոյն Սպանիոյ. և կատարեցաւ զկնի հանդիսաւոր իմն խորհրդակցութեան ընդ Գորթիսի. և առ 'ի լրացուցանել զսոսկումն տեսարանին՝ ժողովեալ եղեն որդիք և ծնողք եղկելի սպանդիցն, և ստիպեալք առ 'ի կալ 'ի զննին վերջին տագնապին նոցա. Արդեւ իբր անկարելի յաղթել 'ի բարբարոսութեան այսպիսի իմն զարհուրելի օրինակի դժնէութեան. և սակայն զկնի այսր եկն և այլ իմն օրինակ, որ խոցեաց զՄ`եքսիքացիս խորագոյնս՝. վասն զի եղև առաւել զգալի ցոյց անկման նոցա և սակաւ նկատմանն, զոր բարձրամիտ տեարք իւրեանց ունէին վասն նախկին արժանաւորութեան և շքոյ տէրութեան նոցա. 'Ի վասն թեթև իմն կասկածանաց, ոչ թէ Կուաթիմոծին կերպաւորեալ իցէ զխորհուրդ թօթափելոյ զլուծն, և գրգռելոյ զնախկին հպատակս առ 'ի առնուլ զզէնս, Գորթէս առանց այլ ինչ հառաչելոյ հրամայեաց, զի տարաբախտ կայսրն 'ի միասին ընդ քացիքէից Թեծեվքօի և Թլաքոպայի երկուց երևելագոյն անձանց բովանդակ կայսերութեանն կախեալ լինիցի. և Մ`եքսիքացիք շուարմամբ և սոսկմամբ տեսին զայս նշաւակ պատուհաս տուեալ տեարցն, զոր սովոր էին ակնածել յարգանօք հազիւ վայրագունիւ քան զայն, զոր մատուցանէին աստուծոց իւրեանց:

(26) ‖ 'Ի յառաջ բերելն զհարստահարութիւ և զանողորմ գնացս տիրապետողացն նորոյն Սպանիոյ ոչ հետևեցայ Բարթուղոմեայ Տէլասքազայ իբր առաջնորդի իմում. պատմութ՟ի իւր է յայտնապէս գիզալարդեալ. 'Ի նոյն իսկ Քօրթիսէ և 'ի Կոմարայ, որ գրեաց ընդ աստեցութ՟ե նո՟, առի զպատմութ՟ի իմ, որ զպատուհասէ փանուքացւոց. և նոքա յառաջ բերեն զայն առանց ինչ պարսաւանաց. Տիաց ընդդէմ սովորութ՟ե իւրոյ խօսի զայնմանէ ընդհանուր եղերօք. Հերրէրա անձկացող նուաղեցուցանելոյ զայս խժական գործողութ՟ի քաղաքակցաց իւրոց՝ թէպէտ յիշատակէ զվաթսուն քազիքէան և զչորեքհարիւր ազնուականսն, որք դատապարտե՟լ եղեն առ բոցս, սակայն ասէ, թէ միայն երեսունք այրեցան. և թէ այլք ընկալան զներումն. Բայց այս հակառակ է միայութ՟ե սկզբնական պատմագրաց. և մասնաւորաբար Կոմարայի. որ ցուցանէ, խորհրդակցեալ ընդ նմ՟. որովհետև զհետ երթայ զանազան բացատրութ՟եց նց՟ յայս անցս. Պատիժն տուեալ Մոնթեծումայի յառաջբերեալ է յառաւել արժանահաւատ հեղինակաց Սպանիացւոց. Ըստ այսմ պատմութ՟ե ոչ երևի, թէ Քօրթէս ունիցի զստուեր ինչ յայտ յանդիմանութ՟ե, որ արդարացուսցէ զայսպիսի իմն ներգործութ՟ե անգթութ՟ե. Թօրքուէմատա հանեալ է 'ի վիպասանութ՟ե իմեքէ Թեզէվքօի գրեցելոյ 'ի լեզու Մէսիքեան զմանրամասն իմն պատմութիւն այսր դիպուածոյ յոյժ առաւել նպաստաւոր Կուաթիմօծինու քան զայն, զոր տան նմա պատմագիրք Սպանիացիք. Տիաց ասէ, թէ Կուաթիմօծին և տանջեալ ընկերք իւր դաւանեցին զանմեղութ՟ի իւրեանց մինչև 'ի վերջին շունչն. և

թէ բազումք 'ի զօրականացն Սպանիացւոց դատապարտեցին զայս գործողութիւն Քօրթիսի իբր անօգուտ և անիրաւ ։

Օրինակն Քօրթիսի և գլխաւոր պաշտօնատարաց իւրոյ խրախուսեաց զզօրականսն 'ի գործել զծանրագոյն ոճիրս. Նունօն Կուծման մասնաւոր իմն եղանակաւ տրտմաւորեաց զպայծառ անունն անողորմութե̃քն գործեցելովք 'ի նմանէ 'ի պէսպէս շահատակութիս իւր ։

Այլ պարակայ ինչ ապրեցոյց զՄէսսիքացիս 'ի մեծագոյն եղծմանէն, և թերևս 'ի բոլորականէ և 'ի նմանւոյ այնմ, որ անմարդաբնակ արար զկղզիսն. Առաջին տիրապետօղք ոչ ձեռնարկին որոնել զմեծագին հանքս 'ի խորս երկրի. Սոքա ոչ էին ոչ ըստ բաւականին փարթամք առ 'ի յառաջ տանել զբազմածախ աշխատութիւնս, որք պահանջէին առ 'ի բանալ զխորին բաւիղսն, ուր բնութիւն թաքուցեալ է զերակս ոսկւոյ և արծաթոյ, և ոչ ըստ բաւականին ուշիմք առ 'ի բարւոք կատարել զգործողութիւնս, որովք պիտի զատուցանել զն̃ն յիւրաքանչիւր կղկղանաց իւրեանց. Շատացան պարզագոյն ոճին, որ 'ի գործածեալ էր 'ի Հնդկաց, լուծանալոյ զհողն, զոր հեղեղատք վայրաքարշէին 'ի լերանց, և հաւաքելոյ զհատսն զնստեալսն 'ի նմա. Հանք Նորոյն Սպանիոյ, որք թափեցին զգանձս իւրեանց այնպիսի զեղմամբ 'ի վ̃ր ա̃մ մասին երկրագնտոյ, ոչ յայտնեցան, բայց եթէ բազմօք ամօք զկնի տիրապետութ̃են. Յայնու ժամանակաւ մուծաւ կառավարութի̃ մի առաւել կարգաւորեալ. և լաւագոյն կարգ 'ի կողոնիայն. Ներհմտութիւն պտուղ առաջնոց սխալանաց թելադրեալ էր զբազում պիտանի և մարդկային կանոնաւորութի̃ս առ 'ի պատսպարել և պահպանել զՀնդիկս. և թէպէտ կարեւոր էր յայնժամ աճեցուցանել զթիւ պարապեցուցելոցն 'ի հանքսն, որք և սահմանեալ

էին

քին առ տեսակ իմ՟ն աշխատութ՟ն առաւել վնասակար մարդկային բաղկացութ՟ե, սակայն ոչ յոյժ կրէին, և ոչ այնքանիք կորնչէին, որքան 'ի ժամանակի առաջնոց տիրապետողաց ։

Տարապայման կոտորած մահուն 'ի մէջ Հնդկաց վրիպեցոյց զայս նոր տեարց իւրեանց. Սակաւք փարթամացան հետազօտութ՟ք իւրեանց. Առաջին մշակք կողոնիոյն ըստ հասարակ բաղդի իւրեանց պարտէին պատահիլ վտանգի. և կռուիլ ը՟ դժուարութ՟ց. պտուղք յաղթութ՟ց ն՟ց և տաժանմանց էին վերապահեալք վ՟ն ժամանակաց անդորրութ՟ն. և հասունանային 'ի բարերարութ՟ի յաջորդաց, որք ունէին զճարտարութ՟ի իմ՟ն առաւել կատարելագործեալ. Թէպէտ և վայրագոյն էին վաստակով. Առաջին վիպասանք Ամերիկոյ ոչ խօսին, բայց եթէ զչարչարանաց և զաղքատութ՟է տիրապետողաց իւրոց. 'Ի Նորն Սպանիա պայման ն՟ց լինէր առաւել տագնապիչ յաղագս մասնաւոր իմ՟ն կանոնաւորութ՟ն. Կառոլոս հինգերորդ յառաջ շարժեաց զԿորթէս առ կառավարութ՟ի այնր երկրի. և կարգեաց 'ի նմին ժամանակի ոստիկանս, որք ընդունիցին անդ և մատակարարեսցեն զարքունի մուտսն անկախ իրաւարանութ՟է. Մարդիկս այսպիսիկ ընտրեալք 'ի վայրագոյն դրից 'ի պէսպէս բաշխոյս հրապարական իրակութ՟ց Մատրիտու՝ էին այնչափ հպարտացեալք վ՟ն ամբարձման իւրեանց, մինչ զի խորհէին զինքեանս կոչեցեալս առ 'ի ձևացուցանել զմեծագոյն ծանրակշիռ անձն ոք. Բայց գոլով սովորեալք առ մանր կերպականութ՟իս պաշտօնի իւրեանց. և լի փոքրիկ գաղափարօք համեմատ բոլորակին, յորում ցայնժամ պարփակեալ էին, հասեալք 'ի Մեքսիկօ, մնացին շրտուցեալք 'ի տեսանելն զմեծ իշխանութ՟ին, զոր վարէր Կորթէս. և ոչ կարացին իմանալ, թէ եղանակն մատակարարելոյ զաշխարհ մի նորոգ նուաճեալ պար-

տէր տարբերիլ յեղանակէ թագաւորութեն միոյ.
ւր անդորրութիւն և կանոնաւոր կառավարութիւն
հաստատեալ էին յերկար ժամանակաց հետէ.
Ներկայացուցանէին 'ի քարտէզս իւրեանց ըզԿօրթէս
իբր փառամոլ բռնաւոր մը. որ գոլով
յափշտակեալ զիրաւաբանութի իմն վերնագոյն
քան զօրէնս, ձգտէր առ անկախութի և որ
վն չափազանց փարթամութեն իւրոյ և գործունեայ
ազդեցութեն կարէր հասուցանել 'ի վախճան
զայն հաւատադրուժ առաջարկութիւն, զոր
աներեւոյթս ունէր 'ի գլուխ. Այս մեղմով իմն
զեկուցմունք արարին զայնպիսի տպաւորութի 'ի
գործակալսն Սպանիացիս, որոց բազումք հաստատեալ
էին յիրակութիս 'ի ներքոյ խիստ և նախանձաւոր
մատակարարութեն Ֆերտինանտոսի,
մինչզի մոռացեալք զամ անցեալ ծառայութիւն
Կօրթէսի և զվիշտս կրեալս 'ի նմանէ յընդդածելն
զայն արտաքոյ կարգի շահատակութիւն, յորում
'ի լծէն Մէքսիքօյ յառաջխաղայր առ արեւմտեան
ծագն Հօնտուրայ, ջնջեցին զնոյն կասկած
յալքայն իւրեանց. և հաւանեցուցին զնա
հրամայել, զի արասցի դատաւորական իմն քննութի
գնացից նորա իշխանութե առ վարդապետն
1525 Փօնցիոս Լէօնեան. որում յանձն եղեւ ոստիկանութիւն
ապահովանալոյ 'ի վն անձին նր, յորժամ
յօգուտ դատիցի, և առաքելոյ զնա կալանաւոր
'ի Սպանիա:

(27) || Պատճառն, որ շարժեաց զԿօրթէս ձեռնամուխ
լինել յայն շահատակութի՝ եղեւ պատուհասելն
զՔրիստափորոս Օլիտեան մի 'ի պաշտօնատարաց
իւրոց, որ ապստամբեցաւ ընդդէմ նր. և որ կամէր
ձգել յանձն իւր զանկախ իմն իրաւաբանութի. Կօրթէս
համարեցաւ զայս վտարանջումն իբր օրինակ իմն
այնպէս վնասակար, և կալաւ զայնքան երկիւղ վն
ընդունակութեն և սիրելի լինելոյ ժողովրդեան սկզբնա-

պատճառին իւրոյ, մինչ զի գնաց ինքն առաջնորդել անձամբ գնդին զօրաց սահմանելոց առ 'ի նուաճել զնա. Ըստ Գոմարայի չու արար նա զերիս հազար մղոնս ընդ երկիր մի լի թանձր անտառօք, առապար լերամբք, խորին գետովք, սակաւաբնակ և ոչ բարւոք մշակեալ. Զոր ինչ կրեաց նա 'ի քաղցու և 'ի թշնամութէ ազգայնոցն, 'ի կլիմայէ և յա̃մ ազգ տառապանաց, ոչ ունի ինչ համանման 'ի վիպասանութե̃, եթէ ոչ այն որ գտանի 'ի պատահարս այլոց երկրագնաց և տիրապետողաց նորոյ աշխարհի. Քօրթէս պարապեցաւ յայս ահարկու շահատակութե̃ ընդ ամս երկուս. և թէպէտ ոչ հանդիպեցաւ յայսմ շքեղ իւիք քաջադիպութե̃, սակայն եցոյց յընթացս նորին զմեծագոյն սրտեղութի̃, զառաւել քաջութի̃ ոգւոյ, զառաւել յարատեւութի̃ և զհամբերութի̃, քան յայլում իմիք շրջանի կենաց իւրոց: ‖

Յանկարծ մահ Փօնցիոսի Լէօնեան հանդիպեալ սակաւ աւուրբք զկնի հասանելոյ իւրոյ 'ի Նորն Սպանիայ խափանեաց զկատարումն այսպիսի պատուիրակութե̃. Բայց գիտելով զնպատակ կարգման 1525 նո̃ սիրտ Քօրթէսի 'ի խոր խոցեցաւ վն̃ այսր անակնկալ փոխարինի առ ծառայութիւնս իւր, որք մեծապէս գեր 'ի վերոյ էին այնց, զոր այլ ոք հպատակ Սպանիոյ արարեալ իցէ երբեք արքայի իւրում. Հանդերձ այսու ջանացաւ պահել զմիտս իւր և վերստին ստանալ զվստահութի̃ արքունեացն. բայց ա̃մ անձն կարգեալ 'ի պաշտօն, և եկեալ 'ի Սպանիոյ զկնի տիրապետութեն՝ էր լրտես մի 'ի վր̃ գործելոյ նո̃, որ ջանայր զա̃մ գործողութիւնս նո̃ ձախողակի թարգմանել. ուստի աճեցուցանէին զկասկածանս Կառոլոսի և գոր- 1528 ծակալաց իւրոց. Եւ հրաման, զի նոր պատուիրակ մի արասցէ զնոր քննութի. և հանդերձ ընդարձակագոյն իշխանութե̃. արարեալ եղեն նաև պէսպէս զգուշութիւնք առ 'ի կանխել նմա կամ պատժել զնա, եթէ իցէ այնքան յանդուգն, մինչև ձեռնարկել յիրս, որ ոչ միաբանիցի ընդ հաւատարմութե՟ն, զոր պարտի հպատակ ոք առ իւր ինքնակալն. Կօրթէս տեսանէր մերձակայ զվտանգ բաղդին իւրոյ հանդերձ ա՟մ բուռն յուզմամբն բնականաւ վսեմական ոգւոյ միում գիտակցի սեպհական վաստակոյ իւրոյ, և որ չունի զամենեւին անիրաւ իմն վարուց. Այլ թէպէտ և ոմանք ՚ի յուսահատ հետևողաց իւրոց խթէին զնա ջատագովել զիրաւունս իւր ը՟դդէմ ապերախտ հայրենեաց իւրոց, և առնուլ բռնի զայն իշխանութի՟ն, զոր արքունականք գծծաբար ամբաստանէին զնա կամիլ յանդգնաբար սեպհականել անձին, սակայն նա ինքն այնպէս քաջ կալաւ զիշխանութի՟ն ՚ի վ՟ր անձին իւրոյ, և պահեաց զայնպիսի դատմունս հաւատարմութե՟ն, մինչզի ՚ի բաց հերքել զվտանգաւոր խորհուրդս ն՟ց, որոշեցաւ առ այն միայն, որ կարէր ապահովացուցանել նմա զարժանաւորութի՟ն իւր առանց հեռացուցանելոյ զնա ՚ի պարտականութէ՟ իւրմէ. Աճեաց ոչ դնել զանձն ՚ի վտանգ խայտառակութե՟ն դատաստանական իրիք քննութե՟ն յայնմ աշխարհի, որ լե՟լ էր տեսարան յաղթանակաց իւրոց, և երթալ ուղղակի ՚ի Կասթիլիա առ՟նց սպասելոյ հասանելոյ դատաւորացն, և դիմել առ արդարութի՟ և առ ազնուականութի՟ արքային իւրոյ: Ապա Կօրթէս երևեցաւ ՚ի բնիկ աշխարհի իւրում այնու շքով, որ վայելէր հզօր իմիք թագաւորաւն. Տարաւ ը՟ իւր զմեծ մասն հարստութե՟նց իւրոց, զբազում գոհարս և զարդս մեծագինս, զանազան սխրալի բերս այնց տեղեաց. և էր ընկերակցե՟լ յոմանց յերևելագոյն Մեքսիկացւոց, ո՟ք և ՚ի մեծագոյն մասնէ առաջաւոր պաշտօնատարաց իւրոց:

(28) ‖ Ըստ այնմ, զոր ասէ Հեռռէրա, գանձն, զոր եբեր ը՟ իւր Կօրթէս, էր հազար հինգհարիւր մարքա դրամե՟լ ոսկւոյ, երկերիւր հազար դահեկան

կան ոսկւոյ զտոյ, և տասնհազար վայրագոյն բաղկացութ՟ն. բազում հարուստ գոհարք. որոց մինն մանաւորաբար արժէր քառասուն հազար դահեկանս. և յոլով զարդք գնոյ. Նոյն ինքն խոստացաւ տալ դստեր իւրում օժիտ հարիւրհազար դահեկանս. Ժառանգութ՟ին, զոր եթող որդւոց իւրոց, եղև ամենաճոխ. Այլ քանզի ասացաք կանխաւ, թէ գումարն բաժանել՟ 'ի մէջ տիրապետողացն Մէքսիքօի եղև դուզնաքեայ յոյժ, ապա երևի լինել փաստ ինչ կասկածելոյ, թէ ամբաստանութ՟իք թշնամեացն Քօրթիսի ոչ էին բնաւին զուրկք 'ի հիմանէ. Նոքա բասրէին զնա, թէ սեպհականել՟ իցէ անձին զանհամեմատ ինչ մասն աւարացն Մէքսիքացւոց, թաքուցեալ զարքունի գանձն Մօնթէծումայի և Կուաթիմօծինու, նենգել՟ զթագաւորն 'ի հինգերորդէն, և գողացեալ յընկերաց իւրոց զայն, որ էր պարտ նց՟. Ոմանք 'ի տիրապետողաց կասկածեցան զնոյն: |

Գալուստ Քօրթիսին 'ի Սպանիա ցրուեց՟ վաղվաղակի զա՟մ կասկած և զերկիւղ զձկտմանց իւրոց. Կայսրն ոչ ևս ունելով ինչ զանգիտելոյ 'ի խորհրդոց նր՟՝ ժողովեաց զնա իբր անձն մի, որ 'ի ստուգուե՟ անմեղուե՟ իւրոյ եկել՟ էր առաջի ինքնակալին իւրոյ. որև վ՟ն նշանաւոր ծառայութ՟նց իւրոց արժանի էր բարձրագոյն նշանաց զանազանուե՟ և մեծարանաց. Կարգն սրբ՟յն Յակոբայ, անուն մարզպանի հովտին Կուաքսաքայ, տուչութ՟ի զանազան երկրաստանաց 'ի Նորն Սպանիա յաջորդաբար շնորհեցան նմա. և քանզի եղանակք կենցաղավարելոյ նր՟ էին յոյժ աղնուականք և շնորհալիք, թէպէտև մեծագոյն մասն կենաց իւրոց անցուցել՟ էր 'ի մէջ բիրտ բաղդորդաց, կայսրն վարեցաւ ը՟ նմա այնպ՟ ընտանեբար, ոպ՟ կարողացել՟ էր առնել ը՟ մեծի ումեք առաջնոյ դասու:

Բայց 'ի մէջ այսց արտաքին հաւաստեաց համարման յայտնէին սերմանք ծածուկ թերեհաւատուե՟.

Կորթէս թախանձէր ուժգին կարգել վերստին 'ի բդեշխութիւն Նորոյն Սպանիոյ. բայց Կարոլոս կայսր խոհական էր առ 'ի չվստահանալոյ զայնքան ծանրակշիռ պաշտօն մարդոյ միում, զորմէ կասկածեալ էր երբեմն. ոչ կամեցաւ տալ նմա նորոգ զայն իշխանութիւն, որում թերեւս անկարելի լինէր նմա յետոյ դնել սահման. Կորթէս թէպէտեւ նշանաւորեալ նորանոր պատուանուանմբք՝ դարձաւ 'ի Մեքսիքօ 1530 փոքրագոյն աւագութեամբ. Թողաւ 'ի ձեռս նորա զինուորական բաժինն հանդերձ իշխանութեամբ ձեռնարկելոյ յայլ երկրագտութիւնս. բայց ուղղաւորութիւն քաղաքական իրակութեանց յանձնեալ եղեւ ատենի միում կոչեցելոյ՝ Ատենակալութիւն Նորոյն Սպանիոյ. Եւ է որում 'ի յաջորդական ժամանակին՝ հայելով յաջողումն կողոնիոյն պիտոյ եղեւ գործածութիւն առաւել միաւորեալ եւ ընդարձակագոյն իրիք աւագութեան, Անտոնիոս Մէնտօծծայ սեպուհ քաջազն առաքեալ եղեւ անդր անուամբ փոխարքայի առ 'ի ունել անդէն զերասանակս վարչութեան:

Այս բաժանումն իշխանութեան 'ի Նորն Սպանիա եղեւ, որպէս սպասելի էր՝ աղբիւր հանապազորդ երկպառակութեանց, որք դառնացուցին զկեանս Կորթէսի. եւ արարին ընդունայն զամ գաղափարս իւր. Եւ քանզի ոչ եւս ունէր նա զայլ առիթ պարզելոյ զքանքարս իւր եւ զգործունէութիւն իւր, բայց եթէ 'ի թեւակոխելն 'ի նորանոր երկրագտութիւնս, կերպաւորեաց զպէսպէս առաջարկութիւնս, որք ցուցանեն զյօժարութիւն իւր հակեալ առ հռչակաւոր ձեռնարկութիւնս. Յղացեալ էր կանխաւ զգաղափարն, թէ տարածելով ընդ խորշն Ֆլորիտայի առ եզերբն ընդ արեւելս հիւսիսային Ամերիկոյ գտանիցի նեղուց ինչ, որ հաղորդէր ընդ արեւմտեանն ովկիանոսի. եւ թէ քննելով զցամաքաւեզրն Տարիէնու՝ յայտնիցի անցք ինչ 'ի մէջ հիւսիսային եւ հարաւային ծովուց. Բայց գոլով խաբեալ յակնկալութեան իւրում վերահայեցմամբ այսց երկուց իրաց՝ սահմանաւո-

րեաց

քնաց զդիտմունս իւր յայն ճանապարհորդութիւնս, որք կարէին առնիլ 'ի նաւահանգստիցն Նորոյն Սպանիոյ 'ի Հարաւային ծովուն. Առ այսպիսի գործ հանդերձեաց նա սակաւ առ սակաւ զփոքրիկ նաւահանգիստս ինչ, որք կամ կորեան 'ի ծովուն. կամ դարձան առանց առնելոյ զծանրակշիռ ինչ գիւտ. Կորթէս ոչ կամելով հաւատալ այլոց զառաջնորդութիւն սեպհական գործողութեանց իւրոց էառ անձամբ զհրամանատարութիւն նորոյ իրիք սպառազինութեան. և յետ հանդուրժելոյ անհաւատալի տարժանմանց և պատահելոյ ամենայն տեսակ վտանգաց՝ եգիտ զհամատարած ցամաքակղզին Կալիֆորնիայ. և նշմարեաց զմեծագոյն մասն խորշին, որ զատուցանէ զայն 'ի Նորոյն Սպանիոյ. Գիւտ այսպիսի իմն տարածեալ երկրի հանդիսացուցեալ էր զրաղդորդ ումն հասարակ. բայց ոչինչ յաւել առ պատիւն Կորթիսի. և ոչ համեմատէր բարձր ակնկալութեանցն յղացելոց 'ի նմանէ. Ապա գժգմեալ ընդ ապերջանիկ պատահումս, առ որ ոչ էր սովոր, և պարտասեալ 'ի յընդիմակայելոյ հակառակորդացն անարժանից ինքեան՝ դարձաւ 'ի Սպանիա առ 'ի խնդրել զհատուցումն: 1536

Բայց ընդունելութիւն իւր 'ի Սպանիա եղև բազմօք տարբեր յայնմանէ, որ պարտէր նմա վերապահել զերախտագիտութիւն և զվայելչութիւն. Սաստակ անցելոց գործոց իւրոց ըստ մեծի մասին վաղիսկ մոռացեալ էր. և աղօտացեալ 'ի համբաւոյ նորոց սխրապետութեանց արարելոց յայլ կողմանս Ամերիկոյ. Ոչ ևս սպասիւր ծառայութիւն ինչ մեծակշիռ 'ի մարդոյ միջէ ծերացելոյ և թշուառացելոյ. Կայսրն ընկալաւ զնա ցրտութեամբ. գործակալք իւր վարէին ընդ նմա մերթ արհամարհանօք, մերթ լրբութեամբ. Դիմեցմունք իւր ոչ ընդունէին զդարման. և յետ բազմաց ամաց ծախելոյ յանօգուտ զանգատանս ընդ արքունականացն և ընդ դատաւորաց՝ պարապումն խստագոյն և առաւել մահացուցիչ մարդոյ միում վսեմ հոգւոյ սովորելոյ 'ի հրամայել յաւէտ քան 'ի հնազանդիլ՝ Քօրթէս վախճանեաց զաւուրս իւր 'ի 2 դեկտեմբերի՝ 1547. 'ի վաթսներորդ երկ՟դ ամի հասակի իւրոյ. Վախճան իւր եղև նոյն ընդ վախճանի համօրէն անձանց, որք հանդիսացան 'ի ծանօթութ՟ն և 'ի տիրապետութ՟ն Նորոյ աշխարհին. Յաչաղե՟լ 'ի ժմ՟կակցաց իւրոց և ոչ բարուք փոխարինե՟լ յարքունեացն, որում արարե՟լ էր զնշանաւորագոյն ծառայութի՟ս. յետնորդք հատուցին նմա զարդարութի՟ն արժանաւորե՟լ 'ի նմանէ. և ոչ դադարեցան 'ի զարմանալոյ ը՟ գործառնութիւս ն՟ր և 'ի հռչակելոյ զայնս. Ողորմ՟ նք, որք են յաստիճանի յարգելոյ զկնիք ն՟ր, և որք քննեալ են զգործս իւր առանց աչառութ՟ն, վճիռ հատանել, եթէ բարուք հիմնեալ իցեն գովեստք ն՟ր, որովք պատուի յիշատակ իւր :

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿՈՅ.

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Պատմութիւն առման Փերուայ 'ի Փիծծարրոյէ, և Երկպառակութեանցն և քաղաքական պատերազմացն Սպանիացւոց յայնմ նահանգի. Ծագումն նց՟, յառաջադիմութիւնք և գործք :

Ի ժամանակէ անտի, յորում 'Նուկնէց Պալպօա յայտնեաց զմեծն ովկիանոս Հարաւային, և ստացաւ զառաջին աղօտ նշանս փարթամ գաւառացն, ընդ որոց կարէր բանալ զհաղորդակցութի՟ իմ՟, փափագք և խորհուրդք ամ՟ ձեռներէց անձանց 'Նժդեհութեանցն Տարիէնու և Փանամայի դարձան առ փարթամութիւս այնց անծանօթ նահանգացն. 'ի դարու միում, յորում հոգին բաղդի էր այնչ՟ վառեալ և ուժգին, մինչզի ծախէին առաւել ստուար հիմունք դրամոց, և ընդա-

1523. Առաջարկութիւնք զգտանելոյ Փերու :

ընդառաջ ելանէին ահաւորագոյն վտանգաց 'ի խնդիր երկրածանօթութե՟ց սոսկապէս կարելեաց, տկարագոյն նշոյլ յուսոյ զարթուցանէր զակնկալութ՟ի մարդկան. և բաւէր շնչել զայն կատարեալ համարձակութիւն, որ ածէր զմարդիկ առ դժուարագոյն ձեռնարկութիւնս:

(29) ‖ 'Ի հետազօտելն զյառաջադիմութիւնս զինուցն Սպանիացւոց 'ի նոր աշխարհին հետեւեցաք նմին իսկ Ռօբերթիսի իբր մերում ստուգագոյն առաջնորդի. Նամակք իւր առ կայսրն պարունակեն զմանրամասն պատմութ՟ի գործողութե՟նց իւրոց. Տգէտ տիրապետօղքն Փէրուայ անընդունակք էին պատմելոյ զգործս իւրեանց. և ես առի զայն, զոր ասեմս, 'ի նշանաւորագոյն հեղինակաց ժմ՟կակցաց. Առաջին պատմութիւն գործոցն Փիծծարրոսի 'ի Փէրու հրատարակեալ եղև 'ի Ֆրանչիսկոսէ Քսէրէծայ ատենադպրէ իւրմէ. Պարունակէ այս զպարզ իմն և զանպաճոյճ պատմութ՟ի ոչ ածեալ աւելի յառաջ, քան թէ առ մահն Աթահուալփայ յամին 1533. որովհետև հեղինակն դարձաւ 'ի Սպանիա 'ի 1534. և վաղվաղակի իբրև եհաս, տպագրեաց 'ի Սիվիլլիա ըղկարճառօտ պատմագրութ՟ի իւր զառմանէն Փէրուայ նուիրեալ կայսերն. Տէրն Պետրոս Սանքօ՝ պաշտօնատար, որ ծառայեաց ընդ Փիծծարրոսին, ետ զպատմութ՟ի մի շահատակութե՟նց իւրոց. որ փոխաբերեալ եղև յԻտալացւոց լեզու 'ի Ռամուսիոսէ, և յեռեալ 'ի պատուական քաղուած իւր. բայց ոչ եղև երբէք հրատարակեալ 'ի բուն լեզուի իւրում. Սան. դարձաւ 'ի Սպանիա 'ի նմին ժմ՟կի, յորում Քսէրէծ. Պարտ է ընծայել զմեծ հաւատս այնմ, զոր ասեն այս երկու հեղինակք զյառաջադիմութե՟նց և զգործողութե՟նցն Փիծծարրոսի. բայց յամէն Սպանիացւոց 'ի Փէրու լեալ էր այնպէս սուղ 'ի ժմ՟կին, յորում մեկնեցան անտի, և հաղորդութ՟ի նոցա

ընդ ազգայնոցն այնպէս հարեւանցի, մինչզի ճանաչումն նց̃ զհանգամանաց և զվարուց փերուացւոց է յոյժ անկատար:

Երրորդ հեղինակն ժամ̃կից է Պետրոս Չիէծա Լէօնեան, որ հրապարակեաց զժամանակագրութի̃ իւր զփերուայ 'ի Սիվիլիա յամին 1553. Եթէ աւարտեալ էր նա զայն բովանդակ, զոր առաջադրէ 'ի հանրական բաժանման գործոյն իւրոյ, այս լեալ էր առաւել լրացեալ պատմագրութի̃ քան զոր երբէք ելեալ իցէ 'ի դուրս զգաւառէ իմիքէ նորոյ աշխարհին. Նա ունէր քանքարս առ 'ի կատարել զայն և ծառայեալ էր զեօթն ևտասն ամս յԱմերիկա, և այց արարեալ անձամբ մեծագոյն մասին գաւառացն, շուրջ զորովք կալաւ պարապ գրելոյ. Բայց տպագրեալ է միայն առաջին մասն ժամանակագրութե̃ իւրոյ. որ պարունակէ զգծագրութի̃ մի փերուայ, և զանազան տեղեաց մերձակայից հանդերձ ծանօթութբ̃ սահմանաց և սովորութեանց ազգայնոցն. և է գրեալ այնպիսի սակաւ արհեստիւ և այնչափ նկատմամբ վ̃ ճշմարտութեն, մինչզի պարտէ ողբալ զկորուստ այլոց մասանց մատենին իւրոյ:

Այս կորուստ ընդարձակարար դարմանեալ է 'ի տէր Օգուստինոսէ Զառաթեայ, որ հրատարակեաց 'ի 1553, զվիպասանութի̃ իւր զծանօթութենէ և զտիրապետութե̃ փերուայ. Զարաթա էր սեպուհ մի քաջ դաստիարակեալ և պարապեցուցեալ 'ի փերու իբր ընդհանուր համարակալ հրապարական մտից. Պատմագրութի̃ իւր՝ եթէ նկատիցի նիւթն, և եթէ շարադրութիւն է պատուականագոյն ևս. և այնզի կալաւ նա զառիթ քաջ տեղեկանալոյ, և երեւի մտադիր քննեալ զվարս և զգործս փերուացւոց՝ արժանաւորի այնչափ մեծագոյն հաւատարմութե̃ վկայութի̃ նր̃. Տէրն Դիեկոս Ֆերնանտեզ հրապարակեաց զվիպասանութի̃ իւր զփերուայ յամին 1571.

Իւր առարկայն միայն է յառաջ բերելն զտարաձայնութիւնս և զքաղաքական պատերազմունս Սպանիացւոց յայնմ Թագաւորութեան. Այլ քանզի ծառայէր նա 'ի հրապարակական պաշտօնի միում 'ի Փերու. և էր լիով տեղեկացեալ երկրին, և նախապետական վարչաց յայն գերեզական տեսարանսն, զորս նա ստորագրէ, գործ իւր կարէ դասիլ 'ի մէջ գործոցն նշանաւորագոյն վիպասանից վ՟ն ճարտարմտութեան իւրեանց, կմ՛ վ՟ն սերտ դատմանն 'ի դիպուածսն, զորս պատմէն:

Վերջին հեղինակն, որ համարելի է 'ի մէջ ժամանակակից վիպասանից առմանն Փերուայ է Ինքա Կարչիլասօ տէլա Վէկայ. Զի թէպէտ առաջին մասն գործոյն իւրոյ մակագրեցելոյ՝ Յիշատակարանք արքունիք ծագմանն Ինքայից Ինքնակալացն Փերուայ, ոչ էր տուեալ 'ի լոյս յառաջ քան զամն 1609, եօթանասուն և վեց ամօք զկնի մահուանն Աթահուալփայ վերջին կայսերն, սակայն ոչինչ ընդհատ գոլով նա ծնեալ 'ի Փերու՝ և որդի զօրագլխի միոյ երևելւոյ 'ի մէջ տիրապետողացն Սպանիացւոց 'ի քաղաքէ Կուզէ, կմ՛ յարքայազուն տիկնոջէ, որոյ վ՟ն առնոյր նա միշտ զանուն Ինքայի, և այնպէս ստացեալ ունէր նա զլեզու Ինքայից, և էր տեղեկացեալ աւանդութեանց հայրենակցաց իւրոց, վկայութիւն իւր համարեալ է բազում յոյժ յոյժ. և նախադասեալ յաճախակի վկայութեան համօրէն այլոց պատմագրաց. Այլ գործ իւր է սակաւ ինչ աւելի քան զմեկնութիւն մի 'ի վ՟ր պատմագրաց Սպանիացւոց Փերուեան պատմութեան, և լի վկայութեամբք առեցելովք 'ի հեղինակացն, զորս յիշեցի. և այս է գաղափարն, զոր տայ նախինքն. Դպր. Ա. Գլ. 10. Այլ ոչ հետևի նմ՟ ծառայաբար, և միայն 'ի պատմութեան եղելոցն, այլև 'ի մեկնելն զսահմանադրութիւնս և զծէսս նախնեաց իւրոց երևի թէ ծանօթութիւնք իւր իցեն ոչինչ աւելի կատարեալք քան զնոցայն. Մեկնութիւն իւր Հեռէռայ՝ գրեթէ նոյն է ընդ մեկնութեան Աքօսթայի. Նա ոչ յառաջ բերէ զառհաւատչեայ ինչ փերուեան բանաստեղծութեան, եթէ ոչ զմրքուզն զայն, զոր առնու փոխ 'ի Բլասիոսէ Վալերայ 'ի միոյ յառաջնոց միսոնարաց. որոյ յիշատակարանք չեն տեսեալ երբէք զտիւ. Հայելով յոճն, 'ի կարգն, և 'ի քաջ դատումն, որ առնէ յարմար զհեղինակ մի 'ի տարորոշելն զճշմարիտն 'ի ստոյն, 'ի զուր խնդրեալ լինէր գտանել զայսոսիկ իրս 'ի մեկնութիւն Ինքայի. Բայց մատեան իւր հանդերձ մեծամեծ պակասութեամբք իւրով ոչ դադարի 'ի լինելոյ պիտանի. Հանդիպին 'ի նմա աւանդութիւնք ինչ, զորս ընդունի նա 'ի նախնեաց իւրոց. Ստացումն իւր փերուեան լեզուի արար զնա ընդունակ ուղղելոյ զբազում մոլորութիւնս մատենագրաց Սպանիացւոց. և պատմէ նա զգործս զարմանալիս հանեալս 'ի հեղինակաց. որոց գործք ոչ երբէք հրատարակեալ եղեն. և են այժմիկ կորուսեալք:

Առանց յաջողութեան առ ժամանակ ինչ:

Ապա հանդերձեալք էին զանազան սպառազինութիւնք առ 'ի երթալ ճանաչել և առնուլ զստացումն գաւառացն ընդ արևելս փանամայի, բայց ընդ նաւորդօք, զի ոչ ունէին ոչ զքանքարս և ծամա- ոչ զմիջնորդս յարմարեալս առ այս վախճան. Նաւ որպէս ընթացք նց ոչ ձգէին անդր քան զսահմանս գաւառին, որում Սպանիացիք տիրեալ էին զանուն հաստատուն երկրի՝ գաւառ լեռնային՝ ծածկեալ անտառօք՝ անբնակ՝ և մեծապէս անառողջարար, այսպէս դարձան անտի տխրական պատմութիւնք տառապանացն, յորս անկեալ էին և սակաւաւորդոր տեսլեան տեղեացն, որոց այց արարեալ էին. Ամլութիւն երկրագործութեան յայնմ մասին շիջեալ եղև 'ի նմանակ պատմութեանց. և յայնմ վայրի ընթանայր իբր հանրական կարծիք, թէ Պալլօա հիմնեալ իցէ զհրազական

յոյս

յոյսս իւր 'ի վերայ առասպելաց տգէտ ուրուք Հնդկի՝ կամ 'ի նմանէ չարաչար խմացելոց, կամ կերտելոց առ 'ի խաբել զնա:

Ձեռնարկն փիծծարրոյի, Ալմակրոյ, և տէ Լուքայի:

Բայց գտան երեք անձինք բնակեալք 'ի Փանամա, որոց 'ի միտս պարակայքն, որք 'ի բաց քեցէին զայլս, արարին այնպէս սակաւ տպաւորութի, մինչզի 'ի նմին վայրկենի, յորում ամենեքեան համարէին իբր եղջերուաքաղ զհամոզմունս Պալգօայի գտանելոյ զհարուստ երկիր մի, ուղղելով ընդ արեւելս, որոշեցին ձեռնամուխ լինել 'ի կատարումն գաղափարին իւրոյ. Այն սոքա արք արտաքոյ կարգի՝ Ֆրանչիսկոս փիծծարրոս՝ Դիեկոս Ալմակրոս և Ֆերտինանտոս տէ Լուքա. փիծծարրոս էր բնական որդի սեպուհոյ միոյ քաջատոհմի, բայց ծնեալ 'ի յոյժ ռամիկ կնոջէ. և ըստ անագորոյն բաղդի, որ ընկերակցի հասարակաբար պտղոց ապօրինաւոր սիրոյ, այնպէս բարձի թողի եղեալ էր 'ի դաստիարակութն իւրում 'ի հեղինակէ կենաց իւրոց, մինչզի երեւէր սահմանեալ 'ի նոյն ինքենէ առ 'ի ոչ երբէք ամբառնիլ 'ի վերոյ քան զպայման մօր իւրոյ. 'Ի հետեւութե այսր անարգ գաղափարի առաքեաց զնա, յորժամ մեծանայր առ այրականութի, 'ի պահել զխոզս. Բայց վսեմ ոգին երիտասարդին փիծծարրոսի անարժան համարելով զայն նուաստ զբաղումն, 'ի բաց եթող. և գրեցաւ 'ի զինուորութի. և յետ ծառայելոյ զամս ինչ յԻտալիա, նաւեաց յԱմերիկա. որ ցուցանելով զընդարձակ իմն ասպարէզ գործոնեայ քանքարաց՝ հրաւիրէր զամ բաղդորդս, որք ոչ ունէին զբաղդ հաւասար վերամբարձ խորհրդոց իւրեանց. փիծծարրոս կանուխ հանդիսացաւ յայնմ. Անվեհեր իմն հոգւով, որչափ և ուժեղ էր մարմնով՝ գտանիւր միշտ առաջին յամ վըտանգի, համբերող 'ի մեծագոյն վիշտս և անխոնջ յորում և իցէ աշխատութե. Թէպէտ և տգէտ էր, մինչև ոչ գիտել և ոչ իսկ ընթեռնուլ, համարեալ եղև իբր մարդ արարեալ դիտմամբ վն հրամայելոյ. Ամենայն գործողութի յառաջնորդութե նր տպաստան արարեալ՝ պատահէր յաջողակի. որովհետև վն երջանիկ իմն, բայց ցանցառ զուգակցութե միաւորէր նա զտոկալն ընդ եռանդեան. և էր հաւասարապէս զգուշաւոր 'ի կատարելն, որչափ սրտեայ էր 'ի կերպաւորելն զգաղափարս իւր. Դիմագրաւ լինելով այսպէս վաղագոյն յաշխատալի ինչ կեանս առանց այլոյ իրիք նպաստի, բաց 'ի սեպհական քանքարաց իւրոց և 'ի ճարտարութէ իւրմէ, և հիմնելով մեկին 'ի վերայ անձին իւրոյ զքարշելն արտաքս 'ի խաւարէ, ստացաւ այնպէս կատարեալ ճանաչումն և իրակութենց և մարդկան, մինչզի եղաւ յաստիճանի ընդ ածելոյ զառաջինսն և կառավարելոյ զերկրորդսն.

Ալմակրոս ունէր որպ զփիծծարրոս պարծիլ սակաւ 'ի վն զարմին իւրոյ. Սա էր պոռնկորդի, և նա տղայ մի գտեալ բացընկեցիկ. Դաստիարակեալ և սա զոյգ ընկերին իւրոյ 'ի դաշտի՝ ոչ տեղի տայր նմա յիմիք 'ի յորակութենց զինուորի, գոլով անվեհեր քաջութի իւր, կայուն գործունէութին, և անյաղթելի հաստատութին 'ի հանդուրժելն տառապանաց և յաշխատութեան, որք ընկերէին զինուորական ծառայութե 'ի Նոր աշխարհին. Բայց 'ի Ալմակրոս առաքինութիքս այսոքիկ լծակցեալ էին ընդ համարձակութե, քաջասրտութե և ընդ յըստակամտութե բնականի մարդոց, որք ընտրեն վն արհեստի իւրեանց ըզզէնս. և 'ի Փիծծարրոս միաւորեալ էին ը լըջմտութե, ընդ խորամանկութե և ընդ կեղծաւորութե մարդոյ միոյ քաղաքականի, ընդ արուեստին թագուցանելոյ զխորհուրդս իւր և ը զգօնութե խելամուտ լինելոյ խորհրդոցն այլոց:

Ֆերտինանտոս Տելուքա էր եկեղեցական մի. որ առնէր զպաշտօն վարժապետի դպրոցի և ժողովրդապետի 'ի Փանամա. որ և հնարիւք, զորս գրիչք ժամանակակիցք, ոչ են հետաղօտեալ, ստացեալ էր զանբաւ հարստութիւն. որք շնչեցին 'ի նա զգաղափար վերանալոյ առ մեծագոյն գերամբարձութի̃:

Յօդուածք ընկերացութեան նոցա:

Այսպիսի էին ենթակայքն սահմանեալք առ 'ի կործանել զընդարձակագոյն կայսրութիւն 'ի վր̃ երեսաց երկրի. Դաշնակցութի̃ նց̃ առ այս վախճան աւագացուցեալ եղև 'ի Փէտրարիայ բդեշխէ Փանամայի. Երեքեան պարաւանդեցան դնել յայսպիսի իմն ձեռնարկութե̃ զբաղդ իւրեանց. Փիծծարրոս նուազ ճոխն յերիցն ոչ ունելով հաւասար դրամ առ 'ի դնել 'ի դուրս 'ի հասարակաց հիմն, էառ 'ի վր̃ իւր զմասն մեծագոյն աշխատութե̃ և մեծագոյն վտանգի, այս է, հրամայելոյ անձամբ սպառազինութենն, որ պարտէր ջոկել վն̃ առաջին երկրագտութենն. Ալմակրօ մատոյց զանձն ընդ ածել զլրմունս դարմանոցն և զկազդուրմունս զօրացն, զորոց Փիծծարրոս կարէր ունել պէտս. Տէլուքա պարտէր մնալ 'ի Փանամա առ 'ի խորհրդածել ընդ բդեշխին և հսկել 'ի վր̃ հասարակաց շահուն. Հոգին կրօնական նախանձուն ընկերէր յարակայաբար հոգւոյ բաղդին 'ի Նոր աշխարհին. և երկոքեան ամրացուցեալ լինէին այսպիսի օտարոտի միաւորութի̃. Վ̃ն այսորիկ այս դաշնակցուի̃, որ երևէր 'ի սկզբան անդ կերպաւորեալ 'ի փառասիրութէ̃ և 'ի յագահութէ̃, յետոյ վաւերացուցեալ եղև 'ի հանդիսաւորագոյն և 'ի սրբազնագոյն ներգործութե̃նց կրօնին. Տէլուքա մատոյց զպատարագ. և այս ինչ յայնմ պաշտաման եղև մասնաւոր, զի նա քահանայագործեաց և բաժանեաց զնշխարն յերիս մասունս, հաղորդելով նոյն ինքն միովն և սպասաւորելով զայլ երկուսն ընկերակցելոց իւրոց. և այսպէս յանուն ալքային խա-

ղա-

զաղութն վաւերացուցաւ դաշնագրութի միաւո-
րութեն, որ ոչ ունէր զայլ նպատակ, բայց ե-
թէ զյաւարառումն և զկոտորածն :

Սկզբնաւորեցաւ գործն զօրութբ խիք առաւել [illegible]
համեմատականաւ պայմանի երից բաղդորդացն, [illegible]-
քան թէ մեծութն ձեռնարկութեն, յոր գրաւ. [illegible]
էին զանձինս. Փիծծարրոս խարիսխ ամբարձ 'ի նաւս :
Փանամայէ միմիայն նաւով և հարիւր երկո-
տասան արամբք. Բայց Սպանիացիք յայնմ դա- 14 Նոյ.
րու էին այնպէս սակաւ տեղեակք նահանգին Ամէ-
րիկոյ, մինչ զի ժամանակն, զոր ընտրեաց Փիծ-
ծարրոս վն երթալոյ իւրոյ, եղև նուազ յատուկն
քան զբոլոր տարւոյն, լինելով ուղղակի ներ-
հակ ընթացիցն, զոր առաջադրէր ինքեան ունել՝
պարբերական հողմունքն, որք թագաւորէին յայն-
ժամ. Յետ ծփելոյ և հարուածեալ լինելոյ զա-
ւուրս եօթանասուն բազում՝ վտանգաւ և անդա-
դար աշխատութբ յառաջադիմութի Փիծծարրո- 1525
սի դէպ արևելեան հարաւոյ ոչ եղև մեծագոյն
քան զայն, զոր հմուտ նաւուղիղ ոք առնէր այժ-
մոյս 'ի նոյնչափ ժամս. Գիպեցաւ զանազան տե-
ղեաց յեզեր հաստատուն երկրին. բայց եգիտ
ամ̃ ուրեք զնոյն անհաճոյ երկիր. զոր անցեալ
բաղդորդք գծագրեալ էին. խոնարհ երկիրք յե-
ղափոխեալք 'ի ճախինս պատճառաւ զեղանելոյ
գետոցն. բարձրագոյնքն ծածկեալք անընդմտա-
նելի անտառօք հանդերձ սակաւ բնակչօք, և սո-
քա պատերազմականք և ամեհիք. Սովն, աշխա-
տութիւն, յաճախ պատահումն ընդ ազգայնոց և
'ի վեր քան զամ̃ հիւանդութիւք յառաջ եկեալք
'ի խոնաւութէ և 'ի հրացեալ կլիմայէն՝ ծակցե-
ցան առ 'ի եղծանել զփոքրիկ գունդն հետևո-
ղաց իւրոց. Անընկճելի սրտեղութի զօրավարին
շարունակեաց առ ժամանակ ինչ պնդել զոգիս
նոցա, թէպէտ տակաւին չէր երևեալ նշան ինչ
գտանելոյ զայն գաւառն ոսկւոյ, առ որս խոս-

տացեալ էր ածել զն̃ս. 'Ի վախճանի պարաւանդեալ եղև 'ի բաց թողուլ զայն դժուարին ծովեզրն, և ամփոփիլ 'ի Չհուքհուամա հանդէպ կղզեացն մարգարտաց. ուր յուսայր ընդունել զնպաստ ինչ գաղթանոց և զօրաց 'ի Փանամայէ։ Իսկ Ամակրոս արձակեալ զաւագաստ յայնմ նաւահանգստէ հանդերձ եօթանասուն արամբք, գնաց ուղղակի ընդ կողմն ցամաքին. ուր հաւատայր հանդիպիլ ընկերին իւրում. և ոչ գտանելով զնա էհան 'ի նաւէն զզինուորս իւր. որք յորոնելն զընկերս իւրեանց կրեցին զնոյն խստութիւնս. և եղեն նշաւակք նոցին վտանգաց. Յետս մղեալք 'ի վերջոյ 'ի Հնդկաց յամեհի իմիք մաքառման, ուր հրամանատար ն̃ց կորոյս զմի ակն, գոլով խոցեալ 'ի նետէ միոջէ, ստիպեցան վերստին մտանել 'ի նաւ. Դիպուածն էած զն̃ս առ տեղի ամփոփմանն Փիծծարրոսի. ուր զգացին ըզքաջալերութի ինչ 'ի պատմելն իրերաց զանցս իւրեանց և 'ի բաղդատելն զչարչարանս իւրեանց.

24 Յունիսի. Այնչափ Ամակրոս յառաջադէմ լեալ էր մինչև ցգետն սր̃յն Յօհաննու 'ի գաւառին Փոփայան, ուր և երկիրն և բնակիչք երևէին նուազ դժնէատեսիլ, բաւական եղև այս նշոյլ բարեգոյն բաղդի 'ի բացորոշել զանմեհեր բաղդորդսն առ 'ի չթողուլ զառաջարկութի իւրեանց, ոչինչ փոյթ ունելով զայն ա̃մ չարեացն, որոց պատահեալ էին 'ի հետամուտ լինելն այնմ:

---

(30) Արժէ կերպաւորել զկարծիս ինչ զաշխատութեանցն հանդուրժելոց 'ի նոցանէ, և զանառողջարարութէ կողմանցն, որոց այց արարին, յարտաքոյ կարգի մեռելութէն, որ տիրեաց 'ի մէջ ն̃ց. Փիծծարրոս ածեալ էր զհարիւր երկոտասան արս. Ամակրոս զեօթանասունս. Չև ևս էին ամիսք ինն և մեռան 'ի նոցանէ հարիւրերեսունք. Սակաւք անկան սրով. բազումք 'ի նոցանէ յափշտակեցան 'է հիւանդութենց: ||

Ալմակրոս դարձաւ 'ի փանամա յուսով լրացուցանելոյ անդէն զվաշտս իւր. բայց այն, զոր ինքն և փիծծարրոս կրեալ էին, ետ հայրենակցաց իւրոց զայնպիսի ներհակ կարծիս զշահատակութէն զայնմանէ, մինչ զի մեծաւ դժուարութբ կարողացաւ առնել անդէն ժողով ութսուն արանց. Որչափ և տկար երևէր այս զօրավիգութի, ոչ տարակուսեցան բնաւ վերառնուլ զգործողութիս իւրեանց. Զկնի երկայն իմն շարի ձախորդութեց և թշուառութեց ոչ փոքրագունից քան զայնս, զորոց զփորձ առեալ էին յառաջ, մասն մի զօրուն էհաս 'ի խորշն սրյն Թօմէյի առ եզերբն Քուիթոյի. և մատչելով 'ի Թաքամէծ ընդ հարաւակողմն գետոյն զմրխտաց, տեսին յերկրի միում գեղեցկագունի և առաւել յուռթի քան որչափ գտեալ էին ցայնժամ 'ի հարաւային ովկիանոսի, զազգայինսն ծածկեալս հանդերձիւք ասուի և բամբակի, և զարդարեալս պէսպէս հոպատանօք ոսկւոյ և արծաթոյ:

Ալմակ- [illegible]

Բայց հանդերձ այս ամ շահաւէտ երևութիւք մեծացուցեալովք աւելի քան զճշմարիտն 'ի սնապարծութէ նց, որք բերէին զպատմութի այնոցիկ 'ի Թաքամէծայ և 'ի յիմար երևակայութէ ունկնդրաց՝ փիծծարրոս և Ալմակրոս ոչ համարձակեցան վտանգել զանձինս առ 'ի մխիլ յաշխարհ իմն այնպէս բազմամարդ սակաւ արամբք տկարացեալովք յաշխատութէ և 'ի հիւանդութեց. Խոյս ետուն 'ի կղզեակն Կալլոս. ուր փիծծարրոս մնաց մասամբ իմն զօրաց. և ընկերակցեալն իւր դարձաւ 'ի փանամա յուսով վերստին յարակցելոյ ընդ նմա այնպիսի զօրավիգութբ, որ(*) բաւականացուսցէ զնա տիրելոյ հարուստ երկրաստանացն, որոց գոյութիւնն ոչ ևս էր երկբայական :

Փիծծարրոս ձեռակոչեցել 'ի [illegible] փանամայէ:

(*)Բայց ոմանք 'ի բաղդորդաց նուաղ ժրագլուխք, կամ նուաղ ուժեղք քան զզօրավարս իւրեանց՝

գոլով ծածկաբար բերեալք զաղետալի պատմութիս չարչարանաց իւրեանց և կորստեան բարեկամացն 'ի փանտմա, Արմակրոս ընկալաւ վճկ զչար իմն ասպնջականութի 'ի Պետրոսէ Լոսախոսայ, որ յաջորդեալ էր փէտրարիայ 'ի մարչութեն այնր հարգունութեն. Յետ կշռելոյ զնիւթն այնու ցուրտ և տնօրինական խոհեմութե՛, որ երեւի լինել առաջին ամ առաքինութեց անձանց, որոց քանքարք կոպարաւորեալք անընդունակ են ըմբռնելոյ և կատարելոյ զմեծամեծ գաղափարս, կնքեաց, թէ զօրաժողով իմն ընկերակցեալ յայնպիսի սոսյգ չնչմանէ մարդկան՝ էր ամենեւին վնասակար նորածնեալ և տկար կողմնիցն. և թէ նմին իրի արգելուր ոչ միայն զնոր զօրաժողով լինելն, այլև արձակէր զնաւ մի ածել յետս զփիծծարրոս և զընկերս իւր 'ի կղզւոյն Կալլօսայ. Արմակրոս և Տելուքա թեպէտ և ուժգին զչարենք ընդ այսոսիկ որոշմունս, զորս ոչ կարէին խափանել, և որոց ոչ իշխէին ընդդէմ դառնալ, զորն միջնորդս հաղորդելոյ առանձինն զդատմունս իւրեանց փիծծարրոսի. և յորդորեցին զնա ոչ բարձի թողի առնել զձեռնարկութի մի. որ էր հիմն ամ յուսոյ իւրեանց և միակ հանգամանք վերստին հաստատելոյ զհամբաւ իւրեանց և ըղբաղդ. փիծծարրոս յարեալ անդարձ յամառութե՛ յառաջագրութեիս իւր, ոչ ունէր պէտս այսպիսի բորբոքման առ 'ի կալ մնալ 'ի յորոշման իւրում. Ոչ կամեցաւ յայտնապէս հնազանդիլ հրամանաց բդեշխին փանտմայի. և 'ի գործ էած զբովանդակ լռջմտութի իւր և զճոռոմութիւն առ 'ի համոզել զարս իւր չթողուլ զնա 'ի բաց. բայց սարսափելի թշուառութիքն, յորս էին վտանգեալք, ուէէին տակաւին այնպէս թարմ 'ի յիշողութեն նց, և այնչափ էր անձուկն վերստին տեսանելոյ զընտանիս իւրեանց և զբարեկամս զկնի երկար իմն բացակայուե, մինչև յորժամ փիծծար-

Յարա-
նայէ 'ի
Գաղա-
տրէ ե-
րամ:

ծարրոս քարշեաց աշտէիւ իւրով զգիծ մի 'ի վր՟ աւազոյն՝ թոյլ տալով նց՟, որք փափագէին դառնալ 'ի տուն, անցանել 'ի վր՟, երեքտասան միայն հին զինուորք ծառայութ՟ն իւրոյ կալան զքաջասրտութի՟ն մնալոյ ընդ հրամանատարի իւրեանց:

Այս փոքրիկ, բայց դիմագրաւ խումբ, զորոց վիպասանք Սպանիացւոց յիշեն զանուանս արժանապէս գովութբ՟, իբրեւ անձանց, որոց յարատեւական քաջութ՟ն պարտական է երկիր նց՟ վս՟ առաւել մեծագոյն յա՟մ ստացուածոց իւրոց յԱմերիկա, հաստատեաց զնիստ իւր 'ի կղզւոջն Գորկօնայի. Այս կղզի էր հեռագոյն 'ի ծովեզրէն Կալլօսայ եւ անբնակ, համարեցաւ իբր ապահովագոյն իմն տեղի ապաստանի. ուր առանց հարստահարեալ լինելոյ կարէին սպասել դարմանոց 'ի Փանամայէ. զորս յուսային պատրաստիլ ինքեանց 'ի գործունէութ՟է ընկերակցելոց իւրեանց. Ալմակրոս եւ Տէլուքա ոչ եղեն անփոյթք, կամ ցուրտ հետամուտք. եւ հանապազորդ թախանձանաց նոցա համաձայն եղեւ ընդհանուր բարբառ Կողոնիոյն. որ բարձրաձայն գոչէր ընդդէմ վատահամբաւութեան դնելոյ զքաջ արսն (գրաւեալս 'ի հրապարական ծառայութ՟ն, եւ ոչ պարտաւորս այլոյ իրիք պակասութ՟ն, եթէ ոչ այնմ որ յառաջ գայր 'ի չափազանցութ՟է իմեքէ նախանձայուզութ՟ն եւ քաջարտութ՟ն) 'ի վտանգի կորստեան իբր առաւել տեղի յանցաւորս յանշէն կղզւոջ միում. 'Ի վախճանի բդեաշխն շարժեալ յայսց աղաչանաց, կա՟մ մանաւանդ կշտամբանացն՝ հաւանեցաւ առաքել զփոքրիկ նաւ մի 'ի սփոփանս նց՟. բայց առ 'ի ոչ ցուցանել խրախուսել զՓիծծարրոս առ նոր իմն ձեռնարկութ՟ի ոչ կամեցաւ թէ մարդ մի եւ եթ երթիցէ 'ի ցամաքէ 'ի նաւն:

Աշխա-
տութիւնք
կրեն 'ի
նմանէ:

Փիծծարրոս եւ ընկերք իւր մնացեալ էին ամիս հինգ 'ի կղզւոջ միում, որոյ կլիմայն է առաւել վատառողջ քան զբովանդակ Ամերիկոյն։

(31) ‖ Այս կղզի ասէ Հեռուէրա, եղեւ է այնպէս վնասակար յանառողջարարութ̃է կլիմային իւրոյ, 'ի լերանցն, յանընդմտանելի անտառացն և 'ի բազմութ̃է ժժմանց և սողնոցն, մինչ զի 'ի ստորագրելն զայն հազիւ երբեք 'ի կիր առնու զմակդիր ինչ քաղցրագոյն քան զմակդիրս՝ դժոխոյին. Գրեթէ ոչ երբեք տեսանի անդէն արև. և հազիւ դադարին անձրևք միանգամ ընդ բոլոր տարին. Պարոն Տամփիէրն էհաս յայս կղզի յամին 1685. և ստորագրութ̃ի իւր զկլիմայէն ոչինչ լաւագոյն է. Նա մինչ անցանէր ընդ այն ծովեզր այց արար մեծագոյն մասին տեղեացն, ուր մատեաւ Փիծծարրոս. և գծագրութ̃ին, զոր յետոյ արար զայնմանէ, տայ լոյս պատմական ճառից վաղնջագոյն վիպասանից Սպանիացւոց։ ‖ Ընդ բոլոր ժամանակն ընդ այն հայեցուած նց̃ և յայս դարձան դէպ Փանամայի, յուսալով զօգնութ̃ի ինչ 'ի հայրենակցաց իւրեանց. բայց 'ի վերջոյ հաշեալք յանօգուտ ակնկալութ̃նց և թօպեալք յաշխատանաց և 'ի ըկանաց, զորոց ոչ տեսանէին զվախճանն, յուսահատք եկին յորոշումն ընկենլոյ զանձինս 'ի մէջ ալեաց այնր ովկիանոսի յաւէտ քան թէ տակաւին կալ յայնմ զզուելի բնակութ̃են. Բայց ընդ հասանել նաւուն 'ի Փանամայէ զգացին յինքեանս խայտալ յայնքան ուրախութ̃էն, մինչ զի մոռացան նոյնհետայն զանցեալ տառապանս իւրեանց. Վերստին կենդանացան յոյք նց̃. և սրբեցաց իմն անցամբ բնականաւ մարդոց՝ ըստ եղանակի կելոյ իւրեանց սովորելոց յանկարծական փոփոխութ̃նց բաղդի, յորս յաջորդէ յոլովակի մեծ իմն համարձակութ̃ի վերջին փոքրոգութ̃են, Փիծծարրոս դիւրակի հաւանեցոյց զն̃ս յանձն առնուլ վերստին զառաջին առաջարկու̃ի իւրեանց նորոգ վտամամբ. Փոխանակ դարձ առնելոյ 'ի Փանամա ուղ-

ղեցան ընդ հարաւային արեւելս՝ երջանկագոյնք յայսմ, քան յորում և իցէ յանցելոց ճգանց իւրեանց. որովհետև 'ի քսաներորդում աւուր զկնի մեկնելոյ իւրեանց 'ի Կորկոնայէ նշմարեցին զծովեզրն Փէրուայ :

Յետ մերձենալոյ 'ի տեղիս ինչ սակաւ համարելիս մատեան առ Թումպէզ տեղի աւելի քան զերիս հարաւային աստիճանս հեռի 'ի հասարակածէն՝ նշանաւոր վն վեհափառ տաճարին իւրոյ և վասն Պալատան Ինքայից, այսինքն, արքայից այնր երկրի. Աստանօր աչք Սպանիացւոց զուարճացան յառաջին տեսութ՟ն ընչաւէտութ՟ն և քաղաքականութ՟ն այնր կայսերութ՟ն. Տեսին զգաւառ մի բազմամարդ յոյժ յոյժ և բարւոք մշակեալ. ազգայինք վայելչաբար զգեստաւորեալք, այնչափ առաւել կիրթք քան զայլ բնակիչս Նորոյ աշխարհի, մինչև ունել զկիրառութ՟ի ընտանի շնչաւորաց. Բայց այն, որ նախապետաբար արժանի եղև ուշադրութ՟ն ն՟ց, եղև քանակութ՟ի ոսկւոյն և արծաթոյն, զորս տեսին 'ի մեհեանսն. զարդք և կահք կազմեալք 'ի նոյն մեծագին մետաղաց ոչ թողուին տեղի երկբայելոյ, թէ ամենեւին առատացեալ իցէ նոքիմբ բովանդակ երկիրն. Երևէր փիծծառրոսի և ընկերաց իւրոց ուրուրեմն հասեալ 'ի լրումն յուսոց իւրեանց. և պատկերացուցանէին յինքեանս, թէ ո՟մ երագք անսպառ գանձուց այնր կողման վաղվաղակի հրդրտելոց էին :

1526

Գտանէ զՓէրու

Բայց փանաքի զօրութ՟ին, զոր ունէր յայնժամ ընդ հրամանաւ իւրով, փիծծառրոս կարող եղև միայն ակնարկել 'ի փարթամ երկիրսն. զորս հաւատայր ստանալ առ յապայն. Գնաց Թափառելով առ ժամանակ մի առ ծովեզերբն, պահելով ո՟մ ուրեք զխաղաղական իմն հաղորդակցութ՟ի ընդ ազգայնոյն ոչ նուաղ ապշեցելոց ընդ նոր այցելուս իւրեանց քան զոր էին Սպանիա-

Դառնայ 'ի Փանամա :

ցիք ընդ ընչաւէտութե և ընդ բերրիութե երկրին. Կոլոմ ծանուցեալ զտեղիսն զայնոսիկ որչափ կարևոր էր, առ 'ի ստուգիւ զծանրակշռութե գիտելին՝ Փինծարրոս ջանացաւ ունել 'ի բընակչաց ոմանց զլամայս նց, կամ զընտանեցուցեալ անասունս, որոց Սպանիացիք եդին զանուն ոչխարի, այլև զանօթս ոսկւոյ և արծաթոյ, որպ և զառհաւատչեայս այլոց ձեռագործաց նց և զերկուս պատանիս. զորս ունէր նա 'ի սրտի կրթել 'ի Կաստիլեան լեզուի. ոպզի ծառայեսցեն նմա յետոյ իբր թարգմանս 'ի շահատակութեն, զոր խորհէր նա. Եհաս այսպիսի իրօք 'ի Փանամա ընդ վերջին երրորդ ամին. յորմէ հետէ մեկնեալ էր նա անտի. Ոչ ոք 'ի բաղդորդաց դարուն կրեաց զձախորդութիւնս, կամ պատահեաց վտանգաց, որք հաւասարէին այնց,
1527 յորս եդաւ նա 'ի ճանապարհորդութե իւրում. Համբերութիւն, որով տարաւ միայն, և քաջութիւն, որով յաղթեաց այլոց, գերազանցեն զինչևիցէ իրօք, որ պատմիցի յայսպիսի սեռի 'ի վիպասանութե նորոյ աշխարհի. որ մատակարարէ զայնքան օրինակս այսր առաքինութե:

Նոր առաջարկութե ընկերակցելոց: Ոչ պերճ պատմաբանութիւն, զոր արար Փինծարրոս զփարթամութե երկրին գտելոյ 'ի նմանէ, և ոչ դառն գանգատանք իւր յաղագս տարաժամ յետս կոչման զօրաց իւրոց, որ բառնայր 'ի նմանէ զկարողութիւն փորձելոյ առնել անդէն զբնակութի ինչ, բաւական եղեն շարժել զդեռաշխն Փանամայի յետս ընկրկել քայլ մի 'ի խորհրդոց իւրոց. Շարունակեաց պնդել, թէ կողոնիայն ոչ էր յաստիճանի երթալոյ 'ի վր այնպիսի հզօր թագաւորութե. և ոչ կամեցաւ աւագացուցանել 'ի կողմանէ իւրմէ զզօրաժողով մի բաւական ըստ նորա կործանելոյ զգաւառն՝ առ պակասութե ջանիցն կարևորաց առ 'ի պահել զայն. Այլ ցրտութի իւր ոչ նուաղեցոյց բնաւ զվառ երից ընկերակցելոցն. ոյք իրազեկ եղեն, թէ ոչ կարեն 'ի գործ դնել զգաղափար իւրեանց առանց գերագոյն հաստատութեան. և թէ վնկ պարտէին թախանձել զինքնակալ իւրեանց շնորհել նոցա զայն իշխանութիւն, զոր ոչ կարէին ընդունել յօտարկանէ իւրմէ. Այսու դիտմամբ յետ միաբանելոյ 'ի մէջ իւրեանց, զի Փիզզարրոս խնդրիցէ զգիրս բդեշխին, Ալմակրոս զփոխանակի բդեշխին և Տէլուքա զարժանաւորութիւն եպիսկոպոսի յերկրին, զոր առաջադրէին ստանալ, առաքեցին զՓիզզարրոս իբր գործաւոր իւրեանց 'ի Սպանիա. Թէպէտ դրամագլուխք նոցա էին յայնժամ այնպէս գծուծք պատճառաւ կրկնեալ ծախուցն, զորս արարեալ էին, մինչ զի հազիւ գտին 'ի փոխ զխուն ինչ գումար կարևոր առ 'ի հանդերձել զնա վն ճանապարհորդութեան:

Փիզզար- րոս ա- [illegible] [illegible] 'ի Սպա- նիա:

Փիզզարրոս ոչ կորոյս ժամ 'ի փոխաբերելն յարքունիսն. և որչափ և կերպարանն այն էր բնաւին նոր վն նր՝ երևեցաւ առաջի կայսերն ազատագէմ արժանաւորութ առն միոյ գիտակցի այնմ, որում արժանաւորէին ծառայութիւնք իւր. և ընձեռեաց զիրակութիս իւր այնպիսի խելամտեցուցմամբ և աչալուրջ յաջողակութ, որ ոչ լինէր սպասեալ ոչ 'ի դաստիարակութենէ իւրմէ և ոչ յառաջին պաշտամանց կենաց իւրոց. Շարժիչ գծագրութիւնք վշտակրութեանց իւրոց և մեծապանծ պատմութիւն երկրին գտելոյ յիւրմէ և հաստատեցելոյ յառհաւատչէից բերոց իւրոց, զորս առաջի մատուցանէր, արարին զայնպիսի տպաւորութիւն 'ի վն Կառոլոսի և 'ի վն գործակալաց իւրոց, մինչ զի հաստատեցին ոչ միայն զխորհեն շահատակութիւն, այլև երևեցան կցորդել բարեդիպութեան զօրավարին. Խրախուսեալ յայսց տրամադրութեանց 'ի նպաստ իւր Փիզզարրոս՝ ոչ ևս խորհեցաւ 'ի շահս ընկերակցաց իւրոց. այլ քանզի պահանջմունք Տէլուքային ոչ վնասէին իւրոցն,

Ա՛չ խոր- հէ յա- [illegible] [illegible] [illegible]:

ընկալաւ մծ նր զեկեղեցական արժանաւորութիւն՝ առ որ ձկտէր. Այլ Ալմակրոսի խնդրեաց միայն զհրամանատարութի ամրոցին, որ պարտէր կանգնել 'ի Թումպէզ. և ապահովացոյց մծ անձին իւրոյ զայն բովանդակ, որում անկոպար փառասիրութի իւր կարէր երբէք փափագել. Անուանեցաւ բդեաշխ, զօրագլուխ ընդհանրական և ատելանթատ բոլոր երկրին, զոր գտեալ էր. և զոր յուսայր տիրապետել, գերագոյն իշխանութբ եթէ քաղաքականաւ և եթէ զինուորականաւ և
1528 լիակատար իմն իրաւամբք առ ամ արտօնութիւս
16 Յու- և շահեկանութիւս սովորս շնորհել բաղդորդաց
լիսէ. նորոյ աշխարհին. Յայտ արարեալ եղև, թէ ի-
Պի–նա– րաւարանութի իւր տարածիցի երկերիւր փարսախս
քահոգ– առ եզերբ ընդ հարաւ գետոյն սրբոյն Յակոբայ.
ւոյ դէմ և թէ եղիցի անկախ 'ի Պետրարիասէ փոխանորդէ. այլև
քաղքոյն տուաւ նմա իշխանութի ընտրելոյ զամ պաշտօ-
հրամանն նատարս իւր, որք ծառայելոցէին 'ի ներքոյ նր.
մծ անձին 'Ի փոխարէն այսպիսի իմն շնորհման, յոր յար-
նորոյ: քունեացն Սպանիոյ ոչինչ ծախիւր, կախեալ գոլով վայելումն նր 'ի բարի ելից ճգանց իւրոց՝ Փիծծարրոս դիմագրաւ եղև ժողովել զերկերիւր յիսուն արս, պատրաստել զնաւս, զզէնս և զզարմանս պատերազմի, որք պահանջէին մծ նուաճելոյ ընդ թագաւորութբն Կաստիլիոյ զաշխարհն, որոյ վարչութիւն նմա վիճակէր:

Ա՛րղէնէ Թէպէտ և էր սակաւահամար գունդ արանցն. զո-
փորրէն րոց Փիծծարրոս բուռն հարեալ էր գրել 'ի զին-
պօրոդեն ուորութի, սակայն դրամագլուխք իւր և փոխն
ընդդո– էին այնքան նուազք, մինչզի աշխատութբ էհաս
նոյ նէր 'ի լրացուցանել զկէս նր. և յետ ստանալոյ զհրո-
ծողողէ– վարտակս իւր 'ի թագաւորութենէն՝ գտաւ բռնա-
րոյ: դատեալ աններեւութանալ զանխլաբար 'ի Նաւահանգստէն Սիվիլեոյ առ 'ի խոյս տալ այսպէս 'ի հետախուզութէ պաշտօնատարացն պարտաւորելոց 'ի քննել, եթէ լցեալ իցէ նա զպայմանս դաշ-

նադնագրութեն. Բայց յառաջ քան զմեկնիլն իւր ընկալաւ զփոխանցումն ինչ դրամոյ 'ի Բօրթիաէ. որ վերադարձեալ գոլով զայնու ժամանակաւ 'ի Սպանիա, զոճարձանայր հանգանակել օգնութեմբ իւրով առ ընդունակացուցումն միոյ 'ի նախկին ընկերաց իւրոց, զորոյ ճանաչէր զքանքարս և զարտեղութին, առ 'ի ձեռնամուխ լինել յընթացս ինչ փառաց նման այնմ, զոր նախինքն եղերեալ էր:

Սա էհաս 'ի Նոմպրէ տէ Տիօս. և չոճեաց խոտորնակի ցամաքալեզուին 'ի Փանամա յընկերութե երից եղբարց իւրոց՝ Ֆերտինանտոսի, Յօհաննիսի և Կօնծալոսի, յորոց առաջինն ծնեալ էր յօրինաւոր ամուսնութէ, պոռնկորդի ելով այլոց երկուցն զոյգ ինքեան. և Ֆրանչիսկոսի Ալքանթարացւոյ եղբօր մօր իւրոյ. Էին հնգեքեան 'ի ծաղկի հասակի իւրեանց. և այնքան ընդունակք և քաջք, մինչզի կալան զերևելի մասն յապագայ քաջագործութիս նր:

Փիծծառրոս 'ի ժամանելն իւր 'ի Փանամա եգիտ զԱլմակրոս այնչափ զայրացեալ վս եղանակին, որով ընձեռեալ էր նա զիրակութիս իւր, մինչզի բաց 'ի հրաժարելոյն 'ի գործելոյ այլ ևս միաբան ընդ միում, վս որոյ անհաւատարմութեն մնացեալ էր արտաքսեալ յիշխանութենէ և 'ի պատւոյն, զոր կարէր արժանապէս պահանջել, հնարէր առնել նոր իմն ընկերակցութի առ 'ի լինել խափան երկրագտութեց նախկին գործակցին իւրոյ. Բայց Փիծծառրոս ունէր զգանձ իմն խոհեմութե և զգաստութե առ 'ի չթողլոյ հետևիլ պատառուածոյ իրիք, որ լեալ էր մահաբեր առաջարկութեց իւրոց. Առաջի մատուցանելով զանձն կամաւորաբար առ 'ի հրաժարիլ 'ի պաշտօնէ ատելանթատի, և խոստանալով նախահօգալ նմա զայն հանդերձ անկախ իմն վարչութե, մեղմացոյց առ սակաւ սակաւ զսրտմտութե

Միաբա-
նի հաշ-
տութե-
ամբ ընդ
Ալմաղրօ-
սէ:

թի անկեղծ զօրականի միոյ, որ 'ի սկզբան իւրում էր բուռն, այլ ոչ վն այսորիկ անհաշտելի. Ամենեւին շատացեալ Տէլուքայն բարւոք յաջողելովն յամ հետամտութիս իւր նպաստեաց ճշմարտիւ 'ի սրտէ փութոյն փիծծարրոսի. Հաշտեցան արդեամբք կողմանքն. և զաշնաւորութին նորոգեցաւ 'ի սկզբնական պայմանս իւր. այս է, զի յառաջ տարցի ձեռնարկութին հասարակաց ծախուք ընկերելոցն. և զի օգուտքն, որք յայնմանէ ծագիցին, բաժանեսցին հաւասարապէս 'ի մէջ նց. Հանդերձ այսուիկ նաև զկնի վերստին միաւորութեն և զկնի մեծագոյն ճգանցն վն հասարակաց շահուն՝ 1530 երեք փոքրիկ նաւք և հարիւր ութսուն զօրականք, յորոց երեսուն և վեցք էին ձիաւորք, բաղկացուցանէին զպատրաստութին, զոր նոքա կարողացան գումարել. Բայց սքանչելի յառաջադիմութիւք Սպանիացւոց յԱմերիկա հնչեալ էին 'ի նն զայնպիսի մեծ կարծիս զվերնագունութէ իւրեանց, մինչզի փիծծարրոս ոչ եդ զյապաղումն 'ի միջի. և խարիսխ ամբարձ այսոքիւք փանաքի զօրութիւք առ յափշտակութի մեծի իրիք կայսրութն:

Սպառազինութէ նոցա:

Փիծծարրոս.

Ալմակրոս մնաց, որպ յառաջ 'ի փանամա առ 'ի հետեւիլ նմա զկնի այնու զօրավիգութի արանցն, 1531 զոր կարող լինիցի հաւաքել. Յեղանակն նաւելոյ գոլով յարմար, և ընթացք նաւարկութեն ընդ փանամա և ընդ փէրու յոյժ լաւագոյն ծանուցեալ, փիծծարրոս կատարեաց զճանապարհորդութին յերեք տասան աւուրս. Թէպէտ և 'ի բռնութէ հողմոց և յորձանացն փոխարբերեալ էր աւելի քան զհարիւր փարսախ ընդ հիւսիսակողմն Թումպէծայ՝ տեղի նպատակի իւրոյ. և պարաւանդեալ էր իջուցանել 'ի ցամաք զխումբս իւր 'ի խորշին սրբյն Մատթէի. Ընելով զհաշիւ զիւրաքանչիւր վայրկենից՝ սկսաւ յառաջադէմ լինել դէպ հարաւոյ. բայց նկատելով առ

'ի

'ի չհեռանալ յեզերէ ծովուն վն՟ լինելոյ 'ի պայման հասանելոյ հանդերձ օգնութիւն, զոր սպասէր 'ի Փանամայէ. և վն՟ ապահովանալոյ 'ի վ՟ վախստեան 'ի դիպուածի իւիք ձախորդութեն. Այլ քանզի երկիրն 'ի զանազան տեղիս առ ծովեզերըն Փէրուայ ամուլ է, վատառողջ և սակաւ բնակեալ, և քանզի Սպանիացիք պարտէին անցանել ընդ ամ՟ գետս իւր առ բերանով, ուր կուտակ ջուրցն է մեծագոյն, և զի անհոհեմութի Փիծծարրոյի 'ի կռուիլն ընդ ազգայնոցն, յորժամ պարտէր ջանալ շահիլ զվստահութի նց՟, բռնադատեալ էր զնս՟ թողուլ զսեպհական բնակութի իւրեանց, սովն, աշխատութիւն և զանազան ցեղք հիւանդութեանց ձգեցին 'ի վ՟ նր՟ և հետևողաց իւրոց թշուառութիւս ոչինչ բնաւ վայրագոյնս քան զայնս, զորս կրեալ էին յառաջին շահատակուծ իւրեանց. Ուրինչ փորձէին յայնժամ այնպէս սակաւ համեմատէր մարդկուզական ստորագրութեանց այնր երկրին սրարեցելոյ կանխաւ 'ի Փիծծարոսէ, մինչզի զօրականք իւր սկսան յանդիմանել զնա. և լինէին ցրտացեալք 'ի ծառայութեն, եթէ ոչ էին նշմարեալ զնշանս ինչ ընչաւէտութեն և մշակութեն, որք երևէին արդարացուցանել զբանս զօրավարի իւրեանց. Հասին 'ի վերջոյ 'ի գաւառն Քօաքուէ. և յանկարծակի 'ի վ՟ հասեալ գլխաւոր շինուց ազգայնոցն տարան 'ի բաց զանօթս և զզարդս ոսկւոյ և արծաթոյ արժողութե երեսուն հազար փեսոսաց հանդերձ այլով աւարաւ այնպէս մեծագնիւ, մինչզի արտաքսեաց 'ի նոցանէ զամ՟ երկբայութիւնս. և վերստին կենդանացոյց զյոյս նոցա:

1531 14 Մայ.

"Նոյն ինքն Փիծծարրոս էր այնպէս ապշեալ ընդ այնքան հարուստ կողոպուտն, զոր նա նկատէր առ՛ի իւր երեխայրիս զանձուց երկրին, մինչզի արձակեաց նոյնժամայն զմի 'ի նաւուց իւրոց 'ի

Փանամա հանդերձ մեծաւ հարստութեամբ առ Ալմակրոս և զմիւս այլ 'ի Նիքարակուա հանդերձ երևելի իմն գումարիւ առ անձինս ժրագլուխս յայնմ գաւառի, յուսալով յանկուցանել զբաղդորդս առ ծառայութիւն իւր այսու դիպաւոր առհաւատչէիւ ընչից ստացելոց 'ի նմանէ. Յայնմ վայրի շարունակեաց զչու իւր առ ծովեզերբն՝ անարժան համարելով 'ի գործ ածել զայլ միջնորդս բաց 'ի բռնութենէ առ 'ի նուաճել զբնակսն. Վարէր ընդ նոսա բռնութեամբ 'ի սփռեալ բնակութիւնս նոցա, ստիպելով զնոսա, կամ խոյստալ 'ի ներքին աշխարհն, կամ ենթադրել լծոյ իւրում. Այս յանկարծ երևումն հինից տեսլեամբ և տարազուք այնպէս օտար եղելոց, և որոց զօրութեան երևէր ոչ կարել ընդդէմ կալ, արար զնոյն ահարկու տպաւորութիւն, որ յայլ մասունս Ամերիկոյ. Փիծծարրոս ոչ եգիտ զընդդիմակայութիւն, մինչ և ոչ ընդ հարաւ ընդ կղզւոյն Փունայի 'ի խորշին Կուայքուիլայ. Այս էր առաւել բազմամարդ մասն աշխարհին, ընդ որ անցեալ էր. ունէր բնակիչս առաւել ամեհիս և նուաղ քաղաքականացեալս քան զբնակիչս շարունակ ցամաքին. որք պաշտպանեցին զանձինս յամառ իմն քաջութեամբ. և վասն Փիծծարրոս ծախեաց անդէն զամիսս վեց առ 'ի վերածել զնոսա 'ի հպատակութիւն. 'Ի Փունայէ յառաջ խաղաց 'ի Թումպէզ. ուր ախտքն, որք մխեալ էին 'ի խումբս իւր, բռնաբարեցին զնա դեգերել զամիսս երիս:

1532 Մինչ դեռ էր նա այսպէս պարապեալ, սկսաւ շահաւորիլ 'ի սեպհական ուշադրութենէ իւրմէ սփռելոյ զհամբաւ առաջնոց յաջողութեանց իւրոց 'ի Րօաքուէ. Հասին 'ի Նիքարակուայէ երկու զանազան հատուածք. և թէպէտ իւրաքանչիւրն ոչ էր աւելի քան զթիւ երեսուն արանց, համարեցաւ զնոսա իբր զօրավիգութիւն իմն մեծ առ տկար խումբ իւր. և մանաւորաբար՝ վասն զի մին

Առնու զհասուած մի նոր և շարունակէ յառաջադէմ ընթել:

էր ընդ հրամանաւ Սեբաստիանոսի Պէնալքածարայ, և միւն Ֆերտինանտոսի Սոթոյի զօրագլխաց ոչ վայրագունից վաստակով և համբաւով որոց միանգամ ծառայեալ էին կանխաւ յԱմերիկա. Ի Թումպէծայ յառաջացաւ առ գետն Փիւրա. և 'ի շահաւէտ ինչ դիրս մօտ 'ի բերան իւր կառոյց զառաջին նմդեհութին Սպանիական 'ի Փերու. որում ետ զանուն սբ Միքայէլ: 16 Մայիսի:

Տարունակելով Փիծծարրոս յառաջ խաղալ դէպ կեդրոնի Փերուեան կայսրութն տեղեկանայր առ սակաւ սակաւ զտարածութէ իւրմէ և զկառավարութէ, ոչ և զներգործական վիճակէ իրակութնց իւրոց. Ոչ էր առաջնորդեալ զգործողութիս իւր որպ պարտն էր առանց ունելոյ զայնմանէ զծանօթութի ինչ. և եթէ մեք թողույաք մոռուցանել զհաւատարեալ ուշադրութի այսպիսի իրաց անկարելի լինէր տալ փաստ յառաջադիմութենցն, զորս Սպանիացիք կանխաւ արարեալ էին, և մեկնել զպատճառս յետնագոյն յաջողութենց նց:

Ի ժամանակին, յորում Սպանիացիք մտեցան 'ի Փերու, տէրութիք Ինքնակալաց իւրեանց տարածանէին 'ի հիւսիսոյ 'ի հարաւ աւելի քան զհազար հինգհարիւր մղոնս առ խաղաղական ովկիանոսիւ. Լայնութի իւր յարևելից յարեւմուտս էր յոյժ նեղաւ երևելի, գոլով միակերպ եզերեալ յլարձակ գագաթանց Անտեայ լերանց. որք երթան 'ի միջէ ծագէ 'ի միւս ծագ. Փերու, ոչ և այլ կողմանք նորոյ աշխարհին ստացեալ եղև սկզբնաբար 'ի փոքրիկ անկախ ցեղից. որոց իւրաքանչիւրն ունէր զանազան վարս և զանազան կերպս կառավարութն. Բայց ամենքեան էին այնպէս սակաւ քաղաքականացեալ, մինչ զի եթէ աւանդութիք վերաբերեալք առ եղանակ կեցյ նց, և պահպանեալք 'ի մէջ սերնդոց նց արժա- 1532 Կացութի Փերուեան կայսերութն:

նի իցեն հաւատարմութ՟են իմիք, պարտին նոյն ցեղք թըռչիլ 'ի մէջ բրտագոյն և վայրենագոյն ազգացն Ամերիկոյ. Զուրկք յարհեստից, 'ի գիտութ՟ենց, 'ի մտավարժու՟է չլինելոյ զհանգրուանս, և սիրտք իւր՟ենց փակե՟լք առ այն զգացու՟ծս և պարաւանդութ՟իս, որք կերպաւորեն զառաջին կազմ ընկերական միաւորութ՟ե՝ ասի թէ անհատք ն՟ց երթային մերկ՝ թափառելով յանտառս, յորոց ծածկե՟լ էր յայնժամ երկիրն, նմանե՟լք մանաւանդ գազանաց քան մարդոց. Յետ կացելոյ Ե՟ պէսպէս դարս ընդդէմ խստութ՟ենց և թշուառութ՟ենց անխորշելեաց յայնմ խժական կացութ՟ե, և յորժամ ոչինչ տեսանէր, որ ցուցանէր զմերձենալ իւիք հասարակաց զօրութ՟ե առ 'ի բարեգունանալ, պատմի, թէ երևեցան առ ափին լճին Թիտիթիաքայ մարդ մի և կին մի վեհափառ տեսլեամբ և զգեցեալք յոյժ վայելուչ հանդերձս. Ասացին, թէ արեգակն հայր նոցա շարժեալ 'ի կարեկցութ՟ի ողբալի վիճակին, յորում կեային այնքան ժողովուրդք տարաբաղդք, առաքեալ էր զն՟ս առ'ի քաղաքականացուցանել զն՟ս և ուսուցանել, զի կեցցեն ըստ բանականութ՟ե և ըստ արդարութ՟ե. Առ յորդորակ ն՟ց զօրացուցեալ 'ի յարգանացն մ՟ն ածութ՟ենն, յորոյ անուն խօսէին, ոմանք 'ի ցրուեալ վայրագացն ժողովեցան 'ի միասին. և ընդունելով զազդարարութ՟իս ն՟ց իբր զերկնաւոր հրամանս զհետ գնացին ն՟ց 'ի Կուսքօ. ուր զտեղի առին. և սկսան արկանել հիմունս քաղաքի միոյ:

Մանքօ Կափաք և Մամա Օքլօ (այսպիսի էին անուանք այսոց արտաքոյ կարգի անձանց) ժողովելով այսպէս զոմանս 'ի թափառական ցեղից կերպաւորեցին զընկերական ինչ միաւորութ՟ի. որ բազմացուցանելով զգիտոյս և միաւորելով զզօրութ՟իս մարդկային տեսակի զարթուցանէ զմտավարժութ՟ի ն՟ց, և անզգալաբար քաղաքականացուցուցանէ զնա. Մանքօ Կափաք կրթեաց զմարդիկ 'ի հողագործութիւն և յայլ պիտանի արհեստս. Մամա Օքօլօ ուսոյց կանանց մանել և ոստայնանկել. Աշխատութեամբ արանցն եղև նուազ անստոյգ ապրուստն. և աշխատութեամբ կանանց կեանքն եղև առաւել տանելի. Ապահովացուցեալ զառարկայս առաջին հարկաւորութեան 'ի նորածնեալ իմիք կացութեան, որպիսի են ապրուստն, զգեստն և բնակութիւնքն, Մանքօ Կափաք դարձոյց զուշադրութիւն իւր առ 'ի կերպաւորել զօրէնս, և մուծանել զքաղաքականութիւն իմն, որ մշտնջենաւորեսցէ զերջանկութիւն նոցա. Զօրութեամբ սահմանադրութեանց իւրոց, զորս մեկնեսցուք առաւել մանաւորաբար փոքր մի զկնի, հաստատեցան զանազան առնչութիւնք առանձնական կենաց. և կանոնադրեալ եղեն այնքան ուրոյնութեամբ պարտականութիւնքն, որք ծագին յայնցանէ, մինչզի աստիճան առ աստիճան ժողովուրդ մի խուժադուժ ստացաւ զվայելչագոյն վարս. 'Ի հրապարական մատակարարութեան պաշտօնք անձանց զգեցելոց զիշխանութիւն էին սահմանեալ այնպէս յատկաբար, և ստորակարգութիւն նոցա, որք կային 'ի ներքոյ նախագահութեան նոցա, պահիւր այնպէս կայուն, մինչզի ընկերութիւն, որում Մանքօ Կափաք վերատեսուչ էր, ստացաւ փութանակի զկերպ կացութեան իրիք կանոնաւորի և իմաստնաբար կառավարեցելոյ:

Այսպէս ըստ աւանդութեան Հնդկաց հիմնեալ եղև կայսերութիւն Ինքասից, կամ տեարցն Փերուայ. 'Ի սկզբան անդ տարածութիւն իւր էր փոքրիկ. Սահմանն Մանքօ Կափաքայ ոչ անցանէր ըստ ութն փարսախս 'ի Կուզքօէ. բայց 'ի ներքոյ անձուկ շրջապատի իւրոյ վարէր զբացարձակ իմն և զանկոպար իշխանութիւն. Յաջորդք իւր ըստ չափուն, որով ընդարձակէին տէրութիւնք նոցա, տային անձանց զնմանակ իմն իրաւաբանութեան 'ի վերայ հպատատակաց իւրեանց. Ոչ էր աւելի բացարձակ տիրականութիւն Ասիոյ. Ինքաքն էին ոչ միայն հնազանդեալ իբր միապետք, այլ և յարգեալք իբր աստուածք. Արիւն նց՟ համարեալ էր սր՟. և արգելեալ էր նց՟ առնել զամուսնութի՟ արտաքոյ տոհմի իւրեանց, որ զատուցեալ այսպէս 'ի մնացեալ ազգէն, տրոհեալ էր որիշ մասնաւորութիւնք հանդերձից և զարդուց. զորս ոչ էր մարթ 'ի գործածել այլոց. Միապետն ելանէր 'ի հրապարակ նշանաւ վեհափառութե՟ն վերապահեցելոյ նմա միայնոյ. և ընդունէր 'ի հպատակաց զնշանս յարգանաց և ակնածութե՟ն, որք մերձենային գրեթէ առ երկրպագութի՟:

Պնտի, թէ 'ի մէջ Փերուացւոց այս անկոպար իշխանութի՟ ինքնակալաց նց՟ երթայր անխախտ հաւասար քայլիւ ը՟ ուշադրութե՟ն նց՟ առ բարին ստրկաց իւրեանց. և եթէ պարտ իցէ հաւատալ պատմութե՟ց հայրենակցաց իւրեանց, ոչ էր ագահութի՟ տիրապետութե՟ն, որ դրդէր զԻնքաս յընդարձակել զտէրութիւս իւրեանց, այլ փափագն քաղաքականացուցանելոյ զժողովուրդս խուժադուժս, և հաղորդելոյ նց՟ զճանաչումն արհեստից ստացելոց յԻնքեանց. Հաստատի, թէ 'ի միջոցի յաջորդութե՟ն երկոտասանից այսց միապետաց և ոչ խակ մինն հեռացաւ յայս բարեբուն հանդամանաց:

Յորժամ Սպանիացիք այց արարին յառաջնում նուագի ծովեզերին Փերուայ յամին 1526, նստէր յաթոռ Հուանա Կափաք երկոտասաներորդ միապետն 'ի հիմնադրաց այնր կայսերութե՟ն. Սա ներկայացուցեալ է իբր աքքոյ տրոհեալ ոչ միայն խաղաղարար առաքինութի՟քն մասնաւորօք զարմին իւրում, այլև վն՟ պատերազմական քանքարոց իւրոց. Յաղթական զէնք իւր նուաճեցին զթագաւորութիւն Քուիթոյ. տիրապետութի՟ այնպէս ընդարձակ և ծանրակշիռ, որ գրեթէ կրկնապատակեաց զկարողութիւն իւր. Նա հաստատեաց զաթոռ իւր ՚ի մայրաքաղաքին այնր գեղեցիկ գաւառի, զոր յաւել ՚ի տէրութիւն իւր. և ոչինչ հայելով ՚ի նախկին հիմնական օրէնսն միապետութեան ընդդէմ նոցա, որք արատեցին զարքայական արիւնն արտաքին իմն ազգականութեամբ, հարսնացոյց զդուստրն յաղթեցելոյ միապետին Քուիթօյ. Նա ծնաւ նմա դուստր մի կոչեցեալ Աթահուալփա. զոր նա ՚ի մահուան իւրում դիպեցելոյ ՚ի Քուիթօ շուրջ զամս 1529, սահմանեաց ՚ի յաջորդ իւր յայնմ թագաւորութեան, թողլով զմնացորդ տէրութեանց իւրոց Հուասքարայ անդրանիկ որդւոյ իւրում ծնեցելոյ ՚ի մօրէ միոջէ թագաւորազնէ. Հանդերձ ակնածութեան, զոր փերուացիք պահէին վասն յիշատակի միապետի միոյ, որ թագաւորեալ էր աւելի համբաւով և շքով քան զայլ ո՛ և իցէ նախորդ իւր, բաժանումն արարեալ ՚ի Հուանայ Կափաքայ ՚ի յաջորդութեան երևեցաւ այնպէս հակառակ սկզբանն իմիք վաղնջականի, որչափ կայսերութիւն, և հիմնեցելոյ ՚ի վերայ աւագութեան իմիք, որ համարիւր սուրբ, մինչզի հազիւ ծանուցեալ ՚ի Քուսքօ, զարթոյց անդէն զընդհանուր իմն դարովանս. Հուասքար քաջալերեալ յայսց ըզգացմանց հպատակաց իւրոց ազդ արար եղբօր իւրում հրաժարիլ ՚ի կառավարութենէ Քուիթօյ, և վերաճանաչել զնա իբր օրինաւոր վերնագոյն իւր. Բայց լեալ էր առաջին մտածութիւն Աթահուալփայ շահիլ զմեծ գունտ իմն վաշտիցն, որք ընկերեալ էին հօր իւրում ՚ի Քուիթօ. Նոքա էին ծաղիկ փերուեան պատերազմականաց. որոց քաջութեան Հուանայ Կափաք պարտական եղև վասն ամենայն յաղթութեանց իւրոց. Ապաւինելով յօգնութիւն նոցա Աթահուալփա արհամարհեաց զխնդիր եղբօր իւրոյ. և ապա դիմեաց ընդդէմ նորա։

Այս-

Այսպէս փառասիրութիւն երկուց երիտասարդ նահապետաց, որոց մինն հիմնէր զիրաւունս 'ի վերայ վաղեմի սովորութեան, և միւսն 'ի վերայ գնդի միոյ հնագոյն վաշտկանաց, շարժեաց զՓերու 'ի քաղաքական իմն պատերազմ, թշուառութիւն յառաջ անծանօթ նախորդաց իւրեանց. Գիւրին էր նախատեսանել զհետեւութիւն այսպիսի հակառակութեան. Յաղթանակեաց բռնութիւն զինուց 'ի վերայ աւագութեան օրինաց. Աթահուալփա մնաց յաղթող. և արար զանողորմ իմն կիրառութիւն յաղթութեան իւրոյ. Խելամտեալ զանզօրութիւն իրաւանց իւրոց առ թագաւորութիւնն, թեւակոխեաց ջնջել զզարմն արքունի, տալով զմահ համօրէն որդւոցն սերնդոցն արեւու 'ի Մանքօէ Գափաքայ, զորս ըմբռնեաց նա կամ բռնութեամբ կամ հնարիւք. Վասն քաղաքականն իւիք պատճառի կեանքն տարաբաղդ նախանձաւորին իւրոյ Հուասքարայ, որ եղեալ էր կալանաւոր 'ի պատերազմին, որ որոշեաց զվիճակէ կայսրութեանն, պահեալ եղև առ ժամանակ մի. քանզի առաքելով արտաքս զհրամանս յանուն իւր՝ յափշտակօղն կարօղ լինիցի առնել դիւրաւ հաստատել զսեպհական իշխանութիւնն:

Նպաստաւոր յառաջադիմութիւն Փիծծառրոյ:

Յորժամ Փիծծարրոս էհաս 'ի խորշն սրբոյն Մատթէի վառէր 'ի մէջ երկուց եղբարցն 'ի մեծագոյն կատաղութեան իւրում քաղաքական պատերազմին. Եթէ արարեալ էր նա զթշնամական ինչ ձեռնարկութիւն յառաջնում այցարարութեան իւրում 'ի Փերու յամին 1527, հանդիպեալ էր յայնժամ զօրութեանց հզօր իմն տէրութեան միաւորելոց 'ի ներքոյ միապետի միոյ լցելոյ ընդունակութեամբ և քաջասրտութեամբ և 'ի վիճակի դիմակաց լինելոյ յառաջադիմութեանց իւրոց. Բայց 'ի ժամանակին, զորմէ խօսիմ, երկու համախնդրակքն թէպէտև ընկալեալ էին զծանօթութիւն հասանելոյ և բուռն յառաջ խաղալոյ Սպանիացւոցն սա-

սակայն այնպէս զբաղեալ էին 'ի պատերազմի իւրեանց, մինչզի և ոչ իսկ ուշեդին շարժմանց այնպիսի ակար թշնամւոյ միոյ, յորմէ ոչ կարէին երկնչիլ, և որոյ յառաջադիմութեանց դիւրին էր, ում կարծէին նոքա, դնել արգել ինչ, յորժամ յետոյ լինիցի նմ̃ առնել պարապ:

Ա՞ այսր երջանիկ զուգադիպութեան դիպուածոց, Հանէ զոր փիծծարրոս ոչ կարէր երբէք նախատեսա- ամէն ըզ- նել, և զորմէ մն անկատար եղանակին իւրոյ հա- շահ. Ի զօրդելոյ ընդ ազգայնոցն, մնացեալ էր ընդ եր- յառաջ կար ժամանակ 'ի խաւարի, եղև նա յաստիճա- [illegible] ըն- նի յառաջ տանելոյ զգործողութիւնս իւր առանց նէ: խուեալ լինելոյ. և յառաջխաղաց մինչև 'ի կեդ- րոն մեծի իւրք կայսրութեան, մինչչև արարեալ էր նր բուռն բաւական կասեցուցանելոյ զնա. Յայսմ վայրի Սպանիացիք. ստացեալ էին զթե- թև իմն ծանօթութիւն զհակառակութեանցն 'ի մէջ երկուց վիճող կողմանցն. Իսկ զառաւել որոշ- պատմութիւն ընկալան յետոյ 'ի պատգամաւորացն, զորս Հուասքար առաքեաց առ փիծծարրոս. որ- պէսզի փութացուսցեն զօգնութիւն իւր ընդդէմ Աթահուալփայ ներկայացուցելոյ 'ի նմանէ իբր ապստամբ և յափշտակող. Ծանեաւ փիծծար- րոս իսկոյն զծանրակշռութիւն այսր լրոյ, և նա- խատես եղև այնպէս յայտնի բոլոր շահեկանու- թեանցն, որք կարէին ածանցիլ նմա յայսմ բա- ժանեալ տէրութէ թագաւորութեան, յոր ակն ե- դեալ էր, մինչզի առանց սպասելոյ օգնութեան, որ պարտէր գալ նմա 'ի փանամայէ, բացորո- շեաց յառաջել և ևս անդր, մինչ նոքին երկ- պառակութիւն արգելոյր փէրուացւոց շարժիլ 'ի կախ ընդդէմ ն̃ր հանդերձ ա̃մ կարողութ̃բ իւր- եանց, 'ի մտի՝ եդեալ ըստ որում թելադրէին նմա պարագայքն, կապակցիլ ընդ միում 'ի համախնդ- րակացն առ 'ի նուաճել զմիւսն առաւել դիւ- րակի. Գոլով ձեռներեցք Սպանիացիք այնր գարու, և հանդիսացեալ որ էր Փիծծարրոս 'ի մէջ հայրենակցաց իւրոց մե համարձակ սրտեղութեն իւրով՝ ոչ պարտի ենթադրել, թէ գոլով նա յառաջ խաղացել մինչև ցայս վայր յամր՝ և ծայրագոյն զգուշութի, կամեցեալ իցէ 'ի միում վայրկենի փոխել զոճ գործելոյ իւրոյ, և յարձակել յայսպիսի իմն վտանգաւոր քայլ՝ առանց նոր ինչ պատճառի, որ արդարացուսցէ զգնացս իւր։

1532 Մեծամ զօրաց իւրոց։ Գոլով նա պարաւանդեալ 'ի բաժանել զվաշտս իւր առ 'ի թողուլ զպահապանս 'ի սէն Միքայէլ, որք բաւական իցեն 'ի պաշտպանել զգիրս ինչ, որ ապահովացուսցէ նմա զփախուստն 'ի դիպուածի իրիք ձախորդութեն, և ուստի կարիցէ ընդունել զթիկունս, որք գալոցէին 'ի Փանամայէ, անկաւ 'ի չու յոյժ միջասահման իմն գնդաւ. Բաղկանայր այս վաթսուն և երկու արամբք հեծելովք, հարիւրևերկու հետևոտն զօրականօք. որոց քսանն էին զինեալ բալեստրիւք և երեքն հրետիւք։

(32) ‖ Յայնմ ժամի երիվարք մեծագս բազմացեալ էին 'ի հարգոնութիս Սպանիացւոց 'ի շարունակին. Յորժամ Քորթէս սկսաւ զշահատակութի իւր յամին 1518, թէպէտ պատուականութի իւր էր առաւել երեւելի քան զՓիծծարրոսինն, և բաղկացեալ յանձանց վերնագոյն աստիճանի քան զայնոսիկ, որք ասպատակեցին զՓէրու, սակայն նա ոչ կարողացաւ պաճարել երիվարս աւելի քան զվեշտասան։ ‖

Ուղղեաց զընթացս իւր դէպ Քասսամալքայի փոքրիկ քաղաքի 'ի տարակացութեն երկոտասան աւուրց գնացից 'ի սէ Միքայելէ. ուր Աթահուալփա բանակեալ էր գնդաւ միով երևելի վաշտից. Յառաջ քան զյառաջադէմ լինել իւր կարի իմն պաշտօնատար մի արձակեալ 'ի Ինքայէ եկն ընդառաջ լինել նմա մեծագին իմն ընծայիւ 'ի կողմանէ իւրմէ հանդերձ առաջի մատուցմամբ դաշնաւորութեան իւրոյ և ապահովացուցմամբ բարեկամական իւիք ընդունելութեան ՚ի Կասսամալքա. փիծծառրոս ըստ արուեստականութեան վարեցելոյ ՚ի հայրենակցաց իւրոց յԱմէրիկա, կեղծեաց գալ իբր հրեշտակ հզօրեղ ուրուք թագաւորի, և դիտաւորութիւ ընծայեցուցանելոյ Աթահուալփայի զանթերակայութիւ իւր ընդդէմ թշնամեացն, որք վիճէին զիրաւունս իւր առ թագաւորական աթոռն:

Կարծիք Փերուացւոց վերաբերեալ առ գաղափար նոցա :

Էր բնաւին անհասանելի Փէրուացւոց նպատակն Սպանիացւոց ՚ի մտանելն յերկիր իւրեանց. և կերպաւորեալ էին նկատմամբ սորա զանազան վարկածս առանց կարող լինելոյ որոշել, եթէ պարտէին նկատել զնոր հիւրս իւրեանց իբր էակս վերնագոյն բնութեան, որք գային այց առնել նց ՚ի սակս բարեկամութեան իւիք, եթէ իբր ահարկու վրէժխնդիրս յանցանաց իւրեանց և թշնամիս խաղաղութեան և ազատութեան իւրեանց. Անընդհատ դաւանութիւնք Սպանիացւոց, թէ եկեալ էին նոքա առ՚ի լուսաւորել զնս ճանաչմամբ ճշմարտութեան, և առ ՚ի ածել զնս ՚ի ճանապարհս երջանկութեան նպաստէին առաջին կարծեաց. Իսկ թշնամանքն, զորս առնէին նոքա, յափշտակողութիւ և գազանութի նց էին սոսկալի ցոյցք երկրորդին. Ի մէջ այսր անստուգութեան մեկնեաց փիծծառրոս զխաղաղարար դիտմունս իւր. և այսոքիկ այնպէս վարեցին յԻնքայէ զամ երկիւղ, մինչզի որոշեաց նա յինքեան ընդունել զնա իբր բարեկամ. Յետ այսր բացորոշութեան հաւանեցաւ Սպանիացւոց չու առնել անդորրաբար ընդ աւազուտ անապատն ՚ի մէջ սյն Միքայէլի և Մօթուփեայ. ուր դժն բնութիւն թշնամւոյ ուրուք միացեալ ընդ անխորշելի խոշտանգանացն, զորս կրեցին նոքա անցանելով ընդ այնպիսի անշէն իմն գաւառ, լեալ էր նոցա մահաբեր :

(33) ‖ Յամին 1740՝ տէրն Անտոնիոս Ուլլոա և տէրն Գէորգ Խուան ճանապարհորդեցին 'ի Կուայաքուիլայ 'ի Սնթօփէ ընդ նոյն ճանապարհ, զոր կալաւ Փիծծարրոս. 'Ի ստորագրութե ճանապարհի նց մարթէ կերպաւորել զճանաչումն իմն դժուարութե իւրոյ. Աւազուտ տափարակքն 'ի մէջ սրյն Միքայէլի Փիուրայ և Սնթօփեայ տարածանին իննսուն մղոն առանց ջրոյ, առանց իրիք ծառոյ, տնկոյ կմ գալարւոյ իրիք ընդ հրացեալ իմն աւազն: ‖

'Ի Սնթուփեայ յառաջ խաղացին դէպ լերանցն, որք շրջապատեն զխոնարհ երկիրն Փերուայ. և վտարեցան ընդ այնպիսի անձուկ և անմատոյց կիրճս, մինչզի արք սակաւք քաջ պաշտպանեալ էին զայնս ընդդէմ յոգնաթիւ զօրաց. Աստէն ևս յաղագս անհանճար գերահաւատութե Ինքայի Սպանիացիք ոչ պատահեցան դիմադարձութե. և առին զտացուած ամրոցի իրիք կանգնեցելոյ վս ապահովութե այնր կարևոր դրից. Իսկ քանզի յայնժամ մերձեցան 'ի Գասսամալքա, Աթահուալփա նորոգեաց նց զդաւանութիս բարեկամութե իւրոյ և 'ի կրկին ցոյց անկեղծութե իւրոյ առաքեաց զընծայս մեծագոյն արժողութե քան զառաջինսն:

Քաղաքն է Գասսամալքայ: 'Ի մտանելն 'ի Գասսամալքա Փիծծարրոս տիրեաց ընդարձակ իրիք գաւթի. որոյ 'ի միոջէ կողմանէ էր տուն մի, զոր վիպասանք Սպանիացիք կոչեն ապարանս Ինքայի, և 'ի միւսմէ մեհեան մի արևու, բոլորն շուրջ պատեալ 'ի քաջամուր հողաբլրոյ միոջէ. Իբրև զետեղեաց զզօրս իւր յայնպիսի շահաւէտ կայի միում արձակեաց զՀէրնանտոս Սօթօ և զեղբայր իւր Ֆէրտինանտոս 'ի բանակ Աթահուալփայ. որ տարակաց էր 'ի քաղաքէն շուրջ զերիս մղոնս. Պարաւանդեաց զնս հաստատել զյայտարարութիւնն, զոր նա վաղնջուց արարեալ էր զխաղաղարար զգացուածոց իւրոց. և խնդրել բերան 'ի բերան խօսիլ ընդ Ինքայի. ո՟պզի կարող լինիցի մեկնել երկայնագոյն՝ զդիտաւորութիս Սպանիացւոց յայց առնելն երկրի իւրում. Ընկալեալ եղեն նոքա հանդերձ ա՟մ մեծարու հիւրասիրութ՟ե, որ սովոր էր 'ի գործ ածիլ 'ի Փերուացւոց ընդ մտերմագոյն բարեկամաց իւրեանց. և Աթահուալփայ խոստացաւ երթալ 'ի հետևեալ աւուրն առ 'ի այց առնել հրամանատարին յիջևանս իւր. Այնլուչ ծանրութ՟ի փքրուեան միապետին, կարգն արքունեաց իւրոց, և յարգութ՟ին, որով հպատակք իւր մերձենային առ անձն նր՟, և հնազանդէին հրամանաց իւրոց ապշեցուցին զբովանդակ Սպանիացիսն զայնոսիկ, որք ոչ պատահեալ էին երբէք յԱմերիկա արժանաւորագոյն առարկայի քան զփոքրիկ քաղքէս խուժադուժ ցեղի միոյ. Թէպէտ աչք նց՟ առաւել ևս հզօրաբար հարեալ եղեն 'ի մեծ զեղմանէ փարթամութ՟եցն, զորս նշմարեցին 'ի բանակին Ինքայի. Ընծայքն զորս զանձամբ բերեալք 'ի նմանէ և 'ի պաշտօնատարաց իւրոց, անօթքն ոսկւոյ և արծաթոյ, որք ծառայեցին խրախճանին պատրաստեցելոյ նոցա, քանակութ՟ի ա՟մ ցեղ շարժականաց կազմեցելոց յայսց մետաղաց գեր 'ի վերոյ եղեն մեծապէս քան զինչ և իցէ գաղափար ընչաւէտութ՟ե, զոր Եւրոպացի ոք վեշտասաներորդ դարուն կարող էր յղանալ 'ի միտս իւր:

Դարձ արարեալք 'ի Քասսամալքա լի ապշութ՟ք և ցանկութ՟ք գանձուցն, զորս տեսեալ էին, արարին զայնմանէ այնպիսի իմ՟ն գծագրութիւն հայրենակցաց իւրեանց. մինչ զի հաստատեաց զՓիծծառրոս յորոշմանն, զոր արդէն արարեալ էր. Յաղագս ճանաչմանն ստացելոյ 'ի նմանէ զբարուցն Ամերիկացւոց 'ի ժմ՟կի երկար ծառայութ՟ե իւրոյ 'ի նոր աշխարհին, և յաղագս շահեկանութ՟եցն, զորս Քօրթէս հանեալ էր 'ի կա-

Անհաւատարիմ խորհուրդն Փիծծառրոսի:

լանաւորութէ Սոնթէծումայի՝ ծանեաւ, թէ որպէս շահաւէտ էր ունել զինքն ՚ի ձեռս իւր. Կերպաւորեաց առ այս վախճան զգաղափար մի նոյնչափ հաւատարիմ, որչափ յանդուգն. Հանդերձ ամ հանգամանօքն, զոր առեալ էր յինքն, պատգամաւորի հզօր ուրուք միապետի, որ փափագէր զդաշնաւորութի մի ընդ ինքայի, առանց հայելոյ ՚ի կրկնեալ մատուցմունսն, զորս արդէն արարեալ էր նա՝ սեպհական բարեկամութեն իւրոյ և օժանդակութեն՝ բացորոշեաց շահաւորել ՚ի պարզ և ՚ի բնական միամտութէն, որով Աթահուալփա վստահանայր ՚ի դաւանութիս իւր, և ապահովանալ զանձնէ նր ՚ի խօսակցութենն, առ որ հրաւիրեալ էր զնա. Նախապատրաստեցաւ առ ՚ի կատարել զխորհուրդ իւր որոշել իմն կամօք և այնպիսի սակաւ խղճմտութբ, որպ թէ այս ոչ պարտէր անպատուել զնոյն ինքն և զհայրենիս իւր. Բաժանեաց զհեծելազօրն իւր յերիս փոքրիկ գունդս ընդ հրամանատարութբ եղբօր իւրոյ Ֆերտինանտոսի, Սոթոյի, և Պենալքալծարայ. Հետևակազօրն իւր էր բովանդակ ՚ի միմիայն գունդ. զորոց զքսանսն զատուել փորձ սրտեայսն կալաւ մերձ առ անձն իւր առ ՚ի պահել զնա ՚ի վտանգաւոր գործողութեանն, զոր վերապահեալ էր ինքեան. Հանդերձ երկու մեծամեծ թնդանօթովք բաղտրաւորքն դարանեցան հանդէպ ճանապարհին, ընդ որ պարտէր մերձենալ Աթահուալփա. Ամենեքեան ունէին զհրաման կալոյ ՚ի ներքս հրապարակին մինչև ոչ տուեալ լինիցի նշան շարժելոյ: 1532

16 Նոյ- Սաղքաջ ընդ առաւօտն բանակն Փէրուեան էր
Ըմբռնի· բովանդակ ՚ի շարժման. այլ քանզի Աթահուալ-
[illegible] փա փոյթ անձին ունէր երևելոյ ամ շքով և
[illegible] մեծագործութբ յառաջին խօսակցութեն իւրում
[illegible] ընդ օտարաց, այնպէս յերկարաձգեցաւ նա-
[illegible]

խապատրաստիլն առ այն, մինչզի տիւն շատ յառաջացեալ էր նախ քան զսկսանել նր դչուն. Նա յայնժամ՝ եւ առ աՀլին, զի մի խանգարեսցի կարգն, եկն այնպէս յուշիկ, մինչզի Սպանիացիք անՀամբերք եղեն, երկնչելով, թէ գուցէ կասկած ինչ զգիտաւորութէ իւրեանց եղեցի պատճառ այսր յամեցման. Փիծծարրոս առ՚ի ցելոյ զայս երեւակայութի արձակեաց զերկուս ՚ի պաշտօնատարաց իւրոց Հանդերձ նոր ապաՀովացուցմամբք բարեկամական տրամադրութե իւրոյ. Ինքա Հուսկ յետոյ մերձեցաւ. Երեւեցան յառաջ քան զամենեսին չորեքՀարիւր արք ՚ի միակերպ Հանդերձս իբր կարապետք վն Հորդելոյ առաջի նր ճանապարՀ. Նա ինքն բազմեալ ՚ի գաՀի միում զարդարեցելոյ երփն երփն փետրօք, եւ գրեթէ Համակ ծածկեցելոյ ոսկւով եւ արծաթով եւ ճոխացելոյ պատուական քարամբք բարձեալ էր ՚ի վր ուսոց նախապետական սիրելեաց իւրոց. Ոմանք յերեւելագոյն արքունականաց իւրոց զՀետ երթային նմա՝ բարձեալ եւ ինքեանք ՚ի վր գաՀաւորակաց. զանազան խումբք երգչաց եւ կաքաւչաց ընկերէին Հեծելազօրուն. Եւ բովանդակ դաշտն խռնեալ էր ՚ի վաշտից, որք ամբառնային ՚ի թիւ աւելի քան զերեսուն Հազար արանց:

Օտարո-
տի
զրոյցն
Հօրն
Վալ-
վէր-
տէայ:

Յորժամ Ինքա մատեաւ յօթեւանս Սպանիացւոց՝ եղբայրն Վինչէնցիոս Վալվէրտէ մատրանապետն զօրաց գնաց յառաջ խաչելութբ միով ՚ի միում ձեռին եւ ժամագրքիւ ՚ի միւսումն. եւ մեկնեաց նմա երկայն իմն զրուցարանութբ զվարդապետութի արարչութե, զանկումն Ադամայ, զմարմնաւորութիւն, զչարչարանս, եւ զյարութիւն յի քի, զկարգումն սրբյն Պետրոսի իբր փոխանորդ իւր ՚ի վր երկրի, զփոխանցումն առաքելական իշխանութե իւրոյ ձգՀաւ յաջորդութե ՚ի Պապն, զպարգեւումն արարեալ արքային

Կաստիլիոյ 'ի Պապէն Աղէքսանդրոսէ բոլոր կողմանցն նորոյ աշխարհին. Այսմանէ հետեւեցուցանելով նա խնդրեաց յԱթահուալփայէ ընդգրկել զքրիստոնէական հաւատն, ճանաչել զգերագոյն իշխանութ՟ի Հռոմէական քհ՟նյապետին՝ ենթարկիլ արքային Կաստիլիոյ իբր օրինաւոր ինքնակալի իւրում, խոստանալով՝ յանսալն ն՟ր վաղվաղակի խնդրել իրացն, թէ միահեծան թագաւորն Կաստիլեան պաշտպանեսցէ զտ՟րութիւնս իւր, և հաւանեսցի նմա շարունակել 'ի վարման թագաւորական իշխանութեն. այլ եթէ ամբարշտաբար ոչ կամիցի հնազանդիլ այսպիսի պահանջմանց նախինքն ծանուցանէր նմա պատերազմ յանուն տ՟ն իւրոյ. և սպառնայր նմա զառաւել սարսափելի արդիւնս վրէժխնդրութեան իւրոյ:

Պատասխանի Ինկային: Այս տարապայման զրուցատրութ՟ի, որ մեկնէր զխորին խորհուրդս, և հայեցուցանէր 'ի գործս անծանօթս, զորոց առաւել ճոխաբան ճարտասանն ոչ էր գիտացեալ հաղորդել 'ի միում բոպէի զորիշ ճանաչումն Ամերիկացւոյ միում, եղև այնպէս չարաչար թարգմանեալ 'ի տգէտ թարգմանչէ միոջէ սակաւ վարժեցելոյ 'ի Սպանիացւոց լեզուին՝ և անբաւականէ բացատրելոյ յատկութ՟ի 'ի բարբառն ինքայի, մինչզի բովանդակ զօրութ՟ի իւր եղև գրեթէ բնաւին անըմբռնելի Աթահուալփայի. Սակայն, զոր իմացաւ նա անտի, ելից զնա հիացմամբ և սրտմտութ՟ի. Բայց պատասխանին իւր եղև չափաւորեալ. Սկսաւ 'ի նկատելոյ, թէ ինքն էր շահապ տէրութեանցն, յորոց վ՟ն թագաւորէր ժառանգական յաջորդութ՟ի. և յաւել 'ի վ՟ն, թէ ոչ կարէր իմանալ, զիա՞րդ քհ՟նայ մի օտարական ձկտիցի կարգադրել զերկրաստանացն, որք ոչ պատկանէին նմա. և թէ դիպուածով շնորհումն իմն այնչափ անիրաւ եղեալ իցէ, նա, որ էր օրինաւոր ժառանգ, չքացուցանէր զայն. և թէ ոչ զգայր զանձն բնաւ միտեալ առ հրաժարումն 'ի կրօնական սահմանադրութեանց հաստատելոց 'ի նախնեաց իւրոց. և թէ ոչ կամէր թողուլ զծառայութիւն արեգական անմահ աստուածութեան, զոր ինքն և ժողովուրդ իւր պաշտէին, առ'ի երկիրպագանել այնմ Սպանիացւոց առաջի մատուցելոյ նմա իբր ենթակայ չարչարանաց և մահու. և թէ վերահայեցմամբ այլոց նիւթոց պարունակելոց 'ի զրուցաբանութեան իւրում ըստ որում ոչ էր լուեալ երբեք յառաջ և ոչ 'ի միտ առնոյր զնշանակեալն, փափագէր գիտել թէ ուր ուսեալ էր նա զայնս. „Պատասխանի ետ. Վալվերտէ, Յայսմ մատենի, առաջի մատուցանելով նմա զժամագիրքն իւր. Ինքա անձկանօք էառ զայն. եբաց և հարևանցի շրջելով զթուղթսն մերձեցոյց յունկն. ապա ասէ ցնա. „Այս ոչ խօսի և ոչ ասէ ինձ իր ինչ„. և զայրացմամբ ընկեց զայն 'ի գետին. Աբեղայն ցասուցեալ ընթացաւ առ համաշխարհիկս իւր աղաղակելով„ առ զէնս քրիստոնեայք առ զէնս. բանն Աստուծոյ արհամարհեցաւ. խնդրեցէք զվրէժ պղծութեան 'ի վերայ ամբարիշտ շանցս այսոցիկ„ ։

(34) Այս վտարանդի և անպատկան զրուցատրութիւն Վալվերտեայ կշտամբեալ է յամենայն վիպասանից, և յիրաւի. Այլ թէպէտ և էր նա տգէտ և տմարդի աբեղայ, որ ոչ նմանէր յիմիք մասին բարւոյն Օլմետոսի, որ ընկեր եղև Քորթեսի, ոչ է պարտ մեղադրել նմա վասն տարադիպուն զրուցի իւրոյ առ Աթահուալփա. Զրուցաբանութիւն իւր է ստուգապէս թարգմանութիւն իմն, կամ շրջախօսութիւն հնարեալ յաստուածաբանից և յօրինականացն Սպանիացւոց յամին 1509, առ 'ի մեկնել զիրաւունս արքային իւրեանց առ գերագոյն տէրութիւն Նորոյ աշխարհի. և առ 'ի հրահանգել զպաշտօնատարս ծառայեցուցեալս յԱմերիկա 'ի վերայ եղանակին, թէ որով պարտէին առ-

նուլ զստացումն նորանոր գաւառացն, որք յայտնեալ լինէին. Այս իմաստքն պարունակեալք 'ի հրապարախօսութեն Սալերտեայ ոչ պարտին համարիլ կեղծաւորութեն կամ տկարութեն մարդոյ միոյ մասնաւորի, այլ հանգամանաց այնր դարու. Կոմարա և Պէնծօնի պատմեն զպարագայ մի վերաբերեալ առ Սալերտէ. որ եթէ լինէր ճշմարիտ, առնէր զնա առարկայ իմն ոչ միայն արհամարհելի, այլև սոսկալի. ասեն նք, թէ 'ի բովանդակ յայսմ գործողութեն շարունակեաց Սալերտէ 'ի գրգռել զզինուորսն առ կոտորածն, ստիպելով զնն հարկանել զթշնամին ոչ սայրիւ, այլ ծայրիւ սուսերաց իւրեանց. Այսպիսի ընթացք ամենեին տարբեր էին յընթացիցն, զոր կալաւ կաթուղիկէ ուխտն Դոմէնիկեան յայլ մասունս Ամէրիկոյ. ուր եկեղեցականք վարէին միօրինակ զարդիւնականութիւն իւրեանց առ 'ի պատսպարել զՀնդիկս և չափաւորել զամեհութի հայրենակցաց իւրեանց: ||

Փիծծարրոս յաղթէ 'ի վր Փերուացւոց:

Փիծծարրոս, որ 'ի ժամանակի այսպիսի իմն երկայն զրուցաբանութեն դժուարութե սանձեալ էր զզօրականս իւր ցանկացօղս յափշտակելոյ զհարուստ կողոպուտսն, զոր ունէին յայնժամ այնպէս մերձ տեսութեն, ետ նոյնժամայն նշան դիմելոյ 'ի մարտ. Հնչեաց վաղվաղակի պատերազմական երաժշտութին, սկսան հուր առնուլ թնդանօթքն և հրետքն, հարթեաւ 'ի դուրս մալեգնեալ հեծելազօրն 'ի պատերազմ, և հետևակն խուժեաց 'ի վր սուսեր 'ի ձեռին. Երտուցինք փէրուացիք յարագութե յարձակմանն, որ ոչ սպասեալ լինէր և զարհուրեալք յապականիչ գործոց հրացան զինուցն և յաննահանջելի մղմանէ երիվարացն փախեան ընդ ամ կողմն. ընդհանուր արհաւրօք առանց գուն գործելոյ կամ 'ի նեղել զթշնամին կամ 'ի պաշտպանել զանձինս. Փիծծարրոս 'ի գլուխ ընտիր զօրաց իւրոյ յառաջ խաղաց ուղղակի 'ի կողմն ինքայի. և թէպէտ ազնուականք իւր խռնէին շուրջ զնովաւ կրօնական նախանձու և անկանէին մեծաւ բազմութ̃ առ ոտս նր̃, մրցելով ընդ միմեանս առ'ի զոհել զսեպհական կեանս իւրեանց առ 'ի ապահովացուցանել զօրբազան անձն ինքնակալին իւրեանց, սակայն յաջողեցաւ Սպանիացւոց ընդ մտանել մինչև 'ի նստարանն արքունի. և փիծծարրոս ունելով զմիոջէ բազկէ զինքա՝ քարշեաց զնա 'ի վայր երկիր. և էած զնա կալանաւոր յօթեվանս իւր. Թշուառական վիճակ միապետին իւրեանց արար առաւել խուճապ զփախուստ հետևողաց իւրոց. Սպանիացիք հալածեցին զնս ը̃ ա̃մ կողմն. և սոսկալի խժականութ̃ շարունակեցին սատակել զտառապեալ փախստեայսն զայնոսիկ, որք և ոչ իսկ դառնային յետս առ 'ի ընդդէմ կալ. Ո՛չ դադարեաց կոտորածն, բայց եթէ եզերելով տընջեանն. Ս՞նացին սպանեալք շուրջ չորք հազար փերուացիք. Ո՛չ անկաւ և ոչ մի Սպանիացի. և ոչ ոք մնաց խոցեալ բաց 'ի փիծծարրոսէ. որոյ մի ձեռն թեթևապէս վնասեցաւ'ի միջէ 'ի զօրականաց իւրոց, մինչ աշխատէր պինդ ունել զինքա:

(35) ‖ Երկու տարբեր դրութ̃իք կերպաւորեալ եղեն նկատմամբ գնացից Աթահուալփայի. Պատմագիրք Սպանիացիք վ̃ս արդարացուցանելոյ զբռնութի հայրենակցաց իւրեանց՝ ասեն, թէ ա̃մ դաւանութ̃իք բարեկամութեն'ի կողմանէ ինքային էին կեղծեալք. և թէ ձկտումն իւր յանսալն համախոսութեն իմիք ընդ փիծծարրոսի 'ի Քասսամալքա էր 'ի սպանանել զնա և զհետևողս իւր միով և եթ հարուածով. և թէ առ այս վախճան յառաջ խաղաց նա այնպիսի յոգնաթիւ բազմութ̃ զօրաց, որք տանէին զէնս թաքուցեալս 'ի ներքոյ հանդերձից իւրեանց առ 'ի կատարել զայսպիսի իմն խորհուրդ. Այս է պատմութի ա-

բարեալ 'ի Քսերէծայ և 'ի Զարաթայ և ընկալեալ 'ի Հերրերայ. Այլ եթէ լեալ էր առաջադրութի̃ Ինքայի բնաջինջ առնել զՍպանիացիս՝ դժուարաւ կարէ պատկերակերպիլ, թէ ինքն թողացուցեալ իցէ ն̃ց չուել առանց խուելոյ ընդ անապատն Մոթօփեայ, կամ անհոգացեալ 'ի պաշտպանել զանցս 'ի լերինս. ուր կարէին կուիլ այնչափ շահեկանութ̃բ. Եթէ փերուացիք երթային 'ի Կասսամալքա դիտմամբ դրոհելոյ 'ի վր̃ Սպանիացւոց, անիմանալի է, թէ զիա՞րդ այսպիսի մեծ խումբ արանց նախապատրաստելոց 'ի մարտ և ոչ իսկ մինն թեւակոխէր դիմակաց լինել. այլ թէ ամենքեան թողուին անարգաբար խողխողիլ 'ի թշնամւոյ միջէ, յորոյ վր̃ գային նոքա զինեալք առ 'ի կուիլ. Եղանակն, որով Աթահուալփա յառաջեաց առ համախօսութի̃, ունէր զտեսիլ խաղաղական իմն գնացից, և ոչ զինուորական իմն ձեռնարկութե̃. Նոյն ինքն և հետեւորդք իւր էին հանդերձիւք հանդիսի յառաջեալք ոպ̃ յաւուր տօնախմբութ̃ն յանդէն կարապետաց. Թէպէտ Հնդիկք բնականաբար են խորամանկք և կեղծաւորք, այսու ամ̃ի եթէ կամիցիմք վճիռ հատանել, թէ ո՞ւմ խորհուրդն դաւաճանութ̃ն պարտիցի համարիլ, ա՞րդեօք միապետի միում, որ ոչ ունէր պատճառ թերահաւատելոյ զայցելութ̃է օտարաց, ոյք թախանձէին ընկալեալ լինել առաջի իւր իբրև բարեկամս, թէ այնպիսի յանդուգն և անխիղճ բաղդորդի միում, որպիսի էր Փիծծարրոս, հաւանական է, թէ վճիռն լինէր բոլորովին 'ի նպաստ առաջնոյն. Նաև 'ի մէջ փութոց Սպանիացի պատմագրաց վն̃ ջատագովելոյ զգնացս Փիծծարրոսի՝ յայտնապէս տեսանի, թէ էր ձկտումն իւր, որպ̃ և առանձին շահ իւր՝ ըմբռնելն զԻնքա. և թէ առ այսպիսի առարկայ կանխաւ արարեալ էր նա զհանդիպմունս իւր առանց նախ կերպաւորելոյ զկասկած զգաղափարացն այնր միապետի ։ Կարչիլաս Վէկա ասէ իրօք հոգածու ջատագովելոյ զՓերուացիս համաշխարհիկս իւր 'ի յանցանացն միաբանելոյ յեղծումն Փիծծարրոսի և հետևողաց իւրոց, և ոչինչ ընդհատ երկչոտ պարսաւելոյ զգնացս Սպանիացւոց առ Ինքա, պատկերակերպեաց զայլ իմն դրութի. Պատմէ նա, թէ այր մի կերպարանօք վեհափառ՝ երկայնամօրուք, և որոյ հանդերձք հասանէին մինչև 'ի գետին՝ երևեալ 'ի տեսլեան Վիրաքօքհայի ութերորդ Ինքայի, և յայտ արարեալ թէ նա էր որդի մի արևու, միապետն այն շինեաց զտաճար մի 'ի պատիւ անձին իւրոյ. և զետեղեաց անդէն պատկեր մի կատարելապէս նման նմա. Սմա մատուցանէին յայսմ տաճարի զա̃ծային պատիւս ընդ անուամբ Վիրաքօքհայի. Յորժամ Սպանիացիք յառաջին անգամ եղին զոտն 'ի Փերու, երկայնութի̃ մօրուաց ն̃ց, և հանդերձքն, զորս կրէին, այնքան հարին զա̃մ անձն վ̃ն նմանութեն, զոր ունէին առ պատկերն Վիրաքօքհայի, մինչզի ենթադրեցին զն̃ս որդիս արևու իջեալս յերկնից յերկիր. Ասէին ամենեքեան, թէ մերձինայր յայնժամ օրհասական շրջանն Փերուեան կայսրութե̃ն. և թէ աթոռն արքունի կալեալ լինէր 'ի նոր ստացողաց. Նոյն իսկ Աթահուալփա նկատելով զՍպանիացիս իբր պատգամաւորս երկնից՝ այնպէս հեռի էր յունելոյ զխորհուրդ ինչ հակառակութե̃ն ընդդէմ ն̃ց, մինչզի որոշեաց ենթադրել անորոշ հնազանդութ̃բ հրամանաց ն̃ց. Յայսց զգացուածոց բղխէին իւր այնչափ ցոյցք սիրոյ և ակնածութե̃ն. այսոցիկ պարտէր մտերմական ասպնջականութիւնն Սօթօի և Ֆերտինանտոսի Փիծծարրոսի 'ի բանակ իւր և հպատակ յարգանքն, որով բերաւ այց առնել Սպանիացի սպարապետին յօթեվանի իւրում. Բայց յաղագս թանձր տգիտութե̃ն Ֆիլիփիէլլա թարգմանի յայտարարութիւն Սպանիացւոց և պատասխանին իւր առ նոյնն եղեն այնպէս չարաչար մեկնեալք, մինչզի վ՟ն ն՟ց փոխադարձ անընդունակութեն ըմբռնելոյ իւրաքանչիւր զխորհուրդս այլոյ՝ ծնաւ այն աղետալի պատահումն 'ի Կաքսամալքա հանդերձ ա՟մ սարսափելի հետևութիւք իւրովք ։

Ե՛ նկատելի իմն, զի ոչինչ հետք այսր աւելորդապաշտական յարգութեն փերուացւոց առ Սպանիացիս գտանի 'ի Կուզքէծ, կամ 'ի Օտարաթա յառաջ քան զհամախօսութիւն 'ի Կաքսամալքա․ և սակայն երկու առաջինքն ծառայէին յայնմ ժմկի ընդ Փիծծարրոսի․ և վերջինն այց արար փերուայ վաղվաղակի յետ տիրապետութեն․ Եթէ կ՟մ նոյն իսկ Ինքա կամ պատգամաւորք իւր ներկայացեալ էին Սպանիացւոց բանիւքն, զոր Վէկա դնէ 'ի բերան ն՟ց, նոքա արդեօք՝ հարեալ լինէին յայնպիսի խոնարհ յայտարարութեցն, և 'ի կիր առեալ զայնս առ 'ի կատարել մեծագոյն դիւրութ՟բ զսեպհական գաղափարս իւրեանց․ Նոյն իսկ Վէկա՝ թէպէտ պատմաբանութի իւր զխօսակցութեն 'ի մէջ Ինքայի և Սպանիացւոց յառաջ քան զջարդումն Կաքսամալքայի, հիմնեալ իցէ 'ի վ՟ր ենթադրութեան, թէ նա հաւատայր զն՟ս Վիրաքօքհս կամ էակս ա՟ծեղէնս, հանդերձ այսու իւր սովորական անմտադրութեամբ և անհոգութեն պնդէ յայլում իմիք տեղւոջ, թէ փերուացիք ոչ ծանեան զնմանութի 'ի մէջ ն՟ց և քաջին Վիրաքօքհայի, եթէ ոչ զկնի կոտորածին Կաքսամալքայի․ և ճշմարտիւ յայնժամ սկսան կոչել զն՟ս Վիրաքօքհս, Այսպիսի ինչ հաստատեալ է նաև 'ի Հեռռերայէ․ Ի բազում մասունս Ամերիկոյ՝ եթէ կարեմք հաւատալ մատենագրաց Սպանիացւոց՝ քաղաքակիցք ն՟ց նկատել եղեն իբր էակս ա՟ծեղէնս իջեալս յերկնից․ Բայց յայսմ լծակցութեն ոչ և յայն ա՟մ, որք հանդիդիպին 'ի խօսակցութիս 'ի մէջ ազգաց, որոց զարգացումն 'ի քաղաքական կրթութն է յոյժ անհաւասար, իդէայք նց, որք 'ի կիր առնուին զխօսս, էին տարբերք յիդէայից նց, որք կային 'ի լսել զայնս. Որովհետև այնպիսի է յատկութի լեզուին Հնդկայնոյ, կմ այնպիսի է պարզմտութի նց, որք խօսին զայն, մինչզի յորժամ տեսանեն զիր ինչ, որում ոչ էին տեղեկացեալ յառաջ, և զորոյ ոչ գիտեն զծագումն, ասեն, թէ այն է իջեալ յերկնից:

Ծանօթութին, զոր ետու զզգացուածոց և զգնացից փէրուացւոց, երևի լինել առաւել բնական և առաւել հաւանական քան զերկուս նախընթացսն. և է լաւագոյն հաստատեալ 'ի գործոյն պատմեցելոց 'ի ժմկակից վիպասանից:

Ըստ Քսէրէծայ երկուհազար փէրուացիք սպանեալ եղեն. Սանքհօ ամբառնայ զթիւ նց իբր 'ի վեց հազար. 'Ի պատմութէ Սէկայի յառաջածի, թէ հնգհազարք սատակեալք եղեն. Թիւն նշանակեալ յինէն՝ ունելով զմէջն 'ի մէջ երկուց ծայրից երևի առաւել մերձիլ 'ի ճշմարտութիւնն: ‖

Հարստութի բանակին եղև հարուստ անդր քան զինչևիցէ գաղափար, զոր Սպանիացիք կերպաւորեալ էին ցայնժամ զփարթամութէ փէրուայ. և եղեն այնպէս յափշտակեալք յոյսպիսի յաջող դիպուածոյ, մինչզի անցուցին զգիշերն 'ի ներգործութիւնս ցընծութեան՝ համարընականի աղքատ բաղդորդաց, որք տեսանեն բովանդակ 'ի միում վայրկենի փոխիլ յայնքան ճոխութի զբաղդ իւրեանց:

Տանտարգել միապետն 'ի սկզբան անդ հազիւ Աթահուալփա կարէր հաւատալ ճշմարիտ լինել Թշուառութիւն իմն, որ ոչ բնաւ սպասիւր. Բայց ծանեաւ վաղվաղակի զողորմելութի վիճակին իւրոյ. և զարկուցեալ իւր եղև համեմատ անկման իւրում. փոխծարծարրոս երկնչելով կորուսանել զա̃մ շահեկանութիւն, զորս յուսայր հանել 'ի ստացմանէ այսպիսի կալանաւորի ուրուք. ջանայր մխիթարել զնա դաւանութի̃ք բարեկամութե̃ն և ակնածութե̃ն, որք ոչ համեմատէին գործողութե̃ց իւրոց. Բայց Ինքա 'ի յամէն 'ի մէջ Սպանիացւոց ծանեաւ վաղվաղակի զտիրող կիրս նց̃. զոր նոքա ճշմարտիւ ոչ էին ըստ բաւականին փոյթք թաքուցանելոյ. և վստահանալով յայն՝ արար զթեւակոխութի̃ մի վերստին ստանալոյ զազատութիւն իւր. Ատոյց 'ի փրկանս իւր զայն, որ շօ́արեցոյց զՍպանիացիս ընդդէմ ճանաչմանն, զոր ունէին զփարթամութե̃ թագաւորութե̃ն իւրոյ. Սենեակն, յորում փակեալ էին զնա, էր քսանեւերկու ոտնաչափ երկայն և վեշտասան լայն. պարտաւորեաց զինքն լնուլ զայն անօթովք ոսկւոյ և արծաթոյ, ցոր վայր կարէր ժամանել. Պիծարրոս տեղի ետ ագահաբար այսմ պատրիչ առաջադրութե̃. և քարշեալ եղև գիծ մի 'ի վր̃ որմոյ այնր սենեկի առ 'ի նշանակել զպայմանագրեալ բարձրութի̃ն. առ որ պարտէր հասանել գանձն: Առաջարկէ փրկանս:

Աթահուալփայ ուրախ 'ի տեսանելն զերեւոյթ ինչ ազատութե̃, էառ նոյնժամայն զջանս առ 'ի լնուլ զի՛ր մասն դաշնագրութե̃ն՝ առաքելով զսուրհանդակս 'ի Քուզքօ, 'ի Քուիթօ և առ այլ տեղիս, ուր ոսկին մթերեալ էր մեծագոյն եւս քանակութի̃ առ 'ի զարդարել կամ զմեհեանս ա̃ծոց իւրեանց, կմ̃ զտունս Ինքայի, ո̃զի բերցեն 'ի Քասսամալքա որչափ ինչ կարեւոր էր վն̃ վճարելոյ զփրկանս իւր. Թէպէտ Աթահուալփա էր յիշխանութե̃ թշնամեաց իւրոց, այսու ամի̃ փէրուացիք էին այնքան սովորք յանձնածել, որ զինչ հրաման տայր յինքնակալէ իւրեանց, մինչզի պատուէրք իւր կատարէին մեծաւ զու́արթու̃. Քաջալերեալք յայսմ յուսոյ վերստին ստանալոյ այսորիկ հայթհայթանօք զազատութի նր, երկնչէին հպատակքն Ինքայի դնել 'ի վտանգի զկեանս իւր կերպաւորելով զայլ խորհուրդս վն ըմբռման նր. և թէպէտ զօրութի կայսրութեն էր տակաւին 'ի լիակատար յուժգնութե իւրում, ոչ արարան նախապատրաստութիւք և ոչ ժողովեցան զօրք առ 'ի խնդրել զվրէժ անիրաւութեց իւրեանց և անիրաւութեց միապետին իւրեանց. Սպանիացիք մնացին 'ի Քասսամալքա անդորր և աներկեան. փոքրիկ հատուածք խմբից նց չուեցին 'ի հեռաւոր գաւառս. և փոխանակ պատահելոյ անդէն դիմադրութե եղեն ամ ուրեք ընկալեալք նշանօք խոնարհագոյն ակնածութե:

Սպանիացիք այց առնեն զանազան գաւառաց:

(36) ‖ Չիք յայտնագոյն հաւաստիք այսր ամի քան ճանապարհորդութիւն, զոր արարին երբեք Սպանիացիք 'ի Քասսամալքայէ 'ի Քուսքօ. Տարակացութին 'ի մէջ այսց երկուց քաղաքաց է վեցհարիւր մղոն. Յամ տեղւոջ, ընդ որ անցին, ընկալեալ եղեն ամ պատւով, զորս Փէրուացիք ընծայէին Ինքնակալաց իւրեանց, ես և աստուծոց իւրեանց. Ընդ պատրուակաւ բովանդակելոյ զայն, որ պակաս էր վասն փրկանաց Ինքային՝ խնդրեցին զթիթղունս ոսկւոյ, որովք դրուագեալ էին որմունք մեհենի արեգական 'ի Քուսքօ. և թէպէտ Քրմունքն ոչ կամէին բռնաբարել զվրանն այ իւրեանց, երեք Սպանիացիքն կորզեցին ձեռամբք իւրեանց զմասն ինչ այնր մեծագին գանձուն. և այնպիսի եղեն յարգանք ազգայնոցն առ դէմս նց, մինչզի թէ և հիացմամբ հայէին յայս սեղանակապուտ ներգործութի, ոչ համարձակեցան խափանել կամ վրդովել զյանձնարարութին: ‖

1532
Ալմագրօ ժամանէ օգնականաւ [illegible] [illegible] [illegible]:

Որչափ և տակաւ երևելի էին բաժանմունքն այնոքիկ, և որչափ փափագանօք վառեալ էր Փիծծարրոս ունել զծանօթութի ինչ ներքին կացութեան

թեան երկրին, նա ոչ էր համարձակեալ 'ի նուաճել բնաւ զնախապետական գունդ իւր, եթէ ոչ էր ընկալեալ յայնմ ժամանակի զլուր, թէ Ալմակրոս հասեալ էր 'ի Սն̃ Միքայէլ զօրավիգութի̃ իմն, որ գրեթէ կրկնապատկէր զթիւ հետեւողաց իւրոց. Հասանելն այսր յերկար սպասեալ օգնութե̃ն որչափ ընկրկեցոյց զՍպանիացիս, այնչափ պատճառեաց կասկածանս յԻնքայն. Տեսանէր նա աճել զկարողութի̃ թշնամեաց իւրոց. և ոչ գիտելով ոչ զաղբիւրն. ուստի հանէին զայսպիսի օգնութիս, և ոչ զմիջնորդսն, ընդ որ ածեալ լինէին 'ի փէրու, ոչ կարէր և ոչ իսկ նախատեսանել, թէ ցո՞ր վայր հեղեղն, որ ծաւալիւր ընդ տէրութիս իւր, կարէր յորդիլ. Մինչ տառապեցուցանէին զնա տարակոյսք այսոքիկ լուաւ, թէ ոմանք 'ի Սպանիացւոց յեր-
1533 թալն 'ի Քուսքօ այց արարեալ էին եղբօր իւ-
Հ—— րում Հուասքարայ 'ի տեղւոջն, ուր պահէր զնա
ժող—— փակեալ. և թէ կալանաւորն ներկայացուցեալ
նէալ : էր նց̃ զարդարութի̃ դատի իւրոյ. և թէ առ 'ի յանկուցանել զնն̃ 'ի պաշտպանել զնա խոստացեալ էր նց̃ զքանակութի̃ իմն գանձուց, որք գերազանցէին բազմօք քան զայնս, զորս նոյն ինքն գրաւեալ էր զանձն 'ի վճարել վն̃ փրկանաց իւրոց. Ծանեաւ անխորշելի զկործանումն իւր եթէ Սպանիացիք մատուսցեն յայնմ զնպաստաւոր ունկն. և երկնչելով, զի մի անյագ ծարաւ ոսկւոյն բերցէ զնն̃ 'ի նպաստել նմա՛ որոշեաց զոհել զկեանս եղբօր իւրոյ առ'ի ապրեցուցանել զիւրն. և հրամանք իւր առ այս վախճան հնազանդեալ եղեն զոյգ այլ ա̃մ պատուի-
Սպանիարանց իւրոց խղճոտ ճշդութե̃ :

ցէ—— Յայսմ վայրի զնոյն օր հասանէին Հնդիկք 'ի
նէն զէ——՝Քասամալքա 'ի զանազան տեղեաց բեռնաւո-
ժան——րեալք գանձուք. Նա՛ կուտեալ էր մեծագոյն
Լէս——մասն գաշնադրեալ քանակութե̃ն. և Աթահուալ-
րոցն :

փա ապահովացուցանէր զՍպանիացիս, թէ դեռ բովանդակն ոչ էր բերեալ. վասնզի մթերեալ կայր 'ի հեռաւոր գաւառս. Բայց այսպիսի տարապայման կուտակք ոսկւոյ ներկայացուցեալք շարունակաբար տեսութեան կարօտ զինուորաց՝ այնչափ բորբոքեալ էին զագահութիւն նոցա, մինչզի անկարելի էր նահանջել ևս յերկար ժամանակ զանժուժութիւն նոցա ստանալոյ զայն հարուստ կողոպուտ. Տուեալ էին հրամանք ձուլելոյ զամենայն ինչ բաց յոմանց չքնաղարուեստ կոտորոց վերապահելոց առ'ի առաջի առնել կայսերն. Յետ դնելոյ մեկուսի զհինգերորդն հաս թագաւորութեանն և զհարիւր հազար փեսոսս իւր պարգևական զօրականացն եկելոց ընդ Ալմակրոսի՝ մնայր անդէն միլիոն մի հինգհարիւր քսանևութն հազար հինգհարիւր փեսոս վասն Փիծծարրոսի և հետևողաց իւրոց. Որ տօնի սրբոյն Յակոբայ սուրբ պաշտպանին Սպանիոյ ընտրեալ եղև վասն բաշխման այսր անբաւ գումարոյ. և եղանակն կալեալ 'ի առնելն զայն հաստատէ զայլանդակ միաւորութիւն մոլեգնութեան ընդ ագահութեան. զոր բազում անգամ կալոյ պարապ ակնարկելոյ իւր մասնաւոր որակութիւն կնքոյ տիրապետողացն նորոյ աշխարհին. Թէպէտ գումարեալք վասն բաժանելոյ զկողոպուտ անմեղ ժողովրդեան ուրուք՝ պաճարենս ճանապարհաւ խաբէութեան, բռնազբօսութեան և անողորմութեան, ներգործութիւն սկսեալ եղև հանդիսաւոր կոչմամբ իմն անուանն Աստուծոյ. որք եթէ պարտ էր նոցա սպասել զներշնչումն երկնից 'ի բաշխելն զվարձս անիրաւութեան. Յայնմ բաժանման աւելի քան զութնհազար փեսոս ոչ վայրագոյնս յայնմ դարու արժողութեան նոյնչափ լիրէ սթեռլինաց 'ի ներկայ դարուս՝ անկան 'ի բաժին իւրաքանչիւր այրու ձիոյ, և կէսն այսր գումարոյ ամենայն հետևակ զօրականի. Փիծծարրոս և պաշտօնատարք իւր ընկալան ըղհաս

25 Յուլիս.

իւրեանց ըստ համեմատութեան աստիճանի իւրեանց :

1533 Արտա- գործու- թիւն չար : Չիք օրինակ 'ի պատմութեն այսպիսի իմն յանկարծական ստացման հարստութեն արարիցելոյ 'ի զինուորական ծառայութեն. և ոչ երբէք բաշխեցաւ այսպիսի մեծ գումար 'ի մէջ այսպիսի սակաւ թըւոյ զօրականաց. Ծագումն 'ի նոցանէ գոլով ընկալեալ զհատուցումն իմն վերնագոյն յուսոյ իւրեանց՝ եղեն այնպէս անհամբերք խոյս տալոյ յաշխատութենէ և 'ի վտանգաց առ 'ի անցուցանել զմնացորդ աւուրց իւրեանց 'ի բնիկ աշխարհի իւրեանց 'ի հանգստեան և 'ի փարթամութեն, մինչզի խնդրեցին սաստկապէս զհրաման իւրեանց. և բազումն անգամ թախանձեցին զնա յայս սակս. Փիծծարրոս քաջ տեսանելով, թէ յայսպիսի արանց ոչ կարէր սպասել զծառայութի ինչ արդիւնական և ոչ զհանդուրժումն չարչարանաց, և խելամտեալ, թէ յոր վայր և երթային՝ ցոյց հարստութենց նց որսայր զնորանոր բազդորդս՝ նուաղ յարմարս, բայց առաւել համարձակս՝ դրօշակի իւրում, լռեաւ առանց ինչ ընդդիմամարտութեն ժտութեն նց. և թոյլ ետ աւելի քան վաթսնից 'ի մէջ նց ընկերել եղբօր իւրում Ֆերտինանտոսի, զոր առաքէր նա 'ի Սպանիա հանդերձ պատմութեմբ իւիք երջանիկ յաջողութեն իւրոյ և հանդերձ ընծայիւ սահմանեցելով վն կայսեր :

Ինչա խնդրէ՛ պա―ր պա պատու―է չ―ր : Գոլով Սպանիացիք այսպէս բաժանեալ 'ի մէջ իւրեանց զգանձն հաւաքեալ վն փրկանաց Ինքային, ստիպէր սա լինել զխոստումն իւրեանց դնելոյ զնա յազատութեն. բայց ոչինչ առաւել հեռի էր 'ի մտացն Փիծծարրոսի. Տեւելով յերկար բնակութի իւր 'ի նոր աշխարհին՝ տոգորեալ էր նա այնոքիւք գաղափարօք և սկզբամբք մարտիկ ընկերաց իւրոց, որովք նկատէին զբնակիչսն իբր վայրագոյն իմիք զարմի անարժանս անուան մարդկան և արտաքսեալս յիրաւանց իւրեանց. 'Ի վարման իւրում ընդ Աթահուալփայի ոչ կալաւ զայլ նպատակ, բայց եթէ զբաղեցուցանել զկալանաւորն իւր մարդելուզութեամբ դարձուցանելոյ նմա զազատութիւն, առ'ի կարող լինել յետոյ ներածել զնա 'ի տալ ինքեան զօգնութիւն իւր և զիշխանութիւն, որով տիրեսցէ բոլոր հարստութեանց թագաւորութեան իւրոյ. և ուր ուրեմն կատարեալ զայս, ոչ ևս զմտաւ ածէր զտուեալ խոստումն իւր. Նա զի 'ի նմին ժամանակի, յորում դիւրահաւատ արքայն յուսայր տեսանել զանձն վերստին հաստատեալ յաթոռ իւր, Փիծծարրոս դաղտաբար որոշեալ էր զրկել զնա 'ի կենաց. Երևի թէ բազում պարագայք զուգընթաց եղեն 'ի խլել զնա առ նմանակ իմն գործողութեան առաւել եղեռնաւոր և առաւել դժնեայ, որ արատաւորեալ իցէ զանունն Սպանիացւոց՝ 'ի մէջ գործոց բռնութեան արարելոցն 'ի հետամուտ լինելն տիրապետութեան նորոյ աշխարհին: 1533

Փիծծարրոս՝ ճշմարիտ է, բանտարկեալ էր զին- փոխա-քա՝ հետևելով այնմ, զոր արար Գորթէս առ [illegible] միապետն Մեքսիկոյ. այլ ոչ ունէր քանքարս [illegible] կատարելոյ զնոյն արուեստական գաղափարն [illegible] քաղաքականութեան. Զուրկ յորակութեանց, որք [illegible] պահանջէին առ'ի յանկուցանել յինքն զմտա- [illegible]հութի կալանաւորին իւրոյ, ոչ գիտաց երբէք ներգահաւաքել զշահսն, որք կարէին ածանցիլ նմա 'ի [illegible] : լինելոյ տէր անձին նր և աւագութեան. Աթահուալփա էր արքայ մեծագոյն ընդունակութեամբ և զգօնութեամբ քան զՄոնթեծումա. ուստի եմուտ առաւել 'ի ներքս 'ի յատկութիւն և 'ի ձկտմունս Սպանիացւոց. Աստուստ կասկած ինչ փոխադարձ և փոփոխ թերեհաւատութեան իմն արմատացաւ 'ի մէջ նոցա. Ուշադրութիւն, որով կարևոր էր զգուշանալ կալանաւորի միում այնքան ծանրակշռոյ, ածեցոյց բազումս զաշխատութեան զինուորաց. Տեսանիւր սակաւ օգուտ 'ի պահելն զնա այլևս յերկար. և փիծծարրոս նկատէր զայս իբրև զբեռն. յորմէ ցանկայր լինել ազատ:

Ալմակրոս և հետևողք իւր խնդրեն բաժ- [illegible]:

Ալմակրոս և հետևողք իւր խնդրեալ էին զհաւասար բաժին մի 'ի փրկանս ինքային. և թէպէտ փիծծարրոս շնորհեալ էր իւրաքանչիւր 'ի նոցանէ զայն առատաձեռն շնորհ, զոր արդևս ասացի, և ջանացեալ ցածուցանել զզօրավար ն͞ց մեծագին ընծայիւք, սակայն նոքին էին տակաւին տժգոհ. Երկնչէին, թէ գուցէ ցորչափ Աթահուալփա մնայր կալանաւոր, զինուորք փիծծարրոսի կամիցին տիրել որչափ հարստութիւն գտանիցեն առ 'ի զուգակշռել զայն, որ պակասէր 'ի քանակութենէն պայմանեցելոյ վ͞ն փրկանաց իւրոց, և ընդ այսու պատրուակաւ արտաքսել զն͞ն յինչևիցէ յայլ մասնէ. Պնդէին վ͞նկ բորբոքմամբ տալ մահ ինքային. ո͞պզի ա͞մ բաղդորդք 'ի փէրու լինիցին առ յապայն հաւասարաբաժինք:

Պատճառք, որք շարժեցին զփիծծարրոս հա- նել:

Նոյն իսկ փիծծարրոս սկսաւ խռովիլ 'ի համբաւոյ զօրացն, որք գումարէին 'ի հեռաւոր գաւառսն կայսրութ͞ե. և կասկածէր, թէ Աթահուալփա առաքեալ իցէ զհրամանս առ այս վախճան. Երկիւղք իւր էին ևս առաւել մեծացուցեալք 'ի Ֆիլիփփիլոյ միոյ 'ի Հնդկացն, զորս փիծծարրոս առեալ էր 'ի Թումպեցայ յամին 1520, և զորս 'ի կիր առնոյր իբր թարգմանս. Պաշտօնն, զոր վարէր նա, մատնելով յընտանեկան խօսակցութիւն ընդ բանտարգել միապետին, համարձակեցոյց զնա՝ ոչինչ հայելով 'ի նուաստութ͞ի տոհմին իւրոյ, ամբառնալ զիղձս իւր առ կոյս մի, կամ սերունդ արեան, մի 'ի կանանցն Աթահուալփայի. և ոչ տեսանելով զհանգամանս կատարելոյ զայս կիրս, մինչդեռ կենդանի էր միապետն, հնարեցաւ լնուլ զականջս Սպանիացւոց այսպիսի պատմութ͞ք թաքուն խորհր-

դոց

գոց իւրոց և նախապատրաստութեանց, որք զարթուցեն զնախանձաւորութիւն նոցա, և գրգռեսցեն զնոսա բառնալ զնա 'ի միջոյ կենդանեաց ։

Մինչդեռ Ալմակրոս և հետևողք իւր խնդրէին յայտնապէս զկեանս Ինքայի, և Ֆիլիփփիլլոս նկրտէր կործանել զնա ծածուկ մեքենայութիւքն, տարաբաղդ արքայն առանց իրազեկ լինելոյ հանգամանաց 'ի ճեպել զվախճան իւր. 'Ի ժամէ կալանաւորութեան էր նա յարեալ մասնաւոր ախորժակաւ 'ի Ֆերտինանտոս Փիծծարրոս և 'ի Հերնանտոս Սօթօ, որք գոլով անձինք ազնիւք և բաղմօք լաւագոյն դաստիարակեալք քան զիւրս բաղդորդսն, ընդ որոց ծառայէին, վարէին մեծագոյն վայելչութեամբ և ուշադրութեամբ առ կալանաւոր միապետն. Յանկուցեալ յակնածութեան, զոր ցուցանէին նմա, բերկրէր ընդ ընկերութեն նց. և ունէր ընդ նս զուարթական իմն դէմս, զոր կորուսանէր իսկոյն, իբրև գտանիւր ընդ բդեշխին. Արհամարհումն ոչ յամեաց յաջորդել երկիւղին, զոր ունէր 'ի նա ներկայուի իւր. 'Ի միջ Եւրոպական արհեստից առաւել քան զայլ ամ զարմանայր նա ընդ արհեստն ընթեռնլոյ և գրելոյ. և եկաց յերկար ժամանակ 'ի խորհիլ յանձին իւրում, մի թէ էր քանքար մի բնական, եթէ ստացական. Յաւուր միում առ'ի խելամուտ լինել աղաչեաց զմի 'ի զինուորացն պահապանաց իւրոց գրել զանունն այ 'ի վր եղնգան բութի իւրոյ. Եցոյց զայն հետ զհետէ զանազան Սպանիացւոց, հարցանելով զնշանակելն նր. և ամենեքեան հիացմամբ իւրով առանց բընաւ տարակուսելոյ տային նմա զնոյն մեկնութի. 'Ի վերջոյ առաջի մատոյց զայն Փիծծարրոսի. և նա շառագունեցաւ. և շփոթեալ ստիպեցաւ խոստովանել զտգիտութի իւր. Յայնմ վայրկենէ հետէ Աթահուալփա նկատեաց զնա իբր անարգ անձն ոք, և նուա՛զ կրթեալ քան զզօրականս իւր. և ոչ կալաւ զգաստութիւն բաւական թաքուցանելոյ զզգացմունս շնչեն 'ի նա յայսպիսի իմն ծանօթութենէ. Լինելն այսպէս կատակ այլազգւոյ միում ոչ միայն մահացոյց զհպարտութիւն Փիծծարրոսի, այլև զարթոյց 'ի սիրտ նորա զոխութիւն իմն, որ փութացոյց զվախճանն, զոր նախապատրաստէր յերկար ժամանակէ ապերջանիկ կալանաւորի իւրում.

Դատաստանական քննութիւն իւր։

Բայց Փիծծարրոս առ'ի տալ այսմ բռնութեան զերևոյթ ինչ արդարութեան, և առ'ի ապահովանալ 'ի վտանգէ լինելոյ կոչեցեալ ինքն միայն առ'ի տալ համար վասն հրամայելոյն զայն, որոշեաց առնել զփուշիշ ինքային հանդերձ ամենայն հանգամանօք 'ի գործ ածելովք 'ի քրէական ատենին Սպանիոյ. Ինքն Փիծծարրոս և Ալմակրոս ընդ երկուց աթոռակցաց ընտրեալ եղեն դատաւորք հանդերձ բացարձակ իշխանութեամբ արձակելոյ կամ դատապարտելոյ. Անուանեցաւ ընդհանրական ունկնդիր մի, որ կերպաւորեսցէ զփուշիշն յանուն թագաւորին. ընտրեցան խորհրդականք առ 'ի սատարել կալանաւորին 'ի ջատագովութիւն. և մինչ՝ մի պակասիցի կերպականութիւն ինչ, կարգեցաւ ատենադպիր մի առ 'ի տարածանել զարարս դատաստանին. Ահաւանիկ նախապետական գլուխք ամբաստանութեան, որք արկան 'ի վերայ նորա առաջի այսր տարապայման ատենի, թէ Աթահուալփա թէպէտ և պոռնկորդի՝ ընկեցեալ էր յաթոռոյ զօրինաւոր ժառանգաւորն և յափշտակեալ զարքայական իշխանութիւն. Թէ տուեալ էր մահ եղբօր իւրում և ճշմարիտ արքային. Թէ էր կռապաշտ, և ոչ միայն թոյլ տուեալ էր. այլև հրամայեալ զոհել զմարդկային զոհս. Թէ ունէր զմեծ թիւ հարճից. Թէ 'ի ժամանակէ բանտարկութեան իւրոյ ցրուեալ և փոխարկեալ էր 'ի պէտս իւր զարքունի գանձսն, որք պատկանէին ներգործական

կան իրաւամբք առ տիրապետողսն. և թէ գրգռել էր զհպատակս իւր առնուլ զէնս ընդդէմ Սպանիացւոց. Ինչ ինչ յայսց գլխոց են այնք ծաղրականք, և այլք այնպէս անտեղիք, մինչզի լրբութիւն Փիծծարրոսի յառնուլն զայնս 'ի հիմն իսկական իրիք դատաստանի ոչ է նուազ օտար, քան զանիրաւութիւն արարեալ յայնմ ատենէ, դատելով զինքնակալն մեծի իրիք կայսրութեան. յորոյ վերայ ոչ ունէր զիրաւաբանութիւն ինչ. Քննեցան վկայքն վերահայեցմամբ իւրաքանչիւր յօդուածոց. այլ քանզի տային նոքա զվկայութիւնս իւրեանց 'ի սեպհական բնիկ լեզուի, Ֆիլիփիլլոս ունէր ազատութիւն մերձեցուցանելոյ 'ի խօսս նոցա զիմացուածն, որ լաւ ևս յարմարէր չար դիտաւորութեանց իւրոց. Դատաւորաց նախապաշարելոց երևեցաւ աւելի քան զբաւականն այսպիսի իմն վկայութիւն. Դատակնքեցին զԱթահուալփա յանցաւոր. դատապարտեցին զնա այրել կենդանւոյն. Վալվերտէ աբեղայն եդ 'ի զեղծումն զիշխանութիւն սրբազան պաշտօնութեան իւրոյ, հաստատելով զայս դատավճիռ. որ զօրութեամբ ստորագրութեան իւրոյ կալեալ եղև արդար. Աթահուալփա շուարեալ ընդ վիճակ իւր առ'ի խուսել յայնմանէ դիմեաց յարտասուս, 'ի խոստմունս և յաղաչանս, խնդրելով առաքիլ 'ի Սպանիա. ուր միապետ մի լինիցի դատաւոր վիճակի իւրում. Բայց ոչ անկաւ երբէք գութ յանգթայ սիրտ Փիծծարրոսի. Հրամայեաց, զի վաղվաղակի սպանցի արքայն. և որ պատճառեաց արքային զմեծագոյն դառնութիւն 'ի վերջին վայրկեանս իւր եղև այն, զի նոյն աբեղայն, որ սակաւ մի յառաջ վաւերացուցեալ էր զդատապարտութիւն իւր, մատուցաւ 'ի քաջալերել զնա. և գուն գործեաց դարձուցանել զնա. Հզօրագոյն առարկութիւն, զոր Վալվերտէ 'ի մէջ եած առ 'ի հաւանեցուցանել զնա ընդ գրկել զքրիստոնէական հաւատն՝

Դատապարտեցաւ։

եղև խռովութիւն մեղմելոյ նմա զտանջանս. Ապա երկիւղն անողորմ իրիք մահու շարժեաց զսարսափեալ սպանողն ցուցանել զփափագ ընդունելոյ զսէր մկրտութեան. Արարեալ եղև ծէսն. և Աթահուալփա փոխանակ այրեցեալ լինելոյ խեղդեցաւ առ ցցիւ միով:

Մահուան:

Բարուք Սպանիացւոց բողոքեն ընդդէմ այսպիսի դատաստանի:

Բաղդաւորաբար վն համբաւոյ Սպանիացւոց ազգին 'ի մէջ եղեռնաւոր բաղդորդաց առաքելոց 'ի նմանէ 'ի տիրել և 'ի յատակել զնոր աշխարհն, էին անձինք, որք պահէին զկայծ ինչ ազնուականութեան և պատուոյ, որովք պարծին Կաստիլիացիք. Թէպէտ յառաջ քան զդատաստանն Աթահուալփայի Ֆերտինանտոս Փիծծարրոս մեկնեալ էր անտի երթեալ 'ի Սպանիա, և Սօթօ երթեալ էր այլով պատճառանաւ հեռի 'ի Կասամալքայէ, սակայն գործողութիւն մի այնքան ատելի ոչ կարաց կատարել առանց կշտամբանաց և ընդդիմադրութեան. Բազում պաշտօնատարք և 'ի մէջ նոցա ոմանք երևելիք վն տոհմի իւրեանց և վն ծառայութեանցն պարսաւեցին զայն. և բողոքեցին ընդդէմ այսր քայլի սպարապետին, նկատելով զայն իբր անպատուութիւն հայրենեաց իւրեանց, իբր դիմամարտ ամ առածի արդարութեան, և իբր բռնաբարութիւն իմն հրապարական հաւատարմութեան և յափշտակեալ իմն իրաւարանութիւն 'ի վն անկախ միապետի ուրուք. յորոյ վն ոչ ունէին զդուզնաքեայ իրաւունս. Բայց ընդունայն եղեն ջանք նց. Նախազօրացաւ թիւ, և կարծիք նոցա, որք համարէին օրինաւոր զկնչելիցն իր, զոր հաւատային շահաւէտ. Եւ քանզի պարտականութիւն վիպասանի ուրուք է հատուցանել զարդարութիւն առաքինական գործողութեանց՝ ես և յորժամ ոչ են պսակեալ 'ի յաջող դիպուածոյ իմեքէ, մատենագիրք Սպանիացւոց պատմելով զգործն, որք առնեն առաւել պատիւ քաջութեան հայրենակցաց իւրեանց, քան թէ մարդկութեն նց, ոչ պակասեցան պահել զանուն նց, ոյք արարին զայսպիսի իմն գովելի ճիգն ապրեցուցանելոյ զհայրենիս իւրեանց 'ի վատահամբաւութէ գործելոյ զնմանակ ոճիր։

Զկնի մահուան Աթահուալփայի Փիծծարրոս վե- [illegible] բազգեցոյց նշանօք մեծհափառութեն զմի յորդւոց [illegible] իւրոց, յուսալով, թէ երիտասարդ մի առանց [illegible] ներհմտութեն եղիցի 'ի ձեռս իւր գործի մի ա- [illegible] աւել կրաւորական քան զփառամոլ միապետ մի 'ի Փէ- սովորեալ առ բացարձակ հրամանատարութիւն. [illegible]։ Ժողովուրդն Կուզքոյ և մերձակայ երկրին ծանեան 'ի նոր Ինկա զՄանքօ Կափաք զեղբայրն Հուասքարայի. այլ ոչ որք յերկուց կալաւ զիշխանութին, որ պատկանէր առ ինքնակալն Փերուայ. Նուան օձտութիւնքն, յորս անկեալ էր կայսրութին նախ վս քաղաքական պատերազմին 'ի մէջ երկուց եղբարցն, և ապա վս յարձակման Սպանիացւոցն, աղաւաղեալ էին զկարգ Փերուեան կառավարութեն, և գրեթէ բնաւին եղծեալ զկերպն. Յորժամ տեսին նոքա զմիապետ իւրեանց ըմբռնեալ 'ի ձեռս օտարաց, և վախճանել զաւուրս իւր խայտառակ իմն մահուամբ, ժողովուրդքն 'ի զանազան գաւառս, օից եթէ լուծեալ էին յամ սանձէ օրինաց և պարկեշտութեն ցոկեցան յառաւել ցոփական զառանցութիս. Այնքան արևորդիք յետ վարեալ լինելոյ մեծագոյն ևս անարգանօք՝ սպանեալ էին 'ի Աթահուալփայ, մինչզի ոչ միայն ազդեցութի նց յիրս թագաւորութենն նուաղեցաւ ընդթրճոյ նց, այլև անզգալաբար պակասեցաւ սովորական յարգանքն առ այն զարմ համարեալ սուրբ. Յայսմանէ հետևելով զանազան մարդիկ փառամոլք 'ի պէսպէս մասունս կայսրութեանն ձկտէին առ անկախ իմն աւագութի. և յափշտակեցին զիրաւարանութի իմն, որ ոչ էր նց անկ. Սպարապետն, որ հրամայէր 'ի կողմանս

Աթահուալփայի 'ի Քուիթօ, կալաւ զեղբայրն և զորդիս տն իւրոյ, եւ նց զանաղորմ իմն մահ. և հրաժարելով յամ դուղնաքեայ վերաբերու-
1533 թէ ընդ երկուց ինքայից՝ ջանացաւ հաստատել զթագաւորութի մի զատուցեալ առանձինն:

Փիծծառրոս յառաջխաղայ 'ի Քուզքօ:

Տեսանէին Սպանիացիք մեծաւ հաճութի ծաւալիլ զհոգին երկպառակութն, և թուլանալ ուժոյ կառավարութն 'ի մէջ Փերուացւոց. Նկատէին զայսօրիկ անկարգութիս, որք թագաւորէին 'ի կայսերութեն իւր նշանս հիւանդութե իւրք տէրութեն, որ երթայր արագ արագ առ լուծումն իւր. Փիծծարրոս ոչ ևս երկմտեցաւ առ 'ի յառաջխաղալ դէպ Քուզքօյ, մանաւանդ ընկալեալ ունելով զերևելի օգնութիս. որով սակաւ վտանգաւ ընդդիմանիցէ 'ի ներքս այնր երկրի. Պատմութի հարստութեցն ստացելոց 'ի Քասսամալքա ներգործեաց ըստ իմի, ոպ ինքն նախատես եղև. Հազիւ թէ եղբայր իւր Ֆերտինանտոս ը̄ պաշտօնատարաց և զօրականաց, որոց շնորհեալ էր հրաման երթալոյ զկնի բաշխման փրկանաց ինքային, հասեալ էր 'ի Փանամայ, այնպէս մեծացուցեալ եղեն հարստութիք նց յամ բնակութիս առ հարաւային ծովուն, մինչզի բդեաշխքն Կուաթիմալայի, Փանամայի և Նիքարակուայի դժուարաւ կարող եղեն պահել զժողովուրդսն ընդ իրաւաբանութբ իւրեանց, ոպզի մի բարձի թողի արասցեն զստացուածս իւրեանց և երթայցեն խուռն յայն անսպառ աղբիւր գանձուցն, որ բացեալ էր նց 'ի Փերու. Ընդդէմ արգելմանց և կանոնաւորութեց ընթացան անդր այնքանիք, մինչզի Փիծծարրոս անկաւ 'ի չու 'ի գլուխ հինգհարիւր արանց յետ թողլոյ զերևելի իմն գունդ պահապանաց 'ի սէն Միքայել ը̄ հրամանատարութբ Պէնալքազարայ. Գումարեալ էին Փերուացիք զբազում երևելի խումբս վաշտից առ 'ի ընդդիմադրել յառաջադիմութեց նր.

Եւ

Եղեն զանազան ամեհի ընդդիմահարութիւնք. բայց եղերեցան, ո՛չ այլ ամ մրցմունք յԱմերիկա. սակաւ Սպանիացիք եղեն սպանեալք կամ վիրաւորեալք. ազգայինք սատակեցան անհաւատալի կոտորածիւ. Ի վախճանի Փիծծարրոս եբաց ճանապարհ 'ի Կուզքօ. և էառ զստացուածս այնր մայրաքաղաքի. փարթամութիւնք գտեալք անդէն նաև յետ այնր ամի, զորս ազգայինք տարեալ էին 'ի դուրս, և թաքուցեալ կամ՝ վն աւելորդական յարգութն առ զարդս մեհենից իւրեանց, կամ վն ատելութն առ յափշտակօղ տիրապետողսն իւրեանց, գերազանց եղեն յարժողութն քան զայն, որ ընկալեալ էր վն փրկանաց Աթահուալփայի. Բայց պարտ գոլով բաժանել զայսոսիկ 'ի մէջ մեծագոյն իմն թուոյ բաղդորդաց՝ բաժանումն ոչ ևս զարթուցանէր զնոյն հիացումն ոչ վասն նորութեան և ոչ վն մեծութն գումարացն, որք անկանէին 'ի բաժին իւրաքանչիւր անհատի:

(37) ‖ Ըստ կարծեաց Հերրերայի աւար Կուզքոյի յետ դնելոյ մեկուսի զհինգերորդն արքային բաժանեցաւ 'ի մէջ չորեքհարիւր ութսուն անձանց. Իւրաքանչիւրն ընկալաւ չորսհազար մարչիլս. որք առնեն ընդ ամենն մի միլիոն իննհարիւր քսան հազար մարչիլս. Այլ քանզի սպարապետն և այլ պաշտօնատարք ունէին իրաւունս առ մեծագոյն ինչ մասն քան զսոսկ զինուորացն, բոլորական գումարն պարտէր ամբառնալ բազմօք աւելի քան զայն, զոր ասացի. Կոմարա և Զարաթա շատանան ասելով ընդհանրապէս, թէ կողոպուտն Կուզքօի եղև մեծագոյն արժողութբ քան զփրկանս Աթահուալփայի: ‖

Տևելով տակաւին չուն 'ի Կուզքօ՝ որդին այն Աթահուալփայի, զոր Փիծծարրոս վարէր ընդ ինքա, մեռաւ. և զի Սպանիացիք ոչ կացուցին զոք 'ի տեղի նորա, երևի թէ անունն Սանքօի

Քափաքայ էր յայնժամ ընդհանրապէս ծանուցեալ:

1533 Մինչ զօրականք իւր էին այսպէս պարապեցուցեալք՝ Պէնալքազար բդեաշխ սբյն Միքայէլի ընդունակ և ժիր զօրագլուխ ամաչէր մնալ առանձին դատարկ. և ցանկայր անհամբերաբար հանդիսանալ 'ի մէջ երկրագտաց և տիրապետողաց նորոյ աշխարհին. 'Ի դէպ ժամու հասանէին այլք գնդի միոյ լրման զօրաց 'ի Փանամայէ և 'ի Նիքարակուայէ եդ զնա յաստիճանի յագեցուցանելոյ զկիրս իւր. Թողեալ զպաշտպանութի մի բաւական պատսպարելոյ զնորածնեալ մարգարնակութին վստահացեալ նոքեան՝ եդաւ 'ի գլուխ մնացելոյն. և գնաց ձեռնարկել յառումն Քուիթօյ, ուր ըստ առնելոյ ազգայնոցն Աթահուալփա եդեալ էր զմեծագոյն մասն գանձուն իւրոյ. Մինչ ընդդիմակայելով անբաւ տարակացութիւն այնր քաղաքի 'ի սբ Միքայէլէ, և դժուարութի չոլոյն ընդ լեռնայինն և ընդ անտառախիտ երկիր իմն, և յաճախ և ամեհի կռիւք լաւագոյն զօրացն փէրուայ հրամայեցելոց 'ի քաջահզօր զօրավարէ միոջէ, քաջութի և հանճարեղ գնացք և յարատեւութի Պէնալքազարայ յաղթեցին ամ խոչից. և ինքն եմուտ 'ի Քուիթօ յաղթական զինուք իւրովք. բայց պատահեցաւ անդէն դժնեայ իմն մահացուցման. Ազգայինք տեղեկացեալք դժբաղդութի իւրեանց իշխեցող կրից տիրապետողաց իւրեանց, և կամելով վրէժխնդիր լինել նց, տարեն էին 'ի բաց զամ գանձսն, որք լեալ էին առարկայ զօրաժողով լինելոյ նց, և յորմէ քաջալերեալ էին 'ի մէջ վտանգաց և դժուարութեանց, ընդ որոց կալան պատերազմիլ'ի կատարելն զայն:

Քուի-
թօ պէ-
րապէ-
տեալ'ի
Պէնա-
լքազա-
րայ:

Պէնալքազար ոչ եղև միայն հրամանատար Սպանիացի, որ յարձակէր 'ի վերայ թագաւորութեան Քուիթօյ. Համբաւ փարթամութեանց իւրոց ձգեաց

[illegible]
[illegible]
Ալվարա-
դոյ:

անդր զհզօրագոյն ոմն թշնամի. Պետրոս Ալվարատոս, որ էր այնպէս գերազանց հանդիսացեալ յառմանն Մեքսիքոյ, ընկալեալ զդերիշխութիւն Կուաթիմալայի իւր փոխարէն իմն քաջութեան իւրոյ, տաղտկացաւ վաղվաղակի 'ի կենաց ինչ կարի միօրինակ անգործութեան. և հառաչէր գրաւիլ նորոգ 'ի մէջ շառաչման զինուորական ծառայութեան. Ներբողէին զայս կիրս նոր փառքն և հարստութիւնքն, զորս ստանային տիրապետողքն Փերուայ. և առաջի առնէին նմա զուղղաւորութիւն իմն որոշեալ. Հաւատալով, կամ ցուցանելով հաւատալ, թէ թագաւորութիւն Քուիթոյ ոչ էր պարփակեալ 'ի ներքս կոպարացն գաւառին շնորհեցելոյ Փիծծարրոսի, խորհեցաւ յափշտակել զայն. Բարձր համարումն հրամանատարին յանկոյց զկամակարս յամենայն կողմանց, Եմուտ նա 'ի նաւ հանդերձ հինգհարիւր արամբք. յորոց աւելի քան զերկերիւրն էին յայնպիսի որիշ աստիճանի, մինչև կարող լինել ծառայել 'ի ձի. Եհաս 'ի նաւահանգիստն Վիէյօ. և առանց բաւական ծանօթութեան երկրին, և առանց առաջնորդաց, որք առաջնորդեսցեն նմա, նկրտեցաւ չուել ուղղակի 'ի Քուիթօ, հետևելով ընթացից գետոյն Կուայաքիլայ, և անցանելով ընդ ընթացս Անտեայց դէպ աղբերական լերոյ. Բայց յայսմ ճանապարհի միում յառաւել անկոխից 'ի բովանդակ Ամերիկոյ տոկացին զօրք իւր այնքան աշխատութեան առ 'ի բանալ զգնացս ընդ անտառս և ընդ ճախինս 'ի ստորին գետինս, և կրեցին այնքան վտանգ տարապայման ցրտոյն յորժամ սկսան 'ի վեր ելանել 'ի լերինս, մինչզի յառաջքան զժամանելն 'ի տափարակն Քուիթոյ հինգերորդ մասն արանցն և կէս երիվարացն մեռեալ էին. և մնացեալքն գտանիւր անընդունակ առ ծառայութիւն:

(38) ‖ Մինչ զօրաժողով 'ի նոր աշխարհին

եղև երբէք ապաշնորհեալ առաւել յարատևական քաջասրտութեամբ քան զԱլվարատոսին. և յոլովք կրեցան մեծագոյն ձախորդութիւնք. Նաւուք յանձանց դիմագրաւ եղելոց յայնմ էին իբրև զզօրավար իւրեանց հինք, որք ծառայեալ էին ընդ Քօրթեսի, ընտելք ամ խստութեն Ամերիկեան պատերազմին. Ընթերցօղքն իմ, դիք ոչ ունին զդիպաւորութի ընթեռնլոյ զապշեցուցիչ ստորագրութի կոշկոճանաց նց արարեալ 'ի Զարաթայ և 'ի Հերրերայ կարեն կերպաւորել զգաղափար ինչ բնութեն չուոյ նց 'ի ծովեզերէն մինչև 'ի Քուիթօ, նայելով 'ի պատմութի, զոր առնէ տէրն Անտօնիոս Ուլլօա, զճանապարհորդութէ իւրմէ յամին 1736, դրեթէ ընդ նոյն ճանապարհ. կամ 'ի պատմութեն տեառն Գուկուէրայ, որ յառաջագէմ եղև 'ի նաւահանգստենէն Սիէյօ առ Քուիթօ ընդ նոյն ճանապարհ, զոր կալաւ Ալվարատոս. Նա համեմատէ զճանապարհորդութի իւր ընդ ճանապարհորդութենն զօրավարին Սպանիացւոյ. և այսու ընծայեցուցանէ մեզ զատուել ապշեցուցիչ գաղափար համարձակութենն և համբերութենն Ալվարատոսի առ 'ի յաղթել այնչափ խոչից: ‖

Աստանօր պատահեցաւ գնդի միում Սպանիացւոց. որ հակառակեցաւ անցից նր. Փիծծարրոս ընկալեալ զլուր սպառազինութեն Ալվարատոսի՝ զատուցեալ էր զԱլմակրոս ընդ վաշտից ոմանց. ոպզի ընդդիմակաց լինիցին այսմ ահարկու յարձակողի 'ի վր իրաւարանութեն իւրոյ. դիք յաւելեալ եղեն 'ի Պենալքազարայ և 'ի յաղթական խմբէ իւրմէ. Ալվարատոս թէպէտև յանկարծ 'ի վր հասեալ 'ի թշնամեաց, որոց ոչ սպասէր, յառաջխաղաց համարձակութե 'ի կռիւ. բայց վն միջնորդութեն արանց ոմանց խոհականաց յիւրաքանչիւր կողմանէ տուաւ տեղի բարեկամական իմն իրաւախոհութեն. և յապաղեցաւ ընդ ամե ինչ մահաբեր շրջանն, յորում Սպանիացիք պարտէին խափանել առ ժմ̃ մի զտիրապետութիւն իւրեանց առ 'ի շաղախել զձեռս յարեան քաղաքակցաց իւրեանց. Ալվարատոս խոստացաւ դառնալ առ վարչութիւն իւր այսու դաշամբ, զի Ալմակրոս վճարեսցէ նմա զհարիւրհազար մարչիլս վն̃ ծախուց սպառազինութեան իւրոյ. Նաւումք 'ի հետևողաց իւրոց մնացին յաշխարհին. և զօրաժողով մի, որ սպառնայր զկործանումն փիծծարրոսի և կողմնից իւրոյ, հանդանակեաց յաճումն կարողութեան նր̃ ։

Յայսմ միջոցի Ֆերտինանտոս փիծծարրոս հասեալ էր 'ի Սպանիա. Նորա քանակութիւն ոսկւոյն և արծաթոյն, զոր տարաւ անդր, ելից զթագաւորութիւն ոչ փոքրագոյն զարմացմամբ, քան զոր զարթուցեալ էր 'ի փանամա և 'ի մերձակայ գաւառսն:

Պատէ՛ր ընդէտէալ փիծծարրոսէ ի Ալմակրոսէ ։

(39) ‖ Ըստ ասելոյն Հէրրէրայի մինն 'ի համար արքային յոսկի հարիւր յիսուն և հինգհազար երեքհարիւր մարչիլք և հինգհազար չորեքհարիւր մարք (իւրաքանչիւրն ութնունկի) արծաթոյ՝ բաց 'ի զանազան անօթոց և զարդուց 'ի նոյն հրահալելեաց. և 'ի համար անձանց սոսկականաց՝ յոսկի չորեքհարիւր իննսուն և իննհազար մարչիլք և յիսուն և չորեքհազար մարք արծաթոյ ։ ‖

փիծծարրոս ընկալեալ եղև 'ի կայսերէն ուշադրութբ̃ պարտու պատշաճիւ մատուցանողին այսպիսի իմն̃ հարուստ ընծայի. որ գերազանցէր քան զինչևիցէ գաղափար, զոր Սպանիացիք կերպաւորեալ էին նկատմամբ արժողութ̃ ստացելոց իւրեանց յԱմերիկա, թէպէտև էին ընդ տասն ամտեարք Մեքսիքոյի. 'Ի փոխարէն ծառայութեանց եղբօր իւրոյ՝ իշխանութիւն իւր հաստատեցաւ մեծագոյն կարողութբ̃, նորանոր արտօնութիւնք և յաւելմամբ եօթանասուն փարսախաց գետնոյ առ ծո-

ծովեզերբ 'ի հարաւակողմն երկրաստանին շնորհեցելոյ նմա յառաջին հրովարտակի իւրում. Ալմակրոս ընկալաւ զպատիւն, որոց փափագեալ էր յերկար ժամից հետէ. Ընձեռեալ եղեւ նմա անուն ատելանթատայ, կամ բդեշխի հանդերձ իրաւարանութեամբ 'ի վ̃ր երկերիւր փարսախաց երկրի` սկսանելի անդր քան զհարաւային սահմանս գաւառին սահմանեցելոյ Փիծծարրոսի. Այլ եւ Ֆերտինանտոս ոչ մեկնեցաւ առանց մրցանակի. Ընկալեալ եղեւ 'ի զինուորական կարգ սրբոյն Յակոբայ` տրոհումն միշտ մարդելուզական վ̃ն սեպուհոյ միոյ Սպանիացւոյ. եւ դարձեալ եմուտ 'ի նաւ երթալ 'ի Փերու` ընկերակցեալ 'ի բազմաց անձանց բարձրագունից աստիճանաւ քան զոր ցայնժամ ծառայեալ էին յայնմ աշխարհի:

1534 Սկիզբն երկպառակութեան 'ի մէջ Փիծծարրոսի եւ Ալմակրոսի: Եհաս 'ի Փերու հոտ ինչ իրակութեանցն Ֆերտինանտոսի յառաջ քան զժամանել նորին անդր. Իսկոյն իբրեւ գիտաց Ալմակրոս, թէ ստացեալ էր նա զարքունական շնորհումն անկախ իրեք կառավարութեան, պնդեաց, թէ Քուզքօ կայսերական աթոռ Ինքայից իցէ պարունակեալ 'ի գաւառի իւրում. եւ գուն գործեաց տիրել այն մեծավարկ գրից. Յօհաննէս եւ Կոնծալոս Փիծծարրոս պատրաստեցան ընդդէմ կալ նմա. Իւրաքանչիւրն 'ի վիճող կողմանց ունէր զհզօր կուսակիցս, որք ջատագովէին զայն. եւ բա՛ վէճն ունէր աւարտիլ զինուք յորժամ եհաս յայն քաղաք Ֆրանչիսկոս Փիծծարրոս. Սիրահաշտութ̃ իւր ընդ Ալմակրոսի ոչ երբեք լեալ էր 'ի սրտէ. Խոստադրժութի̃ Փիծծարրոսի 'ի ձգելն յինքն զամ պատիւս եւ զշահսն, որք պարտէին բաժանիլ 'ի մէջ ընկերակցելոցն ոչ էր եղեալ երբեք յուշոյ յիշատակաց նր̃. Մինն գիտակից սեպհական անհաւատարմութեան իւրոյ ոչ սպասէր ներողութեան. եւ միւսն ճանաչելով խաբեալ, անհամբեր էր վրէժխնդիր լինելոյ. եւ թէպէտ ա-

գադաշնութիւն և փառասիրութիւն ներածեալ էր զնա ոչ միայն 'ի թաքուցանել զզգացուածս իւրեանց, այլև 'ի գործել միաբան 'ի խնդիր հարստութեանց և իշխանութեան, բայց վաղվաղակի իբրև 'ի ձեռս բերէին զստացուածն, նոյն կիրքն, որք կերպաւորեալ էին զսակաւատև միաւորութիւն իւրեանց, ծնուցանէին զնախանձաւորութիւն և զերկպառակութիւն. Իւրաքանչիւրն ունէին զփոքրիկ իմն թիւ անձնաշահասէր կուսակցաց, որք չարալից արհեստիւ սեպհականաւ այսպիսի խուժանի մեծացուցանէին զկասկածս նց. և աճեցուցանէին զամ երևոյթ խիթի. բայց հանդերձ այս ամ սերմամբք թշնամութեան 'ի սիրտս նց, իւրաքանչիւրն էր այնպէս կատարելապէս տեղեկացեալ ընդունակութեան և քաջասրտութեան տարփակցին իւրոյ, մինչզի երկնչէին հաւասարապէս 'ի հետևութեանց յայտնի իրիք պատառուածոյ. Բարեբաղդ ժամանումն Փիծծարրոսի 'ի ·Քուսքօ, յաջողակութիւն, որով վարեցաւ, զիջումն խառնեալ ընդ հաստատութեան 'ի վրէժխնդրութիւս իւր ընդդէմ Ալմակրոսի և ընդդէմ կուսակցաց իւրոց հեռացուցին առժամայն անդ զայն փոթորիկ. Տեղի արարաւ իմիք վերահաշտութեան. որոյ առաջին յօդուածն եղև, զի Ալմակրոս երթայցէ ձեռնարկել 'ի տիրապետութիւն ·ՔՀիլեայ. և եթէ յայնմ գաւառի ոչ գտանէր զկալուած ինչ հաւասար վաստակոյ իւրում և ակնկալութեանց իւրոց, Փիծծարրոս ձպհաւ անձխասութեան տացէ նմա ըզմասն ինչ Փէրուայ. Այս նոր միաբանութիւն հաստատեցաւ նովին սբ հանդիսիւք առաջնոյն. և յետոյ պահեցաւ հաւասարապէս՝ սակաւ հաւատարմութբ:

1534 12 յունիսի.

Առաւել զայս ծանրակշիռ իրակութիւն Փիծծարրոս՝ դարձաւ յետս յերկիրսն առ ծովեզերբն, և վայելելով յայնժամ յանջրպետ իմն անդորրութեան առանց վրդովելոյ 'ի թշնամւոյ ումեքէ

Կանոնադրութիւնք Փիծծարրոսի:

ոչ Սպանիացւոց և ոչ Հնդկայնոյ՝ նա զանձն նովին յարատեւական վառմամբ, որ էր տրոհիչ յատկութեն իւրոյ, 'ի պատկերակերպել և 'ի մուծանել զկերպ ինչ կանոնաւոր կառավարութեան յընդարձակ գաւառսն ենթադրեալս իշխանութեն իւրում. Թէպէտ անընդունակ վասն ոչ բարւոք դաստիարակութեն իւրոյ տրոհելոյ զսկզբունս քաղաքավարութեան և 'ի գործ ածելոյ զայնս ըստ պատշաճի առաջադրութենն, այսու ամիւ բնական լրջմտութբն իւրով ելից զպակասութի գիտութենն և ներհմտութենն. Նուաճանեաց զաշխարհն 'ի պէսպէս նահանգս. կարգեաց զսեպհական մեծաւորս իշխել իւրաքանչիւրումն. և հաստատեաց զկանոնաւորութիս նկատմամբ մատակարարութեն արդարութեն, ընդունելութեն արքունի մտից, աշխատութեն հանքաց և վարման Հնդկաց՝ կանոնաւորութիս բնաւին պարզս, բայց բարւոք խորհեալս առ 'ի յառաջ շարժել զհրապարական երջանկութին. և թէպէտ յարմարէր նա յայնժամ զգաղափար իւր նորածնեալ վիճակի կողոնիային իւրոյ, սակայն ունէր վսեմական մտօք իւրովք զակն մի առ ապագայ մեծութի իւր. և նկատէր զանձն իբր 'ի ներգործութեն արկանելոյ զհիմն
Հիմնար- մեծի իրիք կայսերութե. ուստի խորհրդածէր յեր-
կութեան կար ժամանակաց հետէ և բազում հոգածութբ,
Լիմայի: թէ յորում տեղւոջ պարտէր հաստատել զաթոռ կառավարութենն. Քուզքօ կայսերական քաղաք Ինկայից կայաւորեալ էր յանկեան միում կայսերութենն աւելի քան զչորեքհարիւր մղոնս հեռի 'ի ծովէ, և աւելի ևս 'ի Քուիթօէ՝ գաւառ՝ զորմէ կերպաւորեալ էր զբարձրագոյն իմն գաղափար. Ոչինչ այլ չէն Փէրուացւոց էր այնչափ երևելի, մինչև արժանաւորիլ անուան քաղաքի, կամ հրաւիրել զՍպանիացիս առ 'ի կառուցանել անդէն զհանգրուանս իւրեանց. Բայց շրջելով ընդ աշխարհն Փիծարրոս հարեալ էր

'ի

'ի գեղեցկութէ և 'ի յուռթիութէ հովտին Միմոքայ՝ մի յառաւել տարածելոյն և լաւագոյն մշակելոյն 'ի Փէրու. Ընդէն առ ափամբք փոքրիկ գետոյ միոյ համանուան հովտին, զոր ոռոգանէ և պարարտացուցանէ 'ի տարակացութեան վեց մղոնաց 'ի Քալլաօէ՝ մի յառաւել դիպան նաւահանգստից խաղաղականն ովկիանոսի հիմնեց նա զքաղաք մի սահմանեալ 'ի նմանէ առ'ի լինել գլխաւոր քաղաք կառավարութն իւրոյ. Եդ 1535
նմա անուն՝ քաղաք արքայից. կամ վն պարակայի 18 Յուն-
արկանելոյ զառաջին վէմն յայնմ ժմկի, յորում ուարի :
եկեղեցին կատարէ զտօն մոգուց թագաւորացն, կամ ոմն առաւել հաւանական է 'ի պատիւ Յօհաննայի և Կառոլոսի արքայիցն Քասթիլիոյ. Սա պահէ միշտ զայս անուանակոչութի 'ի մէջ Սպանիացւոց յամ հրապարակական գրուածս. բայց լաւագոյն ծանուցեալ է յարտաքնոց անուամբ Լիմայի, խանգարումն նախկին յորջորջման հովտին, յորում կայացեալ է. Ըստ վերատեսչութե նր աճեցին շինուածք այնպիսի ճեպով, մինչզի ընկալաւ վաղվաղակի զտեսիլ քաղաքի միոյ. որ վն մեծագործ պալատանն, զոր կառոյց անդ վն անձին իւրոյ և վասն ազնուական տանցն կերտելոց 'ի զանազան պաշտօնատարաց իւրոց, եւս նաև 'ի տղայութն իւրում նշանս ապագայ մեծութն իւրոյ:

Յաղագս միաբանութն արարելոյ ը Փիծծար- Ալմակ-
րոսի Ալմակրոս անկաւ 'ի չու դէպ Քհիլեայ. րոս մեկնի 'ի
և քանզի ստացեալ ունէր 'ի գերամբարձ աստի- Քհիլէ:
ճանի զառաքինութիւն, ընդ որս առաւել զարմանան զինուորքն, անկոպար իմն ազատականութի և անվեհեր իմն քաջասրտութի, զհետ գնացին դրօշակի նր արք հնգհարիւր եօթանասուն՝ գունդ Եւրոպացւոց առաւել երևելի քան զոր տեսեալ իցէ ցայնժամ 'ի Փէրու. Ալ անհամբերութն տանելոյ 'ի գլուխ զշահատակութին

և վն՟ արհամարհութեն՟ տաժանմանցն և վտանգաց ցուցելոց յա՟մ Սպանիացւոց, որք ծառայե՟լ էին ընդ երկար յԱմերիկա, Ալմակրոս փոխանակ յառաջ խաղալոյ ընդ դաշտավայրն առ ծովեզերօքն ընտրեաց անցանել ը՟ լերինս, ճա՟րհ, որ արդարև էր կարճագոյն, բայց գրեթէ անկոխ. Այս չու զօրք իւր եղեն նշաւակ ա՟մ թշուառութե՟նց, զորս մարդիկ կարեն կրել յաշխատութէ՟, 'ի քաղցու և 'ի խստութէ՟ կլիմային յայն ամբարձեալ գաւառսն այրեցած գօտւոյն. ուր աստիճան ցրտոյն հազիւ վայրագոյն է քան զայն, որ զգացեալ լինի 'ի ներքս բևեռային շրջանակի. Բազումք 'ի նոցանէ կորեան. և կենդանի մնացեալքն յորժամ իջին յորդաւանդ դաշտավայրսն Քհիլեայ պատահեցան դժուարութեանց առ 'ի յաղթել. Գտին անդ զարմ ինչ մարդկան ամենևին տարբեր 'ի ժողովրդենէն Փերուայ, անվեհերք, սովորք յաշխատանս, անկախք, և 'ի կազմուած մարմնոց իւրեանց. որպէս և 'ի կորովութե՟ն հոգւոյն գրեթէ համանմանք մարտիկ ցեղիցն հիւսիսային Ամերիկոյ. Թէպէտև լի զարմացմամբ յառաջին երևման Սպանիացւոց, և ևս առաւել ապշութ՟բ ընդ գործողութի՟ս հեծելազօրու ն՟ց և յարտագործութի՟ս հրացան զինուց ն՟ց, սակայն Քհիլեցիք այնպէս արագ 'ի բաց թօթափեցին զապշութի՟ իւրեանց, մինչ զի ոչ միայն պաշտպանեցին զանձինս յամառութ՟բ, այլև կռուեցան ընդ նոր թշնամեաց իւրեանց առաւել որոշե՟լ գազանութ՟բ, զոր ոչ էր ցուցեալ ցայնժամ այլ զինչևիցէ ազգ Ամերիկեան. Բայց Սպանիացիք շարունակեցին յառաջ մղել յաշխարհն, հաւաքելով անդէն զերևելի իմն քանակութիւն ոսկւոյ. այլ այնչափ հեռի էին 'ի խորհելոյ առնել զբնակութի՟ ինչ 'ի մէջ այնպիսի ահարկու դրացեաց, մինչզի յանդիման փորձոյ և քաջութե՟ն զօրավարի իւրեանց 'ի պատրաստի էին 'ի

բաց

թաց թողուլ զայն, յորժամ վերակոչեցան վասն անակնկալ իմն խռովութեան 'ի Փերու. զորոյ ջանացայց հետազօտել զպատճառսն:

1535 Այնքան էին բաղդորդք գունդ առ գունդ գնացեալք 'ի Փերու յամենայն բնակութենէ Սպանիացւոց յԱմերիկա, և ամենեքեան այնպիսի բարձր ակնկալութիւնք կուտելոյ անդէն զամբաւ մեծութիւնս 'ի միում վայրկենի, մինչզի վասն արանցն տոգորելոց այնպիսի վտարանդի իղձիւք՝ զինչ և իցէ զոյց ստանալոյ ինչս սակաւ առ սակաւ միջնորդաւ համբերատար իմն ճարտարութեան և հանապազորդ ժտագրութեան լեալ էր վասն նոցա նախատինք իմն. Ո՛ւր գտանել զզբաղանս ինչ բաղձութեան, որում ոչ կարէր հաւանիլ ապահովութիւն մնալ անգործ՝ Փիծծարրոս քաջալերեաց զոմանս 'ի նշանաւորագոյն զօրագլխացն, որք 'ի վերջոյ լծակցեալ էին ընդ նմա, յարձակիլ 'ի վերայ զանազան գաւառաց կայսերութեանն, որոց Սպանիացիք տակաւին չէին այց արարեալ. Կազմեցան զանազան յոգնաթիւ գունդք առ այս վախճան. և զայնու ժամու, յորում Ալմակրոս մեկնեցաւ վասն Քհիլեայ, նոքա չուեցին առ հեռաւորագոյն նահանգսն. Իբրև նշմարեաց ինքնին Մանքօ Քափաք զանխոհեմ վստահութիւն Սպանիացւոց 'ի ցրուելն այնպիսի եղանակաւ զզօրս իւրեանց, և թէ միայն խումբ մի արանց մնացեալ կայր 'ի Քուսքօ ընդ Յօհաննու և Կոնծալաւ Փիծծարրոսիւ, իսկևիսկ խորհեցաւ հասեալ 'ի վախճան զերջանիկ վայրկեանն ստանալոյ վերստին զսեպհական իրաւունս իւր, և պատժելոյ զանիրաւութիւնս ազգին իւրոյ, և ջնջելոյ իսպառ զճնշիչս իւր. Թէպէտ դիտեալ 'ի Սպանիացւոց, որք հաւանեալ էին նմա նստիլ յապարանս նախնեաց իւրոց 'ի Քուսքօ, գիտաց գտանել զեղանակ հաղորդելոյ զգծագրութիւն իւր անձանցն, որք երևէին նմա յարմարագոյնք 'ի կատարել զայն. 'Ի մէջ ազգի սովորեցելոյ յար-

Ապստամբութիւն Փերուացւոց:

Ակեսքն այսր ձատարանջաբէ:

գել՝ զորքայն իւր իբր ածութի՟ իմն, ամ՟ ակնարկութի կամաց իւրոց բերէ ընդ իւր զաւագութի՟ հրամանի. Նոյն իսկ ժողովուրդն չարունակ աճմամբ թւոյ հինից իւրոց՝ ուրուրեմն յաղթահարեալ էր, թէ մարդելուզական յոյսն, զոր ը՟ երկայն ժմկ՟ սնուցեալ էր, իւրովի մեկնելոյ նց՟, էր բոլորովին ունայն. Տեսանէին փերուացիք, թէ պիտոյ էր ուժգին իմն ջան ազգին ողջոյն առ'ի վանել զնս՟. և նախապատրաստութիւնքն առ'ի առնել զայն էին ճեպեալք գաղտնաբար և լռութբ՟ բնաւ մասնաւորաւ Ամերիկացւոց:

1536 Նոր յառաջադէ, հաւէր նորէն:

Յետ ինչ ինչ ընդունայն թեւակոխութեց՟, զորս արար Ինքա առ'ի փախչիլ, ժամանելով Ֆերտինանտոս փիծծարրոս դիպուածով յայնմ ժմկի 'ի Կուզքօ, ընկալաւ 'ի նմանէ զհրաման ներկայ գտանելոյ 'ի տօնախմբութե՟ իմիք, որ պարտէր կատարիլ 'ի տարակացութե՟ սակաւ փարսախաց 'ի մայրաքաղաքէն. Ընդ պատրուակաւ այնր տօնի գումարեցան 'ի միասին նախապետական անձինք կայսերութեն. Նոյնհետայն իբրև միաւորեցաւ ընդ նս՟ Ինքա, ամբարձաւ դրօշակն արքունի. և 'ի սուղ ժամու տեսան 'ի զէնս ամ՟ մարտիկք 'ի սահմանացն Կուիթօի մինչև ցսահմանս Կհիլեայ. Բազում Սպանիացիք, որք կային ապահովք 'ի բնակութիս իւրեանց, սատակեցան. Պէսպէս հատուածք 'ի ժմկին, յորում չուէին անհոգք վն՟ աշխարհի միոյ, որ երևէր նուաճեալ և ենթարկեալ տէրութե՟ իւրեանց, վտանգեցան բոլորովին. Ինքա 'ի գլուխ զօրու միոյ բազկացելոյ, եթէ պարտիցէ հաւատալ Սպանիացի պատմագրաց, յերկերիւր հազար արանց՝ եկն կալել ը՟ Կուզքօի, զոր երեք եղբարքն գուն գործէին պաշտպանել միայն հարիւր եօթանասուն Սպանիացւովք, մինչդեռ այլ իմն աշխարհ գունդ պաշարէր զԼիմա, ունելով անդէն զեղբայրն անձկապէս փակեալ. Ոչ ևս գոյր հաղորդակցութի 'ի թն 'ի մէջ երկուց քաղաքացն. վնզի հզօր զօրութիւք փերուացւոց ծածկելով զաշխարհն խափանէին զինչևիցէ լուր. և քանզի վաշտքն 'ի Քուսքօ և 'ի Լիմա ոչ էին տեղեկացեալք վն նորին պատճառի՝ վիճակի հայրենակցաց իւրնց՝ իւրաքանչիւրն պատկերէր յինքեան միայն մնալ կենդանի 'ի հանրական ջնջման Սպանիական անուան 'ի փերու :

Ի Քուսքօ, ուր Ինքա հրամայէր անձամբ, ա– Պաշբարին փերուացիք զմեծագոյն բուռն իւրեանց . բռ–ն Շարունակեցին զպաշարումն ընդ ամիս ինն ·Ռ— անյողդողդ իմն եռանդիւ և 'ի պէսպէս կերպս . +օէ : և թէպէտ ոչ ունէին զնոյն անյաղթելի հաստատութի Մեքսիքացւոց, սակայն 'ի գործ եդին մինչև 'ի գործողութեան նց, այնպէս զի ցուցին զմեծ զգօնութի և զմեծագոյն իմն իմացողութի 'ի զինուորական արհեստին. Նկատեցին ոչ միայն զշահեկանութիւն, զորս Սպանիացիք հանէին 'ի կրթութէ և 'ի զինուց իւրեանց, այլև հնարեցան հետևիլ առաջնոյն և վերաշրջել զերկրորդն ընդդէմ նց. Զինեցին զերևելի իմն գունդ քաջագոյն մարտկաց իւրեանց սուսերօք, տիգօք և ասպարօք, զորս առեալ էին 'ի զինուորացն Սպանիացւոց սպանելոց 'ի նոցանէ 'ի պէսպէս դիպուածս. Ջանացան դասաւորել զնս յայնմ միացեալ և կանոնաւոր կարգի, որում ծանուցեալ էին փորձառութբ, թէ Սպանիացիք պարտական էին վն անըստնանելի զօրութն իւրեանց 'ի ժմկի քաջագործութեն. Երևեցան ոմանք յասպարիզին հրետօք Սպանիացւոց, և արդէն ստացեալ էին զյաջողակութի և զհամարձակութի բաւական առ'ի 'ի կիր առնուլ զայն. Սակաւք ոմանք յառաւել սրտեղացն, յորոց միջի էր Ինքա, եկին հեծեալք յերիվարս յափշտակելու. և յառաջ խաղային յանդգնաբար 'ի մարտ իբրև զհեծեալս Սպանիացւոց տիգաւ 'ի կայծի իւրեանց՝

լանջապանակին. Բայց ևս առաւել քան զայսոսիկ անկատար[illegible]որձս հետևելոյ արհեստից և 'ի գործ ածելոյ զզէնս Եւրոպացւոց՝ Թիւ նց̃ ան-հանգիստ առնէր և նեղէր զՍպանիացիս:

(40) Փերուացիք զիմէին առ այլ զինուորական խորամանկութիւն քան թէ առ հնարս Սպանիացւոց. Եւ քանզի հեծելազօրն էր գլխաւոր առարկայ սարսափման նց̃, գուն գործէին առնել զայն անպիտան, ընկենլով 'ի գունդսն զկար ինչ կաշեայ հանդերձ քարիւ կապեցելով ուժգին յիւրաքանչիւրն յերկուց գլխոց. Այս խոտորնակ անկանէր 'ի մէջ երիվարին և հեծելոյն. և պատատէր զնս̃ այնչափ, մինչև առնել զնս̃ անընդունակս 'ի գործել. Ասէ Հերրերա, թէ այս եղև գիւտ իմ̃ բոլորովին նց̃ սեպհական. բայց ոչ յառաջ նշմարեցի, այս զէն հասարակ է առ համօրէն վայրագս հարաւային Ամերիկոյ. և է առաւել հաւանական, թէ Փերուացիք նշմարե̃լ էին զյաջողակութիւն, որով վարէին յորս. և թէ յայսմ առթի ընկալեալ էին զայն վս̃ անձանց իւրեանց. զմինիլի Սպանիացիք ուժգնակի նեղե̃լ էին յայնմանէ. Այլ իմ̃ օրինակ ճարտարմտութն̃ Փերուացւոց արժանի է յիշատակութն̃. Հանելով նոքա զգետ մի արտաքոյ խոխոմի իւրոյ հեղեղեցին զհովիտ մի, ուր դադարե̃լ էր գունդ մի Սպանիացւոց. և արարին զայն այնպէս յանկարծակի, մինչզի ծայրագոյն դժուարաւն̃ մարթ եղև նց̃ ապրիլ: ‖

Յոչինչ համարելով զքաջութիւն զօրացեալ 'ի յուսահատութենէն, որով երեք եղբարքն պաշտպանէին զԿուզքօ, Մանկօ Կափաք ստացաւ վերստին զկէս մայրաքաղաքին. և յառաջ քան զկարող լինելն Սպանիացւոց վանել զնս̃ անտի կորուսին զՅօհաննէս Փիծծարրոս զառաւել սիրեցեալն յեղբարց 'ի միասին ընդ այլոց ոմանց անձանց վաստակաւորաց. Մաշեալք յաշխատանաց, վշտացեալք 'ի պակասութենէ դարմանոց, և ճանաչելով, թէ ոչ ևս կարէին յերկարաբար ընդդէմ կալ թշնամւոյ միում, որոյ թիւն օր ըստ օրէ աճէր, էին զօրականքն անհամբերք 'ի բաց թողլոյ զԿուսքօ, հաւատալով կամ վերստին միաւորելոց ընդ հայրենակցաց իւրեանց, եթէ տակաւին էին կենդանի, կամ բանալոց զճանապարհ իւր ընդ ծով, և ելանելոց յաշխարհէն, որ լեալ էր այնպէս մահաբեր անուանն Սպանիացւոյ. Մինչդեռ կային յածելով ընդ միտս զայսոսիկ յուսահատ խորհուրդս, զօրս զօրագլուխք նորա ջանային 'ի զուր բանալ 'ի նոցանէ, Ալմակրոս եհաս յանկարծակի մերձ Կուսքօի։

Զօրք վերադարձեալք առ Ալմակրոս վասն հանրական ապստամբութեանն փերուացւոց եղեն այնպէս ծանր, մինչզի շարժեցին զնա առանց վարանելոյ վայրկեան մի 'ի բաց թողուլ զտիրապետութիւն Չիլեայ և գալ շտապաւ յօգնութիւն իւրոցն. Բայց հաստատեցաւ յայսմ որոշման 'ի նուազ իւր անձնական, այլ յառաւել շահեկան պատճառէ. 'Ի նոյն պատգամաւորէ, որ եբեր նմա զլուր վտարանջուն Ինքայի, ընկալաւ զհրովարտակն արքունի, որ կացուցանէր զնա բդեաշխ Չիլեայ. և սահմանէր զկոպարս իշխանութեան իւրոյ. Նկատելով զզօրութիւն նորա բառս յայտնապէս, զի Կուսքօ պարփակեալ էր 'ի ներքս սահմանաց կառավարութեան իւրոյ. և եղև նմին իրի 'ի կէտ ինչ հաւասարապէս տատամսական՝ խափանելոյ փերուացւոց զվերստին ստանալն զմայրաքաղաք իւրեանց. և բառնալոյ զայն 'ի ձեռաց Փիծծարրոսի. Անժոյժ իւր բաղձանք կարող լինելոյ առնել զերկոսեան զայսոսիկ իրս, վտանգեաց զանձն վերադառնալ անդր ընդ այլ ճանապարհ. և չուելով ընդ աւազուտ դաշտս առ ծովեզերբն կրեաց 'ի տօթոյ, 'ի ծարաւոյ և 'ի չքաւորութենէ կերակրոյ ոչինչ նուազ քան զոր

Պատե-
ՌՇԼԷ Ալ
մակրոսի։

Առ Շառլ
ժիւ Դը
Նոյնչ
Էւրոյ։

կրեալ էր 'ի վերայ գագաթանց լերանցն Անտեայց։

1537 Պործու-ղութե-ներ: Հասանելն իւր 'ի Կուսքօ պատահեցաւ 'ի յոյժ բացորոշողական իմն վայրկենի. Սպանիացիք և փէրուացիք յառեցին զաչս իւրեանց 'ի վ̃ր նր հաւասար տատամնութ̃բ. Առաջինքն, որք ոչ անգիտանային զպահանջմունս իւր, ոչ գիտէին, եթէ պարտէին հայիլ 'ի նա իբրև 'ի յազատիչ իւրեանց, թէ զգուշանալ նմա իբրև ընդդէմ թշնամւոյ. Երկրորդքն տեղեակք յօդուածոցն եղելոց 'ի վէճի ընդ նա և ընդ համաշխարհիկս իւր՝ ձևացուցանէին յինքեանս, թէ առաւել յուսալոց էին քան թէ զանգիտելոց 'ի գործողութեանց իւրոց. Նոյն ինքն Ալմակրոս ոչ գիտելով մանրամասնաբար զայն, որ հանդիպեալ էր 'ի բացակայութեան իւրում, և անձկալով իմանալ զորոշ վիճակ իրակութեանցն՝ յառաջ խաղաց դէպ մայրաքաղաքին հանդարտ քայլիւ և բազում շրջահայեցութ̃բ. Այլ առաջարկեաց պէսպէս բանք ընդ երկաքանչիւր կողմանցն. Ինքն 'ի կողմանէ իւրմէ բանագնաց լինէր մեծաւ աչալրջութ̃բ. Հնարեցաւ զառաջինն շահիլ զբարեկամութիւն Ալմակրոսի. և յետ բազմաց անօգուտ առաջադրութեանց՝ յուսահատեալ 'ի սրտալի իմն միաւորութենէ ընդ Սպանիացւոց, գնաց յարձակիլ 'ի վ̃ր նր յանկարծ յոգնաթիւ իմն բազմութ̃բ ընտիր վաշտից. Բայց կրթութիւն և քաջութիւն Սպանիական պահեցին զվերնագունութիւն սովորական. ուստի փէրուացիք վանեցան այնքան կոտորածիւ, մինչ զի մեծ մասն զօրաց նց կորեաւ. և Ալմակրոս առանց ընդմիջահատութեան մտեցաւ առ դրունս Կուսքօի։

Առնու- [illegible] Կուսքօյ: Եղբարքն փիծծարրոսի ոչ ևս ունելով ընդդէմ կալ փէրուացւոց՝ դարձուցին բովանդակ զուշադրութի իւրեանց առ նոր թշնամին իւրեանց. և առին զչափս արգելլոյ նմա զմուտն 'ի քաղաքն.

Բայց խոհեմութիւն նահանջեաց զերկոսին կողմանս առ ժամանակ մի 'ի վարելոյ զզէնս իւրեանց ընդդէմ միմեանց, մինչդեռ շուրջ պատեալ էին 'ի հասարակաց թշնամեաց, որք ուրախ լինէին ընդ փոխս եղծումն նոցա. Առաջադրեցան զանազան առաջարկութիւնք իրաւախոհութեան, իւրաքանչիւր կողմն ջանալով խաբել զմիւսն կամ յարդարել 'ի ծածուկ զհետեւողս իւր:

Ազնուական, անկեղծ և քաղցր բարքն Ալմակրոսի յանկոյց յինքն զբաղում յարեալսն 'ի Փիծծարրոսն. որք գժգմնեալ էին 'ի խիստ և յանբարտաւան գնացից նոցա. Քաջալերեալ յայսմ օժտութենէ դիմեաց 'ի կողմն քաղաքին գիշերայն. յանկարծակի էհաս 'ի վերայ պահապանացն և թողաւ 'ի նոցանէ անցանել. և պաշարելով զտունն, յորում կային երկու եղբարքն, ստիպեաց զնոսա յետ յամառ իմն պաշտպանութեան անձնատուր լինել դատման նոցա. Ընդհանրապէս ծանուցեալ եղև հիմն Ալմակրոսի առ իրաւաբանութիւն 'ի վերայ Քուսքոյի. և հաստատեցաւ յանուն իւր կերպ իմն կառավարութեան:

Երկու կամ երեք անձինք միայն սպանեալ եղեն յայսմ առաջին ներգործութեան թշնամութեան. Որոյ զհետ եկին առաւել արժանալից տեսարանք. Ֆրանչիսկոս Փիծծարրոս ցրուեալ գոլով զՓերուացիս եկեալս 'ի պաշարել զԼիմա, և ընկալեալ զերևելի օգնութիւն ինչ 'ի Սպանիոլայէ և 'ի Նիքարակուայէ, կարգեաց, զի արք հինգհարիւրք ընդ հրամանաւ Ալփոնսոսի Ալվարատայ երթիցեն 'ի Քուսքօ առ'ի 'ի թիկունս հասանել եղբարց իւրոց, երբ նոքա և պահապան զօրք իւրեանց չիցեն վաղիսկ սատակեալք 'ի Փերուացւոց. Այս գումարտակ, որ 'ի տղայութեան Սպանիական իշխանութեանն յԱմերիկա պարտի նկատիլ իբր երևելի իմն զօրուի, յառաջ խաղաց մերձ 'ի մայրաքաղաքն յառաջքան զգիտելն, թէ պատահելոց

Քաղաքական պատերազմ. Առաջին յաջողութիւն Ալմակրոսի:

էր թշնամւոյ միում առաւել ահաւորի քան զՀնդիկս. Տեսին հիացմամբ զհամաշխարհիկս իւրեանց դարանեալս առ ափունս գետոյ Ապանաքայի և պատրաստեալս առ 'ի ընդդէմ կալ յառաջադիմութենց նց. Բայց Ալմակրոս կամէր առաւել շահել զնս, քան թէ յաղթել. և միջնորդութբ ընծայից և խոստմանց ջանացաւ զառածանել զզօրավար նց. Ալվարատ զհաւատարմութի իւր պահեաց անպարտելի. սակայն քանզօրք
12 Յու-
լիսի:
իւր վն պատերազմի ոչ հաւասարէին յոյժ առաքինութեն իւրում. Ալմակրոս զբաղեցոյց զնա զանազան շարժմամբք, զորոց ոչ առնոյր նա 'ի միտ զվախճանն. և յայսմ միջոցի հատուած մի ընտիր զօրականաց էանց ընդ գետն գիշերայն, յարձակեցաւ յանկարծակի 'ի վր բանակի նց. ցիր և ցան արար զզօրս իւր յառաջ քան զունելն ժմկ կարգաւորելոյ. և արար զնա կալանաւոր 'ի միասին ընդ առաջաւոր պաշտօնատարաց
1537 իւրոց:

Այլ ոչ Ան յանկարծ խորտակման այսր գնդի վէճքն 'ի
շահաւո- մէջ երկուց տարփակցաց պարտէին բացորոշիլ,
րէ 'ի յա- եթէ Ալմակրոս գիտացեալ էր 'ի գործածել յօ-
ջողութեն գուտ իւր զյաղթութիւն, որպէս գիտաց ստանալ
իւրոյ: զայն. Ռոտրիկօ Օրկօնեց պաշտօնատար մեծապէս գործունեայ, որ գոլով ծառայեալ 'ի ներքոյ հազարապետին Պուրպօնի, յորժամ ածէր սա զկայսերական զօրսն 'ի Հռոմ, սովոր էր առ համարձակ և բացորոշական խորհուրդս, թելադրեաց նմա՝ առաքել վաղվաղակի զհրաման ինչ տալոյ զմահ Ֆերտինանտոսի և Կոնծալօզայ Փիծծարրոսաց, Ալվարատայ և այլոց սակաւ անձանց, զորս ոչ յուսայր նա գերել յինքն. և չու առնել ուղղակի յաղթական զօրօք իւրովք 'ի Լիմա, յառաջ քան թէ բդեաշխն ունիցի ժմկ պատրաստելոյ վն պաշտպանութեն. Բայց Ալմակրոս թէպէտ և ծանեաւ զօգտակարութի խորհրդոյն,

և ունէր ևս միտ գնելոյ զայն 'ի գործ, եթող զինքն շարժիլ 'ի զգացուածոց, որք ոչ պարտէին սպասիլ 'ի բաղդորդէ միջէ հնացելոյ 'ի մէջ զինուց, և 'ի խղճմտութեանց, այք անյարմարէին գլխոյ իրիք կողման, որ արդէն 'ի բուռն առեալ էր զսուր 'ի քաղաքական պատերազմի. Ազդմունք մարդասիրութեան նահանջեցին զնա 'ի հեղլոյ զարիւն հակառակորդաց իւրոց. և երկիւղն հրատարակեալ լինելոյ ապստամբ կասեցոյց զնա 'ի գնելոյ զոտն 'ի գաւառի միում, զոր Թագաւորն շնորհեալ էր այլում ումեք. Թէպէտ և գիտէր նա, թէ զէնքն պարտէին 'ի վախճանի աւարտել զվէճն 'ի մէջ նր̅ և Փիծծարրոսի, և էր ևս առ այս նախապատրաստեալ, այսու ամ̅ի երկչոտ գրգութ̅ դժպատեհիւ յայսպիսի լծակցութեան՝ կամեցաւ առնել այնպէս, զի նախանձաւորն իւր լինիցի յարձակօղ 'ի վր̅. և հանդարտեամբ դարձաւ 'ի Կուսքօ առ 'ի սպասել անդ գալստեան նր̅:

Անհնազանդութիւն Փիծծարրոսէ:

Փիծծարրոս տակաւին տգէտ էր մութալի անցիցն եղելոց 'ի մերձակայութեն Կուսքոյ. Զասին բովանդակ 'ի միում վայրկենի լուրք վերադարձին Ալմակրոսի, կորստեան մայրաքաղաքին, մահուան միոյ եղբօր իւրոյ, կալանաւորութեն այլոց երկուցն և քակտմանն Ալվարատայ. Ծանօթութի այնքան աղէտից ընկճեաց զրեթէ զօգին, որ պահեալ էր հաստատուն և ամբարձեալ 'ի ներքոյ անողորմագոյն հարուածոց ձախորդութեն. Այլ պէտք նախահոգալոյ զառանձին փրկութի իւր և ցանկութի վրէժխնդրութեն նախապահեցին զնա 'ի վերջին վհատութենէ. Սովորական զգօնութբ̅ իւրով էառ զչափս վն̅ երկոցունց այսոցիկ իրաց. Էր նա տէր ծովեզերն. և սպասէր մեծ սատարութեանց արանց և զինուորական դարմանոց. և վն̅ այսորիկ ոչ էր նուաղ շահ իւր ստանալն զժամ̅ և խոյս տալն 'ի կռուոյ, քան

Արուէստաւոր գնացք էր:

զոր էր վ՟ն Ալմակրոսի փութացուցանելն զգործողութիւն և տանել առ որոշեալ իմն վախճան շհակառակութիւն. Դիմեաց առ արուեստս, զորս վաղիսկ ցայնժամ 'ի գործածեալ էր յաջողաբար. և Ալմակրոս վերստին եղև այնպէս տկար, մինչև թողուլ զինքն ամոքիլ յուսով, թէ եղերելոց էր երկպառակութիւն բարեկամական իմն յարդարմամբ. Ապա այլայլելով զառաջադրութի՟ իւր, փոփոխելով զգետինն յամ՟ հաղի, յորում երևէր նմա շահաւէտ՝ երբեմն ցուցանելով հրաժարիլ յամ՟ իւրաց, որոց ըղձայր տարփակից իւր, և երբեմն յետս քարշելով զայն ամ՟, յորս միաբանեալ էր, Փիծծարրոս գիտաց յաջողակի ձգել զիրակութիւն այնպէս յերկայն, մինչ զի թէպէտ ամ՟ օր էր վ՟ն Ալմակրոսի մեծագին, անցին բազում ամիսք առանց գալոյ առ վախճանական իմն իրաւախոհութի՟. Մինչդեռ ուշադրութի՟ Ալմակրոսի և պաշտօնատարացն, ընդ որս խորհրդակցէր, պարապէր իմանալ և վարել զխարդախ ձկտմունս բդեշխին, Կօնծալօ Փիծծարրոս և Ալվարատոս գտին զեղանակ կաշառաբեկ առնելոյ զզինուորսն, յորոց պահպանութիւն վստահացեալ էին. և ոչ միայն փախեան ինքեանք, այլ և հաւանեցուցին զվաթսունս յարանցն, որք պահէին զն՟ա, ընկերել փախստեան ն՟ց. Այսպիսի օրինակաւ ազատելով բաղդն զմի յեղբարց իւրոց, ոչ խղճեաց բդեաշխն անցանել առ այլ իմն հաւատագրուժ ներգործութի՟ առ 'ի նախահոգալ զազատութի՟ միւսոյն. Առաջադրեաց, զի որպիսի և իցէ յոզուած հակառակութեն 'ի մէջ Ալմակրոսի և ն՟ր ենթադրիցի որոշման արքային իւրեանց. և թէ մինչև ոչ լիցի դատումն ն՟ր մնասցէ իւրաքանչիւր ոք յանդորր իմն ստացման մասին երկրին, զոր ներգործաբար կալեալ էր. և թէ Ֆէրտինանտոս Փիծծարրոս դնիցի յազատութեն. և երթիցէ վերստին և անընդմիջաբար 'ի Սպանիա նեա 'ի միասին ընդ պաշտօնատարացն, զորս ընտրեսցէ 'ի բացատրել զիրաւացութ̃ի պահանջմանց իւրոց. Արշաւի և յայտնի էր խորհուրդն փիծծարրոսի և չարամտութ̃ իւր՝ Ալմակրոս դիւրահաւատութ̃բ իւիք, որ գրեթէ մերձէր յիմարութ̃ի, հաւատաց վստահանալ յանկեղծութ̃ի նր. և աւարտեաց զմիաբանութ̃ի իմն 'ի յիշատակեալ եղերսն ։

'Ի վայրկենին, յորում Ֆերտինանտոս փիծծարրոս վերաստացաւ զազատութ̃ իւր, բդեաշխն ոչ ևս պարապեալ 'ի գործողութ̃ս իւր վն̃ տատամսութենն շուրջ զկենօք եղբօր իւրոյ, եբարձ զդիմակն, զոր խորհուրդ նորին պարաւանդեալ էր դնել. Բանագնացութիւն անկաւ վաղվաղակի 'ի մոռացօնս. ոչ ևս յիշեցան խաղաղարար և հաշտեցուցիչ պատրաստութ̃ք. և նախնիքն յայտ արար, թէ ոչ որպ̃ յայլ անգամ 'ի խորհրդեան սենեկի, այլ յասպարիզի, ոչ ճղհաւ տրամաբանութեց, այլ զինուց պարտէր յայնժամ բացորոշել, թէ ո լինիցի տէր փէրուայ. Արընթացութ̃ի նախապատրաստութեց իւրոց համեմատեցաւ այսմ վճռական որոշման. Եօթնհարիւր արք մութանակի կարգեցան առ 'ի չոքել դէպ 'Բռուսքօի. Տուեալ եղև հրամանն երկուց եղբարց իւրոց. յորս կարէր համարձակ վստահանալ վն̃ կատարման բուռն խորհրդոց իւրոց. որովհետև քաջ գործելոց էին ոչ միայն վն̃ թշնամութենն, որ ծնանէր 'ի տարփակցութ̃է տոհմիցն, այլև զի խրախուսեալ էին 'ի ցանկութ̃է վրէժխնդրութենն զարթուցելոյ 'ի յիշատակութ̃է թարմ թշռառութ̃ իւրեանց և տառապանաց. Զկնի անպտուղ իմն թևակոխութ̃ անցանելոյ ըստ լերինան ընդ ուղղորդ ճղհն ընդ մէջ Լիմայի և 'Բռուսքօի, չոքեցին ընդ հարաւ առ ծովեզերբն մինչև 'ի 'Նաւքա. և ապա դառնալով ընդ ձախակողմն ընդմոփն Է նեղուցսն յայն ճիւղ Անտեայցն,

1537

Նոր պատերազմ [illegible] ։

1538

որ կայ ընդ մէջ նց՟ և մայրաքաղաքին. Ալմակրոս փոխանակ ունկնդնելոյ ումանց 'ի պաշտօնէից իւրոց, որք յորդորէին զնա տիրել այնց դժուարին անցից, սպասեաց մերձեցման թշնամւոյ իւրոյ 'ի դաշտին Պուսքօի. Երևի թէ երկու պատճառք շարժեցին զնա ունել զայս հանգամանս. Հետեւողք իւր հազիւ հասանէին 'ի հինգհարիւր. և առաքելով զհատուած մի 'ի կողմն այնց լերանց երկնչէր առաւել տկարացուցանել զայնպիսի փանաքի գումարտակ մի. Հեծելազօրն իւր առաւելոյր բազմօք քան զթշնամւոյն իւրոյ թուով և արհեստիւ. և միայն յարձակ դաշտի կարէր օգտիլ յայսմ՝ առաւելութ՟է:

Զօրք
Փորթուգալ
'ի Պատերազ
մն:

Յառաջադէմ եղեն փիծծարրոսքն առանց խոչիւիք, թող զոսկալի անապատսն, ընդ որս չու առնէին. Իբրև հասին 'ի տափարակն երկրին նախանձաւորքն, վառէին անհամբերութ՟բ գալոյ առ որոշողական իմն ներգործու՟թի. Թէպէտև էին քաղաքակիցք և սիրելիք, հպատակք միոյ արքայի, և արձակէին իւրաքանչիւրն զդրօշակն արքունի, թէպէտև տեսանէին զլերինսն, որք շուրջպատէին զդաշտն, ուր ճակատեալ էին, ծածկեալս յահագին իմն բազմութ՟է Հնդկաց ժողովելոց դիտմամբ առ'ի վայելել 'ի տեսարանն փոխադարձ կոտորածի նց՟, և պատրաստեալս առ'ի յարձակել 'ի վր՟ մասին, որ մնացէ տէր ասպարիզին, սակայն այնք՟ անհաշտելի էր ատելութ՟ի երկոցունցն, մինչզի ոչ արարաւ և ոչ իսկ ակնարկութ՟ի ինչ իրաւախոհութ՟ե. Ալմակրոս վ՟ն դժբաղդութ՟ե իւրոյ էր այնք՟ հնացեալ աւուրբք և մաշեալ յաշխատութ՟եց զինուորութ՟ե, մինչզի յայնքան պիտանաւորութ՟ե պակասեաց նմա իւր սովորական գործունէութ՟ին. և պարաւանդեցաւ տալ զհրամանն վաշտից իւրոց Օրկօկնեցայ, որ թէպէտև զօրագլուխ մեծավաստակ՝ ոչ ունէր զնոյն իշխեցողութ՟ի 'ի վր՟ նց՟, զոր ունէր ներ հրամանատարն, որում յերկար ժամանակաց հետէ սովորեալ էին զհետ երթալ և ակնածել:

Պատերազմն եղև ամեհի. և մնացաւ յերկոցունց կողմանցն հաւասար քաջասրտութիւն. Այլ ը͞ Ալմակրոսի մեծագոյն իմն թիւ հին զօրականաց և երիվարաց. բայց հակակշռէր նոցա Փիծարրոս գերագունութիւն բազմութեան և երկու ընկերութիւնք բարեկիրթ հրետաւորաց, զորս 'ի լուր ապստամբութեան Հնդկաց կայսրն առաքեալ էր 'ի Սպանիոյ. Եւ քանզի կիրառութիւն զինուց հրոյ ոչ էր հասարակ 'ի մէջ բաղդորդացն յԱմերիկա, այս փոքրիկ խումբ զօրականաց մարզելոց և զինելոց կանոնաւորաբար երևեցաւ իբր նորութիւն իմն 'ի Փէրու. և բացորոշեաց զվիճակ ճակատամարտին. Յորմէ կողմանէ և յառաջխաղացին հրետաւորք, զօրութիւն կանոնաւոր և շարունակ հրոյ զգետնէր զերիվարս և զհետևակս. և Օրկօնէց մինչդեռ գուն գործէր ժողովել և խրախուսել զզօրս իւր, գոլով ընկալեալ զվտանգաւոր իմն վէրս, խորտակումն եղև հանրական. Խժականութիւն յաղթողացն արատաւորեաց զփառսն, զոր ստացեալ էին յայնպիսի երջանիկ գործողութեան. Ուժգնութիւն քաղաքական մոլեգնութեան մղեաց զոմանս 'ի սատակել անխտիր զքաղաքակիցս իւրեանց. անարգ և առանձին վրէժխնդրութիւն դրդեաց զայլս ընտրել ինքեանց զոմանս անհատս իբր առարկայս կատաղութեան իւրեանց. Օրկօնէց և զանազան նշանաւոր պաշտօնատարք սպանան 'ի խաղաղութեան. զինուորք աւելի քան զհարիւր քառասուն կորեան յասպարիզին. քանակութիւն նշանաւոր հայելով 'ի թիւ պատերազմողաց և առ սղութիւն մաքառմանն. Ալմակրոս թէպէտև այնչափ տկար, զի ոչ էր կարացեալ կալ 'ի վ͞ր երիվարի, կամեցաւ տարեալ լինել 'ի դահաւորակի առ բարձրաւանդակ մի, ուստի նշմա-

1538 26 Ապրիլ Ալմակրոս սպանեալ:

րէր

րիւր ասպարէզ մարտին. Յայնժամ տեղւոջէ մեծագոյն յուղմամբ հոգւոյ տեսանէր զպէսպէս շարժմունս երկոցունց կողմանց. և նկատեաց 'ի վախճանի զվերջին աւերումն զօրաց իւրոց՝ վշտացեալ համօրէն զայրացմամբ զօրավարի միոյ հնացելոյ և յերկար ժմկ̃ց հետէ սովորելոյ առ

Ար ըմ-
բռնել:

յաղթութիւն. Հնարեցաւ ապրիլ փախչելով. բայց եղև կալանաւոր. և պահպանեցաւ մեծագոյն նախանձաւորութեամբ :

Հնդիկք փոխանակ 'ի գործ դնելոյ զրացորոշութիւն արարեալ 'ի նոցանէ, նոյս եռուն հանդարտութեամբ զկնի պատերազմին. Չիք 'ի վիպասանութեն նորոյ աշխարհի այնպիսի իմն հռչակաւոր ցոյց գերամբարձութեան, զոր Սպանիացիք կալեալ էին 'ի վ̃ր այնց բնակչաց, ոպ̃ տեսանելն, թէ յորմէ հետէ մինն 'ի կողմանցն հարուածեալ եղև և ցրուեալ և միւսն տկարացեալ, ոչ կալան սիրտ անկանելոյ 'ի վ̃ր թշնամեաց իւրեանց, և շահաւորելոյ 'ի դիպաւորուէն, զոր ընծայէր նց̃ բաղդն 'ի դիմի հարկանելոյ նց̃ օգտի :

1538
Նոր գօ-
րաժո-
ղովք :

Յաղթական վաշտքն աւար հարին զ'Կուսքօ. և գտին անդ զերևելի իմն կողոպուտ՝ կայացեալ ը̃ մասին 'ի մնացորդս Հնդկային գանձուն և ըստ մասին 'ի հարստութիւնս կուտեալս 'ի հակառակամարտից իւրեանց աւարօքն Փերուայ և Չիլեայ. Բայց այնքան պակասէր այս և այն ամ̃, զոր բարութիւն զօրավարի իւրեանց կարէր յաւելուլ, 'ի համեմատելոյ բարձր գաղափարաց հատուցմանն, որում հաւատային նոքա արժանաւորիլ, մինչզի Ֆերտինանտոս Փիծծարրօս ոչ կարելով յագեցուցանել զտարապայման պահանջմունս նց̃, դիմեաց առ հանդամանս 'ի գործ ածեալս յեղբօրէ իւրմէ 'ի նմանակ առթի. և ջանացաւ տալ նց̃ զզբաղմունս, որպ̃զի մի վտարանջիցին. Այսու դիտմամբ ստեղացոյց զքաջագոյն զօրագլուխս իւր ձեռնարկել 'ի գիւտ և յառումն պէսպ գաւառացն, որք տակաւին չէին ենթարկեալ Սպանիացւոց. Սառմամբ և յուսով սեպհականաւ դարուն խռնեցան կամակարք կարգիլ ընդ դրօշակօք ամբարձելովք 'ի զօրավարացն, որք ձեռնամուխ լինէին յայն նոր շահատակութիւն. Նազովք 'ի զօրականացն Ալմակրոսի միաւորեցան ընդ նն. և Փիծծարրոսի սրտադիւր եղև այսպէս, ազատելով 'ի թախանձանաց տհաճեալ բարեկամաց իւրոց և յերկիւղէ նախկին հակառակորդաց իւրոց:

Ալմակրոս դատախազեալ:

Ալմակրոս մնաց ընդ ամս յոլովս 'ի կալանս յորս անհանգստութենց պատճառելոց 'ի նմա յանստուգութէ վիճակին իւրոյ. որովհետև թէպէտ դատապարտութի իւր բացորոշեալ էր 'ի Փիծծարրոսաց անդստին 'ի վայրկենէն, յորում անկաւ նա 'ի ձեռս նց, սակայն խոհեմութիւն պարաւանդէր զնս յապաղել զթափումն վրիժուց իւրեանց, մինչև վաշտկանքն, որք զինուորեալ էին 'ի ներքոյ նր, և այլք բազումք 'ի հետևողաց նց, յորս ոչ կարէին վստահանալ, մեկնեցին 'ի Կուզքօէ. Նմին իրի իսկոյն իբրև գնացին սոքա 'ի զանազան նպատակս իւրեանց, Ալմակրոս ամբաստանել եղև վն մատնութե. քննել կերպարար, և դատապարտեալ 'ի մեռանիլ. Դատավճիռն պակոյց զնա. և թէպէտ յոլովանգամ ելեալ էր ընդդէմ մահու անվեհեր սրտիւ 'ի ստադիոնին, բայց մերձենալն իւր ընդ այսու վտանաւոր կերպարանաւ այնչափ ահացոյց զնա, մինչզի 'ի գործեած զնուաստագոյն պաղատանս անարժանս անցելոյ համբաւոյն իւրոյ. Աղաչեաց զՓիծծարրոսս յիշել զնախկին բարեկամութիւն 'ի մէջ նց եղբօր և նր. և թէ զիարդ օժանդակեալ էր առ քաջադիպութի և առ յաջողութի տոհմի նց. յիշեցոյց նց զմարդասիրութիւն, որով ընդդէմ կալով ստէպ ժտութենց առաւել խանդակաթ յարելոցն իւրոց, խնայեաց 'ի կեանս նց, յորժամ

Դատապարտեալ:

ունէր զնա յիշխանութեան իւրում. երդմնեցոյց զնա կարեկից լինել տւոց իւրոց և տկարութեանց իւրոց, և թողուլ նմա անցուցանել զապերջանիկ նշխար աւուրց իւրոց 'ի քաւել զյանցանս իւր և 'ի վերահաշտիլ ընդ այ̃. Աղաչանքն, առէ վիպասան ոմն Սպանիացի, առ միոյ այնչափ սիրեցելոյ շարժեցին զբազում անզգայ սիրտս, և քամեցին զարտասուս յաչաց բազմաց. Բայց եղբարքն մնացին անընդդիմելի. Տեսանելով Ալմակրոս, թէ անխորշելի է տարաբաղդութի իւր, եւ ընդառաջ նորա արժանաւորութբ և արիութբ ըղ̃մաժմեայ զօրականի միոյ. Խեղդուցեալ եղև 'ի բանտին. և յետոյ հրապարակաւ գլխատեալ. Մեռաւ 'ի հասակի ամաց եօթանասուն և հնգից. և եթող զորդի մի 'ի կնոջէ Հնդկայնոյ Փանամայի. և թէպէտ յայնմ ժամ̃ի էր կալանաւոր 'ի Լիմայի, եթող զնա յաջորդ կառավարութեան իւրոյ զօրութբ իշխանութեան, զոր շնորհեալ էր նմա կայսրն: Ալմաք– [illegible] 'ի մահ:

1539 Այլ քանզի 'ի ժամ̃ի քաղաքական տարաձայնութեանցն 'ի Փէրու՝ ամ̃ հաղորդակցութի ընդ Սպանիոյ խափանեալ էր, ծանօթութի տարակարգիացն, որք եղեն անդէն, ոչ էհաս այնպէս արագ յարքունիսն. Դժբաղդաբար վո̃ յաղթական կողմանն, առաջին ծանօթութիքն տարեալ եղեն անդր յոմանց պաշտօնատարացն Ալմակրոսի. որք կորուսեալ զդատ իւրեանց՝ լքին զաշխարհն զայն. և նոքա պատմեցին որինչ պատահեալ էր հանդերձ ամ̃ պարագայիւ ընդդէմ Փիծծարրոսի և եղբարց իւրոց. Նկարեցաւ հանդերձ բովանդակ չարութբ և բարդութբ ատելութեան կողմանն՝ նոցա փառամոլութիւն, պակասութիւն առ հանդիսաւորագոյն պայմանադրութիւնս, բռնաւորութիւն, անողորմութիւն. Ֆերտինանտոս Փիծծարրոս, որ էհաս փոքր մի զկնի, և երևեցաւ յարքունիսն անսովոր իմն շքով, ջանացաւ ջնջել զտպաւորութիւն [illegible] Սպանիոյ [illegible] Փէրուոյ:

թին արարեալ յանիրաստանութեանց նց, և իրաւացուցանել զիղըայր իւր և զանձն իւր, ներկայացուցանելով զԱլմակրոս իբր 'ի վն յարձակող. Կայսրն և գործակալք իւր թէպէտ և ոչ կարէին վճռել, թէ որն յերկուց պառակմանց իցէ առաւել յանցաւոր, բայց նախատեսին դիւրակի զըօթալի հետևութիւնս տարաձայնութեանց նց. Տեսանիւր յայտնապէս, թէ մինչդեռ հրամանատարքն, յորս յեցուցեալ էր առաջնորդութի երկուց նորածնեալ հարգունութեանցն, 'ի գործ ածէին զզէնս, զորս պարտէին դարձուցանել ընդդէմ հասարակաց թշնամւոյն, 'ի յեղծանել զմիմեանս, լինէր հետևաբար դադարել բնաւին ուշագրուն առ հրապարական բարին. և գոյր պատճառ երկնչելոյ, թէ Հնդիկք շահաւորելոց էին 'ի դիպաւորութէն, զոր ներկայացուցանէր անմիաբանութի նց. և արմատախիլ առնելոց վերջապէս զյաղթօղսն և զյաղթեալսն. Բայց երևէր ախտն, այլ ոչ դեղն. Գոլով պակասաւոր և կասկածելի տեղեկութիւն արդէն ընկալեալ, և տեսարան գործողութեան գտանելով այնպէս հեռի, գրեթէ անկարելի լինէր կազմել զգաղափար մի կանոնաւոր առաջնորդութե. և յառաջ քան զկարօղ լինելն դնել զայն 'ի գործ՝ կայաւորութի երկուց պառակմանցն և պարակայք իրակութեանցն վտանգէին այլայլել յեղանակն, մինչև փոխատրել վնասակար զարդիւնս նց :

Ապա ոչ այլինչ մնայր, բայց եթէ առաքել զանձն ոք 'ի փէրու վերազգեցեալ զընդարձակ իմն իշխանութի. որ յետ նշմարելոյ իսկապէս աչօք իւրովք զդիրս իրակութեանցն և հետազօտելոյ 'ի նմին տեղւոջ զգնացս զանազան կանոնաւորողաց լինիցի աւագացուցեալ 'ի տալ կառավարութե զայն կերպարան, զոր դատիցի առաւել յարմար շահուց թագաւորութե և օգտի կողմնիցն. Այն ընտրեալ վասն այսր ծանրակշիռ պաշտօնի եղև

Մար.
դէ՛ Բուս
սի ա–
ռաքէալ
անդր ըն-
դարձակ
իշխանու
թեամբ :

Բրիս–

Քրիստոփանոս Վաքա Տէքաստրօ՝ դատաւոր յատենին արքունի ունկնդրութ՟ն 'ի Վալլիատօլիտ. և ընդունակութ՟ի իւր, անարատութ՟ին և հաստատութ՟ին արդարացուցին զընտրութ՟ի նր՟. Թողեալ եղև նմա ազատութ՟ի վարելոյ ըստ որպիսութ՟ն իրակութ՟ենցն. Ունէր նա իշխանութ՟ի առնելոյ յինքն զանազան կնիքս ըստ զանազան կերպարանաց իրացն. Եթէ գտանէր նա զըգեաշխն տակաւին կենդանի, պարտէր միայն առնուլ զպաշտօն դատաւորի վ՟ս պահելոյ զերևոյթ գործելոյ միաբան ընդ նմա, և վ՟ս զգուշանալոյ 'ի տալոյ զիրաւացի ինչ պատճառ տհաճութ՟ն առն միում, որ երախտաւոր լեալ էր այնքան հայրենեաց իւրոց. Բայց եթէ Փիծծարրոս մեռեալ էր, տանէր նա ընդ իւր զպատուիրակութ՟ի իմն յառաջածելի յայնմ դիպուածի. որոյ զօրութ՟բ սահմանեալ էր յաջորդ նր՟ 'ի վարչութ՟ն Փերուայ. Ըստ այս նկատում՟ն արքունեաց առ Փիծծարրոս երևի թէ յառաջ գայր առաւել յերկիւղէ կարողութ՟ն նր՟, քանթէ 'ի հաւանութ՟է գործածին իւրոյ. որովհետև 'ի ժմ՟ին, յորում ցուցանիւր հոգած առ'ի ոչ դրդուել զնա, եղբայր իւր Ֆերտինանտոս կալեալ եղև նա 'ի Մատրիտ, և փակեալ 'ի բանտի. ուր մնաց աւելի քան զամս քսան :

1540 Մինչդեռ Վաքա Տէքաստրօ հանդերձէր վ՟ս ճանապարհորդութ՟ն իւրոյ պատահեցան 'ի Փերու իրք մեծակշիռք. Ըգեաշխն նկատելով զանձն զկնի մահուան Ալմակրոսի իբր ընդհանրական ստացող այնր ընդարձակ թագաւորութ՟ն յառաջխաղաց բաշխել զերկրատանս նր՟ 'ի մէջ տիրապետողացն. և եթէ այս բաժանում՟ն եղեալ էր անաչառութ՟բ, տարածութ՟ի երկրին, զոր նա ունէր շնորհեալ, էր աւելի քան զբաւականն առ'ի վճարել զբարեկամս, և առ'ի շահել ևս և զթըշնամիս. Բայց Փիծծարրոս բերեալ յայսմ առթի

Փիծծառրոս բաժանէ զՓէրու 'ի մէջ հետևողաց իւրոց:

ոչ արդարութեան և յստակութեան դատաւորի միոյ ուշադրողի 'ի նշմարել և 'ի վարձատրել զվաստակս, այլ անարգ հոգւով գլխոյ միոյ պառակման. Զընդարձակագոյն նահանգսն և 'ի գաւառսն զառաւել մշակեալսն և զբազմամարդսն վերապահեաց իւր իւր սեպհականս. կամ' ետ եղբարց իւրոց, յարելոցն, սիրելեացն և այլոց եթող զփոքր համարեալսն :

Հետեւողքն Ալմակրոյի, յորս էին բազումք 'ի նախկին բաղդորդաց, որոց քաջութեան և յառատեւութեան պարտէր Փիծծարրոս զբաղդս իւր, մնացին բոլորովին արտաքսեալ յինչէիցէ բաժնէ այնց գետնոց, առ որոց ստացումն նոքին իսկ բազումս յոյժ հանդանակեալ էին. Եւ քանզի ունայնութիւն իւրաքանչիւր անհատի դնէր զանչափաւոր իմն արժողութիւն սեպհական ծառայութեանց իւրոց, և զաղափար ամենեցուն նկատմամբ փոխարինութեան, որ պարտէր նոցա, ամբառնայր մեծապէս առ տարապայման իմն մեծութիւն ըստ չափուն, որով ընդարձակէին տիրապետութիւնքն. Նոքա, որք խաբեալ միայն յակնկալութեան իւրեանց, բողոքէին բարձրաձայն ընդդէմ յափշտակողութեան և աչառութեան բդեշխին. Կուսակիցքն Ալմակրոսի տրտնջէին գաղտաբար, և տածէին զվրէժխնդրութիւնն :

Որչափ և որընթաց լեալ էր յառաջադիմութիւն Սպանիացւոց 'ի հարաւային Ամերիկա, յորմէ-հետէ Փիծծարրոս էհաս 'ի Փերու, ագահութիւն նոցա 'ի տիրել ոչ էր տակաւին շատացեալ. Զօրագլուխքն, որոց Ֆերտինանտոս Փիծծարրոս ետ զհրաման զանազան հատուածոց, ընդմտեալ էին 'ի պէսպէս նորանոր գաւառս. և թէպէտ բազումք 'ի նոցանէ արտադրեալ էին մեծամեծ խստութեանց 'ի ցրտային և յանբեր կողմանսն Անտեայց, և այլք կրեալ զտառապանս ոչ վայրագոյնս 'ի մէջ անտառացն և ճախնաց դաշտացն, ոչինչ ընդ-

Յառաջադիմութիւն զինուց Սպանիացւոց :

հատ արարին զգիտս տեղեաց և զտիրապետութիս, որք մեծացուցին զճանաչումն նց՟ զայնմ աշխարհէ. և աճեցուցին զկարողութի՟ն նց՟. Պետրոս Վալտիվիայ վերստին էառ զառաջարկութի՟ն Ալմակրոսի տիրապետելոյ զՉիլի. և ընդդէմ զօրութե՟ն ազգայնոցն 'ի պաշտպանել զստացուածս իւրեանց՝ յառաջադէմ եղև այնպէս 'ի տիրապետութե՟ն այնց երկրաստանաց, մինչ զի հիմնեաց անդ զքաղաքն սբ՟յն Յակոբայ. և ետ սկիզբն հաստատութե՟ն տէրութե՟նն Սպանիացւոց. Բայց 'ի մէջ ձեռնարկութե՟նցն արարելոց զայնու ժմկաւ Կոնծալոս Փիծծարրոս կատարեաց զմիտն յառաւել յիշատակելեացն. Ընդեաշխն, որ երևէր բացարօշեալ, զի մի ոք անձն 'ի Փէրու ստանայց է զգերամբարձ դիրս ինչ, բայց եթէ մարդիկ տոհմին իւրոյ, կողոպտեաց զՊէնալ քածար զտիրապետօղն Քուիթօի 'ի հրամանատարութե՟ իւրմէ յայնմ թագաւորութե՟ն. և կարգեաց զեղբայր իւր զԿոնծալոս առնուլ զմատակարարութի՟ն այնր. Հրահանգեաց զնա ձեռնարկել 'ի գիւտ, միանգամայն և 'ի տիրապետութե՟ն գաւառացն ընդ արևելս Անտեայցն, որք ըստ զեկուցմանց Հնդկացն առատացեալ էին դարչինօք և այլ մեծագին համեմիւք. Կոնծալոս ոչինչ բնաւ վայրագոյն ուրուք յեղբարց իւրոց 'ի քաջասրտութե՟ն և ոչ նուաղ փառասէր ստանալոյ զմեծ անուն՝ դիմագրաւ եղև անձկանօք յայն դժուարին յանձնարարութե՟ն. Մեկնեցաւ 'ի Քուիթօէ 'ի գլուխ երեքհարիւր քառասուն զօրականաց, որոց կէսն գրեթէ էին ձիաւորք, և հանդերձ չորեքհարիւր Հնդկօք առ'ի տանել զնպարակսն. Կամելով բանալ զճանապարհ ընդ անձուկ տեղիսն և 'ի վե՟ գագաթանց Անտեայց, չափազանցութի՟ ցրտոյն և աշխատութե՟ն, որոց ոչ էին սովորեալ եղև մահաբեր մեծագոյն մասին տարաբաղդ ընկերաց իւրոց. Սպանիացիք թէպէտև առաւել ուժեղք և սո-

Աշխատութիւնք Կոնծալոսի:

վորք պէսպիսութեն կլիմայից չարչարեցան մեծապէս և կորուսին յարանցն. և ապա իբրև իջին 'ի խոնարհ տեղիսն՝ կրկնապատկեցան տառապանք նց̃. Ընձրեալք անդադարք ընդ ամիսս երկուս առանց ինչ անջրպետի պարզ երկնի, որ տևէր գոնէ այնքան, մինչև թողուլ նց̃ ցամաքեցուցանել զհանդերձս. Ընդարձակ վայրքն, յորս մտանէին յայնժամ, կամ՝ բնաւին զուրկք 'ի բնակչաց, կամ կալեալք յաւաւել տխմար և յանհանճար ցեղից նորոյ աշխարհի, ոչ տային զապրուստ. Ոչ կարէին յառաջ երթալ քայլ մի, եթէ ոչ հատանէին ճանապարհ մի ընդ անտառս, կամ ընդ ճախճախուտս. Այս անդադար աշխատութ̃ի և շարունակ նուաղութ̃ի կերակրոյ երևէին աւելի քան զբաւականն առ'ի սրտաբեկել և սպառել զինչև իցէ զօրս. բայց արիութ̃ին և յարատևութ̃ին Սպանիացւոց 'ի վեշտասաներորդ հարիւրեկին էին երկու առաքինութ̃իք անյաղթելիք. Յորդորեալք 'ի հանապազորդ, բայց սուտ պատմութ̃եց հաբուստ գաւառացն, զոր ունէին առաջի, պնդեցան տոկացին յերթալ յառաջ, մինչև հասին յափունս Կոքայի կամ Նափոյի, որ է մի 'ի մեծամեծ գետոց, որոց ջուրք անկանին 'ի Մարակնոն, և փոխատրեն զայն առաւել յորդ. Ընդ անբաւ տաժանմամբ շինեցին զնաւակ մի, զոր յուսային լինել 'ի մեծ օգուտ, եթէ 'ի տանելն զնն̃ 'ի վր̃ գետոց և եթէ 'ի պաճարելն զռոճիկս և 'ի լրտեսելն զերկիրն. Ամբարձան յայս նաւակ յիսուն զինուորք ը̃ առաջնորդութ̃ Ֆրանչիսկոսի Օրէլլանայ երկրորդ զօրագլխի 'ի կարգի յետ Փիծծարրոսի. Յորձանքն տարաւ զնն̃ այնքան արագութ̃, մինչզի տեսան վաղվաղակի բազմօք յառաջացեալ քան զհայրենակիցս իւրեանց, որք զհետ երթային նց̃ ընդ ցամաք յամր՝ և ծայրագոյն դժուարութ̃։

Գտանելով այսպէս հեռի 'ի հրամանատարէ իւր-

'Ի բաց մե ճողէալ յՕրէլլանայէ:

Օրէլլանա երիտասարդ ձեռներէց իմն հոգւով, սկսաւ յղանալ զգաղափարս անկախութե̃ն. և յափշտակեալ 'ի կրից իշխեցողէ այնր դարու՝ կերպաւորեաց զխորհուրդ հանդիսանալոյ իբր աշխարհագիւտ, հետևելով ընթացից Ամազոնոնայ, ցոր վայր միաւորիւր ընդ Ովկիանոսի, և նշմարելով միանգամայն զանրաւ գաւառսն, ընդ որս վայրահոսի. Այս խորհուրդ Օրէլլանայ կալաւ յինքեան զայնքան համարձակութ̃ի, որքան զդաւաճանութ̃ի. որովհետև եթէ պարտի համարել նմա իբր յանցանք պակասիլն 'ի պարտաւորութ̃է առ հրամանատարն իւր, և 'ի բաց թողուլն զընկերս իւր յանկոխ անապատի միում, ուր ոչ ունէին զայլ յոյս բարեյաջողութե̃ն, կամ զերծման. բայց եթէ զայն, որ հիմնիւր 'ի վե̃ օգնութե̃ն, զոր խոստանայր նաւակն, այս յանցանք յիմիք մասին զուգակշռեցաւ 'ի փառացն վտանգելոյ զանձն առ նաւարկութ̃ի մի իբր երկերիւր փարսախաց 'ի մէջ անծանօթ ազգաց 'ի նաւակի միում կերտեցելոյ շտապաւ դալարի փայտիւ, և ընդածեալ յանփորձ արանց առանց դարմանոց, առանց իւիք կողմնացուցի և առանց ուրուք նաւուղղի. Բայց սիրտ իւր և յաջողակութ̃ի իւր լնուլն զինչ և իցէ զայլ պակասութ̃ի. 1540 Թողլով զանձն անվեհերաբար առաջնորդութե̃ն հոսանացն, Նափո էած զնա ընդ կողմն հարաւոյ մինչև 'ի խոխոմն Ամազոնոնայ. Պարձուցանելով զինքն ընդ նմա դէպ ծովեզերն, շարունակեաց զընթացս իւր ընդ այն ուղերձումն. Յաճախակի էջ 'ի մի և 'ի միւս կողմն գետոյն, երբեմն տանելով 'ի բաց բռնութ̃ զինուց զնպարս ամենի վայրագացն, որք բնակէին յափունս նր̃, և երբեմն պաճարելով զկերակուրն միջնորդութբ̃ բարեկամական իմն զրուցատրութե̃ն ընդ մարդասիրագոյն ցեղիցն. Յետ երկայն իմն շարի վտանգաց, որոց ընդառաջ եղ սքանչելի քաջութբ̃,

Առա- [illegible] [illegible] դէպ Ամ- ազոնո- նայ:

թբ, և ձախորդութեանց, որոց հանդուրժեաց հաւասար վեհանձնութբ, էհաս յՈվկիանոսն, ուր սպասէին նմա նորանոր վտանգք. Յաղթեաց նաև այսոցիկ. և ածաւ ողջ առողջ առ կալուածն Սպանիացւոց 'ի կղզւոջն Քուպակուա. ուստի խարխուլ վերացեալ երթալ 'ի Սպանիա :

(41) ‖ Պատմութիւն Հէրրէրայ զճանապարհորդութիւն Օրէլլանայ է առաւել մանրամասն և առ երևոյթս առաւել անվթար. Այս հաւանականաբար հանեալ եղև յօրըստորեայ մատենէ նորին Օրէլլանայ. Բայց թուականք ոչ են նշանակեալք որոշակի. Նաւարկութիւն իւր 'ի խոնարհ ընդ գետն Քօքա կամ Նափօ սկսաւ կանուխ 'ի փետրվարի 1541. և ժամանեաց 'ի բերան գետոյն 'ի 26. Օգոստոսի, ծախելով գրեթէ զամիս եօթն յայնմ ճանապարհորդութեան. Տէրն Տէլաքօնտամինէ յամին 1743, առագաստ ամբարձ 'ի Քուէնքայ 'ի փարա կայան փորթուկեզաց առ բերանով գետոյն, նաւարկութիւն բազմօք երկայնագոյն քան զՕրէլլանայն. և բովանդակեաց զայս ճանապարհորդութիւն 'ի միջոցի պակաս քան զչորս ամիսս, թէպէտև էր յոյժ երկայնագոյն քան զՕրէլլանայն. Բայց երկու բաղդորդքն 'ի զանազան պատճառաց ձեռնամուխ եղեն յայնպիսի իմն ճգնորդութիւն. Այս վտանգաւոր ձեռնարկութիւն, առ որ փառասիրութիւն դրդեաց զՕրէլլանա, և սէր գիտութեան էած զՏէրն Տէլաքօնտամինէ, փորձեալ եղև յամին 1769. 'ի պարոն Կօտինու Տէս Օտօնայիսայ վասն սոսկ ամուսնոյն զգածմանն. Պատմական ճառ նեղութեանցն կրելոց 'ի նմանէ, վտանգացն, որոց գտաւ ենթադրեալ, և ձախորդութեանցն, որք դիպեցան նմա, է մի յառաւել եզական և աղէտալի վիպասանութեանց գրելոց յինչևիցէ լեզուի. Նշմարի 'ի բովանդակ գնացս իւր ապշելի իմն նկար արիութեանն, որ զանազանէ զմի սեռն խառնեալ ընդ

զգայնութեան և գորովաշէտութեան միասին : Ի Սնապարծութիւն բնական ճանապարհորդաց, որք այց առնեն աշխարհաց անծանօթից ճանաչելոյ ազգի մարդկան, և արհեստն բաղդորդի միոյ զմայլելոյ բարձրացուցանել զսեպհական արդիւնս իւր, միաբանեցան 'ի դրդել զնա խառնել զմեծ ինչ մասն զարմանալեաց 'ի պատմաբանութիւն ճանապարհորդութեան իւրոյ. Պնդէր տեսեալ զազգս այնպէս հարուստս, մինչզի յարկք մեհենից նց̃ էին ծածկեալք թիթեղամբք ոսկւոյ. և ստորագրէր զհասարակապետութիւն մի կանանց այնպէս մարտկաց և հզօրաց, մինչզի ստացեալ ունէին զտէրութիւն ընդարձակս ընդ երևելի իմն տարածութիւն բերրի դաշտաց այցարարելոց 'ի նմանէ. Որչափ և վտարանդի էին նորալուրքս այսորիկ՝ ետուն ծնունդ կարծեաց իմիք, թէ յայնմ մասին Նորոյ աշխարհի գտանիւր գաւառ մի առատացեալ ոսկւով անուամբ Էլտօրատ. և հասարակութիւն մի միաստնեաց. և այնպիսի է յօժարութիւն մարդկային սեռի 'ի հաւատալ զայն, որ է հրէշաւոր, մինչզի յամրապէս և դժուարութ̃բ բանականութիւնն և դիտողութիւն հերքեաց զայսպիսի առասպելս. Սակայն ճանապարհորդութիւն մերկացեալ ևս յինչէիցէ բանաստեղծական պաճուճանաց արժանի է յիշել լինելոյ ոչ միայն իբր զմի յառաւել յիշատակելի դիպուածոց այնր քաղքաւոր դարու, այլև իբր առաջին, որ էած առ անփոյթ ծանօթութիւն այնց անբաւ գաւառաց, որք տարածանին ընդ արևելս Անտեայցն մինչև ցՈվկիանոս :

Տառապանք Փիծարրոսի :

1540 Բառք ոչ կարեն բացատրել զշուարումն Փիծարրոսի, յորժամ ոչ եգիտ զնաւակն առ խառնումն Նափօի և Մարակնօնայ, ուր կարգաւորեալ էր Օրելլանայի սպասել նմա. Ոչ կարէր ներածիլ 'ի կասկած, թէ այրն, որում վստահացեալ էր զայնպիսի բ̃ն ծանրակշիռ հրաման, իցէ այնչափ անարգ և տմարդի մինչև բարձի ի միջի առնել զնա յայնպիսի լծակցութենէ. Բայց ընծայելով զբացակայութիւն նր 'ի անդուոջէ պայմանադրութենն անծանօթ իմիք դիպուածոյ՝ յառաջ խաղաց աւելի քան զկիսուն փարսախս առ ափամբք Մարանոնայ, սպասելով յա̃մ վայրկենի տեսանել երևիլ նաւակին նպաստի դարմանոց. Դիպեցաւ 'ի վախճանի պաշտօնատարի միում, 1541 զոր Օրէլլանա թողեալ էր կորնչիլ յանապատին. վասն այս տարաբաղդիկ կալաւ զքաջասրտութի խօսելոյ ընդդէմ հաւատադրժութեն նր. Ծանեաւ 'ի նմանէ զմեծեղեռն անօրէնութիւն Օրէլլանայ. և հետևողք իւր ծանեան 'ի նմին ժմկի զյուսահատ կայարանի իւրեանց, տեսանելով զրկեալ 'ի միակ փրկանաց իւրեանց. Պակասեաց ոգին առաւել քաջասիրտ զօրականաց. և ամենեքեան խնդրեցին՝ նոյնժամայն ածիլ յետս. Փիծծարրոս ահ̃նց վրդովելոյ զիշխա ժառութն նց. Բայց նա գտանիւր հազար երկերիւր մղոն հեռի 'ի Քուիթօէ. և յայնմ երկայնեղ ջոմի Սպանիացիք պատահեցան կոշկոճանաց մեծագունից քան զորս կրեալ էին 'ի նախկին յառաջադիմութեն իւրեանց, և ես զուրկք 'ի հրապուրիչ յուսոյ, որք քաջալերէին զնս յայնժամ և խրախուսէին առ համբերութի. Քաղցն ստիպեաց զնս կերակրիլ արմատովք և քզքօլիւք, ուտել զա̃մ շունս իւրեանց և զձիս, կլանել զառաւել զզուելի զեռունս, և կրծել մինչև զկաշի թամբից իւրեանց և զփոկ սուսերաց իւրեանց. Չորեքհազար Հնդիկք և երկերիւր տասն Սպանիացիք մեռան յայս տարաբաղդ շահատակութեն, որ տևեաց գրեթէ զամս երկուս. և զի յիսուն որք էին 'ի վր նաւակին ընդ Օրէլլանայ, ութսունք միայն դարձան 'ի Քուիթօ. Սոքա էին մերկք իբրև զվայրագս, և այնպէս հիւծեալք 'ի քաղցու և մաշեալք յաշխատութեանց, մինչզի ու-

ունէին յաւէտ զերևոյթ ցնորից քան մարդկան :

Թուէ- տմդուհ եղելոցն 'ն փէ- րուա :

Այլ փոխանակ դառնալոյ 'ի վայելել զհանգիստ, զոր պահանջէր պայման նր, փիծծարրոս ընդ մտանելն 'ի Քուիթօ ընկալաւ զլուրս իրիք դիպուածոյ, որ սպառնայր զթշուառութիւն վն նր առաւել աշխարհուս քան զայնս, ընդ որս անցել էր. 'Ի ժմկէ անտի, յորում եղբայր իւր արար զյիշատակեալ աշխարհ բաժանումն տիրապետութեանց իւրոց, յարեալքն Ալմակրոսի տեսանելով զինքեանս որպէս տարագրեալս 'ի թագաւորեալ կողմանէն, կորուսին զամ յոյս բարեգունացուցանելոյ զպայմանս իւրեանց. Յոգունք յուսահատեալք ապաւինեցան 'ի Լիմա. ուր տուն Ալմակրոսի երիտասարդին էր միշտ բաց վն նր. և ուր փոքրիկ բաժին ժառանգութեան հօր իւրոյ, զոր բդեաշխն թոյլ տայր նմա վայելել, ծախիւր 'ի տալ նր զապրուստ. Սէրն, որով ամ անձն ծառայօղ 'ի ներքոյ ծերոյն Ալմակրոսի, յարէր 'ի շահս նր, փոխաբերեալ եղև փութանակի յորդի իւր՝ հասեալ ուր ուրեմն յայրական հասակ, և որ զարդարեալ էր համօրէն որակութիւնք, որք գերեն զսէր զինուորաց. Շնորհալի տեսլեամբ, արագ և յաջողակ յամ զինուորական կրթութիւնս, ազատ՝ համարձակ և առատաձեռն՝ երևէր կերպացեալ վն հրամանատարութեան. և քանզի հայր իւր խնլամոեալ 'ի վն յատուկ վայրագունութեան իւրոյ վն բոլորովին պակասութեան դաստիարակութեան, լեալ էր ճշդիւ ուշադիր 'ի տալ զնա մարզել յամ գիտութեան պատշաճաւորի սեպուհոյ միում, ճանաչմունքն, զորս ստացեալ էր նա, աճեցուցանէին զակնածութիւն հետևողաց իւրոց. և առնէին զնա նշանաւոր և գերազանց 'ի մէջ բովանդակ այլոց բաղդորդաց. Յայսմ երիտասարդի գտին Ալմակրեանք զկէտ միաւորութեան, որում բաղձային. և նկատելով զնա իբր գլուխ իւր-

Մէ նկա- տէն վԱ. նոյնոս նէր պօ- րաղեր ն-րենց :

իւրեանց էին պատրաստ ձեռնարկել մինչեւիցէ իր վ՟ն յառաջադիմութե՟ն ն՟ր. Եւ ոչ էր միայն սէրն առ Ալմակրոս, որ յորդորէր զնոսա. այլեւ բերեալ և մղեալ էին 'ի յատուկ դժբաղդութե՟նց իւրեանց:

(42) ‖ Հերրերայ առաջի առնէ զապշելի իմն նկար կարօտութե՟ն ն՟ց. Երկոտասան սեպուհք որք լեալ էին յաստիճանի զօրագլխոց 'ի ներքոյ Ալմակրոսի, օթեւանէին 'ի նմին տան. և ոչ ունէին, բայց եթէ զմի հանդերձ, զոր կրէին փոփոխ, յորժամ պարաւանդեալ էին ելանել 'ի հրապարակ, մինչդեռ այլք մնային 'ի տան. Նախկին բարեկամք ն՟ց այնքան երկնչէին 'ի տհաճեցուցանելոյ զՓիծծարրոս, մինչզի ոչ համարձակէին կենցաղավարիլ ընդ ն՟ս. Դիւրին է 'ի միտ առնուլ, թէ որպիսի էր պայմանն և որպիսի զայրացումն արանցն, որք սովորեալ էին երբեմն առ կարողութ՟ի և առ հարստութ՟ի, յորժամ տեսան աղքատ և արհամարհեալք, առանց ինչ յարկի, ընդ որով դիցեն զգլուխ, մինչ տեսանէին զայլս, որոց վաստակ և ծառայութ՟ի ոչ էին հաւասարելի ն՟ց, կեալ յընչաւէտութե՟ն 'ի ներքս հոյակապ շինուածոց: ‖

Մասունք 'ի նոցանէ բնաւին զուրկք 'ի կարեւորէն, և տաղտկացեալք 'ի կելոյ դատարկ և 'ի լինելոյ ծանրութիւն սպարապետի իւրեանց, և այնց ընկերակցելոց, որք պահեալ էին զմնացուած ինչ բաղդի իւրեանց 'ի կողոպտմանէն և յարքունիս առնլոյն, անձկային պարապոյ 'ի գործ ածելոյ զքաջասրտութ՟ի իւր՟նց. և սկսան խորհրդածել, թէ զիարդ կարող էին քինախնդիր լինել ընդդէմ սկզբնապատճառի բովանդակ թշուառութե՟ն իւրեանց. Մեքենայութի՟ք ն՟ց ոչ անցին առանց նշմարեալ լինելոյ. և ազդ արարեալ եղև բդեշխին անձնապահ լինել ընդդէմ թշնամեաց, որք խոկային զյուսահատեալ իմն ոճիր.

Երդմնակցին ընդդէմ կենաց Փիծծարրոսի:

ձիր. և ունէին զորոշումն կատարելոյ զայն. բայց Պիծծարրոս վն քաջասրտութենն և արհամարհութեն անձանցն, զորս աղքատութիւն առնէր անընդունակս վնասելոյ նմա, անփոյթ եղև զազդարարութէ բարեկամաց իւրոց. ,, Մի հոգայք դուք (ասաց նա անխորհրդաբար) վն կենաց իմոց. այս կատարելապէս է ապահով, ցորչափ յայտնի է 'ի Պերու, թէ 'ի միում վայրկենի կարող եմ ես տալ մահ այնմ, որ միանգամ համարձակեսցի ձեռնարկել յայն ,,. Այս ապահովութիւն ետ Ալմակրեանց գլխաւոր իմն դիւրութիւն յարդարելոյ և հասունացուցանելոյ զիւրաքանչիւր մասն խորհրդոյ իւրեանց. և Յօհաննէս Հերրատայ պաշտօնատար մեծ ընդունակութե, որ յանձն առեալ էր զբեռն դաստիարակութեն Ալմակրոսի, եղև գլուխ ժողովականաց նց ամ նախանձայուզութբն, զոր այս վերաբերութի չնչէր 'ի նա, և բովանդակ աւագութբն տոճեցելով նմա 'ի գերամբարձութէն, զոր ունէր նա 'ի վերայ որդւոյ սանուն իւրոյ:

1541 Սպանութիւն նորա: 'Ի կիւրակէի 'ի քսան և վեցն Յունիսի 'ի միջօրէի 'ի ժամու հանդարտութեն և հանգստեան յամ տապացեալ կլիմայս՝ Հերրատա 'ի գլուխ ութ և տասն երդմնակցաց առեալ երեսուորաց ել 'ի տանէն Ալմակրոսի բովանդակ սպառազինութբ իւրով. և հանելով 'ի պատենէ ամենեքեան զսուր իւրեանց, մինչդեռ յառաջէին շտապաւ դէպ պալատան բդեշխին, աղաղակէին ,, կեցցէ արքայն և մեռցի բռնաւորն ,,. Ընկերակիցք նց աղդեալք յայսպիսի իմն նշանէ, եկին զինեալք առ'ի տեղակալել զանազան դիրս վն պաշտպանելոյ զնն. Թէպէտ Պիծծարրոս հասարակաբար շուրջ պատեալ էր 'ի յոգնաթիւ արբանեկաց ընտանեաց, որք պատշաճէին մեծ վայելչութեն հարստագոյն սոսկականի այնր դարու, սակայն գոլով 'ի նմին ժամու յարուցեալք 'ի սեղանոյ, և մեծագոյն մասն իւրոցն ամփոփեալք յանջրպետս իւրեանց, երդմնակիցքն անցին ընդ երկուս արտաքին գաւիթսն առանց նշմարեալ լինելոյ. Գրեթէ հասեալ էին 'ի գլուխ սանդխոցն յառաջ քան թէ պատանեակ մի, որ էր 'ի պահպանութե̃ն կարողացաւ ազդ առնել տն̃ իւրում, որ պարապէր 'ի մեծ սրահի միում ընդ ոմանց 'ի բարեկամաց իւրոց. Բդեաշխն, զորոյ զհաստատուն դէմն ոչինչ տեսիլ վտանգի կարաց երբեք խռովել, խնդրեաց զզէնսն. և հրամայեաց Ֆրանչիսկոսի Շավէսայ տալ փակել զդուռն. Բայց այս պաշտօնատար, որ ոչ կալաւ զայնքան ներկայութե̃ հոգւոյ առ'ի հնազանդիլ իսկոյն ընկալեալ հրամանին, ընթանալով 'ի սանդուխսն, եհարց ցերդմնակիցսն, թէ զի՞նչ կամէին և ո՞ւր երթային. փոխանակ պատասխանելոյ՝ ետուն նմա զհարուած մի դաշունի 'ի սիրտն. և նոյնժամայն սլացան 'ի սրահն. Ոմանք յանձանց, որք էին անդ, ընկեցին զինքեանս 'ի պատուհանիցն. այլք ջանացան փախչիլ. և սակաւք արկանելով զձեռն 'ի սուսեր՝ զհետ գնացին զօրավարի իւրեանց 'ի ներքսագոյն անջրպետն. Երդմնակիցքն խրախուսեալք 'ի ցանկութէ̃ վրէժխնդրութե̃ն, զոր շնչէր 'ի նն̃ առարկայ ատելութե̃ն իւրեանց, դրոհեցին ընդդէմ նր̃. Փիծծարրոս, որ ոչ ունէր զայլ զէնս, բայց եթէ զսուսեր և զվահան, պաշտպանեաց զմուտն. և օժանդակեալ 'ի փոքրիկ միաւորութէ̃ բարեկամացն և յազգականէ իւրմէ Ալքանթարայ մարտեաւ յանհաւասար պայքարմանն անվեհերութ̃բ իմն արժանի անցելոց քաջագործութեանց իւրոց և կորովութ̃բ մարտիկ երիտասարդի միոյ. „ Քաջալերեցարո՛ւք, գոչէր նա, քաջալերեցարո՛ւք ո՜վ ընկերք. մեք այնքան եմք տակաւին, մինչև տալ զղջանալ դաւաճանիցս այսոցիկ վս̃ յանդգնութե̃ն իւրեանց „. Բայց երդմնակիցքն պատսպարեալ էին 'ի սպառազինութէ̃ն. և

ամ

ա̃մ հարուած, զոր արձակէին նոքա, առնէր ներգործութ̃իս. Ալքանթարա անկաւ մեռեալ առ ոտս իւր. և այլ պաշտպանք իւր մնացին խոցեալ առ'ի մահ. Ինքնակալն այնպէս խոնջ, մինչև դժուարաւ կարող լինել վարել զսուսեր, և ոչ ևս ընդունակ վանելոյ զա̃մ հարուածս, որք ձգեալ էին 'ի վ̃ր ն̃ր, ընկալաւ զմահացու վէրս 'ի փողն, անկաւ երկիր, և փչեաց զոգին:

Ալմակ-
րոս ծա-
նուցանէ
ինքն ոստ-
նող ն̃ր:

Նոյնհետայն իբրև սպանաւ նա, 'ի վ̃ր յարձակողքն ընթացան 'ի դուրս ընդ փողոցսն. և շարժելով զարիւնաթաթաւ սլաքսն հրատարակեցին զմահ բռնաւորին. Աւելի քան զերկերիւր յընկերակցելոց ն̃ց լծակցեալք ընդ ն̃ս ածին զերիտասարդն Ալմակրոս զուգագնաց հանդիսիւ ընդ քաղաքն. և ժողովեալ զմեծաւորս և զնախապետական քաղաքացիս, բռնադատեցին զն̃ս ճանաչել զնա իբր օրինաւոր յաջորդ հօր իւրոյ 'ի բդեշխութ̃ն իւրում. Ապարանք Փիծծարրոսի 'ի միասին ընդ տանց զանազան յարելոց իւրոց աւար հարաւ 'ի զինուորաց, որք և 'ի նմին ժ̃մկի ստացան զհաճութ̃ի վրէժխնդրելոյ 'ի թշնամեաց իւրեանց, և փարթամանալոյ աւարօք ն̃ց, ընդ որոց ձեռսն անցեալ էր բովանդակ մեծ փարթամութ̃ին Փէրուայ:

Նոր ե-
րևոյթ
Երկրոր-
դայնոյն.

Համարձակութ̃ի և բարեդիպութ̃ի երդմնակցութ̃ն, ո̃չ և անունն և մարդաշահ որակութ̃իք Ալմակրոսի ձգեցին զբազում զինուորս առ դրօշակ իւրեանց. Իւրաքանչիւր յուսահատ բաղդորդ, ամենեքին նոքա, որք էին տժգոհ 'ի Փիծծարրոսէ, (որոց թիւ՝ յաղագս յափշտակողութ̃ն կառավարութ̃ն իւրոյ 'ի վերջին ամս կենաց իւրոց՝ էր մեծ) յայտ արարին զանձինս առանց տարակուսելոյ 'ի նպաստ Ալմակրոսի. և նա վաղվաղակի գտաւ 'ի գլուխ ութնհարիւրից 'ի քաջագոյն հին զօրականացն Փէրուայ. Երիտասարդութ̃ի իւր և անփորձառութ̃ին ոչ ընդունակացուցանէին զնա առնուլ ինքնին զհրամանատարութի՟ այնր. և վ՟ղկ կարգեաց նա զՀերրատա առնել զպարապետութի՟. Այլ թէպէտ Ալմակրոս հաւաքեալ էր փութանակի զայնպիսի մեծ իմն զօրութի՟, ոչ եղև կարելի յերիւրել ամենեցուն առ հասարակ առ կառավարութի՟ իւր. Փիծծարրոս թողեալ էր զբազում բարեկամս, որոց յիշատակ իւր սիրելի էր. խուժադուժ սպանումն առն միոյ, որում հայրենիք իւր մեծապէս պարաւանդեալ էին, ընդր զա՟մ անաչառ անձն սոսկմամբ. Վատանուն ծնունդն Ալմակրոսի, և անստոյգ հիմն, յորոյ վ՟ր հիմնէր զիրաւունս իւր, ներածէին զայլս 'ի նկատել զնա իբր զյափշտակող ոք. Պաշտօնատարք, որք հրամայէին 'ի գաւառս ինչ, ոչ կամեցան ճանաչել զաւագութի՟ իւր, մինչև ոչ հաստատէր զայն կայսրն. Յայլ տեղիս և մասնաւորաբար 'ի Քուզքօ ամբարձեալ եղև դրօշն արքունի, և արարան նախապատրաստութիւնք առ 'ի վրիժակել զանիրաւ սպանումն նախկին զօրավարի իւրեանց :

Այս սերմունք երկպառակութե՟, որք ոչ պար- 1541
տէին մնալ թմրեալ ընդ երկայն ժա՟մ, առին զմե- [illegible]
ծագոյն ոյժ և զներգործականութի՟, յորժամ [illegible]
ծանուցաւ ժամանելն Վաքայի Տէքասթրոյի. [illegible]
երկար իմն և ձախող նաւարկութե՟ ստիպեցաւ [illegible]
նա 'ի փոթորկէ իմեքէ ունել զնաւահանգիստ 'ի գաւառին Փոփայանու. և անտի յառաջ ձգեալ ընդ ցամաք, զկնի ոչինչ նուաղ դժուարին, քան թէ տաղտկալի իմն ճանապարհորդութե՟ էհաս 'ի Քուիթօ. Ճանապարհայն ընկալաւ զլուր մահուան Փիծծարրոսի և անցիցն, որք զհետ եկեալ էին այնմ. Յառաջ էած անընդմիջաբար զարքունի յանձնարարութիւն, որ կարգէր զնա բդեաշխ Փէրուայ նովին արտօնութեամբք և նովին իշխանութե՟. և իրաւաբանութի՟ իւր ծանուցեալ եղև առանց ինչ բնաւ ընդդիմակայութե՟ 'ի Պէնալ-

քա-

Որ առ-նու յինքն զիշխա-նութիւն:

քաղաքայ ատելանթատայ, կամ ընդհանուր ետեղակալէ կայսերն 'ի Փոփայան, և 'ի Պետրասէ Փուէլլէսայ, որ 'ի բացակայութեան Կոնծալոսի Փիծծարրոսի ունէր զհրամանատարութիւն զօրաց թողելոց 'ի Քուիթօ. Վաքա Տէքասթրո ոչ միայն էառ զգերագոյն իշխանութիւն, այլև եցոյց, թէ ունէր զքանքարս կարևորս վարելոյ զայն. Կազմեաց վաղվաղակի զգունդ մի զօրաց, որք ապահովացուցին զնա յամենայն երկիւղէ լինելոյ նշաւակ յարձակմանց ներհակ կողմանն. և այսու կարողացաւ մեկնիլ 'ի Քուիթօէ արժանաւորութեամբն, որ վայելէր աստիճանի իւրում. Արձակեաց անձինս մտերիմս առ զանազան կալուածս Փէրուայ հանդերձ կերպական իմն ծանուցմամբ ժամանելոյ իւրոյ և պատուիրակութեան. և ետ հաղորդել հայրենակցաց իւրոց զարքունի պատասխանագիրն նկատմամբ կառավարութեան այնր երկրի. Միջնորդութեամբ առանձին սուրհանդակաց զարթոյց զպաշտօնատարսն, որք ցուցեալ էին զտհաճութիւն իւրեանց ընդ գործն Ալմակրոսի, առ 'ի յայտնել զպարտս իւրեանց առ ինքնակալն ջատագովելով զանձն պատճեալ արքունի յանձնարարութեամբն. Յառաջ ածին այս կարգաւորութիւնք զարդիւնս մեծամեծս. Քաջալերեալք 'ի մերձենալոյ նորոյ բդեշխին, կամ նախապատրաստեալք 'ի հնարագործութեանց նորա հաւատարիմքն հաստատեցան 'ի սկզբունս իւրեանց, և վաւերացուցին զայնս յայտնապէս. երկչոտքն համարձակեցան յայտ առնել զմիտս իւրեանց. չէզոքքն և տարտամքն տեսանելով կարևոր զընտրութիւն միոյ կողման, սկսան թեքիլ առ այն, որ երևէր լինել ապահովագոյն և առաւել իրաւացի:

1542 Գնացք Ալմակրոսի:

Նշմարէր Ալմակրոս զընթաց յառաջադիմութեան ատելութեանն առ պատճառն իւր. և առ 'ի նահանջել զայն ազդողաբար յառաջ քան զժամանելն Վաքայ Տէքասթրոյի, չու արար 'ի գլուխ վաշտից

իւրոց

թիւրոց 'ի կողմն Կուսքոյի, ուր ահաւորագոյն գումարտակ ընդդիմադրաց իւրոց կանգնեալ էր զարքունի նշանս ընդ առաջնորդութեամբ Պետրոսի Ալվարեզայ Հօլկուինու. 'Ի չուի իւրում մեռաւ Հէրրատա, հանճարեղ առաջնորդն երիտասարդական հասակին իւրոյ եւ խորհրդոց իւրոց. եւ յայնմ ժամէ հետէ գործողութիւնք իւր եղեն նշանաւորք միայն բռնութեամբ իւրեանց, բայց խորհեալք սակաւ զգօնութեամբ եւ 'ի գործ եդեալք առանց յաջողակութեան. Հօլկուին զօրութեամբք բազմօք վայրագունիւք քան զհակադրեալ կողմանն իջանէր 'ի նմին ժամու դէպ ծովեզերն՝ յորժամ Ալմակրոս դիմէր 'ի Կուսքօ. Ամենապարզ իմն հնարիւ խաբեաց նա զանհմուտ հակառակորդն իւր. խուսեաց 'ի դիմագրաւութենէն եւ լծակցեցաւ երջանկաբար ընդ Ալվարատայ զօրագլխի երեւելւոյ, որ լեալ էր առաջին 'ի հանդիսանալ ընդդէմ Ալմակրոսի համարեցելոյ 'ի նմանէ իբր յափշտակող:

Յառաջնորդութիւն Վաքայ Տէքասթրօյի

Փոքր մի զկնի Վաքա Տէքասթրօ եմուտ յասպարէզ հանդերձ զօրօք իւրովք, զորս ածէր 'ի Կուիթօէ. եւ կանգնելով զարքունի դրօշն առաջի սեպհական խորանին իւրոյ՝ իմացոյց, թէ իբր բդեաշխ կամէր կատարել անձամբ զամենայն պաշտօնս սպարապետի զուգաւորեալ զինուց նոցա. Սա ըստ տարազու անցելոց կենաց իւրոց ստացեալ էր զունակութիւն նստողական եւ խաղաղական իրիք արհեստի. բայց ընկալաւ 'ի միում վայրկենի զգործունէութիւն. եւ եցոյց զհամարձակութիւն զօրագլխի միոյ սովորեցելոյ յերկար ժամաց հետէ առ հրամանատարութիւն. Ճանաչելով, թէ զօրութիւն իւր էր վերնագոյն 'ի զօրաւ քան զթշնամւոյն իւրոյ, ըղձանայր անժուժաբար աւարտել զհակառակութիւնն պատերազմաւ. եւ ոչ իսկ հետեւողք Ալմակրոսի խուսէին յայսմ եղանակէ որոշման, որովհետեւ ոչ ունէին զյոյս ընդունե-

16 Սեպտեմբերի: լոյ զներումն այնպիսի դժնեայ ոճրին, որպիսի էր ոճիր սպանման ըդեշխին. Պատահեցան միմեանց 'ի Չուփաս իբր երկերիւր մղոնաւ հեռի 'ի Քուսքոյէ. պատերազմեցան ամ՛ ամեհի սրտեռութբ՟ շնչեցելով 'ի նս՟ 'ի թափոյ քաղաքական կատաղութե՟, յոխերիմութե՟ առանձին թշնամութե՟. [illegible] զԱլմակրոս: 'ի ցանկութե՟ վրէժխնդրութե՟, և 'ի վերջին ծըգանց յուսահատութե՟. Յաղթութիւն յետ կալոյ ժ՟ երկար անբացորոշ՝ հրատարակեցաւ 'ի վախճանի 'ի կողմն Վաքայ Տէքաստրոի. Մերնագոյն թիւ վաշտից իւրոց՝ սեպհական աներկիւղութե՟ իւր, պատերազմական քանքարք Ֆրանչիսկոսի Քարվայալայ վաղեմի զօրագլխի՝ սանու մեծի զօրավարին 'ի պատերազմունս Իտալիոյ, և որ 'ի նմին աւուր էարկ զհիմն ապագայ մեծահռչակութե՟ իւրոյ 'ի Փերու, յաղթանակեցին 'ի վ՟ քաջութե՟ հակառակորդաց իւրոց, թէպէտ առջնորդելոց Ալմակրոսէ երիտասարդէ քաջասրտութբ՟ իմն արժանեաւ լաւագոյն իմիք պատճառի, և այլում՝ վիճակի. Կոտորածն եղև մեծ 'ի համեմատութե՟ թըւոյ պատերազմողացն. Նազումք յաղթելոցն, և մանաւանդ նք՟, որք գիտէին, թէ պարտէին ամբաստանիլ իբր կցորդ անիրաւ սպանութե՟ Փիծծարրոսի, գահավէժս դիմելով դէպ սրոյ թշնամեաց՝ ընտրեցին մեռանիլ զինուորաբար մանաւանդ, քան թէ սպասել վատանուն իմիք դատապարտութե՟. 'Ի հազար չորեքհարիւր արանց, որ էր բոլորական գումար պատերազմողաց ընդ մի և ընդ միւս կողմն, հինգհարիւրք մնացին մեռեալք 'ի դաշտի. և եղև ևս մեծագոյն թիւ վիրաւորելոցն:

1542 Պիժառու [illegible] դատաստանէ նորոյ: Եթէ զինուորական քանքարք ցուցեալք 'ի Վաքայէ Տէքաստրոէ և 'ի խորհրդեան և յասպարիզին շոմարեցուցին զբաղդորդսն Փերուայ, ևս առաւել ապշեցան սոքա ընդ գնացս իւր յետ յաղթութեանն. Գոլով սա խիստ բնութբ՟ իւրով, և զօև գոլով նոյնպէս խելամտեալ, թէ պիտոյ էին օրինակք արտաքոյ կարգի դժնէութեան առ ՚ի սանձել զցոփ ոգին զինուորաց այնչափ հեռի եղելոց ՚ի նախապետական աթոռոյ կառավարութեան, յառաջխաղաց իսկոյն առ դատաստան ապստամբ կալանաւորացն. Քառասունք դատապարտեցան առ ՚ի կրել զմահ մատնչաց, և այլք տարագրեցան ՚ի Փէրուայ. Զօրավար Նն, որ փախուցեալ էր ՚ի պատերազմէ, ըմբռնեալ դաւով յոմանց ՚ի սեպհական պաշտօնատարաց իւրոց, հրապարակաւ եղև գլխատեալ ՚ի Քուզքօ. և շիջաւ ՚ի նմա անունն Ալմակրոսի և ոգի պառակտմանն:

Խորհրդածութիւնք կայսերն ՚ի վերայ ընտանեաց Ամերիկոյ:

՚Ի ժամին, յորում Փէրու յուզեալ էր յայսպիսի բուռն խռովութեանց, կայսրն և գործակալք իւր կային սերտիւ պատաղեալք ՚ի նախապատրաստել զկանոնաւորութիւնս, որովք յուսային ոչ միայն վերստին հաստատել անդէն զանդորրութիւն, այլև մուծանել զկատարելագոյն իմն ոճ կառավարութեան յամենայն շինութիւնս իւրեանց նորոյ աշխարհին. Արագընթաց և տարած տիրապետութիւնք Սպանիաց յԱմերիկա ոչ էին պտուղ ազգային քաջութեան, այլ պատահական ճգանց սոսկական բաղդորդաց. Յետ հանդերձելոյ զառաջին սպառազինութիւնսն վասն ծանօթութեան պէսպէս կողմանց՝ արքունիքն Սպանիոյ առ թագաւորութեամբքն Ֆերտինանտոսի և Կառոլոսի (նա արքայ առաւել խառնակիչ դարուն և սա առաւել փափագող համբաւոյ) էին պատաղեալ ՚ի բազմապատկութեան այնչափ և այնքան առաջարկութեանց, և շաղեալ ՚ի պատերազմունս ընդ այնքան ազգացն Եւրոպիոյ, մինչզի ոչ ունէին ժամ ուշ դնելոյ հեռաւոր, կամ ոչ յոյժ ծանրակշիռ առարկայից. Աստուսա հոգն շարունակելոյ զերկրագործութիւն, կամ ձեռնամուխ լինելոյ ՚ի տիրապետութեան, թողեալ էր անհատից. որք յառաջադէմ եղեն այնքան վառմամբ յայս անսովոր ընթացս, առ որ յորդորէր

զնս

զնո նորութիւն, առասպելաբան հոգին, ագահութիւն, փառասիրութիւն, և յոյժ արժանաւորելոյ երկնից, մինչզի 'ի միջոցի նուազ քան զկէս հարիւրեակ գրեթէ բովանդակ այն ընդարձակ թագաւորութիւն, զոր Սպանիայն ժառանգէ այժմեայս 'ի Նոր աշխարհին, էր նուաճեալ ընդ տէրութբ̄ իւրով. Այլ քանզի արքունիքն Սպանիոյ ոչինչ հանգանակէին առ շահատակութիւնս, զորոց բուռն հարկանիւր վն̄ Ամերիկոյ, ոչ ունէին և ոչ իսկ իրաւունս պահանջելոյ բազում 'ի յաջողութէ̄ նց̄. Գերագոյն տէրութիւն ստացեալ գաւառացն՝ հինգերորդիւ ոսկւոյն և արծաթոյն էր վերապահեալ թագաւորութն̄. այլ ամ̄ ինչ տուեալ լինէր յընկերակցելոցն իբր պարտ իւրեանց. Աւարառութի̄ երկրացն, յորս բռնի մտանէին, ծառայէր առ 'ի հանել զվնասն այնր, զոր ծախեալ էին նոքա 'ի հանդերձանս վն̄ ծառայութն̄. և երկրաստանն բաժանիւր 'ի մէջ նց̄ ըստ կանոնացն 'ի սովորութէ̄ մուծելոց ը̄ համեմատութն̄ ծառայութեանցն, զորս իւրաքանչիւր ոք մատուցեալ էր. 'Ի սկզբան այսց կալուածոց՝ յորժամ ոչ ճանաչիւր տարածութի̄ նց̄ և ոչ գին նց̄, բազում անկանոնաւորութիւնք ոչ էին նշմարեալք. և այնզի կարևոր եղև անտես առնել, կամ կեղծելն չտեսանել զբազում անկարգութիս. Տիրապետեալ ժողովուրդք կողոպտեալ լինէին ապականիչ յափշտակողութբ̄. և երկիր նց̄ բաժանիւր 'ի մէջ նոր տեարց նց̄ Յայնչափ մասունս, այլ այնպէս տարապայմանս, մինչզի գեր 'ի վերոյ էին մեծապէս քան զբարձրագոյն մրցանակն, որ պարտէր ծառայութեց նց̄. Բիրտ տիրապետողքն Ամերիկոյ անընդունակք կերպաւորելոյ զհանրական իմն̄ հանգամանս մատակարարութե̄ վն̄ կալուածոց իւրեանց՝ ձկտեալք մեկին յառանձին օգուտ, նախադասելով զներկայ շահն այլում իմիք հեռաւորագունի, որ զեղանելոց էր 'ի հրապարական բարերարութ՟ի, ոչ պարապեցան, բայց եթէ 'ի ժողովել շտապաւ զհարստութ՟ս առանց զմտաւ ածելոյ, թէ զինչ հետեւութ՟իք կարէին լինել հանգամանացն 'ի գործ ածելոց առ'ի ստանալ զայնս. Բայց յորժամ'ի վախճանի ժամանակն հոլանեաց արքունեացն Սպանիոյ զմեծութ՟ի Ամերիկեան ստացուածոց իւրոց, յայտնեցաւ եւ կարեւորութ՟ին յարդարելոյ 'ի հիմանց զբովանդակ կերպարան նց̃. եւ փոխանակ սկզբանց եւ սովորութ՟նց, որք նախազօրացեալ էին 'ի մէջ զինւորական քաղքորդացն, համարեցաւ անտնօրինելի կացուցանելն անդէն զսահմանադրութ՟իս կանոնաւոր իրիք կառավարութ՟ն:

Յոյժ իմ՟ ախտ մասնաւոր խնդրէր զառձեռն իմ՟ ցեղ. Տիրապետօքն Մէսիքօյի եւ Փերուայ ըստ տարազու մահարեր օրինակի հայրենակցաց իւրեանց կայունացելոց 'ի կղզիսն՝ տային զանձինս 'ի յօրինել զոսկի եւ զարծաթ նովին անխոհական ագահութ՟բ. Անտի ծնանէին նոյն գործք. Ազգայինք պարապեցուցեալք յայն աշխատանս 'ի տեարց իւրեանց, որք դնէին 'ի վր̃ նց̃ զսակ, ոչ հայելով ոչ յայն, զոր կրէին նոքա, եւոչ յայն, որ որոշեալ էր առնել նց̃, տկարանային եւ փութանակի մեռանէին, այնպէս զի դոյր պատճառ երկնչելոյ, թէ Սպանիա փոխանակ ժառանգելոյ զերկիրս բազմամարդս ցայն աստիճան, մինչեւ ընդունակ լինել զարդացողական բարեգունացուցման, մնայր 'ի սուղ ժմ̃կի տր̃ համատարած իրիք անապատի:

Կայսրն եւ գործակալք իւր էին այնպէս խելամտեալ այսպիսի ճշմարտութ՟ն, եւ այնպէս հոգածուք խափանելոյ զնսպառ շիջումն Հնդկական զարմին, մինչզի ընդ. ժամանակս ժամանակս աբարան պէսպէս օրէնք, զորս կանխաւ յիշատակեցի, առ 'ի ապահովացուցանել այնց դժբաղդ ժողովրդոց զառաւել իմ՟ խոհեմական եւ զմարդասիրագոյն վարուց. Բայց տարակացութիւն Ամերիկոյ յաճոռոյ կայսերութեան, տկարութիւն կառավարութեան 'ի նոր հարգութիւնս, արծաթսիրութիւն և յանդգնութիւն զինուորաց ոչ սովորելոց առ սանձ իմն խափանէին զարդիւնս այսց փրկական կանոնաւորմանց. Չարն հանապազորդէր յաճումն. և յայնմ ժամանակի կայսրն կալաւ զանջրպետ իմն հանդստեան քիրակութեանցն Եւրոպիոյ. ուստի կարող եղև առնուլ զայն 'ի սերտ մտադրութեան:

Ըսիմէնէս ընդ ումեք տանէ խորհուրդ: Խորհրդակցեցաւ նա ոչ միայն ընդ գործակալաց իւրոց և ընդ անդամոց ատենին Հնդկաց, այլև կոչեաց զանազան անձինս, որք կացեալ էին ընդ երկար 'ի նոր աշխարհին, որպէս տացեն նմա լոյս հմտութեան փորձառութեան իւրեանց և դիտողութեան. Առ բարեբաղդութեան Ամերիկեան ժողովրդեան գտաւ 'ի մէջ նց Բարթողոմէոս Տէլասքազաս, որ դիպուածով առաքեալ էր յայնժամ 'ի Մատրիտ 'ի ժողովոյն Վ.Հիափայի. Թէպէտ զկնի ձախողակ ելից առաջարկութեանց իւրոց առ'ի սփոփանս Հնդկաց, կալեալ էր նա միշտ փակեալ 'ի վանս իւր, պարապելով 'ի կրօնաւորական պաշտամունս, սակայն նախանձայուզութիւն, զոր ունէր վն առաջնոց առարկայից բարեպաշտութեան իւրոյ, ոչ էր բնաւ նուաղեալ, այլ մանաւանդ վն ճանաչման լլկանաց նց աճեցեալ՝ ցաւագնէր առաւել բորբոքեալ եռանդիւ. Բուռն էհար անձկանօք զդիպաւորութեան վերստին կենդանացուցանելոյ զնպաստաւոր սկզբունս իւր նկատմամբ վարմանն Հնդկաց. Աղէտաշարժ ճոռոմախօսութեան բնականաւ մարդոյ, որոյ 'ի միտս տեսարանքն, զորս տեսեալ էր, առնէին զխորին իմն տպաւորութիւն, ստորագրեաց զաննորոգելի ապականութիւն մարդկային սեռի 'ի նոր աշխարհին, զարմ Հնդկային գրեթէ բոլորովին պակասեալ 'ի կղզիսն 'ի միջոցի նուազ քան զյիսուն ամս. և թէ 'ի պատրաստի էր իսկ կորնչելոյ 'ի շարունակին. Աճռական ձայնիւ մարդոյ յաղթահարեցելոյ 'ի վ՛ր ճշմարտութեն կարգադրութեն իւրոյ, վերագրեաց զայս ա՛մ միում և եթ պատճառի, այս է, հարկահանութենց և անագորոյնութենց հայրենակցաց իւրոց. և պնտեաց, թէ միակ հայթհայթանք կանխելոյ յառաջքան զանշէն լինելն Ամերիկոյ՝ էր հրատարակելն, թէ ազգայինք իւր էին ազատք, և վարելն զնո իբր հպատակս, և ոչ իբր գերիս. Այլ ոչ իսկ վստահացաւ վ՛ն բարեյաջողութեն այսր առաջադրութեն միայն 'ի ճառումութեն իւր. Առ 'ի յաւելուլ յայն զմեծագոյն իմն ուժգնութի շարադրեաց զայն համբաւաւոր 1542 ճառն իւր պատկանեալ առ եզծումն Ամերիկոյ. ուր յառաջ եբեր զայնքան սոսկալի պարակայս (թէ և առերևոյթ նշանօք դիզաբարդութեան) կործանման իւրաքանչիւր գաւառացն՝ որ այց արարել էր 'ի Սպանիացւոց:

Կայսրն գորովեցաւ ուժգին առ պատմական ճառն այնքան անիրաւ գործողութենց առ մարդկային սեռն. այլ զի դիտմունք իւր տարածանէին անդր ևսքան զԱւքաղայն, իրազեկ եղև, թէ թեթևացուցանելն զՀնդիկս 'ի ճնշմանէն լինէր նշ՟ սակաւ կամ ոչինչ օգուտ 'ի ստացեալ կալուածս իւր 'ի Նոր աշխարհին, երբ ոչ կոպարաւորէր նա զկարողութի և զյափշտակութիս յատուկ հպատակաց իւրոց. Այլ տիրապետիչքն Ամերիկոյ որչափ և ունէին զմեծ երախտիս առ հայրենիս իւրեանց՝ էին մեծագոյն մասամբ անձինք այնպէս ցածազգիք և այնպիսի անկած պայմանի, մինչև ոչ արժանաւորիլ զանազանութեն իմիք յաչս միապետի միոյ. Տարապայման հարստութին, որով ոմանք 'ի նոցանէ վերադարձեալք էին, շրտոյց 'ի դարու միում ոչ սովորեցելոյ տեսանել զմարդիկ յոչինչ ամբարձեալս 'ի վ՛ր աստիճանի իւրեանց և մեծացեալս առ'ի նախանձաւորիլ և գե-

[illegible]

բազանցել շրով զնախկին ազնուականութիւն. Երկրաստանք, զորս զօրավարք իւրեանց յատկացուցեալ էին ինքեանց, էին այնպիսի անբաւ տարածութիւն, մինչզի յորժամ երկիրն լինէր բարեգունացուցեալ, ըստ համեմատութեան բերրիութեան հողոյն, պարտէին եղանիլ նոքա առաւել հարուստք և հզօրագոյնք 'ի մէջ հպատակաց իւրոց :

(43) ‖ Հերրերա առաւել խնամոտն 'ի Սպանիացի վիպասանից հաստատէ, թէ Կոնծալոս Փիծարրոս ստացեալ ունէր զտէրութիւն մերձ 'ի Հուքուէսաքայ Տէլափլաթայ, որք պտղաբերէին նմա զտարեկան մուտս մեծագոյն քան զԱրքեպիսկոպոսինն Թոլետոյի. որ է աթոռ լաւագոյն օժտեալ յԵւրոպիա : ‖

Երեւէր Կառոլոսի, թէ այս զեղծումն պահանջէր զդեղ իմն ոչինչ նուազ քան զմիւսն. և թէ կանոնաւորմունքն նկատմամբ երկոցունցն զօրանալոց էին սեռիւ իւիք կառավարութեան խստագունիւ քան զոր միանգամ մուծեալ էր ցայնժամ յԱմերիկա :

Նոր կանոնաւորութիւնք այսր կառավարման :

Այսու դիտմամբ կերպաւորեաց նա զմատեան մի օրինաց պարունակող բազմաց փրկարար յօդուածոց վերահայեցմամբ սահմանադրութեան և իշխանութեան գերագոյն ատենին Հնդկաց, գերամբարձութեան և իրաւաբանութեան արքունի ունկնդրութեանց 'ի զանազան մասունս Ամերիկոյ, մատակարարութեան արդարութեան և կարգի կառավարութեան եթէ եկեղեցականի և եթէ քաղաքականի. Այսոքիկ վկայեալ եղեն յանձանց երեւելագունից. Բայց 'ի միասին ընդ այսոցիկ եկին 'ի դուրս հետեւեալ կարգաւորութիւնքս, որք զարթուցին զընդհանուր արհաւիրս և պատճառեցին պըռնագոյն յուզմունս.
„ Թէ վասն բաշխմունք կամ բաժանմունք երկ-
„ րացն առելոց 'ի զանազան անձանց երեւէին չա-
„ փազանցք, արքայական ունկնդրութիւնքն աւա-

դա-

,, գացուցեալ էին առ'ի վերածել զայնս առ չափաւոր իմն տարածութի. թէ 'ի մահուան որոյ և իցէ տիրապետողի կամ մշակողի՝ գետինք և Անգլիկք շնորհեալք նմա մի անցանիցեն առ այրին իւր, և ոչ առ որդիս իւր. այլ վերադարձցին առ Թագաւորութիւն. թէ Անգլիկք լինիցին առ յապայն զերծք յանձնական ծառայութէ. և ոչ ևս բռնադատիցին առ'ի տանիլ զկարասիս ճանապարհորդաց, առ'ի աշխատիլ 'ի հանքս կամ տաժանիլ յորս մարգարտաց. թէ հաստատեսցի սակ, որ պարտի 'ի նոցանէ առ վերնագոյն իւրեանց. և թէ վճարեսցին իբրև զծառայս վն ամ գործոյ, որ կատարիցի 'ի նոցանէ. թէ բոլոր անձինք, որք էին կամ լեալ էին 'ի հրապարական պաշտօնս, եկեղեցականք, կամ այլ զինչ իցէ անուանակոչութի, հիւանդանոցք, և մենաստանք զրկեսցին յերկրացն և 'ի Անգկացն շնորհելոց նց և միայարելեաց ը Թագաւորութեն. թէ իւրաքանչիւր անձին 'ի փէրու, որ կալցէ իցէ զքրէական ինչ կցորդութի 'ի վէճսն ընդ փիծծարրոս և ընդ Ալմակրոս, առցին յարքունիս գետինքն և Անգլիկք: ,,

Բովանդակ գործակալք Սպանիացիք, որոց հաստատեալ էր մինչև ցայնժամ ուղղչութի իրակութեանց Ամերիկոյ, և որք լաւագոյն տեղեակք էին իրաց այնր աշխարհին, խօսեցան ընդդէմ այսց կանոնաւորութեանց իբրև վնասակարաց նորածնեալ հարդունութեանց իւրեանց. Առաջին առարին, թէ թիւ Սպանիացւոց անցելոց 'ի նոր աշխարհն՝ էր այնպէս փոքրիկ, զի ոչ էր նց կարելի մշակել զընդարձակ գաւառսն, ընդ որս գըտանէին սփռեալք. թէ յաջողութի ամ գաղափարի առ այս վախճան կախէր 'ի սպասաւորութէ և 'ի ծառայութէ Անգկաց. որոց ոչ ակնկալութի բարեխաղութեն, և ոչ խոստումն վար-

Գործակալք էին ընդդէմ կանոնին այնմ:

ձու կարող էին յաղթել բնական անհոգութեան և ատելութեան առ աշխատանս. թէ 'ի վայրկենին, յորում բառնիւր 'ի հարգունականացն իրաւունքն գնելոյ 'ի վերայ զհարկ իմն և պահանջելոյ զվճարումն նորա, ամենայն գործ ճարտարութեան գադարէր, և փակեալ լինէին մշտնջենաւորապէս ամենայն աղբիւրք. յորոց գանձք սկսանէին ծփոլ ընդ Սպանիա. Բայց Կառոլոս պինդ յարաժամ 'ի սեպհական կարծիս իւր, և կամեցեալ 'ի գործ դնել ևս վտանգաւորագոյն դեղս ընդդէմ անկարգութեանցն, զորս տեսանէր ներգործաբար թագաւորել յԱմերիկա, պնդեցաւ 'ի բացորոշութեան իւրում հրատարակելոյ զօրէնս իւր. և որպէս կատարեսցին մեծագոյն ուժգնութեամբ և աւագութեամբ՝ սահմանեաց զՖրանչիսկոս Թէլլօ Սանտովալ երթալ 'ի Մեքսիկօ իբրև այցելու և վերատեսուչ այնր երկրի, և լինել գործակից 'ի տալ պահել զայնս 'ի միասին ընդ փոխարքայի Անտոնիոսի Մէնտօծծայ. Անուանեաց զՊլասքօ՝ Նուկնէց Վէլայ բդեաշխ Փէրուայ հանդերձ պատուանուամբ ևս փոխարքայի. և առ'ի տալ առաւել ուժգնութեան մատակարարութեան իւրում կանգնեաց զերաստ ինչ արքունի ատենադրութիւն 'ի Լիմա. ուր չորք յառաւել դերաղանց օրինագիտաց պարտէին նստիլ իբր դատաւորք:

Փոխարքայ Դ յարգէլ զն Փէրուայ :

1544 Փոխարքայն և վերադիտողն մեկնեցան երկոքեան 'ի նմին ժամանակի. և ծանօթութեամբ օրինացն, զորս նոքա պարտէին տալ պահել, էհաս յԱմերիկա յառաջքան զնոսա. Մուտն Սանտովալայ 'ի Մեքսիկօ նկատեալ եղև իբր նախերգանք հանրական կործանմանն. Ընկոպար շնորհումն ազատութեան Հնդկաց դառնացուցանէր անխտիր զամենայն Սպանիացիս յԱմերիկա. և ոչ եղև ոք անդ, որ ոչ տրտնջէր զայնմանէ. Բայց կողոնիայն նորոյն Սպանիոյ էր այնպէս յերկայն ժամանակաց սովորեալ լծոյ օրինաց և իշխանութեան ընդ հաստա-

Արգէլանք յանանատարարէլանն 'ի նորին Սպանիա :

տուն և խոհական մատակարարութ՟բ Մէնտօծծայի, մինչզի որչափ և հոգին Նոր սահմանադրութենց դարովեալ լինէր և երկուցեալ, ոչ հետամուտ եղև խափանել զհրատարակումն նոցին. Այլ մեծաւորք և նախապետական բնակիչքն ներկայացուցին իւրաքանչիւր զյետկարս առ փոխարքայն և առ վերադիտողն, բացադրելով զմահաբեր հետեւութիւն, որք ծնանելոց էին 'ի տարոյն զօրել զայնս բռնութ՟բ. Երջանկաբար վնզ՟՝ Մէնտօծծա յաղագս ընդ երկար նստելոյ իւրոյ յայնմ երկրի՝ ամբողջապէս տեղեկացեալ էր կայաւորութ՟ն նր՟. և գիտէր զայն, որ էր 'ի շահ նր՟, և զայն, որում կարէր հանդուրժել. և Սանտովալ թէպէտև նոր 'ի պաշտօնի, ցուցանէր զստոյգ իմն չափաւորութի, որ հազիւ երբէք ստացեալ լինի յանձանց յորժամ մտանեն 'ի վարել զիշխանութին. Պիմագրաւ եղեն երկոքեան խափանել առ ժամանակ մի զայն, որ էր վնասակար 'ի նոր օրէնսն. և ոչ միայն համախոհ եղեն առաքելոյն յԵւրոպիա զպատգամաւորութի մի քաղաքացւոց առ 'ի բացադրել կայսերն զերկիւղս հպատակաց իւրոց 'ի Նորն Սպանիա նկատմամբ ստացուածոց իւրեանց, այլև զուգընթաց եղեն ընդ նոսա առ 'ի հաստատել զկարծիս նց՟. Կառոլոս շարժեալ 'ի կարծեաց արանցն, որոց ընդունակութեն և պատճականութեն անկ էր վճռահատել զայնմանէ, որ անընդմիջաբար անկանէր ընդ ակամբք նց՟, մեղմացոյց սակաւ մի զխստութի օրինացն. և հաստատեաց անդրէն զհարգունութին յառաջին անդորրութեն իւրում:

'Ի փէրու կերպացաւ փոթորիկ մի ևս առաւել ամեհի. և ոչ եղև հնար ցրել զայն այնքան դիւրութ՟բ. Տիրապետողքն փէրուայ բազմօք վայրագոյնք աստիճանաւ քան զնս, որք նուաճեալ էին զՄէքսիկօ ընդ թագաւորութեն Սպանիացւոց, և յոյժ առաւել հեռի յաթոռոյ կառավարութեն,

'Ի փէրու.

և յիմարեալք վ̃ն յանկարծ ստացման հարստութ̃են՝ տանէին յառաջ զբովանդակ գործողութիւս իւրեանց մեծագոյն ցոփութ̃բ և անկանոնութ̃բ քան զայլ զինչ լիցի՝ խումբ բազմորդաց 'ի Նոր աշխարհին. 'Ի մէջ ընդհանուր տապալման օրինաց և կարգի՝ պատճառեցելոյ յերկուց մի զկնի միոյ քաղաքական պատերազմաց, յորժամ իւրաքանչիւր անհատ էր յազատութ̃ն վճիռ հատանելոյ վ̃ն անձին իւրոյ առանց այլոյ առաջնորդի բաց 'ի սեպհական շահու իւրմէ և կրից՝ ամբարձաւ այս հոգի խռովալից 'ի վերոյ քան զամ̃ ստորակարգութ̃ի. Արդէն այնպէս ապականելք յանիշխանութ̃է ոչ կարէին ենթադրիլ, բայց եթէ ընդդիմամարտութ̃բ՝ ներածութ̃ն կանոնաւոր երից կառավարութեան, և իշխանութ̃ն փոխարքայի և աւագութ̃ն ակնածելի երից ատենի դատաւորութ̃ն, որք պարտէին լինել նոցա անհանդուրժելի. Այսիկ մրմռային 'ի խորհիլն, թէ պարտէին հնազանդիլ օրինաց, յորոց մերկացեալ էին 'ի միում վայրկենի յայնմ ամենայնէ, զորս ստացեալ էին այնպիսի դժուարութ̃բ յայնքան ամս ծառայութ̃ն և չարչարանաց. Ափսեցաւ ծանօթութիւն նոր սահմանադրութեանցն սակաւ առ սակաւ ընդ զանազան հիմնարկութիւնսն. և բնակիչք ընթացան 'ի միասին, կանայք արտասուօք յաչս, արք աղաղակելով ընդդէմ անարդարութեան և ապերախտութ̃ն ինքնակալին իւրեանց, որ զրկէր զնոսա 'ի ստացուածոց իւրեանց առանց ունկնդիր լինելոյ նոցա և առանց ինչ յանդիմանեալ յանցանաց նց̃.
„ Ո՞ւր է (գոչէին նոքա) փոխարէնն որ պար-
„ տէր զօրականաց, որք առանց հրապարակաւ
„ օգնականութ̃ն ծախուք իւրեանց և սեպհա-
„ կան քաջութեամբ իւրեանց ենթադրեցին թա-
„ գաւորութեանն 'Կասթիլիոյ զայնպիսի մեծա-
„ տարած և ընչաւէտ երկրաստանս. Այսոքի՞կ

„Են վարձք տուեալք, որոց կրեալ են զանհաւատալի աշխատութիւնս, և պատահեալ ամենայն ազգ վտանգաց 'ի ծառայութեան հայրենեաց իւրեանց. Այլ ո՞ է 'ի միջի մերում, որ ունիցի զայնպիսի մեծ արդիւնս, և որոյ գնացք լեալ իցէ այնպէս անըստգտանելի, զի ոչ կարիցէ դատապարտիլ 'ի պատժական փակեղակէ իմեքէ այսոց կանոնաւորութեանց յօդելոց այնպէս պաճուճեալ և այնպէս պարփակողական եզերոք, որպէս եթէ լինէին ուղղեալք առ 'ի ըմբռնել զմեզ զամենեսեան 'ի ցանցս. Ամենայն Սպանիացի համբաւաւոր իւիք 'ի Փէրու, որ մատակարարեալ է զհրապարական ինչ պաշտօն, ստիպեցաւ ունել զմի կողմն ներգործական 'ի վէճսն 'ի մէջ երկուց գլխոցն տարփակցաց. Ուրեմն պա՞րտին առաջինքն զրկիլ 'ի յատկութէ իւրեանց վասն առնելոյ զպարտականութիւն իւրեանց. Պա՞րտին երկրորդքն պատժիլ վասն կատարելոյ զայն, յորմէ ոչ կարէին խորշիլ. Տիրապետողք այսպիսի մեծի թագաւորութեան փոխանակ ընդունելոյ զնշանս խտրութեան, կորուսցեն նոքա զբնական քաջալերութիւնն դարմանելոյ զայրիս և զորդիս իւրեանց, և թողցեն զնոսա կախիլ վասն ապրստի իւրեանց 'ի տառապեալ անձկացն, զորս կարասցեն ընդունել յանգութ արքունականացն. Մեք չեմք այլևս յարմարք, (շարունակէին նոքա,) առ 'ի գտանել ըզնորանոր կողմանս և առ 'ի նախահոգալ մեզ զառաւել ապահով կալուածս. Ոյժ մեր տկարացեալ 'ի ծերութենէ, մարմինք մեր լցեալ վիրօք ո՛չ ևս թողացուցանեն ըզմեզ ծառայել. բայց ունիմք զօրութիւն բաւական ջատագովելոյ զարդար իրաւունս մեր և ոչ հանդուրժեսցուք կողոպտիլ յայնցանէ։“

Այս

Յուսահա-
տէին ցա-
ծուցել
'ի չափա-
ւորութե
Տեքսա-
նոյք:

Յայս տեսակ տրամաբանութեանց արտասանելոց սաստկութբ և լսելոց ընդհանուր գովութբ կիրք նց բորբոքեցան յայնպիսի բարձր աստիճան, մինչզի բոլորեքեան էին պատրաստեալք առ բռնագոյն հանգամանս. և սկսան առնուլ խորհուրդս 'ի պէսպէս տեղիս, թէ զիա՞րդ ընդդիմադրեսցին մտից փոխարքային և դատաւորաց, և խափանեսցեն ոչ միայն զկատարումն այլև զհրատարակումն նոր սահմանադրութեանցն. Սակայն նահանջեցան 'ի առնելոյ զայն 'ի յաջողակութէ Ալքա Տեքասմրոփի, որ ամոքէր զնս յուսով, թէ իսկոյն ընդ հասանելն փոխարքային և դատաւորաց, և ունելն ժամ քննելոյ զխնդիրս նց՝ զուգընթաց լինիցին ընդ նս առ'ի նախահոգալ զմեղմացումն ինչ խստութե օրինացն, որք արարեալ էին առանց պարտու պատշաճ մտադրութե կամ առ որպիսութի երկրին կմ առ զգացուածս ժողովրդեանն. Պիտէր յարմարիլ սոցա կերպիւ իւք և զիջանիլ սակաւ ինչ 'ի կողմանէ կառավարութեն առ 'ի հանդարտեցուցանել զներգործական խմորումն. և առ'ի վերածել զհարգունակսն 'ի դէպ էր շնչել 'ի նս զվստահութի 'ի վերնագոյնս իւրեանց. Բայց առանց խորին իմն ընտրողութե, առանց աղնճական հաշտեցուցիչ հանգամանաց և առանց դիւրադարձութե բարուց ոչ կարէր արդիւնանալ այսպիսի իմն գաղափար. Փոխարքայն ոչ ունէր ինչ յայսց արտօնութեանց. Յամ որակութեանց, որք ընդունակացուցանեն զմարդիկ գերագոյն հրամանատարութի, ճոխացեալ էր նա միայն անկեղծութբ և քաջասրտութբ. բայց առաջինն էր յամառ, հաստատուն, կամ մանաւանդ անընդգծելի. և երկրորդն այնպէս ստէպ մատչէր առ յանդգնութի և առ կամակորութի, մինչ զի 'ի կայաւորութեան իւրում որակութիք այսոքիկ երևէին պակասութիք յաւէտ քան առաքինութիք. 'Ի վայրկենէն, յորում եհաս ի

Փոխար-
քային ա-
ճեցուցա-
նէ ըդ-
գին պա-
գոհանէ:

Թուամ-

Թումպէց, երեւի, թէ Սուկրէց Մէլա նկատէր զանձն լոկ իբր պաշտօնեայ ամ̃ գործադրիչ՝ պարաւանդեալ առ 'ի տալ կատարել զարքունի հրամանսն և ոչ առ 'ի եղանակաւորել զայնս. և ոչ հայելով բնաւ յայն, զոր տեսանէր ինքն, կամ լսէր նկատմամբ կացութեն երկրին, կայր յարեալ անյողդողդ իմն խստութբ 'ի նկարագիր կանոնաւորութեցն. Զամ̃ քաղաքս, ընդ որս անցանէր, ազգայինք հրատարակեալ էին ազատք. ամ̃ անձն պարապեալ 'ի հրապարական պաշտօնի զրկել էր 'ի գետնոց և 'ի ծառայից. և առ 'ի տալ այլոց զօրինակ ինչ հնազանդութեն՝ ոչ թողացուցանէր նա և ոչ իսկ, թէ Հնդիկ ոք բնաւ տացէ ձեռն 'ի տանիլ զկարասիս իւր 'ի չուման իւրում դէպ Լիմայի. Զարհուրանք և պակուցումն յառաջէին քան զնա ուր և մերձենայր. և այնպէս սակաւ փոյթ էր նմա զայսպիսի իրաց, մինչզի մտանելով 'ի մայրաքաղաքն, խոստովանեցաւ հրապարակաւ, թէ գայր առ 'ի հնազանդել հրամանաց արքային իւրոյ, և ոչ թէ տնօրինել յօրինաց իւրոց. Այս յայտարարութի յընկերակցեալ լինէր յայնմանէ, որ առնէր զայն առաւել ևս անտանելի. այս է, 'ի գոռոզութէ բերմանն, յամբարհաւած իմն և վճռահատական եղանակէ, 'ի ժպրհութէ 'ի կատարմունս պաշտօնի իւրոյ անհաճոյ մարդոց սակաւ սովորելոց ակնածել զքաղաքական իշխանութին. Զամ̃ թեակոխութին, որ ջանայր խափանել կամ մեղմել զնոր օրէնսն, փոխարքայն նկատէր իբր յառաջեկեալ 'ի հոգւոյ իմեքէ դժգոհութեն, որ դիմէր առ ապստամբութի. Բազում անձինք երևելիք բանտարկեալ եղեն. և այլոց ոմանց տուաւ մահ առանց ինչ կերպի դատաստանի. Աքա Տէքասթրօ կալանաւորեցաւ, և ոչինչ ընդիմակայելով արժանաւորուի ատեանին իւրոյ՝ ծանրաբեռնեցաւ շղթայիւք և փակեցաւ 'ի հասարակց բանդին։

1544 Այլ որչափ և հանրական էր տհաճութիւն այսպիսի իմն յառաջխաղացման, հաւանական է, թէ ձեռն աւագութեն լեալ էր բաւական հզօր առ 'ի խափանել նց ոչ բրդիլ 'ի յայտնի իմն բռնութիւն, եթէ տժգոհքն ոչ էին նախահոգացեալ ինքեանց զառաջնորդ մի համբաւաւոր և հզօր առ 'ի ուղղաւորել զթևակոխութիս նց. 'Ի վայրկենէն, յորում գիտացեալ եղև զօրութի նոր կանոնաւորութեցն 'ի Փէրու, իւրաքանչիւր Սպանիացի դարձոյց զաչս առ Կոնծալոս Փիծծարրոս իբրև առ անձն միայն ընդունակ կանխելոյ կործանմանցն, որք սպառնացեալ լինէին հարգունութեն. Նամակք և պաղատանք առաքեալ էին առ նա յամ կողմանէ յանձանց, ոյք աղաչէին զնա առնուլ յանձն զպաշտպանութի հասարակաց դատին, և որք անձնամատոյց լինէին առ'ի պահպանել զնա ընչիւք և կենօք իւրեանց. Կոնծալոս թէպէտև 'ի սեռի քանքարաց վայրագոյն քան զայլ եղբարս իւր, էր իբրև զնոսա փառասէր և համարձակ հաւասարապէս. Յածէին հանապազ ընդ ուշ նորա վարմունք արքունեացն Սպանիոյ առ ինքն և առ եղբարս իւր. Փէրտինանտոս կալանաւորել 'ի տրուէն յԵւրոպիա, որդիք բդեշխին ընդ պահպանութբ փոխարքային, որ յուղարկեալ էր զնս 'ի վր նաւահանգիսին, և նոյնինքն վերածել առ պայման սոսկական քաղաքացւոյ միոյ յաշխարհի միում, վն որոյ գտման և տիրապետութեն Սպանիա պարտական էր տոհմի նորա. Այս խորհուրդք դրդէին զնա առ վրէժխնդրութի և առ պաշտպանութի իրաւանց տան իւրոյ. որոյ նկատիւր իբր պաշտպան և ժառանգ. Այլ քանզի Սպանիացիք դժուարաւ յաղթեն յարգանացն, որով ծնանին, առ ինքնակալ իւրեանց, խորհուրդն միայն առնլոյ զէնս ըդէմ արքայական դրօշին լցոյց զնա սոսկմամբ. Վարանեցաւ նա ընդ երկայն ժամանակ, ոչ դի-

տելով

ծելով յոր կողմն որոշել. բայց բռնութիւնք փոխարքային ընդհանուր հրաւէր հայրենակցաց իւրոց և ստուգութիւն լինելոյ վաղվաղակի ինքն իսկ զոհ խստութեան նոր օրինացն շարժեցին զնա թողուլ զբնակութիւն իւր 'ի Քհուքուիսաքա Տէլա Փլաթայ և փոխաբերիլ 'ի Քուսքօ. Բովանդակ բնակիչք ելին 'ի դուրս առ 'ի ընդառաջ ելանել նմա. և ընկալան զնա բերկրապատար հրճուանօք իբր զազատիչ հարգունութեան իւրեանց. Յեռանդեան նախանձայուզութեան իւրեանց ընտրեցին զնա հանրական հոգաբարձու Սպանիական ազգին 'ի Փէրու առ 'ի փոյթ ունել յետս կոչման վերջին կանոնաւորութեանցն. Ետուն նմա իշխանութիւն ներկայացուցանելոյ զգանգատանս իւրեանց առաջի արքունի ունկնդրութեանն 'ի Լիմա. և ընդ պատրուճակաւ վտանգի 'ի կողմանէ Հնդկաց կամեցան չու առնել նմա անդր զինուք. Ըմբացեալ այսու անուամբ Փիծծարրոս տիրացաւ արքունի գանձուն, կարգեաց պաշտօնատարս, յարոյց զինուորս, եառ զմեծ ինչ հետեւանս թնդանօթաց, զոր Վաքա Տէքասթրօ յաւանդ տուեալ էր 'ի Կուամանկնա. և ել գնաց 'ի Լիմա, որպ̃ եթէ յառաջխաղայր ընդդէմ հրապարական թշնամեոյ ումեք. Սուրուրեմն առեալ զկանոնաւոր իմն կերպ, և գոլով տժգոհութիւն ջատագովեալ յայնպիսի նշանաւոր անուն գլխոյ միոյէ՝ բազում անձինք համբաւաւորք գրեցան ը̃ դրօշակաւ նր̃. և երեւելի մասն ինչ զօրաց գումարելոց 'ի փոխարքայէ առ 'ի ընդդիմադրել յառաջադիմութեանց նորա՝ հատուածեցաւ խմբովին և միաւորեցաւ ընդ իւրոցն :

Յառաջքան զհասանելն Փիծծարրոսի 'ի Լիմա՝ եղեալ էր անդէն խռովութիւն ինչ, որ քաջալերեաց զնա յառաջխաղալ գրեթէ ստուգութեամբ յաջողելոյ. Բռնաւորութիւն մատակարարութեան փոխարքային ոչինչ նուազ էր զարհուրելի

Տարաձայնութիւն փոխարքային և ատենին ունկնդրութեան.

բելի Սպանիացւոցն 'ի փէրու, քան որչափ էր ատելի ամբարտաւանութ՟ի իւր դատաւորացն արքունի ունկնդրութ՟ն պաշտօնակցաց իւրոց. Կանխաւ իսկ երեւեալ էին նշանք ինչ ցրտութ՟ն 'ի ժամանակի ճանապարհորդութ՟ն ն՟ց 'ի Սպանիոյ. Բայց իսկոյն իբրև մտին 'ի վարումն իւրաքանչիւր պաշտօնից իւրեանց՝ եղեն երկոքին կողմանք այնպէս դառնացեալք 'ի յաճախ հակառակութ՟նց յառաջ եկելոց 'ի զանցմանէ իրաւաբանութենն, և 'ի ներհակութենէ կարծեաց, մինչզի փոխադարձ գժտմութ՟ի ն՟ց եանց 'ի յայտնի իմն թշնամութ՟ի. Դատաւորք ընդդէմ դառնային փոխարքային յա՟մ իրողութ՟իս, տային ազատութ՟ի կալանաւորաց, արդարացուցանէին զդժգոհսն. և գովէին զբողոքս ն՟ց. 'Ի ժամանակին, յորում երկու բա-

1544 ժանմունք կառավարութենն պարտէին երթալ միաբան ընդդէմ թշնամւոյն, որ մերձենայր, կային 'ի վէճս 'ի վ՟ր վերնագունութ՟ն միոյն առ միւսն.

Փոխար- 'Ի վախճանի նախազօրացան դատաւորք. Փո-
քայն խարքայն նշկահեալ ընդհանրապէս և բարձի թո-
Բանտար ղի եղեալ ևս և 'ի սեպհական պահապանաց իւ-
կեալ րոց՝ արգելեալ 'ի պալատան իւրում. և ածաւ 'ի
18. Սեպ- կղզի ինչ անբնակ առ ծովեզերբն առ'ի պահել
տեմ. անդէն՝ մինչև եղիցի դիւրութ՟ի վերառաքելոյ զնա
'ի Սպանիա։

Գոնզ- Դատաւորքն յետ այսորիկ առեալ յինքեանս զգե-
ալոս րագոյն առաջնորդութ՟ի ա՟մ իրակութ՟նց՝ առա-
Փիծծար- քեցին արտաքս զքարոզ իմն, որ 'ի կալս թողայր
րոս։ զկատարումն օրինացն, որք անհաճոյ էին հպատակաց, և զպատգամաւոր մի առ փիծծարրոս, պատուիրելով նմա, որովհետև արդէն շնորհել էին նմա զոր ինչ միանգամ խնդրեալ էր, 'ի բաց թողուլ զզօրսն, և երթալ 'ի Լիմա վեշտասան կամ քսան արամբք 'ի հետևողաց իւրոց. Դժուարաւ կարէին նոքա սպասել, թէ այր մի այնպէս փառասէր և համարձակ կամիցի առնել այս-

պիսի իմն ազդման. Հաւանականաբար այս ոչ եղև արարեալ այսու դիտաւորութեամբ. այլ միայն առ'ի զքօղել զգնացս իւրեանց. որովհետև Ձեփէտա գահերէցն արքունեացն ունկնդրութեան ոչինչ ընդհատ փառամոլ քան զնա՝ երևի, թէ կալեալ էր զգաղտնի իմն պատասխանակցութիւն ընդ Փիծծարրոսի, և բազմօք յառաջ կերպաւորեալ զգաղափարն, զոր յետոյ 'ի գործ եդ, նուիրելոյ զանձն 'ի ծառայութիւն իւր. Բանտարկութիւն փոխարքային, յափշտակութիւն դատաւորաց 'ի միասին ընդ հանրական շփոթութեանն և անիշխանութեանն՝ հետևանք այսպիսի եղական և անակնկալ դիպուածոց՝ բացին զընդարձակագոյն իմն դաշտ ակնկալութեանցն Փիծծարրոսի. Տեսանէր նա զգերագոյն իշխանութիւն 'ի ձեռս իւր, և ոչ պակասէր նմա սրտեղութիւն մղելոյ յառաջ դէպ առարկային, զոր բաղդն առաջի առնէր տեսութեան նորա. Քարվայալ՝ ոգի բացորոշութեանց իւրոց և առաջնորդեալ գործողութեանց իւրոց յերկար ժամանակաց հետէ յառեալ էր զաչս յայն իբրև առ միակ նպատակ, յոր պարտէր դիմել Փիծծարրոս. Փոխանակ վայրագոյն պաշտօնի հոգաբարձուի վասն կայունութեանցն Սպանիացւոց 'ի Փերու՝ խնդրեաց յայտնապէս լինել բդեաշխ և ընդհանուր պետ բովանդակ գաւառին. և մատոյց աղաչանս առ արքունիսն ունկնդրութեան, զի տացի նմա յանձնարարութիւն վասն այսպիսի գործոյ. Այսպիսի խնդիր առն միոյ գլխաւորի հազար երկերիւր արանց հեռի մղոն մի 'ի Լիմայէ, ուր ոչ գոյր ոչ զօրավար և ոչ զօրք ընդդէմ դնելոյ նմա՝ բերէր ընդ իւր զաւագութիւն հրամանի. Բայց դատաւորքն՝ կամ ոչ կամելով 'ի բաց թողուլ զիշխանութիւն, կամ փափագելով պահել զառերևոյթս՝ վարանեցան, կամ ցուցին վարանիլ շուրջ զանսալով այնմ. Քարվայալ ապաժոյժ յապաղման և ուժգնյարձակ յամենայն գործս իւր դիմեաց

զիշեգիշերայն 'ի ներքս քաղաքին, կալաւ զանազան նշանաւոր պաշտօնատարս հակառակս Փիծծարրոսի, և առանց կերպի իրիք դատաստանի ետ կախել զն՟ն. 'Ի հետևեալ առաւօտուն երասան ունկնդրութիւն հրատարակեաց զյանձնարարութիւն ինչ յանուն Թագաւորին, որ կարգէր զՓիծծարրոս բդեաշխ Փէրուայ հանդերձ լիակատար քաղաքական և զինուորական իշխանութ՟բ. և նա եմուտ 'ի քաղաքն 'ի նմին աւուր տարակարգ իմն շքով առ'ի առնուլ զժառանգութիւն նոր արժանապատուութեան իւրոյ:

[illegible]

28 [illegible] փէտ.

Բայց 'ի մէջ անկարգութեան և խռովութեանց, որք ընկերեցին այսմ բոլորական քակտման շինուածոյ կառավարութեան, մինչ մարդկան արձակեալ 'ի կարգաւոր սանձէ օրինաց և իշխանութեան՝ գործէին այնպիսի վտարանդի անկարգութ՟բ, մինչզի հետևեցան յայնմանէ դիպուածք անսովորք և անակնկալք. Փիծծարրոս հազիւ սկսեալ էր վարել զնոր իշխանութիւն իւր, զոր զգեցեալ էր, յորժամ ետես յարձակեալ 'ի վ՟ր իւր զամբոխ մի աչարկու թշնամեաց. Գոնզալ փոխարքայն եդեալ 'ի նաւ մի 'ի դատաւորացն ունկնդրութ՟ն, ուղղի տարցի 'ի Սպանիա ընդ պահպանութ՟բ Յօհաննու Ալվարեզայ միոյ 'ի թըւոյ ն՟ց, իսկ և իսկ իբրև ելին 'ի դուրս 'ի ծովն՝ Ալվարեզ կամ հարեալ 'ի խղճէ մտաց, կամ շարժեալ յերկիւղէ՝ անկաւ առոտս կալանաւորին իւրոյ, յայտ առնելով զնա ազատ յայնմ վայրկենէ, և դաւանելով, թէ նոյն ինքն և ա՟մ անձն 'ի վ՟ր նաւուն առնէին զպարտականութիւն իմն հնազանդելոյ նմա իբրև օրինաւոր ներկայացուցչի ինքնակալին իւրեանց. Նունէց Վէլա հրամայեաց ն՟ց նաւել դէպ ուղիղ 'ի Թումպէց. և հասեալ անդր՝ ամբարձ զարքայական դրօշն. և էառ վերստին զպաշտօնս իւր փոխարքայի. Պէսպէս անձինք երևելիք, առ որս յարախտն ապստամբա-

[illegible]

ժթ կան

կան հոգւոյ, որ թագաւորէր 'ի Քուսքօ և 'ի Լիմա, դեռ չէր ժամանեալ, ցուցին զինքեանս անընդմիջաբար յօժարեալս առ 'ի ջատագովել զաւագութի նորա. Իսկ բռնաւորագոյն կառավարութին փիծծարրոսի, որ նկատէր զիւրաքանչիւր անհատ երկչոտ նախանձաւորութ̄ բնականաւ յափշտակողաց. և պատուհասէր ժանտաբար զա̄մ երևոյթ տժգոհութ̄ե, աճեցոյց նմա վաղվաղակի զթիւ յարեցելոցն. և պարաւանդեաց զոմանս 'ի գլխաւորաց հարգունութ̄են ընթանալ առ նա վ̄ն գտանելոյ զապաւինութ̄ի ինչ. Մինչդեռ ժողովէր նա 'ի Խուամպէց զզօրութ̄ի իւր, որ այն քինչ սկսանէր ունել զերևոյթ այնորիկ, որ յԱմէրիկա կոչիւր զօրք՝ Դիեկոս Չէնթէնօ համարձակ և քաջ զօրագլուխ զայրացեալ ընդդէմ անգթութեան և հարստահարութ̄ե փոխանակի բդեշխին փիծծարրոսի 'ի գաւառին Քհարքասայ՝ կերպաւորեաց զերդմնակցութ̄ի իւր ընդդէմ կենաց նր̄. սպան զնա, և յայտարար զանձն 'ի շնորհս փոխարքային։

1545 Փիծծարրոս յառնէ ընդդէմ նորա։ փիծծարրոս թէպէտև կասկածաւոր յայսց երևութից թշնամութեան 'ի հեռաւորագոյն անկիւնս կայսերութ̄ն՝ ոչինչ շփոթեցաւ յայնմանէ. Նախապատրաստեցաւ առ 'ի պահել զաւագութին, առ որ հասեալ էր, հոգւով և գնացիւք զօրավարի միոյ սովորեցելոյ առ հրամանատարութ̄ի. և խաղաց ուղղակի ընդդէմ փոխարքային իբրև մերձաւորագոյն և առաւել ահարկու թշնամւոյ. Իսկ քանզի էր նա տէր հրապարական մտիցն փէրուայ, և բազումք 'ի զինուորականաց կեայլին յարեն̄ք սիրով առ տոհմ նր̄, վ̄ն այսպիսի պատճառի եղեն զօրք իւր այնպէս յոգնաթիւ, մինչզի փոխարքայն անբաւական ճակատելոյ ընդդէմ նց̄՝ խոյս ետ դէպ Քուիթօ. փիծծարրոս հետամուտ եղև նմա. և յայն տառապալի չու ընդ գաւառ իմն լեռնային տոկաց աշխատանաց, և պատահնցաւ դժուարութեց, որոց ոչ ոք այլ զօր՝ բաց յայնմանէ կարծրացելոյ առ ծառայութիւնն Ամերիկոյ՝ կարողացեալ էր հանդուրժել և յաղթել ։

(44) ‖ Բովանդակ պատմագիրք Սպանիացւոց գծագրեն զչու նորա և զչարչարանս երկոցունց կողմանց մանրամասնաբար. Զարաթայ նշմարէ, թէ դժուարաւ գտանի 'ի վիպասանութն համեմատութիւն իմն ընդ նս եթէ վերահայեցմամբ երկայնութն փախստեանն, և եթէ վառման հետամտութեանն. Փիծծարրոս ըստ հաշուին իւրոյ զհետ պնտեցաւ փոխարքային աւելի քան զերիս հազար մղոնս ։ ‖

Հազիւ հասեալ էր փոխարքայն 'ի Քուիթօ՝ յորժամ յառաջապահ զօրքն Փիծծարրոսի երևեցաւ առաջնորդեալ 'ի Քարվաջալայ. որ թէպէտև մերձ յութսուն ամն՝ էր անվեհեր և քաջ՝ որչափ իւրաքանչիւր երիտասարդ զինուոր 'ի ներքոյ հրամանի նր. Նուկնէց Վէլա 'ի բաց եթող վաղվաղակի զքաղաք մի անընդունակ պաշտպանութն. և արագութբ իմն նմանեաւ յաւէտ փախստեան, քան թէ խուսափման՝ չու արար 'ի գաւառն Փօփայան. Փիծծարրոս շարունակեաց հետամուտ լինել նմա. բայց տեսանելով անկարելի հասանելն նմա՝ դարձաւ 'ի Քուիթօ. Անտի արձակեաց զՔարվաջալ առ 'ի ըդիմադրել Չէնթէնօի. որ լինէր ահարկու 'ի հարաւային գաւառսն կայսերութն. և ինքն մնաց ախոյեան ընդդէմ փոխարքային ։

Փոխարքայն առելելէ: Գործօնէութբ իւրով և սատարութբ Պէնալքազարայ Նուկնէց Վէլա գումարեաց արագ արագ չորեքհարիւր արս 'ի Փօփայան. Սա 'ի մէջ բովանդակ տառապանաց իւրոց պահէր զնոյն վեհամբարձութն մտաց, և զնոյն բարձր իդէա արժանաւորութն իւրոյ. ուստի 'ի բաց մերժեաց արհամարհանօք զխորհուրդն ոմանց 'ի հետևողաց իւ-

իւրոց, որք յորդորէին զնա առնել ընդ Փիծծարրոսի բանս միաբանութեան, ասելով՝ թէ միայն սրով որոշելի էր վէճն ընդդէմ ապստամբաց. և այսու դիտաւորութեամբ դարձաւ 'ի Քուիթօ. Փիծծարրոս վստահացեալ 'ի վերնագոյն թիւ՝ և 1546. եւ առաւել 'ի կրթութեան և 'ի քաջութեան իւրոցն՝ 16 Յունուարի. յառաջեաց սրտեղաբար առ 'ի պատահել նմա. Պատերազմն եղեւ յամառեալ և արիւնայեղց. Մա՛րտեան յերկուց կողմանց իբրեւ մարդիկ, որք գիտէին, թէ ստացումն մեծի իրիք կայսերութեան՝ վիճակ առաջնորդաց իւրեանց՝ և յատուկ ապագայ բաղդ իւրեանց կախեալ կային զելից այնր աւուր մարտի. Բայց հին զօրականքն Փիծծարրոսի յառաջխաղացին այնպիսի գեղեցիկ կարգաւ, մինչզի թշնամին հարկեցաւ տեղի տալ. Փոխարքայն արտաքոյ կարգի քաջագործութեամբքն, յորս ցուցանէր հաւասարապէս զընդունակութիւն զօրագլխի և զսիրտ զինուորի, կալաւ զյաղթութիւնն ընդ ժամանակ ինչ յերկբայս. 'Ի վախճանի անկաւ նա խոցեալ 'ի բազում խոցուածոց. Սպանեալ. և եղեւ յետոյ ընդհանուր խորտակումն հետեւողաց իւրոց ուժգնաբար հալածելոց. Գլուխ իւր հատեալ եղեւ 'ի լանջացն. և եդաւ 'ի վերայ հրապարական կախաղանին 'ի Քուիթօ. ուր Փիծծարրոս եմուտ յաղթանակաւ. Գումարտակք ժողովեալք 'ի Չէնթէնօէ եղեն և նոքա վաղվաղակի ցրուեալք 'ի Քարվայալայ. և նոյն ինքն իսկ գտաւ բռնադատեալ առ 'ի փախչել 'ի լերինս. ուր մնաց զամիսս բազումս գողեալ յայրի միում. Ամենայն բնակիչ Փէրուայ 'ի սահմանացն Փօփայանու ցսահմանս Քհիլեայ հպատակեցաւ Փիծծարրոսի. և միջնորդաւ նաւախմբին իւրոյ հրամայեցելոյ 'ի Պետրոսէ Հինոյօսայ տիրացաւ ոչ միայն հարաւային ծովուն, այլեւ էառ զտէրութիւն Փանամայի. և եթող զպահապան զօրս 'ի Նօմպրէ Տէտիօս' 'ի հակադրեալ կողմանէ ցամաքալեզուէին. այն որ հատանէ զհաղորդակցութիւնն ընդ Նորն Սպանիա և ընդ Փէրու:

Փիծծար-
րոսի խոր-
հուրդ
[illegible]
է առ-
նուլ
յինքն
զինքնա-
կալութին
Փէ-
րուայ:

Տարեալ զայս յաղթութի փիծծարրոս և հետևողք իւր մնացին առ ժամանակ մի 'ի Քուիթօ. և յառաջին բերմունս հրճուանաց իւրեանց զեղան յամ չափազանցութիս հեշտութեն, առ որ սովորէ տալ զանձն ապերասան հոգին ցած բաղդորդաց ժամանելոց առ արտաքոյ կարգի իմն բաղդ. Բայց 'ի մէջ այսր ցնծման գլուխ նց և մտերիմք իւր պարաւանդեալ էին դարձուցանել երբեմն երբեմն զխորհուրդս իւրեանց առ իրս սերտս, և խորհրդածել բազում հոգաբարձութբ շուրջ զհանգամանօքն, զոր ներգործաբար պտրտէին առնուլ. Քարվայալ ոչինչ ընդհատ համարձակ և երեսաւոր 'ի խորհրդեան՝ քան թէ յասպարիզի զեկուցանէր փիծծարրոսի, թէ յընթացսն, յոր մտեալ էր, լինէր ընդունայն խորհիլն ունել զճանապարհ իմն միջին. և թէ պարտէր նա՝ կամ ուղղել զդիտումն իւր առ բոլորն, կամ ոչ ձեռնարկել յիրս ինչ. և զոյն զայս սկզբունս վաղիսկ յեղյեղեալ էր 'ի նա անդստին 'ի վայրկենէն, յորում ստացաւ զդեշխութին Փէրուայ. 'Ի ներգործութենն ընդունելոյ զլուր յաղթութենն 'ի Քուիթօ՝ պարզեաց զբան իւր ընդ նմա առաւել ևս յայտնի և վճռողական իմն ոճիւ. „Դու (ասէ նա 'ի նամակի
„ միում գրեցելոյ առ փիծծարրոս յայնմ առ-
„ թի) յափշտակեցեր զգերագոյն իշխանութին
„ յայսմ աշխարհի ընդդէմ յանձնարարութեան
„ այնր 'ի կայսերէն այլում ումեք. չուեցեր 'ի
„ գլուխ վաշտից քոց ընդդէմ արքունի դրօշին.
„ ետուր պատերազմ ընդ ներկայացուցչի ինք-
„ նակալին մերոյ. և յետ պարտելոյ զնա՝ ետուր
„ հատանել զգլուխ նր. Մի հաւատար, թէ միա-
„ հեծան թագաւոր մի կամիցի երբէք ներել այս-
„ պիսի թշնամանաց արժանաւորուե իւրոյ, կամ

» թէ զինչևիցէ հաշտութի̅ 'ի կողմանէ նր̅ լիցէ
» 'ի սրտէ և անկեղծ. Մի՛ ևս վստահանար 'ի
» մուրացածոյ շնորհս այլոյ. Ո՛չ վս̅ անձին քո
» զինքնակալութի̅ աշխարհի միոյ, առ որոյ տէ-
» րութի̅ տոհմն քո ունի զիրաւացի իմն պատ-
» ճառ՝ հիմնեալ 'ի վր̅ իրաւանց և գիւտոյն և
» տիրապետութե̅ն. Կախի զքէն յանկուցանիլն
» 'ի քեզ ա̅մ Սպանիացւոյ, որ գտանի 'ի Փէ-
» րու, առատաձեռն իմն շնորհմամբ երկրաց և
» Հնդկաց, կամ սահմանելով զաստիճանս ազ-
» նուականութե̅ և պատուոյ նմանս այնց, զորովք
» փարին այնչափ անձկանօք յԵւրոպիա. Կա-
» ցուցանելով զասպետս զարդարեալս արտօնու-
» թե̅ք և խտրութե̅ք, ո՛չ 'ի գործածի 'ի Սպա-
» նիա, կարող ես հաճեցուցանել զպաշտօնա-
» տարս ծառայութե̅ քո տարազու իմն համեմատ
» գաղափարաց զինուորական արանց. Մի՛ հաշւեր
» միայն 'ի վր̅ հայրենակցաց քոց՝ գուն գործեա՛
» ևս շահիլ քեզ զազգայինսն. Հարսնացուցա-
» նելով զքոյր, կամ զդուստրն արևու զկար-
» ծեցեալ ժառանգն թագաւորութե̅ շարժեսցես
» զՀնդիկս յաղագս յարգանացն առ արիւն նախ-
» կին նահապետաց իւրեանց առ'ի միաւորիլ ընդ
» Սպանիացւոց 'ի ջատագովել զաւագութի̅ քո.
» Այսպէս 'ի գլուխ նախապետական բնակչացն
» Փէրուայ և նոր բնակացն կարասցես գրգռել
» 'ի մարտ զկարողութիւնն Սպանիոյ և ցրուել
» դիւրակի զտկար զօրութիւնս, որք կարեն առա-
» ջիլ այսր ընդդէմ քո։ »

Փաստաբանն Ձէփէտա, որ եղեալ էր մտերիմ
խորհրդական Փիծծարրոսի, սատարէր բազում
ջերմութե̅ յորդորանացն Քարվայալայ. և 'ի գործ
արկանէր զռովանդակ գիտութի̅ն, զոր ստացեալ
ունէր՝ առ 'ի ապացուցանել նմա, թէ համօրէն
հիմնիչք մեծամեծ միապետութե̅ց ամբարձեալ էին
առ ինքնակալութի̅ ոչ 'ի վաղնջականութե̅ ազ-

գատոհմի իւրեանց, կամ 'ի վաւերութենէ իրաւանց իւրեանց, այլ 'ի ձեռներէց սրտեղութենէ և յանձնական վաստակոց իւրեանց:

Խնդրէ նա [illegible] Սպանիոյ:

Փիծծարրոս ուշադրաբար եդ զունկն երկոցունց. և ոչ կարաց ծածկել զուրախութիւն, որով նկատէր զառարկայն, զոր նորա առաջի առնէին տեսութեան նորա. Բայց բաղդաւորաբար վն անդորրութեան ազգի մարդկան սակաւ մարդիկ հանդերձեալ են այնու կորովութեամբ մտաց, և այնու ընդարձակ տարածութեամբ քանքարաց, որք խնդրին առ 'ի կերպաւորել և կատարել զգաղափարսն, որք ոչ կարեն վերածիլ 'ի գործ առանց տապալելոյ ըզկարգն հաստատեալ յընկերութեան, և առանց եղծանելոյ զսկզբունսն, զորս մարդիկ սովորեն նկատել իբր սրբազանս. Միջասահմանութիւն տաղանդացն փիծծարրոսի սահմանաւորէր զփառասիրութիւն իւր 'ի ներքս անձկագոյն կոպարաց. Փոխ 'ի ձգտելոյ առ անկախ իշխանութիւն՝ ամփոփեաց զդիտմունս իւր յընդունել յարքունեացն Սպանիոյ զհաստատութիւն աւագութեանն, զոր բա՝ ստացեալ ունէր. և առ այսպիսի վախճան առաքեաց անդր զնշանաւոր պաշտօնատար մի. որ տեղեկացուսցէ զգնացից իւրոց և զվիճակէ երկրին այնպէս, զի կայսրն և գործակալք իւր ներածիցեն կամ յօժարամտութեամբ կամ առ հարկի շարունակել նմա զներգործական պաշտօն իւր:

1546

Խորհրդածութիւնք գործակալացն Սպանիոյ:

Մինչդեռ փիծծարրոս կայր խորհելով զհանգամանացն, զոր ունելոց էր, առեալ լինելին 'ի Սպանիա խորհուրդք առ 'ի կարգաւորել զչափմունսն, որովք վերստին հաստատեսցի աւագութիւն կայսերն 'ի փերու. Թէպէտ արքունիքն ոչ էին տեղեկացեալ վերջին թշնամական ոճրացն, առորս զառածեալ էին տմգոհքն, սակայն ընկալեալ էր զլուր ապստամբութեան ընդդէմ փոխարքային, բանտարկութեան նորա և կառավարութեան յափշտակելոյ 'ի փիծծարրոսէ. Այսպիսի իմն սարսափեսափելի խռովութի խնդրէր զմիջնորդութի քանքարաց և աւագութն կայսեր. Բայց գոլով նա յայնմ ժամանակի զբաղեալ 'ի Գերմանիա յընփածել զպատերազմն ընդդէմ հուչակաւոր միաբանութեն Սմալքալտեայ՝ մի յառաւել դժուարին և փութալի գործառնութեց թագաւորութե իւրոյ՝ հոգն նախահոգալոյ զդարման ինչ անկարգութենցն Փերուայ հայէր 'ի Փիլիպպոս որդին իւր և 'ի խորհրդականսն, զորս Կառոլոս կարգեալ էր ընթերակայ լինել նմա 'ի վարչութն Սպանիոյ 'ի ժամանակի բացակայութեան իւրոյ. Յառաջին տեսութն գործողութիք Փիծծարրոսի և յարելոցն իւրոց երևեցան այնպէս ընդդիմամարտ պարտուց հպատակացն ընդդէմ ինքնակալին իւրեանց, մինչզի մեծագոյն մասն գործակալաց պնտեաց, զի նոյնհետայն հրատարակեացին մեղապարտ ապստամբութն, և զի յառաջխաղացի 'ի պատուհասել զնոսա խստիւ յօրինակ այլոց. Բայց իբրև եռանդն նախանձու նոցա և սրտմտութին սկսան սակաւ մի ցածնուլ. յանդիման եղեն անհամար խոչք կատարման այսր առաջարկութն. Եկումբ մարզկացն հետևակաց՝ զօրութի և պարծանք Սպանիացւոց զօրուն էր յայնժամ ծառայեցուցեալ 'ի Գերմանիա. Սպանիա նուաղեալ յարանց և 'ի դրամոց յաղագս յերկար իմն յաջորդութն պատերազմաց, յորս պատատեալ էր յանհանգիստ փառասիրութէ երկուց յաջորդական միապետաց, ոչ կարէր դիւրակի հանդերձել զնաւահանգէս մի բաւական առ 'ի նուաճել զՓիծծարրոս. Փոխարերել զերևելի իմն գունդ վաշտից յաշխարհ իմն այնպէս հեռաւոր երևէր գրեթէ անկարելի. Որչափ Փիծծարրոս պահիւր տր հարաւային ծովուն ուղղորդ ճանապարհն 'ի Նօմպրեայ տէ Տիօս առ Փանամա էր անգործածելի. Նկրտիլն չուել 'ի Պուէթօ ընդ ցամաք խոտորնակի նոր թագաւորութեն

Կրանաթայ և գաւառին փօփայանու՝ անցանելով ընդ անրաւ կողմանս անապատս անառողջարարս և բնակեալս 'ի գաղանաբարոյ և 'ի պատերազմասէր ցեղից՝ էր ձեռնարկութիւն իմն ընկերակցել 'ի վտանգաց և աշխատանաց անպարտելեաց. Անցքն 'ի Հարաւային ծովուն ընդ նեղուցս Մածէլլանայ էր այնպէս տաղտկալի, այնպէս անստոյգ և այնպէս սակաւ ծանուցեալ 'ի դարուն, մինչզի ոչ կարէր պանծալ 'ի վերայ նաւարկութեան միոյ այնպէս հեռաւորի և վտանգաւորի. Ապա այլ հնար ոչ մնայր, բայց եթէ 'ի բաց թողուլ զգաղափարն, զոր նախանձայուզութիւն արքայական վեհութեան թելադրեալ էր զառաջինն, և փորձել ամոքականօքն՝ այն, որ ոչ էր արգիլանալոց բռնութեամբ. Տեսանիւր յայտնի 'ի փութաւորութեան Փիլիպպոսի 'ի ներկայացուցանելն զգնացս իւր 'ի նպաստաւոր իմն կերպարանս առ կայսրն, զի հանդերձ եղեռնութեամբքն, որոց էր յանցաւոր, տևէր տակաւին 'ի զգացուցածս յարգանաց առ ինքնակալն իւր. Անսալով սմա և 'ի կիր արկանելով զիջումն ինչ՝ ցուցակ հոգւոյ իւրք չափաւորութեան և ներողութեան՝ կարէր ուղղել սա. կամ թէ գաղափարք հաւատարմութեան բնականի Սպանիացւոց վերակենդանանային այնքան 'ի մէջ հետևողաց իւրոց, մինչզի ոչ ևս կամէին զուգընթաց լինել ընթերակայութեան իւրեանց առ'ի ջատագովել զյափշտակեալ աւագութիւն իւր:

Այստամ սահմանէ տա 'ի Եւրոպա 'ի Փիէրու Պետր նա- Կասքա. Անյաջողութիւն այսց գեր զգուշալի և ծանրակշիռ իրակութեանց կախեալ կայր ամենևին զքանքարաց և զյաջողակութեան անձին. որում յանձնեալ լինէին. Յետ կշռելոյ մեծաւ ուշադրութեամբ զհամընթացութիւն արդեանց զանազան ենթակայից՝ գործակալք Սպանիացիք սեռեցին միաշունչ զընտրութիւն իւրեանց 'ի վերայ Պետրոսի տէլա Կասքայ՝ երիցու և խորհրդականի քննութեան. Սա թէպէտ ոչ էր վարեալ երբէք զպաշտօն ինչ հրապարական, սակայն 'ի գործ ածեալ էր երբեմն 'ի կառավարութեն 'ի նախանձելի և յերևելի իրողութիս. և ընդածեալ էր զայնս մեծաւ ընդունակութբ և քաջ քաջ յաջողութբ, ցուցանելով զհեզ և զընդմտանող բարս ինչ ընկերակցեալ 'ի մեծ հաստատութե և 'ի լաւութե վերնագունէ զինչևիցէ հրապուրանաց առանձնական շահու, և զգուշաւոր իմն շրջահայեցութիւն 'ի յարմարել զչափն հանդերձ կորովութբ իմն 'ի կատարելն զայնս. որք հազիւ երբեք լծակցեալ լինին. Որակութիւքս այսորիկ առնէին զնա յարմար վն պաշտօնին, առ որ կամէին կարգել զնա. Այսպէս ճանաչէր զԿասքա անձնաբար. և գովեց յոյժ յոյժ զընտրութի նր. նա զի մասնաւորեաց նմա զայն նամակաւ միով, որ պարունակէր զյայտարարութիս բարութն և վստահութեան ոչինչ նուազ պատճառի արքային, որ գրէր զայնս, քան թէ հպատակին, որ ընդունէր. Կասքա թէպէտ ծերացեալ էր հասակաւ և տկար խառնուածով, և ըմբռնմամբ բնականաւ մարդոյ, որ ընդ բոլոր ընթացս կենաց իւրոց ոչ էր գնացեալ երբէք արտաքոյ երկրին իւրոյ, երկնչէր յարգասեաց երկայն իրիք ճանապարհորդութն և անառողջաբար կլիմային, սակայն ոչ վարանեցաւ վայրկեան մի տեղի տալոյ հրաւիրման ինքնակալին իւրոյ. Նա'ի տալ տեսանել, թէ գործէր նա շարժեալ միայն յայսմ սկզբնէ՝ հրաժարեցաւ յեպիսկոպոսութեն մատուցելոյ նմա, որպզի երթիցէ անդր վայելչագոյն աստիճանաւ իւիք. և ոչ իսկ կամեցաւ ընդունել զառաւել նշանաւոր անունն նախագահի ատեանին ունկնդրութն 'ի Լիմա, յայտ առնելով, թէ ոչ առնոյր թոշակ վն վճարելոյ զպարտաւորութիս այնր պաշտօնի. Բովանդակ այն, զոր խնդրեաց նա, եղև այս, զի ծախքն պահելոյ զտուն իւր լինիցին յարքունեաց. որովհետև մեկնելով ինքն իբր սպասաւոր խաղաղութեան

Չափա-
ւորաճ-
եսք :

1546 Թեան պարեգօտիւ իւրով և ժամագրքիւն և հետևանօք սակաւ ծառայից՝ ոչ ծանրացուցանէր տարապայման բեռամբ զգանձարանն արքունի։

Իշխանութիւն տուեալ նմա։ Բայց մինչ դեռ ցուցանէր նա զայնպիսի իմ̃ անշահասէր չափաւորութիւն յայնմ ամի, որ վերաբերիւր անձնաւորաբար առ նոյն ինքն, խնդրէր զանազան եղանակաւ զիշխանութիւն պաշտօնին իւրոյ. Ներկայացոյց զանձն ծառայեցուցանիլ յաշխարհի միում հեռաւորի յաթոռոյ կառավարութեան, ուր յամ̃ պիտոյս ոչ կարէր դիմել առ հրահանգս ինքնակալին իւրոյ. և ուր բովանդակ բարի ելք հայթհայթանաց իւրոց կախիւր 'ի վստահութենէն, զոր ժողովուրդն, ընդ որում վարելոց էր, դնէր յընդարձակութիւն իշխանութեան իւրոյ. ուստի խնդրէր զաւագութիւն իմ̃ անկոպար, զդատաւորութիւն իմ̃ 'ի վր̃ ամ̃ անձանց, 'ի վր̃ ամ̃ պատճառաց, զկարողութիւն ներելոյ, պատժելոյ և վարձատրելոյ, ըստ որում պարագայք և գնացք անձանց պահանջէին. 'ի դիպուածի ընդդիմակայութեան 'ի կողմանէ տժգոհից՝ լինել աւագացուցեալ առ 'ի վերածել զնոսա 'ի հնազանդութիւն բռնութեամբ զինուց, հանել զօրս առ այս վախճան և խնդրել զօգնութիւն 'ի վարչաց ամ̃ հանգրուանաց Սպանիացւոց յԱմերիկա. Այս կարողութիւնք թէպէտ և նպաստաւորք մեծամեծ առարկայից առաքմանն՝ երևեցան գործակալացն Սպանիացւոց արտօնութիւնք անօտարացուցանելիք յինքնակալութենէն, որք ոչ պարտէին յանձնիլ հպատակի ումեք. և զլացան շնորհել զայնս. բայց տեսութիւնք կայսերն էին բազմօք առաւել ընդարձակք. Կասքայի ը̃ բնութեան ծառայութեան իւրոյ պիտոյ էր վստահանալ զկարողութիւն իմ̃ բացարձակ 'ի զանազան յօդուածս. և բովանդակ ջանք իւր լինէին անգործք, յորժամ ամփոփեալ լինէր այն 'ի մասնաւոր ինչ. և վնկ Կառոլոս ոչ կալաւ զդժուարութիւն առ 'ի զգեցուցանել զնա

այնու լի իշխանութեամբ, զոր խնդրէր նա. Հաճե- 1546
ցեալ լիով այսու թարմ փորձիւ վստահութեան 26 Մեկ-
տեառն իւրոյ՝ Կասքա փութացոյց զելս իւր. և նի.
առանց դրամոց և առանց զօրաց ել գնաց առ'ի
նուաճել զահարկու իմն ապստամբութիւն:

'Ի ժամանել իւրում 'ի Նոմպրէ Տէ տիօս՝ եգիտ 27 Յա-
զՀէրնան Մէքսիա զօրագլուխ համբաւաւոր՝ դա- ջողէ.
բանեալ անդէն հրամանաւ Փիծծարրոսի երևե- Հաւա-
լի իմն գնդաւ արանց, որպէսզի խափանեսցէ զառ- նեցնէ
նուլն զցամաք ումեքիցէ թշնամական գումարտա- 'ի Փա-
կի. Բայց Կասքա երևեցաւ յայնպիսի խաղաղա- նամա.
րար կերպարանս, այնպէս սակաւ երկնչելի ար-
բանեկօք՝ և անուամբ իմն ոչ այնքան երևելեաւ
առ'ի արկանել զահ, մինչզի ընկալեալ եղև մե-
ծաւ ակնածութեամբ. 'Ի Նոմպրեայ Տէ տիօս յա-
ռաջխաղաց 'ի Փանամա. և ընկալաւ զնոյն ասպն-
ջականութիւն 'ի Հինօյօսայ, որում Փիծծարրոս
յանձնել էր զվարչութիւն այնր քաղաքի և զհրա-
մանատարութիւն նաւախմբին իւրոյ կայացուցելոյ
անդէն. Կալաւ յերկոսին տեղիսն զնոյն բարբառ,
այսինքն՝ թէ առաքեալ էր նա իբր միջնորդ խա-
ղաղութեան և ոչ իբր պատուաւոր վրէժխնդրութեան.
որ գայր յանուշել զդառնութիւնս նոցա, 'ի նահան-
ջել զօրէնսն, որք խռովեալ էին զսիրտս հպա-
տակաց, 'ի ներել զանցեալ խէթսն, և 'ի հաս-
տատել վերստին զկարգ և զարդարութիւն 'ի կա-
ռավարութեան Փերուայ. Քաղցր բերումն իւր,
պարզութիւն հանդամանաց իւրոց, սրբութիւն դա-
տանութեան իւրոյ, և երևոյթ յըստակութեան շա-
հեցան զհաւատ յայտարարութեանց իւրոց. Ակնա-
ծութիւն պարտաւոր անձին միում զգեցելոյ զօ-
րինաւոր իշխանութիւն, և որ գործէր զօրութեամբ ար-
քունի յանձնարարութեան իրիք՝ սկսաւ վաղվաղա-
կի զարթնուլ 'ի մէջ մարդկան սովորելոց 'ի ժա-
մանակաց ինչ հետէ յոչ յարգաւորել զայլ ինչ,
եթէ ոչ զյափշտակեալ իրաւաբանութիւն. Հի-

նջս.

Նյօսա, Մ՝էքսիա և այլ պէսպէս նշանաւոր պաշտօնատարք, որոց իւրաքանչիւրում ներկայացաւ Կասքա ուրոյն ուրոյն, յարեցան առ շաՀս անձին նորա. և սպասէին միայն նպաստաւոր իմիք առթի առ՚ի Հանդիսանալ յայտնապէս 'ի կողմն նորա:

Ապստա-
բան ըն-
դայց
Փիծ-
ծարրո-
սի :

1546 Այս առիթ մատուցեալ եղև նշ փութանակի 'ի բռնութենէն Փիծծարրոսի. Իսկոյն իբրև լուաւ նա զՀասանել Կասքայի 'ի Փանամա, թէպէտև ընկալեալ էր 'ի նմին ժամանակի զծանօթութի էութեան յանձնարարութեն նր, և տեղեկացեալ, թէ նա ընծայեցուցանէր զանձն անդորր առնել ըզՍպանիացիսն Փերուայ նկատմամբ անցելոյն ներգործութ իւիք Հանրական մոռացութեն, և ապաՀովացուցանել զիրսն առ յապայն, չքացուցանելով զօրէնսն ծանրացուցիչս նշ, փոխանակ ընդունելոյ երախտագիտութ զկշռումն ինքնակալին իւրոյ՝ այնչափ ժանտացաւ 'ի տեսանելոյն, թէ նոյն ինքն ոչ էր շարունակելոց այլազգ 'ի գիրս բդեշխի երկրին, մինչզի որոշեաց անընդմիջաբար դիմադրել մտից նախագաՀին 'ի Փերու, և խափանել զվարել նորա անդէն զիրաւաբանութի ինչ. Առ այս որոշումն յաւել միւս ևս ոչինչ ընդՀատ թշնամանական. Արձակեաց զնորին պատուիրակութի 'ի Սպանիա առ՚ի արդարացուցանել զգնացս իւր, և խնդրել յանուն բոլոր Հասարակութեն Փերուայ, զի Հաստատեսցի նմա բդեշխութիւն որչափ տևէ բնական կեանք իւր, գոլով նա միակ յարմար պաՀպանելոյ անցէն զանդորրութիւնն. Պաշտօնատարքն, որոց յանձնեալ էր բեռն այսպիսի օտարոտի պատուիրակութեն, Հաղորդեցին զձկտումն Փիծծարրոսի առ նախագաՀն. և խնդրեցին 'ի նմանէ յանուն իւր մեկնիլ 'ի Փանամայէ, և դառնալ 'ի Սպանիա. Տարան ևս զգաղտնի Հրամանս առ Հինօյօսա՝ մատուցանելոյ Կասքայի զընծայ իմն յիսուն Հա-

հազար մարտկաց, եթէ կամիցի կատարել զայն, որ հայցել լինէր 'ի նմանէ. և եթէ դէպ լիցի մերժել զայն, խողխողելոյ զնա, կամ թունաւորելոյ։

Բազում պարագայք զուգընթաց եղեն 'ի խթել [illegible] զՓիծծարրոս առ այս մոլեգնական որոշումն. Գոռ- ջահէ ըղլով նա առ անգամ մի սովորեալ առ գերագոյն նաւահրամանատարութեան՝ ոչ կարէր հանդուրժել 'ի հանխորհիլն, թէ պարտէր խոնարհիլ առ սոսկական պետին. ինչ կեանս. Գիտակ սեպհական անօրէնութեանց կասկածէր, թէ կայսրն ջանայր միայն խաբել զնա. և թէ յիսկութեան ոչ կամէր նմա երբէք ներել զնախատինսն, զորս արարել էր. Գլխաւոր մտերիմք իւր ոչինչ նուազ յանցաւորք՝ վրդովեալ էին 'ի նոյն ահէ. Գալուստ Կասքայի, որ ոչ ունէր զօրս, ոչ զարթուցանէր զսարսափ. Իւրն անդէն ուրուրեմն աւելի քան զվեցհազար Սպանիացիք բնակացեալք 'ի Փերու. որոց 'ի գլուխ հաւատաց կարող լինել պահել զանկախութիւն իւր, յորժամ արքունիքն Սպանիոյ ոչ կամիցին շնորհել նմա այնչափ ինչ, զոր խնդրէր. Բայց տակաւին ոչ էր նմա ծանօթ, թէ հոգի իմն վըտարանջութեան վաղիսկ սկսեալ էր սփռիլ 'ի մէջ նոցա, յորս առաւել վստահանայր. Հինօյոսա զարմացեալ ընդ գահավէժ որոշումն նորա ընդդէմ կալոյ կայսերական յանձնարարութեանն և անարժան համարելով ծառայել նմա իբր գործի 'ի կատարման ատելի եղեռնութեանց հրամայեցելոց 'ի ծածուկ խրատս նորա, ծանեաւ հրապարակաւ զգահերէցն իբր միայն օրինաւոր վերնագոյն. Պաշտօնատարքն ևս 'ի ներքոյ հրամանի նորա արարին նոյնպէս. Այնպիսի եղև տարափոխիկ ազդեցութիւն օրինակին, զի էանց մինչև 'ի պատուէրակսն արձակեալս սակաւ մի յառաջ 'ի Փերու. այնպէսզի 'ի ժամանակին, յորում Փիծծարրոս սպասէր լսել կամ զվերադարձ Կասքայի 'ի Սպանիա, կամ զմահ նորա, ընկալաւ զնորալուրն, թէ

Նա տիրացեալ էր նաւահանգիսին Փանամայի և զօրացն անդէն օթելոց:

Փիծծառ բռա ար- չէ 'ի Ծառբբ:

Գրգռեալ մինչև 'ի մոլեգնութի յայսպիսի յեղակարծ իմն դիպուածոյ՝ պատրաստեաց զանձն յայտնապէս 'ի պատերազմ. և առ'ի տալ զկերպարանս ինչ արդարութեն շարժման զինուց իւրոց՝ կամեցաւ, թէ ատեանն ունկնդրութեն 'ի Լիմա յառաջխաղացցէ առնել դատաստան Վաքայի վս յանցանացն ըմբռնելոյ զնաւս իւր, զառածանելոյ զպաշտօնատարս իւր և խափանելոյ պատուիրակաց իւրոց զյառաջատիլն 'ի ճանապարհորդութիւն իւրեանց 'ի Սպանիա. Զէփէտա թէպէտև առնէր իբր դատաւոր զօրութբ արքունի յանձնարարութեն, ոչ խղճեաց անարգել զարժանաւորութի պաշտօնին իւրոյ, դատելով զՎաքա յանցաւոր մատնութեն և դատապարտելով՝ զնա 'ի մահ. Որչափ և այսպիսի դատ առնելն էր օտարոտի և ծիծաղական՝ բաւական եղև յաղթել ոգւոց անարգ և տխմար բաղդորդաց, որովք լի էր Փէրու. և հաւատացին աւագացուցեալ զՓիծծառրոս 'ի շարունակել զթշնամութիւն ընդդէմ յաղթահարեալ մատնչի միում. Ուստի և զօրականք եկին յամ կողմանէ ընդ դրօշակաւ նորա. և ինքն գտաւ վաղվաղակի 'ի գլուխ հազար արանց հանդերձելոց լաւագոյն քան զոր երբէք տեսեալ էր 'ի Փէրու:

Նոխա- [illegible] [illegible] [illegible] Նուէլ.

Վաքա 'ի կողմանէ իւրմէ ճանաչելով կարևոր լինել 'ի գործ արկանել զբռնութի առ'ի ստանալ զնպատակն առաքման իւրոյ՝ ոչ եղև նուազ փոյթ 'ի ժողովել զզօրս 'ի Նաքարակուայէ, 'ի Կարթագինեայ և յայլոց կալուածոց 'ի շարունակին, և յաջողեցաւ այնպէս բարիօք, մինչ զի արագագոյն ևս եղև յաստիճանի արձակելոյ ըղխումբ մի նաւահանգիսին իւրոյ հանդերձ երևելի իմն գնդաւ զօրականաց 'ի վս ծովեզերացն Փէրուայ. Պատճառեաց զհանրական զարհուրանս

ինչ

բինչ երևումն նց. և թէպէտ 'ի կախ թողլին առժամանակ մի առնել զիջումն ինչ 'ի նաւուցն, սակայն կատարեցին զառաւել իմն գործունեայ ծառայութի. քանզի եդին յայնմ վայրի առ ծովեզերբն 'ի զանազան տեղիս անձինս, որք բաշխեցին զպատճէնս հրովարտակին ընդհանուր անձնասութեն և յետս կոչման վերջին հրամանացն. և որք յայտնեցին ամենայն ուրեք զխաղաղարար ձկտութիս և զհեզ բարս նախագահին. որ և յառաջէած զսքանչելի արդիւնս. Ամենեքին նոքա, որք գժգոհեալ էին ընդ բռնական մատակարարութի փիծծարրոսի, ամենեքին նոքա, որք պահէին զզգացուածս հաւատարմութեան առ ինքնակալ իւրեանց, սկսան խորհիլ զապստամբութիւն իմն. Մմանք 'ի բաց թողլին յայտնապէս զկատն, զոր համարէին անիրաւ. Չէնթէնօ եղեալ յանձաւէն, ուր կայր ղօղեալ, գումարեաց շուրջ զինուն յիւրոց առաջնոց յարելոցն. և այսու տկար և վատազէն ջոլրաւ յառաջխաղաց յանդգնաբար 'ի Կուզքօ. Յանկարծ իմն յարձակմամբ 'ի գիշերային ժամանակի, յորում եցոյց զկրտութիւն և զքաջութիւն զինուորական, տիրացաւ մայրաքաղաքին, թէպէտ և պաշտպանեալ 'ի հինգհարիւր արանց. Մեծագոյն մասն սոցա վերածաւ ընդ դրօշակաւ իւրով. և ինքն կալաւ 'ի սուղ ժամանակի զհրամանատարութիւն երևելի իրիք գնդի վաշտից: 1547 Ապստամբութիւն Չէնթէնոյ:

փիծծարրոս թէպէտ և շտուցեալ ընդ տեսանելն զմի թշնամին մերձենալ ընդ ծով և զմիւսն ընդ ցամաք 'ի ժամանակին, յորում հաւատայր ապահով զմիաւորութիւն բովանդակ փէրուայ 'ի նպաստ իւր, սակայն էր կարի իմն անվեհեր սրտիւ և կարի ընտել փոփոխութեանց բաղդի առ'ի չշփոթելոյ կամ շուարելոյ. Իսկ քանզի երևէր առաւել ստիպօղ վտանգն 'ի գործողութեանց Չէնթէնօյի, գնաց անընդմիջաբար առ'ի ախոյեան ե- Մարտ ընդդէմ Գոնզալոյ Փիծծառրոս:

լանել ընդդէմ նորա. Պատրաստեալ զերիվարովն ամենայն զինուորաց իւրոց՝ չու արար սքանչելի արագութ̃բ. բայց ա̃մ առաւօտու գտանէր զսեպհական զօրութիւն իւր նուազեալ 'ի Բրէոյ. որովհետեւ թողուին զնա իւրքն 'ի գիշերի. եւ թէպէտ էր կասկածոտ տարապայման, եւ պատժէր առանց գթութեան զամենեսին զնոսա, որք անկանէին 'ի կասկած նր̃, սակայն մոլեգնութի̃ դասալքութեան էր ուր ուրեմն կարի բուռն առ'ի չկարելոյ սանձահարել. Յառաջ քան զհասանելն 'ի տեսութիւն թշնամւոյն 'ի Հուարինա մերձ 'ի լիճն Թիթիքաքայ՝ ոչ ունէր աւելի քան զչորեքհարիւր զինուորս. Բայց սոքա էին առաւել ժպիրհքն եւ առաւել յուսահատեալքն 'ի յարելոցն իւրոց, յորս կարէր վստահանալ. եւ ոյք զոյգ նորա գիտելով, թէ յանցանք իւրեանց չէին արժանի թողութեան, ոչ ունէին զայլ յոյս, բայց եթէ 'ի յաջող ելս զինուց իւրեանց. Նորքօք հանդերձ ոչ երկմտեաց կռուիլ ընդ Ձէնթէնոյի, թէպէտ սա ունէր արս կրկնապատիկ աւելի քան զնորայն.
1547 Արքայականքն ոչ խուսեցին 'ի պատերազմէն. որ եղեւ առաւել յամառ եւ առաւել արիւնալի քան զոր երբեք լեալ իցէ ցայնժամ 'ի Փէրու. 'Ի
20 Հոկ կատարած անվեհեր քաջութիւն Փիծծարրոսի եւ
տեմբե. վերնագունութի̃ զինուորական քանքարացն Քար-
Աչ- ո- վայալայ յաղթանակեցին 'ի վր̃ մեծագոյն թուոյն
ւերէ ըղ- եւ ընկալան զլրացեալ իմն յաղթութիւն. Աւարն եղեւ
նա: անբաւ եւ անագորոյն վարուա̃ ը̃ պարտելոցն:

(45) ‖ Ըստ ասելոյ Ֆէրնանտէզայ վիպասանի լաւագոյն տեղեկացելոյ այնմ ժամանակի՝ ամբարձաւ աւարն առ միլիոն մի չորեքհարիւր հազար մարչիլս: ‖

Այսու նշանաւոր դիպուածով վերստին հաստատեցաւ համբաւ Փիծծարրոսի. եւ լինելով նա ներգործարար անյաղթելի համարեն յասպարիզի՝ զօրք իւր աճէին թուով օրըստօրէ:

Բայց հետևեցան այլ դիպուածք 'ի Փէրու. յոլով առաւելապէս հակակշռեալ էր հռչակաւոր յաղթութիւն Հուարինայի. Փիծծարրոս հազիւ թէ թողեալ էր զԼիմա, և քաղաքացիքն պարտաւորեալք 'ի ճնշիչ տէրութէ նորա, կանգնեցին զարքունի դրօշն. և Սըլտանա հատուածով իւրք զօրականաց նաւահանգիսին էառ զստացումն քաղաքին. Գրեթէ 'ի նմին ժամանակի Նախագահն Կասքա եհաս 'ի Թումպէց հինգհարիւր արամբք. Նա հասանէ նայն հանդրուճան դաշտավայրին սրտապնդեալ 'ի 'ի փեներկայութէ նր՝ յայտարար զանձն 'ի կողմն թա- բոռ։ գաւորին. Վիճակ երկուց պառակմանցն ուր ուրեմն էր կատարելապէս հակադրեալ. Քուսքօ և մերձակայ գաւառքն կալեալ էին 'ի Փիծծարրոսէ. բովանդակ մնացեալն կայսերութե 'ի Քուիթօէ մինչև ցհարաւ վերաճանաչէր զիրաւարանութին Կասքայի. Նա վերջինս գոլով աճեցուցեալ զզօրս իւր՝ յառաջեաց 'ի ներքին մասն երկրին. Գնացք իւր հանապազորդ էր միշտ մարդասէր և չափաւորեալ. և յամ դիպաւորութե յայտնէր նա զվառեալ փափագ իւր աւարտելոյ զհակառակութին առանց հեղման արեան. Առաւել հոգածու ուղղելոյ քան թէ պատժելոյ՝ ոչ յանդիման հարկանէր ումեք զանցեալ մեղսն. այլ ժողովէր զնոսա, որպէս ժողովէ հայր զզջացեալ որդիսն, որք դառնան առ ճանաչումն պարտուց իւրեանց. Թէպէտ և փափագող խաղաղութե՝ ոչ անհոգանայր զնախապատրաստութեց իւրոց 'ի սակս պատերազմի. Սահմանեաց վս ընդհանուր գումարման զօրաց իւրոց զարգաւանդ հովիտն Քսաուքսայ 'ի վերայ ճանապարհին Քուսքօի. Մնաց անդ զամիսս ինչ ոչ միայն վս առնելոյ զայլ իմն փորձ իրաւախոհութե ընդ Փիծծարրո- [illegible] սի, այլև վս կարօղ լինելոյ մարզել զնոր զին- [illegible] ուորս իւր առ կիրառութի զինուց, և սովորե- [illegible] ցուցանել զնս առ կրթութի ասպարիզի յառաջ Քառօ

լա X քան յօն ։

քան զընդածելն զնոսա ընդդէմ գնդի միոյ յաղթական վաշտկանաց. Փիծծարրոս յիմարեալ վն բարեյաջողութեն, որ ընկերակցեալ էր ցայնժամ զինուց իւրոց, և հպարտացեալ վն ունելոյն նորոգ գրեթէ զհազար արս ընդ հրամանաւ իւրով, ոչ կամեցաւ ունկն մատուցանել առաջարկութեն իմիք. Թէպէտ Զեփետա ՚ի միասին ընդ պէսպէս պաշտօնատարաց իւրոց և նոյն իսկ Կարվյալ ետուն խորհուրդ աւարտել զայն ընդունելով զմատուցումն ՚ի Նախագահէն ընդհանուր իմն անվնասութեան և յետս կողմամբ կարի իմն ծանր սահմանադրութեց։

(46) ‖ Կարվյալ ՚ի սկզբան անդ արարեալ էր զփաստաբանութի վն միաբանութե իւրք ընդ Գասքայի. Տեսանելով, թէ Փիծծարրոս անընդունակ էր ընտրելոյ զառաջարկութին, զոր թելադրեալ էր նմա, խորհուրդ ետ ենթարկել ինքնակալին իւրոյ. Յորժամ մատուցմունքն դաշներիցուն հաղորդեալ եղեն Փիծծարրոսի ասաց նա.
,, Գասքայն՝ (իւր սովորական կատակերգութբն)
,, այս երեց առաքէ արտաքս կոնդակս շնորհալիս. Տայ զայնս դիւրագնի. ոչ միայն ընկալցուք, այլև տարցուք զայնս ՚ի պարանոցի իբր
,, նշխարս ,, ։ ‖

29 Դեկտեմբե. Գասքա փորձեալ ՚ի զուր զամ հանդամանս առ ՚ի խուսել ՚ի շաղախելոյ զձեռս յարեան քաղաքակցաց իւրոց՝ յառաջխաղաց դէպ Կուսքօի ՚ի գլուխ հազար վեցհարիւր արանց։

Երկոքեան կողմանք պատրաստեն ՚ի պատերազմ։ 1548 Փիծծարրոս վստահացեալ զյաղթութէն՝ եթող զարքայականսն անցանել ընդ ամ գետսն, որք հոսեն ընդ Գուամանկա և ընդ Կուսքօ առանց ՚ի ընդդիմադրութե, և յառաջադէմ լինել ՚ի տարակացութե միայն չորից փարսախաց ՚ի մայրաքաղաքէն, հաւատացուցանելով զանձն, թէ աւերումն ՚ի միում տեղւոջ, որ առնէր անգործադրելի զյետս ընկրկումն, տայր վախճան պատե-

րազ-

9. Ապրիլ:

րազմին 'ի քթթել ական. Յայնժամ դիմեաց նա պատահիլ թշնամւոյն. և Գարվայալ ընտրեաց զդիրս իւր և կարգադրեաց զզօրսն այնու խելամտութբ և խորին գիտութբ արհեստի պատերազմին. որք այնչափ փայլեն յամ գործողութիս իւր. Մինչ առաւել եղական երևեցաւ քան զտեսիլ այսց երկուց զօրաց՝ յորժամ շարժեցան առ'ի դալ 'ի կռիւ. Ի տեսլեան Փիծծարրոսի պերճացելոյ յաւարացն փարթամագոյն երկրին Ամերիկոյ՝ բովանդակ պաշտօնատարք և գրեթէ համօրէն զօրականք զգեցեալ էին դիպակս մետաքսեայս կամ զպալարակապ ասղենկար յոսկւոյ և յարծաթոյ. երիվարք նոցա՝ զէնք նց և դրօշակք համեմատէին մեծագործութեան այնր հանդիսի. Տեսիլ Կասքայի թէպէտև ոչ այնչափ շքեղ՝ ցուցանէր ոչինչ ընդհատ հիանալի. այս է, նոյնինքն ընկերակցել Արքեպիսկոպոսէն Լիմայի՝ Եպիսկոպոսացն Գուիթօի և Գուսքոյի և'ի մեծ բազմութէ եկեղեցականաց, որք երթային միաբան առ աղխաղխիւքն, օրհնելով զզօրսն և քաջալերելով զնս առ լրումն պարտուց իւրեանց:

Փիծծարրոս [illegible] 'ի [illegible] իւրոց:

Յորժամ էին երկոքեան մօտ առ մօտ առ'ի 'ի դիմի հարկանիլ՝ Զեփէտա ետ մտրակ երիվարին իւրում, ել 'ի դուրս քառարշաւակի. և անձնատուր եղև գահերիցուն. Կարչիլասսօ Տէլա Վէկա և այլ համբաւաւոր զօրագլուխք զհետ գնացին օրինակի նր. Դարձումն այնպիսի բարձր աստիճանի անձանց էհար ապշութբ զզօրականսն. փոխադարձ վստահութիս, յորմէ կախի միաւորութիւն և ոյժ զօրու իրիք, նոյնհետայն դադարեցաւ. Կասկած և շփոթումն սփռեցաւ 'ի միջէ 'ի միւս վաշտ. Ոմանք 'ի բաց փախեան դաղտագողի. այլք ցածուցին զզէնս. և մեծագոյն թիւն գնաց միաւորիլ ընդ արքայականաց. Փիծծարրոս, Գարվայալ և այլք ոմանք զօրագլուխք 'ի կիր արկանէին զաւագութիս, զպատնալիս, և զաղաչանս, բայց 'ի զուր. 'Ի միջոցի պակաս քան զկէս ժամ գունդ մի արանց, որ կարողացեալ էր վճռահատել զփերուեան կայսերութեն վիճակէ բոլորովին ցիր և ցան եղև. Փիծծարրոս տեսանելով զանձն յանհնարինս կորուսեալ, աղաղակեաց շուարեալ առ սակաւ զօրագլուխս ոմանս, որք տակաւին հաւատարմաբար զհետ երթային նմա. ,,Օ՛ինչ ինչ մնայ մեզ առնել,,. Պատասխանի ետ միումն 'ի նոցանէ. ,,Խոյասցուք 'ի վր ամրագոյն կողման ճակատու թշնամւոյն, և մեռցուք զօրէն Հռոմայեցւոց,,. Վհատեալ յայսպիսի շրջմանէ բաղդի Փիծծարրոս՝ ոչ կալաւ զսրտեղութի ընդգրկելոյ զայս խորհուրդ արժանագոյն ևս զօրականի մահու. և անարգութբ իմն 'ի նախատինս անցելոյ համբաւոյ իւրոյ՝ անձնատուր եղև միում 'ի զօրագլխոց Կասքայի. Քարվայալ 'ի ներգործութեն, յորում հնարէր փախչել, ժամանեալ և կալանաւորեալ եղև: ՌՇԽԸ.

[illegible] 'ի [illegible] : Կասքա երջանիկ յայսմ անարիւն յաղթութեն ոչ վատահամբաւեաց զայն անողորմութբ. Փիծծարրոս, Քարվայալ և այլք ոմանք պաշտօնատարք յառաւել յանցաւորացն պատժեցան գլխապարտութբ. Փիծծարրոս գլխատեցաւ 'ի նմին աւուր, յորում ետ զանձն 'ի պարտութի. Ընթադրեաց զանձն օրհասի իւրում վայելչական իմն արժանաւորութեամբ. և երևեցաւ փափագող քաւելոյ զղջմամբ զչարիսն, զոր գործեալ էր. Մահն Քարվայալոյ եղև որպէս զկեանս իւր. 'Ի դատաստանական ընթացսն ոչ յառաջ էած զջատագովութի. Յորժամ արտասանեցաւ վճիռն, որ դատապարտէր զնա առ 'ի կախել՝ կրկնեաց ցրտութբ. ,,Մարթէ մեռանիլ միանգամ և եթ,,. 'Ի միջոցի դատավճռոյն և կատարմանն ոչ ետ նշան ո՛չ ստրջանաց վն անցելոյն և ոչ հոգածութեան վն ապագային, հեգնելով զամենեսին զնե, որք երթային յայցելութիւն նորա նովին կայտառութիւն մտաց և նոյին խայթիչ խնդկատակութիւն, որք լեալ էին նմա ընտանեկան ընդ բովանդակ ընթացս կենաց իւրոց. Զեփէտա առաւել մեղապարտ քան զայլս պարտէր մասնակից լինել նորին վիճակի. բայց արդիւնքն սարոշելոյ յընկերակցելոց իւրոց յայնպիսի որոշողական վայրկենի և այնպիսի վճռահատական արգասեաց ապրեցոյց զնա յարժանահաս պատուհասէն. Բայց առաքեալ եղև կալանաւոր 'ի Սպանիա. և մեռաւ յաքսորս.

'Ի մանր պատումն առաքման գրոց, զոր վիպասանք ժամակիցք արարեալ են զքաղաքական տարաձայնութեանց, որք խոշտանգեցին զՓէրու զամս տասն շարունակ, պատահին բազում պարագայք այնքան ապշեցուցիչք, և որք ցուցանեն զեղանակ իմն գործելոյ այնպէս անսովոր, մինչզի արժանի են մասնաւոր իմն ուշադրութեան:

Թէպէտ Սպանիացիք, որք առաջինք եկին 'ի տիրապետութիւն Փէրուայ, էին 'ի խաժամուժէ ժողովրդեան, և մեծագոյն մասն նոցա, որք յաջորդաբար լծակցեցան ընդ նոսա, անձինք տարաբաղդք, սակայն այսու ամենայնիւ յամենայն գունդս վաշտից դաստիարակելոց 'ի զանազան առաջնորդաց, որք վիճէին անձանց զվերինագունութիւնն, ոչ եղև անդէն միմիայն մարդ, որ ծառայէր իբր վարձաւոր զինուոր. Ամենայն բաղդորդ 'ի Փէրու համարէր զանձն իբր տիրապետող հանդերձ իրաւամբք վասն ծառայութեան, զոր մատուցանէր անդէն, ունելոյ զկայուն ինչ յայնմ աշխարհի, որ ստացեալ լինէր 'ի քաջութենէ իւրմէ. 'Ի տարաձայնութիւնս 'ի մէջ տարփակից գլխոց իւրաքանչիւրոք ընդգրկէր զմի կողմն, ըստ որում ուղղէր զնա սեպհական դատումն իւր և զգածումն. Ատեանայր ընդ հրամանատարի իւրում իբրև ընկեր բաղդի իւրոյ և անարժան համարէր նուաստանալ ընդունելով զդրամ իբր վարձկան. Նա

1548 Ով էին զինուորք վարձկանք 'ի քաղաքական պատերազմունս Փէրուայ:

սուրս իւրեանց և ոչ առ գերակայութեան պաշտօնին կամ առ ազնուականութեան տոհմին մեծագոյն մասն զօրավարաց, որոց նոքա հետևէին, էին պարտական վս ամբարձման իւրեանց. և իւրաքանչիւր 'ի յարելոց նոցա յուսայր բանալ ինքեան նորիմիք հայթհայթանօք զճանապարհ իմն առ իշխանութեան և առ հարստութեան։

Օրէնք ատենականք քաղաքածախք։

Այլ թէպէտև վաշտքն 'ի փէրու ծառայէին առանց ինչ կանոնաւոր վճարման, սակայն լինէին անիրաւ իմն ծախք. 'Ի մէջ մարդոց սովորելոց բաժանել յինքեանս զկողոպուտս ընչաւէտ երկրի միոյ՝ ցանկութիւնն հարստանալոյ էր 'ի վերջին ուժգնութեան. Ս առ շահատակութեանց նոցա աճէր ըստ համեմատութեան յուսոյ յաջողելոյ. Ուր ամենեքեան էին ձկտեալք առ նոյն վախճան ընդտէրութիւն նոյն կրից ոչ տեսանիւր, բայց եթէ միմիայն եղանակ շահելոյ զմարդիկ, կամ ապահովանալոյ 'ի վերայ յարման նոցա. Պաշտօնատարք պայմանի և աւագութեան բաց 'ի խոստմանէ ապագայ կայուն ընչից՝ ընդունէին առձեռն զառատ շնորհաբաշխութիւնս 'ի գլխոյն, ի որում յարէին. Կոնծալոս փիծծարրոս առ 'ի առնել զգումար հազար արանց կանխեաց զհինգհարիւր հազար մարչիլս. Կասքա 'ի խումբսն, զոր կալաւ ընդդէմ փիծծարրոսի ծախեաց իննհարիւր հազարս. Բաշխումն յատկութեանց շնորհելոց 'ի վարձ յաջողութեան էր առաւել ևս տարապայման.

[illegible] [illegible] [illegible] հատրէց։

Զէփէտա 'ի փոխարէն հաւատարմութեան իւրոյ և ճարտարմտութեան 'ի հաւանեցուցանելն զատեանն արքունի ունկնդրութեան առ 'ի հաստատել աւագութեան իւրում զյափշտակեալ իրաւարանութեանն փիծծարրոսի՝ ընկալաւ զօղերձ իմն երկրաց, որք պտղաբերէին նմա ամի ամի զմուտս հարիւր յիսուն հազար մարչիլաց. Հինոյօսա, որ 'ի դէպ ժամու օտարացմամբ իւրով 'ի փիծծարրոսէ և աւանդմամբն նաւահանգիսին 'ի Կասքա՝ որոշեաց զվիճակէն Փէրուայ, ստացաւ զնահանգ մի երկրի, որ տայր զերկերիւր հազար մարչիլս տարեկան մուտից. Մինչ այսպէս փոխարինեալ լինէին առաջաւոր պաշտօնատարք, հաւատալի է, թէ ըստ համեմատութեան բարերարեալ լինէին նաև այլք վայրագոյն կարգի:

1548 Այսպիսի իմն սրընթաց փոփոխութի բաղդի յառաջածէր զբնական արգիւնս իւր. Սնուցանէր զնորանոր պիտոյս և զնորանոր ցանկութիս. Զինուորք սովորեալք յերկար ժամանակաց 'ի տարժանմունս և աշխատանս առնոյին 'ի միում վայրկենի զճաշակ անառակութեն և անզգոյշ վատնութեան, և տային զանձինս առ ամ զառանցանս զինուորական ցոփութեան. Ամենք ընկղմէին 'ի շուայտութեն. յայլս բղխէր յօժարութի առ իրս շռայլութեն. Անարգագոյն զինուորն 'ի Փէրու հաւատայր ապաստիճանիլ՝ գնալով հետիոտս. և հանդերձ տարապայման գնով երիվարաց յայնմ աշխարհի՝ ամ որ պնտէր ունել զիւրն յառաջ քան զմտանելն 'ի բանակ. Այլ թէպէտ և էին սակաւատոկք առ աշխատանս, սակայն ընդառաջ ելանէին վտանգի և մահու անվեհեր քաջասրտութեամբ. և խրախուսեալք 'ի յուսոյ նորանոր մրցանակաց՝ ոչ պակասէին երբէք յաւուր պատերազմի յայտնելոյ զբովանդակ քաջութիւնն բնական ինքեանց:

'Ի միասին ընդ քաջասրտութեն իւրեանց պահէին զհամակ գազանութիւն, որով տրոհեալ էին վաղնջուց. Քաղաքական երկպառակութիւն ոչ թագաւորեաց երբէք սաստիկ մոլեգնութբ, բայց եթէ 'ի մէջ Սպանիացւոցն Փէրուայ. Ընդ ամ կիրսն, որք յոլովակի բորբոքեն զներհակութիւնսն 'ի մէջ քաղաքակցաց, լծակցիւր ագահութիւն. որ առաւել կատաղեցուցանէր զթշնամութի նոցա. Անյագ տենչն 'ի բուռն արկանելոյ զհարուստ կողոպուտս զկնի մահուան հակա-

[illegible]

ռակամարտի միոյ փակէր զդրունս գթութն. Ունիլն փարթամ բաւական էր ըստ ինքեան առ՚ի դնել զմարդ ոք ՚ի վտանգ ամբաստանութեան և ենթարկել զնա պատուհասի. Թեթևագոյն կասկածք ներածին զՓիծծարրոս դատապարտել ՚ի մահ զբազումս յառաւել հարուստ բնակչացն Փէրուայ. Կարվայալ առանց յառաջարկելոյ զպատճառ ինչ, որ արդարացուսցէ զանողորմութիւն իւր սպան ՚ի նոցանէ զյոլովագոյնս ևս. Թիւ նոցա, որք տանջեցան ՚ի ձեռն դահճի եղև դուն ինչ վայրագոյն քան զնս, որք կորեան ՚ի տեղի մարտի. և մեծագոյն մասն դատապարտեալ լինէր առանց կերպականութեան օրինական դատաստանի:

(47) ‖ Մինչդեռ տևէր ապստամբութին Կօնծալոսի Փիծծարրոսի, արք եօթնհարիւր մեռան ՚ի պատերազմի. և երեքհարիւր ութսուն կախեալ եղեն կամ գլխատեալ. Աւելի քան երեքհարիւրք ՚ի նոցանէ սպանան հրամանաւ Կարվայալայ. Զարաթա ամբառնայ մինչև ցհինգհարիւր զթիւ նց, որք սպանեալ եղեն դատաստանաւ: ‖

[illegible] Բռնութին, որով պայքարիչ կողմանքն վարէին զհակառակորդս իւրեանց, աքսորեաց ՚ի սրտից նց զյարգումն և զհաւատարմութին. զոր պարտական էին առ նս, ընդ որոց զինուորէին. Կապանք պատույ, որ ՚ի մէջ զինուորաց կալեալ լինէին առ սրբազանս, և սկիզբն լաւութն ներքսապէս քաղաքցեալ ընդ դրօշմի Սպանիացւոյ, որպէս ընդ այլ զինչևիցէ ազգի, երևի թէ հաւասարապէս ՚ի մոռացօնս անկեալ էին. Նաև նկատումն վայելչութն և զգացուած ամօթոյ բնաւին կորուսեալ էին. Զորքան տևէին տարաձայնութիք, հազիւ գոյր Սպանիացի ոք ՚ի Փէրու, որ ոչ ՚ի բաց թողոյր զկողմն, զոր սկզբնաբար կալեալ էր, որ ոչ մատնէր զընկերակիցս իւր, ընդ որոց միացեալ էր, որ ոչ լուծանէր զդաշինսն, որովք եկեալ էր. փոխարքայն Նունեզ Վելա կորեաւ վասն մատնութեն Չեփետայի և այլոց դատաւորաց արքունի ունկնդրութեն. որք ըստ պարտուց պաշտօնի իւրեանց պարտական էին ջատագովել զաւագութեն նորա. Նախապետական խորհրդականք և ընկերք վտարանջութեն Գոնծալոսի Փիծծարրոսի եղեն առաջինք 'ի բարձի թողլ առնել զնա և յընկերակցիլ ընդ թշնամեաց իւրոց. Նաւահանգէս իւր տուեալ եղև Կասքայի 'ի նոյն մարդոյ, զոր Փիծծարրոս ընտրեալ էր 'ի մէջ պաշտօնատարաց իւրոց առ 'ի հաւատալ նմա զայն ծանրակշիռ հրամանատարութիւն. Յաւուրն, որ պարտէր վճռահատել զվիճակէ իւրմէ, զորք իմն հին զօրականաց յանդիման թշնամւոյն ընկէց 'ի գետին զզէնս առանց ձգելոյ զհարուած իմն. և դասալիք եղև 'ի զօրավարէ միոջէ, որ յաճախ առաջնորդեալ էր նմա առ յաղթութի. Յայժ ցանցաղակի պատահին 'ի վիպասանութեն օրինակք այսպիսի յայտնի և այսպէս հանրական իմն արհամարհութեն սկզբանց և պարտաւորութեց, որք կապեն զմարդիկ 'ի մէջ իւրեանց. Ուր յայժ հեռի է աթոռ կառավարութեն, ուր սանձ օրինաց և կարգի է սակաւ զգացեալ, ուր գիտումն շահու է անկոպար, և ուր անբաւ իմն հարստութիւն կարէ ծածկել զյանցանսն, որոց միջնորդութի ստացեալ լինի՝ կարէ միայն գտանիլ համեմատութի իմն առ յողդողդութիւն, առ յափշտակողութիւն, առ անհաւատարմութիւն և առ զեղծումն, որք զօրացան 'ի մէջ Սպանիացւոցն Փէրուայ։

Սա[illegible]'ի
Գործ վա
րէ ղղէն
[illegible]
[illegible]։

Յետ մահուան Փիծծարրոսի տժգոհքն յամ անկեան Փէրուայ եղին զզէնս իւրեանց. և երևեցաւ, թէ անդորրութիւն վերահաստատեցաւ կատարելապէս. Բայց երկու գերփութալի առարկայք մնացեալ էին տակաւին 'ի զբաղեցուցանել զուշադրութի նախագահին. Մինն էր գտանել վաղվաղակի գործ վասն բազմութեան միոյ խռովալից և յանդուգն բաղդորդաց, որովք լի էր աշխարհն, որպէս զի մի յարուսցեն զնոր խռովութիւնս. միւսն տալ զհամապատշաճ շնորհաբաշխութիւնս նոցա, որոց հաւատարմութեան և քաջութեան պարտական էր նա զյաջողակ պատահումն իւր. Առաջինն ըստ իմիք լրացուցեալ եղև, սահմանելով զՊետրոս Վալտիվիայ առ 'ի յառաջ տանել զտիրապետութիւն Չիլեայ, և աւագացուցանելով զԴիեկոս Սէնթէնօ առ 'ի ձեռնամուխ լինել 'ի ծանօթութիւն համատարած գաւառացն սահմանելոց վտակաւն Տէլափլաթայի. Համբաւ զօրավարացս այսոցիկ և յոյսն բարեգունացուցանելոյ զպայման իւրեանց 'ի Նոր երկրի միում յորդորեաց զբազումս յառաւել կարօտ և յուսահատ զօրականաց զհետ երթալ դրօշակի նոցա. և այսպիսի եղանակաւ ցրուեցաւ բաժին մի այնր ապստամբ և դիւրաբորբոք ոգւոյ. յորմէ Կասքա զանգիտէր այնչափ:

Ռոճանումն էր ճրէն 'ի Քաջ հետեւողաց իւրոց:

Երկրորդն էր իրողութիւն իմն մեծագոյն դժուարութեան, և պահանջէր զձեռն առաւել ուշադիր և առաւել զգուշաւոր. Ռոճիկք կամ շնորհմունք երկրաց, կամ Հնդկաց, որք բաշխելի էին զկնի մահուան և յարքունիս առման անցելոց ստացողաց, ամբառնային յաւելի քան զերկու միլիոն մարչիլս տարեկան մտից. Կասքա բացարձակ տէր եղեալ այսր անբաւ հարստութեան կալաւ զնոյն անանձնաշահասէր զգացուածսն, զորս դաւանեաց անդստին 'ի սկզբանէ. և ոչ կամեցաւ վերապահել անտի վասն իւր զդոյզն ինչ բաժին. Բայց թիւ պահանջողացն էր մեծ. և մինչ ունայնութիւն կամ ագահութիւն իւրաքանչիւր անհատի սահմանէր զարժողութիւն սեպհական ծառայութեան իւրոյ, և դատէր զփոխարինէն, զոր պարտ հաւատայր, պահանջմունք իւրաքանչիւր ուրուք էին այնպէս տարապայմանք, մինչ զի անկարելի լինէր շատացուցանել զամենեսեան. Գասքա ունկնդիր եղև նոցա մի առ մի առաւել համբերատար ուշադրութբ՟. և առ'ի ունել ժամանակ կշռելոյ զվաստակ ն՟ց և զզանազան իրաւունս ն՟ց խնամով՝ խօսս ետ 'ի միասին ընդ Արքեպիսկոպոսին Լիմայի և ընդ ատենադպրի նորա 'ի գիւղ մի երկոտասան փարսախ հեռի 'ի Կուսքօէ. Անցոյց անդէն զաւուրս ինչ՝ նշանակելով իւրաքանչիւրում զնահանգ ինչ երկրի և զթիւ ինչ Հնդկաց ըստ չափակցութե՟ անցելոց ծառայութենց ն՟ց, և զորս կարօղէին մատուցանել առ յապայն. Ապա առ'ի խուսել յաղաղակացն, զորս նախատեսանէր յառնելոց 'ի հրատարակման վճռոյն իւրոյ՝ ոչինչ օգտելով անաչառ արդարութեանն, որով կերպաւորեալ էր զայն, եւ գնաց 'ի Լիմա, թողլով զորոշումն բաշխմանն կնքեալ հանդերձ պատուիրանաւ չբանալոյ, բայց եթէ աւուրբք ինչ զկնի մեկնելոյ իւրոյ ։

Զայրացումն զարթուցեալ 'ի հրատարակելոյ վճռոյ բաժանմանն ոչ եղև փոքրագոյն քան զայն, զոր Գասքա նախատեսեալ էր. Անպարծութիւն, ագահութիւն, նախանձ, յաչաղութիւն, ամօթն, կատաղութիւն և այլ ամ՟ կիրք, որք յուզեն առաւել ուժգնութբ՟ զսիրտ մարդկան, յորժամ սաստկապէս դիպի 'ի պատիւ և 'ի շահ անձին նոցա, հանգանակեցին յաճեցուցանել զժպրհութիւնն. ուստի և ճայթեցաւ բովանդակ մոլեգնութբ՟ն, որ կարէր սպասել 'ի լիրբ զինուորաց. Տարուրք, ապառնալիք և անէծք թափեցան յայտնապ՟ ընդդէմ գահերիցուն. Ամբաստանեալ եղև իբր ապերախտ, ակնառու, և անիրաւ. Այց ապստամբական զօրաց վաղվաղակի զհետ եկեալ էին գործք ոչինչ նուաղ որոշեալք. և այնինչ սկսանէին զորքն դարձուցանել զաչս իւրեանց առ ոմանս տժգոհ զօրավարս, հաւատացուցանելով զինքեանս, թէ ջատագովեսցեն զն՟ս առ'ի պա-

24. Զ-
Գ[illegible].
Տհաճա
Ըէն, [illegible]
պատճա
ռէ նու։

հանջել զվճարումն անիրաւութեանց իւրեանց. Բայց կառավարութիւնն կալաւ զայնքան աւագութիւն գնելոյ պղիպաւոր իմն սանձ այսմ ոգւոյ պառակտման. և վտանգն այլ իմն քաղաքական պատերազմի առժամայն անդ հեռացուցեալ եղև:

1549 Բայց Կայսր տեսանելով, թէ բոցն ճնշեալ էր, այլ ոչ շիջեալ, գուն գործէր մեծագոյն մտադիւրութեան ամոքել զդժգոհսն, տալով ոմանց զառատաձեռն շնորհաբաշխութիւ, այլոց խոստանալով զբաշխոյս՝ յորժամ լինիցին դատարկացեալ, փաղաքշելով զնա և մարդելուզելով զամենեսեան. Այլ որովզի հրապարակաւն ապահովութիւն մնացէ 'ի վ՟ր տեւելհաստատուն հիման, քան թէ 'ի վ՟ր բարեզգածութեան ն՟ց, նախահոգացաւ զօրացուցանել զձեռս յաջորդաց իւրոց 'ի պաշտօնին, կանոնաւորելով զմատակարարութեան արդարութեան յամենայն կողման կայսերութեանն. Ի ներքս եած զկարգ և զպարզութիւն 'ի թափելն զարքունի մուտսն. առաքեաց զկանոնաւորութիւնս նկատմամբ վարմանն Հնդկաց, որք դիմեին 'ի պատսպարել զնոսա 'ի ճնշմանէն, և յառաջատես լինել հրահանգութեան ն՟ց 'ի սկզբունս կրօնին առանց զրկելոյ զՍպանիացիս 'ի բարերարութեն հանեցելոյ յաշխատութեան ն՟ց. 'Ի վախճանի գոլով լրացուցեալ զինչ և իցէ առարկայ առաքման իւրոյ Կայսրն փափագող վերադառնալոյ յառանձնական կեանսն հաւատաց զկառավարութիւն փէրուայ ատենին ունկնդրութեան. և մեկնեցաւ գնաց 'ի Սպանիա. Եւ քանզի մինչ տևէր անիշխանութիւն և վրդովումն չորից ամաց անցելոց ոչ էր արարեալ վերառաքումն ինչ արքունի մտից, նախինքն տարաւ ը՟ իւր զմի միլիոն և զերեքհարիւր հազար դահեկանս հրապարակաւն դրամոյ, զոր տնօրէնութիւն և կարգն մատակարարութեան իւրոյ ետուն նմա խնայել, վճարել զբովանդակ ծախսն պատերազմին:

Վերահաստատէ ըստ ջորգն և [illegible]:

1550 Մեկնի Եր[illegible]ն Սպանիա:

Ընկալեալ եղև 'ի բնիկ աշխարհն իւր զարմացմամբ,

որում

Ընդա- [illegible] [illegible] 'ի Սպա- նիա։

որում արժանի էր ընդունակութի իւր և առաքինութն. Երկոքեան իսկապս էին երևելիք. բանից զօրաց և նաւահանգիսի, առանց հրապարական հիմանց՝ այնպիսի իմն պարզ արբանեկութ, զի միայն երբեք հազար տուգանք ծախեցան վն գնելոյ զայն 'ի կարգի՝ մեկնեցաւ նա 'ի Սպանիոյ առ 'ի գնալ ընդդէմ ահարկու իմն ապստամբութեն. Իւրով յաջողակութբն և քանքարօքն լցոյց զայս ամ պակասութիս. և երևեցաւ, թէ ստեղծանէր զգործիս առ կատարումն գաղափարաց իւրոց. Գիտաց ստանալ զնաւական իմն զօրութի, որ արար զնա տր ծովու. Գումարեաց զգունդ մի արանց ընդունակ զդէմ ունելոյ փաշտկանաց, որք տային օրէնս ծովերուայ. Յաղթեաց զօրավարի նց, որոյ զէնք միշտ ընկերակցել էին 'ի յաղթութ. և 'ի տեղի անիշխանութեն և յափշտակութեն կայացոյց զկառավարութ օրինաց և զաւագութի օրինաւոր ինքնակալի միոյ. Բայց ըզգովութ ընդունակութն իւրոյ գերազանցեաց գովութին, որում արժանաւորէր առաքինութի իւր. Զկնի կալոյ յաշխարհի միում, ուր գանձք առաջի առնէին հրապոյրս, որք պատրել էին զամ անձն, որ վայելել էր անդէն յիմիք իշխանութե, նախնքն եւ անտի կատարելութ իմն առանց արատոյ և մինչև առնց ինչ կասկածի. Յետ բաշխելոյ 'ի մէջ քաղաքակցաց իւրոց զստացուածս մեծագոյն տարածութե և արժողութե քան զայն, որ լել իցէ երբեք 'ի ձեռս հպատակի ուրուք յիմիք դարու և առ ազգի իմիք շնորհելոյ՝ նա միայն մնաց 'ի նախկին կացութն իւրում աղքատութե. և 'ի նմին ժմկի, յորում եբեր զայնպիսի անբաւ գումարս առ արքունի գանձարանն, հարկեցաւ ներկայացուցանել զպաղատանս ինչ վն դոյզն ինչ գումարոյ, որպզի վճարեսցէ զփոքրիկ պարտս ինչ արարեալս 'ի նմանէ յընթացս ծառայութն իւրոյ. Կատոլոս ոչ եղև անզգայ առ այնչափ իմն վաստակ առնց ինչ շահու անձին. Կայքս ժողովել եղև 'ի նմանէ երևելագոյն նշանք համբն.

և գոլով յառաջաշրժել առ եպկուի փալէնչիայ՝ անցոյց զմնացորդ աւուրց իւրոց յանդորրութեան առանձնութեան, ակնածել 'ի հայրենեաց իւրոց, պատճել յինքնակալէ իւրմէ, և սիրեցել առ հասրկ յամենցնց ։ Զանդերձ ամ հանճարեղ կանոնաւորութքն Աբասքալի՝ անդորրութին փերուայ ոչ եղև յերկարատև . Յաշխարհի միում, ուր աւագուին կառավարուն էր գրեթէ մոռացել ը երկայն ժմկ, յորում նախազօրացան անդէն անիշխանութին և անկարգութին, ուր զօրավարք խառնեք կային պատրաստք առ ապստամբութի և աղմկասէր զօրականք ամենապատրաստք առ 'ի զհետ երթալ նց՝ ոչ էր դժուարին զարթուցանել անդէն զհրդեհ իմն . Բազում յաջորդակն խռովութիք յատակեցին ը ամս ինչ զնն . Այլ քանզի այսպիսի եղեն անցաւոր փոթորիկք՝ յարուցեալք յաւէտ 'ի փառամոլութէ և 'ի խռովարարութէ մասնաւոր մրդոց, քան թէ 'ի հանրակն և 'ի հրապարակն պատճառաց՝ բացադրութի նց ոչ է առարկայ այսր վիպասանութ . Ժողովմունք փերուայ նմանակք այլ ամ հիւանդութն կմ 'ի բնակն կմ 'ի քաղաքակն մարմնի ոչ տևէին յերկար . և բերելով 'ի դուրս զխահրել և զապականել հիւթսն, որք տուել էին սկիզբն անկարգութեցն, հանգանակէին 'ի վախճանի յամրացուցանել զընկերութին . զոր 'ի սկզբան անդ սպառնային եղծանել . 'Ի ժմկի դժնեայ հակառակութեց նց բզում յառջնոց յափշտակողացն փերուայ և յոգունք յայնց ցոփ բաղդորդաց հրաւիրելոց անդր 'ի համբաւոյ յաջողութեց նց, անկն ձեռամբ միմեանց . Իւրաքանչիւր կողմն ը որում փոփոխակի նախազօրանայր 'ի պայքարմունսն՝ կողոպտէր զերկրն 'ի մեծագոյն իմն թշռոյ, սպանանելով, տարագրելով կմ աքսորելով ըդհակառակորդսն . Մարդիկ նուաղ ձեռներէցք և սովորեալք 'ի կեալ զգաստ իմն և խաղաղակն մտավարժութ կայունացն յետոյ 'ի փէրու . և արքային աւագութին սակաւ առ սակաւ սիրտեցաւ անդէն նովին հաստատութբ, որով յայլ հարգունութեան Սպանիացւոց ։

ՎԻՊԱ-

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿՈՅ.

ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ:

Քննութիւն սահմանադրութեանց և վարուց Մեքսիկացւոց և Փերուացւոց. Կայսրութիւնք քաղաքականացեալք քաղաքավարութեամբ Ամերիկեցւոց. Նորոգ ծագումն Մեքսիկացւոց. Իրարք, որ հաստատեն, թէ ո՛րչափ քաղաքավարեալ էին. Քննութիւն քաղաքականութեանն նց 'ի դէպս ճշմարտութեան արհեստից իւրեանց. Իրարք, որ հաստատեն, թէ նուազ սակաւ քաղաքավարեալ էին. Կարծիքն, զոր պարտիմք կերպարանել մեզ՝ 'ի վերայ քաղաքավարութեան զայսմանէ արդեօք հասարակութեան. Ոգի կրօնի նոցա. Ա[illegible] 'ի պատմութեանց և Փերուացւոց. Քաղաքական կառավարութիւն իւր հիմնեալ 'ի կրօնի. Նշանաւոր արուեստագործութիւնք այսորիկ. Յատկութիւնն ծանօթ Փերուացւոց. Հասարակական գործք նց. Արհեստք նց. Ճանապարհք, կամուրջք և շէնուածք նոցա. Սակաւ պատերազմականք. Քննութիւն այլոց կալուածոց Սպանիացւոց յԱմերիկա. Ցինալօա և Սոնորա. Կալիֆօռնիա, Իւքաթան և Հոնդուրաս. Քիլի, Թուքուման. Թագաւորութիւնն Հաստատուն Երկրի. Նոր Թագաւորութիւնն Կրանատայ:

Քանզի տիրապետութիւն երկուց մեծամեծ կայսերութեանցն Մեքսիկոյ և Փերուայ կերպաւորէ զպայծառագոյն և զշահեկանագոյն պարբերութիւն 'ի վիպասանութեանն Ամերիկոյ՝ քննութիւն իմն քաղաքական սահմանադրութեանց նց և ստո-

րագբագրութի իմ՟ ազգային բարուց ն՟ց յանդիման արասցէ իմաստուն նշմարողաց զմարդկային տեսակն 'ի պէսպէս յառաջադիմութի՟ս իւր:

(1) Ի հետազօտութի՟ս իմ 'ի վ՟ր բարուց և քաղաքավարութե՟ Մեքսիքացւոց հանե՟լ եմ ըզբաղում ծանօթութիւնս 'ի մեծ ձեռագրէ միոջէ Տեառն Ալոնծոսի Զօրիթայի՝ միոյն 'ի դատաւորաց ատենին ունկնդրութե՟ Մեքսիքոյ. Յամին 1553, Փիլիպպոս երկրորդ առ 'ի գտանել զեղանակն թափելոյ զհարկն 'ի հպատակաց իւրոց Հնդկաց, որ էր առաւել շահեկան թագաւորութեանն և նուազ ծանրաբեռն նոցին՝ առաքեաց զհրաման իմ՟ առ բովանդակ ատեանս ունկնդրութե՟ յԱմերիկա՝ պատուիրելով նոցա պատասխանել հարցմանց ինչ, զորս առաջադրէր ն՟ց վերահայեցմամբ նախկին կերպի կառավարութեան սահմանեցելոյ 'ի մէջ պէսպէս ազգացն Ամերիկոյ և տարազուն, որով ինքեանք վճարէին զսակս թագաւորին կամ գլխոց իւրեանց. 'Ի հետևութե՟ այսր հրամանի Զօրիթա, որ նստեալ էր ամս ինն և տասն յԱմերիկա, զորոց զչորեքտասանսն անցուցեալ էր 'ի Նորն Սպանիա, շարադրեաց զգործս, զորոյ ունիմ զօրինակն. Նա զեկուցանէ ինքնակալի իւրում, թէ զբաղե՟լ էր ինքն ցորչափ տևէր ժամանակ դադարման իւրոյ յԱմերիկա և յամ՟ գաւառս այց արարեալս 'ի նմանէ՝ 'ի հետազօտել մտադիւրաբար զհանգամանս և զբարս ազգայնոցն. և թէ կենցաղավարե՟լ էր առ այս վախճան ընդ բազմաց Հնդկաց ծերունեաց և իմաստնոց, և խորհրդակցեալ ընդ զանազան եկեղեցականաց Սպանիացւոց, որք իմանային կատարելապէս զլեզուս Հնդկաց, և մասնաւորաբար ընդ ոմանց 'ի նոցանէ, որք եկեալ էին 'ի Նորն Սպանիա վաղվաղակի զկնի առացմանն. Երևի, թէ Զօրիթա իցէ այր մի գիտնական ըստ իմիք. և թէ արարեալ իցէ զհետազօտութի՟ս իւր մտա-

դիւրութ՟բ և խնամով. որպէս ինքն համարի. Վկայութիւն իւր արժանի է մեծի իմիք հաւատարմութեան վ՟ն մասնաւոր ինչ պարագայի. Գործ իւր ոչ եղև շարադրել՟ դիտմամբ հրատարակելոյ զայն, կամ ջատագովելոյ զիղական ինչ դիրս ընդգրկեալս 'ի նմանէ, այլ պարզապէս վ՟ն վճարելոյ խնդրոյն, զորս դատաւորք արարեալ էին նմա. Թէպէտ Հերրերա ոչ թըէ զնա 'ի մէջ հեղինակացն, որոց ինքն հետևի իբրև առաջնորդաց 'ի վիպասանութեան իւրում, սակայն ես հաւատայի 'ի զանազան եղելոցն, զորս պատմէ նա, և 'ի զանազան ոճոյն, զորս 'ի կիր արկանէ, թէ նա ճանաչէր կարի իսկ քաջ զօրըստօրական մատեանն Զօրիթայի։ ‖

Մէսսիկօ և Փէրու առաւել կրթեալ ք՟ն [illegible] այլ մասն Ամերիկոյ։

Մէսսիկօ և Փէրու յորժամ բաղդատին ը՟ն այլոց մասանց նորոյ աշխարհի՝ կարեն նկատիլ իբր աղգք յղկեալք. փոխանակ փոքրիկ՝ անկախ և թշնամի ցեղից, որք շրջին 'ի խնդիր ապրստի ընդ անտառս և ընդ ճախինս, զուրկք 'ի մտավարժութենէ և յարհեստից՝ առանց ճանաչման ստորակարգութեան և գրեթէ առանց երևութի կարգաւոր կառավարութեան՝ գտանեմք անդէն զերկիրս մեծի տարածութեան ենթադրեալս տէրութեան արքայի միոյ, բնակիչս հաւաքեալս 'ի միասին 'ի քաղաքի, իմաստութիւն և նախատեսութիւն կանոնաւորչաց պարապելոց 'ի յառաջատեսչութիւն կենաց և ապահովութեան ժողովրդոցն, հրամանատարութիւն օրինաց հաստատեալ տարազու իւիք, կրօնից աւագութեան վերաճանաչեալ, բազում յարհեստից կարևորաց առ ընկերական կենաց հասուցելոյ առ աստիճան ինչ կատարելութեան, և ուրոճականն այնց, որք ոչ ծառայեն, բայց եթէ առ շռայլութիւն։

Ստորագոյն է ք՟ն [illegible] նախնի ցամաքին։

Բայց բաղդատելով զնոսա ընդ ժողովրդոց նախկին շարունակին, տեսցուք յայտնապէս զվայրագունութիւն Ամերիկոյ յա՟մ սեռի, և Մէսսիկացիք և Փէրուացիք ոչ արժանաւորին դասիլ ընդ կիրթ ազգաց. Նոքա իբրև զբիրտ ցեղսն, որք շուրջ կային նոցա, ոչ ճանաչէին բնաւին զկիրառութ՟ի հրահալելեաց. և ոչ վարէին, բայց եթէ զանկատար իմն հրամանատարութի՟ 'ի վ՟ր շնչաւորաց. Մէքսիքացիք ոչ էին ժամանեալ, բայց եթէ առ 'ի սնուցանել զհնդկահաւս, զբադս, զտեսակ ինչ փոքրիկ շանց և ընտանի նապաստակաց. Այսոքիք տկար ճանաչմամբք արարեալ էին զհայթհայթանս ապրստի, զճշմարիտն ասելով՝ առաւել առատ և առաւել ապահով, քան թէ յորժամ մարդիկ կախին վ՟ր սնանելոյ յորսոյ միայն. բայց ոչ եկն երբէք 'ի միտս նոցա գաղափարն նուաճելոյ զուժեղագոյն շնչաւորս. առանց որոց ոչ կարեն մշակել անդք. Երևի թէ փերուացիք ոչ հոգային զվայրագոյն շնչաւորաց, և թէ ոչ էին ընտելացուցեալ զոմանս 'ի նոցանէ. թող զբադն. Սակայն եղեն առաւել բաղդաւորք յընտանեցուցանելն զԼլամա՝ մասնաւոր շնչաւոր երկրի իւրեանց, որ ձևովն նմանի ուղտու, և 'ի մեծութե՟ սակաւ ինչ աւելի քան զոչխարն. Հոգածութե՟ մարդոյ այս տեսակ բ՟զմանայր երևելաբար. Բուրդն իւր մատակարարէր փերուացւոց զնիւթ զգեստուց, և միս իւր զկերակուր. Ծառայեցուցանէին ևս զնա իբր զգրաստ, և տանէր զչափաւոր բեռինս բազում հեզութե՟ և համբերութե՟. Ոչ երբէք լծեալ էր 'ի սայլ, և սերունդ իւր գոլով սահմանաւորեալ 'ի լեռնային գաւառս, ծառայութի՟ իւր, եթէ կարիցեմք դատել յայնմանէ, որ ընթերցանի 'ի նախկին մատենագիրս Սպանիացւոց, ոչ էր կարի տարածեա՟լ 'ի մէջ փերուացւոց 'ի սկզբնական կացութե՟ իւրեանց:

'Ի հետազօտելն զճանապարհն, ընդ որ ազգք յառաջադէմ լինին առ քաղաքականութի՟ն, ծանօթութի՟ն պիտանի հրահալելեաց և ստացուա՟ծ տէրութե՟ 'ի վ՟ր շնչաւորաց, նշանաւորեա՟լ են իբր քայլք ծայրագոյն մեծու՟ 'ի զարգացման իւրեանց.

'Ի

Ի շարունակի մերում ընկերութին տևեաց յայնմ վիճակի, որ անուանի բարբարոսական ընդ երկար ժամանակ յետ ժամանելոյ մարդկան առ երկոսին այսուիկ իրս. Զանդերձ տէրութիւն, զոր նոքա առին 'ի վերայ բնութն, պիտոյ են բազում դարք յառաջքան թէ մտավարժութին լինիցի այնպէս կատարեալ, մինչև ապահովացուցանել զապրուստ յառաջքան զգտանիլն արուեստից, որք լինուն զհասարակաց պէտսն և մատակարարեն ըզդիւրութիւս կենաց, և յառաջքան զյղանալն զգաղափար ինչ պէսից սահմանադրութեց, որք խնդրին 'ի բարւոք կարգաւորել ընկերութն միում. Մեսսիքացիք և Փերուացիք առանց ճանաչման պիտանի հրահանգելեաց, և առանց օգնութեն ընտանի շնչաւորաց կրէին զտուգանս, որք պարտէին յամեցուցանել յոյժ զյառաջադիմութիւս նց. Եւ 'ի բարձրագոյն վիճակի նրբութեան նոցա էր այնպէս կոպարաւորեալ կարողութի նց, և այնպէս տկար գործելն, մինչ զի կարեն նկատել իբրև ազգ հազիւ ելեալ 'ի տղայութենէ քաղաքական կենաց ։

Յետ այսր հանրական նշմարութեն վերահայեցմամբ պարակայի առաւել եղականի և երևելւոյ 'ի կացութն այսց երկուց մեծամեծ թագաւորութեցն Ամերիկոյ՝ ջանացայց դնել առաջի զսահմանադրութիւս, և զներքին քաղաքավարութիւնն իւրաքանչիւրոցն այնպէս՝ զի կարիցէ դնել զմեզ յաստիճանի որոշելոյ զդիրս նոցա 'ի քաղաքական կշռորդի, նշանակելոյ նոցա զսեփական տեղին 'ի մէջ անկիրթ ցեղիցն Նորոյ աշխարհին և 'ի մէջ կիրթ ազգացն հնոյ աշխարհին, և վճռահատելոյ, թէ որչափ նոքա ամբարձեալ էին 'ի վր առաջնոցն և ո՛րքան վայրագոյնք երևէին քան զերկրորդսն ։

Քննութիւն օրէնաց և կարգաց այոց երկուց ազգաց ։

Մեսսիքօ եղև առաջին յենթարկիլ թագաւորութեն Սպանիոյ. բայց այսպիսի իմն պարակայ ոչ

Անկա-
տար ծա-
նօթութիւնք
աշխարհին
երկրաց նո-
[illegible]
Մեքսի-
քոյ:

առնէ առաւել լրացեալ զճանաչումն օրինաց իւրոց և վարուց. Այն՝ զոր նշմարեցի կանխաւ նըկատմամբ պակասաւոր ծանօթութեանցն, յորոց վն̃ հարօղեմ յենուլ առ'ի գիտել զպայման, և զվարս վայրագ ցեղիցն Ամերիկոյ, կարէ հաւասարապէս մերձեցուցանիլ 'ի ճառելն զթագաւորութէ Մէքսիքոյ. Կօրթէս և յափշտակօղ բաղձորդքն, որք ընկերեցին նմա, ոչ ունէին զդիւրութի կամ զընդունակութի հաստատացուցանելոյ նորանոր դիտողութիւնս քաղաքական կամ զբնական վիպասանութիւնս. Նոքա ձեռնամուխ եղեն 'ի շահատակութի իւրեանց 'ի խնդիր միոյ և եթ առարկայի. և երևի թէ ոչ դարձուցին զաչս առ այլ ինչ. Այլ եթէ 'ի ժամու սուղ ինչ միջոցի անդորրութեն աւարտեալ գործք պատերազմին և դադարեալ առ ժամանակ մի եռանդն կողոպտելոյ, սահմանադրութիւնքն և վարմունք ժողովրդեանն տիրապետեցելոյ 'ի նոցանէ զարթուցանէին զուշադրութի նց̃, հետազօտութիւնք տգէտ զինուորացն էին ընդածեալք այնպէս սակաւ զգօնութբ և որոշմամբ մինչ զի պատմութիւնք արարեալք 'ի նոցանէ զքաղաքականութէ և զկարգէ հաստատեցելոյ 'ի Մէքսիքոյ են վեր'ի վերոյ և շփոթք և յոլովակի անմեկնելիք. Մանաւանդ 'ի պատահմանցն զորս նոքա յառաջ բերեն յարեանցն և ոչ 'ի տրամաբանութեանց նց̃ և 'ի դիտողութեանց մարթէ հանել զծանօթութի ինչ զբարուց և զվարուց այնր ժողովրդեան. Խորթնութիւն, յորում տգիտութիւն, հետազօտողաց շաղեաց զտարեգրութիւն Մէքսիքոյ ածեցուցեալ եղև յաւելորդապաշտութէ այնոցիկ ոյք գնացին անդր զկնի նց̃. Այլ քանզի յիշատակ անցելոց դիպուածոց պահիւր 'ի մէջ Մէքսիկացւոց միջնորդութբ ձևոց նկարելոց 'ի մորթս 'ի պաստառս բամպակի կամ 'ի կեղևս ծառոց, առաջին քարոզիչքն անընդունակք մեկնելոյ զնշանակիսն նոցա, և շրտուցեալք յօտարոտի կերպարանաց նոցա, համարեցան, թէ էին յիշատակարանք կռապաշտութեն, զորս արժան էր եղծանել առ'ի դիւրացուցանել զդարձն Հնդկացն. Յաղագս հրամանի միոյ հրատարակեցելոյ 'ի Յօհաննու Զումմարակայ կրօնաւորէ 'ի կարգէ սրբոյն Ֆրանչիսկոսի, և յառաջնոյ եպիսկոպոսէ Մէքսիքոյի՝ բովանդակ յիշատակարանքն այնոքիկ Մէքսիքեան պատմութեն հաւաքեալ եղեն և մատնեալ 'ի հուր. Պատճառաւ այսր տարապայման նախանձու վանականացն, ոյք այց արարին նախաճգին նորոյն Սպանիոյ (նախանձ զորմէ ոչ անագանեցան գանգատիլ յաջորդք նց,) կորեաւ բոլորովին ամ ծանօթութի վաղնջագոյն գործոց բացատրելոց յայն ուրոճական յիշատակարանսն. և ոչ մնաց անդէն հետք ինչ վաղեմի փոփոխութեց և քաղաքավարութեն կայսրութեն, թող զայն որ յառաջգայր յաւանդութէ կամ 'ի կոտորակաց ինչ պատմական նկարուց նց, որք զերծան 'ի խժական հետախուզութէ Զումմարակայի. Յայտնի տեսանի փորձառութի յամ ազգաց, զի յիշատակ անցելոց իրաց ոչ կարէ ը̃ երկար պահպանիլ և ոչ հաւատարմութբ փոխանցիլ յաւանդութէ. Մէքսիքեան նկարք, որք ենթադրին ծառայել իբր տարեգիրս կայսրութենց, են սակաւք և երկդիմի նշանակութբք. Այսպէս 'ի մէջ անստուգութեն միոյն և խրթնութեն միւսոյն պարաւանդեալ եմք առնուլ զայն ծանօթութիւնս, զորս մարթ է հանել 'ի փանաքի ատաղձից, որք գտանին սփռեալք 'ի մատենագիրս Սպանիացւոց:

Ըստ պատմութեն նոցին իսկ Մէքսիքացւոց կայսերութի նոցա ոչ գոյր յերկար ժամանակաց. Նորկիր նց որոյ ինքեանք պատմէին 'ի սկզբան անդ ստացեալ եղև մանաւանդ, քան թէ շինել 'ի փոքրիկ անկախ ցեղից, որոց կեանք և վարք նմանէին բրտագոյն վայրագացն ստորագրելոց 'ի մէնջ

[illegible]

կանխաւ. Բայց շուրջ զորոշ ինչ ժմկաւ, որ համեմատի սկզբան տասներորդ դարուն 'ի քրիստոնէական թուականիս, շարժեցան զանազան ցեղք յաջորդական գաղթմամբք յանծանօթ տեղեաց դէպ Հիւսիսոյ և Հիւսիսային արևմտից, ուր բնակեցան 'ի պէսպէս գաւառս Անահուակայ Նախկին անուն Նորոյն Սպանիոյ. Սոքա առաւել քաղաքականացեալք քան զսկզբնակն բնակիչսն սկսան հրահանգել զնո յարուեստս ընկերական կենաց. 'Ի վախճանի շուրջ զսկզբնաւորութե երեքտասաներորդ հարիւրեկին Մեքսիկացիք ժողովուրդ առաւել կիրթ քան զայլ զինչևիցէ ազգ միշտակեալ 'ի մէնջ յառաջադէմ եղեն 'ի սահմանաց խորշին Կալիֆորնիոյ. և տիրեցին դաշտավայրացն առ ընթեր լճի միոյ մեծի, մերձ 'ի կեդրոն այնր երկրի. Յետ դադարելոյ անդէն զամս իբր յիսուն՝ հիմնեցին անդ զքաղաք մի տարորոշեալ յետոյ անուամբ Մեքսիկոյի, որ և 'ի դուզնաքեայ սկզբանց եղև վաղվաղակի երևելագոյնն նորոյ աշխարհի. Մեքսիկացիք ընդ երկայն ժամանակ ևս և զկնի բնականալոյ 'ի նոր ստացուածս իւրեանց, հանապազորդեցին իբրև զայլ պատերազմական ձեղսն յԱմերիկայ յոչ ճանաչել զարքայական տէրութի. և էին կառավարեալք 'ի խաղաղութե և առաջնորդեալք 'ի պատերազմի 'ի նոցանէ, ոյք դատեալ լինէին գերագոյնք վն հանճարոյ և քաջութե. Բայց նաև 'ի մէջ նոցա որպէս լինէր յայլ տէրութիս, որոց ընդարձակիւք տարածութին և կարողութին, գերագոյն իշխանութին տարրացաւ 'ի վախճանի 'ի միում ևեթ անձին. և յորժամ Սպանիացիք ընդ Կորթիսիւ տիրեցին այնմ աշխարհի, Մոնթէծումայ էր իններրորդ միապետն, որ կառավարէր զՄեքսիկօ ոչ ժառանգական իրաւամբք, այլ ընտրութե:

Այսպիսի եղեն ըստ աւանդութե Մեքսիկացւոց ծագումն և յառաջադիմութիւք կայսերութե նր յորմէ հետևեցուցանի թէ ոչ էին յոյժ վաղեմիք. Յառաջին գալստենէ ցեղին մօր նց կարէին համարել սակաւ ինչ աւելի քան զերեքհարիւր ամս. 'Ի կառուցմանէ միապետական կառավարութենն ոչ էին անցեալք ամք աւելի քան զհարիւր երեսուն ըստ որում ասէ պատմութի իմն, կամ հարիւր իննսուն և եօթն որչափ պատմի յայլմէ իմեքէ. Եթէ ըստ միոյ մասին ենթադրեսցուք, թէ Մ`եքսիքեան թագաւորութիւն կալեալ իցէ զբարձրագոյն իմն վաղնջականութի, կամ թէ գոյացեալ իցէ ընդ այնպիսի երկայն ժամանակ, որպէս Սպանիացի վիպասանք պնդեն, դժուարին է 'ի միտ առնուլ, թէ զիա՞րդ 'ի մէջ ժողովրդեան միոյ, որ ստացեալ ունէր զարուեստ պահելոյ զյիշատակ անցելոց դիպուածոց միջնորդութբ նկարուց, և որ նկատէր իւր եական ինչ մասն հրապարական դաստիարակութն ուսուցանել տղայոց զցուցս, որք հուշակէին զգործս նախնեաց իւրեանց, ճանաչումն գործոց նց իցէ այնպէս նուազ և այնպէս սահմանաւորեալ. Եթէ 'ի միւս կողմանէ ընկալեալ լինիցի ում նց նկատմամբ վաղնջականութն աշխարհի իւրեանց ոչ լինի առաւել դիւրին տալ զպատճառ, թէ զիա՞րդ կարողացեալ են այնպէս արագ քաղաքականանալ և ժամանել յայն աստիճան կարողութն յորում վայելէին, յորժամ Սպանիացիք այց արարին այնմ յառաջնում նուագի. Ի այսպէս երկայն տղայութիւն ազգաց՝ ևս և յորժամ ոմ պարակայ է նպաստաւոր յառաջադիմութեանց նց. զարդանան նոքա այնպ յամր, եթէ ըստ զօրութենն և ըստ գիտութն կառավարութեն, մինչզի գոլով թարմ ծագումն Մ`եքսիքացւոց, երևի թէ պարտին համարիլ բարդութի իմն չքնաղ ստորագրութիւնքն, որք տուեալ են զկառավարութէ և զվարուց նց:

Գործք
որք հա-
ստատէին
ԸԵՍՆա
ւէրացէր
փաղափա
խոնա-
ցեն:

Բայց վիպասանութին հայելով 'ի կացուին կամ 'ի յատկութի ազգացն ոչ որոշէ միջնորդութբ տեսականութեանց կամ բաղարկոցութեանց. Յառաջ ածէ արարս իբր հիմն զինչևիցէ դատման, որ համարձակի արտասանել. ՚Ի հաւաքելն զայնոսիկ, որք կանոնաւորելոց են զկարծիս մեր յառաջիկայ հետազօտութեան։ Յառաջ ելանեն ինչ-ինչ, որք թելադրեն զգաղափար իմն նշանաւոր զարգացման ՚ի քաղաքականութեան Մէքսիքեան կայսրութեան. և այլք որք երևին ցուցանել, թէ խուն ինչ ամենևին զարգացեալ էր ՚ի վեր վայրագ ցեղիցն, որք կային նմա շուրջ. Բովանդակք դնիցին առաջի աչաց ընթերցողին, որպէսզի բաղդատելով զնոսա կարող լինիցի բացորոշել, թէ յորում կողման գտանիցի ճշմարտութիւն։

Իրա- [illegible]

Իրաւունք անձնական յատկութեան էր անդէն կատարելապէս իմացեալ և հաստատեալ ՚ի բովանդակ տարածութեան իւրում. Տեսեալ եմք մեք, զի ՚ի մէջ զանազան վայրագ ցեղիցն հազիւ ճանաչի գաղափարն իրաւանց իրիք առ զատուցեալ և առ արտաքսիչ ստացումն իրի իրիք, և զի առ ամենեսեան յատկութիւն էր ամենևին կոպարաւորեալ և ոչ բարւոք սահմանեալ. Բայց ՚ի Մէքսիքոյի, ուր երկրագործութիւն և ճարտարութիւն արարեալ էին զյառաջադիմութիւն ինչ, զանազանութիւն ՚ի մէջ ստացուածոց իրականի և շարժականի, ՚ի մէջ յատկութեան ՚ի գետնի և յատկութեան ՚ի շարժականս արդէն արմատացեալ էր. Իւրաքանչիւրն կարէր փոխաբերել ՚ի միջէ առ այլ անձն կամ վաճառմամբ կամ փոխանակութեամբ. Իւրաքանչիւրն կարէր փոխանցել ժառանգութեամբ. որ միանգամ անուանեալ էր մարդ ազատ վայելէր ՚ի յատկութեան երկրացն. Այլ այսոքիկ կալեալ լինէին պէսպէս անուամբք, ոմանք ստանային զայն լիակատար իրաւամբք, և յայնժամ անցանէին առ ժառանգս իւրեանց՝ յայլ իրաւունքն առ գետինս իւրեանց յառաջգայր ՚ի պաշտօնէն կամ յարժանապատուութենէն, զոր ունէին և յորժամ զրկեալ էին 'ի վերջնոյն իսկոյն կորուսանէին զստացուածս առաջնոյն. Բայց այս եղանակք ստանալոյ զերկիր համարեալ էին ազնուականք և մասնաւորք քաղաքացւոց բարձրագոյն կարգին. Իրաւունքն, որով խումբ ժողովրդեան ունէր զյատկութի իւր, էր յոյժ տարբեր. Յամ Նահանգի չափիւր որոշ ինչ քանակութի գետնոյ համեմատութբ տանց. Մշակեալ էր այս 'ի միաբան աշխատութբ ամենեցունցն. բերք իւր աւանդիւր 'ի հասարակաց յշտեմարանին և բաշխիւր 'ի մէջ նց ըստ իւրաքանչիւր պիտոյից նց. Անդամք ·Կալպուլլէոյ կամ ընկերակցութեցն ոչ կարէին օտարացուցանել զբաժին իւրեանց, որ անկեալ էր նց. Էր այս յատկութի իմն անբաժանելի և մնացական սահմանեալ վասն ապրուստի տանց նց. 'Ի հետևութբ այսպիսի իմն բաշխման երկրաստանի, ամ մարդ ունէր զառանձին իմն շահ 'ի հրապարակական բարին. և երջանկութի անհատին յարակցեալ լինէր ընդ հանրական ապահովութեն.

Թիւ և մեծութի քաղաքաց նոցա.

Թիւ և մեծութի քաղաքաց կայսերութեանն Մեքսիկոյի են մի յառաւել հիանալի պարագայից, որք որոշեն զնա 'ի մէջ այնց ազգաց Ամերիկոյ, զորս կանխաւ ստորագրեցաք. Յորչափ մարդիկ գտանին 'ի բիրտ իմն վիճակի՝ պէտք նց են այնպէս սակաւ, և է այնպէս դժուարին փոխադարձ սատարութիւն, մինչզի եղանին ևս չափազանցօրէն տկար հրապոյրքն, որք հրաւիրեն զնս միաւորիլ 'ի միասին. Ճարտարութի նոցա է այնպէս անկատար, մինչզի ոչ կարէ ապահովացուցանել զապրուստ երևելի իմն բազմութեն տանց կայացելոց 'ի նմին և եթ տեղւոջ. Կեան յայնժամ ցիրևցանք՝ ոչ այնչափ ընտրութբ որչափ առ հարկի, կամ առ առաւելն հաւաքին 'ի փոքրիկ հիւղս առ ափունս գետոյ, որ պատրաստէ նոցա զսնունդ, կամ առ սահմանս դաշտավայրի

իւրք

ծովք թողլոյ բացեալ 'ի բնութէ և հարթեցելոյ 'ի յատուկ աշխատութեամբ իւրեանց. Սպանիացիք սովորք 'ի չտեսանել զայլ ցեղ բնակութեանց 'ի մէջ հանճարէն վայրագ ցեղիցն ծանուցելոց 'ի նոցանէ, մնացին շլացուցեալք 'ի տեսանելն 'ի Նորն Սպանիա, և 'ի գտանելն անդէն ազգայինս, որք նստէին 'ի քաղաքս մեծամեծս նմանս քաղաքացն Եւրոպիոյ. Յառաջին եռանդեան զարմացման իւրեանց համեմատեցին զԶեմփօալա թէպէտ և քաղաք միայն երկրորդ կամ երրորդ կարգին՝ ումանց մեծագունից 'ի սեփական երկրին իւրեանց. Այս իբրև տեսին յաջորդաբար զԹլասքալա, ըզՉօլուլա, զԹաքուպա, զԹէզքուքօ, և զնոյն իսկ Մէքսիքօ այնչափ աճեաց ապշութիւն նոցա. մինչ զի հաւատացին անսահմանաբար առաւել մեծամեծս և առաւել բազմամարդս քան զոր էին արդեամբք. Այլ և յորժամ գոյ դիւրութիւն բարւոք նշմարելոյ, և ոչինչ անձին շահ դրդէ 'ի խաբել, վարկածական հաշիւն, որ կերպաւորի ըզթըւոյ մարդկան 'ի քաղաքսն է յանբաւս զմայլելի և յաճախագոյն եւս բարդեալ. Այս չեն ինչ զարմանք, թէ Քօրթէս և ընկերք իւր սակաւասովորեալք առ այսպիսի հաշիւս, և բնականաբար բերեալք 'ի մեծացուցանել զիրսն վն բարձրացուցանելոյ զարդիւնս երկրագործութեն իւրեանց և տիրապետութեանց, անկեալ իսկն յայս հաստաբակ մոլորութիւն, ամբառնալոյ զստորագրութիւնս բազմօք 'ի վերոյ քան զճշմարիտն. Արդ այսպիսի պատճառի 'ի դէպ է առնել զմեծ ինչ յապաւումն թուարկութեանց նց զբնակչացն Մէքսիքեան քաղաքաց, և պարտ է հաստատել յընտրողագոյն եզերս զբազմամարդութիւն նց. Բայց հանդերձ այսու ամենայնի երեւեցին միշտ քաղաքք այնպիսի մեծութեան, մինչև գտանիլ միայն 'ի մէջ ժողովրդոցն, որք արարեալ էին զյառաջադիմութիւն ինչ յարհեստս.

(2) ‖ Առաջին պատմագիրք Սպանիացւոց եղեն այնպէս՝ շուտափոյթք և անհոգ 'ի դատելն զքանակութիւն ժողովրդեան 'ի գաւառսն և 'ի քաղաքսն Ամերիկոյ, մինչզի անկարելի է ստուգել զթիւն նոյն իսկ Մեքսիկոյ աստիճանաւ իւիք որոշման. Կօրթէս ստորագրէ զընդարձակութիւն և զբազմամարդութիւն Մեքսիկոյ հանրական եզերօք, յորմէ կարէ հետևեցուցանել, թէ ոչ է վայրագոյն 'ի մեծութիւն քան զմեծագոյն քաղաքսն Եւրոպիոյ. Գոմարայ է առաւել յայտնի. և հաստատէ, թէ էին վաթսուն հազար տունք կամ տոհմք 'ի Մեքսիկոյ. Հերրերա յարի 'ի կարծիս նորա և պատմագիրք Սպանիացւոց առ հասարակ զհետ երթան նորա իբր կոյր զկուրայն առանց քննութեան. Ըստ այսմ հաշուի բնակիչք Մեքսիքոյ պարտին լինել շուրջ երեքհարիւր հազար. Թօրքուեմատա իւր սովորական հակամիտութիւն առ զարմանալին՝ ասէ, թէ էին հարիւր քսան հազար տունք կամ տոհմք 'ի Մեքսիկոյ. և հետևաբար իբր վեցհարիւրհազար բնակիչք. Բայց 'ի յոյժ հանճարեղ պատմութեան միում Մեքսիքեան կայսրութեան արարեցելոյ 'ի միջէ 'ի պաշտօնատարացն Կօրթիսի, բազմամարդութիւն հաստատեալ է առ վաթսունհազարս, որպէս յառաջբերէ Ռամուսիոս. և ես յայսմ պատմութենէ, որ հաւանականաբար մատչի առաւել քան զայլս յառաջբերեալս կանխաւ՝ առ ճշմարտութիւն, տեսանի թէ Մեքսիկոս էր քաղաք մի յոյժ երևելի ‖։

Զատուցումն արհեստից.

Զատուցումն արհեստից 'ի մէջ Մեքսիկացւոց է ցոյց իմն ոչ նուաղ նշանաւոր զարգացմանցն աբարելոց 'ի նոցանէ. Արուեստքն յառաջին դարուն ընկերութեան են այնպէս սակաւք և այնպէս պարզք, մինչզի իւրաքանչիւր մարդ է բաւականապէս վարդապետ ամի առ'ի լնուլ զոր ինչ պահանջեն սահմանաւոր բաղձանք իւր. Վայրագն գիտէ կազմել զաղեղն իւր, սրածայր առնել զնետս իւր.

իւր, կառուցանել զՀիւղ իւր, փորուածել զքանոյէն իւր առանց կոչելոյ յօգնութիւն զձեռս առաւել ընդունակս քան զիւրսն. Պիտոյ է, թէ ժամանակն աճեցուցեալ իցէ զկարիս մարդկան և կատարելագործեալ զուշիմութիւն նց յառաջքան զլինելն արդասեաց արուեստին այնպէս մանուածոյ 'ի կերտուածս իւրեանց, կմ այնպէս ըղձակերտ 'ի տարազս իւրեանց, զի խնդրիցին մասնաւոր իմն ընթացք դաստիարակութեն առ 'ի սնուցանել զարուեստաւոր մի և առ 'ի առնել զնա փորձ 'ի գիւտն և 'ի ձեռագործն. Ըստ չափուն, որով ընդարձակի նորութին, աճէ պէսպիսութի արհեստից. և յայսմանէ ճղճկին յետոյ յողնաթիւ և մանր ստորաբաժանմունք. 'Ի մէջ Մէսսիքացւոց վերնագունութի արուեստից կարևորաց առ կեանս նշանաւորաբար մուծեալ էր. Արհեստք որմնադրի, ոստայնանկի, ոսկեգործի, նկարչի, և այլ զանազան վարժմանց 'ի գործ եդեալ էին 'ի տարբեր անձանց. Իւրաքանչիւրոք ուշադրէր հանապազորդ առ այն, զոր ընդգրկեալ էր, յայն միայն ամփոփելով զմտավարժութի իւր. և հանդերձ յարատև համբերութբ սեփականաւ Ամերիկացւոց ոչ է զարմանք թէ արուեստաւորք նց ժամանեալ իցեն առ աստիճան իմն կատարելութեն ձեռագործի յոյժ վերնագունի քան զայն, որ կարէր սպասիլ 'ի բիրտ գործեացն, զորս 'ի գործ ածէին. Գործածք նց կացուցանէին զծիւղ մի շահավաճառութեն. և փոխանակութբ իւրեանց 'ի տօնավաճառսն կալեալս յորոշեալ ժամանակս 'ի քաղաքսն, պաճարէին զփոխադարձ պէտս իւրեանց, որպ սովորութի է առ կիրթ ազգս:

Զանազանութ աստիճանաց:

Տրոհութի աստիճանաց սահմանեալ 'ի կայսերութեն Մէսսիքոյ է այլ իմն պարակայ, որ արժանի է ուշադրութեն. 'Ի քննելն զվայրենի ցեղսն Ամերիկոյ նշմարեցաք, զի սէրն հաւասարութեն և ատելութին ստորակարգութեն են դատմունք մարդոյ

դոյ

գոց ՚ի տղայութեն քաղաքական կենաց. ՚ի ժմկի խաղաղութեն դժուարաւ տանէին նոքա զաւագութեն վերնագունի ուրուք, և սակաւ վերաճանաչէին զայն ՚ի ժմկի պատերազմի. Ոչ ունելով զճանաչումն յատկութեն, և ոչ իսկ ունէին գաղափար տարբերութեն պայմանին, որ յայնմանէ ծագի. Ազգատոհմն կամ պատճառանք ոչ տան զգերակայութիւն, գոլով այսորիկ ստացեալք միայն յարգեանց և ՚ի քաջ անձնական որակութենց. Կերպ ընկերութեն էր յոյժ տարազան ՚ի մէջ Մեքսիկացւոց. Ռամկութի ժողովրդեան երևէր ՚ի խոնարհագոյն վիճակի. Երևելի իմն թիւ մարդկան ծանուցելոց ընդ անուամբ Մայէգուէգուայ նըմանէին ամենևին ՚ի պայմանի իւրեանց այնց գեղջկաց, որք թագաւորելով փետական կարգաւորութեն էին ծառայաբար յարեալք ՚ի գետինն մշակեալ ՚ի նոցանէ. Մայէգուէք ոչ կարէին փոխել զհանդրուան իւրեանց առանց ընդունելոյ զհրաման ՚ի վերնագունէ, յորմէ կախեալ կային. Նոյն փոխաբերեալք ՚ի միասին ընդ գետնոյն, յորոց վերայ կային, ՚ի միոջէ առ միւս տէր. և էին պարտաւորեալք ՚ի մշակել զանդս և ՚ի կատարել զանազան սեռս ծառայական գործոց, մինչ այլք վերածեալ լինէին առ ստորնագոյն ևս վիճակ ենթարկութեն. այս է առ տնենի ծառայութեն. և զգային զառաւել ստորոտի խստութի ապերջանիկ վիճակի իւրեանց. Համարեալ էին այնպիսի անարգ պայմանի, և կեանք նց ունէր յինքեան զայնպիսի սակաւ յարգ, մինչզի՝ որ սպանանէր զմի յայնց գերեաց, էր ազատ ՚ի պատժոյ. Մինչև նոքին իսկ, որք համարեալ էին իբր մարդիկ ազատ, վարեալ լինէին յամբարտաւան տեարց իւրեանց իբր էակս վայրագոյն իրիք տեսակի. Ազնուականքն, որք ստացեալ ունէին զընդարձակ զերկրաստանս, բաժանէին ՚ի պէսպէս դասս, որոց իւրաքանչիւրն ունէր զմասնաւոր իրաւունս. Ոմանք յայնց իրաւանց իբրև զերկիրսն իջանէին 'ի հօրէ յորդի 'ի մշտնջենաւորս․ այլք առակցեալ էին ընդ որիշ մասնաւոր պաշտօնս և տուեալ լինէին 'ի կեանս իբր նշանս անձնական արոհութեան․ Միապետն ամբարձեալ 'ի վերայ ամենեցունցն վայելէր 'ի մեծագոյն ևս իշխանութեան․ Այսպէս տարբերութիւն աստիճանացն տեսանիւր լիապէս սահմանեալ հանդերձ կանոնաւոր ստորակարգութեամբ 'ի բարձրագունէ ցխոնարհագոյն անդամ հասարակութեան․ Իւրաքանչիւր 'ի սոցանէ գիտէր զիրաւունս իւր և զպարտականութիւնս․ Արգելեալ էր ժողովրդեան կրել զհանդերձ իմն նոյնաձև կամ բնակել 'ի տունս արարեալս իբրև զազնուականացն․ և լինէր մատչել առ նոսա խոնարհ յարգանօք․ Առաջի ինքնակալին իւրեանց ոչ իշխէին ամբառնալ զաչս յերկրէ կամ հայել 'ի նա դէմ յանդիման․ Նաև ազնուականքն ընկալեալք յունկնդրութիւն նորին մտանէին անդր բոկոտն միջասահման զգեստաւորեալք և իբր գերիք իւր մատուցանէին նմա զպասահարկութիւն իմն, որ մերձենայր առ երկրպագութիւն․ Այս ակնածութիւն, որ պարտէր 'ի վայրագունից առ վերնագոյնս, սահմանեալ էր այնպիսի խնամոտ իմն խտրանօք, մինչզի տարրացաւ մինչև 'ի լեզուի նոցա․ և ազդեաց 'ի բառս և 'ի բարբառս նոցա, գոլով ճոխացեալ Մեքսիքեան զրոյցն բառիւք յարգութեան և քաղաքավարութեան․ Աճն և պատուանուանք 'ի կիրարկեալք 'ի զրուցատրութեան 'ի մէջ հաւասարից լեալ էին անվայելուչք 'ի բերան միոյ 'ի խոնարհագոյն կարգէ յորժամ յանդիման լինէր անձանց մեծագոյն աստիճանի․ և լինէին դատապարտեալք իբր թշնամանս ինչ։

(3) ‖ Պարտական եմ ես վասն այսր ըղձալի դիտողութեան հօրն Թէօրրիպեայ Պէնավէնթեայ․ Փալաֆօքս եպիսկոպոսն Լօս Անճէլոսայ հաստատէ զայն և պարզաբանէ լիով․ Մեքսիքեան լեզուն ասէ է միայն, առ որ կարէ յարիլ յիւրաքանչիւր

խօսս եղերումն իմն նշանակիչ ակնածութեն. Յարակցելով յիւրաքանչիւր բառսն զվախճանական վանկս ծին, կա՛մ ածին լինի այս վաղվաղակի սեփական իմն բացատրութի յարգանաց 'ի բերան վայրագունի ուրուք. Եթէ խօսելով առ հաւասար ոք պարտէ 'ի կիր առնուլ զեզրս հայր, ասի Թատլի. Բայց վայրագոյն ոք ասէ Թատծին. Քահանայ ոք խօսելով առ այլ ոմն կոչէ զնա Թէօփիքսքի. անձն ոք վայրագոյն աստիճանի կոչէ զնա Թէօփիքսքածին. Անուն կայսերն, որ թագաւորէր յորժամ Կորթէս եառ բռնութ զՄեքսիքօ, էր Մոնթեզումա. բայց ստորուկք իւր վս յարգանաց արտասանէին զայն Մոնթեզումածին. Մեքսիքացիք ոչ միայն ունէին զանուանս յարգականս, այլև զբայս. Նշանակն, որով այսոքիկ կերպաւորեալ էին 'ի համարակ գործածական բայից մեկնեալ է 'ի տր Յովսէփայ Աւգուստինոս Ալտամայ և 'ի Կուէվարայ 'ի Մեքսիքեան քերականութեն իւրում:]

Միայն յընկերուն վերածեցելոյ զատորիշ իմն կերպարան 'ի ժամանակէ և 'ի կանոնաւոր կառավարութեէ գտանի կարգաւորեալ իմն տրամադրութի մարդկան 'ի զանազան աստիճանս և զգուշաւոր իմն ուշադրութի առ զանազան իրաւունս նց Հոգին Մեքսիքացւոց այնպ ընտանեցեալ և վտեալ առ ստորակարգութի ոչ դժուարեցաւ ենթարկիլ միապետական կառավարութեն:

Կառա-
վարական
սահմանա-
դրութէ
նոցա:

Բայց ստորագրութին քաղաքավարուն նց և օրինաց արարեալ 'ի Սպանիացւոց, որք եղեն կործանիչք այնց, է այնպէս ստունգանեալ և հակասական, մինչզի դժուարին լինի գիտել որոշակի զկերպ սահմանադրութեց նց. Երբեմն ներկայացուցանեն մեզ զՄիապետսն Մեքսիքոյ իբր բացարձակս, և վճռահատս ըստ հաճոյից իւրեանց ամ իրակութեն տէրութեն. Յայլ առիթս գտանեմք հետք օրինաց և սովորութեց հաստատելոյ տելոց առ'ի պարագրել զիշխանութի Թագաւորութեն. և հանդիպին իրաւունք և արտօնութիք ազնուականաց, որք երևէին դնել արգելս ընդդէմ յափշտակութենց նորին. Այս առերևոյթ հակառակութի յառաջեկեալ է յոչ յուշադրելոյ նորութենցն Մոնթէծումայի 'ի վերայ Մէքսիքեան քաղաքավարութեն. Անչափ փառասիրութի իւր եղծեաց զձ նախկին կառավարութեն 'ի ներքս ածելով զպարզ տիրականութի. Սա արհամարհեաց զսահմանադրութիս նոցա, բռնաբարեաց զարտօնութիսն. և եդ զամ սեռ հպատակաց իւրոց 'ի հաւասարութեն ընդ գերեաց. Գլխաւորքն կամ ազնուականքն առաջնոյ աստիճանի ենթադրեցան ընդ լծով այնպիսի դիմամարտութի, մինչզի աւ ցանկութեն թօթափելոյ զայն, և յուսով վերստին ստանալոյ զսկզբնական իրաւունս իւրեանց բազումք 'ի նոցանէ խնդրեցին զպաշտպանութի Կօրթիսի. և անցին 'ի միաւորութի ընդ օտար իշխանութեն իմիք ընդդէմ ընտանի նուաճողի իւրեանց. Ապա ուրեմն ոչ առ Թագաւորութին Մոնթէծումայի, այլ առ նախորդացն իւրոց պարտ է գտանել զնախկին կերպն և զընթացութիւն Մէքսիքեան քաղաքավարութեն. 'Ի սկզբանէ միապետութենն մինչև ցընտրութի Մոնթէծումայի երևի թէ պահեալ իցէ այն փոքր իմն ալայլութի. Այն խումբն քաղաքացւոց, որ կարէ տրոհիլ անուամբ աւագանւոյ, բաղկացուցանէր փրևելագոյն կարգն Թագաւորութենն. Բաժանեալ էին նոքա 'ի պէսպէս դասս. որք կանխաւ նշմարեցաք. և ստանային և փոխանցուցանէին զպատիւս իւրեանց զանազան եղանակօք. Երևի թէ էր մեծ թիւ նց. Ըստ հեղինակի միում սովորելոյ քննել ուշադրութի զայն, զոր ասէ ինքն, համարին 'ի Թագաւորութենն Մէքսիքոսի երեսուն անձինք մեծամեծք առաջնոյ կարգի. որոց իւրաքանչիւրն ունէր 'ի սահմանս իւր շուրջ հարիւր հազար, անձինս. և չին անդէն իբր երեք հազար ազնուականք երկրորդ դասուն ստորակարգեալք նոցա. Երկրատանք պատկանեալք գլխաւորացն Թէծէվքոյի և Թաքուպայի հազիւ տեղի տային 'ի տարածուն երկրաստանացն ինքնակալին Մեքսիքոյի. Իւրաքանչիւր 'ի նոցանէ ստացեալ ունէր զլրացեալ իմն իրաւաբանութ̃ի երկրաստանական. և պահանջէր զսակս 'ի ստրկաց իւրոց. Բայց 'ի պատերազմի զհետ երթային ամենեքեան Մեքսիքեան դրօշակի, ծառայելով թըռով իմն արանց չափակցեալ տէրութ̃ն իւրեանց. և մեծագոյն մասն նց̃ վճարէր զհարկ իմն միապետին իւրում իբր գերագոյն տեառն իւրոյ:

Այսպիսիկ նախապետական գծագրութ̃իս Մեքսիքեան սահմանադրութ̃ն ներկայացուցանի տեսութ̃ն մերում՝ պատկեր իմն փետական կառավարութեան 'ի խստագոյն կերպարանի իւրում. և տարորոշին վաղվաղակի երեք տրոհիչ հանգամանքն. ազնուականք, որք ստացեալ ունին զաւագութ̃ի իմն իբր անկախ, ժողովուրդն վերածեալ առ անարգագոյն վիճակ նուաճութ̃ն, և Թագաւոր, որում վստահացեալ է իշխանութ̃ին գործադրիչ բովանդակ տէրութ̃ն. Հոգին իւր և սկզբունքն երևին ներգործեալ 'ի Նոր աշխարհին ըստ նմին սարասի, որով 'ի հնումն. Իրաւաբանութ̃ին թագաւորութ̃ն էր ամենևին ամփոփեալ. Ճշմարիտ և գործունեայ իշխանութ̃ին էր 'ի ձեռս ազնուականացն Մեքսիքացւոց և թողեալ լինէր թագաւորին լոկ ստուեր նր̃. Տարապայման նախանձաւորք իրաւանց իւրեանց ընդդէմ կային ամ̃ կարելի հոգածութ̃բ բռնաւարութ̃եց ինքնակալաց իւրեանց. Հիմնական իւիք օրինօք կայսերութ̃ն զգուշացեալ էր, թէ ոչ էր պարտ թագաւորին բացորոշել 'ի վր̃ գլխոյ իրիք վերաբերեցելոյ առ հասարակ ամենեցուն առանց հաստատութեան խորհրդեան բաղկացելոյ յա-

ռա-

ռաջաւոր ազնուականաց. Եթէ նա ոչ ընդունէր զհաւանութի նց ոչ կարէր գրաւել զազգն 'ի պատերազմ, և ոչ կարգադրել վ՟ հարկից զհարստագոյն մասնէ հրապարական մտիցն, գոլով այսոքիկ սահմանեալք առ որիշ առարկայս, յորոց ոչ էր թողացուցեալ արքայական աւագութեն զարտուղեցուցանել. Վասն ապահովացուցանելոյ զլիակատար իմն ուժգնութի այսց սահմանադրութեց՝ ազնուականք Մեքսիքացւոց ոչ հաւանէին, թէ թագաւորութիւն լինէր ժառանգական, այլ տրամադրէին զայնմանէ ընտրութի. Երեւի, թէ իրաւունքն ընտրելոյ սկզբնաբար կայր 'ի բովանդակ մարմին ազնուականացն. բայց յետոյ փոխաբերեալ եղև 'ի վեց ընտրողս. որոց երկուքն էին միշտ գլուխք Թէծէւկոյի և Թաքուպայի. Վ՟ մեծարանաց տոհմի միապետաց նոցա ընտրութիւն անկանէր հասարակօրէն 'ի վ՟ր անձին իրեք արքայազարմի. Այլ քանզի վ՟ն ժողովրդեան միոյ եղելոյ մշտնջենաւոր 'ի պատերազմի, արդասաւորութիւն և քաջութիւն էր առաւել նկատեալ քան զանվթար պահպանութիւն կարգի ծննդեան, կողմնականքն հասուն հասակաւ կամ նշանաւոր վաստակով յաճախակի նախադասեալ լինէին նոցա, որք առաւել մերձենային յաթոռն ուղիղ գծիւ. Այսպիսի իմն սկզբանց քաղաքականութե Մեքսիքացիք պարտական են վ՟ն այնր յաջողդութե արքայից ընդունակաց և պատերազմականաց, ոյք 'ի սուղ ժմկի հասուցին զթագաւորութի իւրեանց առ այն տարակարգ բարձրութիւն կարողութե, առ որ հասեալ էր յորժամ Քորթէս էհաս 'ի նորն Սպանիա:

Կարո- ղու-ն և փառք թագա- ւորաց նց: Յորչափ իշխանութիւն միապետաց Մեքսիքոյի եղև կոպարաւորեալ, հաւանական է, թէ էր ևս վարեալ սակաւ պանծանօք, բայց ըստ չափուն, որով աւագութի նց հաստատեցաւ, աճեաց շուք կառավարութե նց. Սպանիացիք գտին զայն յայսմ վերջինակացութեան. և շրտուցեալք 'ի մեծագործութէ արքունեացն Մոնթէծումայի՝ ստորագրեցին ճոխարար և բազում հիացմամբ զշռայլութիւն նց. Թիւ ծառայից իւրոց, կարգն, լռութիւն, յարգանքն, որով շուրջ կային նմա, ընդարձակութիւնն արքունի պալատան իւրոյ, պէսպիսութիւն անջրպետից սահմանելոց առ զանազան պաշտօնատարս, հանդէսն, որով սովոր էր ելևիլ 'ի հրապարակի, նմանէին շքոյ նախնի միապետութեանցն Ասիոյ մանաւանդ՝ քան թէ պարզութեան դեռածին կացութեան իմիք 'ի Նոր աշխարհին:

Բայց թագաւորքն Մեքսիկոյ ոչ ցուցանէին զկարողութիւն իւրեանց 'ի սնոտի ինչ հանդերձանս վեհափառութեան. լաւագոյն ևս յայտնէին զայն 'ի կանոնաւոր կարգին, որով յառաջ տանէին զներքին մատակարարութիւն և զքաղաքավարութիւն տէրութեանց իւրեանց. Լռացեալ իրաւարանութիւն եթէ քաղաքականն և եթէ քրէականն 'ի վ̃ր հպատակաց էր յարակցեալ ընդ թագի. Իւրաքանչիւր բաշխումն ունէր զդատաւորս իւր նշանակեալս. և եթէ պարտ իցէ հաւատալ տեղեկութեան, զոր տան պատմագիրք Սպանիացւոց զսկզբանց և զօրինաց, յորոց վ̃ր հիմնէին զվճիռս իւրեանց վերահայեցմամբ բաշխման ստացուածոյ և պատժոյ յանցանաց, արդարութիւն 'ի Մեքսիքեան թագաւորութեան մատակարարիւր յաստիճանի իմիք կարգի և արդարութեան նման այնմ, որ թագաւորէ յառաւել քաղաքականացեալ ընկերութիւնս:

Կարգ կառավարութեան նց.

Ոչ էր նուազ զգօն ուշադրութիւն նց 'ի յառաջատես լինիլն պահպանութեան կառավարութեան իւրեանց. Լցեալ լինէին սակս 'ի վ̃ր գետնոյ, 'ի վ̃ր ստացուածոց ճարտարութեան, և 'ի վ̃ր ընչից ամենայն տեսակ աղխամախից եղելոց 'ի վաճառ 'ի հէլ հրապարական շուկայս. Կապալք թէպէտ և ծանունք՝ ոչ էին ըստ հաճոյից կամ անհաւասարք.

[illegible]

Բաշխեալ լինէին հաստատուն կանոնօք և ա՟մ ոք գիտէր, զոր մասն հասարակաց ծանրութ՟ն պարտ էր կրել. Այլ քանզի Եգիպտացիք ոչ գիտէին զկիրառութ՟ի դրամոց, ա՟մ ծանրութիւնք վճարե՟լ լինէին 'ի տարազս. և վ՟ն ոչ միայն բնական բերք համօրէն տարբեր գաւառացն կայսերութ՟ն, այլ և ա՟մ ցեղ ձեռագործի և ա՟մ կերտուած արուեստի ժողովեալ լինէին 'ի հրապարական աւանդատեղիս. Յայսցանէ Թագաւորն հանէր զըմպարս, զհանդերձս և զզարդարանս վ՟ն արքունականացն 'ի ժ՟մկի խաղաղութ՟ն, և վ՟ն զօրաց իւրոց 'ի ժ՟մկի պատերազմի. Խաժամուժ ժողովուրդն, որ ոչ ունէր զգետինս և ոչ պարապէր 'ի վաճառականութ՟ն, ենթադրեալ լինէր պէսպէս ծառայութ՟նց. Մշակէր զերկիրս Թագաւորութ՟ն գործէր զհրապարական գործս, շինէր և նորոգէր զապարանս Թագաւորին:

(4) Բաղդատելով զզանազան բանսն Բօրիթոյի և Հէրրէրայ՝ կարօղեմք հաւաքել աստիճանաւ իւիք խնամոտութ՟ն զպէսպէս եղանակսն, յորս Եգիպտացիք օժանդակէին առ պահպանութ՟ի կառավարութ՟ն. 1. Ամենք անձինք առաջնոյ կարգի էին զերծք 'ի վճարելոյ զհարկ ինչ, գոլով միակ պարտականութ՟ի նոցա առ հասարակութ՟ին սահմանաւորե՟լ առ անձնական ծառայութիւնն 'ի պատերազմի, և առ 'ի զհետ երթալ դրօշակի ինքնակալին հանդերձ հպատակօք իւրեանց. 2. Անընդմիջական հպատակք Թագաւորութ՟ն ոչ էին պարտաւանդեալք առ ծառայութ՟ի ինչ զինուորական անձամբ իւրեանց, բայց վճարէին զորոշեալ ինչ բաժին բերոց գետնոյ իւրեանց. 3. Նոքա, որք վայելէին 'ի պաշտօնս պատւոյ, կ՟մ հրապարակն հաւատարմութ՟ն՝ վճարէին զմասն ինչ այնր, զոր ընդունէին վասն սեղակալելոյն զայն. 4. Ամենայն Բոտթուլէէ, այսինքն ընկերութ՟ի մշակէր զմասն ինչ հասարակաց ան-

դոյն նշանակեալ նմա ՚ի համար թագաւորութեն. և աւանդէր զերրոն յարքունի շտեմարանսն. 5. Պահանջիւր ՚ի համար հասարակութեն մասն ինչ այնր, որ էր բերեալ ՚ի հրապարակական վաճառանոցս, եթէ լինէին պտուղք երկրի, և եթէ ձեռագործք. և վաճառականքն, որք վճարէին զայն, էին զերծք յայլ ա̃մ սակէ. 6. [illegible] այսինքն Հողագործքն պարտաւորեալ էին ՚ի մշակել զորիշ ինչ սահմանս յա̃մ գաւառի, որք կարէին նկատիլ իբր հողք թագաւորութեն. և ՚ի դնել զպտուղ նշ̃ ՚ի հրապարակական ամբարանոցս. Նմանապէս ինքնակալն ընդունէր զմասն մի զինչևիցէ պխտանի իւրաց յերկրին, եթէ էին բնական բերք գետնոյ, և եթէ գործ ճարտարմտութեն ժողովրդեան. Օրինչ իւրաքանչիւր անհատ հանդանակէր առ՚ի պահել զկառավարութիւն՝ ոչ տեսանիլեալ յոյժ երևելի. Բօրիթա ՚ի պատասխանին առ մի ՚ի խնդրոցն արարելոց առ ունկնդրութին Մեսսիքոյ ՚ի Փիլիպպոսէ երկրորդէ՝ հնարի հաշուել ՚ի դրամ զարժողութի այնր, որ կարէր ընթագրիլ, թէ իւրաքանչիւր քաղաքացի վճարէր. և ոչ առնէ համբառնալ այնմ աւելի քան զերիս կմ̃ զչորս ռէալս, այսինքն է շուրջ ցուլթև տասն փողս, կամ երկու շիլլինս առ այր ‖ :

«Աշխարհի հանճարեղ կառավարութի Մեսսիքացւոց-Պերուացւոց ոչ միայն յէական յօդուածս առ երջանկութի [illegible] բարւոք կարգաւորեալ իրիք ընկերութեն, ԱԷ նշ̃ ։ այլև ՚ի զանազան կանոնաւորութիս մանունս. «Ներածութին կանխաւ յիշատակեալ յինէն հրապարակական սուրհանդակաց բաշխելոց յորոշեալ տեղիս առ՚ի տանիլ զծանօթութիս ՚ի միջէ յայլ մասն թագաւորութեն, էր նրբութի իմ̃ քաղաքականութեն ոչ եղեալ ՚ի գործ տակաւին յիմիք թագաւորութեն Եւրոպիոյ. Շինուած գլխաւոր քաղաքին ՚ի լճի միում արհեստական մութիք, և մայթիք անբաւ իմ̃ երկայնութին, որք ծառայէին նց՟ վն՟ երթալոյ առ պէտս, թաղս իւրեանց, և կերտեալք 'ի վ՟ ջրոյ ոչ փոքր աշխատութե՟ քան թէ հանճարով, երեւի գաղափար իմն, որ ոչ կարէր անկանել 'ի միտս, եթէ ոչ ժողովրդեան իրիք քաղաքականացելոյ. Զնոյն դիտողութի՟ մարթ է մերձեցուցանել 'ի ջրմուղսն կամ 'ի յագուգայսն, յորոց բերիւր հոսանք իմն քաղցր ջրոյ յերեւելի իմն տարակացութե՟ 'ի քաղաքն ը՟ մի 'ի սաղայատակացն :

(5) ‖ Նոյն ինքն Քօրթէս այնպէս մնաց զարմացեալ, մինչզի պարտ վարկաւ տալ զայնմանէ զմասնաւոր իմն գծագրուի՟. Առ միով 'ի մայթիցն ասէ, ընդ որ մտին 'ի քաղաքն, էին ձգեալք երկու ջրմուղք բաղադրեալք 'ի կաւոյ խառնեցելոյ կրով՝ լայնք իբր երկու քայլ, և բարձր շուրջ վեց. 'Ի միում յայնցանէ հոսէ վտակ մի կենդանի ջրոյ գրեթէ ը՟ թանձրութե՟ մարդկեղէն մարմնոյ 'ի քաղաքամիջի անդ և յայնմանէ դարմանին առատապէս բովանդակ բնակիչքն. Միւսն է դատարկ, որպէսզի յորժամ կարեւորէ մաքրել կամ նորոգել զառաջինն, ջուրն կարիցէ դարձուցանել յայս. Այլ քանզի այս ջրմուղ անցանէ ընդ երկուս 'ի կամրջացն, և զի պիտոյացեալ է հատանել զմայթն առ'ի անցս աղտաղտին ջրոյ լճին, 'ի գործածեալ են երկու փողակք ը՟ ստուարութե՟ եզին միոյ առ'ի ոչ խրամատել զընթացս ջրոյն. յորոց յարձակիլն՝ առաքեալ է առ հնաւոր օթեւանս քաղաքին 'ի քանցէս և վաճառեալ բնակչացն : ‖

Թողում 'ի լռութե՟ զքանակութի՟ անձանց սահմանելոց առ'ի ունել հորդ զճանապարհս, առ'ի լուսաւորել զայնս լուցեալ հրովք 'ի զանազան տեղիս, և առ 'ի առնել զպարեկապանս 'ի գիշերի. այսուքիկ բնաւք նշանակեն զաստիճան իմն անդրադարձութե՟ մտաց, զոր ազգք կիրթք յապաղեցին բազում յոյժ 'ի ստանալ:

Յա-

Արհեստք նոցա։

Յառաջադիմութի Մեքսիքացւոց 'ի զանազան արուեստս նկատելի է իբր ցոյց իմն առաւել վճռողական վերնագոյն զտման նց. Քօրթէս և առաջին պատմագիրք Սպանիացւոց ստորագրեն զայն իբր ապշութբ. և պնդեն, թէ արհեստաւորքն առաւել հռչակեալք Եւրոպիոյ ոչ կարէին ոչ գերազանցել զնոքօք, և ոչ հաւասարիլ նոցա 'ի գտման կամ 'ի չքնաղութն ձեռագործի. Ներկայացուցանէին զմարդիկ, զշնչաւորս և զայլ առարկայս տրամադրելով այնպ զերփն երփն փետուրսն, մինչզի յառաջ ածէին, ոչ ասի, զնմ արտագործութիս ուղղփաղօտի. և նմանէին բնութն ճշմարտութբ և նազելութբ. Պատմի ևս 'ի նոցանէ թէ զարդ նոցա ոսկւոյ կամ արծաթոյ էին առաւել նազելի կերտուածով. Սակայն պարտիմք խոստովանիլ, թէ 'ի կերպաւորելն զգաղափարս մեր 'ի վը հանրական ստորագրութեց հանգամանացն արհեստից 'ի մէջ ազգացն անկատարապէս քաղաքականացելոց ենթարկեմք մեծի խաբէութն. Քննելով զգործս ժողովրդեան միոյ, որոյ զարգացումն յարհեստս մերձենայցէ առ մերն, նկատեմք զնա ակամբ դատողականաւ և յաճախագոյն նախանձաւորաւ. ուր յորժամ խելամտեալք զսեփական վերնագունութէ մերմէ՝ նկատեմք զարհեստս բիրտ ազգացն բաղդատութբ մեզ՝ մեծապէս ապշեցուցանեն զմեզ գործք նց արարեալք այնքան անկատարութբք. և 'ի ջերմութն պատկերակերպութն մերոյ բերեալեմք 'ի դրուատել զայնս իբր արգասիս կատարեալս առաւել քան զոր են արդեամբք. Ըստ այսպիսի իմն խաբէութի կարեմք վերագրել զբարդութին հեղինակաց Սպանիացւոց 'ի պատմութիս արհեստից Մեքսիքացւոց առանց ենթադրելոյ 'ի նց զդիտումն ինչ խաբելոյ զմեզ։

Բայց ոչ է պարտ վճռահատել զաստիճանէ արժանեաց նոցա յայսց ստորագրութեց, այլ 'ի դիտողութե՟ գործոց ն՟ց, որք դեռևս կան. Այլ քանզի նաւն, որով առաքեաց Կորթէս առ Կառոլոս հինգերորդ զգործս առաւել սխրալիս արհեստաւորացն Մեքսիկացւոց հաւաքեալս 'ի Սպանիացւոց յորժամ զառաջինն յաւար հարին զԹագաւորութիւն, առեալ եղև 'ի նաւարտակէ միոջէ Գաղղիացւոյ, մնացեալ է անտի փոքրագոյն իմն քանակութի՟ քան զփէրուացւոցն. Ոչ կարացի գիտել, մի թէ ինչ մի 'ի նկարուց նոցա 'ի փետուրս կայցէ տակաւին 'ի սպանիա. Բայց բազումք 'ի զարդուց նոցա ոսկւոյ և արծաթոյ, որպէս և զանազան կահք յաւանդ եդեալ են 'ի մեծագործ շտեմարանին բնական և արուեստական իրաց բացելոյ 'ի վերջոյ յուղղափառ Թագաւորէն. և անձինք, յորոց դատումն և ախորժակն կարեմ վստահանալ, ստուգեցին ինձ, թէ այս պանծացեալ ճգանք արուեստի ն՟ց են անհեթեթ երևեցուցմունք հասարակ առարկայից կ՟մ պատկերք անկատարք մարդոց և ոմանց շնչաւորաց զուրկ 'ի շնորհաց և 'ի յատկութէն:

(6) 'Ի զինարանն արքունի ապարանից Մատրիտու ցուցանին բազում զրահք, որք առին Մոնթեծումայի. Բաղկացեա՟լ են 'ի նուրբ թիթղանց պղնձոց ապիկելոց. Ըստ կարծեաց անձանց իմաստնոց են յայտնապէս կազմեալք յարևելս. Կերպարանք զարդուցն արծաթոյ, որք տեսանին անդ 'ի վ՟ր երևեցուցիչք վիշապաց կարեն նկատիլ իբր հաստատութի իմն նորին կարծեաց. 'Ի գործուածն են յանբաւս վերնագոյնք քան զայլ զինչևիցէ ծիգն Ամերիկեան արուեստին. Սպանիացիք հաւանականաբար ընկալեալ են զայնս 'ի կղզեացն Փիլիփփեայց. Միակ աներկբայ առ հաւատչեայն, զոր տեսեալ է իմ Մեքսիկեան արհեստին 'ի մեծն Բրիտանիա, է կուպպայ մի յևս զտագոյն ոսկւոյ, որ հաստատի լեալ Մոնթեծումայի. Կշռէ հինգ ունկի և երկոտասան կրօշ.

Նա-

Երեք նկարագիրք նորին մատուցեալ եղեն ընկերութեան Հնախնդրաց 'ի տասն յունիսի 1765. Երևեցուցեալ է յայսմ կուպպայի գլուխ մի մարդոյ միոյ ըստ կիսոյ դիմացն և ըստ մասին պարանոցին. Ասի կերպաւորեալ անդրին 'ի ներքոյ սեպիճ միոյ, որ ընդոստուցեալ իցէ զպղինձն. Գործուածքն են բիրտք, այլ տանելիք. և ստուգիւ կարի ուրուականք ենթադրելով զայն գործուած Սպանիական. Այս կուպպայ գնեալ եղև 'ի Օտօարտոսէ Կոմսէ Օրֆորտայ յորժամ էր 'ի նաւահանգստին Բատիչեայ հանդերձ նաւահանդիսիւն, որում հրամայէր ինքն, և այժմ ստացեալ է զայն թոռն իւր Լօրտ Արշէր. Պարտականեմ ես զայս ծանօթութիւն բարեկամի իմում պարոն Պարրին Կլթօնայ: ‖

Արդարութիւն այսպիսի դիտողութեանց հաստատեալ լինի յորժամ քննին փորուածք 'ի փայտի կամ 'ի պղինձս նկարուց նշ հրատարակեալք 'ի պէսպէս հեղինակաց. ուր տեսանին ձևք մարդոց, չորքոտանեաց, թռչնոց, և այլ ամենայն տեսակ առարկայից, գեղջուկք մեծապէս և անհեթեթք ոչ նմանելով և ոչ իսկ նշանագրացն Եգիպտացւոց. Ոչ գոյ տղայ, որ ոչ գիտիցէ առնել նոյնչափ. Այլ որչափ և արհամարհ երևեցին նկարք Մեսսիքացւոց 'ի նկատելն սոսկապէս իբր արուեստակերտուածս, յորժամ նկատին իբր յիշատակք աշխարհին իւրեանց, և իբր պատմական յիշատակարանք կառավարութեան և գործոց իւրեանց արժանաւորին տարբեր իմն դատման. և եղանին յայնժամ առարկայք բազմօք ըղձալիք և շահեկանք. Առաւել ազնուական և օգտակարագոյն գիւտն, որով պարծի մարդկեղէն հանճարն, է գիւտն գրելոյ. բայց առաջին գործ այսր արուեստի, որ օժանդակեաց առաւել քան զայլս ամենայն 'ի լուսաւորել զմարդկային տեսակ, եղև յոյժ տկար, և յառաջեաց դանդաղ առ կատարելութիւն, յոքում այժմ տեսանեմք զայն. Յորժամ մարտիկն համբաւասէր ունէր զիղձ փոխանցելոյ զծանօթութիւն ինչ քաջագործութեանց իւրոց 'ի յաջորդական դարսն, յորժամ երախտագիտութիւն ժողովրդեան առ ինքնակալն իւր խթէր զնա աւանդել յետնորդաց զպատմութիւն բարերար առաքինութեանց իւրոց, երեւի թէ առաջին հանգամանքն, որ պարտէր առաջի ընծայիլ մտաց նոցա առ 'ի կատարել զայն, էր գծագրելն լաւագոյն եղանակաւն, որով կարող էին նոքա, զձեւսն երեւեցուցիչ գործողութեանն, զորոյ զյիշատակն փոյթ էր նոցա պահել. Այսր արհեստի, որ մեծաւ իսկութեամբ կոչեցաւ գրուած նկարեալ, գտանին հետք առ վայրենագոյն ցեղսն Ամերիկոյ. Յորժամ զօրավար ոք դառնայ յասպարիզէ, քանցէ 'ի ծառոյ իմեքէ զկեղեւն. և անդէն գծագրէ անգուրաւ զանհեթեթ ձեւս, որք ցուցանեն զկարգ ջոկոյն իւրոյ, զթիւ հետեւողաց իւրոց, զթշնամին, ընդ որում կռուեցաւ, զգագաթունսն և զգերիսն, զորս ընկալաւ 'ի նմանէ. Հաւատայ յայսոսիկ պարզ տարեգրութիւնս զհամբաւ իւր. և քաջալերի յուսով, թէ այսոքիկ միջնորդաւ ընդունիցի զգովութիւն, որ պարտի քաջութեան իւրում 'ի պատերազմողաց յապագայ ժամանակսն:

Նկարք Մեքսիկացւոց համեմատեալք ընդ այսց անկերպարան ուրուականացն այլոց վայրագաց կարեն նկատիլ իբր գործք սեփական իմն արժանեաց. Նոքա զճշմարիտ ասելով՝ ոչ ճանաչէին զայլ եղանակ յիշեցուցանելոյ զեղեալ իրսն, բայց եթէ զգծագրելն զառարկայսն, զոր ըղձանային բացատրել. Սակայն գիտէին ընծայեցուցանել յառաջադիմողական կարգաւ, և ստորագրել սեփական իմն բաշխմամբ ձեւոց զառաւել մանուածոյ շարս ինչ դիպուածոց, զնշանաւոր գործս միապետի ուրուք, յորմէ հետէ համբարձաւ նա յաթոռ մինչև ցմահ, զընթացս դաս-

տիատիրապետութեան իւրոյ 'ի ծննդենէ իւրմէ մինչև ցմահն չափահասութ̃ն իւրոյ, զտարբեր մրցանակսն և զնշանսն խորութ̃ն ընծեռնելոյ 'ի նմանէ պատերազմականացն համեմատութ̃բ վաստակոց նշ̃ 'ի պատերազմունսն. Առհաւատչեայք ինչ եզականք այս ազգ նկարագրութ̃ն պահպանեալ են. և նկատին արդարապէս իբր առաւել ըղձակերտ յիշատակք արհեստին բերելոյ 'ի Նոր աշխարհն. Յայսցանէ առաւել յարգոյքն հրատարակեալ եղեն 'ի Փուրքասայ 'ի վաթսուն և վեց տիպս տրամատեալս յերիս մասունս. Առաջինն պարունակէ զվիպասանութ̃ի կայսերութ̃ն Մէսսիքօի 'ի ներքոյ տասն միապետաց իւրոց. Երկրորդն է ցանկ իմն հարկացն, որ ցուցանէ զոր ինչ իւրաքանչիւր քաղաք տիրապետեալ վըճարէր արքունի գանձարանին. Երրորդն է մատեան մի ընտանեկան քաղաքական և զինուորական սահմանադրութ̃ց իւրեանց. Այլ իմն գաղափար Մէսսիքեան նկարչութ̃ն տուեալ է 'ի լոյս յառաջիկայ Արհիեպիսկոպոսէ Թոլէտոյի յերեսունևերկու տիպարս, յորս յաւելաւ լրացեալ իմն մեկնութ̃ի այնր, առ որ սահմանեալ էին ձեւքն յերևեցուցանել. և ընկալան զայն Սպանիացիք 'ի Հնդկաց քաջ հմտացելոց սեփական արհեստից իւրեանց. Այն նկարչութ̃ն ամ̃ ուրեք նոյն է. Երևեցուցանեն բա՝ զիրս և ոչ զխօսս, զպատկերս յաչս և ոչ զիդէայս 'ի միտս. Ս̃ այսորիկ կարեն նկատիլ իբր առաջին և անկատարագոյն ջանք մարդկան 'ի յառաջադիմութ̃իս իւրեանց յարհեստին գրելոյ. Զայս եղանակ ներկայացուցանելոյ զիրս պարտ եղև իսկոյն ճանաչել իբր պակասաւոր. Նկարելն զինչևիցէ պարակայ էր 'ի բնութ̃է իւրմէ գործողութիւն իմն տաղտկալի. և զի իրակութ̃իքն եղանէին միշտ առաւել մանուածոյ, և բազմանային դիպուածքն, այս տարեգրութ̃իք աճէին հետևաբար 'ի մատեան

իմն

թեան անձոռնի. Բաց յայսցանէ ոչ կարելին դծագրել այլ առարկայք, բայց եթէ զգայականքն. յղացմունք հոգւոյն ոչ ունէին զկերպ մարմնեղէն. եւ ոչ կարէր լինել, բայց եթէ արհեստ իմն ամենեւին անկատար նկարչութեան, որ ոչ կարէր ներկայացուցանել զայնս. Ապա ուրեմն հարկն արեալ էր զգիւտ նոցա. եւ մարդկեղէն միտքն ունելով զնոյն ընթացս 'ի նոր աշխարհին որպէս 'ի հնումն, զարգացեալ էր նովին յաջորդական քայլիւք, նախ ներգործական նկարչութեամբ ըստ նշանագրի, ապա ըստ այլաբանական տարացուցի, զկնի ըստ կամայական դրոշմից, մինչեւ յայտնիւք 'ի վախճանի այբուբեն իմն դրոց ընդունակ բացայայտելոյ զամենայն պէսպիսութիւս եւ զյօդաւորութիւս ձայնից, որք կերպաւորին խօսելով. 'Ի նըկարս Մեքսիկացւոց յայտնապէս տեսանի, թէ ակսաւ 'ի մէջ նոցա նմանակ իմն յառաջադիմութիւն. Ուշադիր իմն քննութեամբ տպացն, զորս յիշատակեցի, մարթ է նշմարել զորիշ իմն մերձաւորութեան առ պարզ նշանագրականն, ուր նախապետական իմն պարագայ ենթակային եղեալ է փոխանակ բոլորին. 'Ի տարբերութիւս թագաւորաց նոցա հրատարակելոյ 'ի Փուրքասայ քաղաքք տիրապետեալք յիւրաքանչիւր ումեքէ 'ի նոցանէ ներկայացուցանին միակերպաբար նովին եղանակաւ ուրուական իմն նշանագծութեամբ տան միոյ. բայց առ 'ի ցուցանել զքաղաքս մասնաւորս, զորս ենթադրէին յաղթական զինուց իւրեանց, 'ի կիր արկեալ լինէին եւ մասնաւոր նշանք մերթ բնական առարկայից, եւ մերթ արհեստական ձեւոց. 'Ի ցուցակին հարկաց հրատարակեցելոյ յԱրհիեպիսկոպոսէն Լօրէնցոյի 'ի բաց թողեալ է տունն, որ էր յատկապէս նկար քաղաքին. եւ միայն տարացոյց 'ի գործածի անդէն առ 'ի նշանակել զայն. Բաց յայսմանէ, երեւի թէ արարեալ իցեն նոքա զյառաջադիմութիւն ինչ 'ի կիրառութեան առաւել բացայայտողական նշանագրութեանց. Ո՛ւր ստորագրել զմիապետ ումն, որ ընդարձակեալ իցէ ըզտէրութի իւր զօրութբ զինուց, նկարէին զվահան մի զարդարեալ տիգօք. և դնէին զայն 'ի մէջ նի և 'ի մէջ քաղաքացն նուաճելոց. Նոյն 'ի միում և նմ օրինակի, այս է 'ի նշանակութեան թռչոց տեսանի, զի ջանացան բացայայտել զիդէայս, որք ոչ ունէին զմարմնաւոր կերպարանս. Գտեալ էին զնշանս արհեստականս, կամ միաբանականս, որոց միջնորդութբ համարէին զամս թագաւորութեն ինքնակալաց իւրեանց, ոչ զքանակութի հարկին վճարելոյ արքունի գանձարանի. Ձևն շրջանակի միոյ ներկայացուցանէր զմիութիւն. և այս կրկնիւր յորժամ պիտոյ լինէր հաշւել զփոքրիկ թիւս. Մեծագոյն թիւքն բացատրեալ էին 'ի մասնաւոր իմն նշանէ. և ունէին զումանս 'ի նոցանէ, որք նշանակէին զամբողջական գումար 'ի քսանէ ցութն հազար. Կարճատեւութի թագաւորութեն նց եղև արգել Մեքսիքացւոց չյառաջել և եւս յայն երկայն ընթացս, որ ընդածէր զմարդիկ 'ի վշտալի յաշխատութենէ գծագրելոյ զիրական առարկայս առ պարզ դիւրին կիրառութի գրելոյ այբուբենիւք. Ճշմարիտ նշմարի 'ի յիշատակարանս նց նշոյլ ինչ գաղափարաց, որք կարողէին առաջնորդել նց առ կատարելագոյն ոճ. այլ ոչ կարեն նկատիլ, բայց եթէ ոչ տեսակ ինչ նկարագրութեն զտեցնելոյ այնպէս, մինչև տալ ճանաչել զվերնագունութի նց 'ի վր վայրագ ցեղիցն Ամերիկոյ. սակայն այսու ամի այնպէս պակասաւոր, մինչև հաւատել, թէ չէին ժամանեալ յեզր, որ պիտոյ էր առ'ի դասիլ 'ի մէջ քաղաքականացեալ ազգացն ։

(7) ‖ Ներհուն ընթերցօղն ծանիցէ, թէ որչափ յայսմ մասին գործոյս յարեցայ յառաջնորդութի Եպիսկոպոսին Կլօչէսթերոյ, որ նշանա-

նակեաց թագուն հանճարով և մեծագոյն ճարտարմտութե՟ն զանզգալի յառաջադիմութիւն, որք ածին զմարդիկ առ ճանաչումն գրութե՟. Այս է առաջինն ըստ ճանաչման իմոյ, որ կերպաւորե՟ իցէ զբանաւոր իմն և զբաղադրեալ տեսութի՟ 'ի վ՟ն պէսպէս հանգամանացն գրելոյ 'ի գործածե՟ յազգաց ըստ զանազան աստիճանաց նրբութե՟ն նց. Ինչ ինչ ծանրակշիռ դիտողութիւնք առակցեալ են 'ի գիտնական հեղինակէն ճառին՝ որ զմեքենական կերպաւորութե՟ լեզուաց:

Եւ. քանզի նկարք Մեքսիքացւոց են առաւել ըղձակերտ յիշատակարանք, որք կան նախկին գրութեան նց, ոչ եղիցի անհաճոյ տեղեկութի ինչ հայթհայթանացն, որովք նախապահեալ եղեն 'ի հանրական նուաքեկութե՟ բովանդակ գործոց արհեստին Ամերիկոյ. և հաղորդեալք հասարակաց. Ա՟ առաջին և լրացեալ հաւաքման հրատարակելոցն 'ի Փուրքասայ պարտական եմք ուշադրութե՟ տեառն Հաքլուիթայ խնամոտագոյն ևս հետազօտողի. Տէրն Անտոնիոս Մէնտօծծայ փոխարքայն նորոյն Սպանիոյ գտեալ զայսոսիկ նկարս ընծայ իմն արժանաւոր մատուցանելի Կառոլոսի հինգերորդի, առաքեալ էր զայնս 'ի Սպանիա. բայց նաւն առեալ եղև 'ի նաւարտակէ միոջէ Գաղղիացւոյ. և նկարքն եկին 'ի ձեռս Թէվէթայ երկրագրի Թագաւորին. որ գոլով ճանապարհորդեալ 'ի նոր աշխարհին, և գծագրե՟ զմի 'ի գաւառաց իւրոց էր մտադիւր հետազօտ այնր ամի, որ կարէր նպաստել առ պարզաբանութ՟ի վարուց Ամերիկացւոց. Յետ մահուան իւրոյ գնեալ եղեն 'ի Հաքլուիթայ մատռանապետէ յայնմ ժմկի դեսպանին Անգլիացւոց յարքունիսն Փրանսիոյ. և 'ի նմանէ գոլով թողե՟ Փուրքասայ հրատարակեցան ըստ խնդրոյ հմուտ հնախնդրին տեառն Ենրիկոսի Սփելմանու:

Երկրորդ առհաւատչեայ նկարագրութե՟նցն Մէս-

սի-

Մ`եքսիկացւոց տուեալ 'ի լոյս 'ի Հայր Ֆրանչիսկոսէ Ղ'Էմելեայ `Բարրերեայ յերկուս տիպս պղնձոյ. Առաջինն ներկայացուցանէ զյառաջադիմութիւն Նախնի Մ`եքսիկացւոցն 'ի հասանել նոցա զառաջինն յայն աշխարհ, և զպէսպէս կայանսն, յորս բնակեցան յառաջքան զհիմնելն զմայրաքաղաք Թագաւորութեան իւրեանց 'ի մէջ լճին Մ`եքսիկոյի. Երկրորդն է անիւ կամ շրջանակ ժամանակաբանական երևեցուցիչ եղանակին, որով հաշուէին և նշանակէին զշրջան իւրեանց յիսուներկու ամաց. Առաջինն տուեալ եղև նմա 'ի պարոն `Քրիստոփանոսէ Կուատալայօրայ 'ի քաղաքին Լօս Անճէլէս. զմիւսն ընկալաւ 'ի պարոն Կառօլոսէ Սիկուէնցայ և Կօնկօրրայ. Այլ որովհետև յայսմ ժամանակի է կարծիք իմն ընդհանրապէս ընկալեալ (թէպէտ ես չգիտեմ զհիմն այնորիկ) թէ `Բարբերի չիցէ երբէք եղեալ յԻտալիոյ. և թէ իւր համբաւեալ Պտոյտն աշխարհին՝ է պատմաբանութիւն կեղծական իրիք ճանապարհորդութեան, ոչ յիշատակեցի զայսոսիկ նկարս 'ի բնաբանին. Սակայն ունէին զերևոյթ Մ`եքսիկեան արգասիս լինելոյ. և թէ իցեն այսպիսիք՝ պնտի 'ի Պօթուրինեայ. որ ստուգիւ էր յաստիճանի գտանելոյ զայսոցանէ. Այն առաջնոյն է ըստ առաւել ուղղագրեալ գաղափարին քան զայլ ինչ նկար Մ`եքսիկացւոց. այլ քանզի ասի, թէ նախատիպն բազմօք աղաւաղեալ է 'ի ժամանակէ, կասկածիմ, թէ իցէ նորոգեալ և սրբագրեալ 'ի ձեռանէ արհեստաւորի միոյ Եւրոպացւոյ. Անիւն ժամանակաբանական երևեցուցանէ զեղանակն, որով Մ`եքսիկացիք հաշուէին զժամանակն. և է համակերպ ստորագրութեան Ակօստայի. Երևի թէ նմանիցի միում, զոր ետես այն գիտնական յիսուսեանն. և երբ ընկալեալ լինիցի իբր հարազատ յիշատակարան՝ հաւաստէ, թէ Մ`եքսիկացիք ունէին զարուեստական կամ զկամայական դրոշմս բաց 'ի թղթոցն առ 'ի ներկայացուցանել զզանազան իրս. Իւրաքանչիւր ամիս երևեցուցեալ է անդէն յարացուցիւ իւիք, որ բացայայտէ զգործ ինչ կամ զծէս մասնաւոր նմին ամսոյ:

Երրորդ առհաւատչեայն Մեքսիքեան նկարու յայտնեալ եղև յայլմէ ումեքէ Իտալացւոյ. Յամին 1736. Լօրենցիոս Պօթարինի Պէնատուչէ մեկնեցաւ գնալ 'ի Նորն Սպանիա. և կալաւ զաւիթ ուսանելոյ զլեզուն Մեքսիքացւոց. և հաւաքելոյ զնշխարս պատմական յիշատակարանաց նոցա. Տևեաց զամս ինն 'ի հետազօտութիս իւր հանդերձ աշխուժիւ առաջարկորդի ուրուք և համբերութեամբ վաղնջախուզի. Յամին 1746. հրատարակեաց 'ի Մատրիտ զգիրք մի մակագրեալ. Գաղափար նորոյ ընդհանուր պատմութեան Հիւսիսային Ամերիկոյ, որ պարունակէ զյառաջեկեալն 'ի հետազօտութեանց իւրոց. և յաւել անդ զցանկ մի Ամերիկեան Պատմական Թանգարանին իւրոյ՝ բաշխեալ յերեսուն և վեց տարբեր յօդուածս. Իդէայն իւր նորոյ իրիք վիպասանութեան երևի ինձ գործ մարդոյ երազատեսի և դիւրահաւատի. Բայց ցանկն իւր Մեքսիքեան աշխարհացուցաց, նկարուց, ցուցակացն հարկաց, տօմարացն և այլն, հիանալի է. Առ դժբաղդութեան նաւն, յորում առաքեալ էր զերևելի ինչ մասն այսպիսի իրացն յԵւրոպիա առեալ եղև յելուզակէ միջէ Անգլիացւոց 'ի նախընթաց պատերազմին նկատմամբ վերջնոյն. և է հաւանական, թէ կորեան անկանելով 'ի ձեռս տգէտ ասպատակաց. Նոյն իսկ Պօթարինին անկաւ 'ի շնորհաց արքունեացն Սպանիոյ. և մեռաւ 'ի հիւանդանոցի միում 'ի Մատրիտ. Վիպասանութիւն, որոյ՝ գաղափարն ետ այնը, էր միայն երևոյթ ինչ, ոչ երբէք եւս հրատարակեաց. Մնացեալն Թանգարանին իւրոյ մարթէ հաւատալ, թէ իցէ կորուսեալ. Մասն ինչ նորա եկն 'ի ձեռս Ներկայ արքեպիսկոպոսին Թօլէտոյի յորժամ էր առաջնորդ նորայն Սպանիոյ. և նա հրապարակեաց հանեալ անտի զայն ըղձակերտ ցանկն հարկաց, զոր կանխաւ յիշատակեցի։ ‖

Տարազ առնելոյ նոցա զհաշիւ ժամանակաց է անվրէպ վկայութիւն զարգացմանց նոցա 'ի սեռս կրթութեան. Բաժանէին զտարին յութեւտասն ամիս՝ բաղկացեալ իւրաքանչիւրն 'ի քսան աւուրց. որ ընդ ամենին առնէ զԹիւն երեքհարիւր վաթսուն. Այլ քանզի նշմարէին, թէ ընթացք արեգական յայնմ միջոցի ոչ էր լրացեալ, յաւելուին յամն զայլ հինգ աւուրս. Այս նահանջական աւուրք կոչեցեալ էին 'ի նոցանէ Նէմոնթէմի, կամ Ունայնաւորք. և որովհետև ոչ պատկանէին առ ամիս ինչ, ոչ գործիւր 'ի նս̃ գործ ինչ արուեստի. ոչ կատարիւր պաշտօն ինչ կրօնական. և էին նուիրեալ ողջոյն ուրախութեան և զբօսանաց. Այս մերձեցումն առ իմաստասիրական խնամոտութիւն ցուցանէ քաջայայտ, թէ 'ի Մէսսիքացւոց արարեալ էր ուշադրութիւն ինչ առ հայեցողական հետախուզութիւս. որոց ընդունակ են մարդիկ՝ յորժամ են քաղաքականացեալք։

Այնպիսի են նշանաւորագոյն մասնաւորութիւնք 'ի սովորութիւս և 'ի քաղաքավարութեան Մէսսիքացւոց, որք ցուցանեն զժողովուրդ մի բնաւին քաղաքականացեալ. Բայց մարթ է յայլոց պարագայից հետևեցուցանել, թէ հանգամանք նց̃ և բարուք 'ի քաղաքական պահպանութեանց նց̃ ոչ տարբեր էին կարի իմն յայլոց բնակչացն Ամերիկոյ։

Գործք, որք ցուցանեն զպակասորդաց [illegible] նց̃ 'ի քաղաքական մշակութեան։

Նման վայրենի ցեղիցն, որք շուրջ կային նոցա, Մէսսիքացիք գրաւեալ էին 'ի հանապազորդ պատերազմունս. և երևի, թէ պատճառքն, որք խթէին զնոսա առնուլ զէնս, էին ամենևին նոյնք. այս է հոգին վրէժխնդրութեան և ցանկութիւն հն̃ գ-

Պատերազմունք նց̃ շարունակք [illegible] ամենհէք։

լոյ զորին թշնամեաց իւրեանց. 'Ի պատերազմի խորհէին միայն առնել կալանաւորս. և 'ի թըւոյ սոցա գտեալ լինէր յաղթութիւն փառաւոր. Ոչ էր վ՟ն ն՟ց ոչ գթութ՟ի և ոչ փրկանք. Նին ամենեքեան զոհեալք անխտիր. և կերեալ լինէր մարմին նոցա նովին խժական հրճուանօք. որ 'ի մէջ գազանագոյն վայրագացն. 'Ի դիպաւորութ՟իս ինչ սովորութիւն էր յառաւել օտարոտի զառանցութ՟իս. Գլխաւոր մարտիկ ն՟ց զքողէին մորթով թշուառական սպանդիցն, զորս սպանեալ էին. և կաքաւէին ը՟ պողոտայսն պարծելով 'ի վ՟ր քաջութ՟ն իւրեանց, և խայտալով վ՟ն յաղթութենն ստացելոյ 'ի վ՟ր թշնամեաց իւրեանց. Նաև 'ի քաղաքական սահմանադրութ՟իս իւրեանց նշմարին հետք անագորոյն բարուց չնչեցելոյ 'ի ն՟ն յոճոյ պատերազմին. Առաջին չորք խորհրդականք թագաւորութ՟ն էին տրոհեալք դժնեայ անուամբք յատկացուցանելի միայն ժողովրդեան միում, որ հեշտանայ մարդկային արեամբ:

(8) ‖ Առաջինն կոչեցաւ նահապետ մահացու տիգի, երկրորդ հատիչ մարդկան, երրորդն ճապաղիչ արեան, չորրորդն շահապ խաւարչտին տան: ‖

Այս գազանութ՟ի յատկական նախազօրացեալ էր 'ի մէջ համօրէն ազգացն նորոյն Սպանիոյ. Թըլլասքալացիք, Մեքհօամանացիք և այլք ժողովուրդք թշնամիք Մէքսիքացւոց բերկրէին հաւասարապէս ընդ պատերազմ. և վարէին զկալանաւորս իւրեանց նովին անգթութ՟բ. Ըստ չափուն որով ազգ մարդկան կապի յընկերական միաւորութ՟ն, և կեայ 'ի ներքոյ ազդեցութ՟ն նոյն օրինաց և նոյն քաղաքավարութ՟ն, ամոքին բարք նոցա. ծնանին զգացուածք մարդասիրութ՟ն և իրաւունք մարդկային տեսակի սկսանի իմացեալ լինիլ. Կատաղութ՟ի պատերազմի նուազի. և մարդիկ էտ և յորժամ գրաւեալ են 'ի թշնամութն յիշեն զայն զոր պարտին միմեանց. Վայրագն մարտնչի առ'ի եղծանել. քաղաքացին առ'ի յաղթել. Առաջինն բնաջինջ առնէ անխնայաբար որչափ ինչ անկանի 'ի ձեռս նր. երկրորդն ստացեալ է զզգայունութի իմն, որ չափաւորէ զկիրս իւր. Այս զգայունութի անծանօթ էր Մեքսիքացւոց. և խուժադուժ եղանակն, որով առնէին զպատերազմն, հաւաստէ, թէ էին ամենեին սակաւ քաղաքականացեալք:

Օրէնք կրօնից:

Մեռելոտի ծէսք նց ոչ էին նուազ արիւնաւորք քան զառաւել վայրագ ցեղիցն. 'Ի մահուան երևելի ուրուք անձին և մասնաւորապէս թագաւորին ընտրիւր որոշեալ թիւ ինչ ընտանեաց իւրոց առ'ի ընկերել նմա 'ի միւս աշխարհն. և այս թշուառացեալ սպանդք արկեալ էին 'ի մահ առանց գթութեն և թաղեն 'ի նմին շիրմի:

Երկրագործութիւն նց անկատար:

Թէպէտ երկրագործութի նց էր առաւել տաժանեալ քան զթափառական ցեղիցն, որք ոչ կեային, բայց եթէ որսորդութբ, սակայն երևի, թէ ոչ բաւէր մատակարարել նց զպարուստն, զոր խնդրեն մարդիկ յորժամ գրաւեալ են 'ի ջանս արգասաւոր մտավարժութեն. Ոչ ցուցանեն Սպանիացիք զարմացեալս 'ի վերնագունութե իմեքէ Մեքսիքացւոց 'ի վր այլոց ազգացն Ամերիկոյ 'ի կորովութեն մարմնոյ. Եթէ մինն, եթէ միւսն ըստ գիտողութեն նոցա էին այնպէս տկար կազմուածով, մինչև ոչ կարող լինել տանել աշխատանաց. և ուժեղութի միոյ Սպանիացւոյ գեր 'ի վերոյ էր բազմաց Հնդկաց միաւորելոց. և այս ընծայիւր վատթար որակութեն և նուազութեն սննդեան յարմարելոյ առ'ի պահել զկեանս նոցա, այլ ոչ 'ի զօրացուցանել զխառնուածն. Դժուարութիւն, որում պատահեցաւ Քորթէս 'ի տալն պարուստ սակաւ զօրականաց իւրոց, որք յաճախ ստիպեն եղեն կերակրել ինքնաբերօք երկրի, հաստատէ զգիտողութիւն պատմագրաց Սպանիացւոց. և ոչ տայ մեզ կարի իմն մեծ ըմբռնումն զորպիսութենէ մշակութեան թագաւորութեանն Մեքսիքոյի :

Անձա-
[illegible]
[illegible]
[illegible]:

Նպաստէ այսմ կարծեաց սովորութիւն իմն, որ գոյր ընդհանրապէս 'ի Նորն Սպանիա. Կանայք Մեքսիքացիք դիեցուցանէին զորդիս իւրեանց Է ամս ինչ. և յայնմ ժամկի ոչ բնակէին ընդ արանց իւրեանց. Այս զգուշութիւն խափանելոյ զաւելորդ բազմամարդութիւն, թէպէտև կարևոր, որպէս կանխաւ նշմարեցի, առ վայրագս, որոց վն դժուարութեան ապրանացն անկարելի էր սնուցանել զյոգնաթիւ իմն գերդաստան, ոչ կարէր երբէք ունել տեղի 'ի մէջ ժողովրդեան միոյ, որ սովորեալ էր կեալ յառատութեան և 'ի հանգիստս :

Տարա-
ծոյն 'ի
[illegible]
[illegible]
[illegible]
գաւա-
[illegible]:

Ընդարձակ տարածութիւն թագաւորութեանն Մեքսիքոյի, որ նկատի, և յիրաւի իբր ցոյց իմն առաւել վճռողական նշանաւոր զարգացմանցն, զորս ազգ մի արարեալ իցէ 'ի գիտութեան կառավարութեան, է մի յայնց եղելոց վիպասանութեանն Նորոյ աշխարհի, որ երևի հաւատացեալ առանց պարտուպատշաճ քննութեան և առանց հաւաստեաց. Վիպասանք Սպանիացիք առ 'ի մեծացուցանել զքաջութիւն քաղաքակցաց իւրեանց՝ սովոր են յանդիման առնել զտէրութիւն Մոնթեծումայի իբր տարածեալ յամ գաւառս Նորոյն Սպանիոյ 'ի Հիւսիսային Ովկիանոսէ ցհարաւայինն. Բայց զմեծ մասն ինչ 'ի լեռնային երկրին ժառանգէին Օթոմիք՝ ազգ գազանաբարոյ և բիրտ. որ երևի լեալ մնացորդ իմն սկզբնական բնակչաց. Գաւառքն ընդ հիւսիսակողմն և ը̅ արևմուտս Մեքսիքոյ տիրապետեալ էին 'ի Չիչիմեկեաց և յայլոց ցեղից որսորդաց. Ոչ ոք 'ի սոցանէ ճանաչէր իւր վերնագոյն զՄեքսիքեան միապետն. Նա և 'ի ներքս երկրին էին զանազան քաղաքք և գաւառք ոչ նուաճեալք երբէք ընդ լծով Մեքսիքոյ. Թլասքալա թէպէտև միայն քանեսմի փարսախաւ տարակաց 'ի մայրաքաղաքէ թագաւորութեան, էր հասարակապետութիւն մի անկախ և թշնամի. Քհօլուլա թէև ունել մօտաւոր՝ ենթարկեալ էր սուղ ինչ ժամկաւ յառաջ քան զժամանելն Սպանիացւոց. Թափէաքա 'ի տարակացութեան երեսուն փարսախաց 'ի Մեքսիքոյէ՝ երևի թէ էր ազատութիւն ինչ զատուցեալ. որ կառավարիւր սեպհական օրինօք իւրովք. Միքհօաքան, որոյ սահմանն ոչ էր հեռի աւելի քան զքառասուն փարսախս 'ի Մեքսիքոյէ, էր հզօր թագաւորութիւն մի հռչակաւոր վս անհաշտելի ատելութեան առ Մեքսիքեանն անուն. Յայսց թշնամական գաւառաց Մեքսիքեան կայսերութիւն գտանիւր շրջապատեալ յամ կողմանէ. և վնկ չափաւորիլ պիտին բարձր իդէայքն, զորս բերեալ եղաք յղանալ 'ի վը հաւատոյ Սպանիացի վիպասանից:

Սահման հաղորդակցութեան ընդ զանազան գաւառաց.

Պատճառաւ այսր անկախութեան բազմաց տէրութեանց Նորոյն Սպանիոյ 'ի Մեքսիքեան թագաւորութեան՝ ոչ էր անդէն բազում հաղորդակցութիւն 'ի մէջ պէսպէս գաւառացն իւրոց. Նաև 'ի ներքսագոյն աշխարհին ոչ կարի բացակայ եղելոյ 'ի մայրաքաղաքէն՝ երևի թէ ոչ գոյին ճանապարհք առ'ի դիւրացուցանել զկցորդութիւն միոյ ընդ այլում նահանգի. և Սպանիացիք յորժամ ձեռնարկին զառաջինն ընդմտանել յայն, հարկեցան բանալ զճանապարհ ընդ անտառս և ընդ ճախինս. Քորթէս 'ի սրտեայ չուէի իւրում 'ի Մեքսիքոյէ առ Հօնտուրաս յամին 1525. պատահեցաւ խոչից. և կրեաց զտառապանս ոչինչ բնաւ վայրագոյնս այնց, զորս կրեալ էր 'ի նուազ քաղաքականացեալ կողմանս Ամերիկոյ. 'Ի տեղիս տեղիս դժուարին եղև բանալ զանցս ինչ ընդ անգործ անտառս, կամ ընդ դաշտավայրս հեղեղեալս համակ 'ի ջուրց. Իսկ յայլս եգիտ զայնպիսի սակաւ մշակութի, մինչզի զօրք իւր տեսան յաճախակի 'ի վտանգի մեռանելոյ 'ի քաղցու. Ոչ բարւոք համեմատին այս գործք շքեղ ստորագրութեանցն. զորս պատմագիրք Սպանիացւոց տան զքաղաքավարութէ և զճարտարութէ Մեքսիքոյ. և ընծայեն մեզ զգաղափար աշխարհի իբրք սակաւ աննմանւոյ այնմ, զոր ստացեալ են Հնդկային ցեղք 'ի մէջ հիւսիսային Ամերիկոյ. Աստ և անդ պատահի որպէս և յայնմիկ, ճանապարհ իմն, որ ածէ 'ի միոջէ առ այլ նահանգ. բայց ընդհանրապէս ոչ նշմարի յիմիք մասին ոչ արահետ ճանապարհ, և ոչ նշան ճարտարմտութեն և ոչ յիշատակարան արհեստի:

Անծա-
ֆոյն հա-
սարակէ
այսպիսին
ճշմար-
տութն :

Ոչինչ ընդհատ զարմանաւոր ցոյց անկատարութեան հաղորդակցութեն նց էր պակասութիւն, զոր ունէին դրամոյ կամ ընդհանուր չափու, որով կանոնաւորեսցեն զգին աղխամախից և վաճառաց. գիւտ՝ որ առաւել քան զայլ ամ ինչ հանգանակեաց առ զարգացումն ազգաց. և առանց որոյ ամ գործողութիւնք նց են այնպէս անյարիրք, այնպէս աշխատալիք և այնպէս կապարուորեալք, մինչզի մարթ է համարձակ ասել, թէ նոքա ամենևին սակաւ յառաջադէմ եղեն յընթացս իւրեանց. Կիրառութիւն տարազուց դրամոց է այնպէս վաղնջական 'ի մերում կիսագնդի, մինչզի անգիտանամք զգարն. և երևի իբր ժմկակից գոյութեն ընկերութեն. Ազնուագին հրահալելիքն 'ի գործածել եղեն կանուխ առ այս փոխանակման՝ իբրև այնք, որք վն յարակայ արժողութեն իւրեանց, վն բաժանելութեն իւրեանց և այլն, յարմարեալ են 'ի ծառայել իբր հասարակաց չափ՝ լաւագոյն քան զայլ զինչևիցէ բնական գոյացութի. Բայց 'ի նոր աշխարհին, ուր հրահալելիքս այսոքիկ առաւել առատ են, ոչ գիտէին առնել զայսպիսի իմն կիրառութի. Պիտոյք վայրագ ցեղից, կամ միապետութեանցն անկատարապէս քաղաքականացելոց ոչ՝ փոխադրելին զայն կարեւոր. Բովանդակ տուրեւառական հաղորդակցութիւն նց՟ արարեալ լինէր ճանապարհաւ փոխանակութեան. և ազատութիւն նց՟ առ այսպիսի պէտս կարէ արդարապէս յառաջբերիլ իբր փորձ իմն տղայական վիճակի քաղաքականութեան նց՟. Այլ 'ի նոր աշխարհին սկսաւ զգացեալ լինել կարեւորութիւն. և փոյթ եղեւ լցուցանել զտեղի նց՟. Մեքսիքացիք, յորոց միջի թիւ և մեծութիւն քաղաքաց իւրեանց ետ սկիզբն շահավաճառութեան իմիք առնել տարածեցելոյ քան յայլ ինչևիցէ մասին Ամերիկոյ, 'ի գործ ածէին զմիջնորդ իմն, որ դիւրացուցանէր զփոքրիկ դաշնադրութիւնս. Եւ քանզի չոքքոլաթն էր ախորժական ըմպելիք անձանց իւրաքանչիւր աստիճանի, ընկոյզք Կաքաոյի էին այնպէս առ հասարակ 'ի ծախս, մինչզի 'ի վաճառանոցս նց՟ փոխանակէին յայլ սակաւագին ինչս. Այսպիսի օրինակաւ նկատեալ եղեն իբր գործիք իմն շահավաճառութեան. և զին իւրիք ընչից համարիւր 'ի թուոյ ընկուզեացն Կաքաոյի. զոր ընդունէին փոխանակ. Այս եղեւ միակ հանգամանք, զոր Ամերիկացիք խորհեցան 'ի լնուլ զպակասութիւն դրամոց. Իսկ եթէ 'ի միոջէ կողմանէ պակասութիւն նոցին պարտի նկատիլ իբր ցոյց իմն խժականութեանց նց՟, սոյն այս հանգամանք դարմանելոյ այնմ պարտի ընկալեալ լինիլ 'ի միւս կողմանէ իբր վկայութիւն իմն յառաջադիմութեան, զոր Մեքսիքացիք արարեալ էին յարհեստսն, որք տրոհեն զժողովուրդս քաղաքականացեալս 'ի խուժադուժ և 'ի վայրագ ազգացն :

Այսպիսի էր վիճակն, յորում գտանէին բազում Տէրու- 'ի գաւառացն Մեքսիքոյ, յորժամ այց արարին [illegible] 'ի եղեն յառաջնում նուագի 'ի տիրապետողաց իւրեանց. [illegible] Քաղաքք նց՟ թէ և ընդարձակ և բազմամարդ՝ [illegible] երևէին յաւէտ բնակութիւնք մարդկան՝ յաղագս առ նոցա.

առժամայն անդ ելեալ 'ի բարբարոսութեանց, քան թէ հանգրուանք ժողովրդեան միոյ հրահանգեցելոյ. Ստորագրութիւն Թլասքալայի նմանի ամենեին ստորագրութեան գեղջ միոյ Հնդկայնոյ. Ցածունք՝ և կղզացիք էին հիւղք նց, սփռեալք աստ և անդ անկանոնաբար ըստ հաճոյից իւրաքանչիւր ո͞ն, շինեալք 'ի հողոյ և 'ի քարանց, և ծածկեալք յեղեգանց առանց այլ լուսոյ բաց յայնմանէ, զոր ընդունէին 'ի դրանէ. արարեալ և այն այնպէս, մինչև ոչ կարել մտանել անդր առանց կորանալոյ. 'Ի Մեքսիքոյ թէպէտ և մն մասնաւորութիւն կայից իւրոց էին տունք առաւել կարգաւ տրամադրեալք, սակայն կերտուած մեծագոյն մասին ոչինչ վերնագոյն էր քան զարդեա ստորագրեալն. Ոչ տաճարք նց, և ոչ այլ հրապարական շինուածք էին այնպիսիք, մինչև արժանաւորել բարձր գովութեանցն տուեալց նց 'ի պատմագրացն Սպանիացւոց. Որչափ մարթի հաւաքել 'ի մթին և յանփոյթ ստորագրութեանց նց. մեծ տաճարն Մեքսիքոյ առաւել մեծագործն նորոյն Սպանիոյ, և որոյ բարձրութիւն ասի, թէ էր այնպէս մեծ, մինչզի պիտոյ էր ելանել անդր ընդ սանդուխս ինչ հարիւրչորեքտասան աստիճանաց, էր կուռ իմն զանգուած հողոյ քառակուսի հանդերձ մակերևութիւ գործածեցելով ը͞ մասին 'ի քարանց. Խարիսխ իւր յամ՝ կողմանէ տարածանիւր իննսուն ոտնաչափ. և նուազեալ աստիճանաբար մինչև ցգագաթն, աւարտէր 'ի քառանկիւնի իմն իբր երեսուն ոտնաչափ. յորում էր արձան չ͞յն հանդերձ երկու բագնովք. յորոց վ͞ր զոհէին զզենլիսն:

Մե-հեանք նոցա :

(9) ‖ Մեհեանն Ք.Հօլուլայի, որ համարեալ լինի առաւել ոք քան զայլ զինչ և իցէ Նորոյն Սպանիոյ, էր ևս առաւել երևելին. Բայց ոչ այլ ինչ էր, բայց եթէ լեառն մի հողոյ. Ըստ Թորքուէմատայ ունէր զքառորդ մի փարսախի 'ի շրջա-

ջապատն խարսխին. և ամբառնայր 'ի բարձրութիւն քառասուն գրկաց. Նշմարելով զպէսպէս ձևսն մեհենիցն, որք տեսանին 'ի նկարս քանդակեալս 'ի Փուրքասայ, գոյ պատճառ կասկածելոյ թէ բնաւքն շինեալ էին միօրինակ: ‖ Այլ ամ հռչակաւոր մեհեանք նորոյն Սպանիոյ նմանէին անվթարաբար մեհենին Մէքսիքոյի. Այսպիսի շինուածք ոչ տան զմեծ ինչ գաղափար զճարտարութե ազգի միոյ. և հազիւ մարթ է 'ի միտ առնուլ, թէ կերպ ինչ առաւել անհեթեթ և պարզագոյն կարէր անկանիլ 'ի միտս նորին :

Մեծագոյն ուշիմութի և ընդունակութի եթէ [illegible] պարտիցէ հաւատալ Սպանիացւոց վիպասանից, [illegible] վայլէին յապարանս թագաւորին և 'ի տունս ա- [illegible] ռաւել նշանաւոր աւագանւոյն. Նշմարիւր 'ի նս [illegible] առաւել վայելուչ ինչ գաղափար. և առաւել պատկանաւոր բաշխումն անջրպետից. Բայց եթէ շինուածք համեմատք այնպիսի ստորագրութենց լեալ էին երբէք 'ի քաղաքսն Մէքսիքացւոց, հաւանական է, թէ երևէին տակաւին հետք ինչ նոց. Յեղանակէն, որով յառաջ տարաւ Քօրթէս զպաշարումն Մէքսիքօի, մարթի ենթադրել, թէ եղծեալ իցեն բոլորովին. բայց գոլով անցեալ միայն երկու դարք և կէս յետ տիրապետութեան նորոյն Սպանիոյ, անհաւատալի երևի, թէ յայսպիսի սուղ շրջանի ամ նշխար պանծացեալ չափակցութե և մեծութե իւրոյ բնաւին իցէ աներևութացեալ. և թէ յոչ իմք յայլոց քաղաքաց մասնաւորաբար յայնս, որք ոչ ինչ կրեցին յապականիչ ձեռանէ տիրապետողացն, ոչ ընդառաջ ելանիցեն աւերակք ինչ նկատելիք իբր յիշատակարանք վաղեմի մեծագործութեան նոցա :

Մինչև 'ի գիւղօրէս ևս՝ բրտագոյն Հնդկաց են շինուածք մեծ տարածութե և մեծագոյն բարձրութիւն քան զհասարակ տունսն. Այլք, որք սահմանեալ են առ'ի առնել անդէն զխորհուրդ ցեղիցն, և յորս ժողովին ամենեքեան 'ի դիպաւորութեն հրապարական տօնից, կարեն կոչել մեծաշուք բաղդատութիւն այլոց. Ճանաչելով Մէքսիքացիք զզանազանութիւն աստիճանաց, և գոլով 'ի մէջ նոցա ստացեալն անհաւասարապէս բաժանեալ, նմինիրի պարտէին գտանիլ առաւել գեղեցիկ շինուածք 'ի քաղաքս նոցա, քան յայլ քաղաքսն Ամերիկոյ. Բայց ոչ երևի, թէ էին այնպէս հաստահիմն, և ոչ այնպէս մեծաշէնք, մինչև արժանաւորիլ պանծալի մակդրացն, որովք պատուեն 'ի ստորագրելն զայնս հեղինակք Սպանիացիք. Հաւանական է, թէ որչափ և զարդարեալք և կանգնեալք յընդարձակագոյն միջոցի՝ կերտեալ էին նորքին ստաղձիւք, զորս Հնդիկք 'ի գործածէին 'ի հասարակ բնակութիւնս իւրեանց. և վասն այսորիկ ժամանակն գէթ զերկերիւր յիսուն ամաց կարօղ եղև եղծանել զամենայն մնացորդսն:

(10. 11.) ‖ Ոչ միայն 'ի Թլասքալա և 'ի Թեփէաքա, այլև 'ի Մէքսիքօ իսկ տունք ժողովրդեան էին հիւղք՝ շինեալք 'ի հողոյ կամ 'ի ճիւղոց ծառոց. Էին ամենեքին ցածունք և մրգուզք, և առանց ինչ կահու բաց 'ի սակաւուց խեցեղէն անօթոց. Զանազան գերդաստանք օթէին զօրէն բրտագոյն Հնդկաց ընդ նովին յարկաւ առանց զատուցանելոյ անջրպետս. Տեղեկացեալ եմ յանձնէ միոջէ, որ կացեալ է յերկար ժամանակ 'ի Նորն Սպանիա, և այց արարեալ գրեթէ ամենայն գաւառաց նորա, թէ ոչ գոյ 'ի բովանդակ տարածութեն այնր ընդարձակ թագաւորութեն յիշատակարան կամ հետք շինուածոյ իրիք վաղնջագունի քան զտիրապետութիւնն, և ոչ կամրջի իրիք, կամ մայթի, բացառեցեալ զմնացորդս ինչ այնր, որ 'ի Կուատալուփայ առ դրանն Մէքսիքոյ.

սիքօյ : Ընդ որ Քօրթէս եմուտ 'ի քաղաքն. Հեղինակն այլոյ իրիք պատմութեան ձեռագիր նըշմարէ, թէ այժմոյս ոչ է մնացեալ և ոչ իսկ գուզնաքեայ հետք գոյութեան նախկին իրիք Հնդկային շինուածոյ հրապարականի կամ սոսկականի 'ի Մեքսիքօի, կամ 'ի գաւառի իմիք Նորոյն Սպանիոյ. Ես ասէ ճանապարհորդեալ եմ ընդ բովանդակ ընթերակայ երկիրսն. այս է, ընդ Նորն Կալիցիա, ընդ Նորն Պիսկայիա, ընդ Նորն Մեքսիքօ, ընդ Սօնորա, ընդ Զինալօա, ընդ Նոր Թագաւորութիւն Լէօնի, և ընդ Նորն Սանթանտերօ, առանց նշմարելոյ զյիշատակարան ինչ արժանի նշանակելոյ, 'ի բաց առեալ զաւերակսն մերձ 'ի վաղեմի գիւղ ինչ 'ի հովտին մեծ տանց 'ի լայնութեան 30. 46. յերկայնութեան. 258. 24 'ի կղզւոյն Թէնէրիֆայ կամ 460 փարսախ 'ի Մեքսիքօյէ. Սա ստորագրէ զայն մանրամասնաբար. և երևի լեալ փանագի իմն շինուած 'ի հողոյ թըրծելոյ և 'ի քարէ ծեփեցելոյ սպիտակ հողով կամ կրով. Քարոզիչ ումն տեղեկացոյց զայս սեպուհ, թէ գտեալ է նա զաւերակս այլոյ իրիք շինուածոյ նման առաջնոյն շուրջ հարիւր փարսախ ընդ Հիւսիսային արևմուտս առ ափամբք գետոյն սրբոյն Պետրոսի. Վկայութիւնքս այսոքիկ ընդունին զբազում հաւաստարմութիւն 'ի պարակայէ միջէ. այս է, զի ոչ ունին 'ի նպատակ զհամոզդրութիւն ինչ կամ զտեսութիւն մասնաւոր. այլ են պարզ պատասխանիք հարցմանցն, զոր առաքեալ էի ես. Նաև հաւանական է, թէ յորժամ տեարքս այսոքիկ ասեն, թէ 'ի Մեքսիքեան թագաւորութեան այժմ ոչ նշմարին աւերակք կամ յիշատակարանք նախկին գործոյ իրիք, կամին միայն իմանալ զայնս, որք նշանակեն զմեծութիւն և զմեծագործութիւն նախկին բնակչաց իւրոց. որովհետև երևի 'ի վկայութենէ զանազան մատենագրաց Սպանիացւոց. թէ 'ի Օթումպա, 'ի Թլասքալա, 'ի Քհօլուլա լա են. են գետս նաւելի հետք ինչ վաղեմի շինուածոց. Տէրն Ֆրանչիսկոս Լօրենցանա կանխաւ Արհիեպիսկոպոս Մեքսիքոյ՝ այժմոյս Թօլետոյի 'ի ներածութեն իւրում առ տպագրութեն թղթոցն պատմութեն Քօրթեսի, զորս հրատարակեաց նա 'ի Մեքսիքոյ, յիշատակէ զաւերակս ինչ, որք տակաւին տեսանին 'ի զանազան քաղաքս, ընդ որս Քօրթէս եանց յերթալն առ մայրաքաղաքն. Բայց ոչ ոք յայսց հեղինակաց տայ զայնց զստորագրութի ինչ. և այս հաւատացուցանէ, թէ չեն յոյժ երևելիք. Մեծ լեառն հողոյ 'ի Քհօլուլա, զոր Սպանիացիք պատեն անուամբ տաճարի, միայ գետնս. բայց սանդուխքն և ճակատն քարեայ աւերեալ են 'ի ժամանակէ. այժմ չէ ինչ աւելի, բայց թէ լեառն մի բնական՝ ծածկեալ խոտով և մացառօք. և հաւանականաբար ոչ է լեալ երբէք այլ ինչ. Ընկալայ զմանրամասն ստորագրութի իմն մեհենի իրիք մօտ 'ի Քուէրնավաքա ընդ ճանապարհն 'ի Մեքսիքոյէ առ Աքափուլքօ. Այս բաղկացեալ է 'ի մեծամեծ քարանց դասելոց ընդ միմեանս այնպէս անվթար յաւերակսն, ոպ 'ի շինուածսն փէրուացւոց. զորոյ 'ի մօտոյ արարից յիշատակ. Խարիսխն է քառակուսի իմն քսանևհինգ գիրկ, բայց ըստ չափուն, որով աճէ 'ի բարձրութեն, նուազի 'ի տարածութեն ոչ աստիճանաբար, այլ ամփոփելով իսկոյն առ կանոնաւոր տարակացութիս, ոպզի երևեցուցանել զձև բրգան միոյ։ ‖ 'Ի զրաւ տեսանի յայսմ թըմարկութե եղելոց, թէ կացութի ընկերութենն 'ի Մեքսիքոյ էր նշանաւորաբար զարգացեալ 'ի վր ընկերութենն վայրագ ցեղիցն կանխաւ ստորագրելոց 'ի մէնջ. Բայց հաւասարապէս յայտնի է, թէ 'ի բազում մասնաւորութիս պատմութիքն, զորս Սպանիացիքն առնեն զյառաջադիմութէ նց, են չափազանցօրէն բարձեալք. Ոչ գոյ ծագումն ինչ առաւել յաճախեալ կամ առաւել լի խաբէութեամբ 'ի ստորագրելն զվարս և զարուեստս վայրագ ազգացն կամ այնոցիկ, որք անկատարապէս քաղաքականացեալ են, քան թէ մերձեցուցանել 'ի նոսա զանուանս և զոճս, որք պատշաճին սահմանադրութեանց և կատարելութեանց առաւել կրթեալ եղելոցն. Յորժամ առաջնորդն փոքրիկ ցեղի միոյ կամ գլուխն բիրտ հասարակութեան իւիք պատուեալ է անուամբ թագաւորի կամ կայսեր, տեղին բնակութեան իւրոյ ոչ կարէ ընդունել զայլ անուն, բայց եթէ զպալատան, և հետևօղք իւր զարքունականաց. Այսպիսի անուանակոչութիւնք ստանան նոքա զվարկումն ինչ և զարժանաւորութիւն, որ ոչ պատկանի նոցա. Խաբէութիւն աճէ. և տալով զուտ ինչ կերպարանս իւրաքանչիւր մասին պատմաբանութեանն՝ այնպէս զառածանէ զերևակայութիւն, մինչզի դժուարին լինի յայնմ հետէ ճանաչել զառարկայսն, որպէս են յիրում. Սպանիացիք յորժամ հասին զառաջինն 'ի ծովեզրն Մէսսիքոյ այնպէս շլացեալ եղեն 'ի յառաջադիմութեանցն արարելոց յայնց բնակչաց 'ի գիտութիւն կառավարութեան և յարհեստս բաղդատութեամբ բիրտ ցեղիցն, զորս ցայնժամ ծանուցեալ էին, մինչզի կարծեցին գտեալ 'ի վախճանի զազգ մի քաղաքականացեալ 'ի նոր աշխարհին. Այս բաղդատութիւն 'ի մէջ ժողովրդեանն Մէսսիքոյ և անկիրթ դրացեաց իւրոց եղև յարաժամ ներկայ 'ի միտս նոցա. և նշմարելով ապշութեամբ զայնքան իրսն, որք նշանակեն զգերակայութիւն իւր, 'ի գործածեն 'ի պատմելն զանկատար քաղաքավարութիւն իւր և զբնածին արհեստսն, զեղերս, որք մերձեցուցանելի են միայն ժողովրդոց բնաւին քաղաքականացելոց. Զուգընթաց լինին երկոքին այսոքիկ պարագայք 'ի նուազեցուցանել զհաւատարմութիւն առաջնոց ստորագրութեանց տուելոց 'ի Սպանիացւոց զվարուց Մէսսիքացւոց. Առնելով նոքա զբաղդատութեն 'ի մէջ նոցա և 'ի մէջ նուաճ քաղաքականացեալ ցեղիցն՝ անցին ըստ ամ սահմանս. և գաղափարք նոցա ծնուցին անտի զայլ ողջոյն ներհակս ճշմարտութեն. Առաւել արդի հեղինակք հետևեցան ոճոյ սկզբնական վիպասանից բարդելով առաւել ևս. Կերպարանքն, որովք Տէսօլիսն ներկայացուցանէ զհանգամանս Մոնթէծումայի, զշուք արքունեաց իւրոց, զօրէնս և զքաղաքականութիւն թագաւորութեն իւրոյ, են նոյնք, զորս 'ի գործածեալ էր նա 'ի նկարել զմիապետ և զսահմանադրութիւնս ժողովրդեան միոյ կատարելապէս քաղաքականացելոյ:

Այսոյն որչափ և պարտիցէ ընդունել, թէ ջերմ պատկերակերպութիւն Սպանիացւոց պատմագրաց յաւելե̃լ իցէ սնթևեթս 'ի պատմութիւնս իւրեանց, այս ոչ է բաւական արդարացուցանել զբացարձակ և զվճռողական կարծիս նց̃, որք յայտ առնեն բոլորովին առասպելականս զվէպս նց̃ զկարողութե̃, զկառավարութե̃, և զօրինաց Մէքսիքեան թագաւորութեն. Այսու գործք պատմականք ճշմարտեալ են 'ի նց̃, որպէս այն, որ ասացեալ լինի զսահմանադրութե̃ և զվարուց Մէքսիքացւոց. Պատմեն ականատես վկայք զայն, զոր տեսեալ են. մարդիկ, որք կեցե̃լ են 'ի մէջ Մէքսիքացւոց յառաջ և զկնի տիրապետութենն, յառաջբերեն զօրէնս և զսովորութիւնս, որք էին նց̃ բնտանեկան. անձինք զանազան արուեստից, զինուորք, օրինականք, և երիցունք, որոց տեսութեան առարկայք պարտին յանդիման լինել ընդ պէսպէս կերպարանօք, զուգընթաց լինին ամենեքեան 'ի վկայութեն նց̃. Եթէ Քօրթէս փոխանդեալ իցէ զանձն առ'ի խարել զինքնակալն իւր. առաջի մատուցանելով նմա զպատկերակերպական իմն նկար, ոչ պակասէին թշնամիք, և տարփակիցք, պատրաստք առ'ի ընդդիմաբանել նմա. և ոյք մանաւանդ զուարճացեալ էին 'ի յայտնելն զճարէութի նր. Բայց ըստ նշմարելոյ հեղինակի ուրումն, որոյ իմաստութին լուսաւորեաց և որոյ ճոռոմութին զարդարեաց զվիպասանութին Ամերիկոյ, այսպիսի իմն ենթադրութի է ը ինքեան անհաւանական. և վերջին իմն յանդգնութեան պէտք էին առ՚ի գտանել զայսպիսի իմն քաջայարմար առասպել. Ո՞ երբէք ՚ի մէջ աւերողաց այնպիսի մեծի թագաւորութեն էր այնչափ լուսաւորեալ, կամ այնպէս մտադիր յառաջադիմութե գործողութեանց մարդկան ընկերական կենաց, որ կարող լինէր կերպաւորել զմտայածին իմն կարգաւորութի կառավարութեն այնպէս քաջ խորհեալ և յօդեալ, որպէս այն, զոր նոքա կառուցանեն զյիշատակարանս իւրեանց ըղ-Մէքսիքեան կառավարութե. Ուստի՞ կարէին նոքա առնուլ զգաղափար այնքան սահմանացն յօրէնսդրութեանն և ՚ի քաղաքավարութեն, որոց յայնժամ ժամանակի ոչ գոյր ինչ համեմատ ՚ի մէջ ազգացն, զորս կանխաւ ծանուցեալ էին. ՚Ի սկիզբն վեշտասաներորդ հարիւրեկին ոչ ճանաչիւր կիրառութին խառնրդից ՚ի մէջ Եւրոպիոյ. Այլ այս դիտողութի պարտի զօրել մ̃ այնր, զոր նոքա պատմեն զկերտուածոյ քաղաքին Մէքսիքոյ, զկանոնաւորութեանց քաղաքավարութե իւրոյ, զպէսպէս օրինացն յառաջ եկելոց մ̃ մատակարարութե արդարութե կամ մ̃ ապահովացուցանելոյ զբարին հասարակութե. Որ ոք սովոր է նկատել զյառաջադիմութի ազգաց՝ տեսանէ յառաջին ժամս նոցա վաղահաս իմն և զանակնկալ երևումն այնց գաղափարաց, որք ետուն զծնունդ սահմանադրութեանցն. և որք յետոյ եղեն պարծանք և զարդ առաւել զարգացեալ հասակի նոցա. Նա և ՚ի կացութե իմիք տկարապէս քաղաքականացելոյ, որպէս Մէքսիքօինն, երջանիկ ուշիմութի ոմանց զգօն դիտողաց զարթուցեալ և օժանդակեալ ՚ի պարագայից մեզ անծանօթից կարող բող եղև մուծանել զսովորութիւս, որք հազիւ ուրեք գտանին արտաքոյ առաւել կիրթ ընկերութեանց. Բայց անկարելի է, թէ այնպէս տգետ տիրապետողքն, ոյք Նորոյ աշխարհին՝ կարացեալ իցեն հնարել զսովորութիւս և զօրէնս, որք ոչ էին գիտացեալ յաշխարհին իւրեանց. Կամիմ թէ ընդունակ լեալ իցեն այսմ Քորթէս և ընկերք իւր, զինչ շահ ունէին 'ի խաբելոյ զյաջորդս իւրեանց. Զինչ պատճառ շարժէր զՔօրիթա, զՄօթօլինէա, և զԱքօստա 'ի պատմել զառասպելս արքային իւրեանց և հայրենակցացն:

Կրօն Մեքսիկացւոց: Բայց է պարակայ ինձ, յորում առաջնորդքն, որոց պարաւանդեալ եմք զհետ երթալ, առաջի առնեն մեզ զՄեքսիկացիս առաւել խուժադուժս որչափ թերևս ոչ էին. Նոքա նկարեն մեզ իբր դժպատեհս և անագորոյնս 'ի ծայրագոյն աստիճանի զկրօնական վարդապետութիւս և զծէսս նց. Կրօնն, որ ոչ տեղակալէ որոշակի և ուրոյն 'ի միտս վայրագի միոջ, որ ոչ ունի, բայց եթէ զաղօտ և զշփոթ իդէա գերագոյն էակի միոյ, և որոյ ծէսք պարզ են և սակաւաթիւ, կերպաւորէր առ Մեքսիկացիս զկանոնաւոր ինչ կարգադրութի. և ունէր զքահանայս իւր, զտաճարս իւր, զզոհս իւր, և զտօնս. Այս միայն հաւաստէ, թէ վիճակ նոցա էր զանազան յայլոց ցեղից Ամերիկոյ. բայց ոչ է մարթ յառաջածել յանտեղութէ կրօնական գործողութեանց նց, և ոչ 'ի խժականութեանց ծիսից նց զհետևութի ինչ վերաբերեալ առ յառաջադիմութիւս քաղաքական կրթութեն նց. որովհետև ազգք եւս և ընդ երկար ժամանակ զկնի ընդարձակելոյ գաղափարաց իւրեանց, և յղկելոյ վարուցն նց, պահեն զյարումն առ աւելորդապաշտական կարգադրութիւն հիմնեալս 'ի վր աղօտ իդէայիցն, զորս ունէին 'ի ծագման իւրեանց. Ոչինչ ընդհատ մարթ է 'ի

իէ ընաբնաւորութե̃ կրօնին Մեքսիկացւոց դատել զազդեցութե̃, զոր պարտ եղև նմա ունել 'ի վր̃ յառակութենց ժողովրդեանն. Այս կրօն դժնեայ էր ամենայն մասամբ և սոսկալի. Աստուածութիւնք նոցա ունէին զահարկու իմ̃ տեսիլ. և բերկրէին 'ի վրէժխնդրութե̃. Ձևացեալ լինէին նոքա առ ժողովրդեան ընդ կերպարանաւ իւիք, որ շնչէր զսոսկումն. Զարդարեալ էին մեհեանք նց̃ ձևովք օձից, վագրաց, և այլոց ապականիչ շնչաւորաց. Երկիւղն էր միակ սկիզբն, զոր տպաւորէին 'ի հետևողս իւրեանց. Զոհք, մեռուցմունք, խստագոյն ապաշխարութիւնք էին հայթհայթանք 'ի գործածեալք 'ի նոցանէ առ 'ի ցածուցանել զցասումն նց̃. և ոչ երբէք մատչէին առ սեղանս նց̃, եթէ ոչ նախ թաթաւեալ էին զն̃ն արեամբ. Խառնելով այս կրօնական հաւատ ընդ հոգւոյ վրէժխնդրութե̃, որով խրախուսեալ էին, և յարաժամ առաւել զօրանալով այն՝ բերէր զն̃ն առ 'ի զոհել նոցա զամ̃ կալանաւորս աւարեալս յինքեանց հանդերձ հանդիսաւոր և անագորոյն խորտանօք. Գլուխն և սիրտն էր բաժին նուիրեալ դիցն. մարտիկն, որ արարեալ էր զկալանաւորն, տանէր ընդ իւր զմարմինն. և ուտէր զայն յընկերութե̃ բարեկամաց իւրոց. Անկարելի էր, թէ մարդիկ պաշարեալք այսպիսի քստմնելի և մահահոտ իդէիւք, և սովորք 'ի տեսանել հանապազօր հեղուլ զարիւնս՝ ունիցին զզգացումս ինչ մարդասիրութե̃. ուստի Մեքսիկայք ունէին զսիրտ խիստ և դժնեայ. Սեռ կրօնի նց̃ ազդէր այնպէս 'ի վր̃ կառավարութե̃ և 'ի վր̃ արհեստից, մինչզի բարք նց̃ փոխանակ հեզանալոյ եղանէին օրըստօրէ առաւել ամեհի. Այնչափ ոչ է մեզ ծանօթ, որչափ բաւական է, պատմութի̃ նց̃ առ 'ի գիտել զպարագայս, որք ետուն զայսպիսի սարսափելի կերպարան կրօնաժետութե̃ նց̃. բայց ազդեցութի̃ իւր է կարի իմ̃ յայտնի և յառաջէած զարդիւնս ինչ, որ ապշեցուցանէ 'ի վիպասանութեան մարդկային տեսակի. Բարք ժողովրդեան առաւել ճարտարամտի և առաւել քաղաքականացելոյ 'ի Նոր աշխարհին էին գազանագոյն. և խժականութիւնք սովորութեանց ինչ նոցա գերազանցէր զվարուք վայրագագոյն ժողովրդոց։

(12) ‖ Երևի թէ վիպասանք Սպանիացիք ընդլայնեալ իցեն զթիւ մարդկեղէն սպանդից զոհելոց 'ի Մեքսիքօ. Ըստ Գօմարայի ոչ անցանէր տարի, յորում ոչ լինէին մատուցեալք Մեքսիքեան աստուծոց քսան հազար մարդկային զոհլիք. և 'ի տարիս ինչ ժամանէին ցյիսուն հազարս. Գագաթունք տարաբաղդ անձանցս այսոցիկ էին դասաւորեալք կարգաւ 'ի տեղւոջ միում կառուցելոյ առ այս վախճան. և երկուք 'ի պաշտօնատարացն Կորթեսի, որք թուեալ էին զայնս, ասացին ցԳօմարա, թէ էին հարիւր երեսուն և վեց հազար. Առաւել ևս անհաւատալի է պատմութիւն Հէրրէրայ. այսինքն թէ թիւ զենլեաց էր այնպէս մեծ, մինչ զի հինգ հազարք զենեալ էին 'ի միում աւուր. նա՝ զի յաւիթս ինչ ոչինչ նուազ քան զքսան հազարս. Թօրքուէմատա գերազանցէ զերկոքումբքս 'ի չափազանցութեան. որովհետև պնդէ, թէ քսան հազար տղայք ուրոյն յայլոց զենլեաց ամի ամի խողխողեալ էին. Առաւել ակնածելի վկայութիւն 'ի նպաստ այսր մեծի թուոյ է Զումուրրակայինն առաջնոյ Եպիսկոպոսին Մեքսիքոյ. որ 'ի միում նամակի առ ընդհանուր ժողովն կարգին իւրոյ յամին 1631 ասէ, թէ Մեքսիքացիք զոհէին ամըստամէ զքսան հազար սպանդս. Հակառակ այսմ պատմելոյ Բարթուղիմէոս Տէլասքազաս նկատէ, զի եթէ այս լեալ էր ճշմարիտ, երկիրն ոչ լինէր ժամանեալ առ այն աստիճան բազմամարդութեան, յորում գտին զայն Սպանիացիք՝ յորժամ մտին անդր

յառաջ֊

յառաջնում նուագի. և դրականապէս պնդէ, թէ Մեքսիքացիք ոչ զոհէին երբեք աւելի քան զյիսուն կամ զհարիւր անձինս 'ի միում տարւոջ. Տեսցի վիճաբանութիւն իւր ընդ Սեփուլվեդայ առակցեալ ընդ կարճ 'ի կարճոյ պատմութն իւրում. Կօրթէս ոչ տեսակաւորէ, թէ զինչ թիւ զենլեաց զոհեալ էր յիւրաքանչիւր ամի. բայց Տիաց Կաստիլլեանն պատմէ, թէ խոյզ և խնդիր արարեալ 'ի միանձանց Ֆրանչիսքանաց առաքելոց 'ի Նորն Սպանիա անընդմիջաբար զկնի առմանն՝ գտաւ, զի շուրջ երկու հազար հինգ հարիւրք զոհեալ էին յամ տարւոջ 'ի Մեքսիքօ ։ ‖

Թագաւորութիւն Փերուայ պարծի լինել առաւել փաղաքական քան զՄեքսիքոյինն. Ըստ աւանդութեանցն հաւաքելոց 'ի Սպանիացւոց գոյաւորիւր այն 'ի չորեքհարիւր ամաց հետէ ընդ երկոտասան յաջորդական միապետօք. բայց պիտոյ է ասել, թէ ամենևին անկատար էր, և անստոյգ ճանաչումն, զոր Փերուացիք զվիպասանութէ իւրեանց հաղորդեցին տիրապետողաց իւրեանց ։

Պըն-
դա-ն
Փե-
րուաց-
ւոց [illegible]
[illegible]
ին
[illegible]
[illegible]

(13) ‖ Ոչ է հարկաւոր նկատել, թէ ժամանակաբանութիւն Փերուեան է ոչ միայն մթին; այլև ընդդիմամարտ ամբոկութեանց հանելոց յառաւել խնամոտ դիտողութէ տեւողութն երկաքանչիւր թագաւորութն և յաջորդութն նահապետացն. Գտեալ եղև; զի թագաւորութիւն առ թագաւորութի ոչ առաւելու քսան ամօք. Ըստ Աքօստայի և ըստ Կարչիլասսօյի Վէկայ՝ Հուանա Կափաք, որ մեռաւ իբր յամին 1527, էր երկոտասաներորդ Ինքա. Ըստ տեւողութի Փերուեան միապետութն ոչ պարտի համարիլ աւելի քան զերկերիւր քառասուն ամս; թէպէտ Փերուացիք ամբառնան զայն ցչորեք հարիւր ։ Ըստ այսմ հաշուի իւրաքանչիւր թագաւորութի եղև երեսուներից ամաց փոխանակ քսանից, զհետ

երթալով դիտողութեանց Իսահակայ Նեւտոնի. Բայց աւանդութիւնքն փերուացւոց են այնպէս անստոյգ, մինչզի թէև ընկալեալ լինէր բոլորական թիւն՝ անգիտացեալ լինէր միշտ տևողութիւն իւրաքանչիւր թագաւորութեան: ‖

Անու-
փոյթ:

Ոչ գիտէին նոքա, որպէս և այլ Ամերիկացիք զարհեստ գրելոյ, որ է միայն միջնորդ պահելոյ զյիշատակ անցելոց դիպուածոց. Իսկ եւս առ ժողովուրդսն, որք ոչ էին տգէտք գրութեան, դարձ յոլով սկսեալ արժանահաւատութիւն պատմութեանց է յոյժ յետնագոյն քան զկիրառութիւն այսր արհեստի. Այսպիսի իմն գեղեցիկ գիւտ ծառայեաց ընդ երկար ժամանակ գործառնութեանց և պիտոյից կենաց յառաջքան զառնուլն 'ի պէտս փոխանցելոյ զյիշատակս դիպուածոց առ յետնորդս. բայց երբեք պարզ աւանդութիւն ոչ փոխանցեաց առ նոսա ընդ միջոց երկայն շրջանի զկէտն այնր, որ նշանակի թագաւորութեան փերուայ:

Պակա-
սաւորք
պատմա-
գրութ. նց
ծանօ-
թագրու-
Քուի-
փոսաց:

Քուիփոսն կամ հանգոյցք գոյն զգոյն, որք արարեալ լինէին յառասանս, զորս վիպասանք զարմանասէրք կամին ստանալ իբր տարեգրութիւնս թագաւորութեան, ոչ էին այն, բայց եթէ անկատարապէս զպակասութիւն գրութեան. Ըստ աղօտ ստորագրութեան, զոր տայ մեզ զայնմանէ Աքոստա, որ և 'ի Կարցիլասսոյէ Վեկայէ գրեթէ ողջոյն առեալ է առանց յաւելլոյ յայն զեր ինչ, Քուիփոսքն ոչ ծառայէին. բայց եթէ առ'ի առնել զհաշիւն առաւել արագ և առաւել անվթար. Պէսպէս գոյնքն ծառայէին առ'ի նշանակել զառարկայսն. իւրաքանչիւր կապ ցուցանէր զորոշեալ իմն թիւ. որոյ միջնորդութեամբ կալեալ լինէր տեսակ իմն համարողի ընակչաց իւրաքանչիւր գաւառի և զանազան բերոցն. որք հաւաքեալ լինէին առ պէտս հասարակութեան. Այլ քանզի հանգոյցքս ոյսոքիկ զխարդ և այլայլեալ լինէին, կամ դասաւորեալ, ոչ բացայայտէին զպա-

ղազափոր ինչ վերացեալ, զօրակութիւն ինչ և ոչ իսկ զգործողութիւն ինչ հոգւոյ. Նմին իրի ոչ կարէին ծառայել առ 'ի պահել զյիշատակ անցելոց դիպուածոց, և ոչ զվաղեմի սահմանադրութեանց. Նշանագիրք կամ հանգամանք Մեքսիքացւոց այնպէս անհեթեթք որք և էին, զօրէին անսահմանարար լաւագոյնս՝ առ այսպիսի պէտս քան զՔուիփոս այնչափ պանծացեալս 'ի Փէրուացւոց. Իսկ թէպէտև լեալ էին առաւել պիտանիք և առաւել յարմարք 'ի լնուլ զպակասութիւն գրութեան, ոչ է կար հանել անտի լոյս ինչ. վասն զի կորուսեալ են. որք այնչափ այլ յիշատակարանք մտաւարժութեանն Փէրուացւոց 'ի ժամանակի տիրապետութեանն և 'ի քաղաքական պատերազմացն հետևականս այնմ. Բովանդակ Նախանձայուզութիւն Կարցիլասոյի Վեկայի վասն պատւոյ զարմին միապետաց, ուստի սերեալ էր, բովանդակ ճարտարութիւն հետախուզութեանց իւրոց հանդերձ դիւրութեամբն, զոր կալաւ առնելոյ զայն՝ ոչ տեղեկացոյց զմեզ զիմեքէ արտաքոյ այնր, զոր գիտէին վիպասանք Սպանիացիք, որք յառաջին էին քան զնա. Ամիքոփի Յորտանէ յիշատակարանս իւր 'ի պարզաբանել զայն, որ յայլոց ասացեալ է զվաղնջականութեանց և զսահմանադրութեանցն Փէրուացւոց. և բացայայտութիւնքն տուեալք 'ի նմանէ, որք և պատմութիւնք նոցա ոչ են հիմնեալք, բայց եթէ 'ի վերայ աւանդութեան, որ անցեալ էր 'ի մէջ հայրենակցաց իւրոց:

Աստուստ յառաջկայ, զի սակաւ հաւատ ընծայելի է որչափ ինչ ասեն զմեծամեծ ձեռնարկութեանց, զպատերազմաց, զտիրապետութեանց, և զհանդամանացն առաջնոց թագաւորացն Փէրուայ. Չիք ինչ արժանահաւատ 'ի վիպասանութեան նոցա, եթէ ոչ փոքրիկ ինչ թիւ եղելոցն, որք խառնեալ գոլով ընդ կարգադրութեան կրօնի նոցա և կառավարութեան, հանգանակեցին 'ի փոխանցել առ մեզ զյիշատակ և զստորագրութիւնս սովորութեանց և օրինաց, որք կային 'ի ժամանակի տիրապետութեանն, և հասին 'ի ծանօթութի Սպանիացւոց. Այսոսիկ յարելով իմ, և զատուցանելով որչափ ինչ առասպելական գոյ 'ի նս և անստոյգ՝ սկիզբն արարի կերպաւորել մեզ զգաղափար ինչ զկառավարութէ և զբարուց փէրուացւոց:

Ուսուցումն ժողովրդեան կատարելութէ նոցա:

Փէրուացիք՝ ոչ նշմարեցի 'ի վեր անդր, ոչ էին բնաւ տարբերք յայլոց վայրագաց յորժամ Մանքօ Կափաք և Մանքա Օքլլօ կին նորա եկին առ նոսա առ 'ի ուսուցանել զնոսա և քաղաքականացուցանել. Աւանդութիւն ոչ տայ մեզ գիտել, թէ ուք էին անձինքն այնոքիկ վտարանդիք, մի՞ թէ առեալ էին 'ի ժողովրդենէ իմեքէ առաւել կիրթ եղելոյ զկարգադրութի օրինադրութեն իւրեանց և զծանաչումն արհեստից, կմ թէ բնիկ գոլով փէրուայ ստացեալ էին զծանաչմունս վերնագոյնս քան զժողովրդեանն, առ որ ուղղեալ լինէին. Մանքօ Կափաք և կին իւր շնորհաւորելով 'ի հակամիտութենէ, զոր փէրուացիք ունէին առ կրօնաժետութիւն, և մասնաւորապէս 'ի յարգանացն, զոր դաւանէին առ արեգակն, կոչեցին զինքեանս որդիս այնր փառահեղ լուսաւորի, որ առաքէր զնս առ 'ի կրթել զայնոսիկ յանուն իւր և իշխանութի իւրով. Բազմութիւն ոչ գիտաց զլանալ նոցա զհաւատ. Այլուր խօսեցաք զնորոգութենէ, զոր արարին 'ի բարս և 'ի կառավարութե փէրուացւոց միջնորդութի պատուիրանացն, զորս ետուն նց ինքն և կին նր. և միջնորդութի արհեստիցն, զորս ուսուցին նոցա առ 'ի փոխատրել առաւել հեշտալի զկեանս նոցա. Այսոքիկ դիւրութիք 'ի սկզբան անդ եղեն յոյժ ամփոփք. որովհետև ոչ տարածանէր իշխանութի Ինքայի, բայց եթէ սակաւ փարսախս հեռի 'ի Կուզքոյէ. այլ 'ի յառաջաձգութեն ժմկի ընդարձակեցին յաջորդք իւր զտէրութի իւրեանց 'ի վե

քո–

բովանդակ կողմանցն կայսերելոց անդր քան զՌՇ մղոնս 'ի Չիլեայ մինչև ցՔուիթօ. և յիւրաքանչիւր գաւառի հաստատեցին զկառավարութիւն և զկրօնական վարդապետութիւնսն իւրեանց:

Ազգականագոյն և առաւել զարմանաւոր պարակայ 'ի վարչութեն Փէրուայ է ազդեցութի կրօնին 'ի վր բնաւորութեն և օրինաց նց. Կրօնական գաղափարք առնեն զայնպիսի տկար տպաւորութի 'ի վր մտաց վայրագի, մինչզի յառաջածին ըևս թեթեւագոյն արգասիս 'ի զգացուածս և 'ի բարս իւր. Կրօնն Մեքսիկացւոց վերածեալ առ կանոնաւոր իմն կարգադրութի և պատուհասեալ 'ի հրապարական սահմանադրութիս նց օժանդակեաց 'ի կերպաւորել զմասնաւոր յատկութի ժողովրդեան. այլ 'ի Փէրու բովանդակ կարգադրութե քաղաքական կառավարութե հիմնեալ էր 'ի վր կրօնին. Առ յինքն Ինքա միանգամայն զանուն օրէնսդրի և պատգամաւորի երկնից. Ընկալեալ եղեն պատուէրք իւր ոչ այնչափ իբր կանոնադրութիւնք վերնագունի ուրուք, որչափ իբր հրամանք ածութե. Սրբազան համարեալ էր զարմ իւր. և առ 'ի խափանել, զի մի պղծիցի այն վայրագոյն իւիք ազգականութե, որդիք Մանքօ Կափաքայ հարսնացուցանէին զսեփական քորս իւրեանց. և ոչ ընկալեալ լինէին յաթոռ, բայց եթէ օրինաւոր սերունդք այնր պայծառ տոհմի. Զաւակքն ունէին առ որդիսն արեւու (այսպէս անուանէին զնոսա) զնոյն ակնածութի, զոր առ էակս վերնագոյն իրիք կարգի. Կարծիւր, թէ էին նոքա ընդ անմիջական պաշտպանութեամբ նյ. յորմէ իջեալ էին. և նկատեալ լինէին հրամանք* Ինքայի թագաւորելոյ իբրև ազդեալք 'ի բերանոյ նորա:

Ազդեց. 'ի կրօնէ:

*Աշխա- նաւոր գործք,

*Երկու հետեւութիւնք ծագէին յայսց գաղափարաց. որք յայն Բնացալուծակ էր և անկոպար իշխանութին Ինքայի, խոնէ տ-

աուն- ծանուցենս

առնլով զայսոսիկ խօսս յառաւել տարածել միտս. Մինչ յորժամ հրամանք արքայի ուրուք համարեալ են իբր հրամանք ածութեն, ընդդէմ դառնալն այնմ է լինել մեղապարտ ապստամբութեն և ամբարշտութեն. Հնազանդութիւն եղանի գործ իմն կրօնի. և այնուհետև ամբարշտութիւն իմն լինէր ընդդէմ կալն ինքնակալի ումեք առաջնորդեցելոյ յերկնից. և յանդգնութիւն իմն տալն նմա խորհուրդս, ոչ վերամնայ, բայց եթէ կուրօրէն հնազանդիլ նմա. Այսպիսի է հարկաւորապէս արդիւնք ամ կառավարութեն հիմնեցելոյ ՚ի վրյ հաղորդակցութեն իւրեք ընդ վերնագոյն էակաց. և առաւել յառաջգայ, զի փէրուացիք ունէին զկերպ իմն հպատակութեն ինքնակալաց իւրեանց. Մեծամեծքն հայէին ՚ի նն իբրև յէակս բնութեն իւրեք վերնագունի քան զնոսայն. և ոչ երբեք յանդիման լինէին նց, բայց եթէ կարասեաւ իւիք ՚ի վրյ ուսոց իւրեանց առ ՚ի նշանակել զգերութիւն իւրեանց. և զկատարեալ հնազանդութիւն. Ոչ ունէին նոքա պէտս ՚ի գործածելոյ զբռնութիւն առ ՚ի պարտաւորել զհպատակս ՚ի կատարել զհրամանս իւրեանց. Ակնածէին սոքա ՚ի նոցանէ, որք էին ՚ի պաշտօնի, ակնածէին առաւել ՚ի նոցանէ այնպէս, որպէս նշմարէ ներքին ոմն ճանաչող բարուց փէրուացւոց, զի պաշտօնատար մի կարող էր երթալ ինքնին միայնակ ՚ի միջէ ՚ի միւս ծագ թագաւորութեանն առանց պատահելոյ և ոչ գոյն ինչ ընդդիմադրութեն. և ոչ ունէր, բայց եթէ ցուցանել զծոպ արքայական Պօրլէ (էր զարդ մի սեփական Ինքայի թագաւորողի) առ ՚ի տրամադրել ըստ հաճոյից զկենաց հպատակաց իւրոց և զբաղդս նց:

Բռնաւոր յոյժ իշխանութիւն Ինքայի:

Այլ իմն հետեւութիւն յայսմ ազդեցութեան կրօնին ՚ի վրյ կառավարութեն էր, զի ամ յանցանք պատժեալ լինէին գլխապարտութեն. Ոչ նկատեալ լինէին այնք իբր պարզ յանցաւորութիւնք մարդկային օրի-

Ամ յանցանք պատժէր մահուամբ:

օրինաց, այլ իբր թշնամիք արարեալք ածութեան. Համայնք 'ի թեթեւագունէ մինչեւ ցմեծեղեռն խնդրէին հաւասարապէս զվրէժ. եւ ոչ կարէին քաւել, եթէ ոչ արեամբ չարագործին. Ըստ բաղդատութեն նոցին գաղափարաց պատուհասն էր միշտ զկնի յանցանացն. եւ ոչ ինչ կարէր զերծուցանել յայնմանէ. վն զի դատեալ էր աններելի յանցանք ինչ ընդդէմ այ. Սկզբունք այսչափ խիստք առ զեղծեալ ժողովրդեան իմիք փոխատրել էր զմարդիկ ամեհագոյնս եւ բազմացուցեալ զյանցանս փոխանակ զսպելոյ. բայց Պերուացիք, որք առաւել պարզամիտք էին, եւ նուազ թերահաւատք՝ այնպէս ուժգին սանձահարեալ էին յայն խիստ խրատուէ, մինչզի 'ի մէջ նոցա հազիւ երբէք լինէին եղեռնութիք. Հնազանդէին նոքա անաշխատ՝ միապետացն, զորս հաւատային առաջնորդեալս եւ լուսաւորեալս յածութէ երկրպագելոյ 'ի նոցանէ, նահանջելով զնոսա 'ի առնելոյ զչար՝ դրութին պատուհասի, զոր համարէին իբր գործ անպակասելի երկնային վրէժխնդրութն ։

Կարգ կրօնաժետութեն, որում պարտական եղեն Ինքայքն վն աւագութն իւրեանց, էր բնաւին զանազան բնաւորութբ յայնմանէ, որ գտանիւր ամենահաստատեալ 'ի մէջ Մեքսիկացւոց. Մանքօ Կափաք դարձոյց ողջոյն զյարգանս հպատակաց իւրոց առ բնական առարկայս. Արեգակն իբր աղբիւր լուսոյ ուրախութեան եւ յուռթիութեան ձգեաց առ ինքն զգլխաւոր զսպասահարկութին. լուսինն եւ աստեղք եղեն յետ նր առարկայք պաշտաման նց. Ուր ուրեք մարդիկ, որք ճանաչեն զգերագոյն իմն էակ, ուղղեն զերկրպագութիս իւրեանց առ այսոսիկ տեսակս առարկայից, եւ պարապին 'ի նշմարել զկարգ եւ զգեղեցկութին, որք թագաւորեն 'ի բնութն, եւ զբարերարութիսն, յորս վայելեն, հեզ է հոգին կրօնի նց. Ընդ հակառակս

Հոգի կրօնի նց ամենահեզ։

կրօնն առնու զկերպարան իմն ահարկու և դժնեայ յայսմ աշխարհս, ուր պատկերակերպութիւն և երկիւղք մարդկան ստեղծանեն էակս մտացածինս, որք իշխեսցեն բնութեն. և յայնմանէ կերպաւորեն զառարկայս պաշտաման նց. Ունիմք զօրինակ իմն այսց երկուց տեսակաց կրօնաժետութենց առ Մեսիքացիս և առ Փերուացիս. Սոքա վերջինքս ոչ էին ը բաւականին հրահանգեալք առ'ի յղանալ՝ զարդար գաղափարս մծութեան. և ոչ ունէին 'ի լեզուի իւրեանց զանուն ինչ առ'ի նշանակել զգերագոյն էն. և որ ցուցանէր, թէ նկատէին զնա իբր արարիչ և տր հանուրց. բայց որովհետև ուղղէին զյարգանս իւրեանց առ այն փառացի լուսաւոր, որոյ կենդանարար և ընդհանուր ներգործութիւն է տարացոյց բարերար կնքոյ մծութեն, ծէսք և խորութիւնք, որք նուիրեալ էին նմա, ոչինչ ունէին յինքեանս, բայց եթէ անմեղ և մարդասիրական. Մատուցանէին նոքա արեգական զմասն ինչ բերոցն, զոր կենդանարար ջերմութի իւր արարեալ էր ընձիւղել 'ի ծոցոյ երկրի և աճեալ առ հասունութի իւրեանց. Զոհէին նմա վս երախտագիտութեան զոմանս 'ի շնչաւորաց, իբր զի պարտական էին նմա վս սննդեան նոցա. Մատուցանէին նմա ըղգործս ինչ արհեստի, որք էին պտուղք ոգւոյ պայծառացելոյ 'ի նմանէ. Ոչ երբէք Ինքայք շաղախեցին զսեղանս իւրեանց մարդկային արեամբ, ոչ գիտելով 'ի միտ առնուլ, թէ հօր միում այնչափ բարերարի՝ որչափ արեգակն, կարիցեն ընդունելի լինել զոհք այնպէս սոսկալիք.

(14) Բազումք յառաջնոց պատմագրաց Սպանիացւոց ասեն, թէ Փերուացիք զենուին զմարդկային սպանդս. Բայց Կարչիլասսօ Վէկայ պնդէ, զի թէպէտ այս խժական սովորութի գոյր 'ի մէջ բիրտ նախնեաց իւրեանց, սակայն բարձեալ էր բոլորովին յԻնքայից. և ոչինչ սպանդ

մարդկային զոհեալ լինէր երբէք յիմիք մեհենի արեգական. Այս ասութի և գովելի փաստք, որովք հաստատէ զայն, բաւական են 'ի հերքել զպատմագիրս Սպանիացւոց, որոց պատմութիւնք հիմնին միակ 'ի վ̄ր ասութեանց այլոց. և ոչ 'ի վ̄ր այնր, զոր ինքեանք նշմարեալ էին. Ի միում 'ի տօնից իւրեանց մատուցանէին փէրուացիք զկարկանդակս զանգեալս արեամբ հանեցելով 'ի բազկէ, 'ի ճակատու և յըռնգաց տղայոց իւրեանց. և երևի, թէ այս ծէս յառաջեկեալ իցէ 'ի նախկին սովորութէ իւրեանց ։ ‖

Ոչ գիտելով փէրուացիք զխժական ծէսսն, որք խստացուցանեն զսիրտ, և փոխատրեն զմարդիկ անզգայս առ չարչարանս նմանեաց իւրեանց, ստանան օգնութ̄ կրօնաժետութեան ողջագուրեցելոյ 'ի նոցանէ զյատկութիւն իմն ազգային առաւել մարդասիրական քան զայլոյ ուրուք ժողովրդեան Ամերիկոյ ։

Ազդեցութիւն կրօնին 'ի վ̄ր քաղաքական կառավարութեան ։

Ազդեցութի իւր ներգործեաց նաև 'ի վ̄ր քաղաքական սահմանադրութեանց նց̄. և ուղղեաց որչափ ինչ ունէին խիստ և հակառակ մարդասիրութե. Իշխանութի Ինքայից թէպէտ և առաւել բացարձակ՝ ևս և քան զտիրականութիւն մեղմացուցեալ էր 'ի դաշնաւորութէ իւրմէ ընդ կրօնին. Հոգին ոչ էր ոչ խոնարհեալ և ոչ նուաճեալ 'ի գաղափարէ բռնական իրիք ենթարկութեան կամաց վերնագունի ուրուք. Հնազանդութիւնն, որ մատուցանիւր մարդոյ միում, որ համարիւր, թէ զգեցեալ իցէ զաստուածային աւագութի, էր կամայական. և ոչ ունէր ինչ, որ նուաստացուցանէր զմարդկութիւն. Ինքնակալն հաստատեալ 'ի միտս, թէ մեծարանք հպատակաց իւրոց հիմնեալ էր 'ի վ̄ր ստուգութեան, յորում էին, առնլոյ նորա զծագումն իւր յերկնից, ոչ կորուսանէր երբէք 'ի տեսութէ զտրոհութիւն, որ վերածէր զնա նմանօղ լինել բարերար էակին, որոյ էր ներկայացուցիչ. Տպաւորութիւնս այսոքիկ եղեն պատճառ ոչ լինելոյ երբեք 'ի նոսա ապստամբութիւն ընդդէմ արքային թագաւորելոյ և ոչ բռնաւոր ոք 'ի յաջորդութեան երկոտասան միապետացն ։

Սո– 'ի Ջէ վէն- ռէոր- ջանն խոր գէին ։ Այլ և պատերազմունք, յորս դիմագրաւ լինէին Ինկայք, տարբեր էին հոգւով իւրք բնաւին տարբերաւ 'ի հոգւոյ այլոց ազգաց Ամերիկոյ. Ոչ մարտնչէին իբրև զվայրագսն առ 'ի եղծանել և ջնջել, կամ իբրև զՄեքսիքացիս առ 'ի յագեցուցանել զչ̃ածս իւրեանց ծարաւս մարդկային արեան. Տիրապետէին վն̃ քաղաքականացուցանելոյ զյաղթեալսն և ընդարձակելոյ զծանօթութիւն օրինաց և արհեստից իւրեանց. Երևի, թէ կալանաւորքն առ նս̃ ոչ էին ենթադրեալք թշնամանաց և տանջանացն վիճակելոց նց̃ յայլ ամ̃ մասին Նորոյ աշխարհին. Ինկայքն առնուին զժողովուրդն, զոր նուաճէին, ընդ պաշտպանութեամբ իւրեանց. և ընդունէին զնոսա 'ի բաժանորդութիւն ամ̃ արտօնութեանց և շահեկանութեանց վայելելոց 'ի սկզբնական հպատակաց իւրեանց. Այս սովորութիւն այնքան ներհակ Ամերիկեան գազանաբարոյութեան, և համանման մարդասիրութեան առաւել կիրթ ազգացն՝ պարտի վերագրիլ, ոպ̃ և այլ մասնաւորութիւնք նշմարեալք 'ի մէնջ 'ի բարս Փերուացւոց, բնաւորութեան կրօնի նոցա. Ինկայք նկատելով իբր ամբարշտական զհարկն մատուցել այլում առարկայի բաց յերկնային զօրութեանց 'ի նոցանէ երկրպագելոց, գուն գործեցին շահել ըզհետևողս սիրելի աղանդոյ իւրեանց. Կուռք ամ̃ գաւառի տիրապետեցելոց տարբ̃ էին հանդիսիւ յաղթութեան առ մեծագոյն մեհեանն Կուզքօի, և եդեալ անդէն իբր յաղթանակք գերագոյն կարողութեան ա̃ծութեան, որ պաշտպանէր զթագաւորութիւն. Ժողովուրդք նուաճեալք վարեալ էին հեզութեամբ, և կրթեալք 'ի կրօնական սկզբունս նոր տեարց իւրեանց. որպէս տիրապետողն ունիցի զփառս աճեցուցանելոյ զթիւ երկրպագուացն արեգական ծնողին իւրոյ:

Հանգամանք յատկութեն 'ի Փերու ոչ էր նուազ Միանաեզական քան զկրօնիւն, և օժանդակէր զուգաւոր ձէբար առ'ի տալ ժողովրդեան զտրամադրութի իմն առ ճոխ յատկնիք քաղցրաբարոյութե. Բովանդակ գետինք ընդունակք մշակութեն բաժանեալ էին յերիս մասունս. Մինն նուիրիւր արեգական և այն ամ, զոր յառաջածէր, ծառայեցուցանիւր կանգնման տաճարաց և դարմանոյ այնր, որ խնդրիւր առ'ի հռչակել զհրապարական ծէսս կրօնին. Միւսն պատկանէր Ինկային. և էր եդեալ մեկուսի առ'ի ծառայել պահպանութեն կառավարութեն. Երրորդ և մեծագոյն մասն վերապահիւր վասն ապրուստի ժողովրդեան, յորոց միջի բաշխեալ էր. Այլ ոչ ոք ունէր իրաւունս արտաքսողական յատկութեն 'ի բաժնի շնորհեցելոյ նմա. Ստանայր զայն ընդ ամ մի և եթ, յորոյ աւարտիլն արարեալ լինէր նոր բաժանումն համեմատ աստիճանին, թուոյն, և պիտոյից իւրաքանչիւր գերդաստանի. Բովանդակ այս հողք գործեալ էին 'ի միաւորեալ ճարտարութէ հասարակութեն. Ժողովուրդն հաւաքեալ 'ի պաշտօնատարէ միոջէ տարեալ լինէր խմբովին 'ի վր անդոց. և առնէր զհասարակաց պարտս իւր, ցցոց և երաժշտական նուագաց խրախուսելով զնս առ աշխատանս. Այսուիկ սեփական բաշխմամբ երկրաստանի, որպ և օրինակաւ մշակելոյ զայն, յեղյեղեալ լինէին 'ի նոսա հանապազորդ՝ գաղափարք հասարակաց իրիք շահու և փոխադարձ ծառայութեն. Օգտայր իւրաքանչիւր անհատ զկապակցութի իւր ընդ մերձաւորի իւրում. և ճանաչէր առնուլ յօգնութէ նց զառատութի կեթոյ իւրոյ. Այսպէս կանոնաւորեալ կացութի իմն պարտի նկատիլ իբր գերդաստան մի մեծ, յորում միաւորութի անդամոցն էր այնպէս կատարեալ և փոխանակութիւն բարի օճանացն այնպէս յայտնի, մինչզի ծագէր յայնմանէ սէր իմն և միաւորութիւն հզօրագոյն և սերտագոյն 'ի մէջ հպատակացն, որ ոչ գոյր յայլում խմբի Ամերիկեան հասարակութեան. Աստի ծնանէին հեզ բարք և ընկերական առաքինութիւնք անծանօթ վայրագ կացութեան. և զորոց Մեքսիքացիք ոչ ունէին, բայց եթէ զանկատար իմն գաղափար:

Անհաւասարութիւն պայմանաց:

Այլ որչափ և օրինադրութիւնք Ինքայից դիմէին 'ի սերտել զմիաւորութիւն 'ի մէջ հպատակաց իւրեանց, հանդերձ այսու տեսանիւր 'ի պայմանս նոցա անհաւասարութիւն իմն մեծ յոյժ. Տրոհութիւն աստիճանաց էր լիով հաստատեալ 'ի Փերու. Ընտրելի իմն խումբ բնակչաց ծանուցեալ և անուամբ Ինքայօնաց կալեալ էր 'ի վիճակի գերութեան. զգեստուց և տունք ունէին զկերպ իմն տարբեր յայնմանէ, զոր ունէին ազատ մարդիկ. Օրէնք Թագաւորաց Մեքսիքոյ պարտաւորեցուցեալ էին 'ի տանել զբեռինս, և 'ի կատարել զայլ ամենայն գործ անարգագոյն. Յետ սոցա գային նոքա, որք համարեալ էին ազատք. բայց ոչ էին տարորոշեալք ոչ 'ի պաշտամանց և ոչ 'ի պատուոց ժառանգականաց. Ամբարձեալ լինէին 'ի վերայ նոցա այնոքիկ, զորս Սպանիացիք կոչեն Օրէյօնս 'ի զարդուցն, զորս կրէին յականջս. Կերպաւորէին սոքա որչափ կարողեմք ասել, զկարգ ազնուականացն. և 'ի խաղաղութեան և 'ի պատերազմի ունէին զիրս մտերմութեան. Կային 'ի գլուխ ամենեցուն որդիքն արեւու, ոյք վասն զարմին իւրեանց և վասն մասնաւոր արտօնութեանց էին այնքան վերնագոյնք Օրէյօնաց, որքան սոքա ամբարձեալ էին 'ի վերայ ժողովրդեան:

Վիճակ արհեստից:

Այսպիսի իմն կերպ ընկերութեան վասն միաւորութեան անդամոց իւրոց և վասն զանազանութեան աստիճանացն պարտէր լինել նպաստաւոր յառաջա-

դիգիտութեան արհեստից. Բայց Սպանիացիք գոլով տեսեալ զնրբութիւն ոմանց արհեստից 'ի Մեքսիքօ բազմօք ամօք յառաջքան զգալն 'ի գիւտ Փէրուայ, ոչ եղեն այնքան շրտուցեալք յայնմանէ, զոր նշմարեցին անդէն. և ըստ այսորիկ ստորագրեն զանհաւատչելայս ճարտարութեան Փէրուացւոց հաւասարապէս նուազ եռանդեաւ և զարմացմամբ. Սակայն Փէրուացիք զարգացեալ էին առաւելագոյն քան զՄեքսիքացիս եթէ յարուեստս կարևորս կենաց և եթէ յարհեստս շռայլութեան:

[illegible]

'Ի Փէրու հողագործութիւն՝ արհեստ նախկնաբար կարևոր ընկերական կենաց՝ էր յոյժ կատարելագոյն քան յայլում իմիք տեղւոջ Ամերիկոյ. Սպանիացիք յառաջխաղալով յաշխարհն եղեն այնպէս առատութեամբ հանդերձեալք ամենայն ազգ դարմանօք, մինչզի 'ի պատմութիւնս նոցա ոչ ինչ գանկատ հանդիպի զքաղցու. յորմէ տիրապետողքն Մեքսիքոյ գտան այնքանիցս նեղեալ. Բանակութիւն հողոյ ընդունակ եղելոյ մշակութեան ոչ էր թողեալ դատման անհատից, այլ կանոնաւորեալ 'ի հրապարական իշխանութենէ ըստ չափակցութեան պիտոյից հասարակութեան. Զգացեալ լինէր ևս սակաւ թշուառութիւն անպտղաբեր իրիք եղանակի. որովհետև բերք երկրաց նուիրելոց արեգական, որպէս և զատուցեալն վասն Ինքայի գոլով մթերեալք 'ի Կուզքօ կամ 'ի հրապարական շտեմարանս մնային անդէն վասն ժամանակաց մեծի չքաւորութեան. Եւ քանզի տարածութիւն մշակութեան համեմատիւր յառաջատես մըտադրութեան կարեաց տէրութեանն, գիւտ և ճարտարութիւն Փէրուացւոց բերեալ էին առ տարակարգ վարժմունս 'ի պակասութեանց ինչ մասնաւորաց կլիմային և գետնոյն. Ամենայն գետք մեծամեծք, որք ելանեն յԱնտեայցն, առնուն զընթացս իւրեանց ընդ արևելս և երթան անկանել յԱթլանթեանն ովկիանոս. Փէրու է միայն ոռոգեալ

'ի

՚ի ջուրցն ; որք գահավիժին ՚ի լերանց զօրէն ուղխից · Մեծ մասն ինչ խոնարհ երկրին · է աւազուտ և ամուլ և ոչ երբէք զովացեալ յանձրևոյ · Առ ՚ի արգաւանդացուցանել զգաւառ մի, յորմէ այնպէս սակաւ յուսալի էր , դիմեցին փէրուացիք առ պէսպ հայթհայթանս · միջնորդութբ արհեստական ջրմղաց ընդածելոց մեծաւ համբերութբ և ճարտարութբ ՚ի հեղեղատացն տանէին զջուր յանդս իւրեանց · և պարարտացուցանէին զգետինն աղբովք ծովային թռչնոց · որովհետև գտանէին յայնմանէ զանբաւ իմն քանակութի յամ կղզիսն սփռեալս առ ծովեզերօք իւրեանց:

(15) ‖ Սպանիացիք ընկալան զերկոսին զայսոսիկ սովորութիս նախկին փէրուացւոց · Պահեցին զոմանս ՚ի ջրմղացն արարելոց ՚ի ժմկի Ինկայից · և շինեցին ևս ՚ի նոցանէ նորս , որովք ոռոգանէին զդաշտսն, զորս մշակէին · Նմանապէս շարունակէին նոքա ՚ի կիր առնուլ զԳուանօ, կամ զաղբս ծովային թռչնոց առ ՚ի զօրացուցանել զանդս · և նոյնինքն Ուլլօա տոյ զստորագրութի իմն զանհաւատալի քանակութէ այնց , որ գտանի ՚ի մէջ կղզեացն մօտ ՚ի ծովեզրն : ‖

՚Ի ստորագրելն զվարս զինչ և իցէ ազգի կատարելապէս քաղաքականացելոյ այսպիսի սովորութիք հազիւ արժանաւորին ուշադրութն · այլ ՚ի վիպասանութն վայրագ իրիք ժողովրդեան արժանի են գիտացել լինելոյ իբր սեփական հաւաստիք արհեստի և ճարտարութն · Կիրառութի արօրի էր իսկապէս անծանօթ փէրուացւոց · ՚Ի բաց շարժէին զհողն բահիւ իւիք ՚ի կարծրացուցեալ փայտէ · և այս աշխատութի ոչ էր կանանց միայն յանձնեալ · Նմին իրի երկաքանչիւր սերք միաւորէին ՚ի տալ ձեռն առ այս գործ կարևոր · Նոյն իսկ արևորդիքն խրախուսէին զնս առ այս , մշակելով ձեռօք իւրեանց զանդ մի մեծ ՚ի Կուսկօ ·

քս. և ազնուացուցանէին զայս պաշտօն կոչելով զայն յաղթանակ իւրեանց 'ի վ՛ր երկրի:

Շին- ուածք նց:

Մեծագոյն ընդունակութիւն Փերուացւոց երևի յայտնապէս 'ի կերտուածս տանց իւրեանց և 'ի հրապարական շինուածս. 'Ի համատարած դաշտավայրսն, որք տարածանին առ խաղաղականն ովկիանոսիւ, ուր երկինքն է յարակայապէս պարզ և կլիմայն քաղցր, տունք նց զճշմարիտն ասելով՝ էին ամենևին խախուտք. Բայց 'ի բարձրագոյն կողմանսն, ուր անկանի անձրև, ուր ճանաչէր փոփոխութիւն յեղանակաց, և զգացեալ լինէր խստութիւն նց, էին շինեալք մեծագոյն հաստատութբ. Առնէին գրեթէ ամենեքեան զմի կերպ քառակուսի. որմունքն բարձր շուրջ ութն ոտնաչափ արարեալք յաղիւսոց կարծրացուցելոց յարևու հանդերձ ցածուն և անձուկ դրամբ և առանց ինչ պատուհանի. Թէպէտ և էին պարզք կերտուածքս այսոքիկ և խոշոր, որպէս երևի, թէ էին նիւթքն, որք կերպաւորէին զայնս, այսու ամենայնիւ ունէին լայնքան կայունութիւն, մինչ զի բազումք 'ի նոցանէ կան դեռևս 'ի զանազան մասունս Փերուայ երկար ժամանակաւ, յորմէ հետէ բովանդակ յիշատակարանք, որք կարէին բերել զգաղափար ինչ զառաջին կացութէ այլոց Ամերիկեան ազգաց, աներևութացան յերեսաց երկրի. Բայց մանաւանդ 'ի տաճարս նուիրելս արեգական և 'ի յապարանս սահմանեալս յօթևանս միապետաց իւրեանց յայտնէին Փերուացիք զմեծագոյն ճիգն արհեստի իւրեանց և գիւտի. Ստորագրութիքն արարեալք զնոցանէ յոմանց հեղինակաց Սպանիացւոց, որք կալան պարապ նկատելոյ զայնս յամբողջութեան իւրեանց, կարէին երևիլ բարդեալք, եթէ աւերակքն, որք կան ևս մինչև ցայսօր, ոչ հաստատէին զճշմարտութիւն պատմութեանց նց. Այս աւերակք տաճարաց և ապարանից գտանին յամ գաւառի Թագաւորութեն. և յաճախութ՟ իւրեանց ցուցանեն, թէ են յիշատակարանք հզօր իրիք ժողովրդեան ՛ի բազմաց դարուց քաղաքականացելոյ. Երևի, թէ շինուածքն ընաւք պէսպիսացեալ էին ՛ի չափմունս իւրեանց, ոմանք չափաւոր մեծութ՟, բազումք անչափ տարածութ՟, և ամենեքեան նշանաւորք վ՟ հաստատութեն, և նմանք միմեանց ՛ի ձև ճարտարապետութեն. Տաճարն Բաքհաքամաքայ ՛ի միասին ընդ պալատան Ինքայի և ընդ ամրոցի միում կերպաւորէին համանգամայն ըղշինուած մի մեծ աւելի քան զկէս փարսախ շըրջապատութ՟. Այսմ հրաշալի շինուածի փայլէ նոյն եղական ճաշակն ՛ի սեռի շինուածոց, ոպ և յայլ գործս փերուացւոց. Ոչ ճանաչելով նոքա զկիրառութի անւոյ, կամ այլ մեքենական զօրութենց, և ոչ կարելով քարշել ՛ի վեր զստուար քարինս և զաղիւսս, զորս ՛ի գործածէին առ երևելի իմն բարձրութի, որմունք այսր շինուածոյ, յորում երևին փերուացիք թևակոխեալ ժամանել առ պերճագոյն մեծագործութի, ոչ ամբառնային աւելի քան զերկոտասան ոտնաչափ յերկրէ. Թէպէտ ոչ էին գտեալ զկիրառութի կրոյ, կամ այլ զինչևիցէ շաղախոյ ՛ի շինելն, սակայն աղիւսքն կամ քարինքն յարմարէին այնքան ճշգիւ, մինչզի հազիւ տարորոշէին զօդուածք նց՟:

(16) ‖ Տաճարն Քայամպօյի, պալատն Ինքայի ՛ի Քալլօ ՛ի տափարակին Քաթալունկայի և ՛ի դաշտավայրին Ատունքաննարայ ստորագրեալ են ՛ի Ուլլօայ, որ նկատեաց զայնս ծայրագոյն ուշադրութ՟. Պարոն Քօնտամինէ հրատարակեց ըղձակերտ իմն յիշատակարան վերաբերեալ առ աւերակս Ատունքաննարայ. Աքօսթա ստորագրէ զաւերակս Քուզքօյի. զորս նախինքն քննեալ է. Կարչիլասսօ իւր սովորական ոճիւն տայ զշքեղ իմն և շփոթ ստորագրութի զանազան տաճարաց

և այլոց հրապարակական շինուածոց. Օափիփաթա յերկայն ճառի միում 'ի վր̃ փերուայ, որ մինչև ցայժմ չէ տեսեալ զլոյս, հաղորդէ ծանօթութիւնս նկատմամբ զանազան յիշատակարանաց նախկին փերուացւոց, որք ոչ են յիշատակեալ յայլոց պատմագրաց. Ուլլոա գծագրէ զոմանս 'ի վաղեմի փերուեան ամրոցաց. որք և էին կերտուածք մեծատարած և հաստահիմ̃. Երեք պարակայք հիացուցին զմ̃ Նշմարօղս զայսոսիկ, մեծութի̃ վիմացն, զորս փերուացիք 'ի գործածէին յոմանս 'ի շինուածոց իւրեանց. Աքոսթա չափեաց զմի 'ի նոցանէ, որ էր երկայն երեսուն ոտնաչափ, լայն ութուտասն՝ և թանձր վեց. և այսու ամէ̃ յաւելու, թէ յամրոցին Քուզքոյ էին վէմք երևելաբար մեծագոյնք. Դժուարին է իմանալ, թէ զիարդ փերուացիք կարող եղեն շարժել զայնս, և հանել 'ի բարձրութի̃ երկոտասան ոտնաչափից. Երկրորդ պարակայն է անկատարութի̃ արհեստին ատաղձագործութե̃ 'ի մէջ փերուացւոց. Համբերութի̃ և յարատևութի̃ բնականաւ Ամերիկացւոց՝ քարինք վերածեալ լինէին առ ձև իմն՝ սոսկ շփելով զայնս ընդ միմեանս կմ̃ քարեայ գործեօք. բայց այսոքիկ ոչ կարեն ծառայել կերտուածոց հիւսան. փերուացիք ոչ գիտէին ագուցանել զերկուս գերանս ը̃ միմեանս, կամ տալ զաստիճան ինչ միաւորութեան, կամ կայունութե̃ զինչևիցէ գործոյ յօդեցելոյ 'ի փայտէ. Եւ քանզի ոչ կարէին կերպաւորել զկեդրոն ինչ, էին բոլորովին 'ի խաւարի նկատմամբ կիրառութեան կամարացն 'ի շինելն. և հեղինակք Սպանիացւոց ոչ գիտեն խնչամտել, թէ զիա՞րդ կերպաւորէին զկարկ ինչ վր̃ այնց ընդարձակ շինուածոց, զորս կանգնէին. Երրորդ պարակայն է հիանալի իմն փորձ մատակարարեալ յամ̃ յիշատակարանաց փերուացւոց՝ պակասութե̃ ճարտարութե̃ և գտման նց̃. որ միաւորեալ լինէր ընդ համբերութեան իմիք ոչինչ նուազ զարմանալեաց. Ոչ տային զմասնաւոր ինչ կերպարան վիմացն, զորս 'ի կիր առնուին յայսոսիկ շինուածս. Հնդիկք առնուին զայնս, որպէս զիարդ ընձիւղեալ էին 'ի լերանց կամ 'ի փորանոցաց. Ոմանք էին քառակուսիք, ոմանք եռանկիւնիք, ոմանք խորափորք, ոմանք կորնթարդք. Զարհեստ և ըզճարտարութիւն իւրեանց 'ի գործածելն 'ի զօդել զայնս 'ի միասին, ձևակերպելով զխոռոչս 'ի միում, որք կատարելապէս համեմատէին առ ցցունս միւսոյն. Այս ձանձրալի գործողութիւն, որ դիւրաւ կարէր համառօտիլ, յարմարելով զմակերևոյթս երկուց քարանց, կամ բռնութեամբ շփելոյն, կամ պղնձեայ տապարօք իւրեանց, դատեալ լինէր անհաւատալի, եթէ զայսմանէ ոչ վկայէին մնացուածք այսց շինուածոց. Այս տայ զեղական իմն երևոյթ յուշս Եւրոպացւոյ ուրուք. Ոչ գոյ 'ի նոսա կանոնաւոր իմն յատակ շինուածոյ. և ոչ իսկ վէմ մի միայն է նման միւսոյն 'ի չափման, կամ 'ի կերպին. Ոչինչ ընդհատ զօրութեամբ մըտավարժութեան և համբերութեան Հնդիկք 'ի գլուխ ելեալ են ագուցանել զայնս 'ի միասին այնու անվըթարութեամբ, զոր յիշատակեցի. և Ուլլօա արար զայս դիտողութիւն 'ի վերայ ձևոյ քարանցն 'ի բերդին Աթունքաննարայ. Փինեթօ տայ զնմանակ իմն գծագրութիւն ամրոցին Քուսքոյի կատարելագունին յամենայն Փէրուեան գործոց. Ըստ տեառն Քօնտամինեայ էին անդէն կանոնաւոր յատակք շինուածոյ 'ի մասունս ինչ Աթունքաննարայ. զորս դատի նա այնպէս եղականս, մինչև կարօղ լինել ծառայել իբր հաւաստիս զարգացմանց նոցա յարհեստս: ||

Բնջրպետքն, որչափ մարթ է նշմարել զբաշխմունս նոցա յաւերակացն, էին ոչ բարւոք կարգադրեալք և սակաւ բաղադանք. Ոչ էր անդէն՝ եթէ ոչ մի միայն պատուհան 'ի բովանդակ շինուածին.

ծին. և լոյսն ոչ կարելով մտանել, բայց եթէ ընդ դուռն, ընդարձակագոյնքն պարտէին լինել կամ բնաւին մթինք կամ լուսաւորեալք կիսով չափ. Սակայն հանդերձ բնաւիւք այսոքիւք և այլովք բազմօք պակասութեամբք յարհեստի շինելոյ նց, զորովք զանցանեմ լռութեամբ, գործքն Փերուացւոց, որք կան տակաւին, կարեն նկատիլ իբր օխրալի թեակոխութիւնք ժողովրդեան զուրկ եղելոյ 'ի կիրառութենէ երկաթոյ. և ընծայեն մեզ զբարձր իմն գաղափար կարողութեան, զոր ունէին նախկին միապետք նց:

Հրապարակ բանուկ Պողոտայք Ռոմայ.

Բայց այսոքիկ ոչ էին ոչ առաւել նշանաւոր և ոչ առաւել պիտանի գործք Ինկայից. Նոցա արքունի պողոտայքն 'ի Քուզքոյ առ Քուիթօ, որք տարածանէին աւելի քան զհազար հինգ հարիւր մղոն, են ևս առաւել արժանի մտադրութեան մերում. Մինն անցեալ էր ընդ ներքին և ընդ լեռնային գաւառ, միւսն ընդ տափարակս առ եզերբ ծովուն. 'Ի գերամբարձական բարբառոյ, որով ոմանք 'ի նախկին պատմագրաց յայտարարին զհիացումն իւրեանց՝ յորժամ զառաջինն տեսին զայսոսիկ պողոտայս, և 'ի պանծալի ստորագրութեանց հուսկ յետին վիպասանից փորձեալ լինէաք համեմատել զայս գործ Ինկայից հռչակաւոր զինուորական ճանապարհացն, զորս ժամանակն պահեալ է մեզ իբր յիշատակարան Հռոմայական զօրութեան. Բայց յաշխարհի միում, ուր ոչ էր շնչաւոր ընտանեցուցեալ բաց 'ի Լամայէ, որ ոչ երբէք ծառայեցուցանիւր 'ի սայլս և ցանցաղակի իսկ իբր բեռնաբարձ գրաստ, ուր արքունի պողոտայքն ոչ էին յաճախեալք, բայց եթէ յանձանց հետևակաց, ոչ խնդրէիր աշխատութեան կամ արհեստ արտաքոյ կարգի առ'ի շինել զայնս. Փերուեան պողոտայք ունէին միայն զհնգետասան ոտնաչափս լայնութեան. և 'ի բազում տեղիս շինեալք այնպէս վեր 'ի վերոյ, մինչզի ժամանակն ջնջէր վաղվաղակի զամ հետսն. Ի դաշտավայրին էին տարորոշեալք յերկուց շարից ցցաց սահմանելոց սոսկ՝ առ'ի ցուցանել զճշմարիտ գնացս ճանապարհորդաց. Իսկ առաւել տաժանելի ձեռնարկութիւն բանալն զշաւիղ իմն ընդ լերինս. վ՟զի պիտոյ էր հարթել զվերամբարձ տեղիսն, լնուլ զցածուսն. և առ'ի նախապահել զճանապարհսն՝ պաշտպանեալ լինէին այսոքիկ թմբով հողոյ. Ըստ չափման ինչ հեռաւորութեան կանգնէին Թամպոսս, կամ զշտեմարանս առ դիւրութիւն Ինքայի և արքունականաց իւրոց. Ճանապարհքն էին յոյժ առաւել հաստատունք 'ի լերինս. և կան դեռևս մասունք իմն, թէպէտ և անհոգ էին Սպանիացիք 'ի պահպանել զայնս. Այսպիսի էին համբաւաւոր պողոտայքն Ինքայից. և ստորագրութիւն, զոր յառաջ բերի, թէև մերկացուցի 'ի պարագայիցն բարդելոց, է սքանչելի իմն ցոյց զարգացմանցն, զոր արարեալ էին Փերուացիք 'ի գիտութեան կառավարութեան. Այլազգքն Ամերիկոյ ոչ կալան երբեք զգաղափար ինչ ճանապարհաց հաղորդակցութեան 'ի միոյ տեղւոջէ առ միւս. և Փերուացիք իսկ ունէին զայն ամենևին անկատար:

Առ կամուրջք: Կերպարանութիւն այսց ճանապարհաց եմոյծ 'ի Փերու զայլ իմն սեռ գործոյ անծանօթ եղելոյ հաւասարապէս բովանդակ մնացեալ Ամերիկոյ. Ընթացս իւր 'ի հարաւոյ ընդ հիւսիս այս պողոտայ Ինքայից խրամատեալ էր յուղխիցն, որք վայրահոսին յԱնտեայց դէպ արևմտեան ովկիանոսի. Յաղագս արագընթացութեան ն՟ց և յաճախ և ամեհի հեղեղացն էին աննաւարկելի. Ուրեմն պիտոյ էր գտանել զհնարս ինչ առ'ի կարող լինել անցանել ընդ այնս. Փերուացիք յաղագս տգիտութեան իւրեանց կիրառութեան կամարաց և անընդունակութեան գործելոյ զփայտ ոչ կարէին կերտել ոչ զկամուրջս 'ի քարանց և ոչ 'ի գերանաց.

Բայց հարկն մայր գտման թելադրեաց նց̃ զհանգամանս ինչ, որ ելից զայս պակասութի̃. Առնէին կառանս կուռս՝ ոլորելով 'ի միասին զմորչ ուռիս ինչ, որ առատ է յաշխարհի նց̃. տարածանէին զայնս վեց վեց խոտորնակի յորձանացն զուգահեռական միմեանց. և հաստատէին յա̃մ կողմանց. Յետոյ կապէին պինտ հիւսելով ընդ այնս զայլ պարանս նրբագոյնս և այնպէս խիտս, մինչև առնել զգործած իմն բաղադրեալ իբր զուռկան. որ գոլով ծածկեալ ճիւղովք ծառոց և հողով անցանէին 'ի վերայ ամենայն ապահովութբ̃:

(17) ‖ Երևումն այսց կամրջաց, որք թեքին սեփական ծանրութբ̃ իւրեանց, որք ծփին հողմով, և որք երևելաբար ճօճեալ են 'ի շարժմանէ ա̃մ անձին, որ անցանէ 'ի վ̃ր, է արդարև զարհուրելի. Բայց Սպանիացիք գտին, զի այսոքիկ էին առաւել հեշտինք առ'ի անցանել ընդ հեղեղատսն Փէրուայ. յորոց վ̃ր դժուարին լինէր արկանել զառաւել հաստահիմն կամ 'ի քարէ կմ̃ 'ի փայտէ. Ունեն զայսոսիկ կամուրջս առ կախեալս. և առնեն զայնս այնպէս հզօրս և լայնս, զի անցանեն ը̃ այն ջորիք բեռնաւորք. Բովանդակ շահաւաճառութի Կուսքօի փոխաբերեալ է միջնորդութբ̃ այսպիսի իմն կամրջի 'ի վ̃ր գետոյն Ափուրիմաքայ. Մեքենայ իմն պարզագոյն 'ի գործածիւր առ'ի անցանել ընդ փոքրագոյն հեղեղատս. տապանակ մի, յորում եդեալ էր ճանապարհորդն, կապեալ բուռն պարան ինչ խոտորնակի հոսանացն, մղեալ էր կամ քարշիւ 'ի միոջէ առ միւս կողմն : ‖

Այն անձինք կարգեալք առ'ի հսկել առ ա̃մ կամուրջս և առնել անդէն նորոգութիս և օժանդակել անցաւորաց. Առ'ի անցանել ընդ գետս ընդարձակս և խորինս, բայց որոց հոսանք էին սակաւ ուժգինք, 'ի կիր առնուին Պալսաս կամ լաստս. զորս 'ի կերտելն և յընդածելն երեւի թէ ճարտարութիւն Փերուացւոց իցէ վերնագոյն քան զբոլորեցունց այլոց ազգացն Ամերիկոյ. Սոքա 'ի նաւական գիտութեան ոչ էին յառաջացեալ անդր եւս քան զկիրառութիւն թիավարելոյ. որ Փերուացիք 'ի գործածէին զկայմս և զառագաստս. ուստի զլաստս իւրեանց կարող էին վարել և տարուբերել զօրէն նաւու միոյ։

Ճողանով պղնձեայ գոր- ծանք։

Զգօնութիւն և արուեստ Փերուացւոց ոչ սահմանաւորէին լոկ առ առարկայս եւեթս պիտանիս. որպէս և արարեալ էին զարդարանս ինչ նաև յարուեստսն, որք աւելի շքեղութեան. Ունէին ըզմեծագին հրահալելիս մեծագոյն առատութեամբ քան զինչ և իցէ այլ ժողովուրդ Ամերիկոյ. Պաճարէին զոսկի ըստ սովորութեան Մեքսիկացւոց' որոնելով զայն 'ի յատակս գետոց, կամ լուանալով զհողն, որ ունէր զմանրուս նր. բայց առ'ի ունել զարծաթ ածէին 'ի գործ բազում զգօնութեան և ճարտարութեան. Ոչ էին ժամանեալ արդարև 'ի գիտել զարհեստ ընդմտանելոյ 'ի խորս երկրի առ'ի հանել անտի զգանձս թագուցեալս, սակայն առնէին փապարս առ ափունս գետոց և առ կողմս լերանց. և գտանէին զերակսն զայնոսիկ, որք ոչ երթային այնքան 'ի վայր' մինչև հեռանալ 'ի բերմանէ նց. Յայլ տեղիս, ուր երակն էր մօտ մակերեւութի երկրին, ջանային առնել փորանոցս խորս ըստ բաւականին. որպէսզի անձն, որ կայր 'ի ներքոյ յաշխատանս, կարող լիցի ընկենուլ արտաքս զնիւթն ձեռամբ կամ սակառաւ. Գիտէին եւս զեղանակն հալելոյ զհրահալելիս և զտելոյ զայնս, կամ միջնորդութեամբ հրոյ, կամ յորժամ գտանէին զայն կարծրագոյն և խառնեալ օտար գոյացութեամբ, դնելով 'ի հնոցս շինեալս 'ի վերայ բարձրաւանդակ գետնոց այնպէս, զի փչումն օդոյ ծառայէր փոխանակ փքոց, առ որոց կազմութեան էին բոլորովին 'ի խաւարի. Այսու միջնործորդաւ հալելին զայն բաղում դիւրութբ. և քանակութի արծաթոյն 'ի փէրու էր այնպէս բարգաւաճեալ, մինչզի չլինեալ էին այնոքիկ բաղումք 'ի հասարակագոյն կահուց. Բայց յանօթոց նց և 'ի զարդուց ասի, թէ արժանի էին յարգի իմիք, եթէ վն վայելչութն ձեռագործին, և եթէ վն ներքին արժողութն նիւթոցն. Այլ քանզի տիրապետողքն Ամերիկոյ ունէին առաւել համարումն զվերջնոյն քան զառաջնոյն, բաղումք յայսց կերտուածոց ձուլեալ եղեն 'ի բաժանման աւարոյն, և դատեալք միայն ըստ ծանրութն և ըստ զտութն իւրեանց:

Այլ գործս լոկ աւելահոգութն կամ զարդու՝ ճարտարութի նց դրոշմեալ է մեծապէս. Բազումք յայսց հանեալ եղեն 'ի դուրս 'ի Գուաքայից կամ 'ի հողաբլրոց, որովք ծածկէին զդիականս մեռելոց. Այն 'ի մէջ այլոց իրաց հայելիք պէսպէս չափովք 'ի լուսաւոր կարծր վիմաց մաքրիր արծնելոց, հողեղէն անօթք զանազան ձեւովք, տապարք և այլ գործիք, ոմանք սահմանեալք վն պատերազմի և այլք վն արհեստի, ոմանք արարեալք 'ի դայլախազէ, և այլք 'ի պղնձոյ կարծրացուցեալք ցայն աստիճան գործողութբ իւիք, որ մինչև ցայժմ թագուցեալ է, մինչպի 'ի զանազան դիպուածս լնուին զպակասութի երկաթոյ. Եթէ կիրառութի այսպիսի գործեաց կազմելոյ 'ի պղնձոյ լեալ էր հանրական, յառաջադիմութի փերուացւոց 'ի սնոտի արհեստից, մրցեալ էր ընդ զարդացման այլոց ազգաց. Բայց կամ հրահալելին էր այնպէս ցանցառ, կամ այնպէս դժուարին 'ի կարծրանալ, մինչզի պղնձի գործիք նց էին այնպէս փոքրիկք և սակաւք, զի ոչ 'ի գործածելին, բայց եթէ 'ի գործս առաւել նազելիս. Սակայն փերուացիք պարտական են սահմանաւոր կիրառութեն այսր անկատար հրահալելոյ զգերազանցութի իւրեանց 'ի վր այլոց ժողովրդոցն Ամերիկայ 'ի զանազան արհեստս. և կարէ յատկացուցանիլ նոյն դիտողութիւն, զոր կանխաւ արարի նկատմամբ արհեստից Մեքսիքացւոց. 'Ի պէսպէս առ հաւատչէից կահուց և զարդուց փերուացւոց պահպանելոց յարքունիս շտեմարանն 'ի Մատրիտ և յայլս Եւրոպիոյ, ունիմ պատճառ հաւատալոյ, թէ իցէ առաւել զարմանալի կերտուածն պատճառաւ ուրուական գործեացն, որովք կատարեցաւ, քան թէ յատկութեան և վայելչութեան. և թէ փերուացիք որչափ և առաւել նրբացեալք քան զամենայն Ամերիկացիս՝ ոչ էին տակաւին ելեալք 'ի տղայութենէ վերաբերութեամբ արհեստից:

Անկատարաբար քաղաքականացեալ:

Բայց ոչինչ խափանելով բազում պարագայիցն, որք երևին նշանակել զբարձր իմն աստիճան քաղաքական վարժութեան 'ի փերու, ընդառաջ ելանեն այլք, որք տան մեզ զգաղափար իրիք ընկերութեան նկրտողի միայն ելանել 'ի խժականութենէ առ քաղաքական կացութիւն. 'Ի բովանդակ տէրութեան Ինքայից Քուզքօ էր միայն տեղին, որ ունէր զերևոյթ կամ արժանի էր անուան քաղաքի. Այլ ամենայն ուրեք ժողովուրդն կեայր մեծագոյն մասամբ 'ի բնակութիւնս զատուցեալս՝ սփռեալս ընդ աշխարհն, կամ թէ աւելի՝ միաւորեալս 'ի փոքրիկ գիւղս. Արդիկ ոչ առնուին զոգի և զբարս ընկերական կենաց, եթէ ոչ նախ կերպաւորեն զմի մարմին հասարակութեան. եթէ ոչ են միաւորեալք 'ի մէջ իւրեանց, եթէ ոչ յաճախեն առ իրեարս, և եթէ ոչ զգան զփոխադարձ կախումն, յորում պարտին կեալ 'ի մէջ իւրեանց հարկաւորապէս. Յաշխարհի միում անբաւ իւիք տարածութեամբ, ուր ոչ էր, եթէ ոչ մի միայն քաղաք, պարտէր բարուց յամել այսչափ 'ի քաղաքականանալ, և արհեստին 'ի կատարելագործիլ, մինչև ունել մեզ զամենայն պատճառ հիանալոյ 'ի վերայ յառաջադիմութեանցն փերուացւոց:

Ոչինչ այլ քաղաք բայց 'ի Քուզքօէ:

'Ի

'Ի հետեւութէ այսր վիճակի անկատար միաւորութեն՝ արհեստքն 'ի փերու ոչ եղեն զատուցեալք ոգ 'ի մէջ Մեքսիկացւոց. Մարդիկ որչափ նուաճ միաւորին այնչափ առաւել են պարզք եղանակք նց եւ նուաճ պիտոյք նց. 'Ի նմանակ իմն վիճակի արհեստք կարեւոր եւ հասարակ պիտոյից կենաց՝ ոչ եղանին այնպէս բաղադրեալք կամ այնպ դժուարինք, մինչեւ պահանջել զսնունդ մարդկան մասնաւոր իմն ընթացիւք դաստիարակութն. Վն այսորիկ ամ արհեստք վարեալ էին յամ փերուացւոց անխտիր. եւ ոչ էին անդէն, բայց եթէ արհեստաւորք պարապեցուցեալք 'ի գործ աւելահոգութեան կամ շռայլութն. որք բաղկացուցանէին զկարգ իմն զատուցեալ:

Արհեստք [illegible]

'Ի պակասութէ քաղաքաց 'ի փերու յառաջ գայր այլ իմն հետեւութի. Եւ անդէն սակաւ տուրեւառական հաղորդութի 'ի մէջ բնակչացն այնր մեծի թագաւորութն. Յաջողակութի տուրեւառութն ծնանի հիմնարկութի քաղաքացն. եւ գործողութիք իւր եղանին զօրեղք 'ի պատճառէն, զի բազում անգամք միոյ հասարակութն գան բնականալ 'ի միում տեղւոջ. Քաղաքացիք վն ապրուստի իւրեանց պարտին կախիլ յաշխատութէ այնոցիկ, որք մշակեն զերկիր. սոքա ընդունելոց են զհաւասար արժօղ իմն 'ի փոխարէն. Կերպաւորի այսպէս փոփոխ հաղորդակցութին. եւ բերք արհեստին փոխանակին կանոնաւորաբար ընդ պտղոց երկրագործութն. 'Ի գիւղօրէս Մեքսիկեան թագաւորութն կալեալ լինէին տօնավաճառք հաստատունք. եւ ամ ինչ կարեւոր կենաց էր առարկայ իմն տուրեւառութն. Բայց 'ի փերու պատճառաւ մասնաւոր եղանակին բաժանելոյ զյատկութիս, եւ ոճոյն, յորոյ վր ժողովուրդն հաստատեալ էր, հազիւ տեսանիւր տեսակ ինչ տուրեւառութն 'ի մէջ տարբեր գաւառացն, եւ ամենեւին սակաւ յաջողակութի եւ մտավարժութի:

Տուրեւառութեն [illegible]

Բայց

Ոգին փերուացւոց անկար պատերազմական:

Բայց ոգին փերուացւոց ոչինչ տարամերժ առ պատերազմն էր առնել նշանաւոր և առաւել ճակատագրական պակասութիւն ՚ի հանգամանս նոցա. Մեծագոյն մասն վայրագ ժողովրդոցն Ամերիկա ընդդէմ դարձան ՚ի վ̃ն յարձակողաց իւրեանց աննուաճելի գազանութբ̃, թէպէտ սակաւ յաջողութբ̃ և բաղդիւ. Մեքսիկացիք պաշտպանեցին զազատութիւն իւրեանց այնչափ սրտեղութբ̃ և այնպիսի յարատև արիութբ̃, մինչ զի դժուարութբ̃ յաղթանակեցին ՚ի վ̃ն նց̃ Սպանիացիք. Փերու նուաճեալ եղև ՚ի միում վայրկենի, և գրեթէ առանց ինչ ընդդիմակայութե̃ն. և առաւել նպաստաւոր առիթք վերստանալոյ զազատութիւն և խափանելոյ զյառաջադիմութիւն ճնշողացն կորուսեալ եղեն միայն վ̃ն երկչոտութե̃ն այնր ժողովրդեան. Թէպէտ աւանդութք̃ պատմութ̃ին փերուացւոց ներկայացուցանէ զինքեանս իբր մարտիկ նահատակս և յաճախակի ՚ի գլուխ զօրաց, որոց առաջնորդէին առ յաղթութ̃ի և առ տիրապետութ̃ի, սակայն ոչինչ հաւաստիս ետուն այսր մարտական ոգւոյ ՚ի յաջորդական գործողութիւն ՚ի յարձակմանն Սպանիացւոց. Թերևս ազդեցութիւն այնց̃ սահմանադրութե̃ց, որք հեզացուցեալ էին զբարս նց̃, հեղգս փոխարկէր զն̃ս և վեհերոտս. Թերևս յարակայ պարզութիւն և բարութ̃ի Ինկայիցն ջլատէր զկորովութ̃ի խառնուածոյ նց̃. և թերևս սկիզբն ինչ մեծ անծանօթ ՚ի կառավարութե̃ն նց̃ էր պատճառ այսր քաղաքական տկարութե̃. Զինչ և իցէ պատճառն, գործն է ամենաստոյգ. և չիք օրինակ իմն ՚ի վիպասանութե̃, թէ իցէ ժողովուրդ ոք այնպէս սակաւ զարգացեալ ՚ի կրթութե̃, այնպէս բնաւին զուրկ ՚ի զինուորական քանքարաց, և այնպէս սակաւ ձեռներէց, որ̃պ զփերուացիս. Այս յատկութ̃ի փոխանցեալ է ՚ի յետնորդս նց̃. և Հնդիկք փերուայ են ներգործաբար առաւել երկչոտք և ա-

ռաառաւել պղերգք քան զայլ զինչևիցէ ցեղ Ամերիկոյ։ Ոգի նոցա է այնպէս մեղկացեալ 'ի պարապորդ կենացն, զոր վարեն նոքա, մինչզի են անընդունակ զինչևիցէ գործառնութեն, որ զսըրտեղութի և զհամարձակութի պահանջիցէ. Սակայն բաց յայնց ծանր պակասութեց 'ի քաղաքական կացութեն փերուայ ընթերցանելն 'ի պատմագիրս Սպանիացիս արարք ինչ, որք ցուցանեն զերևելի իմն մնացուած խաժականութեն 'ի բարս նց. Նոյն անագորոյն սովորութին, որ թագաւորէր յամենս առաւել վայրագ ցեղիցն էր 'ի գործածութեն 'ի մէջ փերուացւոց. 'Ի մահուան Ինկայից կամ այլոց նշանաւոր անձանց սպանեալ լինէր երևելի իմն թիւ սպասանեկաց իւրեանց. և թողեալ լինէին շուրջ զկուսաքաւ նց, ուստի երևիցին նոքա յայլում աշխարհի իւրեանց սովորական արժանաւորութբն. և ծառայեսցին նմին յարգանօքն. 'Ի մահուան Հուայնայ Կափաքայ առաւել հզօրին 'ի միապետաց նոցա աւելի քան զհազար սպասնեք դատապարտեալ եղեն առ'ի ընկերակցիլ նմա 'ի գերեզմանի. 'Ի մասնաւոր իրի իմիք վարկմունք նոցա երևէին լեալ խժդժագոյն քան զառաւել վայրագ ցեղիցն. Թէպէտ տեղեկացեալք կիրառութեն հրոյ 'ի յեփել զմայիծ իւրեանց և զայլ բոյս առ'ի սնանիլ, սակայն ուտէին զմիս և զձուկն բնաւին հում. և այս ապշեցուցանէր զՍպանիացիս, որք տեսանէին զայս սովորութի, որ այնչափ դիմամարտէր գաղափարաց ժողովրդեան միոյ քաղաքականացելոյ։

Մեքսիկոյ և փերու են ստացուածք Սպանիոյ 'ի Նոր աշխարհին, որք նկատմամբ նախկին և ներկայ կացութեն իւրեանց զարթուցին զմեծագոյն ուշադրութի. բայց են և այլք տէրութիք երևելիք վա տարածութեն իւրեանց և փարթամութեն. Ցոլովք տիրապետեալ եղեն յառաջնում մասին վեշտասաներորդ հարիւրեկին 'ի բաղդորդաց սոս-

Տէ-
րութիւն
Սպա-
նիոյ յԱ-
մերիկա.

կակամաց, որք հանդերձեցին զփոքրիկ սպառազինութիւն իւրեանց կամ 'ի Սպանիոլայի, կամ 'ի Նորն Սպանիա. և եթէ պարտ էաք մեք զհետ երթալ ա̃մ գրովարի 'ի շահատակութիւն իւր տեսանէաք զնոյն քաջասրտութիւն, զնոյն եռանդն յարատեւող, զնոյն յափշտակող յօժարութիւն և զնոյն ընդունակութիւն 'ի դիմի հարկանելոյ և յաղթելոյ զինչևիցէ խոչի. այս ա̃մ հանդիսացուցին զՍպանիացիս 'ի բովանդակ առաւել մեծանուն տիրապետութիւն իւրեանց. Բայց փոխանակ մըտանելոյ 'ի մանրամասն ինչ բացատրութիւն, որ ըստ նմանութեան եղելոցն երևէր իբր կրկնումն իմն այնր, զոր կանխաւ ասացաք, տացուք մանաւանդ զստորագրութիւն ինչ գաւառացն Սպանիական թագաւորութեանն յԱմերիկա ոչ յիշատակեցելոյ մինչև ցայժմ. և որք կարող են ընծայել ընթերցողաց զհաւասարեալ իմն գաղափար մեծութեան բերրիութեան և ընչաւէտութեան իւրեանց:

Այարճա-
տօր ծա-
նօթութ̄
նոցին:

Սկսանիմ 'ի գաւառացն հպաւորաց առ երկու մեծամեծ միապետութիւն. զորոց զպատմութի̃ և զսահմանագրութեանց վաղիւկ տուեալ եմ զտեղեկութիւն ինչ. և ապա ստորագրեցից կարճ 'ի կարճոյ զայլ նահանգս Սպանիական Ամերիկոյ. Իրաւաբանութիւն փոխարքայի Նորոյն Սպանիոյ տարածանի առ այնպէս գաւառս, որք ոչ էին ենթադրեալք տէրութեանն Մեքսիկացւոց. Գաւառքն Զինալոյա և Սօնօրա, որք ընդլայնին առ արևելեան եզերբ ծիրանի ծովուն, կամ խորշին Կալիֆորնիոյ, որպ և անդր թագաւորութիւնքն Նորոյ Նաւարրայ և Նորոյ Մեքսիկոյ, որք թէքին ը̃ արեւմուտս և ընդ հիւսիս, ոչ ճանաչէին զարքայութիւն Մոնթէծումայի և ոչ զնախորդացն իւրոց. Այս կողմանք ոչ բնաւ վայրագ ցինք 'ի մեծութեն քան զբովանդակ թագաւորութիւն Մեքսիկոյ՝ այժմյս յաւէտ կամ նուազ վերածեալք են ընդ լծով Սպանիացւոց. Տարածանին ընդ եա

Գաւա-
[illegible]
ընթերա-
ցայ շայ-
տերութեան
Մեքսի-
կոյէ:

Զինա-
լօա և
Սօնօրա
[illegible]

վայիմիափկալի մասն բարեխառն գօտւոյն. գետին ն̃ց առ հասարակ է արգաւանդ և բերք ն̃ց կամ շնչաւորք կամ բոյսք են 'ի սեռի իւրեանց առաւել կատարեալք. Ունին բովանդակ զհաղորդութ̃ի ընդ խաղաղական ովկիանոսի՝ և ընդ խորշին Մեքսիքոյ. և են ոռոգեալք 'ի գետոց, որք ոչ միայն պարարտացուցանեն զայն, այլև կարեն լինել դիպաւորք վ̃ն տուրևառութ̃ե. Ան ամենևին սակաւ Սպանիացիք բնակեցեալք յայնպիսի ընդարձակ գաւառսն. Ամօթ է ասել թէ նուաճեալ են զայնս և ոչ տեղակալեալ. այլ եթէ բազմամարդութ̃ի նախկին հանգրուանաց ն̃ց յԱմերիկա հանապազորդեսցէ յաճում̃ն կարօղ լինիցին սփռիլ առ սակաւ սակաւ ընդ նահանգսն ընդ այնոսիկ, զորոց ցարդ ոչ են լեալ բաւական առնուլ զստացում̃ն:

Պարակայ իմ̃ն կարէ հանգանակել առ երագ բազմամարդութ̃ի ոմանց յայնց աշխարհաց. Ամենահարուստ հանքք ոսկւոյ և արծաթոյ գտեալ են 'ի բազումս 'ի գաւառացն, զորս յիշատակեցի. Յորժամ այսոքիկ բացեալ լինին և աշխատեալ յաջողակի՝ բազմութ̃ի իմ̃ն մարդկան խուռն ընթանայ անդր և առ'ի նախահոգալ նոցա զկարևորն պիտոյ է, զի աճիցի մշակութ̃ին, զի հաւաքեսցին անդր պէսպէս ցեղք արհեստաւորաց, և զի ճարտարութ̃ին և հարստութ̃իք սակաւ առ սակաւ ծաւալիցին անդէն. Յոլով օրինակք այսր տեսեալ են 'ի զանազան մասունս Ամերիկոյ, յորմէհետէ եկին ը̃ տէրութ̃բ Սպանիացւոց. Գիւղք քաջ բազմամարդք և քաղաքք մեծամեծք տեսան իսկ և իսկ արձանանալ 'ի լերինս և յանբնակ անապատս. և գործ հանքացն թէպէտ և չիցէ նախապետական առարկայ, յոր պարտիցի պատաղիլ նորածին իմ̃ն ընկերութ̃ի, սակայն կարէ վաղվաղակի եղանիլ հայթհայթանք իմ̃ն յառաջ շարժելոյ զպիտանի գործունէութ̃ին, և աճեցուցանե-

[illegible]
[illegible]
հանքք:

նելոյ զԹիւ անհատից. Ունիմք մեզ զԹարմ եւ զեղական օրինակ սորա, որ քանզի է սակաւ ծանուցեալ յԵւրոպիա, եւ կարէ լինել պատճառ մեծամեծ արդեանց, արժանի է մասնաւոր իմն ուշադրութեան. Սպանիացիք կայունացեալք 'ի գաւառսն Չինալօա եւ Սօնօրա էին վրդովեալք ընդ երկայն ժամս յասպատակութեանց ոմանց գաղանաբարոյ ցեղիցն Հնդկաց. Յամին 1765. արշաւանք նոցա եղեն այնպէս յաճախք եւ այնպէս ապականիչք, մինչզի բնակիչքն 'ի յուսահատութեան մատնեալք դիմեցին առ մարզպան ոչ խաչին փոխարքայն Մեքսիկոյի. որպզի առաքեսցէ զգունդ մի վաշտից բաւական առ'ի վանել զահարկու հրոսակսն զայնոսիկ 'ի տեղեացն, ուր էին ամփոփեալք 'ի մէջ լերանցն. Բայց գանձն Մեքսիկոյի էր այնպէս սպառեալ վն մեծամեծ գումարացն հանելոց անտի առ'ի մղել զպատերազմն ընդդէմ մեծին Բրիտանիոյ, մինչզի փոխարքայն ոչ եղեւ յաստիճանի 'ի Թիկունս հասանելոյ նց. Եկնածութին, որ դաւանեալ լինէր առ առաքինութիւն իւր, կարողացաւ արդիւնացուցանել զայն, որ զլացեալ էր առ կնիք գործակալի. Հաւանեցոյց զվաճառականս կանխիկ տալ իւր զերկերիւր հազար դահեկանս վն ծախուց շահատակութեանն. Պատերազմն առաջնորդեալ եղեւ յընդունակ զօրավարէ միոջէ. եւ յետ երկարաձգեալ լինելոյ Է ամս երիս միայն վն դժուարութեանն հետամուտ լինելոյ փախստականացն 'ի մէջ լերանց եւ ընդ անձուկս, որք էին գրեթէ անընդմտանելիք, աւարտեցաւ յամին 1771. հանդերձ բոլորական նուաճութեամբ ցեղիցն եղելոց այնպէս ընդ երկար առարկայ զարհուրանաց երկուց գաւառացն. Յընթացս այսր պատերազմի Սպանիացիք չոգեցին ընդ երկիրս գեռեւս անծանօթս. եւ հոլանեցին զհանքս այնպիսի արժողութեամբ, մինչզի հիացուցին եւս եւ զանձինս տեղեկագոյնս հարստութեանց պարունա-

Նոր [illegible]

կենաց 'ի լերինս նորոյ աշխարհի. 'Ի Չինէկուիլլա 'ի գաւառին Սօնօրա մօտին 'ի դաշտավայր մի չորեքտասան փարսախ տարածութեն. ուր գտին զհատս ոսկւոյ 'ի խորութեն վեշտասան բութից այնպիսի խոշորութի, մինչզի ոմանք կշռէին ինն մարքս. և այնչափ քանակութի, զի 'ի սուղ ժամանակի սակաւ ձեռօք ժողովեցին զհազար մարքս ոսկւոյ, եւս և առանց փոյթ առնելոյ լուանալ զհողն պեղելով. որ և էր այնպէս հարուստ, մինչզի անձինք իմաստունք արարին զհաշիւ, որ՝ կարէր տալ զմիլիոն մի դահեկանաց. Յառաջ քան զվախճան 1771. ամին անձինք աւելի քան զերկուս հազարս բնակեցան 'ի Չինէկուիլլա 'ի ներքոյ կառավարութեան ոմանց մեծաւորաց և ընդ տեսչութի յոգունց եկեղեցականաց. Բազում այլ հանքք ոչ վայրագոյնք 'ի հարստութեն քան զՉինէկուիլլային գոլով յետոյ յայտնեալք 'ի Սօնօրա՝ հաւանական է, թէ այսօրիկ լքեալ և սակաւաբնակ գաւառք եղիցին երագ երագ բազմամարդք և ընչաւէտք զոյգ որում և իցէ այլոյ մասին Սպանիական թագաւորութեն Ամերիկա։

[illegible]

(18) ‖ Հանեալ եմ զծանուցումն բացատրեալ զփորձածոցն 'ի գործոյ իմեքէ մակագրեցելոյ, Համառօտ Ծանօթութիւն զինուորական շահատակութեան Սօնօրայի, և Չինալոայի, զերջանիկ ելից և զշահաւէտ վիճակին, յորում հետևաբար եդեալ են երկոքին գաւառքն, հրատարակեալ 'ի Մեքսիքօ 17. Յունիսի. 1771. առ'ի հանել զհոգժառութի վաճառականացն, որք մատակարարեալ էին փոխարքային զդրամն վ՟ս առնելոյ զծախս սպառազինութեանն. Պատճէնք այսր գործոյ են ցանցառագիւտք յոյժ 'ի Մատրիտ. բայց ես ստացայ զմի 'ի նոցանէ, որ եդ զիս յաստիճանի հաղորդելոյ հասարակաց զայսոսիկ ըղձակերտ լուրս. Ըստ այսմ պատմութեն դտաւ 'ի հանքսն Լեքօրատոյ 'ի Չինալօա հատ մի ոսկւոյ քսանևերկու կերատ,

որ կշռէր վեշտասան մարքս, չորս ունկի, և չորս Օքթավս. այս առաքեալ եղև 'ի Սպանիա յընծայ առ Թագաւորն. և է իրապէս եդեալ 'ի պահեստ յարքունի շտեմարանին 'ի Մատրիտ:‖

Հանգամանք Գալիֆօրնիոյ: Յամաքակղզին Գալիֆօրնիոյ 'ի միւս կողմանէ ծիրանի ծովուն երևի, թէ նուազ ծանուցեալ էր նախկին բնակչացն Մեքսիքոյի քան զտեղիսն ստորագրեալս յինէն. Յայտնեալ եղև 'ի Գօրթիսէ յամին 1536. Ընդ երկար ժամանակ եղեն անդէն այնպէս սակաւ երթևեկք, մինչ զի ոչ լինէր գիտացեալ և ոչ իսկ ձև իւր. 'ի բազում աշխարհացոյցս երևեցուցեալ լինէր իբր կղզի և ոչ իբր ցամաքակղզի:

(19) ‖ Ընտրութիւն երկրագրաց 'ի վ̃ այսր յօդուածոյ է այնչափ առաւել զարմանալի. որովհետև երևի, թէ Գօրթէս նշմարեալ իցէ զեզերս նր մեծաւ ուշադրութ̃ի. Արքեպիսկոպոսն Թոլէտոյի հրատարակեաց 'ի բնագրէն ստացելոյ 'ի մարզպանէն Վալեայ՝ որ 'ի զարմէն Գօրթիսի, զգծագրութ̃ի մի յամին 1541. արարեալ 'ի նաւուղղէն Տօմինիկոսէ Գասթիլլօէ. յորում Գալիֆօրնիա ներկայացուցեալ է իբր ցամաքակղզի ինչ տարածեալ գրեթէ 'ի նմին ուղերձման, որ տուեալ լինի այժմոյս իսկ 'ի լաւագոյն աշխարհացոյցս. և կէտն, ուր վտակն Գօլօրատօ մտանէ 'ի խորշն, նշանակեալ է որոշակի:‖

Թէպէտ կլիմայն այսր երկրի՝ եթէ կարիցեմք դատել 'ի կայաւորութ̃էն, պարտի լինել բերկրալի, սակայն Սպանիացիք արարեալ են դոյզն ինչ յառաջադիմութ̃ի 'ի բազմամարդացուցանելն զայն. Ընդ աւարտ անցելոյ հարիւրեկին յիսեանք փոխարկեցան յայս բարձի թողի եղեալ գաւառ. քաղաքականացուցին զամենաբիրտ ազգայինսն իւր. ստացան անդէն անզգալաբար զտէրութ̃ի իմն բացարձակ վոյդ այնմ, զոր ստացեալ ունէին յառաքելութիս իւրեանց 'ի Փարակուայի. և աշխատեցան մուծանել անդր զնոյն քաղաքավարութիւն, և ղեկավարել զբնիկն նոյնիմբք սկզբամբք. Նա 'ի խափանել, զի մի արքունիքն Սպանիոյ յղանայցէ զնախանձաւորութիւն գաղափարաց և գործողութեանց իւրեանց, դուն գործեցին նուաստացուցանել զերկիրն, առաջի առնելով զկլիմայն նորա այնպէս անախորժ, և վատառողջ, և այնպէս ամուլ զգետինն, մինչզի ոչինչ այլ, բայց եթէ նախանձ իւրեանց վ՟ն դարձման հոգւոցն կարողացեալ իցէ ներածել զնոսա կայունանալ անդէն. Բազում քաղաքացիք սիրողք հասարակաց բարւոյն դիմադրաւ եղեն հանել 'ի խաբէութենէ զինքնակալս իւրեանց, և տալ ն՟ց զլաւագոյն իմն տեղեկութիւն զԿալիֆօրնիայէ, բայց զրաջանք եղեն.

[illegible] ցուցման [illegible]

Հուսկ յետոյ՝ յարտաքսմանն յ՟նեանց 'ի տէրութեանցն Սպանիացւոց, արքունիքն Մատրիտու յայնմ առթի այնպէս տրամադրեալ 'ի կասկածիլ զյստակութենէ գիտաւորութեանց կարգին, ո՟պ յառաջագոյն 'ի բերիլ առ նա ա՟մ վստահութիւն, կարգեաց զտէրն Յովսէփ Կալվէզ. որոյ քանքարք ամբարձին զնա յետոյ առ գործակալութիւն Հնդկաց, յայց առնել ցամաքակղզւոյն այնմիկ. Մանրամասն պատմութիւն իւր զերկրէն եղև նըպաստաւոր. Եգիտ նա առ ծովեզերօք իւրովք զօրս մարգարտաց առատ յոյժ. և հոլանեաց ըղհանքս ոսկւոյ, որք տային զմեծագոյն յոյս. Վ՟ն մօտաւորութեան իւրոյ առ Չինալօյա և Սօնօրա հաւանական է, զի եթէ բազմամարդութիւն այսց գաւառաց աճիցէ եղանակաւն, զոր ենթադրեցի, Կալիֆօրնիա ընկալցի սակաւ առ սակաւ 'ի նոցանէ զլրումն ինչ բնակչաց. ո՟պզի ոչ ևս համարիլ 'ի մէջ անշէն և անպտուղ նահանգաց Սպանիական կայսերութեան:

Իւքա-
թան և
Հոնդու-
րաս :

Ընդ արևելս Մեքսիկոյի Իւքաթան և Հոնտուրաս փաղառոցեալ են 'ի կառավարութենէ Նորոյն Սպանիոյ, թէպէտ 'ի հնումն ոչ կերպաւորէին զմասն Մէքսիքեան թագաւորութեն . Այս ընդարձակ գաւառք տարածանելով 'ի խորշէն Քամփէճի անդր քան զգլուխն՝ Ոչ Գոհութէ՛ ոչ առնուն ոք այլք երկրաստանք Սպանիոյ Նոր աշխարհին զյարգ իւրեանց յարգաւանդութէ գետնոյն կամ 'ի հարստութէ հանքացն, այլ գոյացուցանեն առատագոյնս քան յորում և իցէ մասին Ամերիկոյ զփայտն ինտիկ կամ զքամփէճ, որ 'ի ներկարարութեն գունոց ինչ է այնպէս նախադասելի այլում իմի, մինչզի առնի յայնմանէ յԵւրոպա սքանչելի իմն վաճառ. և է եղեալ յօրինած իմն շահավաճառութեն մեծակշիռ յոյժ. Ընդ երկայն ընթացս ինչ ժմկի ոչ ոք ազգ Եւրոպիոյ մխեցաւ 'ի վնաս Սպանիացւոց յայս գաւառ. կամ նկրտեցաւ առնել զմասն ինչ յայս ճիւղ տուրևառութեն. բայց զկնի առման Ճ'իամմայիքայի յԱնգղիացւոց նոյնժամայն ծանուցեալ եղև, զորպիսի աչաւոր տարփակից ունէին յայնժամ առ ընթեր երկրաստանք Սպանիացւոց. Մինն յառաջնոց առարկայից, որ յորդորեաց զԱնգղիացիս, եղև անբաւ շահն, որ հանեալ լինէր 'ի տուրևառութէ ասացեալ փայտին, և 'ի դիւրութէն յափշտակելոյ զբաժին ինչ այնր 'ի Սպանիացւոց. Նաւաղորդք ոմանք Ճ'իամմայիքայի առաքին զառաջին թեւակոխութիւնն առ գլուխն Քաթօքհէ հրուանդան ընդ հարաւային արևելս Իւքաթանու. և հատանելով անդէն զյիշատակեալ փայտն արարին յայնմանէ զվաճառականութի իմն յոյժ շահեկան. Այս գլուխ մատակարարեաց զայն նց առատութի. բայց յորժամ մեծագոյն մասն ծառոցն մօտ 'ի ծովեզրն յայնմ տեղւոջ աղաւաղեցաւ, բերեալ եղին առ կղզին Թրիեստ 'ի խորշին Քամփէճի. ուստի անցին յետոյ 'ի խորշն Հոնտուրասայ. Սպանիացիք զարհուրեալք յայսմ բռնաբարութէ, ջանացան ճանապարհաւ իրաւութենց, յայտարարութենց, յայտնի բռնութեն խա-

Անկումն նոցա:

փառնել Անգղիացւոց չդնել զոտն յայնմ մասին ցամաքին Ամերիկոյ. բայց զնի ընդդիմակայութեն աւելի քան զՀարիւրեակ մի ձախող ելք վերջնոյ պատերազմին բռնազբօսեաց յարքունեացն Մատրիտու՝ թէպէտ և դիմամարտութիւ զկամակցութիւն ներելոյ այսմ կայունաւորութեն արտաքնոց 'ի սիրտ երկրատանց իւրեանց. Յաւն պատճառեալ յայսպիսի իմն ակնակալութէ՝ թելադրեաց նմա զեղանակն առնելոյ զայն արհամարհ. եղև այս առաւել գործունեայ քան զոր լեալ էր զինչ և իցէ ծիգն իրաւութեանց և բռնութե. փայտն գոյացեալ առ արեւմտեան ծովեզերբն Իւքաթանու, ուր գետինն է առաւել ցամաք բուսանի որակութի իմն յոյժ վերնագունիւ քան զայն, որ լինի 'ի ճախճախուտ երկիրսն, ուր կայունացեալ են Անգղիացիք. Բաշխելով զհատումն սորա և խոստանալով զներածութիւն 'ի Սպանիա առանց վճարելոյ զբաժ ինչ, վերստին զօրացաւ այս անկանոն ստեղն վաճառականութե. և քամփէճն, զոր բերեն Անգղիացիք 'ի վաճառանոցս այնպէս նուազեալ է 'ի գնոյ, մինչզի շահավաճառութի նոյ առ խորշն Հոնտուրասայ երթեալ է օրըստօրէ 'ի խոնարհումն. և նախատեսանի, թէ վաղվաղակի լինիցի բոլորովին բարձի թողի եղեալ. Յայսմ դիպուածի գաւառքն Իւքաթան և Հոնտուրաս եղանիցին Սպանիոյ ստացուածք ինչ մեծավարկք:

Սէրա-
հաստա-
տուեն:

(20) ‖ Պարտականեմ զծ այսր գործոյ Տն Ապաթէի Սուայլինալոյ. և հարցանելով իմ ցանձն տք իմաստուն, որ կայունացեալ ընդ երկար ժամանակ 'ի ծովեզերսն Մոսքուիթօ, արարեալ էր զայս շահավաճառութի, ծանեայ զի անուանեալ Հեղինակն քաջ տեղեկացեալ է. Քամփէճն հատեալ մերձ 'ի քաղաքն սրբոյն Ֆրանչիսկոսի Քամփէճի ունի զօրակութի իմն բազմօք լաւագոյն քան զայն, որ աճէ առ միւս ծովեզերբն Իւքաթանու

և վաճառականութեան Անգղիացւոց առ խորշն Հօնտուրասոյ վերածեալ է գրեթէ առ բոլորական բուն անկումն : ‖

Գօսթառիքա և Նիքարակուա :

Այս յառաջքան զՀօնտուրաս ընդ արևելս են երկու գաւառք Գօսթառիքայ և Նիքարակուայ. որք կախեալ կան նմանապէս 'ի փոխարքայութեէ նորոյն Սպանիոյ. բայց երկոքեան ստունգանեալ են 'ի Սպանիացւոց ցայն աստիճան, և բերեն այնպէս սակաւ մուտս, մինչզի չեն արժանի մասնաւոր իմիք ուշադրութեան :

Առաւել երևելի գաւառն, որ կախիցի 'ի Փոխարքայէն Փերուայ, է Չիլի. Ինկայք հաստատեալ էին զտէրութի իւրեանց յամանս 'ի հարաւային նահանգացն իւրոց. բայց 'ի մեծագոյն մասին երկրին ամեհի և արիական բնակիչք իւր պահէին զանկախութի իւրեանց. Յանկուցեալ Սպանիացիք 'ի համբաւոյ ընչաւէտութեան իւրոյ ձեռնամուխ եղեն 'ի տիրապետութի նորա վաղագոյն. Առ Պետրոսիւ Ալմակրոսիւ. և յետ մահուան նր՝ Պետրոս Վալտիվեայ էառ վերստին զայն խորհուրդ. բայց պատահեաց հզօրագոյն իմիք ընդդիմադրութեան. Առաջինն 'ի բաց եթող զձեռնարկութիւն եղանակաւն, զոր կանխաւ նշանակեցի յայսմ առաջիկայ հատորիս. Երկրորդն յետ տալոյ զերազանց ցոյցս քաջասրտութեան և զինուորական գիտութեան կատարեցաւ երևելի իմն գնդաւ վաշտից հրամայելոց յիւրմէ. Ֆրանչիսկոս Վիլակրա ետեղակալն իւր օգնել առաջնորդութե իւրով կարողացաւ կասեցուցանել զազգայինսն յընթացս իւրեանց և ապրեցուցանել յեղծմանէ զմնացորդն Սպանիացւոց. Բովանդակ դաշտավայրն առ ծովեզերբն ենթարկեալ եղև սակաւ առ սակաւ Սպանիական տէրութեն. Ներքինքն դեռևս կալեալ են 'ի Փուէլքէսաց, յԱրաւքոսաց և յայլոց ցեղից սկզբնական բնակչաց իւրոց. դրացիք ահաւորք վն Սպանիացւոց, որոց ընդդէմ ընդ միջոց երկուց հարիւրեկաց պարաւանդեալ եղեն պահել զմշտնջենաւոր թշնամութի ընդմիջահատեալ 'ի սակաւ անջրպետաց խաղաղութն:

Մեծ այն մասն Չիլեայ, որ կարէ յայտնապէս յորջորջել գաւառ Սպանիական է անձուկ իմն նահանգ, որ տարածանի առ ծովեզերբ յանապատէն Աթաքամայ ց կղզին Չիլոէ աւելի քան զիննհարիւր մղոն. Կլիմայն իւր է զուարճագոյն նորոյ աշխարհի. և հազիւ դոյ գաւառ ինչ 'ի վն երկուց երկրի, որ կարիցէ հաւասարիլ նմա. թէպէտ սահմանակից այրեցած գօտւոյն՝ ոչ զգայ երբէք զծայրագոյն տօթ՝ գոլով պաշտպանեալ յարևելից յԱնտեայց և զովացեալ յարևմտից 'ի ծովային քաղցրաշունչ հողմոց ինչ. Կլիմայն իւր է այնպէս բարեխառն և միօրինակ, մինչզի Սպանիացիք տան նմա զնախադասութի 'ի վն Կլիմայի հարաւային գաւառացն 'ի բնիկ աշխարհին իւրեանց. Արգաւանդութի գետնոյն համեմատի բարութն Կլիմային. և է սքանչելապար յարմարեալ Եւրոպական բերոցն. որպիսի են գինի և ձէթ և ցորեան, որք բուսանին անդէն զարմանաբար. Ամենայն պտուղք տարեալք անդր յԵւրոպիոյ ժամանեն 'ի հասունութի. Ընչաւորք կիսագնտոյ մերոյ ոչ միայն բազմանին անդէն, այլև եղանին բարեգոյնք. Եղջերաւոր անասունք են առաւելագոյն մեծութբ քան զՍպանիոյն. Երիվարք իւր յաղթեն 'ի գեղեցկութն և 'ի կայտառութն համբաւաւորացն Անդալուզիոյ. յորոց ածանցեալ են. Եւ ոչ իսկ առատաձեռն լեալ է բնութին միայն 'ի վն մակերևութի երկրին իւրոյ, այլ լցեալ է ևս զներքոյն հարստութբք, գոլով յայտնեալք 'ի պէսպէս մասունս նր հանք ոսկւոյ, արծաթոյ, պղնձոյ, և կապարի:

Պ.Էրա-
[illegible]
Լէ-ն չէ
Հայէն և
Գէտնոյ
Խորոյ:

* Համարեա լինէր, թէ երկիր մի այնքան բարեբաղդ պարտէր վաղվաղակի եղանիլ սիրելի իմն կայան Սպանիացւոց և մշակիլ մանաւորութի և

* Պատ-
ճառն,
որոյ վն
անփոյթն
եղել է
'ի Սպա-
նիացւոց:

առանձին խնամով. բայց փոխանակ սորայ մեծ մասն ինչ նորա տակաւին մնայ անբնակ. Ի բովանդակ յայսմ տարածութեան տեղւոյ ոչ են աւելի քան վաթսուն հազար բնակիչք սպիտակք, և իբր երեքկին նոյնչափ Հնդիկք, խափշիկք և մարդիկ խառնեալ զարմին. Առաւել արգաւանդ գետինն Ամերիկոյ է անմշակ և հարստագոյն հանք իւր ոչ են գործեալ. Որչափ և յոյժ օտար երևիցի այս անտարբերութիւն Սպանիացւոց, որք ոչ կթեն զայսպիսի շահեկանութիւնս, դիւրակի կարեն հետազօտել պատճառքն. Միայն հաղորդակցութիւն Սպանիոյ ընդ հարգունութեանց իւրոց առ հարաւային ծովուն շարունակեալ եղև ընդ երկուս հարիւրեակս 'ի նաւահանգստէ առաքեցելոյ անդր ամի ամի 'ի Փորթօպէլօէ. Բովանդակ բերք հարգունութեանցն բարձեալ լինէր 'ի նաւահանգիստս Քալլաօայ կամ Արիքայի 'ի Փերու առ Փանամա. և անտի քան մայրաքաղաքն ընդ ցամաքալեզուն. Ամենայն տարազք, որք ընկալեալ լինէին, ածեալ էին 'ի Փանամայէ 'ի նոյն նաւահանգիստն. Այսպիսի օրինակաւ ինչքն 'ի բաց տարեալ և բերեալք 'ի Չիլի, անցանէին ընդ ձեռս վաճառականացն Փերուայ. Նոքա հետևաբար վայելէին յօգուտ 'ի վն իւրաքանչիւրոցն. և յերկոսին առիթս կցային Չիլեցիք զտարակարգութիւն իւրեանց. և ոչ ունելով զհաղորդութիւն ուղղակի ընդ Սպանիոյ կախեալ էին յայլմէ գաւառէ վն վաճառման բերոց իւրեանց և ընդ ըղպէտս իւրեանց. Այսպիսի տուգանօք բազմամարդութիւն ոչ կարէր աճել. և պակասէր մտավարժութեան նախկին դրգիչ իւր. Բայց այժմ, զի Սպանիա վն պատճառացն, զորս յիշատակեցից 'ի մօտոյ, ողջադուրեալ է զնոր ոճ և առնէ զտուրևառութիւն իւր ընդ հարգունութեանցն 'ի հարաւային ծովուն նաւօք, որք կցեն ընդ գլուխն Հօռն, տեսանի բացեալ հաղորդակցութիւն իմն ուղղակի

Տեւիլ
Քաղէ-
Գոռնայ
Յաղս խա-
ղոյ :

ղակի 'ի մէջ Չիլեայ և մայրաքաղաքին. Ոսկին, արծաթն և այլք տարազք գաւառին փոխանակեալ լինիցին 'ի սեփական նաւահանգիստս իւր ընդ ձեռագործացն Եւրոպիոյ. Չիլի ամբարձցի փութանակի 'ի մէջ կայունաւորութեանցն Սպանիացւոց ցայն աստիճան մեծութեան, առ որ սահմանեն բնական շահեկանութիւնք իւր. Կարէ լինել համբարանոց Փերուայ և այլոց գաւառաց առ խաղաղական ծովուն. կարէ նախահոգալ նոցա զգինի, զպաճարս, զձիս, զկանեփ և զասր բազում յոգունածս. վասն որոց կախին այնք ժողովուրդք Եւրոպիոյ. Թէպէտ նոր կարգադրութեան հաստատեալ է միայն 'ի սակաւ ամաց հետէ, սկսանին տեսանիլ արդիւնք նորա. Եթէ նոյնն հանապազորդիցի հաստատութիւն իւր ընդ կէս հարիւրեակ մի, կարողեմք համարձակիլ գուշակել, թէ բազմամարդութեան, ճարտարութեան և ընչաւէտութեան ծաղկեսցին որընթաց յառաջադիմութեամբ յայսմ գաւառի:

Ընդ արևմուտս Անտեայց գաւառքն Թուքումանու և վտակին Տէլափլաթայ սահմանակից են ընդ Չիլեայ. և կախին զուգաբար 'ի փոխարքայէն Փերուայ. Այսքիկ անբաւ կողմանք ձգին յերկայնութեան 'ի հիւսիսոյ ընդ միջօրէ շուրջ հազար երեք հարիւր մղոնս և աւելի քան զհազարս 'ի լայնութեան. Գաւառն, որ է առաւել ընդարձակ քան զմեծագոյն մասն թագաւորութեանց Եւրոպիոյ, պարունակէ զերկուս մեծամեծ գաւառս, զմին ընդ հիւսիս և զմիւսն ընդ հարաւակողմն վտակին Տէլափլաթայ. Առաջինն փաղառոցէ զՓարակուայի, ուր էին հռչակաւոր առաքելութիւնք յիսեանց և այլ զանազան նահանգք. Բայց գոլով անդէն լեալ երկայնագոյն ևս վէճք 'ի մէջ արքունեացն Սպանիոյ և Փորթուկալլէոյ 'ի վասն կողմանց իւրոց, որք և (հաւանական է) թէ վերջապէս բացորոշեսցին կամ բարեկամաբար կամ ճանապար-

Գաւառաց Թուքումանու և վտակին Տէլափլաթայ:

Բաժանումն հիւսիսային և հարաւային:

հաւ զինուց, վերառաքեմ զպատմութի այսր հիւսիսային բաժանման 'ի տեղին, յորում՝ հիւսեցից զպատմութի փորթուկեզեան Ամերիկայ. ընդ որում՝ ներքսապէս բաղակցեալ է. Լոյղէց յաստիճանի միջնորդութ. արժանահաւատ նիւթոց մատակարարելոյ ինձ 'ի Սպանիոյ և 'ի Փորթուկալլիոյ՝ առաջի մատուցանելոյ զլրացեալ իմն և զխնամոտ ստորագրութիւն գործողութեանց և դիտմանց յնեանց. և եղանակին, որով հաստատեալ էին յԱմերիկա զայն եզական կերպն կառավարութե, որ զարթոյց զհանրական ուշադրութիւն, և որոյ պատմութիւն է այնպէս անկատար. Երկրորդ բաժանումն գաւառին պարունակէ զկառավարութիւն Թուքումանու և Պուէնոսայրեայ և առ այսոսիկ ամփոփեցից յառաջիկայս զգիտողութիւն իմ:

Ստորագրութիւն Երկրորդին:

Անին Սպանիացիք զայս մասն Ամերիկայ ը գետն Տելափլաթայ. և թէպէտ շարք ինչ դժնեայ ձախորդութեանց անկան 'ի վր նոցա յառաջին թևակոխութիւն կայունացուցանելոյ անդէն զտէրութի իւրեանց, սակայն քաջալերեցան տոկալ 'ի խորհրդեան՝ նախ 'ի յուսոյ գտանելոյ զհանքս 'ի ներքսագոյն երկրին, և ապա 'ի հարկաւորութէ տիրապետելոյ զայն առ'ի խափանել այլ ազգաց չհաստատիլ անդէն և չընդմտանել ը այս ճանապարհ 'ի հարուստ ստացուածս իւրեանց 'ի Փէրու. Այլ բաց 'ի Պուէնոսայրեայ ոչ են արարեալ զկալուած ինչ երևելի 'ի բովանդակ մեծ տարածութեն, զոր յիշատակեցի. Արդարև ունին նոքա զսակաւ տեղիս, որոց եդեալ են զանուն քաղաքի, և որոց ջանացեալ են յաւելուլ զվայելչութի, կանգնելով զնս յԵպիսկոպոսանիստս. բայց ոչ այլ ինչ են, եթէ ոչ գծուծ գիւղք բաղկացեալք իւրաքանչիւրն յերկերիւր կամ յերեքհարիւր բնակչաց. Սակայն պարագայ ինչ, որ սկզբնաւոր ոչ եղև նախատեսեալ, հանգանակեաց փոխատրել զայս նահանգ, թէպէտև նուազ բազմամարդ՝ նշանաւոր վարկմամբ. Գաւառն Թուքումանու 'ի միասին ընդ հարաւային երկրին Տելափլաթայ փոխանակ ծածկեալ լինելոյ անտառօք, որպէս այլ մասունքն Ամերիկոյ, ձեւակերպէ զհամատարած իմն տափարակ գրեթէ առանց ինչ ծառոյ. Գետինն է ամենաբերրի առոգեալ 'ի բազմաց հոսանաց, որք իջանեն յԱնտեայց, և քօղեալ յաւէժական իմն դալարութբ. Յայսոսիկ պարարտ արօտս ձիք և անդեայք ածեալք անդր յԵւրոպիոյ 'ի Սպանիացւոց բազմացեալ են ցայն աստիճան, որ գերազանցէ իբր թէ գոգցես քան զհաւատս. Այս եդ զբնակիչսն ոչ միայն 'ի վիճակի բանալոյ զշահեկան իմն տուրեւառութի ընդ Փերուայ, մատակարարելով նց զանդեայս, զձիս և զջորիս, այլ և ընդ Եւրոպիոյ. ուր առաքեն զբազմութի խաղախոյ. Աստուստ կողմնիայն հանեալ է զմեծամեծ շահս. բայց դիպան կայսրութի իւր առնելոյ ընդդէմ հրապարական արգելման՝ եղեալ է նախապետական աղբիւր յաջողութն իւրոյ. Յորժամ արքունիքն Սպանիոյ կալեալ էր զնախկին ոճ իւր նկատմամբ հաղորդութն իւրոյ ընդ Ամերիկոյ, գետն Տելափլաթայ էր այնպէս արտաքոյ ընթացից Սպանիական նաւարկութն, մինչզի բաժադաւքն առանց ինչ վտանգի նշմարեալ կամ կալեալ լինելոյ կարող էին սփռել անդէն զԵւրոպական ձեռագործսն այնպիսի ճոխութբ, զի ոչ միայն լնուին զպէտս հարգաւորութենն, այլ և էին տարեալք 'ի բովանդակ արեւելեան նահանգսն Փերուայ. Յորմէ հետէ Փորթուկէզք 'ի Պրասիլէ տարածեցին զկայունուրդս իւրեանց առ ափունս վտակին Տելափլաթայ՝ բացաւ նոր ճանապարհ, ընդ որ տարազք արգելեալք ծաւալեցան յերկրամասնս Սպանիացւոց մեծագոյն դիւրութբ և առատութբ. Այս ապօրինաւոր շահավաճառութիւն որչափ և վնասակար հայրենեացն Նպա-

տեաց

տեսոյ 'ի ծաղկեցուցանել զկողոնիայն, որ զգայր անընդմիջաբար զբարերարութի այնր. և Պուէնոսայրէս եղև սակաւ առ սակաւ բազմամարդ իմն և փարթամ քաղաք. Զինչ արդեօք լինիցի արդիւնք այլայլութեան եղելոյ հուսկ յետոյ 'ի կառավարութեան այսր Հարգունութեան, որոյ բնութին ստորագրեսցի 'ի հետագայ դպրութեն, ոչ կարէ մինչև ցայժմ գիտացեալ լինել:

Ազգ Երկրափանէ Սպանիոյ:

Բովանդակ այլ երկրատանք Սպանիոյ 'ի Նոր աշխարհին, թող զկղզիսն, զորոց զգիտոյ և զամանէ վաղէսկ առեալ եմ զտեղեկութի, բովանդակեալ են յերկուս մեծամեծ բաժանմունս. առաջինն անուանեալ Թագաւորութի Հաստատուն երկրի. որոյ գաւառք տարածանին առ Ատլանտականաւ յարևելեան սահմանէ Նորոյն Սպանիոյ ցբերան Օռինօքոյի. երկրորդն Նոր Թագաւորութին Գրանաթայ կայաւորեալ 'ի ներքագոյն երկրին. Ամփոփեցից զայս մասն գործոյն իմոյ կարճառօտ իմն ստորագրութի նոցին:

Տարիէն:

Ընդ արևելս Վերակուայ վերջնոյ գաւառի նեթագրեցելոյ փոխարքայութեն Մէքսիքոյի է ցամաքալեզուն Տարիէնու. Թէպէտ յայսմ մասին ցամաքին սկսան Սպանիացիք տնկել զհարգունութիս, սակայն ոչ են արարեալ զմեծ իմն յառաջադիմութի 'ի բազմամարդացուցանելն զայն. Եւ քանզի երկիրն է յոյժ լեռնուտ հեղեղեալ յանձրևաց ընդ հարուստ մի մասն տարւոյն ծշմաւորաբար անառողջարար, և ոչ ունի հանքս մեծագինս, թերևս բոլորովին բարձի թողի արարեալ էին, եթէ ոչ էին յանկուցեալ առ'ի կայունաւորիլ անդէն 'ի գերազանցութե Փորթօպէլլօյի 'ի միում ծովու և 'ի Նաւահանգստէ Փանամայի 'ի միւսումն. Այսպիսիք կոչեցեալ են փականք հաղորդութեն 'ի մէջ Հիւսիսային և Հարաւային ծովուն, 'ի մէջ Սպանիոյ և լուսագոյն Հարգունութեանց իւրոց. 'ի հետևութե այսր պիտանութեան

Փանամա եղեալ է քաղաք իմն ամենեւին ծաղկեալ և յանկուցիչ. Անանաւոր չարութի կլիմային արգել փորթօպէլլօի զաճելն 'ի նմին համեմատութե. Հաղորդակցութիւն ընդ կայունաւորութեցն խաղաղական ովկիանոսի գոլով այժմ շարունակեալ ընդ այլ իմն ճանապար՛, հաւանական է, թէ փորթօպէլօ և Փանամա էլթիցեն յանկուծն, յորժամ ոչ ևս լինիցին սնուցեալք կամ փարթամացեալք յայնմ շահավաճառութե, որում պարտէին զերջանկութիւն, ևս և զգոյութի իւրեանց :

ԿԱՐԹԱԳԻՆԷ և ՍԱՆԹԱ ՄԱՐԹԱ

Գաւառքն Կարթագինեայ և սրբուհւոյն Մարթայի տարածանին ընդ արևելս ցամաքալեզուին Տարիէնաւ. երկիրն է լեռնոտ, բայց հանդիպին 'ի նմա հովիտք քաջ ոռոգեալք և ամենաբերրիք. Պետրոս Հերետիայ նուաճեաց զայս մասն Ամերիկոյ թագաւորութեն Սպանիոյ իբր յամին 1532. Է սակաւաբնակ, և հետևաբար ոչ բարւոք մշակեալ. Բայց յառաջածէ զպէսպիսութի իմն պատուական համեմանց և զքարինս ինչ մեծագինս մասնաւորաբար զմրուխտ. սակայն նախապետական յորդ իւր ածանցեալ է 'ի նաւահանգստէ Կարթագինեայ ապահովագոյն և լաւագոյն ամրացուցեալ քան զայլ զինչեիցէ յԱմերիկեան տէրութիւն Սպանիոյ. Յայսպիսի իմն նպաստաւոր կայի տուրևառութիւն սկսաւ վաղվաղակի ծաղկիլ. 'Ի 1544. ամաց հետէ երևի թէ լեալ իցէ այս երևելի իմն քաղաք. Բայց յորժամ Կարթագինէ ընտրեալ եղև 'ի նաւահանգիստ, յորում կալեոնք պարտէին սկսանիլ 'ի տուրևառութի 'ի ժամանելն իւրեանց յԷւրոպիոյ, և առ որ պարտէին վերածիլ առ 'ի առնուլ վերստին զճանապարհն Սպանիոյ, տուրևառութիւն բնակչաց իւրոց եղև այնպէս շահաւորեալ յայսպիսի կանոնաւորութե, մինչ զի փութանակի եղև այն մի յառաւել բազմամարդ ընչաւէտ և գեղեցիկ քաղաքացն Ամերիկոյ. Սակայն գոյ պատճառ երկնչելոյ, թէ ուր ուրեմն ժամանեալ իցէ առ բարձրագոյն կէտ ամբարձման իւրոյ. և թերևս վնասեսցի 'ի փոփոխութէ Սպանիական ոճոյն 'ի տուրևառութենն ը̅ Ամերիկոյ, որ հեռացուցեալ է յայնմանէ զանցս կալէոնացն, ուստի զգայցէ յայնմանէ գոնէ ժամանակաւոր իմն խոնարհումն. Բայց փարթամութիւն հաւաքեալ անդէն դարձուսցի շահեկանութի̅ առ Նոր իմն ճանապարհ. Նաւահանգիստն իւր է այնպէս ապահով, և կայաւորեալ այնչափ դիպան վ̅ս ընդունելոյ զաղխամախս Եւրոպիոյ, և վաճառականք իւր այնպէս ընդ երկար սովորեալ են 'ի փոխաբերել զայնս յա̅մ մերձակայ գաւառսն, մինչզի հաւանական երևի, թէ նոքա պահեսցեն զայս ստեղն վաճառաշահութեան, և Կարթագինէ տևեսցէ 'ի լինել քաղաք մի մեծարգոյ:

Վենեցուելա: Գաւառն հուպ Սանթա Մարթայի ընդ արևելս այցարարեալ եղև յառաջնում նուագի յԱլոնծոսէ Օէտայ յամին 1499. և Սպանիացիք 'ի մտանելն անդր նշմարեալք զհիւղս ինչ 'ի գիւղի միում Հնդկայնոյ կերտեալս 'ի վե̅ր յարագածից վ̅ս պատսպարելոյ 'ի հեղեղաց, ետուն նմա զանունն Վենեցուելա կամ փոքրիկ Վենետիկ, գոլով հակամիտեալք 'ի ճանաչել զնմանութի̅ ինչ 'ի մէջ իւրացն, զորս գտանէին յԱմերիկա և 'ի մէջ եղելոցն յԵւրոպիա. Արարին զթևակոխութի̅ իմն կայունաւորելոյ անդէն, բայց ոչ յաջողեցաւ. 'Ի վախճանի նուաճեալ եղև այս գաւառ միջնորդօք յոյժ տարբերօք յայնցանէ, որոց պարտական էր Սպանիա վ̅ս այլոց ստացուածոց իւրոց 'ի Նոր աշխարհին. փառասէր ոգին Կառոլոսի հինգերորդի գրաւէր զնա ստէպ 'ի գործողութիւնս այնպէս մեծամեծս, զի մուտք իւր ոչ բաւէին առնելոյ զծախս կարևորս վ̅ս կատարելոյ զայնս. 'Ի մէջ այլոց հնարից, զորս 'ի գործ էած

առ'ի

առ՚ի լնուլ զպակասութ՟ի գանձուց իւրոց, առեալ էր ՚ի փոխ զերեւելի գումարս ՚ի Վէլսէլոաց Աւկուստայի յայնմ ժամանակի հարստագոյն վաճառականացն Եւրոպիոյ. Ըստ եղանակի հատուցման, կամ թերեւս յուսով ընդունելոյ զնոր իմն փոխ, շնորհեաց նց՟ զգաւառն Վէնէզուէլա ունել իբր ժառանգական փետ թագաւորութեանն Գաստիլիոյ, և այնու դաշամբ, զի ՚ի ներքս սահմանաւոր իմիք ժամանակի լինիցին տեարք երկրին այնորիկ. և հաստատեսցեն անդէն զհարգունութ՟ի ինչ. Ընդ ուղղաւորութ՟բ այսպիսի անձանց պարտէր սպասել թէ հանդերձել՟ էր հիմնել կայունուրդ իմն ՚ի վ՟ր սկզբանց բոլորովին տարաշան եղելոց ՚ի սկզբանց Սպանիացւոց և լաւագոյն խորհելոց առ՚ի քաջալերել զայն պիտեւան ճարտարութիւն, զոր կարողէին ճանաչել յարմարագոյն առ յաջողութ՟ի իւր և առ փարթամութիւն. Բայց առ ձախորդութ՟ե յանձն արարին զկատարումն գաղափարի իւրեանց ոմանց զօրականաց բաղդի, որովք Գերմանիա լի էր ՚ի վեշտասաներորդ հարիւրեկին. Այս բաղդորդք անձկացեալք կուտելոյ զհարստութ՟իս առ՚ի կարող լինելոյ ՚ի բաց թողուլ փութանակի զտեղին, որ անհաճոյ էր նց՟, փոխանակ տնկելոյ զհարգունութ՟ի ինչ, որ մշակեսցէ՝ բարեգունացուսցէ զերկիրն, գնացին թափառական նահանգէ ՚ի նահանգ ՚ի խնդիր հանքաց, կողոպտելով զազգայինսն անագորոյն յափշտակողութ՟բ, և ճնշմամբ դնելով ՚ի վ՟ր զտարապայման աշխատութ՟իս. Յընթացս սակաւ ամաց ագահութ՟ի նոցա և հարկապահանջութիւնքն, որք համեմատութ՟բ Սպանիացւոցն էին չափաւորեալք, յատակեցին այնպէս զգաւառն, մինչզի դժուարաւ կարէր մատակարարել նոցա զապրուստ. և Վէլսէրք բարձի թողի արարին զտացուած ինչ, յորմէ անխորհուրդ դընացք գործավարաց իւրեանց ոչ ես թողոյր նոցա յոյս հանելոյ զշահ ինչ երբեք. Յորժամ տառապեալ մնացորդն այնց Գերմանացւոց գընաց 'ի բաց 'ի Վենեզուելայէ, Սպանիացիք առին վերստին զստացուածն. բայց հանդերձ բազում բնական լաւութեամբն իւրով՝ այս է մի յառաւել անպտուղ կալուածոց իւրեանց:

Քարաքաս և Քումանա: Գուաւաքն Քարաքքաս և Քումանա են հուժկ յետինքն յերկրատանացն Սպանիացւոց յայսմ ծովեզեր. Յորժամ 'ի յառաջիմութեան բացատրեցից զծագումն և զգործողութիւն վաճառական ընկերութեան, որ ընկալեալ է զարտօնութիւն արտաքսողական տուրևառութեան իւրք ընդ այնց, կալցեց զառիթ քննելոյ զվիճակ և զպայմանս նոցա:

Նոր Թագաւորութիւն Կրանաթայի: Նոր Թագաւորութիւն Կրանաթայ է գաւառ ինչ միջերկրեայ մեծատարած. Այս երևելի յաւելուած 'ի տէրութիւն Սպանիոյ եղև յամին 1536. 'ի Սեբաստինոսէ Պէնալքածարայ և 'ի Կօնծալեայ Քոիմենեայ Քուէսատայ յերկուց քաջագոյն և պատերազմնագոյն զօրագլխաց քան զոր երբեք ծառայեալ էին 'ի տիրապետութեան Ամերիկոյ. Առաջինն, որ հրամայէր յայնմ ժամանակի 'ի Քուիթօ, 'ի դիմի հարաւ 'ի հարաւոյ կողմանէ, միւսն 'ի վերայ յարձակեցաւ 'ի Սանթա Մարթայէ 'ի հիւսիսակողմն. Սկզբնական բնակիչք այսր տեղւոյ գոլով բազմօք առաւել քաղաքականացեալք քան զինչևիցէ ժողովուրդ Ամերիկոյ, (թող զՄէսաքացիս և զՓէրուացիս) պաշտպանեցին զինքեանս մեծաւ համարձակութեամբ և գովելի գնացիւք. Քանքարք և յարատևութիւն Պէնալքածարայ և Քուէսատայ գեր 'ի վերոյ եղեն ամենայն ընդդիմադրութեան. և վերածին զերկիրն 'ի կերպ գաւառի միոյ Սպանիացւոց:

Նոր Թագաւորութիւն Կրանաթայ ամբառնայ այնքան 'ի վեր քան զմակարդակ ծովու, մինչզի որչափ և մերձի գրեթէ առ հասարակածն՝ կլիմայն իւր է ծայրագոյն լարեխառն. Ցրտութիւն հովտաց իւրոց ոչ է վայրագոյն քան զՀարաւագոյն Նահանգացն Ամերիկոյ. և լերինք իւր գոյացուցանեն զոսկի և զպէսպէս ազգ մետաղին քարանց. Ոչ գտանի այս ոսկի պեղելով 'ի խորս երկրի. խառնեալ է ընդ հողոյ մօտ 'ի մակերևոյթն. և գտուցանի լուանալով զայն [illegible]. Այս գործողութիւն արարեալ լինի 'ի սեաւ գերեաց. զի թէպէտ փոքրատութի ծանուցեալ է, զի ստորերկրեայ ցուրտն է այնպէս նց մահաբեր, մինչզի ոչ կարեն ծառայեցուցանել 'ի խորին հանքս արծաթոյ, որ կայն ընդունակք են տոկալոյ աւելի քան զՀնդիկս առ այլ տեսակս աշխատութեան. Այնու զի ազգայինք Նորոյ Թագաւորութեան Կրանաթայ են գերիք յայնպիսի ծառայութէ, որ ջնջեաց զզարմ նց այնքան արագութբ յայլ մասունս Ամերիկոյ. Նմին իրի նոյն երկիր արդ բազմամարդացեալ է. Նահանգք ինչ յառաջածեն զոսկի սքանչելի իմն զեղմամբ, ոչինչ նուազ քան զՀովիտն Չինեկուիլլայ վերագոյնս յիշատակեալ յինէն. և յաճախակի գտանի 'ի Փէֆֆէռաս կամ 'ի հատս, որք նշանակեն զառատութիւն, յորում է գոյացեալ. 'Ի ստորոտնդի միում մօտ 'ի Փամփլոնայ աշխատաւորք ոմանք հաւաքեցին յայնմանէ 'ի միում աւուր զարժողութիւն հազար դահեկանաց. [illegible] ումն Սանթա Ֆէյի երբեր Ը իւր 'ի Սպանիա զթիթեղն ինչ արծաթոյ զոր փոքրուցեր եօթն հարիւր քառասուն լիբր ստերլինաց. Բայց առանց հիմնելոյ զհաշիւ ինչ 'ի վր այսպիսի ցանցառ և արտաքոյ կարգի գիւտածոյ, արժողութիւն ոսկւոյն հասարակարար հաւաքեցելոյ յայսմ երկրի, և մանաւորաբար 'ի գաւառն Փօփայանու և Չ.Հ.քօյի ամբառնայ առ երևելի իմն քանակութիւն. Քաղաքք իւր են բազմամարդք և ծաղկեալք և թիւ բնակչացն աճէ օրըստօրէ. Աշխուժութիւն և հնարագիտութիւն պէսպէս արուեստից սկսանին զօրանալ և յաջողիլ. Զօրութեամբ իմն երեւելի առնէ այս թագաւորութիւն ընդ Կարթագինեայ. ուր առաքէ զբերմունս հանքաց իւրոց և զայլ վաճառս ընդ մեծ գետն սրբուհւոյն Մատալենայի. Յայլմէ կողմանէ իմէքէ Նոր Թագաւորութիւն Կրանաթայ ունի զհաղորդութիւն ընդ Աթլանթականին միջնորդութբ Օրինոքոս գետոյն. սակայն երկիրն, որ տարածանի առ ափամբք իւրովք ընդ արեւելս է ոչ բարւոք ծանուցեալ և սակաւ բազմամարդացեալ 'ի Սպանիացւոց։



ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԷՐԻԿՈՅ.

ԴՊՐՈՒԹԻ ՈՒԹԵՐՈՐԴ։

[illegible]

[illegible]

Զկնի նշմարելոյ զյառաջադիմութիւն Սպանիացւոց 'ի գիւտս և 'ի տիրապետութիւս իւրեանց աւելի քան զկէս հարիւրեակ մի՝ ածի զնոսա առ այն շրջան, յորում աւարտութի՞ ն͞ց ապահովացաւ գրեթէ 'ի վ͞ր բովանդակ համատարած զեմաւոյն նորոյ աշխարհին ենթադրելոց յարաժամ տէրութեն ն͞ց. Արդիւնք կայունաւորութեանց նոցա 'ի վ͞ր երկրացն, որոց տիրացան, սկզբունքն, յորս յարեցան 'ի կերպաւորելն զհարգունութիւս իւրեանց, կերպն ներքին կառավարութեն նոցին միահեծ ընդ ազդեցութեն յառաջադիմական քաղաքականացման ն͞ց 'ի վ͞ր Սպանիոյ, 'ի վ͞ր հայրենի կացութեն և տուրևառական հաղորդակցութեն ազգաց են առարկայք ծանրակշիռք, առ որս դարձուցուք արդ զուշադրութի մեր:

Առաջին երեւելի հետեւութիւն կայունաւորութեանցն ա. Առաջին բարելաց 'ի Սպանիացւոց յԱմերիկա եղև նուա- գործ նոյ զումն նախկին բնակչացն յաստիճանի միում հա- ամայա- ւասարապէս զարմանալւոյ և ողբալւոյ. Սաստիկ նոյն մշտատեւեցի 'ի պէսպէս աւիթս զեղծելի ազգն. Ամերե- ցութիւն, ընդ որով սկսաւ բաղակցութի Ամերի- կոյ: կացւոց ընդ ժողովրդոց մերոյ կիսագնտի, եթէ 'ի կղզիսն և եթէ 'ի բազում մասունս ցամաքակին. և նշանակեցի զզանազան պատճառս հալածեալ եղծման նոցա. Իւր ազգայինք Ամերիկոյ կալան զքաջասրտութի անձեայ զէնս 'ի պաշտպանութի ազատութեն և իրաւանց իւրեանց բազումք կորեան յանհաւասար պատերազմին, լինելով կոտորեալք յամէնհի հրոսակաց իւրեանց. Բայց մեծագոյն յա- Պորտ- ատեւութն հետեւեալ յորժամ եղաւ սուրն 'ի պա- ճառ տենի. և տիրապետողքն մնացին անդէն կայունա- ցեալք անդորրապէս. Անհարեր աշխոյժք Սպա- նիականն տէրութեն եղեն յառաջնում նուաճի առաւել զպայարար փորձեալք 'ի կղզիսն, և յայն գաւառն ցամաքակին, որք երթան 'ի խորշէն ցամա- քերինիթայի գաւհմանսն Մէսիքոյ. Բովանդակ նոքին. այս տեղիք կալեալ էին կամ 'ի վտարանդի ցեղիցն որսորդաց, կամ յազգէ, որ արտաքեալ էր զնոյնագ իմն յառաջադիմութի 'ի քաղաքական միշակութեն և 'ի մտավարժութեն. Յորժամ սախսեն եղեն 'ի նոր տեարց իւրեանց ժողովել 'ի կայան հանգրուանի միում, և մերձեցուցանել առ կանոնաւոր իմն աշխատութի, յորժամ եդեալ եդեն 'ի վր նց ծանրութիւնք անհամեմատք ուժոյ նց, և զորս պահանջէին անողորմելի խստութի, ոչ կալան նոքա զօրութի բաւական՝ մնալ կեմարմնոյ առ'ի դիմակաց լինել նմանակ իմն ճնշման. Աղահաութիւն և յուսահատութիւն ներածին զբազումս 'ի նոցանէ վախճանել զկեանս բռնութի. Ծանրագոյն թիւ նոցա կորոյս տաժանումն և քաղցըն. 'Ի բովանդակ յայն համառարած գաւառն սկզբնական զարմն բնակչացն տեսաւ աներևութանալ և յոմանս բոլորովին ջնջաւ. 'Ի Մ՝էքսիքօի, ուր ժողովուրդ մի հզօր և պատերազմական հանդիպեցաւ, ախոյեան ելանել Սպանիացւոց ճգամբք սրտեղութեն արժանի լաւագոյն իմիք պատահման, բազում հազարաւորք Հնդկաց անկան 'ի պատերազմի. և անդէն իսկ որպէս և 'ի Փերու թիւ մի յոյժ մեծագոյն մեռաւ 'ի տաժանմանց կրելոց զհետ երթալով զօրաց Սպանիացւոց 'ի պէսպէս արձակմունս նց̃ և 'ի քաղաքական մաքառմունս, լինելով պարաւանդեալք տանել զկարասիս զնպարս և զամենայն համբարս զինուց:

Դ Նորն Սպանիա և Փերու: Սակայն ոչ բռնութիւն և ոչ անգթութիւն Սպանիացւոց վնասեցին այնքան ժողովրդեանն Մ՝էքսիքօի և Փերուայ, որքան անխորհուրդ քաղաքականութիւն, որով հաստատեցին զնոր կայունուրդս իրեանց. Առաջինքն էին թշուառութիք, զոր բանից կարգ է ասել, առ ժամանակեայք, որք ոչ արարին վնաս, բայց եթէ անհատից. Երկրորդն էր չար իմն յարակայ, զոր զգաց յանձին բովանդակ ազգն. Իսկոյն իբրև գաւառքն Մ՝էքսիքօի և Փերուայ եղեն բաժանեալք 'ի մէջ տիրապետողացն, իւրաքանչիւր 'ի նոցանէ անձկացաւ ստանալ զնահանգ մի, յորմէ սպասեալ լինէր վաղվաղ իմն փոխարէն յերկար ծառայութեն իւրոյ. Յանդուգն բաղդորդք սովորեալք առ անհոգութի և առ վատնումն զինուորական կենաց ոչ ունէին ոչ զճարտարմտութի կերպաւորելոյ զգաղափար իմն կանոնաւոր մշակութե և ոչ զհամբերութի սպասելոյ դանդաղ, այլ ապահովագոյն եւս պտղոյ իւրում. Փոխանակ կայանաւորելոյ 'ի հովիտս տեղակալեալս յազգայնոց, ուր բերրիութի գետնոյն առատաձեռն փոխարինեալ էր մշակողին, ընտրեցին հաստատել զկայս իւրեանց 'ի լեռնուտ կողմանս ինչ նորոյն Սպանիոյ, և Փերուայ. Արա-

նելն

ցնելն զհանգս ոսկւոյ և արծաթոյ էր նախապետական, նպատակ գործունէութեան նց՟. Յոլով շահեկանութիւնքն, զորս խոստանան այնք, և զառածանիչ յոյսքն, որք առաջի առնին հանապազորդ, համեմատին մեծաւ զօրմանօք հոգւոյ ձեռներեցութեան և բաղդին, որ քաջալերէր զառաջին անղափոխսն յԱմերիկա յամ մասին գնայից նց՟. Առ'ի կատարել զայսոսիկ նպաստաւոր առաջարկութիւնս պիտոյ էին այնչափ բազուկք, մինչ զի կարևոր եղև անտնօրինելաբար գերութիւն ազգայնոց. Սն այսորիկ բռնադատեցան 'ի բաց թողուլ զնախկին բնակութիւնս իւրեանց 'ի դաշտավայրսն և կայունանալ 'ի լերինսն. Այս յեղակարծ անցումն 'ի տապացեալ կլիմայէ հովտացն առ ցուրտ և ընդմտանող օդն, որ տիրէ 'ի բարձրութիւն այրեցած գօտւոյն, չափազանց աշխատութիւն, գծուծ և վնասակար սնունդն և յուսահատութիւն պատճառեալ 'ի նոր տեսակէ իմեքէ ճնշմանց, որում ոչ էին սովորք, և զորոյ ոչ յուսային տեսանել զկատարած, վշտագնեաց զնոսա գրեթէ նովին եղանակաւ, որով նուաղ ճարտարամիտ հայրենակիցք իւրեանց 'ի կղզիսն. Ընկճեցան յայսց բազմապատիկ թշուառութեանց և նուաղեցան թուով հաւասար արագութեամբ:

(21) Հայրն Թորիբիոս Բենէվէնթացի կամ Մօթօլինէացի նշանակեաց զտասն պատճառս հապճեպ ամայութեան Մեքսիքոյ. որոց տայ զանուն տասն հարուածոց. Բազումք յայսցանէ ոչ են մասնաւորք այնմ գաւառի 1. 'Ներածութիւն ծաղիկ ախտին. այս հիւանդութիւն տարեալ եղև 'ի Նորն Սպանիա յամին 1520 'ի գերւոյ միոջէ Եթէովպացւոյ, որ ծառայէր 'Նարվաէզի. Թորիբիոս ասէ, թէ մեռաւ կէսն բնակչաց 'ի գաւառսն այց արարեալ յայսմ ախտէ. Յայս կոտորած պատճառեալ 'ի վարդախտէ, Թորքուէմատա յաւելու զապականիչ գործս երկուց տա-

բայխոխիկէ հասարակաց ախտից յամին 1545. և 1576. Յառաջնումն կորեան ութն հարիւր հազարք, և 'ի վերջնումն ոչ իր աւելի քան զերկու միլիոնս՝ ըստ անվիճար իմն համարոյ աւելցելոց հրամանաւ Փոխարքայից. Աշխարհն ոչ մինծաւ 'ի վերոյ, բայց եթէ բազմօք ամօք զկնի յափշտակութեան Սպանիացւոց, այլ յետոյ եղև ամենեքին մահաբեր ազգայնոցն. 2. Բռնակութիւն ազանելոց կամ մեռելոց 'ի քաղցու 'ի մարտին իւրեանց ընդ Սպանիացւոց մասնաւորապար 'ի պաշարմանն Մեքսիքոյ. 3. Մեծ սովն, որ զհետ եկն առմանն Մեքսիքոյ, և որ յառաջ եկն 'ի պակասութենէ մշակութեան. Նոյնն պատահեցաւ յայլ կողմանս տիրապետեալս 'ի Սպանիացւոց. 4. Ծանր աշխատութիւնք եդեալք 'ի Սպանիացւոց 'ի վզի մարդոյ, որք պատկանէին առ բաժանմունս իւրեանց. 5. Ճնշէն բեռն հարկիցն, զորս անդրուական էին վճարելոյ, և յորմէ ոչ ոք Հնդիկ զերծ էր. 6. Նաղմութիւն ծառայեցուցեալ 'ի հանքերս գանձին, զորս Հեղեղատքն վայրաբերէին 'ի լերանց, զոյով մարդիկն բռնադատեալք ելնել 'ի ամփոփական և 'ի ջերմն բնակութեանց իւրեանց առ 'ի զգալ զխստութիւն ցրտոյն յայն անհարձեալ կողմանն առանց ինչ զարմանոյ մի ապրանք իւրեանց. 7. Նորա աշխատութիւնն 'ի շինելն զՄեքսիքո, զոր Կորթէս հրամայեաց այնպիսի իմն գաղափէ փառաւորի, մինչզի եբարձ 'ի միջոյ զանհատաւորի իմն բազմութիւն Հնդկաց. 8. Խիտ մարդոց դատապարտելոց առ գերութիւն ընդ պէսպէս պատրուակօք և առեալոց յաշխատել 'ի հանքս արծաթոյ. Այս դրոշմեալք յիւրաքանչիւր ստացողէ հրացեալ իւիք երկաթով, որպէս ապարեալ լինէր անասնոց, մեռեալ էին հրամանիւն 'ի վզի լերանց. 9. Խստութիւն աշխատութեան, որում ենթակայեալ էին, մանաւանդ զոլորշիքն հանքաց, ցրտութիւն կլիմային և չքաւորութիւն կերակրոյն եղեն ղէն այնպ մահաբերք, մինչզի Թորրիպիոս պընդէ, թէ երկիրն մօտ 'ի բազում յայսց հանքաց, և մասնաւորաբար Կուաքսակօ ծածկեալ էր մեռեալ մարմնովք. որք ապականէին զօդն. և թէ արեւն տղոտացեալ էր յանգեղաց և յայլոց թռչնոց յափշտակողաց, որք փոխաբերին էին անդր առ'ի գիշատել զնս. 10. Սպանիացիք 'ի զանազան զօրաժողովս, զոր արարին և 'ի քաղաքական պատերազմունս խուժանց ջնջեցին զբազումս յազգայնոցն, զորս բռնադատէին ծառայել նոցա իբր Թամէնէս կամ զբեռնակիրս. Այս վերջին եղանակ ճնշման եղև պատճառ աւերման մասնաւորաբար Փերուացւոց. 'Ի Թըւոյ Հնդկացն, որք մեռան 'ի շահատակութեն Կոնծալոսի Փիծծարոսի յերկիրսն ընդ արեւելս Անդեայց, մարթ է կերպաւորել զգաղափար ինչ այնր, զոր կրեցին և քանակութեն, որ կորեաւ. Գոմարա 'ի հակիրճ և 'ի համառօտ պատմութեն իւրում պարզաբանէ, և հաստատէ զգիտողութիւն ինչ Թորրիպեայ, առ որս նա ինքն վերաբերի: ‖

Վասն այսր պատճառի և վս ապականութեն վարգախտին (հիւանդութեն անծանօթ յԱմերիկա և ամենեին մահաբեր ազգայնոցն) բազմամարդութիւն եթէ 'ի նորն Սպանիա, և եթէ 'ի Փերու եկն այնպիսի եղանակաւ 'ի նուազել, մինչզի 'ի սակաւ ամս երեւեցաւ անհաւատալի այն որ առնի զնախկին ծաղկեալ վիճակէ նց :

Այսպիսի եղեն երեւելագոյն դիպուածքն և պատճառքն, որք վս զուգակցեալ գործողութեն իւրեանց հանգամանացն յամայացուցանել զԱմերիկա. Սակայն բազում հեղինակք առանց վարկանելոյ զայնս, և շշտուցեալք ընդ կարի իմն առայանկարծ անապատանալն կամին վերագրել զայս անսովոր դիպուած առ գաղափար իմն քաղաքականութեն ոչ ինչ նուազ խորին քան թէ պժնեայ. Սպանիացիք, ասէ կարծեն նոյն իսկ հեղինակքն,

Ող. Եր-
ծուԵՆ
յաճոյ է-
[illegible] խօ
[illegible]
[illegible] :

խելամտեալք զանձնական անբաւականութեան 'ի տիրապետել զընդարձակ գաւառսն գտեալս 'ի նոցանէ, և նախատեսանելով անկարելի պահելն զաւագութին իւրեանց 'ի վր̄ ժողովրդեան միոյ անսահմանաբար մերնագունի թըւով, ապքի նախապահեսցեն ինքեանց զԱմերիկա՝ որոշեցին բնաջինջ առնել զբնակիչս նր̄. և դարձուցանելով զայն յանապատ իմն ջանացան ապահովացուցանել ինքեանց զտէրութիւն:

(22) ‖ Նաև Մոնթեսքուիեու յարեցաւ յայս կարծիս. բայց կիրք մեծի առնս այսորիկ մն̄ աձոյ կառավարութեն առնէր զնա երբեմն անմտադիր 'ի խոյզս իւր. և կամելով կարի իմն զտել կորուսեալ է 'ի տեսութեան 'ի բազում առիթս զպատճառսն, որք պարտէին բնականաբար յանդիման լինել հոգւոյ իւրում յաղագս ստուգութեն և քաջայայտութեն իւրեանց: ‖

Բայց ազգք հազիւ երբէք տարածանեն զտեսութիս իւրեանց առ առարկայս այնպէս հեռաւորս, կամ ձգեն այնպէս 'ի խորս զոծս իւրեանց. և վն̄ պատւոյ մարդկութեն պարտիք մեք նկատել, զի ոչ եղև ազգ, որ խորհրդով կերպաւորէր երբէք զայսքան նշկահելի իմն առաջարկութի. Այլապէտք Սպանիացիք հեռի յընդգրկելոյ զայսպիսի իմն եղծիչ ոճ ցուցան մինչ հոգածութք նախապահելոյ զնոր հպատակս իւրեանց. Յեղիսաբեթի նախանձայուզութին ծաւալելոյ զքրիստոնէական հաւատն և փափագն նախահոգալոյ զճանաչումն ճշմարտութեն և զքաջալերութիս կրօնի ժողովրդեան միում զուրկ եղելոյ 'ի հոգևոր լուսոյ եղեն միակ շարժիչք առ'ի սրտացուցանել զԿոլոմպոս ձեռնարկել 'ի գիւտս իւր. Կոլոմ անդէն յաջողեալ նմա ջանացաւ կատարել զբարեպաշտ դիտմունս իւր. և յայտնեաց զառաւել գորովական փոյթն վն̄ ապահովացուցանելոյ ոչ միայն զկրօնական կրթութիւն, այլև զհեշտագոյն վարումն այնմ անմեղ զարմի մարդոց ենթարկելոց թագաւորութեն իւրում։

(23) ‖ Հաւաստիք իմն այսորիկ գտանի 'ի կտակին Եղիսաբեթի, ուր ցուցանէ նա զգորովագոյն փոյթ իւր մարդասէր վարման ընդ Հնդկաց. Այս գովելի զգացուածք թագուհւոյն ընկալեալ եղեն 'ի Հրապարական օրէնս Սպանիոյ. և ծառայեն իբր նախաշաւիղ կանոնաւորմանցն պարունակելոց ընդ մակագրաւ՝ Օրէնք վարման Հնդկաց։ ‖

Յաջորդք իւր յարեցան 'ի նոյն գաղափարս. և 'ի բազում առիթս, զորս կանխաւ յառաջ բերի, 'ի մէջ եղաւ աւագութի նց ուժգնագոյն եղանակաւ առ'ի պատսպարել զժողովուրդսն Ամերիկոյ 'ի ճնշմանէ Սպանիացւոց. Կանոնաւորութիւնք նց առ այս վախճան եղեն յոգնաթիւ և ստէպ ստէպ կրկնեալք. Խորհեալ էին իմաստութբ և 'ի գործ եդեալք մարդասիրութբ. Յորմէհետէ ստացուածք նց 'ի Նոր աշխարհին ընդարձակեալ եղեն, ոգի կանոնաւորութեանց նց ցուցաւ այնպէս ընտրողական ոպ յորժամ կայունաւորութիւնք նց ամփոփէին առ կղզիս միայն. Երկնչէին այնպէս սակաւ իւր ոչ կարող լինելոյ պահպանել զտէրութիւն իւրեանց, մինչզի հոգածութի նոցա իւր Հնդկաց աճեաց ըստ համեմատութեն, որով տարածեալ լինէին այնք. Անէին նոքա ա՞նպէս 'ի սրտի առնել զնոսա երջանիկս, մինչզի յարուցին զահարկու իմն ապստամբութի 'ի հարգունութեն միում. և տհաճեցուցին զա՞յս իւր կամելոյ տալ կատարել կարի խստութբ զօրէնս իւրեանց. Բայց ագահութին անհատից էր կարի բռնական առ'ի չլինելոյ սանձահարեալ յաւագութէ օրինաց նոցին. Յափշտակող և յանդուգն բաղդորդքն ամենևին հեռի յաթոռո՞ կառավարութեն նց սակաւ ընտելք ենթարկութեան զինուորական կրթութեն յորժամ ներգործաբար ծառայէին, և միշտ նաւաղ տրամադրեալք յակնածել զոհար իշխանութիւն քաղաքական կարողութեն 'ի նորածնեալ հարգաւնութեն միում, որ համարձէին կամ խաւէին մինչեւցէ յառաջատեսաւթէ, որ գնէր կայարս պահանջմանց եւ ըղնաւորութեանց նց. Եղբաւնիքն Սպանիոյ յարատեւ գիմագրաւութի առաջէր զհրավարաակս առ'ի խափանել զձնշումն Ընդկաց. Հարգաւնականքն անգասնելով զայնս, կամ յուսալով անպատիժ լինել առ բազմակայութեան իւրեանց շարունակէին նկատել եւ վարել զնն իբրեւ գերիս. Նզքին բոլ բդեաշխք եւ այլք պաշտօնատարք ծառայեցուցին 'ի հարգաւնութիւն, որոց բազումք էին կարօտք եւ յափշտակօղք հաւասար բազդորդացն, որոց նաքա նախագահէին, ողջագուրէին կարի գիրութի զգաղափարս նց արհամարհոտս ժողովրդոցն ստացելոց. եւ փոխանակ ընդդիմագրելոյ նոցին, քաջալերէին զնն կամ կափուցանէին զաչս առ զառանցութիս նց. Ապաւրեն ամայութին նորոյ աշխարհի ոչ պարտի համարիլ արքունեացն Սպանիոյ կամ նկատիլ իբր արդիւնս քաղաքական կառգադրութեն մածելոյ 'ի նն, այլ պարտի ողջոյն վերագրիլ ոխրապետացն եւ առաջնոց մշակողացն Ամերիկոյ, որք անհանճար եւ անիրաւ խորհրդով գործեցին ընդդէմ հրամանագրաց իշխանականաց իւրեանց եւ անպատահեցին զաշխարհ իւրեանց:

Խա— ու [illegible] կրօնին: Մինչ մեծագոյն անիրաւութի բազումք 'ի հեղինակաց ներկայացուցել են զամենրող հոգին Հռոմէական կաթողիկէ կրօնին իբր պատճառ բնաջնջութեն Ամերիկացւոց. եւ ամբաստանեցին զեկեղեցականսն Սպանիացւոց. այլ թէ խրախուսեալ էին զհայրենակիցս իւրեանց առ'ի կոտորել զԸնդիկս իբրեւ զկռապաշտս եւ թշնամիս այ. Բայց առաջին քարոզիչքն, որք այցաբերին Ամերիկոյ, թէպէտեւ տգէտք' էին անձինք բարեպաշտք. Սա յանձին կալան զպաշտպանութի 'ի ազգայնոցն. եւ մաքրեցին զնն յամբաստանութեանցն արարելոց 'ի տիրապետողացն, որք ստորագրելով զնա իբր անընդունակս կառավարելոյ զօձանս քաղաքական կենաց և 'ի միտ առնլոյ զվարդապետութիւն կրօնին, այնգէին լինել զնա զարմ իմն մարդկան ստորակարգեալ. յորս ձեռն բնութեան տպաւորեալ էր զնշան ծառայութեան. Ներէ զծայրագոյն իմն պատիւ քարոզչացն Սպանիացւոց մարդասէր և կայուն նախանձայուզութիւն. որով պաշտպանեցին զտկար հօտն հալածեալս հզօրաբարձութեան իւրեանց. և զոր ինչ ասացի զնոցանէ սփռէ 'ի վերայ սպասաւորութեան նց՟ զպայծառութիւն իմն, զոր ոչ կարէ իր ինչ աղօտացուցանել. Այլ նոքա սպասաւորք խաղաղութեն, որք հնարէին բառնալ զձաղկանսն 'ի ձեռանէ հարստահարողաց նց՟, Փործունեայ միջնորդութեն նց՟ պարտական եղեն Ամերիկացիք զիմ՟ կանոնաւորութի ուղղեալ առ'ի մեղմել զխըստութի վիճակի նց՟. 'Ի կայսնորդս Սպանիացւոց եթէ աշխարհական, և եթէ կրօնաւորական ուխտն գեռեւս նկատեալ է'ի Հնդկաց իբր բնական պաշտպան իւրեանց, և զիմեն առ նա յորժամ կրեն զթշնամանս կամ զառուղանս ։

(24) ‖ Յօթներորդ մակագրին առաջնոյ մատենի հաւաքմանն, որ պարունակէ զօրէնս վերաբերեալս առ իշխանութի և առ պաշտօնս Արքեպիսկոպոսաց, և Եպիսկոպոսաց, գրեթէ երրորդ մասն նոյին յածի 'ի վերայ այնր, որ խնդրի 'ի նոցանէ իբր'ի պաշտպանից Հնդկաց. և սահմանադրէ նոցա զհանգամանս, որովք պարտէ նց՟ միջնորդել առ'ի պաշտպանել զնա 'ի հարստահարութէն, եթէ յանձինս նց՟ և եթէ յինչս իւրեանց. և նոքա վարեն արդեամբք զպաշտաւոր և զմարդասիրական պաշտօնն, զոր օրէնք վստահացեալ են նց՟. Կարեմ յառաջ բերել անհամար հաւաստիս ասացելոցս հանեալս 'ի մատենագրացն Սպանիացւոց. այլ ես յիշեմ երբեմն Կաձեայ և Լոբէկոսի Հովքրոսյ վաճառականի անգլիացւոյ. որ

ևեկաց զամս հինգ 'ի Նորն Սպանիա յառաջքան զամն 1572. որ և տայ զնոյն նպաստաւոր ծանօթութիւն զկաթուղիկեայ ուխտէն. Օրինօք իսկ Կառոլոսի հինգերորդի ոչ միայն Եպիսկոպոսունք, այլ և այլք եկեղեցականք աւտարացուցեալ են 'ի տեղեկացուցանել և յանձն առնել քաղաքական մեծաւորաց, եթէ Հնդիկ ոք զրկեալ է յիրաւանց և յարտօնութեանց իւրոց. և այսպէս կացուցեալ լինին նոքա օրինաւոր պաշտպանք Հնդկաց. Իսկ ընթերցանի ևս, թէ եկեղեցականք ոմանք Սպանիացիք զլանային զարձակումն այնց հայրենակցաց իւրեանց, որք ստացեալ ունէին Էնքօմիէնտա, և որք համարէին զՀնդիկս իւր գերիս, կամ ծառայեցուցանէին զնն յաշխատութիս հանքաց իւրեանց: ||

Թիւ Հնդկացն, որ պակասէն [illegible] ցեալ է:

Հանդերձ որընթաց ամայութեան Ամերիկայ՝ երևելի իմն թիւ բնիկ ազգացն կայ դեռևս 'ի Մեքսիքօ և 'ի Փերու, և մասնաւորաբար 'ի կողմանսն յայնոսիկ, ուր ոչ եղեն վտանգեալ յոչլին մոլեգնութեան զինուցն Սպանիացւոց, կամ ամայացեալ յառաջնոց ճգանց ճարտարութեան նոցա ևս առաւել կործանողի. 'Ի Կուաթիմալա, 'ի Չիափա և 'ի Նիքարակուա, և յայլ փափկալի գաւառսն Մեքսիքեան կայսերութեան առ հարաւային ծովուն զարմն Հնդկաց է տակաւին 'ի մեծի քանակութեան. Հանգրուանք նոցա 'ի տեղիս տեղիս են այնչափ բազմամարդք, մինչզի արժանաւորին անուան քաղաքի:

(25) || Ըստ Կաձեայ Չիափայն Հնդկաց պարունակէ զչորս հազար գերդաստանս. և ստուգէ նա ինքն թէ են և այլ քաղաքք Հնդկաց հաւասարապէս բազմամարդք: ||

Յերիս ունկնդրութիսն, յորս բաժանեալ է Նորն Սպանիա, են գոնէ երկու միլիոնք Հնդկաց. Այս թիւ է իբր ոչինչ հայելով 'ի նախկին բազմամարդութիւն նոցա, սակայն է այնպիսի, որ կերպաւորէ արդ ևս զմարմին մի վերնագոյն քան զայլ բովանդակ բնակչացն այնր համատարած երկրի ։ (26) Է ամենադժուարին իմն ունել զանվթար հաշիւ ինչ բազմամարդութեն յառաւել հրահանգ թագաւորութիս Եւրոպիոյ. ուր գիտութիք արարեալ են զմեծագոյն յառաջադիմութի. 'Ի Սպանիական Ամերիկային, ուր գտանին դեռեւս 'ի մըղոյութեն, և սակաւ մարդիկ ունին զժմն տալոյ զանձինս հետախուզութեց սոսկ տեսականաց, տուեալ է սակաւ ուշադրութի առ այս աւելահոգ քննութի. Բայց յամին 1741. Փիլիպպոս հինգերորդ հրամայեաց փոխարքայից և բդեշխից զանազան գաւառացն Ամերիկոյ անել զկատարեալ իմն համար ժողովրդոց ենթարկելոց իշխանութեն իւրեանց, և փոխառաքել յարքունիսն զտեղեկութի ինչ թըւոյ նց և պարագայմանց նց. Ըհետ երթալով այսմ հրամանի կոմսն Փուէնքլարայ փոխարքայն Նորոյն Սպանիոյ կարգեաց զտէրն Յովսէփ Անտոնիոս Վիլլասենորայ և զՍանքհեզ կատարել զայսպիսի իմն պատուէր 'ի Նորն Սպանիա. 'Ի պատմութեցն մեծաւորաց պէսպէս նահանգացն, ոչ և 'ի գիտողութեց արարելոց 'ի նմանէ յերկար օթեվանութեն իւրում յայնմ գաւառի. Վիլլասենոր արար և հրապարակեաց զյառաջնեկեալն 'ի հետախուզութեց իւրոց 'ի յԱմերիկեան Թատրոնի իւրում. Սակայն պատմութի իւր է անկատար. Յինն թեմիցն, յորս բաժանեալ է Մեքսիքեան կայսրութին, նոյն ինքն տպագրեալ է զծանօթութի ինչ միայն զհնգիցն, այս է զԱրհիեպիսկոպոսութե Մեքսիքոյ, զԵպիսկոպոսութեցն Լօս Անճելէսայ, Մեքհօաքանու, Օաքսաքայ և Նորոյն Գալլիցիոյ. Եպիսկոպոսութիքն Իւքաթանու, Սերարացոյ, Չհիափայ և Կուաթիմալայ բնաւին մնացեալ են. Թէպէտ երկու վերջինքն պարունակեն զգաւառս, յորս զարմն Հնդկական է առաւել բազմաթիւ քան թէ յորում և իցէ յայլում մասին Նորոյն Սպանիոյ. 'Ի քննութեն համատարած թեմին Նորոյն Գալլիցիոյ ստորագրեալ է զկայաւտ-

րուբուլթի զանազան գիւղօրէից Հնդկաց, բայց ոչ նշանակէ, եթէ ոչ գիտցուի ինչ մասն թըւոյ բնակչաց իւրոց. Հնդիկք այնր ընդարձակ գաւառի յորում տէրութիւն Սպանիական կայսերացն է անկատարապէս, ոչ են գրեալք յաշխարհահամարին նովին հոգաբարձութեամբ, որպէս յայլ մասունս Նորոյն Սպանիոյ. Ըստ Աղեքսանդրայ ներգործական որպիսութիւն բազմամարդութեան 'ի հինգ միջատակին թեմսն բաղկացեալ է 'ի Սպանիացւոց, 'ի Նեկրեաց, 'ի Մուլաթթօեաց և 'ի Մեսթիծոսաց. 'ի թեմսն:

Մէքսիքոյ	տունք 105202
Լօս Անճէլէսայ	30600
Մէքհօաքանու	30840
Օաքսաքայ	7296
Նորոյն Կալիցիոյ	16770
	190708

Համարելով հինգ առ մի տուն բոլորական թիւն է.

Գումար	953540

Տունք Հնդկաց 'ի թեմսն.

Մէքսիքոյ	119511
Լօս Անճէլէսայ	88240
Մէքհօաքանու	36296
Օաքսաքայ	44222
Նորոյն Կալիցիոյ	6222
Գումար	294391

Ըստ համարոյ հնգից առ մի տուն՝ թիւն բոլորական է 1471955. Կարեմք վստահանալ մեծագոյն ստուգութեամբ յայս հաշիւ թըւոյ Հնդկաց. որովհետև առեալ է 'ի տումարէ կամ 'ի հաշուէ գրոյ. Ըստ որոյ սարասի թափի հարկն վճարեալ 'ի նոցանէ. Այլու զի զորս թեմսն 'ի բաց թողեալ են, և 'ի թեմին Նորոյն Կալիցիոյ թիւք ոչ են անվթարք, մարթ է ստուարապանել, թէ թիւն

Հնդկաց 'ի Մեքսիկոյ առաւելու քան զերկուս միլիոնս:

Համարագիրն թըւոյ Սպանիացւոց (են,) ոչ երբեք թէ իցէ ինչ աւելի կատարեալ. Նշմարէ Մ Իլլաստէկնոր ընդհանուր եգերօք, թէ են զանազան Սպանիացիք, Նեկրեք եւ խառնեալ զարմ մարդկան յայսմ եւ յայնմ քաղաքի առանց մասնաւորելոյ զթիւ նց. Սն այսորիկ եթէ կամիցիմք հանել 'ի բաց զոսոս եւ զնս, որք կան 'ի չորս թեմսն թողեալս, թիւն Սպանիացւոց եւ այլոց խառնեալ զարմից հաւանականաբար լինիցի միլիոն եւ կէս. 'Ի տեղիս տեղիս Մ Իլլաստէկնոր տրոհէ 'ի մէջ Սպանիացւոց եւ երից վայրագոյն զարմից՝ Նեկրեաց, Մուլաթթօէսից եւ Մեսթիծոցաց. եւ նշանակէ զթիւ նց զատաբար. բայց յոլովակի խառնէ զնս 'ի միասին. Սակայն 'ի համեմատութեան՝ որ թագաւորէ յայնս տեղիս, ուր թիւ իւրաքանչիւր ուրուք նշանակեալ է, որ եւ 'ի հաշուէ վիճակի բազմամարդութեան 'ի Նորն Սպանիա արարեալ յայլոց հեղինակաց՝ յայտնի է, թէ թիւ Նեկրեաց եւ անձանց խառն զարմից բազմօք զանցանէ զթըւով Սպանիացւոց. Թերեւս վերջինքս ոչ պարտին համարիլ աւելի քան զհինգհարիւր հազար 'ի վն միոյ միլիոնի առաջնոցն:

Որչափ եւ պակասաւոր իցէ այս ծանօթութի ոչ կարողացայ պաճարել ինձ զնմանակ իմն նկատմամբ թըւոյ բնակչացն Փերուայ, որ դիցէ զիս յաստիճանի գիտելոյ որոշակի զբազմամարդութի իւր. Տեղեկացեալ եմ, զի յամին 1761. պաշտպանն Հնդկաց 'ի փոխարքայութեն Փերուայ հաշուեաց, զի 612780. վճարէին զհարկ թագաւորին. Իսկ քանզի կանայք եւ տղայք զերծք են 'ի սակէ յայսմանէ 'ի Փերու, բովանդակ թիւն Հնդկաց ըստ սարասի այսր ծանօթութեն լինելոյ է 2449120:

Ահաւասիկ այլ իմն ոճ, որով կարէ հաշուիլ, կամ գոնէ մակաբերիլ կացութի բազմամարդութեն նարոյն Սպանիոյ և փէրուայ. Ըստ ցուցակի միում, զոր յիրաւի նայիմ իբր յանվթար, թիւն պատճենից կոնդակին Խաչակրաց, որք առաքին 'ի փէրու, է յամ Նոր Հրատարակման 11771953. և 'ի Նորն Սպանիա 3649326. Բայց ասացաւ, թէ են սակաւ Հնդիկք, որք գնեն զայսօրիկ կոնդակս. և թէ վաճառին այնք նախապետաբար Սպանիացւոց և Կրէօլաց. ուստի հետևէր, թէ թիւ այսց երկուց վերջնոց է երեք միլիոն. Թիւն բնակչաց 'ի բազում քաղաքս Սպանիական Ամերիկոյ կարէ տալ մեզ զգաղափար ինչ տարածման բազմամարդութեան և ուղղել զվարկպարազն՝ բայց զհասարակ ծանօթութիւն, որ է 'ի մեծն Բրիտանիա նկատմամբ տկար և ամայի կացութեն հարգունութենց իւրոց. Քաղաքն Մէքսիքօ պարունակէ գէթ զհարիւր յիսուն հազար ոգիս. Լօս Անճէլօս պարունակէ աւելի քան զվաթսուն հազար Սպանիացիս և զխառնեալ զարմս. Կուատալաքսարա պարունակէ աւելի քան զերեսուն հազարս 'ի բաց հանեալ զՀնդիկս. Լիմա պարունակէ յիսուն և չորս հազարս. Կարթագինէ պարունակէ քսան և հինգ հազարս. Փօթօսի քսան և հինգ հազարս. Փօփայան աւելի քան զքսան հազարս. Քաղաքք երկրորդ դասուն են միշտ առաւել բազմաթիւք. Քաղաքք առաւել յաջող հանգրուանաց այլոց ազգաց Եւրոպացւոց յԱմերիկա ոչ կարեն համեմատիլ ընդ այսոցիկ:

Ահաւանիկ որչափ կարող եղէ հաւաքել աստի և անտի 'ի բազմաց հեղինակաց շուրջ զբազմամարդութիւ այսց պէսպէս քաղաքաց. բայց ստացայ ես զհաշիւ ինչ բնակչաց քաղաքացն 'ի գաւառին Քուիթօյի. առ որոյ խնամոտութի կարեմ վստահանալ, և զայն հաղորդեմ աշխարհի առ'ի շատացուցանել զհասարակաց աւելահօգութիւն և առ'ի ուղղել զշարախոհ կարծիսն, զոր յիշատակեցի. Սան Ֆրանչիսկոն Քուիթօյի պարունակէ իբր յիսուն կամ վաթսուն հազար անձինս յամ տարբեր զարմից. Բաց 'ի քաղաքէն են յուղղաւորութեն անդ քսան և ինն հոգաբարձութիւնք կանգնեալք 'ի գլխաւոր աւանս. որոց իւրաքանչիւրն ունի զփոքրիկ գիւղս, որք կախին 'ի նմանէ. Բնակիչք այսոցիկ են մեծագոյն մասամբք Հնդիկք և Մէսթիծօսք. Սան Ճիովաննի Տէփասթօ ունի բնակիչս 'ի 6000է մինչև 'ի 8000. բաց 'ի քսան և եօթն կախեալ գիւղից. Նահանգն Հավալայ 'ի 18000 է մինչև 'ի 20000. Թաքուննայն 'ի 10000 է մինչև 'ի 12000. Ամպաթօյինն 'ի 8000 է մինչև 'ի 10000 բաց 'ի 16 գիւղից կախելոց. Նահանգն Քհիօմպօի 'ի 6000 է մինչև 'ի 8000. Քաղաքն Կուաքուիլայ 'ի 16000 է մինչև 'ի 20000. բնակիչս և զ14. կախեալ գիւղօրէս. Նահանգն Աթուասեայ 'ի 5000 է մինչև 'ի 6000. և զ4. կախեալ գիւղօրէս. Քաղաքն Քուէնցա 'ի 25000 է մինչև ց30000. բնակիչս և 9 բազմամարդ կախեալ գիւղօրէս. Քաղաքն Լաքսայի 'ի 8000 է մինչև ց10000. բնակիչս. և զ14. կախեալ գիւղօրէս. Այս աստիճան բազմամարդութեն թէպէտ և փոքրիկ՝ նկատելով զընդարձակ տարածութի այնր երկրի, է բազմօք վերնագոյն քան զոր ենթադրի հասարակօրէն. Զանցարարի ասել յիւրում տեղւոջ, թէ Քուիթօ է միմիայն գաւառ 'ի Սպանիական Ամերիկայի, որ կարէ կոչիլ երկիր ձեռագործաց. փնջոյք, պաստառք բամպակի, և հանդերձք թանձր ասուի գործին անդէն յայնպիսի քանակութեն, մինչև բաւել ոչ միայն ծախման գաւառին, այլև կերպաւորել յայնմանէ զերևելի իմն յօդուած փոխաբերութեն յայլ մասունս Սպանիական Ամերիկոյ. Զգիտեմ, եթէ արտաքոյ կարգի մտավարժութեն այսր գաւառի պարտիցի նկատիլ իբր պատճառ, եթէ իբր գործ բազմամարդութեն իւրոյ. այլ 'ի մէջ բնակչաց Նորոյ աշխարհին կիրքն վ՛ն ա՛մ իրաց, որք գան յԵւրոպիոյ է այնպէս բուռն, մինչզի ասացաւ ինձ, թէ գործարանքն Գուիթօի երթալով երթան և խոնարհին օրըստօրէ: ‖

'Ի փէրու զանազան նահանգք մասնաւորաբար 'ի թագաւորութենն Գուիթօի տեղակալեալ են գրեթէ բովանդակք 'ի Հնդկաց. Յայլ գաւառսն տեսանին սոքա խառնեալք ընդ Սպանիացւոց. և 'ի բազում 'ի կայուներգից իւրեանց վարեն զմեքենական արհեստս և ունին զնուաստագոյն պաշտօնս. Բնակիչք Մէքսիքօի և փէրուայ էին սովորք կայուն ինչ բնակութե, և սոյգ իմիք աստիճանի կանոնաւորեալ ճարտարութե. և վն այսորիկ պիտոյ եղև նուազ բռնութի առ'ի վերածել զնս առ համակերպութի ինչ ընդ Եւրոպական սովորիցն 'ի քաղաքական կեանսն. Բայց յորժամ Սպանիացիք կամեցան կայունանալ 'ի մէջ վայրագ ցեղիցն Ամերիկոյ, թեակոխութիւնք նց միաւորելոյ ընդ նս եղեն միշտ անօգուտք և յաճախակի մահաբերք բնիկ ազգացն. Ոչ հանդուրժելով սանձի, և փախչելով յաշխատութէ իբր 'ի նշանէ ծառայութե, կամ բարձի թողի առնէին զբնակութիւնս իւրեանց, կամ որոնէին զանկախութի 'ի լերինս և յանտառս անմատչելիս ճնշողաց իւրեանց. կմ կորնչէին յորժամ տեսանէին զանձինս վերածեալս առ կացութի իմն դիմամարտ նախկին գաղափարաց և սովորութեց իւրեանց.

[illegible] 'Ի նահանգսն առընթեր Կարթագինեայ, փանամայ և Պուէնօսարեայ ամայութիւն է առաւել հանրական քան թէ յայն մասունսն Մէքսիքօի և փէրուայ, զորոց Սպանիացիք առեալ են զբացարձակ իմն տէրութի:

[illegible] Բայց բնակութիւնք Սպանիացւոց 'ի նոր աշխարհին ոչ հին թէպէտ և մահաբերք նախկին բնակչաց իւրոց արարեալ եղեն 'ի ժամանակին, յորում միաբանութիւն էր առաւել 'ի վիճակի շահաւորելոյ յայնմանէ. Այս միաւորութեն փոքրիկ թագաւորութեց իւրոց Սպանիա արդէն եղեալ էր հզօր

իմն

թեան տէրութեն, և իսկապէս հաւասարեալ այնպիսի մեծի իմիք ձեռնարկութեն. Միապետք իւր գոլով ընդարձակեալ զարտօնութի իւրեանց անդր քան զսահմանն, որք պարագրէին երբեմն զարքայական իշխանութի իւրեանց յամ տէրութիս Եւրոպիոյ, հազիւ ենթարկեալ էին ընդդիմադրութեն եթէ ՚ի յուշ առնելն և եթէ ՚ի կատարելն զառաջարկութիս իւրեանց. Յամենայն մեծ թագաւորութեն կերպ կառավարութեն պարտ է լինիլ պարզ և աւագութի ինքնակալին բացարձակ, մինչզի որոշմունք իւր կալեալ լինիցին յօժարամտութեի. և անցցեն ամ ուրեք նովին ուժգնութի. Այսպիսի էր կարողութին միապետացն Սպանիացւոց յորժամ կոչեցեալ եղեն ՚ի խորհրդածել շուրջ զեղանակաւ կառուցանելոյ զտէրութի իւրեանց ՚ի վր հեռաւորագոյն գաւառացն, որք ոչ երբէք ենթարկեալ էին նահապետութեն իմիք Եւրոպիոյ. Յայսմ խորհրդածութեն ոչ տեսան ենթադրեալ օրինական ամփոփման. և իբր բացարձակ դատաւորք նոյն իսկ որոշմանց իւրեանց կարօղ եղեն հրատարակել պարզ ներգործութի իւիք արտօնութեց իւրեանց զկարևոր հրովարտակս առ՚ի կանոնաւորել զկառավարութիւն նոր հարգունութեցն :

Այս միջնորդութի Սպանիական Թագաւորութեն վն կանոնաւորելոյ զկառավարութի և զտուրևառութի հարգունութեց իւրոց է մասնաւորութի իմն, որ տրոհէ զյառաջադիմութի նց ՚ի յառաջադիմութէ հարգունութեցն զինչևիցէ այլոյ ազգին Եւրոպացւոյ. Յորժամ փորթուկէզք, Անգլիացիք, և Գաղղիացիք ստացան զգաւառսն յԱմերիկա, զոր ունին այժմիկ, շահեկանութիքն, զորս խոստանային նոքա բերել, էին այնպէս հեռաւորք և անստոյգք, մինչզի մնացին այնք ընդ երկար ՚ի տղայութեն առանց ընդունելոյ զստացութի ինչ ՚ի հայրենեաց իւրեանց. Բայց սա-

Ընդ-
մէջ հաս-
ներն ար-
տայական
աւագու-
թեան :

կին և արծաթն, զոր գտին Սպանիացիք 'ի Նոր աշխարհին, էին առաւել յանկուցիչք. և առ ձգեցին անընդմիջաբար զուշադրութիւն միապետաց իւրեանց. Թէպէտ սոքա սակաւ օժանդակեցին առ գիւտն, և իբր ոչինչ առ ստացումն Նորոյ աշխարհին, սակայն փաղփաղակի գրաւեցին յանձինս զպաշտօն օրէնսդրաց իւրոց. և գոլով ստացեալ զտեսակ իմն տէրութեան յառաջագոյն անծանօթ՝ հնարաւորեցին զգաղափար իմն առ 'ի վարել զայն. յորում ոչ գտանի համանման 'ի պատմութեան մարդկային գործողութեանց:

Բռնական [illegible] իշխանութիւն և [illegible] 'ի կառավարութեանն:

Հիմնական սկիզբն Սպանիական իրաւագիտութեան վերահայեցմամբ Ամերիկոյ է նկատել զբոլոր ստացուածսն իբր առակցեալս ընդ թագին մանաւանդ քան թէ ընդ ակաստանին. Զօրութեամբ կոնդակի Աղեքսանդրու վեցերորդի, յորոյ վերայ հիմնէ զիրաւունս իւր Սպանիայն, բովանդակ երկիրքն, որք գտեալ էին, կամ էին գտանելի, շնորհեալ եղեն իբր ազատական պարգև Ֆերտինանտոսի և Եղիսաբեթի. Նոքա և յաջորդք իւրեանց միօրինակ համարեալ էին իբր ընդհանուր տեարք երկրաստանացն ստացելոց 'ի Նոր աշխարհին 'ի Սպանիական զինուց, 'ի նոցանէ ելանէին բովանդակ բաշխումք երկրաց և առ նոսա իսկ վերադառնային 'ի փոխճանի. Զօրավարքն, որք առաջնորդէին պէսպէս շահատակութեանց, բդեաշխքն, որք նախագահէին զանազան հարգունութեանց, պաշտօնատարք արդարութեան և սպասաւորք կրօնին էին ամենեքեան կարգեալք աւագութեամբ նոցա, և 'ի բաց շարժեալք ըստ հաճոյից իւրեանց. Հպատակքն, որք բաղկացուցանէին զառաջին հանգրուանսն, ոչ ընկալան զայլ արտօնութիւնս, բայց եթէ զորս հաճոյ եղև թագաւորութեան շնորհել նոցա առանց վնասելոյ աւագութեան իւրում. Արդարև յորժամ քաղաքք շինեալ եղեն և կանգնեալք 'ի մարմինս հասարակութեան քաղաքացիքն ունէին զհրաման ընտրելոյ զմեծաւորս իւրեանց և կառավարելոյ զինքեանս սեփական օրինօք իւրեանց. Նոյն և յառաւել՝ տիրական կացութիւնս այս տկար կայծակն ազատութեան ոչ է շիջեալ. Բայց 'ի քաղաքսն Սպանիական Ամերիկոյ այս իրաւաբանութիւն է լոկ քաղաքական և սահմանաւորի առ կանոնաւորութիւն տուրևառութեան նոցա և ներքին մատակարարութեան. Յայնմ ժամանակի, որ հայի առ հրապարակական կառավարութիւն և առ հանրական շահ, կամք արքային է օրէնք. Չիք անդ իշխանութիւն քաղաքական, որ ծանիցէ 'ի ժողովրդենէ զծագումն իւր. Բովանդակն հաւաքի իբր 'ի կեդրոնի 'ի թագաւորն և 'ի պաշտօնատարս 'ի նմանէ անուանեալս:

Յետ բովանդակելոյ տիրապետութեանցն Սպանիացւոց յԱմերիկա միապետք նոցա 'ի կերպաւորելն զգաղափար ներքին կառավարութեան նոր տէրութեանց իւրեանց բաժանեցին զայնս յերկուս մեծամեծ բդեշխութիւնս՝ մինն ենթադրեալ փոխարքային Նորոյն Սպանիոյ, և միւսն փոխարքային Փերուայ. Տարածանիւր իրաւաբանութիւն առաջնոյն 'ի վերայ ամենայն գաւառացն պատկանելոց Սպանիոյ 'ի հիւսիսային բաժանման շարունակին Ամերիկոյ. Ընդ իրաւաբանութեամբ վերջնոյն փաղառոցիւր այն ամենայն, զոր ստացեալ ունէր Սպանիա 'ի մէջ հարաւային Ամերիկոյ. Այս կարգադրութիւն, որ 'ի սկզբան անդ ընկերակցեալ լինէր 'ի բազմաց դժպատեհութեանց, եղև անհանդուրժելի յորժամ հեռաւոր գաւառք իւրաքանչիւր փոխարքայութեան սկսան բազմամարդանալ և քաղաքականանալ. Գանքարտային հպատակքն վասն լինելոյ ենթադրեալ վերնագունի միում, որոյ բնակութիւն էր այնպէս հեռի և այնպէս անմատչելի, մինչզի գրեթէ բառնայր 'ի նոցանէ զինչէիցէ հաղորդակցութիւն ընդ աթոռոյ կառավարութեան. Իշխանութիւն փոխարքայի 'ի վերայ նահանգացն անջատելոց այնպէս յաչաց իւրոց և 'ի դիտողութենէ իւրմէ էր անխորշելաբար տկար և

Բովանդակ նոր տէրութեան Սպանիոյ ենթադրեալ ընդ երկուց փոխարքայից :

ոչ բարւոք ուղղաւորեալ. Իսկ դեռ այսց ամաից 'ի ներկայ դարուս կառուցաւ այլ իմն փոխարքայութիւն 'ի Սանթաֆէ Պոկոթայի մայրաքաղաք Նորոյ Թագաւորութեանն Կրանատայ. որոյ իրաւաբանութիւն ընդգրկէ զբովանդակ Թագաւորութիւն ցամաքին և զգաւառն Քուիթօյի. Այս փոխարքայք ոչ միայն ներկայացուցանեն զանձն արքայի իւրեանց, այլ և ունին զարքայական արտօնութիւնս 'ի ներքս շրջապատի կառավարութեանց իւրեանց 'ի մեծագոյն տարածութիւն. Վարեն հաւասար նմա զգերագոյն հրամանատարութիւն յա̃մ բաժանման քաղաքական, զինուորական, և քրէական կառավարութեան. Կարօղեն նախագահ նստիլ յա̃մ ատենի. Ունին իրաւունս անուանելոյ առ ա̃մ պաշտօնս և զանձնօրէնութիւն առնելոյ զփոխանորդութիւն ն̃ց, որք անուանելի են յարքունի աւագութեան, մինչև եկեսցէ յաջորդն կարգեալ յարքայէն. Արտաքին հանդերձանքն համեմատի ընդարձակութեան իշխանութեան ն̃ց. Արքունիք նոցա կերպաւորեալ են ըստ տարազի արքունեացն Սպանիոյ՝ ձիաւոր և հետևակ պահապանօք, ազնուագոյն ևս բնակութիւ, յոգնաթիւ պաշտօնատարօք և արբանեկօք և նշանաւ հրամանատարութեան. որոյ մեծագործութիւն ոչ թողու երևիլ և ոչ իսկ ստուէր իմն փոխանորդական իրիք իշխանութեան:

Իշխանութիւն նոցա:

Այլ քանզի փոխարքայք ոչ կարեն լինել անձամբ զպաշտօնս գերիշխանութեանն յա̃մ մասին ընդարձակ իրաւաբանութեան իւրեանց, օժանդակեալ լինին 'ի կառավարութեան իւրեանց յայլոց պաշտօնատարաց և ատենից նմանեաց եղելոցն 'ի Սպանիա. Առաջնորդութիւն քաղաքական իրակութեանց 'ի պէսպէս գաւառս և 'ի նահանգս, յորս բաշխեալ են Սպանիական տէրութիւնքն յԱմերիկա, յանձնեալ է մեծաւորաց զանազան կարգաց և անուանց՝ եղելոց ոմանց յարքայէն և այլոց 'ի փոխարքայէն, բայց ամենեքեան ենթադրեալ են հրա-

Ատեան- [illegible]

հրամանի և իրաւաբանութեն խրում. Մատակարարութի արդարութեն կայ յատեանս անօճանելոյ՝ ունկնդրութեն, և կերպաւորելոյ 'ի մի գաղափարին արքունեաց ամենադպրութենն 'ի Սպանիա. Սոքա են թըւով մետասան. և տնօրինեն զարդարութի 'ի նոյնչափ նահանգս, յորս բաժանին Սպանիական տէրութիւնք յԱմերիկա։

(27) ‖ Սոքա կայունաւորեալ են 'ի հետագայ տեղիսն. 'Ի Սան Տօմինիկօ 'ի կղզւոջն Սպանիոլայի, 'ի Մէքսիքօ 'ի Նորն Սպանիա, 'ի Լիմա 'ի Փէրու, 'ի Փանամա 'ի հաստատուն երկրին, 'ի Սուրբն Յակոբ 'ի Կուաթիմալա, 'ի Կուատալաքսարա 'ի Նորն Կալիցիա, 'ի Սանթաֆէ 'ի Նոր Թագաւորութեն Կրանաթայ, 'ի Լափլաթայ յերկրին Տիլօս Քահարքաս, 'ի Սան Ֆրանչէսքօ Քուիթօի, 'ի Սան Եակօ Քհիլեայ, և Պուէնօս Այրեայ. Իւրաքանչիւրում 'ի սոցանէ ենթարկեալ են զանազան ընդարձակ գաւառք. և ոմանք այնպէս հեռաւորք 'ի քաղաքացն, ուր ատեանք կառուցեալ են, մինչզի հանեն զզոյզն ինչ բարութիւն յիրաւաբանութեն իւրեանց. Պատմագիրք Սպանիացւոց թըւեն հասարակաբար երկոտասան ատեանս ունկնդրութեն, բայց փակեն 'ի նմա զատեանն Մանիլայի 'ի Ֆիլիփփեան կղզիսն։ ‖ Թիւ դատաւորացն այլայլի ըստ ընդարձակութեն և ըստ ծանրակշռութեն իրաւաբանութեն իւրեանց. Տեղի դատաւորին 'ի յատեանն ունկնդրութեն ոչ է նուազ պատուաւոր քան թէ շահաւէտ և սովորաբար ծածկեալ է յընդունակ և յարգիւնաւոր անձանց. որ փոխարէ զայս ատեան ակնածելի ցմեծագոյն աստիճան. Քաղաքական և քրէական դատք գան 'ի ներքոյ ճանաչման նց և մի իւրաքանչիւր 'ի նոցանէ են ուրոյն դատաւորք։

Թէպէտ միայն յառաւել տիրական կառավարութիս [illegible] վարէ ինքնակալն անձամբ զահարկու արտօնութիս [illegible] մատակարարելոյ զարդարութի առ հպատակս իւր, նոյն։

թէպէտ յարձակելն և 'ի դատապարտելն ոչ հայիցի յայլ օրէնս, բայց եթէ յայն, որ կայ աւանդեալ 'ի ներքս սեպհական սրտի իւրոյ. թէպէտ յո՟մ միաբանութիւն Եւրոպիոյ դատաւորական իշխանութիւնս յանձնեալ է աւագանւոյն, որոյ որոշմունք կանոնաւորեալ են յօրինաց ծանուցելոց և 'ի կերպից հաստատելոց, սակայն փոխարքայք Սպանիացւոց ջանացան ստէպ մխիլ յաթոռ արդարութ՟ե. և փառամոլ իմն հոգւով, զոր հեռաւորութ՟ի ն՟ց 'ի հրամանէ վերնագունի փոխարքէր առաւել համարձակ, ձգտեցան առ այն իշխանութիւն, զոր ինքնակալ ն՟ց ոչ համարձակի առնուլ յինքն. Առ'ի խափանել զբռնաբարութ՟ի իմն, որ չքացուցե՟լ էր զարդարութ՟ին միանգամայն և զապահովութ՟ի հարգունութ՟ենցն Սպանիացւոց ենթարկելով զկեանս և զստացուածս ամենեցուն կամաց միմիայն մարդոյ՝ արգելեալ եղև փոխարքայից յայտնագոյն եղերօք և կրկնեալ վճռովք չխառնակիլ 'ի դատաստանական փուշիշս ատենից ունկնդրութ՟ե, կամ չարտասանել զկարծիս 'ի վճ՟ վճռողական գլխոցն. 'Ի դիպուածս ինչ մասնաւորս, յորս բան լինի զխնդրոյ իմէք քաղաքական իրաւանց, ևս և քաղաքական կանոնաւորութիք Փոխարքային կարեն անկանիլ ընդ քննութ՟ե ատենի ունկնդրութ՟ենն որ 'ի նմանակ պարակայս նկատի իբր իշխանութ՟ի միջասահման 'ի մէջ ն՟ր և ժողովրդեան և իբր ցանկ իմն սահմանադրական, որ պարագրէ զիրաւարանութ՟ի իւր. Բայց օրինական ամփոփմունք նկատմամբ անձին միոյ, որ ներկայացուցանէ զինքնակալն, և է զգեցեալ զաւագութ՟ի ն՟ր, ոչ բարւոք յարմարին ընդ ոգւոյ Սպանիական կառավարութ՟ե. և վ՟նկ արքունիքն ծայրագոյնս շրջահայեաց է 'ի կարողութիւն, զորս շնորհէ ատենի ունկնդրութ՟ենն. Կարողեն դատաւորքն ազդել, կարողեն բողոքել. բայց 'ի դիպուածի ուղղակի հակառակութ՟են իւիք 'ի մէջ կարծեաց նց̃ և կամաց փոխարքային՝ զոր ինչ բացորոշէ նա, այն պարտի կատարիլ. և նց̃ ոչ այլ ինչ մնայ, բայց եթէ ուղղել առ արքայն և առ խորհրդարանն Հնդկաց. Բայց լինիլն աւագացուցեալ 'ի բողոքել և 'ի տեղեկացուցանել ընդդէմ անձին միոյ, որոյ յանդիման այլք ամենեքեան պարտին կալ 'ի լռութե̃ն և ենթարկիլ մնջիկ վճռոց իւրոց, է արտօնութի̃ իմն, որ ատենից ունկնդրութե̃ աճեցուցանէ զարժանաւորութիւն, որ մեծացուցեալ է առաւել ևս յայլմէ պարագայէ իմեքէ. 'Ի մահուան փոխարքայի յառաջքան զանուանելն յաջորդի միոյ յարքայէն անցանէ գերագոյն իշխանութիւն առ ատեանն ունկնդրութե̃ եղելոյ 'ի մայրաքաղաքին փոխարքայութե̃. և ծերագոյն դատաւորն ընթերակայեալ յընկերաց իւրոց վարէ զնմ̃ պաշտօնս փոխարքային ընդ ժամանակն, յորում տևէ դատարկութի̃ պաշտօնին. Ատեանք ունկնդրութե̃, որք և ատեանք արդարութե̃ դատեն 'ի վերջին վճռեցման յամ̃ դիպուածս, յորում գումարն ոչ առաւելու քան զվեց հազար մարչիլս. բայց յորժամ զանցանէ ապա մարթ է բողոքել զվճռոց նց̃ առ արքունի խորհրդարանն Հնդկաց:

Յայսմ խորհրդարանի, որ է մի յառաւել երևելեաց միապետութե̃ն վն̃ արժանաւորութե̃ն և վն̃ կարողութե̃ն կայ գերագոյն կառավարութիւն բովանդակ տէրութե̃ցն Սպանիացւոց յԱմերիկա. Կառուցեալ եղև նախկնարար 'ի Ֆերտինանտոսէ յամին 1511. և ապա վերածեալ առ կատարելագոյն ինն կերպարան 'ի Կարոլոսէ Հինգերորդէ յամին 1524. Իրաւաբանութի̃ իւր տարածանի առ ամ̃ բաժանումն եկեղեցական, քաղաքական, զինուորական, և տուրևառական. 'Ի նմանէ բղխեն ամ̃ օրէնք և կարգաւորութիւնք վերաբերականք առ կառավարութի̃ և առ քաղաքավարութի̃ հարգունութե̃ցն և պարտին հաստատիլ յերկուց երրոր-

Խորհրդարանն Հնդկաց:

Իշխանութի̃ իւր:

դաց անդամոցն յառաջքան զՀրատարակիլն յանուն Թագաւորին. Ամենայն պաշտօնք, որոց անուանումն վերապահեալ է Թագաւորութեան, ընձեռի յայսմ խորհրդեան. Նմին պարաւանդեալ է տալ պատասխանի ամ անձն պաշտօնաւոր յԱմերիկա 'ի փոխարքայէն 'ի խոնարհ. Սա քննէ զգնացս նր վարձատրէ զծառայութիւս նր և տայ զարժանաՀաս պատիժս յանցաւորութեանց նր. Առնու զճանաչումն որչափ ինչ պատահի յԱմերիկա. և ամ առաջարկութի վերաբերական առ մատակարարութի, առ քաղաքավարութի, և առ տուրևառութի Հարգունութեանցն ենթադրեալ է զննութեան իւրում. Ընդ սմին յառաջին կառուցմանէ խորհրդարանին Հնդկաց լեալ է Հաստատուն առարկայ իմն կաթուղիկեայ միապետացն պաՀելն զաւագութի նորա և առնել ընդ ժամանակս ժմկս յաւելուածս այնպիսիս 'ի վր իշխանութեան և շքոյ իւրոյ, մինչև փոխատրել զայն աՀարկու ամ Հպատակաց իւրոց 'ի նոր աշխարհին. Զինչ և իցէ մնացուած Հրապարական կարգի և առաքինութեան, որ մնայ տակաւին յայնմ աշխարհի, ուր այնքան պարագայք միարանին 'ի վրդովել զառաջինն և յապականել զերկրորդն, կարէ մեծագոյն մասամբ վերագրել Հանճարեղ կանոնաւորութեանց և արթուն դիտողութեն այսր ակնածելի ատենի:

Տուն Կոնտրատասիոնէ: Եւ քանզի Թագաւորն ենթադրեալ է գտանիլ միշտ ներկայ 'ի խորհրդեանն Հնդկաց, ժողովք իւր լինին 'ի տեղւոջն, ուր վերանստի նա. Այլ իմն ատեան կանգնեալ է վն կանոնաւորելոյ զտուրևառական իրակութիւն զայնոսիկ որք պաՀանջեն զանընդմիջական և զանձնական դիտողութի կարգելոցն 'ի վերատեսչութի. Այս կոչի Տուն Կոնտրատասիոնէ կամ [illegible] վաճառականութեն. և Հաստատեալ եղև 'ի Սիվիլիա. առ որոյ նաւաՀանգիստ սաՀմանաւորեալ էր շաՀավաճառութին Նորոյ աշխարխարհին 'ի 1501 ամէ հետէ. Կարէ նկատիլ կամ Պաշ- իբր՞ խորհրդարան վաճառականութեան, կամ իբր տօնէ ատեան արդարութեան. Յառաջին հանգամանս առ էր: նու զտեղեկութիւն ամ̃ի որ ինչ միանգամ վերաբերի առ պատասխանակցութիւն Սպանիոյ ընդ Ամերիկոյ. կանոնաւորէ, թէ որպիսի տարազք պարտ իցեն փոխաբերել անդր. և ունի զդիտողութիւն այնց, որք ընկալեալ լինին փոխանակ. որոշէ զչափս նաւահանգստից ընդ արևմտեան Հնդիկս, զվարձու, զբեռանէ նաւուցն, զհանդերձանաց նց̃, և զնպաստակէ. 'Ի միւս հանգամանսն դատի զամ̃ քաղաքական և քրէական խնդրոյ վերաբերեցելոյ առ տուրևառութիւն Սպանիոյ ընդ Ամերիկոյ. և յերկոսեան բաժանմունս յայսոսիկ որոշմունք իւր վերջք են 'ի քննութէ որոյ և իցէ այլոյ ատենի, թող զատեանն Հնդկաց:

Այսպիսի է գաղափարն այնր կարգի կառավարութեան, զոր Սպանիա հաստատեալ է յիւր հարգունութիւն Ամերիկոյ. Թուելն զպէսպէս խորհրդարանս ստորակարգեալս և զպաշտօնատարս պարապեցուցեալս 'ի մատակարարութէ արդարութեան, 'ի թափել զհրապարակական մուտսն, 'ի կանոնաւորել զներքին քաղաքավարութիւն աշխարհին, և ստորագրելն զտարբեր պաշտօնս նց̃, զեղանակն, և զարդիւնս գործողութեանց նց̃ կերպաւորէր զպատմութիւն իմն ոչինչ ընդհատ մանուածոյ քան թէ մանրամասն և անհաճոյ:

Առաջին առարկայն միապետացն Սպանիացւոց է Առաջև ապահովացուցանելն տէրութեան զբերսն, հարջէն ագունութեանց արտաքսմամբ օտար ազգացն. Առինստերկոյն զատուցում Ամերիկոյ իրաւամբք տիրապետութեան. տողահո և խնլամտեալք զօգտութէ առաւելոց կայունաւորութեանց իւրեանց, և իրագեկ եղեալք ըմբռնահել րութէ հաստատելոյ զտէրութիւն 'ի վ̃ յն այնպիսի ընդարձակ կողմանց, կ՚ապահելոյ ընդ լծով զայն քան տմգոհ ժողովրդոց՝ երկեան 'ի յարձակմանէ ճառոյն:

նէ արտաքնոցն . ոչ վստահացան 'ի հսկողութի՟ իւրեանց . և նմին իրի ջանացան ունել զնն՟ հեռի 'ի ծովեզերաց իւրեանց . Հոգին նախանձաւորութե՟ և արտափակութե՟ , որ 'ի սկզբան անդ էր բնական և գուցէ ևս կարևոր , աճեաց յետոյ ըստ չափուն , որով ընդարձակէին յառաջադիմութիւք նց՟ յԱմերիկա . և ճանաչիւր լիագոյնս յարգ նց՟ . 'Ի հետևութէ՟ այսորիկ մուծեալ եղև ոճ իմն տնկելոյ զհարգունութի՟ս . որում չէք լեալ մինչև ցայժմ նմանակ ինչ . 'Ի նախկին աշխարհին ոչ էր անսովոր ինչ առաքելն զկողոնիայս . բայց այսոքիկ էին միայն երկու ցեղք , կամ տեղափոխութիւք , որք ծառայէին առ 'ի թեթևացուցանել զտէրութի՟ իմն յաւելորդ հպատակաց իւրոց յորժամ բազմանային կարի արագ ընդ երկրաստանն կալեալ 'ի նոցանէ , կամ հատուածք զինուորականք եդեալք իբր պահապանք 'ի տիրապետեալ իմիք գաւառի . Հարգունութիւք ոմանց Յունական հասարակապետութեանց և ջոկք հիւսիսային բարբարոսաց , որք տեղակալեցին զզանազան մասունս Եւրոպիոյ էին յառաջնոյ տեսակէ և հարգունութիւքն Հռոմայեցւոց՝ յերկրորդէն . Յառաջինսն կապակցութիւն հայրենեաց դադարեաց երագ երագ . և եղեն գաւառք անկախք . 'Ի վերջինսն ոչ գոլով լրացեալ անջատումն շարունակեաց կախումն . յԱմերիկեան կայունուրդսն միապետք Սպանիացւոց առին որինչ էր մասնաւոր իւրաքանչիւրումն . և խնդրեցին վերստին միաւորել զայնս . Առաքելով զհարգունութիս յայնպիսի հեռաւոր կողմանս , և մուծանելով յամենեսեան զմի կերպ ներքին քաղաքավարութեան և մատակարարութե՟ ընդ զանազան բդեշխիւք և մասնաւոր օրինօք՝ զատուցին զնն՟ 'ի մայր երկրէ իւրեանց . Պահելով 'ի ձեռս իւրեանց զիրաւունս օրէնսդրութե՟ և դնելոյ 'ի վր՟ զսակս 'ի միասին ընդ կարողութեան անուանելոյ զանձինսն , որք վարէին զքաղաքա-

Սպանիա
տորութե՟
ատ այս
փոփոխման:

կան կամ զինուորական պաշտօնս, ապահովացուցանէին զկախումն նոցա. Առ բարեբաղդութեան Սպանիոյ կայսերութեան հաստատութեանց իւրոց էր այնպիսի, զի կարէր վերածել 'ի գործ գաղափար իմն այնքան նոր. Գրեթէ բովանդակ երկիրքն, զորս եգիտ նա և կալաւ, գտանին 'ի ներքս արևադարձիցն. Բերք այնր ընդարձակ բաժնի երկրագնտոյս, են տարբերք 'ի տեղեացն Եւրոպիոյ, ևս և 'ի տեղեացն առաւել հարաւային գաւառաց իւրոց. Որակութիւնք Կլիմային և գետնոյն ընծայեն բնականաբար զերկուս առարկայս նոցա, որք կայունանան անդէն. Յորժամ Սպանիացիք ստացան զտէրութիւնս իւրեանց յԱմերիկա, մեծագին հրահալելիքն գոյացեալք անդէն էին միայն առարկայ, որ առձգէր զուշադրութիւն նոցա. Այլ և յորժամ ջանք նոցա սկսան առնուլ զբարեգոյն ուղղաւորութիւն ետուն զանձինս իբր բոլորովին 'ի հաւաքել զբերսն մասնաւորս Կլիմային, որք վասն ցանցառութեան և վասն գնոյ իւրեանց էին առաւել ցանկալիք 'ի հայրենիս իւրեանց. Յորդորեալք 'ի յուսոյ անընդմիջական փարթամութեան անարժան համարէին 'ի գործածել զճարտարութիւն իւրեանց յայն, որ էր նուազ շահաւէտ, թէպէտև առաւել ծանրակշիռ. Առ 'ի առնել անկարելի զուղղութիւն այսր մոլորութեան, և առ 'ի խափանել նոցա չառնել զթևակոխութիւնս, որք կարէին վնասել շահեկանութեան Սպանիոյ, արգելեալ եղեն ընդ խիստ պատժով 'ի հաստատութիւն կառուցմանց զանազան տեսակաց ձեռագործաց և մշակութիւն ևս և որթոց և ձիթենեաց։

(28) ‖ Պատճառաւ տարակացութեան Փերուայ և Չիլեայ 'ի Սպանիոյ և դժուարութեան տանելոյ զտարազս մեծազանգուածս, որպէս զգինի և զձէթ ընդ ցամաքալեզուն Փանամայու, Սպանիացիք յայն գաւառսն ընկալան զթոյլտուութիւն տնկելոյ զորթս և զձիթենիս. բայց պնդագոյնս արգե-

գելեալ է նոցա փոխաբերել զգինի կամ զձէթ 'ի փանամա, 'ի Կուաթիմալա, կամ յայլ գաւառ այնպէս կոյաւորեալ, մինչև կարող լինել ընդունել զայնս 'ի Սպանիոյ: ‖

Պարտին ողջոյն՝ կախել 'ի մայր երկրէ իւրեանց վն առարկայից նախկինաբար կարևորաց. Հանդերձք նոցա, կահք նց, գործիք արուեստին, իրքն շռայլութե, և ևս դարմանքն, զորս ծախեն նոքա, երթան անդր 'ի Սպանիոյ. Ընդ մեծ ինչ մասն վերջատասներորդ հարիւրեկին ունելով Սպանիա զտարածեալ իւր շահավաճառութի և զծաղկեալ ձեռագործս կարող եղև դիւրակի լնուլ վաճառօք իւրովք զանձեցեալ պէտս հարգունութենց իւրոց. և փոխանակ այսորիկ ընդունէր զբերս տընկագործութենց և հանգաց. Բայց այն ժամ, զոր ընդգունէին հարգունութիւնքն, որպէս և այն բովանդակ, զոր նոքա տային, յուղարկաւորիւր 'ի վն նաւուց Սպանիացւոց. Ոչ իմիք նաւու պատկանեցելոյ հարգունութենց թողացուցանիւր փոխաբերել զտարազս Ամերիկոյ յԵւրոպիա. Նաև վաճառականական հաղորդութիւն 'ի մէջ միոյ հարգունութե և միւսոյ էր, կամ բացարձակ արգելեալ՝ կամ կոպարաւորեալ 'ի բազմաց նախանձաւոր բացառութենց. Այն ժամ, զոր յառաջածէ Ամերիկա, հասի 'ի նաւահանգիստն Սպանիոյ. և այն ժամ, զոր ծախէ նա, պարտի ելանել 'ի նոյն նաւահանգստից. Ոչ ոք օտար կարէ մտանել 'ի մի 'ի հարգունութենց իւրոց առանց բացայայտ հրամանի. և պատիժք մահու միաւորին ընդ յարքունիս առման վաճառացն ծանուցեալ են ումեիցէ բնակչի, որ ժպրհիցի տուրևառիկ լինել ընդ նս. Այսպէս հարգունութիւնքն կալեալ են 'ի մշտնջենաւոր իմն որբական վիճակի. և ներածութի այսր շահավաճառական կախման, զորոյ Սպանիա եա զառաջին օրինակն ազգաց Եւրոպացւոց, պահեցաւ վերինագունութի մայր հայրենեացն 'ի վր հաստատութեանց իւրոց ընդ երկուս հարիւրեակս և կէս :

Այսպիսի են գլխաւոր սկզբունք. առ որս երևին մտադրեալ միաբանք Սպանիացւոց 'ի կերպաւորել զնոր կայանուրդս իւրեանց յԱմերիկա. Բայց ոչ կարողացան տևել նովին արագութբ, որով եղծեալ էին. և վասն բազմաց պատճառաց եղև յամրել յառաջադիմութնց 'ի լնուլն զանբաւ դատարկութիւն պատճառեալ յաղարտմանց նց. Իսկոյն իբրև մոլեգնութիւն երկրագտութեան սկսաւ նուաղիլ՝ Սպանիացիք բացին զաչս առ վտանգսն և առ դժպատեհութիւնս, զորս 'ի սկզբան անդ ոչ էին ծանուցեալ կամ արհամարհեալ էին. Անհամար տարժանմունքն, ընդ որոց անդամք դեռաբողբոջ հաստատութեանց ունին մարտնչել, հիւանդութիւնք անառողջարար կլիմայից այնպէս մահաբերք խառնուածոյ Եւրոպացւոց, դժուարութիւն վերածելոյ 'ի մշակութիւն զերկիր իմն ծածկեալ անտառօք, պակասութիւն բազկաց կարևորաց վն աշխատութեան 'ի գաւառս ինչ, և անագան վարձ ճարտարութեան յամենայն տեղիս են, թող զայն, ուր պատահական գիւտ հանքաց փարթամացուցանէր զսակաւ բարեբախտ բաղդորդս, էին չարիք ընդհանրապէս զգացեալք և մեծացուցեալք. Ոգին տեղափոխութեան վհատեալ յայսպիսի տեսութեանց այնչափ յամրացաւ, մինչզի վաթսուն ամօք զկնի գտման նորոյ աշխարհին թիւ Սպանիացւոց 'ի բովանդակ գաւառս իւր համարեցաւ միայն մինչև ցհնգետասան հազարս :

Դան-
դաղ յա-
ռաջադի-
մութեան
բազմա-
մարդու-
թեան 'ի
կողմանէ
Եւրո-
պիոյ:

(29) ‖ Այս հաշիւ արարեալ եղև 'ի Պէնծօնեայ յամին 1550, այս է յիսուն և ութն ամօք զկնի գտման Ամերիկոյ. Բայց որովհետև Պէնծօնի գրեաց հոգւով տժգոհի ուրուք պատրաստելոյ 'ի թշնամանել զՍպանիացիս յամ մասնաւորութեան, կարէ լինել, թէ հաշիւ իւր իցէ կարի ցածուն : ‖

Վատա
[illegible]
'ի վէճա-
նէ յառա-
ջութէն :

Նշանակն, որով բաշխեալ լինէր յատկութիւն 'ի Սպանիական հարգունութիւն, և կանոնն հաստատեալ նկատմամբ փոխանցելոյ զայն, կամ սերնդեամբ կամ վաճառմամբ էին տարապայման ներհակ բազմամարդութեն. Յորժամ կամք իցեն յառաջ շարժել երագապէս զբազմացումն ժողովրդեան 'ի նորոգ իմն կայունաւորութեն, պիտոյ է զի յատկութի գետնոյ իցէ բաժանեալ 'ի փոքրիկ մասունս, և զի լինիցին դիւրահեշտք օտարացուցմունքն. Բայց ագահութիւն տիրապետողաց Սպանիացւոց 'ի նոր աշխարհին ոչ ունէր զդոյզն նըկատումն առ այս հիմնական սկիզբն քաղաքավարութեն. և զի ունէին 'ի ձեռին զիշխանութիւն, որ դնէր գին յաստիճանի յագեցուցանելոյ զմեծագոյն զառանցութիս ցանկութեց իւրեանց, բաջումք 'ի նոցանէ տիրանային նահանգաց և գաւառաց յընդարձակ տարածելոց և կանգնէին զայնս 'ի Մայօրազգոս. Ստանային յառաջ երթալով զարտօնութի փոխարկելոյ զբաժին ինչ նր 'ի Մայօրազգ տեսակ փետի մուծեալ 'ի Սպանիական օրինադրութեն 'ի փետական իրաւագիտութէ, որ ոչ կարէ ոչ բաժանիլ և ոչ օտարացուցանիլ. Այսպէս մեծ իմն քանակութի գետնոյ ը̃ այսոսիկ խիստ կերպարանաւ հաւատաւանդի ոչ երթայ երբէք 'ի շրջանակութեն. և իջանէ 'ի հօրէ յորդի ոչինչ բնաւ բարեգունացեալ և հետևաբար անպիտան յատակ տն և հասարակութեն. 'Ի պատմութեն, զոր ետու զանձնատուութէ Փէրուայ, ընդառաջ եղանեն պէսպէս օրինակք անբաւ տարածութեց երկրի տեղակալելոց յոմանց 'ի տիրապետողաց. Էին նմանք այսոցիկ անկարգութիք այլոց գաւառաց, որովհետև արժողութի երկրացն, զորս ստանային, գոլով զառաջինն դատեալ 'ի թըշոյ Հնդկաց, որք էին անդ, Ամերիկա ընդհանրապէս էր այնպէս սակաւամարդ, մինչզի միայն 'ի նահանգս մեծի ընդարձակութե գտանիւր բաւական իմն թիւ աշխատաւորաց 'ի գործ՝ հանգոյց ակնկալութիւն իւիք շահու. Սնասակար արդիւնք այսց արմատական մոլորութեանց 'ի բաշխման երկրաց և 'ի բնութեան յատկութեանց 'ի Սպանիական կայունաւորութիւն զգացեալ լինին կենդանաբար յամ՛ ճիւղոյ ճարտարութեան. և կարեն նկատիլ իբր պատճառք յամրագոյն յառաջադիմութեան 'ի բազմամարդութեան քան զոր 'ի լաւագոյն կառավարեալ հարգունութիւն :

(30) ‖ Ծանօթութիւնք իմ նկատմամբ բաժանման և օտարացուցման յատկութեան 'ի Սպանիական հարգունութիւնս են յոյժ անկատարք. Հեղինակք Սպանիացւոց ոչ բարւոք մեկնեն յայսպիսի պէտս. և թերևս ոչ են ուշ եդեալ ըստ բաւականին արտադրութեանց կարգաւորութեանց օրինաց նց. Սօլօրծան մեկնէ կերպիւ իւիք զներածութիւն անուան Մայօրազքոյ. և յառաջբերէ ինչ ինչ 'ի գործոց իւրոց. Սխլասեկնօր նըշմարէ զիզական հետևութիւն իմն նորին. այս է, զի ոմանք 'ի լաւագոյն թաղից քաղաքին Մէսսիքօի են անընակք ծածկեալք յաւերակաց տանց երբեմն կանգնելոց անդէն. և յաւելու, թէ այս գետին կալեալ իրաւամբք Մայօրազւոյ ոչ կարէ օտարացուցանիլ. որպէս թէ իցէ դիտաւորութեան մշտնջենաւորելոյ զաւերակսն զայնոսիկ:

Արժէ յաւելուլ 'ի վերայ այսր ամենայնի, թէ Լո 'ի
նաև բազմածախ շինուած եկեղեցական կայունըր- ԲՆԱԲՆԷ
դից նոցա լեալ է ծանրութիւն իմն վս Սպանիա- ԵԿԵՂԵՑԱ
կան հարգունութեանցն. որ մեծապէս յամեցոյց զյա- ԿԱՆ ԿԱ-
ռաջադիմութիւն բազմամարդութեան և ճարտարութեան. ՌԱՋԱ-
Տասանորդն է հարկ իմն ծանր 'ի վր ճարտարու- ԲԱՆՆԷ
թեան, որ լինի անհանդուրժելի և կործանիչ նց:
յորժամ քաղաքական աւագոյթն ոչ ունի զհոգ
կանոնաւորելոյ զվճարումն նր. Բայց փոխանակ
դնելոյ զկոպար իմն պահանջմանց եկեղեցականաց,
կրօնական նախանձն Սպանիացւոց օրէնսդրաց ըն-

կալաւ զայնս յԱմերիկա 'ի բովանդակ տարածութեան իւրեանց. և եդ 'ի վր̃ դեռածին մշակութեցն բովանդակ միանգամայն զբեռն իմն մաշաբեր ևս և առաւել ծաղկել̃ ընկերութ̃ն. 'Ի 1501 ամաց հետէ վճարումն տասանորդաց սահմանադրեցաւ հարգունութենց. կանոնաւորեցաւ կարգադրութին ճանապարհաւ օրինաց. և ենթադրեալ եղեն այսմ առելի հարկապահանջութեն յօդուածք 'նախկին կարեաց. յորս պատողին բնականաբար նոր մշակք. Բայց ժամանք եկեղեցական վիճակին ոչ սահմանաւորեցան առ յօդուածս պարզ մշակութեն. Ենթադրեալ եղեն ևս առաւել աշխատալի բերքն, շաքարն, լեղակն, և որդան կարմիրն. և այսպէս ճարտարութի մշակողացն սակադրեցաւ 'ի պէսպէս շրջանս զարգացմանց իւրոց յառաջնոց ձեռնարկութենց իւրոց մինչև ցմեծագոյն գերազանցութի իւր. Առ այս օրինական ծանրութի, պաշտօնասիրութի Սպանիացւոց յաւել 'ի վր̃ զայլ իմն բնաւին կամայական. այս է, զվարդարանս և զաղօթքին շուք եկեղեցեաց նց. Արարին նոցին և մենաստանացն յոյժ հարուստ ընծայս, զորս կարողացեալ էին օգտակարագոյնս յարգել 'ի բարեգունացուցման հարգունութեանց նոցա:

Պէսպէս ջորդու-ւորանէ Բնակչաց 'ի նշանակնա : Կողմանքն Ամերիկոյ են այնպէս բերրիք, և յանկուցանեն այնքան, մինչզի հանդերձ ամ̃ պարակայիւքն, որք յամեցուցեալ են զբազմամարդութիւն, անզգալաբար աճեցեալ է և լցեալ զհարգունութիւն Սպանիոյ պէսպէս ցեղ քաղաքացւովք. 'Ի մէջ նոցա Սպանիացիքն, որք գան յԵւրոպիոյ զանազանեալք անուամբ ·Չափէթոնայ` են նախապետականքն աստիճանաւ և կարողութ̃. Սոյն նախանձաւոր մտադրութեն արքունեացն Սպանիոյ առ'ի ապահովացուցանել զկախումն հարգունութենցն, ամ̃ բաժանումն ծանրակշիռ ունի զանձինս առաքեալս անդր յԵւրոպիոյ և առ'ի ապահովանալ 'ի վ̃ր հաւատարմութեան նց̃ պարաւանդեալ են յառաջբերել զհաւաստիս ինչ յայտնի ներընդեան'ի տոհմէ հին քրիստոնէից ոչ արատաւորեալ 'ի խառնակութէ իմեքէ հրէական կամ մահմետական արեան և ոչ երբէք անպատուեալ 'ի կշտամբանաց ինչ սրբոյ Քննութեն. Նոյնպիսի մաքուր ձեռս հաւատան աւանդեալ ապահովարար զիշխանութիւն. և ա̃մ հրապարակական պաշտօն 'ի փոխարքայէն 'ի վայր վստահացեալ է յայսոսիկ անձինս և եթ. Իւրաքանչիւրոք, յորում վասն տոհմին իւրոյ և վս̃ բնակութեն յԱմերիկա կարէ անկանիլ կասկած բծի իւիք կամ առանձին շահու հակադրեցելոյ շահուն Սպանիոյ մ̃այ արտաքսեալ 'ի պաշտօնից մտերմութեն և աւագութեն. Ս̃ այսր առաւել սիրոյ արքունեացն Քափէթօնքն ունին զգերակայութի իմ̃ այնպէս տրոհեալ յԱմերիկա, մինչզի հային արհամարհանօք յինչևիցէ այլ կարգ մարդկան:

(31) ‖ Ուշգոյ օրէնք, որ արտաքսեսցէ զՔրէօլէսս'ի քաղաքական կամ եկեղեցական պաշտօնից. Ընդ հակառակս են բազում մասնաւոր տումարք, որք կարգաւորեն ընձեռել զայնս անխտիր ազգայնոցն Սպանիոյ և Ամերիկոյ. Այլ ոչինչ օգտելով այսոց յաճախ յանձնարարութեց ընտրքն ընձեռեալ են Սպանիացւոց. Ֆիկուէրօս հեղինակն առաջի մատուցանէ զհաւաստիս ինչ արժանի գիտողութեն. 'Ի գիւտոյ Ամերիկոյ մինչև ցամ̃ 1637. երեք հարիւր վաթսուն և ինն Եպիսկոպոսունք կամ Արքեպիսկոպոսունք կարգեալ են 'ի զանազան թեմս յայնմ աշխարհին և 'ի բովանդակ յայսմ թըւոյ երկոտասանք միայն եղեն Քրէօլէսք: ‖

Անիք և վիճակ Քրէօլէսաց, կամ ներելոց յԵւ- Քրէօ- րոպացւոց բնակացելոց յԱմերիկա երկրորդ դա. [illegible] սու հպատակաց 'ի Սպանիական մշակյթս լեալ [illegible]: են պատճառ, զի Քափէթօնք տուացեալ են զայլ

շա-

շահեկանութիւս ոչինչ նուազ երեւելիս քան զայնս, զորս հանեն յառանձին շնորհաց կառավարութեան. Թէպէտ ոմանք 'ի Քրէօլեան զարմէ յառաջեկեալ են 'ի տիրապետողացն Նորոյ աշխարհին, և այլք կարօղեն առնուլ զազգաբանական ճիւղագրութիւն յազնուազգոյն տոհմիցն Սպանիոյ, Թէպէտ բազումք ստացեալ ունին զընդարձակ կալուածս, սակայն ոչինչ ընդհատ կամ վասն տկարացուցիչ ներգործութեան տապագին Կլիմայի իրիք. կամ վասն խստութեան նախանձոտ կառավարութեան, կամ վասն յուսահատութեան ոչ կարելոյ ժամանել առ երեւելի պատիւս, առ որս ամ մարդիկ ձկտին բնական ըղձիւ, արգասաւորութի մտաց նց է այնպէս ջլատեալ, մինչգի մեծագոյն մասն նց վատնեն զժամանակն 'ի զեղխական հեշտութիւս և 'ի գործս անմտագոյն կրօնամոլութեն. Ծմեղկեալք և յուլացեալք ունին այնպէս 'ի սոսկումն զայն ամ, որ պահանջէ զաշխատութիւն հոգւոյ կմ մարմնոյ, մինչ զի 'ի բաց խորշին յամ ցեղ տուրեւառութէ. Քափեթօնք շահավաճառ լինին 'ի ներքս աշխարհին ընդ մերձակայ գաւառացն և ընդ Սպանիոյ. և կեան յընչաւէտութեն, մինչ Քրէօլէսք թօշնին 'ի դատարկութեն. և շատանեան մոլիքն, որք թողեալ են նոցա 'ի հարց իւրեանց:

Տարբերութէ 'ի մէջ սոցա: Ած այսր յարակայ նախանձաւորութեն կարօղութեան, և փարթամութեն 'ի մէջ այսց երկուց կարգաց քաղաքացւոց և մն պէսպէս կրից զարթուցելոց յայնմանէ ատելութի նց է բուռն և անհաշտելի. Ցուցանին յամ առթի նշանք այսր ոխերիմութեն. և սովորական անուանքն, զորս տան միմեանց փոխադարձաբար, նշանակեն զառաւել արմատացեալ հակակրութի ազգայնոց. Արքունիքն Սպանիոյ նրբութե իւրք քաղաքականութեն տածէ զայսոսիկ սերմանս երկպառակութեն. և զայս փոխադարձ նախանձաւորութի, որ ոչ միայն խա-

խափանէ երկուց հզօրագոյն դասուց իւրոց հպատակաց 'ի Նոր աշխարհին զմիաբանիլն ընդդէմ տէրութեանն, այլ և բերէ զնս 'ի գիտել փոփոխակի զիրեարս ամ կարելի հսկողութբ:

Երրորդ դասն բնակչաց 'ի հարգունութեան Սպա- Զարմ նիոյ է զարմն ինչ խառնեալ՝ ածանցեալ կամ՝ ինչ [illegible] յԵւրոպացւոյ միոջէ և 'ի խափշկուհւոյ միոջէ, [illegible] կամ 'ի միոյ Եւրոպացւոյ և 'ի միոյ Հնդկուհւոյ. [illegible] առաջինքն կոչեցեալք ՄՈՒԼԱՏՏՈՍ, երկրորդքն՝ [illegible] ՄԷՍԹԻԾՈՍ. Արքունիքն Սպանիոյ փոյթ մարմնա- ինչ կարէ ցուցանելոյ զնոր ստրուկս իւր ընդ նախկին հպա- քաղաքաց տակաց իւրոց քաջալերեաց վաղ զՍպանիացիս կայ- ւոց: ունացեալս յԱմերիկա 'ի հարսնացուցանել զբընիկսն այնր երկրի. և վն այսորիկ զանազան ազգականութիւնք այսր սեռի կերպացան վաղվաղակի 'ի հարգունութիս նց. Բայց պարտի առաւել ապերասան ցոփութեն, քան թէ հպատակութե այսմ հրամանի ինքնակալաց իւրեանց, զի այսպիսի իմն զարմն իցէ այնպէս մեծապէս բազմացեալ, մինչև կերպաւորել զերևելի իմն մասն բազմամարդութեն յամ բնակութիս Սպանիացւոց. Հեղինակք Սպանիացւոց անվթար նշանակեալ են զպէսպէս ծնունդս այսր զարմի. և տրոհել մասնաւոր իմն անուամբ զզանազան աստիճանաւորութիւն, ընդ որս անցանէ գոյն իւր 'ի սևաւ գունոյ խափշկաց և 'ի գունոյ պղնձոյ Ամերիկացւոց մինչև ցսպիտակութն Եւրոպացւոց. Սերունդք առաջնոյ ազգի են այժմ նկատեալք և վարեալք իբր հնդիկս և խափշիկս. բայց յերրորդին տարորոշիչ գոյն առաջնոյն չքանայ, և 'ի հինգերորդին մթագոյն գոյն մարմնոյ վերջնոյն է այնպէս բնաւին ջնջեալ, մինչ զի ոչ ևս կարեն զանազանիլ յԵւրոպացւոց. և ունին զիրաւունս ինչ առ արտօնութիս նց. Յայսմ խառնեալ զարմէ առաւել կորովւոյ և պնտացելոյ առ աշխատանս վարեալ լինին մեքենական արուեստք, զորս այլք երկու դասք քաղաքացւոց անգոսնեն իբր փայլագոյնս ինքեանց վն հպարտութեն և վն անհոգութեանն:

Խառն. Սեաւքն ունին զչորրորդ տեղին 'ի մէջ բնակչաց
շէկին էր հարգութեանցն Սպանիացւոց. Այլուր խօսե-
դասու- ցայց զներածութիւն այսր թշուառական մասին
ըէն պըր մարդկային տեսակի յԱմերիկա, ուր և զծառայու-
բուէ թեանցն, զորս առնէ և զչարչարանացն զորս կրէ.
ջուրքն: Արդ յիշատակեմ զայն միայն առ'ի յակնարկել զմասնաւորութի իմն 'ի կայաւորութեն իւրում ընդ Սպանիական տէրութբն. 'Ի բնմն 'ի հանգրուանաց նոցա և մասնաւոր եղանակաւ 'ի Նորն Սպանիա՝ Սեաւք մասնաւորաբար պարապեցուցեալ են յառտնին ծառայութեն. Կերպաւորեն զնախապետական ինչ մասն շռայլութեն և են սիրեցեալք և գգուեալք 'ի տեարց իւրեանց, որոց ունայնութեան և հեշտութեանց ծառայեն հաւատարապէս. Այն բարւոք զգեցեալք զոյգ նց, և նմանին գնացից նոցա, և քարշեն յինքեանս զկիրս նց. Փքացեալք այսպիսի տրոհութբ առեալ են զնշանակ իմն վերնագունութե 'ի վն Հնդկաց, և վարին ընդ նս այնքան լրբութբ, մինչ զի հակակրութին 'ի մէջ երկուց զարմից եղեալ է անհաշտելի. Այլ 'ի Փէրու, ուր Սեաւքն են առաւել յոգնաթիւք և պարապեցուցեալք յանդի, որպէս և յառտնին ծառայութիս, պահեն զգերամբարձութիս իւրեանց 'ի վն Հնդկաց, և փոփոխ հակառակութի նց հաստատեալ կայ հաւասար բռնութբ. Օրէնքն դիտմամբ տածեալ են զայս ատելութի, որում սկիզբն ետ դիպուածն. և խստագոյն պատուիրանօք նախահոգացեալ են խափանել զամ հաղորդակցութի, որ կարիցէ կերպաւորել զկապ իմն միաւորութե 'ի մէջ այսց երկուց զարմից. Այսպէս արուեստաւոր իմն քաղաքականութբ Սպանիացիք առնուն զօրութիւն յայնմանէ, որ կերպացուցանէ զտկարութի այլոց

մշակութից Եւրոպացւոց, և են ապահովացուցելք իւր ընկերք. և պաշտպանք նոցին, որք այլ ում ուրեք են առարկայք նախանձաւորութեն և զարհուրանաց :

Հնդիկք կերպաւորեն զվերջին և զխոնարհագոյն Հնդկէս
կարգ մարդկան յայնմ աշխարհի, որ պատկանէր Եւրոպա-
նախնեաց նց. Մտորագրեցի կանխաւ զյառաջա- ուրէն
դիմութի Սպանիական գաղափարացն վերահայեց- զվերջին
մամբ պայմանի և վարման այսր ազգի, և յի- կարգ ու
շատակեցի զառաւել ծանրակշիռ կանոնաւորմունս զատրայ-
նոցա նկատմամբ այսպիսի երևելի իրիք նիւթոյ, այ :
որպիսի է մատակարարութի նոր տէրութեանց իւրեանց. Բայց զկնի շրջանին, առ որ հասուցի ըզվիպասանութիւն Ամերիկոյ, ներհմտութիւն առացեալ ընդ երկուս հարիւրեակս եդ յաստիճանի զարքունիսն Սպանիոյ կատարելագործելոյ այնպէս զայս յօդուած յԱմերիկեան օրինագրութեն իւրոյ, մինչզի կարճառօտ իմն պատմութի ներգործական պայմանի Հնդկաց եղիցի շահեկան և փութալի:

Միջնորդութ հռչակաւոր կանոնաւորութեանցն Կա- [illegible]
ռլոսի հինգերորդի յամին 1542. որք այնքանիցս էոյ
յառաջբերեալ եղեն, բարձր պահանջմունքն տի- [illegible]
րապետողաց նորոյ աշխարհին, որք նկատէին զըն- նչ :
նակիչս նորա իւր գերիս, և առ որոց ծառայութիւն ստացեալ էին զլրացեալ իմն իրաւունս յակութն, վերջապէս բարձան 'ի միջոյ. Յայնմ ժամանակէ Հնդիկքն համարեալ են ազատք և բաժանորդ լինելին արտօնութեանցն հպատակաց. Գոլով նոքա ընկալեալք յայս դաս՝ էր քաջ իրաւացի հանգանակել նոցա առ հաստատութի և առ բարեգունութի ընկերութեն, որ որդեգրեալ էր զնոսա յանդամս. Բայց ոչ կարելով սպասել զերևելի ինչ բարութի 'ի կամաւոր ջանից մարդկան զուրկ եղելոց 'ի կանոնաւոր իմն ճարտարութէ և օտարացելոց յաշխատութէ, արքունիքն Սպանիոյ կարևոր վարկաւ հաստատել և ապահովա-

ցուցանել մարթանօք իմն զայն, որ պարտէր պահանջել 'ի նոցանէ :

Առ̃է Ե-
դեալ 'ի
վերայ
նց̃:

Այսու գիտեմք եդաւ տարեկան իմն հարկ 'ի վե̃ ա̃մ արուի 'ի հասակէ ութ և տասն ամաց մինչև ցյիսուն, և 'ի նոյն ժամանակի սահմանեցաւ որոշակի բնութիւն և քանակութի̃ ծառայութե̃ն, զոր պարաւանդեալ էին մատուցանել. Զանազանի այս հարկ 'ի զանազան գաւառս, այլ եթէ առցի միջասահման այն, որ է վճարեալ 'ի նորին Սպանիա, տարեկան յառաջեկեալն իւր ամբառնայ շուրջ առ չորս շիլին առ գլուխ, գումար ոչինչ տարապայման յաշխարհին, ուր իւր յաղեբր փարթամութե̃ արժողութի̃ դրամոյ է ևս նուաստագոյն:

(32) ‖ Որչափ և չափաւորեալ երևիցի այս հարկ, այնքան մեծ է աղքատութի̃ Հնդկաց 'ի բազում գաւառս Ամերիկոյ, մինչզի կամին թափել զայն է անտանելի իմն և ճնշողական :

Պէսպխանայ նմանապէս իրաւունքն պահանջելոյ զայս հարկ. Ամենայն Հնդիկ յԱմերիկա՛ կամ է անընդմիջական ստրուկ թագաւորութե̃, կամ կախի 'ի հպատակէ ումեքէ, ում նահանգն, յորում բնակի, շնորհեալ է առ որոշեալ իմն ժամանակ ընդ անուանակոչութե̃ Էնքոմիէնտայի. Յառաջնում կերպի վճարին արքունի գանձուն երեք քառորդք հարկին. յերկրորդումն նոյն բաժինն պատկանի նմա, որ վայելէ զշնորհումն. Յորժամ Սպանիա կալաւ զառաջինն զտացումն Ամերիկոյ, մեծագոյն մասն բաժանեալ եղև 'ի մէջ տիրապետողաց իւրոց, կամ նոցա, որք կայունաւորեցան անդէն նախառաջին, և զգուշնաքեայ իմն բաժին վերապահեաց ինքեան թագաւորութի̃ն. Իսկ քանզի այս շնորհմունք, որք արարեալ էին ընդ երկուս ազգս միայն, վերադառնային յաջորդաբար առ արքայն, էր 'ի կամս նորա կամ բարեբարել զնոր ստացօղսն կամ աճեցուցանել այնու զարքունի մուտս իւր:

(33)

(33) ‖ 'Ի նորն Սպանիա նկատմամբ վաստակոյ և արտաքոյ կարգի ծառայութենց առաջնոց տիրապետողաց, որպէս և փոքրիկ մտիցն, որ հանեալ լինէր յերկրէն յառաջքան զբացումն հանքացն Սաքաթէքասայ, Կոմմէնտայքն էին շնորհեալք ընդ երիս և երբեմն 'ի չորս կեանս: ‖ Յայսց երկուց մասանց յաճախակի նախադասեալ է առաջինն. և թիւ Հնդկաց, որք կախին այժմ ուղղակի 'ի թագաւորութէն, է մեծագոյն քան թէ յառաջնումն հարիւրեկին զկնի տիրապետութեն. և այս ճիւղ արքունի մտից շարունակէ միշտ յաճումն:

Հարկերարութին, որ բղխէ 'ի ծառայութէ Հնդ- [illegible]
կաց, պատկանի կամ թագաւորութեն կամ ստա- յաւէրն,
ցողին Էնքօմիէնտայէ ըստ նմին կանոնի պահեցե- որք պա-
լոյ 'ի վճարման հարկին. Սակայն ծառայութիքն հանջէն 'ի
որք կարեն օրինաւորաբար պահանջիլ այժմոյս, նոյանէ:
են ամենևին տարբեր յայնց խստագունից եդելոց սկզբնաբար 'ի վն Հնդկաց. Բնութի գործոյն, զոր պարտին առնել սահմանաւորեալ է. և զգօնական իմն փոխարէն տուեալ է աշխատանաց նց. Հաստատեալ ծառայութիքն, որք պահանջին 'ի Հնդկաց, կարեն տրամատիլ յերկուս դասս, կամ պարապեցուցեալ են 'ի գործս նախկին կարևորութեն, առանց որոց ընկերութին ոչ կարէ բացարձակապէս ապրիլ, կամ բռնադատին յաշխատիլ 'ի հանքս՝ յորոց Սպանիական հարգունութիքն վերաճանաչեն զնախապետական հարստութիս իւրեանց. Յառաջնումն դիպուածի պարաւանդեալ են նոքա 'ի մշակել զմայիծ կամ զայլ հատ կարևոր պիտոյից, 'ի պահել զանասունս, 'ի կանգնել զհրապարական շինուածս, 'ի կերտել զկամուրջս, և 'ի յարդարել զարքունի ճանապարհս. այլ ոչ կարեն ստիպիլ 'ի տնկել զորթս, զձիթենիս, զեղեգնաշաքարս, և ոչ առ այլ զինչ ևիցէ տեսակ մշակութեն, որ ունի առարկայ զշը-

ռայլուռայութիւն և զշահավաճառութիւն. Յերկրորդումն եղեալ է 'ի մ՟ջ Հնդկաց ծանր ծառայութիւն հանելոյ 'ի դուրս զոսկին 'ի խորոց երկրի և գտելոյ զայն յաջորդական գործողութե՟, որք ոչինչ ընդհատ անառողջարարք են քան թէ աշխատալիք ։

(34) ‖ Պարոն Ունտոնիոս Ուլլոայ պնդէ, թէ աշխատիլն 'ի հանքս ոչ է վնասակար. և առ հաւաստիս այսորիկ ասէ մեզ, թէ բազում Մեստիծօք և Հնդիկք, որք ոչ պատկանին առ բաժանումն իմն, կամովին մտուցանեն զանձինս յականահատս. և եթէ բազումք 'ի Հնդկաց յորժամ աւարտի օրինական սահման ծառայութե՟ն ն՟ց շարունակեն աշխատիլ 'ի հանքս սեփական ընտրութե՟ իւրեանց. Բայց կարծիք իւր յայսպիսի առաջադրութե՟ն է ներհակ փորձառութե՟ն այնչափ դարուց. այլ հանապազօր տեսանեմք զմարդիկ, զի 'ի խայծէ շահու քարշեալ են յընդգրկել զգործ հաւասարապէս աշխատալից և ծայրագոյն վտանգաւորս վ՟ս առողջութե՟ն. Բարիլոս Ուլթէմիրան յառաջբերէ զգործ իմն սխրալի անմիտոնական ընդ այսմ կարծեաց. ուր ուրեք ասէ պեղլին հանքք նուազի թիւն Հնդկաց. բայց 'ի գաւառս Բամբէձի, ուր ոչ են հանքք թիւն Հնդկաց աճեցեալ է աւելի քան զերրորդն 'ի տիրապետութե՟ Ամերիկոյ. թէպէտ ոչ գետինն և ոչ կլիմայն են այնպէս բարի, որպէս 'ի Փէրու կամ 'ի Մեքսիքօ. Յայլում իմիք յիշատակարանի ներկայացուցելոյ Փիլիպպոսի երրորդի յամին 1609. զօրագլուխն Յօհաննէս Կոնծալէզ Ածէվէտօ ասէ, թէ յամենայն նահանգին Փէրուայ, ուր Հնդիկք ստիպեալ են յաշխատիլ 'ի հանքս, թիւ նոցա վերածեալ էր առ կէսն. և 'ի տեղիս ինչ առ երրորդ մասն այնր, որ ընդ փոխարքայութեամբ տեսան Ֆրանչիսկոսի Թօլէտօյի յամին 1581 ։ ‖

Եղանակն պահանջելոյ զայսպիսի ծառայութիւն է Եղա-
նոյն և կանոնաւորեալ ՝ի հրովարտակաց կերպա- նոյն հա
ւորելոց դիտաւորութեամբ փոխադրելոյ զայնս նուազ տալելոյ
ճնշողականս Հնդկաց որչափ կարելի իցէ. Պա- ղոյն:
րապեցուցեալ են նոքա փոփոխակի յայնքան բաժանմունս, որք ասին Միթա, և ոչ ոք կարէ ստիպել երթալ անդր, եթէ ոչ ՝ի կարգի իւրում. ՝Ի Փերու բազմութիւն պարապեցուցեալ յայսպիսի աշխատութիւս ոչ կարէ առաւելուլ քան զեօթներորդ մասն բնակչաց նահանգի միոյ. ՝Ի Նորն Սպանիա, ուր Հնդիկք են առաւել յոգնաթիւ, հաստատեալ է առ չորսն վասն իւրաքանչիւր հարիւրաւորի. Որչափ ժամանակ շարունակիցի աշխատութիւն Հնդկաց, որք պարապեցուցեալ են յերկրագործութեն, ոչ կարողացայ գիտել:

(35) ‖ Ու քանզի այս ազգ աշխատանաց ոչ կարէ անվթար սահմանագրիլ յօրինաց՝ երևի թէ հաշիւն իցէ ըստ իմիք կամայական. և երբ զփեւտական ծառայութիւն յայգւոյ, ՝ի մարգի, կամ ՝ի հունձս ՝ի տերկաց իւրեանց եղանի յամբաւածանր և յաճախակի տարապայման ճնշիչ: ‖ Բայց ՝ի Փերու ամ միթա կամ բաժանումն սահմանեալ վն հանքաց մնայ անդէն զամիսս վեց. և գործաւորն մինչդեռ տևէ յայսմ աշխատութեան ոչ ընդունի նուազ քան զերկուս շիլինս յաւուրն. և երբեմն շահի զկրկինն այսր գումարոյ. Ոչ ոք Հնդիկ, որ բնակիցի ՝ի տարակացութեան մեծագունի քան զերեսուն մղոնս ՝ի հանքացն, փողաացեալ է ՝ի միթային, կամ ՝ի բաժանմանն. և ոչ իսկ բնակիչք դաշտավայրաց կարեն դնիլ ՝ի վտանգ կորստեան. ոպ լինէին եթէ պարաւանդեալ էին ՝ի կրել փոխարբերելով ՝ի ջերմ Կլիմայէն առ ցուրտ ամբարձեալ գաւառս, ուր առատ են հանքայինք:

(36) ‖ Կարգն ծառայութեն ծանուցեալ ՝ի Փերու ընդ անուամբ միթայի ՝ի Նորն Սպանիա կոչե-

չեցեալ է Միտանոպա. և ոչ տևէ աւելի քան զմի եօթնեակ առ անգամ. Ոչ ոք անձն կոչեցեալ է աշխատիլ 'ի բացակայութեան մեծագունի քան զքսան և չորս մղոնս 'ի բնակութենէ իւրմէ. Այս կանոնաւորութիւն է նուաղ ճնշիչ Հնդկաց քան զհաստատեալն 'ի Փէրու: ‖

Ո՞րպէս կառավարեալք:

Հնդիկք, որք կեան 'ի գլխաւոր քաղաքս են բընաւին ենթադրեալք օրինաց և աւագանւոյն Սպանիացւոց. բայց 'ի սեփական գիւղօրէս իւրեանց կառավարեալ են 'ի քաղքեից իւրեանց. որոց ոմանք սերին 'ի նախկին տեարց իւրեանց, և այլք անուանին 'ի փոխարքայէն Սպանիացւոց. Կանոնաւորեն սոքա զմանր իրակութիւնս ժողովրդեան ենթարկեցելոյ նոցա ըստ սկզբանց արդարութեան փոխանցելոց նց̃ աւանդութ̃բ 'ի նախնեաց. Այս իրաւաբանութիւն ծառայէ 'ի մխիթարութիւն ինչ Հնդկաց. և այս արժանաւորութիւն է այնպէս սակաւ զանգիտելի 'ի նոր տեարց իւրեանց, մինչզի յաճախակի թոյլ տան իշխանել ժառանգական իրաւամբք. 'Ի մեծագոյն սփոփանս մարդոց այնպէս նշաւակ եղելոց ճնշման արքունիքն Սպանիոյ սահմանեալ է պաշտօնատար մի յա̃մ նահանգի անուամբ պաշտպանի Հնդկաց. Պաշտօն իւր է, որպէս ցուցանէ անունն, ջատագովել զիրաւունս Հնդկաց, երևիլ 'ի պաշտպանութիւն նոցա յատեանս արդարութեան, և խափանել, զի մի ճնշիցին տառապեալքն. Որոշեալ ինչ բաժին չորրորդ մասին վերապահեալ 'ի տարեկան հարկէն ծառայէ 'ի թոշակ քաղքեից և պաշտպանաց. Միւս բաժինն 'ի կիր արկանի 'ի պահպանութիւն վիճակին վն̃ հրահանգութեան Հնդկաց. և միւս այլ բաժին 'ի վերջոյ սահմանեալ է 'ի դարմանել զնոսա ուռճկօք. և 'ի վճարել զհարկ նոցա յամս սովու կամ այլ աղետից. Նաև յայսմ ա̃մէ հիմնեալ են հիւրանոցք վն̃ նոցա յա̃մ նոր հանգրուանի. Մինն 'ի նոցանէ շինեալ է վասն կարօտելոց և

վն̃

մէջ հիւանդաց 'ի Լիմա, 'ի Կուզքօ, և 'ի Մեքսիկօ. ուր վարեալ են Հնդիկք գործով և մարդասիրութ՟բ. Այսպիսի է ընդհանրապէս իրաւագիտութ՟ին և քաղաքավարութ՟ին, յորոյ վերայ ներկայաբար կառավարեալ են Հնդիկք 'ի գաւառս պատկանեալս Սպանիոյ. Ապա յայսոսիկ ուրեմն կանոնաւորութ՟իս միապետաց կաթուղիկեայց ոչ նշմարին հետք ինչ այնր անագորոյն ջնջիչ օրինադրութ՟ն, զորմէ ամբաստանեալ են նոքին, թէ ողջագուրեալ իցեն. և թէպէտ հարկաւորութիւնն դարմանելոյ զապրուստ հարգունութ՟ց իւրեանց, և հանելոյ զօգուտ 'ի հանքացն պարաւանդէ զնոսա վարիլ 'ի ձեռն Հնդկաց, սակայն պարտիմք խոստովանիլ, թէ ուշադրութ՟ին, որով նոքա կանոնաւորեն և փոխարինեն զայս աշխատութ՟ի, 'ի մեծագոյն աստիճանի է յառաջատես և գիրգզօն. Ոչ գոյ արձանագիր, ուր ցուցանիցի մեծագոյն փոյթ, կամ բազմասցին զգուշութիք առաւել հոգածութ՟բ վասն պահպանութ՟ն, ապահովութ՟ն և երջանկութ՟ն հպատակին, որք 'ի հաւաքման սահմանադրութ՟ց Սպանիացւոց վ՟ս Հնդկաց. Բայց այսոքիկ վերջին կանոնաւորութ՟իք, որպէս և նախկին հրովարտակք յաճախակի եղեն դեղք անգործունեայք ընդդէմ չարեացն, զորս դիտէին բժշկել. Յորչափ կան նոյն պատճառք, հետևին միշտ 'ի նոցանէ նոյն գործք. Վասն անբաւ տարակայութ՟ն, որ անկանի 'ի մէջ կարողութ՟ն, յոր վստահացեալ է կատարումն օրինաց, և 'ի մէջ անձին, որոյ իշխանութ՟ին հաստատեալ են այնոքիկ, խստութ՟ին եւս և բացարձակագոյն կառավարութ՟ե պարտի թուլանալ. և երկիւղ ինքնակալի միոյ կարի հեռաւորի վասն պահպանելոյ ուշադրութ՟բ կամ պատժելոյ արագութ՟բ պարտի անզգալաբար նուազիլ. Ոչինչ օգտելով ստէպ կարգաւորութ՟ց միապետաց Սպանիացւոց, Հնդիկք կրեն տակաւին 'ի բազում ա-

ուխթս

ռիթս 'ի յաջողութէ անհատից և 'ի հարկապահանջութեանց մեծաւորացն , որք պարտէին պաշտպանել զնս . Եդեալ են 'ի վերայ նոցա անիրաւ ծանրութիք . երկարաձգի եզր աշխատանաց նոցա . և հեծեն 'ի ներքոյ նախատանաց և չարեաց , որք վիճակին ժողովրդեան միում ստորակարգեցելոյ ։

(37) ‖ Մեծագոյն ցոյց սորա կարէ յառաջածիլ 'ի նոյն իսկ օրինաց . 'Ի բազմութէ և 'ի պէսպիսութէ կանոնաւորութեցն վս խափանելոյ զեղծմունսն՝ կարեմք կերպաւորել զգաղափար իմն թըճոյ նց . Թէպէտ օրէնքն հանճարեղաբար կարգադրեալ են , զի մի՛ ոք Հնդիկ պարաւանդիցի ծառայել երբեք 'ի տարակացութն մեծագունի քան զերեսուն մղոն 'ի տեղւոջէ բնակութն իւրոյ , սակայն տեղեկացեալ եմք յետկարի միում Բարիլլոսի Ալթամիրանու ներկայացուցելոյ արքային , զի Հնդիկք փերուայ ստէպ բռնադատեալ էին ծառայել 'ի հանքս 'ի հեռաւորութն հարիւր , և հարիւր յիսուն , և ես երկերիւր փարսախաց 'ի բընակութէ իւրեանց . Բազում հանքք կայացեալ են 'ի մասունս ինչ երկրին այնպէս ամուլս , և այնպէս հեռաւորս 'ի հասարակ բնակութեց Հնդկացն , մինչ զի կարևորութիւն նախահոգալոյ զմարդիկ վասն աշխատելոյ յայնս պարաւանդեալ է զմիապետս Սպանիացւոց 'ի զանազան առիթս թուլացուցանել զսեփական կանոնաւորութս իւրեանց , և թոյլ տալ փոխարքայից ստիպել զժողովուրդս հեռաւորագոյն գաւառացն փոխարկել առ վերոյ ասացեալ հանքսն . Բայց առ'ի տալ նոցա իրաւունս՝ պարտէ նկատել , զի միշտ ջանացեալ են թեթևացուցանել զայս ճնշումն որքան կարելի եղև նց , պատուիրելով փոխարքայից 'ի գործածել զամ հայթհայթանս առ'ի հաւանեցուցանել զՀնդիկս բնականալ յիմիք մասին երկրին ընթերակայի նոցին իսկ հանքաց ։ ‖

Ստուգեալ եղէ, զի այսպիսի իմն ճնշումն թագաւորէ եւս առաւել 'ի փերու քան թէ յայլում իմիք հարգունութն. Սակայն ոչ է ընդհանուր անկարգութին. որովհետեւ ըստ պատմութենց նաեւ այնց հեղինակաց, որք առաւել հակեալ են 'ի բարդել զշարշարանս Հնդկացն, սոքա 'ի զանազան գաւառս վայելեն ոչ միայն 'ի հանգիստս, այլ եւ յառատութեան. ունին զմեծամեծ կալուածս, են տեարք յոգնաթիւ անդեաց. եւ ծանօթութիւն, զոր ստացեալ են Եւրոպական արուեստից եւ ճարտարութն, պաճարեն անձանց զկարեւոր իրս, եւս եւ զաւելորդսն:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՐԳՈՒՆԵՑ :

Յետ մեկնելոյ զկերպ քաղաքական կառավարութեան Սպանիական հարգունութեցն եւ զկարգս պէսպէս դասուց հպատակաց, այժմ արժանի է ուշադրութն եկեղեցական կայունուրդ նց. Կանխաւ ասացաք, թէ նախանձաւոր քաղաքականութիւն Ֆերտինանտոսի թելադրեաց նմա կանուխ առնուլ զզգուշութիւս ընդդէմ ներածութն արտաքնոյ իրիք տէրութն յԱմերիկա. Այսու դիտմամբ յորդորեաց զԱղեքսանդրոս վեցերորդ զՊ շնորհման տասանորդացն 'ի բովանդակ երկիրս նորոգ բացեալս. եւ ընկալաւ զայն այսու դաշամբ, զի նախահոգասցի ապրուստ միսոնարացն սահմանելոց 'ի հրահանգութի Հնդկաց. փոքր մի զկնի Յուլիոս երկրորդ ետ նմա զիրաւունս պաշտպանութն եւ զտուչութի բովանդակ եկեղեցական բարերարութեցն. Զօրութբ այսպիսի դաշանց միապետք Սպանիացւոց եղեն տարաղու իւիք գլուխք Ամերիկեան եկեղեցւոյ. Նոքա տրամադրեն զհասութից իւրոց. եւ անուանումն նոցա առ դատարկացեալ բարերարութիս վաղվաղակի հաստատեալ է 'ի Հռոմայ. ուստի 'ի Սպանիական Ամերիկայի բովանդակ աւագութիւն վերածի 'ի թագաւորն իբր 'ի կեդրոն. Չիք ընդհարումն ինչ 'ի մէջ հոգեւոր եւ ժամանակաւոր իրաւարանութե. Թագաւորն է բա-

բացարձակ ինքնակալ յԱմերիկա. ոչ ճանաչէր անդէն, բայց եթէ միայն անձն իւր. և հպատակքն ոչ կախէին յօտար իշխանութենէ իմիքէ. Յայսմանէ հետևի, զի ոչ ունին զկատարումն քահանայապետական կոնդակքն, եթէ նախ ոչ հաստատեալ են յարքունի խորհրդարանէ Հնդկաց. նա զի յորժամ մուծանիցին սպրդողաբար, եկեղեցականքն ունին հրաման ոչ միայն խափանելոյ զգործ նոցա, այլև առնլոյ զօրինակս նոցա և վերառաքելոյ առ նոյն խորհրդարան. և դիմագրաւութիւն, որով Ֆերտինանտոս և յաջորդք իւր պահեցան 'ի լիակատար գործածութեան այսր ամի, ըստ մեծի մասին լեալ է պատճառ միօրինակ անդորրութեան, որ թագաւորեալ է յԱմերիկեան տէրութիւնս։

[illegible] և [illegible] եկեղեցեաց [illegible]:

Քահանայապետութիւն հաստատեալ է յԱմերիկա նովին կերպիւ, որով 'ի Սպանիա հանդերձ իւր լրացեալ հետևանօք Արքեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց, դեկանաց և այլոց արժանապատուութեանց. Ծայրագոյն վիճակն բաժանեալ է յերիս դասս ըստ անուանակոչութբ՟ հոգաբարձուաց, ուսուցչաց և քարոզչաց. Առաջինքն ծառայեն ժողովրդապետութեանց յայնս մասունս երկրին, ուր Սպանիացիք ունին զկայանաւորութիւնս. Երկրորդքն ունին զհոգ այնց նահանգաց, որք բնակեալ են 'ի Հնդկաց ենթադրելոց Սպանիական կառավարութեան, և որք կեան ընդ պաշտպանութբ՟ նր՟. Երրորդքն պարապեալ են 'ի դարձուցանել և 'ի կրթել զամենհազգոյն ցեղսն զայնոսիկ, որք անարժան համարին նուաճիլ ընդ լծով Սպանիացւոց և կան 'ի հեռաւոր և յանմատոյց կողմանս, ուր զէնք Սպանիացւոց ոչ երբէք ընդմըտեալ են. Այնչափ բազմաթիւք են եկեղեցականքն այսց զանազան կարգաց, և այնպէս զեղեալ առատաձեռնութիւն առ նս՟, մինչզի համարին անբաւք հասոյթք եկեղեցւոյն յԱմերիկա. 'Ի նոր աշխարհին կաթուղիկէ կրօնն Հռոմէական երևի

՚ի մեծագոյն շքի և ՚ի վեհափառութ՟ն իւրում. Եկեղեցիքն և վանորայք են անդէն արտաքոյ կարգի մեծագործք. և ՚ի հանդիսաւոր տօնսն ցոյց ոսկւոյ, արծաթոյ, և քարանց պատուականաց է այնպիսի, մինչզի շուարեցուցանէ զեւրոպացիս. Նշմարեցաք, զի կայունուրդ իմն եկեղեցական այնչափ շքեղ և բազմածախ ոչ էր նպաստաւոր յառաջադիմութեան նորածնեալ հարգունութ՟նց, բայց յերկրի միում, ուր առատ են փարթամութ՟իք, այս կրօնական յօժարութ՟ի մեծագործութ՟ն, որ քարշէ յինքն զյարգանս ա՟ծային պաշտամանց, թուի տուեալ է իւր նուազ վնասակար:

Իսկ կարի շատ կառուցումն մենաստանաց ՚ի Սպանիական հարգունութիւնսն և կարի եռանդնոտ նախանձայուզութիւն ՚ի բազմացուցանել զն՟ս ընկերակցեալ է վնասակարագոյն հետևութիւնք. Յա՟մ նոր կայունաւորութ՟ն առաջին առարկայն է քաջալերել զբազմամարդութիւն, և յորդորել զն՟ս, որք բաղկացուցանեն զայն յաճեցուցանել զզօրութ՟ի և զթիւ հասարակութ՟ն. Յորչափ ընկերութ՟ին է ՚ի կորովութ՟ն երիտասարդութեան, և որ գտանէ տեղի ընդարձակելոյ. և ապրելոյ դիւրութ՟բ, բազմամարդութիւնն է անդէն ծայրագոյն սրընթաց. Բայց Սպանիացիք հազիւ թէ առեալ էին զստացումն Ամերիկոյ, յորժամ չարախորհուրդ քաղաքականութ՟իք սկսան կանգնել զվանորայս, ուր անձինք երկաքանչիւր սեռի խելամտեալք զրդեանց ամուսնական վիճակին փակեալք էին. և խանելով յայն օթևանսն անգործընական կենաց, կորուսեալ էին առ քաղաքական կեանս. Եւ քանզի ոչ ոք արտաքոյ Սպանիացւոց ընկալեալ էր ՚ի մենաստանս ՚ի նոր աշխարհին, վ՟ն այսորիկ չարն լինէր առաւել զգալի. և ա՟մ կրօնաւոր կ՟մ միանձնուհի կարէր նկատել իբր անդամ ինչ անջատեալ ՚ի քաղաքական ընկերութ՟է. Զեղծումն այսպիսի հիմնարկութեանց յերկրի միում, ուր տարածութիւն երկրաստանացն խնդրէ զբազումս 'ի մշակել, է այնպէս ներհակ աճման և յաջողութեան հարգունութեանց, մինչզի բազում տէրութիւնք կաթուղիկեայք յայտնապէս արգիլեալ են հպատակաց հարգունութեանց իւրեանց ընդգրկել զվիճակ կրօնաւորական. և նոյն ինքն միապետք Սպանիացիք յառիթս ինչ ջանացեալ են զսպել զայն. բայց Սպանիացիք Ամերիկա յղացեալ էին զայնպիսի բարձր կարծիս զմիանձնական սրբութենէ, մինչզի ոչինչ կանոնաւորութիւն կարողացաւ թուլացուցանել զնախանձաւորութիւն նոցա. և տունք կրօնաւորականք Ամերիկա տեսանին բազմացեալք յայնպիսի իմն աստիճանի, որ հիանալինէ և վնասակար ընկերութեան:

(38) Թօրքուէմատա զկնի երկայն իմն թուարկութեան, որ ունի զերևոյթ լինելոյ յոյժ խնամոտ, աւարտարանէ, թէ թիւ մենաստանաց 'ի Նորն Սպանիա է չորեքհարիւր. և 'ի քաղաքին Մէքսիքոյ միայն յամին 1745. ժամանէր առ յիսուն. Ուլլոա թուէ քառասուն վանս 'ի Լիմա. և յիշատակելով զվանսն միանձնուհեաց ասէ, թէ նոքա միայն լցեալ էին զփոքրիկ քաղաք մի. այսչափ մեծ էր թիւ փակելոցն. Փիլիպպոս Երրորդ 'ի նամակի միում առ փոխարքայն Փերուայ յամին 1620 նկատէ, զի թիւ վանորէիցն 'ի Լիմա էր այնպէս մեծ, մինչզի տեղակալէին աւելի գետին քան թէ մնացեալն քաղաքին. Առաջին մենաստանն 'ի Նորն Սպանիա եղև հիմնեալ յամին 1525. չորիւք ամօք միայն զկնի տիրապետութեանն. Ըստ Ժ'իլ Կոնծալէզայ Տավիլայ եկեղեցին Ամերիկեան 'ի բովանդակ Սպանիական հարգունութիւնսն բաղկանայր միով Պատրիարգաւ, վեց Արհիեպիսկոպոսօք, երեսուն և երկու Եպիսկոպոսօք, երեք հարիւր քառասուն և վեց թոշակաւորօք, երկու Աբբայիւք, հինգ արքունի Մատ-

Մատ-

Սանտրանապետօք, ութն հարիւր քառասուն վանօրէիւք. Յորժամ կարգն յսեանց արտաքսեալ եղև 'ի բովանդակ տէրութենէ Սպանիացւոց, ժողովարանք, ուսումնական տունք և բնակարանք, զորս ստացեալ ունէր 'ի գաւառին Նորոյն Սպանիոյ, էին երեսուն, 'ի Քուիթօ վեշտասանք, 'ի Նոր Թագաւորութեն Կրանատայի երեքտասանք, 'ի Փէրու եօթն և տասն, 'ի Չիլի ութ և տասն, 'ի Փարակուայի ութ և տասն և ընդ ամենն հարիւր երկոտասան. Թիւ յսեանց քահանայից և նորընծայից ամբառնայր ց2245. Յամին 1644. քաղաքն Մեքսիքոյի մատոյց գիր պաղատանաց առ թագաւորն աղաչելով զնա, զի մի ևս կարող լինիցին հիմնել նոր մենաստանք. և զի սահմանաւորեսցին մուտք կանխաւ հաստատելոցն. քանզի այլ ազգ կրօնաւորական տունք ստանային բովանդակ զտէրութի երկրին. Նմանապէս աբաւեալ եղև ժամանք, մինչզի Եպիսկոպոսունք ամփոփեսցին յընձեռելն զորբազան կարգս, գոլով յայնմ ժամանակի 'ի Նորն Սպանիա աւելի քան զվեց հազար եկեղեցականք առանց ինչ եկեղեցական բարերարութեան. 'Ի հարկէ էին անդէն տարօրէն զեղծմունք. որովհետև պաշտօնատէր Ամերիկեան Սպանիացիք ցուցանէին գայթագղելիս և չարժեալ էին բողոքել ընդդէմ նց։ ||

Որովհետև հասեալ եղաք խօսել զհանգամանացն Ամերիկոյ աշ– հարգունութեցն, ուր այնպէս նշանաւոր է թիւ կրօնա– և ազդեցութի եկեղեցականաց, 'ի դէպ է առնել կարճ խօս զոյգս զյատկութէ այսչափ հզօր մասին իրիք. Նմանաւոր Այս առարկայ արժանի է մասնաւոր իմիք ու– [illegible] շադրութե. Երևելի իմն մասն աշխարհական վի– ճակին 'ի Մեքսիքօ և 'ի Փէրու բաղկացեալ էր յԱմերիկաբնիկ Սպանիացւովք. Եւ քանզի մարդիկ սովորք էին։ վս դատախարակութե իւրեանց առ առանձնութի և առ անհոգութի ակատեմեան կենաց՝ են առաւել անընդունակք գործնական ձեռնարկութեանց՝

Hh 3

և նուազ տրամադրեալք 'ի կոխել զնոր ճանապարհս քան զայլ զինչ իւիցէ կարգ անհատից, վա՛ այսորիկ եկեղեցականքն, յորոց զօրացեալ է Ամերիկեան եկեղեցին հասարակաբար են նոքին, որք կամ վասն արդեանց կամ վասն պայմանի ունին զսակաւ ակնկալութի բաղդի 'ի հայրենիս իւրեանց.

Աշխարհական :

Աշխարհական եկեղեցականքն 'ի Նոր աշխարհին հետեւաբար են նուազ հանդիսացեալք քան զեղբայրակիցս իւրեանց 'ի Սպանիա վասն զինչ իւիցէ տեսակ գրաւոր սեթեւեթից. և թէպէտ հայելով 'ի պարարտ դարմանսն, որք արարեալ են եկեղեցւոյն յԱմերիկա, բազումք 'ի նոցանէ վայելեն 'ի դիւրութն և 'ի ճոխութիւս կարևորս մշակութն գիտութնց, սակայն բազմութի նոցա ընդ երկուս հարիւրեակս և կէս ոչ յառաջեած զհեղինակ մի, որ արժանաւորիցի ունել զտեղի 'ի մէջ նց, որք դարձուցին առ ինքեանս զուշադրութի լուսաւորեալ ազգաց. Բայց մեծագոյն մասն եկեղեցականաց 'ի Սպանիական կայունուրդսըն են կանոնաւորք.

Կանոնաւորք :

'Ի գաւառն Ամերիկոյ բացաւ նոր իմն դաշտ բարեպաշտ նախանձայուզութեան միանձնական կարգաց, որք գովելի իմն զուարթութբ արձակեցին անդր վաղվաղակի զքարոզիչս. Առաջին ջան ուսուցանելոյ և դարձուցանելոյ զԱմերիկացիս արարեալ եղև 'ի նոցանէ. և իսկոյն իբրև բովանդակիւր տիրապետութի իւրք գաւառի, և եկեղեցական հիմնարկութիք սկսանէին առնուլ զկերպարան իմն, քահանայապետքն 'ի փոխարէն ծառայութնց նոցա թողացուցանէին միսոնարացն չորից մուրացիկ կարգաց ընդունել ժողովրդապետական հոգս յԱմերիկա, վարել անդէն զամ հոգևոր պաշտօնս, առնուլ զտասանորդս և զայլ շահս եկեղեցական բարերարութն առանց կախեալ լինելոյ յիրաւարանութէ Եպիսկոպոսի թեմին. Ստուստ 'ի ժամն՝ յորժամ երթային իբր մշակք 'ի հոգևոր այգին, ընդ առաջ լինէին առ'ի փորձութ՟ի նոցա նոր իմ՟ն ընթացք օգտութ՟ն և նորանոր առարկայք վասն փառասիրութ՟ն. Յա՟մ նուաճելի, յորում արարեալ լինէր կոչումն ինչ լըման միտնարաց՝ մարդիկ առաւել հրային և ամբարտաւան հոգւոյ՝ ո՛չ հանդուրժօղք ամփոփման վանացն, տաղտկացեալք 'ի թախծական միակերպութէ՟, և պարտասեալք 'ի վերակրկնմանէ նոյն պաշտամանց, ընծայէին զծառայութիւն իւրեանց անժուժութ՟բ. և ապաստանէին 'ի նոր աշխարհն 'ի խնդիր ազատութ՟ն և հանդիսանալոյ. և ոմանք 'ի նոցանէ գիտացին առնել զայն յաջողութ՟բ. Բարձրագոյն եկեղեցական պատիւք և դարմանք հարստագոյնք 'ի Մեքսիքօ և 'ի Փերու կալեալ են 'ի կանոնաւորաց. և նոցա նախապետաբար պարտին Ամէրիկացիք զայն մասն գիտութ՟ն, զոր այժմոյս մշակեն. Նոքա են գրեթէ միայն եկեղեցական Սպանիացիք, յորոց ընկալեալ եմք զտեղեկութ՟իս քաղաքական կամ բնական պատմութ՟ն պէսպէս գաւառացն Ամէրիկոյ. Ոմանք 'ի նոցանէ հրատարակեալ են զմատեանս, որք կարկառեն զնպաստաւոր իմ՟ն գաղափար քանքարաց նց՟. և բնական և բարոյական պատմութ՟ին նորոյ աշխարհին գրեալ 'ի Յիսուսեան Աքօստայէ պարունակէ գուցէ զևս խնամոտ դիտողութիւս և զխորագոյն գիտութ՟ի քան զայլ զինչևիցէ ստորագրութիւն հեռաւոր աշխարհաց տուեալ 'ի լոյս 'ի վեշտասաներորդ հարիւրեկին:

Բայց նոյն տհաճութ՟ին միանձնական կենաց, որում Ամէրիկա պարտական է վասն ոմանց վաստակաւոր և ընդունակ վարժապետաց իւրոց, ելից զայն երբեմն դիւրին իմ՟ն այլասերութ՟բ ենթակայից հանգամանօք տարբեր եղելովք. Յընդեալքն, ցոփքն, ագահքն, որոց անհանդուրժելի էր աղքատութ՟ին և կրթութ՟ին վանաց, նկատէին զառաքելութ՟ին յԱմէրիկա իբր զթեթևացումն 'ի մահացուցմանէ և 'ի ծառայութէ՟. Եր-

ԽՍՏԱՆԴԱՐԷԱԼ ՎԱՐՔ ՈՄԱՆՑ:

թային անդր և գիւղակի ընդունելին զհոգաբարձութիւն ինչ. ուր հեռացեալք վն կայսերութեան իւրեանց յաչաց վերնագունիցն, և զերծք վն սեփական հանգամանացն յիրաւաբանութէ թեմականի իւրեանց՝ էին բոլորովին անձնիշխանք գործողութեանց և գնացից իւրեանց. Ըստ վկայութե առաւել նախանձայոյզ կաթուղիկեայց՝ բազումք 'ի կանոնաւոր վիճակէ 'ի կալուածս Սպանիացւոց ոչ միայն երևէին մերկացեալք յառաքինութեանցն, որք պատշաճին սրբութե այնր կացութե, այլև ցուցանէին զինքեանս առաւել անտարբերս առ այն արտաքին վայելչութի, որ պահէ գոնէ զերևոյթ բարի հանգամանացն, որք կորուսեալ են. Աներկեանք 'ի պատժոց ոմանք 'ի նոցանէ մոռացեալք զուխտ աղքատութե իւրեանց նուիրէին զինքեանս յայտնապէս շահավաճառութե. և էին այնպէս ագահք 'ի կուտել զհարստութիւս, մինչ զի եղանէին առաւել անագորոյն ճնշիչք այնց Հնդկաց, որոց պարտէին լինել պաշտպան:

(39) ‖ Զայս ստորագրութի վարուց Սպանիական վիճակին Ամերիկա ոչ իշխէի տալ 'ի վե̃ վկայութե միայն Փոօթէսթանթ հեղինակաց, զորոց կարէր լինել կասկած նախապաշարութե կամ բարդութե. Այլ՝ մասնաւորաբար, որ կալու զառաջին առիթ տեսանելոյ զներքին կացութի Սպանիական Ամերիկոյ, ստորագրէ զթուլութի այնր եկեղեցւոյ, զոր նա ինքն 'ի բաց թողեալ էր այնքան բարկութբ, մինչ զի թերահաւատիմ ես զվկայութէ նր. Նայց Գէծծօնի ստորագրէ զցոփ վարս Ամերիկոյ սուղ ինչ զկնի կայունաւորելոց նոցա անդէն. Ֆրէծիէր գիտող իմաստուն և նախանձաւոր վն կաթուղիկէ կրօնին նկարագրէ մեզ զխէնէշ վարս քահանայից Սպանիացւոց առաւել ևս մոյգ գունովք, քան զորս ես 'ի գործածեմ. Ճ'էնթիլն հաստատէ զբան նր. Կօրրէալ համախոհ է նց. և յաւելու 'ի վե̃ ասացելոցն զբազում պա-

պարակայս դիտողութեն արժանիս. Ունիմ քաջ իրաւունս հաւատալոյ, թէ վարք կանոնաւոր վիճակին 'ի վեր քան զամ 'ի Փէրու չիցեն առաւել բարի օրինակք. և նոյն իսկ Ակոստա միաբանի, թէ այս ցրուութի վարուց յառաջ եկեալ է 'ի հեռաւորութէ թողացուցանելոյ վանականաց թողուլ զառանձնութիւն և զկրթութիւն վանաց, և խառնիլ վերստին յաշխարհ յանձն առնլով զհոգս հոգւոց. Ահա յիշատակէ մասնաւորաբար զպակասութիւս նց. և համարի այնպէս զօրաւոր զփորձութի նց, մինչզի է 'ի կարծիս, թէ կանոնաւոր վիճակն ոչ պարտէր վարել զայսպիսի պաշտօնս. Նոյն իսկ փաստաբանք նոցա միաբանին, թէ կրօնաւորք բերին առ ամ ցեղ անկարգութեց, յորժամ առ անգամ մի թօթափեալ են զլուծ միանձնական կրթութ. և յեղանակէն իսկ, որով առնուն յինքեանս զիշխանագործութի նց, երևի թէ քաջ հիմնեալ իցին կշտամբանքն, որք առնին նց. 'Ի հարցանութիւն Պաղղիացւոց կացուի կանոնաւոր վիճակին է գրեթէ նոյն, որ 'ի կայունուրդսն Սպանիացւոց և գնացք նոցա նմանի կատարելապէս. Տէրն Պիէթ մեծաւոր աշխարհական Վիճակին 'ի Քայեննա, որոնէ ոչ փոքրագոյն բարեպաշտութբ քան թէ յստակութբ զպատճառս այսր ցրուութեն. և համարի զայնս նախապետաբար ազատութեն կանոնաւորաց յիրաւաբանութէ և 'ի դատողութեց թեմականաց իւրեանց, և փորձութեցն, յորս եդեալ են նոքա, և մասնաւորաբար դիմագրաւ լինելոյ 'ի տուրևառութեն. Բայց նշանակելի իմն է, զի ամ հեղինակք, որք կշտամբեն մեծագոյն խստութբ զարտուղութի կանոնաւորաց Սպանիացւոց յԱմերիկա, միաբանին 'ի ջատագովել զգնացս յեանց. Դաստիարակեալք սոքա 'ի ներքոյ կատարելագոյն իրիք կրթութեն քան զայլոց կարգացն, կամ խրախուսեալք 'ի փութոյ վն պատւոյ ընկերութեն, որ տիրէ իւրաքանչիւր անհատի նորին ընկերութ՟ն, պահեցին եթէ 'ի Մեքսիկօ, և եթէ 'ի Փերու զանազանելի իմն վայելչութ՟ի վարուց. Նոյն գոլութ՟ին պարտի ևս ընձեռել արժանաւոր հանգամանացն, զորս պահեն անդէն Եպիսկոպոսունք և մեծագոյն մասն եկեղեցականացն կացուցելոց յարժանապատուութ՟ն: ||

Պէսպէս հայթհայթանք առաջադրեալ եղեն առ 'ի դարմանել այսպիսի դայթագղական դժպատեհութ՟նց. Բազում անձինք ոչինչ նուազ նշանաւորք վս՟ բարեպաշտութ՟ն քան թէ վս՟ հանճարեղութ՟ն իրաւունս համարեցան, զի վանականք համակերպ կանոնացն եկեղեցւոյ սահմանաւորեսցին 'ի ներքս որմոց վանաց իւրեանց. և մի՛ ևս յափշտակեսցեն զպաշտօնս աշխարհական վիճակին. Նահապետն Եսքուիլաքեայ փոխար-
1618 քայն Փէրուայ առ Փիլիպպոսիմ՟ երրորդիմ՟ էառ զխորհուրդս առ այս վախճան. բայց նոքա շահեցան զհզօր բարեկամս, որք ջատագովեցին զնս՟. և նպաստաւորեալք 'ի զօրաւոր ազդեցութէ Յիսուսեանց, որք վայելէին յամ՟ արտօնութիւն պատկանելոյ մնացին կարգացն յԱմերիկա, արարին դիմեցմամբք իւրեանց զտպաւորութ՟ի 'ի վր՟ նահապետին և գործակալին. և այնպէս տևեաց 'ի թոյլատրութ՟ն նախկին սովորութ՟ին:

(40) || Սօլօրծան յետ յիշատակելոյ զթուլութ՟ի կանոնաւոր վիճակին յԱմերիկա այնու զգուշաւոր երկիւղածութ՟բ, որ վայելէր աշխարհականի միում, խօսելով զայսպիսի փափուկ նիւթոյ՝ տայ զկարծիս իւր և այն բազում պնդութ՟բ ընդդէմ յանձն առնելոյ զժողովրդապետական հոգս նոյն իսկ կանոնաւորաց. և յառաջածէ զվկայութ՟ի բազմաց մեծարու հեղինակաց երկրին իւրոյ ա՟ծաբանից և օրինականաց 'ի հաստատութ՟ի կարծեաց իւրոց. Թևակոխութ՟ի նահապետին Եսքուիլաքեայ արտաքսելոյ զնս՟ 'ի ժողովրդապետութեանց պարունա-

կեալ

կեալէ 'ի հաւաքման Ռօլպէրթայ. Զանազան յեռկարք առաջի մատուցան արքային 'ի հոգաբարձուաց միանձնական կարգաց . որոց ետ պատասխանի վիճակն աշխարհական. Երկոքեան ցուցին յընթացս այսր հակառակութեն զօրեղութեն իմն և զոգի աններելի ոխութեն առ անձինս աստիճանի իւրեանց ։ ||

23 Յունիսի 1757·

'Ի վախճանի կարողութե Յսեանց երթալով 'ի խոնարհումն , և Սպանիացիք ոչ ևս գոլով այնչափ բերեալք 'ի նպաստ միանձնական կարգաց , Ֆերտինանտոս վեցերորդ համարձակեցաւ հրապարակել զհրովարտակ մի, որ արգելոյր զինչիցէ անուն կանոնաւորաց զստանալն զբարերարութիւնս հանդերձ հոգաբարձութ հոգւոց , յայտ առնելով, զի զկնի մահուան նց , որք ստացեալ ունէին զայնս, մի՛ տեղակալեսցին , բայց եթէ միայն յերիցանց աշխարհականաց Սպանիացւոց ենթարկելոց թեմականաց իւրեանց. Եթէ այս կանոնաւորութի դնիցի 'ի գործ հաստատութ իւիք համեմատեցելով իմաստութեն , որ թելադրեալ է զայն , երևելի իմն նորոգումն տեսցի առնուլ զտեղի 'ի մէջ եկեղեցականացն Սպանիական Ամերիկոյ . և վիճակն աշխարհական լինիցի սակաւ առ սակաւ մարմին մի մեծարու մարդկան. Նա՛ գնացք բազմաց են այժմիս վայելուչք և բարի օրինակք. և այլազգ գործելով կորուսանէին վաղվաղակի զգերամբարձութիւն 'ի վն հոգւոց հայրենակցաց իւրեանց 'ի Սպանիական հանդրուանսն :

*Պատճառք դոյզն յառաջադիմութեան 'ի դարձուցանելն զՀնդիկս առ քրիստոնէութիւն :

*Բայց որով արդեամբք և զարդարեալ իցեն եկեղեցականք Սպանիացւոց , ջանք նոցա վասն հաղորդելոյ զծանօթութի ճշմարիտ կրօնին Հնդկաց՝ եղեն առաւել տարաբախտք , քան զոր սպասեալ լինէր 'ի նախանձայուզութէ նոցա և 'ի տէրութէն, զոր ստացեալ ունէին 'ի վերայ այնր ժողովրդեան. Կարեն նշանակել պէսպէս պատճառք սորա. Առաջին Միսոնարք յեռանդեան առնելոյ զնկամաւոս ընդունէին զժողովուրդս Ամերիկոյ 'ի քրիստոնէական եկեղեցի առանց նախաշաւիղ կրթութեն նոցա 'ի վարդապետութիւնս կրօնին, և ևս յառաջքան զուսանիլն քաջ զլեզու նոցա առ'ի լինել բաւական մեկնելոյ նոցա զխորհուրդս և զպատուիրանս կրօնին. Քննելով 'ի վեր նուրբ իմն զանազանութեն դպրոցական ածաբանութեն ողջագուրեցին զայս օտար սովորութի այնպէս անմիաբանական ընդ հոգւոյ կրօնի իւրք, որ ուղերձի առ միտս մարդկան իբր ներհակ լուսոյ բանին. Յորժամ Ամերիկացի ոմն ընկճեալ յերկիւղէ Սպանիական կարողութեն, կամ շարժեալ յօրինակէ գլխոց իւրոց յայտնէր զդոյզն փափաք ընդգրկելոյ զկրօնն տիրապետողաց իւրեանց, անընդմիջաբար մկրտեալ լինէր. և ցորչափ տևեաց այս եռանդն յընթացս սակաւ ամաց յետ առման Մեքսիքեան կայսրութեն խորհուրդն այն մատակարարեալ եղև աւելի քան չորից միլիոնից. Անկամուտք ողջագուրեալք այնքան շտապաւ և ոչ հրահանգեալք լիով 'ի վարդապետութիւնս կրօնին, որոց ենթադրիւր, թէ ընծայեալ իցեն զհաւանութի, այլև խեղամտեալ դժպատեհութե այնց, որք խնդրեալ լինէին 'ի բաց թողանիլ, պահէին զմեհեանս, զոր ունէին վասն նախկին կրօնաժետութեն իւրեանց. կամ խառնէին զիղձս առ սկզբունս և առ ծէսս իւրեանց ընդ թեթև ծանօթութեն քրիստոնէութեն, զոր ընդգրկէին. փախանցէին զայսօրիկ զգացուածս առ յետնորդս իւրեանց, որոց 'ի հոգին այնպէս խորապէս քանդակեալ են, մինչ զի Միսոնարք Սպանիացիք հանդերձ բազմապատիկ նախանձայոյզ մտավարժութբ իւրեանց ոչ երբէք կարողացան արմատախիլ առնել զնս. Զսահմանադրութիւնս նախնեաց իւրեանց յիշեն տակաւին, և ունին 'ի պատուի Հնդիկք եթէ 'ի Մեքսիկօ և եթէ 'ի Փերու. և յամենայն նուագի, յորում հաւատան զինքեանս հեռիս 'ի տեսութէ Սպանիացւոց ժողովրդին առ'ի կատարել զկռապարիշտ ծէսս իւրեանց. Սակայն այս միայն ոչ է խոչն, որ ընդդիմադրի յառաջադիմութեան քրիստոնէութեն 'ի մէջ Հնդկաց. Իմացական կարողութիք նց են այնպէս կապարաւորեալք, դիտողութիք նոցա և մտածութիք այնպէս սակաւ յառաջադէմ լինին անդր քան զառարկայս ըզգայութեանց, մինչդի անընդունակ են կերպաւորելոյ զգաղափարս վերացեալս. և ոչ ունին զլեզու բացատրելոյ զայնս. Նա այսպիսի մարդիկ վսեմական և հոգեւոր վարդապետութիք քրիստոնէութեն գրեթէ անըմբռնելի են. Յոգնաթիւ և մեծաշուք խորութիք կաթուղիկէ պաշտաման հաճոյ են յաչս նց, և փութալի. այլ յորժամ մարդիկք նոցա ջանան մեկնել նոցա զյօդուածս հաւատոյ և զխորհուրդս, ընդ որոց այնք արտաքին պահպանութիք լծակցեալ են, թէպէտ մատուցանեն զունկն համբերութեն, սակայն այնպէս սակաւ իմանան զնշանակեալն այնր, որում ունկն դնեն, մինչդի հաւանութեն նոցա ոչ է նշան հաւատալոյ իւրեանց. Իսկ անտարբերութիւն, զոր ցուցանեն յամ առիթս՝ է և մեծագոյն քան զանընդունակութի նց. Ուշադիրք միայն ներկայ վայրկենի, և պատաղեալք միայն յառարկայսն, որք կան նց առաջի, Հնդիկք զմտաւ ածեն այնպէս ցանցաղ 'ի վերայ անցելոյն կամ ապագային, մինչդի ոչ խոստմունք և ոչ սպառնալիք կրօնին ունեն բազում ազդաւորութեն 'ի վերայ նց. և մինչ յառաջատեսութեն նոցա դժուարաւ տարածանի առ վաղիւեան օրն, զիարդ մարթ է շնչել 'ի նոսա զփոյթ հանդերձելոյ իրիք կենաց. Ոմանք 'ի միսիոնարաց ապշեալք հաւաստապէս ընդ թմրութեն նոցա և ընդ անզգայութեն, վճռեցին զնս զարմն ինչ անբան մարդկան անընդունակ իմանալոյ զառաջին սկզբունս կրօնին. Ժողով ինչ արարեալ 'ի Լիմա բացորոշեաց, թէ պատճառաւ այսր տկարուրութեն նոցա պարտ էին արտաքսիլ 'ի խորհրդոց հաղորդութեն. Այլ թէպէտ Պօղոս երրորդ հռչակաւոր կոնդակաւն իւրով արարեցելով յամին 1537. յայտ արար զնս̃ ստեղծուածս բանաւորս և ընդունակս ամ̃ արտօնութեանց քրիստոնէից, սակայն յընթացս երկուց հարիւրեկաց և կիսոյ են այնպէս նուաղ զարգացմունք նց̃ 'ի ճանաչման, մինչզի յոյժ սակաւք ստացեալ ունին ըստ բաւականին զընտրողութի̃ առ'ի դատիլ արժանի մատչելոյ առ սբ̃ սեղանն. Այնքան էր խելամտութիւնն զանընդունակութէ նց̃ և զտգիտութէ 'ի նիւթ կրօնին, մինչզի փիլիպպոս երկրորդ յորժամ հիմնեաց զօրրայլան քննութին յԱմերիկա յամին 1570. զերծոյց զՀնդիկս յիրաւաբանութէ այսր դժնեայ ատենի. և ոչ ենթարկեաց զնս̃, բայց եթէ իրաւաբանութե թեմականաց իւրեանց. Նաև զկնի հանապազորդագոյն հրահանգութեան հաւատ նոցա կալեալ է իբր տկար և երկբայական. և թէպէտ ոմանք 'ի նոցանէ հասին ուսանել զգիտնական լեզուս, և անցին գովութբ̃ ընթացս դպրոցական դաստիարակութե, այնպիսի է թերահաւատութին զնոցանէ, մինչզի ոչ ոք Հնդիկ ընկալեալ է երբէք առ քահանայութի, կամ առ կարգ ինչ կրօնաւորական:

(4.) ‖ Ոչ միայն բուն Հնդիկք, այլև Մեսթիծօսք, այսինքն, որդիք Սպանիացւոյ միոյ և Հնդկուհւոյ միոյ էին սկզբնարար արտաքսեալք 'ի քահանայութէ և յընդունելութէ 'ի կարգ ինչ կրօնաւորական. Բայց օրինօք իւիք հրապարակեցելով 'ի 28 Սեպտեմբերի 1588. փիլիպպոս երկրորդ պարտաւորեաց զնախագահս Ամերիկոյ ընձեռել զսբ̃ կարգս Մեսթիծօսաց ծնելոց յօրինաւոր ամուսնութէ. բայց այսու պայմանաւ, եթէ գտցեն զնոսա հանդերձեալս կարևոր հանգամանօք, և թողացուցանել նոցա առնել ուխտս յորում եւիցէ մենաստանի զկնի սովորական նորընծածայութեն. Երևի թէ գոյր նկատումն ինչ առ այս, օրէնս 'ի Նորն Սպանիա, այլ ոչ երբէք 'ի փէրու. Արարեալ յետոյ զայսմանէ առաջարկութիւն ինչ առ Կառոլոս երկրորդ յամին 1697. հրատարակեաց նա զնոր ինչ հրովարտակ հրամայելով զպաշտպանութի նորա և յայտ առնելով, թէ է կամք իւր, զի ամ հպատակք իւր, եթէ Հնդիկք և եթէ Մեսթիծօսք վայելեսցեն 'ի նոյն անձնորէնութիւն, յորս Սպանիացիք. Բայց այնպիսի էր ատելութիւն Սպանիացւոց յԱմերիկա առ Հնդիկս, մինչզի հրովարտակն յառաջեած դուզնաքեայ ինչ արդասիս, որովհետև յամին 1725 փիլիպպոս հինգերորդ պարաւանդեցաւ նորոգել զայն առաւել ևս բացարձակ եղանակաւ. Բայց են այնպէս աննուաճելի ատելութիւն և արհամարհութիւն, զոր Սպանիացիք ունին առ Հնդիկս, մինչզի ներկայ թագաւորն ստիպեցաւ հրամայել նորոգ զկատարումն այնր հրովարտակի օրինօք իւիք հրատարակեցելովք 'ի 11 Սեկտեմբերի 1774: ‖

Ներք
Սպանիա
կան հար
գունու
թեց:

Այսմ կարճառօտ քննութէ մարթ է կերպաւորել զճանաչումն ինչ ներքին կացութե Սպանիական մշակութից. Արդ մնայ ինձ խօսել զպէսից բերոց նց և զվաճառականութենէն, զոր առնեն նոքա ընդ մայր հայրենեացն. Եթէ տէրութիւնք Սպանիոյ 'ի նոր աշխարհին լեալ էին տարածութե համեմատ իւրումն, յառաջադիմութի հարգունութեց իւրոց լեալ էր հաւասար յառաջադիմութեան այլոց ազգացն. այլ յորժամ գէթ ընդ կէս հարիւրեակ մի աննորհուրդ յափշտակողութի իւր կալեալ էր զերկիրս ընդարձակագոյնս քան զբովանդակ Եւրոպիա, անընդունակութի իւր առ'ի տալ նոցա զթիւ բնակչաց բաւական մշակելոյ զնս էր այնպէս յայտնի, մինչզի պարտէին ունել զչափ իմն ուղղաւորութի բովանդակ ճգանք հարգունականացն. Նոքա ոչ կերպաւորեն զմարմին ինչ միաւորեալ, ուր ճարտարութիւն ամփոփեալ 'ի կոպապարաց եթէ 'ի տեսութիւն իւր և եթէ 'ի գործողութիւն իւր, առաջնորդեալ իցէ չափաւորութե̃ և յարատեւութե̃, որ դարձուցանէ զայն ա̃մ, զոր ունի, 'ի սեփական պէտս իւր, և հանէ անտի զմեծագոյն օգուտ. փոխանակ սորա Սպանիացիք զառածեալք 'ի հրապուրիչ տեսութէ, որ առաջի ընծայիւր ն̃ց, բաժանեցին զտարածս իւրեանց Ամերիկոյ 'ի կառավարութիւնս լայնատարածս. Այլ քանզի թիւ նոցա էր կարի փոքրիկ վ̃ն ձեռնարկելոյ 'ի կանոնաւոր իմն մշակութի անբաւ գաւառացն, զորս կալեալ ունէին, թող թէ վասն բազմամարդացուցանելոյ զայնս, դարձուցանէին զուշադրութիւն իւրեանց առ սակաւ առարկայս, որք քարշէին զն̃ յուսով առ ձեռնպատրաստ չափազանց իրիք շահու. և եղանէին արհամարհածօք 'ի հասարակագոյն շաւղաց մտավարժութեն, որք առաջնորդեն յամրակի, բայց մեծագոյն ապահովութե̃ առ դանձս և առ աճումն զօրութե̃ ազգի իրիք:

'Ի հանգոյ նշ: 'Ի մէջ ա̃մ եղանակաց, որովք կարեն ստացեալ լինել փարթամութիւնք, եղանակն որոնելոյ զմեծագին մետաղս է մի յառաւել զառածանողացն՝ վ̃ն մարդոց ոչ սովորելոց կանոնաւոր հանապազորդութեն, որ պահանջի 'ի մշակութէ երկրաց և 'ի տուրևառութէ. կամ այնպէս ձեռներեց եղելոց և յափշտակողաց, մինչև ոչ շատանալ յաջորդական և պիտանի պտղովք, զորս այս երկու աղբերակունք յառաջածեն. Վ̃ն այսպիսի պատճառի վաղվաղակի իբրև զանազան գաւառք յԱմերիկա ենթարկեալ եղեն տէրութեն Սպանիոյ, էր այս իբր միակ ոճ 'ի գործածեալ 'ի բաղդորդաց վ̃ն փարթամանալոյ. Այնք գաւառք ցամաքին, որք ոչ յանկուցանէին զն̃ առ'ի կայունանալ անդէն ակնկալութե̃ մատակարարելոյ ն̃ց զոսկի և զարծաթ, էին բոլորովին բարձի թողի եղեալք. և լքանէին ևս զայնոսիկ, որք ոչ համեմատէին յու-

լա սոյն

այն յղացելոյ մտին նոցա. Նաև յորդք կղզեացն, որք էին առաջին պտուղ գիւտից իւրեանց և առաջին առարկայ ուշադրութեան նոցա, նուազեցան այնքան 'ի պատահականութենէ յաչս նոցա, մինչզի յորժամ հանքքն, զորս բացեալ էին անդէն, սպառեալ լինէին, թողին զայնս ունել առաւել մոավարժ ստացողաց. Ամենեքեան խուռն ընթանային 'ի Մեքսիքօ և 'ի Փերու, ուր անբաւ քանակութիւն ոսկւոյ և արծաթոյ գտեալ յազգայնոց, որք ունէին սակաւ ճարտարութիւն և նուազագոյն ընդունակութիւն, խոստանայր զանբաւ գանձս 'ի փոխարէն ջանից իւրեանց լաւագոյն ձգտելոց և առաւել յարատևողաց:

Գիւտ
հանքացն
Փօթօ-
սեայ և
Սաքօթէ-
քասայ:

Ընդ ամս յոլովս եռանդն հետախուզութեանց էր առաւել տածեալ 'ի յուսոյ քան 'ի յաջողութենէ. 'ի վախճանի հարուստ հանքք արծաթոյն Փօթօսեայ 'ի Փերու յայտնեալ եղեն պատահաբար յամին 1545. 'ի Հնդկէ միոջէ, մինչ սողայր ընդ լեառն մի հետամուտ լինելով Լամայի, որ ելեալ էր 'ի հօտէ իւրմէ. Գտան վաղվաղակի զկնի հանքքն Սաքօթէքասայ 'ի Նորն Սպանիա՝ սակաւ վայրագոյնք քան զայլս 'ի յորդի. Յայսմ ժամանակէ հետէ արարեալ եղեն յաջորդական գիւտք յերկուսին հարգաւնութիւնս. և հանքք արծաթոյ են այժմիկ այնպէս բազմաթիւք, մինչզի աշխատիլն 'ի նս, և 'ի սակաւս ումանս ոսկւոյ 'ի գաւառսն հաստատուն երկրին և 'ի նոր թագաւորութեան Կրանաթայի է նախապետական զբաղումն Սպանիացւոց՝ վերածել առ ոճ իմն ոչինչ նուազ մանուածոյ քան շահեկան. Ստորագրելն զբնութիւն զանազան հրահալելեաց, եղանակն հանելոյ զայնս 'ի խորոց երկրին, և մեկնելն զզանազան գործողութիւնս, որովք հրահալելեքն զատուցեալ լինին 'ի գոյացութեանցն, որք գտանին խառնեալք 'ի նս կամ ներգործութեամբ հրոյ կամ միջնորդութեամբ սնդկի, հայի 'ի բնական փիլիսոփայն և 'ի քիմիականն յաւէտ քան թէ 'ի վիպասանն:

Հարստութիւն, զորս յառաջ ածէն: Տարապայման զեղումն, որով լերինք նորոյ աշխարհին թափէին զգանձս իւրեանց, ապշեցոյց զնոսա, որք ցայնժամ սովոր էին հանել զմիջասահման իմն քանակութ՟ի ոսկւոյ և արծաթոյ 'ի հանքաց նախկին կիսագնդոյն. Ըստ հաշուի միում արարեցելոյ, որ թըւի ինձ չափաւորագոյն ևս, քանակութ՟ի ոսկւոյ և արծաթոյ, որ կանոնաւորաբար մտեալ է 'ի նաւահանգիստս Սպանիոյ, ամբառնայ ամի ամի 'ի չորս միլիոնս լիրէ ստերլինաց, հաշուելով 'ի տարւոյն 1492, յորում Ամերիկա գտեալ եղև մինչև ցներկայ ժամանակս. որ և կերպաւորէ յերկերիւր ութսուն և երիս ամսն զգումար հազար հարիւր երեսուն և երկու միլիոնից. Զայս անբաւ գումար ոմնքն պատմագիրք Սպանիացւոց թէ պարտէր յաւելուլ 'ի վերայ նոյնչափ նկատմամբ գանձուցն, որք հանեալ եղեն 'ի հանքայն առանց վճարելոյ զբաժ թագաւորին. Զայս նախ ենթադրեալ Սպանիա քարշեալ է 'ի Նոր աշխարհէն զփարթամութ՟ի ինչ, որ ամբառնայ գոնէ առ երկու հազար միլիոնս լիրէ ստեռլինաց:

(42) ‖ Ուծթարիծ ամենեքին խնամոտ և զգուշաւոր հաշուարար երևի միաբանիլ, թէ քանակութ՟ի արծաթոյ մտելոյ 'ի թագաւորութ՟ին առանց վճարելոյ զբաժն, կարիցէ ամբառնալ առ այս գումար. Ըստ Հերրերայի ոչ էր աւելի քան զերրորդ մի այնր, որ հանեալ լինէր 'ի Փոթոսեայ. որ վճարէր զհինգերորդն թագաւորին. Սօլործան ասէ նմանապէս, թէ քանակութ՟ի արծաթոյ, որ գաղտագողի մուծանի 'ի Սպանիա, է շատ մեծագոյն քան զայն, որ է կանոնաւորաբար տպեալ յետ վճարեալ լինելոյ հինգերորդին: ‖

*Հանքքն, որք ետուն 'ի դուրս զայս ապշելի քանակութ̅ի գանձու՝ ոչ են գործեալք ծախուք թագաւորին և ոչ հասարակութ̅ն. Նո՛ր քաջալերեալ զոսկական բաղդորդսն՝ անձն, որ յայտնէ գնոր իմն երակ, ունի իսկոյն զիրաւունս յատկութ̅ն ՚ի վ̅ր այնր. Ներէ զպահանջումն իւր առաջի բդեշխի գաւառին, որ շնորհէ նմա զորոշեալ տարածութ̅ի ինչ երկրի և զտոյգ ինչ թիւ Հնդկաց պարտաւորութ̅ե բառնալոյ զհանքն ՚ի ներքս պայմանեալ իրիք ժամանակի և վճարելոյ թագաւորին զհինգերորդն հանեցելոյն իւրոյ. Հրաժարեալք ՚ի դիւրութ̅են, որով ստացեալ լինին այսպիսի շնորհմունք, և խրախուսեալք յամենառատ պտղոցն, զորս ոմանք հաւաքեցին յայսպիսի ձեռնարկութիս, ագահքն և համարձակքն, երկչոտքն և թերահաւատքն ընդգրկեն զայն սքանչելի անվեհերութ̅բ. Այսպիսի մարդելոյղ առարկայիւք միշտ ՚ի տեսութ̅ն՝ սնուցեալք հանապազորդ ՚ի յուսոյ, թէ բաղդն բացցէ նց̅ զթագուն գանձս իւր, և լցուսցէ զբովանդակ փափաք նոցա, համարին զայլ ա̅մ զբաղումն անհամ և անարգ. Դիւթութ̅ի այսր հետախուզութ̅ն նըման մոլեգնութ̅ն վտանգաւոր խաղուն՝ ունի յինքեան զայնքան զօրութ̅ի, մինչզի տիրէ հոգւոյն լրապէս և տայ զնոր իմն հակումն բնական խառնուածոյն. Ընդ ազդեցութ̅ե իւրով շրջահայեացն եղանի յանդուգն և ագահն շռայլ. Թէպէտ ամենազօր է ը̅ ինքեան դիւթութ̅ին, զօրութ̅ի իւր անձեցեալ լինի յարհեստագործութ̅նց կարգի իրիք մարդկան ծանուցելոյ ՚ի Փերու ընդ անուամբ Հուանքավելիքայ. Սոքա են սովորաբար մարդիկ տարաբաղդք, որք ունելով զփոքրիկ ճանաչումն ինչ հանքաբանութ̅ն ընկերակցեալ ՚ի մարդելութ̅է և յեղանակէ վստահութ̅ն սեփականէ առաջարկորդաց՝ յանդիման լինին փարթամաց և դիւրահաւատից. Պանծալի ստորագրութ̅ք հարստութ̅ն երակացն գտելոց ՚ի նոցանէ, ցուցանեն

*Ագին,
որ ծնո-
Դի յոյն-
մանէ :

անտի զկատարածս ինչ. և պնդելով ժպիրհ խաբէութբ՟, թէ հանդիպումն է ստոյգ, և ծախքն միջասահման, 'ի վախճանի ատիկեն համոզել զնա. Կերպաւորի ընկերութե՟ն մի, կանխաւ գումար ինչ յիւրաքանչիւր ստորագրողէ. Հանքն բացեալ է, խուզարկուքին վստահացեալ առաջնորդութե՟ն բովանդակ գործոյն. Ընդառաջ ելանեն դժուարութիւնք ոչ նախատեսեալ, որք պահանջեն զնորանոր ծախս. այլ ոչ ձախորդութիւնք, ոչ յապաղմունք, զորս փորձեն, զօրեն շիջուցանել զխառուածս նց. Աշմարեալ է, զի եթէ ոք մտանէ առանգամ մի յայս կախարդեալ շաւիղ, գրեթէ անկարելի է ելանել անտի 'ի դուրս. այլայլին գաղափարք իւր. երեւի տիրել 'ի նմա այլ իմն հոգի. հանապազ կան նմա առաջի աչաց տեսիլք երևակայական գանձուն. ոչ խորհի, ոչ խօսի, և ոչ երազէ երբեք զայլ ինչ:

Անհաւէտ ուղեւորներ:

Այսպիսի է հոգին, որ պարտի խրախուսել հարկաւորապար զմարդիկ ձգտելս հետաղօտել զհանքս ոսկւոյ և արծաթոյ. և չիք ինչ առաւել հակադրեալ յառաջադիմութե՟ն երկրագործութե՟ն և շահավաճառութե՟ն, որք առնեն զազգ մի ճշմարտապէս փարթամ. Եթէ ոճն մատակարարութե՟ն 'ի Սպանիական հարգունութիւն լեալ էր հիմնեալ 'ի վր՟ սկզբանց ողջամիտ իւիք քաղաքականութե՟ն, կառավարութիւն մերձեցուցեալ էր 'ի նահանջել զհպատակս յայսպիսի վնասակար ճարտարուէ փոխանակ խրախուսելոյ զայնս. „Առաջարկութիւնք
„ փորելոյ զհանքս (ասէ քաջ գատաւոր ոմն քա-
„ ղաքական վարման ազգաց) փոխանակ հաստա-
„ տանելոյ զդրամագլուխն ծախեալ անդէն 'ի միա-
„ սին ընդ սովորական շահու գետնոյն կլանեն
„ յոլովակի զդրամագլուխն և զպտուղն. Այսո-
„ քիկ են առաջարկութիւնք, որոց 'ի մէջ այլոց ա-
„ մենեցուն խոհական ոմն օրէնսդիր, որ փափա-
„ քի աճեցուցանել զդրամագլուխս ազգին իւրոյ,

„ պարտ էր հրաժարիլ 'ի տալոյ զզուգնաքեայ
„ գրգին՝ 'ի վեր քան զիմ յորժամ պիտոյ ի-
„ ցեն չափազանց ծախք. Բայց այնպիսի է ան-
„ տեղի վստահութիւն, զոր ամ մարդիկ ունին 'ի
„ բարեբախտութի իւրեանց, մինչզի ոչ երբեք
„ առաւել հակեալ են 'ի վտանգել զինչս իւր-
„ եանց, բայց եթէ յայն առիթսն, ուր նուազ
„ խոստանան զշահաւոր իմն ելս „. Իսկ 'ի Սպանիական հարգունութիւն կառավարութին ջանայ սանձել զայն հոգին, զոր պարտէր մանաւանդ աշխատիլ առ'ի նուաճել, և կնքով հաստատութեն իւրոյ աճեցուցանէ զայն անխորհուրդ դիւրահաւատութիւն, որ դարձոյց զարգասաւոր ճարտարութիւն փերուայ և Մեքսիկոյ առ այսպիսի իմն վտանգաւոր առարկայ. Արժ է վերագրել առ այս պատճառ փոքր յառաջադիմութիւն, զոր արարեալ են նոքա ընդ երկուս հարիւրեակս և կէս կամ 'ի պիտանի ձեռագործս, կամ յայն շահաւէտ ճիւղս մշակութեան, որք մատակարարեն հարգունութեանց այլոց ազգաց զևս բարեգոյն վաճառս իւրեանց. Առ պատուհական հրահանգօք՝ զինչ և իցէ այլ բարի բնութեն այնպէս արհամարհեալ է անդէն, մինչզի վտարանդի գաղափար արժողութեն նոցա աղքեալ է 'ի վ՛ր լեզուի Ամերիկացւոց. և Սպանիացիք կայունացեալք անդէն անուանեն զգաւառ ինչ փարթամ ոչ յարգաւանդութենէ գետնոյ իւրոյ, ոչ յառատութէ արմտեաց իւրոց, կամ 'ի յուռթիութէ մարդաց իւրոց, այլ միայն 'ի մեծագոյն, կամ 'ի փոքրագոյն ճոխութէ մետաղացն, զորս պարունակեն լերինք իւր. 'Ի խնդիր այսց դարձուցանեն զթիկունս առ զուարճալի դաշտավայրսն Մեքսիկոյ և փերուայ. և երթան 'ի բաց կայունաւորիլ յանշէն և յամուլ կողմանսն. ուր շինեալ են զընդարձակագոյն քաղաքսն, զորս ունին 'ի Նոր աշխարհին. Գործունէութէ Սպանիացւոց կալաւ սկզ-

բնաւորար զայս ուղղաւորութիւն. և այսօր այնպէս դժուարին է թեքել զայն առ այլ ինչ ճանապարհ, մինչզի թէպէտ վասն պէսպէս պատճառաց շահն հանքաց բազմօք նուազեալ իցէ, շլացութիւն տակաւին ունէ. և գրեթէ ամենայն անձն, որ ունի զմասն ինչ 'ի վաճառականութեան նորոյն Իսպանիոյ, կամ փերուայ միշտ կցորդեալ է 'ի պեղման հանքաց:

(43) || Յորժամ հանքքն Փօթօսեայ բացեալ եղեն յամին 1545, երակքն էին այնպէս մօտ մակերևութին, մինչզի մետաղն հանեալ լինէր դիւրակի. և ևս այնպէս մաքուր, զի զտեալ էր սակաւ աշխատութեամբ և սակաւ ծախուք լոկ ներգործութեամբ հրոյ. Այս պարզ եղանակ զտելոյ սոսկ հալմամբ շարունակեաց մինչև ցամն 1574, յորում դատեալ եղև սովորութիւն զտելոյ զոսկին և զարծաթն միջնորդութեամբ սնդկի. Հանքքն այնոքիկ գոլով պեղեալք առանց ընդմիջահատութեան ընդ երկուս հարիւրեակս, երակքն այժմ այնպէս 'ի խորս սուզեալ են, զի ծախքն հանելոյ զմետաղն մեծապէս աճեցեալ են. Բաց յայսմանէ հարստութիւն նոցա, (որ ոչ պատահի 'ի մեծագոյն մասին այլոց հանքաց) փոքրկացեալ է ըստ չափուն, որով երակն երթալով երթայ և ցածնու. և նուազեցուցանէ ցայն աստիճան, մինչզի զորմանս բերէ, թէ զիարդ Սպանիացիք յարատևեն յաշխատիլ յայնս. Այլ հարուստ հանք յաջորդաբար բացեալ են. բայց ընդհանրապէս արժողութիւն մետաղացն այնչափ նուազեալ է վասն աճելոյ ծախուց հանելոյն զայնս, մինչզի արքունիքն Սպանիոյ յամին 1736 վերածեաց զմասն վճարելի թագաւորին 'ի հինգերորդէ առ տասանորդն. Նոմանդակ սնդիկն 'ի գործածել 'ի փէրու հանեալ է 'ի հռչակաւոր հանքէն Կուանաքապելիքայ բացելոյ յամին 1563. Թագաւորութիւն վերապահեալ է ինքեան կալուածութիւն այսր

հանքի. և անձինքն, որք գնէին զնոցին, ոչ միայն վճարէին զգինն, այլև զհնգերորդն, որ անկ էր թագաւորին. Բայց յամին 1761 այս տուրք բարձեալ եղև պատճառաւ աճման ծախուցն 'ի գործս հանքաց. Եթէ ընթերցողքն փափաքին տեղեկանալ եղանակին, որով Սպանիացիք յառաջ տանին զաշխատութիւն հանքաց իւրեանց և զզտումն հրահալեացն, գտցեն զայնմանէ զստորագրութիւն իմն խնամով արարեալ 'ի յԱքօստայէ գպր. 4։ ‖

Այլ
բերք Ս-
պանիա-
կան հար-
գաւառա-
Ամէկյն :

Արդարև հանքք են նախապետական առարկայ ուշադրութեան Սպանիացւոց. և պատուական մետաղքն, զորս նոքա գոյացուցանեն, կերպաւորեն զես մեծագոյն յօդուածն շահավաճառութեան նոցա. Բայց բերրի գաւառքն, զորս ստացեալ ունին հանդերձեն զնոսա այլովք տարազուք հաւասարապէս ցանցառօք և պատուականօք. Քոշէնիլն է բերք ինչ գրեթէ մասնաւոր Նորոյն Սպանիոյ. և այնպէս դիւրասփիւռ, մինչզի վաճառումն իւր է միշտ ապահով. և բերէ զայնչափ շահ, զի վճարէ ճոխաբար զաշխատութիւն և զջանսն եղելոյս. 'ի սնուցանելն զօտարակերպ ժժմունսն, յորոց այս յարգոյ ներկ բաղադրեալ է, և 'ի նախապատրաստել զայն. Քինայն կամ կեղեւն Փերուեան առաւել առողջարար պարգևացն և առաւել կազդուրիչն զօրութիւն, զոր նախախնամութիւն այ՟ կարեկցութ՟ մարդկային հիւանդութեան տուեալ իցէ ճանաչել մարդոյ, գտանի միայն 'ի Փերու. ուր կերպաւորէ զամենաօգտակար ստեղն վաճառականութեան։

(44) ‖ Յաղագս բարձման հինգերորդին և ամանց յաջորդական ցածուցմանց գնոյն, որք հարկաւորք էին 'ի պատճառս աճեցեալ ծախուն 'ի գործելն զհանքս, սնդիկն, որ վաճառեալ էր ութսուն մարչիլաց քուինթալն, այժմ ոչ արժէ վաթսուն. Տուրքն 'ի վերայ ոսկւոյ վերածեալ է առ

քսաներորդն, կամ թէ կամիցիմք ասել՝ առ հինգն առ հարիւր :

Եղանակն Կուաթիմալային է մեղմագոյն քան զորոյ և իցէ գաւառին Ամերիկոյ. և մշակեալ լինի ընդ երկայնաձիգ իմն տարածութիւն երկրին. Գաքաօն թէպէտ ոչ է մասնաւոր Սպանիական հարգանութեանց, լաւագոյն ևս աճէ անդէն քան այլուր. և հայելով 'ի մեծ ծախումն չքօղութիւն յԵւրոպիա և յԱմերիկա է տարաղ իմն բազումս խնդրեալ. Պենղուինչն Գուպայի առաւել անուշահոտ քան զայլն ամ՝, որ գայ 'ի Նոր աշխարհէն, շաքարն մշակեալ 'ի Սպանիոլա և 'ի Նորն Սպանիա 'ի միասին ընդ այլոց համեմանց կարեն թըւել 'ի մէջ բնական բերոցն Ամերիկոյ, որք հաստատեցուցանեն զառուբևառութիւն Սպանիական. Պարտ է յաւելուլ 'ի վ̅ր այսր ամ̅ի գյօղուած իմն նշանաւոր օգտութի, այս է, փոխարկերումն խաղախոց. վ̅ն որոց, որպէս և վասն բազմաց իրաց, զորս թըւեցի, Սպանիացիք են առաւել պարտական սքանչելի բերրիութեն երկրին, քան թէ սեփական նախատեսութեն և ճարտարութեն իւրեանց.

Ընտանի չնչաւորք Եւրոպիոյ՝ և մասնաւորաբար եղջերաւոր անասունք բազմացեալ են 'ի Նոր աշխարհին արագութ̅բ իմն, որ անհաւատալի թըւի. Յետ սակաւ ամաց՝ յորմէ հետէ Սպանիացիք կայունացեալ էին անդէն, անդեայք եղեն այնպէս յոգնաթիւք, մինչ զի տեարք նոցա թըւէին զնս հազարաւորս. յետոյ սկսեալ եղև մատուցանել առ նոսա նուազ ուշադրութի. և թողին զնոսա շրջմոլիկ յանտառս. ուր նպաստիւք Կլիմային և արօտոցն բազմացան ցանհաւատալի իմն աստիճան. Երթան չնչաւորքն Թափառական ընդ ահագին դաշտավայրսն, որք ընդարձակին 'ի Պուէնոսայրեայ դէպ Անտեայցն 'ի ջոկս երեսուն և քառասուն հազարաց և դժբաղդ ճանապարհորդն, որ առ անգամ մի պատահի նոցա, պարաւանդեալ է

'ի

'ի բազում տուրս գնալ յառաջքան զկարող լինելն ելանել 'ի նոցանէ. Այն հաւաստապէս բազմաթիւք 'ի Նորն Սպանիա և յայլ զանազան գաւառսն. Սպանեալ լինին սոսկ վասն սիրոյ մորթոց նոցա. և կոտորածն յեղանակս ինչ տարօրէն է այնպէս մեծ, մինչ զի գարշահոտութիւն գիշոցն, որք թողեալ են 'ի դաշտի ապականէր զօդն, եթէ բազմութիւն իմն վայրենի շանց և վիթխարի երամք հնդկահաւուց, կամ անգեղոց Ամերիկացւոց առաւել գիշախանձից քան զամենայն թռչունս ոչ էին վաղվաղակի եկեալ 'ի գիշատել զնոսա. Թիւ այսոց մորթոց բերելոց յԵւրոպիա հիանալի է և է գլուխ ինչ վաճառոյ անբաւաշահ. Գրեթէ բովանդակ այս տարազք կարեն նկատիլ իբր նոյնչափ վաճառք մասնաւորք, բնաւք բաց 'ի վերջնոյն զանազանք 'ի Սպանիական բերոց:

Օ- գուտն, զոր հա- նէ Սպա- նիա 'ի հարգա- նութեանց իւրոց:

Փոխաբերումն 'ի Սպանիա այսոց պէսպէս յօգուածոց 'ի հարգանութեանց իւրոց եղև 'ի սկզբան անդ այնպէս երևելի, մինչ զի նորին ճարտարութիւն իւր և ձեռագործք իւր յաջողէին այնպէս, զի արդասեօք նոցին Սպանիա կարօղէր գնել զառաջին բաղս նորոյ աշխարհին և լնուլ զյարաժամ աճեցեալ խնդիրս իւր. Առ թագաւորութեամբքն Ֆերտինանտոսի և Եղիսաբեթի և Կառօլոսի հինգերորդի Սպանիա էր մի յոռաւել ճարտարամիտ աշխարհացն յԵւրոպիա. Ձեռագործք իւր յասուէի, 'ի վուշ, 'ի մետաքս այնպէս առատ էին, մինչ զի լնուին զպէտս հպատակաց իւրոց և օտարաց. Յետոյ գտանելով սփռել զայն յԱմերիկա, ունէր որչափ պիտոյ էր 'ի զարմանս նոցա զառօնավաճառս, որք կալեալ լինէին անդէն:

(45) ‖ Ընդառաջ ելանէին բազում երևելի հաւաստիք զարգացման ճարտարութեան 'ի Սպանիա 'ի սկզբան վեշտասաներորդ հարիւրեկին. Թիւ քաղաքացն 'ի Սպանիա էր երևելի. և տեսանէին բազմամարդացեալ ևս մեծագոյն համեմատութեամբ

քան զայն, որ հասարակաբար թագաւորէր յայլ մասունս Եւրոպիոյ. Պարզաբանեցի ես զպատճառս այսորիկ 'ի պատմութեան Կառոլոսի Հինգերորդի. Իւր քաղաքք բազմամարդացեալ են այն տեսակ ճարտարութեան, որ է նոցա մասնաւոր, աճէ, արհեստաւորք և ձեռագործք բազմացեալ են անդէն. Արդիւնք Ամերիկեան շահավաճառութեան 'ի փոխատրելն զնոսա գործունեայս յայտնի է յես եղականագոյն արարոյ իմէքէ. Յամին 1545 մինչ Սպանիա շարունակէր սեփական ճարտարութեամբ իւրով 'ի դարմանել զհարգունութիւնս իւր այնքան էր գործն պատուիրեալ արհեստագործաց և ոսմնեալ, մինչզի ենթադրիւր, թէ ոչ կարէին աւարտել զայն գանէ 'ի վեց ամս. Այսպիսի իմն խնդիր պարտ էր բնականաբար դնել զճարտարութիւնն 'ի շարժման և զարթուցանել զարտաքոյ կարգի ջանս. Նմին իրի գտեմք 'ի սկզբան թագաւորութեան Փիլիպպոսի երկրորդի միայն քաղաքն Սիվիլիա, ուր հաւաքիւր իբր 'ի կեդրոնի շահավաճառութեան ընդ Ամերիկոյ ծառայեցոյց ոչինչ նուազ քան զվեշտասան հազար ոստայնարանս 'ի գործս մետաքսի և ասուի. և զի աւելի քան զհարիւր երեսունհազար անձինք պարապեալ եղեն յայն ձեռագործսն. Բայց եղև այնպէս սրընթաց և այնպէս վնասակար ներգործութիւն պատճառաց, զորս յիշում տեղւոջ ցուցից, մինչզի յառաջքան զվախճան թագաւորութեան Փիլիպպոսի երրորդի, ոստայնարանքն 'ի Սիվիլիա էին վերածեալք առ չորեք հարիւր:

Այս նոր ծառայութիւն պարտ էր բնականաբար աճեցուցանել զկայտառութիւն հոգւոյ ճարտարութեան. ուստի անուցեալք և կազդուրեալք 'ի նմանէ ձեռագործքն, բազմամարդութիւն և փարթամութիւն Սպանիոյ երթալով երթային և աճէին 'ի նմին համեմատութեան ընդ հարգունութեանցն իւրոց. Իսկ ոչ իւիք վիճակ ծովեայցն Սպանիոյ էր յայնմ ժամամանակի նուազ ծաղկեալ քան զձեռագործս իւր. 'Ի սկզբան վեշտասաներորդ հարիւրեկին ասի, թէ Սպանիա ունէր աւելի քան զհազար նաւս վաճառականս, թիւ հաւանականաբար բազմօք վերնագոյն քան զայլոյ ուրուք ազգի Եւրոպացւոյ. Այսն օգնութեան, զոր արտաքին վաճառականութիւն և առ տնին ճարտարութիւնն տան միմեանց փոխադարձաբար 'ի յառաջադիմութեան իւրեանց, Սպանիա պարտ էր ընդունել զնոյն յաւելուած փարթամութեան և զօրութեան 'ի ստացուածոցն իւրոց 'ի նոր աշխարհին, զորս այլք իշխանութիւնք հանեալ են 'ի հարգունութեանց իւրեանց:

Ընդէ՞ր ուշացան էին նոյնք:

Բայց այնմ ընդդէմ դարձան պէսպէս պատճառք եթէ ազգաց և եթէ անհատից. յորժամ փարթամութիւն հոսէ անդր՝ մեծապէս սնուցանէ և զահէ զայն գործունէութի, որ է նպաստաւոր տուրևառութեան. և որ ուղղէ զգործողութիւս իւր իմաստութի իւիք հաւասար խոհեմութեան. Յանկարծականք և չափազանցք աղաւաղեն զնմ զաղափարս կերպաւորեալս 'ի ճարտարութէ. և դրաւեն զմարդիկ յառաջարկութիւս եղջերուաքաղս և վտարանդիս և 'ի ձեռնարկութիւս համարձակագոյնս և յանդգնականս. Այսպիսի եղև մեծ և յեղակարծ աճումն կարողութեան և մոից, զորս ստացուածքն Ամերիկոյ պատճառեցին Սպանիոյ. և սկզբան վաղվաղակի երեւիլ նշանք վնասակար ազդեցութեան իւրոյ 'ի վն քաղաքական կարգաւորութեան այնր միապետութեան. Ընդ նշանաւոր իմն ժամանակ վերառաքմունք 'ի նոր աշխարհէն եղեն նուազք և իբր մուրացածոյ. և Կառօլոս հինգերորդ յառաջ տարաւ զհրապարական իրսն այնքան իմաստութբ, մինչզի դժուարին էր իրազգաց լինել այնմ. Բայց յորժամ Փիլիպպոս երկրորդ ամբարձաւ յաթոռ թագաւորութեան Սպանիոյ քանքարոք յոյժ վայրագունիւք քան զծնողին իւրոյ մեծի, և զի վերառաքմունք հարգունութեանցն ե-

ղեն

զէն ընդարձակ իմն և կանոնաւոր ստեղծ մոլից. մեծահարեր արգասիք այսր հապճեպ փոփոխութեան ՚ի կացութեան թագաւորութեանն և ՚ի միապետոյն և ՚ի ժողովրդեան յայտնի եղև յաչս ամենեցուն. Փիլիպպոս ունելով զոգին յարատև հանապազորդութեան, որ յաճախակի նշանակէ զփառամոլութիւն մարդոց միջասահման ընդունակ եղելոց, յղացաւ զայնպիսի իմն բարձր կարծիս զսեփական հանգամանաց իւրոց, մինչզի ոչ հաւատայր լինել մի իւր իր ինչ այնպէս դժուարին, յոր ոչ կարիցէ ձեռնամուխ լինել. Փակեալ յառանձնութեան Էսքուրիալեայ՝ աշխատ առար զբովանդակ մերձակայ ազգսն. Շարժեաց զյայտնի պատերազմն ընդ Հօլանտեցւոց և ընդ Անգլիացւոց. քաջալերեաց և զօրավիգն եղև ապստամբողութեան իմիք ՚ի Գաղղիա, ստացաւ զՓօրթուկալլիա. և պահեաց զօրս և զպահապանս յԻտալիա, յԱֆրիկէ և յերկաքանչիւր Հնդկաստանի. Այսուիկ բազմապատկութեամբ մանուածոյ գործողութեանց պաշտպանելոց ուժգին վատնմամբ յընթացս երկայն իրիք թագաւորութեան՝ Սպանիա սպառեաց զմարդիկ և զդրամս. ՚Ի ներքոյ տկար մատակարարութեան Փիլիպպոսի երրորդի զօրութիւն ազգին հանապազորդ նուազեաց. և եղև բոլորովին չքացեալ, յորժամ անշրջահայեաց սուտ կրօնաւորութիւն այնր միապետի արտաքսեաց միանգամայն գրեթէ զմի միլիոն յառաւել ճարտար հպատակաց իւրոց. և այս ՚ի նմին ժամանակի, յորում անկարութիւն թագաւորութեանն խնդրէր զտարակարգ իմն ճիգն քաղաքական իմաստութեան առ՚ի աճեցուցանել զժողովուրդն և վերստին կենդանացուցանել զոյժ նորա. ՚Ի յեօթն և տասներորդ հարիւրեկին այնքան էր նուազութիւն թըւոյ ժողովրդոց իւրոց, մինչզի վասն անկարութեան լրացուցանելոյ զթերութիւն զօրաց իւրոց տեսաւ նա ինքն պարտաւորեալ յամփոփել զգործողութիւնս իւր. Ծաղկեալ ձեռագործք իւր ար-

արդէն գնացեալ էին յանկումն. Նաւահանգիստք իւր՝ յառաջ արհաւիրք բովանդակ Եւրոպիոյ՝ աւերեալ էին. Տարածեալ շահավաճառութիւն իւր ընդ արտաքնոց կորուսեալ էր. Յարաբերութիւն 'ի մէջ զանազան մասանց սեփական տէրութեանց իւրոց էր խրամատեալ. և նաւքն, որք թևակոխէին դարմանել այնմ, կալեալ և կողոպտեալ էին 'ի թշնամեաց. զորս Սպանիացիք երբեմն անգոսնէին. Մինչև երկրագործութիւն ևս նախկինական առարկայ ճարտարութեան յամենայն յաջող տէրութեան՝ էր ստունգանեալ. և մի յառաւել յուռթի գաւառացն Եւրոպիոյ դժուարաւ հաւաքէր որչափ ինչ բաւէր յապրուստ բնակչաց իւրոց:

Աւերե- ձայ ան կամ գաղթա- կանու- թեանց :

Ըստ համեմատութեան, որով ձեռագործք և բազմամարդութիւն Սպանիոյ երթային 'ի նուազումն, հանապազորդ աճէին պիտոյք հարգունութեանցն. Սպանիացիք ըստ նմանութեան միապետաց իւրեանց յիմարեալք 'ի հպարտութեան, որ ամի ամի սփռէր 'ի վերայ նոցա, 'ի բաց թողին զճանապարհս արհեստին, առ որս սովորեալ էին. և ելացան անհամբերութեամբ յայնս կողմանս, յորոց յառաջ գայր փարթամութիւն նոցա. Այսու մոլեգնութեամբ տեղափոխութեան՝ բացաւ այլ իմն ճանապարհ. և զօրութիւն հարգունութեանցն աճեաց ըստ չափուն, որով նուազէր զօրութիւն ազգին. Ամենայն չուառարացք, որպէս և բաղդորդքն, որք յառաջմէ կայունացեալ էին յԱմերիկա, կախեալ էին ողջոյն 'ի Սպանիոյ վասն ամենայն յօժուածոյ կարևոր պիտոյից. Գրաւեալք յառաւել պատրիչ և յառաւել շահաւէտ ձեռնարկութիւնս կամ արգելեալք 'ի սանձէ, զոր դնէր 'ի վերայ իշխանութիւն, ոչ կարէին դարձուցանել զուշադրութիւն իւրեանց 'ի կառուցանել զձեռագործս կարևորագոյնս առ ապրուստ. Ընդունէին, ոչ յայլում վայրի ծանուցի, զհանդերձս իւրեանց, զշարժական իրս և զամենայն ինչ, որ օժանդակէ առ դատարկութիւն և առ շռայլութիւն կենաց,

նաց, և մինչև զգործիս արհեստից իւրեանց յԵւրոպիոյ. Սպանիայն նուազեալ 'ի բնակչաց և գուրկ 'ի ճարտարութենէ անբաւական էր կատարել զբազմապատիկ խնդիրս նոցա. ուստի դիմեաց առ մօտաւորս իւր. Ձեռագործք ստորին գաւառացն, Անգլիոյ, Փրանսիոյ, և Իտալիոյ վերառեալք զյժ դարմանէին զնա առատութեամբ յոր ինչ պիտոյ էր նմա. 'Ի զուր ընդդիմադրիւր այսօցիկ նորութեանց հիմնական օրէնքն վերաբերեալ առ արտաքսումն օտարաց 'ի տուրևառութենէ ընդ Ամերիկոյ. Հարկն առաւել հզօր քան զամենայն սահմանադրութիւն խափանէր զգործ նոցա. և պարաւանդէր զնոյն իսկ Սպանիացիս 'ի դերև հանել զայն. Անգղիացիք, Գաղղիացիք, և Հոլանտեզք վստահանալով 'ի հաւատարմութիւն և 'ի պատիւ վաճառականաց Սպանիացւոց, որք փոխաւորէին զանուն իւրեանց առ'ի զքօղել զխաբէութիւն առաքեցին զձեռագործս իւրեանց յԱմերիկա. և ընկալան յայնմանէ զգին իմն տարապայման կամ 'ի տեսակի կամ յինչս. Ոչ երկիւղ վտանգին և ոչ հրապոյր առ շահն ներածեաց երբեք զգործակալն Սպանիացի 'ի մատնել կամ 'ի նենգել զանձն, որ վստահանայր 'ի նա. և այն առաքինութիւն, որ է սեփական պարծանք ազգին, հանգանակեաց առ կործանումն նոցա. 'Ի սուղ ժամանակի ոչ աւելի քան զքսաներրորդ մասն տարազուց տարելոց յԱմերիկա գոյացեալ էր կամ շինեալ 'ի Սպանիա. Բովանդակ մնացեալն պատկանէր վաճառականաց արտաքնոց, թէպէտ անցանէր յանուն Սպանիացւոց. Ապա ուրեմն կարէ ասիլ, թէ գանձք նորոյ աշխարհի ոչ պատկանէին Սպանիոյ. Յառաջքան զհասանելն յԵւրոպիա կանխեալ էին իբր գին վաճառաց դընելոց յարտաքնոց. Այն փարթամութիւն, որ ներքին իւիք շրջանակութեամբ խրախուսէր զճարտարութիւնն, և որ տուեալ էր զկեանս և զյաջողակութիւն առ ամենայն տեսակ ձեռագործաց, ընթացաւ արտաքոյ թագաւորութեն այնպիսի սրընթաց ընթացիւք, մինչզի ոչ կարէ ոչ հարստացուցանել զնա և ոչ քաջալերել. 'Ի միւս կողմանէ արհեստաւորք նախանձաւոր ազգացն խրախուսեալք յառձեռն պատրաստ վաճառմանէ տարազուց իւրեանց, որք գերազանցէին քան զՍպանիոյն որակութի՝ թողին զայնս այնպէս դիւրագնի, մինչզի արարին անզգալաբար անկանիլ ձեռագործաց նց. Այս եղծիչ վաճառականութիւն առաւել աղքատացոյց զազգն քան թէ վտարանդի փառամոլ առաջարկութիւք միաբանաց իւրոց. Սպանիա էր այնպէս շուարեալ 'ի տեսանելն զԱմերիկեան գանձս իւր նանրանալ զրեթէ իսկոյն ընդ բերելն, մինչզի Փիլիպպոս երրորդ ոչ կարելով այլազգ դարմանել չքաւորութեն նոցա՝ առաքեաց 'ի դուրս զհրովարտակ մի առ 'ի տալ պղնձադրամոյ զնոյն արժողութի, զոր ունէր արծաթինն. և շահապն Մէսսիքեան և Փէրուեան հանքաց տեսաւ վերածեալ առ գծուծ հայթհայթանս, որ է վերջին ապաւէն աղքատացեալ տէրութեց:

Այսպէս ստացուածք Սպանիոյ յԱմերիկա ոչ յաջողեցան լինել աղբիւր իմն բազմամարդութեն և փարթամութեն վն իւր, այլ արարին ստացուածք այլոց ազգաց. Յերկիրս Եւրոպիոյ, ուր ճարտարութիւն կայ 'ի լրացեալ ուժգնութեն իւրում, ամենայն անձն բնակեցեալ 'ի հարգունութիս նմանս հարգունութեանցն Սպանիոյ մատակարարէ գլխաւորումն երից կմ չորից այլոց. բայց ուր այս ոչ հանդիպի, ամենայն երկրափոխ պարտի նկատիլ իբր հպատակ մի կորուսեալ վն հասարակութեան և օտարք յայնմ վայրի շահաւորին 'ի վաճառակցութե իւրմէ:

* Ո՛չ եղեւ յեղանակ կանոնաւորելոյ վաճառականութեան ընդ Ամերիկոյ:

* Այսպիսի ցուցաւ ներքին կացք Սպանիոյ 'ի վախճանէ վեշտասաներորդ հարիւրեկին. և այսպիսի եւս եղեալ է անընդունակութի իւր լցուցանելոյ զաճեցեալ պէտսն հարգունութեց իւրոց. Սա-

հարեր արգասիք այսր անհամեմատութեան 'ի մէջ պիտոյից նոցա և անընդունակութեանն սատարելոյ նմա յոյժ աճեցեալ են յեղանակէն, որով Սպանիա նախահոգացաւ կանոնաւորել զտուրևառութիւն իւր ընդ հարգունութեանց իւրոց. Բովանդակ նախանձաւոր օրինադրական կարգաւորութիւնք որ ծնեալ են 'ի գաղափարէ յատկացուցանելոյ ինքեան զբոլոր շահավաճառութիւն ընդ Ամերիկոյ, և խափանելոյ հպատակաց իւրոց զինչևիցէ հաղորդակցութիւն ընդ արտաքնոց. Այսոքիկ են այնպէս եղականք 'ի բնութեան իւրեանց և 'ի հետևութիւնս, մինչզի արժանի են մասնաւոր իմիք մեկնութեան. Վասն ապահովանալոյ 'ի վերայ մենավաճառութեան, առ որ ձգտէր Սպանիա, ոչ եթող զտուրևառութիւն ընդ հարգունութեանց իւրոց արտաքսողական իմիք ընկերութեան. Հանգամանք, որ ողջագուրեալ է յազգաց առաւել վաճառականաց. և 'ի միում ժամանակի, յորում շահավաճառական կառավարութիւն էր առարկայ իմն մեծագոյն ուշադրութեան. և պարտ էր լինել լաւագոյն ևս իմացեալ. Հօլանտէզք թողացուցին զողջոյն վաճառականութիւն ընդ հարգունութեանց իւրեանց եթէ յարևելեան և եթէ յարևմտեան Հնդկաստանս արտափակողական ընկերութեանց. Անգլիացիք, Գաղղիացիք, և Տանէզք զհետ գնացին օրինակի նմա վերահայեցմամբ վաճառակցութեան արևելեան Հնդկաց. և երկու առաջինք եդեալ են զնմանակ իմն սեղմութիւն ամանց սանդղանց տուրևառութեան իւրեանց ի Նոր աշխարհին. Այլն մարդկեղէն ոչ կարէ թերևս պատկերակերպել զած իմն առաւել գործունեայ քան զայս առ 'ի կասեցուցանել զյառաջադիմութիւն ճարտարութեան և բազմամարդութեան 'ի միում նոր հարգունութեան. Առանձին շահն հարգունութեան և արտաքսողական ընկերութեան են յամ յօդուածի տրամաչափօրէն հակադրեալ. Եւ քանզի վերջինն նպաստաւորեն

է

է յայսպիսի շահեկանութենէ յայսմ անհաւասար ընդդիմակայութեան, որ հարէ օրինադրել ըստ հաճոյից իւրոց պայմանս հաղորդակցութեան, առաջինն պարտի ոչ միայն գնել ծանրագնի և վաճառել դիւրագնի, այլև կրել զմահացուցումն տեսանելոյ ցածուցեալ զգինն այնորիկ, որ մնայ նմա 'ի նոցունց իսկ, որոց պարաւանդեալ է վաճառել զայն արտաքսմամբ այլոյ ազգի :

Հաւանական է, թէ Սպանիա նախապահիւր յանկանելոյ յայս քաղաքական մոլորութեան վասն մեծաշուք գաղափարին, զոր նա կերպաւորեաց ինքեան կանուխ զփարթամութեանց նորոյ աշխարհին. Ոսկին և արծաթն էին տարազք կարի բարձրագինք առ 'ի չլինելոյ զմենավաճառութիւն նոցա 'ի հանրական ձեռս. Փափաքէր թագաւորութիւն պահելոյ վն իւր զվաճառակցութիւն այնպէս զառածանիչ. և վն ապահովանալոյ 'ի վերայ նորա պատուիրեաց, զի բեռն ամենայն նաւու հանդերձելոյ ույց առնիցի 'ի պաշտօնատարաց տանն դաշնակցութեան 'ի Սևիլլիա յառաջքան զընդունելն զթոյլտուութեան առնելոյ զճանապարհն. և զի 'ի վերադարձի իւրում առնիցի յայտարարութեան իմն տարազուցն բերելոց առնոյն ատեան յառաջքան զհաւանիլ նորա հանելոյ զայնս 'ի նաւէն. 'Ի հետևութենէ այսր կանոնաւորութեան բովանդակ տուրևառութին նորոյ աշխարհին հաւաքիւր իբր 'ի կեդրոնի 'ի նաւահանգստին Սևիլլիոյ. և աստիճան առ աստիճան էանց յետոյ առնուլ զկերպարանն, յորում ընդածեալ է փոքրիկ պէսպիսութեամբ 'ի կիսոյ վեշտասաներորդ հարիւրեկին մինչև գրեթէ 'ի ժամանակս մեր. Վն մեծագոյն ապահովութեան հարուստ բեռանցն առաքելոց յԱմերիկա, որպէս և վն խափանելոյ դիւրագոյն զխարդախութին, տուրևառութին Սպանիոյ ընդ հարգունութեանց իւրոց 'ի գործ եդեալ լինի 'ի նաւահանգիսիցն, որք առագաստեն ընդ առաջնորդու-

Այս առհ-
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
'ի հան-
գէտ
Սպա-
նիոյ :

թ՟ն ոմանց նաւուց պատերազմի. Այսոքիկ նաւահանդէսք բաղկացեալք յերկուց դասուց, մինն տրոհեալ անուամբ Կալէօնաց, միւսն անուամբ նաւահանդիսի՝ երթան ամի ամի կանոնաւորաբար. Յառաջնմէ առնուին զչու իւրեանց 'ի Սիվիլեայ. բայց նաւահանգիստն Քատիշեայ գոլով ծանուցեալ առաւել դիպան՝ մեկնին 'ի նմանէ 'ի 1720. ամաց հետէ:

Արշաւելն Կալէօնց:

Կալէօնք սահմանեալք 'ի դարմանել զհաստատուն երկիրն և զԹագաւորութիւն Փերուայ և Քհիլեայ գրեթէ ա՟մ յօդուածով շռայլութե՟ն կամ կարևոր պիտոյից՝ նախ առաջին դիմեն 'ի Կարթագինէ. անտի փոխաբերեն 'ի գեղեցիկ նաւահանգիստն. Զուգընթաց լինին զառաջինն վաճառականք Սանթա Մարթայի, Քարաքքասայ, Նորոյ Թագաւորութե՟ն Կրանաթայի. և այլ յոգունց գաւառաց. Վերջինն է մեծ տօնավաճառ վասն հարուստ շահավաճառութե՟ն Փերուայ և Քհիլեայ. 'Ի ժամանակին, յորում սպասեալ են Կալէօնք՝ բերք ա՟մ հանքաց յայսոսիկ յերկուս թագաւորութիս 'ի միասին ընդ այլոց մեծագին տարադրոց ն՟ջ փոխաբերեալ է ընդ ծով 'ի Փանամա. Աստի խոկոյն ընդ ազդիլն երևման նաւահանդիսին Եւրոպիոյ ածեալ են խոտորնակի Է՟ ցամաքալեզուն մասամբ իմ՟ն 'ի վ՟ր ջորեաց, մասամբ իմ՟ն 'ի խոնարհ ընդ գետն Քհակրեայ առ գեղեցիկ նաւահանգիստն. Այս մրքուղ գիւղ, որոյ Կլիմայն վասն մնասակար միաւորութե՟ն չափազանց տօթոյ, շարունակ խոնաւութե՟ն և վասն դարշահոտութե՟ն գոլորշեացն ամբարձելոց 'ի գետնոյ համակ տղմայնոյ՝ թերևս է առաւել մահաբեր կենաց քան զայլ զինչ և իցէ 'ի նոր աշխարհին, լցաւ իսկ և իսկ բազմութ՟ն մարդկան. Այլ քանզի բնակեալ է այս 'ի սակաւուց Նեկրեաց և Մուլաթրաց, և 'ի տառապեալ իմ՟ն պահապան զօրաց, որք բառնին յա՟մ երիս ամիս, նմին իրի ոչ տեսանին 'ի պողոտայս իւր, բայց եթէ վաճառականք ընչաւէտք փանամայի և մերձակայ գաւառացն. Բացեալ լինի տօնավաճառն. և փոխանակին հարստութիւնք Ամերիկոյ ընդ ձեռագործացն Եւրոպիոյ. և ցորչափ տևէ պայմանեալ սահման իւր քառասուն աւուրց՝ առաւել մեծաշուք տուրևառութիւն, որ առնիցի յաշխարհին, սկսեալ և աւարտեալ է այնու յըստակամտութեամբ և այնու անկոպար վստահութեամբ, որք սովոր են ընկերակցիլ ընդարձակ շահավաճառութեան իմիք:

(46) ‖ Ոչ բացեալ լինի երբեք հակ ինչ տարաղուց, և ոչ քննի արկղիկ ինչ գոհարաց. Երկոքեան այսոքիկ ընկալեալ լինին 'ի վերայ հաւատոյ անձանցն, առ որս պատկանին. և պատմի միմիայն օրինակ նենգութեան, յորմէ հետէ հաստատեալ է այս տուրևառութիւն. Բովանդակ արծաթն տպեալ, որ 'ի փէրուայ բերեալ եղև առ գեղեցիկ Նաւահանգիստն յամին 1654, գտաւ խարդախեալ և խառնեալ ընդ հինգերորդ մասին անագոյ. Սպանիացի վաճառականք սովորական արդարութեամբն իւրեանց յանձնառին զբովանդակ կորուստն և անվնաս արարին զօտարսն, յորոց ծառայեցուցեալ էին. Խարդախութիւն եկն 'ի յայտ և գանձապետն փէրուայ սկզբնապատճառ նորին կենդանւոյն այրեցաւ: ‖

ՙՆաւահանգստեան:

ՙՆաւահանգիստն առնու զընթացս իւր առ Վերաքրուց. Գանձք և տարազք Նորոյն Սպանիոյ և կախեալ գաւառացն, որք եդեալ էին 'ի պահեստի 'ի Սօն Անճէլոս սպասելով հասանելոյ նորա, առաքեալ են անդր, և տուրևառութիւն լինի անդէն նովին եղանակաւ, որով 'ի գեղեցիկ Նաւահանգստին, վերացուցանելով յարժողութենէ վաճառացն. Երկաքանչիւր Նաւահանգիստքն իսկոյն ընդ առնուլն զբեռինս իւրեանց յԱմերիկոյ, վերածին 'ի Հաւանա. և դառնան 'ի միասին յԵւրոպիա:

Զօր
ուրգա-
օէր այսր
ջարգարգ-
քոռ-ՌՃՆ :

Վաճառականութիւն Սպանիոյ ընդ Հարգունութեանց իւրոց գոլով այսպէս կապեալ և սեղմեալ ՚ի հարկէ ընդածի նովին հոգւով և ՚ի վերայ նո[illegible]ցունց սկզբանց, որով վաճառականութիւն արտաքսողական իրիք ընկերութեան. Սահմանաւորեալ առ մի միայն նաւահանգիստ՝ հետևաբար անկեալ էր ՚ի սակաւ ձեռս և յետոյ ՚ի մէջ նոցա փոքրիկ ինչ թուոյ մեծատանց՝ նախ ՚ի Սեւիլիա և այժմ ՚ի Գատիզէ. Սոքա մի զուգաւորութեամբ, որք դիւրանկի կերպաւորին, կարեն հեշտաւ խափանել զայն մրցումն, որ պահէ զտարապս ՚ի բնական գին իւրեանց. և գործելով միաբան, առ որ գրգռեալ են ՚ի փոխադարձ շահուց իւրեանց, գտանեն յաստիճանի բարձրացուցանելոյ և ցածուցանելոյ զարժողութիւն նոցա ըստ հաճոյից իւրեանց. Ըստուստ հետևի, զի գին Եւրոպական վաճառուց յԱմերիկա է միշտ բարձր և սաստիկ տարապայման. Հարիւր, երկերիւր, և երեք հարիւր եւս ընդ հարիւրի է շահ իմն ոչինչ տարակարծ ՚ի վաճառականութեան Սպանիոյ ընդ Հարգունութեանց իւրոց. Ս՟ նորին փերեզակ հոգւոյ յաճախակի հանդիպի, զի վաճառականք երկրորդ դասուն, որոց նկուղք ոչ պարունակեն լրացեալ իմն սեռ տարազուց մի տօնավաճառին Ամերիկոյ, ոչ կարեն գնել ՚ի հարստագոյն վաճառականաց զիրսն, որք պիտոյ են նոցա վայրագոյն գնով քան զայն, որով վաճառեալ են ՚ի Հարգունութիւնս. Նովին հսկող նախանձաւորութեամբ, որով արտաքսողական ընկերութիւն ինչ կայ ՚ի պահպանութեան ընդդէմ միման արտաքնոց, այսորիկ հարուստ մենավաճառք հնարին կասեցուցանել զճարտարութի այլոց. Բայց ամփոփումն Ամերիկեան շահավաճառութեան առ միմիայն նաւահանգիստ մնաց ոչ միայն ներքնոյն, այլև արտաքնոյն. փերեզակ մի կարէ ստանալ աւելի, և ստուգապէս [illegible] վտանգել մի կապարաւոր իրիք տուրեա-

ռուութեն, որ փոխատրէ զտարապայմանն իմն շահ, քան թէ 'ի տարածեալ իմիք վաճառականութեն, յորմէ ձգէ յինքն զչափաւորեալ իմն շահ. Ձեղանի սակս յառանձին շահ իւր ոչ ընդարձակելն, այլ պարագրելն զծիր գործունէութեն իւրոյ. և փոխանակ տալոյ մուտ առ ուժգնագոյն կրթութիւն վաճառաշահական ճարտարութեն՝ կարէ եղանիլ առարկայ օգտութեն իւրոյ ամփոփելն զայնս. Սմամբք յայսց սկզբանց երևի թէ վաճառական քաղաքավարութեն Սպանիոյ կանոնաւորեալ լիցէ զպատասխանակցութի իւր ընդ Ամերիկոյ. փոխանակ մատակարարելոյ հարգունութենց իւրոց զԵւրոպական վաճառս այնպիսի մեծ քանակութի, մինչև նուաղել զգին նց, և շատանալ միջասահման իմն օգտիւ, երևի թէ վաճառականք Սևիլլիոյ և Գատիշեայ առնիցեն անդր զառաքմունս ագահ ձեռամբ, ոչզի ագահութի մրցման 'ի մէջ յաճախորդաց իւր պարաւանդելոց 'ի գնել յոչ բարուք հանդերձեալ տնավաճառի միում դիցէ զգործավարս իւրեանց յաստիճանի վաճառելոյ զբեռինս իւրեանց չափազանց շահու. Ընդ կէսն անցելոյ հարիւրեկին՝ յորժամ արտաքսաղական շահավաճառութիւն Սևիլլեոյ էր յառաւել գեղեցիկ ծաղկի իւրում, բեռն երկուց միաւորել խմբից Կալեօնաց և Նաւահանգիսի ոչ զանցանէր զքսան և եօթն հազար հինգ հարիւր թոննէլաթօք, այնպէս զի զարմանքն, զորս այսպիսի իմն նաւահանգէս կարող էր տանել, ոչ պայտ էին հաւասարել խնդրոց այնց բազմամարդ և ընդարձակ հարգունութենցն. որք ապասէին յԵւրոպիոյ ոչ միայն վաճառաց շռայլութեն, այլև բազմութեն իրաց կարևորաց առ կեանս:

Գեղջ առաջ- դէպ:

Սպանիա ծանեաւ վաղագոյն զանկումն իւր յառաջին աջողութէ իւրմէ. և բազում մեծարու և առաքինի քաղաքացիք առաջադրեցին զպէսպէս հնարամտս առ 'ի վերստին կենդանացուցանել զճարտարութիւն և զշահավաճառութիւն երկրի իւրեանց. 'Ի յուժգնութենէ առաջի եդեալ դեղոցն մարթ է դատել, թէ որչափ յուսահատեալ և մահաբեր էր հիւանդութիւն. Ոմանք շփոթելով զբնաբարութիւն կարգաց քաղաքական կառավարութեան ընդ յանցանաց ականատանին, պնդէին, թէ առ'ի նահանջել զանպատեհ շահավաճառութիւն՝ ամենայն անձն յաղթահարեալ վասն այնր յանցաւորութեան պարտ էր պատժիլ մահուամբ և յարքունիս առնլով զամենայն ինչս իւր. Այլք մոռացեալք զզանազանութիւն, որ 'ի մէջ քաղաքական եղեռնութեանց և 'ի մէջ ներգործութեանց ամբարշտութեան պնդէին, թէ տուրևառութիւն բաժադաւութեան համարեալ էր 'ի մէջ յանցանաց վերապահելոց առ քննութիւն Ինքուիզիցիոնին. որպէս զի նոքա, որք էին յանցաւորք այնր, քննիցին և դատիցին ըստ դաղտնի և հակիրճ կերպին, որով այն ահաւոր ատեանն վարէ զիրաւարանութիւն իւր. Այլք 'ի վախճանի ոչ բնաւ վարժեալք և լուսաւորեալք 'ի նկատելոյ զվտանգաւոր արդասիս մենավաճառութեան յամենայն երկրի, ուր թոյլատրեալ է այն, առաջադրէին հաստատել զտուրևառութիւն ընդ Ամերիկոյ յարտաքսողական իմիք ընկերութեան իբր յարմարագոյն հայթհայթանք նախապահելոյ զՍպանիական շահավաճառութիւն 'ի բռնաբարութեանց բաժադաւից:

Բաց յայսց երևակայական առաջարկութեանց թելադրեալ եղեն բազում հանդամանք լաւագոյն ևս խորհեալք. որք ոչ իմիք եդան 'ի գործ. Զիա՞րդ գտեալ էին այնք զտեղի առ տկար միապետօքն, ընդ որոց թագաւորութիւն Աւստրիական ճիւղոյ վախճանեցաւ 'ի Սպանիա. որովհետև երբեք այն ամենայն ուրեք զնշանս անընդունակութեան նոցա և տարտամութեան. Սակայն փոխանակ ընտրելոյ 'ի գաղափար զգործունեայ մատակարարութիւն Կառոլոսի հինգերորդի՝ յաջորդք իւր ըղձաձայան զհետ երթալ զգուշաւոր պարապորդ խոհեմութն փիլիպպոսի երկրորդի. և զուրկք 'ի քանքարաց իւրոց խորհրդածեցին մշտնջենաբար և ոչ բացորոշեցին երբէք ինչ. Ոչ մատուցաւ դեղ ինչ չարեացն, ընդ որովք թուլանայր ազգային վաճառականութիւն եթէ առ տնինն և թէ արտաքինն. Այս չարիք սկսան աճել. և Սպանիա Հանդերձ տէրութիւքն առաւել տարածեցելովք և առաւել ընչեղիւք քան զայլ զինչևիցէ Եւրոպական ակաստան՝ ոչ ունէր ոչ զոյժ, ոչ զդրամ, և ոչ զճարտարութի։

(47) ‖ Գոն բազում Հաւաստիք չքաւորութն դրամոյ 'ի Սպանիա. 'Ի բովանդակ անբաւ գումարոյ, որք բերեալ եղեն յԱմերիկոյ, զորոց կալայց պարապ նշանակելոյ զքանակութիւն, Մոնքատա ասէ, թէ յամին 1619. ոչ էին մնացեալ 'ի Սպանիա աւելի քան զերկերիւր միլիոնս մարչիլաց կէս 'ի տպեալ դրամի, և միւս կէսն յարծաթեղէնս և 'ի գոհարս. Ուցարիծ, որ Հրատարակեաց զպատուական մատեան իւր 'ի 1724. պնդէ, թէ 'ի մէջ դրամոյ, արծաթեղինաց և գոհարաց ոչ էր մնացեալ անդ Հարիւրաւոր մի միլիոնից. Քամփոմանէս 'ի վն վկայութն յորդորակի միոյ Համալսարանի Թոլէտոյի առ փիլիպպոս երրդ յառաջբերէ իբր զստոյգ իմն Հաւաստիս, թէ որչափ նուազեալ էր թըռճեալ դրամն, զի անձինքն, որք փոխաւորէին զայն, ընդունէին զերրորդ մասն մի գումարոյն անուամբ շահու։ ‖

'Ի վախճանի բանութին մեծի իրիք խռովութն ազգայնոյ զարթոյց 'ի մահաբեր քնոյ իւրմէ զՍպանիա. և պատերազմն, որ յարեաւ 'ի սկզբն այսր Հարիւրեկի 'ի վն յաջորդութն թագաւորութեն, զարթոյց զոգի և զկորովութի ազգին. Գոլով կերպաւորեալք Հպատակքն, և ողջագուրեալք զճանաչմունս առաւել ազնուականս քան զորս ազդեալ էին 'ի վն խորհրդոց միապետութեան ընդ ընթացս միոյ հարիւրեկի, Սպանիա ընկալաւ յանակնկալ աղբերէ իմն. զհանգամանս 'ի գործածելոյ զբանքարս նց. Պէսպէս իշխանութիւնք, որք ջատագովէին զիրաւունս տանցն Աւստրիոյ և Պորպոնեայ առաքեցին զաւհարկանաւ: ահանդէսս և զօրս յօգնութի նոցա. Գաղղիա, Անգլիա, և Հօլանտիա առաքեցին զանբաւ գումարս 'ի Սպանիա. Այսքիկ ծախեալ եղեն 'ի գաւառսն, որք եղեն ասպարէզ պատերազմի. Ասոն մի Ամերիկեան գանձուն եղեալ յայնմ թագաւորութե դարձաւ անդրէն 'ի վերահասիլ. Առ այս դար ոմն յիմաստնագոյն հեղինակաց Սպանիացւոց հաստատէ զնորոգութի միապետութեն. և որչափ և նշմարտացուցիչ երևեցի այս ճշմարտութի, նա ինքն խոստովանի, թէ աշխարհ իւր պարտի թշնամեաց իւրոց զստացումն հիման միոյ շրջաբերական առաւելի կերպիւ իւք հաւասարեցելոյ պահանջման հրապարակական ոյժոյն.

*Բոյլէ ասա Բա բերբանաւլէն տրալէս 'ի Վաղեփայ Պօրպօնեանց:

Նոյն հետայն իբրև ընկալան Պորպոնեանք զապահով ստացումն արքայական աթոռոյն, ծանեան զայս այլայլութի 'ի հոգւոջ ժողովրդեան և 'ի կացութեան ազգին. և բացորոշեցին շահաւորիլ յայնմանէ. Թէպէտ միապետքն, զորս ետ Սպանիոյ այս տոհմ, ոչ են երբէք ծայրագոյնս հանդիսացեալք մեծնագունութե ոգւոյ իւրեանց, սակայն կարէ ասել 'ի գովեստ նց, թէ ամենեքեան լեալ են երախտաւորք և կարի նախանձայոյզք բարւոյ հպատակաց իւրեանց. և թէ ոչ են ընդու անհոգացեալք առ'ի օժանդակել այնմ. Առաջին առարկայն, զոր առաջի եդ ինքեան Փիլիպպոս հինգերորդ հազիւ թէ ամբարձեալ յաթոռ, եղև բառնալն զնորութի իմն, որ ընդ գաղեալ էր յոձ Սպանիական վաճառականութե 'ի ժամանակի պատերազմին. և որ գրեթէ ապաւէն լեալ էր զնոյն ողջոյն. Անգլիացիք և Հօլանտեցիք վասն մեծնագունութե նաւական զօրութեց իւր-

Արգելու ալէն պօպուլու պալունտալու ընդ Փիլիպայ:

իւրեանց ստացեալ ունելով զայնպիսի իմն հրամանատարութիւն 'ի վ՛ր ծովու, մինչև հատանել զա՛մ հաղորդակցութիւն 'ի մէջ Սպանիոյ և հարգունութեանց իւրոց, Փիլիպպոս հինգերորդ, որպէսզի մատակարարեսցէ նոցա զկարևորն կենաց և շահաւորեսցի միանգամայն 'ի հարստութեանց նց, հնարացաւ այնչափ 'ի սովորական խստութենէ սկզբանց իւրոց, մինչզի եբաց Գաղղիացւոց դաշնաւորաց իւրոց զվաճառակցութիւն իմն ը Փերուայ. Վաճառականք Սան Մալոյ, որոց Լուիզի չորեքտասաներորդ շնորհեաց զարտօնութիւն այսր օգտակար վաճառակցութեան, դիմագրաւ եղեն յայն կորովութ՟. և շարունակեցին սկզբամբք յոյժ տարբերօք 'ի սկզբանցն Սպանիացւոց. Նաւաքեցին 'ի Փերու զԵւրոպական տարազս չափաւոր գնով. և իբրև, զորս տանէին անդր, մուծեալ էին յա՛մ գաւառ Սպանիական Ամերիկոյ առատութ՟ իմն, որ ոչ երբէք տեսեալ էր 'ի նախնագոյն իմիք ժամանակի. Եթէ այս հաղորդակցութիւն պահեալ էր, փոխաբերութիւն Եւրոպական վաճառացն 'ի Սպանիոյ դադարեալ լինէր. և կախումն հարգունութեանցն 'ի մայր հայրենեացն հատեալ լինէր առ վախճան իւր. Սան այսօրինակ հրատարակեցան 1773.
խստագոյն հրովարտակք, որք արգելուին զընդունելութիւն օտարոտի նաւուց 'ի նաւահանգիստ ինչ Փերուայ կամ Չհիլիոյ. և կարգեալ եղև նաւախումբ մի Սպանիական առ'ի մաքրել 'ի նոցանէ զծովն հարաւային:

Այլ թէպէտ և դադարելով պատերազմին, որ եզերեցաւ դաշնադրութեամբն Ուտրէքթայ, շահավաճառութիւն Սպանիոյ լինէր ազատ 'ի բռնաբարութեանց դրացեաց իւրոց, սակայն եդաւ 'ի վտանգ այլոյ իրիք, որ ոչինչ նուազ էր վնասակար. Առ 'ի հաւանեցուցանել զԹագուհին Աննա աւարտել զխաղաղութիւն ինչ ցանկացեալ հաւասար եռանդեամբ 'ի Գաղղիոյ և 'ի Սպանիոյ՝ Փիլիպպոս հին- [illegible]

Ստանա- ւորու- թիւն Ան գլիացւէ ընկերու- թեան ա- սիէն- թօյէ :

հինգերորդ. շնորհեաց ոչ միայն մեծին Բրիտաննիոյ զԱսիէնթօ, կամ զթոյլատրութիւն մատակարարելոյ զՍեւս Սպանիական հարգունութեանց, որ կանխաւ վայելեալ էր 'ի Ֆրանսիոյ, այլև շնորհեաց զարտաքոյ կարգի արտօնութիւն արձակելոյ յամենայն ամի 'ի տօնավաճառն գեղեցիկ նաւահանգստին զնաւ մի հինգ հարիւր թօննէլաթից բեռնաւորեալ Եւրոպական տարազուք. Յայսմանէ հետեւելով՝ գործակալութիւնք Բրիտաննիականք հաստատեցան 'ի Կարթագինէ, 'ի Փանամա, 'ի Վէրաքրուց, 'ի Պուէնօսայրէս և յայլ Սպանիական հանգրուանսն. Քօղն, որով Սպանիա մինչև ցայնժամ ծածկեալ ունէր զհանգամանս և զգործողութիւնս հարգունութեանց իւրոց, բարձեալ եղև. Գործակալք տարփակից ազգի միոյ, որք նստէին 'ի քաղաքս տարածագոյն և առաւել խուռնընթաց վաճառականութեան, կային զգեղեցկագոյն պարապ տեղեկանալոյ զներքին պայմանէ գաւառացն, նշմարելոյ զճշմարիտ կամ զպատահական պիտոյս նոցա և նկատելոյ, թէ զորպիսի տարազս կարօղէին փոխաբերել անդր մեծագոյն շահեկանութեամբ. Ստացեալք զայսպիսի ծանօթութիւս վաճառականքն Ճամայիքայի և այլոց Անգլիական հարգունութեանց, որք շահավաճառ լինէին 'ի Սպանիական շարունակին, եղեն ընդունակք զատուցանելոյ և համեմատելոյ զբեռինս իւրեանց այնչափ անվթարութեամբ պիտոյից այնց տօնավաճառաց, մինչզի վաճառակցութիւն գաւառաժուութեանն արարեալ լինէր դիւրութեամբ իմն ոչ ծանուցելով 'ի նախնագոյն իմիք ժամանակի. Բայց այս ոչ էր առաւել մահաբեր հետեւութիւն Ասիէնթօյէ վն շահավաճառութեանն Սպանիոյ. Գործակալք Բրիտաննիական ընկերութեան հարաւային ծովուն ընդ պատրուակաւ տանելոյ զինչսն, զոր ունէին հրաման տանելոյ նաւաւն առաքեցելով ամի ամի առ գեղեցիկ նաւահանգիստն, հեղեղեցին տարազուք իւրեանց զշարունակն Սպանիական. փոխանակ միոյ նաւու հինգն հարիւր թօննէլլատաց, որպէս մտարանեալ էր 'ի դաշնագրութեն, 'ի գործածէին զմի, որ աւելի էր քան զհինն հարիւր. Արթայր այս ընկերակցեալ յերկուց կամ յերից փոքրագոյն նաւուց, որք խարիսխ արկանելով 'ի մօտաւոր իմիք խորշի մատակարարէին նըմա նորանոր հակս վաճառաց առ'ի լնուլ զտեղի կանխաւ վաճառելոցն. Վերադիտողք տօնավաճառին և պաշտօնատարք բաժին հրապուրեալք 'ի տարապայման կաշառացն կափուցանէին զաչս առ նենգութիւն:

(48) Զպատմութի̃ եղանակին, որով գործակալք ընկերութե̃ հարաւային ծովուն ընդածէին զվաճառականութի̃ 'ի տօնավաճառի գեղեցիկ նաւահանգստին, առեալ են 'ի պարոն Տիօննեայ Ուլչէօյէ և 'ի Հերրերայ նախագահէ ատենի ունկնդրութե̃ 'ի Քուիթօ և բդեշխէ այնր գաւառի. Արժանի է վկայութի̃ իւր մեծի իմիք հաւատարմութե̃ վ̃ զտանելոյ իւրոյ ներկայ եղելոցն, զորս պատմէ. և բազում անգամ պարապեցուցեալ 'ի հոլանել և 'ի հաստատել զխարդախութիւն, զորս ստորագրէ ինքն. Բայց կարէ լինել, թէ պատմութի̃ իւր շարադրեալ 'ի սկզբան պատերազմին, որ վառեցաւ 'ի մէջ մեծին Բրիտանիոյ և Սպանիոյ յամին 1739 իցէ յիմիք մասին բարդեալ. Պատմական ճառ իւր զեղելոցն է ըղձակերտ. և Անգլիացի հեղինակք ևս հաստատեն զայն ըստ մասին խոստովանելով, թէ պէսպէս դաւք գործէին 'ի վաճառականութե̃ նաւուն Ասիէնթօյի. և թէ բաժադաւութիւն Ճամմայքայի և այլոց Բրիտաննեան Կողոնիայից եղե̃ էր յոյժ տարապայման. Բայց առ'ի պատիւ Անգլիական ազգին 'ի դէպ է նկատել, թէ խարդախութիւնքս այսոքիկ ոչ արարեալ եղեն յընկերութենէ, այլ 'ի գործակալաց և յորբանեկաց իւրեանց. Նոյն

իսկ ընկերութիւն զգայր զերանելի իմն կորուստ 'ի վաճառականութենէ Ասիէնթոյի, որովհետև գործակալք իւր ստացան զանբաւ հարստութիւս ։ § Այսպէս մասամբ իմն վն գործողութեանց ընկերութեանն և մասամբ իմն վն յաջողակութեան բաժադաւիցն սոսկականաց, գրեթէ բովանդակ տուրևառութիւն Սպանիական Ամերիկոյ տիրապետեալ էր յօտարաքնոց. Անբաւ շահավաճառութիւն Կալէօնաց, որ արդէն հարստացուցանէր զՍպանիա և գրգռէր զյաջողանս այլոց ազգաց, վերածեալ եղև գրեթէ յոչինչ. և նոյն իսկ նաւախումբն անցեալ 'ի հնգետասան հազարէ առ երկու հազար թոնոնէլաթս հազիւ ծառայէր յայլ պէտս, բայց եթէ բերել 'ի տուն զարքունի մուտսն յառաջ եկեալս 'ի հինգերորդէ 'ի վն արծաթոյն։

Որոշէ- պէտրա- պահէ ծովայէ- ցուցէ՟ առ այս վախճան։

Մինչդեռ Սպանիա նշմարէր զայսոսիկ բանտրարութիւս, և այսպէս կենդանագոյնս զգայր զարգիւնս նց, անկարելի էր ոչ առնել զձիգն ինչ առ'ի նորոգեցուցանել զայնս. Իսկ առաջին հնարքն իւր դարմանեցուցանել զնաւս խորակողս Ը առնուամբ ծովեզերապահաց 'ի վն այնց գաւառաց, ուր յաճախագոյնս ապաստանէին բաժադաւքն. Օուգնեթաց լինէին առ'ի առնել արթունս և գործունեայս զպաշտօնատարսն, որք հրամայէին նց, առանձնական շահ իւրեանց և ծառայութիւն, որ պարտէր 'ի նոցանէ առ հասարակութիւն. Նուազեցաւ առ սակաւ մի շահավաճառութիւն բաժադաւութեն. Բայց 'ի տէրութիւն այնչափ տարածեալս և այնպէս մատչելիս ընդ ծով ոչ գտը թիւ նաւուց յընթացս, որ բաւէր կասեցուցանել զմուտս նոցա յամ կողմանէ. Այս խրամատութի շահավաճառութեն իրիք, որ էր շարունակեալ այնքան դիւրութբ, մինչզի վաճառականքն Բրիտաննիական հարգունութեանց սովոր էին նկատել զայն գրեթէ իբր թոյլ տուեալ, յառաջ եած զբազում քրթմնջունս և զգանգատանս, որք հաստատարմացուցեալք ըստ իմիք 'ի զանազան ներգործութեանց բռնութեան արարելոյ 'ի գլխաւորաց ծովեզերապահ նաւուց Սպանիացւոց գահավիժեցին զմեծն Բրիտաննիա 'ի պատերազմն Սպանիոյ. որում վերջինն ազատեալ եղև 'ի գրաւ 'ի յԱսիէնթոյէ. և թողեալ 'ի կամս կանոնաւորելոյ ըստ հաճոյից իւրոց զտուրևառութիւն հարգունութեանց իւրոց առանց կապեալ լինելոյ 'ի պարաւանդութեան իմեքէ ընդ արտաքին իմիք կարողութեան:

'Ի նեղլա
ածելոյ
առաջրոս
Կէն նա-
ւուց տը
յանտ-
գըլէ:

Այլ քանզի տարապայման յափշտակութիւնք Անգլիացւոց 'ի վերայ Ամերիկեան տուրևառութեան տուեալ էին ճանաչել Սպանիացւոց զանբաւ ծախումն Եւրոպական վաճառաց 'ի հարգունութիւնս իւրեանց, և յայտնեալ զշահեկանութիւնս համեմատելոյ զբեռինս իւրեանց պիտոյից պէսպէս գաւառաց, տեսին զհարկաւորութիւն դարմանելոյ զհարգունութիւնս իւրեանց ընդ այլ ճանապարհ, քան թէ ընդ ճանապարհ տարեկան նաւահանգստից որք ցայնժամ ծառայեցուցեալ էին. Այս ցեղ հաղորդակցութեան ոչ միայն էր անստոյգ (որովհետև մեկնիլն Կալէօնից կամ Նաւահանգստին յամէր երբեմն վասն պէսպէս պատահմանց, և յաճախ խափանեալ լինէր 'ի պատերազմէ, որ վրդովէր զԵւրոպիա) այլև երևէր անյարմար առ 'ի հանդերձել զԱմերիկա կանոնաւոր իւիք և դիպաւոր դարմանաւ պիտոյից իւրոց. Չքաւորութիւն Եւրոպական վաճառացն 'ի Սպանիական հանգրուանսն լինէր յաճախակի չափազանց. գին նոցա աճէր առ տարապայման բիւ բարձրութեան. վաճառականքն, որք գիտէին զայն, ոչ պակասէին առաքել անդր միջնորդութեամբ բազմադաւից Անգլիացւոց, Գաղղիացւոց և Հօլանտէզաց. և յորժամ 'ի վախճանի ժամանէին Կալէօնք գտանէին զվաճառանոցս այնպէս լից յոյժ անպատեհ վաճառականութեամբ, մինչզի ոչ ևս էր անդէն խնդիր ինչ սա-

րաբաղուցն, որովք հասանէին բեռնաւորեալք. Առ'ի դարմանել այսմ Սպանիա թոյլ ետ, զի մասն ինչ վաճառակցութ՟են իւրոյ ընդ Ամերիկայ արարեալ լինիցի նաւուք արձանագրի. Այսոքիկ վարձեալ են 'ի միջոցսն, որք հասեն մինչև 'ի ժամանակին, յորում առագաստեն Կալէօնք և Նաւահանգէսն 'ի վաճառականացն 'ի Սիվիլիա կամ 'ի Քատիչէ, ընդունելով վճ՟ այնր զթոյլատրութ՟ի 'ի խորհրդարանէն Հնդկաց. որոյ վասն վճարեն զերևելի իմ՟ն գումար. և են կարգեալք առ այն Նաւահանգիստս, ուր գիտեն, թէ պակասին աղխամախք. Այս հնար ունի զերկուս շահս՝ զմինն նահանջելոյ զբաժադաւսն 'ի փոխաբերելոյ անդր. և զմիւսն փոխադրելոյ իբր անօգուտ հարգունականացն զբաժադաւութ՟ին:

Կալէօնք 'ի Պէլոյ Բարձեալ են: Ըստ չափուն, որով ներհմտութիւնն ցուցանէր զշահն շարունակելոյ զտուրևառութ՟ին այսու եղանակաւ, անճեաց թիւն նաւուց արձանագրի. և 'ի վախճանի 1748 ամին Կալէօնք յետ 'ի գործածեալ լինելոյ աւելի քան զերկուս հարիւրեակս՝ բարձան բոլորովին. Յայնմ ժմ՟կէ հետէ ոչ արարեալ լինի վաճառակցութ՟ի ընդ Քհիլեայ և ընդ Փէրուայ, եթէ ոչ անջատեալ նաւուք. որք առաքին անդր ընդ ժամանակս ժմ՟կս յորժամ վաճառականք սպասեն բանալոյ տօնավաճառի իմ՟իք. Առագաստեն զՔափօհօռնին. և տանին ուղղակի 'ի նաւահանգիստս հարաւային ծովուն զձեռագործս և զբերքինս Եւրոպականս, զորս առ'ի ունել ժողովուրդք կայունաւորեալք 'ի կողմանսն յայնոսիկ հարկադրեալ էին երթալ առ գեղեցիկ Նաւահանգիստն կամ 'ի Փանամա. Քաղաքքս այսոքիկ, որպէս կանխաւ նշմարեցաւ, պարտին երթալ հարկաւորապէս յանկուց՟ն, յորժամ մնասցեն զուրկ 'ի շահավաճառութ՟էն յայնմանէ, որում պարտին զգոյութ՟ի իւրեանց. Բայց այսպիսի իմ՟ն տուգանք առաւելապար փոխարինեալ լինի, նի, որովհետև բովանդակ շարունակն հարաւային Ամերիկոյ ընդունի զդարմանս Եւրոպական վաճառաց այնքան կանոնաւորութեամբ և առատութ՟բ, մինչզի մեծապէս օժանդակէ այս առ երջանկութի ամ՟ հարդունութեանց իւրոց. Այլ քանզի բովանդակ նաւք արձանագրի սահմանեալք մ՟ի հարաւային ծովուց պարտին մեկնիլ 'ի Կատիզեայ, և պարաւանդեալ են վերադառնալ անդրէն, այս սաեղն Ամերիկեան շահավաճառութ՟ն, ես և 'ի նոր կերպի իւրում տակաւին է ենթակայ տեսակի իմիք մենավաճառութ՟ն. և զգոյ յայնմանէ զվնասակար արդիւնսն կանխաւ նշանակեալս յինէն:

Եւ ոչ իսկ ուշադրութի Սպանիոյ սահմանաւորեալ է միայն 'ի կանոնաւորել զտուրևառութ՟ին ընդ ծաղկեալ հարդունութեանց իւրոց, այլև 'ի գործածել է առ 'ի վերակենդանացուցանել զվաճառակցութ՟ին յայն կայունուրդսն, ուր սատունդանեալ էր և գրեթէ չիջեալ. 'Ի մէջ նոր ախորժակացն, զոր Եւրոպացիք ստացեալ են յառաջս տուրևառութ՟ն իւրեանց ընդ ազգայնոց աշխարհացն 'ի նոցանէ ստացելոց յԱմերիկա, ախորժակն վասն չիքքօլաթի է մի յառաւել հանրականացն. Կիրառութիւն այսր ըմպելւոյ արարեցելոյ 'ի զանգուածոյ իմեքէ բաղադրեցելոյ յընկուզոյ կամ 'ի նշոյ Կաքքայի և յայլ պէսպէս նիւթոց, ուսան Սպանիացիք նախկնաբար 'ի Մեքսիքացւոց. և երևեցաւ նդ՟ և այլոց ազգաց Եւրոպիոյ այնպէս ցանկալի, այնպէս սնուցիչ և առողջարար, մինչզի եղեալ է յաւուրս մեր յօգուած իմն շահավաճառական ծանրակշիռ յոյժ. Ծառն Կաքքաօ աճէ իւրովի 'ի զանազան մասունս այրեցած գօտւոյն. բայց լաւագոյնն զկնի Կուաթիմալայինն 'ի հարաւային ծովուն գոյացեալ է 'ի հարուստ դաշտավայրսն Կարաքքասայ գաւառի հաստատնոյ երկրին. Պատճառաւ այսր վերնագու-

գու-

Ա.ստա-
Ջարկա
'ի Ըն․ [illegible]
'է վէրա
[illegible]
տսհա-
[illegible]
նել պա
հաճաճա
տաէն:

ցունութիւն ծանուցելոյ յորակութեան քաղքացւոյն յայսմ գաւառի և հաղորդակցութիւն իւրոյ ընդ Ատլանդեան Ովկիանոսի, որ դիւրացուցանէ զփոխաբերումն այնր յԵւրոպիա, մշակութիւն քաղքացւոյն առաւել ընդարձակեալ է անդէն քան յայլ ամ Նահանգին Ամերիկոյ. Բայց Հոլանտեցք վասն մօտաւորութեան կայունաւորութեանց իւրեանց 'ի փոքրիկ Կղզիսն Կուրածոյ և Պուէնոսայրեայ առ ծովեզրն Կարաքքասայ՝ ձգեցին սակաւ առ սակաւ յինքեանս զմեծագոյն քանակութիւն այսր շահավաճառութեան. որ և արար գրեթէ բոլորովին անկանիլ վաճառականութիւնն Սպանիոյ. և այնպիսի եղև ստունգանութիւն Սպանիացւոց, մինչզի գտան պարաւանդեալք յընդունել 'ի ձեռաց արտաքնոց զայս բերս սեփական հարգունութեանց իւրեանց տարապայման գնով:

Կառուցումն ընկերութեան Կարաքքասայ:

Առ 'ի դարմանել այսմ չարի, որ ոչ նուազ անպատուութիւն էր քան թէ վնասակար հպատակաց իւրոց, Փիլիպպոս հինգերորդ յամին 1728 շնորհեաց միացեալ բազմութեան իմիք վաճառականաց զարտաքսողական իրաւունս առ վաճառակցութիւն ընդ Կարաքքասայ և ընդ Կումանայ այսու դաշամբ, զի յարդեսցեն սեփական ծախուք իւրեանց զթիւ ինչ նաւուց զլինելոց յընթացս առ 'ի ունել զերծ զծովեզրն 'ի բաժագաւից. Այս ընկերութիւն տրոհեալ երբեմն անուամբ ընկերութեան Կուիփուսքոյ գաւառին Սպանիոյ, ուր կառուցեալ է, և երբեմն անուամբ ընկերութեան Կարաքքասայի Նահանգին Ամերիկոյ, ընդ որում շահավաճառ լինի՝ յառաջ տարաւ զգործողութիւնս իւր այնպիսի ուժգնութեամբ և բաղդիւ, մինչզի Սպանիա վերստին ստացեալ է զգերյարգոյ գլուխ շահավաճառութեանն. յորմէ թողացուցեալ էր կողոպտիլ. և է այժմ ճոխաբար դարմանեալ, և այն դիւրագնի յօգուածով իւիք այնչափ ծախման. Ոչ միայն մայր հայրենիքն, այլ և նոյն իսկ Կողոնիայն Պարաքքասայ ընկալեալ է զմեծամեծ օգտութիւնս յայսպիսի սահմանադրութենէ. քանզի թէպէտ յառաջին հայեցման երեւիցի մի 'ի մենավաճառութեանց, որք դիմեն 'ի թուլացուցանել զհոգին ճարտարութեան՝ փոխանակ խրախուսելոյ, սակայն արգելու, զի մի ծնանիցի զայսպիսի իմն գործ զանազան փրկարար կանոնաւորութիւնք. Աշակերտքն 'ի Պարաքքաս ոչ թողուին բնաւ կախիլ յընկերութենէ կամ վասն բերման Եւրոպական տարազուց, կամ վասն վաճառման սեփական բերոց իւրեանց. Բնակիչք կղզեացն Քանարեայց վայելեն յարտօնութեան առաքելոյ անդր յամ ամի զստուար իմն նաւ արձանագրի. և 'ի Վերաքրուցայ 'ի Նորն Սպանիա թողացուցանի վաճառականութիւն իմն ազատ յամ նաւահանգստի բովանդակեցելոյ 'ի քարտիզին ընկերութեան. Յայսմանէ ծնանի այնպիսի իմն նախանձաւորութիւն, զի եթէ նկատմամբ այնր, զոր հարգունութիւնքն գնեն, և եթէ նկատմամբ այնր, զոր վաճառեն, գտանի գինն բնականաբար հաստատեալ յոյժ ընտրողական եզերօք. Ոչ է յիշխանութեան ընկերութեանն բարձրացուցանել զայն կամ ցածուցանել ըստ հաճոյից իւրոց. և վասն այսորիկ յորմէ հետէ այսպիսի իմն կարգ մուծեալ եղև՝ աճումն մշակութեան, բազմամարդութեան, և թուոյ անասնոց լեալ է երևելի 'ի գաւառսն Պարաքքասայ :

(49) ‖ Բազում արարք նկատմամբ սահմանադրութեան, զարգացմանց և հետևութեանց այսր ընկերութեան են ըղձակերտք, և սակաւ ծանուցեալք նոցին իսկ Անգլիացւոց. Թէպէտ գաւառն Վենեցուէլայ, կամ Պարաքքասայ տարածանիցի չորեք հարիւր մղոն առ ծովեզերբն, և իցէ մի յառաւել յուռթեացն Ամերիկոյ, այսու ամենայն եղև այնպէս բարձիթողի եղեալ 'ի Սպանիացւոց, մինչզի ընդ քսան ամս յառաջքան զկառուցումն ընկերութեանն հինգ նաւք միայն վերացուցանէին

զառագաստ 'ի Սպանիոյ առ այն գաւառ. և ընդ վեշտասան ամս, այս է, 'ի 1706 ամէ ց1722 և ոչ իսկ միմիայն նաւ հասանէր 'ի Կարաքքասայ 'ի Սպանիա. 'Ի բովանդակ յայսմ ժամանակի Սպանիա զարմանեալ եղև գրեթէ բոլոր Կաքքաոյին, զոր ծախէ, յարտաքնոց. Յառաջքան զհիմնաւորութիւն ընկերութեան ոչ դեղունչ և ոչ մորթք տարեալ լինէին 'ի Կարաքքասայ 'ի Սպանիա. բայց յորմէ հետէ սկսան տուրևառական գործողութիւնք ընկերութեան յամին 1731 բերումն Կաքքաոյի 'ի Սպանիա սքանչելաբար աճեցեալ է. Ընդ ամս երեսուն յաջորդաբար թուելով 'ի 1701 է թիւն քրձոց Ֆանէկասայ Կաքքաոյի (իւրաքանչիւրն հարիւր տասն լիպրայից) փոխաբերեալ 'ի Կարաքքասա էր 643215. Ընդ ութուտասն ամս զկնի 1731ին թիւն քրձոց փոխաբերելոց էր 869247. և երբ ենթադրեսցի շարունակիլ բերումն 'ի նմին համեմատութեան ընդ մնացեալ երեսուն ամսն ամբառնայցէ առ 1448746 Ֆանէկասս. որ առնէ զաճումն իմն 805531 Ֆանէկասայ. Ընդ ութն ամս յաջորդականս առ 17056 բերումն դեղնչոյ լեալ է 88482 Արրօղ (իւրաքանչիւր քսան և հինգ լիպրայից) և 177354 մորթք. Իսկ շահավաճառութիւն իւր երևի աճեցեալ զկնի հրատարակման ծանօթութեանց ընկերութեան յամին 1765. Յընթացս հինգ ամաց թուելով 'ի 1769էն բերեալ են 179156 Ֆանէկաս Կաքքաոյի 'ի Սպանիա. 36208, խուրձք դեղնչոյ, 75496 մորթք և 221432 մարչիլք տեսակաւ. Վերջին յօդուածն է հաւաստիք իմն աճեցեալ հարստութեան հարգունութեանն. Սա ընդունի փոխանակ Կաքքաոյի զթուեալ դրամս 'ի Մէքսիքոյէ. և վերառաքէ զայն 'ի Սպանիա. կամ ծախէ 'ի գնել զվաճառս Եւրոպականս. Այլ բաց յայսմանէ տեսանի յայտնագոյն ևս, թէ քանակութիւն Կաքքաոյին հաւաքեալ 'ի գաւառին է կրկինն այնր, զոր յառաջածէր յամին 1731. Թիւն պախրեղէն շնչաւորաց է աւելի քան զեռապատիկն և բնակիչք իւր բազմօք բարգաւաճեալք. Հասոյթ Եպիսկոպոսին, որ հաւաքի համակ 'ի տասանորդաց աճեցեալ է 'ի 8000է ց20 հազար մարչիլս. Յաղագս աճման քանակութեն Քաքքաոյի բերելոյ 'ի Սպանիա գինն իւր նուազեալ է 'ի 80է ց40 մարչիլս առ քուրձ: ‖

Ընդարձակումն տուրեւառութեն Գաղաքարայն 'ի Սպանիա:

Այլ զորօրինակ ազգք յամրակի 'ի բաց թողուն զոճ իմն, զոր ժմն փոխատրեալ է յարգոյ, և վաճառականութիւն ոչ գիտէ ելանել 'ի ճանապարհէն, յորում սովորեալ է ընթանալ ընդ բազում ամս, այսպէս Փիլիպպոս Հինգերորդ 'ի Նոր կանոնաւորութիւնս իւր 'ի վր Ամերիկեան տուրեւառութեն կալաւ զայնքան նկատումն առ նախկինն սկզբունս Սպանիոյ վերաբերեալս առ կոպարս բեռնաբարձութեն 'ի նոր աշխարհէ առ մի միայն նաւահանգիստ, մինչզի պարաւանդեաց զնաւս արձանագրի, որք դառնային 'ի Փէրուայ, և զնաւսն Կուիփուսկեան ընկերութեն 'ի Քարաքքասայ յաւանդել զբեռինս իւրեանց 'ի նաւահանգիստն Քատիչեայ. Ընդսմին 'ի ժմէ թագաւորութեն իւրոյ զգացմունք առաւել ազատականք և ընդարձակագոյնք սկսան ծաւալիլ ընդ Սպանիա. Հոգին իմաստասիրական հետախուզութեն, զոր առաջիկայ դարս պարծի դարձուցեալ 'ի սնոտի և 'ի մթին հայեցողութենց առ պիտանին ընկերութեն, տարաւ զազդեցութի իւր անդր քան զՓիրինէս. Ուշիմ հեղինակք, որք ուսան զկառավարութի, և զտուրեւառութի ազգաց հոլանեցին զմոլորութիս Սպանիական ոճոյն շուրջ զայսոքիւք երկու առարկայիւք. և այնպէս չարաչար պարսաւեցին, մինչզի ոչ գտանիցին այլք տէրութիք, որք կամիցին գործել զնմանակսն. Սպանիացիք խոցեալք 'ի կշտամբանաց նց, կամ յաղթահարեալք յառարկութենց նց և խրատեալք 'ի բազմաց լուսաւորեալ մատենագրաց աշխարհին իւրեանց ցուցանեն նշմարեալ 'ի վախճանի զապականարար դիմեցումն այնց անձուկ սկզբանց, որք ամփոփելով զվաճառականութիւն յամ գործողութիւս իւր յամեցուցին այնպէս երկար զյառաջադիմութիւն նր. Առ միապետն, որ նստի այժմս յաթոռ, պարտի Սպանիա զառաջին կանոնաւորութիւն կերպաւորեալ 'ի հետեւութէ այսց գաղափարաց:

Սահմանադրութէ կանոնաւոր փաքէպօթթաց:

Մինչդեռ Սպանիա կայր հանդերձ ամ խստութբ յարեալ 'ի նախկին սկզբունս իւր, որք հայէին առ վաճառակցութի իւր ընդ Ամերիկոյ, այնպէս մեծապէս երկնչէր բանալ զնոր իմն շաւիղ, ընդ որ անպատեհ իմն տուրեւառութի կարէր մուծ 'ի հարդունութիւն, մինչզի գրեթէ 'ի կախ եթող զինչեւ իցէ հաղորդակցութի ընդ նո բաց յայնմանէ, որ արտօրեալ լինէր յամ ամի 'ի նաւահանգսից իւրոց. Ոչ էր անդ կարգ ինչ վասն կանոնաւոր իրիք հաղորդակցութե հրապարական կամ առանձնական տուրեւառութե 'ի մէջ մայր հայրենեաց եւ Ամերիկեան կայունաւորութեց իւրոց. Առ պակասութե այսր կարեւոր կարգաւորութե գործողութի թագաւորութեն եւ իրակութիւն անհատից էին յապաղեալք կամ ոչ բարւոք առաջնորդեալք. եւ Սպանիա ընդունէր սակաւ յարտաքնոց զծանօթութիւս դիպուածոց վերաբերելոց 'ի սեփական հարդունութիւն. Այլ թէպէտ եւ այս պակասութիւն յայտնի էր եւ առաջի ընծայիր նաեւ առ ձեռն պատրաստ դեղն, սակայն նախանձաւոր հոգին, որով միապետքն Սպանիացւոց հայէին յարտաքսողական շահավաճառութի իւրեանց նահանջէր զնոսա 'ի մատուցանելոյ զդեղն. 'Ի վախճանի Կառոլոս Երրորդ յաղթեաց այսց նկատմանց, որք զարհուրեցուցեալ էին զնախորդս իւր. եւ յամին 1764 սահմանեաց զփաքէպօթթս, այսինքն նաւս արշաւականս առ'ի առաքել յամ յառաջնում աւուր իւրաքանչիւր ամսոյ 'ի Քօ-

րունկքուկնայէ առ Հաւանա կամ առ Փորթօրիքքօ. սուռի նամակք տարեալ են 'ի փոքրագոյն նաւս առ Մերաքքուց և առ գեղեցիկ նաւահանգիստն, և վերառաքեալք հանգուցին առ թագաւորութիւն հաստատուն երկրին Կրանաթայ, Փէրուայ, և Նոր Սպանիոյ. Ըստ փոքրագոյն կանոնաւորութեան փաքէպօթք առագաստին միանգամ յամ երկուս ամիս առ վտակն Տէլափլաթայ վասն դիւրութեան գաւառացն կայաւորելոց ընդ արեւելս Անտեայց. Այսու օրինակաւ նախահոգացեալ եղև համարձակ և աներկեան շրջանակումն 'ի մէջ ընդարձակ տէրութեանցն Սպանիոյ. յորմէ պարտին զեղանիլ մեծամեծ շահեկանութիւնք եթէ առ կառավարութիւն և եթէ առ վաճառականս. Այս նոր կարգաւորութիւն դիմէ ևս առ 'ի ընդարձակել զտուրևառութիւն. Իւրաքանչիւրն 'ի փաքէպօթթաց նաւաց երևելի իմն մեծութեան ունի զթոյլատրութիւն առնլոյ զկէս բեռն տարազուցն Սպանիոյ, որք սփռին 'ի նաւահանգիստն, ուր ուղղեալ են, և վերաբերելոյ առ Քօրունիա զհաւասար իմն քանակութիւն Ամերիկեան բերոց. Այս կարէ նկատել իբր առաջին ընդարձակումն այնց խիստ օրինաց, որք սահմանաւորէին զտուրևառութիւն ընդ Նորոյ աշխարհին առ միմիայն նաւահանգիստ. և իբր առաջին թևակոխութիւն ընդունելոյ զմնացորդն թագաւորութեան 'ի վայելել 'ի մասն ինչ նր:

Ազատ
վաճա-
ռակու-
թիւն ե-
ղացու-
ցեալ 'ի
կղզի-
ղն Քու-
[illegible]

Յետ այսր կանոնաւորութեան եկն վաղվաղակի այլ իմն առաւել որոշողական. Յամին 1765 Կառոլոս երրորդ շնորհեաց զբացարձակ շահավաճառութիւն առ կղզին Քուպայի, Սպանիօլայի, Փորթօրիքքօյի, Մարգարիտայի, և Թռինիտատի, հրապարակաց իւրոց՝ յորում և իցէ գաւառի Սպանիոյ. Կամակից եղև նոցա կարող լինել նաւել յորիշ նաւահանգստից առ իւրաքանչիւր 'ի կղզեաց տեսակաւորելոց 'ի ծանուցմանն յինչէիցէ ժամին և որովէիցէ բեռամբ, զոր համարիցին առաւել օգ-

օգսեփական առանց այլոյ ուղղաւորութեան, բայց եթէ լոկ վկայականաւ իւիք մաքսատան տեղւոյն, ուստի մեկնեալ են. Թեթևացոյց զնա 'ի յոգնաթիւ և 'ի ծանր բաժից եդելոց 'ի վն տարազուց տարելոց յԱմերիկա՝ կացուցանելով փոխանակ նոցա զմի 'ի վեցից առ հարիւր. Ներհնեաց նոցա վերադառնալ կամ առ նոյն նաւահանգիստ, կամ առ այլ զինչ և իցէ, ուր յուսային զառաւել շահաւէտ վաճառումն, և մուծանել զայնս 'ի թագաւորութիւն վճարելով զսովորական կապալն. Այսպիսի իմն ընդարձակ անձնորէնութիւն, որ խորտակէր միանգամայն զբովանդակ կրճիմն, զոր նախանձաւոր քաղաքականութիւն Սպանիոյ եդեալ էր ընդ երկուս հարիւրեակս և կէս առ իւր տուրևառական հաղորդակցութիւն ընդ նորոյ աշխարհին, յետ սակաւ միոյ տարածել եղև առ Լուիզիանա և առ գաւառսն Իւքաթանու և Քամփիէճի:

Բարէ արդիւնք նոր: Օգտակարութիւն այսր նորոգութեան, որ կարէ նկատիլ իբր ազնուագոյն ճիգն Սպանիական օրէնսդրութեան, տեսաւ յարդեանց իւրոց. Յառաջքան զհրովարտակն 'ի նպաստ ազատ տուրևառութեան հազիւ Սպանիա ընդունէր զբարութիւն ինչ 'ի բարձի թողլ եղեալ հարգունութեանցն Սպանիոլայի, Փորթօռիքքոյի, Մարգարիտայի, և Թռինիթայի. Վաճառականութիւն իւր ընդ Քուպայի ոչ էր մեծ ինչ և Իւքաթանուն, և Քամփիէճինն գրեթէ բոլոր տիրապետեալ էր 'ի բաժադաւից. բայց իսկոյն իբրև հանրական իմն ազատութիւն տուրևառութեան թողացուցեալ եղև, վերստին կենդանացաւ հաղորդակցութիւն ընդ այնց գաւառաց սրընթացութեամբ իւիք, որ ոչ ունի զօրինակ 'ի վիպասանութեան ազգաց. Չև ևս են տասն ամք, և շահավաճառութի Քուպայի եղեալ է աւելի քան զեռապատիկն. Նաև յայն կայանուրդսն, ուրպատճառաւ տկար վիճակի ճարտարութեան պիտոյ էին մեծագոյն ջանք առ'ի վերստին զօրացուցանել զարդիւնականութիւն նում իւրեանց, տուրևառուի նոցա կրկնապատկեալ է. Հաշիւ արարեալ լինի, թէ 'ի գործածի այժմ այնպիսի իմն թիւ նաւուց յաղագս վաճառականութեան, մինչզի բեռն նոցա առաւելու քան զկալէօնացն և զնաւահանգիսին յառաւել ծաղկեալ վիճակի տուրևառութեան իւրեանց. Բարերարութիւնք այսպիսի իմն կարգադրութեան ոչ միայն սահմանաւորեալք առ սակաւ վաճառականս կայունացեալս 'ի նպաստաւոր իմիք նաւահանգստի. այլ ծաւալին ընդ ամենայն գաւառ թագաւորութեանն. և բանալով զնոր իմն տօնավաճառ մի պէսպէս բերոց և ձեռագործաց իւրեանց պարտին յաւելուլ զկայտառութիւն 'ի ճարտարութիւն մշակողացն և արհեստաւորաց. Նա ոչ իսկ թագաւորութիւնն հանէ զօգուտ միայն յայսմանէ, զոր առաքէ, այլև յայնմանէ, զոր ընդունի փոխանակ. և է 'ի հսկման պաճարելոյ ինքնին զբազում գլուխս հասարակաց պիտոյից. զորս առ'ի ունել կախիւր յառաջ յարտաքնոց. Վաճառումն շաքարին 'ի Սպանիա համեմատութեամբ թուոյ բնակչաց իւրոց է այնպէս մեծ, որպէս յայլ զինչ և իցէ թագաւորութեան Եւրոպիոյ. Այլ թէպէտ և ստացեալ իցէ նա գաւառս 'ի նոր աշխարհին, ուր գետինն և կլիմայն են լաւ ևս յարմարք 'ի սնուցանել զայս բազմագին տունկ, թէպէտ և հաւաքիցի այժմ բազմութիւն իմն շաքարի 'ի թագաւորութեանն Գրանաթայ, այնպիսի լեալ է մահաբեր արգասիք սահմանադրութեանցն իւրոց յԱմերիկա, և այնպիսի ծանրութիւն սակացն յԵւրոպիա, մինչզի Սպանիա գրեթէ ողջոյն կորուսեալ է զայս ստեղն ճարտարութեան. յորմէ փարթամացեալ են այլք ազգք. Այս տարազ, որ եղեալ է այժմիս յօգուտ իմն նախկին կարեաց Եւրոպիոյ, Սպանիացիք պարտաւորեալ են գնել զայն յօտարաց. և է նոցա անկ մահացուցումն տեսանելոյ յամենայն ամի ելանել յերկրէ իւրեանց զանբաւ գումարս պատճառաւ իւրեանց. Բայց եեթէ ոգին, որում տուեալ է շարժումն Թայլատրութիւն ազատ վաճառականութեան, յարատեւեսցէ 'ի ջանս իւր նովին ուժգնութեամբ, մշակութիւն շաքարին 'ի Կուպա և Փորթօռիքքօ կարէ աճել ցայն վայր, մինչզի 'ի սակաւ ամս հաւաքումն իւր եղանիցի հաւասար պիտոյից բոլոր թագաւորութեան։

Ազատ
վաճառ-
ականութէ
Սպա-
ցուցէն
'ի մէջ
հարկա-
նուէին։

Ահեկանութիւնք ծագեալք 'ի չափաւորելոյ յիմիք մասին զխստութիւն նախկին օրինաց նկատմամբ վաճառակցութեան մայր հայրենեաց ընդ հարգունութեանց ներածին զՍպանիա 'ի թողացուցանել զհաղորդակցութիւն իմն առաւել բացարձակ միոյ հարգունութեան ընդ այլում. Մինչ 'ի նախանձաւոր սկզբանցն հնոյ օրինադրութեան արգելեալ էր ընդ խստագոյն պատժօք ամենայն կցորդութիւն 'ի մէջ պէսպէս գաւառացն կայսերելոց 'ի վերայ հարաւային ծովուցն. Թէպէտ իւրաքանչիւր 'ի նոցանէ տայր զբերս մասնաւորս, որոց փոփոխ փոխանակումն աճեցուցանէր զյաջողութիւն բնակչաց իւրեանց կամ խրախուսէր զմտավարժութիւն նոցա, սակայն խորհրդարանն Հնդկաց երկնչէր այնպէս ուժգին, զի մի ընդունիցին զինչս, որք պակասէին նոցա, ընդ այլ ճանապարհ, բայց եթէ ընդ ճանապարհ նաւահանգստացն Եւրոպիոյ, մինչզի արգել Սպանիացւոցն Փերուայ, Նորոյն Սպանիոյ, Կուաթիմալայի և Նորոյ Թագաւորութեան Կրանաթայի զպատասխանակցութիւն ընդ հպատակաց հայրենակցաց իւրեանց. որ յայտնապէս դիմէր առ փոխադարձ երջանկութիւն նոցա. Յայնմ ամփոփմանց պատկերակերպելոց 'ի Սպանիոյ վասն ապահովացուցանելոյ ինքեան զարտաքսողական տուրևառութիւն ընդ Ամերիկեան կայուներդից իւրոց՝ թերևս ոչ իմն եղև առաւել անհանճար և առաւել վնասակար. Բայց վերջապէս մատուցաւ դարման այսպիսի իմն զեղծման, որ էր վաղնջագոյն քան զկայունաւորութիւն հարգունութեանց իւրոց. Յամին 1774, Կա-

Կառոլոս Երրորդ հրատարակեաց զհրովարտակ մի, որ շնորհէր չորից ընդարձակ գաւառացն, զորս յիշատակեցի, զանձնօրէնութիւն իմն ազատ տուրևառութեան միոյ ընդ միւսոյ։

(50) ‖ Այս առաջին փորձ արարեալ 'ի Սպանիացւոց բանալոյ զազատ տուրևառութիւն ընդ ում և իցէ 'ի հարգունութեանց իւրոց՝ յառաջեաց զարգիւնս այնպէս նշանաւորս, զի արժանաւորին մեծագունի իմիք պարզաբանութեան. Քաղաքքն, որոց շնորհեալ է նմանակ իմն ազատութիւն, են Քատիչէ և Սիվիլիա վասն գաւառին Անտալուզիոյ. Ալիքանթէ և Քարթակենա վասն Վալէնցայի և Մուրչիոյ. Պարչէլլօնա վասն Քաթալօնիայ և Արակօնայի. Սանթանտէր վասն Քասթիլիոյ. Քօրունեա վասն Կալիցիոյ և Կիյօն վասն Ասթուրիոյ. Այսոքիկ՝ կամ են նաւահանգիստք գլխաւոր շահավաճառութեան 'ի նահանգս իւրեանց, կամ յարմարագոյն կայաւորեալք վասն փոխաբերութեան իւրաքանչիւր բերոց իւրեանց. Հետագայ եղեալքս տան զհաւաստիս ինչ աճման տուրևառութեան 'ի կայունաւորութիւնս, առ որս տարածին նոր կանոնաւորութիւնքն. Յառաջ քան զշնորհումն ազատ տուրևառութեան բաժք ժողովելք 'ի մաքսատան Հաւանայի հաշւէին ց104208 մարչիլս ամ ըստ ամէ. Ընդ ամս հինգս նախընթացս 1774·ին ժամանեցին ց308000 մարչիլս յամին. 'Ի Իւքաթան մաքսք ամբարձեալ են 'ի 8000է ց15000. 'Ի Սպանիօլայի 'ի 2500է ց3600. 'Ի Փօրթօռիքքօյի 'ի 1200է ց7000. Բոլորական արժողութիւն վաճառացն տարելոց 'ի Քուպայէ 'ի Սպանիա դատեալ եղև յամին 1774 լինել 1500000 մարչիլ։ ‖

Թէ որպիսի կարիցեն լինել արգասիք բանալոյ զայս հաղորդակցութիւն 'ի մէջ գաւառացն կարգելոց 'ի կայաւորութենէ իւրեանց առ'ի դաշնակցել փոխադարձաբար, ոչ եմք տակաւին 'ի վիճակի վճռահատելոյ զայն փորձառութի. այլ ոչ կարեն լինել, բայց եթէ գերշահաւէտք. Պատճառն շնորհելոյ այսպիսի իմն հրաման է այնչափ գովելի, որչափ ազնիւ է սկիզբն, յորոյ վերայ հիմնեալ է. և երկոքեան ցուցանեն զզարգացումն ոգւոյ իրիք 'ի Սպանիա բազմօք օտար եղելոյ 'ի նախադատութեանց և 'ի սկզբանց, յորս սկզբնաբար յեցեալ էր ոճն կանոնաւորելոյ զտուրեւառութիւն, և ընդածելոյ զկառավարութեան հարդունութեանց:

Նոր կանոնաւորութիւնք 'ի վերայ կառավարութեան հարդունութեանց:

'Ի նմին ժամանակի, յորում Սպանիա յեղ է փոյթ մուծանելոյ զհանճարեղ կանոնաւորութիւնս վերաբերականս առ վաճառակցութեան իւր ընդ Ամերիկոյ, ոչ է ցուցեալ զինքն անտարբեր վասն ներքին կառավարութեան հարդունութեանց իւրոց. Պահանջէր այն զնորոգումն ինչ. և տէր Յովսէփ Կալվեցն, որ ունէր յայնժամ զուղղաւորութիւն բաշխի Հնդկական իրակութեանց 'ի Սպանիա, ունելով զլաւագոյն առիթս ոչ միայն նշմարելոյ զպակասութիւնս և զեղծումն 'ի քաղաքական կերպին հարդունութեանց, այլև ճանաչելոյ զսկիզբն այսց անկարգութեանց, նմին իրի եղեալ է յաստիճանի արդիւնացուցանելոյ զայն. Զկնի պարապեցուցեալ լինելոյ ընդ ամս եօթն 'ի նոր աշխարհին յարտաքոյ կարգի իմն առաքման և հանդերձ ամենամեծ կարողութեամբ իւիք իբր հանրական վերադիտող նորոյն Սպանիոյ, զկնի այցառնելոյ անձամբ հեռաւոր գաւառացն Չինալօայի, Սօնօրայի և Կալիֆօրնիոյ, և առնելոյ զմեծամեծ փոփոխութիւնս կառավարութեան նոցա 'ի կացութեան մտից իւրեանց, ետ սկիզբն սպասաւորութեան իւրում ընդհանուր իմն վերաստեղծմամբ ատենից արդարութեան յԱմերիկա. Առ աճման բազմամարդութեան և փարթամութեան 'ի կողոնիայսն գործք ատենից ունկնդրութեան էին այնքան բազմացեալք, մինչզի թիւ դատաւորացն, յորոց 'ի սկզբանէ բաղ-

Նորոգումն ատենից արդարութեան:

թողկացեն՟ էին, ոչ ևս էր չափակցեն՟ պիտոյից. և ոչ իսկ կարէին նոքա վ՟ն նուաղութե՟ն պատճոյն պահել զարժանաւորութի իւրեանց. Նոյա ընկալաւ նա իբրև դեղ այսց երկուց դժպատեհուե՟նց զորքունի որոշումն ի՟մն, որ նշանակէր զյաւելուած ինչ դատաւորաց առ իւրաքանչիւր ատեան հանդերձ առաւել մեծարու անուամբք և ճոխագոյն թոշակօք :

Նմին ընդունակ գործակալի պարտական է Սպանիա վասն նորոյ իրիք բաշխման կառավարութե՟նց յԱմերիկեան գաւառսն իւր. Նաև զենի կառուցման երրորդ իրիք փոխարքայութե՟ն ՚ի Նոր Թագաւորութենն Գրանաթայի է այնպէս հրաշալի ընդարձակութի՟ն Սպանիական տէրութե՟նցն ՚ի Նոր աշխարհին, և զանազան քաղաքք ենթարկեալք իրաւարանութե՟ն փոխարքայից կան յայնպիսի ի՟մն տարապայման բացակայութե՟ն ՚ի մայրաքաղաքացն, յորս նստին նոքա, մինչզի ոչ զգային բնաւ ոչ զհսկողութի նոցա և ոչ զներգործականութի՟ն. Գաւառք ինչ ստորակարգեալք փոխարքային նորոյն Սպանիոյ կան աւելի քան զերկու հազար մղոն զատուցեալք ՚ի Մեքսիքօէ. Են գաւառք ենթարկեալք փոխարքային Փերուայ ևս առաւել հեռիք ՚ի Լիմայէ. Հազիւ կարէր ասիլ, թէ ժողովուրդք յայն բացակայ նահանգսն վայելէին ՚ի բարերարութե՟ն քաղաքական կառավարութե՟ն. Նոքա փորձէին յաճախակի զհարստահարութի և զժպրհութի վայրագոյն գործակալաց. բայց ենթարկէին լռութի յաւէտ, քան թէ դնիլ ՚ի վտանգ ծախուց անանջատելեաց ՚ի ճանապարհորդութէ առ տարանջատեալ մայրաքաղաքսն. ուր կարէին ստանալ զարդարութի, որ պարտէր նց.

Նոր բաշխումն կառավարութեանց:

*Սնկ կանգնեցաւ առ՚ի ընդդէմ կալ այսց անպատեհութե՟նց չորրորդ փոխարքայութի. որոյ իրաւաբանութե՟ն ենթադրեալ են գաւառքն վտակին Տէռափլաթայ, Պուէնոսայրեսայ, Փարակուայեայ, Թուքու-

*Նոր փոխարքայութե՟ առ գետոյն Տէռափլաթայ: Օգոս. 1776.

քումանու, փօթօսեայ, Սանթայ Քրուցայ Սերրայի, Չարքասայ և քաղաքացն Մէնտօցցայ և սրյն Յօհաննու. Այսու բարեյարմար կարգադրութեամբ ստացեալ են երկու մեծամեծ շահք. Ահաւանիկ վտարեալք անպատշաճութիւնքն պատճառեալք 'ի հեռաւոր կայանութենէ այնց գաւառաց. որք հանդուրժեալ են ընդ երկար ժամանակ. և ահաւասիկ դիմանք առաւել բացականք 'ի Լիմայէ, անջատեալք 'ի փոխարքայութենէ փերուայ, և ենթադրեալք վերնագունի միում. որոյ աթոռ կառավարութեան 'ի Պուէնոսայրէս եղիցի դիւպան և դիւրամատչելի. Համահաւաճառութեան բաժագաւութեան ընդ փօրթուկէզաց, որ էր այնպէս յառաջացեալ, և որ լինէր կրծիմն անըստնանելի փոխաբերութեան տարագոյ 'ի Սպանիոյ առ հարաւային մշակութս իւր, կարէ դիւրագոյն՝ արգելեալ լինել, յորժամ գերագոյն աւագոյթն վասն մտաւորութեան առ տեղիսն, յորս գործի, տեսցէ աչօք իւրովք զյառաջադիմութի և զարտադործս նորա. Տէրն Պետրոս Ցավալլոս, որ ամբարձեալ է յայս նոր արժանապատուութի հանդերձ պայմանադրութիւնք հաւասարօք պայմանաւորութեանց այլոց փոխարքայից, քաջ ճանաչէ զկացութի և զշահ գաւառացն, որոց հաւատացեալ էր նմա կառավարութիւն, գոլով ծառայեալ անդէն յերկար ժամս և նշանաւորութի. Այսուիկ անդամատութի, որ յաջողեաց այլում, որ արարաւ 'ի կանգնելն 'ի փոխարքայութի զնոր թագաւորութիւն Կրանատայ, իբր երկու երիր մասունք երկրաստանացն ենթադրելոց յառաջնմէ փոխարքայէն փերուայ այժմ արտափակեալ են յիրաւաբանութենէ իւրմէ:

Նոր կա-
ռավա-
րութի է
գաւառ-
ացն Սօ-
նօրայ:

Կոպարք փոխարքայութեան նորոյն Սպանիոյ եւ՛ երեւելաբար պարագրեալ են հաւասար իմաստութեամբ և ընտրողութեամբ. Չորք 'ի հեռաւորագոյն գաւառաց իւրոց՝ Սօնօրա, Չինալօա, Քալիֆօրնիա,

նիա, և նորին Նաւարրա վերածեալ են առ ուրոյն իմն կառավարութիւն. Ասպետն խաչի, որում հաւատացեալ է այս հրամանատարութիւն, ոչ է պատուեալ անուամբ փոխարքայի, և ոչ վայելէ 'ի պայմանսն նշանակեալս առ այս աստիճան. բայց իրաւարանութիւն իւր և ազատութիւն են բնաւին անկախք 'ի փոխարքայէ նորոյն Սպանիոյ. Երևի, թէ հաստատումն այսր նորոյ կառավարութեան ազդեցեալ իցէ ոչ միայն 'ի նկատմանէ հեռաւորութեան այսց գաւառաց 'ի Մէքսիքօէ, այլև յուշադրութենէ վերջին երկրագտութեանց արարելոց անդէն. որք և կանխաւ յիշատակեալ են յինէն. Գաւառք, որք պարունակեն զայնպիսի հարստութիւնս և այնքան ծանրակշիռք, պահանջեն զանընդմիջական վերադիտողութիւն բդեշխի միոյ. որում մասնաւորաբար իցեն յանձն արարեալ. Նա քանզի պարտականութիւնն, առանձին շահն, և անփառութիւն զուգընթաց լինին 'ի դրդել զայսոսիկ նոր կառավարս, որպէսզի քաջալերեսցեն զգործսն, որք դիմեն 'ի ծաւալել զճոխութիւն և զյաջողութիւն ընդ գաւառսն յանձնեալս խնամոց իւրեանց, բարերար արդիւնք այսր նորոգութեան կարեն լինել երևելիք. Բազում նահանգք յԱմերիկա նուաճեալք 'ի բազում ժամանակաց վատամամբ և տկարութեամբ բնականաւ գաւառացն կայաւորելոց 'ի ծագ անրաւ իրիք թագաւորութեան՝ կարեն ստանալ զոյժ և զարգասաւորութիւն այժմ, յորում են այնքան մօտաւորք աթոռոյ իշխանութեան առ'ի զգալ զազդեցութիւն նորա:

Այսպիսի լեալ է (յետ գալոյ Պօրպօնեանց յաթոռ) յառաջադիմութիւն կանոնաւորութեանց իւրեանց և յաջորդական ընդարձակումն գաղափարաց նոցա նկատմամբ վաճառականութեան և կառավարութեան Ամերիկեան հարգունութեանց իւրեանց. Նա ոչ իսկ փոյթ նոցա այնպէս բոլորովին պատաղեալ է յայն, որ հայի յառաւել տարանջատ

[illegible]

մասունս տէրութեանց իւրեանց, զի անհոգացեալ իցեն զուղղութ՟է զեղծմանցն, որք մուծեալ են 'ի ներքին մատակարարութ՟ի թագաւորութ՟ե իւրեանց. Տեղեկացեալք պատճառացն, առ որս անկումն Սպանիոյ յառաջին յաջողութ՟է իւրմէ վերագրելի է, գուն գործեցին վերստին կենդանացուցանել զոգին ճարտարութ՟ե 'ի մէջ հպատակաց իւրեանց, և ծաղկեցուցանել այնպէս զձեռագործս իւրեանց, զի փոխատրեսցէ զայնս բաւականս առ'ի լնուլ զպէտս Ամերիկոյ. որով արտաքսեսցեն զօտարս 'ի ճիւղոյ իմեքէ տուրևառութ՟ե, որոյ կորուստն լեալ է բոլոր թագաւորութ՟ենն այնպէս մահաբեր. Զայս հնարեցան արդիւնացուցանել պէսպէս հրովարտակօք բղխեցելովք զկնի խաղաղութ՟ենն Ուտրեքթայ. Արարին շնորհաբաշխութիւնս վասն քաջալերութ՟ե ինչ ինչ գլխոց ճարտարութ՟ե. փոքրկացուցին զսակս 'ի վ՟ր այլոց. արգելին, կ՟մ ծանրացուցին կրկին կապալաւ զարտաքին ձեռագործսն, որք կարեն մնասել ն՟ց. կառուցին զհամբարանս տուրևառութ՟ե և երկրագործութ՟ե. տնկեցին զմշակոյթս հողագործաց յանգործ նահանգս ինչ Սպանիոյ. և բաժանեցին զհամատարած անդսն 'ի մէջ ն՟ց. ետուն 'ի զրաւ ձեռն յամ հայթհայթանս, զորս ազդեաց ն՟ց ճանաչումն կամ նախանձաւորութ՟ի շահավաճառութ՟ենն, առ'ի զօրացուցանել զսեպհական ճարտարութ՟ի ն՟ց և թուլացուցանել զայլոցն. Այլ ոչ է իմ պաշտօն մեկնել զայսպիսի իրս, և որոնել զպիտանութ՟ի և զարդիւնս ն՟ց. Ոչ գոյ ճիգն առաւել տարժանելի և առաւել անստոյգ յօրէնսդրութ՟ե քան թէ զարթուցանել զոգի ճարտարութ՟ե, ուր բա՛ խոնարհեալ է, և մուծանել զայն, ուր ոչ է ծանուցեալ. Ազգք, որք արդէն ստացեալ են զտարածեալ իմ՟ն վաճառաշահութ՟ի, ունին զայնպիսի բարեմասնութիւս յառաջեկեալս 'ի ստուար դրամագլխոց վաճառականաց իւրեանց, 'ի յաջողակութե̃ արհեստաւորաց իւրեանց, 'ի գործունէութե̃ն, որով ընդածեալ են իրտկութիւնքն, մինչզի տէրութիւն, որ ձկտի զերդեւեցուցանել զնոսա, պարտի սպասել կռուիլ ընդ բիւր դժուարութեանց. Ճարտարութիւն, որ թագաւորէ այսօր 'ի Սպանիա, է այնպէս նշանաւոր բաղդատութեամբ այնր, որ էր առ միապետօք տանն Աւսթրիոյ, մինչզի ոչ կարէ, բայց եթէ զարթուցանել զնախանձաւորութի և գրգռել զկենդանագոյն ճիգն ազգացն, որք ունին ներգործարար զտացուած այնր պիտանի շահավաճառութեան, յորմէ ջանայ կողոպտել զնոսա Սպանիա. Ապա պարակայ մի պարտի փոխատրել զայսոսիկ հաւաստիս Սպանիոյ առարկայ առաւել ևս սերտ ուշադրութեան այլոց իշխանութեանց Եւրոպացւոց. և է, զի ոչ են այնք արդիւնք ազդեցութե̃ թագաւորին և գործակալաց իւրոց. Օգացուածք և հոգւոյն ժողովրդեան երևելն սատարել յառաջատես հոգւոյ միապետաց իւրեանց. Ողջագուրեալ են նոքին զբարեգոյն գաղափարս՝ ոչ միայն հայելով 'ի տուրևառութիւն, այլև վերահայեցմամբ կառավարութեան. Յամ վերջին պատմագրաց նոցա ճանաչին պակասութիւնք 'ի կանոնաւորութիս իւրեանց. զորս հպարտութիւն ոչ էր թողացուցեալ նախնեաց իւրեանց խոստովանել. և առաջադրին դեղք, զորս տգիտութիւն արարեալ էր զնս անընդունակս ողջագուրելոյ:

(51) Երկու ընձեռուածք տեառն Պետրոսի Ռոտրիկուեցի Քամպոմանեայ գանձապետի արքունի և գերագոյն խորհրդոյն (պաշտօն գրեթէ համանման պաշտօնի ընդհանուր փաստաբանին յԱնգլիա) և ուղղչի արքունի դամարձակին վիպասանութե̃՝ մինն մակագրեալ՝ Ճառ 'ի վերայ տնտեսութեան ժողովրդական ճարտարութեան. միւսն՝ Ճառ 'ի վերայ ժողովրդական դաստիարակութեան արհեստաւորաց և տնտեսութեան նոցա, առաջինն հրատարակեալ

'ի

'ի 1774. և երկրորդն 'ի 1775. ին, տան զհիանալի իմն ցոյց այսր ամի. Գրեթէ ամ յօդուած ծանրակշիռ նկատմամբ ներքին քաղաքավարութեն, նաւարկութեն, երկրագործութեն, ձեռագործաց և տուրևառութեն ազգայնոյ կամ արտաքնոյ քննեալ է յայսոսիկ երկուս գործս. և չեն բազում հեղինակք ևս և 'ի մէջ ազգաց առաւել շահավաճառաց, որք լաւագոյն ստացեալ իցեն զայսոսիկ զանազան առարկայս, որք կռուիցեն առաւել համարձակութեամբ ընդդէմ ռամկական և ազգային նախադատութեանց. կամ որք միաւորեալ իցեն երջանկագոյնս՝ զհանդարտ իմաստասիրական հետախուզութիւն ընդ վառեալ նախանձու քաղաքացւոյ միոյ փոյթ եղելոյ վասն հասարակաց բարւոյ. Անտեանքս այսոքիկ են 'ի մեծագոյն ևս համարման 'ի մէջ Սպանիացւոց. որ և հաւաստէ զզարգացումն ճանաչմանց նց. և թէ նոքա ընդունակ են ճաշակելոյ զմատենագիր մի, որ ասէ ազատօրէն զկարծիս իւր: ‖

Բայց յետ այնր, զոր արարեալ են Սպանիացիք, մնայ նոցա տակաւին բազում ինչ առնելի. Բիւր վնասակար սահմանադրութիւնք և զեղծմունք խորապէս արմատացեալք 'ի քաղաքական կարգաւորութեն նց պարտին ջնջիլ յառաջ քան թէ ճարտարութիւն և ձեռագործքն կարող լինիցին վերաստանալ զարգասաւորութի իւրեանց:

Շահա-
վաճա-
ռութե
[illegible]
[illegible]
[illegible]:

Հանդերձ այսու ամենայնիւ շահավաճառական կանոնաւորութիւնք Սպանիոյ վերահայեցմամբ հարգունութեանց իւրոց են կարի խիստք և օրինադրականք առ'ի դնելոյ 'ի գործ. Կառավարութիւն մի, որ ծանրացուցանէ զտուրևառութիւն կարի ծանր հարկադրութեամբ, կամ շղթայէ կարի սաստիկ սեղմամբք, գործէ ընդդէմ սեպհական շահուց իւրոց. յօժարեցուցանէ զհպատակսն 'ի լուծանել զսահմանս նորա. և տայ շարժառիթ բաժադաւութեանց. Սպանիացիք յԵւրոպիա և յԱմերիկա

ամփոփեալք 'ի տուրևառութեն իւրեանց 'ի նախանձաւորութէ, կամ ճնշեալք 'ի հարկապահանջութենց թագաւորին՝ ունին հանապազորդ զգօնութի իւրեանց 'ի շարժման առ'ի հնարել խուսել 'ի հրամանաց նորա. Աչալրջութի առանձնական շահուն գտանէ զհանգամանս արդիւնացուցանելոյ զայն, որ 'ի հրապարական խոհականութէ ոչ կարեն նախատեսանել, և ոչ խափանել 'ի հրապարական աւագութէ. Այս հոգի հակադրեալ հոգւոյ օրինաց ընդմտանէ 'ի տուրևառութն Սպանիոյ ընդ Ամերիկոյ յամ ստեղունս իւր յետ նոցա, որք են 'ի գլուխ կառավարութեն մինչև ցստորինն 'ի հպատակաց. Նոյն իսկ պաշտօնատարք կարգեալք առ'ի խափանել զվաճառականութի բաժագաւութն ստէպ 'ի գործ ածեալ են իբր գործիք առնելոյ զայն. և տեսանք կառուցեալք դիտմամբ առ'ի պատժել զայն եղանին նոյնչափ ճանապարհք առ'ի դիւրացուցանել զայն. Ենթադրի, թէ թագաւորն զրկեալ իցէ պէսպէս արուեստակութեմբք աւելի քան 'ի կիսոյ մտիցն, զոր ընդունելոց է յԱմերիկոյ. և ցորչափ մարթ է այնքան անձանց ունել թաքուն զայսուիկ հընարս, ծանօթութի նոցա ոչ հասցէ երբեք յարքունի աթոռ. „Որքան կարգաւորութիւնք (ասէ
„ Ռօբերթս,) որքան խրատք որքան նամակք
„ յարքայէ [illegible] առաքեցին առ'ի ուղղագրել զպի-
„ տակութիւնս. և որքան սակաւ պահին. և որչափ
„ փոքրիկ շահ հանի անտի. Երևի ինձ գերիվա-
„ ւացի վաղեմի դիտողութիւն, թէ ուր են բա-
„ զում բժիշկք և բազում բժշկականութիւնք, անդ
„ պակասի առողջութիւն. ուր են բազում օրէնք
„ և բազում դատաւորք, պակասի անդէն արդա-
„ րութիւն. Ունիմք մեք փոխարքայս, նախագահս,
„ բդեաշխս, պատուիրակս, ուղղիչս, ալքալտս և
„ զհազարաւորս Ալկուածիլաց. բայց հանդերձ
„ այսոքիկ շարունակին հրապարական զեղծմունք

,, և բազմանան,,. Ժամանակն աճեցոյց զչարիսն, զորոց լինէին գանգատանք առ Թագաւորն Թէն Փիլիպպոսի երկրորդի. Ոգի մի ապականութեան շաղախեաց զբովանդակ հարգունութիւն Սպանիոյ յԱմերիկա. Սարգիկ տրոհեալք յաթոռոյ կառավարութեն՝ տարփացողք հարստութեց՝ առ՚ի ելանել յայնմանէ, զոր նոքա համարին իբր վիճակ իւր աքսորանաց ՚ի հեռաւոր իւր երկիր և վտառողջ, հրապուրեալք ՚ի կարի մարդելոյլ առթից, և զառածեալք յօրինակէ նոցա, որք կան հուպ ինքեանց՝ կորուսանեն վաղվաղակի զզգայութիս պարտականութեն և պատւոյ. Յառանձնական կեանս տան զանձինս առաւել ապերասան ցոփութեն. որովհետև ՚ի հրապարական գնացս իւրեանց մոռանան զայն, զոր սպասեն ՚ի նոցանէ արքայն իւրեանց, և հայրենիքն:

Զօրու-
[illegible]
՚ի մէջ նո-
րոյն Ս-
պանիոյ
և Փիլիպ-
պեայցն:

Յառաջ քան զնկքելն զայս յոգնած Սպանիական վաճառականութեն յԱմերիկա, մնայ ինձ յիշատակել զճիւղ ինչ նորա զատուցեալ, բայց ծանրակշիռ. Վաղվաղակի յետ հասանելոյ իւրոյ յաթոռ Փիլիպպոս երկրորդ կերպաւորեաց զառաջարկութի տնկելոյ զմշակոյթ ինչ ՚ի Փիլիպպեան կղզիսն, որք ստուգանեալ էին անդստին ՚ի ժամանակէ գտման իւրեանց. և կատարեաց զայն միջնորդութի սպառազինութեան միոյ հանդերձելոյ ՚ի Նորն Սպանիա. Մանիլա ՚ի կղզւոջն Լուքոնիոյ եղև գլխաւոր քաղաքն՝ ընտրեալ մի նորոյ կայունաւորութեն. Չեռնամուխ եղեն հարգունականքն յընդարձակ իւր տուրևառութի ընդ Չինացւոց. յորմէ բազումք յորդորեալք ՚ի յուսոյ շահուն, կայունաւորեցան ՚ի Փիլիպպեայսն ընդ Սպանիական պաշտպանութի. Յարդարեցին զհարգունութիւն այնպէս ճոխաբար ամ բերովք և ձեռագործօք արևելից, մինչզի բաւական արարին զնա բանալոյ զվաճառականութի իւր ընդ Ամերիկոյ ընդ ընթացս ինչ նաւարկութեն առաւել երկայն, զոր մարթէր առնել 'ի վ̃ր գնտոյ մերոյ. Այս վաճառակցութ̃ի 'ի սկզբան իւրում արարեալ եղև ընդ Կալլաւոյ առ ծովեզերբն Փերուայ. բայց ներհմտութիւն հոլանելով զբազում դժուարութիւնս յայսմ ճանապարհորդութ̃ե, տօնավաճառն այսր տուրևառութ̃ե 'ի մէջ արևելից և արևմտից փոխաբերեն եղև 'ի Կալլաւոյ առ Աքափուլքօ առ ծովեզերբ Նորոյն Սպանիոյ. Յետ պէսպէս կարգադրութ̃եց վերածեալ եղև առ կանոնաւոր իմն կերպ. Մի կամ երկու նաւք մեկնին ամի ամի յԱքափուլքօյ. որք տանին յարծաթի զգումար հինգհարիւր հազար մարչիլաց. և 'ի փոխարէն առնուն զդեղորայս, զհամեմունս, զյախճապակի Չինու և Ճափփօնայ, զպաստառս բամպակի՝ Հնդկայինս, մուսէլինս, զմետաքս և զդիպակս այլոց մեծագին յօդուածոց. Բարութ̃ի կլիմային և ճարտարմտութ̃ի ժողովրդեան ընդունակացուցեալ են զարևելս 'ի դարմանել զմնացորդն աշխարհի. Վաճառականք Փերուայ ընդ ժմ̃կս ինչ ընկալեալ եղեն 'ի բաժանորդութ̃ի այսր շահավաճառութ̃ե. և առաքէին ամի ամի զնաւ մի առ Աքափուլքօ՝ առ 'ի սպասել անդէն հասանելոյ նաւուցն 'ի Մանիլլայէ, և ընդունելոյ անդ զբաժին ինչ տարազուցն, զորս փոխաբերէին. 'Ի վախճանի փերուացիք մնացին արտափակեալք խստագոյն հրովարտակօք. և բովանդակ տարազք արևելից պահեցան միայն վ̃ր ծախման Նորոյն Սպանիոյ :

Պտուղ այսր ներօղութ̃ե է, զի բնակիչք այնր գաւառի վայելեն 'ի շահեկանութ̃իս անծանօթս այլոց Սպանիական հարգունութ̃եց. Ձեռագործք արևելից ոչ միայն են առաւել յարմարք ջերմ կլիմայի իմիք և առաւել բարետեսիլք քան զեւրոպականսն, այլև կարեն վաճառիլ առաւել դիւրագնի. և շահքն, որք առնին 'ի վ̃ր, լինին այնքան երևելիք, մինչզի հարստացուցանեն զնոսա զամենեսին, որք տարապեալ են յայն՝ կամ 'ի բերել զայնս 'ի Անթիլեայս, կամ 'ի վաճառելն 'ի Նորն Սպանիա. Այլ քանզի շահ գնողին և վաճառողին զուգընթաց լինին 'ի նպաստել այսմ յօղուածոյ շահավաճառութեան, նոյնն շարունակեաց ընդլայնել ընդդէմ կանոնաւորութեանց եղելոց վ̃ս պարագրելոյ զայն. Ընդ պատրուակաւ ընդ այսուիկ, թէ օրէնք թողացուցանեն փոխաբերել, մեծ քանակութիւն վաճառաց Հնդկայնոց ափուն 'ի տօնավաճառսն նորոյն Սպանիոյ. և յորժամ նաւահանդէսն ժամանէ 'ի Վէրագրուց, ոչ ևս գտանէ վաճառելի զիւրսն:

(52) Գալէօնն ծառայեցուցեալ յայնմ վաճառականութեան՝ փոխանակ վեցհարիւր Թօննէլլաթայց, առ որս կապարտաւորեալ էր օրինօք, բերէ հասարակաբար զբեռն 1200ից, կամ 2000ից. Նաւն Աքափուլքոյ առեալ 'ի Միլօրտ Անսօնէ փոխանակ 500000 մարչիլոց թոյլատրելոց յօրինաց՝ ունէր 'ի ներքս զ1315843. թող զարծաթն ոչ տպեալ, որ ամբողջանայր 943611: ‖

Ոչ գոյ 'ի տուրևառական կառավարութեան Սպանիոյ պարագայ ինչ առաւել անպարզելի քան ըզթոյլատրութիւն այսր շահավաճառութեան 'ի մէջ Նորոյն Սպանիոյ և Փիլիփպինեանց, կամ առաւել դիմամարտ հիմնական սկզբան իւրում ունելոյ զհարգունութիւն 'ի մշտնջենաւոր կախման 'ի մայր հայրենեաց՝ արգելով զինչևիցէ տուրևառութիւն, որ կարէր նախահոգալ նոցա զվաճառս յարտաքնոց. Այսպիսի իմն թոյլատրութիւն երևեսցի առաւել ևս տարակարգ, եթէ նկատեսցի, թէ նոյն իսկ Սպանիա առնէ զտուրևառութիւն իմն ուղղակի ընդ կայունեաց իւրոց 'ի Փիլիփպինեայսն, և շնորհէ միայն 'ի հարգունութեանց իւրոց Ամերիկացւոց զարտօնութիւն իմն, զոր զլանայ հպատակաց իւրոց յԵւրոպիա. Հաւանական է, թէ հարգունականքն. որք սկզբնաբար տիրեցին Փիլիփպեայց՝

պեայց՝ գոլով արձակեալք անդր 'ի Նորոյն Սպանիոյ՝ ակսեալ իցին զայս պատասխանատուութի ընդ դատաւորի միում, զոր նկատէին կերպիւ իմիք իբր զհայրենիս իւրեանց, մինչև արքունեացն Մատրիտոյ նախատեսեալ էր զհետևութիւն, և կարողացեալ տանել զհանդիպմունս վն խափանելոյ զայն. Բազում բողոքք արարեալ եղեն ընդդէմ այսր վճռականութեան իբր վնասակարի Սպանիոյ. վասն զի զարտուղեցուցանէ ընդ այլ ճանապարհ զմեծ ինչ բաժին այնր գանձու, որ պարտէր հոսել ընդ Թագաւորութիւն. և վնզի գիտէ ծնուցանել զոգի իմն անկախութե 'ի հարգունութիւն, և քաջալերել զանհամար խարդախութիւնս, ընդդէմ որոց անկարելի էր ապահովանալ 'ի տեղիսն այնպէս հեռացեալս 'ի վերատեսողութէ կառավարութեն. Այլ քանզի պահանջի ոչ թեթև ինչ ջան քաղաքականութե առ'ի բառնալ զինչևիցէ սովորութի, զոր այնքանեաց փոյթ է պահել. և առ որ ժմկն յաւելեալ է զհաստատութի ուղղութե իւրոյ, տուրևառութեն 'ի մէջ Աքափուլքոյ և Մանիլլայի տէէ լինել երևելի, որպէս յառաջ. և կարէ նկատիլ իբր նախապետական պատճառ բարեվայելչութե և շքոյ, որք Թագաւորեն յայսմ մասին Սպանիական տէրութեց:

Բայց հանդերձ այսուիկ ընդհանուր ապականութե հարգունութեց և նուաղութե հրապարական մուտիցն վն անպատեհ փոխաբերութե արտաքին տարազուցն և վն նենգամուտ արուեստից հպատակաց իւրեանց՝ միապետք Սպանիացիք ընդունին զերևելի իմն գումար յԱմերիկեան տէրութեց իւրեանց. Այս յառաջգայ 'ի պէսպէս ցեղ սակիցն, որք կարեն բաժանիլ յերիս նախապետական մասունս. Առաջինն պարունակէ զայն, որ վճարի Թագաւորին իբր գերագոյն իշխանի Նորոյ աշխարհի. և առ այս դաս պատկա-

Հասոյթ
արքունի
տէրութե Ա
մերիկոյ.

նի

նի բաժն ոսկւոյ և արծաթոյ, որք հանեալ լինին 'ի հանքաց՝ կոչեցեալ 'ի Սպանիացւոց՝ Քուինթոս ռէալէ. և հարկն թափեալ 'ի Հնդկաց, որ ասի՝ թրիբութօ ռէալէ. Երկրորդն բովանդակէ զյոգնաթիւ կապալսն 'ի վ՟ր տուրևառութ՟ե, որք և յաճեցուցանեն զյառաջադիմութիւս նորա եթէ 'ի խոշոր և եթէ 'ի մանր վաճառականութ՟ե. Երրորդն ընդ գրկէ զայն, որ անկ է թագաւորին իբրև գլխոյ եկեղեցւոյ և մատակարարի եկեղեցական հիմանց նորոյ աշխարհին. Որոյ հետևութ՟բ ընդունի՝ նա զտասանորդս, զտարեկանս, զկողոպուտս և զայլ եկեղեցական հասոյթս, որք ընկալեալ լինին յԱռաքելական գանձարանէն յԵւրոպիա. որպէս և յառաջ եկեալն կոնդակին Խաչակրաց:

(53) Գին այսր կոնդակի պէսպիսանայ ըստ աստիճանի հպատակաց. Որք են յես ստորնագոյն պայմանի, որպիսի են ծառայք և գերիք, վճարեն զերկուս ռէալս փլաթայի կամ զմի շլին. այլք Սպանիացիք զութն ռէալս. Նոքա, որք ունին զպաշտօնս և զքօմմէնտայս, զվեշտասան ռէալս. Ըստ վաճառականի միում Անգղիացւոյ կոչեցելոյ Չիլթօն, որ ընդ երկար արարեալ էր զնիստ իւր 'ի Սպանիական հարգունութիւն, կոնդակն Խաչակրաց վաճառեցաւ կարի մեծագնի յամին 1570. այս է, չորից ռէալաց վասն հպատակաց ստորնագոյն ևս աստիճանի. Գին իւր երևի լեալ պէսպէս 'ի զանազան ժամանակս. Կարէ տեսանել 'ի հետագայ աղիւսակի այն, առ որ պայմանեցաւ 'ի վերջին հրատարակման. Տացէ այս զգաղափար իմն համեմատական թըւոց պէսպէս դասուց քաղաքացւոց եթէ 'ի Նորն Սպանիա, և եթէ 'ի Փէրու:

Հրատարակեցան ՚ի Նորն Սպանիա ։

Կոնդակք իւրաքանչիւրն 10. մարչիլաց	4.
2. մարչիլաց	22601.
1. մարչիլաց	164220.
2. ռէալաց	2462500.
կոնդակք	2649325.

՚Ի Փէրու ։

16. մարչիլաց, 4. ռէալաց և կիսոյ իւրաքանչիւրն	3.
3. մարչիլաց, 3. ռէալաց	14102.
1. մարչիլի, 5. ռէալաց և կիսոյ	78822.
4. ռէալաց	410325.
3. ռէալաց	668601.
կոնդակք	1171853.

Հրատարակի այս կոնդակ յամ երկուս ամս յանուն Հռոմէական քահանայապետին. և պարունակէ զարձակումն իմն ամ՟ մեղաց գործելոց. և ՚ի մէջ այլոց արտօնութենց զթոյլատրութի՟ ուտելոյ զկերակուրս ինչ արգիլեալս ՚ի քառասնորդսն և յաւուրս պահոց. Կանոնաւորք սահմանեալք ՚ի սփռել զայս կոնդակ ոչ պակասին ՚ի բարձրացուցանելոյ զզօրութիւն նորա ամենայն եռանդիւ ճոռոմաբանութեան իւիք շահաքաղցի. և տգէտ և դիւրահաւան ժողովուրդն ընծայէ զամբողջ հաւատ բանից նոցա. ուստի բովանդակ բնակիչք Սպանիական հարգունութեանցն՝ Եւրոպացիք, Կրէօլք, և Մուլատգրիք գնեն գնոյ, զոր հաճոյ է կառավարութեն սահմանել՝ զկոնդակ մի համարել ՚ի նոցանէ իբր էական առ փրկութիւն իւրեանց ։

Ո՛րքան կարեն ամբաստանել զանազան հիմունքս այսոքիկ գրեթէ անկարելի է սահմանել որոշակի. Ընդարձակութիւն Սպանիական տէրութեանց յԱմերիկա, նախանձաւորութիւն կառավարութեան, որ առնէ զնոսա անմատոյցս արտաքնոց, խորհրդաւոր լռութիւն, զոր Սպանիացիք սովորեն պահել նկատմամբ ներքին կայի հարգունութեանց իւրեանց, փութորին ծածկել զայս նիւթ քողով իւիք, զոր ոչ է դիւրին բառնալ. Բայց խնամոտ պատմութիւն իմն, նաև բազմօք ըղձակերտ հրատարակեալ է 'ի վերջոյ զարքունի մտից 'ի Նորն Սպանիա. յորմէ կարէ կերպացուցանել գաղափար ինչ հայելով յայն, որ հաւաքի յայլ գաւառս. Ըստ այսպիսի իմն ծանօթութեան Սպանիա ոչ ընդունի յամենայն իրաւանց Նորոյն Սպանիոյ աւելի քան զմիլիոն մի դրամոյ մերոյ. յորմէ պարտի հանել կէս մի իբր ծախք գաւառական կայունաւորութեան:

(54) ‖ Նա քանզի Մըլլաէկնօր, որում պարտիմ ես զայս տեղեկութիւն, եր ընդհանուր համարակալ 'ի միում յառաւել երևելի բաշխից արքունի մտիցն, և կալաւ այսու միջնորդաւ զդիւրութիւն ստանալոյ զկատարելագոյն ծանօթութիւնս, վկայութիւն իւր նկատմամբ այսր յօդուածոյ արժանի է մասնաւոր իմիք հաւատարմութեան. Նաև քանզի ոչ է երևեալ 'ի լեզու Անգլիացի հայելի իմն մտից, զորս արքայն Սպանիոյ քարշէ յԱմերիկոյ, նմին իրի հաւատամ, թէ ոչ եղիցի անհաճոյ ընթերցողաց իմոց գտանել զայն աստէն 'ի ներքոյ: ‖

Ուղղակն ծախսակրաց, որ Հրատարակի յամ երկուս ամս, բերէ ամի ամի

Սորչիլս	150000.
Ի կապալէ 'ի վ՟ր արծաթոյ	700000.
Ի կապալէ 'ի վ՟ր ոսկւոյ	60000.
Ի սակէ 'ի վ՟ր թղթոց	70000.
Ի սակէ 'ի վ՟ր փուլքուէ ըմպելւոյ 'ի կիր արկելոյ 'ի Հնդկաց	161000.
Ի սակէ 'ի վ՟ր տպեալ թղթոյ	41000.
Ի սակէ 'ի վ՟ր սառին	15522.
Ի սակէ 'ի վ՟ր խաղախոյ	2500.
Ի սակէ 'ի վ՟ր փոշւոյ հրետի	71550.
Ի սակէ 'ի վ՟ր աղի	32000.
Ի սակէ 'ի վ՟ր պղնձոյ Ս՝էքհօաքանու	1000.
Ի սակէ 'ի վ՟ր պաղւեղոյ	6500.
Ի սակէ 'ի վ՟ր խաղու աքաղաղից	21000.
Ի կիսոյ եկեղեցական տարեկան մտից	49000.
Յարքունի ընծերորդէ Եպիսկոպոսութեանց և այլն:	68800.
Ի հարկաց Հնդկաց	650000.
Ի յաւքավալէ կամ 'ի տրոց 'ի վ՟ր վաճառման կայուն իրաց	721875.
Ի մաքսէ	373333.
Ի գործատանէ դրամոյ	357500.
	3552580.

Այս գումար ամբառնայ 9819161 լիրէ սթէռլին. և եթէ յաւելցուք յայն զշահն, որ բղխէ 'ի վաճառմանէ 5000 քուինթալաց ժիպակի հանելոյ 'ի հանքացն Ալմատենու 'ի Սպանիա 'ի համար թագաւորին, և զայն, որ յառաջգայ յաւելւէ և յայլ տակից ումանց, զորոց Ս իլլասէկնոր ոչ առնէ յիշատակ, կարեն քաջ արժեցուցանել աւելի քան զմիլիոն մի լիրէ սթէռլինաց. Ըստ նմին Ս իլլասէկ ռէկնորայ տարեկան բերք Մեքսիքեան հանքաց ամբառնայ առ գումար 8000000 մարչիլոց յարծաթի և 95912 մարքս ոսկւոյ. Զանազան ճիւղք արքունի հասից յիշատակեալ եղեն յինէն յընթացս վիպասանութեան. սակայն նաև այլք ոմանք պահանջեն զհամար ինչ. Իրաւունք տասանորդաց 'ի Նոր աշխարհին պատկանի առ Թագաւորն Սպանիոյ կոնդակաւն Աղեքսանդրոսի վեցերորդի. Այամեցաւ Կառոլոս հինգերորդ, զի մերձեցուսցէն հետևեալ եղանակաւս. Չորրորդ մի սահմանեալ է առ Եպիսկոպոսն Թեմին, այլ քառորդ մի առ Դեկանն, առ ժողովն, և առ այլ պաշտօնատարս աթոռական եկեղեցւոյն. Այսն, որ մնայ, բաժանեալ է յինն հաւասար մասունս. Երկուքն յայսց ընդ անուամբ՝ արքունի իններորդաց վճարին Թագաւորին. և կերպաւորեն զգլուխ ինչ արքունի հասից. Այլ եօթն մասունքն, նշանակեալ են առ պահպանութիւն վիճակի ժողովրդապետութեն, շինուածոյն, և եկեղեցեաց, և յայլ բարեպաշտ պէտս:

Ալքապալը է կապալ ինչ, որ թափի 'ի սակէ 'ի վ՟ի վաճառման կայուն իրաց. 'Ի Սպանիա է տասն առ հարիւր. յԱմերիկա չորք առ հարիւր:

Մաքսն վճարեալ յԱմերիկա 'ի վ՟ի տարաղուցն բերելոց 'ի ներքս և տարելոց 'ի դուրս է հնգետասան առ հարիւր:

Աւերիոյն, կամ սակն վճարեալ 'ի համար նաւախմբին վ՟ն պահպանելոյ զնաւսն, որք առագաստեն յԱմերիկա, կամ վերադառնան անտի, եդեալ եղև յառաջնում նուագի, յորժամ ասպետն Ֆրանչիսկոս Դրաքէ ելից զնոր աշխարհն սարսափմամբ շահատակութեն իւրով առ հարաւային ծովն. Այս է երկու առ հարիւր 'ի վ՟ի արժողութեան վաճառացն:

Ոչ կարողացայ նախահոգալ ինձ զինամոտ ինչ պատմութիւն զանազան գլխոց հասիցն 'ի Փէրու զկնի 1614, ին. Յըղձակերտ ձեռագրէ միջէ պարունակողէ զկացութի̃ իմ̃ այնր փոխարքայութեան յամ բաշխս իւր՝ ներկայացուցելոյ առ մարզպանն Մոնթեսքլարոսայ 'ի Ֆրանչիսկոսէ Լօփեցայ Կարավանթեայ ընդհանուր համարակալ է յատենին Լիմայի երևի, թէ հրապարական մուտն, որչափ կարողեմ ես համարել զարժողութի̃ դրամոյն, յորոյ վ̃ր Կարավանթէս հաստատէ զպտտմուն̃ իւր, ամբառնայր առ տուքաթս (հաշուելով զմինն, 48, 11, դենար) - 2372768.

Ծախք կառավարութ̃ն - - - -	1242992.
Ազատ մաքուր մուտք - - - - -	1129776.
Բոլորականն 'ի դրամս սթէռլինաց լիրէից - - - - - - - -	583303.
Ծախք կառավարութ̃ն - - - -	305568.
Ազատ մաքուր մուտքն լիրէ սթ. -	277755.

Սակայն երևի, թէ յայսմ հաշուի ընկալեալ իցեն զանազան յօդուածք. ոչ լինէր տուրքն թըղթոյն կնքեցելոյ, խաղախոյ, և եկեղեցական տարեկան մտից, և այլն, այնպէս զի հասոյթն փէրուայ կարէ ենթադրել հաւասար հասութին Մեքսիքօի:

Ի հաշուելն զծախս կառավարութ̃ն 'ի Նորն Սպանիա կարեմ առնուլ զծախսն փէրուայ իբր 'ի կանոն. Ծախք մատակարարութ̃ե 'ի վերջնում յայսմիկ առաւելուն քան զկէս հասութին. և ես ոչ հաւատամ զոյն վայրագոյն 'ի Նորն Սպանիա:

Յաջողեցաւ ինձ ունել զհաշիւ մի բոլորականին հրապարական հասութին Սպանիոյ և Փիլիպպեայցն, որ՝ որպէս տեսցէ ընթերցողն յերկուց հուսկ յետին յօդուածոց, է նորագոյն քան զայլ զինչևիցէ նախնագունից:

Աքավալաս (սակ 'ի վ̃ր անուշահամ գինեաց) և այլ բաժք արքունիք: ‖

(Անքս

(Մնրս եւն.) մարչիլս - - - - - -	2500000.
Կապալք 'ի վ̃ր ոսկւոյ և արծաթոյ -	3000000.
'Ի խաչակրէն - - - - - - - - - - - -	1000000.
Հարկ Հնդկաց - - - - - - - - - - -	2000000.
'Ի վաճառմանէ ժիպակի - - - - - -	300000.
Թուղթ տարեալ 'ի դուրս 'ի համար թագաւորին և վաճառեալ յարքունի նկուղս - - - - - - - -	300000.
Թուղթ տպի՛, գեղունչ և այլ փոքրիկ կապալք - - - - - - - - -	1000000.
Կապալ 'ի վ̃ր դրամատպոյ սահմանեալ ռէալ մի փլաթայի վասն ա̃մ տպոյ - - - - - - - - - - -	300000.
'Ի վաճառականութէ Աքափուլքոյ և 'ի վաճառականութէ 'ի վ̃ր ծովեզերն գաւառէ 'ի գաւառ -	500000.
Ընկերական վաճառականութի Խափշկաց - - - - - - - - - - - - -	200000.
'Ի շահավաճառութէ Անթէի, կամ խաղոյ փարակուայեայ յառաջ փերեզակեցելոյ 'ի Չինեանց - -	500000.
Յայլոց հասից պատկանելոց առ այն կարգ - - - - - - - - - - - -	400000.
Բոլորականն - -	12000000.
Բոլորականն 'ի դրամս սթէռլինաց լիրէից - - - - - - - - - - - -	2700000.
Հանեալ զկէսն իբր ծախս մատակարարութեան մնայ մուտ ազատ մաքուր լիրէից սթէռլինաց - -	1350000.

Փէրու հաւանական է, թէ վերառաքէ զգումար մի ոչ վայրագոյն այսմ. և ենթադրելով, թէ այլ ա̃մ գաւառք Ամերիկոյ ներփակելով և ըղկղզիսն՝ մատակարարեսցեն զերրորդ մասն մի հա-

սաւասար արժողութն, ոչ լինիցիմք թերևս կարի հեռի 'ի ճշմարտութենէն յասելն, թէ հասոյթն, զոր թափէ Սպանիա յԱմերիկոյ, ոչ առաւելու քան զմի միլիոն և կէս լիրէ սթէռլինաց. Այս գումար բազմօք տարակաց է յանբաւէ յայնմանէ, առ որ հեղինակք ոմանք ամբառնան վարկածիւ զհասոյթն, զոր թագաւորութիւն այն քարշէ յԱմերիկոյ:

(55) Հեղինակ ոմն քաջավարժ 'ի տուրևառութն արար զհաշիւ, զի 'ի հանքաց Նորոյն Սպանիոյ միայն թագաւորն ամ ըստ ամէ ընդունի վն հինգերորդի իւրոյ զգումար 2000000 դրամոյ մերոյ. Ըստ այսմ հաշուի բոլորական բերքն հանքաց պարտի լինել տասն միլիոն լիրէ սթէռլինաց՝ գումար տարապայման, որև այնպէս սակաւ համաձայնի տարեկան մուտիցն Ամերիկոյ, մինչզի դոյ տեղի հաւատալոյ, թէ հեղինակն ոչ բարւոք իցէ տեղեկացեալ. Ըստ Կամփոմանեայ բոլորական յառաջ եկեալն յԱմերիկեան հանքաց կարէ հաշուիլ յերեսուն միլիոնս մարշիլաց. որ չորս շիլին և վեց սոլտի համարելով վն իւրաքանչիւրոյն համբառնայ առ 7425000 լիրէ սթէռլինս. որոյ արքունի հինգերորդն եթէ էր կանոնաւորաբար վճարեալ, համբառնայր առ միլիոն մի չորեքհարիւր ութսունևհինգ հազար լիրէ սթէռլինս. Այլ յայսմ գումարոյ պարտէ 'ի բաց հանել զծախս մատակարարութեն. որ է յոյժ երևելի. որպէս երևի 'ի Նախընթաց ծանուցմանէ:

Սակայն գումարն այն նշանաւոր է իմիք պատճառաւ. Սպանիա և Փօրթօկալիա են միայն իշխանութիք Եւրոպականք, որք հանեն զմուտ ինչ ուղղակի 'ի հարգունութեց իւրեանց իբր մասնաւոր իրաւունս իւրեանց առ'ի լնուլ զընդհանուր ծախսն կառավարութն. Բովանդակ շահն, որ զեղանի առ այլ ազգս յԱմերիկեան տէրութեց իւրեանց, ծնանի յարտաքսողական վայելմանէ տուրևառութեն իւրեանց. Այլ բաց յայսմանէ Սպանիա ներածեալ է զհարգունութիւս իւր 'ի հանդանակել յաճումն կարողութեն ակաստանին. և 'ի փոխարէն պաշտպանութեն, զոր շնորհէ նց, պարաւանդեալ է զնս տանել զհաւասարեն ինչ բաժին հասարակաց ծանրութեն:

Ապա այն, զոր հաշուեցի ես իբր բերք Սպանիական հասիցն Ամերիկոյ, բովանդակէ միայն զսակս հաւաքեալս անդէն. և է յոյժ հեռի 'ի բոլորականէն, որ անցանէ առ արքայն 'ի տէրութենց իւրեանց 'ի Նոր աշխարհին. Ծանր կապալք եդեալք 'ի վր տարազուց տարբերոց 'ի Սպանիոյ յԱմերիկա, որպէս և այն, որ վճարի վս այնոցիկ, զորս սա առաքէ անդր փոխանակ, և սակն 'ի վր խափշիկ գերեացն Ափրիկոյ 'ի մասին ընդ այլոց փոքրագոյն յօդուածոց մտիցն բերեն զմեծամեծ գումարս առ գանձարանն արքունի. զորոց որոշակի բերսն ոչ ձկտիմ սահմանել:

(56) ‖ Ըստ Բեռնարդոսի Ուլլոայ ամ տարազք օտարոտիք փոխաբերեալք 'ի Սպանիոյ յԱմերիկա վճարեն զկապալս պէսպէս ցեղս, որք ամբառնին համօրէն յաւելի քան զ25 առ հարիւր. Իսկ քանզի մեծագոյն մասն տարազուցն, որովք Սպանիա դարմանէ զհարգունութիւս իւր, են օտարոտիք, այսպիսի իմն սակ 'ի վր այնպէս տարածել տուրևառութեն իրիք պարտի կերպաւորել զերևելի իմն հասոյթ. Սա պնդէ, թէ արժողութի վաճառացն փոխաբերելոց ամի ամի 'ի Սպանիոյ յԱմերիկա համբառնայցի յաւելի քան զերկուս միլիոնս և կէս, լիրէ սթէռլինաց: ‖

Ծախք մատակարարութեն:

Այլ եթէ հասոյթն, զոր Սպանիա քարշէ յԱմերիկոյ, է մեծ, ծախք մատակարարութեն հարգունութենց իւրոց կարէ ասիլ չափակցեալ. Յամ բաշխի՝ ես և առտնին կառավարութեն և արքունի մտիցն Սպանիա ողջագուրեալ է զառաւել իմն բա-

բաղադրեալ ոճ և առաւել պատաղեալ ատենօք հօրագմութիւն պաշտօնատարաց քան զայլ զինչևիցէ ազգ Եւրոպական ենթարկեալ առաւել տիրական ինքնակալի. Նախանձաւոր հոգին, որով նա հսկէ 'ի վ՟ր կայունաւորութեանցն իւրոց Ամերիկոյ, և փոյթն զգուշանալոյ 'ի նենգութենէ 'ի գաւառսն այնպէս տարակացս 'ի դիտողութենէ իւրմէ՝ ներածին զնա 'ի բազմացուցանել անդէն զաւտեանս և զգործակալս. Այս այն զի պարէնք են թանգագոյնք եւս յԱմերիկա՝ աստուստ պարաւանդեալ է 'ի տալ նոցա զերևելի թոշակս, որք ծանրացուցանեն միշտ առաւել զհրապարական գանձարանն. Այլ ոչ իսկ նուազ բազմածախ է կառավարութիւն. փոխարքայն Մեքսիքոյ, Փէրուայ և Նոր Թագաւորութեանն Կրանաթայ իբր ներկայացուցիչք զանձն թագաւորին 'ի մէջ պանծասէր ժողովրդոց կեան արքայօրէն. Արքունիք նոցա կերպաւորեալ են 'ի վ՟ր գաղափարի արքունեացն Մատրիտու հանդերձ պահապանօք ձիաւորօք և հետևակօք, մեծագործ իմն բնակութիւն, բազմութիւն ընտանեաց և այնպիսի իմն շուք, որ հազիւ թողու ճանաչել զաւագութիւն իմն ստորակարգեալ. Բովանդակ ծախք կառավարութեան յեցուցեալ է 'ի վ՟ր թագաւորին, փոխարքայք ունին աւելի թոշակս համեմատ վերամբարձութեան դրից իւրեանց. Թէպէտ հաստատեալքն յօրինաց զճշմարիտն ասելով են յոյժ չափաւորեալք. Ռոճիկն փոխարքային Փէրուայ է միայն երեսուն հազար տուքաթ. Ռոճիկն փոխարքայի Մեքսիքոյ քսան հազար. 'Ի վերջոյ աճեցուցեալ են մինչև ցքառասուն հազարս:

Այլ որոշմունքս այսոքիկ ոչ բաղկացուցանեն, բայց եթէ զփոքրիկ մասն ինչ մտից իւրեանց. Մարուած բացարձակ իրիք իշխանութեան, որ տարածանի առ ամ՟ բաշխ կառավարութեան, և կարողութիւն տ՟ ամագրելոյ զբաղմանց շահաւէտ պաշտօտօնից առաջի առնենն նց̃ զանհամար առիթս կուտելոյ զխարթամաւթիս. Նա այսոսիկ, որք կուրեն նկատել իրր օրինական և հաւանեալ շահք, յաւելեալ լինին քաջ ստէպ երևելի գումարք ճանապարհաւ հարկապահանջութեց. որոց յաշխարհս հեռաւորս յաթոռոյ կառավարութեն անկարելի է յերևան գալ կամ խափանել. Սեպհականելով ինքեան զգլուխս ինչ շահավաճառութեն, և կցորդելով յայլսն, և ակնակալութի առ խարդախութիս վաճառականաց կարող է փոխարքայ մի նախահոգալ ինքեան զտարեկան ինչ հասոյթ, յոր ոչ վայելէ հպատակ ոք որոյ և իցէ միապետն Եւրոպացւոյ:

(57) ‖ Մարզպանն Սերրալվայ՝ ըստ այնմ, զոր ասէ Կաճէ, մենավաճառութիւն աղի և տուրևառութիւն Մանիլայի և Սպանիոյ շահէր ամի ամի զմիլիոն մի տուքաթից. Սա առաքեաց երբեմն զմիլիոն մի տուքաթս ’ի Սպանիա առ’ի գնել ’ի կոմսէն Օլիվարեայ և ’ի սանից իւրոց զյերկարաձգութի կառավարութեն իւրոյ. Յաջողեցաւ երջանկաբար ’ի խնդրուածս իւր. և շարունակեաց յայնմ պաշտօնի ’ի 1624 էն մինչև ց1635 ընդ կրկինն պայմանեալ ժամանակին: ‖

’Ի պարզ յօդուածոյ ընծայից, որք տրարեալ են նմա ’ի տարեդարձական աւուր անուան իւրոյ (որ միշտ հանդիսացուցեալ է տօնիւ) ասացաւ ինձ, թէ փոխարքայ մի ընկալեալ էր զվաթսուն հազար մարշիլս. Ըստ Սպանիական առակի միում օրինաւոր հասք փոխարքայի միոյ ծանուցեալ են. բայց դիպուածականքն կախին յառթից և’ի գիտակցութէ իւրմէ. Տեղեկացեալք այսմ ամի թագաւորք Սպանիոյ՝ շնորհեն փոխարքայից զյանձնարարութիւն իւրեանց միայն վն սակաւ ամաց. Բայց այս պարակայ յաճախակի առնէ զնն առաւել յափշտակօղս, և փութացուցանէ ձգել զշահ յաւագութէ միջէ, զոր գիտեն, թէ ոչ պար-

տին

տին ընդ երկար վայելել. Բայց որպէս և սուղ իցէ տևողութ՟ի իւրեանց, բաւական է ն՟չ հասարակաբար առ՚ի բարեգունացուցանել զբաղդ իւրեանց և յաճեցուցանել զայն, յոր վայելեն. Հանդերձ այսուիկ ՚ի կայսերութ՟ն միում այնպէս ժառանգաւորի վ՟ն մարդկային բնականութ՟ն տեսան մարդիկ, որք պահեցին անվկանդ զառաքինութ՟ի իւրեանց. Մարզպանն Խաչի ել յամին 1773 ՚ի Նորոյն Սպանիոյ նովին անարատութ՟բ, որով մտեալ էր անդր. և դարձաւ անտի զարմացմամբ և գովութ՟բ ժողովրդեան միոյ, առ որոյ երջանկութ՟ի հանգանակեալ էր նա ինքն. և այն եբեր նմա անսահմանաբար առաւել պատիւ քան զհարստութիւն, զոր կարողացեալ էր նա ստանալ ՚ի ժ՟մկի փոխարքայութ՟ն իւրոյ.

ԱՒԱՐՏ։



ՀԱՄԱՌՕՏ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԽՐԹԻՆ ԲԱՌԻՑ և անուանց հանդիպելոց յայսոսիկ յերկոսին հատորս Ամերիկեան պատմութեան, ըստ ձայն տառից ԱԲ Հայկական բառարանին նշելոյն, այլև գտանելոյն 'ի նմա՝ առ'ի դիւրութիւն բաւելոյ. որք չեն կարող 'ի ձեռս բերել զայն բառարան մեր Բառգրքին:

Ա Ա

Աբանոս. ‖ ծառ լինի Հնդկաստանի և Ափրիկէի. որ ունի զփայտ սերտ և ծանր և ըստ մեծի մասին սեաւ գունով. զոր աշխարհօրէն կոչեմք՝ Աբանոզ:

Ագուգայ. ‖ փողրանկ. փողրակ. ճանապարհ (ջրոյ:)

Ադէն. ‖ փարթամ և երևելի քաղաք երջանկին Արաբիոյ, որ է Եմէն, առ բերանով կարմիր ծովուն, կմ մերձ 'ի Բաբէլ մանտէլ:

Ազատադէմ. ‖ երեսը բաց. համարձակ. սէրպէստ:

Ազատական. ‖ առատաձեռն. ճէօմէրտ:

Ազատաւոր. ‖ ծառայ ազատ արարեալ 'ի գերութենէ. ազատլամա:

Ազգային. ‖ 'ի նոյն ազգէ. կմ բնակ (երկրին:)

Ազգականութի. ‖ ազգողութիւն.

թիւն. կորուկութի՟. քէսքինութի՟:

Ազնաւոր. ‖ ազնիւ. մեծ ազգէ. քիշիզատէ ‡ մերթ՝ քաղաքավար. քաղցրաբարոյ:

Ազնաւորութի՟. ‖ ազնուութի՟. մերթ՝ քաղաքավարութի՟, մարդասիրութի՟. քաղցրաբարոյութի՟:

Աթաքամա.)
Աթաքամաս.) Նաւահանգիստ ինչ հարաւային Ամերիկայ 'ի մէջ Փերուայ՝ մօտ յարեւադարձն այծեղջեր. Ա. Եւ անդ. անապատ մի մեծ յայս յանուն և շղթայ մի լերանց, որք զատուցանեն զՓերու 'ի Չիլեայ:

Աթլանտեան ովկիանոս. ‖ այսպէս անուանի ովկիանոսն, որ 'ի մէջ Ափրիկոյ և Ամերիկոյ 'ի համանուն բարձրաբերձ լերանցն Ափրիկոյ. որոց հանդէպ անկանի այն ծով մեծ:

Աժխոյժ. ‖ յանկարծական ուժգնութի՟ միոյ, կամ յանկարծ և սաստիկ վառումն ոգւոյ 'ի ճառել կմ 'ի գործել իրս ինչ. ռամկօրէն. Աչխ:

Ալկուածիլ. ‖ 'ի լեզու Սպանիական սպասաւոր արդարութե՟ն:

Ալփեր կամ Ալպեր. ‖ բարձր լերինք Եւրոպիոյ. որք բաժանեն զԻտալիա 'ի Ֆրանսիոյ և յԱլէմանիոյ. Սկսանին 'ի կողմանէ Ֆրանսիոյ յեզրէ միջերկրական ծովուն մօտ 'ի Մօնաքիոն ընդ մէջ տէրութեն Ճենովայի և կոմսութեն Նիցցայի. և աւարտին առ խորշն Քառնէրօի. որ է մասն ինչ խորշին Վենետկոյ:

Ալփոնսոս կմ Ալֆօնսոս հինգերորդ. ‖ թագաւոր Փորթուկալլիոյ մականուանեալ Ափրիկեան՝ վս՟ առնլոյ ըզզանազան քաղաքս Ափրիկոյ յամին 1471:

Ալքալտէ կմ Ալքալտ. ‖ բառ Սպանիացւոց, որ 'ի մեզ թարգմանի՝ դատաւոր կմ գործակալ:

Ալքանթարա. ‖ փոքրիկ բայց հզօր քղք Սպանիոյ յԷսթրէմատուրա գաւառին՝ նախկնական տեղի համանուն ասպետաց:

Ալքօնքուինս. ‖ ազգ ինչ հիւսիսային Ամերիկոյ 'ի Քանատա գաւառին՝ վայրագ և թափառական ընդ մէջ գետոյն Օնթաովաքայ և լճին Օնթարիու:

Ախոյան կմ Ախոյեան. ‖ ընդդիմակաց. դիմամարտ. դէմ կեցող. դէմ ելնող:

Ածծօրէք կամ Ածօրէք. ‖ կղզիք Ամերիկոյ իբր 200. փարսախ տարակայք ընդ արեւմուտս ՚ի Լիզպօնայէ. եւ են թըւով ինն. որք գտեալ եղեն ՚ի Կօնծալուէ Վէլյոյ ՚ի կէսն 15. երդ հարիւրեկին, եւ ՚ի նմանէ կոչեցեալք Ածծօրէք, որ է Բազէք, վ̄ տեսանելոյ ՚ի նոսա զբազմութիւն այսց թռչնոց:

Ականահատ. ‖ լաղըմ փորող:

Ակաստան. ‖ մերթ՝ տէրութիւն. կամ երկիր որոշեալ ինչ օրինօք կարգաւորեալ. կարգք թագաւորութեան. զոր Հռոմայեցիք կոչեն Ստատուս կամ Ստատօ:

Ակադեմիա. ‖ ժողովարան ուսումնասիրաց. դպրատուն. վարժարան:

յԱկճիռս. առնել, կամ կացուցանել. ‖ յառել զմիտս առ իմն. ամենայնիւ ուշադիր առնել. բերանն ՚ի վեր հէրեան ընել:

Ակնածել. ‖ մեծարել. պատկառել:

Ակնածելի. ‖ մեծարելի. պատկառելի:

Ակնածու. ‖ ակնածող. մեծարող. պատկառանօք պատւող:

Ակնակափութիւն. ‖ անտես առնելն. աչք խփելը:

Ակումբ. ‖ խումբ. ժողով. ճիմճիւռ. մերթ՝ մինտէր. խալիչայ:

Ակօս. ‖ (այլաբանօրէն) առուակերպ պատառուած ծովու. զոր առնէ նաւն յընթացս իւր:

Աղամող. ‖ խեղաթիւր. մանուածոյ. ծուռմուռ:

Աղարտել. ‖ ընդ վայր հարկանել. պարսաւել. մերթ՝ աւերել. անշէն առնել. խարապ՝ վէրանէ ընել:

Աղարտումն. ‖ աւերումն. եղծումն:

Աղաւաղել. ‖ խանգարել. ապականել:

յԱղերս անկանիլ. ‖ աղերսել. աղաչել արտասուօք:

Աղեքսանդրիա. Իսքէնտէրիէ ‖ վաղեմի եւ հռչակաւոր պատրիարգանիստ քղք Եգիպտոսի առ բերանովն Նեղոսի յեզր միջերկրականն ծովուն՝ կանգնեալ յԱղեքսանդրէ մեծէ Մակեդոնացւոյ. յորմէ եւ անուանեցաւ:

Աղէտք. ‖ մեծ ցաւ. թշուառութիւն:

Աղխաղխեալ. ‖ շղթայեալ. յօդեալ. ագուցեալ ընդ միմեանս:

Աղխամախ. ‖ պէսպէս տեսակք վաճառաց:

Աղխաղէք. (զօրաց) ‖ տողէն զօրք. կարգաւ երկայնաձգեալ չու զօրաց:

Աղկաղկ. ‖ փոքրիկ. նուաղ. տկար:

Աղուամաղ. ‖ բարակ և փափուկ մաղ իբր զթիֆթիկ:

Աղտաղտին. ‖ աղի կամ դառն (ջուր:)

Աղօտ. ‖ մթին. խաւարչտին:

Ամազոնեաց գետ. ‖ է մեծ գետ Հարաւային Ամերիկայ. որ առնու զծագումն իւր 'ի Փերու 'ի լճի միում մօտ 'ի Կուանուքօ քաղաք, 30, փարսախ հեռի 'ի Լիմայէ. և յետ անցանելոյ իբր ընդ 1100 փարսախս գաւառաց անկանի յովկիանոսն ընդ հասարակածին:

Ամայի. ‖ անապատ. անշէն. չէօլ. վէրանէ:

Ամայանալ. ‖ անշէն՝ անբնակ լինել:

Ամփոփել. ‖ փակել. կնքել. աւարտել:

Ամփոփութի. ‖ աւարտ տրամաբանութեան. դատումն մակաբերեալ 'ի սկզբանց:

Ամեթական. ‖ սննդական և աճողական. որ յատկացուցեալ է տնկոյ:

Ամեթայութի՟ն. ‖ յատկապէս կեանք տնկոց. կամ սնունդ և աճումն նց:

Ամեհի. ‖ անզուսպ. սաստիկ. խաւուղ. զայրմ:

Ամեհութի. ‖ դաժանութի. կամ սաստկութի:

Ամոքական. ‖ մեղմացուցիչ. քաղցրացուցիչ. ողոքական.

Ամոքել. ‖ քաղցրացուցանել. զիջուցանել:

Ամուրի. ‖ ազապ. էրկէն.

Այլասեռիլ. ‖ փոխել զսեռն. կամ զցեղն. որպէս պատահի տնկոց և շնչաւորաց յորժամ փոխադրին յայլ կլիմայ:

Այդենածին. ‖ բուն. կամ բնակ տեղւոյ իւրք. տեղացի:

Այրեցած գօտի. ‖ է մի 'ի հինգ աշխարհագրական գօտեացն. յորս բաժանեն զգունտ երկրի. և է այն բոլորակ միջոցն պարունակեալ 'ի մէջ երկուց արեւադարձից. որ և բաժանեալ է 'ի հասարակածէն յերկուս հաւասար մասունս՝ մինն հարաւային և միւսն հիւսիսային. Կոչի այրեցած. վասն զի գոլով 'ի ներքոյ այնր մասին երկնից, ընդ որ անցանէ արեւն օրական շարժմամբ առնելով զընթացս իւր, 'ի շառաւիղաց նորա հարեալ է զառ 'ի թափ ուղղակի. և ընդունի զայնպիսի իմն մեծ տապ, մինչզի նախնիք համարէին, թէ իցէ անբնակ. Տես և Գօտի:

Անագ · || կլայեկ · խալայ :

Անագանիլ · || յամել · ուշանալ :

Անագորոյն · || անգորով · անողորմ :

Անանձնդիւր · || ոչ խնդրող զդիւրութիւն և զհանգիստ անձին իւրոյ · կամ զյատուկ օգուտն :

Անբաղկացու · || անհաստատ · անհիմն · որ ոչ կարէ հաստատիլ 'ի դատաստանի :

Անբաղկացութիւն · || անբաղազանութիւն · անմիաբանութի :

Անգլիա · || երեւելի թագաւորութի Եւրոպիոյ 'ի Բրիտաննիա մեծ կղզւոյն ովկիանոսի · երկիր Ինկլիզի · որոյ մայրաքաղաք է Լօնտրա :

Անգլիացի · || Նա՝ որ է յԱնգլիոյ · Ինկլիզ :

Անգղ · || գիշակեր թռչուն ինչ · ախպապա :

Անգոսնել · || քամահել · արհամարհել :

Անդեայ · || Նախիր · պախրէ · եզներու սիւրու :

Անդրի · || արձան կմ պատկեր :

Անզուգական · || անհաւասար · աննման · եզական :

Անընդգձելի · || անթեքելի · անխոնարհելի · անճկելի :

Անըստնանելի · || աննուաճելի · անյաղթելի :

Անթիլեք · || կղզիք Ամերիկոյ զետեղեալք 'ի կերպ աղեղան 'ի մէջ հարաւային Ամերիկոյ և կղզւոյն փորթօռիքքօյի առ գիծերահաւասար գծին, գտեալք 'ի Քօլոմպոսէ յամին 1492 · Գլխաւորքն են թըւով 28 · Բաժանին 'ի մեծամեծս և 'ի փոքունս · մեծամեծքն են Սան Տօմէնիկօ, Քուպա, Ճամայիքա · փորթօռիքքօ :

Անթանոցիկ (զինուորաց ·) || փալասխա · որ է մեծ ճըրգտան զինուորաց · զոր արկանեն յուս ընդ անութ :

Անժպիտ · || որոյ յերեսս ոչ երեւի ժպտումն ինչ կմ զուարթութիւն · խոժոռադէմ · կարի ծանրաբարոյ :

Անկախութիւն · || անկախ լինելն յայլմէ վերնագունէ · ինքնագլխութիւն :

Անկած · || նուաստ · անարգ :

Անկանել · || ստայնել · ստայնանկել · գործել (ըղկտաւ :)

Անկանուտ · || որ մերձ է յանկումն կամ 'ի կործանումն :

Անկուած · || գործուած · հիւսուած · կազմուած :

Անկոպար · || անսահման · անեզր · սինոռ չունող :

Անհեթեթ · || անյարմար · ոչ չափակցեալ · կոպիտ :

Անհրաժեշտ · || անհրաժարելի · անխորշելի :

Անձաւ. ‖ քարայր. խոռոչ. փապար:

Անձուկ. ‖ սաստիկ փափագ. մերթ՝ նեղ:

Անձկանալ. ‖ յոյժ փափագել. սաստիկ բաղձալ:

Անձկանք. ‖ մեծ փափագ:

Անձնօրէնութիւն. ‖ անձնական օրէնք. ազատութիւն ’ի հասարակաց օրինաց:

Անճոռնի. ‖ կարի մեծ. չափազանց. հանդալ:

Անմիաբանական. ‖ որ ’ի միաւորին ընդ այլում ոչ կարէ լինել. որպ՟ հակադրելիքն. զորօրինակ սպիտակութիւն և սևութիւն. փոքրկութիւն և մեծութիւն և այլն:

Անյարիր. ‖ ոչ յարօղ. անմիաբան. տարաձայն:

Անյարիրութիւն. ‖ ոչ յարօղութիւն. անմիաբանութիւն. անհամաձայնութիւն:

Անյողդողդ. ‖ անփոփոխ. հաստատուն. կայուն:

Աննոն. ‖ էր սպարապետ Կարթագինեցւոց. որում հրամայեցաւ ’ի հասարակապետութենէն առնել պըտոյտ զԱփրիկէիւ. Եմուտ յովկիանոս ընդ նեղուցն Սեպտէի. յայտնեաց ըզպէսպէս գաւառս. և յառաջ տարեալ էր արդեօք զնաւարկութիւն իւր, եթէ ոչ էին ’նմ՟ պակասեալ կերակուրք:

Անշուշտ. ‖ անսուտ. ճշմարիտ. հաւաստի. ստոյգ:

Անողոքելի. ‖ անզիջանելի. աղաչանաց չզիջանող:

Անպարտելի. ‖ անյաղթելի.

Անջատել. ‖ զատուցանել. բաժանել:

Անջրպետ. ‖ միջոց. միջանկեալ ժմկ՟ կմ՟ տեղի. մերթ՝ զատուցեալ մասն տան:

Անվթար. ‖ անթերի. անպակաս. անսխալ:

Անվեհեր. ‖ աներկիւղ. համարձակ. վեհանձն:

Անվկանդ. ‖ անվտանգ. անվնաս:

Անտալուզիա. կամ Անտալուսիա. ‖ մեծ գաւառ Սպանիոյ. որոյ մայրաքաղաքն է Սիվիլիա:

Անտարբեր. ‖ մերթ՝ անփոյթ:

Անտեայք կմ՟ Անտէք. (զորս ոմք կոչեն Քօրտիլլէրա) ‖ է մեծ շղթայ բարձրաբերձ լերանց ’ի մէջ հարաւային Ամերիկոյ. որ տարածանի ’ի հիւսիսոյ ’ի հարաւ ’ի փէրու և ’ի Քհիլի մինչև ցնեղուցն Մաճէլլանեան:

Անտնօրինելաբար. ‖ առանց կարելոյ տնօրինել, կամ զերծ լինել. հարկաւորապէս:

Անփոյթ. ‖ ապահով. աներկեան:

Աշխարհագրութ̃ի. ‖ ստորագրութ̃ի բովանդակ մասանց աշխարհի, բաժանելով զայն յերկնային և 'ի տարրական պարունակս կամ բոլորակս. Երբեմն առեալ լինի միայն փոխանակ երկրագրութ̃ե, և փոխանակ նոյն իսկ գծագրութ̃ե կմ̃ նկարագրութ̃ե մակերևութի երկրի:

Աշխոյժ. ‖ տե՛ս Աժխոյժ:

Աշտէ. ‖ տէգ. նիզակ. մըզրախ. խըշտ:

Աչալրջութ̃ի. ‖ աչքաբացութ̃ի. զգաստութ̃ի:

Ապաստիճանիլ. ‖ անկանիլ յաստիճանէ իմիքէ. կամ նուաստանալ:

Ապաստիճանութ̃ի. ‖ անկումն յաստիճանէ կարգին կամ տեսակին իւրոյ:

Ապահարկութ̃ի. ‖ զերծ լինելն 'ի հարկէ իմիքէ. ազատութ̃ի. խարաճէ կամ վէրկիէ ազատ ըլլալը:

Ապարասան. ‖ աներասան. անսանձ. իւլարսըզ. կամ զափթսըզ. աներես:

Ապարանջան. ‖ ապրջան. պլէզիկ:

Ապաւէն. ‖ պատսպարան. սիփէր. սըղընմիշ ըլլալու տեղ:

Ապիկել. ‖ սըռչայ տալ. սըռչալամիշ անել:

Ապիկի. ւոյ. եաւ. ‖ բաղադրութ̃ի ինչ 'ի խիժոց և 'ի ձիւթոց և յայլ նիւթոց ինչ առ 'ի տալ անօթոց զփայլողութ̃ի և զսերտութ̃ի. կմ̃ յայլ ինչ պէտս. ռամկ. սըռ կամ սըռչայ:

Ապրանք. ‖ ապրուստ. ապրիլը:

Առագաստ. ‖ կտաւ նաւին, որ տարածեալ և կապեալ ընդ կայմն ընդունի զհողմն և վարէ զնաւն. ելքէն:

Առած. ‖ ասացուած վկայեալ յամենեցունց. բան առ հասարակ ընկալեալ. վճիռ հասարակաց:

Առանձնականութ̃ի. ‖ առանձնական զօրութ̃ի. այս է, զօրութ̃ի առ ինքն ձգելոյ, կամ վերստին դառնալոյ 'ի կայս իւր, յորժամ բռնի թեքեալ կմ̃ զսպեալ է իր ինչ ընդդէմ բնական որակութ̃ե իւրոյ, զօրինակ՝ յորժամ զաղեղն կմ̃ զայլ թիւր ձող բռնութ̃բ ուղղես, և 'ի բաց թողուլն անդրէն դառնայ 'ի ծռութ̃ի իւր. այնպիսին ասի ունել զառանձնական զօրութիւն. այսպիսի է և զօրութիւն զսպանակին. ռ̃մ՝ զէմպէրէկլին:

Առանձնութ̃ի. ‖ յինքն ձգումն առանձնական զօրութ̃ե. տե՛ս զվերոյ գրեալն:

Առ

Առապար. ‖ խորտուբորտ. դարուփոս:

Առաջարկորդ. ‖ գտանող և առաջարկող զհանգամանս կմ՟ զհնարս հասանելոյ առ վախճան ինչ:

Առաջարկութի՟. ‖ առաջարկել բան կամ խորհուրդ. կմ՟ հանգամանք առ վախճան ինչ:

Առասան. ‖ չուան. սինձիմ:

Առարկայ. ‖ այն ինչ. յոր սեւեռի միտքն կամ աչքն. նպատակ. վախճան:

Առարկուն. ‖ ցուցումն փաստի՛ք. կմ՟ մակաբերութ՟ք:

Առետեղ. ‖ ՚ի նմին տեղւոջ. անդէն. հոն տեղը:

Առ երի. ‖ առ ընթեր. ՚ի կողմանէ. քովը. քովու դին:

Առ հեծուկս. ‖ տես. Հեծուկ:

Առհաւատչեայ. ‖ փոքրիկ մասն բարձեալ ՚ի բոլորէն առ՚ի տալ զփորձ կամ ըղցոյց նր՟. ռամկ. չէշնի:

Առձեռն. ‖ ներկայ. արագ. պատրաստ. փէշին:

Առնչութի՟. ‖ վերաբերութի՟ երկուց կամ բազմաց իրաց առ միմեանս. ո՟պ գործոյն առ պատճառն, հանգամանաց առ վախճանն կամ որդւոյ առ հայր, ծառայի առ տէրն. և անդրադարձեալ:

Առոյգացումն. ‖ մերթ՟ սնումն. և աճումն բուսոց:

Առոյգութի՟. ‖ փոխանակ առոյգացման:

Ասիա. ‖ մի ՚ի չորից մեծամեծ մասանց երկրի, բաժանեալ յԵւրոպիոյ միջնորդութ՟ միջերկրական ծովուն, Արքիպեղագոսին, Սեաւ ծովուն, Մէօտիս ծովակին, Դօն և Դվինա գետոցն, որք անկանին ՚ի սպիտակ ծովն առ Արքանգել քաղաքաւն, և յԱփրիկոյ միջնորդութ՟ կարմիր ծովուն և ցամաքալեզուին Սուէզայ. Մնացեալն բովանդակ պատեալ է յովկիանոսէ. Գլխաւոր մասունք Ասիոյ են Արաբիա, Տաճկաստան, Պարսկաստան, Հնդկաստան, Թաթարստան, Ասիական Մոսկովաստան, Չին, Ճափոն, Թագաւորութի՟քն Ավայի և Սիամու. Կղզին Չէյլան. Կղզին Սունտա և այլն:

Ասուի. ‖ բրդեղէն:

Ասպատակել. ‖ յանկարծ ՚ի վր՟ յարձակմամբ աւարել. գերիել. չէթէճութի՟ անել:

Ասպարէզ. ‖ ընդարձակ տեղի կամ մեծ հրապարակ. յորում արշաւեն երիվա–

րօք առ 'ի խաղս կամ 'ի մարտ. ռամկ. աթ մէյտանը. մերթ՝ չափ ինչ գետնոյ, որ է ութներորդ մասն միոյ մղոնի:

Ասպետ. || ազատ արքունի, (զի գրեալ յարքունուստ.) սեպուհ. ազնուական. Քաւալիէր:

Ասպնջական. || ընդունօղ. հիւրընկալ. ներս առօղ. խապուլ ընօղ:

Ասպնջականութիւն. || ընդունելութիւն. հիւրընկալութիւն:

Աստանդել. || աստ անդ երթալ. թափառիլ:

Ասեցութիւն. թելադրութիւն. ստէպ ասելն կամ տուն տալն 'ի գրել:

Աստիճան. || ըստ աստեղաբաշխից է երեք հարիւր վաթսներորդ մասն շրջանակի գնտոյն. որոց իւրաքանչիւրն է վաթսուն մըղոն Իտալական. Իսկ բաժանի յերկայնութեան և 'ի լայնութեան աստիճանս. երկայնութեան աստիճանքն ձգին յարևմտից յարևելս սկսեալ յառաջին միջօրականէն. և լայնութեան աստիճանքն ձգին 'ի հասարակածէն 'ի բևեռս կոյս:

Աստղաբաշխութիւն. || գիտութիւն, որ ճառէ զընթացից և զկայութէ աստեղաց:

Ատաղձ. || նիւթ. քէրէստէ:

Ատիսոն. || մի յերևելի մատենագրաց Անգղիացւոց:

Ատելանդատ. || բառ. փորթուկէզաց. որ թարգմանի՝ փոխանակ բդեշխի. կմ՝ գաւառապետ:

Ատիկել. || կարօղանալ. մարթիլ:

Ատոքանալ. || լնանիլ պարարտութ՟ կամ բարեօք:

Ատրաշիկանալ. || շիկանալ կմ՝ կարմրիլ իբրև զհուր. հրանալ. կրակ կտրիլ:

Արաբիա. || մի յերևելագոյն մասանց Ասիոյ. և է ցամաքակղզի ինչ սահմանեալ յարևմտից կարմիր ծովուն, ցամաքապարանոցաւն Սուէզայ, առ երկրաւն և Սուրիա, 'ի հիւսիսոյ՝ Եփրատաւ և Պարսկային ծոցիւն, յարևելից՝ ովկիանոսիւ, 'ի հարաւոյ նեղուցաւն Պապէլմանտէպայ. Բաժանի յերիս մասունս՝ յապառաժն Արաբիա (որոյ մայրաքաղաքն՝ Պետրա) յանապատն Արաբիա, (որոյ գլխաւ. քաղաքք՝ Անա, Մէքքա. և Մէտինա.) և յերջանիկն Արաբիա. որոյ մայրաքա. Սանաա:

Արագոնա. || թագաւորութիւն և մի յերևելագոյն գաւառացն ուացն Ասպանիոյ՝ սահմանեալ 'ի Հիւսիսոյ Փիրենէիւք լերամբք, որք բաժանեն զնա 'ի Ֆրանսիոյ, յարեւմտից Նաւառրայիւ եւ երկու Քասթիլեօք, 'ի Հարաւոյ թգւորութիւն Վալէնցիոյ, յարեւելից մասամբ ինքն թագաւորութիւն Վալէնցիոյ եւ Քաթալոնիաւ։

Արահետ. ‖ ճատահ ճամբայ։

Արապան. ‖ մեծ թմբուկ. տաւուլ։

Արատել. ‖ արատաւորել։

Արբանեակ. ‖ սպասաւոր. շրջակայ մեծի ուրուք.

Արբանեկութի. ‖ սպասաւորութի. մերթ՝ շողոքորթութի. մտահաճութի։

Արբանեկել. ‖ սպասաւորել. մերթ՝ շողոքորթել. շընթել. այսինքն, պէսպէս շարժմամբք եւ արարողութիւք եւ հաճոյական բանիւք ջանալ շահիլ զսիրտ կամ զսէր ուրուք. որպէս առնեն տալխաւուկք մեծամեծաց։

Արգահատական. ‖ գորովական. գթաշարժ. աղետալի։

Արգահատել. ‖ գորովիլ. կարեկից լինիլ. աղեկիզիլ։

Արգահատութի. ‖ կարեկցութի. ցաւակցութի։

Արգասաւորութի. ‖ արդիւնաւանութի. գործունէութի.

Արգասիք. ‖ արդիւնք. գործ. պտուղ։

Արգաւանդ. ‖ պարարտ (գետին) բերրի։

Արդեան։) այժմեան. հիմկուան. նոր. թազէ։
Արդի։)

Արդիւնանալ. ‖ գործադրիլ։

Արդիւնացուցանել. ‖ 'ի գործ դնել. կատարել։

Արդիւնք. ‖ գործ. արգասիք. պտուղ։

Արեւադարձք. ‖ են երկու շըրջանակք պատկերակերպեալք յաստեղաբաշխից 'ի գունտն երկնից եւ յերկրագրաց 'ի գունտն երկրի 23, աստիճանօք տարակայք 'ի Հասարակածէն եւ զուգահեռականք նմին՝ առ 'ի յանդիման առնել զմեծագոյն եւս խոտորումն արեւու 'ի տարեկան շարժման իւրում. Մինն է 'ի Հիւսիսային կիսագնտի եւ կոչի արեւադարձ խեցգետնոյ, կ՚ամառնան. միւսն է 'ի Հարաւային կիսագնտի. եւ կոչի արեւադարձ այծեղջեր, կամ ձմեռան. Ասին արեւադարձք, զի 'ի ժամանելն արեւու 'ի մի յայնց շրջանակաց ոչ եւս յառաջէ անտի եւ անդր. այլ դառնայ ՚ի հասարակածն կոյս ընդ զօդիակոսն :

Արիւնախանձ. ‖ ցանկացօղ կամ ծարաւի արեան :

Արիւնայեղց.)
Արիւնըռուշտ.) արիւնալից:

Արծարծանել. ‖ վառել. զարթուցանել. աճեցուցանել զբոցն կամ զլոյսն :

Արծնել. ‖ փայլեցուցանել. ճիլա տալ:

Արկած. ‖ դիպուած. պատահումն :

Արկօնաւթաք. ‖ դիւցազունքն այնոքիկ, որք ընդ Յասոնայ նաւեցին ՚ի սեաւ ծովն՝ թըռչով աւելի քան զյիսուն. յորոց գլխաւորքն եղեն Կաստօր և Փօլլուքս, Թելամօն, Օրփէոս, Հերքուլէս, և Յիլաս մանուկն. այսպէս մականուանեալք յեղանակէ նաւելոյն. զի Արկօնաւթայն յունաց ՚ի մեզ թարգմանի գանգաղ կամ յամր նաւորդ :

Արմտիք. ‖ բերք ցորենոյ, գարւոյ և նմանեաց:

Արշաւանք. ‖ ընթացք. մերթ՝ ասպատակութի՟ :

Արուեստակել. ‖ արուեստի՟ կերտել կամ գործել. հընարել:

Արջային շրջանակ. ‖ է հիւսիսային վերջին շրջանակն երկրագնտոյս, այսպէս կոչեցել՟ ՚ի համաստեղութե՟ փոքր արջուն. որոյ վերջին աստղն նշանակէ ըզհիւսիսային բեւեռն :

Արուեստակութի՟. ‖ հնարագիտութի՟. հնարագործութի՟. խորամանկութի՟:

Արտագործութի՟. ‖ արտաքին գործողութի՟. կամ ներգործութի՟:

Արտադրել. ‖ արտաքոյ կամ ՚ի բացի դնել. վտանգել. առնել նշաւակ կամ ենթակայ իրիք վնասու :

Արտակեդրոն. ‖ արտաքոյ հասարակաց կեդրոնի. կ՟մ որ ունի զտարբեր կեդրոն :

Արտաշնչումն. ‖ արտաքս շնչումն կամ ելումն շոգեաց ՚ի մարմնոյ :

Արտասանել. ‖ արտաբերել. բանիւք հրատարակել:

Արտափակողական. ‖ նոյն որ արտաքսողական. տես :

Արտափակութի՟. ‖ արտաքոյ փակումն. արտաքսումն :

Արտաքսողակ՟ն. ‖ (իրաւունք. յատկութի՟, մրութի՟ և ն.) այսինքն, ինքեան միայն սեպհական. որ արտաքսէ զայլս ՚ի մասնակցութե՟. կ՟մ ոչ ընդունի զընկերութի՟ այլոյ, ինքն միայն կամելով վայելել:

Արտաւնութիւն. կամ **Արտօնութիւն.** ‖ շնորհք կամ ազատութիւն արարեալ տեղւոյ կամ անձին ումեք:

Արքիպեղագոս կամ **Արշիփելակօ.** ‖ (կոչեցեալ այլով անուամբ սպիտակ ծով) է երեւելի մասն միջերկրական ծովուն ունելով զՌօմանիա ընդ հիւսիսակողմն եւ զԱնատօլիա ը̄ արեւելս, զՄակեդոնիա, զԹեսալիա եւ զՄօրայ ը̄ արեւմուտս եւ զԿղզին Կանդիա ընդ հարաւ. Պատկանի Եւրոպիոյ եւ Ասիոյ. եւ բաժանէ զնս ՚ի Ռօտոս կղզւոյն մինչեւ ցծովն Մարմարայի. Կղզիք Արքիպեղագոսին են բազմաթիւք. գլխաւորքն են 45. Երկայնութիւն իւր է վեց աստիճանաց՝ յերեսներորդէ հինգերորդէ եւ յոմանց վայրկենից մինչեւ ցքառասուն եւ մի երորդն. Զանուն Արքիպեղագոսի տուեալ են եւ բազմաց ծովուց Ասիոյ եւ Ամերիկոյ:

Արքիտուքա. ‖ պատուանուն նահապետութեան, որ այժմ ոչ եւս է ՚ի սովորութեան, բայց եթէ խօսելով զնահապետաց տանն Աւսթրիոյ:

Արքունիք. ‖ պալատ արքայական. տուն արքունի. կմ իշխանք պալատին. որոց ՚ի ձեռս է կառավարութիւն թագաւորութեան:

Աւագանի. ‖ մեծահամբաւ կամ արժանահաւատ անձինք. մեծամեծք. ծերք (.քաղաքին:)

Աւագոյթ. ‖ կոյտ կամ ժողով աւագաց. մեծաւորք .քաղաքին:

Աւագութիւն. ‖ մեծութիւն. կմ մեծ իշխանութիւն. կմ արժանաւորութիւն անձին. մերթ՝ վկայութիւն մեծի ումեք:

Աւագացուցանել. ‖ աւագ՝ իշխան կացուցանել հրաման կմ իշխանութիւն տալ:

Աւարտաբանել. ‖ յաւարտ կամ յեզր տրամաբանութեան հասանել. եզրակացուցանել:

Աւսթրիա. ‖ գաւառ Ալեմանիոյ սահմանեալ ՚ի հիւսիսոյ Պօհեմիայիւ եւ Մօռաւիայիւ, յարեւելից Հունկարիաւ, ՚ի հարաւոյ Ստիրիաւ, յարեւմտից Արքեպոսութիւն Սալըսպուրկոյ. Ենս գետն, որ անկանի ՚ի Դանուբ, բաժանէ զնա ՚ի վերին եւ ՚ի ստորին. Վիեննա է մայրաքաղաքն ստորինոյն. եւ Լինցն է մայրաքա. վերինոյն:

Ափխազայ. ‖ թագաւոր. Լէնկէրի :

Ափրիկէ. ‖ մի 'ի չորից գըլխաւոր մասանց երկրի. որ ունի ի հիւսիսակողմն ըղծովն միջերկրական, ընդ արեւմուտս և ընդ հարաւ ովկիանոսն, ընդ արեւելս զծոցն Արաբիոյ, կամ ըղկարմիր ծովն և զցամաքալեզուն Սուէզայ. Ըստ Տէլիլեայ երկրագրի Պաղղիացւոյ բաժանի յինն մասունս, որք են Եգիպտոս, Բարբարիա, Գուինէա, Քօնկօ, Քաֆֆրէրիա, Եթէովպիա որ է Հաբէշստան, Նուպիա, Նիկրիցիա և շրջակայ կղզիքն :

Աքատիա. կմ' Աբքատիա. ‖ ցամաքակղզի հիւսիսային Ամերիկոյ առ արեւելեան սահմանօք Քանատայի ի մէջ Նոր երկրին և Նոր Անգլիոյ, որ ունի իբր 120. փարսախ երկայնութի և 40 լայնութի. Իբրև տիրեցին Անգլիացիք անուանեցին զայն Նոր Սքօցիա :

Աքափուլքօ. ‖ երևելի քղք և նաւահանգիստ Մէքսիքոյ 'ի մջ ծովուն հարաւոյ:

Աքօսթա. ‖ անուանի հեղինակ Սպանիացի 'ի կարգէ Յսեանց 'ի վեշտասաներորդ հարիւրեկին. որ արար զբնական և զբարոյական պատմութիւն Հնդկաստանի և զայլ բազում գործս. Մեռաւ 'ի Սալամանքա 'ի 1600. ին յետ լինելոյ գաւառապետ կարգին 'ի Փէրու :

Աքուինա կամ Աքունա. ‖ կրօնաւոր 'ի կարգէ Յիսուսեանց ազգաւ Սպանիացի. որ հրատարակեաց յամին 1641. զպատմութի գետոյն Ամազոնեայ :

Բ

Բա՛. ‖ վաղնակ. կանխաւ. մերթ՝ արդարև :

Բարան. ‖ բաղխոտր. այսինքն, գործիք ձգելոյ զինչև իցէ զէն առ'ի վնասել թշնամւոյն. որպիսի է թնդանօթն, հրետն. աղեղն. և այլն :

Բաբէլմանտէլ. ‖ նեղուց կարմիր ծովուն. որով միաւորի ընդ Ովկիանոսի :

Բաբիլոն. ‖ (պաղտատ) քղք Ասորեստանի առ ափն Տիգրիս գետոյ՝ շինել յԱպուՃաֆարայ Ալմանզօրեայ Խալիֆայէ յամի տն 762. Սա չէ պարտ շփոթել զայս ընդ հին Բաբիլոնի, որ էր շինել 'ի մջ Եփրատայ :

Բագին. ‖ սեղան կռոց. կմ կուռք :

Բաժ. ‖ արքունի տուրք. հարկ. կամ հասոյթ :

Բաժադաւ. ‖ դաւօղ արքունի բաժից, բերելով կմ վաճառելով 'ի ծածուկ զարգելեալ վաճառս յիմիք տէրութեան :

Բաժադաւութիւն. ‖ եասախ եղած ապրանք բերելը կմ ծախելը ծածուկ :

Բաժանորդ. ‖ մասնակից. հաղորդ. կցորդ :

Բալթիական. (ծով) ‖ է մեծ խորշ Ովկիանոսի սահմանեալ 'ի հարաւոյ կողմանէ՝ յԳերմանիոյ և 'ի Փոլոնիոյ, յարևմտից՝ 'ի Դանիոյ և 'ի Շվետու, 'ի հիւսիսոյ կողմանէ՝ 'ի Լափոնիոյ յարևելից՝ 'ի Բօթնիոյ, 'ի Ֆինլանտիոյ և 'ի Լիոնիոյ. Կցորդեալ է ընդ ծովուն Դանիոյ միջնորդութիւն նեղուցայն Սունտայ և մեծ և փոքր Բէլթայ. Մուտ Բալթիական ծովուն կախի յարքայէն Դանիոյ. որ ունի իրաւունս տալոյ քննել զայն նաւ, որ գայ 'ի ներքս յայս ծով. կամ ելանէ անտի 'ի դուրս :

Բակուղ. ‖ ըկր. սօփայ :

Բաղաղանութիւն. ‖ համակերպութիւն. յարմարումն. համեմատութիւն :

Բաղակցութիւն. ‖ յարակցութիւն. միաւորումն:

Բաղակցել. ‖ շարակցել. կապակցել:

Բաղարկոցութիւն. ‖ մակաբերութիւն. ենթադատութիւն. վարկած. թահմին:

Բաղդորդ. ‖ հետամուտ բաղդի իւրոյ. թալէհի էտևէն ընկնող. յաջողութիւն փընտրող :

Բաղկացութիւն. ‖ կազմուած. խառնուած. գոյացութիւն.

Բաղըստրաւոր. ‖ նետաւոր կամ աղեղնաւոր :

Բաճկոնիկ. ‖ փոքրիկ բաճկոն կամ զպուն, որ պատէ միայն զկուրծս և զթիկունս. ելէկ :

Բաշխոյք.) բաժանումն
Բաշխումն.) հրապարակական կմ քաղաքական պաշտօնի. մերթ՝ որոշեալ պաշտօն :

Բառնալիք. ‖ բարձող կամ բեռնաբարձ նաւք :

Բասիր. ‖ մեղադրելի պակասութիւն. մեղք. սուչ.

Բասրանք. ‖ մեղադրանք :

Բարբարիա. ‖ (այլով անուամբ կոչեցեալ Մաւրիտանիա) մեծ տարածութիւն յԱփրիկոյ՝ փակեալ 'ի մէջ Ատլանտեան ովկիանոսի, միջերկրական ծովուն, Եգիպտոսի, Նիգրիցիոյ և Կուինէոյ. Գլխաւոր մասունք սո̄ են Թագաւորութիւնքն Թռիփօլեայ (որ Թարապուլուս) Թունուզայ, Ալճերաց (որք են Ճէզայիրք) Ֆէսի, Մարօքքօի, Թաֆիլէթայ, և անապատն՝ Սահարա:

Բարգաւաճել. ‖ մեծապէս աճել:

Բարեբուն՝. ‖ բարի բնութիւն ունող:

Բարեդիպութիւն. ‖ քաջադիպութիւն. յաջողութիւն:

Բարեգունացուցանել. ‖ բարեգոյն առնել. վերածել 'ի լաւագոյն վիճակ կամ կերպարան:

Բարեխառն գօտիք. ‖ ըստ աշխարհագրաց են որոշեալ մասունք երկրագնտոյս 'ի մէջ այրեցածին և ցրտայնոցն. և են բովանդակ այն միջոցն պարունակեալ 'ի մէջ արեւադարձից և բեւեռային շրջանակաց. Ասին բարեխառն այս է, մեղմ, կամ միջասահման. զի ոչ կրի 'ի նմա, ոչ կարի ցուրտ և ոչ կարի տօթ:

Բարեբարութիւն. (եկեղեցական) ‖ հոգեւոր պաշտօն կամ իշխանութիւն:

Բաբուր. ‖ շրջապատութիւն. սուտ մեղադրանք:

Բացերեւակի. ‖ յայտնապէս. յայտ յանդիման:

Բաւիղ. ‖ գաղոց. (տեղի գաղելոյ) Թագստարան. խոռոչ:

Բդեաշխ. ‖ Նախարար. գաւառապետ. փաշայ. վէզիր:

Բեթեկ. ‖ Նորոգումն շինուածոց. մերամէթ:

Բերիա. ‖ (Հալէպ) մեծ և անուանի քաղաք Սուրիոյ յԱսիա 'ի մէջ Անտակաա կամ Անտոխիա գետոյն:

Բեւեռք. ‖ ըստ աշխարհագրաց՝ են երկու ծայրք առանցից երկրի. մինն կոչի Արջային կամ Հիւսիսային. միւսն Հակարջային կամ Հարաւային. Բեւեռական շրջանակք են այնք, որք յաշխարհացոյցս գտանին գծագրեալ 23, աստիճան հեռի յիւրաքանչիւր բեւեռէ և զուգահեռականք համարակածին:

Բժժագործ. ‖ սնոտիապաշտ. մոգ. դիւթ:

Բժժագործութիւն.) սնապաշ-
Բժժանք.) տութիւն. սնոտի պաշտամունք. մոգութիւն:

Բժժական. ‖ աւելորդապաշտական. դիւթական:

Բիւայ. ‖ արբեցուցիչ ըմպելի ինչ համարակարար

կալկազմեալ 'ի գարւոյ . փիվայ . արփայ սույու :

Բնաւորութիւն . ‖ բնական յօժարութիւն . բերումն բնութեն . բնական որպիսութիւն :

Բոժոժ . ‖ չընկռտախ . զոր կապեն յոտս բազէից :

Բուրգն . ‖ պուրճ . կմ խուլէ :

Բռնաբարել . ‖ բռնութիւն առնել . պղծել . ապականել . յափշտակել :

Բռնաբարութիւն . ‖ յափշտակութիւն . կամ ապականութիւն . լուծումն :

Բռնագրօսել . ‖ բռնութիւն յառաջ տանիլ . ստիպել . կմ բռնի առնուլ . կորզել :

Բռնագրօսութիւն . ‖ բռնի առումն . բռնութեամբ հանումն . կորզումն :

Բրետաննիա կամ Բրիտաննիա . (մեծն) ‖ մեծ կղզի Ովկիանոսի . որ պարունակէ զթագաւորութիւն Սկօցիոյ և Անգլիոյ . Ոչ է պարտ շփոթել զայս ընդ Բրիտաննեան կղզեաց . որք են մասն միապետութեն մեծին Բրիտաննիոյ . որգոն՝ Իռլանտա , Սօռլինկայք , Օրքայք :

* * *

Գ .

Գագաթամիղն . ‖ (յոգն , մինկք .) միղն կմ նուրբ մաշկ , որ պատէ զոսկր գագաթան գլխոյ :

Գալարափող . ‖ գալարածոյ փող . թրամփէթա :

Գահաւորակ . ‖ թախտ . թախտրավան :

Գաղափար . ‖ պատկեր իրից տպաւորեալ 'ի միտս . ճանաչումն . մերթ՝ օրինակ . գծագրութիւն . ռէսմ :

Գաղել . ‖ թաքուցանել :

Գաղթել . ‖ տեղէն փախչիլ . փոխել զբնակութիւն :

Գաղղիա . (Ֆրանսիա , կմ Ֆրանսա .)‖ մեծ թագաւորութիւն Եւրոպիոյ՝ սահմանեալ 'ի հիւսիսոյ ստորին գաւառօք , յարեւելից Էլուացիաւ , Սվիցցերօք , և Սաւօիայիւ , 'ի հարաւոյ միջերկրականաւ և Փիրէնէիւք , յարեւմտից Ովկիանոսիւ . Մայրաքաղաք բոլոր թագաւորութեն է Փարէզ :

Գայլախազ . ‖ տեսակ ինչ քարի կարծրագոյն . չախմախի քար :

Գեղերեսել . ‖ գեղեցկացուցանել զերեսս . յօրինել . զարդարել :

Գերդաստան . ‖ բազմութիւն արբանեկաց կամ յուզարկաւորաց . մերթ՝ ընտանիք միանգամայն առեալ . կամ պարունակէ

կենքն

կե՟ցքն 'ի տան. քիւլֆէթ։

Գերմանիա. (Ալեմանաց կմ՟ Նէմցէի երկիր.) ‖ մեծ թագաւորութի՟ կայացե՟լ 'ի մէջ Եւրոպիոյ՝ սահմանակից յարևելից ընդ Հունգարիոյ, Բոհեմիոյ և Փոլոնիոյ, 'ի հիւսիսոյ ընդ Բալթիական ծովուն և ը՟ Դանուրայ, յարևմտից կուսէ ընդ ստորին գաւառաց, ընդ Ֆրանսիոյ և ընդ Սվիցցերաց, 'ի հարաւոյ ընդ Ալփեաց կամ ը՟ Իտալիոյ. Գերմանիա բաժանեցաւ 'ի կայսերէն Մաքսիմիլիանոսէ առաջներորդէ յինն ծիրս. որք են Աւսթրիա, Ռենոս վերին, Ռենոս ստորին, Բաւարիա, Սաքսոնիա վերին, Սաքսոնիա ստորին, Ֆրանքոնիա, Սվեվիա և Վեսթֆալիա։

Գէճ. ‖ խոնաւ. թաց։

Գժդմնութի՟. ‖ խոժոռումն. տհաճութի՟։

Գիճին. ‖ տես Գէճ։

Գիշատել. ‖ գէշ գէշ պատառել և ուտել, որպէս առնեն գազանք։

Գիշերահաւասար. (գիծ) տես Հաւասարակած։

Գիրգ. ‖ փափուկ. ոչ խոշոր. նազիկ։

Գլուխ. առե՟լ է մի՟կ դերաբարի։

Գծագրութի՟. ‖ ձևակերպութիւն. նկարումն. մերթ՝ խորհուրդ. գաղափար։

Գձձութի՟. ‖ փոքրոգութի՟. ցածութի՟ ոգւոյ. մերթ՝ ժլատութի՟։

Գճռումն. ‖ կորացումն. խոնարհումն։

Գնձիկ. ‖ գնծիկ ասեղ. թօփլու։

Գողտրիկ. ‖ փափկիկ. նազիկ։

Գործօնեայ. ‖ ժրագլուխ. բան պաշարող. իշկիւզար։

Գուբինէա. ‖ տես Կուբինէա։

Գումար. ‖ հաւաքումն թըւոյ. մերթ՝ որոշե՟լ ինչ թի՟ դրամոց։

Գումարտակ. ‖ խումբ. գունդ։

Գուռզ. ‖ խըլբըրճըլս (մաղ։)

Գրաւել. ‖ մերթ՝ պարաւանդել. պարտաւորել։

Գրաւոր. ‖ գրով հաստատուն. կամ վարժ 'ի գիրս իմաստից։

Գրաւորականութի՟. ‖ գրաւորական հմտութի՟. կամ վարժութի՟ 'ի գիրս իմաստից։

Գրչագործութի՟. ‖ գրչաւ պատկերահանաց գործ. որ է նկարումն։

Գրոհ տալ.) ‖ դիմել 'ի վերայ.
Գրոհիլ.) յարձակիլ։

Գօտի. ‖ ըստ երկրագրաց՝ է միջոց երկրագնտոյս պարունակեալ 'ի մէջ երկուց շրջանակաց զուգահեռականաց 'ի մէջ իւրեանց և նկատմամբ հաւասարակածին. Այս միջոց է իբր գօտի լինել զուգահեռական առ հաւասարակածն. և պարունակէ զբազում կլիմայս. Աշխարհագիրք բաժանեն զգունտ երկրի 'ի հինգ գօտիս կմ՛ մասունս, նկատելով զն̃ն ըստ զանազան աստիճանաց ցրտոյ կամ տօթոյ. և են **Այրեցածն, Երկու Բարեխառնեանն, և Երկու Ցրտացեալն կամ Սառնայինն**:

* * *

Դ

Դամարճակ. || ժողով իմաստասիրաց. մերթ վարժարան. դպրատուն:

Դանդաղ. || յամրաշարժ. կամաց շարժօղ. տընտընացօղ:

Դանիա. կմ՛ **Դանիմարքա**. || թագաւորութ̃ի Եւրոպիոյ՝ սահմանեալ յարևելից Բալթիական ծովով, յարևմտից և 'ի հիւսիսոյ Ովկիանոսիւ, 'ի հարաւոյ Ալէմանիաւ. Բաժանի 'ի տէրու̃ի ցամաքի և 'ի տէրութ̃ի ծովու. Մայրաքաղաք այսր թագաւորութ̃ե է Կօփէնքակէն. կամ Կօփէնհակէն.

Դանոբ. կմ՛ **Դանուբ**. (Տունա) || մեծ գետ Գերմանիոյ, որ ունի զակիզբն իւր 'ի սեաւ անտառին մերձ 'ի Վուրտէմպէրկ. անցանէ ը՛ Սվէվիա, Պաւարիա, Ավսթրիա, Հունգարիա, Սէրվիա, Բուլղարիա, Մօլտաւիա, և ապա անկանի 'ի սեաւ ծով:

Դաշխուրան. || թաս. քեասէ:

Դաշոյն. || կարճ երկսայրի սուր. խանչէր:

Դասալիք. || լքանօղ զդասն կամ զգունդ իւր. ապստամբ զինուոր:

Դաստիարակութ̃ի. || կրթութ̃ի կմ՛ ուսումն մանկանց:

Դարան. || թագստարան. կամ գաղտնի տեղի, ուր թագչին պատերազմօղք առ 'ի յանկարծ ելանել անտի և յարձակիլ 'ի վր̃ թշնամեաց:

Դարանիլ. || թագչիլ 'ի դարանի:

Դարման. || մթերք կերակրոց. համբար. զահրէ:

Դաւ. || նենգութ̃ի. խաբէութ̃ի:

Դեգերիլ. || սասանիլ. խախտիլ. կամ երկբայիլ:

Դեկան. || տասնաւոր. կամ տասնապետ. անուն եկե-

ղեզեցական երեք իշխանութեան :

Դեկայ․ տես Տասնեակ :

Դեղունչ․ (ընչոյ․) ‖ խոտ, որ չորացուցեալ պէսպէս արհեստիւ՝ վառեալ լինի ՚ի տմնեկի, (որ է լուլէ) առ ՚ի քարշել զծուխն իր․ կամ վերածի ՚ի փոշի առ ՚ի ձգել ՚ի վեր ընդ ռունգունս․ թիւթիւն :

Դեմոս․ ‖ մեծ գաւառ :

Դերեւանալ․ ‖ ունայնանալ․ ընդունայն լինել :

Դեսպար․ ‖ քիթ ցամաքի երկայնեալ ՚ի ծովն․ պուռուն :

Դէպք․ ‖ դիպուածք․ պատահմունք :

Դժխեմ․ ‖ խստաբարոյ, դառնբերնս․ երես չտուօղ :

Դիմագրաւ․ ‖ գրաւօղ կամ պարաւանդօղ զանձն առ գործ ինչ :

Դիմագրաւել․ ‖ գրաւել կամ պարաւանդել զանձն առ գործ ինչ․ յառաջ մատուցանել զանձն․ առաջ նետվիլ :

Դիմագրաւութիւն․ ‖ գրաւումն անձին կամ փոյթ․ զայրէթ․

Դիմակ․ ‖ սուտ կամ արհեստական դէմք․ սուրաթ :

Դիպան․ ‖ դիպաւոր․ պատշաճաւոր․ յարմար :

Դիպաւորութիւն․ ‖ դիպուած կամ ժամ յարմար գործելոյ կամ ոչ գործելոյ իրս ինչ․ տուշլուշ․ ֆրսանտ :

Դիոդորոս (այ․) Սիկիլացի․ ‖ հռչակաւոր վիպասան առ թագաւորութեան Կեսարու և Օգուստայ․ այսպէս անուանեալ, զի ծնեալ էր ՚ի Սիկիլիա կղզւոջն․ Ծախեաց զամս 30 ՚ի շարադրել զպատմական գրքարանն իւր․ և ճանապարհորդեաց յԵւրոպիա և յԱսիա առ ՚ի կատարելագործել զայն․ Այս գործ մեծ, զոր Դիոդորոս շարադրեաց ՚ի յոյն լեզու լինելով ՚ի Հռոմ, պարունակէր զ40, դպրութիւն, յորոց չեն մնացեալ աւելի քան զ15 :

Դիւան․ ‖ տուն կամ տեղի, ուր պահին հրապարական գրուածք :

Դիւթ․ ‖ կախարդ․ մոգ :

Դիւթութիւն․ ‖ կախարդութիւն կամ կախարդական արարողութիւն :

Դիւցազն․ ‖ սերեալ ՚ի զարմէ դիցն կամ չաստուծոց․ յայսմանէ ամենայն քաջ և հռչակաւոր և վսեմ այր անուանի դիւցազն :

Դղրդել․ ‖ ամենայն մասամբք շարժել․ վրդովել :

Դոյզն կամ Դուզնաքեայ․ ‖

|| սակաւ. փոքրիկ. չնչին:

Դուզն ինչ. || խուն ինչ. սակաւ ինչ:

Դպրութիւն. || գիրք. կամ մասնաւոր հատուած միոյ մատենի:

Դույթ. || 'ի վերայ յարձակումն:

Դսրովանք. || պարսաւ. քամահրումն. կշտամբութիւն:

Դրամագլուխ. || գլուխ դրամոց. սէրմայէ:

Դրոշմ. || նշան. տամղայ. մերձ՝ յատկութիւն. սեպհական հանգամանք:

Դրուագել. || խափլամայով ծածկել. խափլամիշ լինել:

Դրուատել. || գովել. գովասանել:

Դօդվէլ. || գիտնական պատմագիր ժէերորդ հարիւրեկին՝ ծնեալ 'ի Տուպլին մայրաքաղաք Իռլանտիոյ յամին 1641. Եղև 'ի մեծ յարգի առ գրասէրսն Անգլիոյ. և կարգեցաւ ուսուցիչ վիպասանութեան յՕքսֆորտ քաղաքի յամին 1688. Բայց զրկեցաւ յայսմ պաշտօնէ յետ ամաց ինչ՝ վասն ոչ կամելոյ երդնուլ զհաւատարմութիւն առ թագաւորն Կուլիելմոս և առ թագուհին Մարիամ. Մեռաւ յամին 1711. յունի. 7. ամաց եօթանասնից:

Ե

Եդոմ. կամ **Իդումէա.** || մասն Արաբիոյ տարածեալ ընդ երկայնութիւն կարմիր ծովուն:

Եզր. || ծայր. վերջ. քենար. մերձ՝ բառ. խօսք:

Եզերք. || բոլորտիքը. քենարները. մերձ՝ հօրիզոն կամ ծիրն, յորում երկին և երկիր միացեալ երևին ընդ տեսութեան աչաց մերոց:

Ել. || լինել. գոլ:

Ելք. || հնարք, կամ վախճան:

Եկամուտ. || մերձ՝ նոր հաւատք եկող:

Եղեռն կամ **եղեռնութիւն.** || մեծ անօրէնութիւն. վնասակար յանցանք. վնաս:

Եղէնափայտ. || փայտ եղևին ծառոյ. որ է տեսակ ինչ չամի:

Եղջերուաքաղ. || եղջերու միանգամայն և քաղ. որ ըստ իրին ոչ կարէ լինել. այլ լոկ անուն է. և այս հնարեցաւ 'ի փիլիսոփայից առ 'ի նշանակել զսուտ երևակայական իրս. կամ զանկարելութիւն իրաց:

Ենթադրել. || դնել 'ի ներքոյ. կամ դնել իբր հիմն խօսից. համարել:

Ենթադրութիւն · ‖ դրութիւն իրիք իբր հիմն խօսից · համարումն :

Ենթակայ · ‖ որ կայ ՚ի ներքոյ այլոյ իրիք, կամ յորոյ վերայ դնի ինչ · կմ՟ նիւթ, զորմէ ճառի, կամ առարկայ :

Եուքաթան · ‖ տես Իւքաթան :

Եպերել · ‖ քամահել · արհամարհել :

Եպարքոս · ‖ մեծ իշխան · վէզիր :

Եռանդն · ‖ եռացումն · բորբոքումն · վառումն · սաստկութիւն :

Եռապօլիս · ‖ երեւելի քաղաք Սիւրիոյ առ եզերբ միջերկրականն ծովուն · ռամկ · Թարապուլուս :

Ետեղակալ · ‖ փոխանորդ · վէքիլ · տեղը բռնօղ :

Երաթօսթենէս · ‖ իմաստասէր ոմն Կիւրենացի իբր 276 ամօք յառաջ քան զքս̃ · Եղև աշակերտ Արիսթօնեայ և Քալլիմաքոսի, և գրքապետ Աղեքսանդրիոյ առ Պտղոմեաւ Եվերգետեաւ արքայիւ Եգիպտոսի · Սա եղև առաջինն, որ եգիտ զեղանակ չափելոյ զմեծութիւն երկրի · ուստի և մականուանեցաւ՝ Աշխարհագէտ և չափօղ տիեզերաց :

Երանելեաց կղզիք · (այժմ կոչին Քանարեանք ·) ‖ են կղզիք Ովկիանոսի մօտ Ափրիկոյ · որոց մօտաւորագոյնն ծովեզերացն Ափրիկոյ 40 փարսախ միայն տարակայի ՚ի նմանէ · Հասարակաբար թըւին եօթն · որք են Փալմա, Ֆէրրօ, (երկաթ) Կօմէրա, Լանչէրօթա, Ֆօրթվէնթուրա, Թէնէրիֆֆա, և մեծն Քանարիա :

Երասանակ · ‖ պախուրց · կմ՟ սանձ · խլար · կամ կէմ ·

Երաստ · ‖ ժողով իշխանաւորաց կամ կառավարչաց իրիք տէրութեան :

Երդմնակցութիւն · կամ երդումակցութիւն · ‖ հանդերձ երդմամբ միաբանութիւն բազմաց ընդդէմ իրիք տէրութեան կամ ընդդէմ իշխանաւորին :

Երեխայրի · ‖ առաջին պտուղ :

Երեսաւոր · ‖ դիմագրաւ · ազատադէմ · համարձակ :

Երեսաւորութիւն · ‖ համարձակութիւն · որոշումն մտաց · սրտիմտօք դիմումն առ գործ ինչ :

ՅԵրեւան գալ · ‖ երեւիլ · հանդիսանալ :

Երկրագրութիւն · ‖ ստորագրութիւն կամ գծագրութիւն բովանդակ մասանց երկրի ։

Երկրական. ‖ գաւառական. որ է 'ի նոյն երկրէ կամ գաւառէ ։

Երկրաչափութիւն. ‖ արհեստ կամ գիտութիւն քննելոյ զչափականութիւնս իրաց. և ունի յառարկայ զայն ա̃մ, որ է չափելի, որպիսի են գիծք, մակերևոյթք, մարմինք ։

Երկրաստան. ‖ գետինք կ̃մ տեղիք սահմանաւ որոշեալք և պատկանեալք առ քաղաք ինչ կամ տէրութիւն ։

Երփն երփն. ‖ գոյն գոյն ։

Եւդոքսոս (եայ) Կիզիկեցի կամ ըստ ոմանց Կնիտացի. ‖ էր ոմն աստղաբաշխ, երկրաչափ և օրինադիր իբր 390 ամօք յառաջ քան զքս̃ ։

Եւրոպիա. (Եւրոպա) ‖ մի 'ի չորից մեծամեծ մասանց աշխարհի՝ երկրորդ 'ի կարգի, թէպէտ առաջին արժանաւորութ̃ին վս̃ ճարտարութեան բնակչացն և վս̃ ուսման գիտութեանց և ա̃մ արհեստից. Սահմանեալ է յարևմտից և 'ի հիւսիսոյ Ովկիանոսիւ, յարևելից՝ Ասիաւ և միջերկրեայ ծովուն, 'ի հարաւոյ մասամբ միջերկ. որ զատուցանէ զնա յԱփրիկոյ. Պարունակէ զՍվեցիա (Շվէտ) զԴանիմարքա, զՆորվեգիա, զմասն Մոսկովիոյ, զՍպանիա, զՖրանսիա, զԻտալիա, զԱլէմանիա և զՌոմանիա, որ է Ռումէլի ։

Եօրք. (այ) ‖ գաւառ հիւսիսային Ամերիկոյ առ արևելեան ծովեզերբ, սահմանեալ 'ի հիւսիսոյ Կանադայիւ, յարևելից Նոր Անգլիաւ, յարևմտից Փէնսիլվանիաւ և Վերճինիաւ, 'ի հարաւոյ ծովուն հիւսիսոյ ։

○=○=○=○:=:○=○=○=○

Զ

Զաղփաղփութիւն. ‖ անհաստատութիւն. անկայունութիւն ։

Զանգիտել. ‖ երկնչել, կ̃մ ոչ համարձակիլ ։

Զանխուլ. ‖ գաղտնի. թաքուն. ծածուկ ։

Զանխլաբար. ‖ ծածկաբար. գաղտաբար ։

Զառածանել. ‖ մոլորեցուցանել. խաբել. պատրել ։

Զառանցանք.) ‖ չափա-
Զառանցութիւն.) զանց սխալումն. օրինազանցութի. ար-

տուտաքոյ կարգի և օրինաց բերումն :

Զառանցուցիչ. ‖ մոլորեցուցանող. խաբող. խելքէն հանող :

Զառ'ի թափ : ‖ դէպ 'ի վայր. դար վար կախ :

Զարտուղեցուցանել. ‖ խոտորեցուցանել. շեղել յայլ :

Զգածիլ. ‖ որականալ որպիսութե իւիք. տոգորիլ :

Զգացուած. ‖ զգացումն. ճանաչումն :

Զգայական. ‖ զգայուն. զգացող :

Զեղանել. վերառատանալ. վերածիլ. տարածանիլ :

Զեղխիլ. ‖ անչափաւորաբար թափել զզօրութի իւր. կարի խիստ ուռճանալ. առելորդ ճիւղովք և տերևովք լնանիլ :

Զեղծանիլ. ‖ չարաչար վարիլ. առ չարն 'ի գործածել զբարին ,

Զենլի. ‖ սպանդ. մատաղ. զոհելու կենդանի :

Զետեղ. ‖ տեղի, ուր զետեղեալ է բազմութի ինչ :

Զերդեեցուցանել. ‖ 'ի բաց վտարել. հեռացուցանել :

Զլանալ. ‖ ոչ տալ. կամ ուրանալ :

Զմեղկիլ. ‖ յոյժ թուլանալ. մեղկանալ :

Զնտիլ. ‖ գլջանիլ. ցածնուլ. տակը իյնիլ :

Զոլ. ‖ հոլ. պարուկ. մինչակ պար. ֆէռահ :

Զովացուցիչ. ‖ բարեխառն պաղեցուցիչ. ֆէռահ ընող :

Զուգակշռել. ‖ զուգակշիռ առնել. հաւասարել :

Զուգահեռական (շրջանակ) ‖ հաւասարապէս հեռի 'ի հասարակածէն :

Զչարիլ. ‖ զայրանալ. սրտմտիլ :

Զտագոյն. ‖ մաքրագոյն. կատարելագոյն :

Զտութի.) մաքրութի. կատա-
Զտումն.) րելութի. կատարելագործութի :

Զրահ. ‖ զրեխ :

Զրահաւորիլ. ‖ զրեխ հագնիլ :

Զքօղել. ‖ քօղարկանել. ծածկել :

Զօդուած. ‖ յօդուած. միաւորութի (բազմաց իրաց, գործոց) :

Զօշոտել. ‖ կախարդել. շլացուցանել. աչքը կապել :

Զօդիակոս. (բառ յունական. թարգմանի 'ի մեջ կենդանական) ‖ մեծ շրջանակ եդեալ խոտորնակի ը̃ մէջ երկուց բևեռաց [illegible]ի : Այս շրջանակ հայի յերկուսին արևադարձն յերկուս զանազան կէտսն. Այսէ միայն շրջանակն. որում տուեալ լինի լայնութիւն 16 աստիճանաց. ուստի մանաւանդ ասելի է գօտի քան թէ շրջանակ. Այս լայնութիւն բաժանեալ է յերկուս մասունս 'ի գծէ միջէ կամ 'ի փոքրիկ շրջանակէ, որ կոչի ծիր խաւարման (զի 'ի ներքոյ նորա ուղղակի գտանիլով լուսինն պատահի խաւարումն արեւու) յորում առնէ արեգակն ամի ամի զընթացս իւր. Տրամատի Օզդիակոսն յերկոտասան մասունս կամ համաստեղութիս, որք են կոյտք կամ բոյլք բազում աստեղաց, որոց տուեալ են նախնիք զանուն կենդանեաց. որպիսի են՝ Խոյ, Ցուլ, Երկաւորք. Խեցգետին, Առիւծ, Կոյս եւն. որք եւ կոչին կենդանակերպք կամ նշանք. Այդքա ծառայեն 'ի զանազանել զտարբեր յեղանակս:

Օջրավիգն. ‖ օգնական զօրաց. օժանդակ:

Օջրավիգութիւն. ‖ օգնութիւն. սատարութիւն:

Է

* * *

Է

Էլպա. ‖ գետ մեծ Ալեմանիոյ որ ունի զականս իւր 'ի լերինն Հսկայից առ սահմանօքն Պօհէմիոյ եւ Սլէսիոյ:

Էլք. ‖ կենդանի իմն հիւսիսային Ամերիկոյ:

Էմմանուէլ. ‖ Թագաւոր Փօրթուգալլիոյ եւ մի 'ի մեծագոյն նահապետաց, որք թագաւորեալ իցեն յԵւրոպիա. Յաջորդեաց յամին 1495 Յօհաննու երրորդի եղբօրորդւոյ իւրոյ մեռելոյ անորդի. Պաշտպանեաց զգիտնականս, վանեաց զՄաւրիս 'ի տէրութեանց իւրոց. եւ ստացաւ մարտիւք զբազում քաղաքս եւ զբերդս յԱփրիկէ. Ընդ նպաստիւք սորա եղեւ Վասքօի Կամայ, Ամերիկոսի Վէսփուչչեայ, Ալվարէզի Գապրալեայ եւ այլոց մեծամեծ արանց ծովու հոլանել զնորանոր երկիրս եւ տալ ճանաչել զփօրթուկէզ անունն անծանօթ ազգաց. Մեռաւ 'ի Լիսպօնա յամին 1521. ամաց յիսունեւերից:

Էնքօմիէնտայ. ‖ եկեղեցական ինչ կալուած կամ հասոյլթ տուեալ քահանայի կամ ասպետի 'ի վայելել:

Էսսէքուէպ. (այ) ‖ երեւելի գետ հարաւային Ամերիկայ 'ի մէջ Կուիանայ. որոյ ափունք բնակեալ են 'ի վայրագաց մեծամիս արբշռաց, և որք գնան միշտ մերկք:

Էսքուրիալէ. ‖ հռչակաւոր գիւղ հանդերձ նշանաւոր մենաստանաւ 'ի Նորն Գասթիլիա հիմնեալ 'ի Փիլիպպոսէ երկրորդէ յամին 1563 'ի յիշատակ յաղթութեն, զոր ընկալաւ ընդդէմ Գաղղիացւոց. 'Ի գրքատան այսր մենաստանի տեսանին աւելի քան զ130000 մատեանք. Թագաւորն անցանէ անդր յաճախակի հանդերձ արքունեօք իւրովք գոլով 'ի նմա բաւական օթեվան վս նր. Է այնպէս մեծ այս վանք, մինչ զի թըճին է՟ չորս կողմունս նորա 1140 պատուհանք:

Էսքիմոսք. ‖ վայրենի ազգ հիւսիսային Ամերիկայ յերկրին Լապրատորայ. Այս ազգ ունի զերկայն մօրուս և զգենու բրճոք յամ ժմկի. և ուտէ հում զկերակուրս. Դանեզք եղեն առաջին գտիչք սր. Դրեթէ այս ազգ միայն է Ամերիկայ, որ ոչ կարէ ընտանեցուցանիլ: Յայս անուն կոչի և գաւառ նց:

Էտէմպուրկ. կամ **Էտիմպուրկ**. (այ) ‖ մայրաքաղաք Սքօցիոյ՝ կանխաւ աթոռ թագաւորաց նորա. Ունի զբերդ հզօր, որ գոլով 'ի վր անմատոյց լերին միոյ, համարի անառիկ, և պղպրատուն մի հռչակաւոր և զպալատն արքունի:

Էրէ. ‖ վայրի անասուն. եապանի ճանավար:

* * *

Ը

Ըղձականութի՟. ‖ խղձ. ըղձութի՟. փափագ:

Ըղձակերտ. ‖ ըղձալի. ցանկալի. մերձ՝ խնամով կմ՟ հաւասով չինած:

Ըմբռնումն. ‖ մերձ՝ մտառուի՟. ճանաչումն. կարծիք:

Ըմբոստ. ‖ որ ոչ կամի հնազանդիլ. ապստամբ. դիմադարձ:

Ընդածել. ‖ իբր է՟ իւր ածել. առաջնորդել. ուղղել 'ի ճանապարհ. յառաջ տանել ճանապարհ ցուցանելով:

Ընդանցանողութի՟. ‖ Թափանփանցողութ̃. մէկ դինէ մէկալ դին անցնիլը:

Ընդգոգել. || ը̃ մտանել. ՚ի ներքս մտանել:

Ընդհատ. || պակաս. նուազ:

Ընդհատել. || միջահատել:

Ընդոստուցանել. || ոստուցանել ը̃ անցս ինչ. ընդոստ կմ̃ շեշտակի անցուցանել:

Ընթերակայ. || օգնական. նպաստաւոր.

Ընթարկութ̃. || ենթարկութին. հպատակութին.

Ընկճիլ. || ներքեւ անկանիլ. խոնարհիլ. յաղթիլ:

Ընձեռել. || տալ. մատուցանել. մերթ՝ վարել:

Ընձեռումն. || մերթ՝ տուրեւառութին. խօսակցութին. վարումն:

Ընձիւղումն. || բողբոջումն. ծլիլը. սկսումն (բուսոց):

Ըռնգեղջիւր. || գազանաբարոյ կենդանի՝ մեծութ̃ նման փղի. որ ունի եղջիւր մի ՚ի վր̃ ըռնգաց. տաճկ. քէչկէրտան կմ̃ քէրկէրտան:

Ըսթէռլին, կամ լիրէ ըսթէռլին. || տեսակ ինչ դրամոյ Անգլիացւոց. որ արժէ իբր ինն կամ տասն ղուռուշ:

Ըստանձնել. || յանձն առնուլ. տանուլ ՚ի վր̃ իւր. մերթ՝ գնել ՚ի վր̃. յանձն առնել:

Ըստեթրապօն. || դերահռչակ երկրագիր, իմաստասէր եւ վիպասան ծնեալ յԱմասիա. Եղեւ աշակերտ Սէնարքոսի Ճեմական փիլիսոփայի. Բայց յետոյ ընդգրկեաց զաղանդն Ըստօիկեանց. Ճանապարհորդեաց ՚ի զանազան երկիրս առ՚ի նշմարել զկայաւորութի տեղեաց եւ զվարս ժողովրդոց. Սա ծաղկէր առ ժմ̃կք Օգոստոս Կայսեր, եւ մեռաւ առ Տիբերեաւ յամի ան̃ իբր 25. ՚ի խորին ծերութե. Շարադրեալ էր զբազում գործս, յորոց ոչ մնաց, բայց եթէ երկրագրութի իւր ՚ի 17 դպրութիս:

Ըստնանել. || նուաճել. յաղթել. ընթադրել:

Ըստրուկ. || հպատակ. ծառայ:

* * *

Թ.

Թաթարաստան. || մեծ երկիր, որ ունի աւելի ք̃ զերրորդ մասն Ասիոյ՝ ձգեալ ը̃ հիւսիսակողմն. Բաժանի ՚ի Մոսկովականն, ՚ի Չինացւոցն եւ յանկախն. Անկախն յատկապէս կոչի մեծ Թաթարաստան. և բնակեալ է 'ի զանազան տեսակ Թաթարաց. Կոչի փոքր Թաթարաստան կամ Խըրըմական այն գաւառն, որ է հարկատու թագաւորին Թուրքաց. որև կայացել է ընդ հիւսիսակողմն սեաւ ծովուն. Խըրըմ է մասն նորա:

Թախծիլ. ‖ տխրիլ. յուժ տրտմիլ:

Թակարդել. ‖ 'ի թակարդ արկանել. ըմբռնել. որսալ:

Թաղանթ. ‖ բարակ մաշկ. զար. որ բանձր կըպատէ:

Թամբ. ‖ էյէր:

Թամէմէք. ‖ բառ Ամերիկացւոց. որ թարգմանի բեռնակիր. համալ:

Թանայիս. (Դօն) ‖ մի 'ի գլխաւոր գետոցն Եւրոպիոյ. որ բաժանէ զնա յԱսիոյ. Աղբերակունք իւր են 'ի գաւառին Ռէզանու 'ի Մոսկովաստան. անցանէ ընդ բազում նշանաւոր քաղաքս. և ապա երթեալ անկանի 'ի Մէօտիս ծովակն:

Թանկութ. ‖ թագաւորութիւն ինչ մեծ Թաթարաց, սահմանեալ յարևելից 'ի Չինու, 'ի հարաւոյ թագաւորութին Աւայի, յարևմտից Մողուլստանաւ. 'ի հիւսիսոյ երկրաւ մեծ խանին Կալմուխաց. Բաժանի յերկուս մասունս որոց մինն կոչի յատուկ Թանկութ. և միւսն Թիբէթ:

Թապասքօ. ‖ գետ հիւսիսային Ամերիկոյ 'ի Նորն Սպանիա. որ ձևացուցանէ զկղզի ինչ համանուն:

Թարմ. ‖ նոր. թազէ:

Թարշիշ. ‖ հին ծովեզերեայ քաղաք ինչ հնդկաց հռչակաւոր վաճառատեղի:

Թաւ. (տեղի) ‖ թփուտ. մացառուտ. խոռաճէտ:

Թափ. ‖ ուժգնութիւն. ուժգին դիմեցումն:

Թաքուպա. ‖ քաղաք ինչ 'ի Նորն Սպանիա 'ի վերայ լճին Մեքսիքօի:

Թելադրել. ‖ արկանել 'ի միտս. յուշ ածել. յիշեցուցանել:

Թեմական. ‖ մերթ՝ եպիսկոպոս թեմին:

Թերթ. ‖ թղթի տապաղայ կամ թուղթ:

Թեսաղիա. (Յանեա.) ‖ նահանգ ինչ 'ի մէջ Մակեդոնիոյ 'ի վերայ սպիտակ ծովուն՝ սահմանաւորեալ 'ի հիւսիսոյ Ռօմէնօլիթարեաւ, 'ի հարաւոյ Լիվատիաւ, յարևմտից Ալբանիաւ, յարևելից Արքիպեղագոսիւ, որ է սպիտակ ծովն. Լարիսա է մայրաքաղաքն :

Թեւակոխել. ‖ ջանալ. ճգրտիլ :

Թևակոխութիւն . ‖ ջանք . ձկտումն առ՚ի առնել ինչ :

Թէատրոն . ‖ տեսարան . կամ ասպարէզ . մէյտան :

Թէրրա Ֆէրմա. (բառ իտալական՝ թարգմանի՝ երկիր հաստատուն) ‖ Գաւառ Ամերիկոյ ընդ մէջ կղզւոյն Թրինիթայի և ցամաքալեզուին Փանամայի :

Թէծէուքօ . ‖ քաղաք հիւսիսային Ամերիկոյ ՚ի Նորն Սպանիա ՚ի վ̃ր լճին Մէսիքօի :

Թիբեթ . ‖ թագաւորութի մեծ Թաթարաստանին. որ է մասն թագաւորութեն Թանկութայ :

Թիթեղն . ‖ ոսկու, արծաթի, պղնձի բարակ տախտակ :

Թիլէ . կամ Թուլիս. ‖ տես Իսլանդա :

Թիկունք . ‖ մերթ՝ օգնութիւն . նպաստ :

Թլասքալա . ‖ երևելի քաղաք հիւսիսային Ամերիկոյ ՚ի Նորն Սպանիա՝ մայրաքաղաք համանուն գաւառին . որ առնէ մասն նախարարութեն Մէսիքօի . Բնակեալ ազգն ՚ի նմա կոչին Թլասքալացիք:

Թխպանալ . ‖ մթանալ . խաւարիլ :

Թնդանօթ . ‖ մեծ հրետ պատերազմի . թօփ :

Թշնամանել . ‖ նախատել . անարգել :

Թոշակ . ‖ եօլէֆէ . հախ . մերթ՝ եկեղեցական հասոյթ կամ կէլիր . որ տուել լինի երիցու կամ ասպետի վայելել :

Թոշակաւոր . ‖ որ ունի կամ վայելէ զեկեղեցական թոշակ կամ հասոյթ :

Թոպել . ‖ չարաչար գանել . ծեծքել :

Թուղ . (ըստ ոմանց՝ Տիտղոս) ‖ հիմն իրաւանց . կամ իրաւունք . որով ունի ոք օրինաւորաբար զիշխանութի կամ իրս ինչ :

Թումբ . ‖ արգելք (ջրոյ .) հողաբլուր :

Թուտէլա . ‖ քաղաք Սպանիոյ ՚ի թագաւորութեն Նաւառրայի :

Թուրմ . ‖ թրջոց . կամ իրք թրջեալք , և դնելով ՚ի միասին խմորեալք :

Թուփինամպօսք . ‖ վայրենի ցեղ ինչ Բրազիլեայ ՚ի մէջ հարաւային Ամերիկոյ բնակեալք առ համանուն գետով . Նոյն գրեթէ միշտ ՚ի պատերազմի ընդ մօտատաւորաց իւրեանց՝ ոչ ունելով ոչ թագաւոր և ոչ իշխան· ուտեն հրճուանօք զմարմին կալանաւորաց իւրեանց· և են բնաւին մերկք։

Թուգուման· ‖ գաւառ հարաւային Ամերիկոյ 'ի մէջ Փարակուայեայ։

Թրակիա· (այժմ, Ռօմանիա, որ է Ռուռումէլի) ‖ գաւառ Տաճկական Եւրոպիոյ· որ ունի 'ի հիւսիսակողմն զՊուլղարիա, ընդ արևելս զսեաւ ծովն, ընդ հարաւ զսպիտակ ծովն և զծովն Մառմառայի և ընդ արևմուտս զՄակեդոնիա։

Թրինիթա· ‖ քաղաք հարաւային Ամերիկոյ 'ի ցամաք երկրին 'ի Նոր Թագաւորութեն Գրանաթայի 'ի վր̃ Մատտալէնա գետոյն։

Թրծել· ‖ եփել, կամ հրով կարծրացուցանել զկաւեղէնս։

Թօննէլլաթ· ‖ չափ կմ̃ կշիռ ինչ բեռին նաւու, որ է երկու հազար լիպրայ։

Թօշնիլ· ‖ թուլանալ· տկարանալ· թարշամիլ։

Թօրտէսիլլաս· ‖ հզօր քաղաք Սպանիոյ 'ի թագաւորութեն Լէօնու։

Ժ

Ժայռ· ‖ մեծ քար ցցուեղ ('ի ծովու·) խայա։

Ժիպակ· ‖ ճիվա· կմ̃ ժիվա։

Ժպրհիլ· ‖ յանդգնիլ· վստահանալ· լրբիլ։

Ժպրհութիւն· ‖ յանդգնութիւն· լրբութիւն։

Ժտանք· ‖ սաստիկ աղաչանք· թախանձանք։

Ժտել· ‖ թախանձել։

Ի

Իդէ) գաղափար·
Իդէայ·) մտաւոր տեսակ· ճանաչումն։

'Ի դերև ելանել· ‖ պօչ ելնել։

'Ի դերև հանել· ‖ ընդունայն առնել·

Իլլինէզք· կամ Իլլինօիսք· ‖ վայրագ ժողովուրդք հիւսիսային Ամերիկոյ 'ի մէջ Նոր Ֆրանսիոյ առ մեծ համանուն գետով բնակելք։

Ինդոս կամ Հնդոս· ‖ մեծ գետ Ասիոյ· որ տայ զանունն բովանդակ Հնդկաստանի· Աղբերակունք իւր են յԻմաուս լերին։

Ինտիկ կամ Հնդիկ փայտ· ‖ տես Բրազիլէճ։

Ինքայ· ‖ 'ի բարբառս Փէրուացւոց նշանակէ արքայ կամ ինքնակալ:

Իպրիտ. || ծնեալն 'ի տարբեր պայմանի եղեալ անձանց. որպէս 'ի տեառնէ և յաղախնոյ. կամ յԵւրոպացւոյ և յԱմերիկացւոյ:

Իռլանտիա կամ **Իռլանդա.** (ըստ Նախնեաց՝ Հիբեռնիա) || մի 'ի Բրիտաննեան կղզեաց՝ մեծագոյնն զկնի կղզւոյն Մեծին Բրիտաննիոյ. Սահմանաւորեալ է յարևելից 'ի մրրկալից ծովէ իմքէ կոչեցելոյ ծով Իռլանտայի կամ Քանալ սրբոյն Գէորգայ. որ զատուցանէ զնա յԱնգլիոյ. յորմէ տարակաց է 15, փարսախ. և 'ի Սքօցիոյ, յորմէ հեռի է 5. փարսախ. Մայրաքաղաք սորա է Տուպլին:

Իռօքքհէզք. || երևելի ազգ հիւսիսային Ամերիկոյ առ ափամբք Օնթարիօ Լճին ընդ մէջ նորոյն Անգլիոյ և նորոյն Ֆրանսիոյ. Սոքա ամենեքեան են վայրագք համարձակք և ընկերակցեալք ընդ իրեարս:

Իսլանտիա. կամ **Իսլանդա.** (ը̅ս̅ Նախնեաց՝ Թուլէա) || մեծ կղզի Ովկիանոսի ընդհիւսիսակողմն Եւրոպիոյ, երկայն՝ իբր 160 փարսախ. Լայն՝ 60. Զընթացս երկուց ամսոց ամառն արեգակն ոչ մտանէ երբեք ըստ բոլորին 'ի հորիզոնէ իւրմէ. և 'ի̅ արևադարձն ամառան և ձմեռան ոչ ծագէ երբեք բոլորովին, այլ տեսանի միայն կիսովչափ, և մինչև յերկուս ժամս զկնի կէսաւուրն մտանէ բնաւին:

Իսկաքանչ. || իսկական. ճշգրիտ. հաւաստի:

'Ի վար արկանել. || վարել. 'ի գործածել:

Իտալիա. || մեծ ցամաքակղզի Եւրոպիոյ շրջապատեալ 'ի միջերկրական ծովէ և յԱլպեաց. որք բաժանեն զնա 'ի Ֆրանսիոյ. Են 'ի նմա բազում մանր տէրութիւնք որպիսի են Հռոմայն, Նէապոլսոյ, Ծերակոյտն Ճ'ենովայի, և Վենետկոյ. Տուքսու̅ի Մանթովայի, Ֆերրարայ, Փարմայի և ն̅. Մայրաքաղաքն է Հռոմ:

Իրազգաց.) || բանը իմացող.
Իրազեկ.) զգացող. վուխուֆ:

Իրակել. || գործել. վարել.

Իրակութի̅. || գործառնութի̅. մերթ՝ հնարագործութի̅. խորհուրդ:

Իրաւաբանութի̅. || դատաւորու̅թի.

րուն. դատաւորական իշխանութեն :

Իրաւախոհութի. ‖ միաբանութի. ուզլաշմիշ ըլլալը :

Իրօքքացիք. ‖ նոյն որ՝ Իրօքքըհեզք. տես :

Իւքաթան. ‖ մեծ գաւառ հիւսիսային Ամերիկոյ 'ի նորն Սպանիա հանդէպ կղզւոյն Քուպայ, գտեալ 'ի Ֆերտինանտոսէ Քօրտովայ յամին 1517. Մէրիտա է մայրաքաղաքն :

* * *

Լ

Լախտ. ‖ գաւազան, որ ունի 'ի ծայրն գնդունտ ինչ. թօփուզ :

Լայնութի. ‖ ըստ աշխարհագրաց՝ է տարածութի կամ միջոց երկրագնտոյս 'ի հասարակածէն մինչև ցԲևեռան. Բաժանի 'ի հիւսիսային և 'ի հարաւային. և իւրաքանչիւրն թուի 90. աստիճան. տես և Աստիճան :

Լապրատոր. ‖ մեծ գաւառ հիւսիսային Ամերիկոյ մօտ 'ի նեղուցն Հուտսօնու. Կայացեալ է ընդ ցուրտ կլիմայի. և բնակիչքն են վայրագք կոչեցեալք Էսքիմոուքք :

Լափլանթա. ‖ տես Փլանթա :

Լափօն. ‖ կմ՛ Լափօնացի. որ է 'ի Լափօնիոյ :

Լափօնիա. ‖ մեծ երկիր ընդ հիւսիսակողմն Եւրոպիոյ և և Սքանտինաւիոյ՝ ը՟ մէջ սառնային ծովուն, Նօրվեգիոյ, Սվետիոյ և Ռուսիոյ. Բաժանի 'ի Լափօնիա Դանիական կամ հիւսիսային, 'ի Սվետական կամ հարաւային, և 'ի Մոսկովական կամ արևելեան. 'Ի ձմեռան են անդէն երեք ամիսք շարունակ գիշեր. և յամառան նոյնպէս երեք ամիսք շարունակ տիւ. երկինքն գրեթէ միշտ պարզ է. և օդն զերծ յամ՛ տեսակ գոլորշեաց պատճառաւ բուռն հողմոց, որք շնչեն անդէն :

Լերկ. ‖ անմազ. թիւյսիւզ :

Լէէվարտ. ‖ տես Քարֆիպաքի :

Լէրի. (Ճօհաննէս) ‖ հռչակաւոր գործակալ ազգաւ Գաղղիացի ծնեալ 'ի Մարճէլլէ գիւղ Պուրկօնտիոյ կամ Պորկոննոյ. Սա մինչդեռ պարապէր յուսմունս իւր 'ի Ճէնէվրա, առաքեցաւ 'ի փրօթէսթանթայն Ճէնէվրայի 'ի Պրասիլէ հանդերձ երկու ընկերօք յամին 1556. և յետ միոյ ամի դարձաւ 'ի

Ֆրանսիա և շարադրեաց զպատմութ՟ի ճանապարհորդութ՟ե իւրոյ. որ գովեալ է 'ի ներհունաց:

Լէօթանկ. կ՟մ **Լէաօթունկ.** ‖ մեծ գաւառ Ասիոյ ը՟ մէջ Չինու, ծոցոյն Քանկայ, Քօրէայ և մեծին Թաթարաստանի. Լէաօյանկ է մայրաքաղաքն:

Լէօկանա կամ **Լէօկանէ.** ‖ քաղաք և գաւառավայր գեղեցիկ Ամերիկոյ, առատացեալ գեղընչով, լեղակաւ, եղեգամբք, և ա՟մ պտղովք:

Լէօն. ‖ գաւառ Սպանիոյ հանդերձ անուամբ թագաւորութ՟ե. Սահմանի 'ի հիւսիսոյ Ասթուրիաւ, յարեւմտից Կալիցիաւ և Փօրթուկալլիաւ, 'ի հարաւոյ և յարեւմտից հին Քասթիլլիաւ. Բաժանեալ է յերկուս հաւասար մասունս 'ի Տուրօ գետոյն. Ունի մայրաքա. զԼէօն:

Լիպրա. (Նախնիք կոչէին լիտր) ‖ է չափ ինչ ծանրութ՟ե. և է կրկին՝ մեծ և փոքր. մեծն է հարիւր քառասուն և չորս տրամ. իսկ փոքրն իննսուն և վեց տրամ:

Լիսպօնա. ‖ վաղեմի և հռչակաւոր մայրաք՟ղք Փօրթուկալլիոյ. աթոռ թագաւորի և արհիեպ՟սի որ ունի զանուն պատրիարգի. Նաւահանգիստն իւր՝ մի յընդարձակագունիցն Եւրոպիոյ՝ ունի զձեւ կէս շրջանակի միոյ, և զերկայնութ՟ իբր 5. փարսախաց. այլ ոչ է կարի աներկեան 'ի հողմոց. Շինեալ կայ 'ի վ՟ր եօթն բլրոց և Թակոս գետոյն:

Լիվադիա. ‖ գաւառ ինչ Յունաստանի 'ի մէջ Եանիայի և Մօրայու. որ 'ի հնումն կոչիւր Աքայիա. որոյ գլխաւոր քաղաք է Աթէնք:

Լիրա կամ **Լիրէ.** ‖ տեսակ ինչ դրամոյ, որ արժէ քսան սօլտի. որ է իբր 23. ստակ ստակի:

Լիրէ ըսթէրլին. ‖ տես Ըսթէռլին:

Լկանք. ‖ ազգի ազգի նեղութ՟ի. չարչարանք:

Լծակցութ՟ի. ‖ առիթ. դիպուորութ՟ի. կամ բազում պատճառաց 'ի միասին հանդիպումն, յորմէ յառաջ գայ գործ ինչ:

Լուքայեայք. ‖ կղզիք հիւսիսային Ամերիկոյ 'ի մէջ ծովուն հիւսիսոյ շուրջ զարեւադարձիւն խեցգետնոյ. որք պատկանին առ Անթիլեայսն. Յայսց կղզեաց

Քրիստոփորոս Քօլոմպոս սկիզբն արար գտմանն Ամերիկոյ. Գլխաւորքն են չորեքտասան. այլք փոքրիկք են յոլովք. Առաւել երեւելին է Պահամա :

Լուքայօս. ‖ նոյն է ը վերինոյն:

Լրջմտութի. ‖ լրջութի կմ արժնութի մտաց. զգօնութիւն :

Լօնտրա. կամ **Լօնտինոն.** ‖ մի ՚ի մեծագոյն, փարթամագոյն և առաւել ծաղկեալ քաղաքացն աշխարհի՝ մայրաքա՛. մեծին Բրիտաննիոյ, աթոռ թագաւորութն Անգղիացւոց. յորում բնակին ոգիք իբր միլիոն մի. Կայացեալ է ՚ի գաւառին Միտըլէսէքսայ ՚ի վերայ Թամիզ գետոյ :

* * *

Խ

Խաժամուժ. ‖ վայրագոյնքն ժողովրդոց, կմ անարգ մասն ժողովրդեան. ռամիկ:

Խոհանոց. կամ **խոհարան.** ‖ տեղի եփելոյ զկերակուրս :

Խաղախ. ‖ կաշի. մորթ :

Խահրել. ‖ խանգարել. աւերել. գօսանալ:

Խայտալ. ‖ ցնծալ. ոստոստել յուրախութէն :

Խան. ‖ բառ պարսից. պետ. նահապետ. իշխան :

Խանդաղատ. ‖ գորովական. կաթոգին. որոյ ոգին կմ սիրտն ՚ի սաստիկ սիրոյն երեւի հալիլ կամ շարժիլ ՚ի տեղւոջէն :

Խաշնդեղ. ‖ արմատ ինչ բժշկական. ռէվէնտ :

Խաչակիր.)
Խաչանիշ.) ‖ այսպէս անուանին զօրքն և ըհանուր միաբանութին քրիստոնէից, որք երթային ՚ի պատերազմ ընդդէմ անհաւատից և Հերձուածողաց՝ ունելով զնշան խաչին ՚ի կուրծս :

Խարխափ. ‖ երկաթի գործիք ձանկաւոր. որ մխեալ ՚ի յատակս ծովու դադարեցուցանէ զնաւն յընթացից :

Խարխլել. ‖ խլխլել. քայքայել. աւրել:

Խափշիկ. ‖ հապէշ. և ըհանրապէս ամենայն սեւամորթ :

Խելամտել. ‖ խելքը մտնել. հաստատ հաւատալ. համոզիլ :

Խեցի. ‖ կարծր կեղեւ խեցեմորթաց, կամ ժժմանց ծովային :

Խէթ. ‖ վիրաւորումն սրտի. տհաճութի. խաթրպէնտ լինիլ :

Խեժ. ‖ կպչուն հիւթ. որ թորէ 'ի ծառոց ընդ կեղեւն. ռամկ. զամխ:

Խեթել. ‖ գրգել. գրգռել. տիւրթմիշ անել. մերթ՝ խաւթրին դպչել. վշտացնել. տհաճել:

Խժաբար. բարբարոսաբար. անողորմաբար:

Խժական. ‖ բարբարոսական. անողորմ. անագորոյն. վայրենաբարոյ:

Խժդժագոյն. ‖ առաւել խուժադուժ. վայրենագոյն:

Խիղախութ՟ի. ‖ համարձակութ՟ի. քաջասրտութ՟ի. կամ յանդգնութ՟բ և սրտեղութ՟բ 'ի վ՟ր յարձակելն:

Խիզախումն. ‖ նոյն է վերնոյն:

Խիթալ. ‖ կասկածիլ. երկնչիլ:

Խղճոտ. ‖ լի աւելորդ խղճիւք կամ խղճահարութ՟բ:

Խճողիլ. ‖ խնճախընճ լցվիլ:

Խնամոտ. ‖ փոյթեռանակ. ջանացող. հաւասլը:

Խնդրակից. ‖ ընդ այլում ումեք խնդրօղ զպաշտօն կամ՝ զշնորհս ինչ:

Խոխոմ. ‖ ծործոր, ճանապարհ գետոց. որոշեալ տեղին է որ հոսէ ջուրն ամփոփեալ 'ի միասին. կամ՝ հոսանք ջուրց 'ի մէջ երկուց անձկացոյն ցամաքաց:

Խողխողել. ‖ չարաչար սպանանել:

Խոյանալ. իբրև զխոյ յարձակիլ 'ի վ՟ր:

Խոյզ. ‖ խնդիր. որոնումն, քննութ՟ի:

Խոշոշել. ‖ կոտորել. սպանանել չարաչար:

Խոշտանգել. ‖ նեղել. չարչարել:

Խոչ. ‖ խափան. արգելք. էնկէլ:

Խոչընդակն. ‖ աչից էնկէլ. քէօնտէլէ. տես և Խոչ.

Խոչընդոտնիլ. ‖ արգել ոտից լինել. խափանիլ:

Խոպոպումն. ‖ արուեստի գոռուղ կամ խըլըճըլս լինելն հերաց:

Խորաչափ. ‖ գործիք չափելոյ զխորութ՟ի ծովու:

Խորհրդածել. ‖ խորհուրդ առնել. մտածել:

Խորշանալ. ‖ 'ի խորշ ինչ մտանել. ամփոփիլ:

Խորշոմիլ. ‖ կնճռոտիլ. թոշմիլ. ո՟պ երեսք ծերոցն:

Խորտաբորտ. ‖ առապար. դարուփոս. ոչ կոկ:

Խուել. ‖ վնասել. ինճիթմիշ անել. դպչել:

Խուզարկու. ‖ հետազօտ. որոնող:

Խուժադուժ. ‖ ամենեւին վայրենի կամ՝ բարբարոս:

Խուժան. ‖ ամբոխ. խուժբ

խառնիճաղանջից :

Խուժել. || բազմութեամբ դիմել կամ յարձակել 'ի վր:

Խուճապ. || շտապ փախչելոյ. փաղփաղումն.

Խուճապել. || շտապել. փութալ 'ի փախչել :

Խուսափել.) || խոյս տալ. կրզել սաւուշմիշ ըլլալ:
Խուսել.)

Խտրանք.) || ընտրութի. որոշումն. մերթ որոշեալ ծէս կամ արարողութի:
Խտրութի.)

Խրախճան. || խնճոյք. կոչունք. զիաֆէթ:

Խրախոյս. || քաջալերութի. սիրտ տալը:

Խրախուսել. || քաջալերել. վառել զյոյսն. սիրտ տալ:

Խրախուսութի. || քաջալերութի. արծարծումն յուսոյ:

Խրամ. || փոս շուրջ զքաղաքաւ. քաղաքի խէնտէկ:

Խրամատել. ընդմիջահատել. կամ միջահատել:

Խրոխտական. || սպառնական. աչառկու. գոռոզական:

* * *

Ծ.

Ծագ. || վերջին ծայր որոյ և իցէ իրի:

Ծածանել. մեղմ շարժել. կամ ծփծփէնմիշ ըլլալ. ինչպէս ջրին երեսը հանդարտ քամիով:

Ծանրակշիռ. || ծանր կշռող. մեծ վարկումն ունող. միտքը հակող. մեծ բան:

Ծանրակշռութի. || մեծ վարկումն. ծանրութի. մեծութի իրին:

Ծանգուէպար. || սահման Ափրիկոյ 'ի մէջ Գաֆրերիոյ առ ծովուն Հնդկաց. Տարածանի 'ի հիւսիսոյ 'ի հարաւ 'ի Ռուապօ գետոյն մինչև ցԹագաւորութիւն Մոռոքքայ. և պարունակէ զբազում փոքրիկ թագաւորութիւնս. որոց բնակիչք ըստ մասին են Մահմետականք և ըստ մասին կռապաշտք:

Ծիր. || գիծ բոլորակ, շրջանակ:

Ծնգիլ. || ծիւրել. մաշել. տկարանալ:

Ծոպ. || փիւսկիւլ. սաչախ:

Ծովեայք. || ծովային զօրութիւք. կամ նաւք իւրք տէրութեն:

Ծպտել. || անծանօթ լինել. թէպտիլ ըլլալ:

Ծոց (ծովու). || կոչի և խորշ և գոգ ծովու. որ մտանէ 'ի ցամաք, և է փակեալ յա̄մ կողմանէ բաց 'ի բերանոյն. Ծոցքն կա̄ խորշքն երեւելի իմն տա-

րաբածութիւն կոչին ծովք. Պարտ է զանազանել զծովս յատուկս՝ անյատուկս՝ ընդմիջականս՝ և անընդմիջականս. Յատուկ ծովքն Ովկիանոսի զատուցեալ են 'ի բնական կոպարաց. և ոչ ունին զհաղորդութիւն ընդ Ովկիանոսի, բայց եթէ միջնորդութ̃ նեղուցի միոյ. Այսպիսի է ծովն Միջերկրական. Անյատուկ ծովքն են անձկագոյնք 'ի մուտս և ընդարձակագոյնք 'ի կողմանս ծովուն, որոց են մասն. Այսպիսի է ծովն Չինու. Անընդմիջական ծովն է այն, որ հաղորդի անընդմիջաբար ընդ Ովկիանոսի. որպէս Պաղտիականն և ծովն Կարմիր. Ընդմիջական ծովն է այն, որ այլով ինչ խորշիւ զատուցեալ է յՈվկիանոսէ:

Կ

Կազդուրել. ‖ զօրացուցանել. ուժովցնել:

Կազդուրիչ. ‖ զօրացուցիչ. ուժովցնող:

Կալանաւոր. ‖ ըմբռնեալ. բանտարկեալ:

Կալանաւորել. ‖ կալանաւոր առնել. ըմբռնել:

Կալեր. ‖ երկայնաձև նաւ թիակարելոյ 'ի պէտս պատերազմի. չէքթիրի: Նաւարկել 'ի կալերս. դատապարտել 'ի թիակարութի:

Կալէօն. ‖ մեծ նաւ. ղալիօն:

Կալիֆօնիա կմ՛ Կալիֆօռնիա (Նոր) կոչեցեալ եւ Կուատալյայարա. ‖ սահման հիւսիսային Ամերիկոյ ընթերակայ Նորոյն Սպանիոյ. Էն անդ հանք արծաթոյ և պղնձոյ. Բնիկք երկրին են մոլեալք 'ի սէր կաքաւման. և սովոր են զուանաւորել զմարմինն և զարդարել զգլուխն բրկօք, այրնիքն, ճղալօք թռչնոց և փետրօք՝ ըստ սարասի Չափիօնացւոց:

Կալէս. ‖ գաւառ Անգլիոյ հանդերձ անուամբ նահապետութե̃ առանձնեալ ընդ իրաւանց յաջորդութեան թագաւորութեն. Այս գաւառ է գրեթէ հինգերորդ մասն բոլոր թագաւորութեն. և ժողովուրդք իւր խօսին լեզու ինչ մասնաւոր իւրեանց միայն:

Կալիպիս. ‖ ժողովուրդք հարաւային Ամերիկոյ 'ի մէջ Կուիանայ առ ծովեզերբն՝ ենթարկեալք Հօլանդէզաց:

Կահ. ‖ կարասի. անօթ. թէճէմիլէթ. էշիա:

Կահաւորիլ. ‖ Հարկաւոր կահիւք պատրաստիլ. հանդերձիլ:

Կաճառ. ‖ խումբ. ժողով. գունդ:

Կամակար. ‖ ինքնայօժար. կամաւոր:

Կայան. ‖ փոխանակ սահմանադրութե̃ն:

Կայաւորութի̃. ‖ զետեղումն. դիրք:

Կայթումն. ‖ ծափ զծափի հարկանելն 'ի նշան հաւանութե̃ն գովութե̃ն:

Կայմ. ‖ ստոճար սիւնաձև փայտն՝ կանգնեալ 'ի մէջ նաւուն առ 'ի վեր ունել զառագաստն. սէրէն տիրէկի:

Կայկայիլ. ‖ հաստատիլ. արմատանալ. կայուն լինել:

Կայունութի̃. ‖ հաստատութի̃. հաստատ բնակութի̃:

Կայունաւորութի̃.) ‖ հաստատ
Կայունուրդ.) բնակութի̃. ստացուած կայուն իրաց. կալուած:

Կայունաւորիլ. ‖ հաստատ բնակիլ. բնականալ. տուն տեղ ըլլալ:

Կայունանալ. ‖ բնականալ. հաստատել զբնակութիւն ուրեք:

Կայտառ. ‖ կենդանի. ոգելի. մերթ՝ յայտնի յայժ ակն յանդիման:

Կայտառութի̃. ‖ կենդանականութի̃. ոգելիութիւն. լրջութի̃:

Կանթ. ‖ կոթ պտղոց, բուսոց կամ այլ իրաց:

Կանխիկ՝. ‖ յառաջնմէ. փեշին:

Կանճէ կամ Կանճէս. ‖ մեծ գետ Հնդկաստանի յԱսիա, որ ունի զաղբերակունս իւր 'ի լերինսն, ուր սահմանեն զփոքրն Թէփէթ մեծին Թաթարաստանի ընդ հարաւային արևելս. Ընթանէ ընդ բազում թագաւորութիւնս. և թափի երկու բերանովք 'ի խորշն Պէնկալայի. Ջուրք Կանճեայ են ամենեքին յստակք և հարուստք ոսկւով և պատուական քարամբք. Համարեալ լինի 'ի Հնդկաց իբր գետ իմն սրբայնացեալ. կամ նուիրեալ այ̃. և ունին առ այն զանպահական իմն ակնածութի̃. Մեծագոյն շնորհն, զոր հաւատան նոքա կարել ընդունել՝ է մեռանելն 'ի ջուրսն Կանճեայ:

Կապալ. ‖ արքունի տուրք. հարկ. վէրկի:

Կապիճ. ‖ մերթ՝ ընդունարան կամ բուն. մէկ բանիմը խուլուխ:

Կառան. || հաստ չուան. հալաթ:

Կառուցանել. || կացուցանել. կանգնել. ղուռմիշ անել:

Կասեցուցանել. || դադարեցուցանել յընթացից. նահանջել:

Կասիա. || խիարշէմպէ. ֆըլուզ:

Կասպիական կամ Կասպից (ծով) || ծով մեծ Ասիոյ ընդ մէջ կայսրութեանն Ռուսաց ընդ հիւսիսակողմն և ընդ արևմուտս և Պարսկաստանի ընդ հարաւակողմն և Թաթարաստանի ընդ արևելս. Այս ծով ոչ ունի զհաղորդակցութիւն ինչ երևելի ընդ այլոց ծովուց. հանդերձ այսու կարծիք է թէ կցորդի ընդ պարսկային ծոցոյն. Է յոյժ փոթորկաւոր և նուազ նաւարկելի քան զայլ ծովս. Երկայնութիւն իւր պարտի առնուլ լինիլ ՚ի հիւսիսոյ ՚ի հարաւ և ոչ յարևելից յարևմուտս. որպէս կարծիք յառաջ քան զգիտութիւն, որք արարեալ եղեն հրամանաւ մեծին Պետրոսի կայսեր Մոսկովիոյ. Կայ ՚ի մէջ 37 և 47, աստիճանաց լայնութեան և ՚ի մէջ 67 և 73. աստիճանաց երկայնութեան. Ջուրք իւր են յոյժ առաւել աղի ՚ի մէջն քան յեզերսն յաղագս մեծ բազմութեան գետոցն, որք թափին ՚ի ներքս անդր. Առատ է ձկամբք լաւագունիւք քան զայլ ամենայն ծով. Ոչ ունի զտեղատուութիւն և զմակընթացութիւն:

Կար. || առասան. չուան:

Կարասիք. || ուռուպա. խապ-խաճախ, աղըրլըխ (Ճանապարհորդի:)

Կարաւան. || բազմութիւն ուղևորաց. ռամի. քէրվան:

Կարևոր. || հարկաւոր. յոյժ պիտանի:

Կարեվէր. || սաստկապէս. ուժգին:

Կարթագինէ. || վաղեմի և մեծ քաղաք Ափրիկոյ ոչ հեռի ՚ի Թունիզոյ՝ ժամանակաւ նախանձաւոր Հռոմայ. և այժմ այնպէս աւերեալ. մինչզի հազիւ նշմարի տեղի նորա. որոյ բնակիչք կոչէին Կարթագինեցիք:

Կարթագինէ. || մեծ՝ գեղեցիկ և հզօր քաղաք հարաւային Ամերիկոյ՝ մայրաքաղաք համանուն գաւառին ՚ի վերայ ծովեզեր հաստատուն երկրին, շինեալ

նեալ յամին իբր 1562, հանդերձ Եպիսկոպոսապետաւ առաջակարգեցելով նորոյն Կրանատայի :

Կարծիա. ‖ (լասօ տէլա-վէկայ) վիպասան ոմն Սպանիացի, որ գրեաց զպատմութիւն Ֆլօրիտայի և Փէրուայ :

Կարկամութիւն.) քաշկիլը. կծ
Կարկամումն.) խռկռախ ոլորկիլը :

Կարկանդակ. ‖ պօղաչայ. խաթմէր :

Կարոլոս կմ **Կառոլոս** հինգերորդ. ‖ Կայսր և թագաւոր Սպանիոյ և մի ՚ի մեծագոյն նահապետաց, զորս տունն Աւստրիոյ յառաջ ածեալ իցէ. էր որդի անդրանիկ Փիլիպպոսի առաջնոյ արքիդուքսին Աւստրիոյ և Յօհաննայ թագուհւոյն Կասթիլիոյ:

Կերատ (քրաթ) ‖ չափ ծանրութեան. որ է քսանեւչորրորդ մասն ունկւոյ, այս է, Օնցայի. և է յատուկ ոսկւոյ. մերթ՝ աստիճան կատարելութեան կամ բարութեան. Իսկ առ ականագործս է ծանրութիւն չորից ցորենոյ :

Կերպական, ‖ պատկանեալ առ կերպն. մերթ՝ որոշեալ. սահմանեալ. բացայայտ :

Կերպականագոյն. ‖ կերպաւորագոյն. առաւել որոշ. բացատրագոյն :

Կերպականութիւն. ‖ իսկութիւն. մերթ՝ կերպ (արարողութիւն. հանդիսութիւն) սահմանեալ յօրինաց :

Կերպաւորել. ‖ մերթ՝ հրահանգել. վարժել. ուսուցանել :

Կէտ. ‖ որոշեալ նիւթ խօսից. գլուխ բանի. կամ զորմէ է բանն :

Կիտրոն. ‖ աղած ղաւունի :

Կլիմայ. ‖ միջոց երկրի պարունակեալ ՚ի մէջ երկուց շրջանակաց զուգահեռականաց նկատմամբ հասարակածին, այնպէս, զի ՚ի մէջ միոյն և միւսոյն իցէ տարբերութիւն իմն կիսոյ ժամու կամ միոյ ամսոյ յերկայնագոյն տիւս տարւոյն. Են Կլիմայք ժամուց և Կլիմայք ամսոց. Կլիմայք ժամուց առեալ լինին ՚ի հասարակածէն մինչև ՚ի բևեռային շրջանակն յերկաքանչիւր կողմանէ. Սոքա ունին զմեծագոյն տիւն առաւել կարճ կէս ժամու միով ՚ի սկզբանն քան ՚ի վախճանին. Օրինակ իմն, եթէ ՚ի սկզբան Կլիմային մեծագոյն տիւն է 12. ժամ,

ժամ. 'ի վերջն եղեցի 12 և կէս. Կլիմայք ամսոց առեալ լինին 'ի բևեռային շրջանակէն մինչև ցբևեռն. Այսոքիկ ունին 'ի փոխմանին զմեծագոյն տի՛ւն երկայնագոյն ամսով միով քան 'ի սկզբան. Աշխարհօրէն կլիմայից իմացեալ լինի երկիր մի տարբեր 'ի միմեանց կամ վն̃ փոփոխման̃ յեղանակացն, կամ վասն զանազան որակութեանց հողոյն, կմ̃ վն̃ ժողովրդոցն, որք բնակեն անդէն:

Կղկղանք. ‖ աղտեղութիւնք, չիրք. չիրքէֆ:

Կնգուղ. ‖ վեղար. պաշլըխ:

Կնիւն. ‖ խոտ, որ բուսանի 'ի ծովու. և զոր նոյն իսկ ծովն լիզէ և արկանէ առ ափամբք:

Կնիք. ‖ մերթ՝ հանգամանք տարորոշիչ կամ յատկութի̃ անձին ուրուք:

Կնճիռն. ‖ անլուծանելի կապ. հանգոյց:

Կնճռիլ. ‖ պատատիլ ը̃ միմեանս. մճճիլ. թնջկիլ. (հերաց):

Կնքել. ‖ փակել. աւարտել. եզերել:

Կշտամբել. ‖ յանդիմանել. դատել. մեղադրել:

Կոխան. ‖ չրացուած. ղօնճայ. (ծաղիկ):

Կոկորդիլոս. կամ **Կոկոդրիլոս.** ‖ կենդանի չորքոտանի և դեղնագոյն. որ ծնանի 'ի Նեղոս գետն. և է զինեալ մեծամեծ ատամամբք և ճիրանօք. Մորթ իւր է այնպէս կարծր. որ ոչ զգայ զհարուած քարին, զոր ձգէ ոք 'ի նա ձեռամբ: Ասի, թէ սպանանէ զմարդն և յետոյ լայ:

Կողմնացոյց. ‖ (փուսուլա) գործիք նաւորդաց. ուր զետեղի ասեղն մագնիսեն̃. որ ուղղի միշտ 'ի հիւսիսակողմն. և այնու ցուցանէ զկողմանս աշխարհի. որով նաւորդք իմանան, թէ յոր կողմն նաւեն:

Կողոնիա. ‖ անս ∸տառնած և ∸արգունութի̃:

Կոյր զկուրայն. ‖ կուրօրէն. կուրիպէս:

Կոնդոր. ‖ տեսակ ինչ թռչնոյ անչափաւոր մեծութե̃. գտանի 'ի փէրու Ամերիկոյ:

Կոնոն. ‖ պտուղ չամ ծառին, որ Ֆստղի նման է. կամ զինչևիցէ սիւրահի:

Կոշկոճանք. ‖ տառապանք. մեծամեծ վիշտք:

Կոպար. ‖ սահման. սինօռ.

Կորդ. ‖ անգործ. չբրանած. չհերկած:

Կորնթարդ. || կորացեալ և թեքեալ ձև ունող. որպիսի է մակերևոյթ գնտակին կամ արտաքին կողմն գմբեթին, կամարայարկին են:

Կորովի. || քաջ. ուժեղ. զօրեղ:

Կորովութիւն. || զօրեղութիւն. կարողութիւն:

Կուայանա թիմպօ. || տունկ ինչ Ամերիկոյ. որոյ հիւթով տոգորեալ ջուրն արբենան ձկունք և ըմբռնին:

Կուանահանի կամ **Կուանապաքի**. || կղզի հիւսիսային Ամերիկոյ՝ մի 'ի Լուքայիայցն, կոչեցեալ նաև Սան Սալվաթոր. Այս եղև առաջին ցամաքն գտեալ 'ի Քօլոմպոսէ 'ի նոր աշխարհին 'ի 1492, 'ի նմին աւուր, յորում արք իւր խորհեալ էին սպանանել զնա:

Կուատալուփա. || կղզի Ամերիկոյ մի յԱնթիլեայց՝ ընդ մէջ սան Տօմինիկօի, Մարիա կալանտայի. Տէսէատայի և կղզեացն Սէնփերրաթօի:

Կուաքա. || ըստ բարբառոյ փերուացւոց՝ հողաբլուր գերեզմանի, կմ՛ գերեզման:

Կուաքսաքա. || գաւառ հիւսիսային Ամերիկոյ 'ի մէջ նորոյն Սպանիոյ. որոյ մայրաքա″. Անթէքուէրա:

Կուզ. || կենդանի իմն նման աքիսի, այսինքն, կեղինծիկի. սանսար կամ սամոյր:

Կուխանա. || մեծ գաւառ հարաւային Ամերիկոյ՝ ը̄ մէջ Օրինոքոսի և գետոյն Ամազոնեաց ը̄ արևելս փերուոյ. Մինչև ցայժմ միայն ծովեզերք իւր ծանուցեալ են. մէջ գաւառին տեղակալեալ է յանբաւութէ իմքէ վայրագաց. որոց մասն ինչ ունին զհիւղս իւրեանց 'ի մէ̄ ծառոց իբրև զբոյնս թռչնոց. Գաղղիացիք ունին զմեծ մասն ծովեզերաց. Հօլանտացիք վայելեն 'ի միւս այլ մասն:

Կուխաքուիլ. կամ **Կուայաքուիլ**. || քաղաք, խորշ և նաւահանգիստ հարաւային Ամերիկոյ 'ի մէջ փերուոյ. մայրաքա″. համանուն գաւառի միոյ 'ի նախարարութեն Քուիթօի:

Կուինէա. || մեծ և ընդարձակ մասն Ափրիկոյ սահմանակից՝ Նէկրիցիոյ, Հապէշաստանի և Քաֆրէրիոյ. մինչև ցայժմ միայն ծովեզերք իւր ծանուցեալ են. Բաժանի 'ի բարձր և 'ի ստորին Կուինէա.

Բարձր Կուբէնայն պարունակէ զծովեզրն Անղակէթթայի, Տէնսայ, զծովեզրն ոսկւոյ, զթագաւորութիւն Հուդայի, մեծին Արտրեայ և Պէնինու։

Կուպպայ. ‖ կթղայ. գաւաթ. թաս։

Կուռ. ‖ սերտ. ամուր. մամուռ։

Կուսակից. ‖ յարեալ կամ ջատագով միոյ կողման երկպառակութեան։

Կուտակել. ‖ դիզել, դիզաբարդել։

Կտրոց. ‖ գործիք կտրելոյ. ուզի է դանակն. մկրատն։

Կրանաթա. կամ Կրանատա. ‖ գեղեցիկ և մեծ քաղաք Սպանիոյ՝ գլխաւոր համանուն թագաւորութեան, կայացեալ մերձ 'ի գետն Օրոս. Առեալ եղև 'ի Մաւրեաց 'ի Ֆէրտինանտոսէ Հինգերորդէ յամին 1492։

Կրէէնլանտ կամ Կրօէնլանտիա. ‖ մեծ գաւառ ընդ հիւսիսային բևեռն կայս 'ի մէջ Նեղուցին Տաւիսայ, Ֆօրպիշէռայ և 'ի մէջ Իսլանտիոյ. Մինչև ցայժմ ոչ լինին գիտացեալ սահմանք իւր ը՟ հիւսիսակողմն. Հակառակ ծայրագոյն ցուրտ կլիմային իւրոյ՝ երկիրն է յոյժ բերրի, ծովն լի ձկամբք, ծովային գայլիւք, շամբք, որթուք և աքանչելի իմն բազմութեամբ կիտից կամ պալէնայից. Տուրևառութիւն ը՟ բնակչաց այսր երկրի, որք են վայրագք, սկսաւ կորնչել ընդ կէսն չորեքտասաներորդ հարիւրեկին. Թէպէտ Տանէզք ջանացան հաստատել զայն վերստին. բայց մինչև ցայժմ չէ ինչ յոյժ երևելի։

Կրկնել. ‖ մերթ՝ անցանել (ը՟ դերսար ինչ)։

Կրկրել. ‖ դատել. քննել. կամ կշտամբել. յանդիմանել զպակասութիս իւրք։

Կրծիմն. ‖ խոչ. արգելք։

Կրօնաժեռուն. ‖ աշխատաւոր կամ մոլար Կրօն ճշմարտին կամ սուտ ոյ. որով մատուցանի պաշտօն, որ ոչ պարտի կամ որում ոչ պարտի կամ այնու եղանակաւ որ չէ պարտ։

Կրօշ. ‖ չափ ծանրութե. որ կշռէ իբր հինգ տրամ։

Կօա. ‖ մեծ քաղաք Հնդկաց 'ի մէջ ցամաքակղզւոյն այսր քան զԿանճէ. Ալֆօնսոս Ալպուքրուէրքուեան էառ զայն 'ի Հիտալխանէ յանուն թագաւորին փօրթուկալլից յամին

ամին 1508. Յանցեալ դարուն էր բանալի բովանդակ տուրևառուն արևելից, առաջին ճոխավաճառ Հնդկաստանի, և մի յառաւել հռչակաւոր և ընչաւէտ քաղաքաց Ասի. այժմ անկեալ է յոյժ յառաջին վիճակէն. Բնակիչք Կոա են տարբերք ազգաւ և կրօնիւ. Պատմի թէ Կոացիք յորժամ կամին ամուսնանալ, սովորութիւն է դնել զփեսայն և զհարսն 'ի կարծրագոյն անկողնի միում. և յայսմ վիճակի չարաչար գանին 'ի ծնողաց իւրեանց. և ապա հրաւիրին առ հարսանիս:

Կոմէրա. || կղզի Ատլանտեան Ովկիանոսի ը̃ մէջ Կանարեայց, և կղզւոյն Երկաթոյ, և կղզւոյն Թէնէրիֆֆայի՝ իբր 22 փարսախ շրջապատ ունելով և զնաւահանգիստ և զփոքրիկ քաղաք համանուն. Բերրի է և պատկանի առ Սպանիա. որ էառ զայն յամին 1445:

Հ

Հագարացիք. || սերեալքն 'ի Հագարայ աղախնոյն Աբրահամու նահապետին. որք են Արաբացիք և Տաճիկք:

Հակակշռել. || հակաքարշ կամ զուգակշիռ լինել:

Հակամիտութիւն. || հակումն. միտումն. յօժարութիւն:

Հակակրութիւն. || բնական հակառակութիւն. զոր ունին իրք 'ի մէջ իւրեանց. որպէս շունն ընդ կատուի. կամ որթն ընդ սարդ ծառոյն:

Հաղ. || անգամ. հեղ.

Հաղորդական. || հաղորդող. կմ̃ գրաւող 'ի փոյթ ինչ. շարժող առ գործ ինչ:

Համադրութիւն. || շաղադրութիւն. կամ կերտուած.

Համալսարան. || հանրական դպրատուն. յորում ուսուցանին ամ̃ գիտութիւնք կամ բոլոր ընթացք ուսման:

Համախնդրակ. || ը̃ այլում խնդրող. ետեւէն ընկնող (իրիք պաշտօնի կմ̃ իշխանութե̃ն:)

Համակել. || վարակել. տոգորել. զգածել:

Համայն. || ամենայն. բոլոր. բովանդակ:

Համաշխարհիկ. || գաւառակից. հայրենակից. հէմշէրի:

Համակ. || բոլոր. բովանդակ.

Համապատկեռալ. ‖ բարդել կամ յօդեալ բազմաց 'ի միասին:

Համայրը (անձինք) ‖ համարելի. վարկանելի:

Համաքատակ. ‖ համանման. նոյնգունակ:

Համբար. ‖ դարման մթերեալ վ̅ ապագայի. զահրէ:

Համբերատար. ‖ համբերութե̃ տանող. համբերող:

Համեմունք. ‖ պահարեղէնք. որպիսի են ղարէնֆիլ. պիպէռ, և այլն:

Համոզել. ‖ հաւանեցուցանել. ամոքել:

Հայեցողակա̃ն (կէտ) ‖ մտադրական. յոր հային միտօք կամ միտ դնեն վիճաբանողք:

Հայեցողականութ̃.) ‖ հայե-
Հայեցողութիւն.) ցուցմ̃ մտօք. ուշադրութի̃. քննութիւն:

Հայթհայթանք. ‖ միջոց. հնարք հասանելոյ առ վախճան իմն:

Հայիթի. ‖ մեծ կղզի Ամերիկոյ. զոր այժմ անուանեն Սպանիոլա ըստ նախկին կոչմանն Քօլոմպոսի:

Հանգամանք. ‖ հնարք. ջանք. ճանապարհ հասանելոյ առ վախճան. մերթ՝ որպիսութիւն իրին. մերթ՝ պատկանելիքն առ գլխաւոր իրն։

Հանգամանակ. ‖ հերիֆանէ. մերթ՝ յարացոյց. օրինակ. նշան:

Հանգամանակել. ‖ տալ բազմաց մասն մասն. հաղորդ լինել տրոց. կ՟ 'ի միասին ընդ այլոց ստանալ. գործակցել:

Հանգոյց. ‖ մերթ՝ որոշեալ դաշար սուրհանդակաց. մենզիլ, կամ փօստայ:

Հանգրիճել. ‖ 'ի վեր ժողվել. ամփոփել:

Հանգիճումն. ‖ խորհուրդ զհանգամանաց հասանելոյ իմիք. շարժելն և համեմատելն զմիջնորդս առ վախճան ինչ:

Հանգրուան. ‖ կալուած. գիւղ. շէն:

Հանդիսանալ. ‖ երեւելի կ՟ նշանաւոր լինել:

Հանդուրժել. ‖ համբերել. ժուժել. տոկալ:

Հանութ. ‖ շտեմարան վաճառաց. խանութ. կամ մաղազա:

Հանք. ‖ փորանոց. մատէն։

Հաշել. ‖ մաշել. զայլընալ։

Հապճեպ. ‖ երագ երագ. մերթ՝ սաստիկ արագութ̃. շտապում̃:

Հասարակած. ‖ ըստ աշխարհագրաց է գիծ ինչ կամ ծիր, որ բաժանէ զերկրային կամ զերկնային գունտն յերկուս հաւասար մասունս. յորոց այն, ուր է արջային բեւեռն կոչի հիւսիսային կիսագունտ. և միւսն հարաւային. Կոչի և գիշերահաւասար. վասնզի տիւք են հաւասար գիշերոց գրեթէ 'ի բոլոր մասունս երկրի՝ յորժամ այս ծիր անկանի ուղղակի 'ի ներքոյ արեւու:

Հասարակապետութիւն. || Հասարակաց պետութիւն, կամ կառավարութիւն ազատ ժողովրդեան:

Հասարակութիւն. || կարգաւորեալ բազմութիւն, կմ՛ ընկերութիւն բազմաց 'ի միով գլխով ստորակարգեալ:

Հասոյթ. || եկամուտ. կէլիր. խրաճ:

Հաստարան. || նեցուկ. յենարան:

Հաստել. || գոյացուցանել. ստեղծանել:

Հատակոտոր. || կիսատ. թերատ. կտոր բրդուճ:

Հատուած. || խումբ ինչ բաժանեալ յինչեիցէ բազմութենէ. կամ մասն իրիք հասարակութեան առաքեալ յօտար երկիր առ 'ի շէն առնել. զոր և լատին բարբառով երբեմն կոչեմք Կողոնիա:

Հատուածիլ. || բաժանիլ. օցտիլ. գլուխ քաշել:

Հատուածորդ. || մասն կամ ընկեր հատուածոյն:

Հարգունութիւն. || հաստատ բնակութիւն. մերթ՝ հատուած, կամ կողոնիա:

Հարգունական. || մասն հարգունութեան:

Հարգունանալ. || կայունանալ. հաստատ բնակիլ:

Հարթուցանել. || ընդոստուցանել. արտաքս ձգել:

Հարթչիլ. || ընդոստնուլ. ելանել 'ի դուրս. արտաքս անկանիլ:

Հարստահարել. || ճնշել. նեղել. խուել. ծեծքել:

Հարստահարութիւն. || խուումն. ինճիթմիշ անելը. կամ զուլում:

Հարիւրեակ. || միջոց հարիւր ամաց, կամ որոշեալ ժամանակ, որ բաղկանայ 'ի հարիւր ամաց:

Հացի. || տեսակ ինչ վայրէ ծառոյ. տիշպուտաք:

Հաւաստել. || ցուցանել. իսպաթ ընել:

Հաւաստելի. || որ կարէ հաւաստիլ. որ ունի զփաստ կամ զերեւոյթ ճշմարտութեան:

Հաւաստիք. || փաստ. կամ ցուցումն. որով երկբայական ինչ բան յայտնագոյն բանիւ ՚ի յայտ ածի և հաւատայուցանի. ռամկ. խոպալթ:

Հաւատադրուժ. ‖ դրժօղ հաւատոյ կամ խոստման. անհաւատարիմ:

Հաւատաւանդ. ‖ տեսակ ինչ կտակի, յորում տուեալ լինի ժառանգութիւն ընդ հաւատով կմ՛ ընդ խոստմամբ փոխանցելոյ զայն ՚ի յաջորդն:

Հեգնել. ‖ ծաղր առնել. կատակել:

Հելլեսպոնտոս. ‖ նեղուցն Կալլիպօլեայ, որ և կոչի բաղուկ սրբոյն Գէորգեայ. և Տարտանէլլի. որ միաւորէ զԱրգիպեղագոսն ընդ Պրօպոնտեայ. որ է Մարմարայի ծովն. տաճկ. Կէլլիպօլու պօղազը:

Հելլենացի. ‖ սերեալն ՚ի Հելլենէ որդւոյ Դևկալիոնի. այս է Յոյն. Հոռոմ:

Հեղեղատ. ‖ ՚ի հեղեղէ պատճառեալ գետ. սել:

Հեղեղել. ‖ հեղեղաւ կամ յորդութ̄ե ջուրց ծածկել:

Հեճուկ. ‖ ներհակութիւն, հակառակութիւն ընդդէմ կամաց այլոց. նիսպէթ. Առ հեճուկս. ընդդէմ կմ՛ ընդ հակառակս կամաց ուրուք:

Հետազօտ. ‖ հետամուտ իմանալոյ զանցեալ իրս. քաջ քննօղ:

Հետազօտել. ‖ քննել զհետս իրաց:

Հետախուզութի. ‖ խուզումն կամ քննութի հետոց իրաց. մանրամասն կմ՛ ներկուռ քննութի:

Հետաքրքրական. ‖ զարմանալի. օտար. նոր ինչ, որ շարժէ զմարդն ՚ի քննել և ՚ի գիտել:

Հետևակ. ‖ հետևօղ. ետևէն գնացօղ (բազմութիւն:)

Հետևանք. ‖ հետևութի. մերթ՝ իրք բերեալք զհետ իրիք շուրջ:

Հետզհետէ. ‖ հետևաբար. յաջորդաբար. միզկնի միոյ:

Հերոդոտոս. ‖ հայրն արտաքին պատմութեան և հռչակաւորագոյնն ՚ի Յունաց վիպասանից էր որդի Լիքսոսի և Դրիոյ. ծնաւ ՚ի Հալիկառնասոս Կարիոյ, որ է Այալն, 404 ամօք յառաջ քան զՔրիստոս. Առանձնացաւ ՚ի Սամոս կղզին. և ապա ճանապարհորդեաց յԵգիպտոս, յԻտալիա և ՚ի բոլոր Յունաստան. Հատու եղև յայտնիկ ճանապարհորդութիւնս ծագման և պատմութեան ազգաց. և յայտճանէ։ շարագրեաց զինն գրկութիս սքանչելիս. որք մնացել են մինչև ցայժմ։

Հէլիճէլանտ. ‖ կղզի ծովուն Ալէմանիոյ ընդ բերանն Վիսէրայ և Էլպայի գետոցն. Պատկանի առ Տուքայութիւնն Հօլսթէինու։

Հէն. ‖ ասպատակ. չէթէճի։

Հէրրէրա ‖ (Թօրտէսիլլաս Անտօնիոս) Սիպասան Սպանիացի. եղև ատենադպիր Վէսփասիանոսի Կօնծակայ` փոխարքայ Նապօլսոյ և ապա մեծ պատմագիր Հնդկաց առ Փիլիպպոսի երկրորդի արքային Սպանիոյ. որ սահմանեաց նմա զերևելի իմն թոշակ առ 'ի պարաւանդել զնա յաշխատանս մեծագոյն խնամով. Մեռաւ յամին 1625. 'ի հասակի իբր 66 ամաց։

Հերքուլեայ սիւնք. ‖ են երկու լերինք` Կալփէ 'ի Սպանիա և Աբիւլա 'ի Մաւրիտանիա. յորոց միջի է նեղուցն Սէպտէի. որք 'ի հնումս հայեցողաց երևէին իբր երկու սիւնք. Զայսոսիկ Հերքուլեայ իբր սահմանս ճանապարհաց և եզերս տիեզերաց սիւնակերպ կանգնեալս առասպելեն հեթանոսք։

Հերքուլէս. ‖ (ըստ Յունաց` Հերակլէս և ըստ մեզ վահագն.) Դիւցազն Թեբայեցի որդի Արամազդայ. զոր յաղագս բազում քաջութեանց ածացուցեալ պաշտէին հեթանոսք. զորմէ և բազում անհաւանելիս առասպելէին։

Հիարրբէէ. ‖ տունկ ինչ Ամերիկոյ. որոյ հիւթով տոգորեալ ջուրն արբենան ձկունք և ըմբռնին։

Հիճել. ‖ վիճել. կռուիլ։

Հիւթեղ. ‖ լի հիւթով կամ խոնաւութե։

Հիւղ. ‖ յարկ կամ բնակարան 'ի ճիւղոց կամ 'ի յարդից շինեալ. ուր պատսպարին նոքա, որք բնակին 'ի դաշտի. ռամկ. խուլիպէ։

Հիւպատոս. ‖ Թագաւորի մի քեահեա. Գօնսուլ։

Հմայել. ‖ գուշակել. վարկածիւ իմանալ։

Հնախնդիր. ‖ խնդրող հին պատմութեանց. կամ վաղեմի անցից աշխարհի։

Հնդոս գետ. ‖ տես Ինդոս։

Հոգժոտութի. ‖ աւելահոգութի. աւելորդ հոգ գինելոյ. հետաքրքրութի։

Հո-

∸ոլանել · || բանալ · յայտնել :

∸ոլանումն · || խմբումն · ժողովումն :

∸ողաջրեայ · || 'ի Հողոյ և 'ի ջրոյ բաղկացեալ (գունտ:)

∸ոմերոս · || վաղնջագոյն և Հռչակաւորագոյն 'ի մէջ Համօրէն բանաստեղծից Յունաց, և մի 'ի մեծագոյն և 'ի գեղեցկագոյն ուշիմութեանց, որք լեալ իցեն յաշխարհի · Կենայր իբր 100 ամօք յառաջ քան զՔրիստոս · և 300 ամօք զկնի առման Տրօադայ · Եօթն քաղաքք վիճեցին 'ի մէջ իւրեանց վն փառաց լինելոյ Հայրենիք նր · այս է, Զմիւռնիա, Քիոսոս, Կոլոփօն, Սալամինա, Կհիօ, Արկօ, և Աթէնք :

∸ոյակապ · || մեծագործ մեծաշուք :

∸ուտսօն · || խորշ կամ նեղուց Ամերիկոյ դէպ Արջային երկրաց ընդ Հիւսիսակողմն երկրին Լապրատօրայ · որ առեալ է զանուն 'ի ∸ուտսօնայ Անգլիացւոյ, որ եղև գտիչ նորին յամին · 1602:

∸պարտանք · || զարդարանք · պաճուճանք :

∸րաՀանգ · || կրթութիւն ·

∸րաՀանգութի · || խրատ · կարգաւորութի :

∸րաՀանգել · || կրթել · վարժել · խրատել :

∸րամանատար · Հրամայօղ · իշխան :

∸րապարական · || վերաբերեալ առ Հրապարակն, այս է, առ բազմութիւն ժողովրդեան · կամ առ Հասարակութիւնն · որոյ ներՀակն ասի սոսկական · առանձնական :

∸րապոյր · || յորդոր · գրգիռ

∸րապուրել · || գրգռել · շարժել կամ յորդորել առ չարին :

∸րդեՀ · || Հրայրեաց · եանղին :

∸րեշտակութի · || դեսպանութի · էլչիութի :

∸րետ · || Հրացան գործի պատերազմի · թիւֆէնկ :

∸րետաւոր · || ունօղ զՀրետ :

∸րէշաւոր · || ցուցանքաւոր · այլանդակ :

∸րճուանք · || ցնծութիւն · խայտացումն · ճխալն :

∸րոսակ · 'ի վր յարձակօղ · Հէն · թշնամի :

∸րովարտակ · || արքունի Հրամանագիր :

∸րուանդան · || դերասար · որ է ցամաքի քիթ երկայնեալ և ամբարձեալ 'ի ծովս :

∸օլանտա կամ ∸օլանտիա · (նոր)

(նոր) || առնեալ եղեւ այս անուն նախ՝ փոքրիկ նահանգի միում հիւսիսային Ամերիկոյ առ արեւելեան ծովեզերբն ընդ հարաւակողմն նորոյն Անգլիոյ. Երկրորդ գաւառի միում հարաւային երկրաց ընդհարաւ Մօլուքքայից. Երրորդ՝ փոքրիկ սահմանի միում ընդ հիւսիսակողմն Եւրոպիոյ առ նեղուցաւն Հէլիկուցայ:

Հօնտուրաս. || գաւառ հիւսիսային Ամերիկոյ 'ի մէջ նորոյն Սպանիոյ 'ի վր ծովուն Հիւսխոյ, երկայն իբր 150 փարսախ և լայն 80. Գտեալ եղեւ 'ի Քոլոմպոսէ 'ի չորրորդ ճանապարհորդութեան իւրում յամին 1502 Վալլատօլիտ է Մայրաքաղաք իւր:

Ձ

Ձախող. || անյաջող. ձախորդ:

Ձաղկ. || (հեր) ուղիղ. անոլոր. որ ոչ է գանգուր:

Ձգանք (ծովու) տարածութիւն. || երկայնեալ բազուկ (ծովու:)

Ձեռնարկել. || ձեռնամուխ լինել. բուռն հարկանել. սկսանել. բանիւք ձեռք զարնել:

Ձեռնարկութիւն. || ձեռք զարնելը. սկսումն. կամ սկսեալ գործն:

Ձեռներէց. || համարձակ. առաջ նետուող:

Ձեռներէցութի. || համարձակութի. առաջ նետուիլը:

Ձիացուլ. || այլակերպ կենդանի ձևացուցեալ 'ի բանաստեղծից, որոյ կէսն իցէ ձի և կէսն ցուլ:

Ղ

Ղօղել. || Թաքչել. գաղել:

Ճ

Ճախին. || աղտիւր տեղի աղտեղի ջրովք հեղեղեալ. ճիմճիմէ. պաթախ:

Ճախճախուտ. || տեղի, ուր դադարեալ են ծանծաղ և ճապաղ աղտեղի ջուրք. Ճիմճիմէ:

Ճախրել. || պտուտքիլ. պտոյտս առնելով թռչիլ:

Ճակատիլ. || կարգիլ կամ դասիլ 'ի մարտ ընդդէմ թշնամեաց:

Ճակատ. ‖ առաջին կողմն զօրաց դասաւորելոց 'ի պատերազմ :

Ճակատագրական. ‖ անփոփոխելի. անհրաժեշտ. հարկաւոր. որոյ անկարելի է ոչ լինելն :

Ճակատագրութիւն. ‖ յաւիտենական սահմանադրութիւն. կարգաւորութիւն այ. որով վարին իրք աշխարհի :

Ճահճանալ. ‖ լինել իբրև ճահիճ, կամ ղիճ. կէօլ ըլլալ :

Ճամուկ. ‖ խայտ կամ նկարէն իրք. խաղալիկք տղայոց :

Ճանապարհորդութիւն. ‖ փոխանակ պատմութեան ճանապարհորդաց գիտողաց զերկիր :

Ճապաղել. ‖ տարածանել. ծաւալել :

Ճապաղիք. ‖ ճապաղումն. ծաւալումն. հեղումն :

Ճապօն. կամ Ճափոն. ‖ մեծ երկիր յառաւել արևելեան մասին Ասիոյ հանդերձ անուամբ կայսերութեան. Ճափոն է կոյտ իմն բազմաց կղզեաց. որոց երևելագոյնքն են Նիփօն, Սաիքօք և Սիքօքֆ. Գտեալ եղև դիպուածով 'ի փորթուկէզաց յամին 1542, գոլով ընկեցեալք անդր առ ծովեզերօքն 'ի մրրկէ իմեքէ. Բովանդակ այս կայսերութիւն բաժանի յեօթն գլխաւոր սահմանս. որք ստորաբաժանին յայլ բազում փոքրիկ գաւառս. Են 'ի նմա երկու կայսերք, Տարիօ, որ է եկեղեցական. և Քուպօ, որ է աշխարհական :

Ճեպել. ‖ փութալ. կամ փութացուցանել :

Ճետ. ‖ ազգ. ցեղ. (կենդանեաց) այլ :

Ճենկիզխան. ‖ մի 'ի հռչակաւորագոյն տիրապետողաց աշխարհի. ծնաւ 'ի Տիլուն 'ի 1154 ամին 'ի Փիսուքայ, որ էր մի 'ի խանից Մօկօլաց, որք են Մողուլք. Յետ մահուան հօր իւրոյ յաղագս երդմնակցութեան իւրեք հպատակաց և դրացեաց իւրոց՝ ստիպեցաւ փախչիլ 'ի հասակի 14 ամաց առ Ավէնքուն խան Թաթարաց. Ճենկիզխան զառաջինն յոյժ բարուք ընկալեալ եղև. և մատոյց այնմ նահապետի զմասնաւոր ծառայութիւնս 'ի պատերազմունս. զորս կալաւ. բայց յետոյ իրազգաց լինելով, թէ խնդրէ կորուսանել զնա, 'ի բաց փախեաւ 'ի նմանէ. Ավէնխան և Շուքուն որդի իւր հետամուտ եղեն նմա. բայց Ճէնկիզխան յանկարծ էհաս ՚ի վ՟ր ն՟ց և աւերեաց զզօրս նոցա, ուստի եղև ն՟ց խոյս տալ առ նահապետս ոմանս Խաթարայ. յորոց կալեալ սպանան. Յայնժամ Ճէնկիզխան յարոյց զմեծ զօրս և յընթացս, 22, ամաց տարաւ զնշանաւորագոյն յաղթութիւս ՚ի վ՟ր ազգին Մողուլաց և ՚ի վ՟ր Խաթարայց. զորոց զբովանդակ ցեղն նուաճեաց. ՚Ի վախճանի՝ յետ հիմնելոյ զմի ՚ի մեծագոյն կայսերութեանցն աշխարհի, մեռաւ յամին 1226, ամաց եօթանասուն երկուց:

Ճէնովա. կամ Գէնուա. ‖ գեղեցիկ՝ հզօր մայրաքաղաք համանուն հասարակապետութեան ՚ի վ՟ր լիգորնեան ծովուն:

Ճիամայքա. ‖ մեծ կղզի հիւսիսային Ամերիկայ գտեալ ՚ի Քոլոմպոսէ ՚ի 1494. ամին՝ զետեղեալ ը՟ հիւսիսակողմն շարունակին Ամերիկոյ՝ 140 փարսախ հեռի և ը՟ հարաւ կղզւոյն Քուպայ՝ 15 փարսախ հեռի. և ընդ արևմուտս Իսպանիոլայի և Սան Տօմէնիքոյի քսան փարսախ:

Ճիգն. ‖ ձկտումն զօրութ՟. մեծ ջանք:

Ճիշդ. ‖ ճշդեալ. խնայեալ. խնայելով ծախեալ:

Ճիւաղ. ‖ օտարակերպ. աճալաճայիպ:

Ճղճկել. ‖ ճղճղկել. ճուղ ճուղ բաժնիլիլ:

Ճղճկումն. ‖ ճղճղումն. ճուղ ճուղ ըլլալը:

Ճնշումն. ‖ հարստահարութի. նեղումն. սեղմումն. զուլում:

Ճշգրիտ. ‖ իսկական. բուն. հարազատ. ճշմարիտ:

Ճշգրտել. ‖ ճշմարտել. ստուգել:

Ճոխութի. ‖ ճարտարախօսութի. ճոխաբանութի:

Ճօշ. ‖ տեսակ ինչ զրահի կազմեալ ՚ի կարծր կաշւոյ կամ յերկաթի թելից հիւսելոց:

Մ

Մագնիս. ‖ (միլատըզ թաշը). քար ինչ, որ ունի զյատկութի քաշշելոյ յինքն զերկաթ:

Մագէրա կամ **Մատէրա.** ‖ կղզի Ատլանտեան Ովկիանոսի եռանկիւնի ձևով ը՟ մէջ Սէպտէի նեղուցին և Քանարիայն. Գտեալ եղև յամին 1419, 'ի Փորթուկեղաց 'ի Յօհաննէ Կօնծալէսայ և 'ի Թրիստանու Վազայ. Սոքա հուր արկին յանտառ ինչ առ 'ի ջեռնուլ. բայց յայնմանէ հետևեցաւ այնպիսի հրդեհ, որ տևեաց զամս բազումս. և փոխադրեաց զհողն ծայրագոյն բերրի, որ յառաջ ամուլ էր և անպտուղ. Օդն անդէն է բարեխառն, մաքուր և առողջ. Նմին իրի կղզին այն է բազմամարդ յոյժ. Բնակիչք են քաղցրաբարոյք և հակեալք 'ի զբօսանս. Փունչալ է մայրաքաղաքն:

Մաիծ. կամ Մաիծէ. || ցորեան Հնդկաց. կամ տեսակ ինչ ցորենոյ, որով կերակրին մեծ մասն Հնդկաց, Ափրիկեցւոց և Ամերիկացւոց:

Մալաբար. || արևմտեան մասն ցամաքակղզւոյն Հնդկաստանի այսր քան զԳանձէ յետ Թագաւորութեն Գակլյանու մինչև 'ի գլուխն Քօմորին. 'Ի մեծագոյն տարածումն իւրում պարունակէ զԹագաւորութիւն Քանարայի, զտէրութիւն Սամօրինու և Թրավանքօրայ, զԹագաւորութիւն Քօչինու, զերկիրն Գալիկաթու և զԹագաւորութիւն Վիսափուրայ. Մալաբար է առաւել գեղեցիկ երկիրն Հնդկաց 'ի Գանձեայ և այսր. Տեսանին 'ի նմա անբաւ իմն բազմութի քաղաքաց, անտոց լեռց բրնձով և ամ ցեղ մշտադալար ծառովք. Ո՛չ երբեք անկանի անդէն եղեամն, կարկուտ կամ ձիւն:

Մալուխ. || առեալ լինի փոխանակ մեծ ուղտու:

Մախանք. || չար նախանձ. փախըլըք:

Մակարդակ. || հարթութիւն կամ երես (ծովու):

Մակդիր. (զոր նոյնք կոչեն ածական) բառ կամ անուն, որ նշանակէ զորպիսութիւն իրին:

Մակեդոնիա. || գաւառ տաճկական Եւրոպիոյ՝ սահմանեալ 'ի հիւսիսոյ Սերվիաւ և Բուլղարիաւ, յարևելից Ռօմանիաւ, որ է ռումէլի, և Արքիպեղագոսիւ, 'ի հարաւոյ Լիվադիաւ, և յարևմտից Ալպանիաւ. որոյ բնակիչք կոչին Մակեդոնացիք. և մայրաքաղաքն է Թեսաղոնիկէ. որ է Սէլանիկ:

Մակերևութական. ‖ վերաբերեալ առ մակերևոյթն կամ առ վերին երեսս ընչևիցէ իրաց:

Մակընթացութիւն. ‖ աճումն ջուրց ծովու, կամ բնական շարժումն նորա դէպ 'ի ցամաքն յորոշեալ ինչ ժամս աւուրն. որոյ ներհակն, այսինքն, յետս քաշումն և նուաղումն ջուրց ծովու 'ի ցամաքէն, կոչի տեղատուութիւն:

Մակոյկ. ‖ (սանտալ) փոքրիկ նաւակ մեծ նաւուց. զոր 'ի կիր արկանեն վ͞ն ելանելոյ 'ի ցամաք. յոր նաւուք ոչ կարեն մատչիլ վ͞ն ծանծաղութեան ջրոյն:

Մաղասային. ‖ որոյ առատ է մաղասան. այսինքն, պալղամն:

Մաճելլանու. (նեղուց) ‖ է հռչակաւոր նեղուց հարաւային Ամերիկոյ գտեալ յամին 1520 'ի Ֆերտինանտոսէ Մաճելլանու մեծահամբաւ նաւուղղէ Լուսիտանացւոյ. որ ետ այնմ զանուն իւր. Նա շուրջ հարիւր փարսախ 'ի միոջէ ծովէ առ միւս. լայնութիւն իւր յանձկագոյն կայս եղիցի փարսախ մի. Հոլանդեցիք և Անգլեցիք և Սպանիացիք բազում անգամ ջանացան անցանել ընդ այս նեղուց. բայց յորմէ հետէ գտին զայլ անցս՝ առաջինն բարձի թողին եղև վ͞ն լինելոյ լի ապառաժիւք. Երկու եզերք նեղուցին բնակեալ են 'ի վայրագաց:

Մայթ. ‖ սալայատակ. խալտըրըմ:

Մանիթուս. ‖ կախարդական բժժանք. յորս յուսային Ամերիկացիք ազատիլ նոքօք յա͞մ պատահարաց. կ͞մ ողիք պաշտպանք 'ի փորձանաց:

Մանիոք. ‖ թուփ ինչ Ամերիկոյ. զորոյ արմատն չորացուցեալ և լոսեալ իբրև զալիւր կազմեն զհացն կոչեցեալ քասսաւա:

Մանուածոյ. ‖ բաղադրեալ. յօդուածոյ. բազմադիմի:

Մանրամասնութիւն. ‖ մանրամասն և հանգերձ ա͞մ պարագայիւք պատմութիւն:

Մանքէնիլլէ. ծառ. ‖ տեսակ ինչ ծառոյ կղզեացն Անթիլլեայց, որոյ պտուղն նման է կիտրոնի, բայց թունաւոր յոյժ յոյժ:

Մասնաւորել. ‖ մասնակից առնել. հաղորդել:

Մատրանապետ. ‖ թոշակաւոր քահանայ՝ պարտաւոր ւորեալ 'ի մատրան մեծի ուրուք պատարագել և կատարել զայլ ծիսային պաշտօնս :

Մարակնօնէ . ‖ գետ ինչ մեծ Հարաւային Ամերիկոյ :

Մարգ . ‖ առատ խոտ բուսեալ 'ի դաշտի . չայիր :

Մարգագետին . ‖ գետին լցեալ մարգօք . կմ̃ դաշտ խոտաւէտ զուարճացեալ գալարօք :

Մարդելուզել . ‖ շողոքորթել . Հաճել զմիտս . լոզօզել . սուտ կամ թեթև պատճառօք Հաւանեցնել . խաբել :

Մարդելուզական . ‖ շողոքորթական . Հաճոյական . կամ պատրողական :

Մարզել . ‖ վարժել . կրթել :

Մարզիկք . ‖ մարզե̃լք (զօրք :)

Մարզպան . ‖ կողմնապահ . կուսակալ . անուն իշխանութեան :

Մարթինիքա . ‖ երևելի կղզի Հիւսիսային Ամերիկոյ՝ գլխաւորն Անթիլեայց . Երկայնութ̃ի իւր է 16 . փարսախ . և շրջապատն 40 . Են 'ի նմա մեծամեծ լերինք և բազում գետք և բազում՝ Հովիտք ամենաբերք բաց 'ի ցորենոյ և 'ի գինւոյ . Գաղղիացիք կայունացան անդէն յամին 1635 . Հնդիկք կղզւոյս են քաջասիրտք յոյժ :

Մարիանեայք . ‖ կղզիք արևելեան Ովկիանոսի 'ի ծովուն Հարաւոյ . Տեղակալեն զմիջոց իբր 150 փարսախաց , սկսանելով 'ի կղզւոյն Գուահանու մինչև 'ի Ուրաք . Մաձելան եգիտ զայնս , և Միքայէլ Լօփէս Լէկասփեան տիրեաց յամին 1565 . Են թըւով չորեքտասան և ամենքեան երևելիք . Թէպէտ և կայացեալ ընդ այրեցած գօտեաւ , Հանդերձ այսու օդն է միշտ մաքուր և առողջ , երկինքն զերծ 'ի գոլորշեաց , տօթն ոչ այնքան չափազանց , և բնակիչքն անցուցանեն զերկայնաձիգ կեանս ինչ . Յառաջ քան զՀասանելն Սպանիացւոց յ̃ նց̃ ոչ Հաւատային , թէ իցէ այլ ազգ յաշխարհի բաց յինքեանց :

Մարիկալանթէ . ‖ կղզի Հիւսիսային Ամերիկոյ՝ մի 'ի Գաղղիական Անթիլեայց՝ գտե̃լ 'ի Քօլոմպոսէ յամին 1493 . Գաղղիացիք սկսան բնակել անդ յամին 1648 . 'Նախապետական

կան բերք իւր են շաքար, լեղակ, դեղուեչ, և բամբակ:

Մարկոս փօլօ· կամ **Մարքօ փօլօ**· ‖ սեպուհ Վենետիկեան կեցեալ յերեք տասաներորդ հարիւրեկին· որ վս ճանապարհորդելոյ ընդ բազում ժամանակս գրեաց զճանապարհորդութիւնս իւր· և մակագիր գրոց իւրոց է՝ 'ի վերայ առանձնայատկութեանց աշխարհին· զորս տեսեալ էր ինքն:

Մարչիլ· ‖ մերթ՝ առեալ է փոխանակ միոյ թալէրոյ· որ է իբր երկու ղրշ:

Մարք· ‖ չափ ինչ ծանրութեան ոսկւոյ կամ արծաթոյ· որ է ութն ունկի:

Մարօքքօ· ‖ մեծ կայսերութիւն Ափրիկոյ յառաւել արևմտեան կողմն Բարբարիոյ· Պարունակէ ըզթագաւորութիւնն Մարօքքայ, Ֆէսի, Թաֆիլէթայ, Սուսայ և զմեծ գաւառն Տարայի· Երկայնութիւն իւր է իբր 250 փարսախ· և լայնութիւն 140· Ունի սահման ընդ հիւսիսակողմն զծովն միջերկրական, ընդ արևելս զթագաւորութիւնն Ալճէրայ, որք են Ճէզայիրք, Թունուզայ և Տրապօլսոյ կամ Թրիպօլսայ, ընդ արևմուտս զծովն Ատլանտեան, և ընդ հարաւակողմն զգետն Ագրա· Բայց պիտոյ է 'ի բաց առնուլ 'ի կողմանէ միջերկրականին զՋէզէրա, զՄէլիլա և զՕրան տիրապետեալ 'ի Սպանիացւոց և զՄազաղան 'ի Փորթուգէզաց:

Մաւրիք· ‖ ժողովուրդք, որք բնակին 'ի Մաւրիտանիա· Իսկ Մաւրիտանիա է մեծ սահման ինչ Ափրիկոյ մասն ինչ 'ի վերայ միջերկրական ծովուն և մասն ինչ 'ի վր արևմտեան Ովկիանոսի:

Մաքառիլ· ‖ կռուիլ· մարտնչիլ:

Մեծագործութի· ‖ մեծածախութի· բազմածախութիւն· մերթ՝ փառք, հանդէս:

Մեծեղեռն· ‖ մեծանց մեղաւոր:

Մեծակշիռ· ‖ մեծ կշիռ կմ ծանրութի ունօղ· մեծավարկ:

Մեծահետևակ· ‖ (գործ կմ պատճառ) յորմէ հետևին կամ յառաջգան մեծամեծ իրք:

Մեծավաստակ· ‖ մեծ վաստակ կմ արդիւնք ունօղ· երախտաւոր:

Մեղկ· ‖ թոյլ· տկար:

Մեհեան. ‖ տաճար կռոց:

Մեմփիս. ‖ հին մայրաքաղաքն Եգիպտոսի. որ է մըսըր:

Մենավաճառութիւն. ‖ տեսակ ինչ վաճառականութեն գնելով յարքունուստ. որով տուեալ լինի ումեք իշխանութիւն միայնակ վաճառելոյ զտեսակ ինչ վաճառի. որ ըստ տաճկաց իմացեալ լինի անուամբ Մնիբի:

Մետաղ. ‖ հրահալելի. որպիսի է ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ. ևն:

Մետաքս. ‖ ապրշում. խիլէկ:

Մեքենական. ‖ վերաբերեալ առ մեքենայ. որ է յատկանիս այնպիսի իմն կազմուած արհեստական, որ ունի յինքեան զսկիզբն շարժման. որպիսի է ժամացոյցն:

Մեքենայել. ‖ նիւթել. հընարս խորհել. կամ գործել:

Մելինտա. ‖ գլխաւոր քաղաք Ափրիկոյ առ բերանով գետոյն Քուիլիմանչեայ 'ի զուարճալի դաշտի միում:

Մէքսիքօ կամ **Մէքսիկօ**, որ և կոչի Նոր Սպանիա. ‖ է մեծ թագաւորութիւն կ՟մ երկիր հիւսիսային Ամերիկոյ. Յօհաննէս Կրիջալվա եղև առաջին 'ի գտանել զայն յամին 1518 և մեծահամբաւն Քօրթէս տիրապետեաց. Սահմանի 'ի հիւսիսոյ Նոր Մէքսիքօիւ, յարևելից խորշիւն Մէքսիքօի և ծովովն հիւսիսոյ, 'ի հարաւոյ և յարևմտից հարաւային Ամերիկայիւ և ծովովն հարաւոյ. Այս երկիր ունի աւելի քան զչորեքհարիւր փարսախս երկայնութեն. Բաժանի 'ի 23 գաւառս, որոց գլխաւորն է Մէքսիքօյին. Են 'ի նմա բազում հանք ոսկւոյ, արծաթոյ, երկաթոյ, պղնձոյ ևն. Մէքսիքօ է մայրաքաղաքն:

Մէտինա Չէլի. ‖ փոքր մի քաղաք Սպանիոյ 'ի մէջ հին Քասթիլիոյ մայրաքաղաք համանուն իւիք Տուքայութեն մեծի, կառուցեալ առ Քալօն գետով:

Մէտինա Սիտոնիա. ‖ փոքրագոյն քաղաք Սպանիոյ 'ի մէջ Անտալուզիոյ հանդերձ փոքրեմի բերդիւ Ը հիւսիսային արևմուտս 15 փարսախ հեռի 'ի Ճիպիլթերրայէ որ է Սէպտէի պօղազը:

Մեօտիս ծովակ. (Թամանու ծով) ‖ է մեծ ծոց ծովու ընդ մէջ Եւրոպիոյ և Ասիոյ ընդ հիւսիսակողմն սեաւ ծովուն. յորոյ ափունս ընդ հիւսիսիւ բնակեալ են մեծ Թաթարք, ընդ հարաւակողմն Չէրքէզք. և ընդ արեւմուտս Թաթարք Խրիմու:

Մխեր. ‖ կոյտ. շեղջ. դանդուած:

Մթերել. ‖ կուտել. ամբարել:

Միահետ. ‖ 'ի միասին. մէկ տեղ:

Միապետ. ‖ ինքնակալ թագաւոր. որ ինքն միայն իշխէ 'ի վր իւրք թագաւորութեան առանց ստորակարգութեան ընդ այլում:

Միհրդատ. կամ Միթրիդատ. ‖ Ըստ Մովսէսի Խորենացւոյ էր մեծ կուսակալ ազգին Հայոց քեռայր երկրորդ Տիգրանայ արքայի իբր 100 ամօք յառաջքան զՔս. զոր պատմութիւն Հռոմայեցւոց արքայ Պոնտոսի անուանէ. Զսա Տիգրան արքայ յերկրորդական գահ իւր նորոգեալ հաստատեաց 'ի նա զՄաժաք (որ է Կայսերի) և զհօղս միջերկրեայցն. և զօր բազում թողեալ առ նմա, դառնայ ինքն 'ի մեծ Հայս: Սա Միհրդատ շինեաց զՄաժաք քաղաք Կապադովկիոյ. և 'ի պարտութեան մատնեալ յերեսաց Պոմպէի զօրավարի Հռոմայեցւոց մեռանի դաւով 'ի նմանէ:

Միջասահմանութիւն. ‖ միջակութիւն. միջին սահման 'ի մէջ երկուց ծայրից:

Միջերկրեայ կմ միջերկրական (ծով) ‖ է այն ծովն, որ կցորդի ընդ Ովկիանոսի միջնորդութեամբ Սեպտէի նեղուցին. և ունի զԵւրոպիա ընդ արեւմուտս և ընդ հիւսիս, զԱփրիկէ ընդ հարաւ և զԱսիա ընդ արեւելս. Խառնեալ է 'ի կարմիր ծովէն միջնորդութեամբ ցամաքանեղուցին Սուէզայ և 'ի Մարմարայ ծովէն միջնորդութեամբ նեղուցին Կալլիպօլեայ. Կոչի միջերկրեայ, զի է 'ի մէջ երկրի՝ ներհակ Ովկիանոսին, որ իբր արտաքուստ պատէ զերկիր:

Միջօրական. ‖ ըստ աշխարհագրաց է մեծ շրջանակ, որ անցանէ ընդ բեւեռս աշխարհի. Իսկ մասնաւոր միջօրականն իւրք տեղւոյ՝ անցանէ ընդ գա-

գաթական կէտ տեղւոյն, այսպէս կոչեցեալ, վ՟ զի մինչ հասանէ յայն արեւն, լինի միջօրէ անդէն. Այնքան են միջօրականք, որքան են կէտք հասարակածին. Առաջինն այն է, յորմէ սկսանին թուիլ աստիճանք երկայնութեան. Այլ այս է կամայական. Գաղղիացիք կարգաւորութիւն Լուիճեայ երեքտասանե՟րդի առնուն զայն 'ի կղզւոյն երկաթոյ. որ է առաւել արեւմտականն Կանարեայցն. Հօլանդէզք 'ի Փիքօ լեռնէն Թէնէրիֆայի. և այլք յայլոց տեղեաց:

Միսիոնար. ‖ բառ լատինական. որ 'ի մեզ թարգմանի առաքեալ. և նշանակէ զնա, որ առաքի յաշխարհ հեռի 'ի քարոզել զբանն ա՟յ:

Միսիսիպի. ‖ մեծ գետ հիւսիսային Ամերիկոյ, որ առոգանէ զԼուիճիանա զմի 'ի մեծագոյն գաւառացն աշխարհի, բնակեալ գրեթէ բովանդակն 'ի վայրագաց:

Միտել. ‖ հակել. յօժարիլ:

Մկունդ. ‖ յատկապէս փայտեայ կ՟մ կաշեայ վահան. զոր Ամերիկացիք 'ի գործ ածէին 'ի պատերազմունս:

Մճճիլ. ‖ կնճռիլ. փաթաթիլ. շաղիլ. թնճկիլ:

Մնջիկ՝ ‖ լռութի՟. առանց ձայն հանելոյ:

Մշակոյթ. ‖ կոյտ կ՟մ բազմութի՟ մշակաց առաքելոց յերկիր հեռաւոր առ 'ի շէն առնել զայն. տես և Հաստուած:

Մոլախոտ. ‖ մոլի խոտ, այս է, վայրի և անպիտան բոյսք, որք խիտ առ խիտ բուսեալք հեղձուցանեն զպիտանի բոյսս:

Մոլեգնութի՟. ‖ կատաղութիւն. յիմարութի՟:

Մողէս. ‖ (քէրթէնքէլէ) տեսակ ինչ զեռուն կենդանեաց քառոտանի նման կոկորդիլոսի:

Մոյգ. ‖ (գոյն) մթին. սեւախօյի:

Մոյթ. ‖ նեցուկ. հաստարան. ենթակայ:

Մորչ. (գաւառական) ‖ թաղէ. կակուղ:

Մունետիկ. ‖ թէլլալ:

Մուրցացի. ‖ մրցելով. այս է, ջանալով յառաջել, կամ գերազանցել քան զայլս 'ի գործս ինչ:

Մուլամթրիք. ‖ ծնեալքն 'ի զանազան ազգ ծնողաց. կամ 'ի տարբեր աստիճանի եղեալ անձանց:

Մուղ

Մռգգայլել. ‖ խառնչելով, այսինքն, պէսպէս շշնչմամբք և մրմռալով ուտել. որպէս առնեն գազանք:

Մտաբերութիւն. ‖ բերումն մտաց. կամ միտումն. յօժարութիւն:

Մտաւոր տեսակ. ‖ պատկեր կամ գաղափար իրաց ՚ի միտս, որով ճանաչեմ իրք:

Մտրակ. ‖ խթան. գրգիչ. գրգռիչ:

Մրցանակ. ‖ բաշխագործութեան կամ մեծագործութեան վարձ:

Մրցել. ‖ կռուիլ. կամ ջանալ յառաջել քան զայլս ՚ի գործս ինչ. եարըշ բռնել:

Մրցումն. ‖ կռիւ. մերթ՝ եարըշ:

Մրքուղ. ‖ գծուծ. աղքատին. խեղճ:

Մօլուքքայք. ‖ կղզիք Հնդկաց ծովուն ՚ի ներքոյ Հասարակածին. Գլխաւորքն են թըւով հինգ, Թէռնաթ, Թիտոր, Մաքհիան, Մօթիր, և Պաքհիան. Աստանօր տունկք են մշտադալարք. Կղզիքս այսոքիկ ճոխացեալ են ամ ազգ խնկովք և համեմիւք, մանաւանդ մեխակօք. և ունին զծառ մի նման արմաւենւոյ. յորոյ կեղևոյն հաղմի հաց. և որոյ մատաղ ընձիւղք տան զհեշտանութիւն իմն, որ ծառայէ փոխանակ գինւոյ. Փորթուկէզք եղեն առաջինք, որք գտին զայսոսիկ կղզիս յամին 1511. և զօրով տիրացեալք ծովեզերացն հաստատեցին անդէն զիշխանութիւն իմն մեծ. բայց կղզականք թիկունս դարձեալ ՚ի Հօլանդէզաց վանեցին զնոսա. այժմ Հօլանտէզք են իբր տեարք նոցա:

Մօնսօօն, (Մօսում.) ‖ պարբերական հողմն. որ ՚ի մէջ Ովկիանոսին Հնդկաց շնչէ զվեց ամիս յարևելից սակաւ ինչ այլայլութեամբ և զայլ վեց ամիս հաւասար կայունութեամբ յարևմտից. որ մեծապէս նպաստէ նաւորդացն յայնմ ծովու:

Մօսօլին. ‖ ևս նրբագոյն կտաւ բամբակի. որ և կարէ կոչել բեհեզ:

Մօտալուտ. ⁝ մօտաւոր. մերձակայ. որ մերձ է հասանել ՚ի վր:

Մօրավիա. ‖ գաւառ ինչ Պօէմիոյ սահմանակից Հունկարիոյ և Սիլեթիոյ. որոյ բնակիչք կոչին Մօրավիացիք:

* * *

Յ

Յախճապակի. ‖ տեսակ ինչ խեցեղէն անօթոյ. չինի:

Յածիլ. ‖ շրջիլ. շուրջ գալ:

Յակինթ. ‖ նախուռ քար:

Յաղթահարել. ‖ խելամտեցուցանել. յաղթել մտաց յայտնի ճշմարտութեան:

Յաղթահարումն. ‖ յայտ յանդիմանութիւն. յայտնի իսպաթ:

Յամառ. ‖ յամառեալ. ընտեալ սաստիկ:

Յաճախորդ. ‖ որ յաճախէ առ կրպակ ինչ 'ի գնել. յաճախ գնօղ. միւշտերի:

Յանկաւոր. ‖ պատշաճաւոր. վայելչական:

Յանկերգ. ‖ յանկուցիչ բան. հրաւէր. յորդորակ:

Յանկուցանել. ‖ յինքն քարշել. կապել. յարել. հրաւիրել. յորդորել:

Յանձանձել. ‖ դարմանել. խնամել. հոգալ:

Յաշաղանք. ‖ չար 'նախանձ. մախանք. նախանձութիւն:

Յաշաղել. ‖ մախալ. 'նախանձիլ. փախալիլ. խըսխանմիշ ըլլալ:

Յաշաղկոտ. ‖ 'նախանձոտ. խըսխանճ:

Յապաւել. ‖ կտրել, հատանել զաւելորդն:

Յառաջատել. ‖ իբր թէ յառաջահետիլ. յառաջ երթալ. յառաջադէմ լինել:

Յառաջատութիւն. ‖ յառաջադիմութիւն:

Յառեցուցանել. ‖ պշուցանել. անթարթ հայեցուցանել:

Յատակել. ‖ անշէն առնել. քանդել:

Յատանել. ‖ զաւելորդ ճիւղսն կտրել. պուտամիշ անել:

Յատկեղ. ‖ եւ յատկագոյն. ամենեւին յատուկ. կամ սեպհական:

Յատկութիւն. ‖ մերթ՝ յատուկ իրաւունք. տէրութիւն. սեպհականութիւն. ստացուած:

Յարադած կամ Յարադամած. ‖ յարադք, այսինքն, ցիցք կմ՝ գերանք խիտառ խիտ ցցեալք առ'ի հաստատուն առնել զգետինն:

Յարախտ. ‖ յարողական ախտ. փոխխական հիւանդութիւն:

Յարակայ. ‖ մշտակայ:

Յարգել. ‖ մերթ՝ գործել կամ բանեցնել:

Յափրանալ. ‖ տաղտկանալ. զզուիլ. պըխմիշ ըլլալ:

Յափփան. ‖ տես Դ'ափփան:

Յելուզակ. ‖ աւազակ. թիւրիւտի. մերժ՝ խուրսանտ:

Յելուզակութիւն. ‖ (ծովու) նաւապատակութիւն. խուրսանտութիւն:

Յեղակարծ. ‖ յանկարծ. անակնկալ. արտաքոյ կարծեաց:

Յեղափոխել. ‖ յեղուլ և փոխել. կամ թարգմանել:

Յեղյեղել. ‖ ստէպ կրկնել. յաճախ քարոզել. ընուլ յականջս:

Յետասահմանութիւն. ‖ յետս դարձումն 'ի սահմանս իրեք երկրի, ուստի վտարեալ է ոք 'ի թշնամեաց. նաև իրաւունք վերստանալոյ զայն ամ, զոր ելանելով 'ի հայրենեաց եթող ոք կամ կորոյս:

Յետկար. ‖ յիշատակարան. գիր աղաչանաց. արզուհալ:

Յեռուլ. ‖ ագուցանել. կէյտիրմիշ անել:

Յերիւրել. ‖ յարմարել:

Յղարկել. ‖ փոխանակ յուղարկելոյ:

Յղկել. ‖ հարթել. դուրել. կոկել:

Յոլով. ‖ ևս բազմագոյն. յոյժ բազում:

Յոլովակի. ‖ բազմիցս, կմ՛ ըս̄ մեծի մասին:

Յոխորտ. ‖ յանդուգն. յառաջ նետող:

Յողդողդ. ‖ փոփոխական. անկայուն:

Յորձանք. ‖ հոսանք. գետ:

Յորջորջումն. ‖ կոչումն. անուանակոչութիւն:

Յուզել. ‖ շարժել ուժգին. վեր 'ի վայր շրջել. մերժ՝ քննել. նաև խռովել. վրդովել:

Յուլագոյն. ‖ առաւել յոյլ. հեղգ. ծոյլ:

Յուռանալ. ‖ պարարտանալ. թաւանալ. բարգաւաճիլ:

Յուռթի. ‖ պարարտ. (գետին) բերրի. արգաւանդ:

Յուռութ. ‖ կախարդական կապ. կմ՛ փաթեթ. համայիլ. թըլըսըմ:

Յօդ.) ‖ մասն. գլուխ

Յօդուած.) (բանի) նիւթ:

Յօդել. ‖ բաղադրել. միաւորել:

Ն

Նազելի. ‖ մերժ՝ նազլը. չելեպի:

Նազելութիւն. ‖ նուրբ գեղեցկութիւն. վայելչութիւն. պատուականութիւն:

Նաթքհեզք. ‖ ժողովուրդ Ամերիկոյ 'ի Լուիզիանա երկրին առ Միսսիսիպի գետովն. ոյք ունին գլխաւոր մի, որ կոչէ զպատ-

ճաժամուն արեգական, և պարծի առնուլ զծագումն 'ի նմանէ. Սա ունի իրաւունս կենաց և մահու 'ի վերայ հպատակաց իւրոց. Այս ժողովուրդ նուաճեալ է յոյժ յետ պատերազմին, զոր Գաղղիացիք շարժեցին ընդդէմ նոցա յամին 1630:

ՙՆախադատութ՟ի. ‖ առաջին դատումն կամ տպաւորութ՟ի մտաց. որով տոգորեալ կամ պաշարեալ միտքն դժուարաւ ընդունի զայլ դատումն կամ ճանաչումն զիրաց:

ՙՆախներգանք. ‖ սկզբնաւորութ՟ի. յառաջաբանութ՟ի:

ՙՆահապետ. ‖ իբր նախապետ. առաջին պետ. նախարար յիմիք Թագաւորութ՟ն. այս պատճառաւ տուեալ լինի նաև Թագաւորաց և ինքնակալաց:

ՙՆանրանալ. ‖ ը՟ունայն լինել. պօշը երթալ:

ՙՆաւախումբ կմ՟ Նաւահանդէս. ‖ խումբ կամ բազմութ՟ի նաւուց յատկապէս պատերազմականաց:

ՙՆաւարտակ. ‖ աւազակ ծովու. խուրսանտ:

ՙՆաւարրա. ‖ Թագաւորութ՟ի Եւրոպիոյ 'ի մէջ Ֆրանսիոյ և Սպանիոյ. Բաժանի 'ի վերին և 'ի ստորին. Սահմանի Փիրենէիւք լեռամբք:

ՙՆաւուղիղ. ‖ ուղղիչ նաւու 'ի ճանապարհ. յատկապէս ղեկավար:

ՙՆաւիորդ. ‖ շուրջառակերպ պատմուճան Թագաւորաց. զոր 'ի հանդիսի աւուրս արկանեն զանձամբ:

ՙՆեկրիք. ‖ խափշիկք. սեաւ մարդիկ:

ՙՆեղոս. ‖ (Նիլ միւպարէք) մեծ գետ Ափրիկոյ, որ բղխէ 'ի լերին միում 'ի Թագաւորութ՟ն Կօյամու 'ի սահմանի միում կոչեցելոյ Ակնում 'ի մէջ Հաբէշստանի. Անցանէ ը՟ Հաբէշստան, ը՟ Նուբիա և ընդ Եգիպտոս և ապա անկանի 'ի միջերկրական ծովն:

ՙՆերածել. ‖ մուծանել. միթ՝ շարժել. յորդորել:

ՙՆերածութ՟ի. ‖ մուծումն. կամ առաջնորդութ՟ի:

ՙՆերհմտութ՟ի. ‖ հմտութ՟ի. փորձառութ՟ի:

ՙՆերհուն. ‖ խելամուտ. իմաստուն. հասկացող.

ՙՆեցուկ. ‖ յենարան. տայախ:

ՙՆէապօլիս (ՙՆափօլի). ‖ Թագաւորութ՟ի կամ մեծ երկիր Իտալիոյ, որ տեղակալէ զբոլոր հարաւային մասն նորա. Սահմանի 'ի հիւսիսոյ և յարևմտից երկրաւն եկեղեցւոյն Հռոմայ. և մնացեալ բովանդակն է ծովեզերեայ. Մայրաքաղաքն է Նափոլի:

Նէարքոս. || մի 'ի զօրավարաց Աղեքսանդրու մեծի. որ նաւեաց 'ի մէջ Ովկիանոսին հնդկաց նորին հրամանաւ. Համբաւեալ է 'ի վեր քան զամենայն նաւարկութիւն իւր 'ի բերանոյն Հնդոսի առ Բաբիլոն:

Նժդեհորդ. || մասն նժդեհութեան, կամ որ բաղկացուցանէ զնժդեհութիւն:

Նժդեհութիւն. || ժողովուրդ առաքեալ յօտար երկիր առ'ի բնականալ անդէն նովին օրինօք, ուստի առաքեալ են. տես և Հատուած:

Նկուղ. || մաղազայ:

Նկրտիլ. || ջանալ ըստ զօրութեան:

Նմանաբնոյթ. || նման բնութեան կամ էութեան:

Նշանագիր. || մերթ՝ նկարեալ մարմին կամ պատկեր. զոր Եգիպտացիք 'ի գործ ածէին փոխանակ գրուածոյ առ'ի յայտնել զիմացմունս իւրեանց:

Նշանագծութիւն. || գծագրութիւն. ստուերագրութիւն. այս է, նկարումն կամ ձևացուցումն շինուածոց գծիւք և նշանօք, որ ցուցանէ զայն, զոր պարտէ 'ի գործ դնել. կամ՝ որ զեղեալ գործն յանդիման առնէ:

Նշանագրութիւն. || ծանուցումն. բացատրութիւն:

Նշաւակ. || հանդէպ եղեալ, առարկայ. ենթակայ:

Նշխար. || մնացորդ. մնացուած:

Նշկահել. || արհամարհել. քամահել. կամ զզուել:

Նշմարել. || հեռուանց նայել. դիտել. մշուշ տեսանել:

Նշմարութիւն. || դիտողութիւն. նկատումն:

Նշոյլ. || ճաճանչ. շաւխ:

Նորակրօնութիւն. || նոր և 'ի մարդկանէ հնարեալ կրօն. որ է կռապաշտութիւն. կամ՝ բազմաստուածութիւն:

Նորմանտիա. || ընդարձակ և երևելի գաւառ Ֆրանսիոյ. որոյ բնակիչք կոչին Նորմանք:

Նորվէգիա. || թագաւորութիւն Եւրոպիոյ 'ի Սքանտինաւիա ընդ մէջ Սվէցիոյ և ծովուն, որոյ ազգն կոչի Նորվէգ: Ունէր զմասնաւոր թագաւորս մինչև ցամն 1387, յորում միացաւ ընդ Դանիմարքայի:

Նուաճել. ‖ հպատակեցուցանել. ենթարկել. խոնարհեցուցանել:

Նուաճումն. ‖ հպատակումն. խոնարհեցուցումն:

Նուարտան. ‖ առեալ է փոխանակ տախտակամածի նաւուց:

Նպատակ. ‖ կէտ դիտման. վախճան:

Նպար. ‖ կերակուր. ապրուստ:

Նպարակ. ‖ ռոճիկ. պաշար. կերակուր ճիպհի:

Նսեմանալ. ‖ մթանալ. մթնիլ:

* * *

Շ

Շագանակ. ‖ ծանօթ պտուղ. քէստանէ:

Շահապ. ‖ տէր. պարոն. սահապ:

Շահավաճառութիւն. ‖ առեալ լինի փոխանակ վաճառականութեան:

Շահատակութիւն. ‖ երթալն 'ի պատերազմ. կամ քաջագործութի. պատերազմ:

Շաղել. ‖ պատել. պատառել:

Շաղփաղփանք. ‖ անհիմն խօսք. ավուրցուվուր բանք:

Շամբ. ‖ բազմութիւն եղեգանց անկեալք 'ի միասին:

Շառաւիղ. ‖ բողբոջ. կամ առեղն բուսեալ շուրջ ըզծառով. մերթ՝ ճաճանչ կամ 'նշոյլ արեւու:

Շար. ‖ կարգ. շարահետեւումն:

Շարոց. ‖ Թուղթք կ՟մ այլ ինչ շարեալք 'ի միասին 'ի վ՟ր թելի:

Շարունակ. ‖ մեծ ցամաք կամ տարածութիւն երկրի, որ ոչ է միջահատեալ 'ի ծովէ. Երկկիրն բաժանի յերկուս մեծամեծ շարունակս 'ի հին և 'ի նոր. Հինն պարունակէ զԵւրոպիա, զԱսիա և զԱփրիկէ. Իսկ նորն զհիւսիսային և զհարաւային Ամերիկա. Շարունակն հակադրեալ է կղզւոյն:

Շաքօ. ‖ հասարակաբար կոչեցեալ մեծ Շաքօ. գաւառ հարաւային Ամերիկոյ, որ ունի ընդ հարաւակողմն զՓարակուայի յառուկ, ընդ հարաւային արեւմուտս զԹուքուման, ընդ արեւմուտս և 'ի հիւսիս զՓերու և ընդ արեւելս զՄոքսոս. Գրեթէ բովանդակ այս գաւառ է 'ի ներքոյ արեւադարձին այծեղջեր ընդ մէջ 22 և 28 հարաւային լայնութ, կէմայն է ջերմ և խոնաւ, ուստի և սակաւառողջ:

Շեղիլ · ‖ խոտորիլ · զառտուղիլ:

Շիլին · ‖ տեսակ ինչ դրամոյ Անգղիացւոց, որ արժէ իբր քառասուն և վեց ստակ:

Շինականութիւն · ‖ գեղջկութիւն, երկրավարութիւն:

Շիփիոն · ‖ մականուանեալ երիտասարդ՝ էր որդի Պօղոսի Էմիլեայ Հռոմայեցւոյ · և եղև որդեգիր Շիփիոնի որդւոյ Ափրիկեցւոյն · Սա միաւորէր յանձին իւրում զամ առաքինութիւս Շիփիոնի Ափրիկեցւոյ գրեալ հաւուն իւրոյ և Պօղոսի Էմիլեայ հօր իւրոյ · Եղև այր մեծ գարուն իւրոյ և գոլով կարգեալ զօրագլուխ Հռոմայեցւոց արար զմեծամեծ յաղթութիւս 'ի վր Սպանիացւոց և Ափրիկեցւոց:

Շլացութիւն · ‖ կուրութիւն:

Շնչաւոր · ‖ զգայական ոգի ունող · կենդանի:

Շնչաւորել · ‖ հոգեւորել · կենդանացուցանել:

Շողոմոգութիւն · ‖ շողոքորթութիւն · կեղծաւորութիւն:

Շուայտութիւն · ‖ որկրամոլութիւն:

Շուարել · ‖ յերկիւղէ կամ 'ի տարակուսանաց ապշիլ · թմրիլ · կապիլ · շշմութիւն · շաշմիշ ըլլալ:

Շուարումն · ‖ շաշմիշ ըլլալը:

Շուք · ‖ փառք · փառաւորութիւն · պայծառութիւն:

Շռայլութիւն · ‖ չափազանց ծախք 'ի կերակուրս և 'ի հանդերձս և յայլ իրս · մսխողութիւն · աւելորդութիւն:

Շվէտ · կամ Սվեցիա · ‖ մեծ թագաւորութիւն ընդ հիւսիսակողմն Եւրոպիոյ, սահմանեալ 'ի հիւսիսոյ Դանիական Լափոնիաւ և հիւսիսային Ովկիանոսիւ, 'ի հարաւոյ Բաղտիկանաւ, և խորշիւն Ֆինլանտայի, յարեւելից Մօսկովտանաւ, և յարեւմտից Նորվէգիաւ. Ազգն եւ կոչի Շվէտ, և մայրաքաղաք Սթոքօլմ. 'Ի բովանդակ յայսմ թագաւորութեան են միայն երկու եղանակք ընդ բոլոր ընթացս տարւոյն, ձմեռն, որ տեւէ զամիսս ինն չափազանց ցրտով, և մնացեալն ամառն չափազանց տօթով:

Շրջան · ‖ մերթ՝ սահմանաւոր ժամանակ:

Շրջանակումն · ‖ բառ վաճառականութեան, որ նշանակէ երթալ յերկրէ յերկիր առ'ի ընուլ զորոց ունին զպէտս այլք. և զաւելորդ բերս նոցա հանել անտի և բերել, ուր պիտոյ են. նաև նշանակէ ըզշրջաբերութիւն դրամոց, որ լինի 'ի տուրևառութեան:

Շրջմոլել. || թափառական կամ ը հանգոյն շրջել:

Շրտուցանել. || խրտուցանել. յանկարծ զարթուցանել. շարժել. մերթ՝ ապշեցուցանել. զարմացուցանել. շփոթել:

Շրտնուլ. || խրտնուլ. խուճմիշ ըլլալ. յանկարծ շարժիլ. արթննալ. մերթ՝ ապշիլ. թմրիլ 'ի սաստիկ զարմացմանէ կամ յերկիւղէ:

Շքեղ. || փառաւոր. պանծալի:

Ո

Ոլորտ. || ծիր. կամ եզր. սահման:

Ոխերիմութիւն. || ոխակալութիւն. թշնամութիւն. ոսոխութիւն:

Ոխութիւն. || ոխ. հնացեալ բարկութիւն. խարէզ:

Ողորկ. || դուր, կոկ. կամ լերկ:

Ողջագուրել. || սիրով ընդունել. զգրկել:

Ոճիր. || մեծ ամբարշտութիւն. մեծ եղեռն անօրէնութիւն:

Ոսոխութիւն. || թշնամութիւն:

Ոստայնանկ. || կտաւ գործօղ:

Ոստայնարան. || գործարան կամ թեզկեահ կտաւ գործելոյ:

Ոստիկան. || վերակացու. հազաբարձու. կ՛մ իշխան. գլխաւոր:

Ոստին. || ցամաքային. երկրային:

Ոստրէ. || խեցեմորթ. այս է, ծովային զեռուն, որ ունի զխեցի կամ զկարծրանիւթ պատեանս. որպիսի է սատափն, միդիէզն, աշխվատէզն են:

Որթ ծովային. || ձուկն ինչ ծովու. որոյ գլուխն ունի զնմանութիւն ինչ որթու:

Ութրէքթ. || բազմամարդ և գեղեցիկ քաղաք գաւառացն միացելոց սահմանակից Հօլանտայի. 'Ի վերջին ամսն Լուտովիկոսի ժդերորդի արքային Ֆրանսիոյ եղև անդ հռչակաւոր ժողովն, որ ետ խաղաղութիւն բովանդակ Եւրոպիոյ յամի տն 1713:

Ուլունք. || հիլուն. պօնճուխ:

Ուխտ. || մերթ՝ յօժարութիւն. փափագ. մերթ՝ ժողով եեւ ուղեցականաց ։

Ուղերձել ․ ‖ ուղղել ՚ի կողմն ինչ ․ ուղղակի ձգել ․ դիմեցուցանել ։

Ուղխ ․ ‖ հեղեղատ ․ սել ։

Ուղղաւորութի՟ ․ ‖ առաջնորդութի՟ ․ կառավարութի՟ ։

Ուղփայօտ ․ ‖ տեսակ ինչ նկարու միովեւեթ գունով ․ որ լինի պայծառութ՟ եւ մթութ՟ նորին գունոյ ․ զոր Խտալացիք կոչեն քիարօսքուրօ ։

Ունայնութի՟ ․ ‖ մերթ՝ սնապարծութի՟ ․ կամ փքացումն ։

Ունկի (օնցա) ․ ‖ չափ ծանրութ՟ իրաց ․ եւ է կրկին՝ մեծ եւ փոքր ․ մեծն է 12 ․ տրամ ․ եւ փոքրն՝ 8 ․ տրամ ։

Ունկնդրութի՟ ․ ‖ մերթ՝ փոխանակ ատենի արքունեաց ։

Ուռճալից ․ ‖ բարգաւաճ ․ առատ ․ ճոխ ։

Ուրուական ․ ‖ անկատարն կամ թաղախն որոյ եւ իցէ գործոյ ։

Ջ

Ջանարգապուրդ ․ ‖ ամենեւին անարգ ․ գծուծ ․ վատթար ։

Ջափ ․ ‖ առեալ է փոխանակ խորհրդոյ կամ խորհրդածութե՟ն ։

Ջափաւորութիւն ․ ‖ մերթ՝ պարկեշտութի՟ ․ խոնարհութի՟ ․ ՚ի չափու ունել զանձն ։

Ջէուլթայ ․ ‖ քաղաք Ափրիկոյ առ ծովեզերբն Մարբարիոյ ՚ի թագաւորութե՟ն Ֆէսայ հանդերձ նաւահանգստիւ եւ Եպիսկոպոսարանաւ ստորակարգեցելով Լիսպոնայի ․ Յոհաննէս արքայն Փորթուկալլիոյ էառ զայն ՚ի Մաւրեաց յամին 1415 ։

Ջեռնէ ․ ‖ կղզի ինչ Ովկիանոսի ․ որ թերի թէ իցէ այն, զոր այժմ կոչեն Արկուիմ ։

Ջիչէրօն (Մարկոս Թուլլիոս) ‖ հռչակաւոր ճարտասան Հռոմայեցի եւ մի ՚ի մեծագոյն արանց դարուն իւր ․ Ծնաւ յԱրփինոն քաղաք Խտալիոյ ՚ի թագաւորութե՟ն Նապօլւոյ 116 ամօք յառաջքան զՔն ․ Թուլլիոս հայր իւր կալաւ բազում հոգս մի դաստիարակութե՟ն նր ․ եւ առաքեաց զնա ՚ի Հռօմ առ ՚ի ուսանել ․ Ջիչէրօն ուսաւ անդ անդստին ՚ի տղայութենէ զՀռոմական գիրս ․ եւ եցոյց զքանքար իմն արտաքոյ կարգի մի գիտութ՟նց և վ՟ս իրակութեանց. Այս չոգաւ 'ի Յունաստան. և անդ ուսաւ 'ի ներքոյ մեծահռչակ ճարտասանից և իմաստասիրաց. և եցոյց զայնքան ճոռոմախօսութ՟ի 'ի միում ճառի, զոր ատենաբանեաց 'ի Ռոտոս, մինչզի Ապողոնիոս Մօլոն վարդապետ իւր աղաղակեաց. ‖ Ողբամ զդժբաղդութ՟ի Յունաստանի, որ գոլով յաղթեալ 'ի զինուց Հռոմայեցւոց՝ ունէր ես յաղթիլ 'ի ճոռոմութ՟ե աշակերտին իւրոյ. ‖ Դարձեալ 'ի Հռոմ Չիչերոն եղև շահապ և բդեաշխ Սիկիլիոյ. 'Ի դարձի իւրում ընկալաւ զպաշտօն առաջին պրետորի և Հիւպատոսի ընդ Անտոնիոսի. 'Ի ժամանակի հիւպատոսութ՟ե իւրոյ իրազեկ եղև երդմնակցութ՟ե Քաթիլինայի. որով արժանի եղև կոչել հայր հայրենեաց. Բայց հակառակութ՟ն Կղաւդեայ ետ աքսորել զնա ոչ յետ բազմաց. այլ յետս կոչեցաւ 'ի մօտակայ ամ՟ին 'ի թախանձանաց Պոմպէի զօրավարին. և անուանեցաւ փոխանակ բդեշխի Սիկիլիոյ. Չիչերոն յարեցաւ 'ի կողմ՟ն Պոմպէի 'ի քաղաքական պատերազմունսն. Բայց յետ մահուան առնն մեծի՝ 'ի կիր էարկ զանարգագոյն շոգմոգութ՟իս առ 'ի վերահաշտիլ ընդ Յուլեայ կայսերն. Այս է թերևս այն, որ առաւել գնէ նմա պարսաւանս 'ի կեանս իւր. Թէպէտ էր ներքին բարեկամ Պրուտոսի դաւաճանին, սակայն ոչ կալաւ մասն յերդուակցութեանն ընդդէմ կայսերն, մինչ թաքուն պահեցաւ 'ի նմանէ. Յետ մահուան Յուլեայ կեսարու եղև նըպաստաւոր Ակուստեայ կայսեր. Բայց Անտոնիոս, ընդդէմ որոյ գրեալ էր Չիչերոն, եղեալ մի յերից իշխանաւորացն Հռոմայ՝ ետ սպանանել զնա 'ի ժամանակին, յորում փախչէր 'ի դահաւորակի դէպ ծովուն Քայեթայ 43 ամօք յառաջ քան զՔ՟ս. Սպանօղն եղև ոմ՟ն Փօփիլիոս Լէնա անուն. զորոյ Չիչերոն կանխաւ ապրեցուցեալ էր զկեանս 'ի դատի միում, յորում ամբաստանեալ էր վ՟ս հայրասպանութ՟ե. Այրս այս չար էհաս զգլուխ և զաջ ձեռն նորա. և երբեր առ Մարկոս Անտոնիոս. որ ետ դնել զայն յամպիոնին, ուր սովորէր հրապարակախօսել. Մնացեալ են 'ի նմանէ բազում գործք. որք հասարակաբար բաժանին 'ի չորս մեծամեծ մասունս. Առաջինն են դպրութիւնք, որք ճառեն զճարտասանական արհեստէ. Երկրորդն են ճարտասանական ճառքն. Երրորդն են Նամակքն գրեալք առ զանազան անձինս. Չորրորդն են իմաստասիրական գործքն:

Ձիօքքօլաթ. ‖ տեսակ ինչ ըմպելւոյ կազմեալ 'ի զանգուածոյ իմեքէ բաղադրեցելոյ յընկուզոյ կամ 'ի նշոյ քաքաօ ծառոյն և յայլ պէսպէս նիւթոց. Կիրառութիւն սորա ուսան Եւրոպացիք 'ի Մէքսիքացւոց:

Ձղջիկն. ‖ գիշերահաւ. սեկեմուկ. կէճէ ղուշի:

Ձու. ‖ գնացք կամ գնալն բազմութեան իրիք 'ի ճանապարհ:

Ձքնաղ. ‖ խիստ գեղեցիկ. նատիր. մէնշուր:

Ձքնաղարան. ‖ հաւաքումն իրաց նշանաւորաց վասն գերապանցութեան կամ ցանցաղագիւտ լինելոյ. մերթ՝ գիրքն, որ ճառէ զայսպիսեաց:

Ձքնաղութիւն. ‖ անպարատութիւն. գեղեցկութիւն:

Պ

Պալարակապ. ‖ խապառալը. (չէրպապ:)

Պակուցանել. ‖ սաստիկ երկեցուցանել. զարհուրեցուցանել:

Պահամա. ‖ կղզի հիւսիսային Ամերիկոյ՝ մի 'ի Լուքայեանց. յորմէ անուանի յորձանուտն Պահամայի՝ (առաւել սրընթացն, որ իցէ 'ի Նոր աշխարհին ընդ Ֆլորիտա և ընդ Լուքայեան) և ցանցաղն Պահամայի ընդ հիւսիսակողմն կղզւոյն Բուպայի. Նաւահանդէսք Սպանիացւոց անցանեն ընդ այս նեղուց առ 'ի երթալ 'ի Հաւանա:

Պաղեստինէ. ‖ գաւառ Ասիոյ՝ սահմանեալ յարեւմտից միջերկրական ծովով, 'ի հիւսիսոյ Սուրիաւ, յարեւելից լեռամբքն, որ յայնկոյս Յորդանանու, 'ի հարաւոյ Արաբարխու. ՚Ի հնումն կոչէր երկիր Քանանու կմ Քանանացւոց. յետոյ անուանեցաւ Պաղեստինէ, երկիր աւետեաց, Հրէաստան կամ Թագաւորութիւն Հրէաստանի, երկիր Իսրայէլի և վերջապէս երկիր սրբ. որոյ մայրաքաղաքն է Երուսաղէմ:

Պաղեղ. || շապ:

Պաճար. || անասուն. խաշն կամ անդեայ:

Պաճարել. || ճարել. հոգալ. գտանել:

Պաճուճել. || զարդարել:

Պայէթթօն. || տեսակ ինչ չուխայի. զոր կրեր ցեղ ինչ Ամերիկացւոց:

Պայման. || դաշն. թէութիւն. շարթ. մերթ՝ որպիսութիւն, վիճակ. հալ:

Պայքարել. || պատերազմել. կռուիլ:

Պանանա. || ծառ ինչ յարեւմտեան Հնդկաստանի. որոյ պտուղն կոչեցեալ է թուզ Ադամայ:

Պանծալ. || պարծիլ. գովել զինքն:

Պանծանք. || փառք. շուք:

Պառակումն. || բաժանումն. ֆրխայ.

Պաստառ. || բարակ կտաւ:

Պատահար. || չար դիպուած. պատահումն:

Պատանդ. || մարդ գրաւել. ռէհին գրած մարդ:

Պատաղել. || զբաղել:

Պատգամաւորութիւն. || դեսպանութիւն. էլչիութիւն:

Պատճէն. || օրինակ թղթոյ կամ նամակի:

Պատնէշ. || հողաբլուր. արգել. թապիէ. մեթերիզ:

Պատուիրակ. || յանձնառու. որում յանձնի գործ ինչ ՚ի վերնադունէ. կմ խօսք տանող բերող:

Պատրուակ. || պատճառանք. մահանայ. մերթ՝ ծածկոյթ.

Պատրուակել. || ծածկել, թաքուցանել:

Պարագրել. || շուրջ պատել. ՚ի մէջ առնուլ. չէվրէէ մէջ առնել:

Պարակայ.) || շրջակայ իր.
Պարակայութ) որ շուրջ կայ. մերթ՝ որպիսութիւն ընկերակցեալ իմիք. հանգամանք, որ մնածի շուրջ զիմիք:

Պարապ. || յարմար ժամանակ գործելոյ. դիպաւորութիւն. տիւշուշ:

Պարասահմանութիւն. || սահմանաւորութիւն. պատելն սահմանօք կամ առնուլն ՚ի մէջ սահմանաց. սինօռէ մէջ առնուլն:

Պարաւանդութիւն. || պարտաւորութիւն:

Պարբերական (հողմ) ‖ որ յորոշեալ ժմկի դառնայ 'ի շնչել վերստին:

Պարբերութիւն. ‖ շրջան կմ՟ որոշեալ ժամանակ՝ մերթ՝ կանոնաւոր զարգացումն. կամ յառաջադիմութիւն իրիք:

Պարեխ. ‖ ապառաժ կամ գահավիժական լեառն կմ՟ քարափն. այս է, մեծամեծ քարինք անելանելիք գոյացեալք առ ափամբ գետոց կամ ծովու:

Պարեկապան. ‖ շուրջ եկօղ պահապան գիշերոյ:

Պարզել. ‖ բանալ. յայտնել:

Պարէն. ‖ ապրուստ. կերակուր:

Պարունակ. ‖ շրջանակ. բոլորակ:

Պարչէլլօնա. ‖ մեծ՝ փարթամ՝ գեղեցիկ՝ հզօր և բազմախուռն մայրաքաղաք բոլոր Քաթալօնիոյ միոյ 'ի գաւառացն Սպանիոյ՝ հանդերձ գեղեցիկ նաւահանգստիւ 'ի վր՟ միջերկրական ծովուն:

Պարպատոս. ‖ կղզի Ամերիկոյ. և է մի յԱնթիլեայն՝ մերձ ը՟ արևելս Սան Լուիճեայ. Այս է հարգունաւութին առաւել երևելի, զոր ունին Անգղիացիք յԱնթիլեայսն. Կղզին Պարպատոս է ամենաբերրի մանաւանդ շաքարի. Տունկք տեսակին անդէն միշտ կանաչ. Յայսմ կղզւոյ հոսէ գետ մի՝ կոչեցեալ Քնուրիկ. որոյ ջուրն ծածկեալ է հիւթով իմիք, որ վառի իբրև զձէթ՝ և որ 'ի գործ ածի 'ի պէտս ճրագաց:

Պարսատիկ. ‖ պարսէտ. սափան.

Պարտասեալ. ‖ լքեալ. ուժաթափեալ. խոնջեալ:

Պարտասեցուցանել. ‖ լքուցանել. ուժաթափ առնել:

Պարտասութիւն. ‖ խոնջումն. յոգնութիւն:

Պեղել. ‖ հանել 'ի դուրս զփորեալսն կամ զհողսն:

Պետրոս առաջին մեծն. ‖ գերահռչակ ցար (այսէ, կայսր) Մոսկովիոյ և մի յայնց շնաշխարհիկ և արտաքոյ կարգի նահապետաց, զորս յառաջադիմութիւն ազգ սովոր է յարուցանել առ'ի հանել զազգս 'ի բարբարոսութէ և 'ի տգիտութէ. Ծնաւ 'ի 11. յունիսի յամին 1673. և յաջորդեաց կայսերն Ալէքսիոսի Միքայէլեանի հօրն՝ 'ի հասակի տասն ամաց՝ նախադասեալ Յօհաննու եղբօր իւրոյ անդրանկի. որոյ առողջութիւն էր նաճաղ և ոգին տկար. Յարեաւ յայսմ առթի ապստամբութի իմն 'ի շնորհս անդրանկին. և առ 'ի դնել վախճան քաղաքական պատերազմին՝ որոշեցաւ, զի երկոքին եղբարքն թագաւորեսցեն 'ի միասին. Պետրոս ծանեաւ վաղվաղակի զպակասութիս դաստիարակութեն, զոր տային նմա. և բնաւորեալ կենդանի իմն յօժարամտութ առ զինուորական մարզմունս՝ կազմեաց զընկերութի իւր յխուռն արանց հրամայեալ յարտաքին պաշտօնատարաց, որք էին ընդունակք և առնէին զկրթութիւն նց ըստ Գերմանացւոց. Նա ինքն կամեցաւ մտանել յայս խումբ, և կամեցաւ ծառայել 'ի խոնարհագոյնն յամ աստիճանաց. որպիսի է թմբկահարինն. և աղաչելով զպաշտօնատարսն մտանել զինելին նր ցար, եկեաց թոշակաւ իւրով, ննջեաց 'ի վրանի թմբկահարի զհետ խմբին իւրոյ. և հնազանդ եղև հրամանաց նց իբրև եւ փոքրագոյն զինուոր. Ապա եղև սարճէնթ յետ վաստակելոյ զայն ը դասման պաշտօնատարացն. և ամբարձաւ աստիճան առ աստիճան առ զինուորական արժանապատուութիւն, որպէս եթէ լեալ էր սովորական ոմն զինուոր բաղդի. Այսու կամէր ուսուցանել ազնուականացն, թէ վաստակն է և ոչ տոհմն միայն բաւական պատճառ ստանալոյ զզինուորական արժանապատուութիւն. Յայս առաջին ընկերութի յարակցեաց և զայլս բազումս, և կերպաւորեաց 'ի սուղ ժամկի զերևելի իմն գունդ վաշտից լաւագոյն կրթելոց և առաւել հաւատարմաց քան զՍթռէլիցս. որոյ կարի մեծ զօրութիւն յիրաւի ահագուցանէր զնա. Յովհաննէս եղբայր իւր գոլով մեռեալ յամին 1696, մնաց ինքն միայն տէր կայսրութեն Մոսկովիոյ. և տեսաւ 'ի վիճակի դնելոյ 'ի գործ զմեծամեծ գաղափարսն, զոր ինքն կազմեալ էր 'ի միտս իւր. Հանդիսացոյց զսկիզբն թագաւորութեն իւրոյ պաշարմամբ Ազօֆայ, որ է Օզով, զոր էառ 'ի Թուրքաց յամին 1697. ծանուցեալ յայսմ պաշարման զկարևորութիւն ծովային զօրուն, առաքեաց յամին 1698, զհրեշտակութի՟ 'ի Հօլանտա. և ինքն ևս գնաց յանծանօթս է՟ այսմ հրեշտակութե՟ առ'ի ուսանել ինքնին զկերտուած նաւուց. Ետ գրել զինքն յԱմստրդամ 'ի ցուցակի գործաւորաց է՟ անուամբ Պետրոսի Միքայէլօֆայ. և աշխատեցաւ 'ի գործատան նովին եռանդիւ և հանապազորդութե՟, որով գործէին պարզ հիւսունքն. Ապա չոգաւ յԱնգլիա առ'ի կատարելագործիլ. ուր քաջ ուսեա՟ կերտել զնաւս. դարձաւ 'ի Հօլանտա առ 'ի անդրէն պատսպարել 'ի տէրութիս իւր է՟ ճանապարհ Գերմանիոյ. 'Ի Վէննա լուաւ զապստամբութի՟ 40000 Ստրելիցացն. յորմէ պարաւանդեցաւ երթալ փութանակի 'ի Մոսկով. ուր հասեա՟ 'ի վերջն 1699 ամին, ջնջեաց զամենեսին. 'Ի հետևեալ ամին ունելով դաշն է՟ Ագուստոյ արքային Փօլոնիոյ եմուտ 'ի պատերազմ է՟ Կառոլոսի Ժբերրորդի արքային Շվետիոյ. և զմտաւ ածեալ, թէ Շվէտք էին 'ի բազում ժամց հետէ պատերազմականք և քաջամարտք, և թէ է՟ հակառակս Մոսկովք ոչ ունէին, բայց եթէ զթեթև իմն ներկուած զինուորական կրթութե՟, սովոր էր ասել. Ես կարի քաջ գիտեմ, զի փաշտք իմ է՟ երկայն ժամց եղիցին հարուածեալք. այլ սոյն այս ուսուսցէ նց 'ի վախճանի յաղթել. Ոչ խաբեցաւ յայսմ. զկնի մեծամեծ վնասուցն շահեցաւ 'ի վր՟ Շվէտաց յամին 1709, զմեծահամբաւ պատերազմն Փուլթաւայի. և էառ 'ի նոցանէ զԼիվոնիա, զԻնկրիա, զՖինլանտիա և զմասն ինչ Փօմերանիոյ. Յաճիկք դրժելով զառժամանակեայ հաշտութիւն, զոր արարեա՟ էին է՟ նմա, յանկարծակի փակեցաւ 'ի զօրաց նոցա 'ի վերայ սահմանաց եզեր Փրութ գետոյն. Երևէր յայնժամ անխուսափելի կորուստ իւր. Բայց ցարուհին Կատարինէ հաճեցոյց զզօնութե՟ն զմեծ Վեզիրն, տալով նմա խոստանալ զմեծ ինչ գումար ոսկւոյ. և խոհականութե՟ ցարին լցոյց զմնացեալն. Յամին 1716. չքացոյց զորզարժանաւորութի̃ պատրիարքին Մոսկովաց. 'Ի նմին ամի արար զերկրորդ ճանապարհորդութիւնն 'ի Գերմանիա, 'ի Հօլանտա և 'ի Ֆրանսիա յամին 1717. Հրահանգեցաւ 'ի վերայ այնր ամի, որ կարէր աճեցուցանել զլոյս իւր և զճանաչմունս իւր. այց արար համալսարանին գիտութեանց. որոյ եղև իւրն յետոյ անդամ պատուաւոր. և թղթակցեցաւ ը̃ ամ̃ գիտնոց. որոց առաջադրէր զերևելի շահեկանութիս և զփոխարէնս վասն ածելոյ զն̃ս 'ի Մոսկովաստան. Ապա իբրև եմուտ 'ի Սօրպօնա 'ի հռչակաւորագոյն դպրատունն աստուածաբանութե̃, տեսեալ զմահարձան կարդինալին Ռիշելիւայ՝ ընդոստեաւ 'ի վե̃ արձանի այսր գերահռչակ գործակալի թագաւորութեն, անկաւ 'ի վե̃ պարանոցի նորա և ճգրկեաց զնա, ասելով. Ընդէ՞ր ոչ ես դու կենդանի. ես պարգևէի քեզ զկէս թագաւորութե̃ իմոյ առ 'ի ուսանել կառավարել զմիւսն. Դարձ արարեալ 'ի Մոսկովաստան շահաւորեցաւ 'ի խռովութենցն Պարսկաստանի և տիրեաց քաղաքին Դարբանդայ և այնր ամի, որ 'ի դէպ էր նմա 'ի վե̃ կասպիական ծովուն առ 'ի տարածանել ընդարձակագոյնս զվաճառականութիւնն Մոսկովիոյ. Մեռաւ 'ի 8 փետր. յամին 1725. ամաց յիսուն և երից՝ համբաւով դիւցազին և միոյ 'ի մեծագոյն նահապետաց, որք եղեալ իցեն յաշխարհի. Մոսկովաստան 'ի նմանէ ճանաչէ զկարողութի̃ իւր, զօրէնս իւր և զբարի կանոնաւորութիւն, որ տեսանի այժմոյս. Նա որչափ ձեռնհաս էր էած յաշխարհ իւր զամ̃ արտաքինսն զոյնոսիկ, որք յարմար էին 'ի լուսաւորել և 'ի կրթել զհպատակս իւր, այսէ զզօրականս ցամաքի և ծովու զնաւավարս, զհնարագէտս, զքանակարանս, զճարտարապետս, զբժիշկս, զվիրաբուժս և զամ̃ ցեղ արհեստաւորաց. Նա շինել յամին 1704 զհամբաւաւոր քաղաքն Փեթերպուրկ, որ է Փեթրօպօլիս. և կցորդեաց ջրմղաւ միով զգետն Վոլքօվա, որ անցանէ յայս քաղաք, ընդ Վօլկայի. Ամիացոյց զԲեծ բաղբազմութե՟ն բերդից. եդ յոտին զհետեւակազօր մի հարիւր հազար արանց. կազմեաց զծովեայս 40 նաւուց պատերազմի և 200 կալերաց. Եմոյծ զգերազանցիկ իմն հրահանգ քաղաքական ՚ի մեծամեծ քաղաքս. Հիմնեաց զդպրատունս ՚ի Մօսկով, ՚ի Փեթերբուրկ, և ՚ի Կիօֆ վ՟ լեզուաց, վ՟ գեղեցիկ դրոց և քանդակագործութեանց, վ՟ հրապարակին դաստիարակութե՟ց, անդամազննութե՟ն, զդիտանոց մի աստղաբաշխութե՟ն, զպարտէզ մի տնկոց, զգեղեցիկ տպարանս, զգրքատուն մի արքունի ևն: Այս մեծ նահապետս արար զմեծագոյն մասն այսոցիկ իւրայ յաղմուկս պատերազմաց, զորս տանելոց էր. Զա՛մ ինչ փորձեաց առ՚ի յորդորել միշտ առաւել հրահանգս զժողովուրդս իւր, և առ՚ի ներքս ածել զարհեստս և զգիտութիւնս. Էր նա մեծահանճար, առատաձեռն, ժրագլուխ, աշխատասէր, հաւատարիմ, քաջասիրտ և յարմար ՚ի կերպաւորել և յարդինացուցանել զընդարձակագոյն գաղափարս. Սակայն հանդերձ այսու ամէն պարսաւեալ է մանաւանդ վ՟ անողորմութեանն, որ ոչ խնայեաց և ոչ յորդին իւր սեպհական, զոր ետ սպանանել անագորոյն իմն եղանակաւ:

Պերճ. ‖ ճոխ. կամ շքեղ. փառաւոր:

Պերճութի՟. ‖ ճոխութի՟. կամ շուք. փառաւորութի՟:

Պէնին. ‖ գեղեցիկ մայրաքաղաք ՚ի համանուն թագաւորութեան իմիք Ափրիկոյ ՚ի վ՟ խորշին Կուինէյ. Թագաւորն Պէնինու է հզօր յոյժ, կարող գոլով ՚ի սուղ ժամու յարուցանել զզօրս հարիւր հազար արանց. Ոչ տայ զանձն տեսանել ՚ի հրապարակի, բայց եթէ միանգամ ՚ի տարւոջն. և յայնժամ առ՚ի առնել նմա պատիւ սպանանեն զ216 գերիս. Յորժամ մեռանի թագաւորն թաղեն ընդ նմա զմեծագոյն մասն հանդերձից իւրոց և կահուց. և սպանանեն բազումս առ՚ի յընկերել նմա. Պէնինք են համարձակք և քաջասիրտք. Ամենքեան ն՟ք են գերիք թագաւորին, ունելով ՚ի վ՟ իւրեանց զկտրուած ինչ ՚ի նշան գերութե՟ն իւրեանց. Տեսանին ը̃ Թաղս Պէնինու անձինք երկաքանչիւր սեռի երթալ մերկ յոտից մինչև ցգլուխ. քանզի մարդիկ ոչ համարձակին կրել զզգեստ ինչ, եթէ ոչ են ընկալեալ ՚ի ձեռաց արքային. և ոչ իսկ աղջկունք զհոլանի պճղնաւորն եթէ ոչ պարգևեալ լինի նց̃ ՚ի խոստացեալ փեսայէ իւրեանց. Յետ մահուան մեծի ուրուք պարոնի Պէնինք զենուն հասարակաբար զմեծ բազմութի̃ գերեաց. և առնեն ը̃ միջոց եօթն աւուրց զտօնս և զուրախութիւս, կաքաւելով Թմբկօք և պարուք շուրջ զգերեզմանաւն: Գետին այսր Թագաւորութեն ծածկեալ է անտառօք. և ոռոգեալ գետովք. Են ՚ի նմա ա̃մ ազգ գազանաց. ոչխարքն ունին մազս փոխանակ բրդոյ. երկիրն բերէ զպղպեղ և զբամբակ. Հօլանտեցիք առնեն անդէն զմեծ տուրևառութի̃:

Պէնկալա. ‖ Թագաւորութի̃. իսկ Հնդկաց ՚ի վ̃ե համանուն խորշի. Յայսմ Թագաւորութեն առատ է յոյժ մետաքս, բամբակ, շաքար, լեղակ, ցորեան, պղպեղն, կոճապղպեղ. ևն̃. որոյ մայրաքաղաք է Տաքա:

Պիմինի. ‖ փոքրիկ կղզի հիւսիսային Ամերիկոյ՝ մի ՚ի Լուքայեանց մերձ ՚ի յորձանուտն Պահամայի իբր հինգ փարսախ լայնութի̃. ծածկեալ յանտառաց և բնակեալ ՚ի վայրագաց. Այս կղզեակ է դժուարամատոյց յաղագս ծովաժայռիցն. Բայց է գեղեցիկ յոյժ:

Պիսակաւորել. ‖ պիսակաւոր կամ խայտ առնել. խատուտիկ կամ պէնէկ պէնէկ անել.

Պիսքալիացի. ‖ ՚ի Պիսքալիոյ, որ է ծովեզերեայ գաւառ ինչ Սպանիոյ:

Պիսօն. ‖ վայրենի արջառ կամ գոմէշ. որ գտանի յԱմերիկա:

Պիտակութի̃. ‖ անպէտ սովորութի̃. վատթարութի̃. զեղծում̃:

Պիտառութի̃. ‖ կիրառութի̃. վարում̃:

Պիւթագորաս. ‖ գերահռչակ իմաստասէր և մի ՚ի վեհագոյն անձանց, որք երևեցան յաշխարհի. Ծաղկէր իբր 540 ամօք յառաջ քան զքս̃. Որոշակի ոչ լինի գիտացեալ տեղի ծննդեան նր̃. բայց առաւել հաւատալի կարծիքն այն է, թէ իցէ ծնեալ 'ի Սամոս կղզին. Սա զառաջինն վարէր զարհեստ ըմբշամարտութն. բայց լուեալ 'ի Փերեկիտեայ իմաստնոյ խօսիլ 'ի վր անմահութն հոգւոյ, այնպէս հարաւ 'ի բանից նորա, մինչզի աշակերտեցաւ նմա. և ետ զանձն ողջոյն յուսումն իմաստասիրութն. Նա չոգաւ 'ի Յունաստան, յԵգիպտոս, 'ի Փիւնիկէ, 'ի Քաղդէա և յայլ բազում աշխարհս. ուր վարեցաւ զ գիտնոց և ուսաւ զամենայն կարծիս նոցա 'ի հիմանց. Դարձ արարեալ 'ի Սամոս՝ ոչ կարելով հանդուրժել բռնաւորութեանն, որ վարիւր անդէն, գնաց ուսուցանել յայլ քաղաքս. և եղև առաջինն 'ի նախնեաց, որ տեսանելով զանուն իմաստնոյն, որ հասարակաբար տուեալ լինէր արանց գիտնաւորաց, գոլ կարի իմն ամբարտաւանական և լի գոռոզութբ շատացաւ կոչիլ՝ Փիլոսոփոս, որ է սիրող իմաստութն. Յետ ուսուցանելոյ 'ի Յունաստան, խոյս ետ յայն մասն Իտալիոյ, որ կոչիւր մեծ Յունաստան. ուստի աղանդ իւր կոչեցաւ Իտալական. Նորա զօրական բնակութի իւր 'ի Կրօթօն, 'ի Մէթափօնթօ, 'ի Տարանթօ և յայլ մօտաւոր քաղաքս. Եղև գերապանծ իմաստութբն իւրով և առաքինութբն. և աշխատեցաւ օգտիւ 'ի նորոգել և 'ի կրթել զաշխարհ. Էր այնպէս ճոռոմախօս, զի հաւանեցոյց յորդորանօք իւրովք զբնակիչս Կրօթօնայ քաղաքին մեծի ընկղմեցելոյ 'ի ցոփութիս, փախչել 'ի զեղխութե և 'ի շռայլութեց և կեալ ըստ կանոնաց առաքինութեան. Սա սահմանեաց աշակերտաց իւրոց զնորընծայութի իմն լռութն, որ տևէր գոնէ զամս երկուս. իսկ երբեմն տայր տևել զամս հինգ վր ՚նց, զորս դատէր առաւել հակեալս 'ի խօսիլ. Ունէր զնոսա զամենեսին կեալ 'ի հասարակի. Նոքա հրաժարէին 'ի ստացուածոյ հայրենի ժառանգութեց իւրեանց. և բերէին զինչս իւրեանց առ ոտս վարդապետին. Նա 'ի նախա-

պետաոսնտական հօգոց իւրոց եղև ուղղելն զպղծմունսն, որք գործէին յամուսնութիւնս. Ոչ միայն կամէր նա, զի արք թողուցուն զհարճսն, այլ և զի պահեսցեն զօրէնս ողջախոհութեան և ամօթոյն առ կանայս իւրեանց. Փափագ իւր մի հասարակաց բարւոյն որոշեաց զնա տանել զկրթութիւնս իւր մինչև 'ի պալատս մեծամեծաց. Սա քաջ վարժեաց գրեթէ զամ̃ քաղաքս Իտալիոյ. եդ վախճան պատերազմաց և ներքին խռովութեանց. և կալաւ զըսգում՝ մասն կառավարութեան Կրօթօնայ, Մէթափօնթայ և Թարանթօի և այլոց մեծամեծ քաղաքաց. որոց աւագանին պարաւանդեալ էին առնուլ և զհետ երթալ խորհրդոց նր̃. Յաւէտ կրկնէր նա, թէ ոչ էր պարտ առնել պատերազմ, բայց եթէ ընդ հինգ իրաց, այս է, ‖ ընդ հիւանդութեան մարմնոյ, ընդ տգիտութ̃ե հոգւոյ, ընդ կրից սրտի, ընդ ապստամբութեանց քաղաքաց, և ընդ երկպառակութեանց տանց. Այսոքիկ են հինգ իրքն, (աղաղակէր) ընդ որս պարտէր կռուիլ ամ̃ զօրութ̃ ևս և սրով և հրով. ‖ Արդարև Պիւթագորաս եբեր զմեծամեծ բարիս աշխարհի քաղաքականն վարժմանցն իւրովք. և կարէ պարծիլ սնուցեալ զաշակերտս, որք յետոյ եղեն գերազանց օրէնսդիրք. Այլ սա ոչ միայն էր քաջ իմաստասէր և քաղաքական, այլև աստղաբաշխ, երկրաչափ, թըւաբան և վարժեալ յայլ ամ̃ մասունս քանակարանութ̃ն. 'Ի մէջ ամ̃ նախնի մատենագրաց արտաքնոց ոչ ոք եղև, որ առաւել քան զնա մերձեցեալ իցէ առ ճշմարիտ վարդապետութիւնն 'ի վ̃ը ա̃ծութ̃. Ուսուցանէր նա, ‖ թէ է մի միայն ա̃ծ սկզբնապատճառ ամ̃ իրաց. թէ ա̃ծ է միտք իմն, հոգի իմն անսահման. և թէ 'ի ձեռաց նորա ելեալ են տարերք, ձևք, թիւք և երևելի աշխարհս և այն ամ̃, զոր պարունակէ. թէ ա̃ծ է բնութ̃ի մի անկիրք, թէ ոչ է ենթարկեալ զգայութեանց, թէ ոչ կարէ երևեցուցանել պատկերաւ իւիք, և թէ ոչ

է

է խմացեալ, բայց եթէ 'ի մտաց ||. Նոյնպէս բարոյականն իւր գովանելի է. Կամէր նա, զի վախճան ամ՟ գործոց մերոց և ամ՟ ուսմանց լինիցի առնելն զմեզ նմանս այ՟. և եթէ հետախուզութիւն ճշմարտութեն էր մի միայն հայթհայթանք ժամանելոյ առ այն. և եթէ առ 'ի ճանաչել զճշմարտութիւն պիտոյ է որոնել զայն մաքրեալ ոգւով, որ ափրեալ իցէ կրից և որ նմանիցի այ՟. || Առաւելագոյն 'ի պարգևաց (ասէր նա) զոր ած՟ արարեալ իցէ մարդոյ, է առնել զճշմարտութի և առնել զբարերարութիս այլոց. Վն զի այսոքիկ երկու իրք են գործք այ՟. են. || Աշակերտք Պիւթագորայ այնչափ մեծ վարկումն ունէին զնմանէ, մինչ զի համարէին յանցանս զերկմտելն զճշմարտութէ կարծեաց նր. և յորժամ հարցեալ լինէին զպատճառէն, պատասխանէին զայս միայն. նա ասաց. այսինքն, եթէ պարտ էր հաւատալ սոսկ խօսից վարդապետին իւրեանց. Բայց մեծագոյն մոլորութիւն Պիւթագորայ եղև կարծիքն և վարդապետութի շնչափոխութեն. զոր ուսեալ էր յԵգիպտոս. որով դնէր զորոշելն իբր թէ շնչոց անցանել յաւխտենից, և 'ըստ ժամս ժամս փոխել 'ի մարմնոյ 'ի մարմին մարդոյ, անասնոց, թռչնոց, չորքոտանեաց են. Պարագայք մահուան նր զանազանաբար պատմին. բայց առաւել հաւատալի է, թէ յետ կալոյ զամս 20 'ի Կրօթոն, մեռաւ անօթի 'ի խորին ծերութեն իւրում 'ի Մեթափօնթօ, ուր ապաւանացեալ էր:

Պշուցանել. || աչքը տնկել տալ բանիմը վրա:

Պողոտայ. || փողոց. սօխախ:

Պոնտոս. || մեծ գաւառ Անատօլիոյ առ եզերբ սեաւ ծովուն. որոյ մայրաքաղաք է Տրապիզոն:

Պուէնոս Այրէս. || գեղեցիկ քաղաք Իսպանիա Հարաւային Ամերիկոյ 'ի Փլաթա անուանեալ գաւառին Փարակուայեայ. Ստացեալ է զանուն իւր 'ի բարի օդոյն, որ շնչէ անդէն:

Պուրկօս. || մեծ և փարթամ քղք Սպանիոյ՝ մայրաքա՛ Հին Կասթիլիոյ Արքեպիսկոպոսանիստ:

Պողո-

Պտղոմէոս կամ Պտողոմէոս. (Կլաւդիոս) ‖ գերահռչակ քանակաբան ծնեալ 'ի Փելուսիոն քաղաք Եգիպտոսի, մականուանեալ 'ի Յունաց՝ գերա͞ծային և գերիմաստ. Ծաղկէր յԱղեքսանդրիա յերկրորդ դարուն առ կայսրութեամբ Ադրիանոսի և Մարկոսի Աւրելիոսի շուրջ զ 138 ամաւն ք͞նի. Կայ երկրագրութ͞ի մի ն͞ր և բազում գիտնական գործք 'ի վ͞ր աստղաբաշխութ͞ն. Գլխաւորքն են 1. Ալմակեստն. (ժ͞գ գիրք, որ պարունակէ զկարգ մասանցն աշխարհի. կամ զհաւաքումն աստղաբաշխական գիտողութ͞եց) 2. Զաստղաբանական դատմանց. 3. Անկարգակերպուածքն. այս է, գունտ գծագրեալ 'ի մակերեւոյթի: Ընդ բազում դարս հետեւեցան իմաստասէրք և աստղաբաշխք աշխարհագրիցն Պտղոմէայ. Նոյն գիտնականք թողին զայն առ'ի զհետ երթալ աշխարհակարգին Կոպեռնիկեայ. Գէորգ կամ Ճ'եորճիոս Մարթինոս Սախուէլ յամին 1737 տպագրեաց 'ի Ինկլիթերիա զգրքոյկ մի Զերկրագրութ͞է Կլաւդեայ Պտողոմէայ, զգրեանց նորին թէ զձեռագրաց և թէ զտպագրելոց:

Պտուտկել. ‖ շուրջ յածել. պտըտցնել:

Պրասիլէ. ‖ մեծ երկիր հարաւային Ամերիկոյ՝ մականուանեալ նահապետութ͞ի. յորմէ և անուանակոչի ժառանգն փորթուգալեայ. Գտեալ եղև 'ի Պետրոսէ Ալվարեզայ Գապրալոյ փորթուկեզէ յամին 1500 յապրիլի 24. որ անուանեաց զնա՝ ս͞ր խաչ. Պրասիլէ սահմանի յարեւելից և 'ի հիւսիսոյ ծովով, յարեւմտից երկրաւն Ամազոնեաց, 'ի հարաւոյ փարակուայեաւ. Ջուրքն անդ են գերազանցք, օդն բարի, թէպէտ և ջերմ, հողն բերրի և քաջալաւ. Ատէն շաքարն գոյանայ մեծագոյն քանակութ͞բ քան յայլում իմիք կողման աշխարհի. Այս գաւառ յառաջ ածէ զբազում անասունս, զքանչելի իմն բազմութ͞ի տնկոց և զփայտ ինչ կոչեցեալ քօփաու. յորմէ ծորէ մեծագին իմն բալասան. Տեսանի անդէն թռչուն մի անուանեալ քօլիպրի.

ըէորբէ. որ ոչ գոլով աւելի մեծ քան զձանձ մի, այսու ամ̃իւ առնէ զգայլոյլիկ ի̃նչ նման սոխակի (ֆր̃ պիւլպիւլի)՝ Նոյնպէս գտանին կապիկք, թութակք և բազմութ̃ի այլոց շնչաւորաց, ծառոց և տնկոց անծանօթից Եւրոպիա. Ոստանօր գոլով եղև չորրորդ ի̃նչ տեսակ յակնթի և տպազիոնի. Այս երկիր բնակեալ է 'ի Փորթուկեզաց և 'ի մեծ ի̃նչ բազմութ̃է ժողովրդոց, որք են ը̃ հնազանդութ̃ե նոցա. Ժողովուրդքս այսոքիկ են վայրագք և գնան մերկք. Են ուժեղք, միշտ ուրախք, սակայն ենթարկեալք հիւանդութ̃եց և ապրին ը̃ երկար. Ախորժեն յօրինել փետրօք, զորս մածուցանեն յայտսն. Ունին զտօնս իւրեանց, յորս ոստոստեն և պարեն մանաւանդ յորժամ պատրաստին ուտել զգերի ինչ. Ոչ ունին զտաճարս և ոչ զպատկերս ինչ նշան առ 'ի պատիւ ա̃ծութ̃ե իրիք. Անուանեան ը̃ ազգականաց բաց 'ի մարց, 'ի քերց և 'ի դստերաց. Հասարակ զրոյցք նոցա յածին շուրջ զթշնամեօք, զորս սպանեալ և կերեալ են. Կարեթէ են միշտ 'ի պատերազմի ընդ մօտաւորաց իւրեանց, ոչ ունելով ոչ թագաւոր և ոչ իշխան. Երբ ունին զկալանաւոր մի՝ եթէ գէր է, իսկոյն ուտեն. եթէ նիհար, տան զնա գիրացուցանել ընկերի միում որ է իւր սիրուհի. Հասեալ օր սպանման նր̃ և ուտելոյ՝ հրաւիրի ամ̃բոխ բազում առ տօնն. կաքաւեն, պարեն և ըմպեն, մասնակից լինելով նմին նոյն իսկ կալանաւորն. որ պարզ դիմօք պատմէ, թէ որչափ ինքն 'ի կալանաւորաց խորովեալ իցէ և կերեալ. Յորժամ սպանանեն, լուանան զնա և խորովեն և ուտեն հրճուանօք:

Փորթուկէզք բաժանեն զերկիր Պրասիլէ 'ի 15. բդեշխութիս. որոց 8 պատկանին անընդմիջաբար առ թագաւորն Փորթուկալլիոյ. և այլք առ մասնաւոր տեարս, որք բազմամարդացուցեալ են զայնս ծախուք իւրեանց. Սոքա ամենեքեան վերաճանաչեն զգերագոյնութ̃ի փոխարքայի երկրին. Պրասիլէ կայ ը̃ մէջ գծերահաստատ գծին և ընդ մէջ արևադարձին այծեղջեր . Այն Սալվաթօռ է մայրաքաղաքն ։

Պրետոր . ‖ բառ հռոմայեցւոց, որ 'ի մեզ թարգմանի՝ դատաւոր . կամ ատենակալ ։

Պրիկանթին . ‖ փոքրիկ երկայնաձիգ նաւ՝ ձևով նման կալերի, որ է չէքթիրի ։

Պօէմիա կամ Պոհէմիա . ‖ թագաւորութի Եւրոպայի՝ 'ի հիւսիսոյ կողմանէ սահմանակից Միսնիոյ և Լուսացիոյ, յարևելից՝ Սիլէզիոյ և Մօրաւիոյ, 'ի հարաւոյ՝ Աւստրիոյ, յարևմտից՝ Պաւարիոյ . Ունի 80 . փարսախս շուրջ երկայնութի և 60, լայնութի. Է Բերրի յոյժ ցորենով, քրքմով, և Լուփոլ անուանեալ խոտով . որով կազմի գերազանց իմն գինոյ . որ է փիվոյ. Գտանին 'ի նմին հանքք արծաթոյ, կապարի, և անագի, ոսկ և անդամանդք և այլ պատուական քարինք, բազմութի անդէոց և խաշանց և սագուց . որոց փետուրք վաճառին արտաքնոց . Պոհեմք հասարակաբար են մեծահասակ բարեկազմ և խորագէտ . Ունին իւրեանց լեզու զԼեհիկեցւոյն խառնեալ ընդ Գերմանականին . Բայց 'ի քաղաքս լեզուն Գերմանական է սովորական յոյժ . նա զի ազնուականքն խօսին զԳերմանացի իմն այնքան մաքուր . որքան մարթ է խօսել 'ի Սաքսոնիա . Ի բովանդակ թագաւորութեան ծաղկեալ է կաթուղիկէ կրօնն . Գետն Մօլտաւ բաժանէ զՊոհեմիա յերկուս մասունս . որոց մին է ընդ արևելս և միւսն ընդ արևմուտս . և երկոքեան բաժանքն յինն ծիրս կամ փոքրիկ գաւառս . Փրակա է մայրաքաղաքն ։

Պօրպօնեանք . ‖ Ներկայ թագաւորական տոհմն Ֆրանսիոյ . որ ունի զծագումն իւր 'ի Լուտովիկոսէ դքսէ Պօրպօնիոյ գաւառին Ֆրանսիոյ ։

◆

Ջ.

Ջաղբ . ‖ խոշոր . թանձր . յորդ (անձրև) ։

Ջլատել . ‖ տկարացուցանել . անզօր առնել ։

Ջոլիր . ‖ խումբ . գունդ ։

Ջրմուղ . ‖ առու կամ ագուգայ . ընդ որ մղին ջուրք . քանալ . փողրակ ։

* * *

Ռ

Ռամբերթ. Տեսակ ինչ պատուականի բրդին. որ անմաշելի և իւր անուանէ առնէ զբերդն:

Ռանձիֆէր Տեսակ ինչ եղջերուի, որ գտանի ՚ի Շվէտ:

Ռեալ փլաթայի Տեսակ ինչ դրամոյ Սպանիացւոց. որ արժէ կէս շիլին. որ է իբր 26 ստակ:

Ռիմինել. Ռիմոն, այս է. մէջ տալ. կամ մէջին պարտուորել զոք:

Ռմբաւոր. Նետաւոր. կամ պարսաւոր:

Ռոճիկ. Դարման կերակրոյ. Թային. կէչինմէ. էօլէֆէ:

Ռումբ. Նետելու զէնք. որպիսի է նետն, ռռնաքարն, կիւլլէն. ևն:

Ռուս. Ուրուս, որ է Մօսկով:

Ռուսիա. կամ Ռուսաստան. (Մօսկովըստան) Մեծ կայսերութիւն կայացեալ մասամբ իմն յԱսիա և մասամբ իմն յԵւրոպիա. շուրջ պատեալ է ընդ հիւսիսակողմն ՚ի սառուցեալ ծովէ, ընդ հարաւ ՚ի մեծ Թաթարաստանէ, ՚ի Կասպից ծովէ և ՚ի Պարսկաստանէ. ընդ արևելս ՚ի ՚ի ծովէն Ճափոնայ, ընդ արևմուտս ՚ի Փօլօնիոյ, ՚ի Շվեցիոյ, ՚ի փոքր Թաթարաստանէ, ՚ի Միկրէլիոյ և ՚ի Վրաստանէ. Ռուսաստան բաժանի ՚ի Ռուսաստան կամ ՚ի Մօսկովըստան արևմտեան և ՚ի Մօսկովըստան արևելեան, ՚ի Մօսկովական Թաթարաստան և ՚ի Մօսկովական Լափփիա կամ Լափփօնիա և յայլ նոր տիրապետութիւնս Ասիոյ. Մասունքս այսոքիկ բաժանին իւրաքանչիւր ՚ի բազում դուքայութիւնս և ՚ի գաւառս. Բայց ՚ի սոցանէ Ռուսաստան ստացեալ է զԻնկրիա. զԼիվօնիա և զմասն ինչ Ֆինլանտիոյ ևն. Գլխաւոր գետք իւր են Վօլկա. Օբիոս, Թանայիս կամ Դօն և Դվինա. Ռուսաստան է տէրութիւն իմն միապետական. Ռուսք կամ Մօսկովք յառաջ էին գժնեայք և անագորոյնք. որովհետև ոչ թոյլ տային օտարի ումեք մտանել և ոչ հայրենակցի ումեք ելանել յերկրէ իւրեանց առանց մասնաւոր հրամանի ցարին.

Ռարձ.

Ծայրագոյն աստիճան ուսման նոցա էր գիտելն զկարդալ և գրել և զթըւաբանութիւն. Բայց մեծն Պետրոս ցարն յետ գաղափարելոյ ՚ի ճ՟պհորդութիւնս իւր զլաւագոյն բարս ազգային Եւրոպացւոց՝ գիտաց այնպէս բարւոք նորոգել զերկիր և զանբարոյ հպատակս իւր, մինչզի տէրութիւն Ռուսիոյ եթէ քաղաքականն և եթէ զինուորականն կարողէ մրցել ը՟ ում և իցէ այլում ազգի Եւրոպացւոց. Ռուսաստան ոչ է բազմամարդ ըստ համեմատութեան մեծութեան իւրոյ. Երկիրն դէպ Ասիոյ է անգործ և ամեղ և վայրենի՝ պատճառաւ թանձր անտառացն և անբաւ ճախնացն, որք են անդ. Բայց ՚ի հարաւային կողման, ուր երկինքն բաշխէ զքաղցրագոյն ազդեցութիւս, տեսանի երևելի իմն բերրիութիւն մանաւանդ ցորենոյ. Մոսկով և Փէթրօպուրկ են մայրաքաղաքք բովանդակ Ռուսիոյ:

Ռօքէրուք. ‖ կենդանի կամ գազան ինչ հիւսիսային Ամերիկոյ:

Ս

Սալամանքա. ‖ ընդարձակ՝ վաղեմի և յոյժ հռչակաւոր ք՟ղք Սպանիոյ. Ունի պաթոռ Եպիսկոպոսական և զառաւել համբաւաւոր համալսարանն Սպանիոյ և զ24 գեղեցիկ վարժանոցս. Կոչեցեալ լինի ՚ի Սպանիացւոց մայր առաքինութեանց, գիտութեանց և արհեստից:

Սակադրել. ‖ սակ դնել. պայմանադրել կապալաւ իմիք:

Սակ. ‖ որոշեալ չափ դրամոյ եդեալ ՚ի վր՟ իրաց կամ անձանց վճարելի տեարց:

Սակ արկանել. ‖ դաշնադրել ՚ի վր՟ գնոյ իրիք. փազար առնել:

Սակառի. ‖ սելէ. սէփէթ:

Սակառ. ‖ խեցապատակ. մերթ՝ առեալ լինի փոխանակ մաշկին, որ պատէ զգագաթն, կմ՟ զսկաւառակ գլխոյն:

Սակրէս. ‖ բազմաբերրի քաղաք Փօրթուկալլիոյ յԱլկարվլիա գաւառին հանդերձ գեղեցիկ նաւահանգստիւ և ամուր բերդաւ. Այս քաղաք հիմնեալ եղև 'ի Հենրիկոսէ կրտսեր որդւոյ արքային Յօհաննու առաջնոյ 'ի սկզբան 15 հարիւրեկին. Կայացեալ է յեզր Միջերկրական ծովուն փարսախ և կէս հեռի 'ի դերսարէն, որ կոչի ս̃բ Վինչէնցիոս :

Սամոս. ‖ կղզի Արքիպեղագոսին մերձ 'ի ծովափին Անատոլիոյ՝ ը̃ հիւսիսակողմն համանուն խորշին, ը̃ հարաւ խորշին Եփեսոսի և ը̃ արևելս կղզւոյն Նիքարիոյ :

Սան. ‖ Թէնձիրէ. կմ̃ խազան. մերթ՝ մէկիմը մեծցուցած, առաջ քաշած. չըրախ. փէրվէրտէ :

Սան Սալվատոր. ‖ գեղեցիկ՝ ընդարձակ՝ և բազմամարդ քաղաք հարաւային Ամերիկոյ՝ մայրաք̃ք Պրասիլիոյ, աթոռ փոխարքայի և ա̃մ գործակալաց արքային Փօրթուկալլիոյ 'ի Պրասիլէ :

Սան Տօմինկօ կամ Սան Տօմինիկոս. ‖ մայրաք̃ք համանուն կղզւոյն Ամերիկոյ 'ի բաժնին պատկանեցելոյ Սպանիոյ հանդերձ նաւահանգստիւ և արհիեպիսկոպոսարանաւ. Յայսմ քաղաքէ առնու կղզին զանունս՝ Սան Տօմինկօ :

Սառնորակ. ‖ ակնվանի, որ է պիլլօռ :

Սատարել. ‖ նպաստել. օգնել :

Սատարութ̃ի. ‖ նպաստ. օգնութ̃ի :

Սատափ. ‖ տեսակ ծովային խեցեմորթոյ. յորում ծնանի մարգարիտն :

Սատուր. ‖ զէն ինչ նման կացնոյ կամ սաթըրի :

Սատուրնինոս. ‖ ս̃բ և առաջին եպիսկոպոս Թօլօզայի Գաղղիոյ՝ կոչեցեալ աշխարհօրէն Սան Սէրվին. Առաքեցաւ 'ի քարոզել զաւետարանն 'ի Գաղղիա. Եղև եպ̃ս Թօլօզայի յամի ա̃ն 250, և յետ եօթն ամաց կրեաց զնահատակութ̃ի :

Սարակինեցիք կամ Սարակինոսք. ‖ ժողովուրդք երջանկին Արաբիոյ. որք նախ Հագարացիք և յետոյ Իսմայէլացիք կոչեցան. որոց գաւառն Սարակա կամ Սարակէն կոչիւր ը̃ս Ամմիանոսի պատմագրի.

Սարաս. ‖ կերպ. եղանակ :

Սարաւանդ. ‖ ամբարձեալ տեղի իբրև զսար. բարձրաւանդակ :

Սարմատացիք կամ Սկիւթացիք. ‖ այսպէս կոչէին 'ի հնումն ազգք Թաթարաց :

Սարճենթ կամ Սէրճենթ. ‖ վայրագոյն պաշտօնատար 'ի զինուորական պաշտօնի. որ ունի զհոգ կարգաւորութեան զինուորաց :

Սարպաքան. ‖ եղեգնեայ գործիք ձգելոյ գնտոյ՝ 'ի կիր առեալ յարեւմտեան եւ յարեւելեան Հնդկաց :

Սարսանուլ.) ‖ 'ի բաց դառ-
Սարտչել.)նալ. օտարել. հատ
ուածել :

Սարտուցանել. ‖ 'ի բաց քարշել. նահանջել. կորզել :

Սափարայ. ‖ փող. չըղըլթմա. տիւտիւկ :

Սեթեւեթ. ‖ պաճուճանք. զարդարանք :

Սեթեւեթել. ‖ զարդարել. պճնել :

Սենեքա. ‖ իմաստասէր ոմն Սպանիացի՝ որդի Լուկիոսի Աննեայ Սենեքայի ատենաբանի, յորմէ եւ ինքն անուանեցաւ Լուկիոս Աննէոս Սենեքա, ծնեալ 'ի Կորտովա քաղաք Սպանիոյ շուրջ զ13 ամաւն քնի. Ուսաւ 'ի հօրէ իւրմէ եւ յայլոց անուանի ճարտասանից զճոռոմաբանութի. Նաեւ զփիլիսոփայութիւն 'ի Սօտիոնէ Աղեքսանդրիոյ եւ 'ի Փոտինոսէ հռչակաւոր իմաստասիրաց Ստոյիկեանց. Ապա ետ ցոյցս ոգւոյ իւրոյ եւ ճոռոմախօսութեանց իւրոց 'ի զանազան հրապարակախօսութիւնս. բայց եթող զատեանս առ երկիւղի անհաճոյ լինելոյ Կալիկուլայի կայսեր վն համարձակութեան իւրոյ. Յետ ժամուց ինչ անկեալ 'ի կասկածս ունելոյ զկապ իմն ընտանութի ը այրւոյ բարեկարգին իւրոյ Տոմիցիոսի՝ աքսորեցաւ յաքսորս 'ի կղզին Կորսիկա. Յայսմ տեղւոջ գրեաց զգիրս իւր մխիթարութե. զորս ուղղեաց առ մայր իւր եւ զայլ գործս ինչ. Ակրիպպինա հարսնացեալ Կղաւդեայ կայսեր վերակոչեաց զՍենեքա առ'ի աւանդել նմա զդաստիարակութի Ներոնի որդւոյ իւրոյ, զոր կամէր նստուցանել յաթոռ կայսերութեան. Յորչափ այս մանուկ նահապետ զհետ գընաց խորհրդոց եւ վարդապետութեց Սենեքայի՝ սիրելի եղեւ համօրէն ժողովրդեան. բայց յորմէ հետէ Փօփիէոս եւ Թիճէլ-

Ճէլլիոս տիրեցին ոգւոյն՝ եւ նախատինք ազգի մարդկան. Առաքինութ̃ին Սենեքայի երեւելով նմա հանապազորդ իբ̃ յանդիմանութ̃ի չար վարուց իւրոց, հրամայեաց ազատաւորի միում կոչեցելոյ Կլէօնիկոս թունաւորել զնա. Բայց այսմ ոչ յաջողեալ կամ վս̃ ապաշաւութ̃ն ընտանւոյն, կամ վս̃ զգուշանալոյ յայնմանէ Սենեքայի, որ ապրէր միայն մրգովք. եւ ըմպէր լոկ ջուր, Ներոն շաղեաց զնա յերդումակցութ̃ն Փիսոնի, զորմէ Սենեքա ունէր զծանօթութ̃ի ինչ. եւ ուրախ եղեւ վս̃ գտանելոյ զայս առիթ առ 'ի զերծանիլ 'ի նմանէ. Սենեքա, որում կայսրն թողեալ էր զազատութ̃ի ընտրելոյ ինքեան զայն սեռ մահու, որ առաւել հաճոյ էր նմա, ետ հատանել զերակս. եւ խօսէր ընդ բարեկամաց իւրոց. Ապա տաղտկացեալ յերկարութ̃է մահուն, աղաչեաց զՍթացիոս Աննէոս զբժիշկ իւր եւ զբարեկամ, տալ ինքեան զթոյն. որ ոչ ունելով զներգործութ̃ի իւր, վս̃ զի երակք պակասեալ էին յարենէ, հարկեցան հեղձուցանել զնա դոլորշեօք ջերմ բաղանեաց. Մեռաւ յամի տն̃ 65 եւ յամի թագաւորութեան Ներոնի 12:

Սեպացեալ. ‖ մերթ՝ սուլուլ, սիվրի. տիք. ինչ̃. պայզի լեռ կամ եօխուշ:

Սեպհական. ‖ տիրական. յատուկ:

Սեպուհ. ‖ ազնիւ. ազնուական. քիշիզատէ. պէյզատէ:

Սեռն. ‖ մաքուր. անկեղծ.

Սեր. ‖ տարբերութ̃ի արուի եւ իգի.

Սերտ. ‖ հաստատուն. հիմնական:

Սերտութ̃ի. ‖ հաստատութ̃ի. հիմնականութ̃ի. հաստահիմ̃ լինելն:

Սեպտէ. (որ եւ կոչի Ճ՛իպիլթէրրա եւ Ճ՛իպրալթար)‖Հռչակաւոր նեղուց. որով միջերկրական ծովն̃ կցորդի ընդ Ովկիանոսի.

Սթափ. ‖ զգաստ. պատրաստ.

Սթէռլին. ‖ տես Ասթէռլին:

Սթրապօն. ‖տես Ասթրապօն:

Սթօքօլմ. ‖ քաղաք ծովեզերեայ՝ մի 'ի հռչակաւորագունից՝ 'ի փարթամագունից եւ յառաւել բազմամարդացն հիւսիսոյ՝ մայրաքաղաք թագաւորութեան Սվետիոյ յՈւփլանտա գաւառին՝ հանդերձ նաւահանգստիւ պաշտպանեցելով յամուր բերդէ. յորում նստի թագաւորն:

Սիամ. ‖ Թագաւորութիւն Ասիոյ 'ի Հնդկաստան երկայն իբր 200 փարսախ, և լայն աստիճանաբար իջանելով, ուր 100 և ուր 20 փարսախ. Բաժանեալ է 'ի վերին և 'ի ստորին. բայց հաւասարապէս յերկաքանչիւր մասին բերրի է բրնձով, բամբակաւ և պտղովք տարբերօք 'ի մերոցն. Մեծագոյն հարստութիւն իւր կայանայ 'ի հանքս ոսկւոյ և արծաթոյ. որով առատացեալ է. Կարծեցեալ լինի, թէ աստ իցէ ոսկեղէն ցամաքակղզին նախնեաց:

Սիդոն, որ և Ծայդան (Սայտայ) ‖ Հին քաղաք Փիւնիկէ գաւառին Սուրիոյ կմ Ասորւոց՝ հանդերձ նաւահանգստիւ 'ի վր միջերկրական ծովուն:

Սիկիլիա. (Չիչիլիա) ‖ Մեծագոյն և երևելագոյն կղզի Իտալիոյ 'ի մէջ միջերկրական ծովուն՝ ղատուցեալ 'ի շարունակէն Իտալիոյ միջնորդութեամբ Փարօին կամ յորձանուտին Մեսսինայի. Ունի զանուն թագաւորութեան, և զձև եռանկիւնի. որ 'ի Փարօէն մինչև 'ի գերասարն Պօքօ տարածանի 66 փարսախ յերկայնութիւն. և 'ի ծայրէն Մելածծօի մինչև 'ի գլուխն Փասսարօ տարածանի 45 փարսախ 'ի լայնութիւն. Բաժանի յերիս գաւառս՝ 'ի Տէմոնա, 'ի Նօթօ և 'ի Մածարա, այնքան բերրի, մինչ զի 'ի հնումն Սիկիլիա կոչիւր շտեմարան Հռոմայեցւոց ժողովրդեան. Փալէրմօ և Մեսսինա մեծ նաւահանգիստ ծովու են երկու գլխաւոր քաղաքք բովանդակ կղզւոյն:

Սին. ‖ դատարկ. ունայն. փուճ. պօշ:

Սինաէ կմ Սինէ. ‖ կմ Սինէացւոց աշխարհ. տես Չին:

Սիպերիա կմ Սիբերիա. ‖ գաւառ կայսրութեան Ռուսաց. որ բովանդակէ զառաւել հիւսիսային մասն նորին կայսրութեան և Ասիոյ. Սահմանի յարևելից ծովովն Ճափոնայ, 'ի հարաւոյ Մեծ Թա-

Թարտատանաւ, յարևմըտից Ռուսաստանաւ, 'ի հիւսիսոյ սառնային ծովուն. Այս գաւառ դատեալ է մի յառաւել ընդարձակագունիցն, որք իցեն յԱսիա, ունելով յարևելից յարևմուտս աւելի քան զ800 փարսախս և քան զ300 'ի հիւսիսոյ ցհարաւ. Յայն Մոսկովաց յորժամ ոչ է հաճեալ ընդ միոք 'ի մեծամեծաց իւրոց սովոր է արտասահմանել զնա 'ի Սիպէրիա. ուր առաքեն նաև այլք դատարկապորտք և շրջմոլիկք առ 'ի մաքրել զերկիրն. Թէպէտ ըստ հիւսիսոյ մասին է սակաւաբնակ, և գրեթէ ամայի պատճառաւ չափազանց ցրտոյն, սակայն ը̅ հարաւոյ մասին է պատշաճապէս բերրի և բնակեալ. Բովանդակ այս մեծ տարածութի̅ երկրի բնակեալ է յերից սեռից ազգաց՝ 'ի Մահմէտականաց՝ 'ի Մոսկովաց և 'ի կռապաշտից, որք են բնակք երկրին. Վերջինքս այսօրիկ յամարային բնակին առ գետովք. իսկ 'ի ձմեռան ղօղին 'ի ներքս անտառաց. Օկռոցն, զորս պաշտոն, սակաւ համարում̅ ունին ցայնվայր, մինչզի յորժամ ոչ լինին լսելի, ընկենուն 'ի գետին, առ ոտն կոխեն և քարշեն ընդ տիղմ̅, և յետ բիւր նախատանաց արկանեն 'ի հուր. Լուսին և արեգակն են գլխաւոր ա̅ծք ն̅ց. Մայրաքաղաքն բոլոր Սիպերիոյ է Թոպոլիսքա կամ Թոպոլք, կայացեալ առ խառնմամբ Թոպոլ և Իրթիս գետոյն յՕպիոս գետ:

Սիվիլեա, որ և կոչի Հիսփալիս. ‖ վաղեմի՝ մեծ և մի յերևելագոյն քաղաքացն Սպանիոյ՝ մայրաքղ̅ք. Անտալուզիոյ՝ հանդերձ Արքեպիսկոպոսարանաւ՝ հռչակաւոր համալսարանաւ և ընդարձակ նաւահանգստիւ:

Սիւրիա կամ Սուրիա. Սուրիստան. ‖ մեծ գաւառ Ասիոյ՝ փակեալ 'ի մէջ միջերկրական ծովուն և Եփրատայ. Բաժանի յերիս բդեշխութի̅՝ Հալէպու, Տրապոլսոյ, և Դամասկոսի. 'Ի հնումն Սուրիա բաժանիւր յերիս գաւառս ստէպ յիշատակեալս 'ի ս̅բ գրոց. այս է, 'ի սահմանս Բերիոյ, 'ի փիւնիկէ, 'ի Պաղեստինէ կ՟մ յերկիր Քանանու. որ է գաւառն Երուսաղէմի:

Սլանալ. ‖ արագ թռչիլ. սրաթռիչ լինել:

Սխրալի. ‖ զարմանալի. սքանչելի:

Սկիւթիա. ‖ մեծ Թաթարաստան. որոյ ազգն կոչի Սկիւթացի:

Սհեթլանտք. ‖ են կղզի ծովուն Սքօցիոյ առաւել հիւսիսայինք քան զՕրքատոն. Սովորաբար բաժանին յերիս դասս. որոց քսան և վեցք են մեծամեծք. և կարեն բնակ լինել. քառասունքն միջասահմանք. իսկ երեսունք մնացեալք ծովաժայռք քան թէ կղզիք կոչելի են. որոց ամենեցուն երևելագոյնն է Մայնլանտ. Ասին սոքա զերկուս ամիս ողջոյն շարունակ տիւ. և զայլ երկուս շարունակ գիշեր:

Սղութի՟. ‖ կարճութի՟ ժմ՟կի. սուղ ժմ՟կ:

Սնդոյր. ‖ կարմիր ներկ ինչ. սիւլիւյէն:

Սողել. ‖ ընդ քարշ բերել. քարշիլ ը՟ գետնին իբր օձ:

Սոսկական. ‖ առանձնական. առանձին. որոյ ներհակն է հրապարակական:

Սուին. ‖ սլաք. սուր. շիշ:

Սուրհանդակ. ‖ թուղթ տանող բերող. սայի:

Սպանդ. ‖ կենդանին սահմանեալ 'ի սպանումն կամ 'ի զոհ:

Սպանիա. ‖ մեծ թագաւորութի՟ Եւրոպիոյ՝ սահմանեալ 'ի Փորթուկալիոյ, յՈվկիանոսէ, 'ի միջերկրական ծովէ և 'ի Փիրենեից. Բաժանի 'ի 14, գաւառս. որք ը՟ մեծի մասին ունին զպատուանուն թագաւորութե՟. Ընդ հարաւակողմն առ եզերբ միջերկրական ծովուն տեսանին Կրանատա. Մուրչիա և Վալենցիա. ը՟ հիւսիսակողմն 'ի վ՟ր ծովուն Պիսքայիոյ են Կալիցիա, Ասթուրիա և Պիսքայիա. ը՟ արևելս առ ոտամբ Փիրենեից տարածանին Նաւառրա, Արակոնա և Քաթալոնիա. ընդ արևմուտս առ սահմանօքն Փորթուկալիոյ գտանին Լէօն, Եսթրէմատուրա և Անտալուզիա. իսկ Հին և Նոր Քասթիլլիայքն կան 'ի կեդրոնի. Մայրաքաղաք բոլոր թագաւորութե՟ն է Մատրիտ:

Սպանիոլա. ‖ կղզի Ամերիկոյ՝ մեծագոյն յետ Քու-

պայի

պայն 'ի մէջ Անթիլեայցն, ունելով գ300 փարսախ շրջապատ. Գտանեցաւ նախ 'ի Կոլոմբոսէ յամին 1492. զոր կամեցաւ կոչել Սպանիոլա 'ի պատիւ Սպանիացւոց. Բերրի է ցորենովք, պտղովք, գեղընչով, շաքարով և 'ի տեղիս տեղիս բերէ և զկասիս և զայնին կոճապղպեղ. Բաժանի յարևելեան և յարևմտեան. Առաջինն, որ է բարեգոյն, պատկանի Սպանիոյ. և ունի իւր գլխաւոր քաղաք զՍան Տօմինկօ. Երկրորդն կախի ըն̄ մեծագոյն մասին իւրոյ 'ի Ֆրանսիոյ:

Սպառազինութի. ‖ ամ̄ տեսակ զինուց և հանդերձանաց 'ի պէտս պատերազմի. մերթ՝ նաւահանգէս. զինեալ նաւք:

Սպասահարկութի. ‖ հարկ սպասաւորութն կմ̄ սպասարկութի:

Սպասաւորել. ‖ իբրև սպասաւոր մատուցանել. մատակարարել:

Սպարապետ. ‖ պետ բոլոր զօրաց. ը̄ հանուր զօրավար:

Սպրդիլ. ‖ մեղմով կմ̄ ծածկաբար մտանել:

Սվէտիա. կամ **Սվէյցիա**. ‖ տես Շվէտ:

Սվիցցերաց երկիր. (որ և կոչի Հելվեցիա) ‖ մծ գաւառ Եւրոպիոյ ը̄ մէջ Իտալիոյ և Գերմանիոյ. Բաժանի 'ի 13 քանթօնս. որք են քունջք կմ̄ պուճախք. որոց եօթն են կաթողիկք և վեցն հերձուածողք:

Ստածել. ‖ տածել. սնուցանել. պահել:

Ստադին. ‖ ասպարէզ. տեղի մարտի:

Ստգտանել. կամ **Ըստգտանել**. ‖ մեղադրել. մեղ դնել 'ի վր̄. պակասութի գտանել:

Ստեղն. ‖ ճիւղ. բազուկ:

Ստորագրութի. ‖ գծագրութի. բացատրութի որպիսութե իրին:

Ստորակաւառ. ‖ գորգ. խալի. փալփուշ:

Ստուար. ‖ թանձր. հաստ. մեծ:

Ստուարագոյն. ‖ առեալ է փոխանակ մեծագունի:

Ստուգաբան. ‖ որոշաբան. մեկնիչ. կմ̄ որ քննէ զարմատս և զմաստունս բառին, յորոց բաղկացեալ է. և այնու 'ի յայտ ածէ զնշանակութի նր̄. կամ ցուցանէ յարմարապէս կոչել իրին այնպէս. զոր օրինակ. զղջալն ասի ապաշաւել,

իբրխորթէ ապացաւել . զի վէնի մեղացն է ցաւն :

Ստուերագրութիւն . ‖ գծագրութիւն . ձեւակերպութիւն :

Ստունգանել . ‖ անփոյթ առնել . անհոգանալ :

Ստունգանութիւն . ‖ անհոգութիւն . ղանցառութիւն :

Ստրջանալ . ‖ զղջանալ . փոշիմանիլ :

Սրանալ . ‖ սլանալ . սրաթռիչ լինել :

Սքանտինաւիա . կմ Սքանտիա . ‖ առասական անուն . որ տուեալ լինի այնմ մասին Եւրոպիոյ , որ բովանդակէ զ՚Դանիմարքա , զՍվետիա և զ՚Նորվէգիա :

Սքօրպութ . ‖ ախտ ինչ , որ մասնաւորաբար վնասէ ստնդական մասանց մարդկային մարմնոյ՝ պատճառեալ 'ի տարակարգ. խմն թթուութէ , որ ապականէ և նեխէ զհեղուկս մարմնոյն :

Սքօցիա Նոր . ‖ տես Աքատիա :

Սօլտի . ‖ բառ Իտալական . որ նշանակէ զվայրագոյն փողն . զոր մեք կոչեմք ստակ :

Վ

Վագր . ‖ ամեհի գազան խայտախարի մորթով . ղափլան . փէլէնկ :

Վալլատոլիտ . ‖ մի 'ի վաղնջագոյն՝ մեծագոյն և պերճաշուք քաղաքացն Սպանիոյ 'ի մէջ հին Կասթիլիոյ , մայրաքղք . համանուն նահապետուն . Դարձեալ Վալլատոլիտ է քաղաք հիւսիսային Ամերիկոյ 'ի Նորին Սպանիա 'ի բդեշխութն Մէքհօաքանու :

Վաղնջագոյն . ‖ հնագոյն . նախնագոյն :

Վաղնջախոյզ . ‖ խուզօղ , որոնօղ վաղնջուց իրաց անցելոց :

Վաղնջականութիւն . ‖ հնութիւն . նախկնութիւն :

Վաղնջուց . ‖ վաղեմի . հին . նախկին . մերթ՝ 'ի վաղուց :

Վայրագ . ‖ վայրենի . վայրի :

Վայրապար . ‖ 'ի զուր . ընդունայն :

Վաշտ . ‖ գունդ . խումբ զօրաց :

Վաշտկան . ‖ զօրական . զինուոր :

Վաստակ . (ըստ նորոց՝ արդիւնք) ‖ վարձուց արժանի գործ . առաքինական գործ . բարեգործութիւն :

Վատիլ. ‖ վատթարիլ. տկարանալ. թուլանալ:

Վատիկան. ‖ մի ՚ի յեօթն բլրոցն Հռոմայ քաղաքին. ուր է այժմ հոյակապ տաճար սրբոյն Պետրոսի և գլխաւոր պալատ քահանայապետին հանդերձ գեղահամբաւ գրքատամբն. Յայսմանէ երբեմն առեալ լինի փոխանակ աթոռոյ կամ իշխանութեան ծայրագոյն քահանայապետին:

Վատնել. ‖ ծախել. ցրուել. ջնջել:

Վարակել. ‖ տոգորել. զգածել:

Վարանիլ. ‖ տարակուսիլ. յերկբայս անկանիլ:

Վարաս. ‖ բառ Սպանիական. և նշանակէ կանգուն. արշին:

Վարդախտ. ‖ ծաղիկ կոչեցեալ ախտն:

Վարկ. կամ Վարկած. ‖ համարումն. մակաբերութիւն. թահմին:

Վարկպարագի. ‖ անխորհրդաբար. առանց շրջահայեցութեան. թէվէքէլլի:

Վարչութիւն. ‖ կառավարութիւն. առաջնորդութիւն:

Վարսել. ‖ վարել. ցցել. (զսուր) հարկանել:

Վաւեր. ‖ հաստատուն. օրինաւոր. շէրի:

Վաւերացուցանել. ‖ հաստատել. օրինաւոր առնել:

Վաւերութիւն. ‖ օրինաւորութիւն. շէրիութիւն:

Վեհերոտ. ‖ փոքրոգի. երկչոտ. վատասիրտ:

Վեհութիւն. ‖ երեւելի մեծութիւն:

Վերագրութիւն. ‖ մերթ՝ ստորագրութիւն. պատմութիւն. որով իբրթէ ներկայացուցանի իրն:

Վերադիտող. ‖ վերատեսուչ. վերակացու. մուպաշիր:

Վերառնուլ. ‖ վերստին սկսանիլ. ձեռնամուխ լինել:

Վերջապահք. ‖ զինուորք, որք պահեն զվերջս զօրաց. կամ որք չու առնեն ՚ի վերջոյ կողմանէ:

Վերտ. ‖ ցանցակերպ զրահ. զըրխ:

Վէկա. ‖ բառ Սպանիացւոց, որ ՚ի մեզ թարգմանի դաշտ. դաշտավայր:

Վէպ. ‖ պատմութիւն. զրոյց:

Վէսփուչչիոս. ‖ տես Ամերիկոս:

Վէս. ‖ ինքնահաւան. մեծամիտ:

Վէրաքրուց. կամ Վէրաքրօչէ. ‖ քաղաք հիւսիսային Ամերիկոյ ՚ի Նորն Սպանիա առ եզերբ խորշին Մէքսիքոյի հանդերձ անուանի նաւահանգստիւ:

Վեթխարի. ‖ խիստ մեծ. պէթաւի. խօսխօճայ:

Վիժել. ‖ յարձակիլ. դիմել. հոսիլ:

Վիպասանութիւն. ‖ ընդհանուր կմ՛ ընդարձակ և երկայնաձիգ պատմութիւն իրացն եղելոց:

Վխութիւն. ‖ գոռոզութիւն մեծամտութիւն:

Վհատութիւն. ‖ լքումն սրտի. փոքրոգութիւն:

Վճտութիւն. ‖ յստակութիւն. մաքրութիւն:

Վսեմական. ‖ գերամբարձ. գերազանց:

Վսեմութիւն. ‖ բարձրութիւն. գերամբարձութիւն. մեծութիւն:

Վստահութիւն. ‖ համարձակութիւն. մտերմութիւն. մերձ՝ յոյս. յուսադրութիւն:

Վստահանալ. ‖ համարձակիլ. հաւատալ. ապաստանիլ. յուսադրիլ:

Վտարանդի. ‖ վտարեալ յերկրէ իւրմէ. կամ օտար. օտարոտի, կամ թափառական:

Վտարանջել. ‖ ապստամբիլ. գլուխ քաշել:

Վտարանջութիւն. ‖ ապստամբութիւն:

Վտարել. ‖ ցրուել. մերժել. 'ի բաց վանել:

Վրան. ‖ խորան. չադըր:

խա

Վրժակել. ‖ վրէժ առնուլ. քինախնդիր լինել:

Վրիպակ. ‖ սխալող. սխալական:

Վօլկա. ‖ մի 'ի մեծագոյն գետոց աշխարհի 'ի թագաւորութեան Մոսկովայ. Աղբերակունք իւր են 'ի լճին Վոլոնոյ 'ի Մոսկովաստան առ սահմանօքն Լիթվանիոյ. և բերանն'ի Կասպից ծովն՝ 12 փարսախ հեռի յԱստրախանու:

* * *

Տ

Տախտապարել. ‖ տարածանել. գէրդէպիկ ձգել:

Տածել. ‖ սնուցանել. պահել. պէտ ընել:

Տակառ. ‖ վառօլ. փոքրիկ փուչի:

Տակաւ առ տակաւ. ‖ յուշիկ յուշիկ. սակաւ առ սակաւ:

Տաղանդ. ‖ ընդունակութիւն. բնական պարգև ոչ ուսեալ ումեք. որ հասարակաբար կոչի քանքար:

Տաղտկանալ. ‖ զզուիլ. ձանձրանալ:

Տաճիկ ուղտ. ‖ ցեղ ինչ ուղտու. որ մարմնով լինի փոքր. բայց երագընթաց յոյժ. տաճկ. էճին տէվէսի:

Տայք. ‖ առեալ է փոխանակ ազգին Գերմանացւոց. որք ըստ իւրեանց բարբառոյ յատկապէս կոչին Թէյչ. զոր մեք տառադարձուցաք Տայք:

Տապալեղց. ‖ տապագին. տապով լցեալ. սաստիկ տապացեալ:

Տապալել. ‖ կործանել 'ի վայր ընկենուլ:

Տապաստ անկանիլ. ‖ անկարգաբար տարածիլ 'ի վ̄ր երկրի. զէրզէպիլ ընկնիլ, կամ փռվիլ գետնի վ̄ր ինչպէս մեռածները:

Տապար. ‖ Նաճախ. պալթա:

Տասնեակ. ‖ կազմուած կամ գործ ինչ յօդուածոյ. որ պարունակէ զտասնաւոր թիւ. Յայսմանէ՝ վիպասանութիւն ոմանց հեղինակաց, գոլով բաշխեալ 'ի մասունս, որոց իւրաքանչիւրն պարունակէ տասն տասն դպրութիւս, կոչեցաւ տասնեակ:

Տատամնական. ‖ վարանական:

Տատամնութիւն. ‖ մեծ հոգ. կամ վարանումն:

Տարաբաղդ. ‖ դժբաղդ. անբաղդ:

Տարաղիպութիւն. ‖ դժպատեհութիւն. անտեղութիւն. եօլսուզութիւն:

Տարաղ. ‖ կերպ. եղանակ. թարզ. մերթ՝ առեալ վաճառաց. կամ ընչից:

Տարած. ‖ տարածեալ. ընդարձակեալ:

Տարականոնութիւն. ‖ արտաքոյ կանոնի և օրինաց բերումն. անկարգութիւն:

Տարակարգ. ‖ արտաքոյ կարգի. անսովոր:

Տարակացութիւն. ‖ հեռաւորութիւն:

Տարանջատ. ‖ յոյժ հեռաւոր:

Տարանջատել. ‖ 'ի բաց զատուցանել:

Տարապայման. ‖ չափէ դուրս. կարգէ դուրս:

Տարապայմանութիւն. ‖ արտաքոյ կարգի լինելն. կմ̄ անսովոր և օտար իր:

Տարացոյց. ‖ յարացոյց. օրինակ:

Տարափ. ‖ յորդ անձրև. սաղանախ:

Տարափոխիկ (ախտ) ‖ որ փոխի 'ի միոջէ յայլ:

Տարժանիլ. ‖ չարաչար աշխատիլ. չարչարիլ:

Տարիէն. ‖ ցամաքալեզու, որ միաւորէ զհիւսիսայինն Ամերիկայն ընդ հարաւայնոյն. Գտանի և ծոց իմն ծովու այսու անուամբ մօտ 'ի ցամաքալեզուն:

Տարհամոզել. ‖ 'ի բաց դարձուցանել 'ի մտաց և 'ի կամաց:

Տարորոշել. ‖ տրոհել. զանազանել. որոշ՝ ճանաչել:

Տարորոշութի՟. ‖ զանազանութի՟. որոշումն:

Տարտամ. ‖ անբացորոշ. անճըրկած. ոտքը ձեռքը կապոռած:

Տարրանալ. ‖ ը՟մտանել. ը՟խառնիլ. գոյանալ (յիմիք):

Տարփակից. ‖ ընկեր 'ի տարփանս. տարփացող ընդ այլում՝ իրի իմիք:

Տարօրէն. արտաքոյ կարգի. չափէ կմ՟ կանոնէ դուրս:

Տեղալ. ‖ յորդ կամ սաստիկ անձրևել:

Տեղատարափ. ‖ յորդ անձրև. սաղանախ:

Տեղատուութի՟. ‖ յետս քարշելն ջուրց ծովու 'ի ցամաքէն յորոշել՟ ժամս ինչ աւուրն:

Տեղափոխութի՟. ‖ փոխելն զտեղի բնակութե՟.

Տեսական (գիտութի՟) ‖ որ դադարէ 'ի սոսկ տեսութեան կմ՟ ճանաչման մտաց. որոյ վախճանն է միայն ճանաչելն. և սորա ներհակն է գործնական գիտութի՟ն. որ կարգեալ է առ գործ. կամի գիտել, զի 'ի գործ դիցէ:

Տեսականութի՟. ‖ տեսական կմ՟ վերացեալ ճանաչումն իրին. հայեցողութի՟ կամ դիտողութի՟ մտաց:

Տեսակաւորել. ‖ մասնաւորել. որոշել:

Տեսարան. ‖ տեսանելի աւարկայ. զուարճալի իմն տեսիլ. սէիր. սէյրան:

Տէլափլաթա. տես Փլաթա:

Տիգրան. ‖ արքայ Հայոց և մի 'ի հզօրագոյն նահապետաց ժամանակին իւրոյ իբր 85 ամօք յառաջքան զքս՟. Էառ զԱսորեստան և միաւորեաց ընդ թագաւորութե՟ իւրում. Կալաւ մարտ պատերազմի ընդդէմ Հռոմայեցւոց 'ի նպաստ Միհրդատայ փեսային իւրոյ. Բայց գոլով պարտեալ 'ի Լուքուլլոսէ և 'ի Պոմպէոսէ զօրավարացն ետ զմասն ինչ տէրուե՟ց իւրոց՝ յաղթողացն. և արար զնոսա իւր պաշտպանս. Ապա եկեաց 'ի խոր իմն խաղաղութե՟ մինչև 'ի մահ իւր:

Տիգրիս. ‖ մեծ գետ Ասիոյ, որ ունի զակունս իւր 'ի լերինս Հայոց, և անկանի 'ի միասին ը՟ Եփրատայ 'ի Պարսկային ծոցն, որ է Պասրայու ծովն:

Տիպար. ‖ տիպ. պատկեր:

Տիտեռն. ‖ տես Կոկորդիլոս:

Տիրախնամուն. ‖ տիրական խնամութի̄. զոր ունի տէրն ՚ի վ̄ր ծառայից կմ՟ գերեաց:

Տիւրոս. ‖ որ և կոչի Ծուր. Հին քաղաք Սուրիոյ կառուցեալ յեզր միջերկրական ծովու, անուանի վաճառանօքն առ նախնեօք. բայց այժմ հազիւ թէ տեսանին մնացորդք նր̄:

Տէք. ‖ զանազան աստիճանք կենաց մարդոյ. հասակ:

Տխեղծ. ‖ տգեղ. այլանդակ:

Տնօրէնութի̄. ‖ մերթ՝ խնայումն. ճշդումն:

Տնօրինական (խոհեմութի̄). ‖ իմաստութի̄ բարւոք կառավարելոյ զիրակութիս տան, քղքի, տէրուե̄ ե̄ն:

Տնօրինել. ‖ կարգաւորել զտունն. կմ՟ բարւոք մատակարարել զիրակութիս տան. քաղաքի ե̄ն:

Տոկալ. ‖ տևել. դիմանալ:

Տողունք. ‖ պալղամ. մերթ՝ լորձունք. շողիք:

Տոմակ. ‖ կոտորակ թղթոյ կամ քարտիզի. թէսկերէ. եաւթա. մերթ՝ մուրհակ. թէմէսիկ. մերթ՝ հրամանագիր:

Տուգանք. ‖ մերթ՝ վնաս. կամ ձախողութի̄:

Տուն դաշնակցութե̄ կմ՟ սակարկութե̄. ‖ տեսան ինչ Սպանիոյ կարգեալ ՚ի վ̄ր վաճառականութեց:

Տպազիոն. ‖ տօպաձ քարը:

Տրամաբանութի̄. ‖ առեալ է փոխանակ մտավարժութե̄. խորհրդածութե̄:

Տրամաբաշխական (արդարութիւն). ‖ որ բաշխէ զվարձս և զպատիժս հաւասարապէս ըստ արժանեաց:

Տրամաչափօրէն. ‖ ըստ ամենայնի, կամ հաւասարապէս ճշգրիտ:

Տրամատել. ‖ ՚ի բազում մասունս հատանել. բաժանել:

Տրոհել. ‖ որոշել. տարորոշել. զանազանել:

Տրոհութի̄. ‖ զանազանութի̄. որոշումն. մերթ՝ նշանաւորութի̄. փառաւորութի̄:

Տրոփական. ‖ տրոփացող. թրըփ թրըփ ընող:

Տրոփել (սրտի). ‖ թրըփ թրըփ ընել:

Տրօադա. կամ Թրօյիա. ‖ վաղնջագոյն քաղաք Ասիոյ Անատօլու յանդիման Հելլեսպոնտոսի. Զնտի յոմանց, թէ աւերեալ իցէ ՚ի Յունաց 1100 ամօք յառաջ քան զՔն̄:

Տօմինկոս. կամ Տօմինիկոս. ‖ տես Սան Տօմինկօ:

Տօմինիքա. ‖ կղզի հիւսիսային Ամերիկոյ մի Անթիլեայցն, այսպէս կոչեցեալ ՚ի Սպանիացւոց.

զի յաւուր կիւրակէի գտին զայն. Ջուրք այսր կղզւոյ են բարիք, բայց բնակիչքն են չարք. Են գրեթէ ամենեքեան Գաթոլիկէք:

Տօնավաճառ. (փանայիր) ‖ հանդէս կամ գումարումն վաճառականաց յորոշեալ ժամանակս և 'ի տեղիս առ'ի ազատօրէն վաճառել և գնել զա՟մ տարազս ընչից:

Յ

Յանցաղ. ‖ ոչ յաճախ. որ հազիւ երբեք հանդիպի. մերթ` տեղի 'ի ծովու, որ վ՟ն սակաւութեան ջրոյ վտանգաւոր է նաւորաց. սըղ:

Յանցաղակի. ‖ սակաւ կամ սէյրէկ անգամ:

Յնդումն. ‖ 'ի բազում կրս պատաղումն:

Յնորք. ‖ առաջօք երևոյթք. երևակայութիւնք:

Յնցուղ. ‖ շռնօթ. օլուխ:

Յուց. ‖ աշխարհական երգ. խաղ. Թիւրքիւ:

Յոկանաւ. ‖ կալեր. չէքտիրի:

Յոկել. ‖ յանկարծակի և բռնութ՟բ 'ի դուրս յարձակել. պոռթքալ:

Փ

Փ

Փաթակօնք. ‖ ժողովուրդք հարաւային Ամերիկոյ 'ի Մաճելանեան երկրի. որք յարևելից կողմանէ ունին զծովն հիւսիսոյ և 'ի հարաւոյ զնեղուցն Մաճելանու. Բաժանեալ են 'ի բազում դասս. որոց ոմանք ասի, թէ են հսկայք հասակաւ, ունելով զմետասան ոտնաչափ բարձրութիւն. Կեան մեծագոյն մասամբ յերէոց և 'ի ձըկանց. Գաւառ Նոցա կոչի Փաթակօնիա. և է ցուրտ յոյժ:

Փաթութեալ. ‖ պատատել՟. ոչ բացեալ. ոչ պարզել՟:

Փալէնցա. կմ՟ Փալէնչիա. ‖ հին քաղաք Սպանիոյ 'ի Թագաւորութեան Լէօնու,

Փալօթթօլին. ‖ գնտակիկ. փոքրիկ գնտակ:

Փալօս. ‖ փոքրիկ քաղաք Սպանիոյ 'ի մէջ Անտալուզիոյ հանդերձ միջասահման նաւահանգստիւ:

Փակելակ. ‖ փոքրիկ մասն իրիք ճառի, որ փակէ յինքեան զամբողջ իմացուածս

Փաղանուն. ‖ Նոյնանշան բառք, որք զանազան ձայնիւ զնոյն նշանակն ։

փաղառոցել . ‖ 'ի միասին կմ՟ մէկ տեղ առնուլ ։

փաղաքշել . ‖ շողոքորթել . նշան սիրոյ ցուցանել ։

փամփիլօնա . ‖ քաղաք Հարաւային Ամերիկոյ 'ի Նոր Թագաւորութեն Կրանատայ՝ հռչակաւոր վս՟ հանքացն ոսկւոյ և բազմուն՟ խաշանցն . որք են անդ ։

փայենկեր . ‖ ընտանի նապաստակ՝ փոքրիկ մարմնով, ձևով նման խողքուռակի . լինի հասարակօրէն սպիտակ գունով ։

փայլածիւն . ‖ փալփլալը . շողալը ։

փայփայանք . ‖ գգուանք . շոյելը . օխշամիշ անելը ։

փայփայել . ‖ գգուել . շոյել ։

փանարի . ‖ գծուծ . սակաւ . փոքր ։

փանամա . ‖ գեղեցիկ և վարթամ քաղաք հիւսիսային Ամերիկոյ՝ մայրաքաղաք համանուն նախարարուե՟ ։

փապար . ‖ խոռոչ . խովուխ ։

փարէզ . ‖ մայրաքաղաք բոլոր թագաւորութեանն Ֆրանսիոյ՝ համարեալ առաւել գեղեցիկ, առաւել վարթամ և բազմամարդ և ծաղկեալ և մեծ քան զամ՟ քաղաքս Եւրոպիոյ . Ունի նա պարծանս 'ի վերայ այլ ամ՟ քաղաքացն աշխարհի վս՟ հրաշալի իմ՟ բազմուն՟ մեծածախ շինուածոց, վս՟ իմաստութե՟ կառավարութեն և վս՟ անզուգական շահավաճառութեանն . որ լինի անդէն . Աստէն համօրէն գիտութիւնք և արհեստք ծաղկին քան յայլ յորում եւիցէ կողման աշխարհի ։

փարխա . ‖ փոքրիկ գաւառ Փէրուայ . այսպէս անուանեալ 'ի համանուն լճէն ։

փարմէնիտէս կամ Պարմէնիդէս Եղէացի՝ ‖ հռչակաւոր իմաստասէր ազգաւ Յոյն իբր 430 ամօք յառաջ քան զՔս՟ ։

փարսախ . ‖ Լէկա կմ՟ Լէվքա . չափ ճնհի՟ միոյ ժամու ։

փափուկ . ‖ մերթ՝ զգուշալի . վտանգաւոր ։

փեզզը . ‖ գլխարկ Եւրոպացւոց . շափքայ ։

փեճեկաւոր . ‖ որ ունի զփեճեկս . այսինքն, զխեցի կամ զկարծր կեղևանս ։

փետրափունջ . ‖ փունջ կազմեալ 'ի փետրոց ։

փերեզակ . ‖ չէրչի . եայմաճի ։

փերեզակել . ‖ գնել զվաճառս առ'ի վերստին վաճառել . չէրչիլութի անել ։

փեւտ . ‖ տէրութի կամ կալուած, որ տուեալ լինի ու-

ումեք 'ի մշտնջենաւոր պարգեւ՝ այսու դաշամբ, զի փետաւորն կամ այսպիսի պարգեւատուն հաւատարիմ մնասցէ, կամ ծանիցէ մշտնջենաւոր զայն բարերարութի։

փետական. ‖ առ ի փետն պատկանեալ։

փետաւոր. ‖ որ ունի զփետ։

փէզօս. ‖ տե՛ս փէսօս։

փէթրօպուրկ. ‖ մեծ՝ գեղեցիկ եւ հռչակաւոր քաղաք Մօսկովիոյ 'ի մէջ Ինկրիոյ գաւառին՝ շինեալ 'ի 1703 ամէ եւ այժմ 'ի մեծէն Պէտրոսէ ցարէ Մօսկովաց. որ արար զայն մայրաքաղաք կայսրութեան իւրոյ. Կայացեալ է 'ի մի՛ պէսպէս կղզեկաց կերպացելոց 'ի Նէվա գետոյն՝ քառորդ մի փարսախ հեռի 'ի բերանոյ նր, որ 'ի խորշն Ֆինլանտայի կամ 'ի Ֆիննեան ծոց։

փէթրօփաւլովքա. ‖ ծովեզերեայ քաղաք ինչ Մօսկովիոյ։

փէլօփօննէսօս. կամ Պէլօպօննէսօս (Մօռա) ‖ մեծ ցամաքակղզի ը̃ Հարաւակողմն Յունաստանի. ընդ որում կայ միաւորեալ միջնորդութի անձկագոյն իրիք ցամաքաւեզրոյ ը̃ մէջ խորշիցն Լէփանթօի եւ Լնձիոյ. Բաժանի յերիս գաւառս՝ 'ի Մաքանիա, 'ի Պէլվէտէր եւ 'ի Զաքօնիա կամ 'ի բազուկն Մաինայի. Աթոռ բդեշխութեն Մօռայու կոչեցելոյ՝ [illegible] է 'ի Մօտօն բերդի։

փէսօս. կամ **փէցա.** ‖ տեսակ ինչ դրամոյ Սպանիացւոց. որ արժէ իբր երկու ղռշ։

փէրիփլօն. | նաւարկութիւն շուրջ զծովեզերօք իրիք մասին աշխարհի. մերթ՝ գիրքն, որ գրէ զայսպիսի նաւարկութեն։

փէրու. ‖ մեծ երկիր Հարաւային Ամերիկոյ՝ սահմանակից 'ի հիւսիսոյ ը̃ փօփայանու, յարեւելից ընդ երկրին Ամազոնեաց, 'ի հարաւոյ ընդ Քհիլեայ, յարեւմտից ը̃ ծովուն Հարաւոյ. Ունի 600 փարսախ երկայնութեն 'ի հիւսիսոյ 'ի հարաւ եւ 250 լայնութեն. Բաժանեալ լինի 'ի Սպանիացւոց յերիս նախարարութիս կոչեցեալս 'ի նոցանէ [illegible]. այս է, 'ի Քուիթօնին, 'ի Լիմայինն կմ̃ 'ի Լօսռէյէսայն, 'ի Լօսքհարքասայն կամ 'ի փլաթայինն։

փէքին. ‖ մեծ հռչակաւոր մայրաքաղաք բոլոր կայսրութեան Չինացւոց և առևտրական աթոռ կայսերն. Բաղկացեալ է յերկուց քղքց. մինն վաղնջական յոյժ բնակեալ միայն 'ի Թաթարաց և միւսն կոչեցեալ քաղաք Չինացւոց՝ հաւասարապէս մեծ և շատ աւելի բազմամարդ քան զառաջինն:

փթթիլ. ‖ բացուիլ. պարզիլ:

փթթումն. ‖ բացումն (կոկոնից) ծաղկանց:

փիզա. ‖ գեղեցիկ և հին քաղաք Թոսքանայու՝ մայրաքաղաք փիզայեան նահանգի. որ ունի զաթոռ արքեպիսկոպոսական, և զհռչակաւոր համալսարան մի և զերիս ամիոցս. Են անդ աւելի քան զ500, զի էր հզօր հասարակապետութի. Բայց բարձաւ 'ի Ֆիորենցացւոց յամին 1406:

փիծարրօ (Ֆրանչիսկոս) ‖ հռչակաւոր Սպանիացի գտիչ փէրուայ. ուր մտեալ յամին 1525, ընդ Դիեգոսի Ալմակրոսի միաբանեցելոյ ընդ նմա՝ էառ զայն. Սոքա արարին զանողորմութիւնս անլուրս ընդէմ հնդկաց, և առին զանթիւ իմն աւար. Բայց 'ի բաժանմանն աւարին երկպառակեցան. Եղբայրն փիծարրոսի սպան զԱլմակրոս. և որդի սորա սպան զփիծարրոս:

փիմէնթօ. ‖ թուփ կամ ծառ փոքրիկ, որ բերէ զորեղ համեմս և զծխանելիս:

փիրէնէք. ‖ մեծ շղթայ լերանց, որք բաժանեն զՖրանսիա 'ի Սպանիոյ. և ձգին 'ի միջերկրականէն մինչև ցՈվկիանոս ընդ տարածութի իմն 85. փարսախաց. և ստանան զպէսպէս անուանս ըստ պէսպէս տեղեաց. յորս հուպ են:

փիրօկուէս. ‖ տեսակ ինչ պատերազմական նաւակի Ամերիկացւոց:

փիւնիկէ. ‖ մասն Ասորւոյ, ուր էին յառաջ Տիւրոս և Սիդոն, կամ որ նոյն է, Սուր և Սայթան. և ուր է տակաւին Դամասկոս. Ազգն կմ՝ բնակիչքն կոչէին փիւնիկեցիք:

փիփ. ‖ ծխապամորճ. թիւթիւն չուպուղու:

փիքօ. ‖ բարձր լեառն Թէնէրիֆֆայ կղզւոյն:

փլաթա. ‖ մեծ գետ հարաւային Ամերիկոյ, որ ունի զծագումն իւր 'ի նախարարութեն Լօքհարքաաս,

'ի

'ի մէջ Փէրուայ. անցանէ Ը̄ Փարակուայի. և երթայ եզերիլ 'ի ծովն Հիւսիսոյ. Ունի զ20 և 30 փարսախս լայնութն և 60 առ բերանովք իւրովք. Յայս անուն կոչի և գաւառ մի Փարակուայեաց. որոյ գլխաւոր քաղաքք են Սանթա Ջիէ, Պուէնոս Այրէս, Քորրիէնթէս, և Սանթա Լուչիա. Է ևս կղզի մի յայս անուն 'ի Փէրու:

Փլինիոս կամ Պլինիոս նախնին (Չէչիլիոս Փլինիոս Սէքունտոս) ‖ մի 'ի գիտնագոյն արանց նախնեացն Հռոմայ. Ծնեալ էր 'ի Վերոնա քաղաքին Իտալիոյ յերևելի տոհմէ. Հանդիսացաւ 'ի զինուորութն, ընտրեցաւ վերատեսուչ 'ի Սպանիա. և ծառայեցուցեալ եղև 'ի զանազան մեծամեծ իրակութս 'ի Վեսպասիանոսէ և 'ի Տիտոսէ կայսերացն. Մեռաւ ամաց յիսուն և ինից՝ հեղձուցեալ 'ի բոցոյ Վեզուվիոսի հրաբուղխ լերին. յոր մերձեցեալ էր յանդգնութբ առ 'ի դիտել զայն ահագին երևոյթ. 'Ի սմանէ այլ ինչ ոչ է մնացեալ, բայց եթէ բնական վիպասանութն իւր 'ի 37· դպրութս:

Փլութարքոս. կամ Պլուտարքոս. ‖ Գերահռչակ իմաստասէր՝ վիպասան՝ և ճարտարաբան ազգաւ Յոյն ծնեալ 'ի Քէրոնէա քաղաքին Պէօցիոյ. Ծաղկէր առ կայսերութեամբն Տրայիանոսի 'ի սկզբան երկրորդ հարիւրեկին. Նա նահապետ կալաւ վն նորա զծայրագոյն իմն համբաւ. Պատուեաց զնա հիւպատոսական արժանաւորութբ. առաքեաց զնա 'ի Լիւրիկէ իբր վերադիտող. և պարապեցոյց զնա 'ի զանազան ծանրակշիռ իրակութս. Յառաջ քան զայս ժմն ունեալ էր 'ի ներքոյ Ամմոնիոսի. և շրջեցաւ 'ի Յունաստան և յԵգիպտոս առ 'ի խորհուրդ հարցանել 'ի գիտնոց. Յայսոսիկ զանազան ճնհորդութս փոյթ կալաւ նշանակել 'ի յիշատակարանս իւր զայն ամ, զոր գտանէր նորա. 'Ի վախճան կենաց իւրոց դարձաւ 'ի գաւառ իւր. ուր կարծի մեռեալ առ կայսերութն Անտոնինոսի Պիոսի շուրջ զ140 ամաւն քնի. Մնացեալ են 'ի նմանէ վարք երևելի արանց Յունաց և Հռովմայեցւոց, ճառք բարոյականք և այլ բազում գերապանց գործք լի իմաստութեամբք ։

փոխաբերութիւն. ‖ բերումն ՚ի տեղւոջէ յայլ տեղի. մերթ՝ այլաբանութիւն. կամ տարածումն բառին ՚ի բուն նշանակութենէ յայլ նմանական նշանակութիւն ։

փոխադարձ. ‖ փոփոխ. անդրադարձ ՚ի վերայ միմեանց ։

փոխամրցաբար. ‖ փոփոխակի մրցելով, այսինքն, ջանալով յառաջել կամ գերազանցել քան զիրեարս ։

փոխամրցիլ. ‖ փոփոխակի մրցիլ. եարըշ բանել ։

փոխանակութիւն. ‖ տէյիշ կամ տէյիշ անելը.

փոխանցել. ‖ անցուցանել ՚ի միոջէ յայլ. որպէս յորդւոց յորդիս ։

փոխառաքել. ‖ անդրառաքել. փոխաբերել ։

փոխատրել. ‖ յեղափոխել. դարձուցանել. մերթ՝ հատուցանել ։

փոխարէն. ‖ վճար. հատուցումն. պէտել ։

փոխարինութիւն. ‖ վճարումն ։

փոխարքայ. ‖ փոխանորդ արքայի ։

փոխաւորել. ‖ փոխ տալ ։

փոկ. ‖ կաշեայ կապ. ղայիշ ։

փոշի հրետի. ‖ վառօտ. որ է պարութ ։

փորուածել. ‖ փորուածոյ առնել. տաշտաձև փորել զկարծր նիւթ ինչ ։

փութալի ։ ‖ զորմէ պարտէ ունել փոյթ. վերաբերեալ առ շահ կամ վնաս անձին ։

փութաւորութիւն. ‖ փոյթունակութիւն ։

փուշիշ. ‖ դատաստանական քննութիւն. կամ գրուած դատախազութեան, որ լինի ՚ի դատաստանի ։

փուքք. ‖ գործիք փչելոյ և արծարծելոյ զհուրն. քէօրիւկ ։

փռօթէսթանթ. ‖ այսպէս անուանին Լութերականք վասն դաւանելոյն զԱւկուստեան դաւանութիւն. զոր առաջի մատուցին Կարոլոսի հինգերրորդի կայսեր Գերմանացւոց ։

փսիաթ. ‖ խսիր. հասըր ։

փրեգաթ. ‖ տեսակ ինչ փոքր նաւու թիավարելի իբրև զչէքթիրի՝ պիտանի ՚ի նաւական պատերազմունս ։

փրկանք. ‖ գին ազատութեան գերւոյ կամ կալանաւորի ։

փրուսիա. ‖ մասն ինչ Եւրոպիոյ՝ սահմանեալ ՚ի հիւսիսոյ Պալթիական ծովով, յարևելից Լիթվանիաւ և Սամոկիզիաւ, ՚ի հարաւոյ փօլոնիաւ, յարեւմտից Պրանտէպուրկենիաւ, փօմերանիաւ եւ Կասսուպիաւ. Բաժանի 'ի փրուսսիա թագաւորական կամ փօլաքքական եւ 'ի Պրանտէպուրկեան, կմ՛ 'ի թագաւորութիւն փրուսսիոյ. քանզի այս մասն եղեւ կանգնեալ 'ի ժառանգական թագաւորութիւն 'ի Լէոփոլտոսէ կայսերէ յամին 1706 'ի շնորհս Ֆրէտէրիկոսի երրորդի Մարկրաւի Պրանտէպուրկայ.

փօ. կամ փատոս. ‖ մեծագոյն եւ առաւել երեւելի գետ Իտալիոյ. որ ծնանի 'ի փիէմոնթ 'ի Վիթօ լերինն. եւ յետ անցանելոյ ընդ մեծ մասն Իտալիոյ եւ ընդունելոյ յինքն զբազում գետս՝ երթայ անկանել ը̅ յոլով բերանս 'ի խորշն Վենետիկոյ:

փօլիպիոս. ‖ գերահռչակ վիպասան Յոյն եւ մի 'ի հանճարեղագոյն պատմագրաց վաղնջականութե. Էր 'ի Մեգաղոպօլսոյ քղքէ Արկադիոյ եւ որդի Լիքօրթայի գլխոյ հասարակապետուեն Աթենացւոց. Սա առաքեցաւ դեսպան 'ի Հռոմ. եւ կալեալ զհզօր բարեկամութի ը̅ Շկիպիոնի եւ ը̅ Լէլիոսի. Յայսմ քաղաքի շար դրեաց զիւր գերագանց վիպասանութին՝ յետ կատարելոյ զզանազան ճանապարհորդութիս 'ի տեղիսն, զորոց խօսելոց էր. Այս վիպասանութի բաժանեալ էր 'ի 40 դպրութիւնս. Բայց ոչ է մնացեալ բաց 'ի հինգ առաջնոց դպրութեց հանդերձ հարեւանցի յիշատակութիք ինչ այլոցն:

փօլոնիա. ‖ մեծ թագաւորութի Եւրոպիոյ. որ ունի ընդ արեւմուտս զՊաղթիական ծովն, զՊրանտէպուրկեան գաւառն եւ զՍիլէզիայն, ընդ հարաւ զՀունգարիա, զՏրանսիլվանիա եւ զՄօլտաւիա, ընդ հիւսիսակողմն եւ ընդ արեւելս զսահմանս Ռուսսիոյ. Ընդհանրապէս բաժանի յերիս մեծամեծ մասունս, որք են մեծ եւ փոքր փօլոնիա եւ մեծ Դուքսութիւն Լիթվանիոյ. Իւրաքանչիւր մասն դարձել բաժանի 'ի բազում փալաթինատս կամ գաւառս. Մայրաքաղաք թագաւորութե փօլոնիոյ է Կրաքով. բայց Վարսաւիա է առաւել սովորական նիստ թագաւորաց:

Փօմփօնիոս Մէլա. ‖ Հեղինակ կամ մատենագիր ոմն Քալապրեցի 'ի թագաւորութեան Նապօլեայ:

Փօսիտօնիոս. ‖ Հռչակաւոր ճարտարապետ և հնարագէտ շուրջ 420 ամաւ հիմնարկութեան Հռոմայ:

Փորթուկալլիա. կամ Լուսիտանիա. ‖ առաւել արևմտեան թագաւորութիւն Եւրոպիոյ. Սահմանի յարևմտից և 'ի հարաւոյ Ովկիանոսիւ, յարևելից և 'ի հիւսիսոյ Սպանիաւ. Բաժանի 'ի թագաւորութիւնն Ալկարվէյ և 'ի թագաւորութիւն Փորթուկալիոյ. Մայրաքաղաքն է Լիսպօնա:

Փորթուկեզ. ‖ ազգն Փորթուկալլիոյ կամ որ է 'ի Լուսիտանիոյ:

Փորթօ Պէլլօ. ‖ Նոր քաղաք Ամերիկոյ առ հիւսիսային ծովեզերբ ցամաքալեզուին Փանամայի ընդ հիւսիսակողմն հաստատուն երկրին հանդերձ գեղեցիկ և ը̃արձակ նաւահանգստիւ, զոր եգիտ Քօլոմպոս յամին 1504:

Փորթօ Սանթօ. ‖ կղզի Ատլանթեանն Ովկիանոսի առ ծովեզերբն Ափրիկոյ:

Ք.

Քազիքէ. ‖ իշխան. պետ Ամերիկացւոց բարբառով:

Քաթալոնիա. ‖ մի յառաւել բազմամարդ գաւառացն Սպանիոյ հանդերձ անուանի նաւահանգստաւ. Սահմանի 'ի հիւսիսոյ Փիրենէիւք, որք զատուցանեն զնա 'ի Ֆրանսիոյ, յարևելից և 'ի հարաւոյ միջերկրեական ծովով, յարևմտից թագաւորութեամբ Արակոնայ և Վալէնցայի. Ազգն կամ բնակիչք կոչին Քաթալանք կմ Քաթալոնացիք. Մայրաքաղաքն է Պարչէլլօնա:

Քաթայի. կմ Քաթթայի. ‖ անուն եօթն հիւսիսային գաւառացն Չինու:

Քայէննա ‖ է անուն քղքի գետոյ և կղզւոյ իրիք Ամերիկոյ:

Քայրօս. ‖ մեծ քաղաք Եգիպտոսի՝ շինեալ հրամանաւ խալիֆային Քափրոնու յամի տ̃ն իբր 795, 'ի վերայ արևելեան ափան Նեղոս գետոյն. Հին քաղաքն, որ կոչէր Մեմփիս, երեք քառորդ փարսախի հեռի է 'ի նմանէ:

Քալաթրավա. ‖ քղք Սպանիոյ 'ի նորն Քասթիլիա՝ առաջաւոր տեղի զինուորական կարգին ասպետաց Քալաթրավայի, հիմնեալ յամին 1158, 'ի Տօն Սանչիոսէ երկրորդէ արքայէն Քասթիլիոյ :

Քալէքութ. կամ **Քալիկութթա.** ‖ մեծ քաղաք Ասիոյ 'ի Հնդիկս, մայրաքաղաք համանուն թագաւորութեն առ ծովեզերբն Մալապարու, հիմնեալ 'ի Չերամայ փէրօամալայ. որ բաժանելով զբոլոր գաւառն թագաւորութեն իւրոյ (Մալապարու) 'ի մէջ ազգականաց իւրոց, եղեւ պատճառ, զի են այժմոյս այնքան արքայիկք 'ի մէջ Մալապարու :

Քալիֆօրնիա. ‖ մեծ ցամաքակղզի հիւսիսային Ամերիկոյ՝ զետեղեալ ընդ հիւսիսակողմն ծովուն հարաւոյ. Անդաստան իւր առատացեալ է ամենայն ցեղ արմտեօք և պտղովք. Յամիսն Ապրիլի, Մայիսի և Յունիսի սովոր է իջանել անդէն ընդ ցօղոյն տեսակ ինչ Մանանայի, որ սառնու և կարծրանայ 'ի վերայ տերեւոց եղեգանց յորոց յետոյ ժողովի. Այս մանանայ է քաղցր իբրև գինոյն իսկ շաքարին :

Քալումէթ. ‖ 'ի բարբառս Ամերիկացւոց նշանակէ փող, կամ սափարայ, որ է տիւտիւն կամ ղուլալ:

Քահանայագործել. ‖ սրբագործել. սրբացուցանել. նուիրել :

Քաղաքականացեալ. ‖ քաղաքական եղեալ. (այսինքն, օրինօք և կարգօք յարդարեալ) հրահանգեալ. կիրթ:

Քաղաքականութիւն. ‖ գիտութիւն կամ հանգամանք կառավարելոյ զքաղաքս. կամ ղոկէրութիւն :

Քաղաքավարութիւն. ‖ մերթ վարումն կամ կառավարութիւն քաղաքի :

Քամպալու. ‖ մայրաքաղաք մեծի թագաւորութեն Սինէացւոց, որ այժմ կոչի փէքին :

Քամպրիական. ‖ առ Քամպրիա վերաբերեալ. որք են ազգ ինչ Ֆլանտրայու կամ սորին գաւառաց.

Քամփէաքհի կամ **Քամփէքհ.** ‖ քաղաք Նորոյն Սպանիոյ 'ի մէջ ցամաքակղզւոյն Իւքաթանու առ արևելեան եզերբ խորշին Քամփէքհայ :

Քամփէճ. ‖ ծառ Ամերիկեան. որոյ փայտն է ծանր և կարծր, և ծառայէ 'ի ներկս. որ և կոչի Հնդիկ փայտ:

Քամքհաթքա. կմ Քամչքաթքա. ‖ մեծ ցամաքակղզի ՚ի հիւսիսակողմն Ասիոյ՝ ՚ի մէջ համանուն խորշին և ծովուն Ճափփօնայ 'ի ծագ. Ռուսսեան կայսրութեն և մերոյս շարունակի կից Սիպերիոյ. Բնակեալ է 'ի զանազան ազգաց. Բնակիչք հարաւակողման յառաջ գան 'ի Ճափփօնայ. այլք, որք են 'ի կեդրոնի տան զհարկ ինչ մորթոց բեշկի մշկոյ Ռուսաց. Ընդ հիւսիսակողմն բնակիչք են գաղանաբարոյք ցայն վայր՝ մինչզի սպանանեն զամ Ռուսս առանց խնայելոյ ումէք:

Քանալ. ‖ բառ Իտալական, որ 'ի մեզ թարգմանի փողրակ. խողովակ. ագուգայ կամ ջրմուղ:

Քանակաբան. ‖ որ ուսեալ է կամ գիտէ զքանակաբանութի. այս է, գիտութի, որ ճառէ զշարունակ և զտարորոշ քանակութէ. զոր ոմանք Յունական բարբառով՝ Մաթեմաթիքա անուանեն:

Քանանացի. ‖ որ է յերկրէն Քանանացւոց. որ այժմ կոչի Պաղեստինէ.

Քանատա. ‖ մեծ երկիր հիւսիսային Ամերիկայ՝ սահմանեալ յարեւմտից Միսսիսիպի գետովն, 'ի հարաւոյ Անգլիական հարստութիւնքն, յարեւելից Ովկիանոսիւ և 'ի հիւսիսոյ անծանօթ երկրօքն. Այս երկիր գրեթէ մեծ է քան զբոլոր Եւրոպիա. Բայց 'ի վայրագացն են 'ի նմա իբր 30000 Ֆրանսեզք. Քուպէք է մայրաքաղաքն:

Քանարիայք. ‖ 'ի Նախնեաց կոչին երանելեաց կղզիք. զոր տեսցես:

Քաննիպալք. ‖ խուժադուժ մարդակեր ազգ ինչ մարդկան. որք գտանին 'ի հիւսիսային կողմանս Ասիոյ. նաև ըստ ոմանց յԱփրիկէ:

Քանցել. ‖ 'ի բաց խլել. կորզել. փրցնել:

Քանքատանք. ‖ գանգատ. տժգոհութի:

Քանքար. ‖ բնական ձիրք կամ ընդունակութի առ գործ ինչ պարգեւեալ ումեք յայ:

Քանքարտալ. ‖ գանգատիլ. գանկտիլ:

Քանօէ. ‖ տեսակ ինչ նաւակի Ամերիկացւոց. զոր չինեն փորելով տաշտաձև զստուար ինչ բուն ծառոյ :

Քառարշաւակլի . ‖ տէօրտէրլամէ :

Քասթիլիա . կամ Քաստիլիա հին . ‖ գաւառ Սպանիոյ հանդերձ անուամբ թագաւորութեն, սահմանեալ 'ի հարաւոյ Նոր Քասթիլեաւ, յարեւելից Արակոնաւ, 'ի հիւսիսոյ Գիսքայեաւ և Ասթուրիաւ, յարեւմտից թագաւորութեամբն Լէօնու . Բաժանեալ է 'ի 7. Մերինտատս կմ թեմս . Պուրկոս է մայրաքաղաքն :

Քասթիլիա Նոր . ‖ գաւառ Սպանիոյ՝ սահմանեալ 'ի հիւսիսոյ հին Քասթիլիաւ, յարեւելից թագաւորութեն Արակոնոյ և Վալէնցայ, 'ի հարաւոյ թագաւորութեն Մուրչիայ և Անտալուզիաւ, յարևմտից թագաւորութեամբն Լէօնու . Բաժանի յերիս մասունս, յԱլկարիա ը հիւսիսակողմն, 'ի Մանքա ընդ արևելս և 'ի Սիերա ը հարաւ . Մատրիտ է մայրաքաղաքն :

Քասսատա կամ Քասսավա . ‖ ալիւր արմատոյ իրիք տեսակի Ամերիկեան տնկոյ կոչեցելոյ մանիոք . Յայս անուն կոչի և հացն կազմեալ յայնմանէ :

Քատիչէ . ‖ հզօր և հռչակաւոր քաղաք Սպանիոյ 'ի մէջ Անտալուզիոյ՝ հանդերձ ապահով նաւահանգստիւ, ուր մտանեն շարունակաբար վաճառական նաւք յամ կողմանց . Ունի զերկուս ամրոցս և զմի Եպիսկոպոսարան ստորակարգեալ Սիվիլոյ . Չիք թերևս այլ քաղաք Եւրոպիոյ, ուր գտանիցի մեծագոյն առատութի դրամոյ և ուր առաւել ծաղկիցի շահավաճառութին . Աստի մեկնի և դառնայ նաւահանգէսն Հնդկաստանաց . Այս քաղաք է վաղնջագոյն յոյժ, և է շինեալ 'ի փիւնիկեցւոց 'ի փոքրիկ կղզւոջ միում 18 փարսախ հեռի 'ի նեղուցէն Սեպտէի կամ Ճիպիլթէրրայի :

Քարայիպ . կամ Քարաիպէք . ‖ վայրենի մարդակեր ազգ ինչ Ամերիկոյ :

Քարթակենա . տես Կարթագինէ :

Քարոլոս . տես Կարոլոս .

Քարտէզ . կամ Քարտէս . ‖ թուղթ . նամակ :

Քարրիպէանք . ‖ նոյն ող Քարայիպք :

Քա-

Կարոլինա. ‖ երկիր հիւսիսային Ամերիկոյ՝ սահմանեալ 'ի հիւսիսոյ Վիրճինիաւ, 'ի հարաւոյ Նոր Վրաստանաւ, յարեւելից ծովովն հիւսիսոյ, յարեւմտից բարձրաբերձ լերամբք կոչեցելովք՝ Ապալաշէ. Անգղիացիք կայանաւորեցան անդէն յամին 1662. եւ կոչեցին Կարոլինա 'ի պատիւ Թագաւորին իւրեանց Կարոլոսի երկրորդի. եւ զօրացան անդէն յոյժ. Կարոլինա բաժանի 'ի հիւսիսային եւ 'ի հարաւային. եւ պարունակէ 6 գաւառս. Գլխաւոր քաղաքք իւր են Կհարլէս Թաուն եւ Ալպէմարլէ:

Կաւայ. ‖ կին Թագաւորացն առ փէրուացիս:

Կափօ Հօռն. ‖ գերսար հռչակաւոր՝ վերջին ծագ հարաւային Ամերիկոյ 'ի Մաձէլլանեան կամ 'ի հարաւային Ովկիանոսի, որ հայի 'ի հակարջային բեւեռն:

Կափօ Վէլա. ‖ գլուխ կամ գերսար Վէնէցուէլայի ը̃ արեւմուտս խորշին Կօրօի 'ի մ̃ջ ծովուն հիւսիսոյ:

Կափօ Վէրտէ. ‖ եւս երեւելագոյն գերսար առ արեւմտեան ծովեզերբն Ափրիկոյ՝ պատեալ յերկուց կողմանց 'ի Կամպրա եւ 'ի Սէնէկալ գետոցն:

Կափօ տի Պօնա Սփէրանցա. ‖ որ թարգմանի՝ գլուխ բարի յուսոյ կամ բարեյուսութեան. այսպէս անուանեաց Յօհաննէս երկրորդ արքայն Փօրթուկալլիոյ զբարձր գերսարն, որ եղերէ զԱփրիկէ ընդ հարաւակողմն մեծ բարեյոյս լինելոյ առ 'ի գտանել զը̃երկար ժամանակ փափագեալ ճանապարհն առ Հնդկաստան:

Կաքքաօ. ‖ պտուղ համանուն ծառոյ իրիք Հնդկայնոյ նման նշոյ կմ̃ բակլայի. որ խածղեալ եւ մերածեալ 'ի զանգուած՝ լինի նախապետական նիւթ Չօքօլաթա անուանեալ ըմպելւոյն:

Կաֆրարիա կամ Կաֆրէրիա. ‖ ընդարձակ երկիր Ափրիկոյ՝ 'ի հիւսիսոյ սահմանակից Նէկրիցիոյ եւ Հապէշաստանի, յարեւմտից՝ ընդ մասին իմիք Կուինէոյ, Կօնկօի եւ ծովուն, 'ի հարաւոյ՝ ընդ Կափօ տի Պօնա Սփէրանցայի, յարեւելից՝ ընդ ծո-

ծովուն. Բաժանի 'ի բազում թագաւորութիւնս. որոց գրեթէ ամենեցուն բնակիչք են կռապաշտք. Ազգքս այսոքիկ կոչին Արաբացւոց բարբառով Քաֆֆր՝ որ նշանակէ հայհոյիչ կամ անհաւատ:

Քերել. || 'ի մօտուստ կմ՟ մօտ անցանել:

Քերթութիւն. || շարադրութիւն. շարադրանք (քերականական):

Քեցել. || կորզել. նահանջել. յետ քաշել:

Քթեսիա. || մեծահամբաւ վիպասան և բժիշկ՝ ազգաւ Յոյն Կնիտացի իբր 400 ամօք յառաջքան զքս̃. Շարադրեաց զպատմութիւն Ասորեստանեայց և Պարսից 'ի 23 դպրութիւնս. զորոց Փօցիոս և Եւսեբիոս պահեալ են զկտորակս:

Քիլի կամ Քհիլի. || մեծ երկիր և թագաւորութիւն. հարաւային Ամերիկոյ առ ծովուն հարաւոյ՝ իբր 300 փարսախ երկայնութե̃ և իբր 20 լայնութե̃՝ բաց 'ի գաւառէն Քիքուիմօ, ուր է յոյժ աւելի լայն. Բաժանի յերիս գլխաւոր մասունս. որք են Եպիսկոպոսութի սրբոյն Յակոբայ, Եպիսկոպոսութի արքունի և Քուիօ:

Քիմերական. || մտացածին. երազական. սուտ:

Քինախնդրութիւն. || վրէժխնդրութիւն:

Քհարլէսթօն. || անուն երկուց քաղաքացն Անգլիական Ամերիկոյ՝ մինն 'ի Քարօլինա և միւսն 'ի կղզւոյն Պարպատօի:

Քուինթալ. || տեսակ ինչ չափու և ծանրութե:

Քուէք. || նշան հաւանութե կամ հաւանութի:

Քուիթօ. || արքունի նախարարութի կամ բդեշխութի հարաւային Ամերիկոյ 'ի Փէրու. ունի 60 փարսախս երկայնութե և 30 լայնութե. Սահմանի 'ի հիւսիսոյ՝ Փօփայեանաւ, 'ի հարաւոյ՝ նախարարութին Լիմայի, յարևմտից՝ ծովովն հարաւոյ, յարևելից՝ երկրաւն Ամազոնեայց.

Քումանա. || գաւառ ինչ հարաւային Ամերիկոյ հանդերձ համանուն քաղաքաւ:

Քուն. || մերթ՝ չէնկէպաշտ

Քուպա, || մեծ կղզի հիւսիսային Ամերի 'իրր-թւ իբ խորշին Մէսս 5ե̃ կուտուքև փարսախ եր՝ոյմ 2կիօայն 35 լայնութե̃ :ե̃ կոի՝

Քուպակուա. կամ Քուպակա. ‖ փոքրիկ և ամուլ կղզի 'ի մէջ ծովուն հիւսիսոյ՝ յանդիման ծովեզերն Նորոյն Անտալուզիոյ՝ սակաւ ինչ աւելի քան զմի փարսախ տարակաց ընդ արևելս 'ի Մարգարիտա կղզւոյն։

Քուրայ. ‖ բով. հալոց, ուր հալեն և զտեն զոսկի և զարծաթ։

Քսերքսես առաջին. ‖ արքայ Պարսից երկրորդ որդի Դարեհի արքայի. յաջորդեաց հօր իւրում յամին 485 յառաջ քան զ.ք̄ս. 'Ի սկզբան թագաւորութ̄ե իւրոյ վերածնեաց զԵգիպտոս ընդ տէրութ̄բ իւրով. և եթող անդէն զեղբայր իւր կառավար. Ապա որոշեաց տալ պատերազմ ընդդէմ Յունաց ընդ ծով և ը̄ ցամաք. Բայց 'ի պարտութիւն մատնել դարձաւ ամօթալից յերկիր իւր. Ապա սպանաւ յԱրթապանայ Իրքանոսէ 473 ամօք յառաջ քան զ.ք̄ս. և Արտաշէս յաջորդեաց նմա։

Քսիմէնէս (Ֆրանչիսկոս) ‖ գերահռչակ կարդինար Սպանիացի՝ արքեպիսկոպոս Թօլէտայ քաղաքին՝ գլխաւոր գործակալ թագաւորութ̄ն Սպանիոյ։

Քստմնիլ. ‖ սոսկալ. սարսափիլ. մարմինը փուշ փուշ ըլլալ։

Քրէական. ‖ (դատ. ատեան) յորում դատեալ լինի եղեռնութիւն կամ պատիժ չարագործաց։

Քրքու՛անք. ‖ բողք. գանգատ.

Քօղեայ. ‖ ոսկի կամ արծաթի մանեակ, զոր արկանեն կանայք 'ի բազուկս առ'ի զարդ։

Քօծումէլ. ‖ երևելի կղզի Ամերիկոյ առ արևելեան ծովեզերբն Իւքաթանու՝ բերրի պտղովք՝ արմտեօք՝ անասնովք և թռչնովք։

Քօմմէնտայ. ‖ եկեղեցական ինչ կալուած կմ̃ հասոյթ տուեալ քահանայի կամ ասպետի 'ի վայելել։

Քօնկօ. ‖ թագաւորութիւն Ափրիկոյ՝ սահմանեալ 'ի հիւսիսոյ Զաիրէ գետովն, յարևելից թագաւորութ̄ն Անզօքայ, Յակասայ և Անթամպայ, 'ի հարաւոյ Տէնտայ գետովն, յարևմտից՝ ծովով։

Քօչինիլ. ‖ որդն կարմիր՝ պիտանի 'ի ներկս։

Քօրթէս (Ֆէրնանտոս կամ Ֆէրտինանտոս) ‖ սեպուհ

Սպանիացի ծնեալ 'ի Մէտէլլին քաղաքի. Հանդիսացաւ 'ի 16 հարիւրեկին առ թագաւորութ̃ն Կարոլոսի հինգերորդի վասն առմանն Մեքսիքոյի։

Քօրնէլեան օրէնք. ‖ օրէնք Քօրնէլիոսի օրէնսդրի։

Քօրտօվա. ‖ վաղեմի և մեծ և հզօր քաղաք Սպանիոյ 'ի մէջ Անտալուզիոյ. Այս քաղաք եղեալ է հայրենիք բազմաց նշանաւոր արանց՝ Լուքանոս, երկուց Սենեքայից՝ Ֆերտինանտոսի զօրավարին մականուանեցելոյ Քօրտօվա ևն։

Քօփալ. ‖ խէժ ինչ անուշահոտ, որ գայ յԱմերիկոյ, և ծառայէ մանաւանդ 'ի բաղադրել զլաւագոյն ապիկիս. որ է սլա։

Քօքօլ. ‖ ազգ ինչ պտղոյ. ոլոռն ոլոռն կամ բոլորակ. որ է պտուղն գիհւոյ. դափնւոյ. ևն։

* * *

Օ

Օբի. կամ Օպիե Օպիոս. ‖ մեծ գետ Մոսկովիոյ. որ ծնանի 'ի մեծն Թաթարաստան 'ի լճին Ալթհայի 'ի Թագաւորութ̃ն [illegible]. և երթայ անկանի յՈվկիանոս։

Օգօարդոս. կամ Օտօարտոս. ‖ անուն արքայից Անգլիոյ։

Օթիլ. ‖ օթեվանիլ. ագանիլ։

Օժանդակ. ‖ օգնական ձեռնտու։

Օժտել. ‖ ճէհէզ տալ. կամ թոշակաւորել։

Օհիօ. ու. ‖ գետ ինչ Ամերիկոյ։

Օձաուխ։ ‖ տես Օցտուաձ

Օղերձ. ‖ պարզև. ընծայ.

Օճան. ‖ մարդասիրութի. շնորհ. բարերարութիւն. նպաստ։

Օճանաւոր. ‖ մարդասիրական. շնորհաւոր. մեծարու։

Օվիէտոս (Կոնծալես Ֆերտինանտոս) ‖ ընդհանուր վերատեսուչ և քննիչ շահավաճառութ̃ն նորոյ աշխարհին առ Թագաւորութ̃ն կայսեր Կարոլոսի հինգերորդի. Նա հեղինակ հանրական կրկէ պատմու̃ե Հնդկաց։

Օտարացուցանել. ‖ փոխանցել առ օտարս. վաճառել։

Օրինօքոս կմ' Օրէնոքոս. ‖ մեծ գետ Ամերիկոյ 'ի ցամաք երկրին. որ ծնանի 'ի մէջ փօփայեանս և անկանի 'ի ծով 16 գլխաւոր բերանովք. Ափունք իւր բնակեալ են 'ի վայրագաց քաջաց, որք յամառան կան 'ի դաշտավայրի վրանօք. բայց 'ի ձմեռան բունին 'ի մէ ծառոց առ 'ի պատսպարիլ 'ի հեղեղաց. կոչին Թէհիւէլէճայք. և են շարունակ 'ի պատերազմի:

Օրհասական. ‖ մահաբեր. պատկանեալ առ օրհասն. որ է էձել:

Օրհնութիւք. ‖ փոխանակ բարութենց կամ երջանկութենց:

Օփիր. կմ Օֆիր կմ Սոփերա. ‖ էր հին նաւահանգիստ 'ի Հնդիկս. ուր երթային նաւքն Սաղոմոնի առ 'ի բառնալ անտի ոսկի և գոյլ պատուական ինչս:

Օցտումն. ‖ ապստամբական բաժանումն յընկերութենէ իմիք. երկպառակութիւն. Փրխայ:

Օքսուս. ‖ մեծ գետ Ասիոյ՝ այսպէս կոչեցեալ 'ի նախնեաց. այժմ կոչի Ճիհօն. Աղբերակունք իւր են 'ի ստորոտս Իմաուս լերին, և բերանք իւր 'ի ծովն Կասպից:

Օքսֆորտ. ‖ գեղեցիկ և մեծ քաղաք Անգլիոյ՝ մայրաքաղաք համանուն գաւառին. ուր ծաղկի առաւել հռչակաւոր համալսարանն, որ իցէ յաշխարհի:

Օֆիր. տե՛ս Օփիր:

Ֆ

Ֆայալ. ‖ կղզի Աթլանտեան Ովկիանոսի՝ մի յԱծօրէից՝ իբր 6 փարսախ երկայն. Պատկանի Փորթուկալլիոյ:

Ֆերտինանտոս հինգերորդ՝ մականուանեալ Կաթողիկէ ‖ էր որդի Յօհաննու երկրորդի արքային Արակօնայ. Ամուսնացոյց ինքեան զԵղիսաբեթ Քաստիլիոյ յամին 1469. և միաւորեաց 'ի շնորհս այսր ամուսնութեան զտէրութիւն Քասթիլլիոյ ընդ տէրութեանցն Արակօնայի յամին 1479. Սա ընկալաւ Թօրօ քաղաքաւն զհամբաւաւոր իմն յաղթութիւն ընդդէմ Ալֆօնսոսի հինգերորդի արքային Փորթուկալլիոյ. Նուաճեաց զթագաւորութիւնն Կրանաթայ և վանեաց զՄաւրիս 'ի Սպանիոյ յամին 1492. Տիրեաց Փիկնօնու, Սիկէլէծայ և Օրանու Ափրիկէ. որպէս և Թագաւորութիւն Նապօլւոյ. Յափշտակեաց զԹագաւորութիւն Նաւարրայի և մեռաւ յամին 1516 Այս արքայ ճոխացեալ էր մեծամեծ Կանքարօք. բայց զոհէր զնա՛ փառասիրութեան և քաղաքականութեան իւրում. Առ սորա թագաւորութեամբ եղև Կօլոմպոսի գտանել զնոր աշխարհն և ենթարկել Կասթիլիոյ զայնքան և զայնպիսի փարթամ գաւառսն :

Ֆերօէ կամ Ֆարրէ. || կղզիք հիւսիսային Ովկիանոսի ընդ հիւսիսակողմն կղզեացն Սէթլէնտեայց և Իսլանտայի՝ տարածելով դէպ Իսլանտայի՝ ենթարկեալք Դանիմարքայի. Թուով են 24. երկոտասանքն մեծամեծ և երկոտասանքն փոքունք. Օդն կղզեացս այսոցիկ առողջարար է և բնակիչք կեան ընդ երկար :

Ֆլանտրա կամ Ֆլանտրիա. (Ֆլէմէնկի երկիր) || մեծ նահանգ ստորին գաւառաց, որ կարէ բաժանիլ Աւսթրիական և 'ի Հօլլանտական. Ֆլանտրա զետեղեալ է ընդ մէջ ծովուն Ալէմանիոյ և ընդ մէջ Արթէսիոյ, Հաննոնիոյ, Պրապանտեայ, Գելտրիոյ, տէրութիւն Ութրէքթայ և կոմսութիւն Զէլանտայի :

Ֆլամինգ. || Ֆլանտրացի. ազգ կամ բնակիչ Ֆլանտրիոյ :

Ֆինլանտա. || գաւառ ինչ Շվետիոյ :

Ֆլօրէնցա. || Հին՝ մեծ և հռչակաւոր քաղաք Իտալիոյ՝ մայրաքաղաք Թօսքանայ գաւառին՝ հանդերձ Արքեպիսկոպոսարանաւ և հռչակաւոր համալսարանաւ. Են 'ի նմա 152 եկեղեցիք, 17 հրապարակք և 160 հրապարակական արձանք :

Ֆլօրիտա. || մեծ երկիր հարաւային Ամերիկոյ, որ տարածանի 'ի փանուք գետոյն ընդ երկայնութեան ծոցոյն Մէքսիքօի և ծովուն հիւսիսոյ մինչև 938 աստիճանան լայնութեան. Բովանդակէ զԼուիզիանա, զՖլօրիտայն Սպանիական, զնորն Վրաստան և զման ինչ Կարօլինայի :

Ֆուէկօի կամ Ֆօկօի (երկիր) || ծագ հարաւային Ամերիկոյ. Սահմանի 'ի հարաւոյ հարաւային ծովով 'ի հիւսիսոյ նեղուցան Մաճէլանու և կղզեօքն 'ի միջի, յարևելից Մաճէլանեան ծովուն և յարևմտից խաղաղականան. Են կղզիք բազումք մեծամեծք և փոքունք, որք կերպաւորեն զայս երկիր Ֆօկօի. որ թարգմանի երկիր հրոյ. Որպէս կոչեցին զայն առաջին գտօղք փ հրատիցն, զորս տեսին 'ի բազմունս ինչ վառեալ. Այլմայն է ծայրագոյն ցուրտ և լերինքն ծածկեալ ձեամբք:

Ֆուէրթ փէցա. Այսպէս կոչի Թալէան Սպանիոյ:

Ֆրանսիա. Տես Գաղղիա: